



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*



Լ Ե Ռ

ԵՐԿԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՍԸ ՀԱՏՈՐՈՎ



«Հայաստան»  
Հրատարակչություն  
Երևան 1966



Լ Ե Ռ

ԵՐԿԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ



«Հայաստան»  
Հրատարակչություն  
Երևան 1966



Խմբագրական կոլեգիա՝

ԳՐԻԳՈՐՅԱՆ Զ., ԹԱՄՐԱԶՅԱՆ Զ., ԹՈՓՉՅԱՆ Է.,  
ՆԵՐՍԻՍՅԱՆ Մ., ՍԱՐԳՍՅԱՆ Մ.

ЛЕО


СОБРАНИЕ СОЧИНЕНИИ

в 10-и томах

Том I. История Армении. Древний период.

(На армянском языке)

Издательство «Айастан», Ереван, 1966



## ՊՐՈՖ. ԼԵՈՅԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

### 1

Հայ նոր մշակույթի և մասնավորապես հայագիտության ականավոր ներկայացուցիչներից մեկն է Լեոն: Ավելի քան հիսուն տարի շարունակ նա բեղմնավոր գործունեություն է ծավալել իր ժողովրդի հոգևոր կուլտուրայի ու գիտական մտքի մի շարք կարևոր մարզերում: Նա ստեղծագործել է որպես գրող, գրականագետ, հրապարակախոս և պատմաբան: Գրչի այդ անխոնջ մշակը զգալի աշխատանք է կատարել 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի առաջին երեք տասնամյակների հայ մշակույթի վարճացման, հատկապես մեր ժողովրդի բազմադարյան պատմության ուսումնասիրության ու մասսայականացման գործում:

Լեոն (Առաքել Բաբախանյանը) ծնվել է 1860 թ. ապրիլի 14-ին Լեռնային Ղարաբաղի կենտրոն Շուշի քաղաքում: Նրա հայրը՝ դերձակ և ապա ժամկոչ Գրիգորը, աննշան վաստակ ուներ: Բազմանդամ ընտանիքի նյութական ծանր վիճակը հնարավորություն չտվեց պատանի Առաքելին ստանալ սիստեմատիկ կրթություն: Տեղի թեմական ու քաղաքային դպրոցները ավարտելուց հետո նա կբաղվեց ինքնապարզացմամբ և համառ աշխատանքի շնորհիվ ձեռք բերեց խոր գիտելիքներ և լայն էրուդիցիա: Խոսելով Լեոյի մասին Ավետիք Իսահակյանը նկատել է. «Անսպառ եռանդի տեր և չափազանց աշխատունակ՝ նվիրվեց ինքնակրթության և իրենից շինեց-կերտեց զրական այն ուժը, որ երկար տարիներ եղավ տիրապետող դեմքերից մեկը կովկասահայ հասարակության մտավոր կյանքի մեջ» (Ավ. Իսահակյան, Երկեր, հատ. 4, Երևան, 1959 թ., էջ 105):

Հոր մահից հետո, 1879 թ., երիտասարդ Առաքելը փորձում է աշխատանք գտնել Բաքվում, բայց անհաջողության հանդիպելով վերադառնում է Շուշի և զրազրի պաշտոն վարում քաղաքի նոտարի մոտ, իսկ ավելի ուշ՝ 1881—1893 թթ., աշխատում է տեղի հեռագրատանը որպես հեռագրիչ: 1893 թ. նա փոխադրվում է Բաքու, իսկ երկու տարի հետո՝ Թիֆլիս: Այնտեղ 12 տարի շարունակ (1895—1906 թթ.) աշխատում է «Մշակ»-ի խմբագրատանը: որպես այդ նշանավոր թերթի մշտական աշխատակից և քարտուղար (տես Լ. Բաբայան, Լեո (Առաքել Բաբախանյան), Թիֆլիս, 1908 թ., էջ 18—19):

Լեոն սկսեց գրել դեռևս 1870-ական թթ. վերջերից (նրա առաջին թղթակցությունը տպագրվեց «Кавказ»-ում, 1877 թ.): Ավելի ուշ՝ 1880—90 թթ., նա պարբերաբար թղթակցում է «Մշակ»-ին, «Արձագանք»-ին, «Աղբյուր»-ին, «Տարապ»-ին, «Արմենիա»-ին, «Մուրճ»-ին, կատարում է թարգմանություններ, հրապարակում

առանձին գրքեր և գրքուկներ: Արձագանքելով իր ժամանակի հայ հասարակությանը հուզող հարցերին նա պատկերում է գավառահայության, մասնավորապես գյուղացիության ծանր վիճակը, մերկացնում համփաների շահատակությունները, խոսում հայկական հարցի և արևմտահայության դաժան կացության մասին, քարոզում հայրենասիրական գաղափարներ, շոշափում գրականության և կուլտուրայի հարցեր, գրում պահպանողական-ռեակցիոն հայ գործիչների դեմ և այլն, և այլն: Այդ տարիներին Լեոն գտնվում էր Րաֆֆու և Գրիգոր Արծրունու գաղափարական ազդեցության ներքո:

Առանձնապես բեղուն եղավ մեր հեղինակի գրիչը 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներին: Ավելի խորանալով իր գրական ու գիտական աշխատանքի մեջ, Լեոն, որ օժտված էր պարմանալի եռանդով ու աշխատասիրությամբ, գրեց բազմաթիվ հոդվածներ, գեղարվեստական երկեր, գրականագիտական ու պատմագիտական մեծածավալ աշխատություններ:

Գրական-գիտական աշխատանքի հետ միասին Լեոն ինչպես նախորդ շրջանում, այնպես էլ 20-րդ դարի սկզբներին զբաղվեց հրապարակախոսությամբ՝ շոշափեց բազմաթիվ գրական-կուլտուրական և հասարակական-քաղաքական թեմաներ, արձագանքեց 1905—1907 թթ. ռևոլյուցիայի փոթորկալից անցքերին, գրեց ոչ քիչ հոդվածներ առաջին համաշխարհային պատերազմի արյունոտ դեպքերի ու 1917—1920 թթ. Անդրկովկասում ստեղծված տնտեսական ու քաղաքական ծանր իրադրության մասին: Հայրենասերի շնչով ու կրքով գրված իր հոդվածներում նա բացահայտում էր սևհարյուրակային ռեակցիայի էությունը, իր վայրույթն արտահայտում արևմտահայերի աննախընթաց կոտորածները կազմակերպող երիտթուրքերի դեմ, մերկացնում Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների հակաժողովրդական քաղաքականությունը, լուսաբանում առօրյայի գրական-կուլտուրական և հասարակական այլևայլ հարցեր: Լեոյի հոդվածները դիպուկ են և սրամիտ, չնայած նրանցում կան սխալներ ու անընդունելի դրույթներ:

Հայտնի է, որ Լեոն չի եղել որևէ քաղաքական կուսակցության անդամ: Նա գործել է որպես «անպարտիական» մտավորական ու հասարակական գործիչ: Սակայն իր քաղաքական դավանանքով նա այնուամենայնիվ կանգնած էր մշակականների, այլ կերպ ասած՝ հայկական բուրժուական լիբերալիզմի դիրքերում: Չնայած իր ժողովրդասիրությանը, դեմոկրատական հայացքներին ու այն բանին, որ քննադատել է ցարական բուրժուա-կալվաճատիրական կարգերը, Լեոն քաղաքական ու հասարակական հիմնական հարցերում համերաշխ էր հայ լիբերալների հետ: Գլխավորապես հենց սրանով էլ բացատրվում են բազմաձայնակ հեղինակի մի շարք մոլորություններն ու սխալները, մոլորություններ, որոնց մասին նա հետագայում խոսեց հրապարակայնորեն ու անկեղծությամբ:

Ինչ դիրք բռնեց Լեոն Սովետական Հայաստանի նկատմամբ: Ժողովրդի շահերով ու բախտով ապրող ականավոր մտավորականը ի սրտե ողջունեց խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում: Եվ ոչ միայն ողջունեց: Նա պատրաստակամություն հայտնեց իր ուժերը տրամադրելու ապատագրված ու վերածնության ուղին բռնած հայրենիքի կուլտուրայի և գիտության վարճացման գործին: 1924 թ. Սովետական Հայաստանի կառավարության հրավերով Լեոն Թիֆլիսից Երևան ժամանեց և աշխատանքի անցավ Երևանի պետական համալսարանում որպես պատմության դասախոս: Մանկավարժական-դասախոսական աշխատանքի հետ միասին նա շարունակեց իր գիտահետազոտական պրպտումները և հայագիտությունը հարստացրեց նոր ուսումնասիրություններով:

Պրոֆ. Լեոն վախճանվեց 1932 թ. նոյեմբերի 14-ին:

Լեոյի հարուստ ու բազմաժանր գրական ժառանգության մեջ մեծ տեղ են գրավում նրա պատմագիտական աշխատությունները: Եթե իր ստեղծագործական կյանքի առաջին շրջանում՝ մոտավորապես 1880—1900 թթ., նա հանդես եկավ հիմնականում որպես հրապարակախոս, գրող ու գրականագետ, ապա հաջորդ տարիներին՝ 1900—1930 թթ., Լեոն զբաղվեց գլխավորապես պատմության հարցերով: Պատահական չէ, որ նա մեր ժողովրդի լայն խավերին հայտնի է որպես պատմաբան:

Պրոֆ. Լեոյի պատմագիտական գործունեությունը կարելի է բաժանել երկու հիմնական շրջանների՝ նախասովետական ու սովետական: Տարբեր շրջաններում հեղինակի ստեղծած աշխատությունները գրված են տարբեր աշխարհայեցողությամբ և համարժեք չեն:

Նախասովետական տարիներին անվանի պատմաբանը հրապարակեց պատմագիտական բազմաթիվ աշխատություններ, որոնց թվում «Հայկական տպագրություն» (2 հատոր, 1901—1902 թթ.), «Ստեփանոս Նապարյանց» (2 հատոր, 1902 թ.), «Հովսեփ կաթ. Արղության» (1902 թ.), «Գրիգոր Արծրունի» (3 հատոր, 1902—1905 թթ.), «Ս. Մեսրոպ» (1904 թ.), «Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի» (1914 թ.), «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի» (1914 թ.), «Հայոց հարցի վավերագրեր» (1915 թ.), «Վանի թագավորությունը» (1915 թ.), «Վարդանանք» (1917 թ.) և այլն: Բացի այս ծավալուն գործերից, Լեոյի գրչին են պատկանում նաև մի շարք փոքր ուսումնասիրություններ ու բազմաթիվ հոդվածներ: Հիմնականում նախասովետական շրջանում գրվեց նաև «Հայոց պատմություն» քառահատոր ֆունդամենտալ աշխատության առաջին, երկրորդ և երրորդ հատորները (չորրորդ հատորը, որ դեռևս մնացել է անտիպ, գրված է սովետական իշխանության տարիներին՝ 1920-ական թթ.):

«Հայկական տպագրություն» երկհատորյա աշխատությունը Լեոյի լավագույն գործերից մեկն է: Այստեղ փաստորեն տրված է ինչպես տպագրության, այնպես էլ ժողովրդի 16—18-րդ դդ. մտավոր, կուլտուրական ու քաղաքական կյանքի պատմությունը: Հեղինակը հանգամանորեն կանգ է առնում հանդիսանալիս 17—18-րդ դդ. հայ գրականության և ապատագրական շարժումների վրա: Այս աշխատությունը իր ժամանակ բարձր գնահատական ստացավ:

Ստեփանոս Նապարյանին և Գրիգոր Արծրունուն նվիրված հատորներում լուսաբանված են ոչ միայն այդ երկու նշանավոր գործիչների կյանքն ու գործունեությունը, այլև 19-րդ դարի հայ գրական մշակութային կյանքի և հասարակական-քաղաքական հոսանքների պատմության մի շարք կարևոր էջերը:

Երևանի և Ղարաբաղի թեմական դպրոցների պատմությանը նվիրված գործերը միաժամանակ արժեքավոր նյութեր են տալիս 19-րդ դարի և 20-րդ դարի առաջին տասնամյակի հայկական մյուս դպրոցների, ինչպես նաև արևելահայերի կուլտուրական կյանքի մասին: Գրական նյութերի հետ միասին հեղինակը օգտագործել է նաև արխիվային ուշագրավ նյութեր:

«Հայոց հարցի վավերագրերը» գրքում հեղինակը աշխատել է ամփոփ գաղափար տալ իր ընթերցողին հուզող «հայոց արյունոտ հարցի» մասին: Այդ նպատակով նա թարգմանաբար տալիս է խնդրին վերաբերող մի շարք կարևոր փաստաթղթեր-վավերագրեր, որոնք ստեղծվեցին միջազգային դիվանագիտության խոհանոցում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին (մինչև առաջին համաշ-

խարհային պատերազմը) : Բացի ներածականից գիրքը ունի վավերագրերին կըցված ընդարձակ մեկնաբանություններ :

Բազմամյա քրտնաջան աշխատանքի արդյունք է պրոֆ. Լեոյի «Հայոց պատմություն» մեծածավալ աշխատությունը, որտեղ ի հայտ է բերված հեղինակի պատմագիտական ամբողջ ուժը, գիտելիքներն ու տաղանդը : Ի դեպ նկատենք, որ Լեոն ծրագրում էր գրել հինգ հատոր, ընդ որում վերջին հատորը պետք է լուսաբաներ հայ գաղութների (գաղթավայրերի) պատմությունը : Սակայն հիվանդության պատճառով նա ի վիճակի չեղավ գրել իր մեծածավալ աշխատության այդ վերջին մասը :

«Հայոց պատմության» առաջին հատորը, որ լույս տեսավ 1917 թ. Թիֆլիսում, նվիրված է Հայաստանի հին պատմությանը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր թվականության 5-րդ դարը : Այստեղ Լեոն հանգամանորեն կանգ է առնում աշխարհագրական միջավայրի հարցի վրա, խոսում է նախահայկական շրջանի մասին, տալիս է աղբյուրների տեսություն և ապա հարևան երկրների պատմության ընդհանուր ֆոնի վրա շարադրում հայ ժողովրդի քաղաքական, ինչպես և կուլտուրական վարձագման պատմությունը : Երկրորդ հատորը պետք է ընդգրկեր 5—15-րդ դարերը, կամ հեղինակի խոսքերով ասած՝ միջին դարերը, հայկական միջնադարը : Սակայն Լեոն չկարողացավ ամբողջովին իրականացնել իր ծրագիրը, այս հատորում նա շարադրեց միայն 5—11-րդ դարերի պատմությունը : Երրորդ հատորը լուսաբանում է հայ ժողովրդի 16—18-րդ դդ. գոյավիճակը, ընդ որում այստեղ մեծ ուշադրություն է դարձված ավատագրական շարժման, հայ-ռուսական հարաբերությունների և կուլտուրայի վարձագման հարցերի վրա :

Խոսելով Լեոյի նախասովետական շրջանի պատմագիտական աշխատությունների մասին, պետք է նախ և առաջ նշել այն, որ դրանք զգալի թարմություն մըտցրին տրադիցիոն հայագիտության մեջ : Թե՛ իրենց բովանդակությամբ և թե՛ շարադրման եղանակով այդ գործերը հաճելի նորություն էին և այդ պատճառով էլ ջերմ ընդունելության արժանացան իր ժամանակի ընթերցող հասարակության կողմից :

Անվանի պատմաբանը կարողացավ հաղթահարել կղերա-պահպանողական, կրոնական-սխոլաստիկական շատ կոնցեպցիաներ և հանդես բերեց նոր, գիտական մոտեցում հայ ժողովրդի պատմության մի շարք հանգուցային հարցերի նկատմամբ : Այդ հնարավոր եղավ շնորհիվ այն բանի, որ Լեոն իր պատմագիտական գործունեության առաջին իսկ տարիներից հարեց հայագիտության նոր, առաջավոր ուղղությանը և լայնորեն օգտագործեց իր ժամանակի ռուսական և արևմտաեվրոպական պատմագիտության խոշոր ներկայացուցիչների, ինչպես նաև ականավոր հայագետներ Ն. Մառի, Ն. Ադոնցի, Գ. Խալաթյանցի և ուրիշների հետապնդողությունները :

Լեոն բաժանում էր այն տեսակետը, թե պատմագիտությունը պետք է զբաղվի ոչ թե թագավորների ու զորավարների, այլ ժողովրդի պատմությամբ : Իր հոդվածներից մեկում նա գրում էր. «Պատմությունը վաղուց դադարել է լոկ պատերազմական թմբուկների և արքաների արձագանք լինելուց : Պատմությունը այժմ զվարճալի ընթերցանություն չէ, այլ գիտություն... Նրա (պատմության) առջև ավելի մեծ, ավելի պատասխանատու գործ կա—ժողովրդի կյանքը դարերի ընթացքում... Թագավորները, իշխանները, եպիսկոպոսներն ու եպիսկոպոսապետները ժողովրդի պատմություն չեն, այլ այդ պատմության արտահայտությունը» («Հորիզոն», 1911 թ., հունիսի 15) :

Ելնելով այս դրույթից, նշանավոր պատմաբանը աշխատեց լուսաբանել հայ

ժողովրդի տնտեսական, քաղաքական ու մտավոր կյանքը և ցույց տալ նրա անցած բարդ ու դժվարին պատմական ուղին : Եվ հենց այս հարցերն էլ կապմեցին նրա պատմագիտական աշխատությունների հիմնական բովանդակությունը :

Հայտնի է, որ կղերա-ֆեոդալական պատմագրության ներկայացուցիչները իդեալականացրել են պատմական անցյալը, փորձել են ժխտել սոցիալ-դասակարգային ճնշումների ու ներհակությունների առկայությունը մեր ժողովրդի պատմության մեջ : Ժխտելով այդ ըստ ամենայնի սխալ «տեսությունը», Լեոն մի անգամ ևս հիմնավորեց այն ճշմարտությունը, թե հայ ժողովրդական մասսաները ևս ենթարկվել են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին, «հայրենի» հարստահարիչների ճնշումներին ու կեղեքումներին : Այս մասին նա գրել է ոչ քիչ էջեր, անդրադարձել է իր մի շարք աշխատություններում : Բնորոշ է, օրինակ, որ դեռևս 1905 թ. Լեոն հրապարակեց մի հատուկ հոդված, ուր հենվելով Շիրակում գտնված արձանագրությունների և Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» տվյալների վրա, այն ձանագրությունների և Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» տվյալների վրա, այն միտքը հայտնեց, թե հակառակ տիրապետող տեսակետին, Հայաստանում ևս եղել է ճորտատիրություն : Մերժելով Վահան Բաստամյանի այն կարծիքը, թե Հայաստանում երբեք ճորտեր չեն եղել, Լեոն նկատում է. «Նախ և առաջ մեզ վարձագտանում երբեք ճորտեր չեն եղել, Լեոն նկատում է. «Նախ և առաջ մեզ վարձագտանում է այն կտրուկ ձևը, որով գիտնական վարդապետը ժխտում է ճորտությունը Հայաստանում : Երբեք, ասում է նա, գոյություն չի ունեցել ճորտությունը : Ինչի՞ց գիտեք : Արդյոք այնքան լավ հայտնի՞ են հին հայկական կյանքի բոլոր ներքին պայմանները : Բաստամյանցը նույնիսկ գիտի, որ ճորտատիրական դրության բացակայությունը վեճ չվերցնող մի ճշմարտություն է, որ նա հայտնի է ամենքին, այդպիսի համոզմունքը, ճիշտ է, այսօր էլ ընդհանուր է մեր մեջ, բայց հարցն այն է, թե որքան՞ ճշմարտություն կա այդ համոզմունքի մեջ» («Մուրճ», 1905 թ., № 10, էջ 89) : Ամփոփելով պատմական նյութերով հարուստ իր հոդվածը և չհամաձայնելով Բաստամյանի հետ, Լեոն գրում էր. «Հայաստանի հողն էլ ուրեմն ապա չի եղել ստրուկ, անասունի պես վաճառվող հողագործի հեծեճանքներից, արյուն քրտինքից : Իվուր էինք կարծում, թե մեր պապերը ոչ ճորտ են եղել, ոչ ճորտատեր» (նույն տեղ, էջ 99) :

Հայաստանի պատմությունը Լեոյի աշխատություններում տրված է ոչ թե մեկուսացված, ինքնամփոփ ձևով, այլ լայն ֆոնի վրա, սերտորեն կապակցված հարևան երկրների պատմության հետ : Հեղինակը անց է կացնում Կուրանտներ, կատարում համեմատություններ, նշում փոխազդեցություններ, հայտնաբերում առանձնահատկություններ ու ընդհանրություններ հայ և հարևան ժողովուրդների սոցիալական, քաղաքական ու մշակութային կյանքի միջև : Այս բոլորի հետևանքով Հայաստանի պատմությունը անկասկած ավելի է լուսաբանվում, ավելի հստակ ու ամբողջական դառնում :

Պատմագիտական աշխատությունները առավել արժեքավոր են այն դեպքում, երբ տալիս են ոչ միայն կոնկրետ նյութ, փաստեր, այլև ընդհանրացումներ, տեսական եզրակացություններ : Լեոյի գործերում կան և մեկը, և մյուսը : Նշանավոր պատմաբանը հայտնի է նաև իր սրամիտ դատողություններով ու փաստերի նուրբ վերլուծությամբ :

Լեոն չի պատկանել այն պատմաբանների թվին, որոնք խուսափել են գրել ժամանակակից դեպքերի կամ թե մոտավոր անցյալի մասին : Նա բազմաթիվ առիթներով շոշափել է ժողովրդին հուլող խնդիրները, փորձել է իմաստավորել իր ժամանակի բարդ քաղաքական ու սոցիալական անցքերը, միջավայրի դիվանագիտության շղարշավորված, խարդախ քաղաքականությունը : Հայրենասեր պատմաբանի մի շարք աշխատություններում խոսվում է արևմտահայության ծանր կա-



ցության, հայկական հարցի, կովկասահայերի ներքին կյանքի, ազգերի փոխհարաբերությունների և այլ խնդիրների մասին: Ավելին: Անգամ հեռավոր անցյալին նվիրված աշխատություններում Լեոն յուրովի արտահայտել է իր ապրած ժամանակաշրջանի հասարակական տրամադրությունները, իղձերն ու ցանկությունները:

Պատմագիտական աշխատություններ գրելիս Լեոն օգտագործել է բազմատեսակ ու բազմաբովանդակ աղբյուրներ, նյութեր և գրականություն: Նա պրպրտումներ է կատարել ձեռագրատներում և արխիվներում, անհրաժեշտ նյութեր է քաղել հայ պատմիչների երկերից ու ժամանակագրություններից, հին հունական և հռոմեական հեղինակներից, ուսումնասիրել է վիճական արձանագրություններ, հենվել է հնագիտական, լեզվագիտական ու բանասիրական տվյալների վրա, կարգացել է ճանապարհորդական նոթեր, հուշեր, գիտական ուսումնասիրություններ և այլն: Եվ այս հսկայական նյութն ու գրականությունը բազմավաստակ պատմաբանը օգտագործել է ոչ թե մեխանիկորեն, այլ քննադատաբար: Զանիցս նա առիթներ է ունեցել խիստ քննադատության ենթարկելու պատմական աղբյուրները և բացահայտելու մի շարք հեղինակների սխալները, միակողմանիությունը և հետապնդած քաղաքական դիտավորությունը: Այսպես, օրինակ, Լեոն ցույց է տալիս, թե ինչպիսի միտումնավորություն են հանդես բերում հռոմեական աղբյուրները հայ-հռոմեական պատերազմները լուսաբանելիս: Մասնավորեցնելով իր խոսքը Լուկուլլոսի դեպի Հայաստան կատարած արշավանքի մասին նա գրում էր. «Հռոմեական աղբյուրները պայծառ և գեղեցիկ մանրամասնություններով են նկարագրում այդ արշավանքը: Բայց նրանք, տարաբախտաբար, մի ընդհանուր պակասություն ունեն—միակողմանիություն: Հիմնված լինելով գլխավորապես Լուկուլլոսի պաշտոնական վեկուցումների և արշավանքին մասնակցած այլ հռոմեացի վիճակորդականների պատմվածքների վրա, այդ տեղեկությունները ամեն տեղ և ամեն կերպ աշխատում են փառաբանել Լուկուլլոսին և ստորացնել նրա հակառակորդներին: Այս միտումնավորությունը շահագործել է նույնիսկ և հրաշքները, ցույց տալու համար, թե նույնիսկ երկինքն էլ ջանք էր թափում, որ հռոմեացիների հաղթանակը լիակատար լինի: Սակայն այդ ծայրահեղ միակողմանիության մեջ էլ մնացել են շատ ակնարկներ, որոնք վկայում են, թե հռոմեական աղբյուրները թաքցնում են շատ բան, որ ձեռնառու չէ Լուկուլլոսին և նրա բանակին» («Հայոց պատմություն», հատ. 1, Թիֆլիս, 1917, էջ 405): Լեոն քննադատական մոտեցում է հանդես բերել նաև մյուս, այդ թվում և հայ աղբյուրների ու հեղինակների նկատմամբ: Հայտնի է, օրինակ, որ նա, բարձր գնահատելով Մ. Չամչյանի «Պատմություն հայոց» եռահատոր աշխատությունը, միաժամանակ իրավացիորեն նշել է այդ գործի լուրջ թերությունները: Ականավոր հայագետի նման մոտեցումը, իհարկե, ավելի է բարձրացրել նրա աշխատանքների գիտական մակարդակը:

Սակայն Լեոնի նախասովետական շրջանի պատմագիտական աշխատությունները, վերը նշված և մի շարք այլ արժանիքների հետ մեկտեղ, ունեն նաև զգալի թերություններ: Բանն այն է, որ Լեոնի պատմահայեցողությունը եղել է իդեալիստական, պատմական պրոցեսի ըմբռնման նրա մեթոդոլոգիական սկզբունքները ունեին հեղհեղուկ, էկլեկտիկ բնույթ: Սրանից էլ բխում են նրա գործերի ընդհանուր բնույթի մի շարք լուրջ սխալներն ու թերությունները: Թվենք դրանցից մի քանիսը:

Լեոնի աշխատություններում խիստ գերազանհատված է «հոգևոր ֆակտորի» դերը մարդկային հասարակության կարգացման գործում: Պատմության առաջընթացը, ըստ հեղինակի, պայմանավորված է մտավոր-կուլտուրական առաջադիմությամբ, կրթության, լուսավորության, հասարակական մտքի կարգացման մակար-

դակով: Անտեսելով նյութական-տնտեսական պայմանների, սոցիալ-դասակարգային հարաբերությունների, ժողովրդի պայքարի ու դիմադրական ուժի, երբեմն անգամ քաղաքական անցքերի դերն ու նշանակությունը, Լեոն հայ ժողովրդի պատմության մեջ տեղի ունեցած մի շարք խոշոր տեղաշարժեր բացատրում է, օրինակ, միայն տառերի գյուտով, գաղափարների, դպրոցների ու գրականության կարգացմամբ և այլն: «Հինգերորդ դարի սկզբին, հայ աշխարհը փրկվել էր կործանումից, ստեղծելով ազգային դաստիարակություն», գրում էր Լեոն («Հայոց պատմություն», հատ. 3, էջ 273): Մտավոր գործունեությունը, ասում էր նա մի այլ տեղում, հայ ժողովրդի «գոյության ամենահզոր պատվարն է եղել» («Հայկական տպագրություն», հատ. 1, էջ 4):

Խիստ գերազանհատված է նաև անհատի դերը պատմության մեջ: Լեոն այն կարծիքն ուներ, թե պատմական իրադարձությունների մեջ վճռական դերը պատկանում է անհատներին, հատկապես թագավորներին ու կորահրամանատարներին: Հին Արևելքի երկրներում, գրում էր Լեոն, «պետության առաջադիմությունը և անկումը կախված էին միապետի անձնական հատկություններից» («Հայոց պատմություն», հատ. 1, էջ 38): Հայ պետականության հպարտացումը ու թուլացումը ևս Լեոն մեծ չափով կապում էր թագավորների ընդունակության կամ անկարողության հետ: Տիգրան 2-րդը քաջ էր ու տաղանդավոր, այդ պատճառով էլ նա կարողացավ ստեղծել մեծ կայսրություն: Հովհաննես-Սմբատ Բագրատունին, «այդ խեղճ ու անկարող մարդը... գերեզմանի ափը հասցրեց Շիրակի փոքրիկ պետությունը» («Հայոց պատմություն», հատ. 2, էջ 686): Լեոն միաժամանակ գտնում էր, որ պատմական իրադարձությունների մեջ խոշոր դեր են խաղում նաև պատահականությունները: Նրա կարծիքով «մարդկային հաջողությունների մեջ միշտ գլխավոր դերը կատարել է պատահականությունը» (նույն տեղ, էջ 616):

Պատմության հարցերին նվիրված իր գործերում Լեոն, ընկնելով ծայրահեղության մեջ, չափազանց մեծ նշանակություն է տալիս կրոնին: «Կրոնները քաղաքակրթության ամենահզոր գործոններից մեկն են եղել»,— գրել է նա («Հայոց պատմություն», հատ. 1, էջ 63): Չափազանցված է եկեղեցու և հոգևորականության դերը, ինչպես նաև դավանաբանական վեճերի նշանակությունը հայ ժողովրդի պատմության մեջ: Մի շարք սոցիալ-դասակարգային և հասարակական-քաղաքական անցքերի ու երևույթների հիմքում ևս փորձում է տեսնել կրոնական-դավանաբանական պատճառներ: Ավելին. սոցիալ-դասակարգային բովանդակություն ունեցող և ֆեոդալիզմի դեմ ուղղված պավլիկյան ու թոնդրակյան շարժումները Լեոն գնահատում էր որպես կրոնա-դավանաբանական շարժումներ («Հայոց պատմություն», հատ. 2, էջ 343—344, 474—475):

Պրոֆ. Լեոն տուրք է տվել այսպես կոչված աշխարհագրական ֆակտորի տեսությանը: Ունենալով սխալ մեթոդոլոգիական ելակետ, նա գերազանհատում է աշխարհագրական միջավայրի դերը, հաճախ նրան վերագրելով վճռական նշանակություն հասարակական կարգացման մեջ: Ժողովուրդների ոչ միայն տնտեսական կյանքը, այլև մշակույթը, գաղափարախոսությունը, հոգևոր աշխարհը և այլն, հեղինակը բնութագրում է աշխարհագրական միջավայրով: «Եթե քաղղեանգիպտական քաղաքակրթությանն էր վիճակված կատարել համաշխարհային դեր, դրա գլխավոր պատճառն այն աշխարհագրական միջավայրն էր, ուր նա ծոխացավ» («Հայոց պատմություն», հատ. 1, էջ 123): Լեոն կարծում էր, թե հայ ժողովրդի պատմական կարգացման ընթացքի վրա որոշիչ ազդեցություն է թողել Հայաստանի աշխարհագրական դիրքը:

Իր աշխատություններում Լեոն երբեմն իդեալականացնում է պատմական անցյալը և մասնավորապես անցյալի պետական-քաղաքական ու կրոնական գործիչներին: Նա չի բացահայտում դասակարգային պայքարը, սոցիալական ներհակությունները և դրանց նշանակությունը ժողովրդի պատմության մեջ: Օտար տիրապետությունների դեմ ուղղված հայ ապստամբական շարժումները հեղինակը հաճախ համարում է ոչ թե ժողովրդական մասսաների, այլ նախարարների՝ ազնվականության շարժումներ: 19 և 20-րդ դարերի պատմությանը նվիրված նախասովետական շրջանի իր գործերում նա չի տալիս հստակ պատկերացում հայկական հարցի մասին և մինչև վերջը չի մերկացնում ինչպես թուրքական կառավարող կլիկի հայաջինջ սև գործը, այնպես էլ իմպերիալիստական պետությունների նվաճողական շահամուլ և երկդիմի քաղաքականությունը:

Լեոյի գործերում կան մի շարք իրարամերժ, հակասական կարծիքներ: Միևնույն հարցի մասին տարբեր ժամանակներում գրած իր աշխատություններում նա արտահայտել է տարբեր տեսակետներ: Չունենալով կուռ աշխարհայացք, Լեոն ոչ բոլոր դեպքերում է, որ դրսևորել է հետևողականություն իր հայացքների մեջ:

Ի վերջո հարկ է նկատել, որ Լեոյի նախառնույնցիոն շրջանի պատմագիտական աշխատությունները, որ գրված են մոտ 50—60 տարի առաջ, մասամբ կորցրել են իրենց թարմությունը և մի շարք հարցերում հնացել են: Այս վերաբերում է հատկապես «Հայոց պատմության» առաջին հատորին, ուր տրված է հայ ժողովրդի հին պատմությունը: Այժմ, օրինակ, չի կարելի ճիշտ համարել այն տեսակետները, որ հեղինակը վարձացնում է մարդկային հնագույն քաղաքակրթության պարբերացման, հին արևելքի տնտեսական ֆորմացիաների, ուրարտացիների, հայ ժողովրդի կազմավորման (էթնոգենեզի), հայկական պետականության սկզբնավորման և հայ հին մշակույթի, պատմահայր Մովսես Խորենացու պրոբլեմի և այլ հարցերի վերաբերյալ: Ժամանակակից պատմագիտության և հնագիտության հարուստ ու հավաստի տվյալները այսօր նոր լույս են սփռում անցյալում չպարզաբանված այդ խնդիրների վրա:

Սովետական իշխանության տարիներին՝ իր կյանքի վերջին տասնամյակում, պրոֆ. Լեոն գրեց մի շարք նոր աշխատություններ՝ նվիրված հայ ժողովրդի պատմության տարբեր հարցերին: Նա ավարտեց «Հայոց պատմության» չորրորդ հատորը, գրեց «Խոջայական կապիտալ» բազմահատորյակը (լույս է տեսել միայն առաջին հատորը), հրատարակեց «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» (երկու հատոր), «Անցյալից» խորագիրը կրող իր հուշերը և մի շարք հետաքրքիր հոդվածներ: Լեոյի արխիվում պահվում են նաև դեռևս չհրատարակված ձեռագիր աշխատություններ («Մանուկ Հայաստան», «Հայերը համաշխարհային պատերազմի մեջ» և այլն), որոնք նույնպես գրված և ավարտված են այս շրջանում:

Ապրելով նոր, սովետական կարգերում Լեոն աշխատեց հրաժարվել իր իդեալիստական աշխարհայացքից և կանգնել մատերիալիստական պատմահայեցողության դիրքերում: Տարեց պատմաբանը սկսեց ավելի շատ ուշադրություն դարձնել Հայաստանի սոցիալ-տնտեսական ու դասակարգային պայքարի հարցերի պատմության վրա, հաջողությամբ վեր հանեց ցարիվազի գաղութային քաղաքականությունը և արևմտյան պետությունների խարդախ դիվանագիտությունը հայկական հարցում, սուր քննադատության ենթարկեց հայ ազգայնական կազմակերպությունների ու կուսակցությունների գործունեությունը, վերանայեց ու վերագնահատեց անցյալի իր սխալ տեսակետները և այլն: Շատ բնորոշ են Լեոյի ժամանակակից սովետահայ ականավոր մտավորականներից Վահի Դրաստամատ Սիմոնյանի հու-

շերը այն մասին, թե ինչպես բազմավաստակ պատմաբանը փորձում էր «վերակառուցվել» նաև մանկավարժական աշխատանքում: Սիմոնյանը 1932 թ. գրել է. «1926 թվին տողերիս գրողին վիճակվեց լսել Լեոյի մեկ դասախոսությունը պետական համալսարանի պատմա-գրական բաժանմունքի ուսանողների համար: Ֆրանսիական մեծ հեղափոխությունն էր դասախոսության թեման: Այդ դասախոսությունը տպավորվեց իմ մեջ որպես անմոռանալի մի հիշողություն: 66 տարեկան դասախոսը, որի գրեթե 40-ամյա գործունեությունը անցել էր իդեալիստական աշխարհայացքի պորեղ ազդեցության տակ, անկեղծորեն, համոզված ձգտում էր մատերիալիստորեն լուսաբանել 18-րդ դարի ֆրանսիական ժողովրդի մեծ դրամայի իրադարձությունները» («Խորհրդային Հայաստան», 1932 թ., նոյեմբերի 16):

Չնայած այդ բոլորին, Լեոյին այնուամենայնիվ չհաջողվեց ճիշտ ըմբռնել մատերիալիստական-մարքսիստական պատմահայեցողությունը և նա ընկավ սխալ սկզբունքներ ունեցող Մ. Ն. Պոկրովսկու պատմագիտական դպրոցի՝ ուղղության ազդեցության տակ, ուղղություն, որ իր ժամանակ իշխող դիրք էր գրավում: Իսկ այդ այն հետևանքն ունեցավ, որ գիտնականը սովետական շրջանում գրած իր աշխատություններում ընդհանուր առմամբ գեղեցիկ սոցիոլոգիկ մի և ազգային նիհիլիզմի դիրքերից լուսաբանեց հայ ժողովրդի պատմության հարցերը: Բերենք երկու օրինակ:

Հետևելով Մ. Ն. Պոկրովսկու՝ առևտրական կապիտալի մասին ունեցած վուլգար-մատերիալիստական տեսությանը, Լեոն գտնում էր, որ «նոր ժամանակներում», այսինքն 16—19-րդ դդ., ինչպես Եվրոպայում, այնպես էլ Հայաստանում հասարակական վարձացման հիմնական շարժիչ ուժը եղել է առևտրական կապիտալը: Այդ մասին իր «Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ» աշխատության մեջ (լույս է տեսել 1934 թ.) Լեոն գրում էր. «Եթե Արևմտյան Եվրոպայում առևտրական կապիտալի տիրապետությունը բերում էր իր հետ մի շարք խոշոր քաղաքական-հասարակական շարժումներ (նիդեռլանդական, անգլիական, ֆրանսիական հեղափոխություններ, գերմանական ռեֆորմացիա և այլն), հայերի մեջ էլ, չնայած որ սրանք ապրում էին բուրժուական տարբեր քաղաքական մշակութային միջավայրում, խոջայական կապիտալը ծնող, դաստիարակող, ղեկավար դարձավ խոշոր և երկարատև մի երևույթի, որ նույնպես ապստամբական հեղափոխություն էր, բայց արդեն Առաջավոր Ասիայի հողի վրա, ասիական մեծ բռնապետություններից սեփական ազգային անկախություն խլելու համար» («Խոջայական կապիտալ», հատ. 1, էջ 5):

Մասնավորեցնելով իր խոսքը հայ առևտրական կապիտալի, կամ իր խոսքերով ասած, խոջայական կապիտալի վրա, Լեոն եզրակացնում էր. «Այսպիսով խոջայական կապիտալը հանդիսանում է այնքան մեծ, այնքան անգերակշռելի մի հասարակական ուժ, որ նրան է միայն վերապահվում իրանով լցնել հայոց պատմության ամբողջ նոր շրջանը» (նույն տեղ, էջ 6): Հավատարիմ իր այս դրույթին նա հայ ժողովրդի 16—18-րդ դդ. ամբողջ պատմությունը՝ թե քաղաքական ու քաղաքացիական, թե տնտեսական ու մշակութային, կապում է միայն առևտրական կապիտալի հետ, միանգամայն անտեսելով մյուս դասերի ու դասակարգերի դերը: Այս տեսակետը, հասկանալի է, չի կարող դիմանալ քննադատության:

Ինչպես «Խոջայական կապիտալ»-ում, այնպես էլ «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» երկհատորյա աշխատության մեջ (լույս է տեսել 1934 թ.) և իր հուշերում («Անցյալից», լույս է տեսել 1925 թ.) Լեոն հանգամանորեն խոսում է 18 և 19-րդ դդ. հայ ապստամբական շարժումների մասին: Ելնե-

լով նիհիլիստական դիրքերից, հեղինակը բացասական վերաբերմունք է ցուցաբերում այդ շարժումների և դրանց գործիչների նկատմամբ: Այսպես, Լեոն փորձում էր նսեմացնել Դավիթ-Բեկի գլխավորած շարժումը, միամիտ ու սխալ էր համարում Իսրայել Օրու, Հովսեփ Էմինի և մյուս հայ ակնավոր գործիչների ապատագրական ձգտումները և քաղաքական ծրագրերը (տես «Մոջայական կապիտալ», հատ. 1, էջ 193, 307 և ուրիշներ): Նրա կարծիքով 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ ապատագրական շարժումները չէին բխում ժողովրդի շահերից, ինքնաբուխ չէին և ըստ էության հանդիսանում էին «ինտելիգենտական մտածողության արգասիք» («Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը», հատ. 1, էջ 9): Իհարկե, այստեղ ևս թույլ են տրված լուրջ սխալներ:

Ավելորդ չէ հիշել, որ Լեոյի այս անընդունելի տեսակետները չէին համընկնում այդ նույն հարցերին վերաբերող նրա նախառնույլուցիոն շրջանի հայացքներին: Եթե, օրինակ, իր կյանքի երեկոյին՝ անհաջող վերագնահատումների պահերին գրած աշխատություններում նա սև գույներով էր պատկերում 18-րդ դարի հայ ապատագրական շարժումները, ապա նախկինում ստեղծած իր գործերում փառաբանում և ըստ հարկին էր գնահատում այդ նույն ժողովրդական, առաջադեմ շարժումները: Ինչպես տեսնում ենք, տրամագծորեն հակառակ կարծիքներ միևնույն խնդրի վերաբերյալ:

### 3

Պրոֆ. Լեոն անցել է բարդ, զիգագներով ու հակասություններով լի ուղի: Նրա թողած բազմաթիվ ու բազմաբովանդակ աշխատությունները ունեն իրենց ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ կողմերը: Բազմաժանր հեղինակի պատմագիտական ժառանգության մասին կարելի է շատ խոսել ու վիճել: Բայց այդ ժառանգությունը ունի այնպիսի արժանիքներ և առավելություններ, որոնց մասին հավիվ թե կարելի լինի տարակուսել: Որո՞նք են այդ արժանիքները:

Անվանի պատմաբանի աշխատությունները պարունակում են փաստագրական հարուստ նյութ: Տասնյակ տարիների ընթացքում պարմանալի եռանդով ու աշխատասիրությամբ Լեոն բազմաթիվ ձեռագրերից, արխիվային փաստաթղթերից և գրական-պատմական այլ կարգի աղբյուրներից հավաքել է հետաքրքիր շատ փաստեր ու տեղեկություններ: Հեղինակի աշխատություններում կարելի է գտնել արժեքավոր նյութեր հայ ժողովրդի ինչպես հասարակական-քաղաքական կյանքի, այնպես էլ հոգևոր մշակույթի պատմության վերաբերյալ:

Լեոյի գործերը շարադրված են հստակ, կենդանի և պատկերավոր լեզվով ու վարակիչ հուլականությամբ: Այս հարցում նա չունի իր հավասարը մեզանում: Լեոն ոչ միայն գիտնական է, այլև գրող, խոսքի վարպետ: Կարդալով նրան, ընթերցողը հաճախ ստանում է գեղարվեստական հաճույք: Պատահական չէ, որ ականավոր պատմաբանի աշխատությունները սիրով են ընդունվում հասարակության լայն խավերում:

Հայ ժողովրդի պատմության որոշ դրվագներ և մասնավորապես 16—18-րդ դդ. պատմության մի շարք հարցեր առաջին անգամ լուսաբանվել են Լեոյի աշխատություններում, ընդ որում այդ լուսաբանությունը հիմնականում չի կորցրել իր նշանակությունը նաև մեր օրերում: Տաղանդավոր պատմաբանը, օրինակ, սուր գրչով է պատկերել այն դաժան հարստահարություններն ու անլուր


ճնշումները, որոնց ենթակա էին թուրքական ու պարսկական բռնապետությունների լծի տակ տառապող հայ ժողովրդական մասսաները, հաջողությամբ է շարադրել ժողովրդի ապատագրական պայքարը, նրա մշակույթի վարճացման պատմությունը և այլն: Լեոյի այս և մի շարք այլ հարցերին նվիրված ուսումնասիրությունները մեծ հետաքրքրությամբ են կարդացվում նաև այսօր:

Իր սերնդի պատմաբանների մեջ Լեոն առաջինն էր, որ հաղթահարելով մեծ դժվարություններ՝ շարադրեց հայ ժողովրդի պատմությունը սկսած հնագույն ժամանակներից մինչև 19-րդ դարը ներառյալ, որով և կատարեց շնորհակալ գործ Հայաստանի պատմության լուսաբանման ուղղությամբ:

Պրոֆ. Լեոյի պատմագիտական ժառանգությունը իր տեղն է գրավել հայագիտության պատմության մեջ: Այդ ժառանգության մի զգալի մասը արժանի է, որ դառնա մեր ընթերցողի սեփականությունը:

Լեոյի երկերի ներկա հրատարակության մեջ նրա պատմագիտական գործերից ընդգրկված է միայն «Հայոց պատմություն» բազմահատոր աշխատությունը, որ հրապարակվում է խմբագրական աննշան կրճատումներով, ճշտումներով և անհրաժեշտ ծանոթագրություններով:

Պրոֆ. Մ. ՆԵՐՍԻՍԻԱՆ



Հայոց պատմություն

առաջին հատրք

Հին պատմություն





Ա

Գ Ա Տ Մ Ո Թ Յ Ա Ն Ա Ղ Բ Յ Ո Ի Բ Ն Ե Բ Ը

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՏՄՈՒԹՅՈՒՆ: 2. ՀԱՅՈՑ ԳԱՏՄՈՒԹՅՈՒՆ: 3. ԵՌՍՈՒՄ ԵՆ ՄԵՌԱՍ ԼՅՁՈՒՆԵՐԸ: 4. ՎԱՆՑԱՆ ՍԵՊԱԳԻՐՆԵՐ: 5. ՕԺԱՆԳԱԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Ա. ՀԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր պատմություն: Մինչև 19-րդ դարը պատմագրական գիտությունը շատ ընդարձակ տեղեկություններ չունեի Առաջավոր Ասիայի պատմության ամենահին շրջանների մասին: Պատմության աղբյուրները այն նյութերն էին, որոնք ամփոփված էին հին մատենագրությունների մեջ:

Գլխավոր և ամենահին մատյանը Աստվածաշունչն էր, որի մեջ, ինչպես հայտնի է, պատմությունն սկսվում է աշխարհի ստեղծագործությունից: Դա մի տեսակ ընդհանուր պատմություն է, ուր հանդես եկողը միայն հրեական ազգը չէ, այլ և այն օտար ցեղերը, որոնց հետ հարաբերություններ և շփումներ են ունեցել հրեաները, այն է՝ Եգիպտոս, Բաբելոն, Ասորեստան, Փյունիկիա, Պարսկաստան և այլն:

Աստվածաշնչից հետո հին հունական մատենագրությունն էր, որ տալիս էր ավելի ընդարձակ պատմական, ազգագրական և աշխարհագրական տեղեկություններ Առաջավոր Ասիայի մասին: Բայց այստեղ էլ հնագույն շրջանները մնում էին անհայտ ու մութ: Ամենահին հույն հեղինակը, որ գրել է պատմություն և այդ պատճառով էլ կոչվում է «պատմահայր», Հերոդոտ Նախկարնասցին է, որ ապրում էր 480—426 թվականներին Քրիստոսից առաջ: Խելոք, կրթված Հերոդոտը ճանապարհորդել է իր ժամանակի քաղաքակիրթ երկրներում, ուսումնասիրել է նրանց բնակիչների սովորությունները, կյանքը, հավատքի է ավանդություններ և զետեղել է այդ բոլորը իր «Պատմության» մեջ, որի գլխավոր առարկան Հունաստանն է:

Հերոդոտի ժամանակակից էր Կտեսիաս հույն բժիշկը, որ պարսից Արտաքսերքսես Բ թագավորի ժամանակ (404—358 թ. Ք. ա.) ապրում էր նրա արքունիքում իբրև բժիշկ: Այդտեղ նա գրեց «Պարսկաստանի և Հնդկաստանի Պատմությունը», որից, սակայն, միայն հատկորեն են մնացել, իսկ ամբողջ գործը կորել է: Նույն ժամանակների հեղինակ է Քսենոֆոնը, փիլիսոփա և զորավար (430—355 թ. Ք. ա.), որ իր երկու նշանավոր աշխատությունների մեջ («Կյուրոպեդիա» և «Անաբազիս») թողել է ընդարձակ և հետաքրքրական տեղեկություններ Պարսկաստանի մասին:

Պակասավոր էր մանավանդ Բաբելոնի և Ասորեստանի պատմությունը:

Այս Երկու երկրների պատմական և քաղաքակրթական ահագին դերը համարյա միանգամայն անհայտ էր մնում հին գիտության, որովհետև նրանք շունչին իրենց սեփական պատմությունը, իսկ օտար աղբյուրները (Աստվածաշունչ, Հերոդոտ) կցկտուր տեղեկություններ էին տալիս նրանց փառավոր և երկարաթև անցյալից: Այս պակասությունը լրացրեց Բաբելոնի գիտնական բուրմերից մեկը, Բերոզոս անունով, որ ապրում էր Սելևկյան թագավորների ժամանակ (260—246 թ. Ք. ա.): Նա հունական լեզվով գրեց «Փաղղեայի Պատմությունը», տեղեկություններ քաղելով հին քաղղեական գրադարաններից և հիշատակարաններից: Բայց այս կարևոր աշխատությունն էլ կորել է և նրանից մի քանի հատկություններ են մնացել հետագա ժամանակների մատենագրությունների մեջ:

Այս միևնույն ճակատագիրն էր վիճակված և մարդկային քաղաքակրթության ամենափառավոր օրրանը կազմող Եգիպտոսին: Նրա իսկական պատմությունը մնում էր անհայտության մեջ: Բերոզոսի ժամանակակից մի եգիպտացի բուրմ, Մանեթոն անունով, նույնպես գրեց, դարձյալ հունարեն լեզվով, Եգիպտոսի պատմությունը, օգտվելով երկրի հիշատակարաններից: Բայց այս գործի ամբողջությունն էլ չկա: Դարձյալ պատահիկներ են միայն մնացել:

2. Հայոց պատմություն: Հայ ազգի սկզբնավորության և նախնական ժամանակների մասին աղբյուրիկ և կցկտուր մի քանի տեղեկություններ են հաղորդել հույն մատենագիրները (Հերոդոտ, Ստրաբոն): Թեև Մովսես Խորենացին դատապարտում էր իր նախնիքների «անիմաստասեր բարքը» և զանգատվում է, որ նրանք գրավոր հիշատակարաններ չեն թողել, բայց հայտնի է, որ Տիգրան Մեծի հրամանով Մետրոդորոս անունով հույնը գրել է, հունարեն լեզվով, Հայաստանի պատմությունը<sup>1</sup>: Դժբախտությունն այն է, որ այդ գործը ավելի վատթար բախտի է ենթարկվել, քան Կոնստանտին, Բերոզոսի և Մանեթոնի գործերը: Այդ հայկական պատմությունից նույնիսկ փշրանքներ էլ չեն մնացել:

Այնուհետև հայոց հին պատմության մի հատիկ աղբյուր է երևան գալիս Տիգրան Մեծից 6—7 դար հետո: Դա մի ոմն Մար-Աբաս Կատինա կամ Մարաբա Մծուրնացի Ասորու գիրքն է: Այդ աղբյուրը մեզ հասել է երկու խմբագրությամբ, մեկը դրված է Սեբեոսի (7-րդ դար) պատմագրության սկզբում<sup>2</sup>, մյուսը՝ Մովսես Խորենացու (այժմ համարվում է 7—8-րդ դարերի հեղինակ) հոչակավոր պատմության մեջ: Երկու խմբագրությունները միևնույն տեղից ծագում ունին, այն է՝ Մծբինի Արշակունի արքունիքից: Առաջին խմբագրությունը համառոտ է, երկրորդը՝ ընդարձակված և բացատրված: 1

Երկու խմբագրություններն էլ անցել են քրիստոնյա, այն էլ եկեղեցական գրողների ձեռքով, ուստի ենթարկվել են քրիստոնեության խիստ ազդեցության: Հայ պատմության այդ միակ աղբյուրը հարմարեցված է Աստվածաշնչի ավանդություններին, մի գրքի, որ քրիստոնյաների համար մեծագույն և անհերքելի հեղինակությունն էր: Որոնելով հայ ազգի ծննդաբանությունը, աղբյուրի քրիստոնյա խմբագրողները պետք է ենթարկվեին այն ազգաբանական ցուցակին, որ տալիս է Մենդոց գիրքը իր տասներորդ գլխում: Իր պատմության սկզբում Խորենացին ամենայն պարզամտությամբ ասում է.

Սե սկսայց յորոց և այլքն, որք յեկեղեցուչ և ոչք ըստ Քրիստոսի, աւելորդ համարելով զարտաքնոցն երկրորդել յաղագս ի սկզբան առասպելս, բայց եթէ զկնիսն՝ ժամանակ ինչ արդեւք և զարս յայտնիս, որում և աստուածայինքն ի ճահ զայցեն պատմութիւնք բանից, մինչև ի հարկէ երթալ հասանիցիմք ի հեթանոսական զրուցակարգութիւնս, սակայն և ի նոցանէ, զոր ինչ հաւաստին կարծեմք առնուլ<sup>3</sup>:

Այս ծրագիրը միանգամայն պարզ կերպով բնորոշում է: Թե ինչ տեսակ պատմություն կարող էր տալ Խորենացին կամ մի այլ քրիստոնյա եկեղեցական: Հավատարիմ մնալով այդ քրիստոնեական պարտականության, նա հայ ազգի ծագումը գետնողում է Մենդոց գրքի ազգաբանական միջավայրում: Դրան նպաստում է մանավանդ Նոյի տապանի ավանդությունը, որ, ինչպես հայտնի է, Արարատ սարի հետ է կապված: Ստեղծվում է արհեստական ժամանակագրություն, որ պահանջում է մի շարք հերյուրումներ և կեղծումներ: Հայկ նահապետի սերունդների կամ «Հայկազյան շրջանի» տիրապետությունը դուրս է գալիս շարունակված 1800 տարի<sup>4</sup>: Ժամանակի այդ ահագին տարածությունը լցնելու համար շարվեցին 59 տիրողներ, որոնցից 32-ը սոսկ անուններ են, առանց պատմության, առանց նույնիսկ մոտավոր ժամանակագրական ցուցմունքների, իսկ 27-ը միայն չոր կմախքներ չեն, այլ ունին իրենց նյութը:

Այդ նյութն անշուշտ Հայաստանում է կազմված և նրա մեջ ամեն ինչ մտացածին չէ, ինչպես կարծում են շատերը, այլ կան շատ ավանդական տարրեր, որոնց նշանները շատ տեղ են երևում: Բայց այդ ավանդական տարրերի նշանակությունն էլ կասկածի տակ է դրված շնորհիվ այն հանգամանքի, որ ժամանակագրությունը Աստվածաշնչին հարմարեցրած լինելու համար շափազանց շատ է արհեստականացրած, շատ է ձգձգված: Խորենացին, ինչպես հրեում է նրա վերոհիշյալ խոսքերից, «Հայկազյան» անվանված շրջանի պատմական ավանդությունները հավատարիմ արձանագրողի դերը չէ կատարել, այլ այդ ավանդությունները կարկատելու, դրանց վրա պատմություն շինելու, հերյուրելու և այդպիսով քրիստոնեական նպատակին արհեստականորեն ծառայեցնելու դերը:

Հին հայ պատմագրական գիտության համար Խորենացին նույնպիսի հեղինակություն էր, ինչպես Աստվածաշունչը: Օտար աղբյուրները միանգամայն արհամարհվում էին: Երկրորդ մեծ հեղինակություն է դառնում 18-րդ դարի հեղինակ Հ. Միքայել Զամչյանը: Միտլաստիկ աստվածաբանության վրա հիմնըված, նա ավելի ևս մեծացնում է հրեական ավանդությունների ազդեցությունը հայոց պատմության սկզբնավորության մեջ, առանց հիմքերի, լոկ երևակայությամբ, մանրամասն ժամանակագրություն է կազմում՝ «Հայկազյան» շրջանի ամբողջ ժամանակամիջոցը բաժանելով 59 տիրողների մեջ և յուրաքանչյուր տիրողին հատկացնելով տարիների համարյա միատեսակ քիվ (միջին հաշվով 30—35 տարի):

<sup>1</sup> Գիրք Ա, Գ: «Եվ կսկսեմ որտեղից սկսում են ուրիշ եկեղեցական և քրիստոնեական պատմագիրները, ավելորդ համարելով կրկնել կապաշտ պատմագիրների առասպելները սկզբի մասին, բայց եթե ինչ որ կվերաբրվի հետին ժամանակներին և հայտնի մարդկանց, որոնց հարմար կզա Աստվածաշնչի պատմությունը: Այսպես իհարկե գնալով կհասնենք մինչև Կեթանոսական գրույցները, և նոցանից ևս կառնենք միայն այն, ինչ որ հավանական ենք կարծում: (Քարթմ. Խ. եպ. Ստեփաննի, Պետեր., 1897, եր. 7, Տ. ԼՅմին, «История Армении Моисея Хоренского», М. 1893, с. 5):

<sup>2</sup> Հ. 2. Գաբրիելյան, «Տիգրեական Պատմություն», Վիեննա, 1849, հ. Ա, եր. 87:

<sup>1</sup> Մովսեսի Խորենացու Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1913, գիրք Ա, գր. 2  
<sup>2</sup> Проф. Халатяни, «Очерк истории Армении», М., 1910, с. 31.  
<sup>3</sup> «Պատմութիւն Սեբեոսի եգիպտացիի շինակն», Պետերբուրգ, 1879, դպր. Ա.  
<sup>4</sup> Գիրք Ա, Բ:

3. Խոսում են մեռած լեզուները: 19-րդ դարի ահագին գիտական շարժումները, որոնք մարդկային մտքի հոյակապ նվաճումներն էին բազմացնում կյանքի բոլոր շրջաններում, ի միջի այլոց կարողացան նաև կենդանութուն տալ Արևելքի հին, վաղուց մեռած լեզուներին:

Եգիպտոսում, Սիրիայում, Հայաստանի լեռներում, Իրանի հարավ-արևմուտյան մասերում քարե հուշարձանների և ժայռերի վրա գծագրված զանազան ձևի նշաններ էին մնացել հնության անհիշելի դարերից: Այդ լուռ հուշարձանների առջև դարեր էին թավալվել, պատմական ահավոր շարժումներ և կերպարանափոխություններ էին տեղի ունեցել, սերունդների երկար շարքեր էին եկել-գնացել, ազգեր էին իրար հաջորդել, բայց ոչ ոք չէր կարողացել հասկանալ, թե ինչ են այդ նշանները, խոսե՞լ են նրանք երբևիցե մարդկային լեզվով: Հին ժամանակների մի առեղծված՝ նրանք շատ շատերին են հիացրել, ինչպես և մեր Խորենացուն<sup>1</sup>, բայց եղել են միշտ մի խոր, անթափանցելի խորհրդավորություն, գերեզմանի գաղտնիք:

19-րդ դարն էր, որ բաց արավ այդ գաղտնիքը, խոսեցնել տվեց բազմադարյան լուռության մատնված հիշատակարանները: Սակայն այս մեծ գործը միանգամից, հրաշքով չկատարվեց: Պետք եղավ բազմաթիվ գիտնականների միահամուռ աշխատակցությունը: Աշխատանքն սկսված էր 19-րդ դարից առաջ: Եվ Իրանն էր, որ սկսել տվեց այդ աշխատանքը, գաղտնիքը լուծելու բանալին էլ տվեց:

17-րդ դարում կաթոլիկ հոգևորականությունը առաքելություններ հիմնեց Իրանում (մասնավորապես Սպահան և Նոր-Ջուղա, հայերի համար): Այդ միսիոներները ուշադրություն դարձրին երկրի հնությունների վրա, սկսեցին նկարագրել նրանց: Ամենից շատ ուշադրություն գրավում էր մի շատ նշանավոր, թեև միանգամայն ավերակ հնություն: Շիրազից 12 մղոն հեռու մի բարձրության վրա գտնվում է Իստահր գյուղը: Նրանից ցած, դաշտի վրա, փռված են ավերակներ, որոնց մեջ բարձրանում են քանդված շինությունների բարակ սյուներ: Հայտնի էր, որ սա հին Պերսեպոլիս<sup>2</sup> քաղաքն է, ուր հաստատված էր Աքեմենյան թագավորների գահը: Այստեղից էին դարձնելը, քսերքսեսները հրամայում իրենց ստեղծած Իրանին, որ պարունակում էր իր մեջ այն ժամանակվա քաղաքակիրթ աշխարհի մեծագույն մասը, սկսած Հունաստանի սահմաններից և Եգիպտոսից մինչև Հնդկաստան: Աքեմենյանների այդ պետությունը և այդ մայրաքաղաքը Ալեքսանդր Մակեդոնացու ձեռքն անցան: Մի գինեխմության ժամանակ Ալեքսանդրը, մի հույն հարձի թելադրությամբ, իր ձեռքով հրդեհեց Աքեմենյանների պալատը՝ իբրև վրեժ այն արշավանքի համար, որ այդ պալատի տերերից մեկը, Քսերքսեսը, կատարել էր դեպի Հունաստան<sup>3</sup>: Ավերակները շինականացան այն ժամանակից, մայրաքաղաքը անդամալ դարձավ և ներկայացնում էր քարերի կույտ:

17-րդ դարի այցելուները՝ միսիոներներ և ճանապարհորդներ (նշանավոր Շարդենը) ուշադրություն դարձրին, որ այդ ավերակների վրա կան քանդակներ, որոնք ներկայացնում են սեպի ձև ունեցող գծեր զանազան դիրքով:

<sup>1</sup> Գիրք Ա, ԺԶ.

<sup>2</sup> Այս քաղաքի հունական անունն է մնացել, թե ինչ անուն ուներ նա պարսիկների մեջ, հայտնի չէ:

<sup>3</sup> Joachim Ménaud, „Les Achéménides“, Paris, 1872, p. 31.

րով (ուղղաձիգ, թեք, հորիզոնական), որոնք խմբեր են կազմում: Ի՞նչ էին դրանք: Առաջին անգամ իտալացի Պիետրո Դելլա-Վալլեն էր (1620 թ.), որ տեղն ու տեղը ուսումնասիրելով այդ նշանները, կարծիք հայտնեց, թե դրանք տառեր են և պետք է կարդացվին ձախից դեպի աջ: Սակայն Եվրոպայում այդ նշանագրերը առանձին հետաքրքրություն չգարթեցրին, և մի դար անցած՝ անգլիացի Թոմաս Հեյդը, որ արևելագետի համբավ ուներ, ասում էր իր մի աշխատության մեջ, թե շարժել էլ ուշադրություն դարձնել դրանց վրա, քանի որ դրանք իսկապես գրեր չեն, այլ քանդակագործ վարպետի խաղեր: Մի տեսակ զարդեր են, որոնք հարկավոր են եղել նկարի բաց տեղերը լցնելու համար:

Սակայն այս իբր թե գիտնական վճռով իրանական նշանագրերի քախաղը ընդմիջտ չէր որոշվում: 1765 թվին ավերակներն այցելեց դանիացի Նիբորը, որ նշանավոր գործ կատարեց, մանրամասն ուսումնասիրելով նշանագրերի բնավորությունը, դասավորության եղանակը: Նա էր, որ ցույց տվեց, թե սեպագիր արձանագրությունները երեք խմբերի են բաժանվում, որովհետև զգրված են երեք տարբեր լեզուներով: Գրություն օրենքները գտնված էին: Մնում էր կարդալը: Ահա այդ էր ամենադժվարը:

Մինչև այդ նույն 18-րդ դարում տեղի ունեցավ մի ուրիշ նշանավոր գյուտ: Գտնվեց հին պարսկական լեզուն, և այս գյուտը շատ նպաստեց բնագրերի վերծանության: Ինչպես հայտնի է, երբ արարները նվաճեցին Իրանը (7-րդ դար), համարյա բոլոր այն պարսիկները, որոնք չկամեցան իրենց կրոնից հրաժարվել և իսլամն ընդունել, հարկադրված եղան հեռանալ իրենց հայրենիքից: Նրանք իրենց հետ տարան իրենց պաշտամունքը, իրենց սրբազան գրքերը: Սկզբում այդ զրադաշտականները կամ գեաբրները բնակություն հաստատեցին Օրմուզ կղզում և ապա անցան Հնդկաստան: Այստեղ էլ նրանք Երկար դարեր տառապանքներ էին կրում, տեղից տեղ անցնելով ու իրենց համար ապահով մի ապաստանարան որոնելով: Հնդկաստանում էր, որ գեաբրները հանդիպեցին եվրոպացիներին, որոնք և ծանոթացան նրանց կրոնի և արարողությունների հետ: Նույնիսկ նրանց սրբազան գրքերի մի քանի կտորներն անցան Եվրոպացիների ձեռքը, որոնք Եվրոպա փոխադրեցին այդ կտորները: Հետաքրքրություն ծագեց. զրադաշտական կրոնի մասին շատ վայրիվերո, կցկտուր տեղեկություններ էին մնացել հին հունական գրականության մեջ: Ուսումնասիրել այդ կրոնը նրա իսկական աղբյուրներով — ահա ինչ ցանկություն էին հարուցանում Հնդկաստանից բերած կտորները:

Այդ ցանկությամբ վառվեց մի երիտասարդ ֆրանսիացի, Անքետիլ Դյուպերոն անունով: 1754 թվին նա ճանապարհորդեց Փարիզից Հնդկաստան՝ զրադաշտական գրքեր որոնելու համար: Նրան հաջողվեց իր որոնածը գտնել, բայց ուժ տարվա տառապանքների գնով: Սուրաթ քաղաքի շրջակայքում ապրող գեաբրների մոտ նա գտավ Զենդ-Ավեստան: Սակայն իրենք՝ գեաբրները համարյա այլևս չէին հասկանում այդ գրքի լեզուն՝ գենդերները: Ինչ որ գիտեին այդ լեզվից, սովորեցրին Դյուպերոնին, և սա, թանկագին գյուտը վերցրած, արկածալից ճանապարհորդություն սկսեց՝ հայրենիք վերադառնալու համար: Այստեղ նա թարգմանեց Զենդ-Ավեստան. բայց միանգամայն անհաջող էր այդ թարգմանությունը, որովհետև Անքետիլի ծանոթությունը գենդերեն լեզվի հետ չափազանց անբավարար էր և սխալ: Զենդերեն լեզուն այստեղ, Եվրոպայում, պիտի նոր հայտնաբերվեր: Իսկ այս բանը վերապահված էր արդեն 19-րդ դարին:

Բայց նույն 18-րդ դարին պատկանում է և մի այլ նշանավոր նախապատրաստություն: Գարի վերջերում ֆրանսիական զորքերը, Նապոլեոնի հրամանատարությամբ, գրավեցին Եգիպտոսը: Փարավոնների երկրի հին մեծ հիշատակարանների առատությունը հիացնում էր ամենքին, սկսած գլխավոր հրամանատարից: Այս արշավանքը մի առիթ էր, որ եվրոպացիները, գլխավորապես ֆրանսիացիները, իրենց ուշադրությունը կենտրոնացնեն եգիպտական հնությունների վրա: Ամենից շատ հետաքրքրողը, իհարկե, եգիպտական գրությունն էր, որով ծածկված էին հիշատակարաններից շատերը: Այս արդեն իրանական սեպագրությունը չէր, այլ գրության մի ուրիշ ձև, որ միտքը արտահայտում է գաղափարանշաններով, զանազան առարկաների պատկերների միջոցով: Այդ ձևը կոչվում է «մեհենագրոզմ» (հիբրոգլիֆ):

Լուսանում է 19-րդ դարը, նրա հետ և այս բոլոր հին առեղծվածները: 1302 թ. սեպտեմբերի 4-ին գերմանացի երիտասարդ գիտնական Գեորգ-Ֆրիդրիխ Գրետեֆենդը կարդում է Գյոտինգենի ակադեմիական ժողովում իր էքզեկուցումը Աքեմենյան սեպագրությունների մասին: Նա գտել էր այդ գրությունը կարդալու սրամիտ միջոցը: Առաջին քայլն արված էր. բեռագիտության հիմքը դրված էր: Բայց Գրետեֆենդը արևելյան լեզուների մասնագետ չէր և նրա նշանավոր գյուտը ամբողջացած չէր: Նրա գծած ուղղությամբ սկսեցին աշխատել նշանավոր արևելագետ Սեն-Մարտենը, Լասսենը և ուրիշները: Բայց վաղահանական լուծումը վերապահված էր ֆրանսիացի մյուս նշանավոր արևելագետ Էոսեն Բյուրնուֆին (1801—1852): Սա էր, որ գտավ զենդ լեզվի օրենքները և կազմեց նրա քերականությունը, թարգմանեց Զենդ-Ավեստայի մի քանի գրքերը: Զենդերենը Աքեմենյանների լեզուն էր, որով գրված էին և նրանց արձանագրությունները: Տալով նրա ճիշտ ուսումնասիրությունը, Բյուրնուֆը թե՛ այդ և թե՛ սանսկրիտ լեզուների օգնությամբ գտավ սեպագիր արձանագրության և այն կետերը, որոնց վրա այնքան աշխատանք էին վատնել գիտնականները, և սրանք մնացել էին անվերծանելի:

Մինչդեռ Եվրոպայում բեռագիտությունն այսպիսի քայլեր էր անում, անգլիացի սըր Հենրի Ռաուլինսոնը անկախ կերպով նույն գործի վրա աշխատում էր Պարսկաստանում: Նա զինվորական և դիվանագիտական գործիչ էր, բայց պակաս ընդունակություն չցույց տվեց հնագիտության և լեզվագիտության մեջ: Հնդկաստանի անգլիական բանակում էր ծառայում, երբ նշանակվեց պարսկական զորքերի հրահանգիչ: Իր այս պաշտոնի գործերով երկար ժամանակ մնաց Քիրմանշահ քաղաքում՝ բոլորովին կտրված քաղաքակիրթ աշխարհից: Այդտեղ, այն հին մեծ ճանապարհի վրա, որ բանակների անցքն էր Իրանից դեպի Միջագետք, բարձրանում է Բիսութուն սարը, որի ժայռերի վրա փորված էր Դարեհի հուշակավոր մեծ սեպածե արձանագրությունը: Ռաուլինսոնն ընդօրինակեց նրան և երկար աշխատելով ինքնաբերաբար գտավ նրան կարդալու միջոցը այնպես, ինչպես գտնված էր Եվրոպայում: 1836 թվին նա սկսեց իր այդ գիտական աշխատությունները մաս-մաս ուղարկել Լոնդոնի Ասիական Հնկերության: 1843 թվականին պարսկական սեպագրություններն արդեն կարդացված ու թարգմանված էին:

Ճշտվեց առաջին ուսումնասիրողների այն դիտողությունը, որ արձանագրությունները երեք լեզվով են գրված: Կարդացվեց նախ պարսկերեն (զենդ) լեզուն: Մնացած երկու լեզուներից մեկը անվանեցին մեդական կամ մարական (ավելի ճիշտ՝ էլամական): Իսկ երրորդը ասուրական լեզուն էր: Գտնե-

լով պարսկականի բանալին, այնուհետև դժվար չէր գտնել և ասորականի բանալին: Կենդանանում էր և մի ուրիշ մեծ պատմական լեզու:

Բայց մինչև այդ՝ վերծանելի դարձան Եգիպտոսի մեհենագրոզմ արձանագրությունները: Այստեղ արդեն հարկավոր չեղան դարերի դիտողություններ: Ֆրանսիացի գիտնական Ժան-Ֆրանսուա Շամպոլյոնը 1814-ին գնաց Եգիպտոս՝ տեղն ու տեղն ուսումնասիրելու նրա հնությունները: 1822-ին հայտնեց գիտնական աշխարհին իր անմահ գյուտը, որով մեհենագրոզմի թնթերցումը դառնում էր իրականություն: Մնվում էր ընդարձակ մի գիտություն, որ և կոչվեց եգիպտագիտություն: Այնուհետև Եգիպտոսը դարձավ զանազան երկրներում կազմակերպված գիտնական արշավախմբերի մանրակրկիտ հետազոտությունների վայր: Կառավարությունները միջոցներ չխնայեցին ընդարձակ պեղումներ կատարելու համար, և եվրոպական թանգարանները լրջվեցին եգիպտական հնություններով: Դուրս եկան բազմաթիվ նոր արձանագրություններ քարերի վրա և գրություններ «պապիրոս» անվանված թղթի վրա: Եվ ամենախորին հնության ծոցից (Քրիստոսից 4—5 հազար տարի առաջ) լույս աշխարհ եկավ մի ամբողջ մեծ պատմություն, մի քաղաքակրթություն, որի շափերի մասին հասկացողություն անգամ չէին ունեցել մինչև այդ: Եգիպտագիտությունն ստեղծեց մի ահագին գրականություն: Նրա ապարեզում գիտնական հուշակի փայլ ստացան շատերը, ինչպես Լեպտոս և Բրյոզը գերմանացիները, դը Ռոսե, Մարիետ, Մասպերո, դը Մորգան ֆրանսիացիները: Փարավոնների հայրենիքը հնությունների մի անհուն շտեմարան է: Այժմ էլ նույն եռանդով շարունակվում են ուսումնասիրությունները, և եգիպտոսի հին կյանքը, հազարամյակների պատմությունը՝ գնալով ավելի և ավելի ընդարձակ շափերով է լույս հանում իր բոլոր մանրամասնությունները:

Եգիպտոսից հետո հերթը գալիս էր այն հուշակավոր դաշտավայրին, որ տարածված է Եփրատ և Տիգրիս գետերի մեջ և հասնում է Պարսից ծոցին՝ Միջագետք և Քաղդես: Այս դաշտի վրա հազարավոր տարիների փառավոր կուլտուրա, ուժեղ քաղաքական կյանք կային հաստատված: Բայց այստեղ պայմաններն ուրիշ էին: Քար ու ժայռ չկա այս երկրում: Եվ հնության հիշատակարանները չէին երևում հողի մակերևույթի վրա: Աղյուսն էր շինությունների ամենազիջավոր նյութը. քարը հեռվից էր բերվում և մասնավոր գործածություն ուներ: Ավերակները ծածկված էին հողով, ներկայացնում էին անհայտ բլուրներ դաշտի վրա: Ճանապարհորդները մի քանի կտորներ էին գտել այդ կողմերում և տարել Եվրոպա: Դրանք միայն ցույց էին տալիս եռանդուն և լուրջ, բազմածախս որոնումների անհրաժեշտությունը: Եվրոպական կառավարություններն էին, որ սկսեցին այդ գործը: Եվ ամենից առաջ ֆրանսիական կառավարությունը: 1842 թվականին նա Մոսուլում հաստատեց փոխ-հյուպատոսություն՝ հատկապես այն նպատակով, որ նա դառնա հնագիտական աշխատանքների կայարան: Այդ պաշտոնը հանձնվեց Ալեքսանդրիայի հյուպատոս Բոտտային, որ և իսկույն գործի կպավ, ձեռքի տակ ունենալով կառավարության կողմից նշանակված հատուկ գումարներ:

Մոսուլից էր սկսվում գործը, որովհետև այդ քաղաքի մոտ պիտի լինեին հուշակավոր նիւվի մայրաքաղաքը, որ կործանվել էր, ինչպես կարծում են, 625 թ. առաջ: Բոտտան պեղումներ սկսեց Կուլունջիկ գյուղում, բայց շուտով դադարեցրեց աշխատանքը, որովհետև մի գյուղացի ցույց տվեց, թե Խորասադ գյուղի բլուրը շատ հնություններ է պարունակում: Եվ իրավ, Բոտտայի պեղումներն այնտեղ բաց արին մի ամբողջ արքունական պալատ: Աշխա-

<sup>1</sup> Joachim Ménant, „Les Langues Perdues— Perse“, Paris, 1885, p. 101—103.

տանքները շարունակվեցին մոտ երկու տարի: Երևան հանվեց մի բոլորովին նոր աշխարհ՝ ասորական կուլտուրան իր հարուստ արվեստով, իր արձանագրություններով: Հնուստություններից ինչ որ կարելի էր տեղափոխել, ուղարկվեց Փարիզ:

Բոստայի պեղումների ժամանակ Ասորեստանի կողմերում ճանապարհորդում էր երիտասարդ անգլիացի սրբ Հենրի Լեյարդը: Նա էլ լցվեց այդպիսի գործեր կատարելու ցանկությամբ: Եվ Կ. Պոլսի անգլիական դեսպան սրբ Ստրատֆորդ Կաննինգհի աշակցությամբ և հայթայթած դրամական միջոցներով նա 1845-ին սկսեց պեղումներ կատարել: Նրա անսովոր եռանդը, տոկոսեցությունը, վառվուռն սերը դեպի հնագիտությունը հաղթեցին բոլոր տեղական դժվարություններն ու արգելքները: Պեղումները նա սկսեց այնտեղ, ուր կիսատ էր թողել Բոստան, Կուլունջիկ գյուղում<sup>1</sup>: Այդտեղ նրան սպասում էր մի մեծ պատիվ: Բոստայի բաց արած պարտը Նինվեն շէր: Լեյարդի պեղումներն էին, որ Կուլունջիկի թումբի տակից լույս հանեցին տիեզերահռչակ Նինվենը: Անգլիական կառավարությունը հովանավորեց երիտասարդ հնասերին, առատ միջոցներ դրեց նրա տրամադրության տակ: Եվ փոխարենը լիուլի վարձատրվեց: Լեյարդը շարունակեց իր աշխատանքները և ուրիշ տեղերում: Նա ընդհատումներով գործեց մինչև 1852 թվականը և այնուհետև անցավ Քաղդեա՝ այնտեղ ևս շարունակելու պեղումները: Եվ նրա անխոնջ աշխատանքներով Բրիտանական Մուզեոնը լցվեց ասորա-բաբելոնական հնություններով: Ասորեստանում Լեյարդին հաջորդեցին Ռաուլինսոնը և ուրիշները: Անգլիական և ֆրանսիական կառավարությունների մեջ մի ազնիվ մրցակցություն տեղի ունեցավ հնագիտական ուսումնասիրությունների վերաբերմամբ: Թեև մեծ բաժինը Անգլիային էր ընկնում, բայց ֆրանսիական կառավարությունն էլ մի ամբողջ գիտնական արշավախումբ ուղարկեց Բաբելոնն ուսումնասիրելու համար: Պեղումները նորանոր հայտնագործություններ էին անում:

Այս բոլոր աշխատությունները գիտնական աշխարհին անհուն նյութեր հայթայթեցին: Բեռնագիտության այն ճյուղը, որ վերաբերվում է բաբելոնա-ասորական աշխարհին, ընդարձակվեց, ահագին ծավալ առավ և ստացավ ասորագիտություն անունը: Ասորական բեռնագիտությունների ընթերցանությունն էլ միանգամայն հաստատուն գիտական հիմքերի վրա դրվեց: Եվ երկու հռչակավոր երկրներին— Քաղդեայի և Ասորեստանի հին կյանքն էլ լուսաբանվեց ամենայն մանրամասնություններով: Թե ինչ տեսակ հարստություն էին ներկայացնում գետնի տակից փորված նյութերը, կարելի է հասկացողություն կազմել այն մի փաստից, որ Լեյարդի պեղումները, ի միջի այլոց բաց արին ասորական վերջին թագավոր Ասսուրբանիպալի պալատը, որի մեջ գտնվեց մի ամբողջ մեծ մատենադարան: Ասորեստանցիները գրում էին աղյուսների վրա, որոնց երկու Նրեսը ծածկում էին մանր սեպագրություններով: Նինվեի այդ մատենադարանում գտան մոտ տասը հազար այդպիսի աղյուսներ: Մատենադարանը բաղկացած էր վեց բաժանմունքներից՝ պատմություն, իրավաբանական վավերագրեր, բնական գիտություններ, կախարդություն, դավանանքներ, առասպելներ<sup>2</sup>:

Ներկայումս էլ դեռ շարունակվում են ոչ միայն սեպագրությունների ուսումնասիրությունները, այլև պեղումները: Այսպես, 1889 թվականից ֆրանսիական կառավարությունը մի քանի անգամ գիտնական արշավախումբեր

ուղարկեց, հնագետ Ժ. դը Մորգանի առաջնորդությամբ, հատկապես Շոշի ավերակները (հարավային Իրանում, հին Քաղդեային սահմանակից) ուսումնասիրելու համար: Նշանավոր եղան այդ արշավախումբերի պեղումներն ու Նետազոտությունները. երևան հանվեց հին էլամը, մի ինքնուրույն քաղաքակրթություն, որ շատ նշանավոր պատմական դեր է կատարել հին աշխարհում: Առհասարակ բեռնագիտության մեջ իրենց գիտական աշխատություններով հռչակ են ստացել Ժյուլ Օպպերտ, Ժոսիֆ Մենան, Սմիթ, Անյու, Հինթո Ֆրանսուա Լընորման, Շելլ և ուրիշները:

**4. Վանյան սեպագիրներ:** Սեպաձև արձանագրությունների հարուցած մեծ ճեղքաբերությունը գիտական հետախուզությունների մի հոսանք էլ ուղղեց դեպի Հայաստան:

Մովսես Խորենացին<sup>2</sup> շատ զեղեցիկ և ճիշտ կերպով նկարագրում է Վան քաղաքի դիրքն ու հնությունները: Ամենից շատ նրան և նրա ժամանակակիցներին հիացրել են հին շինությունները: Նա մանրամասն նկարագրում է մեծազործ և զարմանալի ջրանցքը, քարակոփ շինությունները, ապարանքները և իրենց շքեղությունը: Նրանց թողած տպավորությունը պատկերացնելու համար, գրում է՝ «Այլ ասեմք միայն թէ ամենայն թագաւորականաց գործոց, որպէս լոռաց առաջին և վեհագոյն համարեալ»: Բայց Հայ պատմահայրը պակաս զարմացած չէ և Վանի ժայռի վրա: Նա ասում է. «Համենայն երեսս քարին իբր գրչաւ զմոմ հարթեալ, բազում գիրս ի նմա գրեաց, որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ»: Եվ այդպիսի զարմանալի գրությունն ոչ միայն Վանում: «Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս յաշխարհին Հոռոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր»:

Բայց ո՞վ է այդ գրողը, ո՞վ է այդ բոլոր զարմանալի ձեռնարկությունների հեղինակը: Մի անձ միայն, պատասխանում է Խորենացին, և այդ անձը՝ Ասորեստանի հռչակավոր թագուհի Շամիրամն էր:

19-րդ դարի գիտությունը, սակայն, գտավ և այդ մեծագործությունների հեղինակին, որ մի անհատ չէր, այլ մի ամբողջ ազգ: Որովհետև սեպաձև արձանագրությունները Վանում և նրա շրջականերում էին հայտնագործվում, ուստի նրանք կոչվեցին Վանյան: Բայց հետո, երբ արձանագրություններ գտնվեցին բավական թվով և ուրիշ տեղերում, այդ անունը փոխվեց Ուրարտական անունով: Պատմությունը Երախտագիտաբար պահում է և այն մարդկանց անունները, որոնք գտել են այդ տեսակի սեպագրություններ և մատչելի են դարձրել նրանց գիտնականների ճեղքաբերություններին:

Առաջին եվրոպացի գիտնականը, որ գնաց Վան՝ հատկապես սեպաձև արձանագրություններն ուսումնասիրելու համար, պրոֆեսոր Շուլցն էր, որին ուղարկել էր ֆրանսիական կառավարությունը 1827 թվին: Հետևյալ տարին Շուլցը ընդօրինակեց 38 արձանագրություն, որոնցից 18 Վանի մեջ և նրա արձանագրություններում, 1 արձանագրություն Լեզք գյուղում, 2-ը՝ Շուշանց, 2-ը՝ Արտամետ, 1-ը՝ Սըղզա գյուղերում, 9-ը՝ Վարազի լեռան զանազան կողմերում, 1-ը՝ Ախթամար կղզում, 1-ը՝ Մանազկերտում, 2-ը՝ Արճեղում, 1-ը՝ Կելիշին գյուղի մոտ, Գուրք-պարսկական սահմանի վրա: Այդ ընդօրինակումներն ուղարկեց Փարիզ, բայց ինքն այլևս չկարողացավ վերադառնալ Եվրոպա: Նոր ձեռնարկությունը, որ ահագին գիտական հետաքրքրություն պիտի շարժեր և

<sup>1</sup> Joachim Ménant, „Les Langues Perdues—Assyrie“, Paris, 1886, pp. 45—71.

<sup>2</sup> Joachim Ménant, „La Bibliothèque du Palais de Ninive“, Paris, 1880.

նոր հորիզոն բաց աներ մարդու մտքի առջև, կարծես զոհ էր պահանջում առաջին կեթ քայլում.— Շուրջն սպանվեց մի բուրդ ցեղապետի ձեռքով:

Այս ընդօրինակությունները ուշ միայն, 1840 թվին, հրատարակվեցին Փարիզի «Journal Asiatique» ուսումնասիրքի մեջ: Նույն այդ միջոցին գերմանացի մի սպա, Մյուլբախ, գտավ մի սեպածև արձանագրություն Մալաթիայում<sup>1</sup>: Շուրջի մեծ գործը բավական էր, որ եվրոպացի գիտնականները առանձին ուշադրություն դարձնեն Հայաստանի վրա: Ասորեստանում և Բաբելոնում աշխատող ասորագետները հատուկ ճանապարհորդություններ կատարեցին այս նոր սեպագրությունները տեսնելու համար<sup>2</sup>: Նույն 40-ական թվականներին ֆրանսիացի դր Սուրբ գիտնականը մի սեպածև արձանագրություն գտավ Բասնում, Հասան-Կալեի մոտ<sup>3</sup>, իսկ մեզ քաջածանոթ Լեյարդը 4 արձանագրություն վանում արտագրեց և մի հատ էլ Պալուի մոտ, Եփրատի վրա:

1860-ական թվականներից բնեռաձև արձանագրություններ Երևան են հանում և Ռուսական Հայաստանի սահմաններում: Այս պատիվը պատկանում է (Մեսրոպ վարդապետ Սմբատյանին<sup>4</sup> էջմիածնի միաբանություն անդամ, հետո արքեպիսկոպոս), որ շունենալով ոչ մի մասնագիտական պատրաստություն, նույնիսկ փոքր ի շատե ընդարձակ կրթություն, այլ լինելով լոկ հնություններ սիրող, ուշադրության առարկա է դարձնում սեպածև արձանագրությունները և հետզհետե, տասնյակ տարիների ընթացքում, գտնում է այդպիսի արձանագրություններ և հաղորդում գիտնականներին: Առաջին արձանագրությունը նա գտել է Երևանից Դիլիջան տանող խճուղու էլար իջևանում 1862 թվականին: Տեղացի բահանան պատմում է նրան, թե այդտեղ գտնվող մի հին բերդի ետևում, ժայռի վրա, փորված են ինչ-որ տարօրինակ նշաններ— ծաղիկներ<sup>5</sup> ր արդյոք— ոչ ոք չէ կարողանում բացատրել: Մեսրոպ վարդապետը տեսնում է ցույց տված ժայռը և որովհետև նա կարողացած էր վենետիկի «Բազմավեպ» ամսագրի մեջ մի քանի հոդվածներ սեպագրերի մասին, ուստի իսկույն ըմբռնում է, որ էլարի այս արձանագրությունն էլ սեպածև է: Ինչ ընդօրինակելով արձանագրությունը, ուղարկում է Մոսկվա Մսեր մագիստրոս Մանրյանցին, որ և հրատարակում է «Համբավաբեր Ռուսիո» հայերեն շաբաթաթերթի մեջ 1863-ին<sup>6</sup>: Այնուհետև Սմբատյանն արտագրեց, նույն 1862-ին, մի մեծ սեպածև արձանագրություն (20 տող), որ փորագրված էր Սևանի լճի հարավային ափին ցցված մի ժայռի վրա, Քյուլաղրան (Մովսիսեր) գյուղի մոտ: Այդ աշխատանքը հեշտ չկատարվեց, քանի որ պետք էր նավակով մոտենալ այն ժայռին, որի վրա փորված էր արձանագրությունը<sup>7</sup>: Մի ուրիշ արձանագրություն էլ գտնվեց Աղամխան գյուղի մոտ, նույն լճի հարավարևմտյան անկյունում: Այս երկու արձանագրություններն էլ հրատարակվեցին «Համբավաբեր Ռուսիո» թերթի մեջ:

<sup>1</sup> S. Guyard, «Mélanges d'Assyriologie», Paris, 1883, p. 113.

<sup>2</sup> Վանի արձանագրություններից ութ հատի ընդօրինակությունը տվել է Վենետիկի Միսթարյան 2. Ներսես Սարգիսյանը իր «Տեղագրությունի Փոքր և ի Մեծ Հայս» աշխատության մեջ (Վենետիկ, 1864, էր. 258—263).

<sup>3</sup> H. Hyvernat, «Notices sur la Géographie et l'Histoire ancienne de l'Arménie et les Inscriptions du Bassin de Van (S. P. Miller-Simonis, «Du Caucase au Golf Persique», Paris, 1892, p. 552).

<sup>4</sup> Մ. 83, 7. դեկտ.

<sup>5</sup> Մեսրոպ վարդապետ. «Տեղագրության Գեղարդունի Մովսիսերի Գտնում», Վարդապետ, 1896, էր. 232—235.

1864 թվին ակադեմիկոս Կեստները իր ճանապարհորդության միջոցին երկու սեպագիր արձանագրություններ գտավ. մեկը Ալեքսանդրապոլից (Էջմիածնական) 7 վերստ հյուսիս, Դանիլջա գյուղի մոտ. մյուսը՝ Մեծ Մասիսի ստորոտում, Տաշբուրուն գյուղի մոտ: Այդ արձանագրությունները հրատարակվեցին Պետրոգրադի ակադեմիայի պաշտոնական հրատարակությունների մեջ: Մի քանի տարուց հետո, այն է՝ 1869-ին Մեսրոպ վարդապետ Սմբատյանը սեպածև արձանագրություն գտավ Արարատյան երկրի մի ուրիշ վայրում— Մարդարաբադի գավառում, Արաքսի ձախ ափին, Փափագիրի (Հայկավան) հայ գյուղի մոտ, այն բլուրի վրա, ուր ենթադրվում է, թե գտնվում էր Արմավիր քաղաքը: Արձանագրությունը մի կտոր քարի վրա էր, որ փոխադրվեց էջմիածին, իսկ նրա ընդօրինակությունը տպագրվեց «Արարատ» ամսագրի մեջ<sup>1</sup>: Ապագան ցույց տվեց, որ այս տեղը նախահայկական շրջանում մի շատ կարևոր կենտրոն է եղել: Մեսրոպ եպիսկոպոսը զանազան ժամանակ գտավ այդտեղ նորանոր սեպագիր արձանագրություններ, ընդամենը 12 հատ<sup>2</sup>:

1878 թվին Ա. Երիցյանը մի սեպագիր արձանագրություն գտավ Սարիղամիշում, Կարսի մոտ, որ ուղարկվեց Քիֆլիսի թանգարանը: 1883 թվականին դարձյալ Սևանի լճի եզերքներում, այն է Օրդակլու (Լճաշեն) (հյուսիս-արևմտյան անկյունում) և Ջախալու (Մովակ) (հարավ-արևելյան) գյուղերի մոտ, երևան հանվեցին երկու արձանագրություն, իսկ հետևյալ 1884-ից մի նոր արձանագրություն. այս անգամ արդեն Արագած սարի հյուսիս-արևմտյան կողմում, Դուլիջան գյուղի մոտ<sup>3</sup>: 1886-ին երկու նոր արձանագրություն գտնվեցին Տաշբուրուն գյուղում, ուր, հայ հնամենների կարծիքով, հին Յուլակերտ բերդն էր գտնվում: Այս բոլոր արձանագրությունները Մեսրոպ եպ. Սմբատյանի ձեռքով հրատարակվեցին «Արարատ» ամսագրի մեջ:

1870-ական թվականների վերջում վերսկսվեցին հնագիտական խուզարկությունները Քուրբաց Հայաստանում, գլխավորապես Վանի շրջակայքում: Վանի անգլիական հյուպատոս կապիտան Քլեյտրն և անգլիացի ասորագետ Հորմուզդ Ռասսամ, որ առաջնորդում կայրդի օգնականն էր եղել Նինվեի պեղումների ժամանակ, 1879—1880 թվականներին ձեռնարկեցին պեղումների նախահայկական հնություններ երևան հանելու համար: Պեղումները կատարվեցին այն բարձրության վրա, որ գտնվում է Վանի հյուսիս-արևելյան կողմում և կոչվում է Ջրմբղմբ-դաղ և որի գագաթի վրա գտնվող ափերակները կոչվում են Քոփրաք-Կալե (Հողե բերդ): Որ այս հնությունը պետք է լիներ մի նշանավոր նախահայկական կենտրոն, այդ ցույց էր տալիս և նույն Ջրմբղմբ-դաղի արևելյան ծայրում գտնվող Մհերի դուռ (Մհեր կափուսի) ժայռը, որի վրա մի շատ մեծ սեպագիր արձանագրություն է փորված: Երկու անգլիացիների պեղումները նշանավոր հետևանքներ տվին, սակայն նրանց անփութության շնորհիվ հողի տակ գտնված իրերի մեծ մասը հափըրտակեցին բանվորները<sup>4</sup>: Այնուամենայնիվ մի մասը եվրոպական թանգարանների (օր. Լոնդոնի և Բեռլինի) սեփականություն դարձավ: Նախահայ-

<sup>1</sup> «Bulletin de l'Académie Imperiale des sciences de S. Petersburg», t. v, p. 428—435, t. VII, p. 275—281.

<sup>2</sup> 1869 թ. № 6, էր. 133:

<sup>3</sup> Վերջին, 12-րդ արձանագրությունը տե՛ս «Արարատ», 1896, էր. 512:

<sup>4</sup> Արձանագրություն գտնողն էր տեղացի Ներսես Հարությունյանը, որ և հաղորդեց Մեսրոպ եպիսկոպոսին:

<sup>5</sup> Липч, «Армения», т. II, с. 19.



կական կուլտուրայի վերին աստիճանի հետաքրքրական հիշատակարաններ էին այդ պեղումներից հանված իրերը: Հորմուզդ Ռասսամը բացի դրանից գտավ և ընդօրինակեց մինչև 14 հատ նոր սեպագե արձանագրություններ, որոնցից 1-ը՝ Վանի մեջ, 2-ը՝ Մրվստան գյուղում, 3-ը՝ Շուշանց գյուղում, 2-ը՝ անհայտ տեղերում և 1-ը՝ Արճեղի մոտերքը: Այս արձանագրությունները հրատարակեց մեծանուն ասորագետ պրոֆեսոր Սեյյը (Օքսֆորդի համալսարան) նախահայկական արձանագրությունների շարքի մեջ<sup>1</sup>: Իսկ հյուսիս-արևմուտքից մի սեպագե արձանագրություն գտավ 1881-ին Մուշի դաշտում: Հաջորդ տարին պրոֆեսոր Վունշը մի արձանագրություն երևան հանեց Վանի մոտ գտնվող Սալխան գյուղի արևելյան կողմում: 1885-ին մի արձանագրություն ուղարկվեց Խոշարի Աստվածաշին գյուղից Վանի վաճառական Տեվկանցին: Դոկտոր Պուլակն ընդօրինակեց նրան: Այս երկու արձանագրությունը հրատարակեց դոկտոր Դ — Հ. Մյուլլերը Վիեննայում 1886-ին<sup>2</sup>:

1888—1889 թվականներին երկու Ֆրանսիացի կրոնավորներ՝ Մյուլլեր-Սիմոնի և արքա Հիվերնա Վանում տեղեկություններ հավաքելով, պարզեցին, որ դեռ շատ կան անծանոթ մնացած սեպագրություններ: Կաթոլիկ միսիոնար Դյուպլանը տվեց նրանց երկու արձանագրությունների (մեկը Վանի, մյուսը Բաղնոցի մեջ գտնված) ընդօրինակությունները, մի արձանագրություն էլ տվեց ամերիկացի միսիոնար Ռեյնոլդսը: Արքա Հիվերնան կարողացավ մի արձանագրություն ընդօրինակել Երի-Քիլիս տեղում և յոթ հատ հատակտրներ Վանում<sup>3</sup>: 1891-ին ժ. դը Մորգանը Կելիշի մոտ սյունի վրա, բացի արդեն ծանոթ արձանագրություններից, գտավ մի ուրիշը, որ աննկատելի էր մնացել մինչև արդ: Միևնույն տարին Վանի անգլիական հյուսիսարևմտյան Դեվելը գտավ և ընդօրինակեց մի նոր արձանագրություն<sup>4</sup>:

Դարձյալ 1891 թվականին գերմանացի ուսումնական դոկտոր Վոլդեմար Բելլը, որ քիմիկոսի պաշտոնով ծառայում էր Գետաբեկի պղնձահանքում, մի երկար ճանապարհորդություն կատարեց Գանձակի և Երևանի նահանգներում և Ասիական Թուրքիայի Վանի և էրզրումի վիլայեթներում, հատկապես սեպագե արձանագրություններ ուսումնասիրելու համար: Անդրկովկասի սահմաններում նա առանձին հաջողություն չունեցավ: Կամենալով ճշտել ուրարտական արձանագրությունների տարածման հյուսիսային սահմանները, հետախույզ գերմանացին մանրակրկիտ որոնումներ արավ Կուր և Արաքս գետերի մեջ բարձրացած լեռնաշխարհում, բայց նոր բան չգտավ և բավականացավ արդեն հայտնի մի քանի արձանագրություններ նորից արտագրելով: Անհամեմատ արդյունավոր հանդիսացան Բելլի հնախուզությունները Թուրքաց Հացաստանի սահմաններում: Այդտեղ նրան հաջողվեց գտնել, գլխավորապես արձանագրության մասնապիտակներում, դեռ անհայտ 7 հատ սեպագրություններ<sup>5</sup>, որոնցից 4 հատ Արտամետ, 1 հատ Իշխանագոմ գյուղերում, 1 հատ Վանում, և 1 հատ Փեշիշ-գյուղ տեղում, Վանի մոտ, Վարազի լեռների սահմանում: Միա-

ժամանակ դոկտոր Բելլը մի քանի հնագիտական հետախուզություններ արավ ուրարտական հնությունների շրջանում և ցույց տվեց գիտնական աշխարհին, թե անհրաժեշտ է ավելի ընդարձակ ուսումնասիրություններ կատարել տեղն ու տեղը, մանավանդ շարունակել եռանդով որոնել սեպագրություններ, որոնցից, ինչպես հավատացած էր նա, դեռ շատ պիտի գտնվեին:

Եվ այս միանգամայն ճիշտ էր: Նույն տարին Երևանի հանդում, Գանլի-Քափա (Արինբերդ) տեղում, սեպագիր արձանագրությամբ ծածկված մի քար գտավ նորքեցի Նազար Մաթեոսյանը<sup>1</sup>: 1892-ին մի նոր սեպագիր արձանագրություն գտնվեց դարձյալ Հին Արմավիրի մոտերքը, Սարդարաբադ (Հոկտեմբերյան) գյուղում, էջմիածնի միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանի ջանքերով<sup>2</sup>:

Դոկտոր Բելլի, ինչպես և նրանից առաջ Հիվերնայի և Մյուլլեր-Սիմոնի կատարած ուսումնական ճանապարհորդությունները, որոնց մի մասը, ինչպես տեսանք, տեղի ունեցավ Ռուսական Հայաստանի սահմաններում, դրդիչ հանդիսացան, որ ռուս գիտնականներն էլ առանձին ուղարկություն դարձնեն գոնե իրենց պետության սահմաններում Կղաթ արձանագրությունների ուսումնասիրության վրա: Մոսկվայի Ռուսաց Կայսերական Հնագիտական Ընկերության հանձնարարությամբ 1893-ի ամառը Անդրկովկաս ուղևորվեցին նրա անդամներից երկուսը, Մ. Նիկոլսկին և Ա. Իվանովսկին, որոնք մանրամասն ուսումնասիրությունների ենթարկեցին Գանձակի և Երևանի նահանգներում գտնված սեպագրությունները, վերցրին նրանց ճիշտ ընդօրինակությունները և պարզեցին շատ պատմական և աշխարհագրական հանգամանքներ, որ ցույց էին տալիս արձանագրությունների տեղերը: Այդ հետազոտությունները հրատարակվեցին 1894—1896 թվականներին և բարձր գնահատություն գտան եվրոպական մասնագետ շրջանների մեջ<sup>3</sup>: Մինչև այս աշխատության հրատարակումը՝ 1895-ին մի նոր արձանագրություն էլ գտնվեց Արաքս գետի աջ ափին, Արմավիրից ոչ հեռու, Կարակալա անունով ավերակների մոտ: Այդ արձանագրությունը էստամպով ընդօրինակեց Մեսրոպ վարդապետ (հետո եպիսկոպոս) Տեր-Մովսիսյանը<sup>4</sup>: Նույն այդ տարին էլ Բաղնոց գյուղի (Թուրքաց Հայաստան) եկեղեցում մի արձանագրություն գտավ դոմինիկյան կաթոլիկ կրոնավոր, միևնույն ժամանակ և հայտնի բեռնագետ Շելլը<sup>5</sup>:

Բայց նախահայկական հնագիտության տարեգրությունների մեջ առանձնապես պետք է շեշտել 1898 և 1899 թվականները, երբ գերմանացի երկու գիտնականներ, մեկը մեզ արդեն ծանոթ դոկտոր Վոլդեմար Բելլ և մյուսը պրոֆեսոր Լեման-Նաուպտ, մասնագիտությամբ ասորագետ, Երկար ճանապարհորդություններ կատարեցին Անդրկովկասում, Պարսկաստանում և Ասիական Թուրքիայում, նպատակ ունենալով ժամանակակից Խալդյան (Վանյան, Ուրարտական) բեռնագիր արձանագրությունները կրկին համեմատել, նույն կարգի ուրիշ կարգի բեռնագրություններ փնտրել և միանգամայն իրենց անցած երկրներն ըստ կարելիության և պիտոյից՝ աշխարհագրորեն ուսումնասիրել<sup>6</sup>: Ուսումնական արշավանքը դրամական առատ նպաստներ ստացավ:

<sup>1</sup> H. Hyvernat, p. 542—560.  
<sup>2</sup> J. Sandalagian, „Les Inscriptions Cunéiformes Urartiques“, Yenise, 1900, p. 218.  
<sup>3</sup> Hyvernat, p. 560.  
<sup>4</sup> J. de Morgan, „Mission Scientifique en Perse“, t. IV, I partie, Paris, 1896, p. 266.  
<sup>5</sup> Sandalagian, p. 55.  
<sup>6</sup> Sandalagian, p. 50 et suiv. Ինքը Բելլը հաշվում էր իր գտած արձանագրությունների թիվը 31, բայց այս թիվ մեջ, երևի, մտնում էին և արդեն հայտնի, արձանագրությունների նոր, ավելի ճիշտ ընդօրինակումները (տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1893, էջ. 23):

<sup>1</sup> Մեսրոպ արքեպիս., «Գեղարքունի», էջ. 177.  
<sup>2</sup> «Արարատ» ամսագիր, 1892, էջ. 423 և 554.  
<sup>3</sup> Материалы по археологии Кавказа, вып. V, клинообразные надписи Закавказья, исследование М. В. Никольского, М., 1896.  
<sup>4</sup> Ibid, c. 57.  
<sup>5</sup> Sandalagian, p. 168.  
<sup>6</sup> Զ. Յ. Տ. — «Տեղեկագիր քննական ուղևորութիւն ի Հայս Վ. Բելլի և Կ. Յ. Լեմանի» (Հանդէս Ամսօրեայ, 1899, էջ. 281):

գրանց մեջ էին և Վիլհելմ կայսրի, գիտությունների ակադեմիայի և այլ հաստատությունների նպաստները: Եվ այդ ուղևորությունն ընդհանրապես մեծ նշանակություն ստացավ նախահայկական պատմության ուսումնասիրման համար. մասնավորապես մեծ էին նրա արդյունքները Քուրթաց Հայաստանում և հատկապես Վանում, ուր շնայած նախորդ այցելուների խուզարկություններին, գերմանացի գիտնականները գտան բազմաթիվ նոր արձանագրություններ: Մինչև այդ գտնված և հրատարակված էին մոտ 80 արձանագրություններ, Բելքն ու Լեմանը դրանցից 70 հատ նորից համեմատեցին և ստուգեցին և բացի դրանցից գտան մոտ 60 հատ նոր արձանագրություններ, որոնցից, սակայն, 10 հատի նկարագրությունն են տվել, մնացածների մի մասը հատկապես Վանի շրջանում: Գլխավոր արձանագրություններից մեկը գրտնջված է Կոչանլու գյուղի մոտ, Մանազկերտից ոչ հեռու և ասորական է, և մի-մի հատ Վանի բերդի ժայռերի վրա, Վանի «Գարշան» մզկիթում, ս. Սահակ և երկուսը ս. Պողոս եկեղեցիներում, Խարակոնիս գյուղի մոտ, Արճակ լճի վրա, երեք հատ Արճեշի շրջանում, մի հատ էլ Քեշի-Գյուլի մոտերքը: Նշանավոր է և այն արձանագրությունը, որ գտնվում է Ուրմիայի լճի հարավային կողմերում, Ռվանդուզի Սետկան գյուղի մոտ, Կիլիշենից ոչ հեռու: Գիտեմք, որ կա այդպիսի մի արձանագրություն, բայց Բելքն ու Լեմանն էին, որ առաջին անգամ, ահագին դժվարություններով, ընդօրինակեցին արձանագրությունը, որ ցույց է տալիս ուրարտական իշխանության տարածման հարավային ծայրը: Երկու գիտնականները նույնպես պեղումներ կատարեցին մեզ ծանոթ Քուրթագ-Վալեի ավերակների մեջ և առանձնապես հետաժողովողան նախահայերի կուլտուրայի ուսումնասիրությունը նորանոր հետաքրքրական փաստերով հարստացնելու համար:

Գիտական այդ մեծ արշավանքի տարին (1899) Մարգար Յաղոբջյան անունով հայը, աշակերտ Խարբերդի ամերիկյան կոլեջի, գտավ մի սեպագրություն Կիլիշ-Վալա գյուղի կողքին, Խարբերդի մոտ: Իսկ հետևյալ տարին, 1900-ին, մի մեծ սեպագրական արձանագրություն Կրեան հանեց Խաչիկ վարդապետ Դատյանը էջմիածնի մոտ, Զվարթնոց եկեղեցու ավերակները պեղելու միջոցին<sup>1</sup>: Տասը տարուց հետո (1910) մի արձանագրություն գտավ գերմանացի կոմս Կանից Մակուի խանության մեջ: Այդ արձանագրությունը հրատարակել և թարգմանել է պրոֆեսոր Սեյսը 1912-ին<sup>2</sup>:

Նույն այս 1912-ին էջմիածնի միաբանության անդամ Հուսիկ արքեպիսկոպոս Մովսիսյանի ջանքերով արտագրվեցին և հրատարակվեցին<sup>3</sup> երկու սեպագրություններ, որոնք գտնվել էին թուրքական Բասենի և Ալաշկերտի սահմաններում, Գեղի-Բաբա և Ցազի-Դաշ գյուղերում: Գտնողն ու արտագրողը Կ. Տեր-Ալեքսանդրյանն էր: Առաջին արձանագրությունը, բաղկացած 9 տողից, Գեղի-Բաբայի հայոց եկեղեցու պատի մեջ է, երկրորդը, Ցազի-Դաշ գյուղում, բաղկացած է մի տողից միայն: Դարձյալ նույն 1912-ի աշնանը էջմիածնի միաբանության անդամ Գարեգին վարդապետ Հովսեփյանը իր հնագիտական ճանապարհորդության միջոցին Երևանի նահանգի Քալիշ (հին Արուճ)

<sup>1</sup> Կ. Բազմաշյան — «Հայկական երազիտ բեկուզի մըն ալ» («Բանասեր» ուսումնասիրք, Փարիզ, 1899, էր. 289—292).

<sup>2</sup> «Արարատ» ամսագիր, 1900 թ. 8 և 9, էր. 380.

<sup>3</sup> Ս. Վ. Մանգալան — «Նորագիտ Ուրարտեան սեպագիր արձանագրությունը» («Հանդ. Արարատ», 1912, էջ 407).

<sup>4</sup> «Արարատ» ամսագիր, 1912, էր. 189, 876.

գյուղում տեսավ և էջմիածնի փոխադրեց մի քարի վրա փորագրված մի սեպագրական արձանագրություն, որ պատահաբար գտել էր նույն գյուղի բնակիչ Պետրոս Կարապետյանը<sup>1</sup>:

Ուրարտագիտության համար բեղմնավոր շրջան հանդիսացավ և 1916 թվականի ամառը, երբ ակադեմիկոս Մառը պեղումներ կատարեց Վանում: Պեղումները երևան հանեցին հողի տակ ծածկված մի խոշոր արձան իր պատվանդանով, որոնք ծածկված են սեպագրություններով<sup>2</sup>:

Այս է 88 տարիների ընթացքում հավաքված սեպագրական մթերքը, որի վրա գլխավորապես պիտի կառուցվի Հայաստանի պատմությունը և նախահայկական շրջանում<sup>3</sup>:

Բայց հավաքելը բավական չէր: Ավելի դժվար խնդիր էր դրվում մասնագետ եվրոպացի գիտնականների առջև — արձանագրությունների վերծանությունը: Այս ուղղությամբ երկար աշխատած, բայց արդյունքի չհասած եվրոպացի գիտնականներից կհիշատակենք Էդուարդ Հինքսին (1848): Ամենադժվար հարցն այն էր, թե ինչ լեզվով են գրված այդ սեպագրական արձանագրությունները: Առաջին հայացքից ավելի քան հավանական էր թվում, թե այդ լեզուն պիտի լինի հայերենը: Այսպես հայտարարեցին Վենետիկի Միսթարյան վարդապետները դեռ 1845-ին, երբ նոր էին հրատարակվել Շուլցի ընդօրինակած արձանագրությունները: Գիտնական վարդապետների համար այս հանգամանքը պարզ էր այն պատճառով, որ Խորենացու վկայությամբ Վանի արձանագրությունները գրել է Շամիրամ թագուհին: Իսկ Շամիրամը, գրելով ժողովրդի համար, պիտի, իհարկե, գործածեր նրա լեզուն: Եվ որովհետև հայկական տառերի գյուտի պատմությունն ասում է, թե առաջներում էլ հայերի մեջ գյուղություն ուներ գրության ձև, ուստի հետևեցնում էին, թե այդ հին գրությունը պիտի լիներ սեպագրական<sup>4</sup>:

Այս ուղղությամբ սկսեց աշխատել սեպագրությունների վրա գերմանացի դոկտոր Մորդմանը, հայտնի արևելագետ, որ գերմանական հյուպատոսի պաշտոն ուներ Կ. Պոլսում: Համոզվելով, որ վանյան սեպագրությունների մեջ խոսում է հին հայերեն լեզուն, գրաբարը, Մորդմանը սկսեց հայերենի միջոցով էլ թարգմանել այդ արձանագրությունները<sup>5</sup>: Մասնավոր փորձերից անցնելով ընդհանուրին, Մորդմանը 1871 թվականին գերմանական թերթերից մեկում տպեց մի ընդհանուր հոդված վանյան արձանագրությունների մասին, դնելով նրա մեջ իր ընթերցումներով լուսաբանված մի քանի արձանագրություններ<sup>6</sup>: Այս նախափորձին հետևեց մի լոկալիստիկ աշխատություն, որ տպվեց 1882-ին և որի մեջ Մորդմանը տվեց մինչև այդ հայտնի բոլոր սեպագրական արձանագրությունների թարգմանությունը: Բայց գերմանացի արևելագետի այս անխոնջ ջանքերը վերջ ի վերջո դուրս եկան ապարդյուն: Նա առհասարակ թույլ ծանոթություն ուներ բեկուզիտության հետ և բոլորովին անծանոթ էր ասորական լեզվին: Եվ այս պատճառով էր որ վանյան արձանագրություններէ մեկը գրված ասորական լեզվով, նա բացատրեց դարձյալ իբրև

<sup>1</sup> «Записки Вост. Отделения Импер. Русского Археол. Общества», т. XI, вып. 4, СПб, 1913, с. LXXVI.

<sup>2</sup> «Հորիզոն» լրագիր, 1916, № 111.

<sup>3</sup> «Բազմավեպ», Վենետիկ, 1845, էր. 46:

<sup>4</sup> Տե՛ս, օրինակ, Ղանիշայի արձանագրության թարգմանությունը, «Բազմավեպ», 1865, էր. 232:

<sup>5</sup> Թարգմանել և հրատարակել է Գեորգ Արդուլանյան — «Հայ բեկուզե արձանագրութիւնը, լուսաբանել ի Մորմանայ», Կ. Պոլիս, 1872, տես և «Արարատ» ամսագիր, 1872, № 4—6:



հայերեն լեզվով գրված<sup>1</sup>։ Մորդմանի աշխատությունը գիտական արժեք չստացավ։

Միաժամանակ առաջացավ և ավելի հավանական ընդունվեց դրան բողոքական հակառակ մի կարծիք։ Անգլիացի բեկոագետ Ռաուլինսոնը առաջինն էր, որ սկսեց պնդել, թե ուրարտացիները ոչինչ նմանություն չեն ունեցել հայերին և թե վանյան արձանագրությունների լեզուն ոչ մի ազգակցություն չուներ հայերենի հետ։ Նույն այս կարծիքն ուներ և Ֆրանսուա Լընորմանը, որ և առաջին անգամ հայտնեց այն միտքը, թե վանյան արձանագրությունների լեզուն ավելի մոտիկ է վրացերենին, հետևաբար կարելի է ասել, թե նախահայերը արիացիներ չէին, այլ վրացիների հետ միասին պատկանում էին կովկասյան ցեղերի ընտանիքին<sup>2</sup>։ Թեև այդ միտքին սեպագրությունների վերծանության բանալին իսկապես դեռ չէր գտնվել, բայց Ֆրանսիացի նշանավոր արևելագետը իր այդ ցուցմունքով հիմքերն էր գծագրում բազմադարյան անթափանցելի գաղտնիքը բաց անելու համար։ Ապագա հետազոտությունները պիտի ցույց տային միայն այն, որ Լընորմանը իսկապես մի երևելի գյուտ էր արել։ Մի գյուտ, սակայն, որ դեռ հարցի վերջնական լուծումը չէր։ Հարցի լուծաբանությանն էր ծառայում և անվանի հայագետ պրոֆեսոր Փերոմբե Պատկանյանի հակաճառությունը Լընորմանի այս գյուտի առիթով։ Պատկանյանը չէր ընդունում, որ սեպագրությունների լեզուն վրացերենի ազգակից լինի, բայց միանգամայն անսխալ չէր գտնում և Մորդմանի սխտեմը։ Իր կողմից նա առաջ էր բերում մի նոր տեսություն, արձանագրությունների հեղինակները անշուշտ հայերն էին, բայց նրանց այն ժամանակվա գործածական լեզուն կորել է, թողնելով շերտավորումներ հին հայերենի մեջ, շերտավորումներ, որոնք հայոց արիական լեզվի մեջ մի ինչ-որ անծանոթ, ոչ-արիական տարր են կազմում<sup>3</sup>։ Այս հակաճառությունը, սակայն, չէր հերքում Լընորմանի գյուտը, այլ միայն լրացնում էր։

1880-ական թվականների սկզբում վանյան սեպագրությունների վերծանության գործը ամուր գիտական հիմքերի վրա դրվեց, շնորհիվ Ֆրանսիացի արաբագետ և ասորագետ Ստանիսլա Գյուլյարի մի քանի ցուցմունքների, որոնք կարողություն էին տալիս նույնիսկ շոշափել անծանոթ լեզվի քերականական ձևերը<sup>4</sup>։ Այդ ցուցմունքներով առաջնորդվելով, անգլիացի գիտնական Սեյսը սկսեց և մեծ հատվածով վերջացրեց բոլոր վանյան արձանագրությունների վերծանության և թարգմանության դժվար գործը։ Օքսֆորդի համալսարանի մեծանուն պրոֆեսորը իր այդ բազմամյա աշխատություններով կենդանացրեց Վայաստանի նախահայկական ժամանակների պատմությունը և դարձավ մի պատկառելի հեղինակություն այս շրջանի գրավոր աղբյուրների վերաբերմամբ<sup>5</sup>։

<sup>1</sup> М. Никольский, «Клинообразные надписи ванских царей, открытые в пределах России» («Древности восточные»), т. I, вып. 3, М., 1893, с. 376.

<sup>2</sup> Fr. Lenormant, «Lettres Assyriologiques», Paris, 1871, t. I («Lettre 2—Sur l'Ethnographie et l'Histoire de l'Arménie avant les Achéménides»), p. 124—126.

<sup>3</sup> К. Патканян, «Ванские надписи и значение их для истории Передней Азии», СПб., 1881, с. с. 15, 32.

<sup>4</sup> «Journal Asiatique», Paris, 1880, p. 540—543: Յես և Stanislas Guyard, «Les inscriptions de Van» («Melanges d'Assyriologie», Paris, 1883).

<sup>5</sup> Սեյսը իր աշխատությունները հրատարակել է գլխավորապես Լոնդոնի «Journal of the Royal Asiatic Society» ասումնաթերթի մեջ 1880-ական թվականների սկզբում, այդտեղ լույս տեսավ մինչև այդ հրատարակված արձանագրությունների թարգմանությունը։ Այնուհետև

Թեև խորհրդավոր սեպագրությունները կարդացվում և հասկացվում էին, բայց նրանց լեզվի հարցը, այնուամենայնիվ, բաց մնաց։ «Ջարմանալի երևնալու չէ,— գրում է հայ բանասերներից մեկը,— թե ինչպես կրնան բեկոագիրներ կարդացվիլ և նաև մեկնվիլ, ասոնցմե ազգի մը ամբողջ պատմությունը հանվիլ, և սակայն լեզվին՝ որով գրված են՝ ինչ կարգի ըլլալուն նկատմամբ տարակուսներ ունենալ։ Ընթերցման մասին որևէ խնդիր չկա։ Վասնզի հայկական բեկոագիրներ-նշանները գրեթե բոլորովին նույնն են նոր Ասորեստանյա բեկոագիրներու նշանաց հետ, ուստի պետք են այնպես կարդացվիլ, ինչպես մյուսները։ Իմաստն ալ մեկնելու մեծ դյուրություն կուտան գաղափարանիշները... այսինքն ալ և այլ գաղափարներ հայտնող որոշ բեկոաձևեր։ Անոնք որ ծանոթ էին ասորեստանյան արձանագրություններին՝ կը գտնենք հարկականաց մեջ ալ, այնպես որ նշաններուն վաճառը ծանոթ է, բայց կրնա վիճելի ըլլալ թե ինչ կը կարդար արդյոք նախահայ մը այս նշանը տեսնելով։ Օրինակի համար «Աստուած» և «Որդի» գաղափարները նշանակելու համար որոշ նշաններ կան՝ որոնք ասորեստանյա լեզվի մեջ ինչ և ablu կը հնչվին. նույնները կան հայկականաց մեջ ալ, բայց ինչ կը կարդացվին արդյոք՝ կրնա խնդրական ըլլալ։ Մյուս կողման բազմաթիվ արձանագրություններ համեմատելով՝ հաճախ ճիշտ նույն տողերն ու խոսքերը, երբեմն ամբողջ արձանագրություններ նույնությամբ կը գտնվին։ Մտադիր աչք մը դյուրավ կը գտնե արդ, որ հաճախ տեղ մը, որուն իմաստը ծանոթ էր գաղափարանիշներին, ուրիշ համեմատական տեղ մը ամբողջ կամ բեկոատաներով գրված է, որ է ըստ այսմ գաղափարանիշին հնչումը, և ահա գտնվեցավ բառ մը, խոսք մը այն անծանոթ լեզվին։ Եվ այսպես շարունակելով, մանավանդ օգնությամբ Ասորեստանյա արձանագրությանց, որոնցմե բավական բառ անփոփոխ առնված քանդակված կը գտնենք, հասած է այժմ գիտություն այն տեղն, որ քիչ շատ ամեն նախահայ բեկոագիր գոնե մերձավորապես կրնա թարգմանվիլ<sup>6</sup>։

Ընդհանրապես եվրոպացի գիտնականների մեջ, լեզվի վերաբերմամբ, ամենահավանական ընդունված է Լընորմանի տեսությունը։ Բայց հայ բանասերների մեջ կան այնպիսիները, որոնք կարծում են, թե վանյան սեպագրությունները բուն ազգային, հայկական են։ Այնպիսիներից մեկն է Հովսեփ վարդապետ Սանտալճյանը, որ 1900 թվականին տպագրեց Ֆրանսերեն լեզվով մի ստվար աշխատություն<sup>7</sup>, որ ներկայացված է ֆրանսիական ակադեմիային (արձանագրությունների)։ Այդ աշխատության մեջ Սանտալճյանն ասում է, թե ուրարտական բարբառը, հարկավ, ուրիշ բան չէ և չէ կարող լինել, բայց միայն նախնական հայերենը։ Ապա հայերենի օգնությամբ թարգմանելով բոլոր՝ մինչև այդ հրատարակված արձանագրությունները, հեղինակը վերջացնում է իր այդ գործը մի ամբողջ մեկնադրանական բառագրությամբ։ Այս աշխատությունը թեև անվրոպական գիտության մեջ կարծիքների փոփոխություն չառաջացրեց, բայց անկասկած, նույնպես ունի իր ծանրակշիռ արժեքը լեզվի հարցի մեջ։ Նա ցույց էր տալիս անհրաժեշտությունը որոնելու հայերեն լեզվի մեջ նախա-արիական տարրեր, որոնք պիտի նպաստեն վանյան լեզուն մի

նոր գտնված արձանագրությունների ընթերցանություններն ուղարկվում էին նրան, և նա թարգմանում էր և տպագրում նույն ուսումնաթերթում կամ ուրիշ հրատարակությունների մեջ։

<sup>6</sup> Լ. Յ. Տ., «Փորձ մը լեզուի վանեան բեկոագրութեանց», («Հանգէս Ամսօրեայ», 1890, եր. 16—17)։

<sup>7</sup> «Les inscriptions Cuneiformes Urartiques», Venise, 1900, L—506 p. p.

օր գտնելուն: Այսպիսով Սանտալճյանը ավելի լայնացնում էր Պատկանյանի տեսությունը, թեև մյուս կողմից մնում էր այն սխալի մեջ, որ վանյան լեզուն, գլխավոր առմամբ, արիական է: 4

Պրոֆեսոր Պատկանյանի ցույց տված իրողությունը, այն է՝ ոչ-արիական շերտերի գոյությունը հայերեն լեզվի մեջ, ուսումնասիրությունների առարկա դարձրեց նրա աշակերտ պրոֆեսոր Մառը, որի հետազոտությունները, ըստ երևույթին, ապագայում բավարար լուծում պիտի տան և վանյան արձանագրությունների հարցին:

Արդ, ընդհանրապես ի՞նչ ստացավ գիտությունը վանյան սեպագիրների շուրջը կատարված այդ բոլոր աշխատանքներից:— Մի նոր հարստություն պատմության համար, որ վեր հանեց մինչև այդ գրավոր տարեգրությունների մեջ միանգամայն անհայտ մնացած, գուցե և միայն անունով հիշատակված մի ինքնուրույն, քաղաքակիրթ ազգ: Գիտությունը ցույց տվեց, որ խորենացու զարմանքը գրգռած Վանն ու նրա տարօրինակ արձանագրությունները Շամիրամի գործերը չէին: Ասորեստանի արձանագրությունների մեջ նախ նախի, ապա Ուրարտու անուններով հայտնի երկրները ու ժամանակներում միայն ստացել էին Հայաստան անունը: Մինչև այդ երկիրը պատկանում էր մի ընդունակ, մեծագործ ազգի, որի իսկական անունը դեռ հայտնի չէ, բայց որին գիտնականները տալիս են իսալդ անունը, որովհետև այդ ազգի գլխավոր աստծու անունը իսալդ էր, ուրարտացիներ, որովհետև նրա երկիրը կոչվում էր և Ուրարտու: Հաճախ գործ են ածում և նախահայեր պնունը: Ահա այդ ազգի մայրաքաղաքն էր Վանը, իսկ քարերի վրա փորած զարմանալի գրությունները նույն այդ ազգի թագավորների գործերն էին պատմում:

Վանի արձանագրությունները հիացմունքով նկարագրող խորենացին կարող էր երևակայել անգամ, թե մի օր նույն այդ նշանները պիտի բաց անեն իրենց լեզուն և նրանց առաջին իսկ խոսքերը այն պիտի լինեն, թե պետք է ջնջել նույն այդ խորենացու առաջին գիրքը, ուր հայ ազգի սկզբնավորությունն ու 1800-ամյա քաղաքական կյանքն են նկարագրված: Վանյան սեպագիրները ներկայումս այդ գործն արդեն արել վերջացրել են: Նրանք հայոց պատմության իբրև առաջարկ և նախապատրաստություն դրել են Ուրարտուի պատմությունը: Իսկ խորենացու պատմության մի քանի մասերը սուսկ ավանդությունների արժեք ունին: Ավելի դրական և հաստատուն գիտական ուսումնասիրությունների մեջ դրվեց հայ ազգի ծագումը, նրա ներառյալ պատմության ասպարեզի մեջ, առաջնալը դեպի այն երկիրը, որ նրա վերջնական հայրենիքը դարձավ:

Մենք դեռ շատ բան չգիտենք նախահայերի շրջանի մասին: Բայց գիտությունը շարունակում է իր որոնումները: Եվ ո՞վ գիտե գուցե հեռու շին այն ժամանակները, երբ նա, հարստացած նոր գյուտերով, կպարզե մի շարք դեռ մութ մնացած հարցեր:

**5. Օժանդակ գիտություններ:** Պատմական գիտությունը 19-րդ դարում չբավականացավ հին գրավոր աղբյուրների այն առատությամբ, որ հայթայթում են Եգիպտոսը, Միջագետքը, Հայաստանը, Պարսկաստանը: Նույն մեծագործ դարում ծնունդ առան մի շարք անկախ գիտություններ, որոնք ուսումնասիրում են մարդուն զանազան տեսակետներից— իբրև երկրի արդյունք, իբրև կենդանաբանական տիպ, իբրև զարգացման զանազան ձևեր անցած էակ

և այլն: Պատմագրությունը, որի էական նպատակն է մարդկային քաղաքակրթությունը, չէր կարող շղիմել այդ գիտությունների օգնության, որպեսզի կարողանա թափանցել նաև նախապատմական շրջանները, այն ժամանակները, որոնք տասնյակ հազարավոր տարիների տարածություն ունին և չեն թողել ու չէին կարող թողնել գրավոր հիշատակարաններ: Ահա այդ օժանդակ գիտությունները:

**Երկրաբանությունը (Géologie),** ուսումնասիրելով հողային շերտավորումները, դասավորում է բնական երևույթների հաջորդականությունը, առանց, սակայն, կարողանալու հաստատ ժամանակագրության տակ դնել այդ երևույթները: Դա, այսպես ասած, մեր երկրագնդի պատմությունն է: Նա արդեն խոշոր գծերով պատկերացնում է մեր մոլորակի կյանքը, բայց դեռ հավարավոր հարցեր ունի, որոնք անլուծելի են մնացել:

**Հնէաբանությունը, բուսաբանությունը (Paléontologie, Botanique):** Երկրաբանական շերտավորումներին հետևելով ուսումնասիրում է բրածո կենդանիները, բույսերը և այդպիսով երկրի կենդանիների և բույսերի հաջորդականությունը:

**Ազգագրությունը (Ethnographie):** Նախապատմական ժամանակների վերաբերմամբ ուսումնասիրում է պատմություն շունեցող ազգերի արդյունաբերությունն ու արվեստները, ցույց է տալիս այն կերպարանափոխությունները, որ անցել է մարդը քաղաքակրթության ասպարեզում մինչև գրավոր պատմության հասնելը: Սա դեռ բոլորովին նոր գիտություն է և արդեն մեծ առաջադիմություն է ցույց տվել արևմտյան Եվրոպայի ուսումնասիրության գործում: Դժբախտաբար, երկրագնդի մյուս կողմերի վերաբերմամբ նա դեռ շատ անկատար աշխատությունների տեր է:

**Մարդաբանությունը (Anthropologie):** Ուսումնասիրում է մարդու մարմինը, ինչպես կենդանաբանությունը ուսումնասիրում է կենդանիներին: Իրապես այդ գիտությունը միայն մարդու կենդանական տիպի մասին է մինչև այժմ տեղեկություններ տվել, մինչդեռ նրանից դեռ սպասվում են ճիշտ ծանոթագրություններ մարդու ծագման, ազգակցության, ընդունակությունների մասին: Մարդկային ցեղաբանության վերաբերմամբ նա ընդունում է բաժանումներ ըստ կմախքի և գլխավորապես գանգի կազմվածքի և այդ կողմից նա ավելի դրական հիմքեր ունի, քան լեզվաբանությունը, որ բաժանում է մարդկությունը ըստ լեզվական առանձնահատկությունների: Պատմության մեջ հայտնի են շատ ազգեր, որոնք կորցրել են իրենց բնիկ լեզուն և լուրացրել են օտար լեզուներ:

**Ընկերաբանությունը (Sociologie):** Վենվելով սովորությունների, կենցաղի, հավատալիքների վրա, ցույց է տալիս կապակցությունները մարդկանց խմբերի մեջ:

**Լեզվաբանությունը (Linguistique):** 19-րդ դարում շատ զարգացած և ընդարձակված մի գիտություն: Նա ամբողջ մարդկությունը, ըստ լեզուների բնության, բաժանել է երեք մեծ խմբերի, մանրամասն ուսումնասիրել է այդ խմբերը և տվել է մի շարք թանկագին ցուցմունքներ մարդու քաղաքակրթական զարգացման աստիճանների մասին: Նա նույնիսկ կարողացել է որոշել տարրերի մթություն մեջ կորած մի քանի հարցեր, ցեղերի տեղավորման նախնական շրջանները, նրանց տեղափոխությունների ճանապարհները և այլն:

Ժամանակագրություն (Chronologie): Անդիր ժամանակների վերաբերմամբ աշխատում է որոշել երկրաբանական շրջանների տևողությունը: Բայց այստեղ չկան հաստատուն առաջնորդներ և դարաշրջանների որոշումը կախված է այս կամ այն գիտնականի հալեցողություններից, ենթագրություններից: Այդ պատճառով էլ նախապատմական ժամանակագրության մեջ չկան հաստատուն, ամենքից ընդունված թվանշաններ: 5

Բ

## ՄԱՐԴԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գլուխ առաջին

### ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

1. ԵՐԿԻՐԸ ԵՎ ՄԱՐԴԸ: 2. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆԸ: 3. ԱՌԱՋԻՆ ԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ:
4. ՑԵՂԵՐ ԵՎ ՃՅՈՒՂԱՎՈՐՈՒՄՆԵՐ: 5. ԵՈՒՄԵՐ ԵՎ ԱԿԱԳ:

1. Երկիրը և մարդը: Մարդու պատմությունը երկրի պատմության հետ է կապված: Մինչև նոր գիտությունների զարգանալը երկրի պատմությունն այն էր, ինչ տալիս է Աստվածաշնչի Մենդոց գիրքը: Արարչագործություն վեց օրվա ընթացքում, ռասայի և եղև-ի հիման վրա, հետո այդ խոսքերով ստեղծված երկիրը անփոփոխ շարունակում է իր գոյությունը: Եվ շատ էլ երկար չէր այդ գոյությունը: Աստվածաշնչի ժամանակագրությունը մեր երկրագնդի հասակը, ստեղծագործության օրից, որոշում էր շուրջ 7000 տարի:

Այսպես էր ավանդությունը, հավատալիքը, քանի որ մարդը չէր սովորել կարդալ այն մեծ վավերագրերը, որ երկիրը պահում է իր ծոցում՝ իր պատմության համար: Երկրաբանական գիտությունը, թեև տակավին չստանոր, բայց բավական բազմապատկեր, փորձում է նկարել երկրագնդի պատմությունը: Եստ բան այդ պատմության մեջ դեռ անհայտ է, դեռ ենթադրական, դեռ վիճելի: Բայց գիտության ձեռք բերած հաստատուն իրողություններից գլխավորն այն է, որ մեր երկրագնդի իր սկզբնավորությունից անփոփոխ ու միանման կյանք ունեցած մի մոլորակ չէ, այլ բազմաթիվ անգամ ենթարկվել է մեծամեծ կերպարանափոխումների, որոնց ընդհանուր գծագրությունները, բնավորությունը կարելի է ուսումնասիրել հողի շերտավորումների մեջ: Այդ հսկայական տակնուվրայությունները բերել են իրենց հետ հողագնդի մակերևույթի զանազան ձևակերպումներ, ցամաքի և ջրերի զանազան դասավորում, կլիմայական տարբեր գոյություններ, բուսական և կենդանական տարբեր ձևեր և այլն: Կերպարանափոխությունները բաժանվում են մեծ շրջանների, որոնք իրենց հերթին բաժանվում են ավելի փոքր շրջանների:

Գիտությունը փորձում է հաշվել նաև այդ մեծ ու փոքր շրջանների տևողությունը, ընդունելով իրրև շափ՝ մեր տարին: Սակայն այս ժամանակագրությունը դեռ շատ անկայուն է, հիմնված ավելի երևակայության վրա: Այսպես, գիտնականներից ոմանք ընդունում են, որ 1.400 միլիոն տարի է անցել այն ժամանակից, երբ հողագնդի վրա երևան եկավ օրգանական (գործարանավոր) կյանքը: Մինչդեռ ուրիշները այդ թիվը իջեցնում են 100 միլիոն տարու: Այս անհուն ժամանակը բաժանվում է, ըստ այն գլխավոր կերպարա-

<sup>1</sup> J. de Morgan, „Les premiers civilisations“, Paris, 1909, p. p. 2—29.

Նախորդությունների, որ կրել է հողագունդը, հինգ մեծ շրջանների: Դրանք հետևյալներն են.

1) Արխեոգոիք (հունարեն բառ, նշանակում է նախնական կենդանական) կամ նախծին (primordial), որ տևել է 52 միլիոն տարի:

2) Պալեոգոիք (հնակենդանական) կամ առաջնական (primaire)— 34 միլիոն տարի:

3) Մեզոգոիք (միջնակենդանական) կամ երկրորդական (secondaire)— 11 միլիոն տարի:

4) Կայնոգոիք (նոր կենդանական) կամ երրորդական (tertiaire)— 3 միլիոն տարի:

5) Անթրոպոգոիք (մարդակենդանական) կամ չորրորդական, որի մեջ գտնվում ենք մենք և որի սկզբից հաշվում են 500,000 տարի:

Կարևոր է նկատի առնել, որ երրորդական շրջանը բաժանվում է երեք ժամանակների կամ դարերի. 1) Էոցենյան (նորարշալույսային), 2) Մեոցենյան (միջաժամանակային) և 3) Պլեոցենյան (հետաժամանակային): Իսկ չորրորդական շրջանը ունի իր մեջ սառցային, հետասառցային և մեր ներկա ժամանակները: 6

Այս կերպարանափոխական ահագին շրջանների ու ժամանակների մեջ մարդը ի՞նչ տեղ ունի: Ծ՞րբ է նա երևան եկել հողագունդի մակերևույթի վրա:

Ընթացողությունների և հավանականությունների տեսության հետևելով, պետք է ընդունել, որ, իբրև կաթնակեր կենդանի, նա պիտի երևան եկած ինչի այդ տեսակ մյուս կենդանիների հետ: Արդ, կաթնակեր կենդանիների նախնական տիպը գոյություն ստացավ երկրորդական շրջանի վերջերում: Եվ հիմնադրվեց է, ուրեմն մարդու գոյության տևողությունը պետք է հաշվել տասնյակ միլիոն տարիներով: Սակայն այստեղ մենք ենթադրությունների աշխարհում ենք: Դրականապես ընդունելի է համարվում այն, որ մարդը ապրում էր երրորդական շրջանի երրորդ ժամանակում, այն է Պլեոցենյան (հետաժամանակային) դարում, դեռ նույնիսկ դրանից էլ առաջ, Մեոցենյան (միջաժամանակային) դարում: Այս դեպքում էլ մարդկային կյանքի տևողությունը անհուն չափերի է հասնում:

Սակայն այդ անհուն ժամանակները, այդ միլիոնավոր տարիներն անցել են անհատության մեջ: Ի՞նչ էվոլյուցիաներ էին կատարվում մեր նախնիքների կյանքի մեջ: Պարզ է միայն այն, որ կենդանական աշխարհի օրենքները ծանրացած էին և մարդկանց վրա, ինչպես նրանք ծանրացած են և այժմ: Այդ օրենքների մեջ առաջինը և ամենանշանավորը գոյության կոփվել է, որ մարդը մղում է իր շրջապատի դեմ թշնամիներից պաշտպանվելու, ապրուստի միջոցներ գտնելու համար: Այդ ահավոր կռվի մեջ հին մարդը իր դաժան գործը թեթևացնել կարող էր, հնարելով իր համար այնպիսի գործիքներ, որոնք կօգնեին նրան: Ահա այդ հնարագիտության առաջին գործերի հետ սկսվում է և մարդու քաղաքակրթությունը: Զուր չէ ասված, թե քաղաքակրթության ծնողը սովն է:

Մարդու պատմությունը՝ քաղաքակրթության պատմությունն է: Կյանքի համար անհրաժեշտ գործիքների գյուտի հետ սկսվում է նախապատմական շրջանը, որ վավերագրերը միայն այդ գործիքներն են, այդ արդյունաբերությունն է: Դա մի ահագին շրջան է, որ կարելի է ուրվագծել ընդհանուր խոշոր գծերով, առանց մանրամասնությունների:

Երեք ընդարձակ և գլխավոր դարաշրջաններ են պարզվում մարդկային քաղաքակրթության մեջ. 1) Քարի դար, երբ կյանքի համար անհրաժեշտ գործիքները պատրաստվում էին քարից, մասամբ և անխառն մետաղներից: Այս դարաշրջանի տևողությունը սմանք հաշվում են 64,000 տարի. 2) Բրոնզի դար, երբ մարդը գործ էր ածում պղնձի և կալայի խառնուրդից ստացվող բրոնզը: Այս դարաշրջանի տևողությունը հաշվում են 38,000 տարի. 3) Երկաթի դար, որի մեջ ապրում ենք մենք այժմ: 7

Պետք է իմանալ որ քաղաքակրթության այս երեք շրջանները մի և պարտադիր չեն եղել բոլոր կողմերի մարդկության համար, այսինքն ամեն տեղ մարդկությունը իր գործիքների աստիճանական զարգացման իշխանները չէ անցել, այլ շատ անգամ և շատ տեղերում քարի դարից անցել են ուղղակի Վրկաթի դարին, որովհետև դարաշրջանների տևողությունը ամեն տեղ միեկուն չէ եղել. առաջադեմ և հետամնաց գոյությունները հատուկ են մարդկային կացության նախապատմական ժամանակներից:

Մի երկու ընդհանուր նիստողություն ևս: Մի նախահոր, մի նախամարդու մասին խոսք անգամ չէ կարող լինել: Մարդկությունը առաջ է եկել ամեն տեղ, ինչպես կենդանական աշխարհի մյուս ներկայացուցիչները: Ամենաէական հատկություններից մեկն էլ այն է, որ մարդկային ցեղերը մի տեղ նրստած չեն մնացել, այլ շարունակ տեղափոխվել են, թափառել են: Այս անհրաժեշտությունը միշտ եղել է կյանքի և բնության պայմանների պահանջ: Զորրորդական շրջանի այն ահագին ժամանակամիջոցում, որ կոչվում է սառցային, երբ սառույցներն էին շարժվում երկրագնդի վրա, մարդը ստիպված էր որոնել այնպիսի տեղեր, ուր կարող էր ապրել. այդ պատճառով էլ նա փախչում էր սառույցների շարժման առաջ և նետ էր նահանջում, երբ սառույցներն էին ետ շարժվում:

Այդ շարժումը, թափառական կենցաղավարությունն էլ ահագին դեր է կատարել մարդու պատմության մեջ: Ցեղերը խառնվել են իրար հետ, փոփոխել խառնել են իրենց տիպը, իրենց լեզուն, քաղաքակրթական ընդունակությունները, ենթարկվել են փոփոխվող հայրենիքի կլիմայական և աշխարհագրական պայմաններին: Ցեղական, քաղաքակրթական բազմազանությունը այսպիսի աղբյուրներ ունի:

2. Պատմության օրրանը: Եթե իրական պատմության առարկան մարդկային քաղաքակրթությունն է, եթե իսկական պատմությունն այն է, որ հիմնված է գրավոր հիշատակարանների վրա, մենք այսօր կարող ենք ցույց տալ և այն տեղը, ուր ծնվեց այդ պատմությունը: Դա Առաջավոր Ասիայի մի փոքրիկ անկյունն է, տեղավորված Պարսից ծոցի հյուսիսային կողմերում, մի Վրկիր, որ հեռու չէ Հայաստանից, ավելին, մի երկիր, որ հայկական երկու մեծ գետերի ստեղծագործությունն է:

Այդ վայրը, ուր առաջին անգամ վառվեց մեծ քաղաքակրթության ճրագը, ուր մարդկային գիտությունը առաջին մեծ նվաճումներն արավ և ուր ընկերական-պետական կյանքի առաջին քաղաքակրթական աստիճանները ձևակերպվեցին, Եփրատ-Տիգրիսյան ստորին հոսանքի հովիտն է, հայտնի հին ժամանակներից՝ Բաղդա, Բաբելոն անուններով: Այդտեղից էր, որ քաղաքակրթությունը տարածվեց ոչ միայն ամբողջ Առաջավոր Ասիայի վրա, այլև անցավ Արևմուտք, Հունաստան, և այստեղ մտավ եվրոպական քաղաքակրթության հիմքերի մեջ: Այսօր էլ մենք մեր գրպանում կրում ենք եփրատյան կուլտուրայի մի հիշատակ մեր ժամացույցների վրա ժամանակը բաժանվում է տաղանդ



Տիգրիսի կատարած դերը: Հայաստանի երկարատև ձմեռվա ձյունները և գարնանային հորդ անձրևները ջրերի ահագին առատություն են մատակարարում այդ քույր-գետերին: Տանելով իրենց հետ անհուն քանակությամբ տիղմ, նրանք դարերի ընթացքում թափում էին այդ հողակույտերը ծովի մեջ, ուր վերջիններս կուտակվում էին, բարձրանում, ետ մղելով ծովի ջրերը և ցամաքի կտորներ կազմելով: Հաշվել են, որ մի դարի ընթացքում այդ ջրաբեր հողակույտերը կազմել են շուրջ 1700 մետր ցամաք: Պարսից ծոցը, ինչպես տեսանք, այժմյան դիրքը չունի, այլ երկարացած էր շատ դեպի հյուսիս, մինչև շրջապատող լեռնաշղթաների ստորոտները: Մի ժամանակ Եփրատը թափվում էր այդ ծոցի մեջ Բաբելոնից շատ դեպի հյուսիս. իսկ Տիգրիսը՝ այժմյան Մոսուլի սահմաններում:

Այդպիսով Քաղթնայի ամբողջ դաշտը հայկական երկու մեծ գետերի ստեղծագործությունն է, ամբողջովին նրանց բերած ողողատների շերտավորումներից է կազմված: Տիգրիս-Եփրատյան այս դարավոր միահամուռ աշխատությունն օգնական են հանդիսացել և այն երկրաբանական շարժումները, որոնք բարձրացրել են Պարսից ծոցի հատակը և ետ են քաշել օվկիանոսի ջրերը:

**3. Առաջին ավանդություններ:** Մարդկությունը այս երկարատև նախապատմական շրջանից պահել է մի քանի հիշողություններ, որոնք իբրև նախնական ավանդություններ խոսում են մարդու սկզբնավորության, մարդկային ցեղերի ծագման մասին: Այդ ավանդությունները գրավոր հիշատակարանների միջոցով հասել են մեզ և պատմում են դրախտի կամ մեծ, գեղեցիկ պարտեզի մասին, ուր առաջին անգամ Կրեան եկավ մարդը: Աստվածաշնչի ավանդությունը՝ ցույց է տալիս և այդ դրախտի տեղը: Այդտեղից, ասում է նա, բխում էին շորս գետեր, որոնցից երկուսն էին Եփրատն ու Տիգրիսը: Մինչև 19-րդ դարը այդ ավանդությունն էր, որ հայտնի էր մարդկության: Եվ նրա աշխարհագրական ցուցմունքները թույլ էին տալիս գետեղելու դրախտը Հայաստանի սահմաններում, Եփրատի ակունքների մոտ: Սակայն քաղդեական և այլ ազգերի գրավոր հիշատակարանների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրախտի ավանդությունը հատուկ չէ միայն Աստվածաշնչին, այլ դուրս է բերված Քաղդեասից, ուր նույնպես գոյություն ունի այդ պատմությունը նախաստեղծ մարդկանց և նրանց մեղսագործության մասին: Դրախտը իբրև մարդկության առաջին օթևան գոյություն ունի և իրանական ու հնդկական արիացիների մեջ, որոնք, սակայն, աշխարհի ուրիշ կողմն են ցույց տալիս իբրև այդ երջանիկ օթևանի տեղ:

Գիտությունը, առաջնորդ ունենալով այդ ավանդական ցուցմունքները, երկար ժամանակ որոնում էր մարդկային ցեղի առաջին օրրանը: Ծատ հեղինակավոր գիտնականներ, որոնց թվում և Ռենանը, Քատրֆաթը, հաստատում էին, որ այդ օրրանը, այդ դրախտը Միջին Ասիայի այն երկիրն է, որ սահմանակից է արևմտյան Տիբեթին և կոչվում է Պամիր: Այդտեղ սկզբնավորվեցին և զարգացան մարդկության երեք գլխավոր ցեղերը—սպիտակ, դեղին և սև: Ընդունելով այդ թեորիան, գիտությունը առաջ բերեց և ազգերի մեծ աեղափոխությունների թեորիան, որի համաձայն բոլոր ազգերը դուրս են եկած այդ նախնական և ընդհանուր օրրանից: Սակայն գիտության մեջ կա և մի այլ հոսանք, որ չէ ընդունում այդ թեորիան, այլ պնդում է, որ մարդկությունը ան-

հայտ ժամանակներից տեղացի, բնիկ տարր է կազմել զանազան տեղերում: Եվ այս տեսությունը հետզհետե հաստատուն հիմքեր է ձեռք բերում, թեև, մյուս կողմից, ազգերի տեղափոխությունը ամենահին ժամանակներում նույնպես անվիճելի պիտի համարվի:

Ամենահին ավանդությունը դրախտի մասին այն է, որ մնացել է քաղդեական հիշատակարանների մեջ: Եվ տեղացիության, բնիկության կողմնակից գիտնականները տեղական ավանդության ցույց տված այդ երջանիկ պարտեզը տեղավորում են հենց նույն Քաղդեայում: Եփրատի և Տիգրիսի ստեղծած երկիրը, իբրև մեծ գետերի դիտա, ներկայացնում էր մի մեծ խումբ կղզիների և թերակղզիների, որոնք եղբրված էին ջրերով, որոնց հողը, փափուկ ու արգավանդ, ծածկված էր փարթամ բուսականությամբ, ծառատուկերով: Հարուստ և բազմազան էր նաև կենդանական թագավորությունը: Անտառները լիքն էին գազաններով, իսկ ջրերը ձկների անհուն առատություն ունեին. նույնպես անհուն էր և նրանցով կերակրվող թռչունների առատությունը: Հացաբույսերի, մանավանդ ցորենի, բուն հայրենիքն էր այդ երջի-րը, ուր նրանք ինքնաբույս էին: Այդ էր դրախտը:

Մարդն էլ այդտեղ էր, տեղացի, բնիկ: Նա ապրում էր բլուրների վրա, որտեղ էր և ձկնորս: Գազաններից և այլ հզոր թռչնամիներից պաշտպանվելու անհրաժեշտությունը հարկադրում էր նրան ապրել համայնքներով: Հետզհետե նա որսորդական կենցաղից անցավ երկրագործության և անասնապահության: Կազմվում են փոքրիկ քաղաքներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր սեփական աստվածները, մեծ և փոքր, իր կառավարությունը: Թեև անշատ էին ապրում այդ առաջին բնակավայրերը, բայց ամեն տեղ միևնույն էին բարձրը, սովորությունները, պաշտամունքները: Մինչև այստեղ առատության այդ երկրում ապրող մարդկությունը նույն վիճակն է ներկայացնում, ինչ հատուկ է առհասարակ նախնական մարդու կենցաղավարության: Բայց Քաղդեան հետզհետե առաջանում է և դարերի խավարի մեջ դուրս է գալիս իբրև մարդկային քաղաքակրթության առաջին և ամենահին օրրան: Պատմությունը, իբրև հավաստի գիտություն, այդտեղից է սկսվում:

Ի՞նչ տեսակ մարդիկ էին դրանք, որ այդպիսի մեծագործություն կատարեցին Պարսից ծոցի ափին, երկու մեծ հայկական գետերի բերաններում:

**4. Ցեղեր և ճյուղավորումներ:** Դրախտի ավանդության հետ Քաղդեայում կազմվեց ավանդություն և մի մեծ ջրհեղեղի մասին, որ եկավ վերջ տվեց աշխարհի կենդանական բնակչության: Այդ ավանդության մեջ, անշուշտ, երկրաբանական այն մեծ դարաշրջանը չէ խոսում, որ հետևեց սառցային շրջանին, այլ հենց Քաղդեայում պատահած մի ահավոր աղետ, որի մանրամասնությունները տալիս է մեզ և Աստվածաշունչը, աղբյուր ունենալով քաղդեական զրույցները: Ավանդության մանրամասն վերբերումը ցույց է տալիս, որ այդ ջրհեղեղը մի մասնավոր երևույթ է եղել և աղետել է միայն Տիգրիս-Եփրատյան ստորին հովիտը: Ամենայն հավանականությամբ այդ աղետը Միջագետքին պատճառած պիտի լինի Պարսից ծոցը: Ցնթաղում են, որ այստեղ ստորերկրյա ցնցումներից և օվկիանոսի փոթորկաբեր քամիներից (ցիկլոն) ջրերը մղվել են դեպի ցամաք, գետերը դուրս են եկել իրենց ափերից, միաժամանակ և հեղեղներ են տեղացել: Ու այդպիսով ջուրը կոխել է երկրի

<sup>1</sup> Մենդոզ, գլ. Բ. 11—15:

<sup>2</sup> Fr. Lenormant, „Les origines de l'Histoire“, t. II, I partie, Paris, 1882, chap. IX.

<sup>1</sup> De Morgan, „Les Prem. civil.“ p. 178—180.

<sup>2</sup> Н. Неймаєр, «История земля», т. II, СПб, 1903, с. 341—344.



Քրեանք, բայց ոչ այնքան բարձր է եղել նրա մակերևույթը, որ Տիգրիսի հովիտը հյուսիսից և հյուսիս-արևելքից եզերող բարձրավանդակները ծածկված լինեին նրա տակ: Արդտեղ էլ, այդ բարձր բլուրներից մեկի վրա, ինչպես պատմում է քաղղեական ավանդությունը, կանգ է առել Նասիս-Աղբանի (քաղղեական Նոյի) նավը, որի մեջ նա վերցրել է իր հարստությունները, կենդանիներ և թռչուններ<sup>1</sup>:

Աստվածաշունչը, նկարագրելով, թե ինչպես շրջեղեղը շարժեց ամբողջ մարդկությունը և ինչպես ազատվեց Նոյը, պատմում է և այն, թե ինչպես Նոյից առաջացան աշխարհի զանազան կողմերում ապրող մարդկային ցեղերը: Մենքոց գրքի 10-րդ գլուխը, ուր հիշատակված են Նոյի որդիները, որդիների որդիները, ներկայացնում է ամենահին ազգաբանությունը, որ գրված է, ինչպես կարծում են, Քրիստոսից 2000 տարի առաջ<sup>2</sup>:

Հին ազգերը մարդկային ցեղերի, դրանց ճյուղավորումների, առանձին ազգությունների ծագումը վերագրում էին մի նախահոր, որի անունով էլ, իբր թե, կոչվում էր նրանից ծնված ցեղը, ազգը: Նոյը, ինչպես հայտնի է, ուներ երեք որդի— Սեմ, Փամ և Հաբեթ: Դրանք հանդիսացան երեք գլխավոր ցեղերի ծնողներ, իսկ դրանց որդիները՝ այդ ցեղերի ստորաբաժանումների ծնողներ: Այդպիսի երեք գլխավոր ցեղեր, ծագած երեք եղբայրներից, հիշատակվում են և ուրիշ ազգերի, օրինակ, իրանցիների հնագույն ավանդությունների մեջ: Ըստ իրանական ազգաբանության՝ այդ երեք եղբայրներն էին Արիա, Քուրա և Սերիմա՝: Այդ անուններից մի քանիսը գիտությունն ընդունել է իբրև ցեղական խմբերի անուններ: Այսպես են Սեմական ազգերը (Սեմի անունից), Փամյան կամ Փուշյան (Փամի որդի Փուշի անունից), Հաբեթյան ազգեր (Հաբեթի անունից):

Հետևանքով ավանդությունից, մենք տեսնում ենք, որ մարդկությունը, ըստ կաշու գույնի, երեք գլխավոր բաժանումներ ունի՝ սպիտակ կամ կովկասյան, դեղին և սև (կա և կարմիր): Այդ գլխավոր ցեղերը ըստ մարդաբանական և լեզվաբանական տարբերությունների բաժանվում են բազմաթիվ խմբերի: Կան և այնպիսի ցեղեր, որոնք ներկայացնում են զանազան ցեղերի խառնուրդ: Այսպես է, օրինակ, Ալթայյան վրաց Ուզբո-թապոնական ցեղը, որ սպիտակների և դեղինների խառնուրդն է: Այս ազգերի խմբի մեջ են ֆիններն ու թուրքերը:

Եվ ահա հարց է՝ թե այսքան ցեղերի մեջ որին է պատկանում Քաղղեայի տափարակներում մարդկային առաջին և մեծ քաղաքակրթություն ստեղծելու պատիվը:

<sup>1</sup> Դարերից ի վեր, Աստվածաշունչի ազդեցության տակ, մեր Մասին էր համարվում այն Աբարատ լեռը, որի վրա, ըստ հրեական ավանդության, իբր թե կանգ է առել Նոյի տապանը: Երկար ժամանակ գիտնականներն էլ որոնում էին Նոյի տապանի կանգնած տեղը և գտնում էին, որ դա, համենայն դեպս, Աբարատյան դաշտի հսկան չէ (Lenormant, „Les Origines de l'Histoir“, t. II, chap. IX): Նույնիսկ հայկական հնագույն ավանդությունները հաստատում են, որ Աբարատը Մասիսը չէ, այլ Հայկական Տավրոսի գագաթներից մեկը, հարավային Հայաստանում:

<sup>2</sup> Fr. Lenormant, „His. ancienne de l'Orient“, Paris, 1881, t. I, p. 264.

<sup>3</sup> Fr. Lenormant, „Les Orig. de l'Hist.“ t. II, p. 203. Մեր եսթեմացին էլ բերում է մի այդպիսի ազգաբանություն (գիրք Ա., գ.), ցույց տալով, սակայն, որ օտար գրականությունից (Քերոզոսից) է վերցնում: Այդ ավանդության մեջ երեք եղբայրներն են՝ Զովան, Տիտան և Հապետոս: Դրանց թույլն է Աստղիկ, Լընորմանը կարծում է, որ այդ ավանդությունը օտար ծագում չունի, այլ հայկական է, թեև կերպարանափոխված („Les Or. de l'Hist.“ II p. 211):

5. Եուֆրատ և Ակկադ: Այս հարցին պատասխանելու համար միայն լեզվագիտական նյութեր կան: Քաղղեական և ասուրական արձանագրությունները սեմական լեզվով են: Բայց նրանց մեջ պահվել է մի ավելի հին լեզու, որ նվիրագործված էր իբրև սրբազան լեզու, իբրև պաշտոնական հարաբերությունների, աղոթքների, մոգությունների լեզու: Նա համարվում է գործածական լեզու այն ազգի, որ ապրել է Քաղղեայում նախքան այստեղ սեմական ազգերի երևան գալը: Եվ որովհետև Քաղղեայի թագավորները իրենց տալիս էին «թագավոր Եուֆրատի և Ակկադի» տիտղոսը, ուստի ասորագիտությունը սկզբում կարծեց, թե դրանք երկու ազգերի անուններն են, որոնցից կազմված են Քաղղեայի ազգաբանությունը: Եուֆրատի վերագրում էին սեմական ծագում: Իսկ ակկադներն ընդունվեցին իբրև այն հին ցեղը, որի խոսածը հենց այդ սրբազան լեզուն էր:

Այդ լեզուն—Ակկադյանը, իր ձևերով և կազմությամբ պատկանում էր ուրալ-ալթայան կամ թուրանական սուգերի լեզվախմբին, որի մեջ է, օրինակի համար, և թուրքերենը: Հիմնվելով այս հանգամանքի վրա, գիտնականները առաջադրին այն թեորդիան, թե քաղղեական նախնական քաղաքակրթությունը թուրանական էր և թե ակկադները տեղացիներ չէին, այլ գաղթած էին իրենց ընդհանուր հայրենիքից—Միջին Ասիայից<sup>2</sup>: Ընդունվում էր և այն, որ թուրանական ազգերը, նույն գաղթականությունների միջոցով, տարածված էին Առաջավոր Ասիայի համարյա մեծագույն մասում (նույնպես և Հայաստանում):

Սակայն թուրանական թեորդիան, թեև ընդունված ճշմարտություն էր, հետագա հետազոտությունների միջոցով սաստիկ խախտվեց<sup>3</sup>: Ամենից առաջ ապացուցվեց, որ Եուֆրատ և Ակկադ առանձին ազգերի անուններ չէին, այլ պարզապես Քաղղեայի հյուսիսային և հարավային մասերն են նշանակում: Ուստի այդ երկու անունները միացվեցին՝ նույն այդ հին ազգը անվանելու համար (Եուֆրատ-Ակկադ, գործ է ածվում նաև միայն Եուֆրատ կամ Սուֆրատ անունը): Հնագիտական հետազոտություններով, որոնք կատարվեցին Հայաստանում և Պարսկաստանում, հաստատվեց, որ թուրանական գաղթականություն այդ երկրների վրայով դեպի Պարսից ծոցը տեղի չէ ունեցել<sup>4</sup>: Ուրեմն դա մի հին տեղացի, բնիկ ազգ էր:

Այդ ազգի պատմությունից ոչինչ հայտնի չէ<sup>5</sup>: Հնագիտական մարդաբանությունը, ինչպես նաև հին մի քանի քանդակներ հաստատում են, որ Պարսից ծոցի ափերով ապրող բնիկ ցեղը իր մարդաբանական տիպի կողմից ազգակից էր այն ցեղին, որ կոչվում է Նեգրիտոս և որի ներկայացուցիչները այժմ էլ ապրում են Հնդկա-Չինաստանում, Հնդկական օվկիանոսի կղզիների վրա: Գոնե այսպես էր էլամը, Քաղղեայից դեպի արևելք գտնվող երկիրը, որի մայրաքաղաքն էր հռչակավոր Սուզը կամ Եոզը: Վերջին ժամանակներս այդտեղ կատարված հնագիտական պեղումները տվին հնագույն ժամանակները ճանաչելու համար շատ թանկագին նյութեր: Այսպես, իմացվեց, որ էլամն

<sup>1</sup> Fr. Lenormant, „La Magie chez les Chaldéens“, Paris, 1874, p. 24.

<sup>2</sup> Փորձեցին նույնիսկ որոշել և այդ գաղթականության ճանապարհը: Որնանը, նրան հետեւելով և ուրիշ գիտնականներ, ընդունում էին, որ թուրանացի Ակկադները իրենց տեղափոխության ժամանակ բնակություն են հաստատել նախ մեր Աբարատյան դաշտում կամ Տիգրիսի միջին ընթացքում: (G. Maspero, „Histoire Anstienne des peuples de l'Orient Classique“ Paris, t. I, 1895, p. 550).

<sup>3</sup> Fr. Lenormant, et E. Babelon, „Histoire Anc. de l'Orient“, t. IV, Paris, 1885, p. 53.

<sup>4</sup> De Morgan, „Les Prem. Civ.“, p. 181:

<sup>5</sup> Babelon, c. 7.

է այն երկիրը, ուր գտնվեց մեհենադրոշմ (հիերոգլիֆ) գրութեան ձևը: Էլամի նեգրիտոս ցեղը ունի իր առանձին լեզուն: Շատ կարելի է, որ նրա հետ ցեղակից էին այն ազգերը, որոնք ապրում էին հյուսիսային կողմերում, այն է Հայաստանում և Կապադովկիայում (ուրարտացիներ և հիթիթներ): Էլամական նշանագրերը Քաղդեայի զանազան ազգերի աշխատանքով ժամանակի ընթացքում կերպարանափոխվում են և դառնում անպաճկ գրութեան: Թվում է, թե այդ մեհենադրոշմ գրութեանը էլամից կամ Տիգրիս-Եփրատյան հովտից է տարված Եգիպտոս: Հայտնի են նույնպես հիթիթների մեհենադրոշմ արձանագրութեանները, որոնք, սակայն, դեռ այսօր էլ, հակառակ գիտնականների ջանքերին, չեն վերծանված:

Այսպիսով ահա մարդկությունը տեր է դառնում գրութեան արվեստին, որ քաղաքակրթության բարձրագույն աստիճանն է ցույց տալիս: Գրավոր, հավաստի պատմության առաջին լույսն է ծագում Քաղդեայի վրա, բայց այդ ժամանակ շումեր-ակկադները արդեն ձուլված էին անմական եկվոր ցեղերի հետ:

Սեմական ազգերի բուն հայրենիքը համարվում է Արաբիայի թերակղզին: Այդտեղից ահա այդ ազգերը, նեղվելով ազգաբնակչության աճումից, սկսեցին գաղթել զխաղաղապես դեպի հյուսիս: Եվ բնականաբար այդ թափառական հորդանների ամենից շատ պիտի գրավեր Տիգրիս-Եփրատյան պտղավետ հովիտը: Այդ գաղթականությունների սկիզբը կորած է նախապատմական ժամանակներում: Ենթադրվում է, որ սեմական գաղթականությունները Քաղդեա մտան սկզբում ծովի կողմից, փոքրիկ խմբերով: Եկվորները նվաճեցին երկիրը կամաց-կամաց, հավանորեն՝ խաղաղ միջոցներով կամ գոնե առանց մեծ պատերազմների: Սեմական տարրը մեծ առաջադիմություն է ցույց տալիս քաղաքակրթության ասպարեզում և սկսում է ձուլել իր մեջ, սեմացնել բնիկներին, շումերներին: Դարերի այդ գործը վերջանում է սեմականության կատարյալ հաղթությամբ և Քրիստոսից 4000 տարի առաջ տեղական տարրն արդեն բոլորովին ձուլվել էր, սեմացել: Պատմության հավաստի լույսի մեջ երևան եկողը սեմական ցեղն է, որի ձեռքն է թե՛ հին բնիկների և թե՛ իր ջանքերով զարգացրած քաղաքակրթությունը: Միայն էլամն էր, որ շնորհիվ իր ավելի լավ պաշտպանված լեռնոտ դիրքի, կարողացավ պահպանել ցեղային ինքնուրույնություն, չնայած որ հազարավոր տարիների ընթացքում քաղաքականապես ենթարկված էր Քաղդեայի սեմական տիրապետության:

Արդյոք սեմական այդ նվաճումների հետևանքով էր, թե՛ կային և ուրիշ պատճառներ, որ Քրիստոսից մոտ 5000 տարի առաջ Եփրատ-Տիգրիսյան հովտի բնիկ ազգաբնակչության մի հատվածն սկսեց շարժվել դեպի արևմուտք: Գաղութներ փոռելով Ափրիայում և Պալեստինոսում, նա հավանորեն Սուեզի պարանոցով մտավ Եգիպտոս, նեղոսի հովիտը, որ խիտ բնակեցրած էր բնիկների մի ցեղով, հավանորեն սպիտակամորթ: Ասիայի գաղթականները գիտեին մետաղագործության և մեհենադրոշմ գրութեան արվեստը: Բնիկ ազգաբնակչությունը խաղաղ մի տարր էր: Եփրատ-Տիգրիսյան բնակիչները նրան նվաճեցին հեշտությամբ: Եվ նեղոսի հովտում ծաղկեց, բոլորովին անկախ Քաղդեայից, եգիպտական զարմանալի քաղաքակրթությունը: Եթե չլիներ այդ գաղթականությունը, փարավոնների Եգիպտոսը երևի երբեք գոյություն չէր ունենա: 8

Այսպիսով, Եփրատ-Տիգրիսյան հովիտը հանդիսանում է ոչ միայն

<sup>1</sup> De Morgan, „Les Prem. Civ.“, p. 215—222.

մարդկային քաղաքակրթության օրրան, այլև մի կենտրոն, որտեղից տարածվում էր քաղաքակրթությունը դեպի զանազան կողմեր: Տարածողների դեր կատարում էին այն մեծամեծ շարժումները, որոնց թատերաբեմն էր Եփրատ-Տիգրիսյան հովիտը: Այս երկրի առասպելական պտղաբերությունը, քաղաքակրթական բարիքները գրավում էին Արաբիայից սեմական ցեղերի նոր և նոր գաղթականություններ: Սեմական տիրապետությունը Պարսից ծոցի ափերում տեղեց շատ երկար: Բայց ահա սեմական առաջին արշավանքից մոտ 2300 տարի անցած, էլամը, տեղական, ոչ սեմական ազգաբնակչության ներկայացուցիչը, այնքան ուժեղացավ, որ նվաճեց Քաղդեան: Այդ շարժումը հարկադրեց, որ Պարսից ծոցի ափերին ապրող երկու սեմական ցեղերը թողնեն իրենց հայրենիքը և հեռանան դեպի հյուսիս<sup>1</sup>: Այդ ցեղերից մեկը կանգ առավ Միջագետքում: Դա ասորական ցեղն էր, որին վիճակված էր հիմնել համաշխարհային մեծ պետություն: Իսկ մյուսը, անցնելով Եփրատը, գնաց հաստատվեց Միջերկրական ծովի ափերում: Դա այն ժողովուրդն էր, որ հռչակված է հին պատմության մեջ փյունիկեցի անունով—անվախ, տաղանդավոր վաճառականների մի ազգ, որի կատարած դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ անհուն է:

Բայց այս շարժումներն արդեն պատմական ժամանակներին են պատկանում:

<sup>1</sup> De Morgan, „Les Prem. Civ.“, p. 256—264:



ՊԻՍԻՆ ԵՐԿՐՈՐԳ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Մ Ի Զ Ա Վ Ա Յ Ր

- 1. ՊԵՏՈՒՅՈՒՆ: 2. ՔԱԳԱՎՈՐ ԵՎ ԱՐՔՈՒՆԷՔ: 3. ԿԱՌԱՎԱՐՈՒՅՈՒՆ:
- 4. ԶԻՆՎՈՐՈՒՅՈՒՆ: 5. ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆ:

1. Պետություն: Մեր նկարագրած քաղաքակրթական շրջանում, այն է՝ Տիգրիս-Միհրատյան և Նեղոսի հովիտներում, պետության գաղափարի ներկայացուցիչ էին այն քաղաքները, որոնք սկսեցին կազմվել այդ կողմերում և զարգանալ Քրիստոսից շուրջ 4000 տարի առաջ: Յուրաքանչյուր քաղաք մի պետություն էր, և այդ քաղաք-պետությունների՝ հետագա զարգացումից էր, որ դուրս եկավ Արևելքի պետական ավելի ընդարձակ ձևը—նվաճողական միապետությունը: Պետական այս Կրկու ձևերը՝ նախնականը և նրա զարգացումը, ընդհանրապես այսպիսի գծեր են տալիս դիտողին:

Պարսից ծոցի ափերում, Եգիպտոսի վերնամասերում յուրաքանչյուր քաղաք ներկայացնում է զուտ տեղային համայնական անկախություն: Յուրաքանչյուրն ունի իր տեղական աստվածը, իր տեղական թագավորը: Վերջինս նախ և առաջ տեղական պաշտամունքի բարձր ներկայացուցիչն է, քահանայապետն է, միջնորդ՝ աստվածության և ժողովրդի մեջ, և նրա անմիջական պաշտոնն է պաշտպանել ժողովրդը թշնամի մարդկանցից և թշնամի գազաններից: Յուրաքանչյուր տեղական աստված և տեղական թագավոր ձգտում է միանգամայն անկախ լինել հարևան քաղաքների աստվածներից և թագավորներից: Այս տեսակ քաղաքական կացության մեջ են, օրինակ, Քաղդեայի մի շարք քաղաքները—Լագաշ, Ուր, Ուրուկ, Կիշ, Ակկադ, Բաբելոն:

Տեղական անջատ շահերի այդ կազմակերպությունը չէր կարող, իհարկե, քաղաքների մեջ ընդհանուր համայնական-քաղաքական համաձայնություն ստեղծել: Տնտեսական պայմանները, տեղական հարստությունները բաժանում էին նրանց և դնում էին նրանց իրար հետ ընդհարվողների դրության մեջ: Ուժեղն աշխատում էր հպատակեցնել թուլին: Քաղաքական, տնտեսական, ցեղային ինքնուրույնությունը մարմնացած էր տեղական տաճարի, այստեղ ապրող աստվածների և սրանց փոխանորդը հանդիսացող թագավորի մեջ: Քաղաքների ընդհարումները հենց այդ սկզբունքի, այդ տեղային ինքնուրույնությունը մարմնացնող հեղինակությունների շուրջն էր պտտում: Ուժեղը զենքի հաղթանակով հպատակեցնում էր թույլ հարևաններին, սակայն չէր ջնջում նրանց ինքնուրույնությունը, այլ միայն հատկացնում էր նրանց երկրորդական

նշանակություն: Պահելով իր վարչական ինքնուրույնությունը, նվաճված քաղաքը ճանաչում էր նվաճողի գերիշխանությունը և նրա վերաբերմամբ կատարում էր հայտնի պարտավորություններ: Նվաճված քաղաքի աստվածները հպատակվում են նվաճողի աստվածներին, ինչպես թագավորը հպատակվում է նվաճող թագավորին:

Այսպիսով դեռ այն ժամանակներում, երբ նոր-նոր էր սկսում բացվել պատմության կանոնի առավորը, մարդկային հանրակեցության քաղաքական պահանջներն ու շահերը արդեն այնքան զարգացած են, որ մենք ականատես ենք նոր քաղաքական ձևերի հայտնագործման: Պետություն-քաղաքը, անշուշտ, առաջ էր եկել ավելի նախնական հանրակեցության ձևի, այն է՝ տոհմային դրության զարգացումից: Քաղդեայի և Եգիպտոսի հովիտներում քաղաքները, որոնց սկզբնավորությունը կորած է անհայտության խավարի մեջ, կատարեցին այն խոշոր կոլտուրական դերը, որ թափառական կյանք վարող ազգաբնակչության մեջ հանդիսացան վայրեր, ուր հաստատվեց նստակյաց կենցաղը, զարգացան տնտեսական հարաբերությունները, առաջ բերելով արհեստների, արդյունաբերության, վաճառականության զարգացում: Այնուհետև այդ քաղաքներին վիճակվում էր երկար, դարավոր մրցությունների միջոցով հետզհետե տեղի տալ քաղաքական նոր ձևին՝ ավատական ընդարձակ պետության, որի հատկանիշն է մանր ինքնավար մարմինների համախմբումը մեկի քաղաքական գերիշխանության տակ: 9

Քաղաքական գերիշխանության գաղափարը ուժեղներին հանում է տեղական փոքրիկ անկախությունների շրջանից, տալիս է նրանց ավելի ընդարձակ աշխարհակալական ձգտումներ: Հարևան անկախությունները նվաճելը բավական չէ, ուժ ունեցողներն սկսում են ընդարձակել իրենց արշավանքները, հարևան երկրներն են նվաճում: Դրան հետևում է արդեն համաշխարհային տիրապետության գաղափարը, որ և ստեղծում է խոշոր պետություններ, կայսրություններ: Ամենահին օրինակը Քաղդեայի պատմության մեջ մեզ տալիս է Ակկադ քաղաքի թագավոր Շարդանի շար-Ալին, որ կոչվում է և Սարավկին, բայց մանավանդ հայտնի է Սարգոն Հին՝ անունով: Նա ապրում էր Քրիստոսից 3800 տարի՝ առաջ և հիմնեց մի ամբողջ կայսրություն, նվաճելով ոչ միայն Քաղդեայի անկախությունները, այլև իր զենքը մտցնելով նաև Սիրիա, մինչև Միջերկրականի ափերը, ինչպես ասում են՝ հասավ նույնիսկ Կիպրոսին: Այն ժամանակվա ծանոթ Առաջավոր Ասիան համարյա ամբողջովին մտնում էր քաղդեական այս առաջին կայսրության մեջ:

Սարգոնի որդին և հաջորդը, Նարամ-Սին, ավելի ընդարձակեց և կազմակերպեց իր հոր կայսրությունը: Եվ ահա մեր առջև է զուտ ասիական մեծ պետության նախատիպը, որ այնուհետև միայն կրկնվում է Արևելքի պատմության մեջ, հետզհետե ավելի զարգացնելով իր ձևերը, բայց միշտ մնալով հարազատ Սարգոնի և Նարամ-Սինի դրած սկզբունքներին: Այդ սկզբունքներն են՝ զինվորականության տիրապետություն, նվաճողական քաղաքականություն, ընկճված ու հարստահարված ազգեր, կողոպուտ և ավերմունք, բռնապետական լուծ: Այդ քաղաքականությունն իրագործվում է ավատական կազմակերպության միջոցով: Նարամ-Սինի բանակում գտնվում էին և նրա ինք վասալները, որոնք իրենց զորքերը դրել էին նրա տրամադրության տակ, մի

1 Այս տեսակ պետությունների մանրամասն նկարագրությունը տեսնել Մ. Кареев, «Государство—город античного мира», СПб, 1905.

2 Mespero, „Histoire Ancienne“, t. I, p. p. 288, 595.

1 Կոչվում է հին՝ Ասորեստանի հռչակավոր Սարգոն թագավորից զանազանելու համար  
2 Ուրիշ հաշիվներով 3000 տարի:

կողմից՝ որովհետև վախենում էին նրանից, իսկ մյուս կողմից՝ որովհետև այդպիսի մի ուժեղ միապետի հետ միասին կռվելը նշանակում էր մասնակից լինել հաղթությունների օգուտներին: Ազգերի վրա տիրելու այս քաղաքականությունը մեր օրերում էլ պահում է իր գոյությունը «ցեղերի միացում» անվան տակ, որ ծածկում է նույն հին նվաճողական ցանկությունը, գերիշխանություն հաստատելու, հպատակեցնելու նույն ձգտումը:

Սակայն պետք է նկատել, որ այդ մեծ, զինվորական պետությունները միմիայն բացասական դեր չեն կատարում քաղաքակրթության պատմության մեջ: Սարգոնի և Նարամ-Սինի ժամանակները քաղղեական արվեստների և արդյունաբերության զարգացման գագաթնակետն են համարվում: Ավանդությունները Սարգոնին են վերագրում այն կուլտուրական մեծագործությունները (հատկապես գետերի ընթացքը կանոնավորելը և դաշտեր ոռոգելը մեծ ջրանցքների սխեմայի միջոցով), որոնց շնորհիվ Քաղղեան լիովին քաղում էր իր զարմանալի պտղավետ հողի անհուն բարիքները: Այսպես էին և ասուրական մեծ բռնակալները, ինչպես և հին ու նոր Պարսկաստանի աշխարհակալ շահերը, սելջուկյան և օսմանյան նշանավոր սուլթանները:

Չինվորական մեծ պետության մի վերին աստիճանի հատկանշական հանգամանքն էլ այն էր, որ արտահայտվեց հենց այս առաջին ասիական օրինակի մեջ, այն՝ որ պետության առաջադիմությունը և անկումը կախված էին միապետի անձնական հատկություններից: Հոսովու, տաղանդավոր բռնակալը հանդիսանում էր պետության հեղինակությունը, ուժը, զինվորական փառքը ներկայացնող, նրա ամբողջությունն ապահովող, նրա սահմաններն ընդարձակող ուժ: Իսկ թույլ, ապիկար տիրողը քայքայում և քաղաքական մաս էր բերում պետության: Քաղղեական՝ առաջին աշխարհակալ պետությունը Սարգոնի ժառանգից հետո չկարողացավ պահպել իր քաղաքական-նվաճողական բարձրության վրա: Եռանդի և կարողության փոխարեն երևան եկավ տիրողների անհոգությունը: Եվ պարզվեց այն պատկերը, որ այնքան հատկանշական է արևելյան ավատական բռնապետության: Հպատակ վասալները այլևս չէին ճանաչում զլխավոր վեհապետին, ապստամբությունների միջոցով իրենց նախկին անկախությունն էին ձեռք բերում: Եվ պետությունը, իբրև թույլ ու անդամահատվող կազմակերպություն, այնուհետև հետքեր չէ թողնում պատմության մեջ:

Այս նվաճողական շարժումները և քայքայման ջղաձգությունները, այս ավերանքները, ապստամբությունները, ներքին կռիվները ազգերի ընդհանուր կյանքի մեջ կազմում էին այն միջավայրը, որ սովորաբար կոչվում է քաղաքական աշխարհ: Արևմտյան մեծ քաղաքակրթությունը, եգիպտականը, այդ աշխարհից դուրս էր ապրում: Եգիպտոսը ամփոփված էր իր սահմանների մեջ, որոնք շատ լավ պաշտպանված էին ծովերով և ավազուտ անապատներով, որոնք նրան տալիս էին մի փառահեղ առանձնության ապահովությունը և չէին մտածել տալիս օտար ուժեղ ազգերի նվաճողական արշավանքների մասին: Ընդհատ է, լինում էին երկրում ներքին պատերազմներ, հարկավոր էր լինում պաշտպանել պետության սահմանները սեամորթների հարձակումների դեմ, բայց այդ բոլորը լուրջ վտանգ չէր նշանակում:

Եվ այս հանգամանքների մեջ էլ պետք է որոնել այն տարբերությունը, որ կար եգիպտական և քաղղեական քաղաքակրթությունների ոգու մեջ: Եգիպտոսում այնքան զարգացավ կրոնական վերացականությունը, անդրգրեզմա-

նական կյանքի գաղափարը, որ մարդը գտնվում էր հոգևորականների ամենախիստ ազդեցություն տակ, շահագործվում էր նրանց ձեռքով և մոռանում էր այս աշխարհի վերաբերյալ հազարավոր բաները և իր կյանքի ընթացքում մտածում էր գրիավորապես գերեզման ունենալու մասին: Այս աշխարհի վրա նա թագավորություն չունեի, գոյության կռիվ չէր ճանաչում և իրենալիզմը միակ շարժիչն էր նրա մասնավոր և հասարակական կյանքի մեջ: Եգիպտոսի դերը մնացած աշխարհի վերաբերմամբ խաղաղ քաղաքակրթական էր, Միջերկրական ծովում նա զարգացրեց առևտուրը, կրեոտե, կիպրոս և այլ կղզիների հետ:

Մինչդեռ Քաղղեայի սեմացիները բոլորովին ուրիշ աշխարհայացք էին ներկայացնում: Նրանք չունեին ապահով սահմաններ և գոյության կռիվը հաղորդում էր նրանց բնավորության խիզախ գործնականություն, նրանք ավելի հետամուտ էին աշխարհային կյանքի օգուտներին և հաճույքներին, ավելի ռեալիստ էին: Իրենց աստվածներին տալիս էին պատշաճավոր տեղ, բայց երբեք չէին խառնում նրանց իրենց մշակած գիտության մեջ, խմբագրում էին օրենքներ, անջատելով նրանցից կրոնական ձևերն ու գաղափարները: Առանձին հակումն ունենալով դեպի հարստություններն ու վախլենները, նրանք անդադար կռվում էին իրենց վտանգավոր դրացիների դեմ: Աստվածները միշտ պատվավոր տեղ ունեին նրանց հաղթանակները պատմող արձանագրությունների մեջ, բայց լուր այն պաշտոնն ունեին, որ իրենց անունով ծածկում էին իրենց երկրպագուների անիրավությունները: Սեմական աստվածները ատելու էին, վրեժի և հափշտակությունների գործիքներ էին:

Հաղթանակը, սակայն, միշտ սեմական ոգուն չէր պատկանում: Առաջին մեծ պետություն տեսած Քաղղեայի կողքին, էլամում, ուր տեղացի ոչսեմական ծագում ունեցող ազգաբնակությունը թե՛ գերակշռում էր և թե՛ չէր մոռանում իր ցեղական ինքնուրույնության ավանդությունները, դարերի ընթացքում կազմվեց նույնպես մի պետություն ավատական հիմքերի վրա՝ Քրիստոսից առաջ 2300 և 2250 տարիների մեջ էլամի թագավորը, Կուդուր-Նախտունտե անունով, հարձակվեց Քաղղեայի վրա, ավարի ենթարկեց նրան և մի նոր թագավորական հարստություն (դինաստի) հաստատեց այնտեղ:

Այս շարժումը մեծ տակնուվրայություն առաջացրեց այն ժամանակվա քաղաքակրթ աշխարհում և ունեցավ շատ նշանավոր հետևանքներ, որոնք նոր դրություններ, նոր հոսանքներ ստեղծեցին: Ամենից առաջ նա էր, որ իրենց տեղերից վտարեց երկու սեմական ցեղ. Ասսուր աստծուն երկրպագող ցեղը գնաց դեպի հյուսիս և հաստատվեց Տիգրիսի միջին հոսանքի վրա, ուր և պիտի առաջ բերեր բազմահռչակ Ասորեստանի պետությունը, իսկ մյուսը, որ առևտուր էր անում Պարսից ծոցի ափին, ավելի հեռու գնաց, Միջերկրականի մասը, Միջերկրականի ափերը, ուր պիտի նույնպես շուտ հռչակվեր՝ փյոյունի կեցի անունով:

Բացի դրանից, էլամական արշավանքները դեպի Սիրիա, ինչպես նաև գաղթող ազգերի շարժումները առաջ բերեցին անհայտ անունով թափառական ժողովուրդներ, որոնք ճանապարհին միանալով ուրիշ ցեղերի հետ, շարունակեցին առաջ մղվել և, անցնելով՝ Սուեզի պարանոցը, մտան Եգիպտոս (2200 թ. Ք. ա.)<sup>2</sup>: Այդ արշավանքը հայտնի է պատմության մեջ հովիվների արշա-

<sup>1</sup> De Morgan, „Les Prem. Civ.“, p. 241.

<sup>1</sup> De Morgan, „Les Prem. Civ.“, p. 251—252.

<sup>2</sup> Պետք է նկատել, որ ժամանակագրությունը դեռ շատ անկայուն է և զանազան հեղինակներ զանազան թվականներ են առաջարկում:

վանք անունով և շատ բնորոշ է և ուսանելի, քանի որ մարդկութիւն կյանքը և մասնավորապէս Առաջավոր Ասիան շատ անգամ են ենթարկվել այդպիսի երևույթների խոր, սասանեցնող ազդեցութիւններին:

Այդ թափառական բարբարոսներին Եգիպտոս տանողը այն հռչակն էր, որ վախճում էր փարավոնների երկիրը իր անհուն հարստութիւնների պատճառով: Հազարավոր տարիների խաղաղութիւնը և առանձնութիւնը տվել էին այդ պտղաբեր երկրին այն բոլոր բարիքները, որ մարդը կարող է դիպել իր աշխատանքով: Առևտրական քարավանները, որոնք երթեկեկում էին Ասիայի և Եգիպտոսի մեջ, պատմում էին ասիացիներին, թե ինչ հարստութիւններ, ինչ մեղմ կառավարութիւն կան նեղոսի ափերին: Եվ այդ պատմութիւնները, իհարկե, պիտի գրավեին թախտ և բարօրութիւն որոնողներին: Վաղուց արդեն ասիական հողերից զանազան ցեղերի փոքրիկ հատվածներ սովորել էին Եգիպտոսի ճանապարհը և գաղթում էին այնտեղ ու գտնում էին տեղացի դառնալու հնարավորութիւն: Նույն այդ գաղթականների ճանապարհով գնացին և հովիվները: Դրանք արդեն խաղաղ գաղթականներ չէին, այլ կռվի վարժված հորդաններ:

Բարբարոս թափառականները բարձր քաղաքակրթութիւն հասած երկրում, ինչպէս այս միշտ կրկնվում է պատմութիւն մեջ, հանդիսացան երկնքի պատուհաս: Զինվորական տեսակետից Եգիպտոսը այդ միջոցին թույլ էր, ներկայացնում էր ավատական իշխողների ընդհարումների և անհամաձայնութիւնների միջավայր: Այդ պատճառով էլ հովիվները շատ հեշտութիւններ, համարյա առանց դիմադրութիւն հանդիպելու, խուժեցին երկրի ներսը: Նրանք սկսեցին անխնա ոչնչացնել քաղաքակրթութիւնը, քարուքանդ անել երկիրը: Հարուստ տաճարներն ու քաղաքները մատնվեցին ավարի և ավերանքի: Կոտորածից ազատված բոլոր կանայք և երեխաները ստրուկ դարձան: Հաղթողները ավերակների մեջ իրենց սեփական թագավորութիւնը հաստատեցին:

Երկիրը, սակայն, չէր հաշտվում բարբարոսների լծին մատնված լինելու մտքի հետ: Նա հրապարակ հանեց իր դիմադրական ուժերը, և հարկավոր եղավ Երկու հարյուր տարվա մաքառում, որպեսզի հովիվները Եգիպտոսի իսկական տերերը դառնային: Այդ մրցութիւնների մեջ բարբարոսները, այս էլ պատմական օրենք է, ենթարկվեցին ընկճվածների քաղաքակրթութիւն, մեղմացրին իրենց բռնությունը: Նրանք կառավարութիւն գործերին մասնակից էին անում եգիպտացիներին, իրենց երեխաներին դաստիարակում էին եգիպտական դպրոցներում:

Ովքե՞ր էին այդ նվաճողները: Այս մասին բազմաթիվ ենթադրութիւններ կան: Եգիպտացիները իրենց հարստահարիչներին անվանում էին ասիացիներ, անապատի մարդիկ, ավազակներ, գողեր: Հովիվների թագավորին անվանում էին Նակ Հիգ Շաուսու (ավազակների թագավոր) և ահա այս անունն էլ հույները աղավաղելով դարձրին Հիքսոս: Հովիվների արշավանքը կոչվում է, այս պատճառով, և հիքսոսների արշավանք: Ավելի հավանականութիւն ունի այն ենթադրութիւնը, թե հիքսոսները հեթիթներն էին, որոնք ապրում էին Հայաստանի արևմտյան մասերում<sup>1</sup>:

Հիքսոսների տիրապետութիւնը, այնուամենայնիվ, շատ երկարատև չէր: Եվ այդ հովիվները, ավազակներն ու գողերը, ինչպէս անվանում էին նրանց եգիպտացիները, միայն թշվառութիւն չբերին քաղաքակիրթ մարդկութիւն: Նույն այդ հիքսոսներին է պատկանում մի մեծ գյուտի պատիվը: Երբ նրանք

գտնվում էին Եգիպտոսում, քանանացիները գտան նրանց մոտ գրութիւն մի ձև, որ մարդկութիւնը գործ է ածում և այժմ: Դա պարզ այբուբենն է, որ մեհենագրոշմ գրութիւն և սեպագրութիւն հաջորդը և զարգացումը հանդիսացավ: Պարզ նշաններով գրեր, տառեր. ահա ինչ էր ստանում մարդկութիւնը իր միտքը ձեռնարկելու համար: Գրութիւն այդ ձևը ապագայում փյունիկեցի վաճառականների ձեռքով տարածվեց և Եվրոպայում, ուր և կազմվեցին ներկա այբուբենները<sup>1</sup>: Բայց նշանավոր գյուտը, իհարկե, բավական չէր, որ հիքսոսները դադարեին լինել իրենց հպատակների համար նույն գողերը և ավազակները: Եգիպտական ազգաբնակչութիւնը երբեք չհաշտվեց իր տերերի հետ: Սկսվեցին ազատագրական մրցութիւններ, որոնք տևեցին ամբողջ 150 տարի: Եվ եգիպտական իշխանները վերջի վերջը կարողացան վաստակել իրենց ազգային դատը, կարողացան հաղթել նվաճողներին և հարկադրել նրանց հեռանալ նույն ճանապարհով, որով եկել էին: Բարբարոս հարստահարիչներին հալածելը այնքան ոգևորեց եգիպտացիներին, որ նրանք խորտակված թշնամու հետքերով գնացին մինչև Սիրիա, ուր մի նոր և վճռական ջարդ տվին հովիվներին:

Այս առաջին անգամն էր, որ եգիպտական զորքերը դուրս էին գալիս իրենց հայրենիքի սահմաններից դեպի Ասիայի կողմերը: Եվ այս շարժումը նոր երևույթի առաջին նշանն էր: Հիքսոսներին վանող փարավոնը աստված հռչակվեց և նոր թագավորական հարստութիւն հիմնադրեց դարձավ: Հիմնվեց ու սկսեց զարգանալ և նոր քաղաքական դավանանք: Դարերի անհաշտ, կատաղի մրցութիւնները բարբարոս օտարների դեմ, արյունահեղութիւնները, կոտորածները, ավերանքները փոփոխեցին եգիպտական ոգին: Հակառակ իբրևոր նախկին ավանդութիւնների, իր պատմութիւն, իր աշխարհագրական դիրքի, իր իսկական շահերի՝ Եգիպտոսն ընդգրկեց նվաճողական աշխարհայացք, յուրացրեց ավերողի, զենքով ճնշողի, թալանողի բարքեր և պատերազմ հայտարարեց նույն Ասիային, որտեղից եկել էին հարստահարիչ հորդանները: Այդպիսով Եգիպտոսը մտավ միջազգային քաղաքականութիւն հրապարակը իբրև ուժեղ գործիչ:

Համաշխարհային պատմութիւնը իսկապէս այս ժամանակից է սկսվում: Ասիայի արևմտյան մասերը և գլխավորապէս Սիրիան այն տեղն էին, որ ընդհարվում էին երկու մեծ քաղաքակրթութիւնները— արևելյանը, քաղղեականը և արևմտյանը— նեղոսյանը: Երկու անհաշտ ջուրեր, որոնց թշնամութիւնները երկար տևեցին՝ իրար ձեռքից տիրապետութիւն գավազանը խլելու համար: Դա մի խոշոր կուլտուրական երևույթ էր, որ մոտեցնում էր նեղոսի և Տիգրիս-Եփրատյան հովիտները. այդ ասպարեզում նորանոր ազգեր մտնում էին քաղաքակրթութիւն լույսի մեջ:

Բայց նախքան եգիպտական արշավանքները ինչ էր ներկայացնում Տիգրիս-Եփրատյան հովիտը, որ մենք թողինք էլամացիների տիրապետութիւն տակ:

Այդ տիրապետութիւնը նույնպէս երկարատև չէր: Մինչդեռ հիքսոսները կողոպտում էին Եգիպտոսը, սեմական ցեղերի դիմադրական կարողութիւնը թոթափեց էլամական լուծը: Սարգոնի կայսրութիւնը զարգացել էր Ակկադ քաղաքում: Այս անգամ կենտրոն է հանդիսանում հյուսիսային Քաղղեայի քաղաքներից մեկը, հռչակավոր Բաբելոնը: Էլամացիները ետ են մղվում և Բաբելոնի մեջ հաստատվում է նոր կայսրութիւն, որ կոչվում է առաջին բա-

<sup>1</sup> Mespero, „Hist.“, t. II, p. 56.

<sup>1</sup> De Morgan, „Les Prem. Civ.“, p. 294—295.

բելունական, քանի որ ապագայում այդ քաղաքում հիմնվեց երկրորդ կայսրութիւնն էլ:

Այդ առաջին կայսրութեան պատկանող թագավորներից ամենանշանաւորը, նրա իսկական հիմնադիրը Համմուրաբի թագավորն էր (Քրիստոսից 2000 տարի առաջ): Մի իսկապես մեծ թագավոր, որ հսկայական գործեր կատարեց Բաբելոնի կուլտուրան բարձրացնելու համար: Նրա հաղթական արշավանքները տարածվեցին մինչև Սիրիա: Բայց ավելի նշանավոր էին նրա նվաճումները խաղաղ աշխարհաշինութեան մեջ: Նա թագավորեց 55 տարի, վերջնականապես հեռացրեց էլամացիներին Քաղդեսայի սահմաններից, ծածկեց իր մայրաքաղաքը և գավառները բազմաթիվ հասարակաշահ շինութիւններով, որոնց մեջ հռչակված են նրա հոյակապ ջրանցքները: Մի միապետ էր նա, որ իրավունք ուներ ասելու իր արձանագրութիւններից մեկի մեջ, թե իր միացրած ազգերը նա «կառավարում էր հարստութիւնների և առատութեան մեջ»<sup>1</sup>:

Բայց Համմուրաբին միայն շինութիւններով չհարստացրեց իր երկիրը, այլև հասարակութեան մեջ իրավական կարգեր հաստատեց: 1902 թվականին դր Մորգանը էլամի մայրաքաղաք Շոշի մեջ կատարած պեղումներից հանեց մի անգին հիշատակարան: Եվ այն օրվանից հայտնի դարձավ, որ Համմուրաբին աշխարհի առաջին օրենսդիրն էր: Այդ հիշատակարանը, սեպագիր արձանագրութիւններով ծածկված մի մեծ քար, բովանդակում էր իր մեջ Համմուրաբիի հրատարակած օրենքները, բաղկացած 282 հոդվածից<sup>2</sup>: Այդ օրենքները պայծառ լույս են սփռում այն հին ժամանակներում տիրապետող բարբերի, հարաբերութիւնների, իրավական հասկացողութիւնների, սոցիալական կարգերի վրա: Մանավանդ նշանավոր է այն հանգամանքը, որ այդ օրենքները ներկայացնում են երկրում ամենահին ժամանակներից տիրող սովորութիւնները, որ վկայում է, թե ի՞նչ բարձր աստիճանի էին հասնում նախասեմական ցեղերի բարոյական հասկացողութիւնները<sup>3</sup>:

Համմուրաբիի ժառանգները շարունակեցին նույն խաղաղ-շինարարական գործունեութիւնը: Երկիրը երկար ժամանակ վայելում էր անդորրութիւն և ավելացնում էր իր հարստութիւնները: Բաբելոնը համաշխարհային առաջնակարգ քաղաքական-կուլտուրական մի կենտրոն էր, որի հռչակը տարածված էր ամեն տեղ, մարմնացնելով ամբողջ Քաղդեսան և մոռացնել տալով այդ անունը:

Ահա այդ ժամանակներում էր, որ Եգիպտոսի փարավոններն սկսեցին իրենց նվաճողական գործողութիւնները Ասիայի և մասնավորապես Սիրիայի դեմ: Հաղթական պատերազմներով ձեռք բերված երկրները եգիպտական պարզ գավառներ չէին դառնում, այլ պահպանում էին իրենց նախկին վարչական ուժի մի փարավոնների հովանավորութեան տակ: Հպատակութեան արտահայտութիւնն այն էր, որ եգիպտական զորքեր էին մնում երկրի մի քանի կետերում, եգիպտական պաշտոնյաները հսկում էին նվաճած երկրների իշխողների վրա: Չնայած այս բոլորին, ամեն անգամ, երբ Եգիպտոսում տնվի էր ունենում թագավորների փոփոխութիւն կամ հրապարակ էր գալիս թագավորող անձի թուլութիւնը, նվաճված երկրներում ծագում էին ապստամբութիւններ և հաճախ էր պատահում, որ Եգիպտոսը մի կարճ միջոցում կորց-

նում էր այն, ինչ որ ձեռք էր բերել երկար ժամանակների պատերազմներով: Փարավոնները ստիպված էին լինում նորից նվաճել ապստամբված երկրները:

Հպատակված երկրներում տեղացի կառավարողները պատասխանատու էին այն հարկերի և տուրքերի համար, որոնք նշանակված էին փարավոնների կողմից և որոնք հավաքվում էին ազգաբնակչութիւնից: Այդ հարկերն էին՝ ուտեստներ, կենդանիներ, կառքեր, տղամարդիկ, կանայք, ստրուկներ, մետաղներ, թանկագին քարեր և այլն: Տեղական կառավարիչը արքունիքից ուժիկ չէր ստանում և իր օգտին էլ տուրքեր էր առնում ժողովրդից: Իր տեղը պահած լինելու համար նա պարտավոր էր հաճախ ուղարկել փարավոնին կամ նրա պաշտոնյաներին, իբրև ընծա, իր անձնական հարստութիւնը, իր ազնիկներն անգամ:

Վարչական այս ձևը այնուհետև երկար և երկար մնաց Արևելքում և նրա սկզբունքները դեռ այժմ էլ գործադրվում են մի քանի տեղերում:

Զինվորական պետութիւնը դարձած և նվաճողական տենդով գործող Եգիպտոսը ենթարկվում էր մի ճակատագրի, որ հատուկ է այդ տեսակ պետութեան: Նա բարձրանում էր, բնկնում, հաճախ մատնվում էր անիշխանութեան, սպառում էր իր հարստութիւնները, նվազեցնում էր իր ազգաբնակչութիւնը: Վերջ ի վերջո, նա պիտի թուլանար, քայքայվեր հենց այդ նվաճողական քաղաքականութեան պատճառով: Բայց և այնպես, նա գնում էր իր ընտրած ճանապարհով և մի շարք փարավոններ, որոնք թագավորում էին զանազան ժամանակներ, հռչակել են իրենց անունները Ասիայի դաշտերում տարած իրենց հաղթանակներով:

Պետք է ասել, որ այդ գործունեութիւնը քմահաճույք չէր, ոչ էլ լույ փառասիրութիւն: Միջազգային հարաբերութիւններն այնքան զարգացել էին և բարդ կերպարանք ընդունել, որ ընդհարումների, արշավանքների մեջ խոսում էին պետական շահերը: Եվ իրավ, Սիրիայի և Միջերկրականի ափերի տեր լինելը կամ չլինելը մի անկարևոր հարց չէր Եգիպտոսի նման մի պետութեան համար: Պատերազմական դաշտ դարձած երկրները վերին աստիճանի կարևոր նշանակութիւն ունեին առևտրական տեսակետից: Եգիպտոսի միջին հոսանքը այն մեծ կենտրոնն էր, ուսկից բաժանվում էին հաղորդակցութեան ճանապարհները դեպի Փոքր Ասիայի ծովափը, դեպի Պարսից ծոցը, դեպի Եգիպտոս: Մեծ ռազմական ճանապարհը, որով շարժվում էին փարավոնների բանակները, Եգիպտոսից գալիս հասնում էր Եգիպտոսին: Եվ այստեղ, հայկական Տավրոսի ստորոտների մոտ, Անդոսի հովիտը ներկայացնում էր ոչ միայն իր դիմվորական ուժը, այլև իր քաղաքակրթութիւնը: Առևտրական-կուլտուրական ազդեցողութիւնը Հայաստանի սահմանակից վայրերում և հենց նրա սահմանների մեջ էլ շատ ուժեղ էր: Այդ ազդեցութեան միջնորդներն էին փյունիկեցիները:

Էլամական և հիքսոսների շարժումների ժամանակից հաստատվելով Միջերկրականի ափերին, փյունիկեցիները արագ իրենց ձեռքն առան համաշխարհային ամբողջ առևտուրը ծովի և ցամաքի վրա: Նրանց առևտրական գրասենյակները ցրված էին ամբողջ Միջերկրականի եզերքով մինչև Սպանիա: Նրանց քարավանները մի կողմից հասնում էին Եգիպտոսի հյուսիսային մասերին, իսկ մյուս կողմից ակոսում էին ամբողջ Առաջավոր Ասիան, մտնում էին և Վնդկաստան:

Հանձին Փյունիկիայի մարդկութեան մեջ զարգանում էր պետական մի այլ տիպ — վաճառականական պետութիւն, որ միշտ խաղաղ միջոցներով և

<sup>1</sup> Maspero, „Hist.“, t. II, p. 44.

<sup>2</sup> V. Scheil, „La Loi de Hammourabi“, Paris, 1906.

<sup>3</sup> De Morgan, „Les Prem. Civ.“, p. p. 272—275.

ազատ փոխանակութիւններով չէ ավելացնում իր շահերը և որի առաջխաղացութեան հետ զուգընթաց և ճանապարհակից է և զինվորական ուժը: Փյունիկեցի վաճառականները ուր որ հանդիպում էին թույլ ու խեղճ ժողովուրդներին, ուժով էին վերցնում, կողոպտում էին գյուղերն ու քաղաքները, հիմնում էին զինվորական գաղութներ, իսկ ուր տեսնում էին ուժեղ և կազմակերպված ժողովուրդ, այնտեղ դառնում էին խաղաղ, լոկ իրենց շահերին նվիրված առևտրականներ: Մեր ժամանակակից առևտրական պետութիւնները փյունիկեցիների աշակերտներն են:

Եգիպտոսը այն մերձավոր երկիրն էր, ուր Փյունիկիան մտցնում էր աշխարհի բոլոր հարստութիւնները և որտեղից դուրս էր բերում տեղական ապրանքները՝ աշխարհի ծայրերը տարածելու համար: Եվ ապրանքների, առևտրական վաստակների հետ միասին ամենահեռավոր անկյուններն էին թափանցում Արևելքի փարթամ քաղաքակրթության նվաճումները: Այս կողմից փյունիկեցիները մարդկութեան բարեբարներն էին հանդիսանում:

Միայն այս ճարպիկ և տաղանդավոր ժողովուրդը չէր, որ կանգնած էր փարավոնների պատերազմական արշավանքների առջև: Ասիական հողի վրա շատ էին մանր և թույլ ազգութիւններ, որոնց նվաճելը, հպատակութեան մեջ պահելը դեռ այնքան մեծ դժվարութիւն չէր մի մեծ պետութեան համար: Բայց այդտեղ կային և այնպիսի ուժեղ ախոյաններ, որոնք իրենց հուժկու դիմադրութիւններով աճ էին ներշնչում եգիպտացիներին: Այսպես էին հեթիթները, ռազմիկ, խստաբարո մի ժողովուրդ, որի ծագման մասին մենք խոսեցինք վերևում: Այդ ժողովուրդը, Արևմտյան Հայաստանի և Կապադովկիայի իր լեռների հենված, կազմակերպել էր մի պետութեան, որի իշխանութեանը ենթարկված էր և հյուսիսային Սիրիան: Սկզբում, քանի որ հեթիթները թույլ էին, փարավոնները հազիվ ուշադրութիւն գարձրին նրանց երկրի վրա: Բայց, նրանք այնքան ուժեղացան, որ իրենց ձեռքն առան նույնիսկ այնպիսի տեղեր, որոնք եգիպտոսի սեփականութիւնն էին: Սկսվեցին երկարատև պատերազմական ընդհարումները հեթիթների և փարավոնների մեջ, ընդհարումներ, որոնց պատմութիւնը մնացել է եգիպտական հիշատակարանների մեջ և առայժմ, քանի որ դեռ չեն վերծանված հեթիթական մեհնադրոշմ արձանագրութիւնները, միակ վկան է, թե որքան պատկառելի քաղաքական ուժ և կազմակերպչական մեծութիւն ունեւր նրանց պետութիւնը:

Այսպիսի մի ախոյանի դեմ բավական չէր միայն զենքով կռվելը: Եվ փարավոնները շատ անգամ ստիպված էին վերջ դնել իրենց արշավանքներին, խաղաղ դիվանագիտական քանակցութիւններով վերջացնել երկու պետութիւնների մեջ փղած վեճերը: Այդ խաղաղ դաշնագրերից մեկը մնացել է եգիպտական գրութիւնների մեջ և ներկայացնում է ամենահին դիվանագիտական վավերագիրը, որ ստորագրված է եղել երկու պատերազմող կողմերի մեջ: Չկարողանալով զենքի ուժով կոտրել հեթիթների դիմադրական կարողութիւնը, փարավոնները հարկադրված էին նրանց բարեկամութիւնը որոնել, կնքելով պաշտպանողական և հարձակողական դաշնագիր, որի մեջ հայտնի պայմաններով վերականգնվում էր քաղաքական հավասարակշռութիւնը արևմտյան Ասիայում, պաշտպանվում էին երկու կողմերի քաղաքական և առևտրական շահերը<sup>1</sup>:

Եգիպտոսի նվաճողական քաղաքականութիւնը արևմտյան Ասիայում շարունակվեց երեք հարստութիւնների (դինաստիաների—18-րդ, 19-րդ և

20-րդ) ժամանակ, ամբողջ երեք դար (18—15 Ք. ա.): Այդ ժամանակամիջոցում Նեղոսի հովտի և Բաբելոնի քաղաքակրթութիւնները շփվում էին իրար հետ Եփրատի վրա, որ երկու պետութիւնների սահմանն էր կազմում: Սակայն Բաբելոնը գործոն դեր խաղալ միջազգային քաղաքականութեան մեջ չէր կարողանում: Համաուրարի հարստութեան հետեց մի նոր հարստութիւն, որ հիմնեց հյուսիսային լեռներից (Չագրոս) իջած Կաշու անունով ցեղը: Իսկ այդ դինաստիի թագավորները առհասարակ թույլ էին և իրենց պետութեան սահմաններից դուրս ծանրակշիռ դեր խաղալ չէին կարող:

Բայց Բաբելոնի փոխարեն, նրա կողքին, քիչ դեպի հյուսիս, պատրաստվում և կազմակերպվում էր մի նոր ժողովուրդ, որ պիտի իջներ պատմութեան ասպարեզ դեռ շտեմնված թափով և նվաճողական բուն եռանդով: Այդ ժողովուրդի մայրաքաղաքն էր Էլ-Ասուրը, որ բաժանված էր Բաբելոնից Տիգրիսի հովտի ընդարձակ, միանման մի հարթ մասով:

Մենք այդ ժողովուրդը տեսանք էլամական արշավանքների ժամանակ հարավից դեպի հյուսիս գաղթելիս: Հաստատվելով Տիգրիսի միջին հոսանքի վրա, Միջագետքում, նա հիմնեց Էլ-Ասուրը իր գլխավոր աստուծու անունով: Սկզբում այդ քաղաքի իշխանները, ինչպես և շատ ուրիշ երկրորդ կարգի իշխաններ, էլամի վասալներն էին, ապա իրենց հպատակութիւնը մատուցանում էին Բաբելոնին նույնիսկ Կաշու ցեղի թույլ թագավորութեան ժամանակ: Բայց միաժամանակ նրանք մաքառում էին այժմյան Քուրդիստանի և Հարավային Հայաստանի լեռնաբնակների դեմ, որոնց դուրս էին մղել Տիգրիսի հովտից, նրանց տեղերը գրավելու համար: Այդ ընդհարումների մեջ Ասուրի ժողովուրդը ցույց տվեց պատերազմական մեծ կարողութիւն, որ և սկսեց բարձրացնել նրան: Արդեն 15-րդ դարից Ասորեստանի թագավորութիւնը Առաջավոր Ասիայի քաղաքական աշխարհի մեջ մի ուժ է: 13-րդ դարում նա նվաճում է իր ցեղակից Բաբելոնը: Քաղղեան ետ է մղվում իր գրաված դիրքից: Բաբելոնը մրցութիւն է սկսում նոր պետութեան դեմ, բայց անհաջող: Նա ապստամբվողի դիրքի մեջ է և հաճախ զգում է, թե որքան ծանր է ապստամբութիւն ճնշող Ասորեստանի ձեռքը: Եվ նա ստիպված է իր առաջնութիւնը գիշել իր բախտավոր ախոյանին, Նինվեին, որ Ասորեստանի մայրաքաղաքն էր: Բաբելոնի վիճակին էին սպասում և այն ժամանակների բոլոր պետութիւնները՝ Եգիպտոս, Փյունիկիա, հեթիթական ցեղերը, էլամ:

Մինչև այստեղ մենք տեսանք, թե ինչպես պետութիւնը, քաղաքների անձուկ սահմաններից դուրս գալով, զարգացավ, ընդարձակվեց, դարձավ համաշխարհային տիրապետութեան գաղափար: Մենք տեսանք, թե ինչպես այդ գաղափարի առաջխաղացութեան հետ բարդվում էին ազգերի փոխադարձ հարաբերութիւնները: Ասիական միապետութեան տիպը այնքան զարգացել է, որ նույնիսկ միջազգային իրավունքի, դիվանագիտական արվեստի սկիզբն է դնում: Սակայն այդ տիպին դեռ պակասում են շատ լրացուցիչ, բնորոշ գրգռիչ: Ահա այդ գծերի մշակման վրա է աշխատում Ասորեստանը երկար տարիների ընթացքում: Ասիական բունակալ միապետութեան տիպի զարգացումը նա հասցնում է գագաթնակետին: Նա դառնում է իրապես համաշխարհային պետութիւն, նվիրագործում է աշխարհակալական ձգտումները իբրև պաշտամունք, իբրև քաղաքական կրոն և հանդիսանում է իբրև կազմակերպված, միանգամայն որոշակի դրված մի հիմնարկութիւն, որ այնուհետև ընդօրինակում էին աշխարհի վրա հաստատվող բոլոր մեծ, համաշխարհային ասիական պետութիւնները:

<sup>1</sup> Maspero, „Hist.“, t. I, p. 367, 401.



11-րդ դարից (Ք. ա.) Ասորեստանի պատմության մեջ երևան է գալիս Հայաստանի պատմությունը: Իր տեղում մենք կօժանոթանանք Միջագետքի վիթխարի պետության հետ, որքան նրա պատմությունը վերաբերում է Հայաստանին: Այստեղ քանի որ մենք տալիս ենք Առաջավոր Ասիայի քաղաքական կազմակերպության համառոտ տեսությունը, միայն կրնորոշենք ասորական պետականության ոգին:

«Ասորեստանը, — ասում է դը Մորգանը, — գիշատիչ թռչունների մի բույն էր, որտեղից, համարյա տասը դարերի ընթացքում, դուրս էին գալիս ամենահնդկները այն արշավանքներից, որոնք երբևիցե արշակունի են աշխարհը: Ասուրը, Նիմրուդը և վերջն էլ Նինվեն հաջորդաբար այդ պետության մայրաքաղաքներն էին. Ասուրը նրա աստվածն էր, ավարառությունը՝ նրա բարոյականությունը, նյութական վայելքները՝ նրա իդեալը, դաժանությունը և ահաբեկումը՝ նրա միջոցները: Երբեք մի ժողովուրդ չէ եղել ավելի անարգ, քան Ասուրի ժողովուրդը, երբեք վեհապետները չեն եղել ավելի բռնակալ, ավելի ընչաքաղց, ավելի վրիժառու, ավելի անողորմ, ավելի հպարտացող իրենց ոճիրներով: Ասորեստանն ամփոփում էր իր մեջ բոլոր մոլորությունները. բացի քաղցությունից՝ նա չէր ներկայացնում մի ուրիշ առաքինություն: Պետք է թղթատել ամբողջ աշխարհի պատմությունը, որպեսզի կարեւոր ընկնի գտնել տեղ-տեղ, ամենաշիտթ ժամանակներում, հրապարակական այնպիսի ոճիրներ, որոնց դժպնությունը հավասար լիներ այն սոսկումներին, որ կատարում էին նինվեցիները ամեն օր իրենց աստծու անունով: Ասորեստանցին ո՛չ արվեստագետ է, ո՛չ գրականագետ, ո՛չ օրենսդիր. դա մի մակաբույծ է, որ ավարառության կազմակերպությունը հիմնում էր զինվորական մի սոսկակալի ուժի վրա: Որքան և հեռու էր տարածվում նրա պետությունը, ամեն տեղ նա տիրապետող էր և ոչ մի տեղ կառավարող չէր: Նրա փոքրժակը անսահման էր: Նրա մեջ մարմնացած էին, ամենաբարձր աստիճանով, ասիական քաղաքականության թերություններն ու մոլությունները»<sup>1</sup>:

**2. Թագավոր և արքունիք:** Պետության գլուխը թագավորն էր: Նրանից բարձր, նրա հետ հավասար մարդ չկար պետության մեջ: Նա բարձրագույն տերն էր: Մնացածները նրա ստրուկներն էին: Տերը իրավունք ուներ իր ստրուկների կյանքի վրա էլ: Այս բացարձակ միապետական, անսահմանափակ բռնակալական դրությունը նվիրագործված էր կրոնական հասկացողություններով: Եգիպտոսում թագավորը (փարավոն) պարզապես մի աստված էր: Նրան անվանում էին արեգակի որդի և հավատում էին, որ աստվածները երկնքում են բնակվում, իսկ փարավոն-աստուծուն տրված է ամբողջ երկիրը, ոչ թե միայն Եգիպտոսը, այլ այն բոլոր տեղերը, ուր մարդիկ են ապրում: Եվ Եթե ամենքը չեն ճանաչում փարավոնին, այդ նրանից է, որ նրանք ապստամբներ են: Փարավոն-աստծու յուրաքանչյուր շարժումը, յուրաքանչյուր գործողությունն ընդունվում էր իբրև սրբագործություն: Նա էր, որ միակ միջնորդն էր մարդկանց և աստվածների մեջ: Նրան մեծարում էին զանազան բարձր տիտղոսներով, ինչպես, օրինակ՝ «բարձրագույն դուռ», «նորին մեծություն», «երկու երկրների արեգակ», «զույգ պալատ» և այլն<sup>2</sup>:

Քաղաքայում թագավորն աստված չէր, բայց բոլոր մարդկանցից բարձր էր, ծայրագույն մի քահանայապետ, միջնորդ մարդկության և աստվածների

մեջ: Ինչպես և Եգիպտոսում նա կրոնական արարողությունների գլուխն էր, զոհեր էր մատուցանում և նրա սրբազան կոչումն ընդհանրական էր, այսինքն չոլոր աստվածների, բոլոր պաշտամունքների վերաբերմամբ նա էր բարձրագույն ներկայացուցիչը: Ասորեստանը թեև իր ամբողջ քաղաքակրթությունը Քաղդեայից էր վերցրել, բայց թագավորի անձնավորության վերաբերմամբ եգիպտական սկզբունք էր պաշտում: Թագավորը այդտեղ գլխավոր աստուծու, Ասուրի պես չէր, բայց նրան երբեմն նույնացնում էին արեգակի հետ, որ երկրորդական արարչագործներից մեկն էր<sup>3</sup>: Ասորական թագավորի տիտղոսներն էին՝ «մեծ թագավոր», «գնդերի թագավոր», «հզոր թագավոր», «Ասուրի երկրի թագավոր», «Քելի (աստված) սերունդ», «Ասուրի քահանայապետ», «չորս կողմերի թագավոր», «մեծ աստվածների սիրելի», «ճշմարիտ հովիվ, որին Ասուրը և Մարդուկը շնորհել են իշխանություն»<sup>2</sup>:

Այսպիսի հասկացողություններով զարդարված և նվիրագործված բռնակալությունը միայն մի դեպքում ստիպված էր լինում դիմել շրջապատողների խորհուրդներին և բացատրություններին: Այդ այն դեպքն էր, երբ պետք էր իմանալ աստվածների կամքը, գուշակություններ անել զանազան դեպքերի առիթով: Թագավորը երազ էր տեսնում, և այդ երազը պիտի մեկնեին պալատական թուրմերը, հմայողները, քավդեաները: Յուրաքանչյուր ձեռնարկություն սկսելուց առաջ աստղագետները, զոհերի փորոտիների վրա գուշակություն անողները և այլ տեսակի հմայողները պիտի որոշեին, թե ինչ ապագա է սպասում այդ ձեռնարկության: Այսպիսով թագավորը, որքան էլ ուժեղ լիներ նա, զբված էր կրոնի և նախապաշարմունքների քրմերի խիստ ազդեցության տակ: Նրանց խորհուրդները, ցուցմունքները այս կերպով ղեկավարում էին պետական գործերը: Այս հանգամանքը կարող էր լինել բռնակալության փոքր իշատե սահմանափակում, եթե այդ զանազան խորհրդատուները միայն պետության և ազգաբնակչության շահերը ճանաչեին: Բայց այդպիսի շահեր նույնիսկ չկային էլ: Պալատական մոգերին և քավդեաներին ղեկավարողը սեփական շահն էր: Նրանք քծնել, շողորթել կարող էին, որովհետև աշխատում էին, որքան կարելի է թանկ գնով ծախեն իրենց մեկնություններն ու գուշակությունները և թագավորի ընծաները նրանց մեջ մրցակցություն, նախանձ ու վրեժխնդրություն էին առաջացնում<sup>3</sup>: Ահա, ուրեմն, այն դրությունը, որ մեր ժամանակի թեզով կոչվում է պալատական կամարիլա: Ազդեցությունը բռնակալի վրա չէր ազատում պալատական գործիչներին նույն բռնակալի անսահման կամայականություններից: Նրանք, այնուամենայնիվ, մնում էին ստրուկներ, և նրանց գլուխը կարող էր կտրվել թագավորի մի ակնարկով:

Թագավորի առաջնակարգ զբաղմունքներն էին պատերազմ, որս, կրոնական արարողություններ: Պատերազմական զբաղմունքները կախված էին երկրի ռազմական դիրքից, բայց մանավանդ ժողովրդի տրամադրությունից: Եգիպտոսում ժողովուրդը պատերազմասեր չէր. զինվորությունը ատելի էր բուն եգիպտական ժողովրդին: Քաղդեան էլ զուրկ էր պատերազմասեր եռանդից: Բայց ուրիշ բան էր Ասորեստանը: Այդտեղ ամենքը, բարձր դասակարգից սկսած մինչև հետին աղքատը, ի բնե զինվոր էին: Ամենքի մեջ խիստ

<sup>1</sup> Maspero, „His.“, t. II, p. 622.

<sup>2</sup> F. Lenormant et E. Babelon, „Histoire anstienne de l'Orient“, t. V, Paris, 1887, p. 9.

<sup>3</sup> Ibid, p. 12.

<sup>1</sup> „Les Prem. Civ.“, p. 340—342.

<sup>2</sup> Maspero, „His.“, t. I, p. 263.

զարգացած էին զինվորական հատկություններ— կույր հնազանդություն, սակավապետություն, խոր հավատ, թե Աստուր մեծ աստվածը իր փոխանորդի, այն է, թագավորի միջոցով, հրամայում է կովի, հաղթել, նվաճել: Այս պատճառով էլ ասորական թագավորը յուրաքանչյուր գարնան պատերազմական արշավանքների էր գնում: Այսպես էր զինվոր ժողովրդի պահանջը: Զինվորական կույր հպատակությունը, անձնագոհությունը կապված էր թալաններ և հարկատակություններ կատարելու պայմանի հետ:

Դա օտարոտի պայման չէր: Ժողովրդի հասկացողությունն այնպես էր, որ կոտորածը, ավերումը, գերեզմանությունը, մանավանդ երբ նրանք կատարվում են Աստուրի հրամանով և աշխարհի արեգակ-թագավորի առաջնորդությամբ, փառավոր, աստվածահաճո գործեր են: Թագավորը, նվաճելով մի երկիր, շտապում էր սեպագիր արձանագրություններով հավերժացնել ոչ միայն այդ հաղթանակը, այլև այն գազանությունները, որ նա գործադրեց նվաճած երկրում: Այդ քստմենի գազանությունները հաղթական թագավորի փառքն ու պարծանքն էին կազմում:

Պատերազմից ոչ սակավ հաղթական և փառավոր էին թագավորի որսորդությունները: Եվ արձանագրությունների մեջ Աստուրի երկրավոր փոխանորդները պարծանքով հիշատակում են, թե քանի առյուծներ սպանեցին իրենց ձեռքով: Որսորդությունը կատարվում էր մեծ հանդեսով, բազմաթիվ հետևորդների և թիկնապահների մասնակցությամբ: Հաջող որսից վերադարձած թագավորը կատարում էր պալատական հանդեսներ, զոհեր էր մատուցանում աստվածներին:

Արքունի պալատը մի ամբողջ բերդ էր՝ ամուր պարիսպներով շրջապատված: Այստեղ ապրում էր մի ամբողջ ազգաբնակչություն, բազմապիսի թագավորին անմիջապես ծառայող պաշտոնյաներից, ստրուկներից, թիկնապահ զորքերից և այլն: Բերդ-պալատի մեջ պահվում էին թագավորի հարստությունները: Դրանք կազմված էին ոչ միայն մետաղներից, թանկագին քարերից և կտորներից, այլև երկրի այն բոլոր բերքերից, որ արքունիքը ստանում էր իբրև հարկ: Նույն այդ բերքերից տրվում էին ոռճիկներ պաշտոնյաներին, իսկ ավել մնացածը պահվում էր առանձին մթերանոցներում, այնպես որ արքունիքը միշտ ուներ մեծ քանակությամբ պաշար՝ երկարատև պաշարումներին դիմադրելու համար, երբ կամ դրսի թշնամին էր հարձակվում, կամ ապստամբություն էր ծագում<sup>1</sup>:

Պալատական հիմնարկությունների մեջ կարևորության տեսակետից առաջին տեղը բռնում էր հարեմը, թագավորի կանանոցը: Արևելյան այս հռչակավոր հիմնարկությունը մենք տեսնում ենք պատմության սկզբից թե՛ Ծգիպտոսում, թե՛ Քաղդեսում և թե՛ Ասորեստանում: Դա մի առանձին փակ ու խորհրդավոր աշխարհ էր, ուր բունակալը կամ առհասարակ ամեն մի ուժեղ, հարուստ մարդ գտնում էր իր հաճույքներին բավարարություն տալու միջոցներ: Հարեմների ընդարձակությունը, այնտեղ փակված կանանց և հարձերի բազմությունը համարվում էին տիրոջ հարստության, երջանկության և կարողության գլխավոր նշաններ: Փակված կինը, որ իր տիրոջ կրքերին ծառայող մի իր էր, հսկողության և պահպանության էր կարող: Այդ պաշտոնը կատարում էին բազմաթիվ ներքինիները, մեծագույն մասամբ՝ սևամորթ մարդիկ: Ներքինիների գլխավորն էր ներքինապետը՝ մի վերին աստիճանի կարևոր

անձնավորություն ոչ միայն թագավորի կանանոցում, այլև ամբողջ պետության համար:

Լոկ հեշտանքի համար ստեղծված հիմնարկության մեջ կյանքը անշարժ ու միատեսակ չէր անցնում: Կանանոցը միշտ լի էր ինտրիգներով, մեքենայություններով: Այդտեղ մրցության լայն ասպարեզ էր գտնում կանացի փառասիրությունը. այդտեղ էլ տիրապետական տենչեր էին թագավորում: Նախանձը, փոխադարձ չկամությունը հարկադրում էին մշտապես փակված կանանց ներքին անդուլ պատերազմ մղել իրար դեմ: Ճարպիկը, գեղեցիկը կարողանում էր ուրիշ մրցակիցներից ավելի տիրանալ իր տիրոջ սրտին և շահագործել այդ առավելությունը իր և իր զավակների օգտին: Թագավորի օրինավոր կինը սովորաբար մեկն էր համարվում, նայած իր ծագման և թագավորի ընտրության: Եզրիպտոսում այդ պատվին շատ քիչ էին արժանանում օտար ծագում ունեցող կանայք: Մեծագույն մասամբ փարավոն-աստուծու օրինավոր կինը նրա հարազատ թույլն էր ընդունում: Սովորաբար, այդ օրինավոր կնույցից ծնված արուներին էր անցնում թագածառանգության իրավունքը: Բայց հարեմի դավադրությունները հաճախ խլում էին այդ իրավունքը օրինավոր ժառանգից, Հաճախ արքայազուները պալատական մրցող շրջանների գործիք էին դառնում և հարեմում այդպիսի ժամանակ կանգ չէին առնում նույնիսկ սպանությունների առաջ: Սպանվում էին ահարկու բռնակալ թագավորները, փարավոն-աստվածները, թագածառանգները: Այդ պատճառով էլ կարգ էր դառնում, որ նոր գահ բարձրացող թագավորը վտանգավոր ախոյաններից ազատ մնալու և հանգիստ թագավորելու համար կոտորում էր գահի բոլոր թեկնածուներին: Պալատական այս հեղափոխություններն էին միայն, որ գալիս էին փոփոխություններ մտցնելու արևելքի անսահման բռնակալությունների ընթացիկ կյանքում<sup>2</sup>:

Հարեմը միայն պալատում չէր ամենաազդեցիկ հիմնարկությունը: Նա ազդում էր և պետության ճակատագրի վրա: Կլանում էր պետական միջոցների նշանավոր մասը, թույլ թագավորները, և ոչ միայն թույլները, ենթարկվում էին հարեմի ազդեցության և այդ ժամանակ պետությունը կառավարողներ էին կանայք, հարձերը, ներքինիները: Արևելքը ամենայն հավատարմությամբ մինչև այժմ պահպանել է հարեմի ամբողջ կազմակերպությունը, նշանակությունը: Նույնիսկ շինության ձևը, սենյակների դասավորությունը: Եթե այսօր վերանորոգենք ասորական թագավորի պալատի այն մասը, ուր գետեղված էր կանանոցը, մենք համարյա ոչինչ չպիտի փոփոխենք, որպեսզի կարողանայինք այդտեղ տեղավորել ժամանակակից մի պարսիկ կամ թուրք տիրապետողի հարեմը: Նույն դասավորությունը, նույն հոգսը՝ բաժանելու իրարից հարեմի կանանց, որոնք ոճիրներն անգամ անտես են անում իրենց դիտավորությունները առաջ տանելու համար<sup>3</sup>:

Ժողովրդի հետ թագավորը անմիջական հարաբերություններ ուներ շնորհիվ այն հանգամանքի, որ նա հանդիսանում էր բարձրագույն դատավորը իր բոլոր հպատակների համար: Նա անձամբ լսում էր բողոքներն ու գանգատները, վճիռներ էր արձակում: Եվ այս նահապետական հովանավորությունը, որ ցույց էր տալիս թագավորը իր հպատակների վերաբերմամբ, դառնալով նրանց համար արդարադատության բարձր վերահսկիչը և գործադրել տվողը, մի մեծ շարժառիթ էր, որ ժողովուրդը համարել նրան աստվածների կամքը կատարող

<sup>1</sup> Maspero, t. I, p. 275—287.

<sup>1</sup> Ibid, p. 270.

<sup>2</sup> Lenormant et Babelon, t. V, p. 29.

և բարձրագույն իրավարարության պահապան: Ժողովուրդը դաստիարակվում էր այն հասկացողությունների մեջ, որոնք պաշտամունք են դարձնում թագավորի անձը, իբրև ոչ միայն բարձր կրոնական մի գաղափար, այլև իբրև մարմնացում պետական բարձր շահերի, երկրի ուժի, փառքի և երջանկության:

Ասիական բունակալության ամենադաժան ներկայացուցիչներն անգամ իրենց տեղն ունեին ժողովրդական պաշտամունքի մեջ: Ասորական արձանագրությունները պահել են այդ պաշտամունքի մի քանի հետաքրքրական հիշատակարանները: Դրանցից մեկն է այն օրհներգը, որ ձոնված է թագավորի արևշատության: «Երկար օրեր,— այսպես էր սկսվում այդ հիմնը,— երկար տարիներ, հատու սուր, երկար կյանք, փառքի տարիներ, նախապատվություն բոլոր թագավորների մեջ, շնորհեցեք այս բոլորը թագավորին, իմ տիրոջը: Ապա օրհներգը մաղթում է լայն և ուժեղ սահմաններ թագավորի պետության և նրա կառավարության, գերիվերություն բոլոր թագավորների վրա և այլն: Նույն արձանագրությունները ցույց են տալիս, որ երբ թագավորը հիվանդանում էր, նրա բժշկության համար հրապարակական աղոթքներ էին կարդացվում, որոնց մեջ դյուսթական ուժերն էին հրավիրվում՝ շար ոգիները հալածելու և այդպիսով հիվանդ թագավորին բժշկություն տալու համար<sup>1</sup>:

Թագավորական պալատի ամբողջ բնակչությունը հաշվի ենթարկելու համար բավարար տեղեկություններ չկան: Հույն մատենագիրներից մեկը հիշատակում է, որ պարսից արքունիքում ապրողների թիվը հասնում էր 15 հազարի: Եվ որովհետև հին Պարսկաստանը իր պետական կազմակերպությունը ժառանգել էր Միջագետքից, ուստի այս թիվը կարող է մոտավոր հասկացողություն տալ և այն մարդկանց թվի մասին, որոնք ապրում էին Ասորեստանի արքունիքում: Բացի դրանից, պալատը կերակրում էր և քաղաքի ազգաբնակչության մի նշանավոր մասը: Ահա այսքան բերանների գոհացում տալու համար էր, որ յուրաքանչյուր զարնան սկսվում էին պատերազմական արշավանքներ՝ երկրներ կողոպտելու, ամեն տեսակ հարստություններ դիզելու համար:

**3. Կառավարություն:** Թագավորից հետո առաջին մարդը պետության մեջ այն պաշտոնյան էր, որ Արևելքում այնքան լավ ծանոթ է մեծ վիզիր անունով: Ասորեստանում նա կոչվում էր «սուրտան»<sup>2</sup> և զորքերի զխավոր հրամանատարն էր ամեն անգամ, երբ թագավորը անձամբ չէր ղեկավարում պատերազմական գործողությունները: Ժամանակի ընթացքում այս պաշտոնյան մեծացավ, պատերազմական կարիքները այնքան բարդվեցին, որ հարկավոր եղավ համանման, եթե ոչ միանգամայն համապատիվ մի պաշտոն էլ ստեղծել: Մեծ վեզիրը մշտապես թագավորի աջ թևի կողմն էր կանգնում, և որ պաշտոնյան ձախ թևի կողմն էր գտնվում և ստացավ «սուլթան» անունը<sup>3</sup>:

Մեծ վիզիրից հետո Ասորեստանում գալիս էին հետևյալ բարձր պաշտոնները. ներքինապետ, պալատի հազարապետ կամ վերատեսուչ, որ կոչվում էր և զխավոր դատավոր, արքունի դիվանապետ և «երկրի կառավարիչ», որ ներքին գործերի մինիստրի նման մի բան էր: Այս բարձր պաշտոնյաները անկախ վարչական իրավասություն չունեին, ոչ նույնիսկ կարող էին անձնական նախաձեռնությամբ գործել: Նրանք միայն կատարում էին միապետի կամքն

<sup>1</sup> Lenormant et Babelon, t. V, p. 25.

<sup>2</sup> Ասովածաշնի հայերեն թարգմանության մեջ «տանաթան» (Ծասի, Ի, 1).

<sup>3</sup> Lenormant et Babelon, t. V, p. 52.

ու հրամանները: Եվ միապետը չէր էլ թույլ տալիս, որ պաշտոնյաները երկար ժամանակ մնան իրենց տեղը: Նրանք ժամանակավոր էին: Եղածների տեղ միապետն ընտրում էր նորերին, ինչպես իր քմահաճույթն էր թելադրում, ընտրում էր առանց նկատի առնելու նորերի դիրքը, ծագումը, ոչ էլ նույնիսկ ընդունակությունները: Հաճախ, նրա մի հրամանով, բարձրաստիճան, փառքով և իշխանությամբ շրջապատված պաշտոնյան զրկվում էր տեղից, դառնում էր հասարակ ստրուկ, կալանավոր, եթե չէր սպանվում: Եվ հաճախ ժողովրդի միջից մի անհայտ և անտոհմիկ մարդ մի օրում բարձրանում էր մինչև առաջնակարգ պետական աստիճանը: Նույնիսկ ստրուկները, բախտի բերմունքով, կոչվում էին կարևորագույն պաշտոններ:

Այսպես էր կենտրոնական կառավարությունը: Գալով նահանգական տեղային կառավարության, պետք է նախ և առաջ զանազանել երկու տեսակ երկրներ: Առաջին տեսակը կազմում էին այն երկրները, որոնք զուտ ասորական էին, ասորի ժողովրդով բնակեցրած: Երկրորդ տեսակին պատկանում էին նվաճված օտար երկրները:

Առաջին տեսակի նահանգները կառավարվում էին թագավորի կողմից նշանակված և նրա անմիջական հրամանի տակ գտնվող կուսակալներով: Սրանք շատ զորեղ պաշտոնյաներ էին: Արքունիքի վերաբերմամբ նրանք պարտավոր էին կատարել մի քանի հայտնի պայմաններ՝ հավաքել տեղական հարկերն ու տուրքերը և հասցնել արքունի գանձարանին, կարգ պահպանել, տեղեկություններ հաղորդել թագավորին բոլոր կարևոր պետական գործերի մասին, պատրաստ պահել տեղական զորքերը, որպեսզի հարկավոր եղած ժամանակ իսկույն ուղարկեն ցույց տված տեղերը: Մնացած բոլոր բաներում կուսակալները ինքնազուտ էին, ամեն ինչ թողնված էր նրանց հայեցողության: Աստուրական կուսակալները պարսից սատրապների և օսմանյան փառանքի նախահայրերն էին: Նրանք ճնշում և հարստահարում էին ժողովուրդը, որի գանգատները շատ անգամ հասնում էին միապետի ականջին: Այս դեպքում կուսակալները պատժվում էին և պաշտոնանկ էին լինում բռնակալական արագ և խիստ հարվածների տակ:

Հին պետությունը առհասարակ ծանոթ չէր խիստ կենտրոնացման սիստեմին: Աշխարհակալ ազգերը մեծ պետություններ էին ստեղծում, բայց այդ պետությունները միաձուլյ կազմակերպություններ չէին դառնում, այլ ներկայացնում էին զավառական տեղային անկախությունների, կիսաանկախությունների մի ցանց: Նվաճված երկրները չէին զրկվում իրենց վարչական ինքնուրույնությունից: Ոչինչ չէր փոփոխվում նրանց տեղային առանձնահատկությունների մեջ, բացի միայն նրանից, որ երկիրը հարկ էր տալիս նվաճող ազգին և օգնում էր նրան իր զորքերով: Այս ավատական սկզբունքը միայն նվաճված երկրների վերաբերմամբ չէր գործադրվում: Բուն Եգիպտոսը նույնպես ավատական կազմակերպություն ուներ, ինչպես և նրա նվաճած երկրները: Իշխանական ցեղերը իրենց ժառանգական երկրում անկախ փոքրիկ թագավորներ էին, կապված հայտնի պարտավորություններով երկրի ընդհանուր միապետի հետ: Բարելոնը, նրան հետևելով և Ասորեստանը, համանման պետական կազմակերպություն ունեին: Նվաճված երկրները Ասորեստանի կայսրության մեջ հանձնվում էին այդ երկրների նախկին տերերի կառավարության: Կապը դրանց և պետության մեջ այնքան թույլ էր, որ ամեն հրամար դեպքում վասալները փորձ էին անում ապստամբությունների միջոցով թոթափել ասորական լուծը: Թեև այդ ապստամբությունները երբեմն շատ համառ էին



լինում և նինձեի թագավորներին հարկավոր էր լինում մեծ դժվարությամբ ճնշել նրանց, բայց և այնպես, միշտ հարգվում էր տեղային ինքնավարության սկզբունքը: Մայրահեղ դիպքերում միայն ապստամբություն հարուցանող վասալներն էին հեռացվում իշխանությունից, որպեսզի նրանց տեղ կարգվեն նրանց ժառանգները կամ ազգականները:

Ապստամբություններ հաճախ տեղի էին ունենում և բուն ասորական նահանգներում, կուսակալների կողմից: Բայց այստեղ պետական միությունը խախտելու վտանգ չկար: Այստեղ ասորին կոչվում էր ասորու դեմ, ոչ թե նրանից անջատվելու համար, այլ իշխանություն, միապետական գահ ձեռք բերելու նպատակով: Այս ներքին ապստամբական շարժումները, ներքին պատերազմները բնորոշ հատկություն են արևելյան բոլոր բնակավայրությունների՝ պատմության բոլոր ժամանակներում, մինչև նույնիսկ մեր օրերը: Միապետը, չնայած իր անսահման իշխանության, իր դաժան խստություններին, միշտ կանգնած էր այն վտանգի առաջ, որ իր ստորագրյալ պաշտոնյաներից մեկն ու մեկը կարող է ուժեղանալ, ապստամբվել իր դեմ: Ուստի նա պարտավոր էր ամեն տեսակ զորություններ ձեռք առնել: Սրանով էլ պետք է բացատրել պաշտոնյաների հաճախակի փոփոխությունները: Ասորեստանի պատմության մեջ մենք տեսնում ենք դեպքեր, երբ թագավորը, վախենալով, թե իր տարտանք կարող է զորքի վստահությունը վատակել և ապստամբություն հարուցանել, պաշտոնանկ էր անում նրանց հենց պատերազմի ժամանակ:

Մենք խոսեցինք պետության գլխավոր պաշտոնյաների մասին: Վարչական և զինվորական կազմերի մեջ հին պետությունն ուներ և բազմաթիվ այլ պաշտոնյաներ, զանազան կարգերի և աստիճանների բաժանված: Այնպես որ պատմության սկզբներում ևեթ մենք աչքի առչև ունենք այն դրությունը, որ այժմյան լեզվով կոչվում է բյուրոկրատական կազմ: Այս կազմի տիպիկ ներկայացուցիչն էր մանավանդ Եգիպտոսը<sup>1</sup>:

**4. Զինվորություն:** Պատերազմը ամենահին իրականությունն է մարդկության մեջ: Եվ պատերազմող տարրը, զինվորությունը, բնականաբար, ամենակարևոր նշանակություն ուներ նախնական պետությունների համար անգամ: Քաղաքական առձեռն ուժը, նա, որ վճռում է քաղաքական մարմնի գոյության խնդիրը, զինվորությունն էր, ուստի և պետությունը ամենից շատ նրան էր ուշադրություն նվիրում: Զորքի նշանակությունը ավելի ևս մեծանում է այն ժամանակից, երբ քաղաքակիրթ աշխարհում համաշխարհային տիրապետությունը դառնում է ընդհանուր, բարձր գաղափար: Մեծ բանակների անհրաժեշտությունը ծանրացնում էր ազգաբնակչության վրա ընկած լուծը, որ զինվորագրությունն էր:

Յուրաքանչյուր պետություն անհրաժեշտաբար ունենում էր օտար երկրներից վարձված զորքեր: Այդ տեսակ զինվորական ուժը գլխավորապես թագավորական պալատի պահպանությունն էր ստանձնում: Միապետը, միշտ պալատական և ֆեոդալական հեղափոխությունների երկյուղի տակ, պիտի առավելություն տար վարձկան զինվորության, որ չէր գտնվում տեղական սոցիալիզմի վտանգների տակ, չէր տոգորված տեղական շահերով, ուստի և շատ քիչ հավանականություն էր մնում, թե նա գործիք կդառնա միապետի դեմ նյութավոր դավադրությունների:

Սակայն օտար տարրը, իբրև վարձով ծառայող, չէր կարող նշանավոր ուժ կազմել բանակի մեջ: Նվաճողական ձգտումների համար անհրաժեշտ խոշոր բանակները, բնականաբար, պիտի ահռական ազգաբնակչությունից կազմվեին: Եվ մենք տեսնում ենք, որ զինվորագրությունը կանոնավորված մի պարտավորություն էր ժողովրդի համար: Մի շատ ծանր պարտավորություն այն տարրերի համար, որոնք տնտեսական պայմանների անողորմ ճնշման տակ էին գտնվում և, ուրեմն, կարող էին միայն խաղաղ աշխատանքի մեջ գտնել գոյության կովի միջոցներ: Այսպես էր, օրինակ, Եգիպտոսը: Երկրագործ, ճորտական դրության մեջ գտնվող ժողովրդին պատերազմը ոչ մի օգուտ չէր կարող տալ:

Եվ նա չէր սիրում պատերազմը, բայց ստիպված էր աշխատանքի ընդունակ իր անդամներից զրկվել, որպեսզի նրանք գնան փարավոնների իշխանությունը պահպանելու հեռավոր Սիրիայի, Եթովպիայի բերդերում:

Եգիպտոսի զինվորակոչը մի քանի կողմերով հիշեցնում է մեր այժմյան ժամանակները: Յուրաքանչյուր զավառ, լինել նա արքունի թե ավատական, պարտավոր էր նշանակված բանակությանը զինվորացուներ տալ: Որոշված ժամանակներին թագավորական գրագիրները գնում էին որոշ զավառ, տանելով իրենց հետ վաղորդ պատրաստված ցուցակները, որոնց մեջ նշանակված էին զինվորացուները: Բոլոր նորակոչներին մանրամասն քննության էին ենթարկում, իմանալու համար, թե պիտանի՞ են նրանք զինվորական ծառայության համար: Բոլոր առողջներին զատում էին, տեղային իշխանությունը նորից քննության էր ենթարկում նրանց, և այնուհետև միայն որոշվում էր, թե որոնք են զինվոր գնում: Խաղաղ երկրագործ ժողովուրդը լացով ու կսկիծով էր կատարում իր այդ պարտականությունը: Զինվոր գնալը համարյա միշտ նշանակում էր այլևս տուն չվերադառնալ: Եվ այդ պատճառով ընտանիքները մեծ սուգով էին բաժանվում զինվորացուից այնպես, որպես թե տանում էին նրան թաղելու: Կանայք իրենց երեխին և մագերին փոշի էին ցանում և բարձրաձայն ողբում: Զինվորակոչները ավելի հաճախակի լինում էին, իհարկե, պատերազմների ժամանակ: Ուստի, երբ լուր էր տարածվում, թե սկսվել է կամ պիտի սկսվի պատերազմ, ազգաբնակչության կեսը փախչում էր լեռները և թաքնվում էր այնտեղ՝ զինվորակոչից ազատվելու համար<sup>1</sup>:

Սակայն երկրագործ ժողովրդի այսպիսի տրամադրությունը դեռ չէր նշանակում, թե նրա վրա տիրող պետությունը պիտի ձեռք վերցնի զորքից ու պատերազմից: Ընդհակառակն, պետությունը, զինվորագրության դժվարությունների առջև կաշկանդված չմնալու համար, արհեստական կերպով զինվորական ազգաբնակչություն է ստեղծում: Այդ սիստեմը հիմնված էր պայմանադրական սկզբունքի վրա: Պետությունը իր հողերը տալիս է այնպիսիներին, որոնք հանձն էին առնում մշտական զինվորությունը: Մի ընտանիքի տրվում էր որոշ շափով հողաբաժին, որ ազատ էր ամեն տեսակ հարկերից ու սուրբերից: Այդ հողի վրա ապրողը իրեն զգում էր միանգամայն անկախ: Բայց երբ հրավեր էր ստացվում, ընտանիքի բոլոր ընդունակ անդամները անմիջապես պիտի պատերազմ գնալին: Այս սիստեմը գոյություն ուներ և Քաղցրայում: Պետական ոչ մի պաշտոնյա իրավունք չուներ այդ հողից որևէ տուրք վերցնելու, որևէ անասուն տանելու, ուտելիղեն ստանալու գորքի համար: Ոչ մի վորաբաժին իրավունք չուներ այնտեղ մտնելու, եթե նույնիսկ հարկավոր լի-

<sup>1</sup> Թ. Մեյեր, «Экономическое развитие древнего мира», М., 1906, с. 12.

<sup>1</sup> Г. Масперо, «Древняя история, Египет, Ассирия», СПб, 1900, с. 63—65.

ներ այնտեղ մի փախստական բռնել<sup>1</sup>: Համաժողովի օրենքները ամենայն խստությամբ պահպանում էին այդ զինվորական հողաբաժինների անձեռնմը- խնդրությունը: Մախել, գրավ դնել, պարտքի տեղ վերցնել այդ հողերը խստիվ արգելվում էր: Չէր կարելի գնել զինվորին տված անասուններն անգամ: Դրա փոխարեն, եթե զինվորը, որ ուներ այսպիսի հողաբաժին, խուսափում էր զին- վորական ծառայությունից, պիտի ենթարկվեր մահվան պատժի: Եթե հողա- բաժին ունեցող զինվորը գերի էր ընկնում թշնամու ձեռքը, իսկ տանը չէր մնում մի ժառանգ, որ կարողանար շարունակել նրա գործը, այդ դեպքում հողը տրվում էր մի ուրիշի, որ պարտավոր էր կալվածի եկամուտի մի եր- րորդական մասը տալ զինվորի ընտանիքին, իսկ գերությունից վերադառնա- լուց հետո ամբողջ կալվածը նորից նրա ձեռքն էր անցնում<sup>2</sup>: Հողատիրության այս սխեման Արևելքում շարունակվեց մինչև վերջին ժամանակներս: Այդ սխեման էր, որ փոքրիկ զինվոր-ֆեոդալների ցանցերով պատեց ամբողջ օս- մանյան պետությունը:

Ասորեստանը, գերազանցորեն զինվորական մի պետություն, պատերազ- մական արվեստը հասցրեց դեռ մինչև այդ շտեմնված զարգացման: Նրա բա- նակի պես մի ահեղ ուժ դեռ երևան չէր եկել աշխարհում և Եգիպտոսն անգամ, Թեև աշխարհակալ մի մեծ պետություն, վախենում էր նրանից: Զրահները ասորի զինվորներին տալիս էին ավելի ուժ և անվասություն: Բանակն ուներ իր մեջ թե՛ հետևակ, թե՛ ձիավոր զորքեր և թե՛ պատերազմական կառքեր: Պաշարված բերդերի դեմ գործ էին ածում քանդող մեքենաներ: Եվ այսպիսի մի ահարկու ուժի վրա հենված՝ փոքրիկ Ասորեստանը դարձավ առաջին հա- մաշխարհային պետությունը, որի սահմանները Արևմուտքում մի ժամանակ սկսվում էին Նեղոսի ափերից: Բանակի կազմակերպությունն այնպես էր, որ թագավորը կարողանում էր արագ կենտրոնացնել մեծ քանակությամբ զոր- քեր, ուր հարկավոր էր համարում և ուղղում էր արագ ու ահեղ հարվածներ թշնամու դեմ:

Ասուրական զինվորակոչի մանրամասնությունները հայտնի չեն: Բայց նկատի առնելով մի զինվոր ժողովուրդ, պետք է թույլ տալ, որ զենք կրելու կարողություն ունեցող ազգաբնակչությունը գնում էր իր թագավորի ետևից: Կրավել նրան առանձին միջոցներով հարկավոր էլ չէր, որովհետև ասորական սպաներազմի եղանակը արդեն ուներ իր մեջ ամբողջ այն գրավչությունը, որ կարող է ոգևորել զինվորին: Ասուրական պատերազմը միայն նվաճում, հը- պատակեցում չէր, այլ առավել հիմնիվեր կործանումն երկրների և ազգերի: Դա կողոպուտ և կոտորած էր այնպիսի շափով, որից ավելին չէր էլ կարող լինել: Վերջանում էր յուրաքանչյուր պատերազմ և յուրաքանչյուր գունդ վե- րադառնում էր իր գավառը, տանելով իր հետ ավարի և կողոպուտի իր բա- ժինը<sup>3</sup>:

Թե որպիսի կատաղություններ էին ասորեստանցիները հարձակվում, վերց- նում, պատժում, մի խոսքով՝ պատերազմ մղում, այդ ամենայն սրտաբացու- թյամբ, հոխորտանքով պատմում են նրանց թագավորները, որոնք իրենց յուրաքանչյուր հաղթանակը հավերժացնում էին հատուկ արձանագրություն- ների մեջ: Բերենք մի քանի նմուշներ այդ պաշտոնական գրություններից: որոնք ամեն մի բացատրությունից ավելի լավ են բնորոշում ոչ միայն թագա-

վորին, այլև ամբողջ երկիրը իր հասկացողություններով, իր պաշտամունք- ներով, իր հայացքներով և գործողություններով:

Ասուրնազիրպալ թագավորը (9-րդ դար Ք. ա.) այսպես է ինքն իրեն մեծարում. «Ես թագավոր, հզոր, թագավոր Ասուրի երկրի, որդի Թուկլաթ- Ադարի, աչքեր Ասուրի, որ ջնջեց իր հակառակորդների երկրները և ցցի հա- նեց իր թշնամիների մարմինները, թոռ Բին-Նիրարի, որ մեծ աստվածների փոխանորդն էր, որ ջարդեց իր հզորությունը շանաչողներին, ժառանգորդ Ասուր-Դանիլի, որ տաճարներ շինեց և հրաշալիքներ հիմնեց: Ես՝ թագավոր, ես՝ տեր, ես՝ սրբազան, ես՝ ամենակարող, ես՝ դատավոր, ես՝ վեհապետ, ես՝ հերոս, ես՝ հաղթող, ես ուժեղ եմ, ես՝ տղամարդ, ես՝ Ասուրնազիրպալ, կարող թագավոր, Ասուրի երկրի թագավոր, նշանակված Սին աստծուց, Անու աստծու սիրելին, աստվածների ծառան, ես»:

Ահա և նմուշներ նույն թագավորի քաջագործություններից. «Երեք օրվա ընթացքում ես բարձրացա սարը, սարսափ մտքի նրանց ապաստարանների մեջ, ցնցեցի նրանց բույները, մահապատժի ենթարկեցի 200 գերիների, հա- բուստ ավար վերցրի և կողոպտեցի նրանց հոտերը»: «Կիրխի Կրկում ես սպանեցի շատ մարդկանց, հարուստ ավար վերցրի: Ես սպանեցի 260 գերի- ներ, ես կտրեցի նրանց գլուխները և այդ գլուխներից բուրգի: շինեցի»: «Ես վերցրի քաղաքը, կոտորեցի 800 մարդ, կտրեցի նրանց գլուխները. շատ գերի- ներ ընկան ձեռքս. ես այրեցի նրանց բնակարանները, քաղաքի դռների առջև պատ կազմեցի գերիների դիակներին. ես կտրեցի նրանց գլուխները, 700 մարդ խաչեցի գլխավոր դռների առջև, քարուքանդ արի քաղաքը, ավերեցի, դարձրի նրան ավերակների կույտ, անպատվեցի նրանց տղաներին և աղջիկներին»: «Ես հրամայեցի կտրել կովի մեջ սպանված 500 թշնամիների գլուխներ. 400 մարդ կենդանի ընկան իմ ձեռքը, ես քաղաքից դուրս բերի 3000 գերի. ես թողի քաղաքը ինձ համար, իսկ գերիներին և գլուխները ուղարկեցի Ամիդ բա- դաքը: Այդ քաղաքի դռների առջև ես գլուխներից բուրգ շինեցի, իսկ դռների մեջ կենդանի խաչեցի գերիներին, քանդեցի քաղաքը, ոչնչացրի նրա անտառ- ները»: «Ես գրավեցի... այրեցի նրան, սպանեցի 1400 զինվոր, 470 կենդանի գերիներ վերցրի, դուրս բերի քաղաքից 3000 մարդ, գերիներին կենդանի խա- չեցի քաղաքի մեծ դռների առջև, նրանց աչքերը փորեցի, մնացածներին տարա Ասուրի երկիրը և հրամայեցի նորից քաղաք շինել»: «Ես Ասուրնազիրա- պալ, մեծ թագավոր, կարող թագավոր, Ասուրի երկրի թագավոր, արդարա- դատ, ահարկու, որ խոնարհ կերպով գնացել եմ Ասուրի, իմ Աստծու դե- կավարությամբ: Ես այսպես եմ ասում. Ասուրը, իմ տերը, արտասանեց իմ անունը, ընդարձակեց իմ պետությունը, իր կարողության կատարումը հունձ- նարարեց իմ անհաղթելի սրին: Ավերակների վրա էր որ պայծառացավ իմ գեմը, իմ բարկության բավարարություն տալու մեջ է իմ բերկրանքը»:

Եվ այսպես՝ ոչ միայն Ասուրնազիրապալը: Այսպիսի կտորներից է քաղ- կացած Ասորեստանի պատմությունը դարերի ընթացքում: Մենք պետք է ըն- դունենք, որ այս արձանագրությունների մեջ քիչ չէ խառնված և բռնապե- տական հոխորտանք, չափազանցություն: Եթե բառացի մտքով ճիշտ լինեին այդ բոլոր հիմնովին ավերումները, այն ժամանակ պետք կլինեին ընդունել նաև այն, որ Ասուրի կատաղի ներկայացուցիչները կատարյալ անապատ էին դարձնում իրենց տիրած երկրները: Սակայն նույն արձանագրությունները

<sup>1</sup> Maspero, „Hist.“, t. 1. p. 722.

<sup>2</sup> V. Scheil, „La Loi de Hammourabi“, Paris, 1906.

<sup>3</sup> Lenormant et Babelon, t. V, p. 53.

<sup>1</sup> Jules Oppert, „Histoire des Empires de Chaldée et d'As syrie“, Versailles, 1865, т. 4 Записки, «Руководство всемирной истории», СПб, 1879, с. 140—145.

ցույց են տալիս, որ նվաճված երկրները մի կարճ միջոցից հետո դարձյալ ապստամբվում էին նինվեի բռնակալության դեմ: Նորից արշավանք, նորից ավերում մինչև հաջորդ ապստամբությունը: Զինվորական բռնապետության խթանատիպ հատկությունն է այդ վիճակը:

Բայց սկսապարծ հոխորտանքներն ու չափազանցությունները հեռացնելուց հետո էլ ասորական արշավանքները շարունակում են մնալ իբրև պատմական մեծ աղետներ ազգերի և ժողովուրդների համար: Յուրաքանչյուր այդպիսի արշավանք տեղահան էր անում մի ամբողջ երկրի ժողովուրդը: Ասորական նվաճողը հաղթված ժողովուրդին թողում էր նրա կյանքը միայն, մեկ էլ այն, ինչ չէր կարելի խլել, պոկել հողից: Մնացած ամեն ինչը՝ և՛ մարդ, և՛ անասուն, և՛ ստացվածք, հարստություն, մթերք, փոխադրվում էր Ասորեստան՝ իբրև հաղթողի ավար: Գերի էին գնում նախ և առաջ հաղթված երկրի աստվածները, ապա իշխողները իրենց կանանց և երեխաների հետ: Պատերազմելու ընդունակ տարրը իսկույն մտցվում էր ասսուրական բանակի մեջ, ուր լրացնում էր պատերազմի պատճառով թուլացած շարքերը: Իսկ գյուղական ժողովուրդը իր անասունների հետ քշվում տարվում էր իբրև գերի: Այդ գերիները բնակեցվում էին ասորական ազգաբնակչության ունեցող վայրերում: Նրանք կազմում էին առանձին դասակարգ՝ ստրուկների դասակարգ, որ մշակում էր պետական և մասնավոր կալվածները և դառնում էր տերերի կատարյալ սեփականություն: Եգիպտոսում այդ ստրուկներն էին կազմում հողի վրա ամրացած ճորտերի դասակարգը<sup>1</sup>:

Հիշատակենք, վերջապես, և մի հետաքրքրական հանգամանք Ասորեստանի զինվորական գրությունից: Այդ այն է, որ նինվեի թագավորներն ունեին իրենց բանակի մեջ առանձին զորաբաժին, նման օսմանյան սուլթանների ենիչերիներին: Այդ զորքը միշտ պատրաստ էր իր գլուխը դնել իր թագավորի փառքի համար: Բայց միևնույն ժամանակ, նա իր անբավականությունը արտահայտում էր պալատական հեղափոխություններով. և քիչ չէ պատահել, որ նինվեի բռնակալները գահընկեց են եղել նույն այդ հավատարիմ և քաջ զորքի ձեռքով<sup>2</sup>:

**5. Ժողովուրդ:** Քաղաքներում և գյուղերում ապրող ազգաբնակչությունը սոցիալական և տնտեսական պայմանների տեսակետից տարբեր կացություններ էր ներկայացնում: Մեզ հայտնի են բավականաչափ մանրամասնություններ, որոնք պատկերացնում են այդ տարբերությունները Եգիպտոսում. Եփրատ-Տիգրիսյան հովտի վերաբերմամբ թեև այդ տեղեկությունները առատ չեն, բայց կարելի է ասել, որ այնտեղ էլ կյանքը, ընդհանուր գծերով, նույն ձևերն ունեւր, ինչ Անդոսի հովտում: Երկու հռչակավոր հովիտների մոզած պատմական հիշատակարանները, իրար լրացնելով կամ տեղական տարբերությունները շեշտելով, տալիս են մի ընդհանուր պատկեր, որ մենք կարող ենք մոտավոր ճշտությամբ անվանել քաղաքակրթության այդ ժամանակների հաստատուն իրականություն:

Պետական կազմակերպության հիմքը, ինչպես տեսանք, դրված էր ավատականության (ֆեոդալիզմի) վրա: Թագավորը ամենաբարձր էակ, աստվածների ներկայացուցիչ, իսկ Եգիպտոսում՝ և աստված, գլուխն էր, իսկ

<sup>1</sup> Maspero, „Hist.“, t. II, p. 639, t. I, p. 327.  
<sup>2</sup> Lenormant et Babelon, t. V, p. 54.  
<sup>3</sup> Ըստ Maspero-ի „Hist.“, t. I, chp. IV et IX.

սրա հովանու տակ՝ ազնվականներ, որոնք իրենց կալվածքների մեջ տեր ու կառավարիչներ էին: Մնացած ազգաբնակչության մեջ երկու տարրեր կան, որոնց վրա հենվում է թագավորի և ավատական տերերի իշխանությունը՝ և կեղեցու ներկայացուցիչներ և զենքի ներկայացուցիչներ, հոգևորականություն և զինվորություն: Հոգևորականությունը այնքան ուժեղ է, որ Եգիպտոսում նույնիսկ քաղաքական հեղափոխություններ է կատարում, թագավորող հարստությունները փոփոխում, իսկ Քաղդեայում նա մեծամեծ հարստությունների տեր է, ամենախոշոր կալվածատերն ու սեղանավորն է:

Հոգևորականությունից ու զինվորությունից դուրս՝ մնացած դասակարգերը միայն շահագործվող նյութեր են. հարկեր են տալիս, կոռ են կատարում ինչքան և ինչպես կամենում են տերերը: Ամբողջ ազգաբնակչությունը, քաղաքացի թե գյուղացի, ազատ է և հավասար իրավունքներ ունի սկզբունքով: Նա կարող է տեղից տեղ փոխադրվել, մի պարագամունքից մյուսին անցնել: Տեղից և աշխատանքից հեռացող իրավունքներ չէր կորցնում: Բայց դրա հետ միասին Եգիպտոսում գոյություն ունեւր մի իրավական կարգ, որ ամբողջ ազգաբնակչության համար ստեղծում էր մի տեսակ ճորտական կախում: Այդ այն էր, որ յուրաքանչյուր եգիպտացի պարտավոր էր ունենալ մի տեր, մի հովանավոր: Բացառություն կազմում էր, իհարկե, միայն փարավունը, որ կարող էր մարդկային հովանավորության: Ավատական իշխողները փարավունին էին իրենց տեր ճանաչում: Միանգամայն ազատ, տեր չունեցող (մեր լեզվի մեջ հատուկ խոսք՝ «անտեր») մարդիկ կարող էին լինել, բայց այդպիսիները օրենքից դուրս էին դրված: Ամեն մի պատահած մարդ կարող էր նրան կանգնեցնել, խլել նրա անասունները, ապրանքը, ստացվածքը ամենադատարկ պատրվակով, նույնիսկ ծեծել, եթե նա կփորձեր բողոքել: Եվ այդպիսի անպաշտպան մարդուն ուրիշ ոչինչ չէր մնում, բայց միայն գնալ նստել պատի դռանը և օրերով արդարադատություն պաղատել մեծավորներից: Սակայն այն հանգամանքը, որ նա տեր ու հովանավոր չէ ընտրել իր համար, դատավորներին խիստ կասկածամտություն էր ներշնչում և նա երկար ժամանակ չէր կարողանում հատուցում ստանալ:

Ազգաբնակչությունը բաղկացած էր դասակարգերից: Ամենից բարձր կանգնած, արտոնված դասակարգերից (հոգևորականություն և զինվորություն) հետո գալիս էին թագավորի և ավատական իշխողների պաշտոնյաները: Նրանք բոլորովին ազատված չէին կոռ ու հարկից, բայց շատ թեթև չափով էին մասնակցում այդ պարտավորություններին: Նրանք կազմում էին բուրժուազայական կարգը, որ ներկայացնում էր բազմաթիվ աստիճաններ, ուներ ապահով եկամուտներ, չափավոր դաստիարակություն և, չափազանց ինքնագոհ, միշտ պարտավոր էր բարձրաձայն հայտարարելու իր գերազանցությունը այնպիսիների վրա, որոնք ապրում էին իրենց ձեռքի աշխատանքով: 11

Իսկ ձեռքի աշխատանքով ապրող մեծ դասակարգը արհեստավորներն էին: Յուրաքանչյուր արհեստի մարդիկ կազմում էին առանձին-առանձին խմբակցություններ, որոնցից յուրաքանչյուրն ուներ մի կամ մի քանի գլխավոր, որոնք պաշտպանում էին արհեստավորներին և նրանց շահերը: Նույնիսկ գողերն էլ ունեին իրենց արհեստակցական միությունը: Քաղդեայում արձնատակցությունները ավելի ուժեղ կազմակերպություն ունեին, քան Եգիպտոսում: Աշխատանքի պաշտպանության այս սխեման, ուրեմն, նույնն է, ինչ մեզանում հայտնի է «համբարություն» անունով:

Աշխատանքի դժնդակ պայմաններն էին անհրաժեշտ դարձնում այդ կազ-

մակերպութիւնները: Մարդը, ճմլվելով արհեստով հաց վաստակելու գործի ծանրութեան տակ, շարունակ հարստահարվելով, չէր մոռանում, որ իր սև ճակատագիրը ստեղծվել է հասարակական անարդար պայմաններից: Այդ դրութիւնը առաջացնում էր մտածողութիւն, որ և արտահայտվում էր գրականութեան մեջ: Բանվորական գրականութեան նախահայր կարող ենք անվանել եգիպտական մի հին գրավոր հիշատակարան, որ բանաստեղծական ոճով նկարագրում է աշխատավորի տանջանքները: Ահա մի նմուշ բանվորական գրականութեան այդ ամենահին երախայրիքից.<sup>12</sup>

«Ըստ Արքեպ շեմ տեսել, որ երկաթագործը դեսպան լինի, ոչ էլ ձուլի: Ը՝ առաքելութիւն կատարող: Բայց ինչ տեսել եմ՝ մետաղագործն է իր աշխատանքին, իր հնոցի երախին, մատները կոշտացած, ինչպես կոկորդիլոսի կաշի և ձկնկիթից էլ վալելի հոտած: Ամեն տեսակ արհեստավոր, որ դուր է գործածում (հյուսն, փայտագործ), ավելի քիչ է շարժվում, քան նա, ով բրիչ է քանեցնում. առաջինը գործ ունի փայտի հետ, երկրորդը՝ մետաղի հետ. մինչդեռ այն մեկը ազատ է գիշերը, այս մեկը ձեռքերով գործում է գիշերը ավելի, քան որքան ցերեկն է աշխատել, որովհետև գիշերը իր տանն է աշխատում լապտերի լույսով:

«Քարտաշը, որ որոնում է զանազան քարերի գործ, երբ արդեն մի որևէ քան շահել և իր բազուկները հոգնել են, կանգ է առնում. բայց եթե արևածագին իր գործը չէ շարունակում, նրա սրունքները կապում են մեջքին:

«Սափրիչը, որ սափրում է մինչև երեկո և փողոցից փողոց է շրջում գործ որոնելու, հազիվ ստքի վրա մի բան ուտել է կարողանում. եթե նա քաջ է իր արհեստի մեջ, նրա բազուկները լցնում են նրա փորը, ինչպես մեղուն կերակրվում է ըստ իր աշխատասիրութեան:

«Քեզ ասե՛մ որմնադիրը որքան է շարշարվում. բոլոր քամիների տակ է նա, մինչդեռ աշխատում է առանց հազուտի, միայն մի գոտի կապած, և քանի որ դեռ նրանից շատ հեռու է լոտոսի փունջը, որ կպցնում են ավարտած տների վերին ծայրին՝, նրա երկու բազուկները մաշվում են աշխատանքի մեջ. նրա կերածը խառն ի խուռն փսուրների հետ, նա ինքն իրան ուտում է, որովհետև նրա հացը իր մատների մեջ է ու բոլորովին հոգնում է: Նա շատ ուժասպառ է լինում, որովհետև անդադար մի կույտ պիտի քարշ տա այս և այն շինութեան մեջ, մի կույտ՝ տասը կանգուն բարձրութեամբ և վեց կանգուն լայնութեամբ, միշտ մի այդպիսի կույտ պիտի քարշ տա տեղից տեղ, մինչև որ այդպես հասնե տան ամենաբարձր ծայրին, ուր կպցնում են ավարտած տան լոտոսը: Երբ աշխատանքը բոլորովին վերջացած է, եթե հացունի, վերադառնում է տուն, ուր իր երեխաները բավական ծեծ են կերել իր բացակայութեան միջոցին:

«Ջուլհակը տներում կանանցից էլ վատ դրութեան մեջ է. պպած, ծրնկներն ստամոքսին կպցրած, չէ կարողանում շնչել. եթե օրվա մեջ դանդաղեցնում է գործվածքը, դաշտի լոտոսի նման կապում են նրան և դռների պահապաններին հաց տալով է միայն թուլություն ստանում լույսը տեսնելու:

«Ներկարարի մատներն էլ հոտած են ձկնկիթի նման, երկու աչքերը հոգնածութեանից ծեծված, իր ձեռքը չէ դադարում գործելուց, և որովհետև իր ժամանակն անց է կացնում ծվաններ կտրտելով, իր հազուտը զվվելի դրութեան մեջ է:

<sup>1</sup> Եգիպտոսում սովորութիւն կար, որ պատրաստած վերջացրած տան վերին ճակատին կպցնում էին լոտոս բույսից կազմած մի փունջ:

«Գոշկակարը շատ դժբախտ է: Նա հավիտենապես տանջվում է. նրա առողջութիւնը ձու նետող ձկան առողջութեանն է. նա կրծոտում է կաշին: «Հացագործը հոնցում է, հացը դնում է թոնիր, գլխի վրա կախվում է թոնիրի մեջ և նրա որդին բռնում է ոտներից. եթե որդու ձեռքերից քաց ընկնին ոտները, նա զլորվում է բոցերի մեջ»:

Այս տանջանքների ցուցակը երկարացնում էր և հարկահանութիւնը: Եգիպտացին անթույլատրելի էր համարում առանց բռնի ստիպումների, առանց ծեծի ու ջարդի հարկ տալը: Ամեն անգամ, երբ պետք էր հավաքել հարկերը, ազգաբնակչութեան համար սկսվում էր ճգնաժամ: Օրերով տևում էին բողբոջները, սպառնալիքները, փայտով ծեծելը, պատժվողների ցավազին աղաղակները, նրանց կանանց և երեխաների լացն ու կոծը: Վերջանում էր գործողութիւնը, անցնում էր աղետը և խոնարհ ազգաբնակչութիւնը նորից գնում էր իր առօրյա աշխատանքներին:

Սակայն միշտ իր ճակատագրին հլու հնազանդ չէր արհեստավորների դասակարգը: Քաղցածութիւնը հաճախ հարկադրում էր նրան թողնել աշխատանքը և հրապարակ դուրս գալ պահանջներ անելու: Սովորութիւն էր, աշխատանքի վարձը ամսական վճարներով տալ: Բայց բանվորը հաճախ չէր կարողանում իր ստացածով ապրել մինչև ամսի վերջը: Նա դեռ գուցե կարողանար դիմանալ պակասութեան, եթե մեծակ ինքը լիներ: Բայց ընտանիքը, սոված երեխաները անհնարին էին դարձնում զրկանքներով համբերելը: Գործաթող արհեստավորները հավաքվում էին միասին, աղմուկով գնում էին քաղաքի հրապարակներից մեկն ու մեկը, ժողով կազմում: Սովորաբար ոստիկանութիւնը գալիս էր աղմկարարներին հանգստացնելու: Բայց նրանք ասում էին. «Մենք չենք վերադառնա աշխատանքի, հայտարարեցեք այս ձեր մեծավորներին, որոնք հավաքվել են այնտեղ»: Բանակցութիւնների հետևանքն այն էր լինում, որ աշխատանքի վարձը տրվում էր ամիսը երկու անգամ, կամ նույնիսկ շաբաթը մի անգամ: Բայց քաղցածութեան պատճառները դրանով չէին վերջանում: Եվ պատահում էր, որ բանվորները երկու կամ երեք հոծտոր ներկայացուցիչ ընտրելով ուղարկում էին խնդրվածքներ անելու: «Մենք ճնշված ենք քաղցից, — ասում էին նրանք, — մենք ճնշված ենք ծարավից, այլևս ճոժ չունենք, ձեռք չունենք, ձուկ չունենք, կանաչեղեն չունենք: Ուղարկեցե՛ք փարավոնին, մեր տիրոջը, ուղարկեցե՛ք թագավորին, մեր իշխանին, որ մեզ ապրելու միջոցներ տան»:

Հասարակ բանվորների դասակարգը, մեծագույն մասամբ, կազմվում էր անազատ մարդկանցից, ստրուկներից: Ստրուկութիւնը հին աշխարհում օրինականացած մի դրութիւն էր, որի անհրաժեշտութիւնը դարձնողը տնտեսութեան եղանակն էր: Ստրուկների ահագին բազմութիւնը հայթայթում էին պատերազմները, որոնց միջոցին հաղթողների ձեռքն ընկած գերիները վաճառվում էին հատուկ շուկաներում: Բացի պատերազմներից, ստրուկներ հայթայթվում էին և ավազակային միջոցներով: Մարդկանց գողանում էին ու ծախում: Սեռերի և հասակի խտրութիւն չկար: Ստրուկյան օրինականացրած դիրքն էլ հենց այդ շարժական սեփականութեան, ապրանքի հատկութեանն էր՝ ծախելու, գնելու, փոխելու կատարյալ ազատութեամբ<sup>3</sup>:

Սակայն ազատ մարդն էլ կարող էր իր հոժար կամքով ստրուկ դառնալ:

<sup>1</sup> Mespéro, t. I, p. 311—314.

<sup>2</sup> Ibid, t. II, p. 540.

<sup>3</sup> Այդ ամբողջ առևտրին վերջ դրվեց միայն 19-րդ դարում:

ծախել ինքն իրեն: Այդ պատահում էր հաճախ, մանավանդ երբ ազատ մարդը ստիպված էր լինում ուրիշի համար աշխատելով հաց վաստակել կամ երբ չէր հարողանում իր վերցրած պարտքը վճարել: Ուրիշի համար դաշտային կամ այլ տեսակի աշխատանք կատարել կարելի էր միայն ստրուկի դրուժյան մեջ, նույնիսկ եթե այդ աշխատանքը տևում էր մի քանի օր, մի քանի ամիս: Այդ ժամանակի ընթացքում ազատ մարդը ծախում էր իրեն, իր կյանքի մի մասը գործատիրոջ, իսկ պայմանաժամի լրանալուց հետո նորից ազատ մարդ էր դառնում:

Այսպես էր և այն դեպքերում, երբ պարտականը, չկարողանալով վճարել իր պարտքը, դառնում էր պարտատիրոջ ստրուկը և աշխատում էր նրա համար այնքան ժամանակ, որ պարտքը վճարված էր համարվում: Իսկ մի անգամ վերցրած պարտքը հեշտ չէր վճարել: Վաշխառութունը փոքրիկ տնտեսություններ քայքայող մի շարիք էր: Հարյուրի 20—25 տոկոս վերցնելը սովորական բան էր Քաղղեայում: Պարտքը հաճախ այնքան ծանր էր լինում, որ պարտականը զրկվելով իր անշարժ ու շարժական ստացվածքներից, պարտատիրոջ ստրուկն էր դառնում իր ամբողջ ընտանիքով: Ստրուկները, իբրև բանվորական ուժ, անհրաժեշտություն էին մանավանդ գյուղական տնտեսության մեջ: Այստեղ, գյուղում, ազգաբնակչության մեծագույն մասը համարվում էր ազատ հողագործ: Բայց նա սեփականատեր չէր, այլ մշակում էր հողը վարձակալության պայմանով: Նույնիսկ եթե գյուղացին կարողանում էր ձեռք բերել հող, այդ նրան իրավունք էր տալիս շահագործել միայն հողի մակերեսվելով: Բուն սեփականատերերը կամ աստվածներն էին հանձին իրենց տաճարների կամ թագավորները, կամ ավատական իշխողը: Գյուղացին վարձով հող էր վերցնում և իր հարևան գինվորից, որին պետությունը, ինչպես տեսանք, հողաբաժիններ էր հատկացնում ի վարձատրություն նրա ծառայության:

Գլխավորապես գյուղական ազգաբնակչության վրա էր ծանրանում պետական կոռու: Նեղոսի և Եփրատ-Տիգրիսի հովիտները իրենց առասպելական պողաբերության պարտական էին այդ մեծ փետերին, որոնք և պահանջում էին ազգաբնակչությունից հսկայական աշխատանք՝ իրենց հոսանքը կանոնավորելու, իրենցից վերցրած ջրանցքները պահել-պահպանելու համար: Եվ տա այդ հասարակական աշխատանքները կատարելու համար երկրի բոլոր կողմերից կանչվում էին աշխատող ձեռքեր իրենց անասուններով: Կարելի է ասել, որ այդ ժամանակ երկրի ազգաբնակչությունը մի կողմից մյուս կողմն էր տեղափոխվում: Աշխատանքները հաճախ շատ բարդ, շատ էլ երկարատև էին լինում: Եվ գյուղացի ժողովուրդը զրկվում էր իր համար աշխատելու հնարավորությունից:

Այդ ստիպողական աշխատանքների, այդ կոռերի լուծը անասելի ծանր էր Եգիպտոսում, ուր, ինչպես կտեսնենք հետո, մեծամեծ շինություններ կառուցանելու համար տարիներով տանջվում էր ամբողջ ազգաբնակչությունը:

Հին աշխարհին անծանոթ չէր և ճորտ գյուղացիությունը: Նրա գոյությունը ակնհայտ է գոնե Եգիպտոսում: Այդտեղ ստրուկները ամուսնանում էին ազատ դասակարգերին պատկանողների հետ: Այդ ամուսնություններից առաջ Եգիպտոսի սերունդները, մի քանի պորտից հետո, դառնում էին հողագործ գյուղացիներ, բայց արդեն ոչ թե ազատ, այլ ամրացրած հողին, որի հետ էլ նրանք մի տիրոջից անցնում էին մյուսին վաճառքի կամ բաշխման միջոցով:

### Գլուխ երրորդ

## Պ Ա Շ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք, Ի Ր Ա Վ Ո Ւ Ն Ք, Ա Ր Վ Ե Ս Տ Ե Ն Ի

1. ԿՐՈՆ: 2. ԻՐԱՎՈՒՆՔ: 3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: 4. ԱՐՎԵՍ:

1. Կրոն: Մեր օրերում էլ դեռ վայրենի կացության մեջ ապրող ժողովուրդների ամբողջ մտավոր գործունեությունն արտահայտվում է նրանց կրոնական հայացքների և հասկացողությունների մեջ: Սրանք վայրենի մարդու համար միաժամանակ և՛ կրոն են, և՛ փիլիսոփայություն, և՛ գիտություն, և՛ վայրենի մարդկությանը այսօր ներկայացնում է այն կացությունը, որի մեջ գտնվում էր քաղաքակիրթ մարդկությունը նախապատմական անհիշատակ ժամանակներում, մտավորապես քարե դարերի շրջանում: Այս իսկ պատճառով մեր ժամանակակից վայրենիները իրենց պաշտամունքներով մի հավաստի նյութ են, որի ուսումնասիրությունից գիտությունը կարող է դուրս բերել փոքր ի շատ հավանական եզրակացություններ, թե ինչպես առաջ եկան մարդկության մեջ հավատալիքները և զարգացման ինչ աստիճաններով անցան նրանք, մինչև որ պատմական շրջաններում հանդես եկան արդեն իբրև կազմակերպված համաշխարհային մեծ կրոններ, իրենց բարդ ու նուրբ աստվածաբանական սխտեմներով, փիլիսոփայությամբ, իրենց բազմաթիվ ծեսերով և առասպելներով:

Կրոնների պատմությունը գուցե միակ պատկերն է, որի մեջ մանրամասն ցուանում է այն վերին աստիճանի հետաքրքրական և ուսանելի տեսարանը, թե ինչպես են զարգանում գաղափարները մարդու մտավոր աշխարհում, ինչպես նրանք փոխանցվում են, կերպարանափոխություններ կրում, մասնավոր երևույթից բարձրանում են մինչև համաշխարհային դիրքը, թե ինչպես նրանք թափառում են մարդկության մեջ, ազդում են և ազդվում, տեղական գույներ և ինքնուրույն կերպարանքներ ընդունում, համաձայն ազգագրական և աշխարհագրական միջավայրերի: Կրոնները քաղաքակրթության ամենահզոր գործոններից մեկն են եղել և այսօր էլ դեռ կատարում են առաջնակարգ դեր մարդկության աճագին մեծամասնության համար: Կրոնի մասին ոչ մի հասկացողություն չունեցող ազգեր չեն եղել ոչ մի ժամանակ, անցյալում և ներկայում:

Այս մեծ նշանակությունը, այս քաղաքակրթական դերը, որ հրամայողական է եղել բոլոր ժամանակներում, պարտավորություն է դնում, գոնե հարևանների, ծանոթանալ կրոնական պաշտամունքների, եթե կարելի է այսպես ասել, սաղմնախոսության, ծննդաբանության և զարգացման գլխավոր երևույթներին: Եվ որովհետև յուրաքանչյուր կրոնի հոգին ու բովանդակու-

<sup>1</sup> Ратцев, «Народоведение», т. I, СПб, 1903, с. 38.

թյունը աստվածութեան գաղափարն է, ուստի և մենք, նախքան պատմական ազգերի կրօններին անցնելը, կհետևենք աստվածութեան գաղափարի էվոլյուցիային նախապատմական շրջաններում<sup>1</sup>:

**Ա. նախնիքների պաշտամունքը:** Աստվածութեան գաղափարի հիմքը մարդըն է: Պաշտելով մի աստծու կամ բազմաթիվ աստվածների, մարդը պաշտում է իրեն, իր բնութիւնը, ինչպես հասկանում է ինքն իրեն: Այս սկզբունքը շատ պարզ ցուցադրված է ամենահին, նախնական մարդու ըմբռնումների մեջ: Վայրենի մարդու խոհերը, հարկավ, ամենից առաջ իր կյանքի երևույթները պիտի կազմեն: Յերեկը նա արթուն է, շարժվում է, որսի է գնում, պատերազմում է թշնամիների դեմ: Գիշերը պառկած է իր խարույկի առջև, բայց թեև անշարժ է նրա մարմինը, այնուամենայնիվ նա քնի մեջ, երազում, նույնպես թափառում է, որս է անում, կովում է, հանդիպում է իր նմաններին, խոսքի է բռնվում նրանց հետ, նույնիսկ այնպիսիների հետ, որոնք մեռած են: Այս զարմանալի երևույթը կարող է բացատրության: Տան անդամները շատ լավ գիտեն, որ գիշերը նա ոչ մի տեղ չէ գնացել: Ի՞նչպես, ուրեմն, պատահեցին այն բոլոր բաները, որոնց նա ականատես էր քնած ժամանակ: Եվ վայրենին բացատրում է այնպես, որ ինքը բաղկացած է երկու մասից: Մի մասը մարմին է, միսից ու ոսկորներից կազմված, որ անշարժ քնած էր: Իսկ մյուսը՝ նրան չէ տեսնում մարդը, բայց նա կա ու ապրում է մարդու մեջ, գործում է և այն ժամանակ, երբ մարմինը անգործ է, նա է, որ որսի գնաց, կովեց ու խոսեց, հետո էլի վերադարձավ մարմնի մեջ:

Ի՞նչ է այդ աներևույթը: Վայրենին նրա ներկայությունը և՛ լսում է, և՛ զգում, բայց շոշափել նրան իր մատներով չէ կարող: Դա մարդու շունչն է: Ահա մարդը ծանր վիրավորված է կամ ուշաթափված: Շունչ չկա, նա հեռացել է մարմնից: Բայց ահա նա վերադարձավ և վիրավորված կամ ուշաթափված մարդը նորից կենդանացավ: Մեռավ մարդը. և շունչը դարձյալ հեռացավ, բայց ո՞ւր: Նա չէ կորչում, չէ ոչնչանում. բաժանումը ժամանակավոր է. շունչը պիտի նորից վերադառնա, նորից կենդանացնե:

Մարդու այս մյուս, անշոշափելի մասը, երկրորդ «ես»-ը, որ վայրենին տեսնում է շունչի մեջ, միայն շունչ չէ կոչվում, այլ և հոգի, ոգի: Վայրենի մարդու համար հոգին մարդու ճիշտ պատկերն է, բայց անյուրի: Դա կյանքի և մտքի աղբյուրն է այն անհատի համար, որի մեջ նա ապրում է: Շոգին ունի գիտակցություն և կամք, ընդունակ է թողնելու մարմինը, մի տեղից մյուս տեղ թռչելու: Նա կարող է ֆիզիկական կարողություն ցույց տալ և երևում է մարդկանց իրրև ուրվական, արթնության թե քնի մեջ, առանձին մնալով մարմնից, բայց պահպանելով նմանությունը նրա հետ: Նա ընդունակ է նույնպես մտնելու օտար մարմինների մեջ, մարդկանց և կենդանիների մարմնի մեջ, նմանապես և անշունչ առարկաների (քարի, փայտի) մեջ<sup>2</sup>: Ահա այս հոգու հետ վայրենին գործ ունի մանավանդ այն ընթացից, երբ մարդը մեռած է: Նրա վերաբերմունքը դեպի մահը դառնում է աղբյուր պաշտամունքների, աստվածացման:

Նկատվում են այդ վերաբերմունքի մեջ զարգացման երեք գլխավոր աստիճաններ: Առաջին աստիճանը ներկայացնում է ամենանախնական դրություն

<sup>1</sup> Գլխավոր աղբյուրները ա) Герберт Спенсер, «Основание социологии», 2 т., СПб, 1898, б) Эдуард Тейлор, «Антропология», СПб, 1908, в) Его же «Первобытная культура», 2 т., СПб, 1898, г) Проф. Грант-Аллен, «Эволюция идеи божества», 2 т., СПб, 1906, д) Максим Ковалевский, «Социология», 2 т., СПб, 1910.

<sup>2</sup> М. Ковалевский, «Социология», т. II, СПб, 1910, с. 231.

մեջ գտնվող մարդուն, որ համարյա ոչ մի տարբերություն չէ կարողանում դնել կյանքի և մահվան մեջ: Նա չէ կարողանում ըմբռնել մահը իբրև բնական անխուսափելի վախճան մարդ էակի համար: Գոյություն կովի նախնական կուպիտ և քոնդակ պայմաններում նա համարյա բոլորովին չէ տեսնում բնայտն մահ: Մարդը մեռնում է ամենից հաճախ կովի մեջ ստացած վերքերից կամ հիվանդությունից: Սերունդների դիտողությունները, փորձերը գոյություն չունեն վայրենու համար, նա պատմություն չգիտե, հիշողություն չունի: Ապրում է օրվա կյանքով. ճանաչողություն ունի միայն իր նեղ շրջանի, իր ապրած անկյունի մասին: Եվ մահը նրան ներկայանում է իբրև ժամանակավոր երևույթ. և նա հավատում է, թե մեռածը շարունակում է ապրել մարմնապես: Շունչը կամ ոգին հեռացել է, և մեռածին շրջապատողները կանչում են բարձր ձայնով, աղաղակում են, աղաչում են, պաղատում, որ ետ դառնա: Այս դիմումը ոգիների այն սկզբունքն է, որից զարգանում են ապագայում սուգն ու աղոթքները, երգման երգումները:

Գերեզման դեռ չկա: Մեռելի դիակը պահվում է խրճիթի մեջ, ապրողների հետ միասին: Կինը համբուրում է դիակը, ուտելիքներ է առաջարկում նրան: Բայց այս տեսակ պահպանության բոլոր անհարմարությունները ժամանակի ընթացքում շատ ակնհայտ են դառնում, և վայրենին միջոցներ է որոնում՝ նույնպիսի խնամքով և ապահովությամբ դիակի պահպանությունն իրագործել տանից դուրս և հեռու: Նա դնում է մեռելին ծառի վրա, բարձր տեղերում, ծովափին: Փտույթներից ազատելու համար դիակը փաթաթվում է կամ դրվում դազադի մեջ: Ազգականները, իհարկե, չեն մոռանում նրան և այդ դեպքում. կերակուր են տանում նրան, ընծաներ են մատուցանում: Իսկ երբ նեխվում է դիակը, նրա ժառանգը վերցնում է իր հետ կամ նրա գանգը, կամ ձեռքը, կամ մի քանի ողիներ: Մարմնի այդ մասերին (մասունքներին) ազգականները վերաբերվում են մեծ հարգանքով: Գանգը, օրինակ, դրվում է խրճիթի մուտքի ճակատին՝ իբրև պահպանություն, կամ թե ուղղակի կտրվում է ընտանիքի անդամներից մեկի կողքից: Այսպիսով մեռածը շարունակում է պահպանել իր ընտանիքը, գոշակելով նրա ապագան, հաղորդելով նրա անդամներին իր ուժն ու կարողությունը: Կովի գնացող վայրենին մանրում է մեռածի ոսկորի մի կտորը, խմում է ջրի հետ՝ քաջություն ստանալու համար: Ահա և մասունքների պաշտամունքի սկիզբը:

Դիակի պահպանության զանազան ձևերի թվում պետք է շեշտել զմուռմը, որ այնքան կատարելության հասավ հին Եգիպտոսում: Մումիան դիակապաշտության ամենաբարձր արտահայտությունն է: Նա միայն իր ժամանակակիցների երկրպագության առարկան չէր, այլ, մնալով անփուտ երկար դարերի ընթացքում, պաշտվում էր և շատ հեռավոր սերունդների կողմից: Նա ունի շինարարության հմայքը, սերունդների ավանդություններով նվիրագործված:

Եվ այսպես, այս առաջին աստիճանում, որ ցույց է տալիս մարդու վերաբերմունքը դեպի մեռածը, մենք տեսնում ենք պարզապես դիակապաշտություն: Մարդկային հանրակեցության նախնական ձևն է տիրապետում: Մարդիկ ապրում են առանձին-առանձին, ինքնավար ընտանիքներով, որոնք հպատակվում են իրենց մեծերին: Մեռնում է ընտանիքի գլուխը, նրա տեղը անցնում է մյուսը ըստ ավագության: Եվ այդ գլուխները, իրենց մահից հետո էլ, շարունակում են խնամել իրենց ընտանիքները: Եվ այդ պատճառով էլ նրանք ապրողների պաշտամունքն են: Ցուրաբանչուր ընտանիք հատուկ ծեսեր ու ընծաներ ունի իր մեռած մեծերին մատուցանելու, նրանց աչքը քաղց-



րացնելու համար: Եվ ծեսեր կատարողը, ընծաներ մատուցանողը տան կենդանի նահապետն է: Ուրեմն, նա ոչ միայն իշխող ու կարգադրող է տան մեջ, մի տեսակ ընտանեկան իրազավոր, այլև նվիրական ծեսեր կատարողն է, ընտանիքի կողմից մեռածի հետ հարաբերություն պահպանողը, միջնորդը, զոհ բերողը, մի խոսքով՝ քուրմը, քահանան:

Գեպի մեռելներն ունեցած այս վերաբերմունքը երկարատև էվոլյուցիայի միջոցով հասնում է երկրորդ աստիճանին: Այս շրջանի ամենախոշոր երևույթը դիակների թաղումն է, գերեզմանն է: Թաղվում են դիակները այրերի մեջ, որոնք, ինչպես հայտնի է, մարդկանց քնակարաններ էին: Ուր չկան քնական այրեր, այնտեղ կառուցվում են արհեստականները (Եգիպտոս): Իսկ ավելի տարածված և հանրամատչելի միջոցը հողի մեջ փոս փորելն է:

Թաղման գործողության մեջ նկատելի է մի առանձին հոգու՝ Մարդը ամեն ջանք գործ է դնում, որ դիակը ամուր ծածկված լինի, գերեզմանից դուրս գալու հնար չունենա: Գնելով դիակը փոսի մեջ, վայրենին հող է ածում նրա վրա և պարում է, որպեսզի ոտներով ամրապնդե հողը: Գերեզմանի վրա կամ մեծ քարեր են դրվում, կամ ամբողջ հողաթումբեր են բարձրացվում:

Վերաբերմունքը, ուրեմն, փոխվել է այն մտքով, որ հիմա մարդը վախենում է դիակից, ուզում է ազատվել նրանից, հավատում է, որ եթե մեռածը վերադառնա, թշվառություն և վնաս կբերե իր հետ: Պետք է ոչ միայն պինդ փակել նրան իր քնակարանի մեջ, այլև կատարել նրա պահանջները, հարգել ու պատվել նրան, որպեսզի չբարկանա ապրողների վրա: Մեռելը պիտի անպատճառ իր հաստատուն և ամուր կայարանն ունենա. անկացարան, անգերեզման մեռելի ոգին թափառում է շարացած. աշխատում է հանդիպել մարդկանց և վնասել նրանց<sup>1</sup>: Այստեղից՝ շար ոգիների հասկացողությունը:

Անշուշտ այս հավատալիքներն են մեծ դեր կատարել գերեզմանի գաղափարի մեջ: Մյուս կողմից շարունակվում է ընտանեկան պաշտամունքը: Ընտանիքը գերեզմանի մեջ բնակություն հաստատած իր գլխավորի, իր անդամի մասին նույն հոգսերն է անում, որպեսզի նրա կյանքն այնտեղ, գերեզմանում շարունակվի այնպես, ինչպես եղել է հողի վրա: Գնում են նրա մոտ, գերեզմանում, կերակուրներ, նրա զարդերն ու զենքերը, հագուստները, թաղում են նրա հետ նրա ծառաներին ու կանանց, նույնիսկ կառքը, նոսրեղը: Այդքանով չէ վերջանում ապրողների պարտականությունը դեպի մեռածը: Գերեզմաններին ընծաներ և ուտելիքներ են տանում, գերեզմանների վրա մարդ կամ անասուն են զոհում, որպեսզի թաղվածի ոգին կերակրվի այդ արյունով և զվարթանա: Ոգին սովորաբար գերեզմանում է ապրում, բայց նա անմարմին, սովորաբար մի էակ է և կարող է անցնել նույնիսկ ամենանեղ ծակերով: Նրա համար դժվարություն չկա գերեզմանից դուրս գալու և իրեն մատուցած ջնծաներն ու արյունը վայելելու: Ահա և զոհաբերության սկիզբը:

Գերեզմանի գաղափարի հետ կապվում է և այն հավատալիքը, թե մեռելը կարող է հարություն առնել: Հարություն առնել կարող են մեռելները և՛ հատկապես և՛ միասին, խմբով: Այս բանը հասկացվում է այնքան թանձրացած, իրական իմաստով, որ հայտնի դեպքերում միջոցներ են ձեռք առնում, որ հարություն առնողները խեղանդամ լինեն և չկարողանան վնասներ տալ: Պատերազմի դաշտում սպանված թշնամիներին թաղելիս՝ կտրում են նրանց

<sup>1</sup> Այս հասկացողությունները վերադարձող մեռելների վտանգի, անգերեզման ոգիների թափառումների մասին այսօր էլ դեռ ապրում են հայ ժողովրդի մեջ:

մատները, որպեսզի հարություն առնելուց հետո նրանք չկարողանան նետ ու աղեղ գործ ածել. կամ թե ցից են խրում դիակի մեջ՝ անդամալույծ դարձնելու համար:

Թաղման գաղափարին հասած մարդկությունը արդեն դիակներին չէ երկրպագում, այլ նրանց ոգիներին: Եվ այս պաշտամունքն էլ այլևս միայն նեղ ընտանեկան հանգամանք չունի: Կան գերեզմաններ, որոնք թեև մի ընտանիքի են պատկանում, բայց պաշտվում են շատ ընտանիքների կողմից: Համայնական ձևը փոխվել է: Այլևս առանձին ինքնավար ընտանիքները չեն համայնքի կերպարանքը բնորոշում: Անշատ ընտանիքները միացած են ընդհանուր ծագման, ազգակցության կապերով: Տիրում է տոհմային կազմակերպությունը, ցեղային սկզբունքը: Թեև յուրաքանչյուր ընտանիք դարձյալ ինքնավար է իր ներսում, բայց երբ ծագում են ընդհանուր հարցեր, ընտանիքների մեծերը միանում են, հպատակվում մեկին՝ գլխավորին, որ և այդպիսով ցեղի առաջնորդն է, շեյխն է: Եվ այսպիսով էլ ընտանեկան պաշտամունքների հետ առաջանում է ցեղային պաշտամունք: Ցեղի առաջնորդը, մեռելուց հետո, բոլոր ընտանիքների մեծարանքն է ստանում: Սա մի քայլ է դեպի պաշտամունքների ընդհանրացումը:

Ցեղային կազմակերպությունն էլ տեղի է տալիս ավելի ընդհանրական, ավելի ընդարձակ ձևին՝ պետության, որի գլուխը թագավորն էր: Եվ ընտանեկան ու ցեղային աստվածների վրա ավելանում է գլխավորը՝ պետությունը, ազգության ընդհանուր պաշտամունքը, թագավորի գերեզմանը: Որքան ուժեղ է մի մարդ այս աշխարհում, այնքան ավելի ուժեղ պիտի լինի նա, դուռնալով գերեզմանի քնակից, ոգի: Թագավորից բարձր ոչինչ չկա աշխարհում և նրա պաշտամունքից էլ բարձր ոչինչ չկա: Այս պաշտամունքի հմայքը մեծանում է, որքան շատ ժամանակ է անցնում գերեզմանի վրայով և որքան շատ ավանդություններ ու առասպելներ են ստեղծվում նրա շուրջը: Հնությունը խոշորացնում է մեռածի հատկությունները. նա շատ զորեղ է, նույնիսկ ամենակարող, նման է արեգակին, լուսնին, բնության մեծ երևույթներին: Այդ համազգային դուրսագնին, այդ առաջնակարգ աստվածության՝ ժողովրդի կողմից մեծարանքներ և ընծա, զոհեր է մատուցանում նրա հաշորդը, կենդանի թագավորը: Նա թագավոր է և քահանայապետ:

Գանք այժմ երկրորդ աստիճանին, որ բնորոշում է մարդու վերաբերմունքը դեպի մեռելները: Այս աստիճանին բոլոր ազգերը չեն հասնում, այլ միայն այնպիսիները, որոնք իրենց հասկացողություններով այնքան բարձր են հանդիսացել, որ մեռելների հարության տեղ՝ ընդգրկել են հոգու անմահության գաղափարը: Այս գաղափարի տեսակետից մարմինը, մահից հետո, ոչինչ նշանակություն այլևս չունի, ուստի և այրվում է կրակի վրա: Մարմնով հարություն և վերադարձ այս աշխարհը չկա: Հոգին անմահ է, անկախ՝ մահից անգիտության վանգվածից: Նա չէ վերադառնում, այլ անցնում է սովորների աշխարհը, մի առանձին աշխարհ, ուր, սակայն, կյանքը մարդկային է. այնտեղ էլ կա իշխանություն, թագավոր ու հպատակ: Սովորների այդ աշխարհը մտցնողը դարձյալ գերեզմանն էր, բայց նրա մեջ ամփոփվում էր այրված դիակից մնացած մոխիրը: Եվ որպեսզի սովորների աշխարհ մտնող ոգին անզոր ու անպաշտպան չլինի, այդ մոխրի հետ դնում էին գերեզմանում մեռածի զենքերն ու զարդերը, բայց արդեն կոտրատած: Հավատում էին, որ կոտրատած զենքեր այլևս իրական զենք չէ, այլ միայն զենքի ոգին:

Հոգու անմահության գաղափարը թեև բոլորովին տարբեր էր մեռելների

հարուստի գաղափարից, բայց կրոնների զարգացման ընթացքում այդ երկու հասկացողությունները շփոթվեցին, ձուլվեցին իրար հետ: Այսպես է, օրինակ, բրիստոնեոսության մեջ:

**Բ. գերեզմանի գործերը:** Գերեզմանների տեղը որոշելու համար նախնական մարդը գործ է ածում քարեր, սկզբում, իհարկե, բոլորովին անտաշ, կոպիտ բեկորներ: Բայց հետզհետե նրանք ընդունում են զանազան ձևեր, հետորզհետե ենթարկվում են արվեստին, տաշվում են, հղկվում են, զարդարվում են: Այսօրվա մեր գեղարվեստական գերեզմանաքարերը, հուշարձանները նախնական մարդու գործածած քարե կոպիտ բեկորների զարգացումն են:

Գերեզմանական քարերի հնագույն ձևերը շորս տեսակ են և ունեն իրենց հատուկ անունները գիտություն մեջ: Առաջին տեսակը կոչվում է մեհ հիբոսա ուղղաձիգ տնկված քար է, որի առջև մարդը մատուցանում է իր մեռած նախնիքներին ընծաներ, թափելով արյուն, կաթ ու մեղր: Այս ուղղաձիգ քարերին հետզհետե մարդու կերպարանք են սկսում տալ, երևի, մեռածին ներկայացնելու համար: Եվ ահա մենք ունենք մեր առջև քարե կուռքերի նախատիպը<sup>1</sup>: Երկրորդ տեսակի քարերը կոչվում են դոլմեն. սեղանաձև մեծ քարեր, առանց ծածկի: Այս տեսակ քարերի վրա էին զոհվում անասուններ (երբեմն և մարդիկ), որոնց արյունը պիտի մատուցվեր մեռածների ոգիներին: Սրանցից առաջացան զոհարհրության սեղանները, որոնք շինվում էին թե՛ տաճարներում և թե՛ բացօթյա: Երրորդ տեսակը կոչվում է կերն: Այս տեսակ քարերով երբեմն շրջապատված են լինում դոլմենները: Յուրաքանչյուր լճարդ, գալով երկրպագելու գերեզմանին, ի հիշատակ իր այցելության, մի քար էր դնում, և այսպիսով կազմվում էր քարակույտ<sup>2</sup>: Գերեզմանական այս տեսակ հուշարձանից առաջացած են համարվում բուրգերը Եգիպտոսում: Վերջապես շորորդ տեսակի քարերը կոչվում են կրոմլեխ: Այս տեսակ քարերից սրբազան մի շրջապատ էր շինվում գերեզմանների շուրջը: Տաճարների գաղափարը կարող էր այս սրբազան շրջապատից էլ դուրս գալ:

Քարերը, այսպիսի սրբազան նշանակություն ստանալով պաշտովոգ գերեզմանների վրա, խառնվում են հողիների պաշտամունքի մեջ և նույնպես դառնում են պաշտամունքի առարկա: Այս կերպով պաշտամունք է դառնում և փայտը, որովհետև գերեզմանի վրա ընկնում են և փայտի սյուներ, որոնցից առաջանում են փայտե կուռքերը: Սրբանում, պաշտամունք են դառնում և գերեզմանի վրա բուսած ծառը, բույսերը: Այսպիսով ծագում են ծառապաշտությունը, բուսապաշտությունը: Ծառապաշտության մի երևույթն են սրբազան անտառները, որոնք բաղկացած են ծառերի հայտնի տեսակներից, այնպիսիներից, որոնք պաշտամունք են դարձել՝ գերեզմանների վրա բուսած լինելու պատճառով:

Մասերի տերևների առաջացրած սոսափյունը նախնական մարդու համար նրանց մեջ ապրող ոգիների շշուներն է, խոսակցությունը: Եվ նա աշխատում է հատուկ արվեստի միջոցով (ծառահամայություն) հասկանալ այդ խորհրդավոր լեզուն, որի միջոցով կարելի է հարաբերություններ պահպանել նախնիքների

<sup>1</sup> Ուղղաձիգ գերեզմանաքարերը բրիստոնեոսության ժամանակ զարդարվում էին խաչի նշաններով և երկրպագության առարկա էին դառնում: Դրանք խաչքարերն են, որոնք շատ տարածված էին մանավանդ Հայաստանում:

<sup>2</sup> Մեզանում այժմ էլ կան ուխտատեղիներ, որոնք քարակույտեր են ներկայացնում, և յուրաքանչյուր ուխտավոր մի քար է գցում այդ կույտի վրա:

հետ: Մովսես Խորենացին<sup>1</sup> հիշում է Արմավիրի սրբազան անտառը, բաղկացած սոսիներից, որոնց տերևների շարժումները հմայության առարկա էին: Գերեզմանները սրբացնում և պաշտամունքի առարկա են դարձնում նաև այն ջրերը (աղբյուր, ջրհոր, գետակ), որոնք նրանց մոտ են գտնվում:

Այս պաշտամունքները միշտ այն հիմքն ունին, որ հողիները, ինչպես տեսանք, կարողություն ունին բնակվելու նաև քարերի, ծառերի, ջրերի մեջ: Նույն հողիները կարող են, իհարկե, ապրել և կենդանի մարդկանց մեջ: Այս հասկացողությունից առաջանում է աստվածամարդի գաղափարը: Աստվածացած թագավորների սերունդները այսպիսով աստվածային ծագում ունին և նրանք, կենդանության ժամանակ էլ, երկրպագության առարկաներ են: Եգիպտոսում փարավոնը, ինչպես տեսանք, աստվածություն էր իր կենդանության ժամանակ էլ: Ուրիշ տեղերում թագավորը կոչվում է երկնքի որդի, արեգակի կամ լուսնի եղբայր և այլն:

Բայց նույն հողիները բնակություն են հաստատում և կենդանիների մեջ: Այս հավատն էլ առաջացնում է կենդանիների պաշտամունքը: Այստեղ, ինչպես նաև բուսապաշտության մեջ, խոսում է այն հզոր կենսական սլզբունքն էլ, որ բույսերն ու կենդանիներն են մարդուն կերակրողները: Մարդը իր համար հատուկ անուններ է դարձնում կենդանիների անունները (մեզանում, օրինակ, Կորյուն, Եղնիկ, Այծեմնիկ, Մրջյունիկ): Մի հայտնի տեղում ավելի մեծ առատությամբ գտնվող բույսն ու կենդանին դառնում են այդտեղ ապրող մարդկության համար գոյության սկզբունք և, իբրև այդպիսին, համարվում են մի ցեղի, մի համայնքի սրբությունը (կոչվում է տոտեմ), որ և պաշտպանվում է զանազան ծեսերով, որպեսզի բուսական կամ կենդանական այդ ցեղը չսպառվի:

Գերեզմանների վրա էլ ստեղծվում է երկրագործության պաշտամունքը: Հող փորելը վայրենին սովորում է իր մեռելը թաղելու համար: Փորած հողը, որ ածվում է գերեզմանի վրա, մշակման գաղափարն է տալիս նախնական մարդուն: Փափկացած, վնասակար արմատներից ազատված հողը միաժամանակ պարարտանում է նրա վրա մորթված զոհերի արյունից, ճարպից, փորտից: Չոհերի հետ վայրենին իր նախնիքներին ընծա է բերում և իր գործածած հացահատիկներից: Դրանց մի մասն ընկնում է հողի վրա, բնույթ է չառատ: Մարդն արդեն գտել է վարուցանքի սկզբունքները: Ենթադրվում է, որ առաջին արտը գերեզմանն էր: Նա մարդու աչքում գերեզմանի մեջ ապրող ոգու գործն էր: Եվ որովհետև, երբ նա ընդարձակում է մշակության դաշտը, նրան հարկավոր է մի ոգի, որ բնակվի այդ դաշտի մեջ և հունձ տա, և ահա հատուկ այդ նպատակի համար պահվում են մարդիկ, որոնց պատիվներ են տալիս, պահում պահպանում են, ապա մորթում են և թաղում այն հողերի մեջ, որ պիտի մշակեն: Այս արարողությունը կատարվում է ամեն տարի, ցանքի ժամանակ: Եվ այստեղից առաջանում է հացի աստվածությունը, որ մեռնում և հարություն է առնում ամեն տարի: Նույն պաշտամունքն ունին և այն բույսերը (օրինակ, խաղողը), որոնց հյութը (գինի) առանձին հոգեկան դրություն է ստեղծում մարդու մեջ, գրգռելով նրա նյարդերը, ուժ ներշնչելով նրան: Այսպիսի աստվածության գաղափարը հատուկ էր հին կրոններից շատերին<sup>2</sup>:

Գերեզմանների պաշտամունքն ստեղծում, զարգացնում է և հատուկ պաշ-

<sup>1</sup> Գիրք Ա. է.:

<sup>2</sup> М. Брикнер, «Страдающий бог в религиях древнего мира», СПб, 1909.

տոնեութիւն՝ այդ պաշտամունքին սպասարկելու համար: Մենք տեսանք, որ ընտանիքի, ցեղի, պետութեան գլխավոր մեծածններին, այսինքն՝ աստվածութեան զոհեր մատուցանող քուրմն է: Թագավորապաշտութեան զարգացումը չէր կարող բավականանալ այդքանով: Թագավորական գերեզմանները միշտ պիտի ունենային իրենց նայող ու պահպանող մարդիկ: Այդ պահպաններից հետզհետե կազմվեց առանձին դասակարգ, որի պաշտոնն էր գերեզմաններին ընծաներ մատուցանել ամեն օր, երկրպագողները բերած ընծաներն ընդունել, նրանց կողմից դիմումներ անել աստվածներին: Քուրմերի դասակարգն է դա, որ հենց իր պաշտոնի բերմունքով ազդեցիկ դեր է ստանձնում իբրև ծիսակատար, իբրև աստվածների հետ հարաբերութիւն ունեցող, իբրև նրանց կամքի իրազման:

Քրմութիւնը աստվածութեան գաղափարի զարգացման մեջ արդեն այն մեծ շրջանն է, երբ ստեղծվում են կրոնական սիստեմներ, աստվածների ծնունդաբանութիւն, առասպելներ, դավանութիւններ, ծեսեր, մի խոսքով կրոնը այն կերպարանքի մեջ է, որ մենք տեսնում ենք գրավոր պատմութեան սկզբում:

Աստվածութեան գաղափարի էվոլյուցիայի այս պատկերը թերի կմնա, նթն մենք չհիշատակենք և այն, որ մարդը, ոգիների մասին հասկացողութեան չազմելուց հետո, սկսեց ոգիացնել և բնութիւնը: Շրջապատող բնութեան բոլոր երևույթները, մանավանդ խոշորները, ահեղները, որոնք հիացմունք և ահ էին ազդում, որոնց էութիւնը նա չէր հասկանում, բայց որոնց թողած ազդեցութիւնները տեսնում էր, առանձին-առանձին ոգիներ էին նրա համար, որոնց և երկրպագում էր: Բնութեան ամենամեծ երևույթը, որ մարդու երկրպագութեան առարկա դարձավ ամենահին ժամանակներից, լույսն էր, իբրև աղբյուր կյանքի և երջանկութեան: Լույսի մշտնջենական աղբյուրները Երկնային շուրջատուներն են— արեգակը, լուսինը, աստղերը: Ծվ դրանք, աստվածացնում են, ներկայացնելով իրենց մեջ բարի, շինարար, մարդուն բարեկամ սկզբունքներ, ոգիներ: Ուրիշ է լուսի հակապատկերը՝ խավարը: Նա վախեցնում է մարդուն, տանջանք ու մահ է և նրա մեջ ապրում են արդեն շար, քայքայիչ, խորտակող ոգիներ: Ծվ այսպիսով, ամբողջ բնութիւնը լցված էր ոգիներով, բարի և չար: Ոգիներին երկրպագող մարդը նրանց մեջ դնում էր դարձյալ մարդկային բնավորութիւն: Չար ոգիներից պաշտպանվելու և բարի ոգիներին իր օգնութեան կանչելու համար մարդը դիմում էր հմայութեան միջոցին:

**Գ. պատմական ազգերի կրոնը:** Աստվածութեան գաղափարի զարգացման այս պատկերը, որ մենք տվինք վերևում, հիմնվելով գիտութեան մեջ գոչութիւն ունեցող թեորիաների վրա, վերաբերվում է, ինչպես ասացինք, Նախապատմական, անգիր ժամանակներին:

Պատմութեան շրջանում, երբ քաղաքակրթութիւնը որոշ աստիճանի վրա է կանգնած և արդեն շատ նվաճումներ է արել ֆիզիկական և մտավոր աշխարհում, նախնական այն ձևերը այլևս տիրապետող չեն, այլ հազիվ միայն շոշափվող մնացորդներ են թողել: Այստեղ, պատմութեան լուսի մեջ, արդեն կազմակերպված բարդ կրոնական սիստեմներ են, որոնք գործում են իբրև քաղաքական մեծ ուժ: Նրանց մեջ խառնված են բազմաթիվ աստվածներ, որոնք դասակարգերի են բաժանված ըստ ավագութեան և ըստ ուժի. նրանց հիմնարկութիւնները պետական և հասարակական կյանքին ուղղութիւն տվողներ են: Պարզ նախնական ձևերից դուրս եկած և աստվածաբանական

նորը ու վերացական բացատրութիւնների, առասպելների, արարողութեանների մեջ ծրագրված պաշտամունքը այլևս հասկանալի չէ ժողովրդին իր ամբողջ էութեամբ, այլևս իսկական հալածող է, այլ քարացել է, դարձել ծիսակատարութեան, նախապաշտմունք, սահմանված և մանրամասն կանոնադրված արարողութիւնների մեքենական կատարումն:

Ինչպես առաջացան, հիմնավորվեցին և տիրապետական անսահման բոժ ստացան այդ կրոնական սիստեմները: Առաջին մեծ գործոնը այն բնակարանն է, որ հատկացվում է աստվածներին, այսինքն՝ տաճարը: Թագավորական իշխանութեան մասին պատմելիս մենք տեսանք, թե ինչ դեր էր կատարում տաճարը ազգային կազմակերպութեան մեջ: Նա ազգային միութեան գաղափարի մարմնացումն էր: Տեղային աստվածը տեղային քաղաքական ինքնուրույնութեան, ազգային բախտի և անկախութեան բարձր արտահայտութեան էր և նրա տունը հավաքում էր իր պատերի մեջ այն ամենը, ինչ կազմում է այս կամ այն պետութիւնը: Ուժի, համերաշխ գործակցութեան, համայնակաժողովների կենտրոնացման մի վայր:

Թագավորը, առաջին սրբազործող պաշտոնյա այդ հիմնաքլութեան մեջ, նրա գլխավոր հիմնադիրն ու բարեկամն է: Նա է շինում տաճարը և ապրիս է իր այդ դաստակերտին ոչ միայն արդ ու զարդ, կահ-կարասիք, ոչ միայն առօրյա կարիքների պահանջած մթերեղանք՝ ոլխաթ, եղ, թոշոմ, ձուկ, հաց, ըմպելիք, խունկ ու անուշահոտ յուղեր, այլև նվիրում է մշտական եկամուտներ բերող գանձեր, ստրուկներ, մշակված հողեր: Նվիրողի ժառանգը Թե՛ վերահաստատում է այդ շնորհաբաշխ պարգևները և թե՛ իր կողմից էլ նոր ընծաներ է ավելացնում: Ամեն հաղթական պատերազմ տաճարին բերում է նրա բաժինը ավարից ու գերիներից: Ամեն անգամ, երբ պետութեան մեջ կամ մասնավորապես արքայական ընտանիքում տեղի է ունենում մի բարեբախտ կամ դժբախտ դեպք, կրկնապատկվում էր տաճարին տրվող ընծան. բախտավոր դեպքի ժամանակ պետք էր շնորհակալութիւն մատուցանել աստծուն, իսկ դժբախտութեան ժամանակ պետք էր մեղմել նրա ցասումը: Ոսկին, արծաթը, պղինձը, թանկագին քարերն ու փայտերը գինգվում էին սրբազան մթերանոցներում, զաշտերն ավելանում էին դաշտերին, հոտերը՝ հոտերին, ստրուկները՝ ստրուկներին:

Սերունդներից սերունդներ դիզվող այս հարստութիւնները, անշոջու, կարող էին պետական (թագավորական) հարստութիւններն անգամ գերազանցել, եթե ժամանակ առ ժամանակ հարևան ժողովուրդները չհափշտակեին հողի կտորներ, իսկ թագավորներից մեկը, իր եկամուտների պակասութեան պատճառով, ձեռք չընէր սրբազան սեփականութիւնների վրա ու նրանց հաշվով չդրատեր իր դրամական գործերը: Այսպիսի հափշտակութիւնների գեմն առնելու համար տաճարը գործ էր դնում իր տրամադրութեան տակ եղած ամենաուժեղ միջոցը: Նա անեծքներ էր թափում ամեն մեկի վրա, ով կհամարձակվեր սրբապիղծ ձեռք բարձրացնել աստվածներին պատկանող նուրբիսկ ամենափոքր առարկաների վրա: Ծվ անեծքը, հոգեորականութեան արտոնութիւն, սանձում էր նույնիսկ աշխարհի հզորներին:

Տաճարը, ուրեմն, մեծ ուժ էր ամենից առաջ ձեռք այն պատճառով, որ խոշոր հարստութիւնների սեր էր: Այս հարստութիւնները շահագործող տաճարի պաշտոնեութիւնն էր, քրմութիւնը: Աստվածները, իհարկե, գեմ չէին,

<sup>1</sup> G. Maspero, „Histoire Ancienne des Peuples de l'Orient Classique“, t. I, p. 676—677.

որ իրենց գանձերը առևտրական ու փոխատուական գործողությունների միջոցով շահեցվեին: Եվ բուրմերը տերեր էին առևտրական հրապարակներում, տալով փող տոկոսով, տերեր, այն էլ խոշոր տերեր էին և գյուղատնտեսության մեջ, ուր նրանց կարգադրության տակ էին և վարձով տրվում էին հողեր, անասուններ, ստրուկներ, ուր նրանք ամբարում էին երկրի բերքերը: Աշխարհական մեծ ուժին համապատասխանում է և հոգևոր հեղինակությունը, որ համատարած է, որ իբրև տիրապետության ամենահզոր տեսակ՝ ծանրացած է ամենքի վրա, ճնշում ու տափակացնում է ամենքին և մրցության է դուրս գալիս նույնիսկ թագավորի իշխանության դեմ, անգամ այնպիսի թագավորի, որ աստվածություն է այս աշխարհում (Եգիպտոս):

Քրմությունը կազմում էր մի մեծ և բազմաթիվ դասակարգ, որ իր մեջ ուներ նվիրապետական ստորաբաժանումներ, ամենաբարձրից սկսած մինչև ամենացածրը: Դա եկեղեցու զինվորությունն էր, բանակը, որ զինված էր ընդ որ միջոցներով՝ մարդկությունը հպատակության մեջ պահելու համար: Յուրաքանչյուր տաճարին կից պարում էր նրա ամբողջ քրմական դասը, կազմելով վանական միաբանություններ, որոնք ենթարկված էին որոշ կանոնադրությունների և գտնվում էին գլխավոր քրմի հրամանների տակ: Յուրաքանչյուր քրմական ստորաբաժանում կատարում էր իր գործը: Մեկը զանազան խաբանական միջոցներով գուշակում էր մարդու ապագան, մյուսը՝ աստղերն էր դիտում և գործնական խրատներ տալիս գյուղական տնտեսության, ֆլանակի մասին, մի երրորդը բժշկում էր հիվանդներին, չորրորդը հանդիսավոր զոհաբերությունների պատրաստություններ էր տեսնում: Կային և կրոնական գրականության աշխատավորներ, աղոթքներ, օրհնություններ հորինողներ, աստվածների ծննդաբանությունը, տիեզերքի ստեղծագործությունը բացատրողներ, բարձր աստվածաբանության հեղինակներ:

Քրմական այս միջավայրում էր, ուրեմն, որ կրոնները որոշ սխտեմ ստացան: Այստեղ էր, որ ստեղծվեցին, խմբագրվեցին ավանդությունները, նվիրական առասպելները (միթ): Ժողովրդի հոգեբանությունը քաջ ծանոթ էր այդ միջավայրին և ամեն ինչ արվում էր ժողովրդական ոգին, տրամադրությունները, աշխարհայացքները շահագործելու համար: Եգիպտոսում, բաշձր քրմության շրջաններում, չէին էլ հավատում բազմաստվածության. ընդունում էին, որ պետք է լինի մի հատիկ աստված: Բայց այդ հավատը թաքցվում էր ամբողջից և ամբողջի առջև նույն քրմությունը բոլոր եգիպտական աստվածներին էր երկրպագում, բոլոր աստվածների ծեսերն էր կատարում: Քրմությունը շատ լավ հասկացել էր, որ ամբողջ սիրում է խաբված լինել, և խաբում էր նրան:

Ասիական անսահման բռնակալության հարազատ ծնունդ քրմությունը իր իշխանությանն էլ, որ միաժամանակ աստվածների իշխանությունն էր, տալիս էր նույն բնավորությունը: Նա աշխարհական բռնակալության գաղափարախոսն էր ու աշխատակիցը, նվիրագործելով նրա սկզբունքները իր տաճարի և իր աստվածաբանական կառուցվածքների մեջ: Այստեղ աստվածները ներկայացվում էին միապետների նիստ ու կացով, կրթով ու քմահաճություններով: Նրանք կռվում են իրար հետ իշխանության համար, նույնիսկ սպանվում են, ինչպես Եգիպտոսի մեծ աստված Օզիրիսը, որին սպանեց եղբայրը՝ նրա թագավորությանը տիրանալու համար: Քաղաքացի աստվածներից մեկը՝ Նին-ժիրուս (Սինիր) շրջապատված էր բազմաթիվ երկրորդական աստվածներով,

որոնք ներկայացնում էին նրա ընտանիքն ու պալատը: Նա ուներ կին, յոթ երեխա, աստիկանություն, պատերազմի պաշտոնյաներ, հարեմի գլխավոր խորհրդական, սպասավոր, կառապան, թմբկահար, հովիվ, երգիչ և այլն: Եվ երբ այդ աստծուն տեղափոխում էին մի քաղաքից մյուս քաղաք, ամենից առաջ հոգս էին անում, որ ճանապարհին նա և իր հետևորդները ուտելիքներ ունենան<sup>1</sup>:

Այս վեհաշուք աստվածները, նրանց ֆանտաստիկ տոհմագրությունները, նրանց խորհրդավոր, մեծաշեն, զարդարուն բնակարանները խոր ազդեցություն էին անում ամենքի վրա: Քրմությունը ամեն շանք գործ էր դնում, որ բազմությունը ընկճվի, իր ամբողջ մտքով նվիրվի պաշտամունքներին: Այդ նպատակով նա կատարում էր շքեղ հանդեսներ, որոնց ժամանակ ինքը հագնում էր փառավոր, թանկագին զգեստներ, կատարում էր երկար ու խորհրդավոր ծեսերով զարդարված զոհաբերություններ. կազմում էր բազմաբազմ թափոռներ: Միայն տաճարները իրենց հսկայական շափերով, իրենց բազմատեսակ քաժանմունքներով, բարձր կամարների տակ տիրող խորհրդավոր կիսամթույլամբ որքա՞ն հափշտակում էին ժողովրդի պարզ հավատացող միտքն ու սիրտը: Եվ այդտեղ, այդ սրբատներում, խորհրդավոր արարողությունների միջոցին, միայն քուրմն ու թագավորն ունեին իրավունք մտնել այն սենյակները, որոնք հատկացված էին ամենաբարձր սրբություններին: Նկատենք, վերջապես, որ տաճարը միայն այնպիսի հոգևոր վեհություն էր չէր ազդում և գրավում, այլև մարմնավոր հաճույքներ հայթայթելով: Այսպես, Քաղդեայում, Իշթար աստվածուհու քրմահինները Կրիտասարդ և զեղեցիկ կանայք էին, որոնք իրենց մարմինը նվիրած էին աստվածուհուն և նրա ջերմեռանդ ուխտավորների հաճույքներին<sup>2</sup>: Տաճարների հովանու տակ էր նույնպես, որ տեղի էր ունենում օրհնքով նվիրագործված սրբազան պոռնկությունը: Ինքնըստինքյան հասկանալի պիտի լինի, որ այս բոլորը քրմական դասակարգի տիրապետությանն էր նպաստում՝ ոչ միայն ապահովելով նրա մեծ հեղինակությունը, այլև նշանավոր եկամուտներ ավելացնելով այն մեծ հարստություններին, որոնք դիված էին սրբազան մթերանոցներում:

Կարիք չկա, որ մենք մանրամասն ծանոթանանք հին աշխարհի բոլոր կրոնական սխտեմներին: Դրանք ունին և՛ տեղական գունավորումներ, և՛ ընդհանուր նմանություններ և այս վերջինները բացատրվում են ոչ միայն փոխառումներով, որ մի ազգ անում էր մյուսից, այլև այն համատարած երևույթով, որ մարդկային բնավորությունը մի է ամեն տեղ, անկախ ցեղից ու բնակած տեղից, ուստի և բոլոր կրոնական հավատալիքների մեջ նկատվում են միանգամայն բնական նմանություններ<sup>3</sup>: Մենք կբավականանանք մի քանի հատկանշական գծեր հիշատակելով, որոնք զանազան ժամանակներում զարգացած դավանական սկզբունքների հին աղբյուրներն են ցույց տալիս:

Պաշտվում է, ինչպես ասացինք, աստվածների մի մեծ բազմություն: Յուրաքանչյուր Երկիր ունի իր տեղական մեծ երևույթները, որոնք աստվածացվում են: Եգիպտոսում Նեղոսն է պաշտվում, որովհետև առանց նրան կյանք չէ կարող լինել այդ երկրում: Քաղդեայում երկինքը, շուրթը, հողը աստվածություններ են, ինչպես նաև մոլորակները, ուստի և այդտեղ զարգացած է աստղաբաշխությունը: Թվել բոլոր աստվածությունները, համարյա թե անկարելի է, որովհետև նրանք շատ են, բաժանված զանազան կարգերի, պաշտվում են

<sup>1</sup> A. Dufourcq, „Histoire Comparée des Religions Païennes“, Paris, 1908, p. 73.

<sup>2</sup> Maspero, Hist. t. I, p. 557.

<sup>3</sup> M. Ковалевский, «Социология», т. 2, стр. 220.

<sup>1</sup> L. Chachoin, „Les Religions“, Alger, 1910, p. 254.

մի երկրի զանազան կողմերում զանազան կերպով: Ահա այդ բազմություն մեզ կարգ ու աստիճաններ հաստատելու համար քրմական աստվածաբանությունը դարերի ընթացքում գոյություն առած ավանդություններից ու առասպելներից որոշ չափով ամբողջական սխտեմներ է ստեղծում: Աստվածներին նա հավատում է խմբերի մեջ, հաստատում է նրանց համար սոցիալաբանական կապեր, ծննդաբանություն է հաստատում:

Այդ դասավորման մեջ մենք նկատում ենք հրրորդական սկզբունքը: Սովորաբար երեքների խմբերը կազմվում են այսպես. «հայր, կին, որդի»: Եզիպտոսից վեց զվարավոր քաղաքներում պաշտվում են երրորդություններ, որոնք տարբեր անուններ ունին<sup>1</sup>: Այսպիսով չկա ամբողջ երկրի համար ընդհանուր, ամենազվարավոր աստվածություն: Երրորդության սխտեմ գոյություն ունի և Քաղզեայում: Զանազանությունը երկու երկրների պաշտամունքի մեջ գուցե միայն այն է, որ միեղնեա Քաղզեայում երրորդության յուրաքանչյուր անձ առանձին ու ինքնուրույն աստվածություն է, Եզիպտոսում, ընդհակառակն, երեք անձնավորությունները մի աստվածություն են մարմնացնում<sup>2</sup>:

Մենդաբերությունը բարձր, հրաշալի էականների մեջ միշտ սովորական, մարդկային կարգով չի կատարվում: Աշխարհի զանազան ազգերի մեջ տարածված են հավատալիքներ և հրաշալի, գերբնական ծնունդների մասին: Հրաշքը կայանում է նրա մեջ, որ կույսերն էլ կարող են ծնել Կրեխա: Հավատում են որ այս դեպքում հղիացնողի դեր կատարում են զանազան սրբազան առարկաներ՝ քարը, ջուրը և այլն: Կույս աղջիկը, նույնիսկ երեխայության հասակից դուրս չեկած, մտնելով ջրի մեջ, դուրս է գալիս այնտեղից հղիացած, — այսպես է պատմում ավանդությունը: Կույս մայրերի պաշտամունքն էլ հին է առասպելաբանությունների մեջ<sup>3</sup>:

Աստվածները միայն նրա համար չէին, որ բարություն անեն անխտիր բոլոր մարդկանց, պահպանեն ու պաշտպանեն ամբողջ աշխարհը: Նրանք են ստեղծել ամբողջ տիեզերքը, նրանց է պատկանում ամեն ինչ տիեզերքում և նրանք էլ բարձրագույն դատավորներն են, պատժում են, ինչպես և փարձատրում են: Այս աշխարհում դատում են նրա փոխանորդներն ու ներկայացուցիչները, թագավորներն ու ջուրմերը, իսկ անդրգերեզմանական կյանքում դատաստանը կատարում են արդեն իրենք աստվածներն անձամբ: Բոլոր հոգիները կանգնում են նրանց ահեղ դատաստանի առջև: Դատական նյութը այն գործերն են, որոնք կատարվել են այս աշխարհում: Մարդու մի մասը դիակի ձևով մնում է այս աշխարհում, իսկ մյուս մասը գնում է հոգիների աշխարհը՝ հաշիվ և պատասխան տալու մարդու արածների մասին: Իսկ այդ արածները կրոնը բաժանել է երկու տեսակի. մեղք, անարդարություն և բարիք, արդարություն: Հատուցումը այդ երկու տեսակի համար նույն կրոնը սահմանել է այսպես. մեղքերի համար՝ դժոխք, լի սարսափներով և զարհուրելի տանջանքներով, իսկ արդարության համար՝ երանական վիճակ, արքայություն: Ահեղ դատաստանի առջև դատվողի գործը շահելու համար կրոնը մի շարք միջոցներ ունի: Տաճարը կատարում է հատուկ ծեսեր, զոհաբերություններ, ստանում է դատվողի ազգականներից տուրքեր և կամավոր նվերներ:

Բացի դրանից, դատող աստվածների մոտ կան միջնորդներ, բարեխոսներ: Դրանք մարդիկ են, որոնք նման շեն սովորական մարդկանց շերտերն են,

որոնք մեծագործություններ են արել, բարերարել են իրենց երկիրը անձնական քաղաքամբ և այլ առաքինություններով, ուստի արժանացել են ժողովրդի երախտագիտության և առանձին համարում ունին աստվածների մոտ: Մրանց է գիմում երկիրը ընդհանուր դժբախտությունների ժամանակ, և սրանք են, որ իրեցնում են աստվածների բարկությունը, փոխել են տալիս նրանց վճիռները: Այդ բարեխոս հերոսները, այդ սուրբերը պաշտվում են Կրեխում, իրեն աստվածների համարումը վաշխողներ, պաշտվում են և նրանց երջախարհերը, մասունքները. ամեն մեկը՝ անհատ թե բազմություն, գյուղ թե քաղաք, դրանցից մեկին է ընտրում իր պաշտպան և խնամակալ<sup>4</sup>:

Բարի գործերը, որոնց համար հոգիները վարձատրվում են մյուս աշխարհում, միայն տաճարներին մատուցած ծառայությունները չեն, միայն քրդական ծեսերի կատարումը չէ: Կրոնի բարոյախոսությունն աշխատում է մեղմացնել այն անհավասարության հետևանքները, որ օրինակահանաքած է այս աշխարհում և որի օրինակահանաքն ողջ հենց ինքը կրոնն է: Ոչ մի տեղ չկա օրենք, որ պարտավորեցնե, օրինակ, ունևորին իր սեփականությունը բաժանել շուրհեղների մեջ: Ընդհակառակն, օրենքը ամենայն խստությամբ պաշտպանում էր սեփականությունը: Բայց մարդկության ընդգրկած եսամոլության և անձնական երջանկության հետևանքները մեղմելու և զրկվածներին, թշվառներին ապրելու հնարավորություն տալու համար՝ կրոնը իրեն մյուս աշխարհում, ահեղ դատարանի առաջ վարձատրվող առաքինություն էր հրատարակում այն, որ մարդը առհասարակ լավություն անի իր նմանին և մասնավորապես բաժին հանն շունեցողին իր ստացվածքից, խնայել թուլին, տկարին:

Իս գլխարտության, բարեգործության սկզբունքն է. Եվ այս հիմնարկությունը մենք տեսնում ենք գեա Եզիպտոսում: Ամենահին ժամանակներից մնացած գրավոր հիշատակարաններում պարունակվում են խրատներ ու պատվերներ, թե ինչպես պետք է ապրել բարի և առաքինի լինելու համար: Իշխողները, թագավորները զարդարում էին իրենց ոչ միայն հզորություն, ուժ և մեծություն ցույց տվող, այլև բարեխոս, աղքատախնամ տիտղոսներով: Բարի գործերը արձանագրվում էին գերեզմանների վրա այն դիմումների մեջ, որոնք մեծածնների լեզվից ուղղված էին դեպի դատավոր աստվածները: «Ես հաց եմ տվել քաղցածին, — կարդացվում է այդ արձանագրություններից մեկի մեջ. — հազուաու եմ տվել մերկին, ջուր եմ տվել ծարավին. մեղանշական ոչինչ չկա իմ մեջ»: Մի ուրիշ իշխանավոր ցուցադրում է, որ ինքը խնամել է այրիներին, շահազանց չէ բանեցրել ստրուկներին, որ իր ժամանակ չէ եղել թշվառություն իր երկրում, նույնիսկ սովի տարիներում: Մի երրորդը պարծենում է, որ իր երկրում շարիք, հիվանդություն, պակասություն, տանջանք չէ եղել: Բարեգործության աշխարհի ցույցեր գտնվում են և Քաղզեայում: Նույնիսկ Ասորեստանի արլունուշտ ըռնակալները թվում էին իրենց արած բարերարությունները:

Քաղզեա-եզիպտական աշխարհի կրոնական ավանդությունները և բարոյական օրենսդրությունները, ինչպես ապացուցել է դիտությունը, մեծ ազդեցություն են արել հրեական ազգի կրոնական հայացքների վրա: Իսկ հրեությունը տվել է մի համաշխարհային կրոն, որ քրիստոնեությունն է, ինչպես և աղբյուրներ ու նյութեր է տվել մյուս սեմական համաշխարհային կրոնի խառմին:

<sup>1</sup> Chachoin, p. 234.

<sup>2</sup> Dufourcq, p. 55.

<sup>3</sup> P. Saintyves, «Les Vierges Mères et les Naissances Miraculeuses», Paris, 1908.

<sup>4</sup> P. Saintyves, «Les Saints Successeurs des Dieux», Paris, 1909, ch. I.

<sup>5</sup> L. Lallemand, «Hist. de la Charité», t. I, Paris, 1902, p. 81.

2. Իրավունք: Մարդկանց հանրակեցութիւնը ստեղծում է հարաբերութիւններ թե՛ անհատների մեջ փոխադարձաբար և թե՛ անհատների ու համայնքի մեջ: Այդ հարաբերութիւնները դառնում են սոցիոլոգիայի: Երկնային չէ կարելի քաղաքակրթութիւնը որևէ աստիճան, լինի նա նույնիսկ ամենացածր, որի վրա կանգնած մարդկութիւնը արդեն մշակած չլինի անհատների ու համայնքի իրավունքներն ու պարտավորութիւնները: Որքան պարզ են կյանքի պայմանները, այնքան նախնական են հարաբերութիւններ որոշող սովորութեան կանոնները: Բայց որքան զարգանում է կոլտուրական կյանքը, այնքան բարդվում են փոխհարաբերութիւնները և այնքան էլ, հետևաբար, բարդվում են իրավական կարգերը: Սովորույթը, ժողովրդական անգիր, ավանդական օրենսդրութիւնը, այլևս չէ կարողանում պահպանել իր մեջ այդ բարդութիւնները, և նրա տեղը բռնում է գրավոր օրենսդրութիւնը: Սովորույթը դառնում է նրա համար աղբյուր, բայց միևնույն ժամանակ և հակադրում է նրան իր պահպանողականութիւնը: Նա ունի իր մեջ հին, քարացած ձևեր, միևնույն կյանքը առաջ գնալով ստիպում է այդ պահանջներին համապատասխանող նոր կարգեր սահմանել: Սա առաջադիմութիւն ամենամեծ նշաններից մեկն է:

Նախնական համայնքների մեջ սովորույթի մշակած օրենքները գործադրվում են այդ համայնքների մեծերի ձեռքով: Մենք տեսանք, որ այդ մեծերը միայն մարմնավոր իշխաններ չեն, այլև միաժամանակ հոգևոր: Դատել, արդարութեան գործ կատարել՝ այս էլ կրոնական մի գործողութիւն է: Կրոնը կանոնադրում է բարոյական հասկացողութիւններ, որոնց տեսակետից էլ արդար հարաբերութիւններ են հաստատվում մարդկանց մեջ: Աստվածները բարձրագույն դատավորներ են իրենց ստեղծած աշխարհի համար և այս աշխարհում կատարում են իրենց դերը իրենց ներկայացուցիչների՝ թագավորների և քահանաների ձեռքով: Չկա կրոնական սիստեմ, որ դավանական ու ծիսական հրահանգութիւնների հետ շտա և իրավական սկզբունքներ կամ ամբողջ օրենսդրութիւններ, որոնցով որոշվում են մարդկանց իրավունքներն ու պարտականութիւնները: Նրանք պետք է բարձր բարոյական հեղինակութիւն լինեն, պարտադիր ամենքի՝ մեծի ու փոքրի, գորեղի ու թուլի համար և այդ պատճառով ներկայացվում են իբրև աստվածների հորինվածք, գրված նրանց ձեռքով կամ առնվազն թելադրված նրանց բերանով:

Ամենահին գրավոր օրենսդրութիւնը, որ հասել է մեզ, խմբագրված է Քրիստոսից մոտ 2000 տարի առաջ<sup>1</sup>: Դա Բաբելոնի թագավոր Համմուրաբի օրենսդրութիւնն է, որ, ինչպես արդեն գիտենք, գտնված է 1902-ին, Շոշ մայրաքաղաքի ավերակներում: Այս ամենահին հիշատակարանը ճշանավոր է շատ կողմերով: Նա վերին աստիճանի հետաքրքրական նյութեր է տալիս պատկերացնելու համար մեզանից 4000 տարի առաջ գոյութիւն ունեցած հասարակական կազմը, մարդկանց բարդ հարաբերութիւնները, հասարակական բարբերը, տղնտեսական պայմանները և այլն: Բայց հրահանգիչը այն է մանավանդ, որ Համմուրաբի գծագրած օրենսդրական սկզբունքներից շատերը գտնվում են և աշխարհի զանազան կողմերում, հազարավոր տարիներից հետո, բոլորովին ուրիշ ծագում ունեցող, ուրիշ քաղաքակրթութիւն ներկայացուցիչ ազգերի

<sup>1</sup> Բայց սա չէ նշանակում, թե այդ թվականից առաջ չկային գրված օրենքներ: Վերջին հետազոտական գյուտերը ենթադրել են առիթ, որ դեռ Մարգոն Հինի ժամանակ (3800 տարի Ք. մ.) գոյութիւն են ունեցել մարդկանց հաղաբերութիւնները կարգավորող օրենքներ (De Morgan, „Les Prem. Civ.“, p. 245).

մեջ<sup>1</sup>, օրինակ, միջնադարյան Եվրոպան, Ռուսաստանը: Ապացուցվում է նույնպէս, որ բիբլիական օրենսդրութիւնը, այն՝ որ մինչև վերջերս ամենահինն էր համարվում, կրում է իր վրա Համմուրաբի օրենսդրութիւն խիստ ազդեցութիւնը: Բայց ոչ մասնագետ մարդն էլ, կարդալով Բաբելոնի այս օրենսդրութիւնը, հեշտութեամբ կգտնեն նրա մեջ այնպիսի կարգեր և հասկացողութիւններ, որոնք այսօր էլ ապրում են Արևելքում իբրև սովորույթի իրավունք: Այս պատճառով Համմուրաբի օրենսդրութիւնը ամենայնպէս պատմական վավերագիրն է, որի մեջ պատկերացած է առհասարակ այն իրականութիւնը, որ երկար դարերի ընթացքում տիրում էր և այսօր էլ դեռ կա Արևելքում:

Օրենսդրութիւնն արձանագրված է սեպագրերով մի մեծ քարի վրա, որի ճակատին նկարված է ինքը թագավորը, որ ընդունում է այդ օրենսդրութիւնը արեգակի աստծուց: Առաջաբանը պատմում է, թե ինչպես Բաբելոնի մեծ աստվածները հորինեցին այդ օրենքները, որպեսզի «բարիք արվի մարդկանց, ջնջվի վատն ու շարք, արգելվի հզորներին վնասել թուլերին և որպեսզի նա երևա մարդկանց ինչպես արեգակ, լուսավորեց երկիրը»<sup>2</sup>:

Մեր առջև բացվում է մի ավատական երկրի և հատկապես երկրագործ մի ժողովրդի համար գրված մի պատժագիրք, բաղկացած 282 հոդվածներից և մի ընդարձակ վերջաբանից, որի մեջ դարձյալ աստվածների կամքն ու հաճութիւնն է ցուցադրված: Մենք տեսնում ենք կանոնավոր դատարան՝ պատասխանատու դատավորով և դատավարական ձևականութիւններով: Մարդկանց մեջ պայմանադրութիւնները ձևակերպվում են գրավոր կապակցութիւնների մեջ, կան վկաներ, կան հրապարակով ապացուցելու, մեղադրելու և արդարանալու սկզբունքներ: Պաշտոնով հանցանք գործող դատավորը (եթե, օրինակ, ոչնչացնում է իր մի անգամ դրած վճիռը) հեռացվում է դատարանից և դուրս է գցվում դատավորների կարգից: Երդումը մեծ դեր է կատարում, կան դեպքեր, երբ ամբողջ դատը վերջանում է մի երդումով:

Օրենքը պահպանում է հասարակութեան մեջ գոյութիւն ունեցող կարգը: Իսկ այդ կարգի հիմնաքարերն են մասնավոր սեփականութիւնը և դասակարգային խտրութիւնները: Կան բարձր ծագում և ստոր ծագում ունեցողներ, կան ստրուկներ, կա և «մուշկիւնու» անունով մի առանձին դասակարգ, որ թե՛ ազատութիւններ վայելող քաղաքացի է և թե՛ նրանից ցած մի բան: Այս սոցիալական բաժանումները առանձին-առանձին իրավունքներ վայելող և առանձին-առանձին պարտավորութիւններ ունեցող տարրեր են օրենքի առաջ: Մի ստրուկ սպանել, թե մի ազատ մարդ՝ միևնույն չէ. միևնույն չէ պատիժը և այն դեպքում, երբ ոճրագործը բարձր դասից է թե ստորին:

Ժողովրդական հարստութեան գլխավոր աղբյուրը հողն էր: Եվ օրենքը առանձին ուշադրութիւն էր դարձնում այդ աղբյուրի շահագործման կանոնավորութեան վրա: Նա իր պաշտպանութեան տակ էր առնում մշակված դաշտերը: Մշակողը պարտավոր էր հող տանել, որ դաշտերի ոռոգումը կանոնավոր կերպով լինի, որ ջրանցքները, ամբարտակները լավ պահվին և հարևանը չվնասե հարևանին իր անփութ վերաբերմունքով դեպի ջրերի մատակարարումը: Վարձակալը պարտավոր էր անմշակ շրջաններ վերցրած հողերը: Զբո-

<sup>1</sup> M. Кулишер, «Основы уголовного, гражданского и торгового права 4000 лет назад» («Русское богатство», 1909, № 8).  
<sup>2</sup> De Morgan, „Les Prem. Civ.“, p. 274.  
<sup>3</sup> V. Scheil, „La loi de Hammourabi“, p. I.



կանքների և վնասների հատուցում՝ ահա ինչ էր սահմանում օրենքը տնտեսական այս հարաբերությունների մեջ:

Ձինվորական դասակարգը, ինչպես տեսանք, հողատիրական առանձին պայմանների մեջ էր, որոնք բնորոշում են ավատական կազմակերպությունը: Ձինվորը իրավունք չունի ծախել այն հողը և այն անասունները, որոնք տարվում էին նրան պետությունից: Նա չէր կարող նույնպես անմշակ թողնել իր դաշտերը: Եվ այդ պատճառով, երբ նա կոչվում էր ծառայության, մի ուրիշը վերցնում էր հողը մշակելու և վերադարձնում էր զինվորականին, երբ սա նորից գալիս էր իր բնակության տեղը: Ձինվորական ավարը կարող էր անցնել միայն զինվորի ժառանգին, որ պիտի շարունակեր զինվորական պարտավորությունները հանդեպ պետության: Ուստի երբ պատերազմում մեռնում էր կամ զերի էր վերցվում արու ժառանգ չունեցող զինվորականը, նրա հողաբաժինն անցնում էր մի ուրիշին:

Համաձայն օրենսդրությունը առաջին գրավոր հիշատակարանն է, որի մեջ իր որոշ իրավական դրույթները հանդես է գալիս հին աշխարհի խառնուրդի միջնադարյան ստրկությունը: Սեփականատիրոջ իրավունքն էր ծախել իր ստրուկին, ազատություն տալ նրան: Փոխած ստրուկին սեփականատիրոջ ֆերագործնողը ստանում էր վարձատրություն: Իսկ ով աշակցում էր ստրուկի փախուստին կամ թաքցնում էր փախածին, նրան սպանում էր մահվան պատիժը:

Օրենքը սահմանում էր և ժամանակավոր ստրկության պայմանները: Այսպես, տրամադրվում էր, որ երբ մի մարդ չէ կարողանում հատուցանել իր հարեաններին հասցրած վնասները, այդ դեպքում պետք էր ծախել նրան և նրա գույքը փողով և բաժանել այդ փողը վնասվածների մեջ: Նույնպես նախատեսված է, որ երբ պարտքի տակ ընկած մի մարդ տալիս է իր կնոջը, տղային և աղջկան պարտատիրոջը, այս դեպքում վաճառված ընտանիքը միայն երեք տարի պիտի ծառայեր պարտատիրոջը, շորորդ տարում նա պիտի ազատվեր: Նույնպես կա և այն դեպքը, որ երբ ամուսինը չէ ուզում արձակել իր անհնազանդ, անտնարար կնոջը, կարող է նոր կին վերցնել, իսկ անհնազանդին պահել իբրև ստրկուհի:

Կնոջ դրույթները Համաձայն օրենսդրության մեջ լուսարանված է բազմակողմանի կերպով: Ամուսնության կարգը այսպիսի կերպարանք է ներկայացնում: Նշանադրության միջոցին փեսան տալիս է իր անկողնի մի հարյուր տուրք: Սակայն սա չէ ցույց տալիս, թե աղջիկը ծախվում էր: Աղջկա հայրը տալիս էր օժիտ, որ ամուսնական կյանքի ընթացքում կնոջ սեփականությունն էր կազմում: Փեսան ընծաներ էր տալիս նշանածին թե՛ հարսանիքի ժամանակ և թե՛ նրանից հետո:

Կնոջ դրույթները ամուսնու տանը բավական բարձր է և պատվավոր: Ամուսնու մահից հետո նա է դառնում տան գլխավորը և երեխաները պարտավոր են հնազանդվել նրան: Կինը իր բաժինը և ստացվածքով պատասխանատու չէ ամուսնու այն պարտքի համար, որ արված է առանց նրա մասնակցության: Օրենքը նկատի ունի միակնություն: Երկրորդ կին ամուսինը կարող է բերել միայն այն դեպքում, երբ առաջին կինը չբեր է: Սակայն չբերության տված այս իրավունքը սահմանափակելու համար թույլատրվում էր, որ չբեր կինը մի ստրկուհի գնե և տա իր ամուսնուն՝ երեխաներ ունենալու համար: Ստրկուհին եթե ծնում էր, դրանով իր դրույթներից չէր ազատվում, օրինավոր կին չէր դառնում: Իսկ եթե չէր ծնում, տանտիրակինը ծախում էր նրան: Բայց

դրանից, որդեծնության համար ամուսինը կարող էր և հարձեր պահել ազատ դասակարգից:

Կնոջ հավատարմությունը պահպանվում էր անողոր խստությամբ: Եթե, —ասում է օրենքը, — մի մարդու կին փոխվել է մի ուրիշ մարդու անկողնում, երկուսին կապում են և ջուրը պղծում: Հանցավորները կարող էին ազատվել այդ պատժից միայն այն դեպքում, երբ կնոջը ներում էր ամուսինը, իսկ ազամարդուն՝ թագավորը: Պատիժը խիստ է առհասարակ, երբ հանցանքը բռնված է տեղի ու տեղը: Կասկածը նույնպես ընդունվում էր, բայց երբ կասկածվող կինը երդվում էր, թե ինքը անմեղ է, նրան վերադարձնում էին իր ամուսնուն: Սաստիկ պատժվում էր արյունախառնությունը: Եթե մի կին քրոնիկ հիվանդություն ունի, ամուսինը կարող է մի ուրիշ կին բերել, բայց հիվանդ կնոջ չէ կարող հեռացնել և վերջինիս կամքից է կախված՝ մնալ ամուսնու տանը կամ հեռանալ:

Ամուսնալուծությունը թույլատրվում էր ոչ միայն անհավատարմության դեպքում, այլև երբ կինը տնտեսություն վարել չգիտեր, կովարար էր, տնաքանդ: Տղամարդու իրավունքը շատ մեծ էր այս դեպքում: Նա կարող էր ասել, թե արձակում է կնոջը և կինը արձակվում էր: Իսկ եթե ամուսինը համաձայն չէր, որ արձակվածը հեռանար իր տանից, այն ժամանակ կինը դառնում էր ստրկուհի նրա տանը: Բայց տնարար, հնազանդ կինը, երբ չէր ուզում ապրել իր ամուսնու հետ, այն ժամանակ քննվում էին նրա բողոքները և եթե մարդն էր անհավատարիմ, իր կնոջն արհամարհող, այդ դեպքում իրավունքը կնոջն էր և նա կարող էր ուրիշ ամուսին ընտրել: Կնոջ անտնարարությունը, շարունակությունը պատժվում էր և ավելի խիստ շահերով: Նրան կարելի էր և ջուրը պղծել: Ուրիշ մարդու գնալու նպատակով իր ամուսնուն սպանել տվող կինը կախաղան էր հանվում:

Ժառանգության օրենքները կնոջը փսպառ չէին զրկում ժառանգելու իրավունքից: Եթե կինը իր հորից օժիտ չէր ստացել, նրա մահից հետո ստանում էր նրա կարողության մի մասը, հավասար իր եղբայրների բաժնին: Անգամակ կնոջ օժիտը, մահից հետո, անցնում էր նրա եղբայրներին<sup>1</sup>:

Ինչպես տեսանք, ազատ մարդը կարող էր զավակներ ունենալ ստրկուհուց: Բայց այսպիսի զավակները ժառանգական իրավունք ստանում էին միայն այն դեպքում, երբ հայրը նրանց իր որդիներն էր համարում: Եթե ոչ, հոր մահից հետո, ստրկուհին և նրանից ծնված երեխաները հեռացվում էին տանից և ժառանգությունն անցնում էր օրինավոր կնոջից ծնված որդիներին: Սակայն օրենքը չէր էլ թույլ տալիս, որ նրանք իրենց մյուս եղբայրների ժառանգները դառնան:

Տղամարդը կարող էր որդեգրել և բուրդովին օտար երեխաների: Եթե մի հայր հարձից ծնված իր աղջկան չէ ամուսնացրել և օժիտ չէ տվել, նրա ժառանգները պարտավոր էին այդ աղջկան իրենց ժառանգությունից օժիտ տալ:

Այս համառոտ տեսությունը ցույց է տալիս, թե Քրիստոսից 2000 տարի սուաչ կյանքը Եփրատ-Տիգրիսյան հովտում որքան բարդ ու նուրբ իրավական հարցեր ու դրույթներ էր ընդգրկում: Միայն այս հանգամանքը բավական է հասկանալու համար, թե քաղաքակրթության մակերևույթը որքան բարձր էր: Այսպիսի մի վիճակի մեջ առևտրական աշխարհն էլ, բնականաբար, պիտի ունենար իր բարդ հարաբերությունները՝ տոկոսների հարց, շրջուն գործակատարների պարտավորություններ, դրամ և այլ արժեքավոր իրեր փոխադրե-

<sup>1</sup> Այսպես էր և հայոց իրավունքի մեջ (Մխիթար Գոշի դատաստանագիրք, Գլ. 28Բ):

լու պայմաններ, գրավ, հատուցում: Այս բոլոր պարագաներն էլ նույնպես նախատեսում և կարգավորում էր Համաժողովրդի օրենսդրությունը: Մոռացված չէին և արհեստավորները: Նրանց օրավարձը կանոնավորելու համար օրենքը մեկիկ-մեկիկ հիշատակում էր, թե յուրաքանչյուր արհեստին պատկանող աշխատավորը որքան վարձ պիտի ստանա:

Գալով պատժական միջոցներին, մենք նախ և առաջ տեսնում ենք «ակն ընդ ակն, ատամն ընդ ատաման» սկզբունքի ընդարձակ, բառացի կիրառությունը: Եթե մեկը թափում էր մի ազատ մարդու աչքը, նրա աչքն էլ հանում էին, եթե կտրում էր նրա անդամներից մեկը, կտրում էին և նրա անդամներից մեկը: Եթե որդին խփում էր հորը, կտրում էին ձեռքերը, եթե մեկը իր երեխային տալիս էր դաշակի և երեխան մեռնում էր նրա ձեռքին և եթե այդ դաշակը ծիծ էր տալիս մի ուրիշ երեխայի՝ առանց հոր ու մոր թույլտվության, այս դեպքում կտրում էին այդ դաշակի ծծերը: Եթե մեկը ծեծում էր մի ազատ մարդու աղջկան և վիժման պատճառ էր դառնում, նա ենթարկվում էր տուգանքի՝ իսկ եթե այդ աղջիկը մեռնում էր, այն ժամանակ սպանում էին ծեծողի աղջկան:

Ավագակություն անողը տեղն ու տեղը մահվան էր դատապարտվում: Եթե ավագակը չէր բռնվում, նրա ձեռքով թալանված մարդը աստծու առաջ երդվելով հաստատում էր, թե ինչ է կորցրել և այն քաղաքը, այն գյուղը, որի հողերի սահմաններում կատարվել էր ավագակությունը, տալիս էր թալանվածին այն ամենը, ինչ նա կորցրել էր<sup>1</sup>:

Գատաստանը երբեմն կատարվում էր սաստիկ արագ, տեղն ու տեղը: Այսպես, եթե մեկը գնում էր հրդեհ հանգցնելու և գողանում էր հրդեհված տան իրերից, նրան բռնում էին և գցում նույն հրդեհի բոցերի մեջ: Եթե մեկը ծակում էր մի տուն (գողություն համար), նրան սպանում էին և թաղում այդ ծակի դիմաց: Պատիժների մեջ կար և կրակի վրա այրելը: Այսպես, եթե մի քրմուհի մտներ գինետուն՝ խմելու համար, նրան այրում էին: Գինեվաճառը, եթե իմաց չտար իշխանությանը, որ իր տանը աղմուկ կա, ենթարկվում էր մահվան պատժի:

Հետաքրքրական է օրենքի վերաբերմունքը դեպի բժիշկները: Բժիշկը, եթե բժշկական միջոցներով առողջացնում էր հիվանդին, ստանում էր սահմանված վարձատրություն: Իսկ եթե նա դարմանում էր մի ազատ մարդու ծանր վերքը բրոնզե նշտրակով և մեռցնում էր հիվանդին, կամ եթե աչքի սպիտակ բիծը հանում էր պղնձե նշտրակով և թափում էր աչքի լույսը, այս դեպքում կտրվում էին բժշկի ձեռքերը: Այսպես և անասնաբույժը: Եթե նրա բժշկության հետևանքով սատկում էր մի անասուն, նա պետք է տար անասունի գինը: Եթե ճարտարապետը լավ և ամուր շէր շինում տունը և շինությունը քանդվում էր, այն ժամանակ առաջանում էին այսպիսի հետևանքներ, եթե փլատակները տակ թաղվում էր տան տերը, պետք էր սպանել ճարտարապետին: Եթե սպանվողը տան տիրոջ երեխան էր, պետք էր սպանել ճարտարապետի երեխային: Եթե սպանվողը ստրուկն էր, ճարտարապետը պիտի ստրուկի փոխարեն ստրուկ տար տանտիրոջը: Իսկ եթե շարժական կայքն էր փշացել, ճարտարապետը պարտավոր էր իր փողով առնել բոլորը և տալ տան տիրոջը:

Փոխարինմանների պայմանով են և անասուններ, նավակ և այլն վարձելու օրենքները:

<sup>1</sup> Այս սովորությունը լայն տարածված էր միջնադարյան Եվրոպայում և այսօր իր գոյությունը պահպանում է Պարսկաստանում:

Ստրուկի գործով էլ վերջանում է աշխարհի այս ամենահին գրավոր օրենսդրությունը, որի վերջին, 282 հոդվածն ասում է. «Եթե մի ստրուկ ապում է իր տիրոջը՝ դու իմ տերը չես, տերը արդարադատության առջև ապացուցում է, որ նա իր ստրուկն է և կտրում է նրա ականջը»:

Ասորեստանը, ժառանգորդ հանդիսանալով Քաղթեայի քաղաքակրթության, յուրացրեց և նրա օրենսդրությունը, բայց իր կողմից էլ հավելումներ արավ նրա մեջ, հարմարվելով թե՛ իր ժամանակների և թե՛ իր ինքնուրույն պետական և աշխարհագրական պայմաններին: Այս օրենքների հատակտորները երևում են զանազան առիթներով կազմված պայմանագրերի, առևտրական և իրավաբանական վավերագրերի մեջ, ուր առարկան կամ շարժական և անշարժ գույքերի առուծախն է, կամ դաշտերի մշակումը կամ վարձակալությունը<sup>1</sup>:

**3. Գրականություն:** Գրերի գյուտով մարդկությունը թողնում է բերանացի, բանավոր հաղորդակցության նախնական, շափազանց երկարատև, բյուրավոր դարերով շափվող անհայտ ու մութ շրջանը: Գյուտը տվել է մարդուն գրեր, նա գործ է ածում այդ գրերը քարի, աղյուսի, բուլսից շինած նյութի, կաշու վրա: Նա, ուրեմն, գրքեր ունի, գրականության տեր է դարձել: Այդտեղ, գրականության մեջ, նա արձանագրում է իր կյանքի դեպքերը, իր արած գյուտերը, որոնք բնությունը հասկանալու և բնության օրենքները շահագործելու սկզբունքն են կրում: Այդտեղ արձանագրում է նաև իր մտքի աշխատանքը իր հոգեկան աշխարհի վերաբերմամբ, իր արվեստը, որ արտահայտվում է ստեղծագործող խոսքի միջոցով:

Գրում է մարդը: Եվ այդ իսկ օրից, երբ նա գործիք ունի իր ձեռքին՝ նշանագրերի միջոցով իր միտքը դրոշմելու համար, այդ օրից էլ սկսվում է նրա քաղաքակրթական այդ մեծ ստացվածքի պատմությունը՝ գրականության պատմությունը: Բայց այս պատմությունը ունի իր առջև գրավոր հիշատակարաններ, որոնց մեջ մարդու ստեղծագործությունն արդեն բավական զարգացած է, բանաստեղծության այլ և այլ ճյուղերն է ներկայացնում: Այստեղ էլ, ուրեմն, նույն երևույթը, ինչ տեսանք մարդկային կյանքի բոլոր սպարեզներում: Անհիշելի դարերի անթիվ սերունդներ աշխատել են և գրակա նություն վրա, որ նույնպես սաղմնային դրությունից առաջանալով, զարգացման աստիճաններ էր անցել մինչև գրավոր արտահայտության ժամանակներին հասնելը:

Գրականության պատմությունն էլ, ինչպես կուլտուրայի ամեն մի ճյուղի պատմություն, փորձեր է անում թափանցելու նախապատմական ժամանակների խորքերը, որպեսզի կարողանա լուսավորել գրականության սաղմնախոսությունը և ցածից վեր տանող սանդուղքները: Մութ են ժամանակները և այդ պատճառով չէ կարելի ճիշտ ու անսխալ որոշումներ ձևակերպել: Դարձյալ ազգագրությունը, նախնական դրությունից դեռ դուրս չելած ցեղերը և ժողովրդական բանահյուսությունն են, որ հավանական ենթադրությունների, թեոթիաների հող են պատրաստում:

Բանավոր արվեստը, իբրև մարդկային լեզվի գործ, ամենից առաջ այդ լեզվի հարցն է շոշափում: Անպատճառ հարկավոր չէ, որ մենք իմանանք, թե մարդը ինչպես սովորեց խոսելը: Անկարելի է այսպիսի մի հարց շոշափել առանց ենթադրությունների սահմանների մեջ պարփակված մնալու: Գիտենք միայն, որ մարդը բոլոր կենդանիներից ավելի է օժտված հանրակեցության

<sup>1</sup> J. Menant, „La Bibliothèque du Palais de Ninive“. Paris, 1880, p. 70—71.

ունազդով: Այս բնազդը հետևում է իհարկե, և անհրաժեշտության երկաթե օրենքի, որ ստիպում է մարդուն ապրել խմբական կազմով, համայնական սկզբունքով, որպեսզի կարելի լինի միահամուռ ուժերով ու փոխադարձ աջակցությամբ հաջողեցնել կռիվը բնության արգելքների և թշնամիների դեմ: Այդ հանրակեցական եղանակը կարիք է ստեղծում իրար միտք հասկացնելու, ուրեմն զարգացնում է խոսքի ընդունակությունը<sup>1</sup>:

Մարդկային լեզուն օրգանական կյանք ունեցող երևույթ է, բայց նա ընդհանուր և միանման օրենք չէ ամբողջ մարդկության համար: Հավաքական համաժամով կյանքից դուրս նա էլ ունի մասնավոր, անհատական կյանք: Իվ այս անհատականությունը բխում է լեզվի հիմնական հատկությունից, որ ձևավակերպվում է այսպես.— լեզու է ժողովրդական հոգևրանության արտահայտությունն է<sup>2</sup>: Իվ որովհետև յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր ուրույն հոգեբանությունը, որ կազմվում է նրա կյանքի առանձնահատկություններից՝ նրա պատմական միջավայրում, ուստի յուրաքանչյուր լեզու կրում է իր մեջ ինքնուրույն հոգեբանական սկզբունքներ: Այս հանգամանքը գեղարվեստորեն պատկերացրել է մի ռուս բանաստեղծ, ասելով. «Լեզուն ժողովրդի խոստովանությունն է. նրա մեջ լսվում է ժողովրդի բնությունը, ժողովրդի հոգին և հարազատ կենցաղը»: Իվ իրավ, այս կամ այն ժողովրդի տեղական առանձնահատուկ կենցաղի երևույթներից ոչ հասկացողություններից են կազմում լեզվի բառերը, արտահայտության ձևերը<sup>3</sup>: Տեղական ազգային մտապատկերները, զգացողություններն են լեզվի հոգեբանական կառուցվածքի խարխուլները:

Յուրաքանչյուր լեզու ունի իր մեջ այնպիսի տարրեր, որոնցից կազմվում է գեղարվեստականություն. այսպես են պատկերավորումը, քնարականությունը, շափականությունը: Այս հատկություններն էլ բանավոր արվեստի, բանաստեղծության անհրաժեշտ տարրերն են: Մի լեզու, եթե զուրկ լինի այս հատկություններից, չէ կարող բանաստեղծություն արտադրել և խորթ կմնա նույնիսկ օտար լեզուների արտադրած բանաստեղծություն: Լեզուն բանաստեղծության համար նյութ չէ միայն, այլև նրա օրգանն է, ինչպես աչքը տեսողության համար, ականջը՝ լսողության համար: Եթե մի մարդ կարողանում է կազմել մի կամ մի քանի նախադասություն, որոնց մեջ լեզվի, գեղարվեստական տարրերը համախմբված են հաջող կերպով, արտահայտված են ուժեղ, նշանակում է, որ այդ մարդը բանաստեղծություն է անում: Բանաստեղծությունն, ուրեմն, ամենից առաջ այն լեզվի փաստն է, որով արտահայտվում է<sup>4</sup>:

Այսպիսով ահա ինչպես յուրաքանչյուր լեզու, այնպես էլ նրանով արտահայտվող բանաստեղծությունը ուժեղ հոգեբանական անհատականություն է ներկայացնում, ունի ազգային ինքնուրույն գունավորում: Այս է բոլոր գրականությունների ամենաբնորոշ հատկությունը: Ստեղծագործությունը հատուկ է մարդկային հոգուն և նրա աղբյուրները, նրա օրենքները նույնն են ամեն տեղ: Բայց ժողովրդական հոգեբանությունը ազգայնացնում է այդ ստեղծագործական պրոցեսը իր արտահայտության, այն է՝ լեզվի միջոցով: Գրականությունները կրում են իրենց վրա ազգային խոր դրոշմ:

<sup>1</sup> Корш, «Всеобщая история литературы», т. I, СПб, 1880, с. 69.  
<sup>2</sup> Проф. Зелинский, «Вильгельм Вундт и психология языка» («Из жизни идей», т. II, СПб, 1911).  
<sup>3</sup> Ibid, с. 36—40.  
<sup>4</sup> Проф. Овсяннико-Куликовский, «Лингвистическая теория происхождения искусства и эволюция языка» («Вопросы теории и психологии творчества», Харьков, 1911, с. 20—22).

Գիտելով այժմ ստեղծագործության, մենք տեսնում ենք, որ նա ամենահին ժամանակներից ընդգրկած է շափական ձևը, ոտանավորի ձևը: Չափական ձևը արձակ ձևից հնագույն է համարվում և ունի երեք գլխավոր բաժանումներ՝ վեպ (էպոս), դրամա, քնարերգություն (լիրիկա): Ինչպես են ծնվել դրանք և ո՞րն է ամենից հինը:

Այս հարցի վերաբերմամբ գոյություն ունեն մի քանի թեորիաներ: Մինչդեռ ոմանք կարծում են, թե վեպն է ամենահինը, կան և այնպիսիները<sup>1</sup>, որոնք ազգագրության հայթայթած նյութերի վրա հիմնում են այն տեսությունը, թե ամենահին ժամանակներում բանաստեղծության այդ երեք ճյուղերն էլ միախառնված էին մի ընդհանուր ձևի մեջ և հետո միայն սկսեցին բաժանվել իրարից:

Որքան ցած է քաղաքակրթության աստիճանը, այնքան քիչ է շեղված անհատի անձնավորությունը համայնքի մեջ: Նախնական մարդը ամենից առաջ դրսի աշխարհի երևույթներից է ազդվում, այդ երևույթների արտադրությունն է ընդգրկում, ապա միայն իր ներքին աշխարհի, իր «եսի» արտահայտությունները: Անհատը ձուլված է համայնքի մեջ, թեև իր առանձնահատկություններով, այնուամենայնիվ, տարբերվում է իր համայնակիցներից: Գործերը կատարվում են խմբերով, համայնքը ապրում է մի ընդհանուր կշանքով: Նա կատարում է զանազան ծեսեր, որոնց մեջ մասնակցողները որոշ դերեր ու դիրքեր ունեն: Այս ծեսերը, իհարկե, կրոնական գունավորում ունեն, թեև շոշափում են կյանքի զանազան երևույթները, օրինակ՝ հարսանիք, պատերազմ և այլն: Արդեն հայտնի է մեզ, որ նախնական հասկացողություններով կյանքի մեջ ոչինչ չկա, որ աստվածների անմիջական կարգադրության տակ չլինի: Համայնական ծեսերը մտքի, զգացմունքի, տրամադրության, խորհրդանշանների (սիմբոլի) զանազան ձևերով են կատարվում: Այդտեղ կա և՛ զգացմունք, և՛ երգ, կա խաղ, պար, դեմքի շարժումներ (միմիկա), մնջախաղություն (պանտոմիմ), նվագ: Ընդհանուր առմամբ՝ դա ծիսական ներկայացում է, դրամատիկական արվեստ, բայց նրա մեջ բաղկացուցիչ մասերն են վեպը, քնարերգությունը:

Ինչպես էլ, սակայն, եղած լինի բանաստեղծության երեք ճյուղերի սկզբնական կերպարանքը, մենք պետք է մի հասկացողություն կազմենք, թե ինչ տեսակ պայմաններից կարող էին ծնվել նրանք. որիչ խոսքերով՝ մարդու ինչ տեսակ հոգեկան դրությունների էին նրանք բավականություն տալիս: Գրամատիկական արվեստի մասին չէ կարող մի ուրիշ միջավայր լինել, բացի նրանից, որ բացատրեցինք վերևում— այն է՝ համայնական ծեսերը: Բայց վնպի և քնարերգության համար որիչ պայմաններ էլ պիտի որոնենք:

Վեպի միջավայրը հենց այն դրությունն է, երբ համայնական բնազդները տիրապետող են, տեղ չթողնելով անհատականության զարգացման համար: Համայնքի, ցեղի, ազգի շահն է տիրում, և նրան ենթարկված է ամեն մի անհատ: Այդ մեծ համախմբումների հավաքական մտածման, կենսական երևույթների արտահայտությունները կերպարանավորվում են զանազան տեսակ վրույցների, պատմվածքների մեջ, որոնք և մշակվում են, գեղարվեստական ձև են ընդունում համայնական ճաշակի համաձայն և համայնքի գործածության համար: Մշակումը, գեղարվեստականացումը, իհարկե, մի անհատի ձեռքով է կատարվում, անհատի հեղինակությունն է: Բայց հեղինակի անունը

<sup>1</sup> Ռուս գիտնական Ա. Վեպուվսկի (տե՛ս «Вопросы теории психологии творчества», т. II, в. I, СПб, 1909).

չկա, չէ հիշվում, որովհետեւ մի ուրիշ անհատ, ցեղի ամեն մի անդամ կարող էր բոլորովին նույն կերպով հեղինակել: Եվ բացի դրանից, հեղինակը մի մեծ բան չէր համարում իր գործը, համայնական գրույցներին բանաստեղծական ձև տալը:

Եվ այսպիսով հեղինակը ինքը ժողովուրդն է: Զրույցի, պատմվածքի մեջ անձնականություն չկա, բովանդակությունը՝ ժողովրդական-կենցաղական է: Այսպես և վեպը, էպոսը: Ինչպես ժողովուրդը հասկանում է բնության արտաքին աշխարհի երևույթները, այդպես էլ վեպը վերարտադրում է այդ հասկացողությունները, այնպես որ նրա մեջ դրված է գեղարվեստական ճշմարտությունը, մի հատկություն, որ արվեստի էությունն է կազմում:

Համայնական, հետևաբար և գերազանցորեն ոչ-անձնական, առարկայական (օբյեկտիվ) արտահայտության ձևը իրականացնող վեպը ի՛նչ նյութ կարող է մշակել, եթե ոչ նույն համայնքի կենցաղավարության երևույթները, որոնք քաղաքակրթության որոշ աստիճանների վրա տիրապետող են հանդիսանում: Օրինակ, որսորդական կացության մեջ ապրող մարդը ամբողջապես ենթարկված է կենդանիների աշխարհին: Կենդանին է նրան կերակրողն ու հագցնողը, կենդանիների հետ է նա ապրում, նրանց դեմ է կռվում: Մարդը ոչ միայն մոտիկ է կենդանուն, այլև պաշտամունքի առարկա է դարձնում նրան, իր աստվածներին էլ բնակեցնում է նրա մեջ. կենդանուն նա ընծայում է ոչ միայն բանականություն, այլև լեզու, իմաստություն: Խոսում են կենդանիները իրար հետ, մարդու հետ: Եվ նրանք գործող անձինք են մարդու պատմվածքների մեջ: Եվ զարգանում է բանահյուսության այն ճյուղը, որ կոչվում է կենդանական վեպ, որից առաջանում է առակը:

Որսորդական կենցաղը, մանր խմբերով ապրելու եղանակը տեղի է տալիս ավելի մեծ համախմբումների, ցեղային, ժողովրդական զանգվածների: Թափառում են այդ ժողովուրդները դանդաղ, տեղափոխություններ են կատարում աշխարհի մի ծայրից մինչև մյուսը: Եվ աստանդական թափառումները լիքն են արկածներով, պատահարներով, պատերազմներով: Ահա վոր ընդհարումների մեջ ազգեր են ջնջվում, նոր ազգեր են կազմվում: Այդ շարժումները առատ նյութեր են տալիս ժողովրդական վեպին: Ժողովուրդը որոնում է իր սկիզբը, ուզում է իմանալ, թե ով է իր նախահայրը, իր անվանադիրը (էպոնիմ), որից ինքն ստացել է իր անունը (օրինակ՝ Հայկ և նրանից Հայ անունը): Այդ բոլոր պատմվածքների մեջ գլխավոր գործիչները աստվածներն են, ցեղի առաջնորդներն են, որոնք բարձրացվում են ժողովրդական հարգանքի մեջ, խառնվում են աստվածների հետ: Մարդը առանց գերբնական հանգամանքների, առանց աստվածային ուժերի, առանց հրաշքների ոչ մի բան չէ կարողանում հասկանալ և բացատրել: Եղելությունը, իրական փաստը պարզվում է այդ տեսակ բացատրությունների մեջ: Եվ ահա զուտ կրոնական-աստվածաբանական գրույցները դառնում են առասպելաբանություններ (միթ), իսկ կենցաղական-պատմական վեպը տալիս է դյուցազների գույություն: Կրոնական առասպելաբանությունները հետագա սերունդների կողմից ենթարկվում են վերլուծությունների: Միտքն ավելի զարգացած է, ըմբռնման եղանակներն ու կարողությունը փոխված են, այլևս իրականության շին համապատասխանում այդ ավանդական գրույցները: Եվ նրանց միջից հանվում է այն ամենը, ինչ հավատ է եղել և մնում է լուր պատմվածք, և մենք ունենք մեր առջև հեքիաթը<sup>1</sup>:

<sup>1</sup> Корш, т. I, с. 90.

Այս է ժողովրդական վեպի ընդհանուր բովանդակությունն ու իմաստը: Յուրաքանչյուր ժողովուրդ այսպիսի վեպով է սկսում իր պատմությունը: Յուրաքանչյուր ժողովուրդ իր այդ ստեղծագործության մեջ ինքնուրույն է, առանձնահատուկ, բայց որովհետեւ քաղաքակրթության մի հայտնի աստիճանը որոշ աշխարհայացքներ, ըմբռնումի եղանակներ ունի ամեն տեղ, ուստի ժողովրդական վեպերը զանազան ազգերի մեջ միևնույն ժամանակ նմանություններ ունեն աչ միայն ձևի ու ոճի կողմից, այլ շատ հաճախ նաև բովանդակության կողմից: Այսպես են, օրինակ, հեքիաթները:

Այս նմանության առաջացնողը, սակայն, միայն քաղաքակրթական համանման պայմանները չեն: Ինչպես կուլտուրական կյանքի այլևայլ ասպարեզների մեջ, այստեղ էլ, բանավոր արվեստի մեջ տեղի ունի միևնույն մեծ համաշխարհային երևույթը: Ազգությունները շփվում են իրար հետ, փոխանակություններ են կատարում, ազդում են, ազդվում են: Եվ այստեղ էլ նույն թևավոր, թափառող գաղափարները, ձևերը, որոնք տարածությունների հեռավորությունից չեն վախճնում, թափանցում են բոլոր խորթ միջավայրերը, ենթարկվում են տեղային հանգամանքներին, ինքնուրույն մշակման ձևեր են ընդունում, ինչպես և որքան կարողանում է անել յուրացնող ժողովրդի ստեղծագործական հանճարի աստիճանը, բայց և այնպես, պահպանում են ընդհանուր ծագման, ազգակցության բնորոշ հանգամանքները:

Ժողովրդական վեպը թե՛ երգվում էր և թե՛ պատմվում: Նրան ընկերակցում էին երաժշտական գործիքները, պարը, մնջախաղությունը (պանտոմիմ, գուցե մեր հին «ցուցքը»): Հետզհետե այդ ընկերակիցները բաժանվում են վեպից, առանձին-առանձին արվեստներ դառնում: Վեպ պատմելն ու ներկայացնելը որոշ զբաղմունքի, արհեստի է վերածվում: Այդ զբաղմունքի տեր մարդկանց անվանում էին գուեսան (այսօրվա աշուղները): Հին ժամանակներում յուրաքանչյուր պարապմունք ժառանգական էր. այսպես և գուեսանությունը: Արվեստի կիրառման հետևանքով մշակվում է պատմվածքի ձև, ոճ վեպի յուրաքանչյուր սեռի համար: Այլ է, օրինակ, հեքիաթի ոճը, այլ է դյուցազներգության ոճը:

Անցնենք այժմ բանավոր արվեստի մյուս նշանավոր ճյուղին՝ քնարերգության: Այստեղ արդեն մարդու անհատականությունն է խոսում, ներքին եսական աշխարհը իր տրամադրություններով ու հույզերով: Այս տեսակ բանաստեղծությունը պիտի զարգանար, անկասկած, այն ժամանակ, երբ համայնքի միաձուլող ուժը այնքան թուլացած էր, որ անհատականությունը կարող է ինքն իրեն ցույց տալ իր և մի անկախ իրավատեր: Եվ, ուրեմն, քնարերգությունը համեմատաբար նոր արվեստ պետք է համարել, վեպից հետո: Այսպես է արդյոք: Չէ կարելի ժխտել և այն, որ անձնական տպավորությունների քնարերգական արտահայտությունը ծնվել է քաղաքակրթության նախնական շրջաններում: Չէ՞ որ մարդուց, ինչպես մի կենդանական տիպից, չէ կարելի խլել անձնական տրամադրություններ, ցավ ու ուրախություն արտահայտելու այն ընդունակությունները, որոնք հատուկ են և մյուս կենդանիներին:

Վերցնենք հենց սեռական ընտրությունը, որ այնքան միջոցներ է տալիս արուններին՝ էգեր գրավելու: Եվ մի՞թե նախնական մարդը չէր կարող նույնիսկ նախնական, կոպիտ արտահայտությունների մեջ դնել իր սիրային զգացմունքը: Կամ վերցնենք գարնան վերակենդանությունը: Այլաբանակ մարդը տեսնում է, որ ձյունը հալվել է, բացվել է իր քարե բնակարանի մուտքը: Գնում է քնության մեջ, որ նրան արբեցնում է իր թարմությամբ, արևի ջերմությամբ: Նա

քայլում և իր քայլվածքի համաշափությամբ իրար ետևից կրկնում է, որ տաքությունը լավ է, օրը պարզ է, ձյունը հալվել է: Հետզհետե հաճույքի զգացմունքը այնքան հափշտակում է նրան, որ նա այդ խոսքերը կրկնում է բարձր ձայնով, աղաղակով: Ահա և գարնանային Երգի սկիզբը:

Կամ թե, օրինակ, քարե դարի մարդը, որ մենակ է անտառում, իր քարե կացնով մի մեծ ծառ է կտրում: Ծանր պշխատանք, և նա սկսում է շափ նկատել կացնի հարվածների, իր սրտի բաբախումների, իր մկանների կծկումների ձեռ: Այդ չափականության նա պատշաճեցնում է արտահայտիչ ձայներ: Եվ ահա առաջին բանվորական երգի ձևը: Կարելի է մի պատկեր էլ երկրագործական կյանքից վերցնել, հենց այն, օրինակ, որ արտը եկել բարձրացել է, առատ հունձ է խոստանում, բայց եղանակը շատ է անձրևային և հունձը կարող է փշանալ: Երկրագործի ընտանիքն արտումն է, տեսնում և զգում է այդ բոլորը: Երկինքը ամպամած է, դարձյալ անձրև պիտի գա: Եվ ահա ամենքը, մեծ ու փոքր, ձեռքները բարձրացնում են դեպի երկինք, խմբով ետ ու առաջ են գնում, կանչում են, որ արևը դուրս գա ամպերի տակից, ջերմություն տա երկրին: Այս պատկերի մեջ ծիսական խմբերի առաջին նշանն է: Վերջապես երգեր կան պարերի համար՝ հարսանիքի և այլ դեպքերի հարմարեցրած: Ուրեմն իր սկզբնական շրջանի մեջ քնարերգությունն էլ ժողովրդական է: Հեղինակը այստեղ էլ չէ Երևում, թեև անշուշտ միշտ մեկն է, որ կազմում է երգը, որքան էլ կարճ լինի նա, թեև կուց երկու տողից բաղկացած: Քնարերգությունն էլ, իհարկե, բանավոր է և ենթարկվում է տեսակ-տեսակ փոփոխությունների, խմբագրությունների, ինչպես և վեպը: Նրան էլ ընկերակցում են նվագը, պարը:

Գալիս է գրերի գյուտը: Նրա ազդեցությունը, կատարած դերը այնքան ահագին է, որ նրան համարում են աստվածների գործ: Այսպես է վերաբերվում հնություն հանճարեղ մտքերից մեկը, Պլատոնը, որ գիրն անվանում է հավիտյան լսելի, անշափելի ձայն: Գիրը հավիտենականացնում, անմահ է դարձնում այն, ինչ կա արդեն բերանացի խոսքի և արվեստի մեջ: Բայց ի՞նչպե՞ս:

Բանն այն է, որ մի ազգի մեջ թեև մի լեզու է տիրապետում, բայց նա բաժանված է լինում տեղական բարբառների: Ցուրաքանչյուր գավառ իր հատուկ բարբառի տերն է և այսպիսով մի բանահյուսական կտոր կարող է գտնազան բարբառական ձևեր ունենալ: Ընտրվում է այդ տեղական բարբառներից մեկը, որի բերականական ձևերը ավելի զարգացած ու կանոնավորված են և դա էլ դառնում է գրական լեզու: Գրական լեզուն արդեն գավառական մտանավոր հանգամանք չունի և դառնում է ընդհանրի գործածության առարկա, այդպիսով էլ կատարում է այն կարևոր դերը, որ լեզվի միանմանություն, կանոնավորություն է պահպանում: Բայց տեղական բարբառներն էլ իրենց իրավունքի մեջ են մնում, շարունակում են իրենց գոյությունը ժողովրդի խոսակցության մեջ: Հակադրությունը գրական լեզվի և բարբառների մեջ այն է, որ գրական լեզուն առհասարակ պահպանողական բնույթ ունի, օրենսդրում է կանոններ ու ձևեր, որոնք սովորաբար չեն սիրում փոփոխություններ, մինչդեռ ժողովրդական բարբառը, ընդհակառակն, վերին աստիճանի կենսունակ ու կենդանի է, լճանալ չէ սիրում, գնում է կյանքի հետ, փոփոխվում ու հզվում է գործածության մեջ, այլազան ձևեր ու արտահայտության եղանակներ է յուրացնում: Այս հանգամանքի շնորհիվ էլ նա մի ազգի լեզվի կենդանու-

թյան աղբյուրն է: Եվ եթե գրական լեզուն շարունակ այդ աղբյուրից չէ վերցնում իր կենդանության համար անհրաժեշտ տարրերը, նա հետզհետե կորցնում է իր կենսունակությունը, հեռանում է ժողովրդի հոգեբանությունից, բարացած ձև է դառնում, և վերջ է վերջո՝ միանգամայն անհասկանալի: Ստեղծվում է նոր գրական լեզու:

Այսպիսի մի Երևույթի մենք հանդիպում ենք գրականության պատմության արշալույսին: Քաղղեան դեռ Սարգոն Հին թագավորի ժամանակ, իսկ այս ժամանակը ոմանք հաշվում են 3800 տարի Ք. ա., այնքան հարուստ գրականություն ուներ, որ գրական հիշատակարանները պահպանելու համար հարկավոր եղավ գրադարան կազմել: Գրական լեզուն շումերականն էր, բայց արդեն հնացած, անհասկանալի դարձած:

Համարյա նույն ժամանակներում կամ քիչ հետո հիշատակվում է գրադարան և Եգիպտոսում: Բայց աչս երկու երկրների գրքերը տարբեր ձև ունեին: Քաղղեայում գիրը դրոշմվում էր աղյուսների (իհարկե, դեռ չթրծած, դեռ կակուղ) և մասամբ քարի վրա, իսկ Եգիպտոսում, բացի քարից, պատրաստվում էր հատուկ նյութ գրության համար՝ թուղթ, որ շինվում էր պապիրոս կոչված եղեգնաբույսից և կոչվում էր նույն անունով՝ պապիրոս: Պատրաստվում էր թուղթ նաև կաշուց (մագաղաթ):

Հիշատակենք նախ և առաջ գրքի սրբազան նշանակությունը՝ նրա ծագման օրերից ի վեր: Երբ գրերի գյուտը աստվածային գործ էր ընդունվում, նրբ գրքերի մեջ ամենից շատ նույն աստվածների գործերն էին խոսում, բնական էր, որ այդ գործերը սրբազան բարձր հասկացողություն լինեին: Հույն հին պատմագիրներից մեկը (Գիոդոր Սիկիլացի) նկարագրելով Եգիպտոսի թեքե մայրաքաղաքի արքունական շինությունները, պատմում է, որ դահլիճներից մեկը հատկացված էր սրբազան գրադարանին և նրա ճակատին արձանագրված էր «Հոգու դեղագործարան»:

Եթե դիմենք աշխարհի այդ ամենահին գրականություններին (քաղղեական և Եգիպտական) և հարցնենք, թե ի՞նչ էին նրանք պարունակում իրենց մեջ, կտեսնենք այնտեղ մարդկային մտքի այլևայլ գործերի մի ամբողջ շտեմարան: Եգիպտական գրականությունը ավելի զարգացած էր դարերի ընթացքում, ավելի հարուստ հիշատակարաններ է թողել, ուստի նրա համառոտ տեսությունն էլ կդիմենք մենք, հին աշխարհի գրականության բնորոշ հատկությունները ներկայացնելու համար:

Եգիպտական գրականությունը (ինչպես և քաղղեականը) կարող ենք բաժանել չորս ճյուղի՝ կրոնական, գիտական, պատմական և զուտ գրական:

Կրոնը, ինչպես շատ անգամ տեսանք, թագավորում է ամեն տեղ, մտածության բոլոր ասպարեզներում, ուստի նա, բացի իր սեփական գրականությունից, տարածված է և մյուս երկու սեռերի մեջ: Արդեն գրականության զբլիավոր ներկայացուցիչն էլ քրմությունն էր: Մենք գիտենք արդեն, որ կրոնը Եգիպտոսում՝ մանավանդ, անթիվ ծեսեր էր սահմանել: Այդ արարողություններն էլ ունեին իրենց հարուստ գրականությունը, բաղկացած, գլխավորապես, կրոնական բանաստեղծությունից (աղոթքներ, օրհներգ), որոնց մեջ էին ոչ միայն աստվածաբանական, դավանական ձևակերպումները, այլև այն զրույց-

<sup>1</sup> «Вопросы по теории и психологии творчества», т. I, с. 245.

<sup>1</sup> De Morgan, „Les Prem. Civ.“, p. 245.

<sup>2</sup> „Bibliothèque Historique de Diodore de Sicile“, t. I, Paris, 1865, p. 60.

<sup>3</sup> F. Lenormant, „Histoire Ancienne de l'Orient“, t. III, Paris, 1883, chap. II.

ներն ու քերթվածները (պոեմ), որոնք տիեզերածնության (cosmogonie) և աստվածածնության (thegonie) հասկացողություններն էին տալիս:

Եգիպտոսում վերին աստիճանի զարգացման էր հասել անդրգերեզմանական կյանքի պաշտամունքը: Եգիպտացին, ապրելով այս աշխարհում, շարունակ մտածում էր մյուս կյանքի մասին, իր հոգում մասին և նրա ամբողջ հոգան էր երանական մի դրություն ստեղծել իր հոգու համար հանդերձյալ աշխարհում: Հուղարկավորության և թաղման ծեսերը երկարատև ու բարդ էին և մի ամբողջ գրականություն ունեին: Բայց ամփոփելով մեծելին իր գերեզմանի մեջ, եգիպտացին այդտեղ էլ չէր վերջացնում իր հոգսերը նրա հոգու մասին: Նա դնում էր մուսիայի դազադում մի ամբողջ գիրք, որ հոգու առաջնորդը պիտի լիներ նրա երկարատև թափառումների մեջ: Այդ գիրքը ժամանակակից գիտության մեջ ստացել է «Մեռելների Գիրք» անունը: Դա մի մեծ կրոնական գիրք է, որի մեջ մանրամասն նկարագրվում է, թե մեռելի հոգին ի՞նչ տարածություն պիտի անցնե, ի՞նչ փորձությունների պիտի ենթարկվի՝ ահեղ դատաստանի առջև կանգնելու համար: Դրված են բազմաթիվ աղոթքներ, օրհնություններ, որոնք պիտի հեշտացնեն հոգու գործը և հասցնեն նրան երանության վայրին: Դրված են նաև մանրամասն հրահանգներ, թե հոգին ինչ դեպքերում կարող է հույս դնել աստվածների գթության և ողորմության վրա: Դրանք բարոյականության վարդապետությունն են ներկայացնում, առաքինության և շարագործության սկզբունքը:

Գիտական գրականությունը պարունակում էր իր մեջ այն գիտելիքները, որ մարդկությունը փորձերի և ուսումնասիրությունների միջոցով ձեռք էր բերել բնության և կյանքի երևույթները դիտելիս: Դրական գիտությունների այդ հնագույն հիշատակարանները ամփոփում են իրենց մեջ աստղաբաշխություն (և նրանից ծնված աստղագիտություն), թվագիտություն, ներկրաչափություն, եռանկյունաչափություն, բժշկականություն, Քաղղեայում բացի այդ բոլորից, նաև աշխարհագրություն, կենդանաբանություն, բուսաբանություն, հանքաբանություն<sup>1</sup>:

Գիտական գրքերն էլ, կրոնականի նման, սրբազան նշանակություն ունեին: Եգիպտոսում նրանք համարվում էին հատուկ մի աստծու թելադրությամբ գրված: Այս ճյուղին կարելի է միացնել և իմաստասիրությունը (փիլիսոփայություն), որ խրատների և բարոյական օրենքների միջոցով հրահանգում էր, թե ինչպես պետք է ապրել՝ իմաստուն և առաքինի լինելու համար:

Նշանակալի հանգամանք է, որ բարոյագիտական խրատներ պարունակող գիրքն է ամենահինը ոչ միայն եգիպտական գրականության, այլև ամբողջ աշխարհի մեջ (մոտ 38 դար Ք. ա.): Նշանակալից հանգամանք է և այն, որ այդ գրվածքներից մեկի հեղինակը հարյուր տարեկանից ավելի մի ծերունի է: Նա նկարագրում է խորին զառամյալ ծերությունը, երբ մարդը կրկին երեխայանում է, երբ նրա զգայարանները այլևս չեն գործում: Եվ ծերությունը համարվում է այն դրությունը, որ հեղինակավոր է դարձնում մարդուն, և նա կյանքի փորձերի վրա հիմնված, իմաստության ճանապարհ կարող է ցույց տալ երիտասարդներին:

Բարոյական խրատների մեջ առաջին տեղը բռնում է հնազանդություն մեծերին՝ թագավորներին, ծնողներին, ամուսնուն, սիրելի ու փայլալի կնոջը, չգնալ շար ճանապարհով, չլինել կոպիտ, զազանաբարո և այլն: Այդ խրատները ամենահին իմբագրությունն են այն բարոյական օրենքների, որոնք հա-

մարյա նույն ձևով մտել են բիրիական գրքերի մեջ «Իմաստություն Սողոմոնի» անունով և որոնք վրա հենվում է նաև քրիստոնեությունը:

Ավելի ընդարձակ և պարզ բարոյագիտական հրահանգներ Եգիպտոսում գրել է, առաջիններից մի քանի հազար տարի հետո, Անի անունով մի գրագիր, որ իր խրատները ուղղել է իր որդուն: Նա մեկիկ-մեկիկ պատմում է, թե ինչ է մայրը նրա համար, թե որքան տանջանքներ էր կրում մայրը մինչև ծնելը և ծնելուց հետո մինչև հասակավոր մարդ դարձնելը: Նկարագրում է արքեպոստության տեսարանները և խրատում է զգույշ մնալ արքեպոստությունից: Ուրիշի կնոջ վրա աչք չդնել, չգնալ նրա մոտ, նույնիսկ եթե նա կանչում է. բոլոր ոճիրները այդ տեսակ կանանցից են դուրս գալիս: Մի երկ գիտությունը, գրքերը, պատվել ծերերին, զգույշ լինել խոսքի մեջ, չընկերանալ շարերին և այլն և այլն— սրանք են իմաստության սկզբունքները:

Բարոյական օրենքների մասին հասկացողություններ տալիս է և «Մեռելների Գիրքը»: Մեռածի հոգին դատավորների առջև ժխտում է բոլոր մեղքերը և այսպիսով պատկերացվում են խղճմտանքի այն բոլոր պահանջները, որոնք միայն նեղուսի ավերում չէին ցուցադրվում մարդկության, այլ հատուկ էին ամբողջ հին աշխարհին: Հոգին ասում է դատավորներին. «Ես չեմ հայհույել.— ես չեմ խաբել.— ես չեմ գողացել.— ես չեմ տանջել այրի կնոջ.— ես չեմ հարկադրել մեկին աշխատել ավելի, քան ինչ նա կարող էր անել.— ես ոչ ոքին չեմ լացացրել.— ես չեմ հարբել.— ես ոչ ոքին վախ չեմ պատճառել.— ես չեմ վնասել ստրուկին իր տիրոջ մոտ» և այլն:

Գանք այժմ բանավոր արվեստ պարունակող գրականության: Այստեղ մենք տեսնում ենք ժողովրդական ստեղծագործությունը, տեսնում ենք ժողովրդի կյանքը: Այստեղ է, որ մենք զգում ենք ապրող մարդու տենչերի, համակրանքների, հոգու և սրտի շարժումների շեշտերը: Ամեն ինչ խոսում է պահեցողության, զգաստության, առաքինության մասին. ամեն ինչ, ճիշտ է, ենթարկված է կրոնի խիստ, միստիք պահանջներին. ամեն ինչ— և՛ ծեսերը, և՛ տաճարները, և՛ օրենքները— սեղմում է մարդու միտքը, հարկադրում է նրան մոռանալ այս աշխարհը՝ հանդերձյալ կյանքը ժառանգելու համար: Բայց այս աշխարհը, այնուամենայնիվ, չէ մոռացվում: Եվ ապրող մարդը չէ կարող ճգնավոր դառնալ: Նա սիրում է զվարճություն, և զվարճանում է հասարակական տոներին, մոռանալով և՛ աշխատանքի դանդաղությունը, և՛ աղքատությունը, նա սիրում է գինի, կին, հույզեր, որոնք կրոնական տեսակետից մեղքեր են: Այս տրամադրությունների գրականությունն է, որ պահում է իր մեջ զարկերակի բաբախումները, կյանքի ժխորի արձագանքները: Եվ նա է, որ ցույց է տալիս, թե որքան տարբեր է կյանքը կրոնական և բարոյագիտական օրենքներով սահմանված պաշտոնական սառն կերպարանքից: Եգիպտական գրականությունը պահպանել է իր մեջ աղաղակող և իր պահանջներն անող կյանքի մի հուզիչ ու գեղեցիկ հիշատակարան: Մի կին, մի քուրմի ամուսին, որ և նրա քույրն էր, մեռնում է և նրա լեզվից գրված է մի դիմում, ուղղված իր ամուսնուն: Մեռածը նկարագրում է, թե որքան ձանձրույթ ու տխրություն կա սովորների աշխարհում: Այնտեղ բացակայում է հույզն ու կիրքը, այնտեղ ոչ երեխայի սեր կա, ոչ կնոջ սեր, այնտեղ մի աստված կա, որի անունն է «ամբողջ մահ», որ իր մոտ է կանչում ամբողջ աշխարհը, որ ոչինչ չէ տեսնում ու լսում, որի համար հավասար են ամենքը՝ մեծն էլ, փոքրն էլ, բարկացող, անողոք մի աստված, որ նույնիսկ չէ նայում ոչ մի ժամոցի, ոչ մի մատաղի: Ուստի քրմուհին ասում է. «Ո՛վ իմ եղբայր, իմ բարեկամ, ո՛վ իմ ամուսին,

<sup>1</sup> J. Menant, „La Bibliothèque du Palais de Ninive“, Paris, 1880, p. 90.



մի՛ գաղարիք խմելուց, ուտելուց, ուրախութեան բաժակը դատարկելուց, կանանց սիրելուց և տոներ կատարելուց, հետևի՛ր միշտ թո ցանկութեան և թրքեք մի՛ թողիր, որ տխրութիւնը մտնե թո սրտի մեջ, քանի որ աշխարհի վրա ես<sup>1</sup>։

Ի՞նչ էր տալիս կյանքի այդ հրամայողական պահանջը գրականութեան։ Ամենահին գեղարվեստական գործերը այն պատմվածքներն ու վեպերն էին (արձակ պատմութիւն, ռոման), որոնք գոյութիւն ունեին ժողովրդի մեջ և գրի առնվեցին։ Ժողովուրդը սիրում էր այդ տեսակ պատմվածքները, որոնց մեջ զանազան արկածներ կային, գործողութիւնը կատարվում էր ֆանտաստիկ հանգամանքների մեջ, լի հրաշքներով։ Այստեղ էլ մենք տեսնում ենք յուրաքանչյուր գրականութեան հիմնական հատկանիշները։ Կան այնպիսի պատմվածքներ, որոնք միանգամայն ինքնուրույն են, այսինքն միմիայն մի հայտնի երկրին հատուկ, միայն նրա կյանքից ու բնութիւնից բխող։ Այսպես են, օրինակ, պատմական վեպերը (ռոման), որոնց մեջ թեև պատմական ճշմարտութիւնը միանգամայն բացակայում է, բայց գործող անձինք փարավոններն են կամ հերոսները։ Կան և այնպիսիները, որոնք կրելով հանդերձ տեղային առանձնահատուկ գույներ, ներկայացնում են ազգերի մեջ թափառող ու փոխանակվող սյուժեները։

Այսպես է, օրինակ, «Երկու եղբայր» պատմվածքը, որի մեջ արտահայտված մտախնայքը՝ մի կին, որ ուզում է գայթակղեցնել իր ամուսնու եղբորը և պակել նրա հետ, բայց, հանդիպելով նրա կողմից մերժման, շարախոսում է, թե իրեն ուզում էր բռնաբարել այդ եղբայրը, կամ թե այն հրաշալի ձևափոխութիւնները, որոնց ենթարկվում է հերոսը, դառնալով կամ եզ, կամ ծառ և այլն, կրկնվում են բոլոր ազգերի պատմվածքների մեջ։ Արաբական «Հազար ու մի գիշերներ» պատմվածքներից մի քանիսը իրենց բովանդակությամբ և մանրամասնութիւններով համապատասխանում են եգիպտական այն վեպերին, որոնք հասել են մինչև մեր օրերը։

Այսպես ահա, գրականութեան պատմութիւնը, իր սկզբնավորութեան առաջին խակ շրջաններից պատկերացնում է իր մեջ ազգերի մերձավոր շփումները և փոխադարձ յուրացումները մտավոր, ստեղծագործական աշխարհում։ Եվ այս օրերը միայն վեպերի, պատմվածքների վերաբերմամբ չէ անսխալ և այլ գրականութեան մյուս ճյուղերի համար էլ։

Այսպես է, օրինակ, սիրային քնարերգութիւնը, էրոտիկ բանաստեղծութիւնը։ Եգիպտական գրականութեան մեջ այս գրական սեռը չէ պակասում։ Այդ տեսակ բանաստեղծութիւնից մնացած մի քանի կտորների մեջ սիրային կիրթը խոսում է հարավի վառվռուն գույներով, ջերմ, արևային արտահայտութիւններով։ Ահա, օրինակ, ինչպես է դիմում սիրահարվածը իր սիրած ազգական, իր «բոնը»։ «Ես ուզում եմ պակել իմ սենյակում, որովհետև հիվանդ եմ թո պատճառով, և դրացիներս գալիս են ինձ տեսնելու... Ահա եթե թույլս էլ գար նրանց հետ, նա բժիշկներից ավելի լավ կհասկանար ինձ, որովհետև նա գիտե իմ ցավը»։ «Թույլս մի սարավույթ ունի, առջև մի լճակ, դուր հանկարծ բացվում է և թույլս դուրս է գալիս շատ բարկացած։ Ա՛հ, ինչո՞ւ ես դռների պահպանը չեմ, որպեսզի նա ինձ հրամաններ տա, ես գոնե կլսեի նրա ձայնը, թեև նա գրգռված է և նս, իբրև մի փոքրիկ երեխա, լի եմ սոս-

<sup>1</sup> J. Soury, «Contes et romans de l'Ancienne Egypte», («Revue des deux Mondes», 1875, t. VII).

կումով նրա առջև<sup>1</sup>։ Համեմատեցեք այս սիրային դիմումները բերքական «Երգ երգոց»-ի հետ, որ վերագրվում է Սողոմոնին, և կտեսնեք, որ երկու սիրերգները բխում են միևնույն ոգևորութեան աղբյուրներից, միևնույն բուրմունքների արմատից։ Նույնիսկ սիրուհու հորջորջումը՝ «թույլ» մեկ է երկուսի մեջ էլ։

Իբրև բանահյուսութեան ճյուղեր, որոնք ներկայացված են եգիպտական գրականութեան մեջ, պետք է հիշել առականը, որոնց մեջ գործողներն ու խոսողները կենդանիներ են։ Հետաքրքրական է, որ առականը պատկերազարդ են։ Կա նույնիսկ և Երգիծաբանութիւն, որ չէ խնայում անգամ աշխարհի հզորներին և որի հետ զուգընթաց գնում է և ծաղրանկարը (կարիկատուրա)<sup>2</sup>։

Գրականութիւնները ազգերի հետ ապրող, ազգերի հետ բարձրացող և նրանց հետ էլ ընկնող կուլտուրական գործոններ են։ Այսպես էր հին Եգիպտոսում, ուր գրականութիւնը աստիճանաբար զարգանալով, հասավ ոսկեդարին և հետո, սկսեց անկումը։ Այսպես էր և Եփրատ-Տիգրիսյան հովտում. Քաղղեայի քաղաքական անկումից հետո, նրա մտավոր հարստութիւնների մեծ մասը Ասորեստանի թագավորները փոխադրեցին Նինվե։ Կործանվեց և Նինվեն, նրա ավերակների մեջ թաղված մնաց Ասուրբանիպալի պալատը, որի մեջ էր հին հարուստ գրադարանը։ Միայն 19-րդ դարում այդ գրադարանը եվրոպական գիտութեան սեփականութիւն դարձաւ։

**4. Արվեստներ։** Բանավոր արվեստի հին, նախապատմական ժագումը պարզվում է ենթադրութիւնների և հավանականութիւնների միջոցով։ Այսպես չէ պատկերացնող արվեստը։ Վերջին տասնամյակների ընթացքում հնագիտութիւնը Եվրոպայի զանազան կողմերում կատարած խուզարկութիւնների և պեղումների միջոցով երևան էր հանում նախապատմական մարդու քաղաքակրթութեան, կենցաղի բազմաթիվ հետքերը, որոնք բարե դարի երկար տևողութեան զանազան ժամանակներն են ներկայացնում։ Այդ գյուտերի մեջ են և անթիվ հիշատակարաններ, որոնք նույն այդ ժամանակների արվեստների պատմութիւնն են տալիս։

Քարե դարի նախնական շրջանը այն է, երբ մարդը գործ էր ածում քարե գործիքներ առանց որևէ մշակման։ Արվեստ այդ ժամանակ չկար։ Արվեստը սկսվում է այն ժամանակվանից, երբ մարդը սովորում է իր գործիքները մշակել, պատրաստել իր ձեռքով։ Բայց այստեղ էլ դեռ երկար, եթե կարելի է ասել՝ նախապատրաստական շրջան կա։ Մարդը, ճիշտ է, քարի կտորների վրա աշխատելով, նրանց կտրելով, գործիքներ է շինում, բայց այդ գործիքները դեռ որոշ ձև չունին։ Իսկական արվեստի սաղմնային դրութիւնը առաջ է գալիս այն ժամանակ, երբ մարդու մեջ զարգանում է ձևի զգացմունքը։ Այդ այն զգացմունքն է, որ, ինչպես մի տեսակ խաղ, արտահայտվում է մի զրազմունքի մեջ և որ պատճառում է հաճույք, պատկերավորում, մտքեր և զգացմունքներ։ Ձևի այդ զգացմունքը որոշ հաստատուն սահմաններ է գծում զենքեր և տնային առարկաներ շինելու համար։ Այսպես, տեսնում ենք, որ այդ գործիքները մեծագույն մասամբ նշաձև են։ Գեղեցկացնել ձևը՝ այսպես է արվեստի զարգացումը։ Գործիքները և տնային առարկաները դեռ իրենց անմիջական նպատակին են ծառայում։ Բայց մարդը, ինչպես և կենդանիներից շատերը, ունեն մի բնածին հակում՝ զարգարել իրենց։ Եվ ահա մարդը սոս-

<sup>1</sup> Maspero, t. II, p. 504.  
<sup>2</sup> Ibid, p. 501.

վորում է զարդարանքների: Իր մարմնի վրա կախում է զանազան զենքեր, առարկաներ, իսկ դրա համար հարկավոր էր ծակել այդ առարկաները, որպեսզի կարելի լինի թելի վրա անցկացնել: Մարմնի զարդարանքն ստանում է և ուրիշ ձև. դա զանազան ներկեր քսելն է<sup>1</sup>:

Մարդը դեռ իր տաշած քարի դարումն է: Նա բնակվում է այրերում, որսորդ է. որսում է վայրի ձիեր, ցուլեր, եղջերու և այլն: Նա սովորում է զարդարել ո՛չ միայն իր մարմինը, այլև իր գործիքները, իր բնակարանը: Եվ ահա այստեղ է նա ցույց տալիս պատկերացման շատ նշանավոր ընդունակություն: Առաջացել են պատկերացնող արվեստի շատ ճյուղեր և նրանք միանգամից, համարյա առանց աննախընթաց շրջանի, ցույց են տալիս զարգացման բարձր աստիճան: Նյութը, որ գործ է ածում մարդը իր այդ արվեստի համար, գլուխավորապես ոսկորն է, օրինակ մամոնտի ժանիքները, ապա և կենդանիների եղջյուրը, նույնիսկ և քարը:

Եվ այսպես, քարային դարի այս հին շրջանում, նախ և առաջ զարգանում են ձևացնող (պլաստիկ, plastique) արվեստի ճյուղերը՝ արձանագործությունը, քանդակագործությունը: Արձանը, ինչպես հայտնի է, տալիս է առարկայի ամբողջ ձևը և արձանագործության արվեստը այդ պատճառով կոչվում է «կլոր պլաստիկ»: Ո՛ւմ է մարդը ներկայացնում իր այդ արվեստով: Ամենից առաջ, իհարկե, հենց իրեն, մարդուն, այն էլ կին մարդուն: Ամենահին արվեստի գործեր են համարվում կանանց մի քանի արձանիկներ, որոնք գտնվել են հնագիտական պեղումների միջոցով: Իսկ տղամարդկանց արձանիկներն ավելի ուշ-ժամանակների գործ են համարվում: Դրանից հետո միայն արվեստը սովորում է ներկայացնել կենդանիներին:

Արձանագործության արվեստին հետևում են նույն պլաստիկայի այն ձևավորը, որոնք ընդհանրապես կոչվում են քանդակ: Քանդակը հարձույթյան վրա դուրս ցցված, ուռուցիկ պատկերն է (relief): Նայած թե որքան բարձր կամ որքան ցած է դուրս ցցված պատկերը, քանդակը կոչվում է կամ բարձր քանդակ (haut-relief) կամ հարթ քանդակ (bas-relief): Այս երկու տեսակ քանդակների հետ գոյություն ունի նաև փորագրությունը, հարթության վրա խոր գծերով պատկերացումը, գունավոր պատկերագրությունը կամ նկարչությունը, որով մարդը զարդարում է իր բնակարանի պատերը:

Սկզբնական այդ արվեստը այնքան բնական ու կատարելագործված է, որ շատ գիտնականներ նրա արտագրությունները երկար ժամանակ համարում էին կեղծիք, այնքան նրանք համապատասխանում են արվեստի մեր ժամանակակից պահանջներին: Բայց այդ անվստահությունը հերքվեց, և պարզ էրողություն դարձավ, որ արվեստը իր այս սկզբնական շրջանում նենդանի և արտահայտիչ է, որովհետև հենց սկզբից գտել է իր կենսունակության մեծ գաղտնիքը՝ պարզություն և ճշմարտություն: Շարունակ գործ ունենալով կենդանիների հետ, մշակված գործիքների դարի որսորդ մարդը այնքան լավ էր ուսումնասիրել նրանց կազմվածքը, որ կարողանում էր զարմանալի ճշտությամբ և բնականությամբ ներկայացնել նրանց՝ արձանի և նկարի միջոցով:

Բայց միայն այսքանը չէ այդ հին արվեստի բովանդակությունը: Իր գործիքները, զենքերը զարդարելու համար մարդը ստեղծել է և դրվագներ ի արվեստը կամ զարդանկարը (ornament): Այս տեսակ նկարների մեջ մտնում են բույսերի զանազան ձևերը կամ կենդանիների գլուխները, այլևայլ

զիրքերով ձևակերպումները: Բացի այդ մոտիվներից, զարդանկարի մեջ տեղ են գտնում և գծերի զանազան խաղերը (երկրաչափական դրվագներ):

Փոխվում է քաղաքակրթական շրջանը: Մարդը տաշած քարից անցել է հողած քարին: Նրա գործիքներն ու տնային իրերը ավելի կատարելագործված են, ավելի գեղեցկացրած: Նա գտել է կավից ամանների շինելու և այդ կավը կրակի մեջ եփելու (թթեկու) նոր արվեստը: Արհեստական բնակարաններ շինել էլ է սովորել: Նա ճարտարապետ է, տեր արվեստի մի նոր ճյուղի ևս: Արվեստի նյութը քարն է: Մի կարծր նյութ, որ դժվարությամբ է ենթարկվում արվեստագետի ջանքերին ու երևակայության: Եվ պլաստիկան, նկարը նախորդ շրջանի զարգացումը և առաջադիմությունը չէ ցույց տալիս, այլ ավելի կոպտացած է, ավելի երեսխայական գործի է նման<sup>1</sup>:

Հաջող են գնում նոր արվեստները, այն է՝ խեցեգործությունը (կավագործությունը, ceramique): Խեցեգործությունը մարդուն միջոց է տալիս արտահայտելու գեղարվեստական նրբություններ թե՛ ամանների զանազան ինքնուրույն ձևերի և թե՛ նրանց վրա զանազան մասերը նկարներով և դրվագներով ծածկելու միջոցով: Շինարարական կարողությունը մարդու մեջ զարգացնում է, ինչպես տեսանք, նախնիքների գերեզմանների պաշտամունքը: Լեռաշին ճարտարապետական հուշարձանները, որոնց նյութը քարն է, դրվաններն են և այլ գերեզմանական կառուցվածքները: Ժայռերից քարի մեծ քեկորներ կտրել, տնկել այդ քարերը և նրանց վրա դնել կամ հագցնել հորիզոնական սալեր՝ ահա այն ձևը, որ ձուլվում է նախնական ճարտարապետության մեջ և որ հիմնում է շինարարական օրենքը՝ սյուների վրա դրած առաստաղ:

Քաղաքակրթության երկու դասական հայրենիքի՝ Քաղդեայի և Եգիպտոսի պատմության ամենահին, սկզբնական շրջաններում, երբ դեռ բոլորովին նոսրացած չէ անհայտության խավարը և դեռ առասպելն է տիրում, արվեստները և հատկապես արձանագործությունը, քանդակագործությունը և ճարտարապետությունը այնքան արդեն զարգացած են, որ կարողանում են նույնիսկ զարմացնող մեծագործություններ տալ մարդկության: Քաղդեայում բնիկներն են շումերացիները, որոնք սկսել են և առաջացրել են արվեստները: Ենթադրվում է, որ նրանց երկրից են արվեստները չվել Եգիպտոս, ուր տարածվել են և ընդարձակվել արագությամբ և բոլորովին ինքնուրույն կերպով: Բայց հենց այս գլխից, արվեստների պատմությունը ցույց է տալիս մի շատ բնորոշ հանգամանք: Ստեղծագործությունը հատուկ է ոչ բոլոր ազգերին հավասար չափով. ազգերի զանազան աստիճանի ընդունակություն և տաղանդ են ցույց տալիս այս ասպարեզում: Բացի այդ՝ ստեղծագործությունը պիտի վայելն կատարյալ ազատություն, պիտի ինքնագլուխ լինի և ոչ հպատակեցրած: Այս անհրաժեշտ պայմանները փոխվում են երկու երկրներում, և արվեստի զարգացումը կանգ է առնում: Քաղդեայում պատճառն այն է, որ սեմական ցեղերն են տիրապետում բնիկների վրա, իրենց ոգին մտցնում են նրանց մեջ, մի ոգի, որ գործնական շահագիտական ձգտումներով է ապրում և չէ կարող նըպաստել արվեստների ազատ զարգացման: Իսկ Եգիպտոսում կրոնական պաշտամունքներն են, որ զարգանալով՝ ստեղծում են արվեստների համար պայմանականություն<sup>2</sup>, որը առաջացնում է միանմանություն, միաձևություն, հանգամանքներ, որոնք կարող են միայն քարացնել արվեստները:

<sup>1</sup> Проф. Макс Ферворн, «Зачатки искусства» («Речи и статьи»), М., 1910.

<sup>1</sup> К. Бёрман, «История искусства», т. I, СПб., с. 13 и сл.

<sup>2</sup> De Morgan, «Les Prem. Civ.», p. 497.

Եզրիպտոսի հնագույն արվեստների մեջ մանավանդ ճարտարապետութուններն է, որ բարձրացած է մինչև վեհագույն աստիճանները: Հողը, որ պատվանդանն է այդ մեծագործությունների, եզրիպտացու մշտական հոգսերի հշխարհի արտերկան է, այն է գերեզմանը: Եզրիպտացին իր երկրավոր բնակարանն անվանում էր պանդոկ, օթևան, ուր ժամանակավոր բնակություն է լինում, իսկ գերեզմանը անվանում էր «հավիտենական տուն»<sup>1</sup>: Այս հասկացողության համեմատ էլ շինվում էին այդ երկու բնակարանները: Ժամանակավորը, հյուրանոցը, շինվում էր գլխավորապես նեղոսի տիղմից: Այդ բնակարաններից հետքեր չեն հասել մինչև մեր օրերը: Իսկ հավիտենական տները իրապես հավիտենական դարձնելու համար արվեստը աներևակայելի նվաճումներ էր անում և նրան ճիշտ որ հաջողվեց մշտնջենապես անմաշ տներ կառուցանել մումիաների համար: Մումիայի հետ նույնպիսի բնակարաններ պահանջում են աստվածները, որոնք և ստանում են տաճարներ: Իսկ երկրավոր աստվածը, թագավորը, պալատներ է ստանում նույն մեծագործ, հաղթական արվեստից:

Այսպես է հին ժամանակը Արևելքում, համարյա ամեն տեղ: Նա թողել է միայն գերեզմանների, տաճարների ու պալատների հիացուցիչ հիշատակարաններ: Իսկ այն բնակարանները, ուր սովորական մարդը իր երկրավոր ապրուստն էր անցկացնում, կամ բոլորովին անհայտացել են, կամ թե իրենց մնացորդներով ցույց են տալիս, թե որքան խեղճ կառուցվածքներ են եղել և արվեստը որքան հեռու է եղել նրանցից:

Ճարտարապետական մշտնջենավոր կոթողներ թողնելու համար Եզրիպտոսը օժտված էր բնությունից համապատասխան նյութի՝ տեսակ-տեսակ քարերի առատությամբ: Այդ նյութն է, որ լցրել է նեղոսի հովիտը անթիվ հիշատակարաններով, որոնք փարավոնների թագավորության հազարամյակներն են ներկայացնում: Թվում էր, թե այդ հին, զարմանալի ժողովուրդը իր բազուկների մեջ տիտանական ուժ ուներ և խաղեր էր անում իր երկրի գահնիստ սարերի հետ, կտրտելով, մաս-մաս անելով այդ սարերը և ապա իր ճաշակով նոր սարեր կազմում նրանցից:

Այդ անօրինակ կարողության վկաներն են հուշակավոր բուրգերը՝ հուշարձաններ ամենահին, կես-առասպելական փարավոնների գերեզմանների վրա: Դրանց մեջ մեծագույններն են երեք հատը, որոնք գտնվում են հին Մեմֆիս մայրաքաղաքի և այժմյան Գիզեի շրջականերում: Մեկը կառուցել է Քուֆու փարավոնը, որ հունաց մատենագրության մեջ հայտնի է Քյոպս անունով: Եվ ահա ինչ է այդ հուշարձանը: Նա երկու հարյուրից ավելի քարաշար ունի, որոնք բաղկացած են քարերի ահագին բեկորներից: Բարձրությունը 152 մետր է, հիմքը՝ 235 մետր յուրաքանչյուր կողքից: Ամբողջ զանգվածը 25 միլիոն խորանարդ մետր քար է պարունակում: Հաշվել են և այն, որ այդքան քարերով կարելի է շինել մի պատ՝ վեց ոտնաչափ բարձրությամբ և հազար Ֆրանսիական մղոն երկարությամբ: Զարմացնողը այս չափերը չեն միայն, այլ այն, որ բուրգի ներսում վեց սենյակ կան փարավոնի մումիայի համար: Ճարտարապետական արվեստը ի՞նչ գաղտնիքներ էր թափանցել, կարողանալով դնել սենյակներ այնտեղ, ուր նրանց վրա ճնշում են գործում միլիոնավոր խորանարդ մետր ծանրություն ունեցող քարերը<sup>2</sup>:

<sup>1</sup> Diodore de Sicile, t. 1, p. 62.

<sup>2</sup> Եզրիպտոսի պատմությունը բաժանվում է երեք գլխավոր շրջանների՝ Հին, Միջին և Նոր կայսրություններ:

<sup>3</sup> Lenormant, t. III, p. 328.

Պակաս ապշեցուցիչ չէ և այդ սար-հուշարձանի մոտ գտնվող, համարյա նրան կպած, վիթխարի սֆինքսը, որ նույնպես մի սար է, նվաճված արձանագործության արվեստի ձեռքով և որ Քուֆուի բուրգից էլ հին է: Մարմինը, որ ներկայացնում է առյուծ, բաղկացած է մի բնական ժայռից, թիչ ու շատ օտարված, ձև ստացած: Գլուխը, որ մարդկային պատկեր ունի, շինված է վիթխարի բեկորներից: Արձանի լայնությունը 90 ոտնաչափ է, բարձրությունը՝ շուրջ 60 ոտնաչափ: Սֆինքսը մարմնացնում էր մայր մտնող արեգակը, որ մեռելների աստվածն էր: Եվ վիթխարին կարծես հսկում էր մահվան այս դաշտի վրա, ուր բուրգերն են բարձրացած և գերեզմանոցներ էին տարածված: Թվում է, թե նա ուշադիր է, — գրում է մի հեղինակ, — ասում էին, թե նա լսում է և նայում է, իր մեծ ակնքը կարծես ամփոփում է իր մեջ անցյալի աղմուկները, իր աչքերը ուղղած դեպի արևելք, կարծես լրտեսում են ապագան, հայացքն ունի մի խորություն, մի ճշմարտություն, որ դուրս է նայողին<sup>3</sup>:

Ահա այս հուշարձաններն են, որ զարմանք և պատկառանք են ազդել բոլոր դարերին, բոլոր ազգերին: Բայց այսքան ահագնաչափ ձեռակերտները սովորական չէին կարող լինել նույնիսկ Եզրիպտոսի պես երկրում: Եվ մնացած բուրգերն ու սֆինքսները ավելի փոքր են: Բուրգեր շինելու սովորությունը անհետանում է Հին կայսրության հետ: Միջին կայսրության ժամանակ շինարարության հսկայական թափը արտահայտվում է Թերեի շրջանի տաճարների մեջ: Բայց միաժամանակ ավելի ևս զարգանում է գերեզմանաշինությունը: Գերեզմանը բաղկացած էր երեք մասից. մի մատուռ հողի երեսին, գերեզմանական փոս ու նկուղներ հողի տակ: Մատուռը զարդարուն էր, ճարտարապետական ոճ ուներ: Նրա մեջ գտնվում էին սեղան ընծաների (պատարազի) համար, կահ-կարասիքներ, իսկ պատերը ծածկվում էին նկարներով, որոնք տալիս էին տեսարաններ մեռածի կյանքից և մեհենադրոշմ արձանագրություններով, որոնք պատմում էին այդ կյանքը կամ պարունակում էին իրենց մեջ օրհներգներ: Փոսի մեջ ամփոփվում էին զմուսած դիակները, իսկ նկուղների մեջ պահվում էին նրանց հարստությունները, գերեզմանային կյանքի համար անհրաժեշտ մթերքները:

Այսպիսով եզրիպտական գերեզմանները մի-մի թանգարաններ էին, ուր պատմությունը իր նյութերն էր ամբարում, արվեստները իրենց հարստություններն էին ընդարձակում և պահպանում: Գերեզմանները ամբողջ թաղեր էին կազմում: Այդտեղ էին և արձանագործների, նկարիչների արհեստանոցները: Այդտեղ ապրում էր հատուկ ազգաբնակություն, որ բաղկացած էր գերեզմանների պահպանության, ծեսեր և արարողությունների կատարելու համար կազմակերպած միաբանություններից, հուղարկավորության և սուգի պաշտոնյաներից՝ ողբասաց կանանցից, երգիչներից, նրաժիշտներից: Մի բոլորովին առանձնացած աշխարհ էր, իր առանձին պաշտամունքներով, առանձին աստծով, իր ոճերներով, իր նվիրագործած պոռնկություններով: Այստեղ, այս աշխարհում էին ապրում և արվեստագետները. արձանագործներ, որոնք պատարաստի արձանիկներ էին վաճառում կամ նորերն էին շինում պատվերով, նկարիչներ, զրապիներ<sup>4</sup>: Արվեստները այս առանձնահատուկ աշխարհում մի ժամանակ առանձին փառ ստացան, ոսկեդար կազմեցին, որպեսզի հետո ընկնեն:

Բայց այստեղ պետք է ասել, որ արվեստի պատմությունը ավելի խոշոր

<sup>1</sup> Ibid., p. 332.

<sup>2</sup> Maspero, t. II, p. 527.

ընդգծումներով ցույց է տալիս, թե արվեստը ժողովրդական չէր, նրա պատու-  
նըրը ազգարնակության բազմութունը չէր վայելում, այլ մատչելի էին միայն  
ընտրյալներին, ծառայում էին միայն հարուստներին և իշխողներին: Երբ խո-  
սում ենք «հավիտենական տան» մասին, պիտի իմանանք, որ սովորական  
մարդկանց, ժողովրդի ահագին մեծամասնության համար այդ տունը անա-  
պատի ավազներն էին, որոնց մեջ թաղվում էին շունեղները, առանց գա-  
զաղների կամ շատ-շատ պատահամար գնած և մեռելի հասակին չհամապա-  
տասխանող, հին ու կարկատած դազաղների մեջ: Միջակ կարողության տեր  
մարդը ո՛չ ավազի տակ էր գնում, ո՛չ էլ առանձին գերեզմանի արժանանում:  
Գոյություն ունեին հասարակաց փոսեր, որոնց մեջ իրար վրա, մինչև առաս-  
տազը դարսվում էին մումիաները:

Ժողովուրդը միայն բանվորական ուժ էր, և նրա անսահման տանջանք-  
ներով էր արվեստը այդքան վիթխարի ստեղծագործություններ կատարում:  
Ի՛նչ աշխատանք պիտի կլանած լինեն հենց նույն այդ բուրգերը, շինված այն-  
պիսի ժամանակ, երբ մարդկությունը տակավին փոխադրող, բարձրացնող մե-  
քենաներ չէր գտել և ամեն ինչ իր ձեռքով էր անում: Եգիպտական ժողովուր-  
դը իր այդ մեծ բուրգերի հետ կապել էր իր տառապանքների պատմությունը,  
որ ավանդության ձևով ապրում էր դեռ Հերոդոտի ժամանակ: Պատմահայրը  
նկարագրում է, անշուշտ, ավանդություններից վերցնելով, թե ինչպես շինվեց  
Քյոպսի (Քուֆուի) բուրգը: Ամբողջ երկիրը ենթարկված էր ամենածանր կո-  
ռի, անթիվ բանվորներ էր տալիս: Ոմանք պարտավոր էին քարերը քարշ տալ  
քարահանքերից, որոնք գտնվում էին Արաբական լեռնաշղթայում, մինչև  
Նեղոսի փեր: այդտեղ բարձում էին նավերի վրա: Տեղ հասնելուց ուրիշ եգիպ-  
տացիներ պարտավոր էին ընդունել քարերը և քարշ տալ դեպի այն լեռնաշղ-  
թան, որ կոչվում է Կրիական: Այսպիսով անընդհատ աշխատում էին յուրա-  
քանչյուր երեք ամիսը հարյուր հազար մարդ: Ժողովուրդը տասը տարի տանջ-  
վեց ճանապարհ շինելու վրա, նրա վրայով քարերը քարշելու համար, մի աշ-  
խատանք, որ, ինչպես ինձ թվում է, մի քիչ միայն թեթև է բուրգեր շինելուց:  
Իսկ բուրգի շինությունը, նույնքան բանվորների աշխատանքով, տեկց քսան  
տարի: Դիողոր Սիկիլացին նույն այդ բանվորների թիվը հասցնում է 360 հա-  
զարի<sup>2</sup>: Մի հատ քար մի տեղից մյուս տեղափոխելու համար երկու հազար  
մարդ աշխատել են Երեք տարի:

Ջուր չէ, ուրեմն, որ մի աշխատանքի արտասովոր դժնդակությունը ցույց  
տալու համար՝ նրան անվանում են «եգիպտական աշխատանք»: Հարյուր կամ  
երեք հարյուր հազար մարդու աշխատություն քսան տարվա ընթացքում՝ մեկի  
համար շիրիմ կառուցանելու մտքով: Այսպիսի բան կարող էր տեղի ունենալ  
հասարակական այն պայմանների մեջ, երբ մեկը քմահաճ մի բռնակալ է,  
իսկ ամբողջ ժողովուրդը՝ ստրուկ<sup>3</sup>: Այսպիսի պայմաններ հատուկ էին ամբողջ  
Արևելքին և այստեղ ամենուրեք արվեստի մեծագործությունները, ինչ շարժով  
էլ նրանք արտահայտվեին, հիմնված էին ժողովրդական ուժի շահագործման  
վրա:

Թուրքերից և գերեզմաններից անցնենք Եգիպտական տաճարներին, որոնք  
վերաբերվում են թեքական թագավորների շրջանին: Շինարարական արվես-  
տը տալիս է հույակապ կերտվածքներ, որոնց առանձնահատկությունը դար-

ձյալ խոշոր շափերն են: Թեքեի թագավորները աշխարհակալներ էին, հազ-  
թակա՞ն արշավանքներ էին տարածում Եգիպտոսի սահմաններից դուրս: Այդ  
հաղթանակի պատերազմները հավերժացնելու, փարավոնների փառքը ցուցա-  
դրելու համար էր, որ Եգիպտոսի Երկնքի տակ արձանացան թեքական տա-  
ճարները, դարձյալ հիացուցիչ հրաշակերտներ: Բազմահաղթ փարավոնները  
իրենց արշավանքներից վերադառնում էին հարուստ ավարներով և մանա-  
վանդ գերիների ամբողջ բանակներով: Բանվորները հենց այդ գերիներն էին  
և եգիպտական ժողովուրդը այլևս առիթ չուներ դժգոհ լինելու այդ մեծ շի-  
նություններից:

Տեղական հզոր ինքնուրույնություն է ցույց տալիս տաճարների ճարտա-  
բանությունը: Եգիպտական արվեստի ընդգրկած ձևն էր տափակ առաս-  
տաղ՝ սյունների վրա հաստատված: Կամարը թեև հայտնի էր եգիպտացիներին,  
բայց երկրորդական նշանակություն ուներ և գործ չէր անվում նշանավոր շի-  
նությունների մեջ: Կտուրները քարե էին և նրանց ճնշիչ ծանրության կարող  
էին դիմադրել հուսկու սյունները: Եվ այդ սյունները, իսկ որ, ապշեցնող խոշո-  
րություն ունեին, կազմում էին Երկար ու խիտ շարքեր, որոնք բաժանված էին  
իրարից նեղ արանքներով: Խոյակները լոտոսի կամ պապիրոսի ծաղիկների  
ձևն էին ներկայացնում:

Այդ շինությունները բաղկացած էին բազմաթիվ մեծ ու փոքր սենյակնե-  
րից և ներկայացնում էին բարդ հատակագիծ, որի գլխավոր հատկությունն է  
սյունների մեծ բազմությունը: Մեծագործությունը հանդես է գալիս ամեն երե-  
վակայություն ճնշող արտակարգ շափերով: Երևակայեցեք մի դահլիճ, որ օւնի  
134 սյուն: Այն էլ ի՛նչ սյուններ: Աշտարակների մի ամբողջ անտառ, — ասում  
է նկարագրողներից մեկը. — յուրաքանչյուր սյունի թանձրությունը հավասար  
է Փարիզի Վանդոմյան հրապարակի հաղթական սյունին. բարձրությունը 70  
ոտնաչափ, տրամագիծը՝ 11 ոտնաչափ. խոյակն ունի 65 ոտնաչափ շրջագիծ:  
Ինքը դահլիճը ունի 319 ոտնաչափ լայնություն, 150 ոտ. երկարություն: Եվ  
այդ բոլոր սյունները, պատերը ծածկված են հարթաքանդակ պատկերներով,  
մահնադրոշմ արձանագրություններով:

Բայց եգիպտական ճարտարապետության գլուխգործոցն էր մի լճի ափին  
շինած մի խորհրդավոր ու ահագին շինություն, որին հույները տվին լաբ-  
յոսերի նիթոս անունը: Նա բաղկացած էր երեք հարյուր սենյակից և նրանց  
մեջ զետեղված բազմաթիվ փոքր ու մեծ բակերից: Հին աշխարհը նրան հրա-  
շալիք էր համարում: Այժմ ավերակների մի կույտ է: Ավերված են Թեքեի տա-  
ճարները, ավերված են և արքայական պալատները, որոնք նույնպես ճարտա-  
բանական մեծագործություններ էին ներկայացնում:

Այսքան փառահեղ է Եգիպտոսը արվեստների պատմության մեջ: Բայց ի  
վերջո նկատենք, որ այդ գեղարվեստական ճոխությունները, այնուամենայ-  
նիվ, միայն մի հայտնի աստիճան գնդագացած գեղագիտական ճաշակ են ներ-  
կայացնում: Արձանագործության, քանդակի, նկարչության մեջ տիրապետում  
է միանմանությունը: Նրանք տալիս են շատ հարուստ բովանդակություններ,  
պատկերացնում են կյանքի հարյուրավոր տեսարաններ, բայց նրանց տեխնի-  
կան կանգ է առած որոշ, խիստ պայմանականության մեջ: Չկան արվեստա-  
գետի մտքի և երևակայության խոյանքներ. ամեն առարկայի համար նշանակ-  
ված է պարտադիր ձև: Այսպես, պատկերների մեջ կարգ էր ներկայացնել  
նարդկանց գլուխն ու ոտները կողքից, իսկ ամբողջ իրանը՝ առջևից, և այդպի-

<sup>1</sup> Геродот, перев. Мищенко, М., 1885, т. I, стр. 177.  
<sup>2</sup> Tome I, p. 74.  
<sup>3</sup> Бокл, «История цивилизации в Англии», СПб, 1895, стр. 30.

<sup>1</sup> Lenormant, t. III, p. 370.

տով ստացվում էր անբնականություն: Մարմնի զանազան մասերի վերաբերմամբ էլ պայմանականությունը կանոններ էր դրել: այսպես, ոտի բոլոր մասերը չէր կարելի նկարել, աչքը երեսի վրա խոշոր տեղ էր գրավում: Գունատները չէր կարելի նկարել, աչքը երեսի վրա խոշոր տեղ էր գրավում: Գունատները պատկերագրությունը որոշված գույներ ուներ զանազան դեպքերի համար: Գոյություն չունեին գույների խաղ, գույների խառնուրդ: Այս պայմանականությունը դարերի ընթացքում մեղմացել է, և արվեստը դարձրեց արհեստ, ընդօրինակություն:

Արվեստների իսկական օրրան համարվող Քաղաքան, ինչպես նաև առհասարակ ամբողջ Միջագետքը, բոլորովին այլ հանգամանքներ ունեցող միջավայր են ներկայացնում: Մինչդեռ Նեղոսի հովիտը ապշեցնում է այսօրվա այցելուին իր հոյակապ հնությունների առատությամբ, այստեղ՝ Եփրատի և Տիգրիսի ափերին, ընդհակառակն, ոչինչ չէ երևում, բացի հողի բլուրներից, որոնք ծածկել ու պահել են իրենց մեջ արվեստի հիշատակարանները: Նույնիսկ Քարեղևի և Նինվեի պես աշխարհահռչակ մեծ քաղաքները չեն խուսափել փլատակներ դառնալու և հողակույտերով ծածկվելու ճակատագրից:

Մի այսպիսի ճակատագիր սահմանել է ինքը ընտելությունը նրանով, որ քար չէ տվել երկու մեծ գետերի ընդարձակ հովտին: Քարը այստեղ փոխարինողը հողն է, որ մարդու ձեռքով կավ է դառնում, ստանում է աղյուսի ձև: Երևարարական ամենազխալոր, ամեն տեղ տարածված նյութն այս է: Քարը հեղվից ներմուծվող նյութն է, որ հենց այս պատճառով էլ ոչ առատ է, ոչ էլ խոշոր չափեր ունի:

Տիգրիս-Եփրատյան հովտի արվեստը երեք մեծ շրջան ունի. առաջինը հին քաղաքականն է, միացած գետերի ստորին հոսանքներում, ծովի մոտ և ապա Բաբելոնում: Երբ քաղաքականապես ընկնում է քաղաքա-բաբելոնական աշխարհը, նրա արվեստները անցնում են հյուսիս, Ասորեստան, ուր ստանում են տեղական ինքնուրույն ձևեր: Այս ասուրական շրջանը երկրորդն է: Իսկ երրորդ շրջանը Ասորեստանի անկումից հետո է սկսվում, դարձյալ Բաբելոնում և կոչվում է Նոր-Բաբելոնական շրջան:

Մի քանի ընդհանուր գծերով՝ այսպիսի պատկեր է ներկայացնում արվեստը երկու գետերի հովտի երեք հազարամյա քաղաքակրթության ընթացքում: Երևարարական նյութը, աղյուսը հնագույն շրջաններում գործ է ածվում անթուրթ դրոմիան մեջ, այսինքն միայն շորացրած (արևի տակ): Այս տեսակ աղյուսները սպիտակագույն են: Այնուհետև շինությունների արտաքին կողմերը սկսում են ծածկել թրծած (կրակի մեջ եփած) աղյուսներով, որոնք ալիլի ամուր են, կարմիր գույն ունեն: Սպիտակ և կարմիր աղյուսների գուսավորության եղանակից ստացվում են զանազան ձևեր, որոնք զարդարանքներ են դառնում պատի համար: Բացի դրանից աղյուսները ծածկում են կիտվածով (մինե, email) և այս միջոցով զարդեր ու պատկերներ նկարում: Քարը գործ է ածվում գլխավորապես արձանների և քանդակների համար: Ասորեստանը Քաղաքայից ավելի առատ չափերով ունի այս նյութը իր տրամագրությամբ տակ, որովհետև ավելի մոտիկ էր գտնվում լեռնաշղթաներին:

Աղյուսը իբրև գլխավոր նյութ բազմաթիվ ինքնուրույնություններ է մտցրել ճարտարապետական արվեստի մեջ, որոնցից կհիշատակենք գլխավորները: Նախ և առաջ այս նյութը այնքան դիմացկուն չէ, ուստի հարկավոր է լինում մեծ հաստություն տալ պատերին: Աղյուսաշեն քաղաքների շրջապատ թիպները, թշնամուն գիմազրելու և անխորտակելի պատվար ներկայացնե-

<sup>1</sup> Lenormant, t. V, p. 320—321.

լու համար, անչափ թանձր, հաստ են: Իսկ շինությունների մեջ այդ հաստությունը պահանջում է այն հանգամանքը, որ առաստաղը պահելու համար քարե ալուներ չկան և այդ պատճառով էլ զարգանում է առաստաղի կամարաձև շինությունը: Մյուսների գործածությունը հայտնի էր և քաղաքա-ասորական շինարարության մեջ, բայց, իհարկե, քիչ չափերով, քանի որ քարը հեղվից էր բերվում: Քարե սյուները փոքրիկ են, բարակ, գնդաձև խոյակներով: Գործ էին ածվում և մետաղով ծածկված փայտե սյուներ: Կամարները միատեսակ չէին շինվում, այլ ունեին զանազան ձևեր՝ կիսաբոլորակ, կիսաձվաձև, կոր, պայտաձև: Ասորեստանի շինությունների վրա երևում են և զմբեթներ, որոնք նույնպես միաձև չեն: Պատերի մեջ պատուհաններ չկան, ուստի դռները շինվում են շատ լայն: Լույսը բացի դռներից, թափանցում է և վերևից՝ առաստաղից:

Նշանակելի հանգամանք է, որ ճարտարապետությունը նոր-նոր ձևեր է ցույց տալիս պալատների շինության մեջ, մինչդեռ տաճարները ներկայացնում են նախնական ձևեր, որ կար նախապատմական ժամանակներում: Նրանք իրենց ամբողջությամբ ներկայացնում էին բուրգի ձև և բաղկացած էին իրար վրա բարձրացող հարթատանիք հարկերից: Հիմքը հավասար քառակուսի էր: Երկրորդ հարկը առաջինից փոքր, երրորդը՝ երկրորդից, և այսպես գնալով վերևի հարկը ամենից փոքրն էր և նրա կատարի վրա էլ գտնվում էր սրբատեղին, ձոխ զարդարված, ուր պաշտամունք էր կատարվում և զոհեր էին մատուցվում:

Դիմելով բաբելա-ասուրական արձանագործության և քանդակագործության, մենք այստեղ տեսնում ենք նույն ընդհանուր, հիմնական սկզբունքները, որ տեսանք Եգիպտոսում: Դարձյալ կեցվածքի, ձևերի պայմանականություն, անբնականություն, միանմանություն և այլն: Բայց այս արվեստը, իհարկե, ունի իր տեղական ինքնուրույնությունը, իր ոճը: Մանրամասնություններ ներկայացնելու մեջ Քաղաքայի և Ասորեստանի արվեստագործը ավելի առաջ է գնացած, թեև մանրամասնություններին է զոհում ամբողջությունը: Նա առանձին ուշադրություն է դարձնում ձեռքերի և ոտների մկանները նկարելու վրա և չափազանցության ու անբնականության է հասցնում իր եռանդը: Առանձնապես մանրամասն ներկայացնում է մորուքն ու մազերը իրենց հյուսվածքներով:

Ասուրական արձանագործությունը և քանդակագործությունը իրենց անփական ինքնուրույնությունն էլ ունեն: Դրա արտահայտությունն են թևավոր սֆինքսները, թևավոր առյուծներ և ցուլեր՝ մարդկային գլուխներով: Առհասարակ ավելի լավ հաջողվում էր կենդանիներին ներկայացնելը և այս կողմից բարձր կատարելության հասավ մանավանդ նոր-բաբելոնական արվեստը: Առանձնապես զարգացած էր և քանդակագործությունը մետաղների և զանազան կիսաթանկագին քարերի, օրինակ, բյուրեղի վրա: Խեցեգործության մեջ սչքի ընկնող են ապակյա ամանները իրենց զարդերով:

Բովանդակության կողմից բաբելա-ասուրական արվեստը ավելի ևս միակողմանի էր, քան Եգիպտոսում: Նա ծառայում էր աստվածներին ու թագավորին: Եվ այս ստրկությունը նախորոշած նյութին ավելի խիստ ու հրամայողական էր մանավանդ Ասորեստանում, ուր, ինչպես տեսանք, ուժի, տիրապետության, արյունոտ զազանության գաղափարն էր պաշտվում իբրև պետական իմաստություն: Թագավորի արձան, թագավորի պատկեր, թագավորը

<sup>1</sup> Lenormant, t. V, p. 320—321.

որսի ժամանակ, թագավորը պատերազմում, պատերազմական տեսարաններ—բերդերի պաշարում, մարդկանց կոտորած, գերևարություն, զինվորական արշավանքներ— այս սյուժեներն էին տրվում ասորեստանցի արվեստագետին: Եվ արդեն այս բաներից դուրս՝ կյանքի մնացած բոլոր երևույթները երկրորդական, արհամարհելի էին: Պայմանականությունը այն աստիճան էր, որ թագավորը միշտ ավելի բարձրահասակ էր նկարվում, քան իբր հպատակները, ասորին ավելի բարձրահասակ էր, քան օտարերկրացին:

Հին աշխարհը շատ էր սիրում արվեստները, շատ էր տալիս արվեստի մեծագործություններ: Բայց դեռ պիտի դուրս գար մի ժողովուրդ, որ արվեստը հասցներ իր բարձրագույն զարգացման, ազատեր պայմանականություններից ու ստրկությունից, բնական դարձներ, գեղարվեստի իսկական, մաքուր, ազատ թագավորությունը հաստատեր: Դա հույն ժողովուրդն էր, որ, սակայն, նախապես աշակերտեց Բաբելոնին և Եգիպտոսին:

#### Գլուխ չորրորդ

### ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱՌԵՎՏՈՒՐ

1. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ: 2. ԲԵՇԿՈՒԹՅՈՒՆ, ՆՄԱՅՈՒԹՅՈՒՆ: 3. ԱՌԵՎՏՈՒՐ: 4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

**1. Գիտություն:** Քաղաքա-եգիպտական քաղաքակրթությունն իր բարձր, բոլոր ժամանակներին զարմանք պատճառած զարգացմամբ վկայում է, իհարկե, և այն, որ այդպիսի մեծագործություններ կատարել առանց հիմնավորապես ծանոթ լինելու դրական գիտությունների զանազան ճյուղերին՝ չէր կարելի: Եվ իրավ, գիտության ասպարեզում էլ մենք տեսնում ենք մարդուն տիրացած շատ նշանավոր հարստությունների:

Տարաբախտաբար, քաղաքա-եգիպտական աշխարհին հայտնի գիտության բոլոր ճյուղերը չեն թողել գրավոր մանրամասն հիշատակարաններ, ուստի նրանցից մի քանիսը այսօր հնության դարերի առեղծվածներ են մնում, և ոչ մի հնար չկա, գոնե առայժմ, թափանցելու նրանց զաղտնիքի մեջ: Այս հանգամանքը բացատրվում է մասամբ նրանով, որ գիտությունը նույնպես քրմական դասակարգի սեփականություն էր և նրա ուժն էր կազմում. ուստի և այդ դասակարգը շատ բան զաղտնի էր պահում, առանց գրավոր բացատրություններ թողնելու, որպեսզի օտար մարդիկ շտիրանան գիտության և շմբեցն իր հետ: Եգիպտոսում ծաղկած գիտություններից մի քանիսի մասին վկայություններ տալիս են մեզ հասած պատմական հիշատակարանները, իսկ Քաղաքայում շատ բան կորել է միանգամայն անհետ, քանի որ, ինչպես գիտենք, աչդ երկրի շինարարական նյութը անկայուն է եղել և դարերի ընթացքում հիշատակարանները փոշիացել են:

Այն իրողությունը, որ Եգիպտոսի պատմության ամենահին, կես-առասպելական շրջանում մեծ բուրգերի նման լեռնաձև շինություններ են կառուցվել, արդեն մի վկայություն է, թե նույնիսկ այդ նախնական ժամանակներում եգիպտացիները լավ ուսումնասիրել էին բնությունը, տիրացել էին նրա ուժերը շահագործելու գիտության: Այդպիսի մի շինարարություն չէր կարող գլուխ գալ, եթե շինողները շատ լուրջ տեխնիկական պատրաստություն չունենային: Լուռ քարերը վկա են, որ նրանք հիմնավորապես ծանոթ էին երկրաչափության, բնագիտության (ֆիզիկա), թվագիտության: Այսօրվա գիտությունն անգամ չէ կարողանում պարզ ու անսխալ բացատրել բոլոր այն խնդիրները, որ առաջ են բերում Նեղոսի ափերի զարմանալի կառուցվածքները: Այդ խնդիրների մեջ կան այնպիսիները, որոնք զաղտնիքներ են, անբացատրելի հենց այն պատճառով, որ նրանց բանալիները իրենց հետ գերեզման են տարել հին եգիպտացիները:



Հին հնախուզական գյուտերից մեկը բաց է արել, թե նույնիսկ էլ եկ-  
տ ր ա կ ա ն ու թ յ ու ն ը, որ համարվում է ամենանորագույնը գիտություն-  
ների մեջ, հայտնի էր եգիպտացիներին: Նրանք, ինչպես երևում է, գիտեին  
շինել շանթարգելներ՝ բարձր աշտարակների վրա տնկված կայմեր, որոնք  
ծածկվում էին պղնձով, այսինքն այն մետաղով, որ այսօր էլ էլեկտրականու-  
թյան ամենալավ հաղորդիչն է համարվում<sup>1</sup>:

Բնության ուժերի մանրազնին ուսումնասիրությունը հանդես է գալիս և  
զրաբաշխական գիտություն ու տեխնիկայի զարմանալի զարգացման  
մեջ: Նրա հրաշալի հիշատակարաններն են, օրինակ, Նեղոսի ջրանցքները,  
ջրերի ընթացքը կանոնավորող հսկայական ամբարտակները: Եգիպտոսում  
գոյություն ունեւր, Հերոդոտի վկայությամբ, և ամբողջ մի մեծ արհեստական  
լիճ, որի վրա շինված էր հուշակավոր լաբյուրինթոսը, բայց որ լաբյուրինթո-  
սից էլ հրաշալի մի ձեռակերտ էր: Այդ արհեստական մեծ փոսը լցվում էր Նե-  
ղոսի ջրերով մի արհեստական ջրանցքի միջոցով: Վեց ամիս ջրերը թափ-  
վում էին լիճը, վեց ամիս դուրս էին գնում և թափվում Նեղոսի մեջ: Եվ  
այդ ջրամբարը տեխնիկայի մի աննպատակ խաղ չէր: Նա շինված էր ոռոգե-  
լու համար մի բոլորովին անջրդի տեղ: Եվ ոռոգումը դարձնում էր անջրդի շր-  
ջակայքը մի ամենապտղատու երկիր<sup>2</sup>:

Պակաս նշանավոր չէր եգիպտացիների հմտությունը տարրաբան Դե-  
թյան (քիմիա) մեջ: Դրա հավիտենական հուշարձանն է դիակների զմրու-  
սումը, մի գիտություն, որի գաղտնիքը չէ կարողանում լիովին բաց անել  
նույնիսկ մեր ժամանակը, որ այնքան պանծալի նվաճումներ է արել բնա-  
կան գիտությունների ասպարեզում: Թե ինչպես էր կատարվում դիակներին  
անփառություն հաղորդող այդ գործողությունը, մի քանի տեղեկություններ այս  
մասին հաղորդել են հույն մատենագիրները, որոնցից իմացվում է, թե գոր-  
ծադրվում էին ինչ-որ առանձին կերպով պատրաստված հեղուկներ, անու-  
շահոտ օծանելիքներ, յուղեր: Դիակը փաթաթելու համար գործ էր անում մի  
տեսակ մածուցիկ հյուսի մեջ թաթախված լայն ժապավեն, որի երկարությունը  
հասնում էր 5000 մետրի:

Այսպիսով պատրաստված մումիաների պես հավիտենական էին և եգիպ-  
տական ներկերը, որոնք պատրաստվում էին հանքային բաղադրություննե-  
րից: Քրիստոսից 4000 տարի առաջ կառուցված մի շինություն վրա գրված  
է, թե «տաճարների գունավոր զարդարանքները պետք է հավիտենական լի-  
նեն, ինչպես աստվածները»: Եգիպտական աստվածները շատ վաղուց են մա-  
հացել, բայց եգիպտական քիմիկոսների պատրաստած ներկերը այսօր էլ  
թարմ են մնում, բոլորովին երկյուղ չունենալով օդի և եղանակի ազդեցու-  
թյունից: Ապակու գյուտը մինչև վերջին ժամանակները վերագրվում էր փյու-  
նիկեցիներին: Բայց այժմ ապացուցված է, որ ապակին գունավոր թե անգույն,  
հայտնի էր Նեղոսի հովտում, փյունիկեցիներից շատ առաջ<sup>3</sup>:

Գիտական այս պաշարի վրա պիտի ավելացնենք և այն գիտելիքները,  
որոնց գոյությունը քաղցեա-եգիպտական աշխարհում ապացուցում են, ինչպես  
տեսանք վերևում, գրականության տեսության մեջ, Նինվեի մատենադարանի  
աղյուսները՝ աշխարհագրություն, կենդանաբանություն, բուսաբանություն,  
հանքաբանություն: Քաղցեայում շատ

լավ դրված էր և թվաբանությունը, որ շափի ու կշռի մի ամբողջ կանոնա-  
վոր սխեմա էր սահմանել:

Բայց մինչև այստեղ թված գիտությունները կամ տեղական զարգացում  
են ունեցել, կամ գաղտնիք են մնացել ուրիշ ազգերի համար և կամ, վերջա-  
պես, շատ մեծ ազդեցություն չեն արել քաղաքակիրթ մարդկության վրա:  
Մինչդեռ կա մի գիտություն, որի կատարած դերը շատ նշանավոր է հան-  
րամարդկային քաղաքակրթության պատմության համար և որի գյուտերը տա-  
րածվել և յուրացվել են ոչ միայն Ասիայում, այլև Եվրոպայում և մասամբ  
պահվել են մինչև մեր օրերը: Դա աստղաբաշխությունն է, որ թեև  
եգիպտոսում էլ առաջացած էր, բայց իր իսկական օրրանն ու զարգացման  
հայրենիք ճանաչում է Քաղդեսն:

Եփրատ-Տիգրիսյան հովտում մարդիկ գիտում էին երկինքը և սովորել էին  
կարդալ նրա գաղտնիքները շատ հին ժամանակներից: Դարձյալ նույն Սար-  
գոն Աին թագավորի ժամանակ (3800 թ. Ք. ա.) երկնքի գիտությունը արդեն  
գրականություն էլ ունի: Դիտող ու քննող աչքին նպաստում էր երկրի բարեքեր  
կլիման: Հարավային երկինքը, պարզ ու խոր գիշերներին վառ աստղերի մի  
աճապին քանակություն էր ցույց տալիս: Աշխարհագրական այդ լայնության  
վրա երկնային մաթեմատիկայի շարժումները ավելի առաջ են, քան հյուսիսում:  
Նրանց հետեւում, նրանց ճանապարհները քննելու համար կատարվում էին  
կանոնավոր և անընդհատ դիտողություններ: Տաճարներն ու արքայական պա-  
լատներն ունեին աշտարակներ, որոնք դիտարաններ էին: Հարավային գիշեր-  
ները թույլ էին տալիս, որ դիտողություններ կատարվեն և սովորական աչ-  
քով: Բայց քաղցեական աստղաբաշխները, ինչպես երևում է, գիտեին և դիտակի-  
նոսպաձև ապակիներ գործ անել: այսպես է վկայում մի մեծ գործիքի մնա-  
ցորդ, որ գտնվել է Նինվեի ավերակներում: Աստղաբաշխներ էին, իհարկե,  
դարձյալ բուրմերը: Իրենց դիտողությունների մասին նրանք հայտարարու-  
թյուններ էին ուղարկում թագավորին:

Քաղցեական աստղաբաշխները ուսուցանում էին, թե երկինքն ու երկիրը  
երկու կտորներ են մի քառասական հրեշի, որ ծնվել է այն անսահման օվկիա-  
նոսի ծոցում, որի ալիքները լիզում են ինչպես երկնքի վերի մասերը, նույն-  
պես և երկրի ստորին մասերը: Հրեշի ձեղքված երկու կտորներից Բել-Մար-  
դուկ աստվածը շինել է երկու կամար՝ երկնային գմբեթը և երկրի ցած  
կամարը: Մրանք իրար հետ կապված են իրենց հիմքերում մի բոլորաձև թում-  
բով, որ արգելում է օվկիանոսի ջրերին թափանցել մեջտեղի տարածուցուն-  
ները: Երկիրն էլ, երկինքն էլ անշարժ են: Աստղերը կրակե գնդեր են, գոյա-  
ցած երկնային ջրերի մեջ և մտնում են մեր աշխարհն ու դուրս են գալիս այն  
ծակերով, որոնք բացված են երկնակամարի մեջ, հորիզոնի հավասարության  
վրա<sup>4</sup>:

Աստղերը բաժանված էին առանձին կարգերի, ըստ իրենց շարժողությու-  
նների և դիրքի: Նրանք կոչվում էին մոլորակ և անմոլոր աստղեր: Մոլորակ-  
ները, թվով յոթ հատ, «մեկնիչ» անունն էին կրում. նրանք չէին ենթարկված  
մի կանոնավոր և մշտապես միանման ընթացքի, ոչ էլ անշարժ էին: «Մեկ-  
նիչ» անվանվում էին այն պատճառով, որ համարվում էին երկնքի խորհուրդ-  
ների թարգմաններ: Յոթ մոլորակների (յոթնաստեղյան) սխեմա մեջ էին  
ցերեկվա և գիշերվա լուսատուները՝ Արեգակ և Լուսին: Այնուհետև գալիս էին

<sup>1</sup> Ганс Кремер, «Вселенная и человечество», т. V, СПб, с. 116.

<sup>2</sup> Геродот, 11, 148.

<sup>3</sup> Кремер, стр. 120—123.

<sup>1</sup> Lenormant et Babelon, V, p. 173.

<sup>2</sup> A. Bouché -Leclercq, «L'Astrologie Grecque», Paris, 1889, p. 40.

հինգ մոլորակներ հետևյալ անուններով. Դասիինու (հայերեն՝ Երևակ, լատիներեն՝ Սատուրն), Դիլրատ (լուսաբեր, վեներա), Քեմանու (Երևակ, Յուպիտեր), Բիրբու (Հրատ, Մարս), Մոստաբարու-Մունթանու (Փայլածու, Մերկուր):

Մոլորակները թեև չունենին միշտ մի գծով գնացող ճանապարհ, բայց նրանց շարժումները, այնուամենայնիվ, կանոնավորության էին ենթարկված:

Այսպես, Արեգակը իր շարժումներով բերում էր տարվա եղանակները: Երբ նա հասնում էր երկնքի ամենաբարձր կետին (գեոհիթ), գալիս էր շոգ ամառը, իսկ երբ իջնում էր ամենացած կետին, ցուրտ ձմեռն էր գալիս: Երկնքի այն շերտը, որ այդ երկու կետերի մեջ էր գտնվում և ուր Արեգակը կատարում էր իր ճանապարհորդությունները, աստղաբաշխության մեջ հիմնական նշանակություն ստացավ: Այդ շերտն էր, որ հետո հունական աստղաբաշխության մեջ ստացավ մինչև այժմ էլ գործածական *Ջո դի ա կո ս* (Կենդանական) անունը: Քաղղեացիները բաժանեցին այդ շերտը նախ ութ, ապա տասներկու հավասար մասերի. ամեն մի մասը ուներ իր նշանը, իր կենդանական անվանումը, ինչպես անվանում են մեր հին աստղագիտական գրվածքները: Կենդանակերպ կոչվում են նրանք այն պատճառով, որ համարյա ամբողջովին զանազան կենդանիների կերպարանքով էին ներկայացվում: Այդ տասներկու բաժանմունքներով կամ խորաններով անցնում էին յոթ մոլորակները իրենց շարժումների ընթացքում: Արեգակը յուրաքանչյուր կենդանակերպի մեջ մնում էր մի ամիս:

Քրմերը կարծում էին, թե ձմեռը ցուրտ է լինում այն պատճառով, որ այդ ժամանակ արեգակը սուզվում է երկնային ծովի մեջ: Այդ հասկացողության հետևություն էլ *Ջոդիակոսի* այն բաժանմունքները, որոնց միջով անցնում էր Արեգակը այդ ցուրտ ժամանակներին, չրի գաղափարն էին ներկայացնում Կարիճ-մարդ (այդտեղից էր Արեգակը սուզվում ջրերի մեջ), Այծձուկ, *Ջրոս* (ամենաառատ անձրևների ժամանակը), *Չուկ*: Գարնանային գիշերահավասարին արեգակը դուրս էր գալիս ծովից և այդ ժամանակի կենդանակերպն էր *Յուլը* (ինքը արեգակը), որ իր մարմնի առջևի մասով ջրերից դուրս եկողի տեսքն ուներ: Այնուհետև արեգակը տարվա ամենագեղեցիկ ժամանակները ցույց տալիս, անցնելով բարեբեր Երկավորի (երկվորյակ պատանիների) կենդանակերպով, որպեսզի դառնա մի անագորույն առյուծ, մտնելով Առյուծ կենդանակերպի մեջ (ամառվա հրաշունչ տոթերը) և միայն անցնելով քնքոջ Կույսի խորանը, մեղմացնում էր իր ջերմությունը: Այս ութ կենդանակերպերի վրա հետո ավելացան չորսը՝ Խոյ, Խեցգետին, Կշիռ և Աղեղնավոր:

Այս կերպով ուսումնասիրվում էին և մյուս մոլորակների շարժողությունները *Ջոդիակոսի* բաժանմունքներով: Լուսինը Քաղղեացի աստղաբաշխների ըմբռնումով մի գունդ էր, կեսը խավար, կեսը փայլուն լուսատու: Իր այս կեսերից մեկն ու մեկն էլ լուսինը ցույց էր տալիս երկրին: Աստղաբաշխները մանավանդ լավ ուսումնասիրել էին այն մոլորակը: Լուսնի խավարումները գուշակվում էին վաղօրոք, համարյա նույնպիսի ճշտությամբ, ինչպես այդ անում է այսօրվա գիտությունը: Բայց արեգակի խավարումները նախատեսել չէին կարողանում քաղղեացիները:

*Ջոդիակոսի* 12 բաժանմունքները ընդունված են և մեր ժամանակներից գիտության մեջ: Այսօր էլ մեր օրացույցները յուրաքանչյուր ամիս նշանակում են այն կենդանակերպերը, որոնք Քաղղեացյան են կերպարանավորվել: Բայց

միայն այս չէ քաղղեական աստղաբաշխության թողած ծառայությունը: Եփրատ-Տիգրիսյան հովտում էր, որ փոլորակը սկսեցին բաժանել 360 հավասար մասերի կամ աստիճանների, յուրաքանչյուր աստիճանը 60 րոպեի, յուրաքանչյուր րոպեն՝ 60 վայրկյանի: Քաղղեացիները գիտեին, որ արեգակնային տարին ունի 365 օր, բայց գործ էին ածում լուսնային տարի, 360 օր: Այդ տարին ունի 12 ամիս, յուրաքանչյուրը հավասարապես 30 օր: Օր ու գիշեր 24 ժամ էր՝ 12 կրկնակի ժամ, ինչպես այժմ: Ժամն ուներ 60 րոպե, րոպեն՝ 60 վայրկյան: Ամիսը բաժանվում էր չորս շաբաթների, շաբաթը՝ յոթ օր՝ մոլորակների հաշվով: Յուրաքանչյուր ամսվա մեջ 4 օր, 7-ին, 14-ին, 21-ին և 28-ին հանգստության օրեր էին, երբ դադարում էին աշխատանքները, երբ նույնիսկ զոհաբերություններ չէին ընկնում, թագավորը կառք չէր նստում և դատաստան չէր անում, դադարեցվում էին պատերազմական գործողությունները: Քանի որ 360 օր ունեցող տարին չէր համապատասխանում արեգակնային տարուն, յուրաքանչյուր վեց տարին մի անգամ ավելորդ հինգ օրերից կազմվում էր տասներեքերորդ ամիսը: Տարին սկսվում էր գարնանային գիշերահավասարից, որ քնաթիռն վերակենդանություն էր բերում<sup>1</sup>:

Այս հաշիվները, այս բաժանումները դրական, ճշմարիտ գիտելիքներ էին, դուրս հանված բնության անընդհատ ուսումնասիրություններից: Բայց քաղղեացի գիտնականներն իրենց գործին նայում էին ոչ թե մաքուր գիտության տեսակետից, որի նպատակն է միայն ճշմարտություններ հաստատելը, այլև գործնական պահանջների տեսակետից: Նրանք անկարող էին ընդունել, օրինակ, որ աստղերը լուկնրա համար են, որ լույս տան գիշերային խավարի մեջ: Այդ գիտունները ամենից առաջ հոգևորականներն էին և հավատում էին ու հավատացնում, թե երկնային մարմիններն են պատճառ այն ամենի, ինչ կատարվում է երկրի վրա: Վայտնի էր, որ տարվա եղանակների փոփոխությունը կախված է այն դիրքից, որ բռնած է լինում արեգակը մյուս երկնային մարմինների վերաբերմամբ: Այստեղից Եգրակացվում էր, որ բոլոր երևույթներն էլ՝ թե՛ մարդկանց կյանքի և թե՛ բնության մեջ, նույնպես կախում ունին արեգակի և աստղերի դիրքերից: Մնում է ուսումնասիրել, թե ի՞նչ դիրքի մեջ ի՞նչ երևույթ է լինում և այնուհետև արդեն կարելի էր վաղօրոք իմանալ, թե ե՛րբ ի՞նչ պիտի պատահի<sup>2</sup>:

Բացի դրանից, կրոնը չէր կարող թույլ տալ, որ աստվածներ խառն չլինեն աստղաբաշխության մեջ: Երկնային մարմիններից մի քանիսը (օրինակ արեգակն ու լուսինը) հենց իրենք աստվածներ էին. ումանց մեջ բնակութուն էին հաստատած ուրիշ աստվածներ, իսկ առհասարակ բոլոր շարժուն աստղերի վարիչներն էին դարձյալ աստվածները: Իրենց շարժումներով նրանք նշաններ են անում մարդկանց, թե ի՞նչ պիտի կատարվի երկրի վրա: Եվ այդպես անողները, իհարկե, երկնաբանակ աստվածներն էին: Բարձր աշտարակաձև դիտանոցներից աստղեր դիտող քաղղեացին, եթե չգիտեր հաստատապես, գոնե հավատում էր, որ երկնքում, մոլորակների վրա, կա բարձր մի սար, «Արևելքի սար» անունով, որ դիտանոց է աստվածների համար: Այդտեղից նրանք նայում են երկրին և զանազան նշաններով իմաց են տալիս մարդկանց, թե ի՞նչն է լավ, ի՞նչն է վատ, թե ի՞նչ պիտի պատահի և ի՞նչ պետք է անել, որ վատ բանը չվնասի:

Ահա այս հասկացողությունն է, որ աստղաբաշխական դրական գիտու-

<sup>1</sup> Lenormant et Babelon, t. V, p. 174—175.

<sup>2</sup> Դր. Լեման, «История суеверий и волшебства», пер. Линд. М., 1900, с. 43.

<sup>1</sup> Проф. Зелинский, «Умершая наука» («Из жизни идей»), т. III, СПб., 1910, с. 208

թյունը դարձնում է գուշակություններ անելու միջոց, աստղաբաշխությունից ծնեցնում է աստղահամայնությունը, աստղագիտությունը, աղթարքը: Արտակարգ գուշակներ համարվում էին ամենից առաջ, իհարկե, այնպիսի արտակարգ և հաճախ երևույթներ, ինչպես են լուսնի և արեգակի խավարումները: Գուշակություններ կատարվում էին ո՛չ միայն խավարումների առանձին-առանձին դեպքերի համար, այլև ընդհանրապես, առաջուց. օրինակ, ցույց էին տալիս, թե ի՞նչ պիտի նշանակե լուսնի խավարումը, եթե տեղի է ունենում այսինչ ժամանակին, այսինչ աստեղային դրություն մեջ: Երկինքը խավարումների նշաններով չէ միայն խոսում: Ամեն օր նա պատկերացնում է աշխարհի բաները և նրան դիտել ու կարգալ էր հարկավոր: Յոթ մոլորակների դիրքերը կենդանակերպների մեջ ցույց էին տալիս որոշ դրություն, որից անպատճառ պիտի առաջանա այս կամ այն երևույթը աշխարհում: Կազմվեց նույնիսկ օրերի հատկության մանրամասն նկարագիրը. ո՛ր օրն է լավ, ո՛ր օրն է վատ: Լուսինն էր ցույց տալիս այդ բաները, ինչպես այսօր էլ մեր ևրազահանների մեջ տեսնում ենք՝ «օրն բարի է ամենայն իրաց».

«օրն շար է» ցուցմունքները: Այդ ցուցմունքների համեմատ էլ մարդը պիտի ձեռնարկեր այս կամ այն գործին կամ պիտի փոխեր որոշ ձեռնարկություններից: Վերջապես, աստղերն էլ որոշում էին, թե ինչ ճակատագիր պիտի ունենա յուրաքանչյուր մարդ: «Աստղի տակ ծնվել».

այսօր էլ գործ է ածվում այս խոսքը, որ քաղղեացիներից է մնացել: Յոթ մոլորակներից յուրաքանչյուրը, իր տիրապետության միջոցին, տարբեր-տարբեր կազմվածք, բնավորություն և բախտ է բերում նորածին մանուկին:

«Եթե լուսինը երևում է շատ փոքր, երկրի հունձը լավ կլինի, — ասում է հին քաղղեական աստղագիտական մի գրվածք: — Եթե լուսինը միևնույն տեսքն ունի ամսի 1-ին և 28-ին, վատ գուշակություն արևմտյան երկրի համար: Եթե լուսինը տեսանելի է 30-ին, լավ գուշակություն Ակկադ երկրի, վատ՝ Սիրիայի համար: Եթե արեգակը, մայր մտնելիս, ունի իր բնական ծավալի կրկնակի տեսքը, Կրեթ կապուտակ ճառագայթներով, երկրի թագավորը կմեռնի»<sup>1</sup>:

Գուշակությունները գլխավորապես թագավորի համար էին լինում, ինչպես վաղել էր ասիական բունակալության ենթարկված ժողովրդին: Բայց քաղաքական կյանքից դուրս երկրի որպիսությունն էլ կարևոր տեղ էր բռնում գուշակությունների մեջ:

Քաղղեական աստղագիտությունը անցավ Հունաստան, ուր ավելի ևս զարգացավ, իբր թե գիտական հիմքերի վրա դրվելով և փիլիսոփայական բացատրություններով ճոխանալով: Հունաստանից տարածվեց արևմտյան աշխարհում և տիրապետում էր մինչև վերջին ժամանակները: Ավելորդ է ասել, որ քաղղեական աստղագիտության ազդեցությունը ավելի հզոր էր Արևելքում, ուր այսօր էլ շատ կարևոր նշանակություն է պահպանում:

Աստղագիտությունը, առաջացած լինելով աստղաբաշխությունից, իսկապես կազմում է մի մասը այն ընդարձակ գուշակական-բժշկական գործունեության, որ վերապահված էր քաղղեական բուրմերին և կոչվում է ընդհանուր միանունով՝ մոգություն: Աստղագիտության ժանոթանալուց հետո մեզ

մնում է դիմել մոգության ուրիշ սիստեմներին. նրանց ազդեցությունը նույնպես շատ մեծ է ամբողջ մարդկության վրա և շարունակվում է մինչև այսօր էլ:

**2. Բժշկություն, հմայություն:** Կրոնական պաշտամունքների տեսությունը մեզ ցույց տվեց, որ նախնական, վայրենի մարդու հասկացողությամբ ամբողջ աշխարհը լիքն է շար և բարի ոգիներով, որոնք և բոլոր շարու բարի գործերի հեղինակն են հանդիսանում: Չար ու բարի ոգիների մեջ տեղի ունեն, ըստ այդ հասկացողությունների, հարատև մրցություն և բարի ոգին շարին հալածելու համար պատրաստ էր մարդու օգնության հասնել նրա կոշերով: Վատությունների մեջ գլխավոր տեղը հարկավ պիտի բռնեին հիվանդությունները, որոնցով շար ոգիները հարվածում էին մարդկանց: Եվ ահա կրոնի պաշտոնյաներին, զրմերին, — որոնց կոչումն էր բարի ոգիների օգնությունը հրավիրել՝ շարերին անվնաս կամ քիչ վնասակար դարձնելու համար, — վերապահվում էր և հիվանդների, այսինքն շար ոգիների զոհերի խնամատարությունը: Եվ այսպիսով, առաջին բժիշկը աշխարհի վրա նույն քուրմն է, այն տեսակ բժիշկ, որին մեր ժողովրդական բարբառը տալիս է «ջադուբազ» անունը:

Այդ բրմական, «ջադուբազական», բժշկությունը երկու տարրից է բաղկացած. մեկը որոնում է բնության մեջ գոյություն ունեցող բուժարար միջոցները, դեղեր պատրաստելով բույսերից, կենդանիներից և ուրիշ նյութերից, իսկ մյուսը՝ կրոնական ըմբռնողություններն է շահագործում՝ հիվանդին շար ոգու ձանկերից ազատելու համար: Այս երկրորդ նպատակով քուրմ-բժիշկը մտնում է ոգիների աշխարհ, աշխատում է գտնել այն ոգին, որ հիվանդացրել է այս կամ այն անհատին, աշխատում է վախեցնել նրան բարի ոգիների, աստվածների անունով, հեռացնել նրան հիվանդի մարմնից: Բացի դեղերից և ոգիներից երդմնեցնելուց՝ քուրմ-բժիշկը ունի իր ձեռքին և ներշնչման, հիպնոտիզմի գաղտնիքը, որ և գործ է դնում բուժական նպատակներով: Եվ այսպիսով նա կարողանում է նույնիսկ հոգեկան տկարություններ բժշկել, օրինակ՝ սիքսալին վիշտը, աստեղությունը, նախանձը և այլն:

Բժշկության այդ երկու հիմնական տարրերը — փորձնական կամ գիտական և միստիկական — իրար հետ խառն պահպանել են բոլոր կրոնները, որոնցից բացառություն չէ կազմում և քրիստոնեությունը: Այսօր մենք տեսնում ենք, որ եկեղեցին ունի իր սեփական բժշկական միջոցները՝ բժշկության ավետարան, զորավոր աղոթքներ, օրհնած ջուր, սրբերի մասունքներ, ուխտաանդիններ և այլն:

Արևելքի մեծ քաղաքակրթությունների ամենահին ժամանակներից մենք տեսնում ենք բժշկության այդ երկու տարրերի զարգացումը: Եգիպտոսի հնագույն գրավոր հիշատակարանները վկայում են, որ Մեմֆիսի մատենադարանում մի ամբողջ բաժանմունք կար՝ բժշկական բովանդակությամբ: Գիտության այս ճյուղը ուներ իր սեփական աստվածը, որի տաճարը մի տեսակ բժշկական ձեմարան էր: Այդտեղ պատրաստվում էին մարդիկ — շմոռանանք, որ բրմական դասից էին գրանք — հիվանդներին դեղերով բժշկելու համար: Գիտությունը այդտեղ բավական փորձ էր ձեռք բերել և կարող էր ավելի ևս շատացնել այդ փորձը, եթե կրոնն իր արգելքները չդներ: Ի՞նչպես կարող էր խորուսումնասիրություններ անել բժշկականությունը, երբ կրոնը հավատացնում էր, թե բոլոր մեռելները հարություն պիտի առնեն և, հետևաբար, ոչ մի մեռելի դիակ չէր կարելի կտրատել՝ մանրամասն զննելու համար: Դեղագործությունը

<sup>1</sup> Lenormant et Babelon, t. V, p. 184.

<sup>2</sup> Հունական աստղագիտական մի հիշատակարան է մեր «Էֆիմերտեն», որ այնքան մեծ ժողովրդականություն ունի և այժմ:

<sup>1</sup> Ф. Радцев, «Народоведение» т. 1, СПб, 1903, с. 54.

հին Ծգիպտոսում արդեն բավական զարգացած էր. հայտնի էին բազմաթիվ բույսեր, հանքեր և այլ խառնուրդներ, որոնք բուժիչ հատկություն ունեին: Դեղերը գործ էին անում կամ օժանելիքի, կամ սպեղանիքի ձևով, ինչպես նաև ընդունվում էին իբրև դեղաչուր:՝

Իսկ Հերոֆոտոսը՝ զարմանալի բաներ է պատմում թե ինչքան առաջադիմ էլ էր բժշկությունը Ծգիպտոսում իր ժամանակ: «Բժշկական արվեստը,— ասում է նա,— բաժանված է նրանց (եգիպտացիների) մեջ այնպես, որ յուրաքանչյուր բժիշկ բժշկում է միայն մի հիվանդություն: Ուստի ամեն տեղ նրանց մեջ բժիշկների առատություն է. ոմանք բժշկում են աչք, մյուսները՝ գլուխ, երրորդները՝ ատամներ, չորրորդները՝ ստամոքս, հինգերորդները՝ ներքին հիվանդություններ»: Այսպես էլ պետք է լիներ մի երկրում, ուր ժողովուրդը, ինչպես վկայում է նույն հույն պատմագիրը, ինքն առանձին խնամք էր տանում իր առողջության մասին: Համոզված լինելով, որ ամեն մի հիվանդություն մարդու մեջ մտնում է կերակրի հետ, յուրաքանչյուր եգիպտացի ամեն ամիս երեք օրվա ընթացքում մաքրում էր իր ստամոքսը փսխողական դեղերի կամ գրեխի (կլիզմ, հոգնա) միջոցով:՝

Որքան էլ իրավունք ունենանք չափազանցած համարելու բժշկական գրությունն այս փայտն նկարագրությունը, չենք կարող, արևոսումենայնիվ, չընդունել, որ այդ նկարագրությունը համենայն դեպս մի վավերական վկայություն է, որ փորձնական կամ գիտական բժշկությունը Ծգիպտոսում քաղաքակրթության ընդհանրապես ուժեղ ընթացքի հետ առաջ էր գնացել: Բայց այս զարգացումը չէր նշանակում, թե բժշկության մյուս տարրը՝ միստիկականը, վերացականը կանգ էր առել, թուլացած էր: Ընդհակառակն՝ այդ տարրն էլ որոշ սիստեմ էր ընդունել, առաջացրել էր գրականություն: Փորձնական բժշկության մեջ հմտություն ձեռք բերած մարդն էլ շարունակ ստիպված էր լինում դիմել միստիկական բժշկության: Նա իրեն բոլորովին անօգնական էր զգում ներքին շատ տեսակ հիվանդությունների և մանավանդ հոգեկան ախտերի առջև ու պիտի այդտեղ մտներ արդեն ոչ թե իբրև գիտության և փորձի մարդ, այլ իբրև կրոնիկ հպատակված մի պաշտոնյա, որ գիտեր, թե շար ոգիները, մոլորակների ընթացքը մարդու վրա տառապեցուցիչ ներգործություն էին անում: Լսելով հիվանդի գանգատները, պետք էր ասել, թե այդ շար ոգին է, որ ներս է մտել այդ մարդու մեջ և այրում, մորմոքում է նրան, կտրատում է մկանները, լափում է փորոտին և այլն, և այլն: Գուրս հանել շար ոգին այդ մարմնի միջից կլինի և բժշկությունը: Ու բժիշկը թողնում էր իր դեղերը և սկսում էր գործադրել շար ոգիներին, դեկրին հալածելու միջոցները:

Այս արդեն զուտ մոգությունն էր շրջանն է: Օտար լեզուներով այդ արհեստը կոչվում է մագիա, գործադրողը՝ մագ: Մեր լեզուն յուրացրել է մոգություն և մոգ ձևերը: Բայց մենք ունենք և մի ուրիշ անուն, որ ավելի հարազատ կերպով է արտահայտում այդ հասկացողությունը— քավոգոսություն կամ, ավելի ևս լավ՝ քավոգոսություն: Մոգության իսկական հայրենիքը Քաղդեան էր, ուր նա զարգացման բարձր աստիճանին հասավ, մշակեց ամբողջ սիստեմներ, որոնք տարածվեցին աշխարհի բոլոր կողմերը: Եվ նախ մեր «քավոգոսությունը» կամ «քաղդեությունը»՝ որևէ առնչություն ունի Քաղդեա:

անվան հետ, առնչություն՝ որ շատ ակնհայտ է, նշանակում է այդ անունով մենք իրապես հիշատակում ենք այն արվեստը, որ ծաղկեց Քաղդեայում:

Այստեղ, Եփրատ-Տիգրիսյան հովտում, թվում է, թե համատարած տիրապետությունն ստացել էր միստիկական բժշկությունը, համարյա ոչինչ տեղ չթողնելով փորձնական բժշկության համար: Ծիշտ է, մենք արդեն տեսանք, որ Համմուրաբիի օրենսդրությունը կարգավորում է, ի միջի այլոց և բժիշկների ու հիվանդների մեջ Նղած հարաբերությունները, մի հանգամանք, որ համենայն դեպս ապացույց է, թե բժիշկներ շատ կային Քաղդեայում, բայց մենք չպիտի մոռանանք, որ խոսքը այդ օրենսդրության մեջ բացառապես բժիշկների մի տեսակի մասին է, այն է՝ վիրահատների (խիրուրգների) մասին: Իսկ բժշկականության այս ճյուղը կարող ենք որոշ չափով առանձնացած մի տեսակ համարել հին ժամանակներից, ինչպես այժմ էլ այդ գոյություն ունի Արևելքի շատ կողմերում, ուր դեռ մուտք չէ գործել Եվրոպայի բժշկական գիտությունը:

Ինչ էլ լինի, բավական հավանականություն ունի այն ցուցմունքը, թե իսկական, այն է՝ փորձնական-գիտական բժշկությունը ոչ մի ժամանակ չուներ ներկայացուցիչներ Եփրատ-Տիգրիսյան հովտում: Այստեղ էլ բժշկողների բազմությունը երկրորդ տեսակից էր, այն է՝ մոգերից կամ քավոգոսներից: Այսպես վկայում է Հերոֆոտոսը, որ և պատմում է, թե բժիշկներ չլինելու պատճառով հիվանդներին Բաբելոնում դնում էին հրապարակներում, որպեսզի անցորդները հետաքրքրվեն նրանով և առաջարկեն իրենց իմացած ճարիրը:՝

Փոխարենը Քաղդեան շատ հարուստ էր մոգական բժշկության գործերով: Նինվեի ավերակների տակ պահված մեծ մատենադարանի մեջ բազմաթիվ հատակոտորներ են գտել ասորագետները, հատակոտորներ՝ որոնք ապացույց են, թե որքան հարուստ մոգական գրականություն կար հին Քաղդեայում դեռ Սարգոն Հին թագավորի ժամանակ: Նինվեի մատենադարանում գտնված մասնիկներն արտադրություններ են այդ հին քաղդեական բնագիրներից, որ կատարել է տվել Նինվեի Ասսուրբանիպալ թագավորը: Հենց այս հատակոտորների վրա էլ եվրոպացի գիտնականները կատարել են իրենց մանրամասն ուսումնասիրությունները, որոնք այսօր մեզ բացատրում են, թե ինչ հիմքերի վրա էր կառուցված քավոգոսությունը և ինչ միջոցներով էր ներգործում, մեծ հեղինակություն ձեռք բերելով հասարակ ժողովրդի միջից և իր հռչակը առաջածելով հեռավոր երկրներ անգամ:՝

Նախնական կրոններին հատուկ այն հասկացողությունը, որ շար ու բարի ոգիների բազմություն էր բնակեցնում տիեզերքի բոլոր կողմերում, առանձնապես ընդարձակ և նուրբ կերպով մշակված էր Քաղդեայում: Այստեղ դիվաբանությունը (դեմոնոլոգիա) շատ հարուստ էր, որոշ սիստեմների վերածված: Ուսումնասիրված և ճանաչված էին—եթե, իհարկե, կարելի է այսպիսի բան ընդունել— ոչ միայն դեկրի շար և բարի հատկությունները, գործողության

<sup>1</sup> Lenormant et Babelon, „Histoire“, t. V, p. 202.

<sup>2</sup> Հերոֆոտ, I, 197.

<sup>3</sup> Մոգության կամ քավոգոսության վերաբերյալ ուսումնասիրություններից մենք կարող ենք հանձնարարել իբրև աղբյուրներ.

ա) Fr. Lenormant, „La Magie chez les Chaldéens et les origines Accadiennes“, Paris, 1874.

բ) Joachim Menant, „La bibliotheque du Palais de Ninive“, Paris, 1880.

գ) C. Fiossey, „La Magie Assyrienne“, Paris, 1902. Բացի սրանցից՝ Lenormant et Babelon, „Hist.“ t. V, Maspero, „Hist.“, t. III, Леман, «История суевеири и волшебства», пер. Лонд, М., 1900.

<sup>1</sup> Maspero, „Histoire Anstienne“, p. 90.

<sup>2</sup> Հերոֆոտ, II, 84.

<sup>3</sup> Հերոֆոտ, II, 77.

<sup>4</sup> Տե՛ս ընդ Բաղդադի Հայկազեան Լեզուի», Վենետիկ.

եղանակները, գործերը, այլև այլն՝ թե՛ ինչ կերպարանքով պետք է ներկայացնել նրանց:

Յուրաքանչյուր մարդու, ծննդյան րոպեից, իր պաշտպանության տակ է առնում մի բարի ոգի, որ ապրում է նրա մեջ և որին հովանավորվածը անվանում էր իր աստվածը: Պատահում էր, որ պահապան ոգին (մեր պահապանհրեշտակների հոմանիշը), անբավական մնալով իր պաշտպանյալի արարքներից, թողնում էր նրան, հեռանում: Դատարկություն չկա բնության մեջ: Վար ոգին, որ շարունակ հետևում է մարդուն, իսկույն մտնում է նրա մեջ և սկսում է նրան տանջել: Բոլոր հիվանդությունները—այսպես էր դավանում քաղղեական հավատը— մարդու մեջ մտցնում են շար ոգիները: Այդ նրանք են, որ այրում են հիվանդի ներսը, կտրատում են նրա աղիքները, ծակոտում մսերը, լափում փորտափքը և այլն: Այդ ոգիներից հաճախ հիշատակվում են ամենաչարերը՝ «անապատի ոգին», «գիշերվա ոգին»: Չարագործ ոգիները բաժանվում էին դասերի, ամեն մեկը յոթ-յոթ՝ անհատից: Ժանտախտի, տենդի և գլխացավի կատաղի, անողոք ոգիները, մանավանդ, շատ էին ծանրթ Միջագետքի և Պարսից ծոցի փեղերի բնակիչներին, որովհետև նրանք ամենատարածված հիվանդություններն էին: Բայց չպետք է կարծել, թե շար ոգիները միայն մարմնական ցավերի, հիվանդությունների միջոցով են տանջում մարդկանց: Նրանց գործն էր առհասարակ վատություն անել աշխարհին, և վատ քամիները, փոթորիկները, մրրիկները, ամպերը ոչ միայն նրանց արարքներն էին, այլ բնակարաններ էին նրանց համար:

Մոգությունը մի պաշտպանողական գեներ էր շարագործ ուժերի դեմ: Նա ինքնըստինքյան չէր կարող երջանկություն հայթայթել, այլ միայն կարող էր մրցության մեջ այդպիսի դեր կատարել: Իր ձեռքին նա ուներ մրցության և պաշտպանության մի քանի միջոցներ—խոսքի և գրության ուժը, խորհրդադասեր, նույնպես և դեղեր:

Սա բարեգործ մոգությունն էր, սրբագործվածը, մարդու պաշտպանության նվիրվածը և կոչվում էր սպիտակ մոգություն: Կարևոր մոգություն, մարդու աննկուն և արնախում թշնամին: Մոգությունը համարվում էր շատ զորավոր միջոց՝ ոգիների վրա ազդելու համար: Գլխավորն էր գտնել երդմանցման ձև: Այդ ձևին չէին կարող շենթարկվել ոգիները, նույնիսկ աստվածները: Եվ ահա իր այդ մեծ ուժով բարեգործ մոգությունը, սպիտակը, բարի ոգիների օգնությունն էր հրավիրում՝ ախտաժեղատներին, հոգով և մարմնով հիվանդներին ֆիզիկական ցավերից ազատելու համար: Իսկ սև կախարդությունը, ունենալով նույնպիսի զորավոր ձևեր ոգիները հպատակեցնելու համար, ընդհակառակն շար ոգիներն էր իր իրավունքի տակ առնում և նրանց միջոցով տանջում էր մարդկանց: Սև մոգություն գործադրողներն էլ, իհարկե, մարդիկ էին, բայց այնպիսի մարդիկ, որոնք ի բնե վատ են և վատություններ կարող են նյութել աշխարհին և մարդկանց: Դրանք կոչվում էին կախարդ, կախարդուհի, վհուկ, ուրեմն, երկու սեռի մարդիկ, որոնք իրենց ընտրած զոհին դուրսում էին և շարշարում շար ոգիների միջոցով: Այս կախարդների ու կախարդուհիների արարքներից էլ մարդուն պիտի պաշտպաներ դարձյալ սպիտակ մոգությունը: Ավելացնենք և այն, որ առանց կախարդ լինելու էլ մարդ կարող էր իր նմանին վնասել, եթե ուներ շար աչք, շար լեզու, շար բերան: Այսքանը դեռ բավական չէ մարդու դժբախտության համար: Ինքը մարդն էլ իր

1 Յոթ թիվը առանձին խորհրդավոր նշանակություն ունի մոգության մեջ:

անձի համար դառնում է պատճառ հիվանդության հարվածներ ընդունելու վատ արարքները, անմաքուր գործերը, նույնիսկ մի հատ խոսքը, մի հաս շարժումը բավական են, որ հիվանդություններ մտնեն մարդու մեջ:

Կարող եք այս բոլոր մանրամասնություններով դատել, թե որքան ահաբեկված պիտի լինեք քաղղեացին կամ նրա ժառանգ հանդիսացած ասորեստանցին: Նա իրեն միշտ շրջապատված է զգում անթիվ վտանգներով, նա միշտ վախենում է դեկից ու կախարդից, վախում է, որ նույնիսկ ինքը իր թշնամին չհանդիսանա: Բայց միայն քաղղեացուն կամ ասորուն ընդունենք այսպիսի մշտական վախի, մշտական ահաբեկման մեջ: Այս դրությունը հատուկ պիտի լինեք հին ժամանակների մարդուն, որի հավատի մեջ կային այդ դեներն ու վախարդները և որի միտակ ապավենն ու օգնողը մոգությունն էր, իբրև բժիշկ և խնամատար:

Իսկ ինչպես էր մոգությունը կատարում իր այդ մեծ պաշտոնը: Ամենից առաջ նա, իհարկե, պիտի որոշեր հիվանդությունը: Եվ սրա համար չէր քննում հիվանդի մարմինը, չէր վերլուծում հիվանդության պատմությունը, այլ դիմում էր գուշակության՝ թե ի՞նչ պատճառով և որ դեմ է հիվանդի մեջ մտել: Այսպես հասնելով պատճառին, մոգ քուրմը բժշկության զանազան միջոցներ էր գործադրում: Նա որոշում էր լվացումներ՝ հիվանդ մարմինը կեղտերից ու մեղքերից սրբելու համար. մեղքն ու ախտը մարմնից հալածվում էր ոչ միայն լվացումով, այլև ծուխ տալու (ծխումի) միջոցով: Սովորաբար հասկացվում էր, թե կախարդներն ու կախարդուհիները թովում են մարդկանց, նախ շինելով նրանց պատկերը և ապա այդ պատկերի վրա մոգական գործողություններ կատարելով: Սպիտակ մոգությունը, վհուկների թովածքը ոչնչացնելու համար, շինում էր կախարդների պատկերները, իհարկե, այնպես, ինչպես այդ թելադրում էր նրան գուշակությունը, ավելի ճիշտ ասած՝ երևակայությունը, և ապա այրում էր այդ պատկերները: Մոգությունը իր ձեռքին ուներ, բացի դրանից, և այլ կործանիչ ծեսեր, այսինքն այնպիսի ծեսեր, որոնց կատարումը պիտի առաջացներ շարունակ նյութող վհուկների ոչնչացում:

Բացի ծեսերից՝ մոգությունը գործադրում էր դեղարարական միջոցներ: Որքան էլ մոգական արվեստը վերացական, սնապաշտական հիմքերի վրա դրված լինեք, բայց նա չէր կարող, իհարկե, անտես առնել և բնության բուժիչ միջոցները: Դեղեր քաղղեացուն մոգության հայթայթում էր ոչ միայն բուսական թագավորությունը, այլև հանքերը. կենդանիների գործարաններից էլ պատրաստվում էին բուժական միջոցներ: Բույսերից շատ գործ էր անվում մանավանդ արմավենին: Մոգության հայտնի էին «հղության խոտ», «տղաբերի խոտ», «սիրո խոտ», «երիտասարդության խոտ»:

Բոլոր այս ծեսերը, դեղարարական միջոցները, սակայն, համարյա օրբեք չէին գործադրվում առանձնակի, առանց իրար հետ գործակցության հրավիրվելու: Նրանցից մի քանիսը ունեին նախապատրաստական նշանակություն, մի քանիսները օժանդակ միջոցներ էին: Ամենագլխավոր դերը վերապահվում էր խոսքին: Նախնական դրության մեջ գտնվող մարդու համար խոսքը ահագին ուժ ունի. մի իր և այդ իրի անունը միևնույն են, առանց անվան առարկա գոյություն չէր կարող ունենալ: Խոսքը իրի հնչուն պատկերն է: Երբ մեկն ասում է՝ «ես կտորում եմ» և միաժամանակ կտորելու շարժում է անում, այս նշանակում է, թե նա խոսքն ընկերացնում է գործին, և գործն այդպիսով ավելի ուժեղ է դառնում: Խոսքը, արտահայտելով մի իր, մի գործողություն, այսպիսով դառնում է հենց նույն գործողությունը: Ահա թե ինչու այնքան ահագին է խոսքի նշանակությունը մոգության մեջ: Դյուխական խոսք

քերի միջոցով է, որ շար ոգին այլևս անկարող է դառնում շարություն անել։ Այդ խոսքը նրան հասկացնել է տալիս բարի ոգիների ուժը, որ պիտի հալածե չարերին։ Այդ խոսքի միջոցով է, որ բարի ոգին վերադառնում է իր հովանավորած մարմնի մեջ և հեռացնում է այստեղ գործող շար ոգին։ Մոգությունը կախարդական բանաձևերի մեծ քանակություն ունի։ Կան նրանց մեջ ամենազորավորները և ուժեղ, իր գործի մեջ առաջադեմ մոգն այն է, որ գիտե լավագույն կերպով արտասանել կախարդական խոսքերը, բանաձևերը, որ գիտե ամենաազորե խոսքերով և շարժումներով երդվեցնել դևերին, երդվեցնել, որ նրանք չվնասեն մարդուն, երդվեցնել, որ հեռանան մարդուց։

Գյութող խոսքը, երբ բերանացի է, ժամանակավոր ազդեցություն է գործում և այն դժբախտ քեպը, որ մի անգամ անցել է նրա ներգործութայնը, կարող է կրկնվել նորից, թեկուզ հենց մի ուրիշ ձևի տակ։ Ուստի մոգության մեջ առանձին կարևոր նշանակություն է ստանում գրավոր խոսքը։ Գրությունը նույնպես մի հզոր, սրբազան գործիք է առհասարակ։ Նահապետական հասկացողությամբ գիրը միայն այն ժամանակ չէ խոսում, երբ նրան կարդում են, այլ միշտ, անդադար։ Եվ երբ դուժական խոսքերը, երդմանցումները գրված են, այս նշանակում է, թե նրանք շարունակ խոսում են և շարունակ ազդում են իբրև հզոր խոսք։ Այստեղից են թալիսմանները, բժժան քները (amulette)։

Թալիսմանները աստվածների կամ հովանավորող ոգիների փոքրիկ արձանիկներ են, բժժանքները փոքրիկ կավե տախտակներ կամ կտավի կտորներ, որոնց վրա գրված են Երդմանցումներ։ Այդ կախարդական իրերը թե՛ կախվում են մարդկանց վրա, թե՛ դնում են տներում, ամեն տեղ, ուր հարկավոր է բարի ոգու պաշտպանությունը։ Տունը շար ոգիներից, շար աչքից պահպանելու համար՝ նրա շեմքից կախում են կամ շեմքի մեջ թաղում են մի աղջուս, որի վրա գրված են դուժական զորեղ երդմանցումներ։

Ահա ինչեր է անում մարդու բարեբար մոգը՝ իր հովանավոր աստվածությունների օգնությամբ և հովանու տակ։ Ամբողջ մոգությունը իսկպես մի գլխավոր աստված ունե՛ր՝ ջրերի աստված էան։ Նրա ցուցմունքներով գործում է նրա որդի Մարդուկը։ Քաղդեական մի երդմանցման մեջ այսպես է նկարագրվում այդ բարեբար աստվածների գործը. «Չարամիտ Նամգարը, ժանտախտը, այրում է երկիրը ինչպես կրակ. Նամգարը հարձակվում է մարդկանց վրա, ինչպես Իդնան, տենդը. Նամգարը սողում է հովտում ինչպես շղթա. Նամգարը բռնելով մարդուն, վարվում է նրա հետ, ինչպես թշնամու հետ. ինչպես կրակ Նամգարը այրում է մարդուն։ Նամգարը ո՛չ ձեռքեր ունի, ո՛չ ոտներ. նա մարդկանց վրա հարձակվում է ինչպես օձ. կարծես հանգուցով է պրկում Նամգարը մարդուն, որ հիվանդանում է»։ Այսպես երկար նկարագրելով ժանտախտից բռնված մարդու տանջանքները, մոգական երդմանցումը ասում է, թե «Մարդուն օգնության է շտապում Մարդուկը. իր հոր էայի օթեվանը մտավ նա և ասաց. «Հայր, շարամիտ Նամգարը ավերում է երկիրը կրակի նման»։ Երկրորդ անգամ նա ասում է՝ «Ի՞նչ պիտի անե այդ մարդը, իրան հայտնի չէ. ինչով կարելի է նրան բժշկել»։ Եվ էան ցուցմունքներ է տալիս թե ի՞նչ և ի՞նչ պետք է անել բժշկելու համար»<sup>1</sup>։

Բարեբար մոգն ունի կախարդական գավազան, որի շարժումները կախարդի ազդեցություններ են գործում։ Միատեսակ գավազան գտնվում է և վճուղների ձեռքին, մարդկանց դժբախտություններ պատճառելու համար, սակայն

նրանց դեմ են կանգնած հզոր էան ու Մարդուկը։ Այսքանով, սակայն, չէ սպառվում մարդու կարիքներին նվիրված մոգությունը։ Քաղդեայի քուրմին վերապահված է և սպազան, գալոցը գուշակելու մեծ հոգսը։ Մենք տեսանք աստղագիտությունը. բայց աստղերը չեն միայն, որ գիտեն, թե ի՞նչ պիտի կատարվի աշխարհի վրա։ Երկնքում և երկրի վրա դեռ շատ ու շատ են այնպիսի երևույթներ, որոնց մեջ մարդու ճակատագիրն է կարգացվում։ Գուշակությունների արվեստն էլ շատ հարուստ էր Քաղդեայում։ Նինվեի մատենադարանում գտնված մի հիշատակարան ցույց է տալիս, որ գուշակություն է ունեցել մոգության զրբերի մի ուրիշ տեսակն էլ, որ բաժանված էր քստի գլխի. դրանցից տասնչորսը երկրային գուշակությունների, իսկ տասնմեկն՝ աստղային գուշակությունների վրա։ Երկրային գուշակությունների մեջ ամենից հայտնի, ամենից շատ հռչակվածը երազների բացատրությունն էր կամ, ինչպես մեր գրականության մեջ է կոչվում՝ երազահանությունը։ Քաղդեայում կազմվել էր մեծ և ընդարձակ Երազահան, որ, ինչպես երևում է, թարգմանվեց հունարեն, և այսպիսով իր իշխանությունը տարածեց արևմտյան աշխարհում, մասնավանդ Միջին դարերի ընթացքում։ Կարիք չկա, որ մենք ավելի մանրամասն խոսենք գուշակությունների այս ճյուղի մասին, բանի որ Երազահանները այսօր էլ հրատարակվում են մեզանում իբրև խաբեական միջոց և մեծ ժողովրդականություն ունեն։ «Սատկած շոսն տեսնելը... փայտեի գազան տեսնելը...»<sup>2</sup>, կարդում ենք մենք Ասորեստանի և Քաղդեայի երազահանների մեջ և նույն բաները կամ նույնանման ուրիշ բաներ մեզ այսօր հրամցնում են օրացույցներ և գուշակության զրբեր տպագրողները։ Հին պատմությունից հայտնի է, թե երազները և նրանց բացատրությունները ի՞նչ ահագին նշանակություն են ունեցել նույնիսկ պետական կյանքի վրա։

Գուշակությունների համար առատ նյութ էին տալիս Քաղդեայի մոգերին և թուղ թուղները. նրանց թուղելու ձևը, օդի մեջ նրանց բռնած դիրքը ընդունվում էին իբրև ցուցմունքներ այս կամ այն մտքով, որոնք տրվում են մարդկանց։ Գուշակության այս ձևը հայերեն լեզվի մեջ ունի իր հատուկ անունը՝ հավա հ մ ա յ ու թ յ ու ն։ Թուղները մանավանդ եղանակի փոփոխությունների փոշակներ էին։ Այսպիսի դեռ կատարում էին և ժառերի շարժվող տերևները։ Ամեն տեսակ անասունների փորոտիքի մեջ էլ քաղդեացիները գտնում էին մարգարեական ցուցմունքներ։ Բաց էին անում փորոտիքը և կենդանու գործարանների զանազան դիրքերից, գույներից գուշակում էին, թե ինչ է լինելու։ «Եթե մի էջի մեջ աղիքները, ձախ կողմում, գալարուն են և սև, աստված չպիտի ոռոգում կատարե տիրոջ երկրում»<sup>3</sup>։ Ահա ինչ տեսակ հայտարար ուժերի էր հավատում քաղդեացին։ Բացի աղիքներից, լերդն ու թուղերն էլ էին ցուցմունքներ տալիս։

Անբնական, հրեշային ծնունդների վրա նույնպես գուշակություններ էին կատարվում։ Սպիտակ մագերով ծնված երեխան ցույց էր տալիս, որ թագավորը երկարատև ժողովրդուն պիտի ունենա. առանց ականջների ծնված երեխան ցույց է տալիս փորձանք երկրի համար։ Արտակարգ ծնունդները կենդանիների մեջ նույնպես չէին մոռացվում. «Եթե ոչխարը ծնում է մի առյուծ, դենքերը կտրուկ կլինեն և թագավորը հավասարը շունեցող»<sup>3</sup>։ Շունը մանավանդ շատ գուշակություններ էր անել տալիս։ Մի շուն մտնում է մի տաճար

<sup>1</sup> Lenormant et Babelon, „Hist.“, t. V, p. 216.

<sup>2</sup> Ibid, p. 220.

<sup>3</sup> Ibid, p. 221.

<sup>1</sup> Леман, с. 38.



կամ մի պալատ. և ահա նրա բռնած ուղղութիւնը, դիրքը բազմատեսակ գուշակութիւններէ առիթ են տալիս. «Եթէ մի կարմիր շուն մտնում է պալատ, պալատը պիտի ամալի դառնա թշնամիների ձեռքով»: Մարգարեացող, գուշակութիւններ տվող կենդանի է և օձը, որ Բաբելոնում էա աստուծո խորհրդաբանն է: Եվ օձերը պաշտամունք էին ազգերի մեջ, իբրև գուշակներ և ցուցարարներ:

Երկնքի ամպերը իրենց շարժումներով և գույներով, գուշակութիւններ են անել տալիս: Այսպես է մանավանդ որոտը: Զանազան իրեր գցելով կրակի մեջ և հետևելով, թե ինչ կերպ են նրանք այրվում, ինչ հոտ են տարածում, գուշակութիւններ են անում: Հիշատակենք, վերջապես, գուշակութիւններ ջրերի մակերևութի խաղերի վրա, մարմնախաղացը, այսինքն մարմնի զանազան մասերի խաղալը, և այսքանով մի ընդհանուր, թեև ոչ, իհարկե, լիակատար պատկեր տված կլինենք, թե որքան ծեսերով, նախապաշարմունքներով, վախերով էր շրջապատված հին, դեռ դրական գիտութեան մեջ թույլ և կրոնավորների հարատև ջանքերով վերին աստիճանի դուրահամբան նահապետական մարդը:

**3. Առևտուր:** Մի անգամ ևս դառնանք նախապատմական ժամանակներին և այս անգամ տեսնելու համար սկզբնական վիճակը այն համաշխարհային գործնի, որի անունն է առևտուրը: Առանց այս գործնի՝ երևակայել անգամ չէ կարելի մարդկութեան պատմական զարգացումը:

Մարդկության այն ժամանակն է, երբ նա այնքան է առաջացել, որ այլևս առանձնացած, իրենց միայն ճանաչող և իրենց համար միայն ապրող խմբերի չէ բաժանված: Նախնական, վայրենի կացութեան այդ ձևը մարդը թողել է և իբրև հետևանք այդ զարգացման՝ զգում է իր նման ուրիշ մարդկանց հանդիպելու, մոտենալու պահանջը: Մարդկային խմբերը տեսակցութեան ժամադրավայր են ստեղծում, ուր իրար հետ շփվում են այլևայլ առիթներով: Այդ առիթներն են՝ միասին տոն կատարել, հաշտութիւն կամ խաղաղ դաշնակցութիւն կնքել<sup>1</sup>: Բոլոր այս դեպքերում էլ տեղի ունի նյութերի, իրերի փոխանակութիւն: Ահա առևտուրը:

Առևտրական փոխանակութիւնը, այսինքն մի առարկա ուրիշ մի առարկայի հետ փոխելով ձեռք բերելը, ծագել է, ինչպես կարծում են, ընծաների փոխանակութեան գաղափարից<sup>2</sup>: Առաջանալով այս մասնավոր երևույթից, փոխանակութիւնը հետզհետե դառնում է տնտեսական խոշոր երևույթ: Ուր որ սկիզբ է առնում և զարգանալ է սկսում տնտեսական կյանքը, ուր արդյունաբերութիւնը փաստ է դառնում, այնտեղ իսկույն զգացվում է փոխանակութեան պահանջը: Մի տեղ հողագործութիւնը տալիս է ավելորդ պաշար, որ շատ արկավոր է մի ուրիշ տեղի, ուր, դիցուք, միայն ձկնորսութիւնն է զարգացած, երկրագործը ձկնորսին հաց է տալիս և ստանում է ձուկ: Այսպես և ուրիշ նյութերի վերաբերմամբ: Մի խոսքով այն, ինչ հայերեն լեզվի մեջ արտահայտվում է «առևտուր» կամ «տուրևառ» բառերով, բառեր, որոնք կազմված են «առնել» և «տալ» բայերի հրամայականից: Այս անունը գոյութիւն ունի, անշուշտ, դեռ այն ժամանակներից, երբ վաճառականութիւնը պարզ փոխանակութիւն էր:

Ընդհանուր գծերով մենք ցույց տվինք տեղական կամ, ինչպես ասում են, ներքին առևտրի պատկերը: Մի երկրի, մի շրջանի հարստութիւնները շրջանառութեան մեջ են նույն երկրի, նույն շրջանի սահմանների մեջ: Օգտվողները միևնույն երկրի բնակիչներն են, միևնույն ժողովուրդն է: Առևտուրը այդ երկրի կուլտուրական զարգացման աստիճանացույցն է: Նրա ծագած դրութիւնը ցույց է տալիս, որ տնտեսական հարաբերութիւնները մեծամեծ մղումներ են ստացել և սաստիկ ազդում են հասարակական կյանքի վրա. իսկ անշուշտ զարգացումը, թուլութիւնը ապացույց է երկրի և ժողովրդի հետամնացութեան:

Բայց առևտուրը իսկապես համաշխարհային խոշոր ուժ և շարժիչ է այն ընդհանր, երբ նա ընդունել է միջազգային կերպարանք, այսինքն երբ մի ազգառևտուր է անում մյուս ազգի հետ: Ե՞րբ է սկսվել առևտրի այս կերպարանքը՝ պատմութիւնը չէ կարող ասել, որովհետև միջազգային առևտրական հարաբերութիւնները սկսվել են, անկասկած, նրանից շատ առաջ: Կարծիքով ես ստկայն, որ ամենահին ձևի մեջ միջազգային առևտուրը կատարվում էր թափառական ցեղերի (օրինակ, այժմյան բոշաների) օգնութեամբ: Տեղափոխութիւնների հետ կապված մի պարագամունք, որպիսին առևտուրն է, ամենից շատ ձեռնտու էր, իհարկե, թափառական կյանք վարողներին, որոնք և միացնում էին առևտուրը պատերազմի և կողոպուտի հետ: Արդյունաբերողը ինքը չէր իր ապրանքը տանում հեռավոր երկրներ, նրա ապրանքը գնելու (փոխանակելու) կամ պարզապես ուժով խլելու համար գալիս էին հեռու տեղերից: Առևտրական ընկերութիւններ էին դրանք, գլխավորապես այնպիսի տարրերից կազմված, որոնք կամ երկրագործութեան շէին անցած, կամ երկրագործութեամբ զբաղվելու հնարավորութիւն չունեին: Նրանց օգնում էին թափառական ցեղերը, որոնք պահպանում էին քարավաններ, բեռնակիր անասուններ էին հայթայթում, հաճախ և առևտրական միջնորդների դեր էին կատարում վաճառականների և ազգաբնակչության մեջ: Առևտրական փոխանակութիւններ կատարվում էին նույնիսկ իրարից շատ հեռու գտնվող երկրների մեջ: Առևտրի այդ պահանջը ստեղծում էր հաղորդակցութեան միջոցներ, որոնք համաշխարհային կյանքի մեծ զարկերակներն են դառնում: Հաղորդակցութեանը սկզբներում միայն ցամաքային էր և կատարվում էր քարավանների միջոցով: Հետո բացվեցին ջրային, մասնավորապես ծովային ճանապարհներ, որոնք ահագին հեղաշրջումներ պատճառեցին քաղաքակրթութեան մեջ: Ցամաքային առևտրական ճանապարհների վրա կազմվում էին մեծ ու փոքր կայարաններ, ուր ապրանքների պահեստներ էին շինվում և զարգանում էր առևտուրը: Այդ նշանավոր կայարաններից շատերը դառնում էին հարուստ և անվանի քաղաքներ<sup>3</sup>: Իսկ ծովների և գետերի ափերին նավահանգիստներ էին ստեղծվում, նույնպես և ծովային մեծ վաճառաշահ քաղաքներ:

Այս ճանապարհները, այս քաղաքները, քարավանների շարժումները իրենց հատուկ կնիքն են դրոշմում մարդու քաղաքակրթութեան վրա: Դա շահի, օգտի կնիքն է: Երբ իրեն է հպատակեցնում պետութիւնները: Եվ առևտրի պատմութեան<sup>4</sup> ամենահին շրջանները մեզ ցույց են տալիս, որ այդ վաղ ժա-

<sup>1</sup> Н. Кареев, «Монархии древнего Востока и греко-римского мира», СПб, 1901, с. 46—49.

<sup>2</sup> Համաշխարհային առևտրի վերաբերմամբ կարող ենք հանձնարարել երկու մասնագիտական լուրջ աշխատութիւններ. ա) Octave Noël, «Histoire du commerce du Monde», երեք խոշոր հատոր, Paris, Plon, 1891. բ) H. Scherer, «Histoire du commerce de toutes les nations», trad. de l'Allemand. Paris, 1857, 2 vol.

<sup>1</sup> Реклю, «Человек и земля», т. I, стр. 182.

<sup>2</sup> А. Дживелегов, «История торговли» («Энциклопедический словарь Брокгауза», т. XXXIII, СПб, 1901).

մանակներին էլ ոգին, ձգտումները նույնն էին, ինչ տեսնում ենք այսօր ավելի ընդարձակ շափերով, ավելի նրբացած ձևերի տակ: Մարդկությունը ձևերը փոխում է, բայց էությունը, որ շահի, եսամոլության պաշտամունքն է կազմում, մնում է անփոփոխ: Պահպանելով այս բնավորությունը, առևտուրը իր շահը բազմապատկելու համար վաճառական մարդկանց ներշնչում է խիզախություն, ձեռներեցություն: Արկածները շեն վախեցնում վաճառականին այն գեպքում, երբ անթիվ դժվարություններ պիտի հաղթել մի որևիցե հազվագյուտ, թանկ արժեքող ապրանք որոնելու և ձեռք բերելու համար: Նա չէ բաշվում և կենդանի ապրանք, այն է՝ մարդ ծախելուց. այդ ապրանքը նա կամ տոնում է հափշտակողներից և ավազակներից ու այդպիսով խրախուսում նրանց արշավանքները, կամ հենց ինքն է հափշտակում: Ստրկավաճառությունը, ինչպես հայտնի է, միայն 19-րդ դարում վերացվեց: Բայց այսօրվա քաղաքակիրթ ազգերի վաճառականությունը դեռ շատ ու շատ սկզբունքներ ունի, որոնք նվիրագործված են հնության դարերում:

Սակայն առևտուրը միայն համարժեք իրերի փոխանակություն չէ: Այդ «փոխանակությունը ծնում է գաղափարների փոխանակություն»: Մեծ շուկաներում հանդիպող ազգերը տալիս են և վերցնում են նաև այն, ինչ ստեղծել է նրանց հանճարը մտքի, գիտության ասպարեզում: Իսկ հեռավոր խուլ անկյուններում ապրանք ու շահ որոնող վաճառականը տարածում է իր ձեռք բերած գիտելիքները խավար ժողովրդի մեջ: Առևտրական մեծ կենտրոնները դառնում են քաղաքակրթության հզոր օջախներ, առևտրական ճանապարհները կենդանություն և առաջադիմություն են մատակարարում իրենց շրջականերին:

Արևելքն է դարձյալ ուր առևտուրը ծնվեց, ծաղկեց: Եվ դարձյալ Քաղղեայի քաղաքներն են, ուր տիրապետում է առևտրական ոգին, հաղորդելով թե՛ պետական կազմակերպության և թե՛ ամբողջ քաղաքակրթության խաղաղ կուլտուրական առաջխաղացության գույն, մի գույն՝ որ բացակայում էր Քաղղեային աշակերտած, բայց նվաճումներով ապրող Ասորեստանում: Քրիստոսից երկու հազար տարի առաջ առևտրական հարաբերությունները այնքան են զարգացած Քաղղեայում, որ Համմուրաբիի օրենսդրությունը, ինչպես տեսանք, պատիժներ էր սահմանում առևտրի շահերը պաշտպանելու համար: Նա սահմանում էր տոկոսներ, գործակատարների անհավատարմություններ էր պատժում և այլն:

Այստեղ էր դարձյալ, որ փոխվեց առևտրի առաջին նախնական եղանակը, այն է՝ փոխանակության ձևը: Հին ժամանակների փոխանակությունն այնպես էր, որ կամ ապրանքի տեղ ապրանք էր տրվում, կամ թե՛ ապրանքը առնելով էր ազնիվ մետաղների, այն է՝ ոսկու և արծաթի և ուրիշ թանկարժեք իրերի փոխարինություն: Քաղղեայում էր, որ ոսկու, արծաթի համար կշիռներ սահմանվեցին, որոնք ավելի ևս կանոնավորում էին առևտրական գործողությունները, տալով գործողներին ապահով միջոցներ ազատվելու պատահականություններից, անստուգությունից և քմահաճույքներից: Ոսկու և արծաթի կշիռները դարձան առևտրական փոխանակությունների գործիք նաև Ասորեստանում և Եգիպտոսում: Սա դեռ դրամական սիստեմ չէր, բայց մո-

տեսում էր նրան: Դրամները արդեն հունական քաղաքակրթության գյուտն են, տեղի ունեցած վեց դար ք. առաջ<sup>1</sup>:

Հետաքրքրական հանգամանք է, որ հնագույն ժամանակներում կազմակերպված առևտուրը Քաղղեայի, ապա և Եգիպտոսի մեջ, մի տեսակ մեծ նաշնորհ է դարձյալ բրմական դասակարգի ձեռքին: Մենք տեսանք իր տեղը, թե ինչպես երկրի խոշոր հարստությունները դիզվում էին տաճարների մեջ: Այստեղ էլ, աստվածների բնակարաններում, զետեղված էին առևտրական շուկաները և զուր չէր, որ Երուսաղեմի տաճարներում Հիսուսը գտավ առևտրական մի ամբողջ հրապարակ: Քաղղեայի այդ շուկաներում կատարված դրամական գործողությունների մեջ մեծ մասնակցություն ունեին տաճարները, նույնիսկ թագավորական պալատները<sup>2</sup>: Աստվածների և թագավորների գանձերը շահեցողության էին տրվում մուրհակներով, որոնք գրվում էին աղյուսների վրա, վկաների ստորագրությամբ և պաշտոնական գրագրի վավերացումն էին կրում: Անկախ, ինքնազուլս վաճառականներ, ինչպես թվում է, չկային: Վաճառականները Քաղղեայում կոչվում էին «տամկար»: Սրանք տաճարների կամ թագավորների ներկայացուցիչներն էին շուկաներում, առևտուր էին անում կամ նրանց փողերով: Ինչպես երևում է, փողատերերին վճարվում էր տոկոսներ, իսկ առևտրի փաստակը մնում էր «տամկարներին»: Եգիպտոսում էլ քուրմերը իրենց համար մենաշնորհ դարձրին առևտուրը<sup>3</sup>:

Բայց առևտուրը միշտ այսպիսի դրություն մեջ չմնաց: Պատմության ասպարեզում երևան եկավ մի ազգություն, որին տրված էր առևտրական հանճար և այդ հանճարով հին աշխարհի մեջ ահագին դեր կատարելու մի առանձին բացառիկ բախտ: Այդ ազգությունը փյունիկեցիներն էին, խիզախ, համարձակ վաճառականներ, որոնք վաճառականական պետություն ստեղծեցին, իրենց քարավանների համար անհուն հորիզոններ բաց արին թե՛ ցամաքի և թե՛ ծովի վրա. առևտրական գաղութներ և գրասենյակներ ցրվեցին այն ժամանակվա աշխարհի բոլոր կողմերը և ասպագա սերունդներին ցույց տվին, թե՛ ինչ կարող է լինել առևտրական շահերով ապրող պետությունը: Ամբողջ Միջերկրական ծովը նրանց ձեռքին էր. իսկ այդ ծովից դեպի հյուսիս և արևելք նրանց ցամաքային քարավանները միջազգային հաղորդակցություն էին պահպանում, հասնելով մի կողմից Եվրոպայի ամենահեռու անկյունները, մյուս կողմից մինչև Միջին Ասիա:

Այս համաշխարհային գործը փյունիկեցիները չէին կարող կատարել, եթե առևտրական հարաբերությունները լավ կազմակերպված չլինեին և մտքորած չլինեին հարմար կարգեր, որոնք ապահովեին ամեն հնարավոր հարմարություններ: Այս փոքրիկ ազգը ստեղծեց մի մեծ ուժ ոչ թե՛ զենքի նվաճումների միջոցով, այլ խաղաղ արդյունագործության աշխատանքով: Նրա քաղաքները (Սիդոն՝ Քրիստոսից մոտ 1800 տարի առաջ, Տիրոս) հռչակվեցին համայն աշխարհում իրեն հարստությունների երկիր, ուր ժամադրավայր էին գտնում աշխարհի բոլոր հայտնի ազգերը: Միջազգային առևտուր իսկական մտքով

<sup>1</sup> Kapeev, c. 51.

<sup>2</sup> Scherer, t. 1, p. 3.

<sup>3</sup> Noël, t. 1, p. 89.

<sup>1</sup> Ibid, p. 92.

<sup>2</sup> Արևելքը տվել է վաճառական-թագավորների շատ օրինակներ: Դրանցից մեկն էր Շահ-Աբբաս Մեծը (17-րդ դարում):

<sup>3</sup> Maspero, t. 1, p. 750.

<sup>4</sup> Кулишер, «Основы уголовного права 4000 лет назад» («Русское богатство», 1909 № 8, с. 115).

<sup>5</sup> Noël, t. 1, p. 17.

փյունիկեցիներն էին, որ հաստատեցին: Նրանք էին նույնպես, որ ծովագնացութեանը մեծ զարկ տվին և ծովը դարձավ միջազգային ճանապարհ, մտցնելով այդպիսով մարդկային կուլտուրան զարգացման այն երկրորդ մեծ շրջանի մեջ, որ կոչվում է ծովային:

Բնականաբար, այս առևտրական ազգի գործունեությունը դարերի ընթացքում պիտի ազդեր և ուրիշ քաղաքակիրթ կենտրոնների վրա, նպաստելով, որ առևտրական դասակարգ կազմակերպվի և ազդեցիկ դիրք գրավե հասարակության և պետության մեջ: Եվ իրավ, նույն Քաղղեայում, ուր վաճառական դասակարգը Համմուրաբիի ժամանակ թվում է, թե լոկ գործակատարի դեր էր կատարում, շատ դարեր անցած մենք տեսնում ենք առևտրական մեծ հիմնարկություններ, որոնք պատկանում են մասնավոր մարդկանց և շատ ազդեցիկ դեր ունեն: Այսպես էր՝ օրինակ, «էգիբի և որդիք» բանկային տունը Բաբելոնում, որ մի շատ հետաքրքրական պատմություն ունի<sup>1</sup>: Անցյալ դարի յոթանասնական թվականների առաջին կեսում արաբ բանվորները գտան մի քանի կավե ամաններ, որոնք լիքն էին կավե փոքրիկ տախտակներով: Բենեոպետեմիդացիները ձեռք բերին այդ մեծ ժողովածուն, որ և վերին աստիճանի հետաքրքրական նյութ տվեց գիտության: Դա առևտրական տան մի ամբողջ արխիվ էր, որի հայթայթած վավերագրերը ցույց էին տալիս, թե բանկային տունը, հիմնված մոտ 685 տարի Քրիստոսից առաջ, շարունակվել է մի քանի հարյուր տարի, անցնելով որդուց որդի միևնույն տոհմի մեջ (ենթադրում են՝ հրեական տոհմ էր): Հիմնարկությունը կատարում էր ամեն տեսակ դրամական գործողություններ, սկսած ամենախոշոր գումարներից մինչև ամենափոքրիկները, այն է ավանդներ ընդունել, փոխանակագրեր, շեքեր տալ, որոնք բանկային սովորական գործողություններ էին և մենք տեսնում ենք, որ այդ փոխանագրերը նույնիսկ դրամական արժեքների պաշտոն էլ էին կատարում:

Ավելի հետաքրքրականն այն է, որ «էգիբի և որդիք» սեղանավորական տունը կատարում էր և այնպիսի գործողություններ, որոնք անմիջական կապ չունենալով առևտրի հետ, այնուամենայնիվ ներկայացնում են երկրի դրամական շրջանառությունը: Այսպես, այդ տունն էր ստանում պետական հարկերը, կատարում էր նոտարի պաշտոն այնպիսի դեպքերում, երբ մասնավոր մարդկանց մեջ այլևայլ դեպքեր պահանջում էին գրավոր ապացույցներ, դաշնադրական որոշ հարաբերություններ: Կարելի է ասել, որ այդ առևտրական մեծ տան շեքով մտնում էր հասարակական կյանքը, լայն հոսանքներով և թողնում էր այդտեղ իր առօրյա մանր շարժումների հարյուրավոր հետաքրքրական հետքեր: Առնել, տալ, գնել, վարձու տալ. այս գործողությունների մեջ հաճախ գլխավոր դեր կատարողը կինն է: Նա հանդիսանում է առևտրական, իր շահերը թագավորական դատարանների առջև պաշտպանող: Այսպես է ոչ միայն այն ժամանակ, երբ կինը այրի է, այլև այն ժամանակ, երբ կենդանի է ամուսինը, որ և շատ անգամ գործի մեջ երևան է գալիս իբրև իր կնոջ վկա:

Այս բոլորն ապացույց է, որ առևտրական կյանքը զարգանում, ավելի և ավելի բարդ հարաբերություններ էր տարածում, որքան առաջանում էր քաղաքակրթությունը և որքան պատմության ասպարեզ էին գալիս նորանոր իրազգային շփումներ և հաղորդակցություններ:

**4. Եզրակացություններ:** Մենք մանրամասն նկարագրեցինք, իբրև պատմական միջավայր, այն ամենահին մեծ քաղաքակրթությունը, որ սկիզբ առավ ու ծաղկեց հազարավոր տարիների ընթացքում, երկու հուշակավոր գետահովիտներում: Այս քաղաքակրթությունն ընդհանրապես անվանվում է արևելյան, ինչպես նաև ասիական:

Սակայն չպիտի մոռացնենք, որ նույն Արևելքում և Ասիայում են գտնվում նաև Չինաստանն ու Հնդկաստանը, ուր նույնպես ծնվել է և զույլություն պահպանել շատ հարգի հին քաղաքակրթություն դարձյալ մեծ գետերի հովիտներում (Չինաստանում՝ Յանցզե գետ, Հնդկաստանում՝ Հինդոս և Գանգես գետեր): Այս, այո, այսպես է, բայց և այնպես, ասիական ասելով հասկացվում է Մերձավոր Արևելք, այն է՝ Քաղղեայի և Եգիպտոսի քաղաքակրթությունը, որովհետև Չինաստանի և Հնդկաստանի քաղաքակրթությունը սահմանափակված մնաց այդ երկրներում, լոկ այդ երկրների ազգաբնակչության համար գոյություն ունեցավ, մինչդեռ քաղղեա-եգիպտական քաղաքակրթությունը այնքան նեղ ու մասնավոր նշանակություն չունեցավ, այլ դարձավ շատ ազգերի սեփականություն, և նրանից ծնվեց ավելի մեծ, ավելի համատարած քաղաքակրթություն: Այս պատճառով հանրամարդկային, ընդհանուր պատմական տեսակետից քաղաքակրթ Մերձավոր Արևելքը ավելի կարևոր է համարվում, քան Հնդկաստանը և Ժայռագույն Արևելքը:

Եթե քաղղեա-եգիպտական քաղաքակրթությանն էր վիճակված կատարել համաշխարհային դեր, դրա գլխավոր պատճառն այն աշխարհագրական միջավայրն էր, ուր նա ճոխացավ: Թեև Տիգրիս-Եփրատյան հովիտը անմիջապես կապված էր Հնդկական օվկիանոսի հետ, բայց դեռ չէ կարելի ասել, թե այդ օվկիանոսը որքան օգնեց Քաղղեային իր առաջադիմության մեջ: Ընդհակառակն, մենք տեսնում ենք, որ քաղղեական քաղաքակրթությունը ոչ թե դեպի Պարսից ծոցը և Հնդկական օվկիանոսի ափերն էր ձգտում տարածվել, այլ դեպի հյուսիս, դեպի երկու մեծ գետերի հայրենիքը, դեպի Արարատը և դեպի արևմուտք: Այս կողմում մեծ դեր է կատարում Սիրիան, որ հարմար հաղորդակցություններով կապում է Միջագետքը Միջերկրական ծովի հետ: Այնպես որ քաղղեական աշխարհը ավելի Միջերկրականին էր պատկանում, քան Հընդկական օվկիանոսին: Նույն Միջերկրականի ափին էր նեղոսի հովիտը: Կուլտուրական ներկու մեծ կենտրոնների մեջ գետեղված էր Փյունիկիան, որ նրանց քաղաքակրթությունը տարածում էր Միջերկրականի բոլոր ափերի վրա:

Այստեղ էլ, այս Միջերկրական ափերի վրա, արևելյան քաղաքակրթության առաջնորդությունը ծնվեց մի նոր քաղաքակրթություն՝ եվրոպականը: Նրա հայրենիքը Հունաստանն էր: Եվրոպական քաղաքակրթությունը ասիականի հակադրությունն էր: Ասիականը (կամ արևելյանը) ուներ իր մեջ մի գլխավոր գաղափար՝ բռնապետություն, որի հետևանքն էր անհատական և համայնական ազատության բացակայությունը: Քաղաքակրթությունը պատկանում էր փոքրիկ թվով մարդկանց, իսկ ժողովրդի մեծամասնությունը հարստահարվում էր այդ փոքրամասնության ձեռքին: Ասիայում տիրող քաղաքական ռեժիմը աստվածապետությունն էր: Քրմական դասակարգը իր ձեռքում էր պահում մտավոր և նյութական կուլտուրայի մենաշնորհը և հաղորդում էր ամբողջ քաղաքակրթության կղերական հանգամանքը: Անձը համայնքի մեջ չունեց անհատ զարգանալու ոչ մի հնարավորություն: Ամեն ինչ են-

<sup>1</sup> Рагозина, «История Мидии», СПб, стр. 275—292.

<sup>1</sup> Եգիպտոսը հին ժամանակներում համարվում էր Ասիայի մասը:

թարկվում էր կրոնին, որ և ղեկավարում էր բռնապետությունները համաձայն իր մշակած սխտեմների:

Եվրոպական քաղաքակրթությունը, ընդհակառակը, անհատական և հասարակական ազատությունն էր վճիռ հանում և բռնակալությանը հակադրում էր ռամկավարական սկզբունքը, իրավատեր, ազատ զարգացող քաղաքացիությունը: Հունական հետազոտող, վերլուծող հանձարը գիտության հորիզոնները բաց արավ, փիլիսոփայությունը, արվեստները, գրականությունը ծաղկեցրեց: Նա աշխարհական կուլտուրայի հաղթանակն էր, հակառակ արևելյան հասկացողության, որ ամեն ինչ հպատակեցնում էր իր ստեղծած կրոններին: Հույների գործը շարունակող հանդիսացան հռոմեացիները, որոնք զարգացրին պետական և քաղաքական կյանքի սկզբունքները իրավունքների հավասարության հիմքերի վրա<sup>1</sup>:

Բայց եվրոպական քաղաքակրթությունը դեռ միայն հինգերորդ դարից (Ք. ա.) սկսեց ղենել իր գեղեցիկ հիմքերը: Մինչև այդ պատմական ասպարեզ էր դուրս եկել Հայաստանը, մի ասպարեզ, որի քաղաքական-կուլտուրական հանգամանքները նկարագրեցինք մինչև այստեղ: Նա ասիական միջավայրում էր և ասիական քաղաքակրթությանն էր պատկանում:

## Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

### Ա Շ Խ Ա Ր Հ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն

#### Գլուխ առաջին

#### ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱԿՂՋԻՆ

1. ԱՍԻԱԿԱՆ ՍԱՐԱՀԱՐԹԸ: 2. ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱ: 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՐԱՀԱՐԹԸ: 4. ԼԵՌՆԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐԱՆՔԸ: 5. ԶՐԵՐ: 6. ԿԼԻՄԱ: 7. ԲՈՒՍԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ: 8. ԿՆԵՂԱՆԵՆԵՐ, ՀԱՆԵՐ: 9. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ: 10. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: 11. ԵՐԿԻՐԸ ԵՎ ՄԱՐԴԻԿ:

**1. Ասիական սարահարթը:** Հին աշխարհի ամենամեծ մասը Ասիան է: Այդ վիթխարի ցամաքը աշխարհագրական մի քանի ուրույն հանգամանքներ է ներկայացնում, որոնցից մեկն էլ այն է, որ նրա միջին շերտը, արևելյան ծայրից մինչև արևմտյանը, հաղաղ օվկիանոսից մինչև Միջերկրական ծովը կազմված է ընդարձակ սարահարթերի մի անընդհատ տարածությունից:

Բարձրավանդակների այդ անհուն զանգվածը գրավում է ամբողջ Ասիայի 2/5 մասը: Բայց նա միանման չէ իր ամբողջության մեջ: Նա բաղկացած է առանձին անուններ և մասնավոր առանձին գծագրություններ ունեցող սարահարթերից, որոնց մակերևույթի վրա բարձրանում են զանազան ուղղուղյուններ ունեցող լեռնախմբեր և լեռնաշղթաներ:

Սակայն, շնայած այդ տեղական առանձնահատկություններին, ասիական այս մեծ սարահարթն ունի ընդհանուր բնավորություն որոշող խոշոր գծեր ևս: Դիրքով, բնական և կլիմայական պայմաններով, սարահարթը երկու ինքնուրույն մեծ մասերի է բաժանվում՝ արևմտյան և արևելյան:

Այս բաժանումը բնությունը կատարել է այսպես. ասիական մեծ սարահարթը երկու կողմից՝ հյուսիսից և հարավից եզերում են Կրկու լեռնաշղթաներ, որոնք զուգահեռաբար, բայց հաճախակի ընդարձակ աղեղնաձև շեղումներ գործելով, ձգվում են սարահարթի ամբողջ երկարությամբ՝ արևելքից արևմուտք: Այդ երկու զուգընթաց լեռնաշղթաները գալիս, խառնվում են Ասիայի արևմտյան մասի այն տեղում, ուր բարձրացած են Հինդու-Քուշ լեռները: Դա լեռնային մի հանգույց է: Սարահարթը այդտեղ շատ նեղանում է, դառնում մի պարանոց: Այստեղ է այն լեռնային երկիրը, որ Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակից ստացել է Հնդկական կովկաս անունը: Ահա այդ կետն էլ բաժանում է ասիական սարահարթը երկու մասի:

Այս Կրկու մասերը տարածության և կլիմայական պայմանների կողմից ներկայացնում են հակադիր պատկեր: Արևելյան սարահարթը ընդարձակագույն է և ավելի բարձր՝ արևմտյանից: Սարահարթի ամբողջ տարածությունը արևելքից արևմուտք 340.000 քառակուսի մղոն է, և արևմտյան մասը այս

<sup>1</sup> Ասիական և եվրոպական քաղաքակրթությունների հակադրությունը տե՛ս Н. Кареев. «Общий ход всемирной истории», СПб. 1903.

<sup>1</sup> X. Ф. Б. Линч, «Армения», т. 1, Тифл. 1910, гл. 21.

տարածութեան միայն 1/3 մասն է գրավում, մնացածը պատկանում է արեւելեան մասին, ուր սարահարթի լայնութիւնը 400—500 աշխարհագրական մղոն է, մինչդեռ արեւմտեան մասի լայնութիւնը կազմում է արեւելեանի 1/10 մասը միայն:

Արեւմտեան և արեւելեան մասերը տարբերվում են նաև նրանով, որ մինչդեռ արեւմտեան մասը գլխավորապես սարահարթերից է կազմված, արեւելեան մասում բարձրացած են ավելի շատ լեռնաշղթաներ: Արեւելեան մասի միջին բարձրութիւնն է 10.000 ոտնաչափ, մինչդեռ արեւմտեան մասն ունի միջին թվով 4000 ոտնաչափ: Այստեղից և կլիմայական տարբերութիւնը. արեւելեան սարահարթը գլխավորապես խստաշունչ կլիմա ունի, արեւմտեանը՝ գլխավորապես բարեխառն<sup>1</sup>:

**2. Առաջավոր Ասիա:** Արեւմտեան սարահարթը իր շրջականերով կոչվում է Առաջավոր Ասիա: Նրա սահմաններն են՝ հարավից՝ Հնդկական օվկիանոսը, արևմուտքից՝ Կարմիր և Միջերկրական ծովերը, հյուսիսից՝ Սև ծովը, Կովկասի գլխավոր լեռնաշղթան, Կասպից ծովը և Քուրանական տափարակները, իսկ արևելքից՝ Հինդու-Քուշը:

Հինդու-Քուշից երկու զուգընթաց լեռնաշղթաները դարձյալ բաժանվում են: Մեկը գնում է Հարավային ուղղութեամբ և Հնդկական օվկիանոսի ափերով եզերում է Իրանի ընդարձակ սարահարթը, որ Առաջավոր Ասիայի ամենախոշոր մասն է կազմում, ապա Պարսից ծոցից գնում է դեպի հյուսիս, ըստանում է Զագրոս անունը և միանում է Տավրոս լեռնաշղթային ու իջնում է Միջերկրականի ալիքների վրա:

Իսկ հյուսիսային լեռնաշղթան Խորասանի վրայով գալիս, եզերում է Կասպից ծովը հարավից, շրջան է տալիս դեպի հյուսիս, միանում է Հայաստանի հյուսիս-արեւելեան լեռների հետ և անընդհատ շարքով գնում, վերջանում է Սև ծովի ափին<sup>2</sup>:

Իրանի սարահարթի կենտրոնական մասը բաղկացած է անկենդան անապատներից: Առաջավոր Ասիայի հարավ-արեւմտեան անկյունը, Պարսից ծոցի, Կարմիր ծովի և Միջերկրականի հարավ-արեւելեան ծայրի մեջ ներկայացնում է մեծ մասամբ տափարակ տարածութիւն, որ բաժանված է երեք մասի. Արաբիա, Սիրիա և Միջագետք: Ընդարձակ են և կասպիական տափարակները: Մնացած տեղերը լեռնային տեսարան ունեն:

Շրջապատված լինելով ծովերով, Առաջավոր Ասիան ընդհանրապես կարելի է համարել ծովային աշխարհ: Նա գրավում է կենտրոնական տեղ ամբողջ Հին աշխարհի (Եվրոպա, Ասիա, Աֆրիկա) մեջ և հարմար հաղորդակցութիւններ ունի նրա բոլոր մասերի հետ: Ուստի և ամենահին ժամանակներից այս կենտրոնական միջնաշխարհն էր, որ հանդիսանում էր իբրև միջնորդ հեռավոր ազգերի առևտրական հարաբերութիւնների մեջ: Նրա միջոցով են գանազան Երկրներ շփվում իրար հետ: Եվ այսպիսով քաղաքակրթութեան պատմութեան մեջ Առաջավոր Ասիայի կատարած դերը իսկապես ահագին է<sup>3</sup>:

Ամենակարևոր հանգամանքներից մեկն այն է, որ հարավ-արեւելեան կողմից Առաջավոր Ասիայի հարևանը Հնդկաստանն է, համաշխարհային պատմական մի կենտրոն, որ բոլոր ժամանակների և բոլոր ազգերի համար եղել է իր հարստութիւններով կախարդիչ մի երկիր, որ այդ պատճառով էլ դար-

ձել է նվաճումների նպատակ, մի կենտրոն, առանց որի համաշխարհային սոցիոնաբերութիւնը չէր կարող զարգանալ և ճոխանալ բարձրարժեք ունեցող առարկաներով: Քանկագին քարերի և համեմունների ամենաընդարձակ և ամենահարուստ արտահանութեան հայրենիք, Հնդկաստանը ամենահին ժամանակներից շփումներ ուներ աշխարհի բոլոր կողմերի հետ<sup>1</sup>: Եվ նրա առևտրական հարաբերութիւնը ամբողջ Միջերկրական աշխարհի, ամբողջ Արեւմուտքի հետ ունեւր միակ հարմար մի ճանապարհ՝ Առաջավոր Ասիան:

Այս բոլոր բարեհաջող պայմաններն են պատճառ, որ հնագույն ժամանակներից ի վեր Առաջավոր Ասիան մի ընդարձակ միջազգային տապարեզ էր, ուր իրար հանդիպում էին, իրար հետ ընդհարվում էին, իրարից գերակշռութեան, տիրապետութեան մենաշնորհի գավազանը խլում էին ամեն տեսակ ազգութիւնների ներկայացուցիչները: Առաջավոր Ասիան մի տեսակ կամուրջ էր Ասիայի ընդարձակագույն մասի և Եվրոպայի մեջ: Աշխարհագրական քարտեզը նայողին իսկույն ցույց է տալիս, որ Իրանի նեղ սարահարթը բնութեան կերտած ճանապարհն է, որ պիտի ընտրեին ազգերը՝ Ասիայի կենտրոնական մասերից դեպի Արեւմուտք առաջանալու համար: Այդ վերին աստիճանի կարևոր բնական երևույթի շուրջն էլ պտտում է Առաջավոր Ասիայի ամբողջ պատմութիւնը:

**3. Հայկական սարահարթ:** Առաջավոր Ասիայի գրեթե կենտրոնական մասում, Իրանի սարահարթի հյուսիս-արեւմտեան կողքին տարածված է երկրաբանական շարժումներով և հրաբխային ուժերով վեր բարձրացրած մի երկիր, որ Հայաստան (Արմենիա) անունով աշխարհագրական և պատմական գիտութեան սեփականութիւնն է դարձել՝ սկսած հինգերորդ դարից, նախքան Քրիստոսի ծնունդը: Դա մի բոլորովին առանձնահատուկ աշխարհագրական միջավայր է, այնպես որ հռչակավոր աշխարհագիր Կարլ Ռիտտերը նրան անվանում է «օղով և ջրով հարուստ լեռնային զով կղզի»<sup>2</sup>:

Այդ կղզին հյուսիսից և հարավից դրված է այն երկու զուգահեռական լեռնաշղթաների մեջ, որոնք, ինչպես տեսանք, գալիս են Հինդու-Քուշից: Հյուսիսային շղթան կոչվում է Փոքր Կովկաս, հարավայինը՝ Հայկական Տավրոս: Արեւելքից կղզին անջատվում է Իրանի սարահարթից մի լեռնաշղթայով, որ ճյուղավորվելով Տավրոսից, ձգվում է դեպի հյուսիս և հասնում է Մասիսի լեռնային զանգվածին: Կղզու մեջ էլ մի զուգահեռական շղթա երկարում է Մասիսից դեպի արեւմուտք և անցնում է Հայաստանի բուն սահմանը արեւմուտքում, Եփրատ գետը: Իսկ արեւմուտքում Հայկական լեռնակղզու սահմանն է Անտիտավրոս շղթան, որ Կիլիկիայից ձգվում է դեպի հյուսիս-արեւելք, դեպի Սև ծովի հարավային լեռները:

Հայաստանի քաղաքական սահմանները փոփոխական են եղել, ինչպես փոփոխական էր նրա քաղաքական կյանքը: Ընդհանրապես, Հայաստանը գտնվում է արեւելեան երկարութեան (ֆերրոյից) 55 և 67 ու հյուսիսային լայնութեան 37,5 և 41, 3/4 աստիճանների մեջ: Այս երկրի բնական հանգամանքները թույլ են տալիս ամելու, որ աշխարհագրորեն նրա սահմանների մեջ մտնում են Սև ծովի հարավային ափերի մի մասը, Ատրպատականը իր Քավրիզ քաղաքով՝ մինչև Կասպից ծովը: Այս տեսակետից Հայկական լեռնաշխարհի բնական նավահանգիստներ կարելի է համարել Տրապիզոնը և Բաթումը՝

<sup>1</sup> Карл Риттер, «Землеведение Азии», СПб, 1856, т. 1, с. 46—76.

<sup>2</sup> Линч, гл. XXI, տե՛ս քարտեզը.

<sup>3</sup> Элизе Реклю, «Земля и люди», СПб, 1887, т. 9, с. 2—19.

<sup>1</sup> Риттер, с. 83.

<sup>2</sup> Г. Абих, «Геология Армянского Нагорья», 1899, с. 1.

Սե ծովի վրա և Աստարան ու Լենքորանը՝ Կասպից ծովի վրա՝ Սակայն պատմական փոքրիշատե հաստատուն իրականության համապատասխանող բազմազան սահմաններ կարելի է անվանել արևմուտքից Եփրատ գետը, հյուսիսից՝ Փոքր կամ Ստորին Կովկաս լեռնաշղթան, արևելքից՝ Մերձ-Կասպիական դաշտը և Իրանը, հարավից՝ Միջագետքի սահմանների վրա բարձրացած Հայկական Տավրոս լեռնաշղթան:

Այս սահմանների մեջ տարածվածը իսկապես միայն Մեծ Հայաստանը կամ Մեծ Հայքն է, որ հենց այս անունով էլ հայտնի էր հին հույն աշխարհագիրներին: Եփրատից դեպի արևմուտք տարածված էր Փոքր Հայաստանը կամ Փոքր Հայքը: Ընդհանուր առմամբ ամբողջ Հայաստանը պարունակում է իր մեջ 357.900 բ. կմ: Մեծ Հայքն ունի 220.000 քառ. կմ, իսկ Փոքր Հայքի տարածությունը փոփոխական է եղել. սկզբում 28.000, հետո 88.000 և վերջապես Հուստինիանոս կայսրի ժամանակ (6-րդ դար Ք. հ.), 138.000 քառ. կմ. Հայաստանի ամենամեծ երկարությունը արևելքից՝ հարավ արևմուտք, 975—1500 կիլոմետր է, իսկ ամենամեծ լայնությունը հյուսիսից հարավ՝ 525 կիլոմետր<sup>2</sup>:

4. Լեռնաստանի կերպարանքը: Հայաստանն ամբողջապես ներկայացնում է սարահարթի տեսարան, որի վրա բարձրացած են զանազան ուղղությունների ունեցող լեռնային գոտիներ և խմբեր: Սարահարթի միջին բարձրությունն է 1500—2000 մետր ծովի մակերևույթից, իսկ լեռների ամենամեծ բարձրությունն այն է, որին հասնում է մեծ Մասիսը՝ 5156 մետր:

Լեռնաշղթաների մեջ ձգված են խոր ձորեր և հովիտներ: Հայաստանի աշխարհագրական բազմաթիվ անուններ կազմված են «ձոր», «փոր», «հովիտ» բառերի լծորդությամբ: Այս ձորերն ու հովիտներն էլ դարձել են երկրի վարչական ստորաբաժանումների բնական հիմքը: Առանձնապես խոր է Արաքս գետի հովիտը, որ իր արևմտյան մասում, Կողբի մոտ, ունի 900 մետր բարձրություն, բայց աստիճանաբար ցածրանալով դեպի արևելք, Օրդուբադի մոտ ունի միայն 600 մետր: Արաքսի մեծ հովտից հետո նշանավոր են Եփրատ գետի երեք ընդարձակ հովիտները՝ Ալաշկերտի, Մուշի և Խարբերդի դաշտերը:

Հայկական լեռնաշխարհի մի նշանավոր մասը հրաբխային ծագում ունի: Դա հրաբխային մեծ կենտրոնների մի աշխարհ է: Եվ բազմաթիվ հանգած հրաբուխները այժմ էլ ցույց են տալիս, որ նախապատմական ժամանակների խորքում ստորերկրյա ուժերը ահավոր տակնուվրայություն և ավերանք են գործել, որոնք և հաղորդել են երկրի մակերևույթին նրա այժմյան ձևաչափը:

Այդ հրաբխային կենտրոնների մեջ առաջին տեղը պատկանում է Մասիս կամ Արարատ սարին, որ իր բարձրությամբ թագավորում է Հայաստանի բոլոր լեռնագագաթների վրա: Մասիսը երկու գագաթ ունի. մեծը կոնական ձևով մի հսկա, որի վերին մասը, սկսած 4370 մետրից, ծածկված է հավիտենական ձյուներով: Այդ մեծ գագաթին, արևելյան կողմից, կպած է Փոքր Մասիսը (3596 մետր): Լեռան լանջերը ծածկված են լավայի շերտերով և սոհասարակ աղբառ ևն բուսականության կողմից: Բայց նրա տեսարանը փառահեղ է: «Այս սարը, — ասում է նշանավոր աշխարհագիր Ռեկլյուն, — Հին

Աշխարհի միջով Բարեհուսո հրվանդանից մինչև Բերինգյան նեղուցը ձգված բարձր երկրների և բարձրավանդակների կենտրոնական գագաթն է»<sup>1</sup>: Նա բարձրացած է Արարատյան դաշտի (Արաքսի հովիտ) վրա, որ հավանորեն մի ժամանակ գոյություն ունեցած մեծ լճի հատակն է ներկայացնում<sup>2</sup>: Եվ նա խոր տպավորություն է թողնում ոչ թե իր լանջերի թեքությամբ, այլ շնորհիվ այն հանգամանքի, որ այդ լանջերը բարձրանում են աստիճանաբար, և բաց են նայողի առջև ստորոտից մինչև գագաթը: Նրա առջև չկան առաջավոր լեռնակներ և բարձր բլուրներ, որոնք կարողանային ծածկել նրա հսկայական հասակի մի մասը: Եվ այդ կողմից Մասիսը միակն է ամբողջ աշխարհում<sup>3</sup>:

Մեծ Մասիս գագաթը չունի հրաբխային սկզբնական կամ խառնարան: Բայց դրա փոխարեն նրա հյուսիսային լանջի վրա գոյացած է մի հսկայական պատվածք («Վիհք Մասյաց»), որ սկսվում է ձյունների տակից և բաղկացած է հրաբխային զանգվածներից: Մասիսը հրաբխային ուժեղ գործունեություն է ցույց տվել և պատմական ժամանակներում: Այսպես, 341 թ. (Ք. հ.) տեղի ունեցավ ահավոր երկրաշարժ: Եղեհիայի եպիսկոպոս սր. Եփրեմը պատմում է, թե այդ միջոցին հայկական լեռները նախ հեռացան իրարից, ապա մոտեցան իրար սարսափելի ճայթյուններով. լեռների միջից դուրս ժայթքեցին կրակ և ծուխ: 1319 թվականին մի ուրիշ ահեղ երկրաշարժ քարուքանդ արավ բազմաթիվ քաղաքներ, որոնց մեջ էր, ինչպես ենթադրում են և Անի մայրաքաղաքը: Վերջին ժայթքումը տեղի ունեցավ 1840 թվի հունիսին, երբ կործանվեց Ակուռի գյուղը<sup>4</sup>:

Մասիսին միացած է այն լեռնաշղթան, որ Կովկասյան գլխավոր շղթային զուգահեռաբար ձգվում է դեպի արևմուտք և կոչվում էր Սուկավ լեռներ կամ Հայկական Պար (այժմ Աղրի-դաղ): Այդ շղթայով հայկական հրաբուխը խառնվում է հարավային և արևմտյան մեծ հրաբխային կենտրոնների հետ:

Երկրորդ նշանավոր հրաբխային կենտրոնը Մասիսից դեպի հյուսիս է գտնվում և բաժանված է նրանից Արաքսի հովիտով: Դա Արագածն է, նույնպես հանգած հրաբուխ, 4095 մետր բարձրությամբ: Ունի մի քանի զագաթներ, որոնց մեջ ամենաբարձրը չորս հատ են, տարվա մեծ մասը ձյունով ծածկված: Արագածից բխում են բազմաթիվ ջրեր: Մասիսից Արագածը տարբերվում է նրանով, որ ավելի հարուստ բուսականությամբ ունի:

Այս հրաբխային հսկան էլ գեղեցիկ է և վեհատեսիլ: Նրա շրջակայքը կրում են մի հրաբխային երկրի բոլոր հետքերը: Լավան տարածված է նրա լանջերի վրա և ստորոտներում մինչև Արաքսի ափերը: Իսկ Շիրակի և Վանանդի (Կարսի) սարահարթի վրա բարձրացած են կոնաձև մեծ բլուրներ: Ամբողջ այդ սարահարթի մակերևույթը ծածկված է սև լավայով և մոխրագույն տուֆով: Հրաբխային երկիրն այդտեղից տարածվում է դեպի հյուսիս, մինչև Ախալցխայի շրջակայքը: Չըլըրը խոշոր լիճը հրաբխային խառնարան է այդ լեռնաստանում:

Կովկասյան գլխավոր շղթային գուգրնթացաբար, արևմուտքից դեպի արևելք, տարածված է մի ընդարձակ լեռնաշխարհ, որ ընդհանուր առմամբ ծանոթ է Փոքր կամ Ստորին Կովկաս անունով: Նա բաղկացած է բազմաթիվ ճյու-

<sup>1</sup> В. Сиверс, «Всемирная география» (Азия), СПб, с. 171.

<sup>2</sup> Энциклопедический словарь Брокгауза, СПб, т. 3, с. 121.

<sup>1</sup> էլիզե Ռեկլյու, «Ռուսական Հայաստան», թարգ. Միսրանի, Վաղարշապատ, 1891, էր. 7:

<sup>2</sup> Сиверс, с. 172.

<sup>3</sup> Ф. Фон Гельвальд, «Земля и ее народы», СПб, 1879, т. 4, с. 25.

<sup>4</sup> Н. Неймайер, «История земли», СПб, 1903, т. 1, с. 288.



դավորութիւններ ունեցող մի քանի լեռնաշղթաներից, որոնցից հյուսիսայինները կազմում են Հայկական Բարձրավանդակի սահմանագիծը: Հյուսիսային կողմից Փոքր Կովկասը իջնում է Կուր գետի հովտի վրա, հարավային կողմից՝ Արաքսի հովտի վրա, իսկ արևելյան կողմից՝ այս երկու գետերի ստորին ընթացքի դաշտավայրի վրա<sup>1</sup>: Իսկ Սոմխեթի, Գուգարքի, Գեղարքունու, Գանձակի, Արցախի և Սյունիքի լեռները լցնում են այդ ամբողջ տարածութիւնը: Համարյա կենտրոնում, Գեղարքունիք գավառում, լեռնաշղթաները խաչաձև խառնվում են իրար հետ և կազմում են լեռնաշղթաների այն վիթխարի բավիղը, որ Գանձակի գավառի, Արցախի և Սյունիքի արևմտյան մասերն է բռնում: Հրաբխային հեղաշրջումների հետքերը այստեղ էլ են նկատվում: Սյունիքի լեռնադաշտը (Սիսիան, Զանգեզուր) մի ժամանակ ծածկված է Նեղի Սեւիանի լճի պես մի մեծ ջրավազանի տակ: Չեչաքարի ժայռերը, որոնք այնքան բազմաթիվ են այդ սարահարթի վրա, այս ենթադրութիւնն են հաստատում<sup>2</sup>: Իսկ սարահարթը շրջապատող լեռնային պարերը հարավային և արևելյան կողմից իջնում են Արաքսի վրա:

Փոքր Կովկասը արևմուտքում զանազան լեռնային ճյուղավորումներով միացած է այն լեռնային սիստեմների հետ, որոնք տարածված են էրզրումի սարահարթի վրա: Մի սարահարթ է սա, որ ամենաբարձրն է ամբողջ Հայաստանում և հենց այդ պատճառով էլ հնում կոչվել է Բարձր Հայք: Նա իր լեռնային բարձրություններով միացած է Փոքր Ասիայի, Կովկասի և Պարսկաստանի լեռների հետ: Սարահարթը համարյա ամբողջովին ծածկված է զանազան ուղղութիւնների և զանազան աստիճանի բարձրություններով: Դրանց մեջ հովիտները, տափարակ տեղերը շատ քիչ են<sup>3</sup>: Այդ լեռնային ցանցի մեջ գլխավոր հանգույցը կազմում են հրաբխային Բյուրակնյան (Բինգյուլ, հնում Սըրմանց կամ Սերմանց լ.) լեռները (3300 մետր), որոնք գտնվում են էրզրումի հարավային կողմում: Նրանք միանում են Մասիսի լեռնապարի հետ, որ Սուրկավ կամ Սուկավետ անունով ձգվում է դեպի արևմուտք, կազմելով ջրբաժան բարձրություն Արաքսի և Եփրատի ավազանների մեջ: Մասիսից հետո այս շղթայի ամենաբարձր գագաթն է Քյոսա-դաղը:

Բյուրակնյան հանգույցից դեպի հարավ՝ Հայաստանի ամբողջ տարածութիւնը գրավում են այն լեռնախմբերը, շղթաները, որոնք զանազան ուղղութիւններ են գծում և ընդհանուր առմամբ Ալադաղ և Տավրոս լեռնային սիստեմների մասերն են կազմում: Այդ լեռնաշխարհն էլ ունի մի քանի հրաբխային կենտրոններ, որոնցից ամենաուժեղը Թոնդրակ կամ Թոնդրակ գագաթն է Օաղկանց լեռներում, Մասիսից դեպի հարավ-արևմուտք և բաժանված նրա լեռնապարից մի նեղ հովիտով: Ամբողջ Փոքր Ասիայում սա միակ հրաբուխն է (3330 մետր), որ դեռ այժմ բոլորովին հանգած չէ: Նրա մեջ հաճախ լսվում են դրդոցներ, իսկ նրա սկավառակից 2—3 հարյուր ոտնաչափ ցած՝ գտնվում է մի շերտ, ուր ժայռերի միջից դուրս են ժայթքում ջրային գոլորշիներ, հանելով մի աղմուկ, որ նման է շոգեմեքենաների աղմուկին: Թոնդրակի այդ գլխավոր խառնարանից երեք վերստ դեպի արևելք կան ուրիշ փոքրիկ սկավառակներ ևս, որոնք ժայթքում են եռման աստիճանը ներկայացնող ջրի գո-

լորշիներ: Գլխավոր սկավառակը դրսից և ներսից արտադրում է մեծ քանակութեամբ ծծումբ<sup>1</sup>:

Հրաբխային երկու խառնարաններ էլ գտնվում են Վանի լճի արևմտյան կողմում: Մեկը քարձրացած է լճի հարավ-արևմտյան անկյունի մոտ և կոչվում է Նեմրուշ, մյուսը հյուսիս արևմտյան անկյունում՝ Սիսիան: Հսկայական է նեմրուշի սկավառակը: Դա համարյա բոլորովին կրոր մի փոս է, որի խորութիւնը համարում են 300 մետր: Այդ փոսը շրջապատող սրտերը շատ լավ են կարգվել և ունեն մոտ 22 վերստ շրջագիծ: Փոսի մի մասը լցված է ջրով: Այդ լեռնային լճի մեջ ձկներ չկան: Զուրը անուշ է: Վիթխարի հրաբուխը բարձրացած է Սուշի դաշտի վրա և տմնի գեղեցիկ տեսք: Նրա բարձրությունն է 3860 մետր:

Սիսիանի գագաթն ավելի բարձր է (3910 մետր): Այդտեղ փոսը լցված է ձյունով, կան և երկու լճակներ: Այդ բարձրությունից սթանչիլի տեսարան է բացվում Վանի լճի վրա: Մասիսը կանգնած է նրա առջև իր ամբողջ վեհությունով<sup>2</sup>:

Հիշատակենք, ի վերջո, Հայաստանի հարավային վիթխարի պատը՝ Տավրոսը: Միապաղաղ չէ այդ պատը: Նրան պատռում են հայկական երկու մեծ գետերը՝ Տիգրիս և Եփրատ: Միջագետքի կողմից հարմար լեռնային անցքեր կան, որոնք մտցնում են Հայաստան:

Հայկական Բարձրավանդակի ընդհանուր տեսարանի բնորոշ հատկութիւնը անտառների պակասութիւնն է: Անտառները հատուկ են միայն մի քանի լեռնախմբերի: Մեծագույն մասը, զուրկ լինելով ծառաբույսերից, ծածկվում է հարուստ կանաչներով և ներկայացնում է գեղեցիկ ու պարարտ արոտատեղեր: Կան և ընդարձակ շրջաններ, ուր բարձրավանդակները, լեռնային լանջերը աղքատ, անապատի տեսք ունեն: Եվ խոր հովիտներն են այն տեղերը, որոնք բուսական ճոխութիւն են ներկայացնում և պտղաբերում են այնպիսի բերքեր, որոնք երկրի հարստութիւնն են կազմում:

**5. Ջրեր:** Բացի հրաբուխներից, Հայաստանի բնութիւնը առանձնահատուկ տեսք են տալիս և բազմաթիվ լեռնային լճերը, որոնք մեծագույն մասամբ նույն այդ հրաբուխների արտադրութիւններն են — կամ հրաբուխի սկավառակներ, կամ հրաբուխների կազմած վիհեր, ուր հավաքվում են ջրերը: Քիչ չեն Հայաստանում և անհետացած լճերը: Այդպիսի ներքեմնյան լճակների հատակներ են, ինչպես հիշեցինք, Սյունիքի լեռնադաշտը, Արաքսի հովիտը: Այսպես էին նաև Ալաշկերտի հովիտը և Մուշի դաշտը՝ Արածանի գետի վրա և էրզրումի հովիտն ու Երզնկայի դաշտը արևմտյան Եփրատի վրա<sup>3</sup>:

Այն անթիվ լճերի մեջ, որոնք ծփում են Հայաստանի լեռներում, իրենց մեծութեամբ և դիրքով առաջնակարգ են մասնավառ երեքը՝ Սևան, Վանի լիճ և Ուրմիայի լիճ: Վերջինս թեև յուր ընդհանուր բնավորութեամբ ավելի իրանական լճերին է մոտենում, բայց իրապես պատկանում է Հայկական Բարձրավանդակին:

<sup>1</sup> Г. Абих, «О мнимодельствующем вулкане близ истоков Ефрата», («Записки Кав. От. Имп. Рус. Геогр. О-ва») Тифл., 1873, к. 8.

<sup>2</sup> Линч, т. II, гл. XVII и XIX.

<sup>3</sup> Линч, т. 2, с. 207.

<sup>4</sup> Штреккер, «Очерки Верхней Армении» (Изв. Кавк. Отд. Имп. Рус. геогр. О-ва, т. II, Тифлис, 1894, с. 6).

<sup>1</sup> Дубовин, «История войны и владычества русских на Кавказе», т. I, кн. I, СПб, 1871, с. 93.

<sup>2</sup> Ռեկլյու, «Ռուս. Հայաս.», էր. 27:

<sup>3</sup> Я. Малама, «Описание Эрзерумского Вилаета», СПб, 1874, с. 33.

Այդ երեք մեծ լճերից միայն Սեանն է (հին անունը՝ Գեղամա ծով), որ ունի անուշ ջուր, որովհետև միայն նա է, որ իր ջրերը դուրս է թափում (Հրազդան կամ Զանգու գետի միջոցով), մինչդեռ մյուսները գետեր դուրս չեն թողնում: Սեանը գետեղված է 1934 մետր բարձրության վրա և ունի 1370 քառ. կիլոմետր մակերևույթ: Մուգ երկնագույն է այդ մակերևույթը, հանշարտ: Վերջահանուր տեսարանը փառահեղ է և հանդիսավոր, բայց և շատ տրբուր: Պորփյուրի և հրահոսանքի (լավա) զառիվայրերը գրեթե զխողմին լերկ են, չի երևում ոչ մի ծառ, նույնիսկ լճափում<sup>1</sup>: Շրջապատված է բոլոր կողմերից գորշ և կապուտակ, հրաբխային սասանումներից ճաքճքած լեռնակույտերով: Լիճը հռչակված է իր քաղցրահամ ձկների (կարմրախայտ, իշխան) անսպառ հարստությամբ: Կարծում են, թե Զանգուն, որի միջոցով Սեանի ջրերը թափվում են Արաքսի մեջ, արհեստական գետ է և դրա ապացույց համարում են այն, որ երբ լճի ջրերի մակերևույթը իջնում է աշնանը, գետը համարյա բոլորովին ցամաքում է<sup>2</sup>:

Ուրմիայի լիճը (հին անունը՝ Կապուտան) Սեանի հակապատկերն է: Ունենալով 1300 մետր բարձրություն, նա, այնուամենայնիվ, դաշտային լճի բնավորություն է կրում և իր գծագրություններով ավելի նման է Կասպից օվկին: Սակայն նա մեծ է հայկական բոլոր լճերից, թեև ունի շատ աննշան խորություն, այն է՝ 4—5 մետր: Լճի ջուրը անսովոր աղի է և այդ աղիությունը գնալով սաստկանում է: Մովի ջուրն էլ չէ կարող համեմատվել այդ աղիության հետ: Ուրմիան վեց անգամ ավելի աղի է, քան օվկիանոսը<sup>3</sup>: Վերջինից շին կարող նրա մեջ սուզվել և նրանց մարմինը իսկույն ծածկվում է աղի շերտով, որ փայլում է արևի տակ, ինչպես ադամանդի փոշի<sup>4</sup>: Ձկներ Ուրմիայի լճի մեջ բոլորովին չկան:

Վանի կամ Ախթամարի լիճը (հին Բզնունյա ծով, Տոսպ) լեռնային է (1625 մետր): Ծանապարհորդների վկայությամբ նա իր շրջականերով ափական ցամաքի ամենագեղեցիկ տեղերից մեկն է: Այս էլ աղի ծով է, բայց ոչ Կապուտանի շափ աղի: Ձկներով այնքան հարուստ չէ: Տալիս է մի տեսակ ձուկ, որ հայտնի է «տառեխ» անունով:

Վանի լիճը գոյացել է երևի այն ժամանակից, երբ հրաբխային շարժումները վեր են բարձրացել Նեմրոտը սարը և աղբյուրով կտրել են նրա ջրերի ելքը դեպի Մուշի այժմյան դաշտը, որ, ինչպես ասացինք, նույնպես մի լիճ է եղել: Հին աշխարհագիրները հաղորդում են, որ Տիգրիսի ակունքներից մեկը, քիսելով նպատ լեռան հարավային ստորոտներից, անցնում էր Վանի լճի միջով: Այդ գրույցը, հավանաբար, առաջ է եկել այն հանգամանքից, որ Տիգրիսի ակունքը Վանի լճի հարավային ափին շատ մոտ է: Լճի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրա մակերևույթը այժմ էլ նկատելի կերպով ընդարձակվում է. հետզհետե ջուրը ցամաքից նոր-նոր կտորներ է նվաճում: Այս կողմից Վանի լիճը եզակի երևույթ է ամբողջ Ասիայում: Հին Արճեջ քաղաքը այժմ ջրի տակ է, Վան քաղաքի և լճի մեջ եղած տարածությունը հետզհետե նվազում է և քնակիչները ստիպված են հեռանալ դեպի ցամաքի նեղուր, թողնելով իրենց այգիները ջրերին: Ընթացում են, որ այդ երևույթը

<sup>1</sup> Ռեկլո, «Ռուս. Հայ.», եր. 7:

<sup>2</sup> Ланг, т. 2, с. 56.

<sup>3</sup> Ibid, с. 55.

<sup>4</sup> Ռեկլո, «Ռուս. Հայ.», եր. 90:

առաջանում է այն հանգամանքից, որ լճի ներքին, ստորերկրյա անցքերը խցվել են և ավազանը չէ բավականանում տեղավորելու իր մեջ բոլոր ջրերը: Գուցե կա և մի այլ պատճառ, այն, որ գոյացել են առանձին օղային հոսանքներ, որոնք ավելի մեծ քանակությամբ ջրային գոլորշիներ են արտադրում և երկրի վրա ավելի մեծ քանակությամբ անձրև և ձյուն են թափում<sup>1</sup>:

Լեռնային լճերի մեծ քանակությունն ու ընդարձակությունը արդեն ըստ ինքյան վկայում են, թե որքան ջրառատ երկիր է Հայաստանը: Բայց այդ առատության նույնչափ նշանավոր հայտարարը մեծ և փոքր գետերի բազմությունն է: Միայն Բարձր Հայքը ներկայացնում է ստորերկրյա մի հսկայական ջրամբար, որ բխեցնում է մեծամեծ գետեր և ուղարկում է նրանց երկ ուղղությամբ, դեպի երեք ծովեր՝ Սև ծով, Կասպից ծով և Հնդկական օվկիանոս: Այդ գետերից ամենանշանավորներն են. Եփրատ, Արաքս, Ճորոխ: Բարձր Հայքի լեռնաշխարհին են պատկանում և Կուր գետի այլունքները, ինչպես և նույն լեռնաշխարհի արևմտյան սահմանակից լեռներից են սկիզբ առնում պատմական նշանավոր Ալլուս գետը, որ ոռոգում է Փոքր Հայքը և Կելկիդ գետը (հին ժամանակները՝ Գայլ գետ, հունարեն՝ Լիկոս): Երկու գետերն էլ թափվում են Սև ծովը:

**Ա. Եփրատ:** Կազմվում է երկու մեծ ճյուղերից. մեկը, որ կոչվում է Արևմտյան և կրում է Ֆրատ հատուկ անունը, իսկ մյուսը՝ արևելյանը՝ հայոց պատմության մեջ այնքան հաճախ հիշատակվող Արածանին է, այժմյան անունով՝ Մուրադ:

Արևմտյան ճյուղը երկու դետակներից է կազմվում: Նրա խակական ակունքները գտնվում են էրզրումից դեպի հյուսիս, Գումմիդաղ լեռներում, որոնց հին անունն է Մաղկանց լեռներ: Գումմիդաղի հարավային ստորոտների լանջերում 8567 ոտնաչափ մի բարձրության վրա, միմյանց ուսերը բարձրացած քարերը կազմում են մի ավազան, որի մեջ հավաքվում են գետնից հեղիլ ու հանդարտ դուրս թափվող վերին աստիճանի պաղ (3°) մաքուր, անուշահամ ջուրը: Այստեղ նա դեռ համեստ, բայց հորդ լեռնային աղբյուր է, կորած հրաշալի մարգերի մեջ: Քարե ավազանը չէ ցույց տալիս իր մեջ հավաքվող ջրեղի և ոչ մի շարժում:

Այժմ էլ տեղական հայերի մեջ այդ աղբյուրը պաշտամունքի առարկա է, մի պաշտամունք, որ անշուշտ շատ հին է, բայց քրիստոնեական դարերում ընդունել է քրիստոնեական գունավորում: Պատմում են, որ երբ բյուզանդական Հերակլ կայսրը (7-րդ դար), թափելով Քրիստոսի խաչափայտը գերությունից, տանում էր Բյուզանդիա, ճանապարհին, հենց այստեղ, մի ինչ-որ վտանգի պատճառով, ստիպված եղավ թաղել խաչափայտը հողի մեջ: Ու Վրբ նորից հանցին խաչափայտը, նրա հետ միասին սկսեց դուրս բխել և այդ աղբյուրը: Երևի այս ավանդության հետ կապված է այն, որ լեռան այդ կողմը կոչվում է խաչափայտ, իսկ մոտիկում շինված վանքի անունն է ս. Խաչ: Լողանալ հրաշալի աղբյուրի սառույց ջրի մեջ կարող են միայն այն հրշամիկները, որոնք ոչ մի մեղք չունեն. իսկ լվացվել այդ անմահական ջրերով, նշանակում է բժշկվել մարմնի և հոգու արատներից<sup>2</sup>: Այսպիսի հավատալիքներով է հայ ժողովուրդը մեծարում համաշխարհային հռչակ ստացած իր գետի ակունքները:

<sup>1</sup> Реклю, «Земля и люди», с. 23.

<sup>2</sup> В. Штреккер, «Очерки Верхней Армении», Тифлис. 1873, с. 19.

Արբազան աղբյուրն այնքան մեծ է, որ ավազանից դուրս գալուց հետո արդեն 5—6 ոտնաշափ լայնություն ունեցող մի գետակ է կազմում, որ հանդարտ խոխոջալով՝ իջնում է ծաղիկների և խոտերի գորգերով ծածկված լանջերից, ընդունում է իր մեջ բազմաթիվ աղբյուրներ, հանդարտ ու դանդաղ իջնում է էրզրումի դաշտը: Այստեղ նա ծուլ ընթացք ունի, լճանում է, կազմում ճահիճներ, որոնք մեր հին մատենագրության մեջ կոչվում են «Շամբ Կարնոս»: Զուրը պղտոր է և երևի այդ պատճառով էլ այստեղ ստացել է Կարասուե (Սև չուր) անունը: Այնուհետև շուտ գալով դեպի արևմուտք, գետը խոտերով է արևմտյան ճյուղի հետ, որ կոչվում է Սարչամա գետ: Նա բխում է Օվաջիկ գավառամասում գտնվող լեռներից, որոնց հյուսիսային լանջերից սկիզբ է առնում մյուս մեծ գետը՝ Ծորոխը: Այնուհետև Եփրատը, մտնելով Եոզանի ձորը, հոսում է դեպի արևմուտք, շուտ է գալիս դեպի հարավ և մի րայն շրջան տալով, նորից փոփոխում է իր ընթացքը դեպի արևմուտք և մտնում է Երզնկայի դաշտը: Այս ճանապարհին լեռները նեղում են նա ռաշտը և նա արդեն մի լեռնային հոսվու, աղմկաշատ գետ է: Նրա ձորը ահավոր խորություն է հասնում Ակն քաղաքի մոտ: Աղմկահունչ գետը փոփոխվում է նախ դեպի հարավ, ապա շուտ է գալիս դեպի արևմուտք: Ակնի այդ կիրճը Հայաստանի բնորոշ լեռնային տեսարաններից մեկն է. նրա կողքը կազմող բարձրությունները հասնում են ձյունների գծին և մինչդեռ կիրճի հատակում ծաղկում է նշենին, վերևում, բարձրությունների վրա խոր ձմեռ է:

Շարունակելով իր ընթացքը միշտ դեպի հարավ, Ֆրատը Կապան-Մաղեն անունով տեղից քիչ վերև խառնվում է արևելյան մեծ ճյուղի հետ:

Այս արևելյան Եփրատը, Արածանին, լույս աշխարհ է գալիս ավելի ևս հիասքանչ մի միջավայրում: Նրա ակունքը գտնվում է Մասիսի հարավ-արևմտյան կողմի կաթած այն հսկայական հրաբխային լեռնակույտի մեջ, որի դեռ այժմ էլ բոլորովին չլուծված արտահայտիչն է Քոնդրակը: Այդ լեռնային սիստեմն ունի իր ընդհանուր պատմական անունը՝ Մաղկանց լեռներ (այժմ Ալա-դաղ): Արածանիի ծննդավայրն էլ, ուրեմն, համանուն է նրա արևմտյան քրոջ՝ Ֆրատի օրրանին<sup>2</sup>: Մնունը առնելով Մաղկանց լեռների հյուսիսային լանջերի ձյուններից, Արածանին, սկզբից արդեն մի հորդահոս ջուր, կարճ ճանապարհ անցնելուց հետո, մտնում է Քոնդրակի հրաբխային գործունեության շրջանում գտնվող ձորը, Դիադին ամրոցից 20—25 վերստ դեպի հարավ:

Այստեղ հանդես է գալիս հանքային ջրերի մի այնպիսի հարստություն, որ գուցե իր նմանը չունի աշխարհի վրա<sup>3</sup>: Զագարածև փոսերից դուրս են ցատում տաք ծծմբային ջրեր, այնքան տաք, որ տեղացիները այդ աղբյուրների մեջ եփում են ոչխարի միս: Զերմոսկները թափվում են Արածանիի մեջ: Դրերի ընթացքում նրանց հանքային բաղադրությունները այնպես աղմկալի կազմի են փետի վրա երկու բնական կամուրջ: Արածանին ծակել է այդ պինդ կույին զանգվածները և ճանապարհ թաց արել նրա տակով: Կամուրջներից մեկն այնքան լայն է, որ նրա վրայով կարող են անցնել և ձիավորներ: Հանքային բաղադրությունները ծածկում են կամուրջները և շրջակայքը գույնզգույն փայլուն շերտերով:

1 Фон Мольтке, «Географические записки о Малой Азии», Тифлис, 1874, с. 23.  
2 Զ. Ա. Ալիշան, «Այրարատ», Վենետիկ, 1890, էր. 512:  
3 Малама, с. 105.  
4 Հայաստանը այսպիսի մի պատկեր է ներկայացնում և իր արևելյան ժայռագավառում: Մյուսնայց աշխարհի մեջ, ուր Որոտնա գետը անցնում է իր փորած կամուրջի տակով, Տափ սարի ստորոտում:

Այնուհետև Արածանին մտնում է սև բազալտյա ժայռերի մի երկար ու նեղ ճեղքվածքի մեջ, ուր մորթնաբար առաջ է վազեցնում իր ալիքները: Տեղի գեղեցկությունը անզուգական է: Սև ժայռերը սեպացած են պատարի նման, քմահաճորեն ծոմվում են, և գետը սեղմված է նրանց մեջ արծաթե ծապավենի նման: Նրա եզերքները կիրճի խորքում ծածկված են կանաչների շքեղ գորգերով: Դուրս գալով այդ անձուկ ճեղքվածքից, Արածանին փոխում է իր հյուսիսային ուղղությունը և գնում է դեպի հյուսիս-արևմուտք: Մնվելով Մեծ Հայքի համարյա արևելյան սահմանների վրա, նա գնում է Հայոց երկրի լայնքով մինչև արևմտյան սահմանը և այդ պատճառով սկզբից մինչև վերջ, մինչև Ֆրատի հետ խառնվելը, հայկական գետ է: Դիադինի խորածորից դուրս գալուց հետո էլ հանքային աղբյուրները ուղեկցում են նրան երկար տեղ, նպատ լեռան ստորոտներով:

Այս բոլոր տեղերում Արածանին էլ մի սրբազան պաշտամունքի առարկա է: Հեթանոսության շրջանում հայերը իրենց ազգային-կրոնական ամենանշանավոր տոնախմբությունները (Նավասարդ) կատարում էին Արածանիի սկունքների մոտ: Քրիստոնեությունը նվիրագործեց այս սրբազան պաշտամունքը. այստեղ, նպատ սարի ստորոտում էր, որ Արածանիի ջրերի մեջ մկրտվեցին Տրդատ թագավորը, նրա ընտանիքը, զորքը<sup>2</sup>, և քրիստոնեությունը պաշտոնական կրոն դարձավ Հայաստանում: Այժմ էլ տեղացիները, հավատարիմ ավանդապահներ հին մեկնությունների, այստեղ գետեղում են Նոյնի, առաջին մարդկանց դրախտը: Եվ այդ ավանդությունը զորեղ տպավորություն է թողնում նույնիսկ օտար այցելուների վրա: «Այդ գեղանկար վայրը,—ասում է մի այցելու,— ուներ բիրելիական բանաստեղծության ամբողջ շքնաղությունը. և սքանչանալով նրա տեսքով, ցանկություն էր ծնվում բնակեցնել այդտեղ ուրվականներ, որոնք նրա մենավոր, գաղտնի խորշերից մեկում, թե արդյոք հիմա էլ չե՞ն շրջում մեր նախահայրն ու նախամայրը այնտեղ, և արբւթ այժմ էլ չե՞ն բսնում այնտեղ արգելված պտուղները»:

Ալաշկերտի հովտում Արածանին ընդունում է բազմաթիվ գետակներ: Պարաբիխսա գյուղի մոտ, ընդունելով հանդիպակաց կողմից հոսող Շարիան գետը, ծովում է դեպի հարավ-արևմուտք, իսկ Մանազկերտի մոտից ընդունում է արևմտյան ուղղություն: Ամբողջ ժամանակ նա հոսում է բարձր լեռների միջով, կամ տանելով իր ընթացքը այդ լեռների ստորոտներով, կամ թե պատեղելով նրանց շարքերը և նեղ կիրճեր փորելով: Աջից ու ձախից շարունակ ընդունելով գետեր ու գետակներ (որոնց մեջ նշանավոր են Բինգյուլ-սոս և Գյունեկ-սու), Արածանին մտնում է Մուշի ընդարձակ դաշտը, որ նրա հովտն է կազմում և հայկական լեռնաշխարհի ամենաարգավանդ դաշտերից մեկն է: Այստեղ նա ընդունում է Մեղրագետը:

Մուշի դաշտից գետը դարձյալ մտնում է նեղ ու խոր կիրճերի մեջ: Նրա հունը սեղմում են ժայռերը, և նրա կանաչագույն, մաքուր ջրերը ահագին շոռալունով, փոփոխած, անցնում են կիրճերը լցնող ժայռերի բեկորների վրայով, կազմում են ջրվեժներ: Այդ նեղ կիրճերը վերջանում են Պալուսի մոտ և Արածանին մտնում է երկրորդ, ավելի ընդարձակ դաշտը՝ Խարբերդի բարեբեր, գեղեցիկ մշակված հովիտը: Բայց այդտեղից դարձյալ նեղ կիրճ: Դա մի

1 М. Лихутин, «Русские в азиатской Турции в 1854 и 1855 годах», СПб, 1863, с. 160.  
2 Ազարանգեղոս, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1909, էր. 433:  
3 Лихутин, с. 160.

հակայական ճեղքված է ժայռերի մեջ, որ անշուշտ հրաբխային գործողության արդյունք է:

Արածանին ավելի մեծ ու ջրառատ է, քան Ֆրատը: Կապան-Մանդենի մոտ իրար խառնվելուց հետո նրանք միացած ուժերով պատռում են մի նոր, բայց ավելի անհրապույր և վայրենի կիրճ: Ժայռոտ լեռների մի խուլական զանգվածի միջով է անցնում այդ կիրճը, լերկ ժայռեր, որոնց վրա չկա բուսականություն հետք անգամ: Գետի հունը շարունակ թեք է, գառիվայր, և հոսանքը սրընթաց: Այդ կիրճին դարձյալ հետևում է մի հովիտ, սրան հետևում են դարձյալ կիրճեր: Ամենից նշանավորը Կիմերխանի կիրճն է: Այստեղ Եփրատի ընթացքը սեղմված է ամեն կողմից: Կիրճի ժայռոտ պատերը այնքան մոտենում են իրար, որ ահագին գետն ունի միայն 80 քայլ լայնություն: Ժայռերը կտրտում են և կիրճի հատակը: Ջրերը թափվում են ժայռից ժայռ, կազմելով քարավազներ (փոքրիկ ջրվեժներ. cataracte), որոնց թիվը հասնում է 300-ի: Այս վիթխարի արգելքների վրայով Եփրատը որոտալով է անցնում: Իսկ նոս հունը ավելի ու ավելի թեք ուղղություն է ստանում և հոսանքի սրընթացությունն ավելի է սաստկանում<sup>1</sup>:

Այսպես պատռելով Տավրոսի շղթան, Եփրատը հետզհետե ազատվում է լեռների նեղ ճեղքերից և դուրս է թափվում Միջագետքի հարթ ու հավասար տափարակները: Այդտեղ նա իր ջրերն ուղղում է դեպի արևմուտք, կարծես ձգտելով դեպի Միջերկրական ծովը, որ հեռու չէ նրանից: Բայց հետո ծովում է դեպի հարավ և շրջաններ տալով շարունակ դեպի արևելք, մոտենում է Հայաստանի բարձրավանդակներից իջնող իր մեծ քրոջը, Տիգրիսին, երկար տեղ գնում է նրա հետ զուգընթաց, որպեսզի վերջը գրկախառնվի նրա հետ և թափվի Պարսից ծոցը:

**Բ. Արաքս:** Այս՝ արդեն գերազանցորեն հայկական գետի օրրանը էրզրումի հարավային կողմում բարձրացած Արմանց կամ Սերմանց (Բինգյուլ, Բյուրակնյան) լեռներն են: Դրանց ամենաբարձր գագաթը մի մեծ հրաբխային հանգած խառնարան է, բաղկացած էրեք՝ առանձին-առանձին ցցված մեծ ժայռերից: Խառնարանի շրջապատն էլ մեծամեծ վայրենի ժայռերից է կազմված: Այստեղ, այդ բարոտ բարձրավանդակների վրա, ամառվա ամենատաք ժամանակն անգամ, ձյունի հաստ շերտեր են մնում: Նրանց հալոցքից գոյանում են անթիվ մանր լճակներ (Բինգյուլ՝ հազար լիճ): Այդ լճերից բխում են լեռնային մանր, շափազանց սառնորակ առվակներ, որոնք խոխոջալով ցած են վազում լեռան լանջերով: Բյուրակնյան այդ մեծ գագաթը այսպիսով հանդիսանում է մի կենտրոն, որ ջուր է բաժանում զանազան ուղղություններով: Հյուսիսային լանջերից իջնում է Արաքսը, որ այստեղից պիտի վազե մինչև Կասպից ծով, մինչդեռ հարավային և արևմտյան լանջերի ջրերը արդեն Հնդկական օվկիանոսին են պատկանում, որովհետև թափվում են Արածանիի և Ֆրատի մեջ:

Բյուրավոր ակների այս բարձրադիր հայրենիքը Հայաստանի բնության ամենազեղեցիկ անկյուններից մեկն է ներկայացնում: Անմասն է լեռնային օդը, որ տոգորված է բյուրավոր ծաղիկների անուշահոտությամբ: Չնայած բարձրության, լեռներն ունեն ցուրտ քամիներից լավ պաշտպանված լանջեր, ուր օդը բարեխառն է, ամառը նույնիսկ տաք: Եվ այս կողմերի հայ ժողովուրդը այստեղ էլ, ինչպես և Արածանիի վերին ակունքների վրա, գետեղում է դրախ-

տը: Անկախ Աստվածաշնչի ավանդությունից, որ եկել է նվիրագործելու հայկական մեծ գետի ծնունդը, բյուրավոր աղբյուրների և լճակների այս բնագավառը պիտի զարգացներ ջրերի սրբազան պաշտամունքը, որ առհասարակ հատուկ է հայ ժողովրդին: Հավատում են այստեղի և ոչ քրիստոնյա բնակիչները, թե այս լճակների մեջ կա մեկը, որ իսկապես անմահական ջուր ունի և անմահություն կտա այն մարդուն, որ երջանկություն կունենա նրա ջրից խմելու: Մական դժբախտությունն այն է, որ ոչ ոք դեռ չի գտել այդ լճակը, ուստի և ոչ ոք անմահական չէ: Բայց առանց այդ հրաշագործ լճակի էլ մարդկային կյանքն այս դրախտանման վայրերում առողջ ու երկարատև լինելու բոլոր հնարավորություններն ունի<sup>2</sup>:

Չորս առվակներ միանում են Բինգյուլի վրա և կազմում են Արաքսը<sup>2</sup>, որ լեռան լանջերից բռնում է ուղղություն դեպի արևելք և ընդունում է իր մեջ բազմաթիվ գետակներ, որոնք իջնում են նույն Բինգյուլի ուրիշ լանջերից: Ապանաշուռ է գալիս դեպի հյուսիս և ընթանում է մինչև Հասան-Կալե, ուր նրա մեջ թափվում է էրզրումի արևելյան բարձրություններից բխող Հասան-Կալե գետը: Այստեղից Արաքսը նորից դեպի արևելք է դառնում, ոռոգելով վերին Բասենի դաշտը, որի արևելյան ծայրում մտնում է լեռներով նեղված խոր հովտի մեջ: Նեղ հովիտը շարունակվում է մինչև Կողբի սահմանները, ուր Արաքսի մեջ է թափվում Ախուրյան գետը: Հնում ամբողջ այդ հովիտը կոչվում էր Երասխաձոր:

Ախուրյանի խառնուրդից հետո Արաքսը թե՛ ավելի մեծանում է և թե՛ ընդունում է դաշտային գետի կերպարանք: Այնուհետև նրա հովիտն արդեն Արարատյան ընդարձակ դաշտն է: Գետը գնում է հարավ-արևելյան ուղղությամբ և որովհետև դաշտը թեք մակերևույթ ունի, ուստի նա արագընթաց է: Մի շարք լեռնային գետեր, որ թափվում են ձախ կողմից Արաքսի մեջ Արարատյան դաշտում, այն է՝ Փասախ, Մեծամոր, Հրազդան, Ազատ, Արևելյան Արփաշայ, ահագին դեր են կատարում երկրի տնտեսական կյանքի մեջ: Առանց Արաքսի ջրային սիստեմի բազմահարուստ երկիրը մեռած անապատ կլիներ: Ուշադրության արժանի հանգամանք է, որ Արաքսի հունը Արարատյան դաշտում անկայուն է և դարերի ընթացքում փոփոխվել է մի քանի անգամ: Պատճառը, բացի ավազոտ փխրուն հողից, եղել են գուցե և ստորերկրյա սասանումները: Հունի անկայունությունից էր, երևի, որ երկար չէին դիմանում Արաքսի վրա հոռմեացիների շինած կամուրջները, և այդ պատճառով է, որ Արաքսը հոռմեական բանաստեղծության մեջ անվանված է «Կամուրջի չհամբերող»: Արաքսի ափին էին գտնվում Արարատյան նշանավոր մայրաքաղաքները՝ Արմավիր, Արտաշատ: Վերջինս ուներ Տափերական անունով կամուրջ:

Հին Ջուղայի մոտ Արաքսը ուղղվում է դեպի արևելք: Բայց այստեղ էլ նրան պետք է պատռել Սյունիքի և Ղարաղաղի լեռնաշղթան: Կազմում է նեղ ու մռայլ կիրճ: Արաքսը, նեղվելով ժայռերի մեջ, կազմում է քարավազներ (Մեղրիի մոտ) և ահագին աղմուկ է հանում անձուկ ճեղքվածքների մեջ: Այս ահեղ և վայրենի տեսարանը մի ճանապարհորդ անվանում է «դժոխսաձև» և ավելացնում է, թե ուրիշ ոչ մի տեղ չէ կարելի տեսնել այսքան ուժգնությամբ արգելքների դեմ կովոզ մի գետ, որ փրփրած՝ այս ու այն կողմ է գարնվում՝ լցնելով նեղ կիրճը ջրային փոշիով<sup>3</sup>:

Ազատվելով այդ քարային թակարդներից, գետը դուրս է գալիս Մոռլանի

<sup>1</sup> Мокше, с. 24—26.

<sup>2</sup> Г. Радде, «Бин-гёль-даг, гора тысячи озер, область истоков Аракса», («Изв. Кавк. от. Имп. Рус. геогр. О-ва», Тиф., 1877—1878, т. V).

<sup>1</sup> Штреккер, с. 29.

<sup>2</sup> Личч, т. II, с. 481, (рис.).

<sup>3</sup> Զ. Ղ. Ալիշան, «Միսական կամ Սյունիք», Վենետիկ, 1893, եր. 321.

ընդարձակ դաշտը և միշտ դեպի հյուսիս ուղղելով իր ընթացքը, Ջավադ քաղաքի մոտ խառնվում է Կուր գետի հետ:

**Գ. Ճորոխ և Կուր:** Տեսանք արդեն, որ Յրատի արևմտյան ակունքը բռնում է Օվաճըկի հարավային լանջերից, իսկ նույն լեռների մյուս, հյուսիսային լանջերը սկիզբ են տալիս Ճորոխ գետին: Այս ավազաքար հին հայկական Սպեր գավառին է պատկանում:

Սկզբից մինչև վերջ գերազանցորեն լեռնային ջրառատ մի գետ, Ճորոխն սկսում է իր ընթացքը արևելքից արևմուտք ուղղությամբ, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք և հասնելով Բաբերդ քաղաքին, բաժանում է նրան երկու մասի և առաջանում է ուղիղ դեպի հյուսիս, դեպի Սև ծովը, որ հետո չէ այդտեղից: Սակայն Պոնտոսյան լեռնաշղթան նրան ճանապարհ չէ տալիս և նա շուտ է գալիս դեպի արևելք, գնում է գոսգրնթացաբար իր ակունքներին, մինչև որ սկսում է թեքվել դեպի հյուսիս-արևելք:

Մինչդեռ նա այսպիսի Կերկար օձապտույտ շրջան է գործում էրզրումի հյուսիս-արևելյան կողմում, Յրատի արևելյան ակունքները ծնեցնող Գոռի-դաղի շրջանում, հին հայկական Տայք նահանգի Թորթում գավառի լեռներից դուրս է գալիս նրա հորդահոս և խոշոր օժանդակը, որ այսօր էլ կոչվում է Թորթումի ջուր (Թորթում-սու): Այս գավառի լեռնային խոժոռ ու գեղեցիկ բնությունը մի հիասքանչ տեսարանի մեջ է դրել Թորթումի ընթացքը: Գետը հուն է փորում բարձր սարերի արանքով և այնքան սեղմվում է նրանց մեջ, որ կազմում է մի երկար ու նեղ լիճ: Լճից մի նեղ ելք նրան տանում ցած է թափում քառասուն մետր բարձրության վրայից: Լեռնային մի մեծ ջրվեժի տեսարանը շատ սիրուն է: Ապա հետզհետե ավելի ևս մեծանալով, Թորթումը գնում է շարունակ դեպի հյուսիս և թափվում է Ճորոխի մեջ:

Թորթումի այս ընդհանուր լեռնային բնավորությունը հատուկ է և մայր գետին: Ճորոխը ամբողջ ժամանակ հոսում է ժայռոտ ու նեղ հովիտով, մեծ արագությունով, կազմելով բազմաթիվ քարավազներ, մանր ջրվեժներ: Հայկական մյուս գետերից նա տարբերվում է ոչ միայն այդ արագությամբ, այլև նրանով, որ նրա կիրճը մեծագույն մասամբ անցնում է մեծ անտառների միջով: Միայն Սև ծովին մոտեցած՝ նա գտնում է ընդարձակ, դաշտային հուն և բաժանվելով մի քանի ճյուղերի, նետվում է ծովի գիրկը:

Չնայելով գետի կատաղի բնավորության, Արտվին քաղաքից մինչև Սև ծովը նրա վրա հաստատված է նավագնացություն: Բայց դա մի վտանգավոր և ահարկու ճանապարհորդություն է անսովոր մարդու համար: Գետը խիստ սեղմված է ահագին բարձրություն ունեցող ժայռի պատերի մեջ: Այնքան բարձր են այդ պատերը, որ վերևից նայողին գետը երևում է իբրև սառած, անշարժ կանգնած մի մոխրագույն զանգված: Ճորոխը այդ ճեղքվածքի մեջ հաճախակի պտույտներ է գործում. շատ են այնպիսի տեղեր, ուր նրա հատակից դուրս են ցցվում ժայռեր, որոնց ընդհարվելով գետը, ձյունի պես սպիտակ փրփուր է դառնում: Շատ են այնպիսի ժայռեր, որոնց վրայով է վազում նա: Բայց այս բոլոր վտանգները արհամարհում է մարդու հնարագիտությունը: Կատաղի են ալիքները, համարձակ ու ճարպիկ են նրանց վրա սահող նավակները (կայուկ):

Այդ նավակները տափակ հատակ ունեն, երկար են ու նեղ, երկու կողմից ունեն սուր բթեր: Նրանք պատրաստվում են տեղացիների ձեռքով և զարմանալի դիմացկունություն ունեն: Նավավարները երկու-երեք հոգի են, որոնք

1 Ն. Սարգիսյան, «Ճեղագրությունը ի Փոքր և ի Սեփ Հայս», Վենետիկ, 1864, էր. 84:

գործում են թիակներով: Իսկ ղեկավարը նավակի տերն է, ուստի, որ հպարտ ու անխոռով կանգնում է առջևում, ունի բավական հուժկու բազուկներ, բավական մեծ ճարպկություն և շափազանց լավ է ճանաչում իր հարազատ գետը:

Գետի լայնությունը մինչև Սև ծով 10—20 սաժեն է, իսկ երկարությունը 60 վերստ: Լավ ժամանակին, երբ ջրերը շատ են, այդ տարածությունը նավակով կարելի է անցնել 5 ժամում: Անծանոթ ուղևորը, առաջին անգամ նստելով նավակի մեջ, պաշարվում է ահ ու դողով: Նա սլանում է վտանգից վտանգ և դժբախտությունը նրան անխուսափելի է թվում:

«Ահա ձեր առջև ցցված է սեպացած ժայռը, որ երկնքին է հասնում, թվում է, թե նա կտրել է հունը (Ճորոխը սուր անկյունով պտույտ է գործում և նրա հոսանքը չէ երևում), իսկ նրա տակ եռում և փրփրում է ջրվեժը, համարյա մի արշին բարձրությամբ, որ բարկացած ցատկում է քարավազ կազմող քարերի վրայով, որոնք կտրել են գետի հունը: Ուղղակի այդ քարավազի վրայով էլ նետի պես թռչում է նավակը դեպի սեպացած ժայռը, ավելի և ավելի արագացնելով իր վազքը: Մի րոպե ևս և դուք անխուսափելի կերպով պիտի փշուր-փշուր լինեք, զարնվելով այդ վայրենի անհրապույր ժայռերին, այդ սև քարերին, որոնք տեղ-տեղ դուրս են ցցված ձյունի պես սպիտակ փրփուրի միջից»<sup>1</sup>: Սակայն մինչդեռ սարսափած ուղևորը նայում է անխոռով իր տեղը կանգնած ուսին, որ իմանա, թե ի՞նչ պիտի լինի իր ճակատագիրը, նավակը ճարպիկ ու արագ գործողությամբ արագ և աննկատելի անցնում է վտանգավոր տեղը և շարունակում է սլանալ արագավազ ջրերի վրա: Սև ծովից նավակները հետ են բերվում երեք օրվա ընթացքում, հետ բերողները ավիով են գնում, թոկերով քաշելով նավակը:

Հայաստանի սահմաններում և մասնավորապես Բարձր Հայքի արևելյան ծայրերում են գտնվում և Անդրկովկասի մեծ գետի՝ Կուրի ակունքները: Հին Տայք նահանգի Կող գավառն է նրա ծննդավայրը, որ այժմ կոչվում է Գյուլե<sup>2</sup>: Այստեղ, Չլդըը լճի հարավ-արևմտյան կողմում և Կարսի լեռների թիկունքում գտնվում է Խոշևան անունով սարահարթը, որ ունի 6500 ոտնաչափ բարձրություն: Մի անհյուրընկալ, դաժան կլիմա ունեցող դաշտ, որ ծածկված է ճարտություն: Մի անհյուրընկալ, դաժան կլիմա ունեցող դաշտ, որ ծածկված է ճահիճներով, իսկ զարնանը, հալոցքի ժամանակ, համարյա ամբողջովին դառնում է ճահճային մի լիճ: Այդ ջրերից կազմվում է Մուղմիշ գետակը, որ Կուրի ամենաառատ ակունքն է: Նա գնում է դեպի հյուսիս և խառնվում է ուրիշ երեք գետակների հետ Գյուլե դաշտում, որ թեև նույն բարձրությունն ունի, բայց կլիմայական պայմաններով ավելի նպաստավոր է բնակության համար: Չորս գետակների խառնուրդը դաշտի հյուսիսային անկյունում կազմում է Կուր գետը, որ և այդտեղ մտնում է Սաիրմե կոչված կիրճը:

Շարունակելով իր ընթացքը հարավից հյուսիս ուղղությամբ, գետը մտնում է Արդահանի դաշտը, որ արդեն մի բարեբեր, սևահող երկիր է: Այստեղ նա արդեն այնքան մեծացած է, որ գարնանը միանգամայն անանցանելի է դառնում: Դաշտից նա մտնում է 2300 ոտնաչափ խորություն ունեցող ժայռոտ մի ճեղքվածքի մեջ, պահելով իր նախկին ուղղությունը<sup>3</sup>: Ախալցխայի սահման-

1 Н. Левашов, «Заметка о пограничной линии и зоне на расстоянии от берега Черного моря до г. Артвина» (Извест. Кавк. Отд. Имп. Русс. Геогр. О-ва, 1879—1881. т. 6, с. 232).

2 Ալիշան, «Ճեղագիր Հայոց Մեծաց», Վենետիկ, 1855, էր. 15:

3 В. Филиппов «Военно-топографический и стратегический обзор северо-восточных провинций азиатской Турции», СПб, 1874, с. 12—14.

ներին մոտ նա դեպի հյուսիս-արևմուտք է թեքվում, բայց այդ քաղաքի մոտից շուտ է գալիս դեպի հյուսիս-արևելք: Բորժոմի կիրճից դուրս գալուց հետո գետի ընթացքն ուղղվում է դեպի արևելք: Ոռոգելով Վրաստանը և իր ձախ կողմից ընդունելով ջրառատ օժանդակներ կովկասի զլխավոր լեռնաշղթայից, կուրը հարավ-արևելյան ուղղությամբ գնում հասնում է Աղվանից դաշտը, իր մեջ ընդունելով Սեծ և Փոքր կովկասի ջրերը: Մուղանի դաշտով նույն հարավ-արևելյան ուղղությամբ առաջանալով, կուրը խառնվում է Արաքսի հետ և թափվում է Կասպից ծովը:

Այս գծագրած ուղղությամբ ընթացող մեծ գետը Հայաստանի սահմանագիծն էր, որ բաժանում էր նրան Վրաստանից և Աղվանից երկրից:

Գ. ՏԻԳՐԻՍ: Միջերկրականի, Պարսից ծոցի և Սև ծովի մեջ եղած գետերից մեծագույնն է Տիգրիսը, որի ակունքներն արդեն հարավային Հայաստանին են վերաբերում: Եփրատի նման նա էլ ունի երկու, բայց ավելի փոքր ճյուղեր՝ արևմտյան և արևելյան:

Արևմտյան ճյուղը մեզ փոխադրում է Խարբերդի բարեբեր երկիրը: Այդ քաղաքից դեպի հարավ-արևելք, ութ ժամ հեռավորության վրա գտնվում է լեռնային մի գեղեցիկ լիճ, որ տեղական հայերի մեջ հայտնի է Մովք անունով, իսկ թուրքերեն կոչվում է Գյուլջուկ: Լճի լեռները ձգվում են նույն այդ հարավ-արևելյան ուղղությամբ, դեպի Մալաթիա և այդտեղով էլ անցնում է Դիարբեքիր տանող ճանապարհը:

Ահա այդ լճի մոտ, քարայրերից բխում են աղբյուրներ, որոնցից կազմվում է Տիգրիսի արևմտյան ակունքը: Նա հաղորդակցություն չունի Մովք լճի հետ: Եփրատը երեք կողմից պատվում է այն սարի շուրջը, որից բխում է Տիգրիսը և սրա ակունք-աղբյուրները հազիվ երկու հազար քայլ հեռու են Եփրատի ակունքից: Բայց նրանք չեն թափվում Եփրատի մեջ, այլ գնում են դեպի հարավ և հավաքելով իրենց մեջ շատ գետակներ, իջնում են Դիարբեքիր արդեն բավական մեծացած և պտույտ անելով այդ քաղաքի երկու կողմով, գնում են արևելյան ուղղությամբ, մինչև որ խառնվում են արևելյան ճյուղի հետ:

Այս ճյուղը սկիզբ է առնում Վանի լճի հարավային ափերին, Նորդուզ գավառում, Հոգյաց վանքից վերև: Տեղի դիրքը լեռնային է, հարուստ՝ բուսականությամբ և այլ գեղեցկություններով: Օլաման անունով ասորի գյուղի մոտ լեռան մի ճակատ կա, այդտեղ էլ Տիգրիսի սկիզբն է: «Ի վեր, որ գազաթն է այդ գեղեցիկ ճակատին և հոս ամենայն ինչ ոսկեղեն է: Արևուն ճառագայթը ոսկեփայլ: Թևք թռչնոց ոսկեզույն: Չայն Կրգոց հաուց ի ձայն ոսկեկար քնարի: Յողունք խոտոց և բուսոց ոսկի: Մաղկունք ամենայն և ամենուրեք ծաղկա-սփյուռ, շուշանն ու համասփյուռ տերևն ոսկի, տեսին ոսկի, միայն քարեր կան բոսորային կարմիր, և այդ քարերու մեծամեծ բեկորներն շենքեր կտեսնվին ի տեղիս տեղիս, զորս կբացատրեն մեզ կողզունցի հայն և Օլամանցի ասորիք, թե Ազնավորաց բերդ են և Ազնավորաց գերեզմանք: Քանի մը առաջավոր սկունք կբխին այս տեղեն, ամենն ևս անմահության ջրեր, բայց բուն ակն՝ մեկն է»:

Հետաքրքրական է, որ Խարբերդի արևմտյան ճյուղի վրա էլ, ինչպես և Եփրատի նույն ճյուղի վրա, շկա դրախտի ավանդությունը, մինչդեռ հայտնի

է, որ ըստ տարածված բացատրության՝ Տիգրիսն էլ դրախտի շորս գետերից մեկը պիտի եղած լինի: Դրա փոխարեն՝ Նորդուզի (արևելյան ճյուղի) ժողովուրդը մեծարում է Տիգրիսի ակունքը մի հավատալիքով, որ նույն ավանդության հետքն ունի իր մեջ: «Ամեն տարի, — պատմում են մարդիկ, — Համբարձման տոնին, առավոտ, անմահության խնձոր մի հրեշտակներեն կղբվի այս (զլխավոր) ական ջրի մեջ, ուր ամենեն կանուխ հասնողն միայն կտեսնե, բայց երբ ձեռն կկարկառե առնուլ, խնձորն այլևս չերևիր: Ափսո՛ւ: Բայց տեսներն հեղթե՛ք է, ըսեք թե ի՞նչ կերպ, ի՞նչ փուրն և ի՞նչ մեծություն ունի: Ո՞ր ադամորդին կարող է պատմել, կա՞ անոր նման բան մը որ հասկցնենք, երբ դրախտն երթանք՝ պիտի տեսնենք ու վայելենք»:

Նորդուզի ճյուղը արևելքից արևմուտք ուղղությամբ առաջ գնալով, մեծանում է, ընդունելով բազմաթիվ լեռնային գետեր, որոնցից մեկը սկիզբ է առնում Վանի լճի հարավային ափից մոտ: Ապա նա մտնում է Բոհտան լեռների կիրճը և ստանում է Բոհտանսու անունը: Սղերդի մոտ նրան միանում է հյուսիսից եկող մի մեծ ճյուղ ևս, որ սկիզբ է առնում Վանի լճի հարավ-արևմտյան անկյունի բարձրություններից՝ և անցնելով Բաղեշ (Բիթլիս) քաղաքի միջով, կոչվում է Բիթլիս-սու:

Տիգրիսի այս ճյուղի մասին հին աշխարհը զարմանալի հասկացողություններ: Ստրաբոնը պատմում է, թե Տիգրիսը, իջնելով նպատ լեռներից, անցնում է Վանի լճի միջով, առանց, սակայն, խառնելու իր ջրերը լճի բորակային ջրերի հետ: Այս հրաշալի երևույթի պատճառով, հռչակավոր հույն աշխարհագրի կարծիքով, Տիգրիսի հոսանքի ծայրագույն արագությունն էր: Նա առում է, թե «Տիգրիս» բառը մեղական (մարական) լեզվի մեջ նշանակում է նշտ արձակել: Հետաքրքրական է, որ Ստրաբոնի վկայությամբ Տիգրիսի մեջ կա ձկների մի մեծ բազմազանություն, մինչդեռ Վանի լճում միմիայն մի տեսակ ձուկ է գտնվում: Ուրեմն գետի ձկներն էլ հոսանքի հետ արագ անցնում էին լճի միջով, առանց մնալու բորակային ջրերի մեջ: Հասնելով լճի մյուս ափը, շարունակում է հույն աշխարհագիրը, Տիգրիսը կորչում է անդունդների մեջ և երկար ժամանակ գնալով գետնի տակով, նորից դուրս է գալիս հողի ներսը:

Նույն այդ զրույցը ավելի ծաղկեցրած պատմում է մի ուրիշ հին աշխարհագիր, Պլինիոսը: Նա ասում է, թե Վանի լճի ջրերն այնպիսի հատկություն ունին, որ ինչ էլ գցեք նրա մեջ, չի սուզվի: Եվ Տիգրիսն էլ վազում է լճի մակերևույթի վրա: Նույն հեղինակի վկայությամբ, Տիգրիսն ու Արածանին այնքան իրար մոտ են հոսում, որ երբ ջրերը շատանում են և դուրս են գալիս ափերից, երկու գետերը միանում են, բայց չեն խառնվում իրար հետ, որովհետև Արածանին ավելի թեթև ջուր ունի և այդ պատճառով էլ հոսում է Տիգրիսի վրայով: Պետք է ասել, որ այս հին զրույցների արձագանքները մնացել են և տեղական ժողովրդի ավանդությունների մեջ: Մուշի դաշտի վերին մասում գետնից դուրս է թափվում մի մեծ անուշահամ աղբյուր՝ Նորդեն անունով: Ժողովուրդը հավատում է, թե այդ աղբյուրը նեմրուդ-դադի միջոցով կապ ունի Վանի լճի հետ և պատմում է, որ մի հովիվ իր ցուպը, որի ծայրին

1 Vital Cuinet, „La Turquie d'Asie“, t. II, Paris, 1891, p. 546.

2 „Géographie de Strabon“, Paris, 1894, t. II, p. 461—462.

3 Այժմյան աշխարհագիրներն էլ հիշատակում են այդպիսի երևույթ: Նրանք ասում են, թե Տիգրիսի արևելյան ճյուղը մոտ 3 կիլոմետր տարածության վրա կորչում է կրային լեռների խորխորատների և այրերի մեջ (Сиверс, с. 175):

4 Ливч, т. II, с. 52.

1 Գ. Վ. Մովսեսյան, «Թորոս Աղբար», հ. Բ., 4. Պոլիս, 1884, եր. 96:

2 „Lettres du Marechal de Moltke sur l'Orient“, Paris, p. 181.

3 Գ. Մովսեսյան, «Համով, հոտով», Թիֆլիս, 1904, եր. 79—80:



չապած էր փողով լիքը մի շոր, անզգուշությամբ գցել է լիճը, մի քանի ժամանակից հետո գտել է այն Նորշեն աղբյուրի մեջ:

Վանի լճի նկարագրության մեջ մենք տեսանք արդեն, որ այդ գրույցները ծնվել են այն հանգամանքից, որ Տիգրիսի ակունքները շատ մոտ են լճի եզերքին: Սակայն մինչև այժմ կատարված քննությունները չեն ցույց տվել, որ այդ ակունքների ջուրը իր հատկություններով և բաղադրությամբ նման լինի լճի ջրերին: Հին գրույցին ամենից շատ ուժ է տվել, ինչպես երևում է, մանավանդ Տիգրիսի այն աղբյուրակները, որ գտնվում է լճի հարավային ափերում, Գյուլեղեքի անունով, իսկ որ գեղեցիկ, ձորի մեջ, Սալ գյուղի մոտ<sup>1</sup>:

Սղերդից քիչ հեռու Բոհոտան-սուն խառնվում է Դիարբեքից եկող Խարբերդի (արևմտյան) ճյուղի հետ: Այնուհետև մեծ գետն ուղղում է իր ընթացքը դեպի հարավ: Այսպես պատկերով Տավրոսի և Քրդստանի լեռները, նա իջնում է Միջագետք, ընդունելով ուրիշ մեծ օժանդակ գետեր ևս: Եվ գնում է կենդանացնելու Միջագետքի անհուն դաշտերը, մինչև Եփրատի հետ խառնվելը:

**6. Կլիմա:** Այսքան ջրառատությունն արդեն ապացույց է, որ Հայկական սարահարթը, մանավանդ եթե նրան համեմատենք հարևան Իրանի հետ, ընդհանրապես խոնավ կլիմա ունի: Բայց դա միևնույն ժամանակ և ցամաքային կլիմա է իր սուր և խիստ փոփոխականությամբ: Միայն Սև ծովի ափերն են, որ ենթարկված են ծովի մեղմացուցիչ ազդեցության: Մնացած տեղերում Հայաստանը, իբրև մի մասնիկ ասիական մեծ սարահարթի, կլիմայական հայտնությունների երկիր է: Ընդհանրապես ամառը շատ տաք է և ձմեռը շատ ցուրտ<sup>2</sup>. Երևանում, Արաքսի հովտի այդ հյուսիսային սահմանում, որ ունի հազար մետր բարձրություն, ձմեռը ցրտերը հասնում են —30 և մինչև իսկ —38 աստիճանի (հունվար ամսում միջին թվով 15°), իսկ ամառը տաքը հասնում է 40, մինչև անգամ 44 և 45 աստիճանի: «Այս ժամանակ այլևս որևէ եվրոպացի չէ կարող դիմանալ և ստիպված է լինում ապաստանել լեռների, ձորերի հովանիներում: Այդ պատճառով էլ դժնդակ տեսլիքը և ուրիշ հիվանդությունները շատ հաճախ են Երևանում: Թիֆլիսում, ասում է հայր, մատաղահասը ծերից չէ տարբերվում, Երևանում՝ կենդանին մեռածներից»<sup>3</sup>:

Իսկ էրզրումում գարուն համարյա չի լինում: Ձմեռվա խոր ձյունները ըսկըսում են հալվել հանկարծ, փոքրիկ գետակներն ուռչում են, մեծանում և արևն սկսում է այրել: Ամառը տոթագին է, խոտաբույսերն շտապում են հասակ քաշել, հասունանալ, բայց և այնպես, շատ անգամ ցրտահար են լինում, մանավանդ որ առավոտներն առհասարակ օդի բարեխառնությունը շատ ցած է լինում: Ամառվա միջին բարեխառնությունն է 24°, բայց հաճախ է պատահում, որ հունիսի վերջերին և հուլիսի սկզբին լեռնային բարձրությունների վրա բուքեր են լինում և տեղում է առատ ձյուն<sup>4</sup>:

Դաշտերի ոռոգումը ամառվա շոգերին՝ երկրագործության անհրաժեշտ պայմանն է շատ տեղերում: Խաղողենիները աշնանը պիտի թաղվին հողի տակ, որպեսզի ձմեռվա ցրտերից չվնասվին: Հայաստանի նույնիսկ հարավային կողմերը կլիմայական տարբեր հանգամանքներ ունին, քան միևնույն աշխարհագրական լայնության վրա գտնվող ուրիշ երկրները: Այսպես, Վանի շրջականերում բնում են նարինջ և կիտրոն, բայց ձիթենին այնտեղ չէ կարող

ապրել. մինչդեռ, օրինակ, Ֆրանսիայում ձիթենիների աճման շրջանը ավելի դեպի հյուսիս է տարածվում<sup>1</sup>:

Այս հակադրություններն ու առանձնահատկությունները կախված են մի շարք ընդհանուր և տեղական պայմաններից: Առաջնակարգ դեր կատարում են այն քամիները, որոնք տիրապետում են հայկական լեռնաստանում: Եվ այդ՝ շնորհիվ այն հանգամանքի, որ Հայաստանի լեռնաշղթաները միապաղաղ շարքեր չեն կազմում, ինչպես, օրինակ, Կովկասյան գլխավոր շղթան, այլ կտրատված են մեծամեծ միջանցքներով, որոնք և թույլ են տալիս քամիներին տարածվել ամեն տեղ:

Բարձր Հայքի կլիման Սև ծովի խիստ ազդեցության է ենթարկված: Ձմեռը այդ ծովից փչում են քամիներ, որոնք առատ ձյուն են բերում: Հայկական դաժան, ձյունառատ ձմեռը նկարագրված է դեռևս հին օտարազգի հեղինակների ձեռքով իբրև այս երկրին միայն հատուկ մի Երևույթ: Տակիտոսը հայկական ձմեռն անվանում է «դժնդակ»: Ստրաբոնը պատմում է, որ ձմեռը հյուսիսային Հայաստանի (Վրաստանի սահմանակից) լեռներում ձյունը այնքա՛ն առատ է լինում և բուքերը այնքա՛ն սաստիկ, որ հաճախ ճանապարհորդները թաղվում են հյուսիսի տակ. միակ նախազգուշական միջոցն այն է, որ նրանք իրենց հետ տանում են բարձր գավազամեները, և երբ ձյունակույտերի տակ են մնում, այդ գավազանները թե թույլ են տալիս, որ օդ ներս մտնի թաղվածների շնչառության համար և թե նշան են լինում, որ ձյունի տակ մարդիկ կան, այդ նշանով էլ գաղիս են մարդիկ օգնության, հանում են թաղվածներին ձյունի տակից<sup>2</sup>:

Հայաստանի ձմեռը մանրամասն նկարագրել է Քսենոֆոնը, որ 400 թվականի (Ք. ա.) ձմեռը 10 հազար հույն զորքի հետ Բարբելոնից Հայաստանի վրայով նահանջում էր դեպի Սև ծովը: Ձյունը հասնում էր ձիերի փորին: Անսովոր զինվորները շատ տառապանքներ կրեցին, շատ մարդիկ և անասուններ ցրտամահ եղան: Ձյունների անհուն տարածությունները վատ էին ազդում մանավանդ տեսողության վրա, և զինվորները ստիպված էին իրենց աչքերի առջև մի սև առարկա բռնել: Մի հայ գյուղի տանուտեր սովորեցրեց նրանց, թե ինչպես պետք է պաշտպանվել ցրտից<sup>3</sup>:

Հիշվում է նաև, թե ինչպես հայոց ձմեռը տառապանքներ պատճառեց հռոմեական բանակին: Տիգրան մեծի անթիվ-անհամար զորքերը շկարողացան դիմադրել Լուկուլլոսի գոռ արշավանքներին. միայն հայոց ձմեռն էր, որ ազատեց Տիգրանի հյուսիսային մայրաքաղաք Արտաշատը հռոմեացիների ձեռքից: Արարատյան նահանգի սահմաններում, Արածանի գետի վրա, աշնան մեջ հանկարծ ձյուն եկավ, սաստիկ ցրտեղ և սառնամանիք սկսվեցին: Հռոմեական լեգեոնները, հռոմեացի պատմագիրների ասելով, շկարողացան դիմանալ այդ դաժան եղանակին և հրաժարվեցին առաջ գնալ: Որպես թե հենց միայն այս էր պատճառը, որ ոչինչ չկարողացավ անել հաղթական Լուկուլլոսը այդ բացարձակ անհնազանդության դեմ և ստիպված էր դուրս հանել իր զորքը Հայաստանի սահմաններից, տանելով նրան Միջագետք՝ «ամենաբեր և արևահայեաց գաւառը»<sup>4</sup>:

Պակաս խստաշունչ չէ ձմեռը Հայաստանի հարավային կողմերում, օրինակ՝ Տավրոս լեռներում: Սասունցիները ձյունների ահագին կույտերի վրա ման

<sup>1</sup> Ibid, c. 57.

<sup>2</sup> Զ. Ալիշան, «Յուզիկը Հայրենյաց հայոց», Վենետիկ, 1869, հ. Ա. էր. 32.

<sup>3</sup> Թեկլլու, «Ռուս. Հայ.», էր. 33.

<sup>4</sup> Штреккер, c. 18.

<sup>1</sup> Реклю, т. XI, с. 257.

<sup>2</sup> Géographie de Strabon, t. II, p. 459.

<sup>3</sup> Ксенофонт, «Анабазис», СПб, 1881, кн. 4, гл. V.

<sup>4</sup> Պատմագրից Քերովեացու «Ջուգաղիթ», Վենետիկ, 1833, հ. 9. էր. 582.

գալու համար հնարել էին մի տեսակ փայտե ոտնամաններ<sup>1</sup>։ Բաղեշի կողմերում լեռներից մեծ հյուսեր թափվելու հիշատակություններ կան մեր հին գրականության մեջ։ Մոկաց աշխարհի ձմեռվա մասին խոսելով, Թովմա Արծուինին գրում է. «Ձիւնապատ սառնասոյր առհասարակ պաղեալ էր երկիրն»<sup>2</sup>։ Վասպուրական նահանգում կար Օձ անունով մի ձոր, որ այդպիսի անուն ստացել էր, ինչպես վկայում է պատմիչը, «վասն խստութեանն սաստկաշունչ դառնալիւր մահածին հողմոյն շնչելոյ»<sup>3</sup>։ Մովսես Խորենացին էլ տալիս է Կորդվաց լեռների մի ձմեռային պատկեր։ Արգար թագավորի քույր Օղեն ճանապարհորդության ժամանակ բուքի է բռնվում։ Ամբողջ քարավանը ցաքուցրիվ է ընկնում։ Իսկ Օղենի որդի Սանատրուկին նրա դայակը դնում է իր երկոս ծծերի մեջտեղը և մնում է ձյունի տակ երեք օր և Կերեք գիշեր, մինչև որ գալիս են որսորդները և գտնում են դայակին և մանուկին<sup>4</sup>։

Երկարատե ձմեռվա ձյունների այս անսահման քանակությունն է, որ այնքան ջրառատ է դարձնում Հայաստանի բարձրավանդակը։ Ռեկլյուն ասում է, որ Սև ծովը իր քամիներն ուղարկելով Բարձր Հայքի սարահարթը, այդպիսով իր ջրերը շարունակաբար թափում է Հնդկական օվկիանոսը Եփրատի միջոցով։

Ամառը Հայաստանում հյուսիսային և արևելյան քամիներն են տիրապետում, որոնք գլխավոր բևեռային հոսանքի մի ճյուղավորումն են կազմում և բերում են շոր օդ, որ ցրում է ամպերը։ Իսկ խոնավություն բերում են արևմտյան քամիները, գլխավորապես Միջերկրական ծովից փչող քամին<sup>5</sup>։ Այդ քամին է, որ ամառը ավելում է Արարատյան արևակեղ դաշտը և որ հայտնի է հայերի մեջ «Լուսավորչի քամի» անունով։ Նա փչում է անփոփոխ ամեն օր, սկսվելով ճաշից հետո հինգ ժամին և տևում է գիշերվա ամենամեծ մասը։ «Քանի որ փչում է այս քամին, բնակիչները փակվում են իրանց տներում՝ ազատ մնալու համար փոշու և մինչև իսկ խոշոր ավազի հորձանքից, որ մըրըրկում է օդի մեջ»<sup>6</sup>։

**7. Բուսական հարստություն։** Հայաստանի հողը առհասարակ պտղաբեր է համարվում։ Մի երկիր է դա, որ առանձնապես նպաստավոր է տնտեսության երկու կարևորագույն ճյուղերի— երկրագործության և անասնապահության համար։

Մենք տեսանք, որ հայկական լեռնաստանի մեծագույն մասը, մանավանդ այն, որ նրա կենտրոնական մասերն է կազմում, համարյա բոլորովին զրկված է անտառներից կամ, խոսելով այդ երկրի բնակիչների լեզվով, անփայտ է։ Լեռների հսկայական լանջերը ծածկվում են միայն պարարտ խոտերով և արոտատեղիներ են, սակավ պիտանի կամ բոլորովին անպետք՝ հացաբույսերի մշակության համար։ Յորենի արտերը պատահում են և 1800 մետր բարձրության վրա, իսկ գարին ավելի ևս բարձր է գնում, մինչև 2000 մետր, բայց այս տեղերում նրանք արդեն ենթակա են զարնանային անժամանակ ցրտերից փչանալու վտանգին։ Ուստի Հայաստանի բարձր լեռնամասերը ավելի անասնապահության և հետևաբար թափառական կյանքին են նպաստում, քան երկրագործության։ Եվ սկսած ամենահին ժամանակներից մինչև այսօր

դրությունը միևնույնն է մնացել— միլիոնավոր ոչխարների և այլ շորքոտանիների հոտեր, որոնք թափառում են այդ դալար արոտներում։ Մի ճանապարհորդ հաշվել է, որ Մասիսի և Պարսից ծոցի մեջ տարածված արոտներում արածող ոչխարների թիվը 400 միլիոնից պակաս չի լինի։ Իսկ մի ուրիշ ճանապարհորդ կարծում է, որ միայն 4. Պոլսի շուկան Հայաստանի լեռներից ստանում է տարեկան 1½ միլիոն ոչխար<sup>1</sup>։ Հոտերի բազմությունն է կազմում այս կողմերի բնակիչների հարստության ամենագլխավոր աղբյուրը։

Իսկ լեռնաշխարհի ցած տեղերում, մանավանդ մի քանի արգավանդ հովիտներում, տիրում է ավելի բարձր մշակում։ Այստեղ հողագործությունն արտահայտվում է ոչ միայն հացաբույսերի, այլև ուրիշ օգտավետ բույսերի (բամբակ) մշակության մեջ։ Տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը այդ տեղերում այգեգործությունն է, հետևաբար և գինեգործությունը։ Հայաստանի գինիները իրենց լավ հատկությամբ շատ հայտնի էին դեռ հին աշխարհում<sup>2</sup>։ Ընտիր տեսակի են և Հայաստանի ծառապտուղները, որոնք և մեծ համբավ են վայելում։ Բուսաբանները Հայաստանն են համարում մի քանի մըրքերի, մասնավորապես խաղողի հայրենիքը<sup>3</sup>։

Իր բուսական հարստություններով առաջին տեղը Հայոց աշխարհում բրնում է Արաքսի հովիտը (Արարատյան դաշտը) և դեռ Ստրաբոնը անվանում է այդ հարստությունն «անզուգական»<sup>4</sup>։ Հռչակված են այդ կողմից և Խարբերդի ու Վանի դաշտերը։ Իսկ Մուշի, Ալաշկերտի, Շիրակի և այլ հովիտներն ստացել են հացի շտեմարանների համբավ։

Թեև ընդհանրապես անփայտ են հայկական լեռները, բայց մասնավորապես կան նահանգներ, որոնք համարյա ամբողջովին անտառներին են պատկանում։ Կուսական թանձրախիտ անտառների ընդարձակ տարածություններ հատուկ են մանավանդ հյուսիսային ծայրագավառներին։ Այդ կողմից հայտնի են մանավանդ Արցախ և Տայք նահանգները, ինչպես նաև Գուգարքը, մասամբ Սյունիքը։ Եղիշեն հիշատակում է Արցախի «թանձրախիտ մայրիք»<sup>5</sup>։ Տայքի լեռնային բնությունը Խորենացին ընդհանրապես ընդհանրում է «գիշին մառախլապատ տեղիք ժայրեաց» խոսքերով<sup>6</sup>։ Գուգարքի մեջ հիշվում է «Մթին լեռան»<sup>7</sup>, որ անշուշտ անտառներով ծածկված լինելուն համար էր այդպես կոչվում։

**8. Կենդանիներ, հանքեր։** Հայաստանի բնությունը, ինչպես տեսանք, առանձնապես նպաստում է անասնապահության։ Տնային կենդանիներն են՝ ոչխար, այծ, կով, գոմեշ, ջրորի, էշ։ Բայց անասնապահության ամենակարևոր ճյուղը, որով հայկական լեռնաշխարհը հռչակված էր շատ հնուց, ձիաբուծությունն էր։ Ձիաներն էին երկրի վաճառականության գլխավոր առարկան փյունիկցիների ժամանակ։ Պարսից թագավորները Հայաստանից հարկ էին ստանում տարեկան 20 հազար մատակ ձի<sup>8</sup>։ Հայաստանի գինավորական ուժը զըլ-

<sup>1</sup> Թովմա Արծուինի, «Պատմութիւն Տանն Արծրունեաց», Կ. Պոլիս, 1852. եր. 134.  
<sup>2</sup> Անդ, եր. 314.  
<sup>3</sup> Անդ, եր. 287.  
<sup>4</sup> Խորեն., Բ, 12.  
<sup>5</sup> Բեկլո, Թ. IX, Կ. 285.  
<sup>6</sup> Ռեկլյու, «Ռուս. Հայ.», եր. 23.

<sup>1</sup> Բեկլո, Թ. IX, Կ. 286.  
<sup>2</sup> Strabon, t. III, p. 248.  
<sup>3</sup> Բեկլո, Թ. IX, Կ. 288.  
<sup>4</sup> Strabon, t. II, p. 458.  
<sup>5</sup> Եղիշեն, «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Վենետիկ, 1842, եր. 221.  
<sup>6</sup> Խորեն., Գիրք Բ, գլ. 2.  
<sup>7</sup> Խորեն., Գիրք Բ, գլ. 1.  
<sup>8</sup> Եզեկիկ մարգարե, գլ. ԻԷ, 14.  
<sup>9</sup> Strabon, t. II, p. 463.

խավորապես ձիավոր էր և հայկական հեծելազորքը անուն ուներ Պարսկաստանում և ուրիշ տեղերում: Հռչակված էր մանավանդ ձիու մի տեսակը, որ կոչվում էր նժուշգ: Նա ուներ խոշոր հասակ, «անզուգական գեղեցկություն», ինչպես վկայում է Ստրաբոնը, իսկ նրա հատկությունները բնորոշելու համար մեր հին գրողները գործ են ածում «սրավար», «սրաթռիչ», «օդապարիկ» բառերը<sup>1</sup>: Հին դարերի հոյակապ երիվարներն էին այդ նժուշգները և Ասորեստանի և Պարսկաստանի թագավորները նրանցով էին լցնում իրենց ախոռները<sup>2</sup>: Ստրաբոնը երկարորեն նկարագրելով Հայաստանի ձիաները, հավատացնում է, որ այդ երկրի արոտներն են պատճառ, որ այդ տեսակ գեղեցիկ ձիեր են լինում: Նա հիշատակում է Հայաստանի այն գավառները, ուր ամենից շատ զարգացած էր ձիաբուծությունը— Փանինի, Գոմեսինի և Օրփիոդոնի, որոնց տեղերը մեզ անծանոթ են: Հայտնի է միայն, որ ձիու ազնիվ տեսակով հռչակված տեղերից մեկը մինչև վերջին ժամանակներս Արցախ նահանգն էր: Ձիաբուծության այստեղ նպաստող հանգամանքն այն էր, որ այդ նահանգին սահմանակից է Մուղանի ընդարձակ դաշտը, որ հին ժամանակներից ձիաբուծ էր, այսինքն այնպիսի տեղ, ուր հատկապես ձիերի ահագին երամակներ էին պահում պարսից թագավորները<sup>3</sup>:

Հայկական լեռները, դաշտերը, գետահովիտները հարուստ են որսի կենդանիներով և թռչուններով— եղնիկ, այծյամ, վարազ, քարայծ, փասիան, կաքավ, բադ և այլն: Հայաստանին հուշակ էր տալիս և կենդանական աշխարհի մի փոքրիկ ներկայացուցիչը՝ «որդան կարմիր»: Դա մի տեսակ միջատ է, որ ապրում է եղեգնաբույսերի վրա՝ Արարատյան դաշտում և որից ստացվում էր այն գեղեցիկ կարմիր գույնը, որ այժմ էլ հայտնի է «կոշընիլ» անունով<sup>4</sup>: Որդան կարմիրն էլ Հայաստանի վաճառականության մի նշանավոր առարկան էր:

Իբրև գերազանցորեն լեռնային երկիր, Հայաստանը, բնականաբար, ունի և լեռնային շատ հարստություններ: Հանքերի մեջ աչքի է ընկնում ամենից առաջ աղը: Թե որքան առատ է այդ հանքը լեռնային Հայաստանում, այդ, ըստ հին, բայց ոչ ճշգրիտ ստուգաբանության, ապացուցանում են աշխարհագրական մի շարք անուններ, որոնց մեջ «աղ» բառը բաղկացուցիչ մասնիկ է կազմում: Այսպես են, օրինակ, Դարանաղի, Մանանաղի, Աղիովիտ անուններ, որոնք ամբողջ գավառների էին պատկանում: Հռչակված է այժմ էլ Կողբի աղահանքը, որից հետո Արաքսի հովտում գալիս է Նախիջևանի հանքը: Աղահանքերի շահագործումը Հայաստանի բնակիչներին հայտնի է եղել նախապատմական ժամանակներից: Այդ են ցույց տալիս այն քարե գործիքները, որոնք վերջերս գտնվեցին Կողբի աղահանքում և որոնք մեզ տանում են քարե դարաշրջանի ժամանակները<sup>5</sup>:

Աղից հետո մարդկության հայտնի է դարձել պղինձը, որի հարուստ հանքերը այժմ էլ շահագործվում են Հայաստանի զանազան կողմերում: Բայց

ավելի նշանավոր է երկաթը, որի կատարած քաղաքակրթական և առևտրական դերի մասին մենք արդեն խոսեցինք իր տեղում: Այնուհետև Հայաստանի հանքերի թվում հիշատակվում են ոսկի, արծաթ, կապար, ծծումբ, զառնիկ, նավթ և այլն: Ոսկու հանքեր մի ժամանակ կային Հայաստանի երեք կողմերում. Սպեր գավառում (Բարձր Հայք), Ճորոխ գետի վրա, Արարատյան դաշտում և Զորրորդ Հայք նահանգի Պաղնատուն գավառում (այժմյան Արղն)<sup>1</sup>: Սպերի ոսկու հանքը այնքան հայտնի է, որ Ալեքսանդր Մակեդոնացին, ինչպես վկայում է Ստրաբոնը, նրան տիրելու համար մի գումարտակ զորք ուղարկեց՝ Մենոնի հրամանատարությամբ, բայց տեղացիները խեղդամահ արին Մենոնին<sup>2</sup>:

Վերջապես Հայաստանի բնության պարզևած հարստությունների մեջ չպետք է մոռանալ և հանքային ջրերը, որոնք զանազան բաղադրություններ ունին: Իրանք առատությամբ բխում են համարյա ամեն տեղ:

Ընդհանուր եզրակացությունը, որ ինքնըստինքյան հետևում է Հայաստանի բնագրությունից, այն է, որ այդ երկիրը բավականաչափ հարուստ և կարող է իր բնակիչների երջանկությունն ապահովելու համար: Անզլիացի ճանապարհորդ Լինչը գրում է. «Եթե միայն մարդ կոչված կենդանին փոքր-ինչ նվազ շահով աշխատակցված լիներ, Հայաստանը կդառնար մի համարյա իդեալական շտեմարան իր ժողովրդի համար: Ամբացնող լեռնային օդը, խստաշունչ, բայց առողջ ձմեռը և միշտ զով ամառնային գիշերները, հարավային արևը, մեծ գետերը, հացաբեր հողի ահագին տարածությունները, հանքերի առատությունը— երկրի այսպիսի բարեբար արժանավորությունները պետք է, որ զարգացնեին ուժը մարդու մեջ, նյութական բարեկեցությամբ սնուցանեին նրա թևավորված ոգու աճումը և հարկադրեին նրան բացվիլ առատ լույսի մեջ, ինչպես ծաղիկ»<sup>3</sup>: Պատմությունը ցույց կտա, թե այս երկրում ինչ վիճակի ենթարկվեց բնության այդ բարեբար նախասահմանությունը:

**9. Հաղորդակցության միջոցներ:** Հայկական «լեռնային կղզին» ներքին և արտաքին հաղորդակցությունների կողմից էլ կղզիացած դիրք ունի: Որքան էլ Աև և Կասպից ծովերը աշխարհագրորեն այդ լեռնաստանի սահմանների մեջ են մտնում, բայց ամենաշատը հայկական ծայրագավառներն են ունեցել իրենց ազդեցության տակ, այն էլ ոչ միշտ. ծայրագավառներ, որոնք պետական ու առևտրական կյանքի տեսակետից եղել են աննշան, թույլ զարգացած և փոքրիշատե աչքի ընկնող ազդեցություն չեն արել ընդհանուր դրության վրա: Այնպես, որ Հայաստանը հաղորդակցության միջոցների վերաբերմամբ էլ գերազանցորեն ցամաքային Երկիր է: Հայ ժողովուրդն ընդհանուր առմամբ ծովագնաց չէր:

Գալով ներքին հաղորդակցություններին, այստեղ էլ պակասում է ջրային ճանապարհների հարմարությունը: Թեև ջրերով այնքան առատ է երկիրը, բայց լեռնաստան է: Հայկական լճերի և գետերի տեղագրությունն արդեն մեզ ցույց տվեց, որ նրանք չեն կարող լինել առաջնակարգ նշանակություն ունեցող ճանապարհներ: Այդ ջրերի վրա, եթե հնարավոր էլ է եղել նավարկությունը—

<sup>1</sup> Հ. Ա. Ինգիբեաև, «Հնախոսություն Հայաստանայց Աշխարհի», Վենետիկ, 1835, հ. Ա, էր. 199:

<sup>2</sup> F. Lenormant, „Histoire Ancienne de l'Orient“, t. VI, Paris, 1868, p. 541.

<sup>3</sup> Strabon, t. II, p. 453.

<sup>4</sup> Ինգիբեաև, հ. Ա, էր. 202:

<sup>5</sup> J. de Morgan, „Les premiers Ages de Metaux dans l'Arménie Russe“, Paris, 1889, p. 31.

<sup>1</sup> Ինգիբեաև, հ. Ա., էր. 185—189:

<sup>2</sup> Strabon, t. II, p. 462.

<sup>3</sup> Личч, т. II, стр. 523:

էր, բայց դա շատ սահմանափակ նշանակություն է ունեցել — տեղական հաղորդակցություն, մոտիկ ափերի մեջ: Եփրատի պես խոշոր գետը թույլատրում է նավարկություն միայն մի քանի տեղերում, ուր նրա հոսանքը հովիտների միջով է առաջանում: Բայց այդ նավարկությունն էլ մի խեղճ բան է: Երկաթե նավակներ հազիվ թե կարելի լինի գործածել: Տեղային ազգաբնակչությունը հնագույն ժամանակներից միայն մի տեսակ լաստ է կարողացել հնարել՝ գետի ափերները մի կերպ նվաճելու համար: Այդ լաստերը շինվում են ուռցրած տկերի վրա և կարող են գնալ միայն վերևից դեպի ցած, գետի հոսանքով: Մնում են ցամաքային ճանապարհները: Սրանց հարմարությունը կախված է արդեն յուրաքանչյուր շրջանի տեղագրական հանգամանքներից:

Ընդհանրապես լեռնային են Հայաստանի ճանապարհները: Այն տեղերում, ուր տիրապետում են լեռնակույտերը, ճանապարհները շատ դժվարամատչելի են և փոխադրական միակ միջոց ամենալավ դեպքում հանդիսանում են բեռնակիր անասունները: Սարահարթերի վրա և գետերի խոր ու լայն հովիտներում ճանապարհներն արդեն այնքան հարմարություններ են ներկայացնում, որ անիվներն են դառնում փոխադրության գլխավոր միջոցը: Սակայն այս հարմարությունը նույնպես տեղական հանգամանք ունի, որովհետև Հայաստանի թե՛ ցած և թե՛ բարձր տափարակները ընդարձակ չեն, սահմանափակ տարածություններ ունին և, գլխավորը, կտրատված են լեռնային բարձրություններով: Զուտ դաշտային ճանապարհ, որ ունենար ընդհանուր հաղորդակցության հանգամանք երկրի գոնե մեծագույն մասի համար, չկա: Մի սարահարթից մյուսը, մի հովտից մյուսը գնալու համար պետք է անցնել լեռնային շղթաներով: Իսկ Հայաստանի լեռնանցքները բարձր են (1200—2000 մետրը), այդ պատճառով էլ ձմեռը ծածկվում են խոր ձյունով և համարյա անանցանելի են դառնում սաստիկ բուքերի ժամանակ: Եվ չկա ճանապարհ, որի վրա այդպիսի դժվարություններ չլինեն:

Քարավանների մեծ ճանապարհը Պարսկաստանից տանում է Տրապիզոն, էրզրումի սարահարթի վրայով, Տրապիզոնի և Բաբերդի մեջ գտնվող լեռնանցքով, որի բարձրությունն է 1850 մետր<sup>2</sup>: էրզրումից Մալաթիա տանող մեծ ճանապարհը, հասնելով Եփրատի ափը՝ Ակն քաղաքի մոտ, կամաններով բարձրանում է 1000 ոտնաչափ ունեցող լեռնանցքի վրա, որ սեպացած է գետի նեղ ձորի մեջ, ապա իջնում է և նորից սկսում է բարձրանալ, այս անգամ արդեն 1500 ոտնաչափ: Կլիմայական փոփոխություններն այս ճանապարհին չափազանց խիստ են: Գարնան սկզբում, կիրճի մեջ, ծառերը ծաղկած են, իսկ վերևում՝ միապաղաղ ձյունապատ լեռնադաշտ է, շատ ընդարձակ<sup>3</sup>:

Տափարակի և լեռան, հովիտի և բարձրության հակադրությունները ներկայացնող տեղագրական միանման հանգամանքներ ունին նաև Արաքսի հովիտից Բայազետի վրայով Վան, Վանից Բաղեշ, Մուշից Խարբերդ և էրզրում, էրզրումից Կարս տանող գլխավոր ճանապարհները — տեղ-տեղ դաշտային, հարմար նույնիսկ անիվների համար, տեղ-տեղ լեռնոտ՝ բարձր ու դժվար անցքերով: Ավելորդ է ասել, որ լեռնաշխարհում, ինչպես են, օրինակ, Արցախ, Սյունիք, Գուգարք, Սասուն և այլն, հաղորդակցության ուղիներն են լեռնային նեղ ու փոքրիկ կաժանները:

<sup>1</sup> Мольтке, с. 24.

<sup>2</sup> Сиверс, с. 172.

<sup>3</sup> Мольтке, с. 23.

<sup>4</sup> А. Гиппиус, «Сборник маршрутов», Тифлис, 1892.

**10. Ճանապարհների քաղաքական նշանակությունը:** Չնայած, սակայն, հաղորդակցական այս խոշոր դժվարություններին, հայկական լեռնակղզին իր ընդհանուր աշխարհագրական դիրքով միջազգային մի շատ կարևոր ճանապարհ է Առաջավոր Ասիայի արևելյան և արևմտյան մասերի մեջ: Այդ լեռնաստանի վրայով է միայն, որ Իրանի սարահարթը հաղորդակցում է Սև և Միջերկրական ծովերի, իսկ Միջազգետքը՝ Սև և Կասպից ծովերի ավազանների հետ:

Հայաստանի այդ դիրքի ահագին նշանակությունը պարզ ըմբռնելու համար պետք է ի նկատի առնել այն պատմական միջավայրը, որի մեջ զետեղված է նա, պետք է ծանոթանալ այն դերին, որ մարդկային ազգի պատմության մեջ կատարել են Հայաստանի հարևանները — Միջերկրական ծովը, Պարսկաստանը, Միջազգետքը:

Անհունապես մեծ, հզոր է այն նշանակությունը, որ ունեցել է Միջերկրական ծովը համաշխարհային քաղաքակրթության մեջ: Եվրոպան, Ասիան, Աֆրիկան իրարից անշատող այս մեծ ներքին ծովը իր երկարաձիգ, ընդհանրապես գեղեցիկ ափերով, որոնք օժտված են բարեխառն կլիմայի բոլոր բարեմասնություններով, կատարել է մարդկության անջատ մասերը իրար հետ կապողի, միացնողի դեր: Դա ջրային մի մեծ ավազան է, բայց նույնչափ մեծ ավազան է եղել և մարդկային ցեղերի հոսանքների համար, որոնք անդիմադրելի շարժումով դեպի նրա ափերն են ձգտել, այդ ափերում են հաստատվել և այդտեղ, այդ միջնաշխարհում, ընդհանուր ուժերով, հավաքական աշխատակցությամբ ստեղծել են Միջերկրական համաշխարհային կուլտուրան<sup>1</sup>:

Իր տեղում մենք կտեսնենք նախապատմական մարդկության վիթխարի շարժումները, ցեղերի տեղափոխությունները: Եթե այստեղ բավականանանք հիշատակելով, որ այդ տեղափոխությունները կատարվում էին արևելքից արևմուտք ուղղությամբ և հակառակը, ինքնըստինքյան կպարզվի Հայաստանի դերը, որպես ճանապարհի, որով պիտի անցնեին արևելքից դեպի Միջերկրականի արևելյան ափերը: Այդ շարժումները ամենահին, անհիշատակ դարերից շարունակվում են մինչև մարդկային պատմության այն շրջանը, որ հայտնի է նոր Պատմություն անունով, այսինքն՝ մինչև 16-րդ դարը, Քրիստոսից հետո:

Երկրորդ հարևանի, այն է՝ Իրանի սարահարթի համաշխարհային պատմական դերը պակաս կարևոր չէ: Այդ երկիրը բնական ճանապարհ է Հին Աշխարհի երեք մասերի համար էլ: Ազգերի տեղափոխությունների ճանապարհ, համաշխարհային առևտրի ճանապարհ: Դա մի մեծ քաղաքակրթական կայան էր, ուր ազգերը իրենց տեղափոխության միջոցին կանգ էին առնում, որպեսզի դուրս գան նախնական վայրերի դրությունից, հաղորդակից լինեն քաղաքակրթության և ապա շարունակեն իրենց առաջխաղացությունը: «Առանց հիմքի չէ, — ասում է Ռեկլյուն, — որ մենք ամենքս, արևմտյան և արևելյան ժողովուրդներս՝ եվրոպացիներ, ամերիկացիներ, հնդիկներ, չինացիներ, նալում ենք Իրանին, ինչպես մեր նախնիքների երկրին»<sup>2</sup>:

Իսկ Միջազգետքը, Հայաստանի երկու մեծ գետերով ոռոգվող ընդարձակ դաշտավայրը, որ հասնում է Պարսից ծոցին, այն տիեզերահռչակ վայրն է, ուր դարերի անհուն խորություն մեջ (40 և էլ ավելի դար Ք. ա.) վառվեց մարդկային քաղաքակրթության առաջին օջախը: Այդտեղ էր Քաղդեան, որին հե-

<sup>1</sup> Гельмольт, «История человечества», т. IV, СПб, 1903, с. 11.

<sup>2</sup> «Человек и земля», т. 1, с. 371.

տո հաջորդեց Ասորեստանը: Բարձր աստիճանի հասած կուլտուրան, լուսավորութունը դարձնում էին Եփրատ-Տիգրիսյան բարեկից հովիտը մի այնպիսի նախանձելի, գրավիչ կենտրոն, որ դեպի իրեն էր քաշում ամբողջ Առաջավոր Ասիան, դեռ վայրենության խավարի մեջ խարխափող այդ Ասիան<sup>1</sup>: Հայկական լեռնաշխարհը այն բնական միջնաբերդն էր, որ պաշտպանում էր Եփրատ-Տիգրիսյան բարձր քաղաքակրթությունը հյուսիսի վայրենի ցեղերից, որոնց անդամադրելի ձգողությունը դեպի այդ հարուստ և բարեբախտ տափարակները փշրվում էր, ընդհարվելով հայկական լեռներին: Ոչ միայն Միջագետքին և Պարսից ծոցին, այլև Սիրիային, Փոքր Ասիային ապահով տեր դառնալ ոչ ոք չէ կարող առանց հայկական լեռնաշարեր իր ձեռքում ունենալու<sup>2</sup>: էրզրումին և Արածանիի հովտին տիրողը տեր է և Միջերկրական ծովի կիլիկյան ամբերին<sup>3</sup>:

Եվ հենց այս էր պատճառը, որ այդ լեռնաշխարհը ամբողջ պատմության ընթացքում, մինչև մեր օրերը, կովածաղիկ էր աշխարհակալ մրցությունների մեջ:

Ռազմական այս կարևորության չափ նշանավոր էր Հայաստանի դիրքը և միջազգային առևտրի մեջ: Այն մեծ ճանապարհները, որոնցով անցնում էին տեղափոխվող ազգերը և նվաճողների բանակները, հաղորդակցության միջոցներ էին նաև կուլտուրայի և վաճառականության համար:

Ամենակարևոր հաղորդակցությունը, այն, որ Հայաստանի համար պատմական ճակատագիր ստեղծողներից գլխավորն էր, Միջին Ասիայի հետ էր կապված: Երկու ուղղությունը էր կատարվում այդ հաղորդակցությունը: Մեկը՝ Խորասանից գալիս էր Կասպից ծովի հարավային և արևմտյան ափերով, Գիլան և Մազանդարան նահանգներով, դեպի Արաքսի հովիտը: Բայց այս ճանապարհը դժվարություններ ունի լեռների և ճահիճների պատճառով: Մյուս ճանապարհը գալիս է նույն Խորասանի Հերաթ հուշակավոր քաղաքից, անցնում է Մեշեդով, այստեղից Թեհրան, Ղազվին, Մայանա, իսկ այդտեղից՝ Քավրիզ, որ արդեն շատ մոտ է Արաքսի հովտին: Այս ճանապարհը թեև ավելի երկար է, քան ստաշինը, բայց հարմար է, հանգիստ, առանց բնական մեծ արգելքների: Այդ պատճառով էլ նա ավելի բանուկ էր, սկսած նախապատմական ժամանակներից:

Այդ ճանապարհի տիեզերական նշանակությունը միայն այն հստակաբանությամբ չէ բխում, որ դա ամենաբանուկ հաղորդակցությունն էր ծայրագույն Արեւելքի և Արևմուտքի մեջ ազգերի շփման, տեղափոխումների համար: Նույն ճանապարհով էր շրջանառություն կատարում միջազգային առևտուրը: Հերաթից միջազգային ճանապարհը ճյուղավորվում էր և այդ ճյուղը Ղանդահարի և Կելատի վրայով մտնում էր Հնդկաստան: Այս հուշակավոր ճանապարհը այժմ էլ դեռ չէ կորցրել իր նշանակությունը: Գլխավորապես այս ճանապարհի պատճառով է, որ Իրանը եղել է և այժմ էլ մարդկության տենչանքի առարկան է<sup>4</sup>:

Եվ ահա Հերաթի այդ տիեզերական ճանապարհը արևմտյան ուղղությամբ գնում կանգ էր առնում Մասիսի ստորոտների մոտ: Այստեղ էլ, այս ստորոտ-

ներում, արևելյան այդ մեծ ուղին հանդիպում էր Սև ծովի ճանապարհներին: Իսկ Սև ծովը այն ջրային ավազանն է, որ հավաքվում ևն Եվրոպայի այն բոլոր ճանապարհները, որոնք կազմվում են Դանուբ, Դնեստր, Դնեպր և Իոն գետերից<sup>5</sup>:

Մի ուրիշ մեծ, միջազգային ճանապարհ գալիս էր դեպի նույն Մասիսի ստորոտները Միջերկրական ծովի ափերից: Դա փյունիկեցիների առևտրական քարավանների ճանապարհն էր, որ ձգվում էր Տավրոսից Սիրիայի անապատով, իջնում էր Եփրատի վրա, ուր ճյուղավորվում էր. մի ճյուղը գնում էր դեպի հարավ, դեպի Բաբելոն, մյուսը՝ դեպի հյուսիս, Արաքսի հովիտով դեպի Կասպից ծովի ավազանը<sup>6</sup>: Այդ գծով էր Բաբելոնը իր ապրանքներն ուղարկում հյուսիս, իսկ հյուսիսի ազգերը իջնում էին Միջագետք: Այդ գծի հետ էր միանում այն մեծ ռազմական ճանապարհը, որով Եգիպտոսի բանակները, քաղաքակրթությունը, բարքերը գալիս հասնում էին Եփրատի հովտին:

Փյունիկեցիների անմիջական հաջորդները համաշխարհային առևտրի մեջ հույներն էին, որոնք ճանապարհ բաց արին մինչև Հնդկաստան: Հնդկաստանից դուրս բերված ապրանքները նավերով փոխադրվում էին Իբարոս գետով, որ թափվում էր Օքսուս (այժմ Ամու-Դարիա) գետի մեջ, իսկ այս վերջինը այն ժամանակները թափվում էր Կասպից ծովը: Այստեղից ապրանքները դուրս էին բերվում Կուր գետի վրայով<sup>7</sup>, որ Հայաստանի հյուսիսային սահմանագիծն էր կազմում: Կուր գետից հինգ օր ցամաքային ճանապարհ կտրելով, առևտրական քարավանները հասնում էին Ճորոխ գետին, ուր բեռները բարձրվում էին նավակների վրա, որոնք իջնում էին Սև ծով: Այդ ճանապարհը պահպանում էին հունական փոքրիկ զաղութները, որոնք տարածված էին ճանապարհի ամբողջ երկարությամբ: Մի ճյուղ այդ ճանապարհից զատվում էր և Դիլիջանի կիրճով գնում իջնում էր Արարատյան դաշտը, ուր այնքան ճանապարհներ էին իրար հանդիպում<sup>8</sup>:

Երբ Օքսուս գետը փոխեց իր ընթացքը, ուղղվելով դեպի Արալյան լիճը, այդ ջրային ճանապարհը բնականաբար փակվեց: Եվ այնուհետև Հնդկաստանի և Պարսկաստանի ապրանքները Եվրոպան ստանում էր այն ճանապարհով, որ Հայաստանի վրայով գնում էր մինչև Սև ծով (Տրապիզոն): Դեռ Միջին դարերում այդ հաղորդակցությունը հայտնի էր Եվրոպային «մետաքսի ճանապարհ» անունով<sup>9</sup>:

Միջազգային նշանակություն ունեցող ճանապարհները զարգանում և քաղմանում էին, որքան զարգանում էր Առաջավոր Ասիայի քաղաքական և տնտեսական կյանքը: Այսպես, Երբ Պարսկաստանը Աքեմենյան հարստության ժամանակ դարձավ համաշխարհային մեծ պետություն, բացվեցին և մեծ ճանապարհներ զանազան ուղղություններով՝ ահագին պետությունը կառավարելու և նրա հեռավոր ծայրերը կենտրոնի հետ կապելու համար: Այս ճանապարհներից մեկը, որ գլխավորն էր և կոչվում էր «արքունի», անցնում էր Հայաստանի վրայով հարավից հյուսիս, կտրելով Տիգրիս և Եփրատ գետերը:

<sup>1</sup> Реклю, «Человек и Земля», т. I, с. 369.

<sup>2</sup> Ch. Segnobos, „Histoire Ancienne“, Paris, 1904, p. 166. Այս ճանապարհի գծագրությունը տե՛ս Fr. Lenormant, „Atlas d'Histoire Anc. de l'Or.“, pl. XX.

<sup>3</sup> „Géographie de Strabon“, t. II, p. 422.

<sup>4</sup> Ինճիճեան, Լր. 211: Կուրից Սև ծով գնալու մի ուրիշ գործածական ճանապարհն էր Տազիս (այժմ Ռիոն) գետն էր:

<sup>5</sup> De Morgan, „Mission Scientifique au Caucase“, t. II, p. 140 (քարտեզ):

<sup>6</sup> A. Malet, „Les Temps Modernes“, Paris, 1907, p. 5.

<sup>1</sup> Гельмольт, т. III, с. 4.

<sup>2</sup> Th. Lavallée, „Histoire de l'Empire Ottoman“, Paris, 1855, p. 65.

<sup>3</sup> Max Choublier, „La Question d'Orient depuis la Traité de Berlin“, Paris, 1899, p. 373.

<sup>4</sup> J. de Morgan, „Mission Scientifique en Caucase“, t. I, Paris, 1889, p. 14.

<sup>5</sup> Victor Berard, „Revolutions de la Perse“, Paris, 1910, p. 37.

դեպի Փոքր Ասիայի ծովեզերքը: Նրա ճյուղավորությունները հայկական լեռնաստանով ձգվում էին դեպի հյուսիս, մինչև Կովկասյան լեռնաշղթան, մինչև Կասպից ծովի ափերը, որոնք հպատակվում էին Իրանի շահերին: Կարևոր պետական նշանակություն ունեին մանավանդ Կովկասյան լեռնաշղթայի երկու անցքերը — Դարիալի կիրճը և Դերբենդի նեղ ծովեզրը: Այդ ճանապարհներով էին հյուսիսային վայրենի ազգերը խուժում Անդրկովկաս: Ավելի դյուրամատչելի էր Դերբենդի նեղ անցքը (որ և այդ պատճառով կոչվում էր դուռ): Դա ամենահարմար ճանապարհն էր հյուսիսից մինչև Աղվանից դաշտը և Հայաստանի սահմանները, որոնք այդ կողմից լավ պաշտպանված չէին: Ուստի Դերբենդի դուռը պաշտպանվում էր պարսից զինվորական ուժով:

Այս արտաքին ճանապարհներին պետք է ավելացնել և բուն Հայաստանի ճանապարհները: Դրանց կենտրոնը, սիրտը նույն Արարատյան դաշտն էր: Այդտեղ էր, որ հին ուրարտացիները և նրանց հաջորդած հայերը զարգացրին պետական կյանքը: Ուրարտական շրջանում Արմավիրը և հայկական շրջանում Արտաշատն ու Դվինը մայրաքաղաքներ էին և առևտրական մեծ կենտրոններ: Դվինը (6-րդ դար Ք. հ.) ուներ հինգ զխսավոր ճանապարհ՝ 1) Արևմտյան, որ Կարին քաղաքի վրայով տանում էր Կողանիա (այժմ Շաբին-Գարահիսար), Ամասիա, Կ. Պոլիս: 2) Հարավ-արևմտյան, որ գրնում էր Խլաթ քաղաքը (Վանի լճի ափին), այստեղից Քղիմար, Ուռհա (Սդեսիա), Դամասկոս, որտեղից հաղորդակցում էր Երուսաղեմի և Ալեքսանդրիայի հետ): 3) Արևելյան, Արցախի վրայով տանում էր Պարտու քաղաքը (Աղվանք), այդտեղից՝ Կասպից ծովի ափերը: 4) Հարավ-արևելյան — Նախիջևան, Քավրիզ, որտեղից միավորվում էր այն գծի հետ, որ տանում էր Նինվե, Մծբին, Ուռհա: Նախիջևանից մի ուրիշ գիծ տանում էր Արդավիլ և Պարսկաստանի հյուսիսային կողմերը: 5) Հյուսիսային, որ Գուգարքի վրայով տանում էր Քիֆիս, հաղորդակցում էր հյուսիսային Անդրկովկասի հետ, բայց մանավանդ Պարտուի հետ:

Այս բոլոր մանրամասնությունները ցույց են տալիս, որ Հայաստանը զանազան ուղղություններով կտրատված էր հաղորդակցության կարևոր գծերով և հանդիսանում էր մի միջավայր, ուր մշտնջենապես տեղի ունեին միջազգային շարժումներ: Նրա ճանապարհներով էին անցնում թե՛ նվաճող բանակները, թե՛ մի տեղից մյուս տեղ փոխադրվող ամբողջ ցեղեր և թե՛ առևտրական մեծ քարավաններ: Խորին, նախապատմական հնություն մեջ այս երեք շարժումները միատեսակ նշանակություն ունեին երկրի համար. երեքն էլ արշավանքներ էին՝ ուժի և զենքի վրա հենված: Թե՛ նվաճող բանակներն էին հաշտահարում երկիրը, թե՛ տեղափոխվող ազգերը իրենց թափառական կենցաղի բերմունքով պիտի հարձակվեին նստակյաց և ավելի քաղաքակիրթ բնիկների վրա, զենքով տեղ խլեին իրենց բնակության համար: Իսկ վաճառականությունը իր ամենահին ձևի մեջ նույն այդ թափառական ցեղերի ըզրաղմունքն էր, կամ նրանց աշակցությամբ էր առաջ տարվում. և զենքի ուժով էին հաճախ խլվում մի Երկրի բերքերը՝ մի ուրիշ տեղ ուրիշ բերքերի հետ փոխանակելու համար:

Հայաստանը, այսպիսով, մարդկային ազգի առաջին շարժումների ժամանակից մի ոտնակոխ երկիր էր: Այս մշտնջենական երևույթը, այս, եթե

կարելի է ասել՝ ճակատագիրը այսպես է բնորոշված արաբացի աշխարհագիր Իբն-ալ-Ֆակիհ Համադանիի (10-րդ դար Ք. հ.) «Քիթաբ-ալ-Բուլդան» (Երկրների գիրք) աշխատության մեջ.

«Ես գտա գրքերի մեջ, — ասում է Քարը, — որ Մեքքան ավերում են հաբշնները, Մեդինան՝ սովը, Բասրան՝ շրհեղեղները, Քուֆը՝ գաղթականությունները. Ջարաջը քանդվում է կայծակների հարվածներից և երկրաշարժից, Խորասանը՝ այլևայլ պատճառներից, իսկ Ռեյը հարստահարում են դիլեմացիները և թաթարստանցիները: Ինչ վերաբերում է Հայաստանին և Ատրպատականին, այս երկու երկրները կործանվում են հեծելազորքի սմբակներից, մեկ էլ կայծակի հարվածներից և Երկրաշարժից»:

Նույն Իբն-ալ-Ֆակիհը բերում է և հետևյալ խոսակցությունը.

«Մի ժամ Երևանը ասաց. «Այն երկիրը, որ ամենից առաջ կավերվի, Հայաստանն է»: Հարցրին նրանից. «Իսկ ի՞նչը կավերն նրան»: Պատասխանեց. «Ջիաների սմբակները»:

Արևելյան այս պատկերավոր խոսքը, ինչպես երևում է, շատ տարածված էր միջին դարերում, որովհետև մեր Մատթեոս Ուռհայեցի պատմագիրն էլ նկարագրելով մի սելջուկյան արշավանք, անշուշտ նույն այդ ասացվածքն է կրկնում, բացականչելով. «Սմբակք երկվարաց նոցա մաշեցին զլիրին» և զլուրս»:

Այդ սմբակներն էլ կազմում են այն առանցքը, որի շուրջը պտտում է Հայաստանի ամբողջ պատմությունը:

**11. Երկիրը և մարդիկ:** Համեմատական աշխարհագրությունը ուսումնասիրում է այն ազդեցությունները, որոնց տակ մի երկիր, մի ազգաբնակչություն կազմակերպվում է իբրև հասարակական-պատմական երևույթ: Այդ բնական ազդեցությունները երեք տեսակ են. աստղաբաշխական (կլիմա և այլն), ֆիզիկական (երկրի կազմակերպություն և այլն) և բուսական ու կենդանաբանական աշխարհի ազդեցություն: Մենք, չոր մանրամասն ծանոթացանք այս բոլոր ազդեցությունների հետ, այժմ կարող ենք եզրակացություններ հանել, թե ի՞նչ տեսակ քաղաքական և կուլտուրական կյանք կարող էր զարգանալ Հայաստանի լեռնակղզում:

Մեզ արդեն ծանոթ պայմաններով օժտված մի երկիր նախ և առաջ պիտի ներկայացնեն տեղական, առանձնակի շահերի հարստություն և ընդհանուր, համայնական շահերի աղքատություն: Երկիրը կուլտուրական շերտավորումների բազմազանություն է արտադրում: Խոր հովիտների ու կիրճերի մեջ բնությունը հարուստ է, թույլ է տալիս բարձր աստիճանի կուլտուրա: Այդտեղ ազգաբնակչությունը նստակյաց է, ունի համախմբվելու, ուժեղ կազմակերպություն ստեղծելու հրամայողական կարիք: Բայց այդպիսի տեղեր շատ չեն, ոչ էլ միապաղաղ երկար տարածություններ են կազմում, այլ կղզիացած, ցրված են, միմյանցից հեռու, անջատված լեռներով:

Տիրապետողը, ընդարձակը, երկրին ընդհանուր գույն տվող լեռնային արոտների իրականությունն է, ուր կարող է զարգանալ հովվական թափառիկ,

<sup>1</sup> Н. Мара, «История Ани и раскопки на месте городища», лекция, 1906 թ. հոկտեմբեր:

<sup>2</sup> Անդ. Տե՛ս և Н. Караулов, «Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане» («Сборник материалов для описания местностей и племен Кавказа»), т. XXXI.

<sup>3</sup> Մատ. Ուռհայեցի, Վաղարշապատ, 1898, էջ. 140:

<sup>1</sup> N. Dolens et A. Katch, „Hist. des Anciens Arméniens“ Genève, p. 60.

<sup>2</sup> Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ. 413:

<sup>3</sup> Н. Кареев, «Монархии Древнего Востока», СПб, 1904, с. 46.



աստանդական կենցաղը: Իսկ հովվական կացութիւնը բոլորովին հակասում է հովիտների նստակեցութեան իդեալներին: Նա ճանաչում և պաշտում է միայն անձնական աղատութիւն, անշատ անհատական շահեր, նա արհամարհում է քաղաքական և վարչական սահմանները, որովհետև նրա հոտերին հարկավոր են ընդարձակ տարածութիւններ և նա իր շահերով կապված չէ մի որևէ հայտնի տեղի, հայտնի շրջանակի հետ:

Այս է պատճառը, որ Հայաստանը չկարողացավ տեղական անշատ շահերի իրականութիւնից բարձրանալ մինչև ընդհանուր համայնական, ընդհանուր պետական շահերի մշտատև հասկացողութիւնը: Այսպիսի մի երկիր չէ կարող ուժեղ, կենտրոնացած պետութիւն, կամ ավելի ճիշտ ասած՝ բունպետութիւն ստեղծել: Անհամաչափութիւնը երկրի զանազան մասերի ազգաբնակչության հոգեկան կարողութիւնների մեջ շափազանց մեծ էր, որպէսզի կարելի լինէր սպասել ընդհանուր, համայնական գործակցութիւն մի համազգային հարցի շուրջը: Հայ պատմագիրների տեղեկութիւններից երևում է, որ ամբողջ նահանգներ, մանավանդ ծայրերում, երկրի կենտրոնի (Այրարատի) հետ համեմատած, «վայրենի» են, «գաղանամիտ», «ճիւղաղային»: Այսպես էին, օրինակ՝ Սյունիքը, Արցախը, Ուտիքը, Սասունը<sup>2</sup>: Մինչդեռ Արարատյան դաշտում կազմակերպվում էր քաղաքակիրթ, բարեկարգ պետութիւն, որ գիտութեան և արվեստների հարգն էլ էր ճանաչել, երկրի ազգաբնակչության մի մասը դեռ միսը հում էր ուտում<sup>3</sup>:

Եվ շատ հասկանալի է, որ աշխարհագրական պայմաններով նպաստավորվող այսպիսի այլազանութիւնը, կուլտուրական աստիճանների հակադրութիւններն ստեղծեին ամբողջ երկրի համար քաղաքականապես թույլ կազմակերպված մի պետութիւն, որ ենթարկվում էր ուրիշների տիրապետութեան և մանավանդ կուլտուրական ազդեցութեան: 13

## Գ Լ Ո ւ խ Ե ր Կ ր ո ւ ր Գ

### Վ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Ա Շ Ե Ա Ր Հ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ԱՂՔՈՒՐՆԵՐ: 2. ՍԱՀՄԱՆՆԵՐ: Ա. ՄԵՍ ՀԱՅՔ: 3. ՆԱՀԱՆԳՆԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ԲԱԺԱՆՄՈՒՔՆԵՐԸ: Բ. ՓՈՔՐ ՀԱՅՔ: 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ:

1. Աղբյուրներ: Հին հեղինակներից հույն Ստրաբոնն է (66 թ. Ք. ա.— 24 թ. Ք. հ.) առաջինը, որ մանրամասն աշխարհագրական տեղեկութիւններ է հաղորդում Հայաստանի մասին: Նկարագրելով երկրի դիրքը, ջրաբաշխական հանգամանքները, հողն ու նրա արտադրութիւնները, հեղինակը հաղորդում է և պատմական տեղեկութիւններ, հիշատակում է վարչական մի քանի բաժանումների անունները, բայց առհասարակ տեղերի նահանգների լիա՛ւար ցուցակը չէ տալիս:

Հուշակավոր հույն աշխարհագրից շատ հետո Հայաստանում կազմվեց մի համառոտ ընդհանուր աշխարհագրութիւն, որի մեջ դրված է և Հայաստանի նահանգական ու գավառական բաժանումների ցուցակը: Այդ է միակ աղբյուրը, որի վրա կարելի է հիմնել Հայաստանի հին քաղաքական աշխարհագրութիւնը:

Սակայն ո՞ր շրջանիւ

Մի ժամանակ այդ գրավոր հիշատակարանը վերագրվում էր Մովսէս Խորենացուն, որ համարվում էր Ե դարի գրող: Սակայն քննադատութիւնը կարողացավ ապացուցած համարել, որ այդ աշխարհագրութիւնը խմբագրված է 7-րդ դարից ոչ վաղ<sup>1</sup>, այսինքն այնպիսի մի ժամանակ, երբ Հայաստանը վաղուց կորցրած էր իր քաղաքական անկախութիւնը և բաժանված էր պետութիւնների մեջ: Կարո՞ղ էր այդքան ուշ ժամանակի մի գործ հարազատութեամբ ներկայացնել Հայաստանի այն վարչական բաժանումները, որոնք գոյութիւն ունեին հայկական ընդհանուր համազգային անկախութեան, այսինքն Արտաշեսյան և Արշակունի հարստութիւնների ժամանակ:

Կան նրա մեջ շատ ցուցմունքներ, որոնք նշան են, թե հետամուտ հավելումներ և փոփոխումներ կան այդ գործի մեջ: Բայց և այնպես, ենթադրվում է, որ 7-րդ դարի հեղինակը իր տեղեկութիւնները քաղել է մի հին պաշտօնական աղբյուրից<sup>2</sup>, թեև մյուս կողմից քննադատութիւնը հաստատում է, որ աշխարհագրութիւնը ամփոփում է իր մեջ միայն այն տեղեկութիւնները,

<sup>1</sup> Л. Мечников, «Цивилизация и великие исторические реки», Киев, 1899, с. 211.

<sup>2</sup> Ինճինեան, հ. Բ, էր. 393:

<sup>3</sup> Խորենացի, Բ, գլ. ԾԹ:

<sup>1</sup> Միայն հ. Ա. Սուրբին (վեներիկի Միթրաբյաններից) պնդում էր, թե Խորենացու աշխարհագրութիւնը Ե դարի գործ է (տե՛ս նրա «Géographie de Moïse de Corène (d'après Ptolemée», Venise, 1881), բայց նրա պնդումները անընդունելի մնացին,

<sup>2</sup> К. Патканов, «Армянская география VII века по Р. X, приписываемая Моисею Хоренскому», СПб, 1877, с. 42:

որոնք իրականություն են եղել Արշակունյաց թագավորության անկումից հետո, պարսից մարզպանական կառավարության տակ: 14

Ինչ էլ լինի սակայն, Հայաստանի հին վարչական աշխարհագրության միակ փոքր ի շատե բավարար աղբյուրը մնում է այս աշխատությունը: Նորագույն բազմաթիվ հետազոտողները ընդարձակել են այդ աշխարհագրությունը, հավաքելով և տեղավորելով այն բոլոր նյութերը, որոնք ցրված են մեր հին մատենագրության մեջ: Այդպիսով ամբողջացրած աշխարհագրական տեղեկություններ են, որոնց այժմ դիմում ենք՝ հին Հայաստանի վարչական բաժանումների պատկերը ներկայացնելու համար:

**2. Սահմաններ և գլխավոր բաժանումներ:** Հայաստանի հնագույն սահմանները նկարագրում է Ստրաբոնը այսպես<sup>2</sup>. հարավից՝ Տավրոսյան լեռները, որոնք բաժանում են Հայաստանը Միջագետքից, արևելքից՝ Մեծ Միդիան (Մարաստանը) և Ատրպատականը. հյուսիսից՝ Պարսիստաթրաս լեռների մի մասը, որ գտնվում է ուղիղ Կասպից ծովի վրա, հետո Աղվանից ֆրիկերը, և վրաստանը Կովկասյան լեռնաշղթայի հետ, որ պատում է այդ երկու երկրները և այստեղ իսկ (այսինքն՝ Հայաստանի սահմանի վրա) միանում Մոսխերի և Կողքիսի լեռնային շղթաների հետ, տարածվում է մինչև այն երկիրը, ուր ապրում են Տիբարանի ցեղերը: Վերջապես արևմուտքից Հայաստանը եզերված է նույն Տիբարանի երկրով, հետո Պարսիստաթրաս սարով և Ալիդիսով մինչև Փոքր Հայքը և Եփրատի հովիտը, որ շարունակում է բաժանումը մի կողմից Հայաստանի և մյուս կողմից՝ Կասպից ծովի Կոմմագենի մեջ:

Ամբողջ Հայաստանը բաժանված էր երկու մեծ մասերի — Մեծ Հայք և Փոքր Հայք: Յուրաքանչյուր մասը բաժանվում էր նահանգների կամ աշխարհների և գավառների: Մեծ Հայքն ուներ 15 նահանգ, իսկ Փոքրը՝ երեք:

**Ա**

**ՄԵԾ ՀԱՅՔ<sup>3</sup>**

**3. Նահանգներ:** Մեծ Հայքի 15 նահանգներն էին — 1) Բարձր Հայք, 2) Զորորդ Հայք, 3) Աղձնիք, 4) Տուրուբերան կամ Տարուբերան, 5) Մոկք, 6) Կորճեք, 7) Պարսկահայք, 8) Վասպուրական, 9) Սյունիք, 10) Արձախ կամ Արցախ, 11) Փայտկարան, 12) Ուտիք, 13) Գուգարք, 14) Տայք և 15) Այրարատ:

**1. ԲԱՐԶՐ ՀԱՅՔ**

Ստացել է իր անունը իր սարահարթի բարձրությունից, որին, ինչպես տեսանք, չէ հասնում ոչ մի ուրիշ տեղ ամբողջ հայկական լեռնաստանում: Հայոց պատմության մեջ կատարել է նշանավոր դեր, մանավանդ կրոնական տեսակետից: Այստեղ էին հեթանոս հայերի մի քանի գլխավոր մեհյանները, այստեղ էլ քրիստոնեության մուտքի պատմությունը նվիրական է դարձրել մի քանի վայրեր:

<sup>1</sup> Н. Адонц, «Армения в эпоху Юстиниана», СПб, 1908, с. 239.

<sup>2</sup> „Géographie“, livre XI, ch, XIV.

<sup>3</sup> Մեծ Հայքի նկարագրությունը մենք վերցնում ենք Չ. Ղ. Ինճիճեանի «Մտորագրութիւն Հին Հայաստանից» (Վենետիկ, 1822) աշխատությունից, նկատի առնելով և նորագույն հետազոտությունները:

**Գավառներ:**

**ա) Դարանաղի (այժմ Կամախ):** Հին ստուգաբանությամբ այս անունը բացատրվում էր իբրև «դարան» և «աղի» բառերի լծորդություն, այսինքն՝ աղահանք: Սակայն նորագույն բացատրություններն ապացուցում են, որ Հայաստանի մի շարք աշխարհագրական անունների «աղի» վերջավորությունը (որ պիտի լիներ իսկապես «ալի») աղ բառից չէ գոյացել, այլ պարզապես մի հին (նախահայկական) մասնիկ է, համանիշ մեր «յան» մասնիկին: Եվ «Դարանաղի» այս բացատրությամբ պիտի նշանակե «Դարանյան»: Կարծում են, որ այս գավառում բնակություն հաստատեց «այնյան» անունով մի ցեղ, որի մասին Ստրաբոնը վկայում է, թե Պարսկաստանից տեղափոխվեց Հայաստան: Դարանաղի հասավ այդ ցեղի մի մասը: Մյուսը բնակություն հաստատեց Շիրակ գավառում. դրա ապացույցն այն է, որ երկու գավառներում էլ — թե՛ Շիրակում և թե՛ Դարանաղիում, գոյություն ստացան «Անի» անունով բերդեր, մի անուն, որ ինչպես կարծում են, «այնյան» ցեղի անունից է առաջացել:

Դարանաղիի Անին հիմնված էր Եփրատի վրա և կարևոր նշանակություն է ունեցել թե՛ իբրև խիստ ամուր բերդ և թե՛ իբրև հեթանոս հայերի գլխավոր մեհյաններից մեկի տեղ: Կրոնական նշանակությունն այնքան մեծ էր, որ այդտեղ էին թաղվում Արշակունի թագավորները: Այդտեղ էլ պահվում էր արքունի գանձը: Քրիստոնեական կրոնը, մուտք գործելով Հայաստան, ամենից առաջ այս կրոնական վայրում պիտի ընդհարվեր հին հեթանոսական կրոնի հետ: Եվ իրավ, հայ եկեղեցու նախնական ավանդությունները վկայում են, որ Քրիստոսը Լուսավորչի Պարանաղի գավառից և հատկապես Անիից սկսեց իր քարոզչական գործունեությունը: Անին առաջինն էր, որ դարձավ հաղթական քրիստոնեության կայված:

Նույն կրոնական տեսակետից նշանավոր է և այս գավառի մեջ գտնվող Սեպուհ լեռը, որ կոչվում է նաև Մանյա այրիք: Այստեղ էր, ըստ ավանդության, Լուսավորչի ճգնարանը: Իսկ Թորգան գյուղը Լուսավորչի դաստակերտն էր համարվում և դարձավ նրա և նրա տոհմի գերեզմանատուն:

**բ և գ) Առյուծ և Մճնուր (այժմ Կերճանիս և Գուրուշա կամ Մզուր):**

**դ) Նկեղյաց (այժմ Երզնկա):** Նույնպես շատ հայտնի էր նախաքրիստոնեական շրջանում իր առաջնակարգ կրոնական հիմնարկություններով: Ամբողջ գավառը կոչվում էր նաև Անհատական, որովհետև նրա Երիզա կամ Երեզ ավանում գտնվում էր Անահիտ աստվածուհու տաճարը, որ ամենից հուշակավորն էր նույն աստվածուհուն նվիրաբերած բազմաթիվ տաճարների մեջ և ընդհանուր, համազգային սրբություն էր: Այդտեղ, Ստրաբոնի վկայությամբ<sup>3</sup>, մշտապես ապրում էին դիցուհուն նվիրված ստրուկներ երկու սեռից, իսկ հայ ազնվականների կույս աղջիկները, նախքան ամուսնանալը, այդտեղ անձնատուր էին լինում պոռնկություն: Երիզան կամ Երզնկան հայտնի է և նրանով, որ այդտեղ շատ հաճախ երկրաշարժներ են պատահում: Հեթանոսական մեհյանների կողմից նշանավոր էր և Թիլ ավանը, ուր գտնվում էր Նանն աստվածուհու արձանը: Քրիստոնեական կրոնը, այստեղ էլ կովով հաղթանակելուց հետո, ամբողջ Նկեղյաց գավառը հատկացրեց Լուսավորչի տոհմին իբրև կայված:

<sup>1</sup> Адонц, с. 56.

<sup>2</sup> Վարչական նոր անունները որոշելիս մենք մասամբ օգտվել ենք Չ. Ալիշանի «Տեղագիր Հայոց Մեծաց» գրքից:

<sup>3</sup> „Géographie“, t. II, p. 468.

ե) Մանանայի (այժմ Շուշար և Քեքման): Ըստ նորագույն բացատրութիւնների պիտի նշանակե «Մանյան», գուցե Մանների երկիր:

զ) Դեբշան (միևնույն անունով և այժմ): Հեթանոսական մեհյաններից մեկն էլ գտնվում էր Բագառինջ կամ Բագահառինճ գյուղում և նվիրված էր Միհր աստծուն:

է) Սպեռ (այժմ Իսփիր): Հին հեղինակների վկայութեամբ այս գավառը այնքան հայտնի էր իր ոսկու հանքերով, որ Ալեքսանդր Մակեդոնացու առանձին ուշադրութիւնը գրավեց:

ը) Շաղագում և կամ Շաղգում (այժմ Քորթում):

թ) Կարին (այժմ էրզրում, Օվաջը): Նահանգի մայրաքաղաքն է Կարին, որ 5-րդ դարում (Ք. հ.) վերանորոգեց բյուզանդական Քեոզոս կայսրը և նրա անունով էլ կոչվեց Քեոզոսուպոլիս: Իբրև առևտրական կենտրոն և մանավանդ իբրև առաջնակարգ բերդ՝ Կարինը միշտ կատարել է նշանավոր դերը Կարինի գավառում հայտնի էր և Արծն քաղաքը, Եփրատի ակունքների մոտ, հռչակված իր բազմամարդութեամբ և վաճառականութեամբ:

## 2. ԶՈՐՐՈՐ Դ ՀԱՅԻ

Այս անունը աշխարհագրական նշանակություն ստացել է 536 թվականից հետո (Ք. հ.): Նահանգի հին անունն էր Մոփք, որ այդ թվականից հետո հատուկ մնաց միայն նրա գավառներից մեկին: Հայ ազգի հավաստի պատմության սկզբներում այս նահանգը կարևոր դեր էր կատարում իբրև մի տեղ, ուր կազմակերպվեց Հայաստանի քաղաքական անկախությունը: Հյուսիսից նա սահման ուներ Բարձր Հայքը, արևմուտքից՝ Եփրատը, հարավից և արևելքից՝ Աղձնիք և Տուրուքերան նահանգները:

Գավառներ.

ա) Խոռձյան (այժմ Կենդ, Առինճ): Հայտնի էր իր ամուր դիրքով և ուներ շատ ամրացրած բերդեր ու գյուղեր:

բ) Հաշտյան (ըստ հին հույն մատենագիրների՝ Աստիանինի, այժմ Ճապաղջուր և Խուլի): Հայ Արշակունի թագավորների ժամանակ արքունի տան կալված էր, և այստեղ պարտավոր էին ապրել բոլոր այն թագավորացիները, որոնք օրենքով իրավունք չունեին ժառանգելու թագավորական գահը: Հայտնի էր այստեղ Կթոնի քաղաքը, որ ամուր բերդ էլ էր: Այս գավառում են գտնվում Տիգրիս գետի ակունքները:

գ) Պաղնատուն (այժմ Արղանա). ուներ Պաղին անունով բերդը:

դ) Բալախավիտ (այժմ Բալու): Ուներ Բալու բերդը:

ե) Մափ (այժմ Չմշկածագ, Բերդիկ, Կապան): Այս անվան ամենահին հիշատակությունը գտնվում է Ասորեստանի բեկոազիր արձանագրությունների մեջ Սուպանի ձևով: Հունաց մատենագրության մեջ նա շատ հայտնի է Սոֆենա ձևով: Բաժանվում էր երկու մասի. Մեծ Մոփք և Մոփք Շահյա կամ Փոքր «Շահյա» անունը կարելի է բացատրել, ընդունելով, որ Մոփքի այս մասը պատկանում էր Շահ անունով մի տոհմի, թեև նույնչափ հավանական կլինի ընդունելու:

<sup>1</sup> 2. Հյուրճման — «Հին Հայոց Տեղոյ անունները», թարգմ. 2. Բ. Պիլեզիկյան, Վիեննա, 1907, էր. 60:  
<sup>2</sup> Հյուրճման, էր. 70:

նեկ նրան պարսկական «արթունի» բառի տեղ: Մոփքի այս մասում (Շահյա) հիշվում են Չմշկածագ, Մեծկերտ բերդերը<sup>1</sup>: Մոփքի մեջ էր և Բնաբեղ բերդը:

զ) Հանձիթ (այժմ Խարբերդ): Ասորեստանի արձանագրությունների մեջ կոչվում է Ինզի, Ինզիթ, հունական մատենագրությունների մեջ՝ Անզետինի, Այստեղ է գտնվում Եփրատի այն մեծ հովիտը, որ հռչակված է իր բարեբերությամբ և որ կոչվում էր Ալեքուա դաշտ (այժմ Խարբերդի դաշտ): Այդտեղ հին ժամանակներում հայտնի էին Անձիտ բերդը, Աշմուշատ կամ Շամուշատ՝ Արածանի գետի վրա<sup>2</sup>: Այժմ էլ գոյություն ունի Խարբերդը:

է) Գորեֆ (այժմ Կորեք):

ը) Դեգիֆ (այժմ Ակլ, Հենի): Ենթադրվում է, որ այս գավառն էր, որ հնում կոչվում էր Անզեղ տուն<sup>3</sup>:

## 3. ԱՂՁՆԻՔ

Հայաստանի հարավ-արևմտյան ծայրագավառը: Օտար մատենագրության մեջ Արզանինի: Նահանգի քաղաքական կարևորագույն աստիճանացույցը այն է, որ այդտեղ էր հաստատված Հայաստանի սահմանները պահպանող լորս բռնիչներից մեկը: Աղձնյաց բռնիչությունը իր սահմանների մեջ առնում էր նաև Միջագետքի մի մասը՝ Մծքին քաղաքով (Արվաստան), ինչպես նաև հայկական հարավային նահանգները մինչև Ուրմիայի լճի սահմանները<sup>4</sup>: Այդ բռնիչության կոչումն էր պաշտպանել Արշակունյաց թագավորությունը հարավի (Միջագետք և Սիրիա) կողմերից: Բայց նա ուներ խառն ազգաբնակչություն, որը սերտ կապերով շեր կապված Հայաստանի հետ, ուստի հաճախ ապստամբվում էր կամ խլվում էր հարևան մեծ պետությունների ձեռքով: Նահանգի մի մասը դաշտային է, մյուսը՝ լեռնային: Լեռներում հարուստ են երկաթի հանքերը, ինչպես նաև կապարը: Կար և նավթ:

Գավառներ.

ա) Արզն կամ Արձն (այժմ Խարզան): Ստացել է իր անունը Արձն քաղաքից:

բ) Նիբեկերտ (այժմ Մուֆարդին): Այստեղ հայտնի էր Մարտիրոսաց քաղաքը (Մարտիրոպոլիս, որ հետո կոչվեց Մուֆարդին):

գ) Քեղ կամ Քաղ (այժմ Խղու):

դ) Կեթիկ: Ենթադրվում է, որ այս գավառին էր պատկանում Տիգրանակերտ նշանավոր քաղաքը, որ շինեց Տիգրան թագավորը:

ե) Տատիկ (այժմ էլ նույն անունով ավան և գետ):

զ) Ազնվաց ձոր (այժմ կամ Գյուզել-դերե կամ Սուսան):

է) Խերհեթ կամ Երխեթ (այժմ Սղերդ):

ը) Գզեղ (այժմ Խիզան):

թ) Սալնո ձոր կամ Սալանո (այժմ, հավանաբար, Բաղեշ):

ժ) Սանատուն կամ Սասուն, Սասուն (այժմ Սասուն): Լեռնագավառ Տավրոս լեռների Միմ կոչված մասում: Աղձնիք նահանգին պատկանում էր այդ

<sup>1</sup> Адону, с. 38.  
<sup>2</sup> Ibid, էր. 34:  
<sup>3</sup> Հյուրճման, էր. 154:  
<sup>4</sup> Մարկվարտ, «Հայ բռնիչներ», թարգմ. 2. Բ. Կետիկյանի, Վիեննա, 1903, էր. 36:

լեռները հարավային մասը, որ և կոչվում էր Սասուն, մյուս հյուսիսային մասը, որ կոչվում էր Խուսի, Տուրուբերան նահանգին էր պատկանում<sup>1</sup>:

Արշակունյաց թագավորության ժամանակ Աղծնյաց բղջիտության էին վերաբերում և մի քանի գավառներ և կամ երկրներ, որոնք հետո խլվեցին հայերից: Դրանք էին. ա) Նոշիրական կամ Նոր Շիրական, բ) Նիխորական, գ) Մահկերտան, դ) Դասան, ե) Ծավղեք, զ) Արզնարդյուն և է) Ռեխմենա<sup>2</sup>: Այս երկրների դիրքը տարածված էր այժմյան Աղբալի, Ուրմիայի լճի և Մոսսուլի մեջտեղերը<sup>3</sup>:

#### 4. ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ ԿԱՍ ՏԱՐՈՒԲԵՐԱՆ

Այս անունը, ինչպես ենթադրվում է, Խորենացուն վերագրված աշխարհագրության ժամանակից (այսինքն 7-րդ դարից) առաջ գոյություն չունեին իբրև ընդհանուր նահանգական անվանակոչում: Ավելի հին գրավոր հիշատակարանների մեջ նահանգն անվանված է «կողմ Տարավնո»: Իսկ Տարավնը կամ Տարոնը 7-րդ դարում արդեն նահանգի միայն մի գավառի անունն էր: Տուրուբերանը Հայաստանի կենտրոնական նահանգների մեջ կարևորագույն նշանակություն ունեցած և դեր կատարած երկրներից մեկն է: Այս հանգամանքը հասկանալի կլինի, եթե շմոռանանք, որ այստեղ է գտնվում Հայաստանի երրորդ մեծ և բարեբեր հովիտը—Մուշի դաշտը՝ Արածանիի վրա:

Գավառներ (թվով 16).

ա) Խույթ (այժմ Խույթ), որ, ինչպես տեսանք, Սիմ լեռան հյուսիսային կողմն էր, սահմանակից Աղծնիքին:

բ) Ասպակունիք (այժմ Խույթի մոտերը):

գ) Տարավն կամ Տարոն (այժմ Մուշ): Հռչակված իր կլիմայական գեղեցիկ հատկություններով և իր կրոնական ու քաղաքական դերով, որ կատարել է հայոց պատմության մեջ:

Մեր հին գրավոր հիշատակարաններից մեկը<sup>4</sup> այսպես է նկարագրում Տարոնի բարեբերությունը. «Բարի է երկիրս և վայրքս, և անուշ օդս, բազմաչոր, դաշտաձև, և շուրջ զլեռամբքս ամրոցք բազումք. երկիրս խոտաբեր և մեղրաբուղիս, և որպէս մանանայն իջանէր յերկնից անդ առ Հրեայս, նոյնպէս և աստ ի մերում երկրիս ի վերայ անտառացն իջանէ՝ քաղցր առաւել քան գմեղը, որ կոչի գազապէն... Այս երկիրս ամենայն բարութեամբ լի է, աշուղակ և առողջ»:

Հին ժամանակներից այս գավառում երկու տեսակ հողատիրություն կար: Նրա մի մասը պատկանում էր քրմական դասակարգին, մյուսը՝ Մլկունի նախարարական տոհմին: Այս տոհմին շորորդ դարում իբրև սեփականատեր հաջորդեց Մամիկոնյան նախարարական ցեղը, իսկ քրմական կալվածատիրությունն անցավ քրիստոնյա եկեղեցականության:

Հեթանոսական ամենախոշոր կենտրոնն էր հռչակավոր Աշտիշատ կամ Հաշտիշատ գյուղը Քարթե լեռան ստորոտում, Արածանիի վրա: Երեք մեծ և

<sup>1</sup> Վ. Տամաշկ — «Սասուն և Տիգրիսի աղբերաց սահմանները», թարգ. Հ. Բ. Պիլեգիկյան, Վիեննա, 1896, էր. 11:

<sup>2</sup> Հյուսիսային, էր. 179—184:

<sup>3</sup> Адонц, с. 227.

<sup>4</sup> Ibid, էր. 80:

<sup>5</sup> Ձեռք Գլակ — «Պատմություն Տարոնի», Վենետիկ, 1832, էր. 49:

շատ հարուստ մեհյաններ կային այդ գյուղում. 1) Վահեվահյան, նվիրված Վահագնի պաշտամունքին, 2) Ոսկեմայր, Ոսկեծին, Ոսկիահատ Անահիտի մեհյանը, որ գտնվում էր այդ աստվածուհու սկեծույլ արձանը, և 3) Աստղիկ աստվածուհու մեհյանը, որ կոչվում էր նաև սենյակ Վահագնի: Քրիստոնեությունը այստեղ մեծ ընդհարում ունեցավ հեթանոսության հետ: Եվ հաղթելուց հետո նա այս նվիրական վայրը դարձրեց քրիստոնեական սրբավայր: Կործանված մեհյանների տեղը կառուցված եկեղեցին առաջինն էր Հայաստանում իբրև մայր եկեղեցի: Հիշատակվում է Հացյաց Դրախտ փոքրիկ անտառը, որ գտնվում էր Վահեվահյան մեհյանի գրաված բարձրավանդակի ստորոտում և բաղկացած էր հացի ծառերից:

Հեթանոսական նշանավոր վայր էր և Իննակնյան կոչված տեղը Քարթե լեռան վրա, որ գտնվում էր Գիսանե և Դեմետր աստվածների քաղաքները: Դրանց տեղ կառուցվեց Ս. Կարապետի վանքը, որ հռչակված քրիստոնեական սրբավայր է մինչև այժմ: Կոչվում է նաև Իննակնյան վանք, Գլակա վանք: Նա գրավում է Տարոնի ամենագեղեցիկ վայրերից մեկը:

Տարոնի հին ազգաբնակչության խտության վկաներն են նրա բազմաթիվ քաղաքները, բերդերը, ավանները և գյուղերը: Քաղաքներից հայտնի են՝ Ջրանակերտ, Օձ կամ Ավձ, Վիշապ կամ Տիրակատար, Մծուր, Մուշ (սկզբում ավան): Բերդերի մեջ հռչակված էր Ողական անառիկ բերդը Արածանիի վրա, եզանց բերդ կամ Եզնուտ, Այժյաց բերդ, Աստղաբերդ և ամրոցներ՝ Գարահար, Մեծամոր, Աստղոնք: Բազմաթիվ պատմական ավանների և գյուղերի մեջ հիշատակության արժանի են Հացեկաց գյուղ, որ ծնվել է Մեսրոպ Մաշտոցը և Խորնի գյուղ, որ համարվում է Մովսես Խորենացու ծննդավայր:

դ) Աշմունիք կամ Արշամունիք (այժմ Խույթի և Վարդո): Ստացել է իր անունը Աշմունի ցեղից: Այստեղ էլ կար Երիզա անունով քաղաք:

ե) Մարդաղի (իսկապես Մարդաղի): Գտնվում էր Բյուրակնյան (Բինգյուլ) լեռների հյուսիսային կողմերում և սահմանակից էր Կարինին: Ստացել էր իր անունը Մարդ ցեղից, որ Ատրպատականից գաղթել էր Հայաստան: Այդ ցեղի մի մասն էլ բնակվեց Վասպուրական նահանգում, որ նրա երկիրը կոչվեց Մարդաստան:

զ) Դասնավոր (այժմ Գարա-Յազը):

է) Տվարածատափ (այժմ Գյոթսու):

ը) Դալառ (այժմ Թորլու):

թ) Հար (այժմ Խամուր և Խնուս): Այս գավառի անվան հետ հայերը կապել էին իրենց առասպելները իրենց ազգի նախահայր Հայկի մասին: Իբր թե Հայկը այդտեղ բնակվեց և գավառը անվանեց Հարք, այսինքն հայրենի ծառանգություն: Եվ իբր թե այդտեղ գտնվող Հայկաշեն գյուղն էլ նույն Հայկն էր շինել: Այստեղ էր Մանազկերտ կամ Մանծկերտ նշանավոր քաղաքը (այժմ Մանազկերտ), որ կարևոր բերդ էլ էր:

ժ) Վարածունիք (այժմ Բուլանք): Ստացել է իր անունը Վարածն տոհմից:

ժա) Բզնունիք (այժմ Խլաթ, Արծիկ) Վանի ծովակի հյուսիս-արևմտյան կողմում: Այս գավառի անունով էլ Վանի լիճը կոչվում էր Բզնունյաց ծով: Բզնունի հին նախարարական տոհմի անուն է: Այստեղ նշանավոր էին Խլաթ և Արծիկ քաղաքները:

<sup>1</sup> Адонц, с. 20, 57.

ժբ) Երեվանի (այժմ Գյուլիստան-դերե)՝  
 ժգ) Աղիհովիտ (այժմ Արճեշ) վանի լճի հյուսիս-արևելյան կողմը: Այս գավառն էլ հատկացրած էր Արշակունի թագավորների որդիներին իբրև բնակության տեղ: Արճեշ քաղաքը այժմ ծածկված է վանի լճի ջրերի տակ: Հայտնի էր այստեղ և Զարիշատ քաղաքը: Միջնադարյան վանքերից հայտնի է Մեծորա վանքը:

ժդ) Ապահունիք: Տարածվում էր Սիփան սարից դեպի հյուսիս և ստացել էր իր անունը Ապահունի տոհմից: Այս գավառում էր Թոնդրակ գյուղը:

ժե) Կար կամ Կոր (այժմ Բուլանքի մոտերը):

ժզ) Խոռխոռունիք: Ենթադրվում է, որ գտնվում էր Բզունյաց երկրի և Կոր գավառի մեջ, Նազուք լճի շրջանակներում: Ստացել է իր անունը Խոռխոռունի տոհմից:

### 5. ՄՈՎՐ

Հայաստանի ծայրագավառը հարավում, Աղձնիք նահանգի արևելյան կողմը Տավրոս լեռները այստեղ էլ են տարածվում: Դա մի լեռնոտ և ամրություններով հարուստ երկիր է: Սակայն մութ է մնում այս նահանգի անվան ծագումը և նրա մասին առհասարակ շատ քիչ տեղեկություններ են մնացել:

Գավառներ (թվով 9).

- ա) Իշայր
- բ) Իշայր Մուս
- գ) Իշոց գավառ
- դ) Առվենից Ջուր (Ն. նույնը)

(նոր անուններ՝ Չրրդդան, Սպարկերտ, Կարկառ):

ե) Միջա

զ) Մոկի Առանձնակի (այժմ Մոկս)

է) Արֆայից գավառ

ը) Արգաստովիտ

թ) Ջերմածո (այժմ Շատախ): Այս գավառի մեջ էր Ջվել բերդը:

Մոկաց նահանգի միջնադարյան վանքերից հռչակված է Ապարանից վանքը:

### 6. ԿՈՐՃԵՐ

Այս աշխարհագրական անունը իբրև մի ամբողջ նահանգի հորջորջում շատ հին չէ: Այսպես, 4-րդ դարում մենք չենք տեսնում այդպիսի մի նահանգ: Եվ հետո էլ շատ հաճախ էր, որ Կորճեք անունը հոմանիշ էր համարվում Կորդուք անվան, թեև սա այդ նահանգի մեջ գտնվող մի գավառի անունն էր: Լեռնոտ երկիր է. այդտեղ տարածվում են Կորդվաց լեռները, որոնք հարուստ են բնական ամրություններով: Հին արևմտյան գրողներին նա հայտնի էր Կորդվեկա անունով: Այդ գրողներն էլ գովում են երկրի արգավանդությունը:

Գավառներ (թվով 11).

ա) Կորդուք: Կորդվաց բարձր լեռները դժվարամատչելի են դարձնում այդ երկիրը, որի ներքին հաղորդակցություններն էլ շատ դժվար են: Ավանդու-

<sup>1</sup> Адонц, с. 313.

թյուն կար, որ Նոյի տապալնը Կորդվաց լեռներում է կանգ առել: Կորդուք հայկական անուն չէ: Այստեղ ապրող ժողովուրդը, ինչպես հավանական են համարում, պետք է լինի այն, որ հայտնի էր արևմտյան հին հեղինակներին Կորդուս անունով: Դա մի քաջ պատերազմասեր ժողովուրդ էր: Ուներ իր թագավորությունը, որ նվաճվեց Տիգրան մեծի ձեռքով: Այնուհետև Կորդվաց երկիրը փոփոխակի անցնում էր հռոմեացիներին, հայերին, ապա և պարսիկներին: Հին մատենագիրների կորդուսները այժմյան քրդերն են: Եվ որովհետև այդ մատենագիրները ամել են և այն, որ կորդուսները մարաց ազգից են, ուստի մեր հին և միջին մատենագրության մեջ քրդերը հաճախ հանդիպում են Մար անվան տակ:

Քաջ և պատերազմասեր ժողովուրդով բնակեցրած երկիրը, բնականաբար, առաջնակարգ նշանակություն պիտի ունենար Հայաստանի համար, որքան որ նրա մի մասն էր կազմում: Եվ, փրավ, Կորդվաց նախարարը հայոց արքունիքում առաջին տեղերից մեկն էր գրավում և նրա կառավարության հանձնվում էին նույնիսկ հարևան Մոկս և Աղձնիք նահանգները:

- բ) Կորդիք Վերին
- գ) Կորդիք Միջին
- դ) Կորդիք Ներքին

(այժմ Բոհտան)

Այս երեք գավառները ավելի հին ժամանակներում կոչվում էին Տմորթ, հռչակված իր անառիկ դիրքերով:

ե) Այսվանք

զ) Այգառ

է) Մոքոզանք

ը) Ուսիրանք: Վերին Ջար գետի վրա:

թ) Կարապունիք

ժ) Ճահուկ: Հարուստ բերդերով և ամրոցներով (Ջլմար, Սրինգ, Ճահուկ):

ժա) Փոքր Աղրակ (այժմ Ալ-Բաղ, Ճուլամերկ): Կորճեք նահանգի մեջ էր Սալամաս քաղաքը (այժմ Սալմաստ):

### 7. ՊԱՐՍՎԱՀԱՅՐ

Կորճեքի արևելակողմը: Դարձյալ ծայրագավառ Հայաստանի հարավ-արևելքում, սահմանակից պարսկական Ատրպատականին: Կազմվել է այն երկրներից, որոնք զանազան ժամանակ խլվեցին Ատրպատականից: Նահանգի մեծ մասը գտնվում էր Ուրմիայի լճի հյուսիս-արևմտյան, հյուսիսային և հյուսիս-արևելյան կողմերում:

Գավառներ (թվով 9).

ա) Այլի կամ Կուսիճան

բ) Մարի

գ) Քրաթի

դ) Արիսի կամ Ացուբու

ե) Ընճա

զ) Տամբերդ

է) Զարեհավան

<sup>1</sup> F. Charmoy, „Chéref-Nameh on fastes de la Nation Kourde“, S-Peter., 1868, t. I, première partie, p. 325.

բ) Զարավանդ կամ Զարեվանդ: (Սալմաստի մոտերը):

թ) Հեռ կամ Խեռ (այժմ Խոյ):

Մեր հին մատենագրության մեջ հաճախակի հիշատակվում են այս վերջին երկու գավառները, որոնք կարևոր դեր են կատարել Պարսկաստանի հետ ունեցած հարաբերությունների մեջ, իբրև սահմանագլուխը պաշտպանող գավառներ: 8 և 10-րդ դարերում Զարևանդն ու Հեռը կրում էին Ռասուլ անունը: Հեռ գավառում պատմական անուն ունեւր Նըվարսակ գյուղը:

### 8. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Հայաստանի կարևոր կենտրոնական նահանգներից ամենամեծը իր տարածությամբ: Նա ձգվում էր հարավից դեպի հյուսիս, Վանի լճի արևելյան կողմերից մինչև Արաքսի հովիտը:

Վասպուրական անունը մեր հին գրականության մեջ երևան է գալիս 6-րդ դարից միայն: Առաջին հիշատակությունը<sup>1</sup> նույնիսկ «նահանգ» մտքով չէ, այլ գնդի անուն է՝ «վասպուրական գունդ»: Այս անունը հայկական չէ և վերցրած է պահլավերենից: «Վասպուր» էին կոչվում Սասանյան թագավորների ժամանակ Պարսկաստանի յոթ ամենաբարձր ազնվական տոհմերի անդամները: Հենվելով այս հանգամանքի վրա, կարծում են, թե «վասպուրական» (պահլավերեն vaspuhrakan) պիտի նշանակեր «ազնվականների երկիր» կամ ազնվականների գնդի երկիր<sup>2</sup>: Սակայն նորագույն հետազոտողներից մեկը՝ գտնում է, որ «վասպուրական» պետք է ունենար նույն միտքը, ինչ «պարսիկ», թեև կարող էր գործածված լինել նաև բարձր ազնվականություն ցույց տվող տիտղոսի տեղ, ինչպես էր, օրինակ, հայերեն «տեր» բառը: Սկզբում «վասպուրականը» զորաբանակի անուն էր, որ հետո դարձավ նահանգի անուն: Այդ անունով ճանաչվում էր Հայաստանի այն մասը, որ մնաց Պարսկաստանին այն բաժանումից հետո, որ 591-ին տեղի ունեցավ Պարսկաստանի և Բյուզանդիայի մեջ:

Վասպուրական նահանգը կոչվում է և Երկիր Արծրունյաց, որովհետև այդտեղ տիրող գլխավոր նախարարական տոհմը կազմում էին Արծրունիները, որոնք հետո նույնիսկ թագավորություն էլ հաստատեցին: Նահանգի մի մասը, որ Արծրունիների հին, բուն կալվածն էր, կրում էր սեփական անունը, որ նույն հին vaspuhrakan բառի նոր ձևն է<sup>3</sup>:

Գավառները (թվով 36).

ա) Ռշտունիք (այժմ Ոստան, Գավառ): Վանի լճի հարավ-արևելյան ափին: Հայտնի էր իր հարուստ բնությամբ: Անունը նախարարական տոհմի անունն էր (Ռշտունիք): Այս գավառի մեջ է հին Ընձաքյարս սարը, որ այժմ կոչվում է Կապուտկող: Երկրի բերդն էր Ոստանը Վանի լճի վրա. նրան ամբարցրեց և շինություններով զարդարեց Գագիկ Արծրունի թագավորը 10-րդ դարում: Այս գավառին էին վերաբերում և Աղթամար կամ Ախթամար և Արտի (այժմ Առտեր) կղզիները: Աղթամարը հին ժամանակներից բերդ էր, իսկ 10-րդ

<sup>1</sup> Հյուրըման, եր. 92:

<sup>2</sup> «Պատմության Սերբուսի եպ. ի Հերակլն», Ս. Պետեր. 1879, եր. 45:

<sup>3</sup> Հյուրըման, եր. 95:

<sup>4</sup> Ն. Աղանց, «Армения» և այլն, եր. 232:

<sup>5</sup> Ibid, p. 319.

դարից հռչակվեց նույն Գագիկի շինած հոյակապ եկեղեցով: Կար այստեղ և Մանսկերտ բերդը, որ կոչվում էր և Քարն Մանսկերտ:

Ռշտունիքում է գտնվում Նարեկ անունով հռչակավոր վանքը, որ մեծ նշանակություն ունի մեր միջնադարյան գրականության պատմության համար:

բ) Տոսք (այժմ Վան): Տոսք անունը մեկն է այն աշխարհագրական բազմաթիվ անուններից, որ հայերը ժառանգել են Հայաստանի նախկին տերերից, այն ազգից, որ այժմ ընդունված է անվանել ուրարտացիներ, խաղդեր կամ պարզապես՝ նախահայեր: Ուրարտական սեպածե արձանագրությունների մեջ «Տոսք» երևան է գալիս «Տուշպա» ձևով: Դա մեր Վան քաղաքն է, ուրարտական թագավորության հռչակավոր մայրաքաղաքը, որի անունը հայերի մեջ արդեն գավառի անուն է դարձել: Այստեղ, Վանի լճի արևելյան ափերում, տեղի են ունեցել պատմական մեծամեծ դեպքեր, ստեղծվել է մի մեծ և ուժեղ պետություն, որի հյուսիսային սահմանները հասնում էին Սևանի լճին: Վանը մեծ դեր է կատարել և հայոց պատմության մեջ: Դա խոշոր կենտրոններից մեկն էր, ուր առանձին թագավորություն էլ հիմնվեց:

Գավառում պատմական տեղերից հիշատակելի է Արտամեստ գյուղը, հրշակված իր կլիմայական բարեմասնություններով. այդ պատճառով էլ Արտաշես թագավորը այստեղ կառուցեց ապարանքներ և այլ գեղեցիկ շինություններ:

Քրիստոնեության պատմության մեջ հռչակված է Վարագ սարը իր վանքով:

գ) Քողունիք (այժմ Համուկ):

դ) Արեճաղավիտ: Վանից հյուսիս, Արճակ լճի և Մարմեստ գետի շրջանում:

ե) Աղավիտ (այժմ Բաղնոց):

զ) Կուպանովիտ:

է) Արբեռանի (այժմ Բերկրի): Բերկրի բերդ և քաղաք: Այստեղ են Լիմ և Կտուց կղզիները և Վանի ծովակի ձկնորսարանը, որ հռչակված է իր «տանակ» ձկնով<sup>4</sup>:

ը) Գառնի կամ Դառնի (այժմյան Բայազետի հարավակողմը):

թ) Բուժունիք (այժմ Նորդուզի շրջան): Բոհտան-սու կամ արևելյան Տիգրիս գետի վերին մասերում:

ժ) Առնոհուն: Սահմանակից նախընթաց գավառին:

ժա) Անձեվաղիք կամ Անձավաղիք (այժմ Նորդուզի շրջան, երբեմն կոչվում էր Քարգահ): Ցեղի անուն է: Լեռնային ամուր տեղ: Ուներ Կանգվար քաղաքը, որ և բերդ (այժմ Կանգով): Այս քաղաքի մոտ գտնվում էր Դարբնաց բար կամ Ազոավաքար տեղը, ուր Անահիտի տաճարն էր, ուր քուրմերը կոչվում էին դարբին, որովհետև նրանք կուսահարությունը ահագին աղմուկ էին հանում և առհասարակ լեռան պաշտամունքն էին վառ պահում բնակիչների մեջ զանազան արհավրալից տեսարաններով: Քրիստոնեությունը այդտեղ էլ մարտ մղեց և հաղթելուց հետո վանք կառուցեց, կոչվեց Հոգյաց վանք:

ժբ) Տրպատունիք, ստացել է իր անունը Տրպատունի տոհմից (այժմյան Խոշապի մոտերը):

<sup>1</sup> Адош, с. 315.

<sup>2</sup> Հյուրըման, եր. 215:

<sup>3</sup> Ն. Աղանց — «Հին Հավատք կամ հեթանոսական կրոնք Հայոց», Վենետիկ, 1895, եր. 37:





- թ) Բաղֆ (այժմ Ղափանի մի մասը): Այստեղ են հայտնի հարուստ պղնձաձահանքեր: Գյուղեր. Տորթն, Խոտանան, Կավարտ, Վժանիս:
- ժ) Զորք (այժմ Ղափանի մի մասը): Բաղաբերդ և Կապան բերդերը, հրշակված է մանավանդ առաջինը իր անմատչելի դիրքով:
- ժա) Արևիֆ (այժմ Մեղրի), Մեղրի բերդը:
- ժբ) Կոսական կամ Կովսական (այժմ Ղափանի շրջանում): Բեխ, Շիկահող գյուղեր:

10. ԱՐՁԱԽ ԿԱՄ ԱՐՑԱԽ

Սյունիքի հյուսիսակողմը: Մեծ մասամբ անտառապատ լեռնաստան: Կողմում էր նաև Փոքր Սյունիք: Իսկ միջին դարերում նա կոչվում էր և Խաչեն: Այդ անունով գավառ այժմ էլ գոյություն ունի Արցախում, որի այժմյան անունըն է Ղարաբաղ: Տրտու գետ (այժմ Թարթառ):

Գավառներ (թվով 12).

- ա) Մյուս Հաբանդ: Այս գավառի տեղը ցույց է տալիս Ամարաս անունով տեղը, որպիսի անունով մի վանք այժմ էլ գոյություն ունի:
- բ) Վայկունիֆ (այժմ Զրաբերդ) Հանդաբերդ ամրոցը:
- գ) Բերձուր կամ Բերդաձուր (այժմ Այրում):
- դ) Մեծկվանֆ
- ե) Մեծիրանֆ (այժմ Խաչեն): Այստեղ է Գանձասարի վանքը:
- զ) Հառելանֆ
- է) Մուխանֆ: (Գուցե Մուղանի դաշտի մոտերը):
- ը) Պիանֆ
- թ) Պաժկանֆ (գուցե այժմյան Վարանդա):
- ժ) Սիսական ոստան կամ Սիսականի Կոտակ (վերջինը պարսկերեն նշանակում է Փոքր Սիսական):
- ժա) Քուստի Փառնես
- ժբ) Կողք

11. ՓԱՅՏԱԿԱՐԱՆ

Հայաստանի հյուսիս-արևելյան ծայրագավառը, որ առհասարակ քիչ ծանոթ է հին մատենագրության: Այդ երկիրը հայերը խլել էին Ատրպատականից և Կերկար ժամանակ շմնաց հայերի տիրապետության տակ: Նահանգի տեղը որոշելու համար ցուցմունքներ շատ չկան: Թվում է, թե դա այն երկիրն է, որ պարում էր Կասրք կամ Կասպ ցեղը՝ համանուն ծովի մոտ, այնտեղ՝ ուր Կոսրոս Արաքսը խառնվելով Բափվում են Կասպից ծովը: Նահանգն իր անունը ստացել է Փայտակարան քաղաքից, որ հիշատակվում է շատ անգամ, բայց որի տեղը որոշել անկարելի է:

Գավառների թիվը 12: Համարյա թե բոլորի տեղերն էլ անհայտ են:

- ա) Հրախառ-Պերոժ

բ) Վարդանակերտ: Այս անունով մի բերդ ենթադրվում է Արաքսի վրա, նախքան նրա խառնվելը Կուրի հետ:

- գ) Յոթնփորակյան Բագինֆ
- դ) Ռստի-Բաղա
- ե) Բաղանոտ (ենթադրվում է այժմյան Թալիշը):
- զ) Առոսպիժան
- է) Հանի
- ը) Աթշի
- թ) Բագավան
- ժ) Սպահարան-Պերոժ
- ժա) Ռւմրզղ-Պերոժ
- ժբ) Ալևան

Այս գավառներից երեքը՝ Յոթնփորակյան Բագինք, Աթշի և Բագավան իրենց անուններով ցույց են տալիս կրակապաշտության կրոնի կենտրոններ կղած լինելը: Այս հանգամանքը առիթ է տալիս Հ. Ալիշանին ենթադրելու, որ դրանք այժմյան Բաքվի և սահմանակից գավառներն են<sup>2</sup>:

12. ՈՒՏԻ

Արցախի և Կուր գետի մեջ: Դա զուտ հայաբնակ նահանգ չէր. այդտեղ ապրում էին ուտիացիները (որոնք մնում են և այսօր), գարդմանացիներ, գարգարացիներ և այլ ցեղեր: Ուտին հաճախ եղել է Աղվանից սեփականություն: Գավառները (թվով 8).

- ա) Արանոտ
- բ) Տոի (այժմ Փարրու)
- գ) Ռոտպացյան կամ Ռոտպայակ
- դ) Աղվե
- ե) Տուչխատակ
- զ) Գարդման կամ Գարդմանաձուր (այժմ Շամքոր գետի արևելյան վտակի վրա): Այստեղ է Գետաբակը պղնձահանքը:
- է) Շակաշեն (այժմյան Գանձակի գավառ): Կուր գետի հովտին պատկանող բնդարձակ դաշտավայր: Ստրաբոնը անվանում է նրան Սակասեն և գովում է նրա զարմանալի արգավանդությունը, այդ կողմից հավասար համարելով նրան Արաքսի հովտին<sup>3</sup>: Իր անունը ստացել է սկյութական Սակ կամ Շակ ցեղից, որ դեռ նախահայկական շրջանում Կասպից ծովի ափերով անցավ դեպի արևմուտք, արշավանքներ տարածեց մինչև Կասպագոլկիա, հրով և սրով նվաճեց բոլոր այդ երկրները<sup>4</sup>: Այս գավառումն է Գանձակ նշանավոր քաղաքը:

- ը) Ուտի Առանձնակ: Տրտու (այժմ Թարթառ) գետի ստորին հոսանքի վրա: Այստեղ էր Պարտավ հուշակավոր մայրաքաղաքը (այժմ Բարդա գյուղ): Ուտի նահանգում շատ հայտնի էր Խաղխաղ գյուղը կամ քաղաքը, որ աղվանից թագավորների ձմեռանոցն էր:

<sup>1</sup> Հյուրըման, եր. 232:

<sup>2</sup> «Տեղեկագիր Հայոց Մեծաց», վեներիկ, 1853, եր. 93:

<sup>3</sup> «Géographie», t. II, p. 458.

<sup>4</sup> Ibid, p. 427.



մունք անկարօտ ուղղման, արբուցանելով զդաշտս, մատակարարէ անրաւ բազմութեամբ յՈստանն կանամբ, արամբք և ընտանեօք զանպակաստութիւն հացի և գինւոյ. զանուշահոտ, զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զզանազանումն իւղաբուղիս սերմանցն: Իսկ ի լանջակողմանսն կամ ի սարահարթ տեղիս, յոր դիպեցուցեալ զհայեցած նորոգատեսիլ մարդոց՝ հանդերձս ինչ և ո՛չ ծաղկաբոյս գոյնս կարծեցուցանեն սփռեալքս պարարտարոյսք և պարարտարօտք, պարարտահամք. որոց թանձրախիտ ամմունք խոտոցն՝ զանթի, արօտականս ընտանի իշանց և զանհամբոյր բոյլս վայրենի էրէրոցն յագեցուցեալ՝ թանձրաթաղանթս առգագաւակս, սոնքացեալս գիրութեամբ զբնաւ մարմինն ցուցանեն: Իսկ սաստկաբուրումն անուշահոտ ծաղկանցն, որ զարանցն քաջաց որսասէր նետողացն և զհօտարած բացօթէզացն ընձեռելով առողջութիւն, զօրացուցանեն զզգայութիւն խելացն և նորոգին:

«...Եւ արդ՝ զայսպիսի ըղձակերտ գաւառ՝ զչնաշխարհիկ և զամենալի ըստ տուղութեան ամենախնամ արարչին Աստուծոյ, զԱյրարատեան գաւառ, որ է զլուխ աշխարհիս Հայոց, զգաւառն համբաւատենչ, զգաւառն ամենալի, որ բերէ յինքեան զօրինակ լիութեան, ըստ բանի գրոյն, զերկրին Եզրիպտացոց, և զգրախտին Աստուծոյ»<sup>1</sup>:

Այսպիսի մի միջավայր, շնորհիվ մանավանդ իր աշխարհագրական դիրքի, պիտի դառնար քաղաքակրթութեան հնագույն օրրաններից մեկը: Սեպսածե արձանագրութիւնները հաստատում են, որ Արաքսի հովտում տարածվեց Ուրարտուի թագավորութիւնը (8 դար Ք. ա), որ քաղաքներ շինեց դաշտում, կուլտուրական ձեռնարկութիւնների հեղինակ հանդիսացավ: Այստեղ էլ, իբրև ուրարտյանների հաջորդ, սկսեց կազմակերպվել և զարգանալ Հայաստանը իբրև կուլտուրական անկախ պետութիւն: Այստեղ է դարբնվել Հայոց պատմութեան մեծագույն մասը:

Հռչակավոր դաշտը քաղաքական կենտրոն չէր միայն, այլև կրօնական: Քաղաքական անկախութիւնը կորցնելուց հետո, հայ ազգը կարողացավ այս երկրի հետ կապել իր ազգային միութեան գաղափարը, հաստատելով այստեղ ընդհանրական կաթողիկոսութեան աթոռը, որ այժմ էլ գոյութիւն է պահպանում:

Գավառներ (թվով 20).

ա) Բասեն (այժմ էլ նույն անունն ունի, ավելի ընդարձակ մտքով. Հասանկալի շրջականները): Սահմանակից Բարձր Հայքին: Հույները կոչում էին Տասիանիս, Վաղիանիս: Հայտնի է «Հովիտ Մեծ Բասենո»: Հունական աղբյուրները հիշատակում են, որ այստեղ կար Բասեն քաղաք, որ կոչվեց Լեոնդոպոլիս, ապա և Հուստինիանոպոլիս: Ավաններ. Վաղարշավան, Ավկումի կամ Օկումի, հայտնի իր բազմամարդութեամբ: Բերդեր՝ Բողբերդ, Ավնիկ անապիկ ամրոց: Գոմաձոր գյուղաքաղաք: Որդորու, Դու, Վաղավեր, Ալվար չյուղեր:

բ) Գաբեղյանք (այժմ Կաղզվան), Վիշապաձոր անունով ձոր, հետո կոչված Գազանածակք: Սյունձեղնո գյուղ:

գ) Արեղյանք (Բասենի մի մասը):

դ) Հավունիք կամ Վահեվունիք:

ե) Արշարունիք կամ Երասխաձոր: Ընդգրկում է այն շրջանը, որի միջով անցնում է Արաքսի ձորը, սկսած Կաղզվանից: Առաջ պատկանում էր Կամախ-

րական սոհմին, հետո անցավ մեծ մասամբ Բագրատունիներին: Երվանդաշատ, Երվանդակերտ կամ Մարմետ քաղաքներ, Արտազերս, Կապույտ կամ Կապուտա բերդեր: Բագարան քաղաք, Ախուրյանի վրա, քաղաք Կոոց անվանված, որ ցույց է տալիս նրա նշանակութիւնը հեթանոսութեան ժամանակ: Բագրատունիների առաջին մայրաքաղաք: Մրեն հայտնի է իր այգիներով:

զ) Բագրեվանդ (այժմ Ալաշկերտ): Ըստ հույն մատենագիրների Բագրեվանդեն: Պատկանում է արքան Արածանիի ավազանին: Վաղարշակերտ քաղաք և բերդ, Բագվան կամ Բագնաց ավան, այսպես կոչված իր բազիլիկների (հեթանոսութեան մեհյանների) պատճառով, Զարեհավան քաղաք. Աշտարակաց գյուղ, Արամանա գյուղ, Արծակ, Բլուր, Եղեգյակ, Զրավ, Տիրառինձ գյուղեր: Այս գավառումն էր անվանի նպատ լեռը:

է) Ծաղկոտն (այժմ Դիադին): Լեոնային հովասուն դիրքի պատճառով ամառանոց էր արքունի բանակի և մեծամեծների համար: Ծաղկանց լեռներում (որ և Ոսկի) Արածանիի ակունքը: Ծահապիվան լեռ և ավան, հայտնի նրանով, որ այդտեղ, հեթանոսութեան ժամանակ, հավաքվում էին արքունի բանակը և մեծ բազմութիւն երկրի զանազան կողմերից՝ «Նավասարդի» ազգային տոնը (տարեմուտ) կատարելու համար: Անգղ ավան և բերդ: Այստեղի հռչակավոր ջերմուկները կոչվում էին Վարշակի:

ը) Երակ (այժմ Երրագյալ): Հույն մատենագրութեան մեջ՝ Սիրակենա: Հռչակված իր հացաշատութեամբ: Քաղաքական և կուլտուրական առաջնակարգ նշանակութիւն է ստացել Բագրատունիների ժամանակ և հետո: Գլխավորապես դաշտային երկիր, Արշո-Առիճ (այժմ Ալաջա) լեռներով: Ախուրյան գետի հովիտն է: Անի նախ բերդ, ապա և հռչակավոր մայրաքաղաք: Երազգավորք (այժմ Բաշ-Երրագյալ), Բագրատունիների երկրորդ մայրաքաղաք, Անիից առաջ: Արգինա գյուղաքաղաք, Ախուրյանի վրա, կաթողիկոսների բնակավայր: Բագրատունիների ժամանակ: Մավրիկապոլիս քաղաք, Տիկոր, Ալաման, Բագնայր, Կումայրի (Գյումրի) գյուղեր: Հոռոմոսի, Մարմաշենի վանքեր:

թ) Վանանդ (այժմ Կարս): Երակի դաշտի շարունակութիւնների մեջ հիշատակարեմտակողմ: Այստեղ էր սեպածե արձանագրութիւնների մեջ հիշատակված Ախուրյանի՝ քաղաքը (այժմյան Սարիղամիշի շրջանում), մի անուն, որ վաղ և հետո պահել է Ախուրյան գետը: Կարս քաղաք և հռչակավոր բերդ: Վանանդի Բագրատունի թագավորների մայրաքաղաք. Զարիշատ, Դրաշպետ, Ուղձու, Կանկաքար, Իշավանից գյուղեր:

ժ) Արագածոտն: Անունն արդեն ցույց է տալիս, որ այս գավառը տարածված էր Արագած լեռան շուրջը, թե լեռնակողմերում, թե ստորոտի դաշտերում (այժմյան էջմիածնի գավառ): Լեռնակողմերի նշանավոր պատմական վայրերն են. Թալին, Աշնակ, Կվաշավան, Վժան, Անբերդ, Բյուրական, Փարպի, Կարբի, Սաղմոսավանք, Սերկելի, Հովհաննավանք, Մողնի, Աշտարակ, Օշա-Կարբի, Սաղմոսավանք, Սերկելի, Հովհաննավանք, Մողնի, Աշտարակ, Օշական, Եղիվարդ: Դաշտային մասում՝ Արմավիր, հին նշանավոր քաղաք, սեպական, ձե արձանագրութիւնների Արգիշտիհիսիլի, Վաղարշապատ կամ Նոր քաղաք, Արշակունիների մայրաքաղաքը, էջմիածին, հայկական կրօնական կենտրոն: Ժա) Զակատն (այժմ Սուրմալու), Բարդոզ լեռների շրջանում: Կողբ ավան, հռչակված իր հարուստ աղահանքով: Սուրմառի բերդ:

ժբ) Մասյացոտն: Երկու Մասիսների ստորոտները Արաքսի հովտի վրա: Սեպածե արձանագրութիւնների մեջ այս գավառի հնագույն անունն էր էջի-

<sup>1</sup> «Ղազարայ Փարպեցոյ արարեալ Պատմագրութիւն», Վենետիկ, 1793, եր. 18—22:



կարող էր լինել, միապաղաղ զանգվածներով շէր տարածված այդ երկրի երեսին: Նա գլխավորապես կենտրոնական նահանգներում էր նստած և այդտեղ էլ ստեղծել է իր պատմությունը: Մինչդեռ երկրի ծայրերը կազմող նահանգներում հայ ազգաբնակիչությունը թույլ է եղել, և այդ պատճառով էլ այդ նահանգները միայն աշխարհագրական անուններ են թողել՝ առանց մանրամասն պատմության:

# Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ն Ա Խ Ա Հ Ա Ս Կ Ա Կ Ա Ն Շ Ր Զ Ա Ն

Գլուխ առաջիկ

Ն Ա Խ Ա Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

1. ԱՂՔՅՈՒՐՆԵՐ: 2. ՔԱՐԻ ԴԱՐ: 3. ԲՐՈՆՁԻ (ԱՆԱԳԱՊՂՆՁԻ) ԴԱՐ: 4. ԵՐԿԱԹԻ ԴԱՐ:  
5. ԴԱՄԲԱՆՆԵՐ: 6. ՄԻ ԼՈՒՍԱՎՈՐՎԱԾ ՎԱՅՐԿՅԱՆ: 7. ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ  
ՆԱԽՕՐՅԱԿԻՆ:

**1. Աղբյուրներ:** Նախապատմական հնագիտությունը կանոնավոր, սիստեմատիկ աշխատություններ դեռ շատ քիչ է կատարել թե ընդհանրապես Անդրկովկասում և թե մասնավորապես Ռուսական Հայաստանում, իսկ Հայաստանի մյուս մասերում (Թուրքիա և Պարսկաստան) համարյա ոչինչ աշխատություններ դեռ չէ էլ կատարել՝ հողի մեջ մնացած հնագույն մարդկային վավերագրերը ձեռք բերելու համար: Եվ ինչ որ գիտությունն այժմ ունի իր տրամադրության տակ, կարող է տալ միայն երիրուն և աղոտ եզրակացություններ:

Եվրոպացի գիտնականներից մեր երկրի մի մասի նախապատմական հնություններով զբաղվել են մի քանիսը, բայց դրանց մեջ աչքի են ընկնում երկու ֆրանսիացի նշանավոր գիտնականներ, որոնք տեղն ու տեղը ուսումնասիրել են, պեղումներ են կատարել: Դրանք են էրնեստ Շանտր<sup>1</sup> և Ժ. դը Մորսիեր<sup>2</sup> են, պեղումներ են կատարել: Դրանք են էրնեստ Շանտր<sup>1</sup> և Ժ. դը Մորսիեր<sup>2</sup> են: Վերջինս երկարատև ուսումնասիրություններ է կատարել թե՛ Կովկասում (և հատկապես Ռուսական Հայաստանում), թե՛ Պարսկաստանում, Քաղդեայում, Եգիպտոսում և նվիրել է այդ ուսումնասիրություններին բազմաթիվ գրվածքներ: Հնագիտական ուսումնասիրություններ կատարել են և մի քանի ռուս գիտնականներ, որոնց աշխատություններից օգտվել են հիշյալ ֆրանսիացի գիտնականները: Մենք կտանք մի քանի համառոտ ծանոթություններ Հայաստանի նախապատմական շրջանի մասին, հետևելով գլխավորապես Շանտրին և դը Մորսիերին:

**2. Քարի դար:** Այն ժամանակները, երբ Պարսից ծոցի ափին մարդկային առաջադիմության արշալույսն էր բացված, երբ գրության գյուտը հավաստի պատմության ժամանակներն էր պատրաստում, երբ սեմական գաղթականությունները մտնում էին Քաղդեա և Տիգրիս-Եփրատյան հովտի բնակիչները հաստատվում էին Նեղոսի ափերում, այսինքն Քրիստոսից շուրջ 5 հազար տարի առաջ, ամբողջ աշխարհը, դրա հետ և երկու հռչակավոր գետերի ծննդավայր լեռնատանը, թաղված էր վայրենության խավարի մեջ: Կովկասը, Իրանի սարահարթը դեռ համարյա անմարդաբնակ էին<sup>2</sup>:

Պատմությանը դրականապես հայտնի չէ, թե ի՞նչ ազգեր էին, որ երևան եկան Անդրկովկասում, Հայաստանի բարձրավանդակներում և առհասարակ այն ընդարձակ տարածության վրա, որ գտնվում է Կասպից և Միջերկրական

<sup>1</sup> Ernest Chantre—„Recherches anthropologiques dans le Caucase“, Paris—Lyon, 1885, t. I, II, III.

<sup>2</sup> „Les Prem. Civ.“, p. 199.



ծովերի մեջ: Միայն հնագիտությունն է, որ ուսումնասիրելով այդ հին անծա-  
նոթ մարդկության թողած հետքերը հողի ծոցում, նշանակում է, առանց կարո-  
ղանալու որոշ թվականներ և անուններ տալ, թե քաղաքակրթության ի՞նչ աս-  
տիճաններ է անցել այդ մարդկությունը:

Քարի դարը բաժանվում է երկու շրջանի—հնաքարային (paléoli-  
thique) և նորաքարային (néolithique): Առաջին շրջանից հետքեր կով-  
կասում գրեթե դեռ չեն գտնվել: Գլխավոր նյութը այդ շրջանում կայծքարն  
էր: Աշխարհի բոլոր կողմերում գտնվում են շորորդական շրջանի մարդկու-  
թյան այդ վկանները: Կովկասն էլ անշուշտ կտա այդ նշանները ասպագա գի-  
տական որոնումների ժամանակ<sup>1</sup>: 16

Նորաքարային կամ հեղկած քարի շրջանից ավելի շատ հետ-  
քեր են մնացել: Բայց նրանք առանձնակի, անջատ երևույթներ են կազմում, մի  
համատարած և ընդհանուր, երկարատև դրություն չեն բնորոշում: Այս հանգա-  
մանքը թույլ է տալիս կարծելու, որ եթե Անդրկովկասում եղել է քարի դար,  
նա շատ երկարատև չէ եղել: Նույնիսկ կացինն ու մուրճը, որոնք քարի դարի  
ամենատարածված գործիքներն են եղել և որոնք այդ պատճառով էլ մեծ քա-  
նակությամբ են գտնվում ուրիշ երկրներում, այստեղ՝ Անդրկովկասում, շատ  
քիչ են գտնված: Հայաստանի սահմաններում քարե առարկաների համար  
իրևե նյութ գործ էին անում Արագածի հրաբխային օբսիդը, ինչպես նաև  
երկաթաքարը: Սակայն չէ կարելի դրականապես հաստատել, թե այդ առար-  
կաները իսկապես միայն քարի դարին են պատկանում:

Ինչ վերաբերում է նորաքարային շրջանի շինություններին, Կովկասյան  
գլխավոր շրջանի հյուսիսային կողմերում շատ են գտել այն նախնական կա-  
ռուցվածքները, որոնք հայտնի են գիտության մեջ մեծ քարային է  
(megalithique) հուշարձաններ անունով: Դրանք մեծ քարերից շինված դամ-  
բարաններ են (դոլմեն): Այդ տեսակ շինություններից շատ քիչ են գտել Ան-  
դրկովկասում:

Նույն քաղաքակրթական շրջանին են վերաբերում լճային տները,  
որոնք շինվում էին ջրերի մեջ սնկած մեծ ցիցերի վրա: Այդ նախնական բնա-  
կարանների հայրենիքը մի քանի գիտնականներ համարում են հին Կողքիսը  
(արևմտյան Վրաստանը) և հատկապես Ռիոն գետի բերանը: Հնագիտողներ  
իրից ոմանք նույն այդ շինությունների հետքեր են գտել նաև Հայաստանի  
սահմաններում, Սևան և Թափարավան լճերում:

Ինչպես հայտնի է, մարդկությունը նախքան այսպիսի արհեստական  
բնակարաններ շինել սովորելը, ապրում էր քարանձավներում: Կովկասում քա-  
րանձավների շրջանից էլ շատ հետքեր չեն մնացել, թեև բազմաթիվ են ար-  
հեստական քարանձավները: Հայաստանի սահմաններում քարանձավների ա-  
մբողջ խմբեր կան, ինչպես են՝ Սյունիք, Գառնի, Անի և այլ տեղեր: Մի քանի  
տեղերում քարանձավները այժմ էլ մարդկանց բնակարաններ են: Բայց հետա-  
զոտված ու որոշված չէ, թե այդ քարանձավները ի՞նչ հարաբերություն ունեն  
այն նախնական ժամանակների հետ, երբ մարդկությունը բացառապես քա-  
րանձավային բնակարանների դրության մեջ էր գտնվում:

Քարի դարի ժամանակներին է վերաբերում, ինչպես հայտնի է, և կեն-  
դանինների ընտանեցումը: Գիտության մեջ գոյություն ունեն մի թեորիա, որ  
ընտանի կենդանիների (չուն, եզ, ոչխար, ձի) հայրենիք ընդունում էր Կովկասը  
և հատկապես Հայաստանը: Բայց այս ենթադրությունն այժմ մերժված է,

<sup>1</sup> J. de Morgan, „Mission scientifique au Caucase, t. I—Les premiers âges des  
Métaux dans l'Arménie Russe“, Paris, 1889, p. 29—32.

տեղի տալով այն թեորիային, որ կարծում է, թե առաջին անգամ մարդը սովորե-  
րել է կենդանիներին ընտանեցնել Միջին Ասիայում և այդտեղից էլ ընտանե-  
կենդանիները ազգերի տեղափոխությունների հետ տարածվել են դեպի աշ-  
խարհի զանազան կողմերը: Սակայն այս վերջին ենթադրությունն էլ չէ ար-  
գելում ընդունել, որ Կովկասն ու Հայաստանը այն առաջին երկրներից էին, ուր  
մուտք գործեցին ընտանեցրած կենդանիները: 17.

3. Բրոնզի (անագապղնձի) դար: Հայաստանը, ինչպես տեսանք, հարուստ  
է գլխավորապես երեք տեսակ հանքերով՝ աղ, պղինձ և երկաթ: Աղա-  
հանքերի շահագործումը ծանոթ է եղել տեղային ազգաբնակչության շատ հին  
ժամանակներից: Կողքի և Նախիջևանի աղահանքերում գտնված քարե գոր-  
ծիքների խորին մի հնություն են ցույց տալիս, թեև դեռ ապացույց չեն, թե  
նրանց գործ անող մարդիկ բոլորովին անծանոթ էին մետաղների գործածու-  
թյան:

Մետաղներից առաջինը, որ մարդիկ սովորեցին գործ անել իրենց կյան-  
քի մեջ՝ անհրաժեշտ գործիքներ և իրեր պատրաստելու համար, պղինձն էր:  
Բայց պղինձը անխառն դրություն մեջ երկար չէր կարող ծառայել իբրև տո-  
կուն մի նյութ, և մարդիկ գտան բրոնզը, որ պղնձի և անագի (կլայնի) խառ-  
նուրդն է: Եստ գիտնականներ ենթադրում են, որ այստեղ էլ հենց, Հայաս-  
տանում, առաջին անգամ տեղի է ունեցել բրոնզի գյուտը, որ և այստեղից տա-  
րածվել է աշխարհի բոլոր կողմերը: Սակայն այս ենթադրության հակառակ  
են խոսում երկրի լեռնային հարստությունների պայմանները: Գլխավորապես  
Հայաստանի հյուսիսային կողմերում, Փոքր Կովկասի ճյուղավորությունները  
կազմող լեռնաստանում առատ են պղնձահանքերը: Եվ Լավարի (Լուռու շքր-  
յան), Դիլիջանի, Գանձակի, Սյունիքի ու Արցախի պղնձահանքերը շահագործ-  
վում էին շատ հին ժամանակներից: Բայց Հայաստանը չէր կարող լինել բրոն-  
զի արդյունաբերության օրրան, որովհետև այնտեղ չկան անագի հանքեր:  
Ձևազր պիտի բերվեր ուրիշ տեղերից: Բայց ո՞ր տեղերից:

Կովկասյան գլխավոր լեռնաշղթան, ինչպես և ամբողջ Առաջավոր Ասիա-  
յի լեռները չունին այդ մետաղը, որ առատ է Միջին Ասիայում, Ալթայի և Զի-  
նաստանի լեռնաստաններում: Այդ կողմերում էլ, ուր բրոնզի համար անհրա-  
ժեշտ երկու մետաղներ կան, պետք է, որ առաջին անգամ գտնված լինի բրոն-  
զի խառնուրդը, ուրեմն և այդ կողմերում է առաջին անգամ սկսվել բրոնզի  
պարբեր:

Սակայն եթե Կովկասը և մասնավորապես Հայաստանը քաղաքակրթական  
աղբ շատ նշանավոր շարժման մեջ առաջին հեղինակի առաջին սկսողի պա-  
տիվը չունին, կա այն շատ պատվաբեր հանգամանքը, որ նրանք հանդիսացել  
են իբրև առաջին կայարան բրոնզի քաղաքակրթության տարածման այն ճա-  
նապարհին, որ տանում էր դեպի արևմուտք: Եվ այդ շնորհիվ այն հանգաման-  
քի, որ Հայաստանը կապված է Միջին Ասիայի հետ ուղիղ հաղորդակցության  
ճանապարհներով:

Ինչպես տեսանք՝ դեպի Արաքսի հովիտը Միջին Ասիայից տանում էին  
երկու ճանապարհ. մեկը՝ համեմատաբար կարճ, բայց դժվարին, Կասպից ծո-  
վի հարավային ափերով, իսկ մյուսը՝ երկար, բայց համեմատաբար հարմար,  
Հնրաթից Խորասանի և Թեհրանի վրայով գնում է Թավրիզ: Այդ երկրորդ ճա-

<sup>1</sup> Chantre, t. I, p. 38—76.

<sup>2</sup> Տե՛ս վերև, Ա մաս, գլ. Ա 13:

նապարհն էլ, ըստ երևույթին, այն միջոցն է եղել, որով մետաղագործությունը իր իսկական հայրենիքից հասել է Մասիսին և այստեղ, Հայաստանի լեռներում, առանձնապես զարգացել է և առաջ գնացել դեպի արևմտյան երկրները: Մետաղագործությունը Միջին Ասիայից կարող էին բերած լինել կամ խաղաղ արշավանքները, այսինքն ազգերի տեղափոխությունները, կամ պատերազմական հորդանքները: Երկուսն էլ, ինչպես գիտենք, հին աշխարհում զորեղ միջոցնեց էին՝ ազգերը իրար հանդիպեցնելու, իրար հետ շփելու համար<sup>1</sup>:

Բրոնզի դարը Հայաստանում նույնպես շատ երկարատև չէր և շուրջ այն բնավորությունը, որ հատուկ է ընդհանրապես քաղաքակրթության այդ աստիճանին, այսինքն՝ նա միշտ բացառապես բրոնզի տիրապետությունը չէր ճանաչում և այդ մետաղը չէր կարող տեղափոխ արդյունագործության բոլոր պահանջները լրացնել: Արդեն այն հանգամանքը, որ բրոնզի համար անհրաժեշտ անագը պետք էր բերել տալ այնքան հեռավոր վայրերից, դարձնում էր այդ արդյունաբերությունը չափազանց թանկ և անմատչելի: Եվ մարդկությունը բնականաբար ստիպված պիտի լիներ որոնել լեռներում ավելի տոկուն և առատ նյութ, քան պղինձը: Այս որոնումներն էլ վերջ ի վերջո առաջացրին երկաթի գյուտը:

Բայց և այնպես, բրոնզի գործածությունը Հայաստանում նշանավոր չափերի էր հասնում: Նորագույն պեղումները<sup>2</sup> երևան հանեցին բրոնզի իրերի մեծ հարստություն: Բազմաթիվ են այն նախապատմական գերեզմանները, որոնց մեջ պահված իրերը բացառապես բրոնզից են: Այդ բոլոր հիշատակարանները ցույց են տալիս, որ երկրի ազգաբնակչությունը քաղաքակրթության նշանավոր աստիճանների էր հասել: Արհեստները, նկարչությունը ճաշակի նրբություն և բարդություն էին պարունակում: Սակայն չափտք է աչքաթող անել, որ բրոնզի գործածությունը տեղի ունեւր և այն ժամանակները, երբ երկաթն էլ գործածության մեջ էր:

Մանրագնի մետաղի ընդարձակ գործածությունը միևնույն ժամանակ ապացուցանում է երկրի տնտեսական զարգացումը: Չէր կարող այդպիսի մի կուլտուրա ստեղծվել առանց վաճառականական հարաբերությունների զարգացման: Եվ, նկատի ունենալով Միջին Ասիայից անագ բերել տալու անհրաժեշտությունը, մենք պիտի երևակայենք առևտրական քարավանների երթևեկությունը այդ հեռավոր տարածությունների վրա, միջնորդ ազգերի մասնակցությունը այդ միջազգային առևտրի մեջ, զանազան երկրների բնական բերքերի փոխանակությունը գլխավոր շուկաներում: Սակայն միջազգային հարաբերությունների մասին խոսելիս՝ մենք երբեք չպիտի մոռանանք Տիգրիս-Եփրատյան հովտի բարձր քաղաքակրթական օրրանը: Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ բրոնզի դարում նույնիսկ Կովկասի գլխավոր լեռնաշղթան, չնայած թնտեսական մեծ արգելքներին, շատ նշանավոր հարաբերություններ ունեւր Քաղղեայի հետ<sup>3</sup>: Հայկական լեռնաշխարհի հարաբերությունները, ինչպես վկայում են նույն պեղումները, ավելի սերտ, ավելի անընդհատ էին:

<sup>1</sup> Շատ հավանական է համարվում, որ բրոնզի և առհասարակ մետաղների գործածության տարածող է հանդիսացել այն թափառական ցեղը, որ այսօր էլ գոյություն ունի և հայտնի է գնչու, բոշա (ցիգան, չինդան) անունով: Բոշաները, ինչպես հայտնի է, վարժ ձուլիչներ և դարբիններ են և իրենց թափառումները կատարում են Ասիայի և Եվրոպայի սահմաններում (Chantre, t. I, p. 86):

<sup>2</sup> Կատարել է պ. Երվանդ Լալայանը Նոր-Քայազետի գավառում (Տե՛ս ԸԱԶԳԱՐԱԿԱՆ Հանդես, գլ. XIV, XV, XIX),

<sup>3</sup> Chantre, t. I, p. 84.

եվ ինքնըստինքյան հասկանալի է, թե կուլտուրական ինչ ահագին ազդեցություն ունեցած պիտի լինի Քաղղեան նախապատմական Հայաստանի վրա: 18

**4. Երկաթի դար:** Երկաթահանքերի հարստությունը հայկական լեռներում այնքան նշանավոր է, որ Հայաստանը համարում են երկաթի գործածության գյուտի հայրենիք: Եթե այս միանգամայն ճիշտ էլ չլիներ, համենայնդեպս կասկածից դուրս է, որ Հայաստանը մեկն էր այն երկրներից, ուր մարդիկ սովորեցին երկաթ գործածել իրենց կենսական պետքերի համար: Ապացուցված է, որ բրոնզի հայրենիքը՝ Միջին Ասիան տեղեկություն շունեւր երկաթի մասին և այն ժամանակ, երբ Հայաստանը երկաթի գործածության տեսակետից արդեն մի շատ հին երկիր էր: Եվ Հայաստանը հենց այն կենտրոնն է, որից Միջին Ասիան սովորեց երկաթի գործածությունը: Այսպիսով, մինչդեռ բրոնզի տարածումը արևելքից արևմուտք էր, երկաթագործությունը դրա հակառակ տարածում ունեցավ՝ արևմուտքից արևելք<sup>1</sup>:

Ընդունում են, որ երկաթի գյուտը տեղի է ունեցել Քրիստոսից մոտ 20 դար առաջ: Փոքր Կովկասի և Տավրոսի հարուստ երկաթահանքերը առաջնակարգ նշանակություն ստացան հին միջազգային շուկաներում: Ամբողջ արևմուտքը (Փյունիկիա, ապա և Հունաստան) այդ տեղերից էր ստանում երկաթ և Հայաստանը նրա համար այն երկիրն էր, որ այդ կարևոր մետաղը հայթայթում էր աշխարհին: Քաղաքականապես և կուլտուրապես այնքան զարգացած Միջազգային սահմանակից էր այդ երկրին և բնականաբար այդտեղից էր ստանում իր բազմադիմի պետքերի համար անհրաժեշտ մետաղը: Երկաթով և կրակով աշխարհ նվաճող և կառավարող Ասորեստանը մանավանդ սերտ հարաբերությունների մեջ էր հայկական լեռնաստանի հետ, այնպես որ թե՛ Հայաստանում և թե՛ Ասորեստանում, միևնույն շափերն էին (կշռի և այլն) գործածվում: 19

**5. Դամբաններ:** Նախապատմական դամբանները իրենց մեջ պահում են հին մարդկության բազմաթիվ հիշատակարանները, որոնք լույս են սփռում այդ անգիր ժամանակների քաղաքակրթության պայմանների վրա:

Նախապատմական մարդու հավատալիքն էր, ինչպես տեսանք, որ մահը կյանքին միանգամայն վերջ չէ դնում և մեռած մարդը շարունակում է ապրել և գերեզմանի մեջ, ուստի մեռած մարդու հետ գերեզման էին փոխադրվում նրա հարստությունները, նրա հանրային դիրքը բնորոշող իրերը, կերակուրներ, զարդարանքներ և այլն: Եվ դիտելով նախապատմական դամբանների բովանդակությունը, մենք ծանոթանում ենք շատ Երևույթների հետ, որոնք մի հայտնի շափով պարզաբանում են նախնական մարդու հասարակական-քաղաքակրթական հարցերը: Մենք հասկացողություն ենք կազմում, թե ինչպես էր այդ մարդու ընտանեկան կյանքը, ի՛նչ էր նա արդյունաբերում և ի՛նչ կուլտուրական պահանջներ ունեւր: Ծիշտ է, դամբանական նյութերը դեռ բավականազափ առատ չեն և մինչև այժմ կատարված պեղումները մեր երկրի միայն մի քանի մասերին են վերաբերում, բայց և այնպես, կարելի է մի ընդհանուր, մոտավորապես ճիշտ գաղափար կազմել նախապատմական կյանքի մասին: Աչքի առաջ բերելով նախ և առաջ համայնական-ընկերական կյանքը, մենք տեսնում ենք հարստությունների անհավասար բաժանում, տիրողներ և հպատակներ, ստրկություն, որ տիրողի հարստությունն է կազմում:

<sup>1</sup> De Morgan, t., p. 39.

Տեղական իշխանավորի գաղափար է տալիս մի նշանավոր դամբան, որ բացված է ազգագրագետ Ե. Լալայանի ձեռքով Նոր-Քայազետի շրջանում: Այդ դամբանում երևան է հանված մի փայտե սալ, որին լծված էին շորս եզ: Սալի վրա պատկած էր մի կմախք, որի գանգի վրա կար վարսակալ, «մեջքին՝ մի լայն գոտի, վրան մի մեծ և մի փոքր դաշույն և մի դանակ, աջ ձեռքին մի ապարանջան և մի մատանի, և ձախտի զրույն էր մի գալիստնի գլուխ, իսկ աջ ձեռքին ուներ մի երկփանջակ»: Բոլոր նշանները ցույց են տալիս, որ դա տեղական մի իշխանավոր էր, որոնք նույնիսկ մի ինքնակալ փոքրիկ քաղաքավոր: Մինչև իսկ շորս եզանի սալըն էլ նրա արժանիքն ու բարձր աստիճանն էր մատնանշում, որովհետև ծածկված է քանդակներով, որոնք արվեստի նրբություն են հանդես բերում: Իսկ լծի մեջտեղում ամրացած էր մի սնամիջ բրոնզե այծյամ, որի մեջ շարժվում են երեք փոքրիկ գնդակներ և բոժոժների ձայն են հանում: Իշխանական կմախքի շուրջը ընկած էին 13 ուրիշ կմախքներ: Դրանցից ոմանք գլխի վայր դիրքի մեջ էին, ոմանք գանգերը ջարդված էին: Այդ նշանակում է, որ այդ 13 մարդիկ վերևից ձգված էին գերեզմանի մեջ և հավանաբար նույն իշխանի ծառաներն էին:

Այս հանգամանքը, ծառաների կամ ստրուկների թաղումը տերերի հետ, կրկնվում է և շատ ուրիշ դամբաններում: Աչքի ընկնող հանգամանք է և այն, որ մի քանի դամբաններում տղամարդի կմախքի շուրջը, երբեմն և նրա վրա խոնարհված, կանանց կմախքներ են երևան գալիս: Մի հանգամանք, որ ապացուցանում է, թե տերերի հետ թաղվում էին և նրանց կանայք կամ հարճերը: Ստացվում է ճիշտ այն պատկերը, որ նկարագրված է Մովսես Խորենացու պատմության մեջ և Արտաշես Թագավորի թաղման է վերաբերվում<sup>2</sup>: Հին ժամանակներից մնացած և տարածված սովորություն էր, որ երբեմն, որ թագավորի կամ իշխանի հետ ինքնակամ գերեզման պիտի իջնեին և նրա կենդանի ծառաներն ու կանայք:

Տիրապետողի և առհասարակ հարուստի գերեզմանային կյանքն էլ առատություն էր ցույց տալիս: Գերեզմաններում դնում էին կերակրով լիքը կավի ամաններ: Եվ ահա մինչդեռ մի քանի դամբաններում այդ ամանների թիվը մեծ է, տասնյակների է հասնում, գտնվում են և այնպիսի դամբաններ (անշուշտ աղքատների), որոնց մեջ և մի հատ աման չկա, իսկ մեծածի կերակրը երբեմն բաղկացած է գառան մի ծնոտից կամ տավարի երկու ողնից<sup>3</sup>: Հարստության չափն էին ցույց տալիս և այն իրերը, մեծագույն մասամբ բրոնզի, որ մեռելները տանում էին իրենց հետ գերեզման, այն է՝ մանյակներ, ապսրանջաններ, վարսակալներ, գոտիներ, ամեն տեսակ զենքեր, գնդասեղներ, օղեր, գինդեր և այլն: Ուշագրություն գրավում է այն հանգամանքը, որ ապարանջանները երկու տեսակ են, ոմանք զարդարված են քանդակներով և նկարներով, իսկ մեծ քանակություն են կազմում և այնպիսիները, որոնք զարդարանքներ չունին և պարզ օղեր են, անարվեստ ու կոպիտ շինված: Դր Մորգանը ենթադրում է, որ այդ հասարակ օղերը դրամի նշանակություն ունեին և մի շարք հաշիվներով փորձում է ցույց տալ, թե ինչ կշիռ և արժեք էին ներկայացնում այդ բրոնզե օղակ-դրամները, որոնք այդպիսով կազմում էին անձնական դրամագլուխներ և թաղվում էին իրենց տերերի հետ<sup>4</sup>: Մետաղներից շի-

նած զարդարանքների մեջ ուշագրություն գրավող առարկաներ են և թանկագին քարերը, ուլունքները: Սրանք արդեն օտար երկրներից բերած իրեր էին: Տիգրիս-Տիգրատյան հովտի, Փյունիկիայի վաճառականներն էին բերում այդ զարդարանքները և փոխում մետաղների հետ:

Ժողովրդական տնտեսության գլխավոր ճյուղերը, ինչպես այդ տրամադրում են և երկրի աշխարհագրական պայմանները, ներկայացնում էին երկրագործությունը և անասնապահությունը: Նախապատմական գերեզմանները շատ հետաքրքրական փաստեր են տալիս, որոնք կարևոր են մանավանդ ներկայի հետ համեմատություններ անելու համար: Այսպես, նախապատմական մաշտը հացահատիկներ կայսելու համար գործ էր ածում ճիշտ միևնույն կամը, որ այսօր էլ գործում է մեր գյուղերում: Այդ հին կամն էլ, այսօրվանի պես, մի տախտակ էր, որի մի երեսին ծակոտիներ էին շինում և նրանց մեջ ամրացնում կայծքարի կտորներ կամ երկաթի բեռներ: Սալը, որի օրինակը կարող է համարվել վերևում հիշատակվածը, համարյա նույնն է այժմ, ինչ էր նախապատմական ժամանակներում: Նույն տախտակե անիվները, նույն սոնակը, նույն ձևը, բարձրությունը: Տարբերությունը միայն այն է, որ նախապատմական սալն ուներ և երրորդ անիվ, լծի տակ:

Նույն այդ տեսակետից նշանավոր են այն նմուշները, որ տալիս են նախապատմական դամբանները հագուստների մասին: Գլխավոր նյութը ոչխարի բուրդն էր և նրանից գործվում էր այն կտորը, որից այժմ էլ կարում են վերևի զգեստը (թուրքերեն՝ չուխա, հայերեն՝ կապա): Պատրաստվում էին և չթեր վուշից և կանեփից: Դրանք տեսակ-տեսակ էին, բազմազան նկարներով: Մարդը կրում էր մի քանի հագուստներ. վերևից բրդե պինդ կտորից երկար զգեստ, ինչպես այժմյան չուխան, իսկ նրա տակ՝ ավելի բարակ կտորից կարճ զգեստ, ինչպես մեր արխալուղը: Ոտնամանները այժմյան ոտնամաններին (տրեխ) նման էին: Չզգեստները կոճկվում էին բրոնզե կոճակներով: Գտնված են կոճակներ, որոնք իրենց ձևով բոլորովին նման են այն կոճակներին, որ այժմ կրում են Ղարաբաղի հայ կանայք:

Ինքնուրույն այժմ այդ նախապատմական ժողովուրդների մտավոր զարգացման, աշխարհայացքներին, պիտի ասենք, որ տարաբախտաբար, նրանց կրոնական հասկացողությունների ամբողջ պատկերը դեռ չեն ներկայացնում հնագիտական պեղումները: Ինչպես տեսանք, շատ զարգացած էր հասկացողությունը անդրգերեզմանական կյանքի մասին: Բայց ի՞նչ տեսակ պաշտամունքներ կային այդ հասկացողությունների մեջ: Մի գերեզմանի մեջ գտնվել է մի եզան կմախք, իսկ նրա կողքին՝ երեք կավե անոթներ, որոնք խնկամանի նմանություն ունին: Այս օրինակը, թեև մի հատիկ առայժմ, ապացույց է, որ Հայաստանի լեռներում էլ գոյություն ուներ եզան պաշտամունքը, սովորական մի երևույթ հին մարդկության մեջ, որ, ինչպես հայտնի է, աստվածացնում էր և կենդանիներին:

Դամբաններում գտնվել է և մի ուրիշ պաշտամունքի առարկա՝ կավե ֆալլոս: Ինչպես հայտնի է, հին մարդկությունը տեսանելի առարկայով ներկայացնելու համար արեգակի այն վերածնող ուժը, որ երևան է գալիս պարնան ժամանակ և ազդում է ամբողջ աշխարհի և բոլոր էակների վրա, պաշտում էր տղամարդու ծննդական անդամը, որ հունարեն կոչվում է ֆալլոս<sup>5</sup>:

1 Ե. Լալայան, «Նոր-Քայազետի գավառ» («Հանդես Ազգ.», 1910, եր. 82):  
2 Խորենացի, Բ, 4,  
3 Ե. Լալայան, Անդ., եր. 69:  
4 J. de Morgan, «Note sur l'usage du système pondéral Assyrien dans l'Arménie Russe», Paris, 1889, p. 2.

5 De Morgan, t. I.  
6 J. A. Dulaure, «Les Divinités Génératrices chez les anciens et les modernes», Paris, 1905, p. 13.

Այդ պաշտամունքը ոչ միայն տարածված էր հին հեթանոսական ժամանակներում բոլոր ազգերի մեջ, այլև պահեց իր գոյությունը նաև քրիստոնեության ժամանակ, այն էլ մինչև նույնիսկ մոտ ժամանակները, մինչև 18-րդ դարը: Պաշտամունքի հետ կապված էր և կրոնական պոնտիկությունը, որ այժմ էլ դեռ պահպանում է Վնդիկատանում: Բացի պեղված ֆալլուսից, մեր ներկրում կան և ուրիշ հիշատակարաններ, որոնք ապացուցում են նույն պաշտամունքի գոյությունը և պատմական ժամանակներում. նրա հետքերը այժմ էլ կարելի է նշմարել հայ ժողովրդի հավատալիքների և ծեսերի մեջ:

Կրոնական պաշտամունքի հիշատակարան են և այն փոքրիկ սրվակները, որոնք երևան են գալիս պեղումների ժամանակ և կոչվում են «արտասուքների սրվակ»: Անունն արդեն ցույց է տալիս, թե ինչ նշանակություն ունենին դրանք: Մեծի ծնողներն ու մերձավորները իրենց արտասուքները թափում էին այդ սրվակների մեջ և դնում էին գերեզմանում: 20

Այսպես է ներկայանում նախապատմական քաղաքակրթությունը Հայաստանի գոնե մի մասում՝ հյուսիսայինում: Ծիշտ ժամանակ որոշելու հնարավորություն չեն տալիս գերեզմանական առարկաները: Մի բան միայն պարզ է՝ Այս քաղաքակրթությունը, ունենալով իր տեղային առանձնահատկություններն ու ինքնուրույնությունը, ընդհանուր առմամբ ոչինչ քացառիկ երևույթ չէ այն կուլտուրական աշխարհում, որ ներկայացնում էր հնագույն արևմտյան Ասիան:

**6. Մի լուսավորված վայրկյան:** Բախտի բերմունքով Հայաստանի նախապատմական դարերի թանձր խավարի մեջ փայլատակում է գրավոր պատմության մի վայրկենական լույս, որ զարմանահրաշ մի տեսարան է բաց անում մեր առջև: Դա Քաղդեայի ամենահին արձանագրություններից մեկն է, որի մեջ խոսում է Գ ու տ ի ու մ անունով երկրում բնակվող կ ու տ ի ժողովրդի թագավորը, որի անունն է նույնպես Կուտի: Գուտիում երկիրը, ինչպես կարծում են, համապատասխանում է մոտավորապես այն երկրին, որ հետո ստացավ Հայաստան անունը՝ և գտնվում էր նրա հարավային կողմերում, Վանի և Ուրմիայի լճերի մեջ: 21 Այդ թագավորը պատմում է, որ իր երկրի վրա երեք անգամ հարձակում գործեց մի թշնամի ժողովուրդ, որի հրամանատարը յոթ եղբայրներ էին: Երեք անգամ Կուտին զորքեր ուղարկեց նրանց դեմ, առաջին անգամ՝ 120 հազար, երկրորդ անգամ՝ 90 հազար և երրորդ անգամ՝ 60 հազար, բայց երեք զորքերն էլ ոչնչացան պատերազմի մեջ: Զորրորդ անգամ, «մեծ աստվածների օգնությամբ», Կուտին կարողացավ վանել իր ահեղ թշնամիներին: Ահա ի հիշատակ այդ հաղթանակի Կուտին մի տաճար նվիրեց արեգակի աստծուն՝ Միսրի քաղաքում (Քաղդեայում): 2

Այս արձանագրությունը վերաբերում է մի շատ հին ժամանակի՝ Քրիս-

1 Гуго Винклер, «Западная Азия в древные времена» («История человечества», т. III, Пет., 1903, с. 12.

2 Գտնում ենք այստեղ այդ հնագույն հիշատակարանի թարգմանությունը.

«Գու, ով թագավոր, փոխարքա, իշխան կամ որիդ աստված կանուս է իշխանության, Ծս պատրաստեցի թեզ համար քարե տախտակներ, գծագրեցի թեզ համար հուշարձանի վրա, Ծվ դրի այն Կուտիում, Ծաթլամի տաճարում, ներգալի սրբավայրում.

Նայիր այդ հուշարձանին

Լսիր հուշարձանի խոսքին

Ծվ կարիք չի լինի, որ կասկածես և հուսահատվես,

Վախես և դողաս.

Թող ամուր լինի հողը քո տակ.

Ծարունակիր հանգիստ հարաբերություններ ունենալ քո կնոջ հետ.

տոսից 3 հազար տարի առաջ: Նա ապացուցանում է, որ այդ ժամանակ Հայաստանի հարավային մասը ենթարկված էր Քաղդեայի քաղաքակրթության խիստ ազդեցության և, ուրեմն, ներկայացնում էր շատ առաջացած քաղաքակրթություն ունեցող մի երկիր:

Այնուհետև Հայաստանն ընկղմվում է անհայտության խավարի մեջ, որ տևում է մոտ 2 հազար տարի: 22 Նորից այս երկիրը հավաստի պատմության լույսի մեջ հանդես է գալիս Քրիստոսից ինը դար առաջ և մենք նրան տեսնում ենք նույն Միջագետքի քաղաքակրթության խիստ ազդեցության տակ: Բայց դա արդեն Կուտիի ժամանակների քաղաքակրթությունը չէր, այլ ավելի տկարացած, ավելի ընկած: 1

**7. Պատմական ժամանակների նախօրյակին:** Ի՞նչ ծագում ունենալ և որքան տեղ էր տարածված Կուտի ժողովուրդը: Այս հարցերը պարզորեն որոշելու հնարավորություն չունի հնագիտությունն առայժմ: Կան միայն ընդհանուր ցուցմունքներ, որոնք վերաբերում են առհասարակ Հայաստանի և հարևան երկրների բնիկ կամ գեթ հնագույն ազգաբնակչության, և այս ընդհանուր ցուցմունքների շրջանակում էլ կարելի է որոնել զանազան հարցերի մոտավոր, հավանական լուծումներ:

Փաստ է, որ շատ հին ժամանակներից ամբողջ Փոքր Ասիան, Սիրիան, Պոնտոսի (Սև ծովի) հարավային կողմերը, Հայաստանը, Կովկասը մինչև Կասպից ծովը և Իրանի սարահարթը, ինչպես նաև Մեդիան (Մարաստանը), գուցե և էլ ամբողջ բնակեցրած էին ըստ երևույթին մի ընդհանուր ծագում ունեցող, իրար հետ ցեղակից կամ քույրաթիվ ազգերով: Նրանք բազմաթիվ բաժանումներ ունեին և չէին պատկանում սեմական ցեղին: Բայց ո՞րն էր նրանց հայրենիքը:

Մի ժամանակ, երբ գիտության մեջ տիրում էր թուրանական թեորիան, լքողը այդ ոչ-սեմական ազգերին հատկացնում էին թուրանական ծագում, ուրեմն և նրանք համարվում էին եկվորներ, գաղթականներ Միջին Ասիայից: Հետազոտողներից ոմանք, թուրանցի անունը շարժած լու համար, ստեղծեցին Հետազոտողներից ոմանք, թուրանցի անունը շարժած լու համար, ստեղծեցին «blanc allophyl»: Բայց վերջը գիտությունը կանգ առավ այն տոհմիկներ (blanc allophyl): Բայց վերջը գիտությունը կանգ առավ այն տեսության վրա, որ այդ բոլոր ազգերը բնիկներ էին: Իսկ դրանց մի ընդհանուր անուն տալու համար մի քանի առաջարկություններ եղան: Ֆ. Լընորմանի առաջարկությամբ մի ժամանակ գործ էր անում Ալարոդյան ցեղ անունը, քանի որ Արարատի ստորոտներում ապրող ժողովուրդը (ուրարտացի) հայտնի էին Հերոդոտին «Ալարոդ» անունով: Հետո ավելի լավ համարվեց վերցնել այդ ընդհանուր անունիքին պատկանող մի նշանավոր ազգի անունը և տարածել ընտանիքի բոլոր անդամների վրա:

Այդ այն ազգն էր, որ Ասորեստանի արձանագրությունների մեջ կոչված է խաթթա կամ խաթ, իսկ Եգիպտոսի արձանագրությունների մեջ խաթա կամ խաթա<sup>2</sup>, անուններ, որոնք այժմ դարձել են հաթ, հեթիթ (Աստվածաշնչի թարգմանությունների մեջը՝ քետացիք): 2 Հաթերն ապրում էին Պաղեստինի

Ամրացրո՛ւ քո քաղաքի որմերը

Լցրո՛ւ քո խրամատները ջրով

Հավաքիր քո շտեմարանների մեջ քո հացահատիկները, փողը, կաշիքը, զենքերը,

Г. Халатяни, «Очерки истории Армении», М., 1910, с. 38—39.

1 Винклер, с. 125.

2 A. H. Sayce, «Les Hetéens histoire d'un empire oublié», Paris, 1891, p. 12.

3 Մենդոց, ԻԶ, 34:







ները խոսում են գլխավորապես ներքին շինարարական գործերի մասին, առկա են որ ավելի կուլտուրայի վավերագրեր են, քան քաղաքական: Կան Երկարապատում հիշատակություններ և պատերազմական գործողությունների մասին, և այստեղ էլ շեշտվում է հաղթողի հպարտ թվարկումը տարած ճակատամարտի, վերջրած գերիների ու ավարի, բայց ընդհանրապես շատ ավելի չափավոր և համեստ ոճով, քան ասորական նվաճողների խոսքն է: Այս արձանագրությունները լրացնում և նույնիսկ ուղղում են ասորեստանյան աղբյուրները, երբ հարցը վերաբերվում է քաղաքական դրություն, Երկու երկրների հարաբերություններին:

Ներքին աղբյուր պետք է համարել և այն, ինչ պահել է իր մեջ հողը և ինչ մնացել է հողի վրա ավերակի և դեռ անաղարտ շինության ձևով: Այս տեսակ վավերագրեր արդեն բավականաչափ ունի հեթեթական կուլտուրան Հայաստանում: Բայց հնագիտական խուզարկությունները դեռ ավելի բախտավոր ապագայի են սպասում, երբ նրանք կտան ավելի բազմաթիվ և ճոխ փաստեր, որոնք կսկսեն խոսել ավելի հարուստ և բազմակողմանի լեզվով: Մինչև այդ ուրարտագիտությունը պիտի բավականանա այն համեստ նյութերով, որոնք իր անփականությունն են դարձել մինչև այսօր:

**2. Սեպագիր աշխարհագրություն:** Ասորեստանի հին արձանագրությունների մեջ, որոնք վերաբերում են 11-րդ դարին Ք. ա., Հայկական Բարձրավանդակի մի նշանավոր մասը կոչված է Նաիրիի երկրներ: Այս անունը, ինչպես կարծում են, Միջագետքի հովտում տրվում էր Ասորեստանից դեպի հյուսիս գտնվող բոլոր երկրներին, բայց անկասկած է, որ նա ուներ և իր հատուկ նշանակությունը, իբրև անուն այն լեռնային երկրների, որոնք տարածված են Վանի լճի շրջանում: «Նաիրի» նշանակում է «գետեր»: Եվ իրավ, ասորեստանցիների արշավանքները տեղի ունեին գլխավորապես Արևելյան Եփրատի (Արածանի) և Արևելյան Տիգրիսի (Քոհտանու) մեջ ընկած տեղերում: Այս երկու գետերը, որոնցից Արածանին սեպածե արձանագրությունների մեջ կոչված է Արզանի, կարելի է համարել Նաիրիի հյուսիսային և հարավային սահմանագծերը. արևմուտքում սահմանագիծ կարելի է ընդունել Եփրատ գետը, իսկ արևելքում՝ Ուրմիայի լիճը, որին ասորեստանցիները տալիս էին «Նաիրիի ներքին ծով» անունը («Նաիրիի վերին ծով» անունը հատկացված էր Վանի լճին):

Նաիրի—մի երկիր էր ընդհանուր առմամբ, իր տեղագրական և ազգագրական ընդհանուր հանգամանքների պատճառով: Բայց այդ ընդհանուր անունը քաղաքական միապաղատություն չէր ցույց տալիս: Նա պարունակում էր իր մեջ բազմաթիվ գավառներ, որոնք և քաղաքական առանձին կազմակերպություններ էին ներկայացնում: Ասորեստանի թագավորները կոչվել են այդ գավառական առանձին կազմակերպությունների դեմ և այս պատճառով իրենց հիշատակարանների մեջ պահել են նրանց անունները, որոնք ամբողջ ցուցակներ են կազմում: Այսպիսով, հնագույն գրավոր հիշատակությունները բաց են

1 Վանի լիճը կոչվում է և Արձնի ծով: Այս անունը ուսու գիտնական Նիկոլսկին համարում է առաջացած ուրարտական Արգիշտի կամ Արգիստի թագավորների անունից և ենթադրում է, թե ուրարտացիները անվանում էին Վանի լիճը Արգիշտի կամ Արգիստի անունով: Այսպես է բացատրվում և Վանի լճի հյուսիս-արևելյան ափին գտնվող Արձնի քաղաքի անունը (М. Никольский, «Об одном из древних названий Ванского озера и о современном названии города Арджиш», տե՛ս «Сборник статей, в честь графини Уваровой», М., 1916, с. 167—176).

անուն մեր առջև Հայկական Բարձրավանդակին հատուկ և ընդհանուր կերպարանք՝ բազմաթիվ գավառական անկախություններ կամ, գուցե, կիսաանկախություններ, միացած մի ընդհանուր կազմակերպության մեջ: Նաիրին, ուրեմն, լեռնային մասն իշխողների մի ցանց էր, որ միանում էր վտանգի ժամանակ, արտաքին թշնամու դեմ մարտնչելու համար: Այդ դաշնակիցների թվի մասին մերձավոր հասկացողություն տալիս են Թիգրայալասար առաջինի արձանագրության հետևյալ խոսքերը. «Նաիրի երկրներում ամբողջ 23 թագավոր իրենց Երկիրներում մեջ արտոտերազմիկ կատրեթին և գործերին ժողովեցին, պատերազմ ու ճակատ տալու հառաջացան: Հզոր զինուցս սաստկությունը զանոնք ճնշեցի»<sup>1</sup>: Բայց այս բոլորը չէ: Բացի այս 23 թագավորներից՝ «4 60 թագավորս Նաիրյա երկրաց»<sup>2</sup> ընդ այնուսիկ որք անոնց օգնության եկած էին, իմ նիկակովս մինչև ցծովն վերին հալածական տարի»<sup>3</sup>: Այս հաղթողից մոտ երկու դար հետո Ասուրնազիրպալը իր արձանագրության մեջ հավատացնում է, թե «Նաիրի երկրներում մեջ 250 քաղաք իրենց զորավոր պարիսպներով ավերեցի, քանդեցի»<sup>4</sup>: Եթե այս թվանշանների մեջ ասուրական սնապարծուցություն չկա կամ քիչ կա, այն ժամանակ մենք պիտի ենթադրենք, որ, ուրեմն, յուրաքանչյուր ձոր, յուրաքանչյուր լեռ այդ երկրում անկախ էր և կազմում էր առանձին թագավորություն: Սակայն շատ պարզ է, որ հաղթողները չափազանցում էին իրենց կատարած գործերը: 250 քաղաքները, եթե ճիշտ որ Ասուրի ծառան այսքան տեղ վերցրել է, պարզապես ամբարցրած ղղթակներ են եղել, թագավորների, իշխողների ամրոցներ: Այսպես էլ ընդունելով հանդերձ մենք ստանում ենք այս երկրի վերին աստիճանի հետաքրքրական տեսարանը:

Ահա և հատուկ անունները, որ պահել են Ասորեստանի արձանագրությունները. 23 նվաճված թագավորություններ են. Նեմմե, Տունուրե, Տուալի, Քինտարի, Ուզուլա, Ունգամունի, Անդիաբե, Պիլաբինի, Աթուրգեի, Կուլիբարինի, Շինիբիրանի, Հիմոսա, Պախտերի, Ուփրամ, Շուրուրհա, Արանի, Արանի, Կիրինի, Ալբաա, Ուգինա, Նազաբիա, Աբարսիունի, Դալանի: Մի ուրիշ ասորական թագավոր, Շամսի-Ռամման, բերում է իր արձանագրության մեջ Նաիրիի երկրների և նրանց իշխանների հետևյալ ցանկը.

Բաբարուրան (իշխանը Սիրտաշմե), Վարմիշանդա (իշ. Ամահար), Պարսանի (իշ. Չարիշու), Հունդուր (իշ. Չարիշու), Կիպաբարուտակա (իշ. Սանսուր), Ուտաշա (իշ. Արդարա) Կինուկա (իշ. Շումաա), Գինգիբի (իշ. Տաստանի), Արիմաս (իշ. Բիսիբային), Կիպարուշա (իշ. Պարոնուշտա), Ուիլա (իշ. Արաշու), Արդանա (իշ. Գրիշտա), Ասատի (իշ. Ադադանու), Գինհուհուր (իշ. Ուրսի), Գինգինա (իշ. Բասրա), Կինդուտա (իշ. Ատուա), Կիբու (իշ. Դիբուանու), Զուգարուրա (իշ. Չաբանու), Գինգիրդա (իշ. Իրտիսատի), Տավրա (իշ. Բասարդուտա), Նանի (իշ. Շուուա), Սատիրա և Արտասիրարի<sup>5</sup>:<sup>27</sup>

Այս երկու ցուցակի մեջ հիշված անուններից մի երկու հատի տեղերն են միայն, որ այսօր կարելի է որոշել փոքր ի շատե հավանական ճշտություններ: Այսպես՝ 23 երկրների ցանկում հիշատակված Դալանի երկիրը Նաիրիի հյու-

1 Սանտյակոն, «Ասորեստանի և Պարսիկ սեպ. արձան», էր. 99:

2 Անդ, էր. 100:

3 Անդ, էր. 122:

4 Դր. Մանիսիլյան Շերեֆ, «Հայաստան, Քրդաստան և Արևմտյան Պարսիստան, բարե-լուր-ասորեստանյա սեպագրերու համաձայն», թարգմ. Հ. Բ. Պելեգրեյան, Վիեննա, 1904, էր. 8—9:

սիս-արևմտյան ծայրն էր, այժմյան էրզրումի և Երզնկայի մեջտեղը: 28 Մնա-  
ցածները, ինչպես երևում է, կազմում էին Նաիրիի ներքին զանգվածի ցանցը:  
Սակայն այդ զանգվածի շուրջը բոլորող երկրների (նահանգ, գավառ) մասին  
մենք ունենք մի քանի որոշ տեղեկություններ: Դրանց տեղը որոշելու համար  
լավագույն միջոցն է վերցնել Վանը լիճը, որ Նաիրիի կենտրոնավայրը կարող  
է համարվել և ցույց տալ, թե այդ լճի տ'ր կողմի ուղղութիւնը էին տարած-  
ված այդ երկրները:

Հյուսիս-արևելյան և արևելյան ուղղությամբ: 1. Ուրար-  
տու: Ամենակարևորը Նաիրի երկրների մեջ, որի մասին մանրամասնորեն  
կխոսենք հետո: 2. Մաննա: Սա իսկապես երկրների մի հավաքական անուն  
էր: Երկրների, որոնք տարածվում էին Ուրարտի լճի հարավային ափերից մինչև  
Արարս գետը, ասել է՝ այժմյան Խոյ, Սալմաստ գավառները: Ենթադրում են,  
որ Մաննայի ժողովուրդները նախկին ժողովուրդների հետ ազգակցություն  
չունեին և այս կողմերը գաղթել էին արևելքից: Մաննայի գլխավոր երկրներն  
էին՝ Ման, Ուխտիշ, Զիկերտու, Միսիանդի, Բիտ-Պայիուկկի:

Հարավ-արևելյան: Մուսասիր: Սերտկապված էր Ուրարտուի հետ:  
Գրավում էր Վանի և Ուրարտի լճերի մեջ ընկած այն լեռնաշխարհը, որ այժմ  
հյուսիսային Քրդստանն է, այն է՝ Հեքքեարիի գավառից մինչև Ուրարտի լճի  
հարավ-արևմտյան կողմերը (Ռեվանդու): Գլխավոր քաղաքը նույն անունն էր  
կրում—Մուսասիր: Նաիրյան ցեղերին պատկանող ժողովուրդ էր բնակվում  
այստեղ, ենթարկված, սակայն, Ասորեստանի քաղաքակրթության խիստ ազ-  
դեցության, այնպես որ ասորական լեզուն էր այդտեղ տիրապետում:

Հարավային ուղղություն: 1. Հուբուշկիա կամ Խուբուշկիա:  
Տիգրիսի քաղաքները կազմող երկու Զարբիի մեջտեղը, անմիջապես սահ-  
մանակից Ասորեստանին: Համարվում էր Նաիրիի երկրներից մեկը: Իր դիր-  
քով կարևոր տեղ էր բռնում: Ասորեստանից Իրանի սարահարթը դուրս գալու  
ճանապարհներ կային այստեղ և ժամանակի ընթացքում ասորացած երկիր  
էր: 2. Գիլգանի, Արզանա, որոնցից առաջինը համապատասխանում է այժմյան  
Խիզանին:

Հարավ-արևմտյան ուղղությամբ: 1. Կաշիարի և Նիրբու-  
լեանտ դժվարակոխ երկրներ: «Ահեղ լեռներ», «Վեժարի երկիր» — այսպես են  
վկայում ասորական արձանագրությունները: Այս երկրներում գտնվում էին  
հետևյալ քաղաքները՝ Իշտիլիբրիա, Մարիրու, Տելա: Վերջինիս նկատմամբ  
հավանական են համարում, որ նա գտնվում էր այն տեղը, ուր Բիթլիսի գետը  
թափվում է Տիգրիսի մեջ: Եթե այս ճիշտ է, այն ժամանակ այս երկու երկրները  
պետք է համարենք տարածված արևմտյան Քրդստանից դեպի Դիարբեքիր: Եվ  
իրավ, ինչպես ենթադրվում է, այս լեռնային աշխարհի գագաթներից մեկն էր,  
որ հին հունական աշխարհագրությունների մեջ անվանված է Մասիուս, մի  
լեռնաշղթա, որ բաժանում էր Նաիրիի երկրները Միջագետքից: Եվ եթե այս բո-  
լորը հավանական է, այն ժամանակ պիտի ասենք, որ այս երկրներից դեպի  
հյուսիս էին գտնվում Մուշկի երկիրը և Սասու սարը, որոնց կարելի է համա-  
պատասխանող համարել այժմյան Մուշ և Սասուն՝ անուններին: 2. Բիտ-Պա-

1 Վ. Քիլ. «Մաննացոց Տիրությունը» («Ազգագրական հանդես», գիրք Ա, 1895, եր. 32—33):

2 Ս. 2. Սեյս, «Սեպաձև արձանագրությունը Վանա» («Բանասեր» հանդես, Փարիզ, 1899,  
եր. 372):

3 Գ. Խալատյան, «О некоторых географических названиях древней Армении в связи  
с данными Ванских надписей» («Древности восточные», т. II, вып. II, М., 1901, с. 126):

4 Ibid.

մանի: Արևմտյան Տիգրիսի վրա տարածված դաշտային երկիր, որի քաղաք-  
ներից մեկը, Ամեդ անունով (Ամիթ, այժմ Դիարբեքիր) պարզ որոշում է նրա  
տեղը: Բացի Ամեդից, Բիտ-Չամանի երկրին էին վերաբերում նաև Դամդամու-  
սա և Սինաբու քաղաքները: Բայց Նաիրիի երկրների համար ավելի կարևոր  
քաղաքական կենտրոն էր Տուշհա քաղաքը: Եվ այս՝ շնորհիվ այն շատ կարևոր  
դերի, որ խաղում էր առհասարակ Բիտ-Չամանի երկիրը: Ասորեստանի բա-  
նակները Տիգրիսի հովտով էին բարձրանում Նաիրի սարահարթը, երբ հարկա-  
վոր էին համարում արևմուտքից հարձակվել այդ երկրի վրա: Տիգրիսի արև-  
մուտյան ճյուղի կիրճերը դուրս էին բերում Ամիդի դաշտավայրը և այստեղից  
ասորական զորքերը շարունակում էին իրենց առաջխաղացումը: Այս բնական  
դռների ռազմական նշանակությունը հասկացվեց շատ վաղուց, ուստի և այս-  
տեղ հիմնվեցին քաղաքներ և հաստատվեցին ասորական գաղութներ: Այսպիսի  
տեղերից մեկն էր Տուշհան, ասորական մի բերդ, որի դերն էր հսկել Նաիրիի  
երկրների վրա: Այդտեղ էին Նաիրիի բազմաթիվ թագավորներն ու իշխան-  
ները հանձնում իրենց հարկերն ու տուրքերն ասորի կուսակալին: Եվ որովհետև  
այդ հարկերի մեծագույն մասը քաղկացած էր ցորենից և այլ արմտիքներից,  
ուստի ասորական կառավարությունն այդտեղ կառուցել էր մեծամեծ շտեմա-  
րաններ: Առհասարակ այստեղ, այս սահմանապահ ամրության մեջ էին տեղի  
ունենում Ասորեստանի և Նաիրիի հարաբերությունները: Բիտ-Չամանի, ինչ-  
պես և նրա սահմանակից Շուպրիա և Ուրումե երկրները արամեական ցեղերին  
էին պատկանում, հետևաբար ներկայացնում էին Նաիրիի երկրների ազգա-  
բնակության հետ ոչինչ առնչություն չունեցող ազգագրական տարրեր: 29

Արևմտյան ուղղությամբ: Կիրհու երկիր, որ պարունակում էր  
իր մեջ Դյուա և Աբրակի երկրներն ու Նիպուր-Պազատա լեռնազավառը: Կիր-  
հուերկրի մեջ էր էնզիտ, որ համապատասխանում է հին Հանձիթ գավառին  
(այժմ Խարբեք): Այս գավառի մեջ էր Ասորեստանի թագավորներով հռչակ-  
ված Սուբանատը, այսինքն այն գետը, որ ասորիները համարում էին արև-  
մուտյան Տիգրիսի ակունքը և որ այժմ կոչվում է Զեբենե-սու: Գետը անցնում է  
մի նեղ կիրճով, որ ասորական բանակների ճանապարհն է եղել: Այստեղ, այս  
կիրճի մեջ, մի այրում, ասորական շորս թագավորներ փորագրել են տվել  
իրենց գործերը պատմող արձանագրություններ և իրենց պատկերները:

Հյուսիսային ուղղությամբ: Դայանի, որ կարևոր քաղաքա-  
կան դեր խաղաց մինչև Ուրարտուի բարձրանալը: Իր արևելյան սահմաննե-  
րով, ինչպես երևում է, մոտենում էր Արզանի գետի (Արածանի) հովտին (այ-  
ժմյան Ալաշկերտին), որ արդեն Ուրարտուին էր պատկանում: Այս հովտի և  
Վանի լճի մեջտեղերում էր գտնվում, հավանաբար, Արզաշկուն քաղաքը, որ  
Ուրարտուի համար մի ժամանակ մայրաքաղաք դարձավ: Արածանիի հովտից  
դեպի հյուսիս և հյուսիս-արևելք տարածվում էին բազմաթիվ երկրներ, որոնք  
նվաճվեցին Ուրարտուի թագավորների ձեռքով և դարձան այդ պետության  
քաղաքացույցի մասերը: Այդ երկրներն այսպես են հիշատակվում ուրարտական  
արձանագրությունների մեջ:

Դայանի երկիրը ուրարտական արձանագրությունների մեջ Դիաուհի է  
կոչվում, ինչպես ցույց է տալիս Դելի-Բարայի անպարունությունը: Այդ երկրից,  
Արաքսի ակունքներից մեծ ռազմական ճանապարհը մտցնում էր այժմյան  
Կարս-չայի ակունքների երկիրը (Վանանդ գավառ): Այդ երկիրն անվանվում էր  
Էրդիունի և նրա գլխավոր քաղաքի անունն էր Ախուրյանի, շինված Կարս-չայի

1 Նաբի, եր. 20.





Նախահայկական քաղաքակրթության ամենաբարձր և առանձնահատուկ  
զարգացումը ներկայացրել են ուրարտացիները: Այս քաղաքակրթությունը,<sup>1</sup>  
սակայն, ուրարտական պատմության է վերաբերում և մենք նրա մասին կխոս-  
ենք շուտով, երբ կհասնենք այդ ընդունակ նաիրյան ցեղի պատմության:

4. Կրոն: Կրոնական պաշտամունքներ մշակելու մեջ, ինչպես երևում է,  
աշխատակցություն ունեցել են նաիրյան բոլոր ցեղերը: Այդ պաշտամունք-  
ների մեջ երևան եկող աստվածների թիվը շատ մեծ էր: Վանի Մհերի գուռ  
անունով ժայռի մեծ արձանագրությունը, որ պարունակում է իր մեջ կանոններ,  
թե ո՞ր աստծուն ինչ զոհեր պետք է բերել, տալիս է քառասուն և վեց աստված-  
ների անուններ: Եվ եթե ենթադրենք, թե նախահայկերի պանթեոնը ամբողջ-  
վին հիշատակված է այս արձանագրության մեջ, աստվածների այդ մեծ թիվը  
չպիտի մեզ զարմացնե, քանի որ այստեղ էլ, ինչպես և ամեն տեղ, ընդհանուր  
համազգային պանթեոնը ամփոփում էր իր մեջ տեղական աստվածություն-  
ները: Երկիրը քաղաքականապես ներկայանում էր առանձին անկախություն-  
ների մի դաշնակցություն, այդպես էր նաև և կրոնական տեսակետով: Դաշ-  
նակցության մեջ էին ոչ միայն զանազան Երկրներ, այլև նրանց աստվածները:  
Այս դրությունը, ինչպես տեսանք, հատուկ էր ամբողջ հին աշխարհին:

Նախահայկական աստվածությունների գլուխ կանգնած էր մի երրորդու-  
թյուն, որի մեջ գլխավորն էր հալդի աստվածը: Դա, ինչպես կարծում են,  
երկնքի աստվածն էր, համայն ազգի, այսինքն բոլոր նաիրյան ցեղերի հովա-  
նավորը, որ և տալիս էր իր անունը ամբողջ ազգին (խալդեր, խալդիացիներ):  
Նրա հետ էին Տեխսբաս, ինչպես կարծվում է, օդի աստված և Արդենիս-  
արեգակ աստված: Այնուհետև նախահայկական պանթեոնի մեջ պաշտվող  
աստվածներն էին. Խուտուհին, Ուաս, Նալայինի, Սեբիդու, Անապաս, Դյու-  
տուալինի Սիելարդիս<sup>2</sup>, Ատբինի, Քուերա, Ելիպրի, Քալրահնի, Ադարուտա, Իր-  
տուալինի, Երինաս, Սինիրիս, Ունինա, Զուզումատու, Խարա, Արազաս, Զիկիգ-  
բունի, Ուրա, Արծիբեդիս, Անիս, Արտուարաիրու, Սուբաս, Ելիաու, Ուայինա,  
Հարուբայինի, Բաբաս, Աուխս<sup>3</sup>, Աիաս<sup>3</sup>, Շարդի, Իպխարի, Արա, Ադիա, Այինա,  
Արդի, Ինուանա: 31 Բացի այս բոլորից, առանց հատուկ անունների, հիշատակ-  
ված են լեռների աստված», «ցորենի տեղերը կողոպտող աստված», «տան-  
ծից (կռան խփողների) աստված», «տառապելոց աստված», «փոների աստ-  
ված», «անձրևաբեր աստված»: Ըստ երևույթին, միայն մի հատ աստվա-  
ծոսհի կար այդքան աստվածների մեջ և կոչվում էր Շարիս թագուհի<sup>4</sup>: Այս դի-  
ցուհին Բաբելոնի Նանա, Ասորեստանի Իստար աստվածուհին էր:

Գլխավոր աստվածը՝ հալդին պատվվում էր իբրև մաքրության աստված և  
արձանագրությունների մեջ նրա անվան հետ անբաժան է ամաքություն տվո-  
ղի» հորջորջումը: Միաժամանակ նա երկրի ուժի, քաջության ներկայացու-  
ցիչն էր և հովանավորում էր ձիավորներին, պատերազմողներին: Մեզ հայտնի  
են խալդիական կրոնի միայն ծիսական մի քանի արարողություններ և գլխա-  
վորապես՝ զոհաբերությունները: Յուրաքանչյուր աստծու համար սահման-  
ված էր զոհերի որոշ քանակություն: Այսպես, մենակ խալդի աստծուն զոհ

1 Ըստ Մասպերոյի՝ Լուսին («Hist.», t. III, p. 60).  
2 Զրի աստված (Անդ.):  
3 Զոդի աստված (Անդ.):  
4 Sandalagian, p. 188—215.  
5 Ibid, p. 220.

պետք է բերել 17 եղ և 34 ոչխար, իսկ այն երրորդության, որի մի անգամն էր  
նախ 6 դառ<sup>1</sup>: Զոհի կենդանիների մեջ հաճախ հիշատակվում է և վայրի եղ:  
Աստվածներին նվիրաբերել կարելի էր և յուզ, գինի, միս, խոզ: Թվում է, որ  
խալդիական պաշտամունքին խորթ չէր և մարդկանց զոհաբերությունը<sup>2</sup>:

Այս բազմաթիվ զոհաբերություններն արդեն ցույց են տալիս մի շատ  
զարգացած և բարդ կրոնական սիստեմ: Իսկ այս հանգամանքը մի վկայու-  
թյուն է, որ խալդյան պաշտամունքին նվիրված ժողովուրդը, ինչպես և այն  
ժամանակների բոլոր ժողովուրդները, սնուցանում էր իր մեջ քրմական մի մեծ  
զանազան, որ այս երկրում էլ, հարկավ, կատարում էր կարևոր դեր: Մհերի  
Դուռ ժայռի արձանագրությունը, որ մանրամասն կարագրում է, թե քանի զո-  
հեր պետք է մատուցանել յուրաքանչյուր աստծուն, պատկանում է Վանի իշ-  
պուհի թագավորին և նրա որդի Մենուային: Սա մի ցուցմունք է, որ թա-  
գավորը այս երկրում միացնում էր քաղաքական իշխանության հետ և քրմապե-  
տի բարձր պաշտոնը: Երկիրը, ուրեմն, կառավարվում էր աստվածապետական  
նեֆիսով: Այսպես էր, ինչպես գիտենք, կառավարությունն ամեն տեղ:

Խալդիական պանթեոնի աստվածներն ունեին տաճարներ, ուր գտնվում էին,  
նրանց պատկերները կամ արձանները: Համաձայնաբար է համարվում, որ նախա-  
հայերը իրենց աստվածներին ներկայացնում էին ոչ թե մարդկային կերպա-  
րանքով, այլ մարդու մարմնի վրա զանազան անատոմիաների և գլխավորապես  
շան և կատվի գլուխ դնելով<sup>3</sup>: Այդ տաճարներից մեկն ու մեկը կանգուն չի  
մնացել մինչև այսօր, բայց Ասորեստանի բարձրաքանդակ նկարների մեջ  
մնացել է ասորական զինվորների ձեռքով կողոպտվող ուրարտական մի տա-  
ճարի պատկերը: Սա քառակուսի հատակի վրա բարձրացած մի շինություն է,  
որի ծածկը վերջանում է բրգաձև նոճու նմանությամբ ունեցող մի սյունով: Ծա-  
կապարտը զարդարված է շորս քառակուսի սյուններով, որոնց մեջտեղը գտնվում է  
մի փոքրիկ դուռ: Սյունների վրա կախված են ուխտական (ընծա մատուցված)  
կոլոր ուռուցիկ վահաններ: Դռների երկու կողմին բարձրանում են կայմեր,  
որոնց վերին ծայրերը նման են բրգաձև նոճիների: Դռան ձախ կողմը նկար-  
ված է մի կով, որ կաթ է տալիս իր հորթին. սա կրոնական նշանաբան էր  
Առաջավոր Ասիայում: Դռան առջև, եզան ոտների ձև ունեցող եռոտանիների  
վրա, դրված են երկու կոլոր ավազաններ, որոնց մեջ պահվում էր քավության  
ջուրը: Տաճարի անոթները, որ կողոպտել են ասորական զինվորները, ներ-  
կայացնում են անուշահոտությունների բազմաթիվ կամ ծխարանները:

Սակայն այս պատկերը չէ կարող բավարար համարվել նախնական Հա-  
յաստանի կրոնական ամբողջ կուսակցության շարժումը: Հատկապես համար: Երկիրը գի-  
տեղ և հոյակապ տաճարներով պատվել իր աստվածներին: Թուրքաք-Կայեի  
ավերակներում պեղված է մի խալդյան տաճարի հիմքը, որ պրոֆեսոր Լեմանն  
անվանում է «շքեղ»<sup>4</sup>: Այսպիսի կերտվածքների հեղինակները թագավորներն  
էին, որոնց ծախքով շարունակ զոհեր էին մատուցվում աստվածներին: Կառու-

1 Ibid, p. 188—190.  
2 Թոֆրաթ — Կալեի պեղումների ժամանակ բացված է տաճարների կողքին մի տեղ, որ  
հզի տակ թափված էին մարդկանց և անասունների ոսկորներ: Կարծվում է, թե այդտեղ էին  
Թագավոր զոհերի ոսկորները (Տե՛ս Լեմանի վերոհիշյալ «Materialien» և «Բազմավեպ», 1908,  
կր. 487):  
3 Է. Ն. Ա., «Մհերի Դուռն — Տոսպանյան կրոնը» («Հանգես» ամս. 1893, կր. 342):  
4 Lenormant, «Lettres Assyriologiques», p. 131.  
5 «Հանգ. ամս.», 1900, կր. 246:







հանած իրողությունները չեն համապատասխանում այն ճշմարտության, որ հենց նույն այդ գրությունների տողամեջերից կարելի է հանել: Յուրաքանչյուր արշավանք, ըստ այդ արձանագրությունների, վերջանում է ասսուրական զենքի կատարյալ հաղթանակով և թշնամու կատարյալ ոչնչացմամբ, մինչդեռ իրապես այդ հաջողությունները այնքան վճռական չեն և այնպես չեն փոխում իրողությունը, ինչպես ներկայացվում է Միջագետքի գոռոզ տերերի պատմության մեջ: Եվ այս հասկանալի կլինի, եթե մենք մի անգամ էլ կրկնենք մեր հիշողության մեջ, թե ի՞նչ էր ասսուրական թագավորը: Այնպիսի մի մեծություն, ինչպիսին էր աշխարհի տերը, իհարկե, չէր գիշանի ասելու իր հպատակներին, թե ինքը անհաջողության է հանդիպել այսինչ պատերազմի մեջ կամ գեթ շատ չնչին հաջողություն է ձեռք բերել: Իր ուժով, իր դաժանություններով պարծենալ—մենք այս գիտենք թորդեն, ասսուրական թագավորների փառքն ու պարծանքն էր, ուստի և յուրաքանչյուր հաջողություն ներկայացվում էր շտիպողանցրած, անզուսպ պարծենկոտ ձևով: Ահա այս պատճառով էլ չպետք է բառացի մտքով հասկանալ Սալմանասարի հայտարարությունը, թե ինքը տիրել է Նաիրիի երկրներին: Այդ տիրապետությունը, համենայն դեպս, այնպես չէր եղել, որ Ասորեստանը իրան ապահովված համարեր հյուսիսային լեռների կողմից: Ապացույց՝ նույն Սալմանասարը ստիպված էր, ինչպես պատմում է հետագա ժամանակների (9-րդ դար Ք. ա.) մի արձանագրություն, ասսուրական գաղթականություններ հիմնել հյուսիսային սահմանների վրա Եմարիի դեմ<sup>1</sup>: 33

Այս հանգամանքը պարզում է ասսուրա-նաիրյան հարաբերությունների մի կարևոր և բնորոշ կողմը: Միջագետքի համար հյուսիսից պաշտպանվելու լավագույն միջոցն էր գինվորական գաղթականություններով ու ամրոցներով գոտևորվելը: Այս ռազմական սիստեմին դիմողը միմիայն Սալմանասար Ա չէր, այլև նրանից հետո նույն միջոցները գոյություն ունեին դարերի ընթացքում: Այսպիսի սիստեմի դիմելու կարիք չէր լինի, եթե Ասորեստանի թագավորներին հաջողվեր միանգամայն ընկճել և ընդմիջտ հպատակական երկյուղի մեջ պահել Նաիրիի բնակիչներին: Հյուսիսային վտանգը Տիգրիս-Եփրատյան հովտի աշխարհակալ կայսրության համար շատ զգալի էր հենց այն պատճառով, որ Նաիրիի լեռներում ապրող ժողովուրդները, ճիշտ է, մանր մասերի էին բաժանված, բայց անկախության ոգին նրանց մեջ չէր պակասում և ասսուրական քաղաքակրթության շատ ուժեղ ազդեցությունը այդ երկրներում ապագայնացում չէր առաջացնում:

Այդ ազգային անշեջ ինքնազգացումը, այդ անկախության ոգին ընդվզումներ էր հանդես հանում ամեն հարմար առիթով, որ ներկայացնում էր մեզ այնպես լավ ծանոթ ասիական բռնակալությունը, այսինքն՝ երբ կայսրությունը անկարող թագավորների շնորհիվ մատնվում էր թուլության, Նաիրին, ինչպես մեկը այն բազմաթիվ երկրներից, որոնք ենթարկված էին ասսուրական լծին, համարյա միշտ ջանք էր անում ազատվելու այդ լծից և ամեն անգամ Ասորեստանի բանակները բարձրանում էին անհնազանդ լեռները՝ նրանց նվաճելու համար:

Ասսուրական բանակները, մենք այս տեսանք՝ քանդել, ոչնչացնել և անզուսպ գազանություններով սարսափ ու ահաբեկում տարածել գիտեին գերազանցորեն, և աշխարհի մեջ ոչ ոք չէր կարող մրցել նրանց հետ այդ կողմից: Բայց որքան և ահեղ լինեի փոթորիկը, նրա անցնելուց հետո ավերակների մեջ նորից

<sup>1</sup> Անդ., էր. 86:

բարձրանում էր տեղական անկախության ոգին, որ և գործում էր մինչև ասսուրական նոր արշավանքը:

Բայց Նաիրիի ճակատագիրը Միջագետքի հարվածների տակ հասկանալու համար մենք չպետք է մոռացուցանենք տանք և այն կարևոր հանգամանքը, որ բնորոշում է հին մեծ կայսրությունների (եգիպտական, քաղդեական, ասսուրական, ապա և պարսկական) տիրապետությունը: Իր տեղում մենք տեսանք, որ այդ կայսրությունների համար նվաճել մի երկիր չէր նշանակում միանգամայն ոչնչացնել նրա ազգային-կուլտուրական ինքնուրույնությունը և նվաճողը սովորաբար բավական էր համարում հարկի ենթարկել գրաված երկիրը. այս հարկատվությունն էլ հպատակության երաշխիք էր համարում: Պետական այս սիստեմը, որ հատուկ էր հին Արևելքին, նույնպես շատ չէր նպաստում, որ Նաիրիի մանր անկախությունները միանգամայն ոչնչանան ասորական գինվորների ոտների տակ: Իրենք՝ այդ անկախությունները, որքան էլ ընդհանուր վտանգի դիմաց գիտեին միանալ, չէին կարող, իհարկե, ասսուրական կուլտուրականների դեմ հանել այնպիսի մի մեծ ուժ, որից ընկճվեր թշնամին: Պատերազմը Նաիրիի լեռներում սովորաբար լեռնային, պարտիզանական բնավորություն ուներ և հենվում էր ոչ այնքան զորքերի բազմության, որքան լեռնային բնության հայթայթած ամրությունների վրա: Եվ ասորական թագավորների համար իրենց հաղթական արձանագրությունների մեջ պարծանքի առարկա էր դառնում բարձր անմատչելի լեռներ բարձրանալը և այստեղ ամրացած արքայիկներին ու իշխաններին հաղթելը: Մի դաշտեցի ժողովրդի համար, հարկավ, լեռնային դժվար պատերազմը կարող է մեծագործությունների կարգը դասվել, ուստի և արձանագրությունների մեջ, ինչպես կտեսնենք, մշակվում է հատուկ, նույնիսկ բանաստեղծական ոճ՝ լեռներն ու նրանց կատարներին մղած պատերազմները նկարագրելու համար:

Սալմանասարի որդի Թեգլաթ-Ադար Ա թագավորը (1310—1270 Ք. ա.) զբաղված էր երկարատև պատերազմներով Քաղթեայի դեմ, իր տիրապետությունը հաստատեց Բաբելոնում, բայց այդ զբաղմունքների մեջ էլ, ինչպես երևում է, ժամանակ գտավ Նաիրիի հարավային երկրները (Կորդվաց աշխարհը) արշավելու համար: Սակայն հարավում մղած երկարատև պատերազմները սպառեցին Ասորեստանի ուժը և Թեգլաթ-Ադարի մահից հետո Միջագետքի նորակազմ կայսրությունը ստիպված էր իր ինքնապաշտպանության մասին հոգալ, մանավանդ որ Թեգլաթ-Ադարի հաջորդներն էլ թույլ թագավորներ էին: Նաիրին համարյա թե մոռացվում է: Թեև կարծվում է, թե Նինիթ-Պալասար (1190—1170) և Ասուրիսի (1180—1108) թագավորները գրաված են կամ, ավելի ճիշտ, ետ են խլած Նաիրիի մի քանի կորցրած հողերը<sup>1</sup>, բայց այդ գործողությունները այնքան խոշոր դեպքեր չէին և մանավանդ անհայտ են մնացել իրենց մանրամասնություններով:

Ասորական առաջին կայսրության վերջին ներկայացուցիչն էր Թեգլաթ-պալասար Ա (1108—1080 Ք. ա.), որի ժամանակ Ասորեստանը նորից ձեռք բերեց գինվորական մեծ պետության հմայքը: Արևելքի ուժեղ աշխարհակալներից մեկն էր դա, որ արշավանքներ սկսեց դեպի հյուսիս-արևմտյան երկրները, Եփրատի մյուս կողմում: Այդտեղից էին առաջանում հեթիթական ազգերը, այդտեղ կար ծաղկած քաղաքակրթություն և առևտրական մեծ ճանապարհների վրա կարելի էր հարուստ ավար ձեռք բերել: Եվ երբ գործողություն-

<sup>1</sup> Սամտալեյաճ, էր. 23—24:

ները այդ ուղղութեամբ էին առաջ տարվում, անկարելի էր, իհարկե, անտես առնել հեթեթեակն երկրների այն մասը, որ Նաիրին էր:

Իր արշավանքները դեպի այդ երկրները Թիգլաթպալասարը պատմել է մի քանի արձանագրութիւնների մեջ, որոնցից մեկը գտնվում է նույն Սուրենատ (Ջեբենե-սու) գետի նեղ ձորում, ժայռերի վրա, ուրնա էլ, հետևելով Սալմանասարի օրինակին, փորագրել տվեց նաև իր պատկերը: Այդ փորքրիկ արձանագրութեան մեջ ասված է. «Օգնականութեամբ Ասսուրա, Շամասսա, Ռամաննա աստվածոց մեծաց՝ իմ տերանցս, ես Թեգլաթ-Պալասար՝ Ասորեստանի թագավոր, որդի Ասուրրիսիսեա արքային Ասորեստանի, որդվույն Մուտակկի (Նուսկուի) արքային Ասորեստանի աշխարհակալ ի մեծ ծովե արևմտից մինչև Նաիրիի ծովն, 3 անգամ Նաիրիի վրա արշավեցի»<sup>1</sup>:

Նախքան բուն Նաիրի մտնելը, Թիգլաթպալասարը երկար պատերազմական զործողութիւններ էր մղում Կումմուխ երկրում, որի տեղը որոշում է այժմյան Դիարբեքի քաղաքը: Իսկ Նաիրիի մեջ եղած զործողութիւնները հետևյալ պատմութիւնն ունին.

«Հեռավոր թագավորաց երկիրներուն վրա՝ վերին ծովուն<sup>2</sup> Կզերքը, որոնք հպատակութիւն չէին ճանչնար, Ասսուր տերն խրկեց զիս և ես խաղացի գնացի: Դժվարին նորը շավիղներեն և կիրճերեն՝ զորոնք հառաջագույն երբեք թագավոր մը չէր տեսած, սեպ ճամբաներեն, զառիվերերեն՝ որոնք չէին բացված՝ զորաց խաղալ գնալ տվի... 16 արձագին լեռները կոխեցի անցա, դուր տեղվանքը՝ իմ մարտակառքիս մեջ, իսկ դժվարին տեղվանքը պղնձի բրինձերով ուղղեցի: Լեռանց ուրումի ծառերը մեկդի վերցուցի. կամուրջս վասն խաղացից զորագ իմոց շինել եղու, Եփրատի՞ վրայն անցա, Նիմմի երկրին թագավորն, Տունուրե երկրին թագավորն, Տուալի երկրին թագավորն, Քենտարի երկրին թագավորն, Ուգուլա երկրին թագավորն, Ունգամունի երկրին թագավորն, Անտիարե երկրին թագավորն, Պելաքինի երկրին թագավորն, Արթուգինի երկրի թագավորն, Կուլիբարգինի երկրին թագավորն, Շինիբերնի երկրին թագավորն, Նեմուա երկրին թագավորն, Պախտերի երկրին թագավորն, Ուիրամ երկրին թագավորն, Շուրուրիա երկրին թագավորն, Աբանի երկրին թագավորն, Արանի երկրին թագավորն, Կիրինի երկրին թագավորն, Ալբաս երկրին թագավորն, Ուգինա երկրին թագավորն, Նազաբինա երկրին թագավորն, Աբարաիունի երկրի թագավորն, Նաիրիա երկիրներուն ամբողջ 23 թագավոր՝ իրենց երկիրներուն մէջ պատերազմիկ կառքերնին և զորքերնին ժողովեցին, պատերազմ ու ճակատ տալու հառաջացան: Հզոր զինուցս սաստկութեամբ զանոնք ճնշեցի. անոնց բազմաթիվ զորաց մեջ Ռամմանա ամպրոպի նման՝ ավերում ձգեցի: Իրենց պատերազմողաց դիակները լեռանց բարձանց վրա և առ երի քաղաքաց նոցա շուշմայի (կնջիթ բույս) պես սփռեցի: Իրենց պատերազմիկ կառքերեն 120-ը ճակատամարտի մեջ խորտակմամբ խորտակեցի: 260 թագավորս Նաիրիա երկրաց՝ ընդ այնոսիկ որք անոնց օգնութեան եկած էին, իմ նիպակովս մինչև ցծովն վերին հալածական տարի: Իրենց մեծամեծ քաղաքներուն տիրեցի: Անոնցմե բռնած գերիներս, անոնց ինչքն ու ստացվածքը առի տարի, անոնց քաղաքները հրով այրեցի, ավերեցի, քանդեցի, փլատակներու բլուր ու խոպան երկիր դարձուցի: Երամակս բազմաթիվ ձիերու, ջորիներու, մոզիներու և զինչս նոցա երկրագործականս անթիվս առյալ տարի: Զամենայն թագավորս Նաիրիա երկիրներուն իմ ձեռքն կենդանույն գերի բռնեց: Այս

<sup>1</sup> Սանտալճյան, էր. 106—107:

<sup>2</sup> Հավանական է համարվում, որ այս անունով կոչված է վանի լիճը:

<sup>3</sup> Հավանականաբար Արածանի:

թագավորաց շնորհս շնորհեցի, անոնց կյանքը խնայեցի, գերի ինկած ու շղթայի զարնված ըլլալովին, Շամաշա՝ իմ տյառնս առջև անոնց ազատութիւն տվի. աստվածոց մեծաց առջև ապագային համար և վասն ավուրց մնացելոց հպատակութիւն պահելու զանոնք երդվրնցուցի: Անոնց արքայորդիները պատանդ առի: 1200 ձի, 2000 եզ, անոնց վրա հարկ դրի և զանոնք թողուցի, որ իրենց երկիրներն երթան: 2 Սինի՝ Դաիաինեա թագավորը, որ Ասուրա՝ իմ տյառնս՝ չէր հպատակած գերի շղթայակալ իմ քաղաքս յԱսուր տարի և թողութիւն շնորհեցի անոր: Իմ Ասսուր քաղաքս՝ իր ծառա աստվածոց մեծաց ծառայելու և ապրելու աղագավ զանի թողուցի որ երթա: Երկրանց Նաիրիա լայնածավալաց բովանդակ տարածութեամբն՝ տիրեցի և անոնց բոլոր թագավորները ինձի հպատակ կացուցի»<sup>2</sup>:

Այս մանրապատում ասորական նկարագրութիւնը պարզապես այն է ցույց տալիս, որ Նաիրիի երկրներում Թիգլաթպալասարի տարած հաղթութիւնները այն աստիճան փայլուն և վճռական չէին, ինչպես ինքն է աշխատում ցույց տալ: Երկրի քաղաքական կազմակերպութեան մեջ այդ հաղթութիւնները տակնուվրայութիւններ չմտցրին: Բոլոր թագավորները նորից իրենց իշխանութեան մեջ էին, խոստանալով հարկ տալ իբրև հպատակութեան նշան: Նշանակում է, որ այդ թագավորները միանգամայն խորտակված ու մոխիր դարձած չէին, այլ հայտնի պայմաններով հաշտութիւն էին կնքել Թեգլաթ-Պալասարի հետ: Միայն Դաիաինի Սինի թագավորն էր, որ շղթայակալ գերի տարվեց Ասորեստան, երևի այն պատճառով, որ նա էր Նաիրիի դաշնակցութեան գլուխը և դիմադրութեան ղեկավարը: Սակայն նա էլ Ասորեստանում չսպանվեց կամ ընդմիջու շարքելվեց, այլ դարձյալ դաշնադրական պայմաններով միջոցով վերագարծավ իր երկիրը՝ իր թագավորութիւնը շարունակելու համար:

**6. Նաիրիի անկումը:** Թիգլաթպալասարից հետո երկու հարյուր տարուց տվել մի ժամանակամիջոց Նաիրիի երկրների բախտը անհայտութեան մեջ է մտնում: Չնայած, սակայն, փաստերի պակասութեան, կարելի է պնդել, որ Նաիրին այդ ժամանակներում դարձյալ ձեռք էր բերել իր անկախութիւնը և Ասորեստանի հարվածների վտանգին չէր ենթարկված: Այս իրողութեան վկայութիւնն այն է, որ Ասորեստանը Թիգլաթպալասարից հետո անկման շրջանի մեջ էր գտնվում, երբ նա կորցրեց այդ հուժկու թագավորի զենքով նվաճած բոլոր երկրները և զինվորական մեծ պետութեան աստիճանից իջավ երկրորդական պետութեան վիճակին:

Թուլացած պետութիւնը նորից իր նախկին դիրքը բռնելու ջանքեր է սկսում ցույց տալ Թեգլաթ-Ադար Բ թագավորի (889—885 թ. Ք. ա.) ժամանակ: Սակայն սրան վիճակված էր թագավորել միայն հինգ տարի և այդ ժամանակամիջոցում նա կարողացավ արշավել Նաիրիի վրա հյուսիս-արևմտյան ուղղութեամբ, Սալմանասարի և Թիգլաթպալասարի ճանապարհներով: Դարձյալ Սուրենատ գետի կիրճում է, որ Թեգլաթ-Ադար Բ-ը փորագրել է մի համառոտ արձանագրութիւն, որի մեջ ասում էր. «Թեգլաթ-Ադար, արքա մեծ, արքա հզոր, արքա ժողովրդոց, արքա Ասորեստանի. օժանդակութեամբ աստվածոց մեծավորաց յուրոց հոն զնաց, ահագին լեռներ՝ ի ծագմանն արևու մինչև ցմուտս արեգական նվաճեց: Բուռն անպարտելի... հոն զնաց կայծակի նման, գետեր... առաթուր կոխեց»<sup>3</sup>:

<sup>1</sup> Ասորական աստված (Անդ.):

<sup>2</sup> Անդ, էր. 98—101:

<sup>3</sup> Սանտալճյան, էր. 108:

Քեզլաթ-Ադարին հաջորդեց նրա ավագ որդի Ասսուրնազիրպալը (885—860): Ասորեստանը հարևան երկրներում այլևս ոչ մի հպատակ ազգութիւն չուներ. միայն Նաիրիի հարավային մի քանի կտորներն էին, որոնք Ղեռ մնում էին Նինվեի տիրապետութեան տակ: Ասսուրնազիրպալը իր ասացած վտիտ ժառանգութեանը մեծացնելու համար թագավորութեան առաջին տարվանից սկսեց ահագին եռանդով աշխարհակալական արշավանքներ պատրաստել և իր պատերազմական խոշոր տաղանդով հանդիսացավ Քիզլաթպալասարի արժանավոր հաջորդ, նույնիսկ ավելի ևս բարձրացրեց Նինվեի կայսրութեան փայլը ամբողջ Առաջավոր Ասիայում: Նորից արևմտյան աշխարհը Բաբելոնից մինչև Եփրատի արևելյան ճյուղը, մինչև Միջերկրական ծովը, զգաց ասորական արշավանքների ամբողջ սոսկումը: Ասսուրնազիրպալը մեծ նվաճող էր, միևնույն ժամանակ և արյունարբու մի գազան: Նրա գործարած սիստեմատիկ գազանութեանները, ավերանքները, ճիշտ որ ընդունակ էին ավելի մեծ սարսափ տարածելու, քան նրա ճակատամարտերը: Իր հետնորդները գերազանցեցին նրան ոչ միայն նվաճողական թափի, այլև գազանային արարքների նրբութիւններով և բազմազանութեան մեջ:

Սանր կացութիւն վիճակվեց մանավանդ Նաիրիին: Ասսուրնազիրպալը ամենից առաջ առանձին մեծ եռանդով գործում էր մանավանդ այս երկրի դեմ և իր թագավորութեան ընթացքում շորս անգամ արշավեց նրա վրա, ստակալի ավերանքների ու կոտորածների ենթարկելով երկիրը: Նա շատ լավ գիտակցել էր այս լեռնաշխարհի կարևոր նշանակութեանը իր ապագա գործունեութեան տեսակետից և ամենից առաջ, և ամենից շատ աշխատում էր իրականացնել Նաիրիի կատարյալ նվաճումը: Առաջին անգամ 884 թվականին էր, որ նա հարձակվեց վերին Արածանիի կողմերում Նումմի երկրի վրա և այդտեղից արշավելով դեպի Ուրմիայի ծավր, վերահաստատեց ասորական տիրապետութեանը Խուբուշկիա և այլ հարևան երկրներում: Զարմանալին այն է, որ ահեղ աշխարհակալի ուժը վճատութեան և լքում չէր առաջացնում այն երկրներում, որոնց վրա դնում էր նա իր թաթը: Կան երկրներ, որոնք ապստամբում են նրա դեմ: Ապստամբվողների թվում են նախ և առաջ այն ասորական գաղութները, որոնք հաստատված էին Տիգրիսի և Եփրատի մեջտեղերում (այժմյան Դիարբեքիի կողմերը) և պաշտպանում էին դեպի Ասորեստան տանող լեռնային անցքերը (Տավրոսի դռները, ինչպես կոչում էին հին հույները): Հնազանդեցնելով ապստամբներին, Ասսուրնազիրպալը առանձնապես ամրացնում է Տոջհա քաղաքը, որ ինչպես տեսանք, շատ կարևոր դեր էր խաղում սահմանագլխի վրա: Իսկ հաջորդ տարին, 883-ին, ասորական թագավորը մտնում է Նաիրիի երկրները արևմտյան կողմից, այսինքն Տիգրիսի հովտով: Նաիրյան դաշնակցութեանը արդեն առաջվա պես ուժեղ չէ, բայց և այնպես, Ասսուրնազիրպալը առանց դժվարութեանների չէր, որ նվաճեց բոլոր այդ երկրները: Նա սահմանում է հարկային նոր սիստեմ: Բայց կա ավելի վատը, որ արդեն լուրջ սպառնալիք է տեղային թագավորների անկախութեանն. թագավորը կուսակալների և կառավարիչների է նշանակում երկրի զանազան կողմերում: Երրորդ արշավանքը տեղի ունեցավ 880-ին, իսկ չորրորդը՝ 867-ին: Այս արշավանքների մանրամասնութեանները ամենից լավ կարող է պատմել ինքը այդ արշավանքների հրամանատարը: Ուստի խոսքը տանք Ասսուրնազիրպալին.

«Ասսուրնազիրպալ՝ հզոր թագավոր, արքա բովանդակութեան շորից կողմանց աշխարհի: Կատավարութեանս առաջին տարին, պատերազմիկ կառքերս

<sup>1</sup> Maspero, „Hist.“ n, t. III, p. 6:

ու զորքս ժողովեցի արշավեցի սեպ ճամբայներն, դժվարին լեռներն, որոնք գնացից կառացս ու զորացս անհարմար էին: Նումմի երկրին վրա գնացի. 'Գուբբի' իրենց քերդաքաղաքին, Սուրբա, Աբուբու, Արուրա, Արուբի ամուր քաղաքներուն, որոնք Ուրինի, Արունի, Բոխնի կոչված ահագին լեռներուն մեջ կգտնվին տիրեցի, զպատերազմողս նոցա բազմաթիվս սպանի, ավարնին, ինչքերնին, արջառնին հափշտակեցի. զորքն փախավ, դժվարին լեռան մը վրա ամրացավ: Լեռն կարի դժվարին էր. անոնց ետեան փութով հետամուտ չեղաւ լեռան գագաթն երկաթի դաշույնի մը ծայրին պես կբարձրանար, և երկնից թևավոր թռչուն մ'անոր շմտեհար: Նման բունո ուղիւնի (թռչնո) իրենց ամրութեանը նույն լեռան վրա շինած էին: Ուր որ իմ հարցս մեջն և ոչ մի թագավոր մտած էր, Երեք օրվան մեջ դուցազնն մագլելով(?) լեռան վրա ելավ՝ քաջասրտութեամբ կռվո ցանկանալով: Վեր ելավ, իր ոտքերովն լեռը կոխկռտեց, անոնց բույնը ջախջախեց, բանակնին խորտակեց: Անոնց պատերազմողներն 200-ը զենքով հերկիրը կործանեցի. անոնց մեծաքանակ ավարը՝ ոչխարաց երամակներու պես առի տարի: Անոնց արյամբը՝ լեռն ասրի նման ներկեցի. իրենց մնացորդները լեռանց ծործորներու և անձուկներով(?) մեջ ոչնչացուցի. անոնց քաղաքներն ավերեցի, քանդեցի, հրով այրեցի: Նումմի երկրն ելա Կիրրուրի երկիրը վար իջա: Հարկս Կիրրուրի, Արմիսի, Միմիրա, Ուլմանիա, Ադալս, Խարգա և Խարմասա երկրներն ձիեր, ջորիներ(?), արջառ, ոչխարներ, փնի, պղնձի անոթներ իբր իրենց հարկն ընդունեցա: Անոնց վրա կողմնակալներ դրի: Մինչդեռ զորքս Կիրրուրի մեջ կգտնվեր, Ասուրա՝ իմ տյառնս պայծառութեանն զԿիրզանացին և զԽուբուսկացին հերկիր կործանեց: Զիեր, արծաթ, ոսկի, կապար, պղինձ, պղնձի ամաններ ի սակ հարկի առջև բերին: Կիրրուրիեն ճամփա ելա, Խուբուս քաղաքին կիրճին մեջ մխեցա, որ Կիրիսի երկրին դիմացն է: Խադու, Խատարու, Նիստուն, Իրբիդի, Միտքիա, Արձանիա, Տիլա, Խալուա քաղաքներուն՝ որոնք Կիրիսի երկրին Ուսու, Արուա, Արարդի ահագին լեռներուն մեջ կգտնվեին, տիրեցի, անոնց բազմաթիվ զորքը սպանեցի, ավարնին և ինչքերնին առի տարի:

Զորքն փախավ: Նիստունի դիմացը դուրս ցցված լեռնային ժայռ մը բլուրնեց, որ երկնից ամպի մը նման, երկնքի դեպի վար կհակեր: Ուր որ թագավորաց իմ հարցս մեջն և ոչ մեկն մտած էր, իմ զինվորներս թռչնոց պես անոնց վրա խոյացան: Անոնց պատերազմող զորքեն 260-ը զենքով դիաթավալ կացուցի: զլուխնին կտրեցի, անոնցմե սյուն մը կառուցի: Անոնց մնացորդն թռչնոց պես լեռան գագաթան վրա իր բույնը շինեց: Անոնց ավարն ու ինչքը լեռան մեջն վար բերել տվի քաղաքները՝ որ փ մեջ ահագին ու թավուտ լեռանց էին, ավերեցի, քանդեցի, հրով այրեցի: Մարդիկն՝ որչափ բազմութեամբ, որ զինուցս երեսն փախած էին, վար իջան, ոտքերու փարվեցան: Անոնց վրա տուրքեր, հարկեր ու վերակացուններ դրի: Նիստունի քաղաքպետը՝ Բուբայի որդին՝ զԲուբու Արքաիլի մեջ մորթազերծ ըրի, պատի մը մեջ հյուսեցի: Նույն ատեն իմ անձիս պատկերը շինեցի. իմ կարող զորութեանս անոր վրան գրեցի, էթի լեռան վրա՝ Ասուրնազիրպալու քաղաքին մեջ՝ աղքերական տեղը զայն կանգնեցի: Նույն անվանակիր տարվույն մեջ Ար ամսույն 24-ին օրն ըստ հրամանի Ասուրա և Խատարա աստվածոցն մեծաց՝ տերանց իմոց Նինվեեն հլա, Նիբուր և Պաձատու ահագին լեռներուն ոտքը գտնվող քաղաքաց վրա արշավեցի: Ատկուն, Ուսխու, Պիլազի վիճակներուն մեջ 20 քաղաքի տիրեցի. անոնց բազմաթիվ պատերազմողները սպանեցի. ավարնին և ինչքերնին առի տարի. քաղաքները հրով այրեցի: Մարդիկն որչափ բազմութեամբ որ իմ վրա

նուցս երեսն փախած էին, վար իջան, ոտքերուս փարվեցան. անոնց վրա տուրքեր դրի: Նիրբուր ու Պաճատու լեռանց ստորոտներն եղող քաղաքներնն հլա Տիրբուրի վրայն անցա, Քումմուխի մոտեցա...

«Նույն անվանակիր տարին և իմ նինովե գտնված ատենս լուր բերին, թե արք Ասորեստանյաք և Խուլաի՝ անոնց քաղաքապետն, զորոնք Սալմա-նասար Ասորեստանի թագավորն՝ ինծմե առաջ թագավորող իշխան մը Խալդի-դիպխաչի մեջ բնակեցուցած էր ապստամբեցան, իմ թագավորական քաղաքս վրամդամուսա առնելու համար հառաջ խաղացին: Ասուրա, Շամասս և Ռամ-մանա, իմ վստահությանս աստվածոց հրամանավն, ժողվեցի իմ պատերազ-միկ կառքերս և զորքս: Սուրնատ գետուն շաղբակունքը՝ տեղի պատկերաց Քազլաթ-Պալասարա և Քազլաթ-Ադարա Ասորեստանի թագավորաց՝ իմ հարցս, իմ արքայական անձինս մեկ պատկերը շինեցի, և զայն անոնց քովը կանգնեցի: Նույն ատեն իձալա երկրեն ի սակ հարկի արջառ, ոչխարներ և գինի ընդունեցա: Հառաջ խաղացի դեպի Կասիարի, Կինաբուփն, Խուլաիա բըր-դաքաղաքին մոտեցա: Չորացս հարձակմամբն, բուն ճակատամարտյուս խո-յացա, քաղաքին տիրեցի: Անոնց պատերազմողներն 600-ը զինուք հերկիր կործանեցի. 3000 գերի կրակի մեջ այրեցի. իբր պատանդ՝ անոնցմե և ոչ մէկը կենդանի թողուցի: Չխուլաի, անոնց քաղաքապետը կենդանվույն ձեռք ձգեցի: Անոնց դիակներն ի ցից հանեցի. մանչ ու աղջիկ տղաքնին խարուկի մեջ այ-րեցի: Չխուլաի անոնց քաղաքապետը մորթագերծ ըրի. Դամդամուսայի պարս-պին մեջ զանի հյուսեցի. քաղաքն ավերեցի, քանդեցի, հրով այրեցի: Մարի-րու քաղաքին և իր վիճակին տիրեցի. անոնց պատերազմողներն 50-ը զինուք հերկիր կործանեցի. անոնցմե բռնված 200 գերիները կրակի մեջ այրեցի: 332 զինվորս երկրին Նիրբուր՝ դաշտին մեջ կովելով սպաննեցի. ավարնին, արջառ-նին և ոչխարնին առի տարի: Նիրբու երկրին՝ որ Ուխիթա լեռան ստորոտն է, դաշնակցությունը մը ըրած ըլլալով՝ իրենց Տիլա ամրոցին մեջ քաշուած էին. Կինաբուեն հլա Տիլաին մոտեցա. քաղաքն խիստ ամուր էր. 3 պարիսպ զանի կը շրջապատեր: Մարդիկ իրենց հզոր պարիսպներուն և բազմաթիվ զորացը վրա վստահացան. վար չեկան, ոտքերուս շփարվեցան: Կովով և ճակատամար-տիվ քաղաքին վրա հարձակեցա, տիրեցի: Անոնց 3000 պատերազմող մար-դիկը զինուք հերկիր կործանեցի. անոնց ավարը, ինչքը, արջառը, անոնց ոչ-խարներն առի, շատ մը գերիներ կրակի մեջ այրեցի. շատ մը մարդիկ կեն-դանվույն ձեռք ձգեցի. ոմանց ձեռքերը և թևերը (?) կտրեցի, ոմանց քիթը (?), ապկանջները (թևերը?) կտրեցի. շատ մը մարդոց աչքերը բրեցի. կենդանի եղողներն աշտարակ (?) մը կանգնեցի. մեկ մ'ալ կառափներն կանգնեցի: Մառերու վրա՝ իրենց քաղաքին վիճակին մեջ՝ անոնց գլուխները վարսեցի. իրենց արու տղաքը, աղջիկ տղաքը կրակի մեջ այրեցի. քաղաքն ավերեցի, քանդեցի, հրով այրեցի, ոչընչացուցի: Նույն ատեն Նիրբի երկրին քաղաքնե-րը, անոնց ամուր պարիսպներն ավերեցի, քանդեցի, հրով այրեցի: Նիրբինն հլա Տուխաին մոտեցա: Տուխան նորեն գրավեցի, անոր հին պարիսպը կըր-ծանեցի. տեղը մաքրեցի, հիման հասա: Նոր պարիսպ մը ի հիմանց մինչև ցկատարն կանգնեցի, ավարտեցի. (գեղեցիկ կերպով) կարգի դրի: Իմ արքա-յական բնակությանս համար հոն պալատ մը հիմնեցի. դռան թևերն ավարտե-ցի, զանոնք իրենց դռան վրա կանգնեցի: Նույն պալատը կանգնեցի ի հիմանց մինչև ցտանիս. զանի ավարտեցի. պիլի շողուն քարն իմ ան-ձինս պատկերը շինեցի, գկարողություն շքեղագույն զորությանս՝ ու Նաիրիի երկրներուն մէջ կատարած դուցազնական գործոցս պատմությունն անոր

վրան գրեցի, զանի Տուխայի մեջ կանգնեցի: Տախտակ մը գրեցի, անոր պարսպին վրա գետեղեցի: Վատթարյալ Ասորեստանյանները՝ որոնք կարո-տության և քաղցի պատճառով ի լերինս հայլս դեպի Սուպրի ելած էին, ետ բերի, Տուխայի մեջ հաստատեցի: Նույն քաղաքն իմ վերագույն իշխանու-թյանս տակ դրի: Նիրբու երկրեն ընթեղներն ու հարդ հոն դիգեցի. Նիրբուին մնացորդներն՝ որոնք իմ զինուցս երեսն փախած էին, վար իջան, ոտքերուս փարվեցան: Իրենց քաղաքներուն և գեղեցիկ շենքերուն մէջ զանոնք բնակե-ցուցի: Նաիրիի երկրներուն վրա կողմնակալներ դրի: Նաիրիի երկրներն դառնալուս ատեն՝ Նիրբու երկրին՝ որ ի մեջ Կասիարի լերինն՝ ապստամբած էր. իրենց քաղաքներն 9 հատ թողած էին, իրենց Իսպիլիթրիա ամրոցին և դժվարին լեռան վրա. կվստահեին: Լեռան գագաթներուն վրա հարձակեցա, տիրեցի, ահագին լեռներու մէջ անոնց պատերազմողները սպաննեցի, անոնց արյամբն ասորի պես լեռը ներկեցի: Մնացյալները լեռան ծործորներուն և ան-ձուկներուն մեջ ոչնչացուցի: Անոնց ավարն և ինչքը առի. անոնց պատերազ-մողաց կառափունքը կտրեցի. անոնց կառափներովն սյուն մը կանգնեցի. մանչ ու աղջիկ տղաքնին խարուկի մեջ այրեցի: Բուլիանի քաղաքին կիրճին մեջ մտա. Լուքիա գետունը եզերքը հասա: Հառաջ խաղալուս ատեն՝ կիրճին մեջ եղող Կիրիի երկրին քաղաքներուն տիրեցի, անոնց բազմաթիվ պատերազմող-ները սպաննեցին. անոնց կողոպուտն առի. քաղաքները կրակով այրեցի...

Խուրուկացիներն ու Կիրզանցիներն երկուղն վեհափառության Ասուրա՝ տյառն իմո, նկուն ըրավ. արծաթ, ոսկի, ձիեր, գործված զգեստներ, արջառ, ոչխարներ, գինի ի սակ հարկի և տրոց իմ առջևս բերին... Իստարատի երկրին մխեցա. Կիպակի քաղաքին մեջ քանակեցա, արջառ, ոչխար, գինի, պղնձի ամաններ ի սակ հարկի Կիպակին ընդունեցա: Կիպակինն հլա Մատիատի քաղաքը մոտեցա. Մատիատին՝ յուր գերեզմանաց քաղաքավն՝ տիրեցի. անոր պատերազմողներն 2800-ը զինուք հերկիր կործանեցի. անոնց մեծա-քանակ ավարն առի տարի: Որչափ մարդիկ որ զինուցս երեսն փախած էին՝ ոտերուս փարվեցան: Չանոնք իրենց քաղաքներուն մեջ բնակեցուցի. հարկ ու տուրք և «ուրասի» պաշտոնյա մը զոր զորացուցի, անոնց վրա դրի: Անձինս պատկերը շինեցի. հզոր զորությունս անոր վրան գրեցի, Մատիատի մեջ կանգնեցի... Կասիարի ահագին լեռներուն մեջ վեց օր անցուցի դժվարագնաց երկիր մը, որ պատերազմիկ կառքերու և զորաց հառաջխաղացման հարմար չէր: Երկաթի բրինձներով լեռը ձեղքեցի. անագապղնձի թիթոլ զանի հարթ հավասար ըրի. կառքերն ու զորքը հառաջ խաղացուցի: Կասիարի լեռան մեջ եղող դաշտին (?) քովի քաղաքներուն մեջ արջառ, ոչխարներ, գինի, պղնձի ամոթներ, պղնձի կաթսաներ ընդունեցա: Կասիարու լեռը կտրեցի անցա. երկ-րորդ անգամ Նաիրիի երկրներուն վրա իջա: Սիգիսա քաղաքին մեջ բանակս դրի: Սիգիսայեն հլա, Մադարա քաղաքին մոտեցա, որ Տուբուզիի որդվույն՝ Լապտուրիի ամրոցն էր: Քաղաքն խիստ ամուր էր. 4 պարիսպ զանի կը բո-լորեին: Հարձակելով քաղաքն առի. հզոր զինուցս առջև զարհուրեցան. անոնց ինչքը, անոնց ստացվածքը, անոնց տղաքը, իբր փրկանք (?) անոնցմե առի հազատություն անոնց կենաց: Անոնց թողություն շնորհեցի: Հարկեր ու տուր-քեր, «ուրասի» պաշտոնյա մը անոնց վրա դրի: Քաղաքն ավերեցի, քանդեցի, ավերած ու խոպան երկիր դարձուցի... Կասիարի լեռան ստորոտը՝ Տուբուզիի որդվույն Լապտուրիին 60 քաղաքները, ամրոցները ավերեցի, քանդեցի, փլա-տակաց կույտ ու խոպան երկիր դարձուցի: Վստահացյալ ՀԱսուր՝ իմ տերս, թեթև (?) մարտակառքերովս և լավագույն հեծյալներովս Տուխանն ճամբա

ելաւ Լաստերով Տիգրիսի վրայն անցաւ. բոլոր գիշերը խաղացի գնացի. Դիր-  
րացիոց ամրոցն Պիտուրային մտեցաւ: Քաղաքն խիստ դժվարամատույց  
էր.— 2 պարիսպ զանի կը շրջապատեին. պատվարն լերան մը գագաթան պես  
բարձր էր: Ասուրա՝ իմ տյառնս՝ բարձր օժանդակութեամբն, զորացս հարձակ-  
մամբն և հուզյալ ճակատամարտուս անոնց հետ պատերազմեցաւ: Օդո զից  
Ռամմանի նման՝ 2 օր մինչև արևուծագունն անոնց վրա որոտացի: Անոնց  
վրա կրակ անձրևեցի. սաստկութեամբ և զորութեամբ զորքս թռչնոց խուռն-  
ընթաց բազմութեան (?) նման անոնց վրա սրացան: Քաղաքին տիրեցի. անոնց  
մարտիկներն 800-ը զենքով հերկիր կործանեցի. անոնց կառափները կտրեցի.  
կենդանի մնացող շատ մը մարդիկ գերի բռնեցի. մնացյալները կրակի մեջ աշ-  
րեցի: Անոնց ճոխ կողոպուտն առի: Կենդանի մնացողներն և կառափունքն  
կոթող մը քաղաքին դռան առջև կանգնեցի, 700 մարդիկ իրենց քաղաքին դռան  
բովցիցերու վերա վարսեցի, քաղաքն ավերեցի, քանդեցի, ավերած ու խոպան  
երկիր դարձուցի: Անոնց մանչ տղայքը, աղջիկ տղայքը, կրակի մեջ այրեցի:  
Մատնի լերան կրճի բերանը գտնվող Կովկունու քաղաքին տիրեցի. 700 պա-  
տերազմող նկուն ըրի գինուք. անոնց ճոխ կողոպուտն առի: Դիրա երկրին մեջ  
50 քաղաքի տիրեցի. անոնց պատերազմողները սպաննեցի. ավարնին առի  
տարի: 50 մարդ կենդանվույն գերի բռնեցի. անոնց քաղաքներն ավերեցի, քան-  
դեցի, կրակով այրեցի. անոնց վրա իմ ճոխութեանս պայծառութեամբ սփռե-  
ցի: Բիտուրայն ելաւ, հանդիպակաց Կիրիսի երկրին Արբակի քաղաքին վրա  
իջաւ: Իմ արքայական վեհափառութեանս զարհուրեցան. իրենց քաղաքներն  
և զորավոր պարիսպները թողուցին. կյանքերնին ազատելու համար՝ Մատնի  
ահագին լերան վրա ելան: Անոնց հետամուտ եղաւ. դժվարագնաց լեռներու մեջ  
անոնցմե 1000 պատերազմող մարդ խորտակեցի. անոնց արյամբն լեռը ներ-  
կեցի: Անոնց դիակներովը զժորժորս և զանձուկս լերանց լցուցի: 200 մարդ կեն-  
դանվույն գերի բռնեցի. ձեռքերնին կտրեցի. 2000 հոգի գերի տարի. անոնց ար-  
օտան և ուխարները անհամար թվով առի տարի: Արբակի քաղաքին, Իյայա և Սա-  
լանիբա ամրոցներուն տիրեցի (անոնց) պատերազմողները սպաննեցի, կողո-  
պուտնին առի: Նաիրիի երկրներուն մեջ 250 քաղաք իրենց զորավոր պարիսպ-  
ներովն ավերեցի, քանդեցի, ավերած ու խոպան երկիր դարձուցի: Անոնց  
երկրին հունձքն հնձեցի, ցորենն ու հարդ Տուսխայի մեջ համբարեցի»<sup>1</sup>:

Այս բոլոր հարվածներով ասսուրական դաժան աշխարհակալը պատրաս-  
տում վերջացնում է իր հյուսիսային մեծ ծրագիրը: Ապահովվել Նաիրիի կողմից,  
հաստատուն կռվան դարձնել այդ լեռնաշխարհը՝ արևմուտքում գործողութեան-  
ներ սկսելու համար— այս է այդ ծրագիրը: Եվ երբ Նաիրին արդեն բոլորովին  
խաղաղացված և հավատարիմ հպատակութեան մեջ վերահաստատված էր, այդ  
ժամանակ Ասսուրնազիրպալը ձեռնարկեց արևմտյան երկրների նվաճման:  
Նրան հաջողվեց այդ ծրագիրը, որովհետև նրա հենակետը ամուր էր: Նաիրիի  
բարձրութեաններից էր նա վճռում Սիրիայի, Պաղեստինի և Փյունիկիի ճակա-  
տագիրը: Եփրատի արևմտյան կողմում ապրող հեթիթական ազգերը թուլա-  
ցած էին և չէին կարող կանգնեցնել նույն այդ ազգերի պաշտպանողական  
գծի ձախ թևի (Նաիրիի) վրա հենված և այդտեղից առաջացող Ասորեստանը:  
Ասսուրնազիրպալը առաջինն էր իր երկրի թագավորներից, որ նվաճեց Աի-  
րիան, Փյունիկիի քաղաքները և իր զենքն ընկղմեց Միջերկրական ջրերի մեջ:  
Եվ թվում էր, թե հեթիթական աշխարհը վերջնականապես տեղի էր տալիս սե-  
մական աշխարհին, խոստովանելով իր կատարյալ անուծությունը:

<sup>1</sup> Մանալեյան, էր. 108—122.

## Գլուխ երրորդ

### Ո Ի Ր Ա Ր Տ Ո Ւ

1. ԳԻՐԵՂ: 2. ԱՐԱՄԵ (մոտ 860—843 թ. թ. ա.): 3. ՍԱՐԴՈՒՐԻ Ա. (835—820 թ. թ. ա.): ՎԱՆ:  
4. ԻՇԳՈՒՐԻՆԻ (820—800): 5. ՄԵՆՈՒԱ Ա. (շուրջ 800—780 թ. ա.): 6. ԱՐԳԻՇՏԻ Ա. (մոտ  
780—755): 7. ՍԱՐԴՈՒՐԻ Բ. (755—730): 8. ՌՈՒՍԱ Ա. (730—714): 9. ԱՆԿՈՒՄ: 10. ՈՒ-  
ՐԱՐՏԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ: 11. ԿՈՐԾԱՆՈՒՄ:

1. Գիրքը: Բայց թե՛ն վաղ էր այդպիսի մի վիճակի հասնելու համար:  
Ասսուրնազիրպալի այս ահեղ շարժումների ժամանակ, նույն այդ Նաիրիի  
աշխարհում, զլուս ճկած և պարտություն մատնված այդ ազգաբնակչության  
մեջ նկատվում է մի կենսունակ երևույթ, մեկը մարդկային կյանքի այն շար-  
ժումներից, որոնք իրենց անակնկալ արտահայտությամբ, իրենց զարմանալի  
հաջողակությամբ և խոշոր հետևանքներով հրաշքի նմանություն բերող բա-  
ներ են: Ամբողջ հեթիթական աշխարհի համար, ինչպես տեսնում ենք, զբր-  
ված էր կյանքի և մահվան հարցը: Ցեղը կենսունակություն ունի՞ ասորական  
ահավոր ուժի դիմաց պարելու, ինքն իրեն պաշտպանելու համար: Պա-  
տասխանելու դուրս է գալիս մի փոքրիկ երկիր, որ Նաիրիի դաշնակցության  
մեջ իր հատուկ անունն ունի: Ասորական արձանագրությունների մեջ Ասսուր-  
նազիրպալի մասին ասված է. «Սուրենատ գետոյն աղբերակունքն մինչև  
Ուրարտի յուր ձեռքովն տիրեց»<sup>1</sup>: Առաջին անգամն է այսպիսի մի անուն հրա-  
պարակ գալիս— Ուրարտի կամ հաճախագույն՝ Ուրարտու: Թիզլաթպալա-  
սարը չէ ճանաչում այդպիսի մի երկիր Հայկական Բարձրավանդակում: Եվ այս  
հանգամանքը իրավունք է տալիս ենթադրելու, որ Ուրարտուն կազմակերպվել  
է Թիզլաթպալասարից հետո, ասել է 11—9-րդ դարերի արանքում:

Ահա այս փոքրիկ երկիրն է, որ պատմության ասպարեզ է իջնում մի մե-  
ծագործ առաքելությամբ— միացնել հյուսիսային ազգերը Ասորեստանի դեմ:  
Նպատակը ինքնապաշտպանություն չէ միայն: Եթե լուր ինքնապաշտպանողա-  
կան լիներ այդ խիզախ առաջխաղացությունը, Ուրարտուի դերը կլիներ տեղա-  
կան, մասնավոր: Բայց Ուրարտուն մոտ հարյուր տարի ահեղ մրցության  
մեջ էր Ասորեստանի դեմ և Ասորեստանը մի քանի անգամ հասավ կորստի  
ծայրին: Այստեղ է ահա Ուրարտուի այն դերը, որ արդեն տիեզերական պատ-  
մությանն է պատկանում: Այդ պայքարը համաշխարհային տիրապետության  
համար էր: Հեթիթական աշխարհը Ուրարտուի միջոցով մղում էր պայքար՝ թե  
ինչ պիտի լինի Արևմտյան Ասիան— հեթիթական թե սեմական<sup>2</sup>:

Այս զարմանալի ընդունակ ցեղը իր զարգացման ճանապարհն էր մտել  
ամենայն թափով, երբ նրան գտավ և բաց արավ Ասսուրնազիրպալի որդին

<sup>1</sup> Մանալեյան, էր. 120:

<sup>2</sup> Никольский, «Клинооб. надписи Ван. царей в пред. России», с. 390.



ու հաջորդը, Սալմանասար Բ (860—825 Ք. ա.): Բայց նախ հարկավոր է մեզ ճշտել Ուրարտուի իսկական տեղը: Կարևոր է այս մանավանդ այն պատճառով, որ եվրոպացի շատ գիտնականներ զոհ են դարձել մի թյուրիմացության, որ հայկական աղբյուրներից է բխում:

Եվրոպացի գիտնականներից շատերը (օրինակ՝ Մասպերո) բուն Ուրարտուն գետեղում են վերին Արածանիի հովտում, իսկ ուս գիտնական Նիկոլսկին—Արաքսի հովտում, այնտեղ, ուր Արարատյան դաշտն է: Երկու պնդումների համար էլ զխավոր փաստն այն է, որ Ուրարտուն համանիշ է Արարատ անվան, ապա ուրեմն հայոց Արարատ սարն էլ պիտի ցույց տա Ուրարտուի տեղը, մանավանդ որ հին Վայաստանն ուներ և Այրարատ նահանգ, որի սահմանների մեջ մտնում էր և Արածանիի վերի հովիտը: Ավելացնենք այս հանգամանքի վրա և այն, որ ձերոգոտի հիշատակած ալարոզները («Ուրարտու»-ների աղավաղված ձևը) նույնպես համարվում էին Արաքսի հովտում բնակվողներ:

Այս փաստերն այնքան կաշկանդիչ են եղել հետազոտողների համար, որ նույնիսկ Նիկոլսկին, խորաթափանց մի ուսումնասիրող, ստիպված է եղել ընկնել հակասությունների մեջ և ծածկել նրանց անհամոզիչ կարկատաններով: Նրա պատմվածքով դուրս է գալիս, որ Արաքսի հովտում ի սկզբանե ապրող ուրարտացիները շարժվեցին դեպի հարավ, Վանը դարձրին իրենց մայրաքաղաք, որպեսզի ավելի հաջողությամբ պատերազմեն Ասորեստանի դեմ, ապա Վանից նորից վերադարձան Արաքսի հովիտը, այսինքն իրենց բուն հայրենիքը և նորից նվաճեցին նրան<sup>1</sup>:

Այս մոլորությունն առաջանում էր այն հանգամանքից, որ հայոց գրականության մեջ եղած փաստերը բավականաչափ լուրջ կերպով չէին ուսումնասիրված. պրոֆեսոր Քերովբե Պատկանյանը վաղուց է ցույց տվել, թե Արարատ անունը համեմատաբար հետին ժամանակներում<sup>2</sup> է հատկացվել Արաքսի հովտի Մասիս սարին և թե այն երկիրը, որ սեմական ազգերը (և հատկապես Աստվածաշնչի պատմության մեջ) անվանում էին Արարատ, գտնվում էր Վանի լճի շրջականներում: Այս ցուցմունքը պարզապես հետևում էր Փավստոս Բյուզանդացու պատմությունից, որի մեջ ասված է թե Կորդվաց աշխարհում կար Այրարատյան տեղություն և նրա մեջ՝ Արարադ սար, որի վրա կանգ էր առել Նոյի տապանը<sup>3</sup>: Նույն այս Արարադն է երևան գալիս Մովսես Խորենացու բերած անգիր զրույցների մեջ, ինչպես մի տեղ, ուր կանգ է առել տապանը<sup>4</sup>: Որ հրեական ավանդությունն էլ հենց այս Կորդվաց Արարատն ունի ի նկատի ջրհեղեղի պատմության մեջ, ցույց է տալիս և Մենդոց գիրքը: Նրա ասելով, Նոյի որդի Սեմի որդիներից մեկը Արփաքսադն էր<sup>5</sup>, իսկ այս անունից առաջացած է համարվում Առապախիտիդա երկիրը, որ համապատասխանում է Վանի լճի դեպի արևելք գտնվող Աղբակի գավառին, այնպես որ երկար ժամանակ գիտնականները (որանց մեջ և հռչակավոր Ռենանը) Հայաստանի այս անկյունն էին համարում սեմական ցեղերի օրրանը:

Այս կողմերում էր, ուրեմն, Վանի լճի արևելյան և հարավ-արևելյան ուղղությամբ, այն երկիրը, որ Փավստոս Բյուզանդացին անվանում է «Այրարատյան գավառ» և որ ասորական սեպագրությունների մեջ հայտնի է «Ուրարտու» անունով: Ուրարտուի աշխարհագրական դիրքը որոշելուն նպաստում են և ասորական սեպագրությունները: Սալմանասար Բ թագավորը, նկարագրելով իր արշավանքը Ասորեստանից Ուրարտու, գրում է. «Խուբուշկիա քաղաքն էլա, Ուրարտացի Արամի բերդաքաղաքն Սագունիայի մոտեցա»<sup>1</sup>: Խուբուշկիան, ինչպես գիտենք, Ջաբ գետերի մեջտեղն էր գտնվում, Վանի լճից դեպի հարավ-արևելք:

Ուրարտուի դիրքը Կորդվաց լեռնաշխարհից դեպի հյուսիս և Վանի լճից արևելք մինչև այժմյան պարսկական սահմանագլուխը ընդունված է արդեն և եվրոպական գիտնականներից մի քանիսի կողմից<sup>2</sup>: Ուրեմն այստեղ գաղթեց արևմուտքից հեթիթական այն ժողովուրդը, որ երկրի անունով էլ կոչվեց արարտացի<sup>3</sup>: Արաքսի հովտում դեռ այդ ժողովուրդի սկզբնավորությունը ոչ մի հիմք չունի, քանի որ, ինչպես տեսանք, շատ հետին ժամանակներում էր, որ հարավից, Վանի լճի ավազանից, հյուսիս, Արաքսի ավազանը, փոխադրվեց ոչ միայն Արարատ անունը, որ երկրի անունն էլ էր, սարի անունն էլ, այլ նույնիսկ և այն հին ավանդությունները, որոնք կապված են եղել այդ հարավային ցեղերի հետ<sup>3</sup>:

Իրենք ուրարտացիները իրենց երկիրը սովորաբար Ուրարտու չէին անվանում: Հավանական է, որ Խալդի աստծուն երկրպագող երկրները Խալդիին էին կոչվում, ինչպես և ժողովուրդը, ընդհանուր առմամբ, Խալդ: Մասնավոր անունը պետք է եղած լինի Բիայնա, որ միշտ գործ է ածվում ուրարտական արձանագրությունների մեջ իբրև անուն այն երկրի, ուր գտնվում էր Վան քաղաքը: Հայտնի է, որ հարևան Մուսասիր երկրի մայրաքաղաքի Մուսասիր անունն էլ գործածական չէր ուրարտացիների մեջ, որոնք անվանում էին նրան Արդինի: Պետք է, սակայն, իմանալ, որ մի կողմի գործածական անունները անծանոթ չէին մյուս կողմին: Այսպես, Սեյսը կարծում է թե ասորական արձանագրությունների մեջ եղած Բիթանու անունը կարող է ներկայացնել ուրարտական Բիայնա անվան ձևը<sup>4</sup>, իսկ Նիկոլսկին ենթադրում է, թե Սևանի լճի մոտ Ջախալուի արձանագրության մեջ կարդացվող Ուրտա հինի անունը Ուրարտու անվան վանյան ձևն է<sup>5</sup>:

Արագ կազմակերպվելով իբրև պետական-կուլտուրական ուժ, ուրարտացիները, սկսեցին տարածել իրենց ազգային իշխանությունը, անդադար ձրգտելով դեպի հյուսիս, դեպի այն բարեբեր երկրները, ուր ապրում էին իրենց ցեղակից ժողովուրդները: 9-րդ դարի կեսում (Ք. ա.) նրանք մտնում են պատմության լուսի մեջ: Եվ այդ ժամանակ նրանք առաջացած էին արդեն մինչև Արածանիի վերին հովիտը:

**2. Արամե (մոտ 860—843 թ. Ք. ա.):** Սալմանասար Բ-ի (860—825 թ. Ք. ա.) ժամանակ Ուրարտուն սկսում է իր վերին աստիճանի կարևոր քաղաքական դերը: Սալմանասարը իր Երկարատև թագավորության մեծագույն մասը

<sup>1</sup> Տե՛ս «Клин. над. Ван. царей, откр. в пред. России».  
<sup>2</sup> Պրոֆեսոր Զ. Գեյցերի կարծիքով՝ 9 կամ 10-րդ դարից ոչ առաջ («Համառոտ պատմություն հայոց», թարգմ. Զ. Գալսեմբերյան, Վիեննա, 1897, եր. 6):  
<sup>3</sup> Փավստոս, Գ. Ժ.  
<sup>4</sup> Խորենացի, Ա, 2, Տե՛ս և Մ. Աբելյան, «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու պատմության մեջ», Վարդաշապատ, 1899, եր. 183:  
<sup>5</sup> Մենդոց, Ժ, 22:  
<sup>6</sup> Теодор Нельдеке, «Семитские языки и народы», М., 1903, с. 26—27:

<sup>1</sup> Մանասյան, եր. 141:  
<sup>2</sup> Seyce, „Les Hetéens“, p. 50, Գեյցեր, «Համ. պատմ. Հայ.», եր. 3: Б. Тураев, «История древнего Востока», ч. II, П., 1913, с. 47.  
<sup>3</sup> Ս. Կանայան, «Անհայտ գավառներ հին Հայաստանի», էջմիածին, 1914, եր. 72—88:  
<sup>4</sup> «Բանասեր», 1899, եր. 377:  
<sup>5</sup> Никольский, «Клин. над. Закав.», с. 177:



անց կացրեց պատերազմական արշավանքների մեջ: Միայն Եփրատի մյուս կողմում իր հոր նվաճած երկրները հնազանդութեան մեջ պահելու համար նա ամեն տարի փո բանակը անց էր կացնում այն կողմերը և այդպիսի արշավանքներից նա հականե հանվան հիշում է 21 հատ: Այս թիվը բավական է ցույց տալու համար, թե որքան համառ դիմադրութիւն էր ցույց տալիս հեթեթական աշխարհը Ասորեստանի ահավոր ուժին: Այդ դիմադրութեան մեծապես նպաստում էր Ուրարտուն, ուր Սալմանասարի ժամանակ թագավորում է Արամե անունով մեկը: Մենք տեսանք, որ ասորական բանակները նախորդի բարձրավանդակի վրա հենվելով պիտի հարձակվեին արևմտյան աշխարհի վրա: Ուրարտուն ոչ միայն վտանգի է ենթարկում այդ պատերազմական հենարանը, այլև իր գործողութիւնները միացնում է արևմտյան աշխարհի գործողութիւնների հետ, այնպես որ այս երկու կողմերի՝ այն է Ուրարտուի և հեթեթական երկրի գործողութիւնները միասնական և փոխադարձաբար իրարից էին բխում և իրար պահպանում: Սալմանասարը ստիպված էր պարբերաբար իր զենքը դարձնել Ուրարտուի դեմ՝ այստեղ կազմակերպվող քաղաքական խռոչը կենտրոնը, որ միացնում էր հյուսիսային ազգերը, ոչնչացնելու համար: Այս ուղղութեամբ գործած նրա արշավանքների թիվը չորս է:

Առաջին անգամ Սալմանասարը արշավեց Ուրարտուի դեմ իր թագավորութեան առաջին տարին (860): Ինչպես և Ասսուրնազիրպալը, նա այս անգամ գնաց հյուսիս-արևելյան ուղղութեամբ, դեպի Ուրմիայի լիճը, որին շհասած ավերեց և ասպատակեց Խուբուշիա երկիրը, որ, պետք է ենթադրել, մտնում էր Ուրարտուի գլխավորութեամբ կազմված դաշնակցութեան մեջ: Արշավանքը դժվարին էր, լեռնային անցքերը մեծամեծ խոչընդոտներ էին հանում բանակի առջև: Խուբուշիան գրավելուց հետո ասորական թագավորը մտավ Ուրարտուի սահմանները: Այսպես է ինքը թագավորը նկարագրում այդ արշավանքը.

«Թագավորութեանս սկիզբն, կառավարութեանս առաջին տարին արքայական գահույս վրա մեծ վախելուցս մտա. պատերազմիկ կառքեր և զորք գումարեցի, Միմիսի երկրին կրճին մեջ մխեցա, Այրիդի ի բերդաքաղաքն նիննի մոտեցա, քաղաքը հարձակմամբ առի. անոր տիրեցի, անոր բազմաթիվ պատերազմողները սպանեցի, անոր արջառն առի տարի: Անոր քաղաքին շիմացը կառափունքն կոթող մը կառուցի, անոնց մանչ ու աղջիկ տղայքը խարուկի մեջ այրեցի: Մինչդեռ անոնք տակավին Արիդիին մեջ կկենային, զհարկն հարգացվույն, հարմասացվույն, Միմիսացվույն, Միմիրացվույն, Միրիսացվույն և Ուլմանիացվույն՝ ձիեր, հարկիք ձիոց, արջառ, ոչխարներ, գինի՝ ընդունեցա: Արիդիեն ելա. սեպ նուրբ շավիղներ, դժվարին լեռներ՝ որոնք երկաթի դաշույնի մը սայրին պես դեպ հերկինս վեր կանգնած են, պղնձի և անագապղնձի թիերով խորյալ պեղեցի, կառքերուն և զորքին քալել տվի: Խուբուշիա քաղաքին մոտեցա: Խուբուշիա քաղաքն և իր վիճակեն 100 քաղաք հրով այրեցի: Կակիա՝ նախորդի թագավորն և յուր զորաց մնացորդներն գինուցս սաստկութենեն զարհուրեցան և ահագին լեռներ բռնեցին: Անոնց ետենն լեռներուն վրա ելա, լեռանց մեջ անոնց հետ սաստիկ ճակատամարտ տվի, անոնց վրա հաղթութիւն կատարեցի: Կեններեն կառքեր, զորքեր, ձիեր, ձիերու հարկիք առի տարի: Սարսափն վեհափառութեան Ասսուրա իմ տյառնս զանոնք էկուն ըրավ, վար իջան, ոտներուս փարեցան. անոնց վրա հարկ ու տուրք դրի: Խուբուշիա քաղաքն ելա, ուրարտացի Արամեի՝ բերդաքաղաքն Սուգուրայի

1 Никольский, с. 395.  
2 Կարդացվում է և Արամի:

մոտեցա. քաղաքին վրա հարձակեցա, անոր տիրեցի: Անոր զորքերն շատերը սպանեցի, կողոպուտն առի տարի. անոր քաղաքին դիմացը կառափունքն կոթող մի շինեցի: Յուր երկրեն 14 քաղաք հրով այրեցի: Սուգուրային ելա, դեպի Նախիի ծովն վար իջա. զենքերս ծովուն մեջ մխրճեցի. աստվածոցս զոհեր մատուցի: Նույն ժամանակ իմ անձիս պատկերը շինեցի, Ասսուրա՝ պերճափայլ տյառն, իմ տյառնս համբավն և իմ կարող զորութիւնս անոր վրան գրեցի, ծովուն քով կանգնեցի»<sup>1</sup>:

Սալմանասարը այնքան մեծ նշանակութիւն էր տալիս իր այս արշավանքին, որ նրա մանրամասնութիւնները զանազան տեսարաններով ներկայացնել տվեց իր պալատի բրոնզե դռների վրա (Բալավարում) բարձրավանդակ նկարներով: Այդ տեսարանները անգնահատելի պատմական և ազգագրական վավերագրեր են: Նրանց վրա մենք տեսնում ենք ուրարտացիների և նրանց ցեղակիցների տիպերը:

Սակայն ի՞նչ պետք է հասկանալ Սալմանասարի արձանագրութեան այս կտորից, որ վերաբերում է Ուրարտուին: Բոլոր հետազոտողները այն կարծիքն են, որ Ուրարտուի մեջ ասորական բանակը հաջողութիւն չունեցավ: Ընդհատ է. Սուգուրային վերցվեց, բայց Սալմանասարը, ինչպես երևում է, չկարողացաւ առաջ խաղալ Ուրարտուի երկրի մեջ և շտապեց իջնել Վանի ծովի ափը: Վեկնեք և, — ասում է Նիկոլսկին, — որ այդ արշավանքը, չնայած ամբարշտած քաղաքը գրավելուն, իրապես լուրջ հետևանքներ չունեցավ<sup>2</sup>: Արամե թագավորի զորութիւնը խորտակված չէր:

Երեք տարուց հետո (857) Սալմանասարը նորից արշավեց Ուրարտու, այս անգամ արդեն հարավ-արևմտյան ուղղութեամբ: Անցավ Եփրատը, Հաթիի երկրում վերանորոգեց մի բերդ, որ պիտի պաշտպաներ նրան թիկունքից և իր անունով կոչեց այդ բերդը Կար Սալմանասարիտ: Ապա նորից անցավ Եփրատը և նվաճելով Նախիի մի քանի երկրներ, դուրս եկավ Արածանիի վերին մասերը: Ահա թե ինչպես է նա ներկայացնում իր այդ արշավանքը.

«Բիտ-Չամանի երկրին վրա իջա: Բիտ-Չամանիեն ելա, Նամդանոս, Մի-րիսուս երկրները կտրեցի անցա. սեպ նուրբ շավիղներ, լեռինք դժվարագնացք, որոնք դաշույնի մը սայրին պես դեպ հերկինս վեր կբարձրանան, անագապղնձե թիերով փորեցի, պատերազմիկ կառքերն ու զորքը խաղաղացուցի գնացուցի: Իջի հերկինս Ինզիտի՝ երկրին Իսուա, Ինզիտի բոլոր տարածութեամբն ձեռքս տիրեց: Անոնց քաղաքներն ավերեցի, քանդեցի, հրով այրեցի: Անոնց անհամար կողոպուտը, ինչքը, գույքը առի տարի: Թագավորութեանս մեկ հաղթ պատկերը շինեցի. Ասսուրա մեծի տյառն կարողութիւնն և իմ հզոր զորութիւնս վրան գրեցի: Չանի Սալուրիի մեջ կանգնեցի, որ ընդարձակ գնացքի տեղ մըն է: Ինզիտեն ելա, Արգանիային վրային անցա, Սուխմի երկրին մոտեցա: Անոր բերդաքաղաքն Ուաստալին տիրեցի. զՍուխմի բովանդակ տարածութեամբն ավերեցի, քանդեցի, հրով այրեցի: ՉՍուա՝ անոնց քաղաքին տերը՝ իմ ձեռքովս բռնեցի: Սուխմիեն ելա, Դախիանի երկրին վրա իջա: Դախիանիին՝ չուր բովանդակութեամբն տիրեցի. անոր քաղաքներն ավերեցի, քանդեցի, հրով այրեցի: Անոնց ճոխ կողոպուտը, ինչքը, գույքն առի: Դախիանիեն ելա, ուրարտացի Արամեին թագավորական քաղաքին Արգասկուին՝ մոտեցա: Ուրարտա-

1 Սալմանասար, էր. 140—142.  
2 Никольский, с. 396.  
3 Հանձիթ, այժմ հարբերդ:  
4 Կարդացվում է և Արգասկուն: Ուրարտական այս մայրաքաղաքի տեղը որոշել դժվար է.—

ցի Արամեն հզոր զինուցս սաստկութենեն և ուժգին ճակատամարտեն զարհուրեցաւ. յուր քաղաքն թողուց, Ադրուրի երկրին լերանց վրա ելաւ: Անոր հետեն լերանց վրա ելա, լերանց մեջ սաստիկ պատերազմ տվի, 3400-ի նորա պատերազմողաց զինուք նկուն ըրի. Ռամամանի նման՝ անոնց վրայ փոթորիկ տեղացուցի, անոնց արյամբն լեռն ասրի պես ներկեցի, անոր քանակատեղն առի, անոր մարտակառքերը, հեծյալները, ձիերը, ջորիները, որթերը, գուլքը, կողոպուտն ու հարուստ ինչքը լեռներեն առի տարի: Արամեն առ ի գերծուցանել զյուր կյանս՝ դժվարին լերան մը վրա ելած էր: Իմ առնի գորութեամբ յուր երկիրը վայրի ցլո մը պես առաջուր կոխեցի, յուր քաղաքներն ավերակ դարձուցի. զԱրզասկուն՝ քաղաքք յուրոց վիճակին՝ ավերեցի, քանդեցի, հրով այրեցի: Անոր դռան առջևը կառափոռնք կոթող կանգնեցի: Չոմանս կենդանվույն պերաններեն կախեցի և զոմանս գերաններուն բոլորտիքը ցիցերու վարսեցի: Արզասկունն շվեցի ի լյառն Իրիտիա ելա. թագավորութեանս մեկ մեծ պատկերը շինեցի. Ասսուրա՝ իմ տյառնս կարողութեանս՝ և Ուրարտուի մեջ իմի գործ դրած հզոր գորութեանս անոր վրան գրեցի, Իրիտիա լերան վրա կանգնեցի: Իրիտիան շվեցի, Արամալի՝ քաղաքին մոտեցա. անոր քաղաքներն ավերեցի, քանդեցի, հրով այրեցի: Արամալիեն ելա Չանգուինա քաղաքին մօտեցա... իմ ճակատամարտես վախեցաւ, ոտքերուս փարեցաւ: Չիբր, հարկիք ձիոց, արջառ, ոչխարներ անկե ընդունեցա. անոր թողութեան շնորհեցի... Հընթացս արշավանցս ի ծովն Նաիրիի իջա. Ասսուրա հզոր գեները ծովուն մեջ մխըրճեցի, զոճ մատուցի, թագավորութեանս մեկ պատկերը շինեցի. զկարողութեանս Ասսուրա, մեծի տյառն, իմ տյառնս, իմ դուցազնական քաջագործութեանս պատմութեանն և զորեղ գործերս վրան գրեցի»<sup>2</sup>:

Վանի լճի ափից Սալմանասարը Ասորեստան է իջնում Կիրզանի և Խուրուշիա երկրների վրայով, որոնց նորից անթարկում է փր իշխանութեան: Նաիրիի երկրներում և հատկապես Ուրարտուի դեմ գործելու համար Սալմանասարը իր երրորդ արշավանքը կատարում է մեկ էլ 12 տարուց հետո (844-ին): Այս արշավանքը նա նկարագրել է արդեն շատ համառոտ կերպով:

«Կառավարութեանս 15-րդ տարին դեպի Նաիրիի երկիրը քալեցի: Տիգրիս գետույն աղբերականց վրա՝ լերան քարածերպի մը մեջ՝ անոր աղբերական բազկին ծագման տեղն իմ արքայական պատկերս շինեցի: Կարող գորութեանս և զպատմութեանս իմ դուցազնական քաջութեան անոր վրա գրեցի: Տունիբունի երկրին մտից կրճին մեջ մտա: Ուրարտացի Արամեին քաղաքները՝ մինչև ցզուսի ջրույն Եփրատա՞ ավերեցի, քանդեցի, հրով այրեցի: Եփրատա աղբերակունքը գնացի, աստվածոց զոհեր մատուցի: Վոն Ասսուրա գեները փառավորեցի: Ասիա Դաիանի երկրին թագավորն ոտքերուս փարվեցաւ ի սակ հարկի

Մասպերոն դնում է նրան Արամեի գետի և Վանի լճի մեջտեղը («Histoiens», III, p. 55), նիկուսկին կարծում է, թե նա շինված էր Արաքսի վրա, Մեծ Մասիսի մոտ (с. 397): Այս ցուցմունքը հետևանք է այն սխալ ենթադրության, թե ուրարտացիների բուն հայրենիքը Արաքսի հովիտն էր:

<sup>1</sup> Արամալի նշանակում է Արամի բնակարան. Նիկուսկին ենթադրում է, որ այս մայրաքաղաքը գտնված պիտի լիներ այն տեղը, որ հետո ստացավ Արամալի անունը:

<sup>2</sup> Մանուսկրիպտ, եր. 143—145:

<sup>3</sup> Արամեի, արևելյան Եփրատ:

<sup>4</sup> Տիգրիս ու Եփրատը մեծ, սրբազան նշանակություն ունեին Միջագետքի բնակիչների համար: Այս պատճառով էր, երևի, որ ասորական թագավորները չէին կարողանում անտարբեր անցնել այդ երկու գետերի ակունքների մոտով: Սուրնատ գետի կիրճը համարվում էր Տիգրիսի ակունք, և այդտեղ թագավորները, իրենց պատկերներն են թաղում: Սալմանասարը հասնելով Եփրատի ակունքին (այժմյան Դիադին), զոհեր մատուցեց այդտեղ:

բազմաթիվ ձիեր ընդունեցա: Թագավորական պատկերս շինեցի, անոր քաղաքին մեջտեղ կանգնեցի»<sup>1</sup>:

Այսպես են ներկայանում Ասորեստանի հարաբերությունները Ուրարտուի հետ ասորական արձանագրությունների մեջ: Սալմանասարի պատմվածքները, ընդհանուր առմամբ, նպատակ ունեն հասկացնելու թե նա խորտակեց Ուրարտուն, հաղթեց ու իր իշխանության ենթարկեց Արամե թագավորին: Մենք տեսնենք, որ առաջին արշավանքի հետևանքները չեն համապատասխանում ասորական թագավորի հավաստիացումներին: Այսպես էին և հետևյալ երկու արշավանքները. ճիշտ է, քաղաքներ քանդվեցին, մարդիկ կոտորվեցան, բայց և այնպես, կատարյալ և վերջնական հաղթանակ տեղի չունեցավ: Չնայած իր գոռոզ ինքնագովություններին, Սալմանասարը այնուամենայնիվ, չէ կարողանում ասել, թե գերիներ է վերցրել, իր ձեռքն է գցել Երկրի իշխողներին, մեծամեծ ավար է վերցրել և հարկ է դրել ընկճվածների վրա: Իսկ այս բոլորը, ասորական արձանագրությունների լեզվին և ոգուն լավ ծանոթ մարդկանց ասելով, նշանակում է եթե ոչ պարտություն, գեթ աննշան մի հաջողություն:

Նաիրիի թագավորները այժմ յուրացրել էին նոր ուղղման սկզբունք: Առաջվա նման նրանք այլևս չէին կենտրոնացնում իրենց ուժերը թշնամու դեմ ճակատամարտերի մեջ, այլ մղում էին մանր պատերազմ, լեռնային ամրությունների մեջ փակված և այսպիսով հոգնեցնում էին թշնամուն, որ ստիպված էր բազմաթիվ ամրություններ վերցնել զենքով: Մեծ հաջողություններ այս սխտեմի պատճառով չէր կարող վաստակել ասորական բանակը, և երկրի քաղաքական կազմակերպությունը, մեծագույն մասամբ, մնում էր անաղարտ: Այս սխտեմը գուցե Արամե թագավորի գործն էր: Արամեն սովորական թագավորներից չէր: Սալմանասարը անդադար նրա անունն է տալիս և վկայում է, որ նա բազմաթիվ գործեր ուներ: Այսպիսով Ուրարտուն արդեն մի ուսեղ թագավորություն էր, այնքան ուժեղ, որ հատկապես նրան նվաճելու համար ասորական բանակները այնքան երկար արշավանքներ էին սկսում: Ուրարտուն Նաիրիի հարավին էր պատկանում, մոտիկ էր Ասորեստանին և նինվեի կառավարությունը չէր կարող հանգիստ դիտել, թե ինչպես փոքրիկ Ուրարտուն արագ կազմակերպվում է, դառնում ուժեղ թագավորություն:

Կազմակերպողը, պետական միություն ստեղծողը Արամե թագավորն էր: Հեթիթական մանր, ազգակից ցեղերի բազմաթիվ իշխանությունները այն նյութն էին, որից գոյանում էր նոր պետության զանգվածը: Կուլտուրայով, լեզվով ու սովորություններով միանման էին այդ ցեղերը և դրանց էլ Արամեն հավաքեց, ինչպես կարելի է նենթադրել ոմանց զինքի ուժով, ոմանց՝ խաղաղ դաշնագրական համաձայնություններով: Ավելի մեծ գործ տեսնում է խաղաղ համաձայնությունը և այստեղ Ուրարտուն հանդիսանում էր ոչ միայն զինվորական ազդու ուժ, որ թելադրում էր իր հետ միանալու օգոստները, այլև կուլտուրական մի այնպիսի միջավայր, որ անհամեմատ բարձր էր մյուսներից և, ուրեմն, կարող էր նրանց բոլորովին ձուլել իր մեջ: Կուլտուրայով գործդանալու, կուլտուրայով հաղթահարելու և տիրելու մեծ գաղափարը Ուրարտուն սկսեց գործադրել Արամեի ձեռքով և սրա ժամանակ, ինչպես կտեսնենք, երկիրը աշակերտում էր Ասորեստանին, սովորում էր նրա լեզուն, նրա գրությունը: Ասորական գեները ոչնչացնել այդ ընդունակ և մեծագործ թագավորին չկարողացավ: Ուրարտուն և նրա կազմակերպած դաշնակցությունը շուտ էին բու-

<sup>1</sup> Մանուսկրիպտ, եր. 149:

ժամ իրենց ստացած վերքերը և պետական շինարարության գործը առաջ էր ցնում եռանդով:

«Արամեհին,— ասում է Նիկոլսկին,— մենք պետք է համարենք ուրարտական հզորության իսկական հիմնադիր: Նա ոչ միայն երեք անգամ հաղթականորեն ետ մղեց իր երկրի դեմ մղած ասորական երեք արշավանքները, բայց և մի շարք վճռական գործողություններով և միջոցներով իրենից կախում ունեցող հարևան երկիրների մեջ ստեղծեց մի անմատչելի պաշտպանություն Ասորեստանի դեմ, որի շնորհիվ ասորեստանցիների ներս խուժումը Ուրարտու, ապագայում դարձավ ընդմիջտ անկարելի: Ասորական տարեգրությունները, իհարկե, ոչինչ չեն ասում մեզ այն մասին, թե ինչի մեջ էր կայանում այդ թագավորի ներքին և ակտիվ գործունեությունը, բայց եթե մենք ունենալինք նրանից (Արամեհից) սեփական արձանագրություններ, մենք անշուշտ կիմանալինք, թե որքան ջանքեր, որքան մրցություն էր պետք նրան լայնացնելու համար իր պետությունը մինչև Եփրատ և վասալական հպատակության ենթարկելու համար իր հզոր հարևաններին. մենք տեսնում ենք, որ նա պայքարում է Ասորեստանի դեմ ոչ թե իբրև մեկը դաշնակիցներից, այլ ինչպես միապետ մի մեծ պետության, անձամբ իր անունից, և այստեղ մենք այլևս չենք հանդիպում տասնյակ այնպիսի ազգերի անունների, որոնք իբրև ամբոխ դուրս էին գալիս ասորիների դեմ և ցրվում էին փոշու նման: Սա մի կազմակերպված քաղաքական և զինվորական սիստեմ էր, որ կարգապահություն և հնազանդություն էր մտցնում բաժան-բաժան ազգերի զանգվածի մեջ և որ ահավոր էր Ասորեստանի համար»<sup>1</sup>:

**3. Սարգուրի Ա (835—820), վան:** Չորրորդ անգամ ասորական բանակը Ուրարտու արշավեց 832 թվականին: Այս անգամ նրան Ուրարտուի մեջ հանդիպողը այլևս Արամեհն չէր, այլ Սարգուրի անունով թագավորը: Որպեսզի իմանանք, թե ով է սա, պիտի դիմենք պատմական այն աղբյուրներին, որոնք նույն այդ ժամանակներից են սկիզբ առնում, այն է՝ վանյան սեպագծե արձանագրություններին: Այդ արձանագրություններից հնագույնը, որ զբված է ասորական լեզվով, պատկանում է Սարգուրի թագավորին: Եվ սա, ինչպես սպասուցել է Սեյսը, նույն Սեդուրին է, որ հիշատակված է Սամանասար Բ-ի արձանագրության մեջ իբրև Ուրարտուի թագավոր: Ուրեմն 832 թվին Արամեհի թագավորությունը գտնվում էր Սարգուրիի ձեռքին: Իր արձանագրության մեջ Ուրարտուի այս թագավորը իրեն անվանում էր Լուտիբրիի որդի: Ի՞նչ հարաբերություն ունեն նա Արամեհի հետ: Ծիշտ տեղեկություններ չեն մնացել, իսկ զիտնականների կարծիքները այստեղ հակառակ ուղղությամբ են ընթանում: Սեյսը կարծում է, թե Արամեհն, սաստիկ պարտություն կրելով Սամանասարից, կորցրեց հեղինակությունն իր ժողովրդի մեջ. տեղի ունեցավ հեղափոխություն, որ և առաջացրեց մի նոր դինաստիայի հաստատումը ուրարտական գահի վրա: Եվ այդ դինաստիայի հիմնադիր պետք է համարել Սարգուրիին: Ուրիշները (օր. Նիկոլսկի, Սանտալձյան) հակառակ են պնդում, այսինքն, թե Սարգուրին Արամեհի ժառանգներից էր և ոչ մի հիմք չկա ենթադրելու, թե դինաստիաների փոփոխություն է առաջացել, քանի որ Արամեհն ոչ միայն պարտված չէր, այլ մեծ հեղինակություն ուներ ժողովրդի մեջ իբրև Ուրարտուի հզորության հիմնադիր և հյուսիսային ազգերի միության հեղինակ: Որ Սարգուրին Արամեհի որդին չէ, այլ Լուտիբրիի, այս գոյություն չէ նշանակում

<sup>1</sup> Никольский, «Клин. над. Ванских царей, откp. в России», с. 399.

թե նա, ուրեմն, չէր կարող Արամեհի ուղիղ ժառանգը լինել: Լուտիբրին կարող էր թագավորած լինել Արամեհից հետո կարճ ժամանակ:

Մի ուրիշ նշանավոր հանգամանք, որ ներկայացնում է Սարգուրի թագավորը, այն է, որ նրա ձեռքով ուրարտական թագավորության կենտրոնը տեղափոխված է Վանի լճի արևելյան ափը, այն քաղաքը, որ ստանում է Տուսպա կամ Տուշպա անունը: Սարգուրին իր արձանագրության մեջ, որ փորագրված է քարի մի մեծ կտորի վրա և գտնված է Վանի միջնաբերդի ստորոտում, հայոց ս. Հովհաննես եկեղեցու ավերակների մեջ, ասում է թե Ալնիունա քաղաքում ինքը բերդ շինեց<sup>1</sup>: Ենթադրում են, որ Տուսպա քաղաքի ամենահին անունն է այս: Հետևաբար, Սարգուրին էր, որ առաջին անգամ Վանի բնական դիրքի լրա ուշադրություն դարձրեց և թագավորության կենտրոնը հաստատեց մեծ ժայռի վրա:

Նոր պետություն կերտողների համար առաջ ու առաջ զգացվում էր մի լավ մայրաքաղաքի անհրաժեշտությունը, այնպիսի մի տեղի, որ կարողանար խոշոր կենտրոն դառնալ, ծաղկել, բարգավաճել, զուրկ չլինելով միևնույն ժամանակ և մի բերդին անհրաժեշտ բնական ամրություններից: Ամբողջ Ուրարտուի մեջ, Կորդվաց լեռներից մինչև Մասիսի զանգվածը, միայն Տուսպան էր, որ կարող էր այդպիսի կենտրոն դառնալ: Սարգուրին տաղանդավոր ընտրող էր: Հրաշագեղ բնությունը, արգավանդ հողը, ծովակն իր հաղորդակցության հարմարություններով երաշխավորում էին որ դա կլինի մի երջանիկ կուստրական կենտրոն հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք տանող ճանապարհների վրա: Այդպիսի մի կենտրոնի վրա հենված կարելի էր տիրապետել նախկին ևրկրներին, նվաճել հյուսիսը և իրական սպառնալիք դառնալ Ասորեստանի համար: Բոլոր այս նկատառումներն արգարացան և ուժեղ ու լայնարձակ պետության սիրտը դարձավ նոր մայրաքաղաքը:

Սարգուրիի այս ձեռնարկությունն էր, երևի, որ ստիպեց Սամանասարին մի նոր արշավանք սկսել Ուրարտուի դեմ (832): Այդ պատերազմը նա նկարագրում է այսպես. «Կառավարությանս 27-րդ տարին պատերազմիկ կառքերս և զորքս գումարեցի, զՊահնասուր զՏուրտան (ընդհանուր սպարապետ) քանակին սովար մասին հրամանատարն ի գլուխ զորացս Ուրարտուի վրա դրկեցի: Իջավ ի Բիտ-Չամանի և Ամմատուրիի կիրճին մեջ Արզանիային վրայն անցավ: Ուրարտացի Սեդուրի այս բանիս լուրն առավ, յուր մեծաթիվ զորաց բազմությանը վստահացավ և պատերազմ ու ճակատ տալու համար ինձի՞ դեմ քալեց: Անոր հետ պատերազմեցա, անոր յաղթեցի յուր զօրացը դիակներովն ընդարձակ դաշտը լեցուցի»<sup>2</sup>:

Նկարագրության համառոտությունն ու անգունությունն անգամ բավական համոզիչ են ցույց տալու համար, որ ասորական բանակը ոչինչ հաջողություն չէ ունեցել: Ուրարտուի պաշտպանողական գիծը այս անգամ այլևս Բագրևանդը չէ, այլ հարավային Արածանին: Սարգուրին մենակ, առանց դաշնակիցների դուրս եկավ ասորական բանակի դեմ և հաղթականորեն դիմադրեց նրան, չթույլ տալով որ այդ արշավող բանակը նույնիսկ մտնե Ուրարտուի սահմանների մեջ: Սնամեջ ասածը թե «ես նրան հաղթեցի» ասորական արձանագրությունների

<sup>1</sup> Sandalagian, p. 2.

<sup>2</sup> Թեև Սամանասարը չէր գնացել Ուրարտուի դեմ, այլ նրա զորապետներից մեկը, բայց և այնպես գործողությունները իր դեմքից է պատմում թագավորը: Այս անիրավացի չէ, եթե նկատի առնենք, որ զորքը թագավորին էր, նրա գործողությունները թագավորի համար էին և նրա դեմ կովելը թագավորի դեմ կովել էր նշանակում:

<sup>3</sup> Սանտալձյան, էր. 136:

լեզվով համագոր է «ես հաղթվեցի» խոսքերին, ասում է Նիկոլսկին<sup>1</sup>: Սարդուրին հանդիսանում էր Արամի արժանավոր ժառանգը և նրանից ոչ պակաս մի թագավոր:

Միայն «մեծաթիվ գործերի բազմությունը» չէր վստահություն ներշնչում Ուրարտուի թագավորին, այլև այդ երկրի մեջ ծաղկած առաջադիմությունը: Սարդուրին իր ժողովրդի համար էր գրում իր արձանագրությունները (երկու հատ): Եվ երբ այս արձանագրությունների լեզուն ասորերենն էր, այս արդեն ցույց է տալիս, թե ասորական լեզուն, գրությունը դրանց հետ և Միջագետքի կուլտուրան շատ էր տարածված այդ երկրներում: Մենք գիտենք արդեն, որ քաղաքական քաղաքակրթությունը ամենահին ժամանակից էր իր հզոր ազդեցությունը տարածել շատ երկրների, դրանց թվում և Հայկական Բարձրավանդակի վրա: Իսկ հատկապես ասորական ազդեցությունը պիտի հաստատվեր դարձրի ընթացքում տեղի ունեցած շփումների միջոցով և մանավանդ Արամի ժամանակից, երբ ուրարտացի ժողովուրդը արդեն մտավոր-կրթական աշխատանքի մեջ է սկսում եռանդով գործել: Նմանվել իր հզոր հակառակորդին—սա ուրարտացիների համար դատարկ ինքնասիրություն չէր, այլ պետական-քաղաքակրթական նպատակ: Եվ այս ուղղությունը պարզելու համար թանկագին նյութեր են տալիս Սարդուրիի արձանագրությունները:

Այստեղ Սարդուրին գործ է ածում այնպիսի տիտղոսներ, որոնք հատուկ էին Ասորեստանի թագավորներին. «Տախտակ Սարդուրեայ՝ որդիոյ կուտիբրեայ, արքայի մեծի, արքայի հզորի, արքայի բազմութեանց, արքայի նաիրեայ, արքայի՝ որու մ ոսոխ նմա ոչ գտաւ, մարդկային հովուի սքանչելոյ, որ շերկնչի յընդդիմութենէ, արքայի նուաճողի զանհնազանդս նմա: Սարդուրի որդի կուտիբրեայ, արքայ արքայից, յամենայն ի նոցունց թագաւորաց հարկս առի»<sup>2</sup>: Այս բոլոր հորջորջումները նախ ցույց են տալիս, թե իրոք ինչ ազդեցության և տիրապետական հեղինակության էր հասել Ուրարտուի թագավորը: Աշխարհակալ նվաճողի տիպը, որ մշակվել էր Միջագետքի դաշտերում, տեղափոխվում էր հյուսիսային լեռնաշխարհը: Ասորեստանի միապետը պարծենում էր «Շումիրի և Ակկադի արքա» տիտղոսով, Ուրարտուի միապետը դրան հակադրում էր «Նաիրիի երկրների թագաւոր» տիտղոսը: Սնապարծության համար չէր այս հակադրությունը: Ձգտում դեպի համաշխարհային տիրապետությունը<sup>3</sup>— ահա ի՛նչ պիտի ցուցադրեր այդ տիտղոսը և ահա ինչ պիտի տար այն պայքարը Ասորեստանի դեմ, որ միացնում էր Նաիրիի թագավորներին մի ընդհանուր գլխավորի, մի շահնշահի (արքայից արքայի) գայիսոնի տակ:

Արամի և Սարդուրիի ջանքերով Ուրարտուի սահմանները անմատչելի էին դարձել ասորեստանցիների համար: Նրանց առաջացրած ազգային-քաղաքական շարժումները Նաիրիի անթիվ ցեղերին տվել էին ինքնագիտակցության և ոգևորության ուժեղ կովաններ, այնպես որ Ուրարտուի և Ասորեստանի մեջ բնակված այդ ցեղերը արդեն կենդանի պատվարներ էին Ուրարտուն պաշտպանելու համար:

4. Իշպուհինի (820—800): Սարդուրի Ա-ին հաջորդեց նրա որդի Իշպուհինի Ա, որից հասել են մեզ հինգ հատ սեպագիր արձանագրություններ: Այդ հիշատակարանների մեջ Իշպուհինի հանդես է գալիս միայն իր անունով, բայց կան

և չորս հատ արձանագրություններ, որոնց մեջ Իշպուհինին իր որդի Մենուայի (կարդացվում է և Մենուա) հետ է գործում: Այս վերջին հանգամանքը ենթադրել է տալիս, որ իր թագավորության վերջում Իշպուհինին իր գործակիցն էր դարձրել որդուն, զուցե սրան հանձնելով գործերի հրամանատարությունը, իսկ իրեն վերապահելով ներքին կառավարությունը:

Տեսնենք նախ արտաքին հարաբերությունները, այսինքն Ասորեստանի վերաբերմունքը: Սալմանասար Բ-ին հաջորդեց նրա որդի Շամսի-Ռամմանը (825—812 Ք. ա.), որ իր 13-ամյա թագավորության ընթացքում նպատակ էր դարձրել ոչնչացնել Նաիրիի ուժը, բայց հաջողություն չունեցավ, որովհետև կար Ուրարտուն, որ գիտնր ղեկավարել Նաիրիի ցեղերը: Թագավորության առաջին տարին Շամսի-Ռամմանը հյուսիս-արևմտյան կողմից հարձակվեց Նաիրիի վրա, բայց չկարողացավ նույնիսկ Արածանիին հասնել, որպեսզի փորձե ուրարտական հողը կոխել: Նա պատերազմական գործողություններ էր մղում ընդարձակ տարածության վրա, մինչև նույնիսկ Կարխեմիշ քաղաքը: Սակայն, ինչպես երևում է, ստիպված եղավ թողնել այդ տեղերը և վերադառնալ Ասորեստան, այդտեղից դեպի հյուսիս-արևելք դիմելու համար, քանի որ պետությունը վտանգված էր այդ կողմից: Դեպի Ուրմիայի լճի և Կասպից ծովի ուղղությամբ զետեղված երկրները, ամենքն էլ ուրարտացիներին ցեղակից ազգաբնակչությամբ, ապստամբվել էին և Նինվեի թագավորին հարկավոր եղավ շատ հեռավոր արշավանքի ձեռնարկել՝ այդ շարժումները ճնշելու համար:

Իմանալու համար, թե ինչից էին ներշնչվում և ինչպես էին սուռչանում այդ ապստամբական շարժումները, մենք պիտի որոնենք վանյան արձանագրություններ: Եվ ահա տեսնում ենք Իշպուհինիի և նրա գահակից Մենուայի արձանագրությունները Ուրմիայի լճի հարավ-արևմտյան կողմում: Կիլիշիի և Սիդեկի մոտ, Ռեվանդուզ գավառում: Կիլիշիի կիրճը Զագրոս լեռների միջով տանող ամենահարմար ճանապարհն է, որ դուրս է բերում Տիգրիսի հովիտը և այս ճանապարհով Վանը Նինվեից մի քանի օրով էր միայն հեռու: Մեզ հայտնի չեն Իշպուհինիի և Մենուայի այս շարժման մանրամասնությունները, բայց ռազմական այն կարևոր կետը, ուր նրանք կանգնեցրին արձանագրություն կրող կոթող, պերճախոս ապացույց է, որ Վանը ամենալուրջ կերպով սպառնում էր Նինվեին, մյուս կողմից էլ վտանգավոր շարժում էր մտցնում Ասորեստանի հպատակ այն ազգությունների մեջ, որոնք բնակված էին Փրանի սարահարթի հյուսիս-արևմտյան կողմերում: Այնպես որ Շամսի-Ռամմանի գործողությունները ավելի ինքնապաշտպանողական բնավորություն ունեին<sup>2</sup>:

Արտաքին այս փայլին համապատասխանում էր ներքին կուլտուրական փայլը, որ նորակազմ թագավորությունը հանդես բերավ Իշպուհինիի ժամանակից: Ժողովրդի մեջ տեղի ունեին մեծամեծ քաղաքակրթական շարժումներ: Մինչդեռ Սարդուրին ասորական լեզուն էր գործածում իր արձանագրությունների մեջ, նրա որդին կիրառության մեջ է դնում ասորական սեպագրության մի նոր սիստեմ, որ հատկապես մայրենի լեզվի համար էր մշակված: Ուրարտական լեզուն այնուհետև դառնում է գրավոր պաշտոնական լեզու: Ոչինչ մանրամասնություն այս մասին չգիտենք, բայց հսկայական գործը ինքնբնութային

<sup>1</sup> De Morgan, „Mis. Scien. en Perse“, t. 4, p. 279.

<sup>2</sup> Իր արձանագրություններից մեկի մեջ Իշպուհինի գործ է ածում «Շուրա և Նաիրի» երկրների թագավոր տիտղոսը: Նիկոլսկին կարծում է, թե «Շուրա» անունը «Աշուրա» անվան ուրարտական ձևն է, իսկ «Աշուրան» Ասորեստանն էր: Թուս գիտնականը գտնում է, որ այսպիսի մի տիտղոս Իշպուհինի կարող էր գործածել, քանի որ նա իրապես տիրում էր ասորական մի քանի երկրների վրա (Никольский, с. 407):

<sup>1</sup> Никольский, с. 398.

<sup>2</sup> Sandaljian, p. 2.

<sup>3</sup> Никольский, с. 402.

թելադրում է ենթադրել ազգային ինքնագիտակցության մի եռանդուն և արգասավոր շարժում: Ասորական սեպածև նշանները իբրև նյութ ծառայեցնել, վերլուծել ուրարտական լեզվի հնչյունները և յուրաքանչյուրին հատկացնել առանձին նշան, մի խոսքով կատարել տառերի գյուտ՝ այսպիսի մեծագործություն գլուխ բերելու համար պետք էր որ ստեղծված լիներ ժողովրդի մեջ դաստիարակության և ազգային կրթության մեծ պահանջ, պետք էր, որ լինեին ակադեմիական ծանր աշխատանք կատարելու ընդունակ գիտնականներ:

Եվ նորաստեղծ ազգային գրականությունը իսկույն իր հուշարձանն է բարձրացնում Վանի ժայռերի վրա: Դա այն ընդարձակ սեպագրությունն է, որ փորագրված է Մհերի Գուռ ժայռի վրա: Արձանագրությունը 84 տող է և նրա խոսքնադակությունն էլ վկայում է, որ Իշպուհինի և Մենուայի խաղաղ շինարարական գործունեությունը, բացի գրականությունից, տվեց երկրին նաև ազգային միացման այնպիսի մի խոշոր գործ, որպիսին էր սիստեմի վերածած կրոնական պաշտամունքները: Ինչպես տեսանք, Մհերի Գուռն արձանագրությունը մի առ մի հիշում է Բիայնա երկրի և նրա դաշնակից երկրների ու քաղաքների աստվածներին և կանոնադրում է թե ի՛նչ գոհեր և ընծաներ պիտի ստանա յուրաքանչյուր աստվածություն այդ ավատական պանթեոնի մեջ:

**5. Մենուա Ա (շուրջ 800—780 թ. Ձ. ա.):** Իշպուհինի մահից հետո մենակ սկսեց թագավորել Մենուան: Կորովի, հաղթող, ընդարձակ ձեռնարկությունների, մեծագործությունների մարդ էր նա և աշխարհակալ մի թագավոր: Նա մի գեղեցիկ օրինակ է տալիս արևելքի միահեծան նվաճող իշխանության, որ միևնույն ժամանակ ավելի շինարարական մեծամեծ աշխատանքներով է զբաղված, քան իր հաղթական սրի համար պարծենկոտության նորանոր առիթներ որոնելով: Իսկապես Մենուայի ժամանակ է, որ Հայկական Բարձրավանդակի վրա սկսում է կազմվել մի պետություն, որ ձգտում էր հենվել այդ երկրի բնական սահմանների վրա: Մինչև այդ Հայկական Բարձրավանդակի այս կամ այն մասն էր դառնում ուրարտական թագավորության հողը: Այդ գրությունն մեջ ոչ մի թագավորություն դեռ չէր կարող իրեն համարել ամբողջ բարձրավանդակի տեր, հետևաբար և բնական սահմաններով պաշտպանված մի քաղաքական ամբողջություն: Մենուայի պատերազմական գործողությունները արևելքում հասան Ուրմիա լճին. Մաննայի երկիրը, որ կոչվածադի էր Ուրարտուսի և Ասորեստանի մեջ, ենթարկվեց առաջինին: Իսկ արևմուտքում Մենուան իր զենքը մտցրեց հեթիթների երկիրը: Գրավելով Պուտերիոս (հավանաբար այժմյան Պալու) քաղաքը, նա առաջացավ դեպի Մելիդա (Մելիտինե, Մալաթիա) քաղաքը և հաղթական պատերազմ ունեցավ այդտեղի թագավորի հետ: Հյուսիսում Մենուան վերջնականապես գրավեց ամբողջ Արածանիի հովիտը մինչև այս գետի խառնուրդը Եփրատի հետ, իր իշխանությունը տարածելով նաև էրզրումի սարահարթի վրա, մի բան, որ ապացուցանում է Հառան-Կալեում թողած նրա արձանագրությունը, թեև այդ հիշատակարանը պատմում է միայն այն, որ այդ կողմերում թագավորը մի տաճար վերանորոգեց: Մի անգամ մտնելով Արաքսի վերին հովիտը, Մենուան շարժվեց դեպի արևելք նույն հովիտով և Արաքսի աջ ափին, Մեծ Մասիսի ստորոտի մոտ, այժմյան Տաշրուրուն գյուղում թողեց արձանագրություն, որ վկայում է, թե նա նվաճեց Երիզուափին երկիրը և նրա մայրաքաղաք Լուխիունիսին և փոխելով վերջինիս անունը, կոչեց իր անունով Մենուահինի: Վանի թագավորների շարժումը դեպի հյուսիս Կուր գետի հովտի ուղղությամբ սկսված էր Մենուայից առաջ, բայց առանձնապես եռանդուն է դառնում Մենուայի և, ինչպես

կտեսնենք, նաև նրա հաջորդների օրով: Իսկ հարավում Մենուան իր ձեռքը գցեց Տարոն գավառը, Մուշի դաշտը<sup>1</sup>:

Իսկ ի՛նչ էր անում այդ միջոցին Ասորեստանը: Մենուան թագավորել է, ինչպես երևում է, Շամսի-Ռամմանի և նրա հաջորդ Ռամման-Նիրարիի ժամանակ: Սրանց օրով ասորական պետությունը դեռ այնքան թուլացած և ընկած չէր, որ չկարողանար իր հյուսիսային մրցակցի հաղթական քայլերը կանգնեցնելու փորձեր շանել: Ասորեստանը պիտի շնույլ տար Մենուայի շարժումները մանավանդ Եփրատի մյուս կողմում, Մելիդի կողմերը և առհասարակ հեթիթական երկրներում: Սակայն Մենուան իմանում էր թե ինչպես պետք է վախեցնել թշնամուն: Ուրմիայի լճի հարավ-արևմտյան կողմերն ունենալով իր տիրապետության տակ, նա սպառնում էր անցնել Զար գետի հովիտով՝ Ասորեստան արշավելու համար: Հարվածը այդ կողմից շատ էր վախեցնում ասորական թագավորին: Եվ նա ստիպված էր միայն հանդիսատես լինել, թե ինչպես էր աստիճանաբար, քայլ առ քայլ մեծանում Ուրարտուն:

Մենուայից մնացած սեպագրությունների թիվը հասնում է հիսունի<sup>2</sup>: Ուրարտական ոչ մի թագավոր այսպիսի քանակությամբ հուշարձաններ, ցրտված զանազան կողմերում, չէ թողել: Եվ արձանագրությունների այդ քանակության մեծագույն մասը պատմում է Մենուայի շինարարական գործերը թե որտե՛ղ, ի՛նչ պալատ, տաճար, կամ այլ հասարակաշահ շինություններ կառուցեց: Այդ բոլոր գործերի թագն ու պսակը այն է, ինչ Մենուան արել է Վանի մեջ և Վանի համար: Առաջին անգամ նա է, որ հիշում է իր արձանագրությունների մեջ Տուշպա քաղաքը, ուր բնակվում է ինքը: Այս մի ցուցմունք է, թե այդ քաղաքն էլ Մենուայի ձեռակերտն է: Միջնաբերդը, ինչպես գիտենք, կառուցել է Սարգուրի թագավորը. Մենուայի հիմնարկածը պետք է համարել ժայռի ստորոտից դեպի արևելք ձգվող այգիստանների քաղաքը<sup>3</sup>: Իսկ այգիստաններ գոյություն ստացան այն ժամանակ, երբ Մենուան գլուխ բերեց իր հսկայական, անօրինակ գործը՝ Վանի ջրանցքը:

Այդ հույակապ ձեռնարկությունը գոյություն ունի և այսօր: Բոլոր ժամանակներում նա հիացմունք է պատճառել տեսնողին և ժողովրդական ավանդությունը պատմում է, թե ինչպես նա շինվեց, բայց մոռացել է մեծագործության հեղինակին և նրա տեղ հիշատակում է ասորական կիսաառասպելական թագուհի Շամիրամին: Այսօր էլ այդ ջրմուղը կրում է այդ թագուհու անունը, մինչդեռ նրա եղբրքներին փորագրված սեպածև արձանագրություններից էրկուսը ասում են. «Նալդեո հզոր որդուց Մենուաս Իսպուհինի որդին այս պիլին (ջրմուղը) շինեց: Մենուասս ջրմուղ է անոր անունը»: Հայտնի է նույնիսկ, որ Մենուան մենակ չէ այդ մեծագործությունը կատարել, այլ նրա հետ է եղել և նրա մայր Տարիթասը<sup>5</sup>:

Մենուայի պիլին և նրա մասին պատմվող ավանդությունը Մովսես Խոբենացին ներկայացնում է հետևյալ գեղեցիկ նկարագրության մեջ. «Հրաճան

<sup>1</sup> Hyvernat, p. 529:  
<sup>2</sup> «Հանդես ամսօրեայ», 1893, էր. 48:  
<sup>3</sup> Линч, «Армения», т. II, с. 92.  
<sup>4</sup> «Հանդ. ամս.», 1893, էր. 50: Անկասկած են համարում, որ «պիլի» ուրարտյան լեզվով նշանակում է ջրմուղ» (Տե՛ս Մ. Мсерянц, «К интерпретации ванских подписей», М. 1897):  
<sup>5</sup> Անդ, էր. 86: Արձանագրությունը այսպես է թարգմանվում. «Մենուասս մորը Տարիթասս է այս հիշատակարանը Մենուասս տեղի (՝) կոչեց զայն»: Մեյսը կարծում է, որ այս տիկնոջ անունն է ժողովրդական ավանդության մեջ դարձել Շամիրամ թագուհի:



տայ բիւրոց և երկու հազար արանց անարուեստից գործաւորաց յասորեստան-  
եաց և յայլոց իշխեցելոց, և վեց հազար իւրոց ընտրելոց յամենայն արուեստա-  
ւոր գործաւորաց փայտի և քարի, պղնձոյ և երկաթոյ որք, ամենեքին կատարելաբ  
իցեն ի յարուեստագիտութեան, ածել անխափան ի փափագեալ տեղին և գործն  
հաւասար հրամանին առնոյր զկատարումն: Եւ վազվազակի ածեալ լինէին  
բազմութիւն խառնիճաղանճ գործաւորացն և բազմարուեստից հանճարեղաց  
իմաստնոցն: Եւ հրամայէ նախ զամբարտակ գետոյն ապառաժիւք և մեծամեծ  
վիճօք շինել, կրով և աւազով մածուցեալս. անբաւ լայնութեամբ և բարձրու-  
թեամբ, որ կայ հաստատուն, որպէս ասեն, մինչև ցայսօր ժամանակի: Եւ ի  
պատահուածս նոյն ամբարտակի գետոյն՝ այժմ որպէս լսեմք, մարդիկ աշ-  
խարհին ի հէն և ի զաղթականս փախստեամբ ամբանան, իբրև ի ծայրս քա-  
րանճաւաց լեռանց ամբարցեալք: Եւ թե զփորձ առնուլ դէպ ումեք լինիցի, և ոչ  
իբր պարսատկաց քար մի արժանաւոր ի շինուածոյ ամբարտակին խլել որ  
զօրեացէ, թէև մեծաւ աշխատութեամբ ջանայցէ: Եւ ի հեղուածս արուեստին որ  
զբարամք, հայեցեալ ուրուք, որպես ճարպոյ ինչ հեղման հայեցողացն երևե-  
ցուցանէ կարծիս»<sup>1</sup>:

Մեր օրերի սեխնիկական հրաշակերտություններին ընտանի մարդն ան-  
գամ Մենուտսի այս «պիլիի» վրա պակաս հիացմունք չէ արտահայտում: Եւ-  
միրամի գետը (Շամիրամ-սու) նկարագրել են շատերը, բայց լավագույնն այն  
է, որ տվել է դոկտոր Վալդեմար Բելթը: Ահա ինչպես է նա ներկայացնում  
աւրարտական արվեստի այս փառահեղ հուշարձանը.

«Շամիրամ-սու ըսվածը արվեստական ջրմուղ մըն է, որն որ Վանայ լճին  
հարավային արևելյան կողմը Հայոցձորի հարավային սահմանը կազմող  
բարձրաբերձ ժայռոտ լեռան մը ստորոտեն կը բխե և վերին Մեշինկերտեն ու  
ձողապ գետին վրային անցնելով՝ քանի մը գյուղեր ու քաղաքներ ոռոգանե-  
լեն ետև Վանա լիճը կը թափվի համանուն քաղաքին քիչ մը վար: Զրմուղին  
ակունքը հոկտեմբեր ամսույն մեջ՝ ամենեն չոր ժամանակը մանրկրորդի  
(վայրկյան) մը մեջ ապահովապես 1500 լիտր ջուր կուտան... Այս ջուրը, որ մեծ  
քանակությամբ ածխո թթու կը պարունակե, ժայռերու ճեղքվաններեն ելե-  
լով՝ անմիջապես գահավիժաբար ու մեծ շառաշյունով ժայռոտ գետնի վրա կը  
նետվի և ի սկզբան ուղղաճի ձողապ գետը կը թափվեր, որն որ ակունքեն 5  
քիլոմետր հեռու է... Ետքեն ընդհանուր օգտին համար ջրմուղը շինվեցավ ջուրը  
աղբյուրի քովն դարձնելով և ուղղելով դեպի վերին Մեշինկերտ, որ մեծ ավա-  
զան մը շինվեցավ զանոնք ժողովելու համար: Հոս՝ ըստ հին ավանդության՝  
ժամանակավ մեծ քաղաք մը կար: Վերին Մեշինկերտեն՝ ջրմուղին հատակը

<sup>1</sup> Խորենացի, Ա, ԺԶ: Աշխարհարար թարգմանությունը: «Հրամայեց իսկույն փափագած  
տեղը տասներկու հազար հասարակ գործավորներ բերել Ասորեստանից և իր իշխած ուրիշ եր-  
կրներից և վեց հազար ընտիր արվեստավոր գործավորներ փայտի և քարի, պղնձի և երկաթի  
որ ամենքն իրենց արվեստագիտության մեջ կատարյալ լինեին: Եվ գործը կատարվեցավ նրա  
հրամանի համեմատ: Ետտ բերվեցին բազմությամբ խառնիճաղանջ գործավորներ և հանճարելի  
իմաստուն արվեստագետներ: Շամիրամը հրամայեց նախ տեղի ամբարտակը շինել ապառաժ-  
ներով և խոշոր քարերով, և կրով ու ավազով միավորել անշափ լայնությամբ և բարձրությամբ,  
որը ինչպես ասում են, հաստատ կա մինչև այսօր: Եվ գետի այն ամբարտակի ճեղքերի մեջ  
այժմ, ինչպես լսում ենք, փախչում, ամբանում են այն աշխարհի ավազակ և թափառական  
մարդիկ, որպես թե ամբարցած լինեին սարերի քարաբլուրների մեջ: Եթե մեկին դեպք լինի փոր-  
ձելու, այն ամբարտակի շինությունից պարսատկի համար մի քար անգամ հանել չի կարողանա,  
որչափ մեծ աշխատությամբ և ջանար: Նայելով քարերը ճարտարությունամբ միմյանց կապող ավա-  
զին ու կրին, նայողը կկարծե, թե ճարպ լինի թափված» (Թարգմ. Խորեն. եպ. Ստեփաննի, Գեթ.,  
1897, էր. 44):

բարձրացնելով ջուրը տարված էր Ստորին Մեշինկերտ, և անկե բարձրաբերձ  
ձառերու հաստ կոճղերով շինված հաղթ խողովակով մը ձողապ գետին վրային  
մյուս կողմն անցված է: Խողապեն ասդին ջրմուղը ցցված ժայռերու և լեռան  
ստորոտին քովն դեպի արևմուտք՝ Իշխանիգոմ գյուղը կերթա՝ Սեռուլլասան,  
Կեմ, Քարավանց, Անող և Մաշքելտեք գյուղերը ոռոգանելով: Իշխանիգոմի  
քովը՝ լեռան հյուսիսային ստորոտը դառնալով՝ կամաց-կամաց դեպի արևելք  
կողովի, կանցնի Խաղամ, Քեռշկ, Ս. Վարդան և Խարապքո գյուղերեն և կեր-  
թա մինչև Արտամետ: Արտամետի ետևեն, Սըվստան գյուղեն ջրմուղը կը շրջի  
դեպի հյուսիս և կը վազե Վան քաղքեն հարավային կողմն եղած դաշտերու  
մեջն, ուր հավանականաբար հին ժամանակները Վանա հուշակավոր բուրաս-  
տաններն ու տունները կը գտնվեին, բայց հիմա մեծավ մասամբ անմշակ և  
խոպանացյալ երկիր մըն է: Հսիսք որ ջրմուղին ակունքը Վան քաղաքին 70  
քիլոմետր հեռու են. սակայն ջրմուղին երկայնությունը՝ անոր կորու-  
թյուններն ալ հաշվելով՝ 80 քիլոմետրի կը հասնի: Զուրը ձողապ գետի վրայն  
անցնելեն ետև մինչև Ս. Վարդան՝ ջրմուղին շինությունը մեծ դժվարությունց  
չէ հանդիպած, որովհետև մեծավ մասամբ կակուղ երկրե կանցնեիր. բայց այն-  
պես չէ Ս. Վարդանեն մինչև Արտամետ, ուր գետինն ապառաժուտ է և խորին  
վիհերով պատռված. հոս հարկ եղած էր ամենամեծ դժվարությամբ վի-  
հերուն եզերքը՝ հատակեն մինչև վեր 10—15 մետր և ավելի բարձր կիկլոպյան  
լայն պատեր շինել մեծ ու պզտիկ ժայռերու կտորներ առանց շաղախի վրայի  
վրա դիզելով և ջուրն անոնց վրայն անցընել: Եվ այս պատերը դեռ կեցած  
են: Այս ջրմուղին քովերը՝ վերեն մինչև վար զանազան տեղեր, գլխավորապես  
ուր շինությունը դժվարությունց հանդիպած է՝ ժայռերու վրա սեպաձև արձա-  
նագրություններ գտնված են»<sup>1</sup>:

Այսքան մեծ գործ կառող էր կատարել միայն այնպիսի մի թագավոր, որ  
շատ ուժեղ էր և հարուստ, ինչպես այս տեսնում ենք Արևելքի և մասնավորա-  
պես Եգիպտոսի պատմության մեջ: Ավանդությունը պատմում է, թե ջրմուղի  
վրա աշխատում էին 12 հազար ասորեստանցի և այլ տեղացի մշակներ: Գուցե  
այս տեղեկության մեջ իրականությունն է պահված, և այն ժամանակ կարելի  
պիտի լինեի ենթադրել, թե աշխատող ձեռքերի այդ ահագին բազմությունը  
պատերազմական գերիներ էին, ասորի և այլ նվաճված ազգերից: Սակայն  
այդքանով բան չէր կարելի գլուխ բերել: Ինքը Ուրարտուն էլ պիտի իր ինք-  
նուրույն մեծ աշխատանքն ունենար: Ասորեստանի և Քաղդեայի մեջ, ճիշտ է  
շատ ծաղկած էր ջրմուղներ շինելու արվեստը, բայց այդ կողմերի վարպետ-  
ները միշտ գործ ունենալով փափուկ հողի հետ, հարթ տարածությունների  
վրա միանգամայն անկարող պիտի ընեին, լեռնային մի ջրանցք շինելու մեջ:  
Նվաճել անդունդները ահագին քարե պատեր դարսելով, ժայռերի կտորներ պո-  
կել և դնել նրանց իրար վրա այնպես, որ անսասան մնան դարերի ընթաց-  
քում— այսպիսի գործ չէր կարող լինել Տիգրիս-Եփրատյան հովտում և այս-  
պիսի հսկայական կերտվածքներ, կիկլոպյան պատեր լեռնացու ձեռքից կա-  
րող էր դուրս գալ: Եվ ավանդությունն ասում է թե վեց հազար զանազան  
վարպետներ (փայտի, քարի, պղնձի և երկաթի), ամենքն էլ ճարտար և իմաս-  
տուն, դուրս հանվեցին ջրանցքի գործի համար, «իր ընտրությամբ», ալսինքն  
Սենուայի (ըստ ավանդության՝ Շամիրամի):

Այս հսկայական ձեռնարկությունը հսկայական ջանքերով գլուխ բերվեց  
պետության մայրաքաղաքը զարդարելու և շենացնելու համար: Երկիրը դուրս

<sup>1</sup> «Հանդ. ամս., 1899, էր. 84—85:



հանեց ինչ ուներ— և՛ տաղանդ, և՛ գիտություն, և՛ ժողովրդյան աշխատավոր մեծ ուժ: Եվ հասկանալի է այստեղից, թե ինչպի՛սի գեղեցկություններ պիտի ունենար իր մեջ ինքը քաղաքը, Մենուայան Դուսպան կամ Տուսպան: Ոչինչ չէր մնացել այդ գեղեցկություններից: Բայց եթե ավանդությունը, Շամիրամին վերագրելով ջրմուղի շինությունը, հավանականաբար պահպանել է իր մեջ այդ շինության վերաբերյալ իրական փաստեր. ներքի պետք է լինի, ուրեմն, ենթադրել, որ նույն ավանդության մեջ պահվել են հեռավոր արձագանքները այն մանրամասնությունների, որոնք քաղաքի հիմնարկությանն են վերաբերում: Խորենացին, պատմելով թե ինչպես ջրմուղը բերվեց մինչև քաղաք, շարունակում է. «Անդ հրամայել՝ զամբոխն ի բազում դասս որոշել. և ի վերայ փորաքանչիւրոց դասուց զընտիրս ի ճարտարացն վարդապետս կարգել. և այնպիսի սաստիկ ճգնութեան պահեալ, յետ սակաւ ամաց կատարէ զհրաշալին ամրագոնիւք պարսպօք, հանդերձ դրամք պղնձակերտիւք: Եինէ և ընտիր ընտիրս և բազումս ի մէջ քաղաքին ապարանս ի պէս պէս քարանց և ի գոնից զարդարեալս, կրկնայարկս և եռայարկս. և ըստ պատեհի իւրաքանչիւր՝ արեգակնակս և գեղեցկագունյուք և ընդարձակ փողոցիւք զկողմանս քաղաքին որոշելով: Եինէ զընաղս ոմանս և զզարմանալոյ արժանաւորս ըստ պիտոյից ի միջոցաց քաղաքին լուալիս: Եւ զմասն ինչ գետոյն՝ ընդմէջ քաղաքին բաշխեալ զնացուցանէ ի պէտս ամենայն պիտոյից և յարբուցմունս բուրաստանաց և ծաղկոցաց և զայն զեզերք ծովակին յաջմէ և յահեկէ, քաղաքին և բովանդակ շրջակային յարբուցումն: Եւ զամենայն արեւելեան և զհիւսիսային և զհարաւային կողմանս քաղաքին զարդարէ դաստակերտօք և սաղարթիւք ծառոց վարսաւորաց՝ զանազանեալք ի պտուղս և ի տերևս և բազումս բազմաբերս և գինեբերս ի նմա տնկեաց ովիտս: Եւ ամենայնիւ հոյակապ և հոշակաւոր զպարսպեալն յօրինէր և անթիւ բազմութիւն մարդկան ի ներքս բնակեցուցանէ: Իսկ զծայր քաղաքին և որ ինչի նմանէ գործոյ հրաշակերտութիւնք, բազմաց ի մարդկանէ ոչ հասու լեալ և ոչ պատմել է կարողութիւն: Զորոյ պարսպեալ զգագաթն՝ դժուարամուտս ոմանս և դժոխեղանելիս ի նմա՝ յօրինէ շինուածս արքայանիստս և ծածուկ իմն ահագին»<sup>3</sup>:

**6. Արգիշտի Ա. (մոտ 780—755):** Մենուային հաջորդեց նրա որդի Արգիշտին (կամ Արգիստիս): Սա Ուրարտուի թագավորությունը հասցրեց

- 1 Խոսքը միշտ Շամիրամի մասին է, բայց իրապես Մենուան է կանգնած մեր առջև
- 2 Զրմուղի:
- 3 Խորենացի, Ա, ԺԶ. «Այնտեղ Շամիրամը հրամայեց այն ամբոխը դաս-դաս որոշել և յուրաքանչյուր դասի վրա վարպետ կարգել ճարտարներից ընտիրներին, և այսպես պահելով նոցա մեծ աշխատութեամբ սակավ տարիներից հետո ավարտեց հրաշալի շինությունը, ամբարսպակներով և պղնձե դռներով: Քաղաքի մեջ շինեց պես-պես քարերից և գույններից, զարդարված կրկնահարկ և եռահարկ ընտիր-ընտիր, ապարանքներ և հարմարություններ համեմատ առանձին վերնատներ: Գեղեցկագույն և ընդարձակ փողոցներով բաժանեց նա քաղաքի կողմերը: Քաղաքի մեջ հարկավոր տեղերում քանի մի շքանաղ և զարմանալի բաղանջներ շինեց: Գետի մի մասը բաշխեց քաղաքի մեջ ամենայն պիտույի համար, բուրաստաններ և ծաղկանոցներ ընդ յուր, իսկ մյուս մասը ծովակի աջ ու ձախ ափերի մոտ՝ քաղաքը և նրա բոլոր շրջակայքը ընդլուծելով քաղաքի բոլոր արևելյան, հյուսիսային և հարավային կողմերը զարդարեց շինություններով և միջանցից պտուղներով և տերևներով զանազանվող տերևալի հյուղավոր ծառերով, այն տնկեց այնտեղ շատ բազմաբեր գինեբեր որթեր: Եվ այս պարսպված քաղաքը ամեն կերպով հոյակապ և հոշակավոր շինեց և մեջը մարդկանց անթիվ բազմություն բնակեցրեց: Իսկ քաղաքի ծայրը և նրա մեջ եղած հրաշակերտ շինությունները շատերը շին կարողացել հասկանալու պատմելու կարողություն ևս չկա: Քարաբլրի գագաթը պարսպելով, նրա մեջ թագավորանիստ ծածուկ և ահագին շինվածներ շինեց, ուր մտնել և դուրս գալը սարսափելի է» (Ստեփանն, եր. 43—46):

մեծության գաղաթնակետին, հանդիսանալով մի մեծ աշխարհակալ, մեկը ահարկու աչք նվաճողներից, որոնք տնօրինում էին Ասիայի ճակատագիրը: Արգիշտին շատ քիչ արձանագրություններ է թողել զանազան շինությունների, կրոնական-կուլտուրական հաստատությունների մասին: Դրա փոխարեն արշավանքներ և նվաճումներ պատմող արձանագրությունները շատ ընդարձակ են և պարզապես ցույց են տալիս, որ Վանի այս թագավորը ժամանակ շուներ ներքին շինարարական գործունեությամբ շատ զբաղվելու, քանի որ իր թագավորության մեծագույն մասը անց է կացրել արշավանքների մեջ:

Բայց որ պատերազմական դաշտի մեծ նվաճող կարող էր մեծ նվաճումներ անել և խաղաղ աշխատանքի ասպարեզում, այդ վկայում է նրա՝ նմանը լուսնեցող հուշարձանը: Վանի ժայռի կենտրոնական, ամենաբարձր կողմին գտնվում է մի քարայր, որ անվանվում է այժմ Խորխոր: Քարայրը մուտք է ժայռի մեջ փորված մի շարք սենյակների, որոնք զարմանք են հարուցել ամեն ժամանակ, քանի որ նյութը, այն է՝ քարը, շատ կարծր է: Ով է շինել տվել այս սենյակները—հայտնի չէ: Նույն հին ավանդությունը վերագրում է այս մեծագործությունն էլ առասպելական Շամիրամին: «Իսկ զընդդէմ արեգակն կողմն անձաւին,— ասում է նա,— որ և ոչ մի գիծ մի երկաթեայ այժմ վերագրել ոք կարէ, զայսպիսի կարծրութիւն նիւթոց՝ պէս պէս տաճարս և սենեակս օթից և տունս գանձուց և վիհս երկարս, ոչ գիտէ ոք թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց»<sup>1</sup>: Այդ զարմանալի քարայրի մուտքի ձախ կողմին և ճակատին փորագրված է մի վիթխարի սեպածե արձանագրություն, բաղկացած շուրջ 400 տողից,— մեծագույնը այն բոլոր արձանագրություններից, որոնք երբևիցե փորվել են քարի վրա: Խորենացին պատմում է, թե այդ էլ Շամիրամի գործն է: «Իսկ զամենայն երեսս քարին իբր գրչաւ զմոմ հարթել, բալում գիրս ի նմա գրեաց, որոյ հայեցումն միայն այն զամենայն ոք ի զարմանս ածէ»<sup>2</sup>: Սակայն այսօր պարզ է, որ այդ վիթխարի արձանագրությունը փորագրել է տվել Արգիշտին, նրա մեջ իր արշավանքներն ու նվաճումները պատմելու համար:

Թվում է, թե Վանի մեծ թագավորը այդ գործը կատարել է իր թագավորության վերջում<sup>3</sup>: Արձանագրությունն ըստ բովանդակության բաժանվում է 15 մասի, որոնցից 14-ը արշավանքներ է նկարագրում, իսկ վերջին մասը եզրակացություն է: Ենթադրում են, որ 14 արշավանքները պետք է կատարված լինեն 14 տարվա ընթացքում, սկսած թագավորության առաջին տարուց: Նրանք նկարագրված են մեծ արձանագրության մեջ ժամանակագրական կարգով: Արշավանքները երեք զխափոր ուղղությամբ են տարվել դեպի հյուսիս և հյուսիս-արևելք, դեպի հարավ-արևելք և դեպի հարավ-արևմուտք:

Դեպի հյուսիսային երկրները կատարած արշավանքների ուղղությունները ցույց են տալիս այն արձանագրությունները, որ Արգիշտին թողել է զանազան կողմերում: Մենք տեսանք, որ Մենուան, Արգիշտիի հայրը, նվաճել էր Արաքսի վերին հոսանքը, ինչպես այդ ցույց է տալիս Հասան-Կալի արձանագրությունը և այդտեղից էլ, Արաքսի հովիտով դուրս Կալավ Արարատյան դաշ-

<sup>1</sup> Անդ. «Իսկ քարաբլրի արեգակի դեմ եղած կողմը, որի վրա այժմ ոչ ոք չէ կարող երկաթով մի գիծ քաշել—այնքան պինդ է նյութը— Շամիրամը զանազան պայատներ, սենյակներ, գանձատներ և երկար վիհեր հրաշակերտած է՝ ոչ ոք չգիտե ինչ նպատակի համար»:

<sup>2</sup> Անդ. «Իսկ քարի բոլոր երեսի վրա, կարծես գրչով մոմի վրա, շատ գրեր գրեց, որոնց մեջը միայն զարմացում է ամենքին» (Ստեփանն, եր. 46):

<sup>3</sup> Hyvernat, p. 537.

տը, ուր իր տիրապետության տակ ձգեց Արաքսի աջ ափը, մինչև Մասիսի ստորոտները: Այս արշավանքը մի նախապատրաստական աշխատանք էր նրա հաջորդների համար: Վանի թագավորները, ինչպես ասացինք, ձգտում էին իրենց թագավորությունն ամփոփել այն բնական սահմանների մեջ, որ բնութագրի ստացել է Հայկական Բարձրավանդակը: Եվ այդ ձգտումը նրանց տանում էր դեպի Փոքր Կովկասի լեռնաշղթաները և դրանց մեջ բացված անցքերով՝ դեպի Կուր գետի հովիտը: Արգիստին, այս հյուսիսային սահմաններին հասնելու համար, բռնեց այն ճանապարհը, որ Արաքսի վերին հոսանքներից տանում է Ախուրյան գետի (այժմյան Կարս-չայի) ակունքները և այդտեղից, գետի հովիտով, հասցնում է այժմյան Արփա-չայի հովիտը (Ալեքսանդրապոլի դաշտավայրը): Այս այն շափազանց կարևոր ռազմական ճանապարհն է, որ տանում է Ալեքսանդրապոլից, Կարսի վրայով, էրզրում, մի ճանապարհ, որի նշանակությունն ըմբռնված է եղել հին ժամանակներից: Առաջ խնդրվում այս ուղղությամբ, Արգիշտին նվաճեց Իշկիզուլու երկրի Իրգանխունի քաղաքը, որ համապատասխանում է այժմյան Ղանլիջային (Ալեքսանդրապոլի շրջակայքը): Այս տեղը կազմում է հյուսիսային այն ամենահեռու կետը, ուր Վանի թագավորների շարժումը նշանակված է արձանագրություններով:

Բայց Արգիշտիի համար ավելի մեծ գործ եղավ Արաքսի միջին հովիտի նվաճումը: Իր հոր՝ Մենուայի նվաճած երկրից (Մենուահինիլի քաղաքից) նա անցավ Արաքսի ձախ ափը և այստեղ այն բլուրի վրա, որ քարձրանում է դաշտի մեջ և որ հետո, հայկական հին պատմության շրջանում, դարձավ մայրաքաղաք Արմավիր անունով, իր համար մայրաքաղաք կառուցեց, այսինքն իր կայանի տեղը՝ պատերազմական գործողությունների ժամանակ և անվանեց այդ ձեռնակերտը իր անունով — Արգիշտիհինիլի, այն է՝ Արգիշտիի քաղաք:

Ինչպես երևում է, այստեղ գոյություն ունեն մի հին քաղաք, որ և վերանորոգեց Արգիշտին, ինչպես որ արձանագրության մեջ ասում է, թե վերանորոգեց պալատը:

Թե որքան կարևոր նշանակություն ստացավ Արգիշտիհինիլին ուրարտական պատմության մեջ, այդ ցույց է տալիս այն հանգամանքը, որ այստեղ գտնվել են մինչև այժմ 12 սեպածե արձանագրություններ: Ենթադրվում է, որ այս քաղաքը մինչև Արգիշտիի ձեռքն ընկնելը կարևոր կրոնական նշանակություն ուներ, որովհետև նա արձանագրությունների մեջ կոչվում է Խալդի աստծու երկիր: Այդ նշանակությունը նա պահպանեց և Վանի թագավորների սեփականությունը դառնալուց հետո. և այստեղ էլ, ինչպես Վանում, կար մի արձանագրություն, որ սահմանում էր աստվածներին մատուցանելիք զոհերի թիվը:

Արգիշտին բարձրացրեց իր ոստանի քաղաքական և ռազմական նշանակությունը: Իսկ առաջավոր մի դիրք էր այն ռազմական գործողությունների համար, որոնք թելադրվում էին Արաքսի հովիտի և նրա հյուսիսային կողմերը եզերող լեռնազավառի աշխարհագրական դիրքով: Այդտեղից հեռու չէին Քասախ և Հրազդան (Ջանգու) գետերի հովիտները, որոնք բնական ճանապարհներ էին դեպի հյուսիս: Մեծ նվաճողը առանձին ուղղություն դարձրեց Արաքսի լեռան վրա, որի հարավային ստորոտները, մանավանդ, ներկայացնում էին մի գեղեցիկ և արգավանդ երկիր: Այդ երկիրը, որ հայկական աշխարհագրության մեջ հայտնի է Արագածոտն անունով, Արգիշտին իր անունով կոչեց Արգիշտինա և Արգիշտիհինիլի (Արմավիր) քաղաքը դարձավ այդ գեղեցիկ երկրի

<sup>1</sup> Այստեղից էլ հեռու, դեպի հյուսիս-արևմուտք, Չրլոբը լճի ափին, Իվանովսկին գտել է մի ուրարտական բերդ, սակայն, հակառակ սովորականի, առանց արձանագրության. («По Закавказью», с. 82):

կենտրոնը: Քասախ գետի հովիտում այսօր էլ երևում են նշանավոր հին բերդեր և ժայռերի մեջ փորված տներ (Ամբերդ և Բյուրական): Ենթադրում են, որ դրանք ուրարտական թագավորների ժամանակներից են: Արգիշտին Քասախի հովիտով և Արաքսի կիրճով հասավ Արագածի հյուսիսային ստորոտին, ուր նվաճեց Կուլիախի երկիրը (այժմ Ղուլիջան): Արագածի հյուսիսային և հարավային ստորոտներին տիրելով միայն կարելի էր ամուր կերպով հաստատված լինել Արաքսի հովիտում: Արգիշտին այս ռազմական ծրագիրը գլուխ բերելուց հետո, մտավ մյուս նշանավոր լեռնանցքը, որ Արաքսի հովիտից Ջանգլի հովիտով տանում է Կուրի հովիտը: Այս ուղղությամբ արշավելիս Արգիշտին արձանագրություններ է թողել Երևանի մոտ, Ղանլի-Քափա տեղում, էլլարի կիրճում և հասել է Սևանի լճի հարավ-արևմտյան ծայրին, ուր այսօր էլ Օրդալլու գյուղի սեպածե արձանագրությունը հիշատակում է հռչակավոր թագավորի անունը:

Այդտեղից նրան մնում էր իջնել Դիլիջանի կիրճը, որպեսզի Աղստաֆա գետի հովիտով դուրս գա Կուր գետի հովիտը: Արգիշտի կարողացա՞ն նա կամ նրա հաջորդները կատարել այսքան նշանավոր առաջխաղացություն: Մասպերոն կարծում է, որ ուրարտական թագավորները կարողացան իրենց իշխանությունը հաստատել Կուրի հովիտում և մինչև իսկ կասպիական տափարակների մի մասում: Եթե այս ճիշտ է, այն ժամանակ պետք է լինի որոնել այդ ճանապարհը, որով այդ թագավորները դուրս եկան Փոքր Կովկասի և Մեծ Կովկասի մեջ տարածված մեծ դաշտը: Եթե ոչ Արգիշտին, գոնե նրա ժառանգները նվաճեցին նաև այն երկրները, որոնք Սևանի լճի հարավ-արևելյան ծայրի ուղղությամբ էին գտնվում: Այստեղից կարելի է իջնել Թարթառ գետի հովիտը, որ Արցախի լեռների միջով տանում հանում է Կուր գետի աջ ափը: Ամենակարճ ճանապարհն այս է: Տարբարախտաբար, այս ուղղությամբ հետազոտված չէ երկիրը: Եվ ո՞վ գիտե, գուցե ժամանակը երբևիցե երևան հանն արձանագրություններ, որոնք ցույց կտան, թե վանյան բանակները քայլել են այս կողմերով՝ դեպի Աղվանից մեծ դաշտավայրը:

Եվ այսպես, Արգիշտին իր քաղաքի գործողություններով միացրեց իր ձեռքի տակ այն բազմաթիվ մասն անկախությունները, որոնք գտնվում էին Արաքսից դեպի հյուսիս՝ սկսած Ախուրյանի ակունքներից մինչև Սևանի լճի հյուսիս-արևմտյան ծայրերը: Այս մի ընդարձակ ձեռնարկություն էր այն մեծ ծրագրի մեջ, որ պետական շինարարությունը ամբողջացնելու ձգտումն ուներ: Բայց այդ ծրագրի մեծագույն մասը տեղավորված էր արդեն Ուրմիայի լճի արևմուտյան և հարավ-արևմտյան կողմերում: Արգիշտին հիշատակում է բազմաթիվ արշավանքներ դեպի Մաննայի երկիրը, արշավանքներ, որոնք վերջանում էին կատարյալ հաջողությամբ և հաղթողի ձեռքն էին տալիս ահագին քանակությամբ գեղեցիկ, ավար և այլն: Այս պատերազմական գործողությունները շափազանց կարևոր նշանակություն ունեին Ուրարտուի համար. նրանցով էր լուծվում պատմական մի մեծ պայքար և Վանի թագավորությունը իր գոյության խնդիրներն էր արժարժում պատերազմական դաշտերում:

Տեղային իշխանությունները ընկճելու հոգսը չէր միայն, որ հարկադրում էր Արգիշտիին այնքան մեծ եռանդով գործողություններ կատարել Ուրմիայի լճի շրջականերում: Այդտեղ նրա դեմ կանգնած էր գաղավոր ոստիսը — Ասորեստան:

<sup>1</sup> Никольский, «Клинообразные надписи Закавказья», с. 70—83.

<sup>2</sup> Maspero, t. III, p. 54.

տանը՝ Եվ այդ տեղերում էլ վճռվում էր, թե ո՛վ պիտի լինի Առաջավոր Ասիայի տերը:

Այսպիսի մի մեծ պայքարի մեջ Արգիշտիին հովանավորում էին մի քանի նպաստավոր հանգամանքներ և ամենից շատ՝ Ասորեստանի դրուժյունը: Ռամման-Նիրարի թագավորից հետո ասորական պատմության մեջ գալիս է մոտ 38 տարվա մի շրջան, որից մանրամասն արձանագրություններ չեն մնացել: Իսկ սա արդեն նշանակում է քաղաքական ուժի անկում: Այս մի ժամանակ է, երբ Ասորեստանն ունեցավ իրար հաջորդող երեք թույլ թագավորներ, երբ նա այլևս չէր կարողանում հարձակվել ուրիշների վրա և երբ, ուրեմն, ուրիշները պիտի հարձակվեին նրա վրա: Միայն ասորական համառոտ տարեգրություններն են, որ տեղեկություններ են տալիս այս անկման ժամանակների մասին: Ռամման-Նիրարի հաջորդն էր Սալմանասար Գ(783—773), իսկ սրան հաջորդեց Ասուր-դան (773—755): Արգիշտին այս երկու թագավորների ժամանակակիցն է համարվում<sup>2</sup>: Համառոտ տարեգրությունը Սալմանասար Գ-ի թագավորության 6 տարին նշանակում է «ղեպի Ուրարտու» խոսքերով: Սա պիտի նշանակե թե այդ թագավորը արշավանքներ է արել ղեպի Ուրարտու: Բայց Արգիշտիի մեծ արձանագրությունը Վանի ժայռի վրա բացատրում է, որ ընդհակառակն, Արգիշտին իր թագավորության 5, 6, 8-րդ տարիներում հատուկ արշավանքներ է ունեցել Ասորեստանի դեմ, իսկ 9, 10, 12 և 13-րդ տարիները արշավել է Մաննայի երկիրը, որ «համարյա համանիշ է,— ասում է նիկոսիսը,— Ասորեստանի վրա հարձակվելուն»: Սալմանասարը, այսպիսով, լոկ պաշտպանողական դիրք էր բռնած, այն էլ առանց որևէ հաջողության, քանի որ Արգիշտին վճռական հարված հասցրեց Միջագետքի մեծ պետության և իջեցրեց նրան ֆրկորդական աստիճանի: Վանի մեծ արձանագրության մեջ ներք տեղ Արգիշտին գրում է, թե ինքը նվաճել է Ասորեստանի երկրները<sup>3</sup>: Տարաբախտաբար պակասում են մանրամասնություններ և մենք գուցե միայն ենթադրաբար ասենք, թե Արգիշտին իր հաղթական բանակը մտցրել է բուն Ասորեստանի սահմաններից ներս: Այս տեսակ մի ենթադրության հիմք տալիս է արձանագրության մի նախադասությունը, որ Արգիշտին շնորհակալություն է հայտնում աստվածներին, որ Ասորեստանի երկիրը պարզեցին իր ժառանգներին: Այս առիթով նիկոսիսը գրում է. «Եթե Վանի թագավորի այդ արտահայտությունը, թե աստվածները այս կամ այն երկիրը տվել են պարզել իր ժառանգներին, պետք է հասկանալ այն մտքով, թե նվաճած երկրները պարտավոր էին հարկ տալ, այն ժամանակ մենք պետք է ընդունենք թե և մեծ Ասորեստանը պարտավորված էր հնազանդվել Ուրարտուին հարկ տալու ստորացուցի վիճակին»<sup>4</sup>: Եվ բոլորովին անհնարին չէր, որ Ասորեստանը այսքան ստորանար, քանի որ նրա դրուժյունը այդ միջոցներին շատ էր դժբախտ: Երկրի մեջ տիրում էր անիշխանություն, քրմական դասակարգը ապստամբություններ հարուցեց իր կորցրած իրավունքները վերականգնելու համար: Դա մի կատարյալ հաղթանակ էր, որ տաճարը տանում էր գինվորական դասակարգի վրա: Բացի դրանից սաստիկ երկյուղ և լքում տարածեց արեգակի խավարումը 763 թվին: Նա համարվեց մի վատ նշան ապագա դժբախտությունների: Եվ իրավ, 759 թվին երկրում տարածվեցին համաճարակ հիվանդություններ: Հասկանալի է, որ այժ

<sup>1</sup> Винклер, с. 63:

<sup>2</sup> Винклер, с. 127:

<sup>3</sup> Sandalgian, p. p. 77, 83, 93.

<sup>4</sup> Никольский, «Клин. над. Ван. царей», с. 409.

վիճակի մեջ ընկած մեծ պետությունը չպիտի կարողանալ դիմանալ Ուրարտուի հուժկու բախումներին:

Եվ Արգիշտին ձգտելով միանգամայն տիրանալ իր հաղթություններով ստեղծված դրուժյան, շմոռացավ այն ճանապարհը, որ գծել էր իր հայր Մենուան հարավ-արևմտյան ուղղությամբ: Անցնելով Եփրատը, նա մտավ հաթերի երկիրը, նվաճեց նույնիսկ Մալաթիա (Մելիտինե) քաղաքը և այլ ամրություններ<sup>1</sup>: Ո՛ւր էր տանում այդ ճանապարհը Վանի թագավորներին: Հաստատվելով հյուսիսային Սիրիայում, ուրարտական զենքը կարող էր այդտեղից առաջանալ ղեպի Պաղեստին և ապա ձախ թևի վրա շարժում գործելով, նույնիսկ մտնել Քաղդես, ուր Վանի թագավորը կգտներ պատրաստ իր համար Շումերի և Ակկադի թագավորի տիտղոսը, որ զարդարում էր Ասորեստանի թագավորներին: Առաջ բերելով այս հավանականությունները, նիկոսիսը ասում է. «Ուրարտական հզոր թագավորությունը հյուսիսում բավական ուժեղ կլիներ հակադրելու համար արիացի թափառականների, այն է՝ կիմմերացիների, սկյութացիների և ուրիշների շարժումներին և համաշխարհային պատմության տեսքը այն ժամանակ բոլորովին այլ կլիներ»<sup>2</sup>:

Այս բանը, սակայն, տեղի չունեցավ: Եվ այս ոչ թե Արգիշտիի պատճառով: Նա մեռավ փառքի գագաթնակետին հասած և մինչև մահը նվաճողի բախտը չդավաճանեց նրան: Մեզ մնում է բնորոշել այդ նվաճողին արձանագրությունների տված նյութերով, տեսնել, թե ինչպես էր նա արշավանքներ գործում: Ահա մի կտոր նրա մեծ արձանագրությունից. «Նուաճեցի երկիրն Սերիաչեայ, զքաղաքս այրեցի, զպալատս խարխարել ետու: Տիրեցեալ վիճակի քաղաքին Պուտեայ, զաղջիուսս երկրին Բիստու և երկրին Խուսանեայ փոխադրեցի ընդ պատանիս երկրին Տարիուսայ: Արշաւեալ յերկիրն Զարախանսայց, նուաճեցի զերկիրն Զարախանսայց վիճակին: Տիրացեալ վիճակի քաղաքին Հուզինաքիդունայ, բոլոր երկրին Շիրիմուտրայ և երկրին Բարանեայ, զպատանիս քաղաքին Մաբալուսի և երկրին Իգասանսց փոխադրեցի: Ասպատակեալ Երիասայ, որդւոյ յերկիրս, արշաւեալ յերկիրն Աբուսացուոյ, նուաճեցի զքաղաքն Ուրիւնուս, զքաղաքն արթայական ու ի քաջազարմից 19255 տղայս, 10146 զինարս զերիս, 23280 կանայս, ընդ ամենայն 5 քիւր 2695 խոռվարարս զնոսա զամենեսին կենդանոյն կալայ, զամենեսին գերի տարայ, 1104 երկվարս վարեալ բերի, 35016 եզինս, 10 բիւր 1829 (101, 829) ոչխարք»<sup>3</sup>:

Այս պատմությունը ամենից առաջ վկայում է, որ Վանի նվաճողները նմանվում էին Ասորեստանի թագավորներին: Այրել, քանդել, ամայացնել—այս գործողություններն են հաղթական պարծենկոտության առարկաները: Բայց և այնպես, տարբերությունը ուրարտացիների և ասորիների մեջ նույնպես աչքի ընկնող է և այս հանգամանքի մեջ խոսում է, անշուշտ, ցեղերի հոգեբանությունը: Արգիշտիի և ուրիշ թագավորների արձանագրությունների մեջ չկա այն հղիացումը զազանական արարքներով, որ այնպիսի մանրամասնություններով հանդես է գալիս ասորական պատմիչների մեջ: Ուրարտացիները, ինչպես երևում է, աշխատում էին ավելորդ սպանություններից խուսափել և լայն շահերով գործադրում էին գերեվարությունը: Գերիները փոխադրում էին մի երկրից մյուս երկիրը: Միտ ղնելով այն հանգամանքին, որ գերի էին վերցվում մեծագույն մասամբ կանայք և երեխաներ, կարելի է ենթադրել, որ ստրկու-

<sup>1</sup> Seyce, „Les Hetéens“. p. 51.

<sup>2</sup> Никольский, «Клин. над. Ван. царей», с. 410.

<sup>3</sup> Sandalgian, p. 59—62.

թյունը Ուրարտուի մեջ պակաս զարգացած չէր, քան հին աշխարհի ուրիշ երկրներում:

**7. Սարգուրի Բ (755—730):** Մեծ Արգիշտիից հետո Ուրարտուն սկսում է արագ իջնել քաղաքական ուժի բարձրությունից: Եվ այս անկումը չէ կարելի համարել հետևանք Արգիշտիի հաջորդների անկարողության: Նրա որդի Սարգուրի Բ իր հորից պակաս հաջողությամբ չէր պատերազմական գործողություններ մղում հարավ-արևելքում, հարավ-արևմուտքում և մանավանդ հյուսիս-արևելքում, ուր նրա արշավանքները նշանակված են Սևանի լճի հարավային ափերում մնացած սեպածև արծանագրություններով: Նա իրեն անվանում է «թագավորների թագավոր», «հզոր թագավոր», «թագավոր Սուրասի»<sup>1</sup> և Մանայի երկրում, ինչպես հեթիթների մոտ, Մալաթիայի դեմ մղած պատերազմները և նվաճումները նկարագրում է ճիշտ իր հոր նման, պատմելով մեկիկ-մեկիկ, թե որքան ավար է վերցրել, թե քանի կանայք և երեխաներ է գերի տարել: Սարգուրին այսպիսով, հանդիսանում էր իր հոր արժանի ժառանգը: Գուցե նույնիսկ հաջողվեք նրան հոր կատարյալ օրինակը ներկայացնել, եթե չպակասեր մի հանգամանք, որ Արգիշտիի և Ուրարտուի բախտի աստղն էր, այն է՝ Ասորեստանի թուլությունը:

Երբ Սարգուրին գահ բարձրացավ, Ասորեստանում թագավորում էր Ասուր-Նիրարին, որի կարճատև գահակալությունը խառնակությունների մի ժամանակամիջոց էր: Մենք տեսանք, որ հաղթել էր քրմական հեղափոխությունը և նրան ենթարկվել էր գինվորական ուժը: Ասուր-Նիրարիի թագավորությունը համառոտ ժամանակագրության մեջ նշանակված է «տանը» խոսքով, այսինքն թե ասորական թագավորությունը արտաքին արշավանքներ չէր կատարում: Այսպիսի մի թագավորի ժամանակ Վանի Սարգուրին կարող էր իր զենքի հաղթանակները տոնել: Բայց Ասորեստանը դեռ զառամյալ մի պետություն չէր, որպեսզի չկարողանար դուրս գալ անկման և մահանման քնի դրությունից: Նորից տեղի ունեցավ հեղափոխություն և այս անգամ հաղթողն արդեն գինվորականությունն էր: Թագավորող տոհմին չպատկանող մեկը գահի հափշտակիչ հանդիսացավ և սկսեց թագավորել Թիգլաթպալասար Գ անունով (745—727): Նրա հետ սկսվում էր ասորական երրորդ կայսրությունը, որ ասորական ուժը ամենաբարձր աստիճանին պիտի հասցներ, որպեսզի հետո կործանե այդ մեծ պետությունը:

Թիգլաթպալասարի առաջնորդությամբ ասորական բանակը նորից սկսեց հաղթական արշավանքներ սփռել արևմտյան Ասիայում: Թագավորը հարձակվեց Մեդիայի (Մարաստան) վրա, հասավ Կասպից ծովի հարավային երկրներին: Բայց գլխավորն այդ չէր. ձգտումը դեպի Միջերկրական ծովի ափերը, դեպի այն հարուստ երկրները, որոնք այդտեղ էին ծաղկած, թագավորի առաջնում էր մեծ և ահավոր հարցը՝ Ուրարտուի հարցը: Ընդհարումն այդ պետության հետ անխուսափելի էր ոչ միայն այն պատճառով, որ վերանորոգված Ասորեստանը պիտի վրեժ հաներ իր ուժեղ թշնամուց նախկին պարտությունների և ստորացման համար, այլ մանավանդ այն պատճառով, որ միայն այդ պետությունը խորտակելուց հետո կարելի էր ազատորեն գործողություններ սկսել Միջերկրականի ափերի վրա: Գահ բարձրանալու օրից Թիգլաթպալասարը հարմարություն էր որոնում Սարգուրիի հետ շափվելու: Զեռնարկությունը շափազանց վտանգավոր էր, բավական էր, որ Ասորեստանը մի ան-

<sup>1</sup> Hyvernat, p. 537.

գամ էլ պարտություն կրե Ուրարտուի կողմից և նրա ճակատագիրը վերջնականապես վճռված կլիներ: Ուստի պահանջվում էր առանձին զգուշություն և կանխատեսություն:

Եվ Ասորեստանի նոր թագավորը մեծ իմաստությամբ լուծեց իր առջև դրած ծանր հարցը: Նա վճռեց հանդիպել Սարգուրիին ոչ թե նրա երկրում, ուր պայմանները աննպաստ էին ասորական զորքերի համար, այլ հյուսիսային Միդիայում, հեթիթական այն երկրներում, որոնք նվաճված էին Վանի թագավորների ձեռքով և նրանց վասալներն էին: 743 թվականի գարնանը նա անցավ Եփրատը և պաշարեց Արպադ բերդը, որ բաց արավ իր դռները նրա առջև: Սարգուրին օգնության հասավ մի շատ մեծ բանակով, որ թվով գուցե մեծ էր ասորական բանակից: Ուրարտական բանակում էին գտնվում և Սարգուրիի հզոր վասալները՝ Ագունիի թագավոր Մատիլու, Կունմուխի թագավոր Կուլտաշի, Մալաթիայի թագավոր Սուլումալ, Գամգումի թագավոր Թարխուլաբա: Այսպիսով ուրարտական և հեթիթական իշխողների մի միություն էր, որ դուրս էր եկել Ասորեստանի դեմ:

Ճակատամարտը տեղի ունեցավ Կունմուխի մեջ, ոչ հեռու Եփրատից: Նա տեղի մի ամբողջ օր, որի ընթացքում երկու թագավորները իրար հանդիպեցին կովի դաշտի վրա: Իրիկնապահին, վերջապես, ուրարտական կառախմբերը և այրուձին ցրվեցին և սկսվեց խառնաշփոթությունը: Հաղթող ասորեստանցիները խուժեցին ուրարտական բանակը փախչողների ետևից: Սարգուրին թողեց իր կառքը, բայց միայն մի մատակ ձի գտավ իրեն փրկելու համար և հեծավ արդ ձին, շնայած որ դեռ այն ժամանակից արևելքում հարգաբեկ, անպատիվ մի բան էր համարվում այդպիսի մի հեծանելի գործածելը: Ամբողջ փշնորը ձիավարելով Սարգուրին, որին քայլ առ քայլ հալածում էր ասորական մի հեծալու զորաբաժին, դժվարությամբ հասավ Եփրատի կամուրջին: Այստեղ, սեպացած եզրին, կանգ առան հալածողները, և Ուրարտուի թագավորը ողջ առողջ մտավ իր երկիրը: Նա կորցրել էր մոտ 73.000 մարդ, մեռած թե գերի, իր կառքերը, իր ամբողջ ծանրոցը: Նրավրանը, որի մեջ գտնվում էին թագավորական զարդերը, մահճակալը, շարժական գահը, բարձերը, պատգարակները, ամբողջովին ընկավ թշնամու ձեռքը: Թիգլաթպալասարը այդ բոլորը այրեց տեղնուտեղը ի պատիվ աստվածների, որոնք նրան նպաստել էին այսքան նշանավոր շափով: Նա պահեց միայն թագավորի մահճակալը և իբրև պատերազմի հաղթանակ ձոնեց Իշտար աստվածուհուն:

Սարսափելի էր ուրարտական միության կրած պարտությունը: Բայց դա դեռ չէր նշանակում հյուսիսային այդ մեծ ուժի կատարյալ ոչնչացում: Թիգլաթպալասարը չկարողացավ օգտվել իր սարած հաղթանակի արդյունքներից: Ուրարտուն նրա համար դեռ նշանավոր ուժ էր, ուստի նա սիրտ շարավ անմիջապես մտցնել իր բանակը Ուրարտուի ներսը և շարունակել մի անգամ սկսած գործը: Իրեն էլ թուլացած գտնելով, նա վերադարձավ տուն, բայց իհարկե, չէր մոռանում, որ Ուրարտուն դեռ շարունակում է մնալ սպառնացող մի ուժ, որ հարմար ընդհանր դարձյալ կարող է վերանորոգել իր պայքարը համաշխարհային տիրապետության համար:

Սարգուրիի հետ նորից շափվելու համար առիթ ներկայացավ ասորական թագավորին միայն յոթ տարուց հետո (736): Այս անգամ պատերազմական արշավանքն արդեն հատկապես Ուրարտուի դեմ էր և այս անգամ Սարգուրին արդեն միայնակ, առանց դաշնակիցների էր ասորեստանցիների

<sup>1</sup> Maspero, t. III, p. 146.

հանդեպ: Թիգլաթպալասարը, ինչպես երևում է, մեծ դժվարությունների չհանդիպելով՝ մտավ Ուրարտու և պաշարեց Վանը, որ և ամբողջ երկրի առաջնակարգ բերդն էր: Մենուան, Արգիշտին, ինքը Սարգուրին, արհեստական ամրություններն ավելացնելով բնական ամրությունների վրա դարձրել էին Վանի ժայռը միանգամայն անմատչելի: Բերդի մեջ հավաքված էր բավականաչափ պաշար, ուստի միայն դավաճանությունը կարող էր բաց անել նրա դռները թշնամու առաջ: Դավաճանություն չեղավ և Սարգուրին ապահով նստած ժայռի գագաթին, ուր գտնվում էին նրա պալատը, աստվածների տաճարը և զորանոցները, տեսնում էր թե ինչպես թշնամին ոչնչացնում էր ցածի քաղաքի հարուստ այգեստանները, քարուքանդ էր անում տները, պալատները:

Այս գործողություններով էլ Թիգլաթպալասարը չկարողացավ ազդել պաշարվածների վրա, ուստի դնելով բերդի դռների դիմաց իր քարե պատկերը, վերցրեց պաշարումը և վրեժ հանելու համար՝ արշավանքներ տարածեց դեպի ամեն կողմ, կրակի և սրի մատնելով ողջ երկիրը: Բազմաթիվ քաղաքներ կործանվեցին և ասորական բանակը հարուստ ավարով ծանրաբեռնված վերադարձավ իր երկիրը<sup>1</sup>:

Ահա ինչպես է ինքը Թիգլաթպալասարը նկարագրում իր արշավանքները դեպի Ուրարտու. «Շարգուրի<sup>2</sup> ուրարտացին ինձմե ասպտամբյալ հետս եկաց, Մատյուխուի հետ դաշնագրություն ըրավ: Կիստան և Խալպի երկրաց մեջ, որ Կումմուխ քաղաքին մեկ վիճակն են, զանի զարկի մինչև ցեղձումն: Անոր ամբողջ կարասին առի: Զինուցս տարափեն զարհուրեցավ. իր կյանքը փրկելու համար՝ միակ միայնակ փախստական գնաց: Յուր քաղաքն Տուրուսպայի<sup>3</sup> մեջ զանի փակեցի, անոր բազմաթիվ պատերազմողները նույնին դրանց առջև սպանեցի: Իմ արքայական պատկերս Տուրուսպա քաղաքին առջև կանգնեցի: Լայնատարած Ուրարտու երկրին մեջ զ70 կրկին ժամս ճանապարհի վերեն մինչև վար արշավեցի. հավասարազոր ոսոխ մը չը կար: Ուլուբա երկիրը բուրբովանդակ ընդ լծով արկի, կտրեցի անցա: Կաստիրա, Պարխու, Տաշուխա, Մանդուուր, Շարգուրի քաղաքները մինչև Բաբուտտա, Լուսխա, Կասսիա քաղաքները մինչև Սիկիրտա քաղաքն, Ասուրդա քաղաքն Ասորեստանի երկրին միացուցի: Անոնց վրա կողմնակալ մը դրի, Ուլուբա երկրին մեջտեղի բերդաքաղաքը, զոր Ուրարտու երկրեն աշխարհակալեցի, քաղաք մը շինեցի, անունն Ասուր-Իկիշա կոչեցի: Բաբի-լուվ կողմնակալության պաշտոնյաներս հոն դրի՝ իբր հոգաբարձու Ուուրնու, Ուուրբա, Ինու, Սասու, Լուբ, Լուբի քաղաքից մինչև ի լերինս անդը: Քուտտա, Ուրբա, Արանա, Տաբա, Ուալխա քաղաքներում մինչև ի վեր ցնփրատ, Կումմուխ, Կիլիմիր, Աբբիսա, Խարպիսինա քաղաքներուն վիճակաց: Ինզի երկրին, Անգանու, Բինգու քաղաքներուն՝ Ուրարտու Բերդաքաղաքաց, Կալլամբա գետուն... տիրեցի, Ասորեստանի երկրն միացուցի»<sup>4</sup>:

Ուրարտուից խլած և Ասորեստանին միացրած այս բազմաթիվ երկրները, ինչպես երևում է, գտնվում էին թագավորության հարավային<sup>5</sup> և մասամբ նաև

արևմտյան կողմերում: Սակայն այս էլ դարձյալ դեռ չէր նշանակում, թե Ուրարտուն իբրև քաղաքական մարմին ոչնչացել է: Դեռ մնում էր նրա ազգային թագավորը, մնում էր նրա մայրաքաղաքը, մնում էին հյուսիսային նահանգները, դեպի ուր այնուհետև, բնականաբար, պիտի ուղղեին իրենց ուշադրությունը Վանի թագավորները: Ուրարտացիների համացեղ ժողովուրդները, որոնք մինչև այդ հենված էին ուրարտական ուժի վրա, կարողացել էին ավելի ևս տարածվել, ետ մղելով սեմական ցեղերը: Այս բոլոր հանգամանքները դեռ քավական կենսունակություն էին ներկայացնում և Ուրարտուի ձեռքին դարձյալ մնում էր Ասորեստանի դեմ մրցելու հնարավորությունը:

Սարգուրի Բ-ը վախճանվեց մոտավորապես 730 թվին (Ք. ա.), երբ Ասորեստանում դեռ կենդանի էր նրա բախտավոր հակառակորդը: Վետեկելով իր նախնիքներին, Սարգուրին շնորհակալ ծառայել իր երկրի ներքին բարօրության: Նրանից մնացած մի քանի արձանագրություններ վկայում են, որ նա եղել է շինարար մի թագավոր: Արձեջ քաղաքի մոտ եղած արձանագրությունն ասում է, թե այդտեղ Սարգուրին տնկել է այգիներ և կոշիլ է նրանց իր անունով, իսկ Բադնոց գյուղի եկեղեցում մնացած արձանագրությունը հիշատակում է, թե թագավորն այդտեղ կառուցել է փայտե կամուրջ Արածանի վրա:

**8. Ռուսա Ա (730—714):** Սարգուրիին հաջորդեց նրա որդի Ռուսա կամ Ռուշաշ Ա, որ ասորական արձանագրությունների մեջ կոչվում է Ուրսա կամ Ուրշա: Եթե մինչև այժմ մենք տեսանք վանյան հարստության մեջ նշանավոր նվաճողներ, այս մեկը, Ռուսան ներկայանում է մեզ արդեն իբրև նշանավոր քաղաքագետ: Եվ պետք է խոստովանել, որ երկրի դրուժությունը ավելի մի խելացի քաղաքագետի կարողությունն ուներ, քան մի երևելի զորավարի: Դրուժությունն աչնչես էր, որ զործել կարելի էր գլխավորապես խելքով և ոչ զենքով:

Ստանալով իր հորից մի տխուր ժառանգություն, այն է՝ քայքայվող մի պետություն, որ կորցրել էր Արգիշտիի ժամանակների մեծ հմայքը, Ռուսան սկզբից ևեթ, մոտ տասն տարվա ընթացքում, Ասորեստանի վերաբերմամբ ընդգրկեց սպասողական քաղաքականություն: 727-ին մեռավ Թիգլաթպալասարը, նրան կարճ ժամանակով հաջորդեց (727—722) Սալմանասար Ե-ը, բայց սրան էլ Ռուսան հանգիստ թողեց: Նա իր բռնած դիրքը չլքեց և այն միջոցին, երբ 722-ին նորից հեղափոխություն ծագեց Ասորեստանում և նրա հետևանքով գահին տիրացավ Սարգոնը (722—705):

Բայց այս սպասողականությունը անգործություն չէր նշանակում: Ռուսան շարունակ զործում էր մեծ շրջահայեցողությամբ, զգուշություններով, շնորհակալով, որ թուլացած Ուրարտուի վրա աչք ունի հանկարծակի ուժեղացած Ասորեստանը: Նա փորձեց և զենքի բախտը, բայց իր երկրի հյուսիսային սահմաններում, ուր ասորական կասկածամտությունը չէր կարող գրգռվել: Սևանի լճի հարավային ափերում, Ալիշալուի արձանագրությունը պատմում է, որ Ռուսան Արարատյան դաշտի հյուսիսային կողմում բարձրացած լեռնաշխարհում 23 երկրներ նվաճեց և դրանցից մի քանիսի բնակիչներին, ըստ ուրարտական սովորության, տեղափոխեց Բիայնա: Քաղաքական հանգամանքները ցույց էին տալիս Վանի թագավորին, որ եթե Ուրարտուն նորից պիտի ընդարձակվի իբրև պետություն, այդ կարելի պիտի լինի մասնավորապես հյուսիսային երկրների նվաճումով: Ուստի նա, իր նախորդների ճանապարհը շարունակելով, իր իշխանությունը տարածեց նաև Սևանի լճի արևելյան ուղղությամբ, գրավելով Սյունիքը: Գուցե հենց նա էր, որ փորձեց արավ այդ ուղղու-

<sup>1</sup> Maspero, t. III, p. 154—155.

<sup>2</sup> Ասորական և ուրարտական արձանագրությունների մեջ Ս և Շ տառերը հաճախ խառն կերպով են կարդացվում, մեկը կարդում է Արգիստի, մյուսը Արգիշտի, Սարգուրի—Շարգուրի, Սամսի-Ռիմման, Շամսի-Ռիմման և այլն:

<sup>3</sup> Տուսպա ըստ վանյան արձանագրությունների:

<sup>4</sup> Սանտալիյան, եր. 159—161:

<sup>5</sup> Винклер, с. 65.



խլամբ առաջ շարժվելու և Արցախի բնօնանցքներով Կուրի հովիտը դուրս գալու համար:

Ավելացնենք այս գործունեության վրա և այն, որ Ռուսայի շինարարական եռանդն էլ պակաս չէ եղել, ինչպես վկայում են մի քանի արձանագրություններ: Ամենից առաջ, ինչպես հավանական է կարծել, նա հոգ տարավ թիզլաթպալասարի ձեռքով կործանված Վանի մասին: Քաղաքը տեղափոխվեց այն քարածայրի ստորոտը, որ այժմ կոչվում է Զրմզրմ-դաղ: Բայց այս թագավորի ամենանշանավոր գործը, այնուամենայնիվ, կմնա նրա քաղաքագիտական գործունեությունը, ուղղած Ասորեստանի դեմ:

Սարգոնի թագավորության սկզբից ասորական մեծ պետության մեջ զանազան կողմերում ապստամբություններ ծագեցին: Ռուսան շատ բարեպատեհ համարեց այդ հանգամանքը և ձեռք առավ այն միջոցների գործադրությունը, որոնց վրա աշխատել էր 10 տարի: Դեռ Արամեի ժամանակից մենք տեսանք մի քաղաքականություն, որ հատուկ էր ուրարտացիներին՝ Ասորեստանի հանդեպ: Դա դրացի ցեղակից ազգերի միությունն էր, ուրարտական թագավորի առաջնությունը: Ահա այս քաղաքականության զարգացումն էր, որ Ռուսա Ա-ի նշանավոր գործը դարձավ: Կավ զգալով, որ թուլացած Ուրարտոն չէր կարող միայնակ ընդհարվել Միջագետքի աշխարհակալ պետության հետ, Վանի թագավորը մեծ եռանդով աշխատում էր մի զինված դաշնակցության առաջնորդը դառնալ և վրեժ հանել Ասորեստանից: Սարգոնի դժվար կացությունը ապստամբությունների հանդեպ գրգռեց Ռուսայի մեջ տոհմային ուզմիկ ոգին: «Մենուասի և Արգիստիի կատարած շահատակությունների հիշատակն ապրում էր նրա շուրջը, — ասում է Մասպերոն, — և նրա գորապետների մեջ մեկից ավելի էին այնպիսիները, որոնք սկսել էին իրենց ծառայությունը այնպիսի մի ժամանակ, երբ Արպադից և Կարիսմիշից մինչև Մեդերի երկիրը (Մարաստան), հողերի մի երրորդ մասից ավելին, կախված էր ուրարտական դինաստիայից, մինչդեռ այսօր միացված էին Նինվեին»<sup>1</sup>: Ռուսան վճռել էր ետ նվաճել այդ երկրները:

Մենք արդեն գիտենք, թե Ասորեստանի համար որքան կարևոր նշանակություն ունեին Ուրմիայի լճի արևմտյան և հարավային կողմերում գտնվող երկրները զուտ ռազմագիտական տեսակետից և թե ինչպես այդ երկրներում գործած վանյան թագավորները (Մենուա և Արգիշտի) ծանր հարվածներ էին հասցնում ասորական Միջագետքին: Ռուսան դարձյալ այս երկրների վրա դրեց իր հույսը: Նա հաջողություն գտավ, իր կողմը գրավելով այդ երկրների տերերից մեկին: Երկիրը կոչվում էր Զիկարտու: Գիտնականները նրան զետեղում են Ուրմիայի լճից դեպի հարավ: Մի փոքրիկ թագավորություն, որ, սակայն, Մասպերոյի կարծիքով, լավ կազմակերպված ու ասորական քաղաքակրթությունը յուրացրած էր<sup>2</sup>: Նրա թագավորը, Միտատտի անունով, զուրկ չէր ռազմական տաղանդից: Գլխավոր գործը, որ սկսեց նա Ռուսայի հետ միասին, այն էր, որ Մաննայի ընդարձակ երկիրն էլ միանա իրենց հետ Ասորեստանի դեմ: Սակայն Մաննայի թագավոր Իրանզոն հավատարիմ մնաց

<sup>1</sup> «Հանդ. ամս.» 1900, եր. 247:

<sup>2</sup> Maspero, t. III, p. 237.

<sup>3</sup> Ibid, p. 238. Վիները կարծում է, թե Զիկարտուի ժողովուրդը հնդեվրոպական ծագում ուներ (Виккер, с. 68): Եթե ճիշտ է այս, այն ժամանակ պետք է ընդունել, որ ի դեմս այս փոքրիկ թագավորության, առաջին անգամ պատմության ասպարեզ էր դուրս գալիս իրական արիացիների ցեղը:

Ասորեստանին և հենց այս պատճառով էլ նրա դեմ դարձան երկու դաշնակցների գործողությունները: Երկուսի ջանքերով էր, որ 719 թ. մաննական երկու քաղաքները — Շուանդախուլ և Դուրտուկկա ապստամբվեցին Իրանզուի դեմ և իրենց դռները բաց արին Զիկարտուի թագավորի առջև:

Սարգոնը, որի դեմ այդ միջոցին մի քանի ապստամբություններ էին բորբոքված, իսկույն ըմբռնեց, թե որ կողմն է ավելի մեծ սպառնալիք ներկայացնում և իր ամբողջ բանակը նետեց Մաննայի երկիրը: Այստեղ նա քարուքանդ արավ, այրեց ոչնչացրեց երկու ապստամբված քաղաքները և շրջակայքում եղած ուրիշ քաղաքները, իսկ բնակիչներին փերի տարավ և բնակեցրեց հաթիների երկրում: Ասորական թագավորի հանկարծահաս շեշտակի հարվածը պարտ ու պատշաճ տպավորությունը գործեց, ոչ Ռուսան և ոչ Միտատտին չհամարձակվեցին միջամտել և օգնության հասնել երկու քաղաքներին: Չեւեւյալ տարին Սարգոնը զբաղված էր Կիլիկիայում, ուր թուրալ ցեղի գլխավորը ապստամբվել էր նրա դեմ: Իսկ մյուս տարին, այն է՝ 717-ին ասորական թագավորի առջև ծառայած էր մի ուրիշ նշանավոր վտանգ: Ապստամբվել էր հեթիթների երկիրը: Այստեղ չէր մոռացված Ուրարտուի հետ ունեցած բարեկամությունը և Պիզիրիս թագավորը, ինչպես մի անգամ սուր էր հանել Սարգոնի թագավորի հետ միասին ասորական արշավանքի դեմ պաշտպանվելու համար, այնպես էլ այժմ, անշուշտ ղեկավարվելով Ռուսայի հրահանգներով, կազմակերպեց մի ամբողջ դաշնակցություն: Նա համաձայնեցրեց Մուշկի երկրի տիրոջը, որ կոչվում էր Միտա, դառնալ այդ դաշնակցության հոգին: Եվ այսպիսով պատրաստ էր հեթիթական ծագում ունեցող ազգերի զինակցություն նաև Ուրարտուի արևմտյան կողմերում: Պիզիրիսը, ապստամբվելով, հայտարարեց իրեն անկախ: Սակայն Սարգոնից շարաշար պարտություն կրեց, գնդի ընկավ և Կարիսմիշ մայրաքաղաքը, հռչակված իր մեծ առևտրով և հարստություններով, ընդմիշտ միացվեց Ասորեստանին: Սա մի մեծ անցք էր հին պատմության մեջ: Ոչնչացավ հեթիթական պետությունը, որ մեկից ավելի դաշեր տիրապետող էր առաջավոր Ասիայում: Հեթիթները հեռանում էին պատմության ասպարեզից և ետ էին մղվում դեպի լեռները, ուր նրանց խմբակցությունները այնուհետև սկսեցին ձուլվել զանազան ցեղերի հետ:

Ռուսան մինչև այստեղ հանդիսատես էր այն անցքերին, որոնք տեղի էին ունենում իր պետության հարավ-արևելյան և հարավ-արևմտյան կողմերում, առանց խառնվելու այդ անցքերին: Հյուսիսային Սիրիայի դուրս գալը հեթիթների ձեռքից՝ նրան ստիպեց նորից գործողությունների վայր ընտրել: Մաննայի երկիրը: Զիկարտուի Միտատտին էր դարձյալ, որ լուրջ կերպով աշխատում էր մաննացիներին ոտի կանգնեցնել: Սակայն Իրանզուի, ապա և նրա որդի և հաջորդ Ազայի հավատարմությունը դեպի ասորական գահը անխախտեղ էր: Հետաքրքրական է, որ Ուրարտուի և Զիկարտուի դաշնակցության հարել էր և Ումիդիշ երկրի արքայիկը: Այս երկիրը, հավանականաբար, Մաննայի մի վիճակն էր կազմում, իսկ նրա արքայիկն էր Բագադատտի, որ, ինչպես կարծվում է, Ազայի որդին էր: 716 թվականին Մաննայի մեջ բռնկվում է ապստամբություն, որի գլխավոր առաջնորդն էր, ինչպես կարելի է ենթադրել, նույն Բագադատտին: Ապստամբները հավաքվում են Ուուու սարի վրա, սպանում են Ազային և Բագադատտիին, որ այսպիսով հանդիսանում էր իր հոր սպանման մեղսակից և դառնում Մաննայի տերը:

Սարգոնը անմիջապես վրա հասավ այս վտանգավոր շարժումը ճնշելու և ժամանակի, — գրում է նա, — որում ճակատագիրն եկավ հասավ Մաննայի



իրանգուի վրա, որ հնազանդ ծառա մըն էր և իմ լուծս կը սիրեր, զյուր որդին անոր գահին վրա նստուցած էի, ուրարտացի Ուրշա յուր կողմանն Ումիլդիշ, Զիկարտու և Միսիանդի Կերկրաց ցեղերուն, առ վողմնակալս ավագս Մաննայի պատգամավորներ խավրեց և զանոնք անիրավության հորդորեց: Իրենց Տյառն՝ Ազայի դիակը դժվարին Ուաուշ լերան վրա նետեցին... Առ Ասուր տեր իմ առ ի փրկել զՄաննա և առ ի փրկել զԱսորեստան ձեռքերս վերցուցի: Ուաուշ լերան վրա՝ ուր որ Ազային դիակը նետած էին, Բագադատտին մորթագերծ և Մաննայի տեսիլ ըրի: Զնորա եղբայրն Ուլլուսունու արքայական գահուն վրա նստեցուցի»<sup>1</sup>:

Բայց սրանով չվերջացավ ապստամբական շարժումը: Ընդհակառակն, Ուլլուսունուն շնաց դեպի ասորեստանցիները, այլ Ռուսայի ներշնչումներին ենթարկվեց: Նրա օրինակին հետևեցին շատ ուրիշ երկրներ, որոնք Թիգլաթպալասարի ձեռքով միացված էին Ասորեստանին: Այսպես էին Կարալու, Ալարբիա, Նիքսամա, Բիտսագբատի, Բիխիրմամի, Կիլամբատի, Արմանգու, Նարխար, Էլիպի: Այս բոլոր երկրները զենք վերցրին՝ ուրարտական միության հաղթանակ բերելու համար: Եվ այսպես, Ասորեստանի ամբողջ սահմանագլխի վրա, էլամից մինչև Տավրոս, բոլոր ազգերը զլուխ էին բարձրացրել: Միայն Սարգոնի ռազմական հանձարն էր, որ կարողացավ այդ ընդհանուր խառնակության մեջ գտնել ամենից վտանգավոր կետերը և հարվածել այդ տեղերը առանձին-առանձին: Նախ և առաջ նա քարուքանդ արավ Մաննայի երկիրը, ոչնչացրեց շատ քաղաքներ, Ուլլուսունուն փախավ լեռները: Ապա նրա ծանր հարվածներին ենթարկվեցին հարևան մանր երկրները, որոնց անունները հիշեցինք վերևում: Դրանցից ո՛րը կորցրեց իր անկախությունը և ասորական նահանգներին կցվեց, ո՛րը անբնակ դարձավ, քանի որ ազգաբնակչության մեծագույն մասը գերի տարվեց: Պարտվեց և Զիկարտուն, իսկ նրա Միտատտի թագավորը փախավ լեռները: Սարգոնը թեև գիտեր, որ իր ամենամեծ թշնամին Ռուսան էր, բայց նրա դեմ արշավանք չսկսեց, այլ հարձակվեց մեղական երկրի (Մարաստան) վրա և այդտեղ նորից վերահաստատեց ասորական գերիշխանությունը:

Այսպես վերջացավ 716 թվականը: Մինչդեռ ձմեռվա միջոցին ասորական բանակը քաշվել էր Միջագետք, Ռուսան նույն այդ ձմեռվանից օգուտ էր բաղում Մաննայի երկրում իր ծրագիրն իրագործելու համար: Գարունը բացվելուն պես նա երևաց Մաննայի երկրում և այդտեղ Ուլլունսունուի թուլությունը գրավեց 22 բերդաքաղաք: Միաժամանակ Սարգոնը լուր առավ, որ ապստամբություն է ծագել Սիրիայում, իսկ Մուշկի թագավոր Միտան հարձակվել է Կիլիկիայի վրա: Հարկավոր էր միանգամից երեք պատերազմ մղել: Բայց Սարգոնն իմացավ ինչ անել: Նա բանակը իր հետ պահեց և այս անգամ էլ հետևեց իր տակտիկային՝ խորտակել թշնամիներին միմյանց ետևից, առանձին-առանձին: Ամենից մեծ վտանգ սպառնացողը Մաննան էր և Սարգոնը նորից մտավ նրա սահմանները: Այսպես է նա նկարագրում իր գործողությունները այդ երկրում:

«Ուլլուսունու Մաննային՝ որ յուր հոր գահն ելած էր, ուրարտացի Ուրշային վստահացավ և յուր բերդաքաղաքներն 22 իբրև պարզ անոր տվավ: Զայրացյալ սրտի Ասորեստանի զորաց գումարությունը մեկ տեղ ժողովեցի, առյուծի նման մոնչեցի և այն երկիրներն տիրելու ձեռն ի գործ դրի: Մաննայի Ուլլուսունու իմ արշավանացս մոտենալը տեսավ, թողուց յուր քաղաքը և

<sup>1</sup> Սանտալեյան, էր. 117, 168:

սարսափած՝ դժվարին լերանց ապաստաններուն մեջ ամրացավ: Ի վերտուկ յուր արքայական քաղաքին, Իզիթիայի, Արմիդա յուր ամուր բերդաքաղաքներուն տիրեցի, հրով այրեցի, ապականեցի... Մաննայի Ուլլուսունու ըրած գործերս դժվարամատուց լերանց մեջ լաց, թոչնո նման թուավ եկավ, ոտքերուս փարվեցավ: Անոր անհամար հանցվածոց ներեցի. մոռցա անոր շարագործությունը. ներում շնորհեցի անոր, իրեն արքայական գահուն վրա նստեցուցի: 22 բերդաքաղաքները՝ հանդերձ 2 ամուր քաղաքներով զորոնք Ուրշային Միտատտին ձեռքեն առած էի, անոր տվի. անոր ավերյալ երկիրը նորոգեցի»<sup>2</sup>:

Կատարելով այս գործը, Սարգոնն ստիպված եղավ նորից արշավել Միդիա և հարևան երկրները, ուր նորից ապստամբություն էր ծագել: Այնուհետև տարվա մյուս մասը Սարգոնը անցկացրեց Ասորեստանի արևմտյան երկրներում, միշտ զբաղված ապստամբություններ ճնշելով: Իսկ 714 թվականի գարնան, նա ժամանակը հասած համարեց Ուրարտուի հետ վերջին հաշիվը տեսնելու համար: Իր բանակով նա մտավ դարձյալ Մաննա՝ այդ տեղի և ուրիշ երկրների հարկերը հավաքելու համար: Այնուհետև նա Զիկարտուի վրա գնաց, քանդեց և այրեց տասնյակ գյուղեր: Միտատտին թողած էր մեռակ, անօգնական մնացած, լքված յուրայինների կողմից: Նա չընկավ սակայն Սարգոնի ձեռքը, բայց և այնպես կորցրեց իր իշխանությունը, անհետացավ ասպարեզից:

Այս հաջողությունը թելադրեց Սարգոնին Ռուսային հանդիպելու միտքը: Եվ նրանք, վերջապես, հանդիպեցին իրար: Ուրարտացի ճարպիկ և անխոնջ քաղաքագետը զենքով էր դուրս եկել Ասորեստանի մեծ նվաճողի դեմ: Ի՞նչ պիտի առաջանար այս հանդիպումից:

Ինչպես երևում է, Ռուսայի հավաքած զորքը մեծաքանակ էր: Ճակատի տեղը նույն Ռաուշ լեռն էր, Մաննայի երկրում, ուր սպանվել էր Ազան: Ռուսան սարսափելի պարտություն կրեց, կորցրեց ամեն ինչ և իր հոր նման փախավ մատակ ձիու վրա հարևան Մոսասիր լեռնոտ երկիրը, որ Ուրարտուի դաշնակիցն ու ցեղակիցն էր: Սարգոնը գնաց նրա ետևից և կատարյալ հաղթություն տարավ և այդտեղ: Դիմենք իր, Սարգոնի նկարագրությունը<sup>2</sup>:

«Ուրարտացի Ուրշային պատերազմողները թվով անհամար սպանեցի, անոր արքայական սերունդեն 260 հոգի՝ որոնք ձիավոր հեծյալ էին, գերի բռնեցի: Նա առ ի փրկել զանձն մատակ ձիո մը վրա նստավ, յուր զերանց վրա փախավ: Ուսվս լեռներն 5 կրկին ժամուց ճամփա մինչև Զիխարդուսու երկիրն և Մաննային լեռնային վիճակն Ումիլդիս, անկե առի, մաննայի Ուլլուսունին տվի: Ուսքայա բերդաքաղաքին՝ որ Զարան երկրին կիրճին մեջն է: Մալլավ երկրին, Դիրիգ-լի-րակ-սադու երկրին 140 քաղաքներովը տիրեցի: Բիտ-Սանգիբուտի երկրին վիճակին Աստանիա քաղաքին, Դալա երկրին, Տարուի և Տարամակիսա քաղաքներուն: Ուլլուսու քաղաքին՝ որ Կիս-պալ լեռան ստորոտն էր, ամուր քաղաքաց և 140 քաղաքաց վիճակաց նոցա, որք Արգարիա լերան վրա էին, տիրեցի, հրով այրեցի, ամուր քաղաքաց և անոնց վիճակաց 30 քաղաքներու, որոնք Արմա-դալ-լի երկրին մեջ էին: Ուրբանանդա լերան վրա՝ տիրեցի, Արբու քաղաքին՝ տեղի որում Ուրշա քաղաքաց ամրոց Արաիդ երկրի վիճակին առ եզերք ծովու. և Կադու-լա-նի-ա քաղաքներուն՝ որք ի վերա Արձի լեռին և վիճակին Ար-զունիա լեռին շինյալ էին, Ուսյավս լերան վիճակ 5 բերդաքաղաքաց և Ուսյավս երկրին վիճակեն 30 քաղաքներու տիրեցի, հրով այրե-

<sup>1</sup> Սանտալեյան, էր. 177, 179:

<sup>2</sup> Անդ, էր., (171—173):

ցի, Հանգու թագավորն Նաիրի երկրին, յուր ամուր քաղաքի Խուրուսկիայի մեջ արջառ և ոչխարներ իբր անոր տուրքն ընդունեցաւ: Մուճաճիրցի Ուրզանա Ասուր և Մարդուկ դից փրա ըրած երգումն առոտն հարած էր, և ուրարտացի Ուրջային հայտնած էր հպատակութիւն: Ասուր տեր իմ քաջալերեց. իմ մեկ պատերազմիկ կառքովս և 1000 ձիավորներովս և ոտնավորներովս, բուն ոտնավորք ի պատերազմունս, Սիակ, Արդիշի և Ուլաիավ Ալլուրիայի դժվարին լեռները կտրեցի անցաւ. ճամփա գտնված տեղվանք ձիու վրա հեծած, իսկ դժվարին տեղերն հետիտոս քալեցի: Մուճաճիրացի Ուրզանա իմ արշավանացս հառաջանալը լսեց, թռչնո պես փախաւ, դժվարին լեռան մը վրա ելավ: ՉՄուճաճիր՝ Քաղդեա աստվածուն կայանքը՝ պատնեշով պաշարեցի: Ուրզանայի կինը, անոր ուստերքը, անոր դստերքը, 6170 բնակիչ, 690 շորի, 920 էջ, 100.225 ոչխար առի տարի, 34 տաղանդ, 18 մնաս ոսկի, 160 տաղանդ, 2½ մնաս արծաթ, անագապղինձ, պատվական քարեր, անհամար գուլնգուլն կերպաններ և ջգեստներ ընդ... տաղանդ, 3 մնաս ոսկի, 2 տաղանդ... մնաս արծաթ, բազումս անագապղինձ երկաթ անհամար առյալ տարի: Ասուր դիք իրենց ընչից մնացորդը լայնածավալ երկիրը. ամեն տեսակի սիբիտտու ըրի: Անոնց հալածվորն Ուրջային կոծ ու ողբ... այն վիճակն Ասորեստանի միացուցի, և իմ պաշտոնեիս՝ պալատան հազարապետին՝ ձեռքը զայն հանձնեցի: Ասուր դից տյառն իմո շքեղութիւն զՈւրջա ուրարտացին երկիր կործանեց. յուր իսկ երկաթի դաշունիվ շախուճի մը պես յուր սիրտը զարկավ, զինքն իր կենաց գճավեց»:

Մի ուրիշ արձանագրութիւն մեջ Սարգոնն ասում է. «Ուրարտուի վրայ յուր բովանդակ տարածութիւնսմբը թշվառութիւն հասուցի, հոն բնակվող մարդիկը կոծ ու ողբի մեջ նետեցի»<sup>1</sup>: Սակայն ասորական այս մեծադղորդ ինքնապարծութիւնն զիմաց մենք ունինք իր՝ Ռուսայի մի արձանագրութիւնը, որ գտնվում է Ուրմիայի լճի հարավ արևմտյան կողմում, Սեդիկան քուրդ գյուղի մոտ: «Ըստ արձանագրին, — ասում է պրոֆ. Լեմանը, — ասորեստանցիք հառաջ վաղանցուկ հաջողութիւն մ'ունեցած են, հանկարծակի բերելով առած Մուցացիքը (Կելիշինեն գալով) և Մուցացիքի Ուրզանա արքայն փախած ապաստանած էր Ռուսասա Ա. քով: Վերջինս նորեն շինած է Մուցացիք քաղաքը, կրկին կարգադրած խալդիսի զոհերն ու զՈւզանա վերստին թագավոր դրած, Ռուսասի մինչև Ասուրի լեռները հաղթական առաջ քալելն Վտրը»<sup>2</sup>:

Ասորական և ուրարտական աղբյուրների մեջ եղած այս մեծ հակասութիւնը հազիվ թե կարելի լինի պարզել այժմ բավարար կերպով: Եթե ճիշտ են Սարգոնի հավաստիացումները, այն ժամանակ պետք է ընդունել, որ Ռուսայի պարտութիւնն ու անձնասպանութիւնը տեղի են ունեցել նրա այդ արձանագրութիւնից շատ հետո, երբ Սարգոնը երկրորդ անգամ վերցրել է Մուսասիք քաղաքը, երկրորդ անգամ փախցրել է Ուրզանա թագավորին: Դժվար է, սակայն, ասել, թե դեպքերը այսպես կրկնվել են, պարզ է, որ Ռուսան Սարգոնի արժանավոր ախոյանն էր և պատերազմի դաշտում: Բայց որ պարտութիւն կրողը վերջ ի վերջո Ուրարտուն էր, երևում է հենց այն հանգամանքից, որ Վանի թագավորութիւնը այնուհետև հանդես է գալիս շատ թուլացած, իր առաջնակարգ դիրքը կորցրած: Ռուսայի ջերմ հայրենասիրութիւնը և ասպետական զգացմունքի պատկերն է, որ Սարգոնը տալիս է իր հետևյալ տողերի մեջ. «Ուրջա Ուրարտուի թագավորն Մուսասիք քաղաքին կործանելը, յուր խալ-

<sup>1</sup> Սանտալեյան, եր. 181:

<sup>2</sup> «Հանդ. ամս.», 1900, եր. 66:

դի աստուծուն ավարի առնվելը լսեց. յուր իսկ ձեռքովն յուր գոտվուն երկաթի դաշունյուն ինք զինքն ի կենաց գրավեց»:

714 թվականը, երբ տեղի ունեցավ այս դրաման, նոր իրողութիւնների և քաղաքական դասավորումների մի դարազրույս է կազմում արևմտյան Ասիայի պատմութիւն մեջ: Կարելի է ասել, որ այդ ժամանակ վերջանում էր սեմական և հեթոթական ցեղերի մեջ դարերից ի վեր բորբոքված պայքարը տիրապետութիւն համար: Հաղթանակը սեմացիներին էր պատկանում և ալարոդյան ցեղը ետ էր մղվում պատմութիւն ասպարեզից, երկրորդական նշանակութիւն էր ստանում: Ուրարտական դաշնակցութիւն մեջ մտնող բազմաթիվ մանր թագավորութիւններն անհետանում են, անհայտութիւն մեջ կորչում: Ինքը Ուրարտուն սակայն դեռ շարունակում է իր գոյութիւնը, հարմարվելով նոր ստեղծված քաղաքական պայմաններին:

**9. Անկում:** Ուրարտական թագավորութիւն ամբողջ տևողութիւնը կարելի է հաշվել մոտ՝ 280 տարի (860—580 Ք. ա.): Ռուսա Ա-ի մահը գալիս էր մի այնպիսի ժամանակ, երբ այդ ամբողջ շրջանի համարյա ճիշտ կեսն էր լրացել (146 տարի): Այս շրջանը ուրարտական թագավորութիւն բարձրացման ժամանակն էր, որ վերջանում էր անկումով: Այնուհետև գալիս էր երկրորդ կեսը, մոտ 134 տարվա մի ժամանակամիջոց, երբ երկիրը հաշտված է քաղաքական անկման ճակատագրի հետ և ապրում է այնպես, ինչպես հանգամանքներն են տրամադրում:

Այս երկրորդ շրջանում Վանում թագավորել են, որքան կարելի է հետևեցնել մեզ հասած աղբատ նյութերից, յոթ հոգի. Արգիշտի Բ (Ռուսա Ա-ի որդին, 714—685), Ռուսա Բ, նրա որդին (685—675), Էրիմենա (675—670), Ռուսա Գ, նրա որդին (670—645), Սարգուրի Գ (645—620), Իրկուա (620—600), Մենուա Բ, նրա որդին (600—580)<sup>2</sup>: Այս թագավորներից ոմանք թողել են արձանագրութիւններ, որոնց մեջ հիշատակում են, թե շինութիւններ են կառուցել: Կան դրանց մեջ և մի երկու դեպք, երբ քաղաքների նվաճման խոսք է լինում:

Մինչդեռ այսպես էր Վանի լճի ափում, Ասորեստանը, Սարգոնի տաղանդավոր հաջորդների ղեկավարութիւնսմբ, հասավ քաղաքական ուժի գագաթնակետին և առաջավոր Ասիայի ամենամեծ պետութիւնը դարձավ: Եգիպտոսն անգամ, որ մի ժամանակ իր հաղթական բանակներով հասնում էր Եփրատին, ասորական նահանգ դարձավ: Եվ Միջագետքի հզոր նվաճողների արձանադրութիւնների մեջ մենք այլևս չենք տեսնում արշավանքներ դեպի Ուրարտու: Նրանց հարվածներին մի-մի անգամ ենթարկվում են հարևան երկրները, մանավանդ Մաննան: Այսպես, Սարգոնի որդի Սանհերիբը (ս. գրքի Սենեքերիմը) նկարագրում է իր արշավանքը Վանի լճի հարավային լեռներում. «Նիբուր լեռան ստորոտը բանակս դրի. քաջամարտիկ անձնապահներովս և ճակատամարտիս անեղծանելի գործերովն վայրենի եզան մը պիս անոնց ճակատ մատուցի ես: Չորեր, ծործորներ, լեռանց զառիվայրեր, լեռնային հզոր վտակներ անցա իմ գահուս վրա: Այն տեղն, որ դեսպակի համար կարի դժվարին էր, ոտիցս վրա իջա. այժքաղի մը նման, բարձրաբերձ կատարներուն վրա անոնց դեմ ելա: Ուր որ ծունկերս հագնեցնել պետք էր, քարաժայռի մը վրա կը նըս-

<sup>1</sup> Ճիշտ թվականները պակասում են և կարելի է հաշիվ անել միայն մոտավորապես հետևելով ասորական տարեգրութիւններին:

<sup>2</sup> Sandalagian, p. XLVI.

տեղի. ծարավիս դեմ լեռնաջին ցուրտ աղբերականց ջուրը կը խմեի: Անտառուտ լեռներու բարձանց վրա անոնց հետամուտ եղա, անոնց վրա պարտոթյուն ածի»<sup>1</sup>:

Այսպիսի նեղուցիություններ Ուրարտուի լեռներում կրելու պետք չկար: Ռուսա Ա-ի օրինակը ցույց է տվել, որ ավելորդ և ավերիչ բան է Ասորեստանին դիմադրելը: Ուստի նրա հաջորդ Արգիշտի Բ-ը ձիաներ է ընծա ուղարկում Սանհերիբին, որ նշանակում է եթե ոչ կատարյալ հպատակության, գոնե բարեկամության ցույց անել: Ուրիշ ելք չէր մնում ուրարտացուն: Ասորական զորքերը գրաված ունեին Վանի լճի հարավային կողմերի ամբողջ լեռնատանը և ասորական պաշտոնյան Տուշպա քաղաքի մոտերքում հաստատված հսկում էր Ուրարտուի վրա և մանրամասն տեղեկություններ էր հաղորդում իր թագավորին<sup>2</sup>: Որ այդ ուրարտական նոր քաղաքականությունը միայն Արգիշտի Բ-ին չէր հատուկ, այլ հավասարապես ամենախելացին էր համարվում և նրանից հետո, այդ երևում է Ասուրբանիպալ թագավորի (668—638) մի արձանագրությունից, որի մեջ խոսք կա ուրարտական Սարգուրի Գ թագավորի մասին: Ահա ինչ է նա ասում. «Շարգուրի՝ Ուրարտուի թագավորն՝ որուն հարքն թագավորք իմ հորս եղբայրություն հայտարարած էին, այն ատեն Շարգուրի այն նշանավոր գործերը, զորոնք դիքն մեծամեծք ինձի սահմանած էին, լսեց: Որդվո մը նման՝ իր հորը «տեղություն» ծանուցց, և ըստ այնմ ծանուցց՝ «ողջուցն», «արքայի՝ տյառն իմում» և հարգությամբ հպատակությունսմ յուր ծանր ընծայն իմ առջև տանել տվավ»<sup>3</sup>:

Այս դարձվածքներից, սակայն, չէ հետևում, թե Ուրարտուն կորցրել էր իր ինքնուրույնությունը, դարձել էր Ասորեստանի մի մասնիկ: Ուրարտուի անկախությունը վկայող մի փաստ ենք գտնում Աստվածաշնչի մեջ: Սանհերիբի դեմ ապստամբություն ծագեց երկրի մեջ և այդ շարժման գլուխն էին կանգնել նրա երկու որդիները՝ Ադրամելիք և Սարասար: Թագավորն սպանվեց դրանց ձեռքով, բայց հայրասպանները չկարողացան օգտվել այդ եղեռնագործությունից: Նրանց դեմ դուրս եկավ նրանց եղբայրը, Բաբելոնի կառավարիչ Ասարհադդոնը, որ ջարդեց նրանց բանակը և իր ձեռքն առավ Ասորեստանի թագը: Իսկ հայրասպանները, Ասարհադդոնից ազատվելու համար, փախան Արարատ ինչպես պատմում է ս. գիրքը<sup>4</sup>: Այստեղ, ուրեմն, իբրև մի անկախ երկրում, նրանք ապաստան գտան: Վիճակները նույնիսկ կարծում է, թե նրանք հույս ունեին այստեղ, Ուրարտուի մեջ գտնել օգնություն Ասարհադդոնի դեմ<sup>5</sup>:

Երկու վաղեմի անհաշտ թշնամիներին իրար վերաբերմամբ բարեկամական դիրք բռնել հարկադրում էին և արտաքին քաղաքականության հանգամանքները: Արևելքից և հյուսիսից ահեղ շարժումներ էին գալիս, որոնք զգալ էին տալիս, թե հին աշխարհը պիտի անհետանա, տեղի տալով նոր ժառանգների: Այդ շարժումները կատարում էր արիական ցեղը: Արևելքից շարժվում էին մարերը, որոնք իրենց ձեռքն էին գցել հին Սեդիան, իսկ հյուսիսից՝ կիմերացիները, ուժեղ, անձնապաստան, թալան ու կոխի սիրող թափառականներ, որոնք ամբողջ թափով հարձակվեցին հին քաղաքակիրթ աշխարհի վրա: Այս ահավոր շարժումների դիմաց Ասորեստանը չէր կարող կույր մնալ և չզգալ

գոնե այս անգամ թե ո՞րքան մեծ է եղել Նաիրիի լեռնաստանի նշանակությունը հենց իր պահպանության համար: Դա մի ամուր և ապահով միջնաբերդ էր եղել, հյուսիսային ազգերի դիմաց, բայց մի միջնաբերդ, որի խորտակման համար Ասորեստանը ոչինչ չէր խնայել: Այժմ էր զգացվում դրություն ամբողջ վտանգը: Խորտակելով իր շուրջ եղած բոլոր մանր ու մեծ պետությունները, Ասորեստանն այժմ մեն-մենակ պիտի կանգնեք արշավող ազգերի դիմաց: Նա ինքն իր ձեռքով խողովակ էր այն բոլոր կազմակերպությունները, որոնք կարող էին օգտակար լինել վտանգի բռնկման: Ուրարտուի հետ բարեկամական հարաբերություններ պահպանելը, այսպիսով, պետական ինքնապաշտպանության թելադրած մի անհրաժեշտություն էր: Բայց ուշ էր այլևս երկու երկրների համար էլ:

Արտաքին քաղաքականության մեջ խաղաղասեր և բարյացակամ ընթացք ընդգրկելուց հետո, անկման դարաշրջանի վանյան թագավորներին մնում էր իրենց ընդունակությունները գործադրել ներքին խաղաղ զարգացման ասպարեզում: Եվ իրավ, այստեղ մենք տեսնում ենք նշանավոր առաջադիմություն ներքին և արտաքին դարաշրջանի համեմատությամբ:

Ռուսա Բ-ը առանձին հոգացողության առարկա է դարձնում Ջրմզրմ-դաղի գագաթը, ուր կառուցանում է բերդ, տաճար և այլ շինություններ, որոնց ավերակներն այժմ կոչվում են Թոփրաք-Կալե: Դա վանի բերդի մի երկրորդ, բայց ավելի փոքրիկ օրինակն էր. ժայռ, իբրև միջնաբերդ, և այգեստանների քաղաք նրա ստորոտում: Այգեստաններ տնկելու համար հարկավոր էր հեռվից ջուր բերել, ինչպես արել էր Մենուան: Այս նպատակով Ռուսա Բ-ը վարագի կողմերում շինում է մի մեծ արհեստական լիճ, որին և տալիս է իր անունը (այժմ նա կոչվում է Քեշիշ-գյուլ, քահանայի լիճ): Լճի ջուրը հավաքվում էր ձմեռը և զարնանը, ձյունից ու անձրևներից, և ջրանցքով տարված էր ժայռի ստորոտները: Այս նոր քաղաքին (Թոփրաք-Կալեին) նա տալիս է Ռուսայի անունը: Նրա հաջորդներից մանավանդ Ռուսա Գ-ը աշխատում է աչք ուղղությունը և Ռուսան դառնում է կուլտուրական մի գեղեցիկ կենտրոն: Այսօր Թոփրաք-Կալեի ավերակներից հանված նյութերը մի ընդարձակ հասկացողություն են տալիս, թե ո՞րքան բարձր աստիճանի էր հասնում ուրարտական քաղաքակրթությունը վանյան պատմության երկրորդ դարաշրջանում, որ ըսկրվում է Ռուսա Ա-ի ողբերգական մահից հետո:

**10. Ուրարտական կուլտուրա:** Որպեսզի ամբողջացրած լինենք Ուրարտուի քաղաքակրթական տիպը, այստեղ կբերենք նրա այդ զարգացած կուլտուրայի մի քանի երևույթները:

Քարակոփություն: Ուրարտական շինությունները ամենից առաջ ցուցադրում են մի ժողովուրդ, որ եզրիպտացիների նման, իմացել է հպատակեցնել իրեն քարային ահեղ զանգվածները, ժայռերը: Վանի ժայռի ճակատը հղկել, նրա վրա 400 տող արձանագրություն փորել — այս մի վկայություն է, թե վանի քարաշինները գիտեին նվաճել այդ կարծր և միապաղաղ նյութը: Եվ այդ նվաճողական ընդունակության գերագույն սքանչելիքն է այն, որ վանի և Ջրմզրմ-դաղի ժայռերի մեջ փորված են սենյակներ և դահլիճներ, սանդուղիներ, որոնք տանում են դեպի ստորին հարկերը և նրանցից մեկը, օրինակ, Թոփրաք-Կալեի ժայռում, ունի 55 աստիճան<sup>2</sup>: Այսպիսի շինություններ

1 Սանտալեյան, էր. 188.  
2 Հայտնի է այդ պաշտոնյայի անունը՝ Պահիր-Բել, որի նամակներից մի քանիսը, ուղղած Սանհերիբին, հասել են մեզ:  
3 Սանտալեյան, էր. 196.  
4 Զորրորդ թագ., ԺԹ, 37, Եսայի մարգ., Ա, 38.  
5 Вилклер, с. 71.

1 «Հանդ. ամս.» 1913, էր. 406.  
2 «Հանդ. ամս.», 1899, էր. 284.

ուրարտացիները շատ էին սիրում և նրանք միայն Վանում շեն գտնվում, այլ ուրիշ տեղեր էլ են հանդիպում: Այսպես է, օրինակ, մի շատ նշանավոր շինություն ժայռի մեջ, Գալա կոչված տեղում, Խարբերդի մոտ: Պրոֆեսոր Լեմման այսպես է նկարագրում այդ ուրարտական մեծագործությունը, որին նա տալիս է «Գուռն Ռուսաս Բ-ի» անունը:

«Ինձի ծանոթ խաղողիական ժայռի շինքերու մեջ ասիկա է որ կլոր կամար մ'ունի. մյուս բոլոր մուտքերն խաղողիական ժայռի սենյակներու ուղղանկյուն դուռ մ'ունին, եթե երբեք կանոնավոր կերպով շինված են: Ռուսաս Բ-ի շինությունն հայտնապես ըստ այն նախատիպ օրինակաց ձևված է, որք արևմտյան երկիրներու մեջ, արտաքո կամ ի շրջակայս խաղողիական պետություն, գործածական էին: Ի վաղուց փնտոված նախատիպն պոնտական արքունի դամբանաց, իրենց աղեղնաձև կամարոքն, գտնված կթվի: Ինչպես խաղողիական ժայռի շինքերու մեծամասնություն, նույնպես նաև սա կը կազմվի բազմաթիվ սենյակներն: Գլխավոր սենյակն, ուր կառաջնորդն մեզ մուտքն, կանցնուի ուրիշ ավելի փոքր սենյակի մը մեջ աջակողմն՝ ուղղանկյուն դռնով մը, գործինձի ծանոթ միակ դեպքն է — կը զարդարեն զարդաքանդակներ: Կրնայինք զանոնք հավելթազարդի նմանեցնել, բայց հոս գործերնիս կիսաշրջանակներու հետ է, որք ճարտարապետական ձևերու լեզվին քիչ հմուտ եղողի մը համար դժվարավ նկարագրելի եղանակավ մը իրարու անցած և այս կերպով բազմապատկ շղթայուք դռան երկու կողմերն իրարու մոտ են, իսկ դռան վերին կողմը իրարու խառնված կընթանան»<sup>1</sup>:

Քարակոփություն արհեստին այսքան կատարելությամբ տիրացած ուրարտացիների համար դժվար չպիտի լիներ կառուցանել այնպիսի շինություններ, որոնք հայտնի են Կիկլոպյան անունով: Քարի ահագին կտորներ, որոնք իրենց թանձրությունը և մեծությունը ժայռերի ամբողջ բեկորներ են ներկայացնում, գործ էին անում պատեր բարձրացնելու համար. այսպիսի արհեստը ոչ միայն խիզախ ձեռներեցության ոգի էր պահանջում, այլև ահագին նյութական միջոցներ, քանի որ այդ անհեթեթ բեկորները շարժելու, տեղը դնելու համար հարկավոր էր բանավոր ձեռքերի մեծ քանակություն: Ուրարտացիները իրենց կիկլոպյան պատերը շինում էին կամ տաշած կամ անտաշ, կամ թե հազիվ տաշած ու ձևավորված քարերից: Սրանք դարսվում էին իրար վրա մեծ վարպետությամբ, շատ հաճախ առանց կրաքի մածուցիկ զանգվածի: Այս տեսակ վիթխարի պատերի նմուշներ տալիս է Մենուայի ջրմուղը (Շամիրամ-սուն): Կիկլոպյան պարիսպներով էին շրջապատում և ուրարտական բերդերը ժայռերի վրա: Անդրկովկասի սահմաններում ուսումնասիրություններ կատարած Բուսենագետները (Իվանովսկի, Նիկոլսկի) երևան են հանել, որ համարյա յուրաքանչյուր սեպաձև արձանագրության մոտ գտնվում են շատ հին, անշուշտ ուրարտական բերդեր, մեծագույն մասամբ մանյու ամրոցներ, որոնց բնորոշ հատկությունն է կիկլոպյան պարիսպը: Որմնադրության արհեստը նրբություն և կատարելության էր հասցրած: Թոփրաք-Կալեի տաճարը, շնայած որ կործանված է մինչև հիմքը, «չքեղ», «հրաշալի» անուններով է կնքվում եվրոպացի այցելուների կողմից:

Ուրարտացի քարաշինները գիտեին և գեղեցիկ զարդարանքներ շինել գույնզգույն քարերի դասավորումով: Սա մի տեսակ մոզաիկ էր: Թոփրաք-

Կալեի տաճարի հատակը ծածկված էր այդպիսի մոզաիկանման բանվածքներով, որոնք բաղկացած էին համակենտրոն շրջանակներից միմյանց ազուցված ընտիր ճաշակով:

Մի ուրիշ մեծագործություն էլ, որ ներկայացնում է ուրարտական քաղաքակրթությունը, այն քարե հսկայական կոթողներն են, որոնց վրա Վանի թագավորները քանդակել էին տալիս իրենց գործերը պատմող արձանագրություններ: Գրանք քարի միապաղաղ կտորներ են, հղկված, սովորաբար տափակ, վերևը կիսաբոլորակ: Հսկայական Արգիշտիի կոթողը, որ գտնվում է Վանի ս. Կարապետ եկեղեցու բակում: Կոթողներից պակաս չէին և այն քարե պատվանդանները, որոնց փորվածքի մեջ մտցվում էին կոթողները: Որպեսզի կարողանային պահել այդ հսկայական կոթողները, պատվանդանները պիտի լինեին նույնպես շատ խոշոր ու հաստ, իսկ նրանց տեղափոխելու համար յուրաքանչյուր կողմի վրա թողնվում էր հանգուցատեղի, որին կապում էին պարանները: Այսպես է, օրինակ, Հասան-Կալեի մոտ գտնվող խոշոր պատվանդանը, որ նկարագրել է Լեմմանը<sup>2</sup>:

Քարի այդ ճարպիկ վարպետները կարողանում էին և ավելի քնքուշ ու նուրբ գործերի համար բանեցնել այդ կարծր նյութը: Վանի բերդում կա քարե արձանի մի մնացորդ, որ տարաբախտաբար, ամբողջությամբ մաքին շատ քիչ հասկացողություն է տալիս: Արձանից մնացածը իրանն է միայն, առանց գլխի: Հավանական է համարվում, որ ուրարտական արվեստի գործ լինի այդ կտորը: Գտնված են և այնպիսի գործեր, որոնք ցույց են տալիս թե ուրարտացի վարպետները գիտեին քարի և մետաղի մշակությունը միացնել արվեստի մեջ: Օրինակ, քարի մեջ խոր փորված է ծառի ճյուղ բռնած մի մարդու պատկերը և փորվածքը լցված է մետաղով<sup>3</sup>:

Ջրանցքաշինություն: Ուրարտական կոլտուրայի այս նշանավոր ճյուղը որ միաժամանակ մի մեծ հուշարձան է, թե որքան այդ ժողովուրդը անձնատուր եղած էր երկրի մշակման, մանրամասն նկարագրությունների կարոտություն չունի: Ջրանցքաշինության ամենամեծ գործը Մենուայի «պիլին» է, որ գոյոթյուն ունի և այսօր: Նրա նկարագրությունը մենք բերինք վերևում, այդ նշանավոր թագավորի պատմության մեջ: Այսպիսի գործի ընդունակ մի ժողովուրդ, իհարկե, չէր թողնի իր երկիրը առանց ոռոգման, ուր որ հարկավոր էր արհեստական ջրանցքներ շինել: Եվ անշուշտ, շատ են երկրի զանազան կողմերում շինած այժմ բոլորովին մոռացված կամ անհետացած ջրանցքները:

Ոռոգման գործին կարոտ էր մանավանդ Արարատյան դաշտը: Առանց արհեստական ջրանցքների այս սքանչելի հողը չէր կարող զարմացնել իր արգավանդությամբ: Ուրարտուն, անկասկած, ամենալայն շափերով շահագործում էր այս երկրի հարստությունները, և ջրանցքների սիստեմն այստեղ, անշուշտ, շատ պիտի զարգացած լիներ: Այժմ էլ նկատվում են այդ հին ջրաբաշխական աղխատանքների հետքերը Երևան քաղաքի մոտ: Այս քաղաքի և էջմիածնի մեջ ընկած ընդարձակ հողերը ջրելու համար օգտվում են Զանգու (Հրազդան) գետից: Սակայն այդ գետը խոր ընկած է, ժայռոտ ափերի մեջ սեղմված: Եվ ահա աչ ավի բազալտյա ժայռոտ բարձրությունների մեջ փորված են երկու թունել:

<sup>1</sup> «Բազմավեպ», 1908 թ., եր. 488: Կենդանի ժայռերի մեջ ամբողջ շինություններ փորելու արվեստը մնաց Հայաստանում և ուրարտացիներից շատ ու շատ հետո: Այս արվեստի մի գեղեցիկ հուշարձան է Գեղարդի վանքը, շինված 13-րդ դարում:

<sup>2</sup> Քարերի գույներից զարդարանքներ կազմելու մի արվեստ էր, որ մնաց և հայկական ճարտարապետության մեջ:

<sup>3</sup> «Բազմավեպ», 1908, եր. 550:

<sup>3</sup> Lehmann—Haupt, „Materialien zur alteren Geschichte Armeniens“, p. 81.

որոնք այժմ կոչվում են Գալմաներ և որոնց միջոցով Ձանգվից վերցրած ջրմուղները ոռոգում են՝ վերևից—Երևանի ալիքները (Գալմա), իսկ ներքևից (110 սաժեն երկարությամբ)—էջմիածնի և Երևանի մեջ եղած հողերը: Այդ թուներեբը համարվում են ուրարտացիների գործեր: Եվ այս ենթադրությունը միանգամայն հավանական է դարձնում Ռուսա Բ-ի արձանագրությունը, որ Ձվարթնոց եկեղեցում է գտնվում և որի մեջ թագավորն ասում է, թե ինքը Իրդարունի գետից ջրմուղ է բերել և այգիներ տնկել: Այդ Իրդարունին այժմյան Ձանգուն է համարվում: Ջրմուղներ (պիլի) հանվել են և Արաքսից և այս մասին վկայում է Արաքսի ափին, դեպի Սարդարաբադի դաշտը տանող ջրմուղի սկսվածքում ժայռի վրա փորված արձանագրությունը<sup>1</sup>:

Մ ե տ ա ղ ա գ ո թ ու թ յ ու ն: Ոսկին, արծաթը, բրոնզը, երկաթը ուրարտական մետաղագործության նյութերն էին կազմում: Այստեղ էլ նշանակալի է այն բարձր զարգացումը, որին հասել էր արվեստը: Թոփրաք-Կալեի պեղումները տվել են ոսկե կոլոր մի մեդալ, վզից կախ անելու սահմանված: Նրա վրա քանդակված է մի շատ նուրբ, ուղղակի գեղարվեստական նկար, որ ներկայացնում է երկու կնոջ—մեկը նստած է բարձր մեջք ունեցող աթոռի վրա, իսկ մյուսը բազկատարած կանգնած է նրա առջև: Կանգնած կինը հագած ունի երկար զարդարուն զգեստ: Նստածը, անտարակույս, մի աստվածուհի է: Բայց երկուսն էլ հետաքրքրական են մանավանդ այն կողմից, որ ներկայացնում են ուրարտական կանանց տիպեր:

Կանացի պատկեր է ներկայացնում և մի պղնձի ձուլվածք, որ ուներ կրոնական մեծ նշանակություն: Եգիպտոսում, Ասորեստանում, հետո նաև Պարսկաստանում աստվածություն ամենաբարձր նշանակը (սիմվոլը) արեգակի թևավորած սկավառակն էր, որի հետ ներկայացնում էր և գլխավոր աստվածը (ինչպես, օրինակ, Ասորեստանում Ասուրը, Պարսկաստանում՝ Ահուրա-Մազդան): Ուրարտուն էլ ուներ այդ նշանակը, բայց նրա հետ ներկայացվողը կին էր և ոչ տղամարդ: Ի՞նչ է այս ցույց տալիս: Արդյոք ա՛յն, որ ուրարտական գլխավոր աստվածը (Խալդին կամ նրա երկու ընկերներից մեկը) իգական սեռին էին պատկանում: Առայժմ այս հարցին որոշակի պատասխանել չի կարելի: Բայց մի ուրիշ կարևոր հանգամանք է ներկայացնում այդ կանացի պատկերը: «Շատ կորացած քթի և այտուկի դրոշմվածը,— ասում է պրոֆեսոր Լեմանը,— կը հիշեցնեն ինձ ծանոթ հարավային Կովկասի բոլոր տիպերեն գլխավորապես վիրական տիպարը: Եվ եթե զանազան պատճառներով մտածվեցավ վրաց և խալդյաց խնամություն մը մասին, հոտ ևս նկատելու արժանի պարագա մ'ն այն, որ երկայն ու գլխի երկու կողմեն ուսերու վրա ծածանող խոպոպիկներն... դեռ ցայսօր բնորոշիչ առանձնահատկություն մ'են վրացի կանանց հերազարդին»<sup>2</sup>:

Ուրարտացի տղամարդկանց գծագրությունն էլ հասել է մեզ: Դարձյալ Թոփրաք-Կալեի ավերակների միջից է, որ հանվել է մի տղամարդու պղնձե ուրձան, որ մի շատ սիրուն գործ է, բայց, տարաբախտաբար, ոչ ամբողջությամբ պահված: Մի քանի նշաններից երևում է, որ իրանը ծածկված է փղի ոսկով: Գրուխը շինված է սպիտակ քարից, իսկ աչքերը և վզազարդի ծակերը, ինչպես երևում է, լցված են եղել թանկագին քարերով:

Բրոնզյա իրերի վրա եղած քանդակները զարմացնում են իրենց նրբու-

<sup>1</sup> Մեսոպոտամիայի պեղումներ, «էջմիածնի ոռոգումը», «Արարատ» ամս., 1912, էջ 238—239:

<sup>2</sup> Անդ., էջ 240:

<sup>3</sup> «Բազմավեպ», 1909, էջ 10:

թյամբ և ճաշակով: Նրանց մեջ ամենանշանավորներն են Ռուսա Բ-ի և Ռուսա Գ-ի բրոնզե վահանները, որոնք ըստ ուրարտական սովորության կախված են եղել տաճարում: Ռուսա Բ-ի վահանը ծածկված է քայլող առյուծների և ցուլերի նկարներով: Արտակարգ գեղեցկությամբ աչքի է ընկնում և մի բրոնզե բարձր աշտանակ, որ հաստատված է աղեղնաձև բարձր երեք ոտերի վրա: Ոտերը վերջանում են ցուլի կճղակների ձևով, իսկ յուրաքանչյուր կողմի վրա հաստատված է մի բրոնզե արձանիկ, որ Ասորեստանն է հիշեցնում— մարդու գլուխ ունեցող թևավոր ցուլեր: Ուրարտուն այդ ձևը Միջագետքից է փոխ առել, բայց իր սեփական ինքնուրույնությունն է ցույց տվել: Չանազան կենդանիներից ձևեր կազմելը ուրարտացի արվեստագետին տվել է միջոց փրուն առարկաներ հորինելու: Այսպես է, օրինակ, արծվառյուծը, այսինքն թևավոր մի առյուծ, արծվի գլխով, աչքերի ծակերն են մնացել, որոնք անշուշտ ուրիշ մի նյութով են եղել լցված<sup>3</sup>: Կա և մի թևավոր ցուլ, որի առաջին ոտների վրա բարձրանում է մարդու իրան. թևերը խաչված են կրծքի վրա, իսկ երեսը չկա, շինված է եղել ուրիշ նյութից<sup>4</sup>: Երկու արձանիկներն էլ իրենց գլուխների վրա ունին հավիվածներ, որոնց մեջ մտցվում էին պղնձից շինած սյուներ: Ասել է՝ արձանիկը պատվանդանի դեր էր կատարում: Պղնձագործության հուշարձանների մեջ հիշատակենք և կահույքի մի ծանր ու հաստ ոտ, որի զանազան տեղերում թողած ծակոտիները, անշուշտ, թանկագին քարերի համար էին:

Արծաթագործությունը ծաղկած էր մյուս արհեստների նման: Ուրարտական ոսկերիչներին հայտնի էր ծծմբարծաթը, որի միջոցով կարելի է սև բանվածքներ անել սպիտակ արծաթի վրա: Ներկայումս այդ արհեստը Եվրոպայում հայտնի է Տուրայի<sup>5</sup> արծաթ անուկով: Բայց նույն արհեստն այսօր ավելի ձոխացած է Վանում:

«Սուլայիսի Տուլա գործեր,— ասում է Լեմանը,— նաև ցայսօր հատկապես Վանա մեծ մեծ բազմությամբ և կարգե թուրս նրբությամբ կը պատրաստվին: Վանա մեջ կարելի է ոսկերիչներն, խանութ առ խանութ, իրենց աշխատած միջոց դիտել: Մեր գտածն կը ցուցնե թե հոս ամենահին բնիչ գործի մը շարունակությունն է և թե նա Կովկասի վրային Ռուսաստան անցնելով՝ նոր հայրենիք մը գտած է»<sup>6</sup>:

Արծաթի և ոսկու վրա նկարելու արվեստի հիշատակարաններ համարվում են և հյուսիսային Կովկասում, Մայկոպի մոտ և այլ տեղեր գտնված մի քանի իրեր, որոնք, ինչպես ենթադրում են, ուրարտական գործեր պիտի լինեն: Այդ գյուտերից մեկը արծաթե աման է, ըստ երևույթին հին շրջանի մի գործ, և երկու ոսկե պատյաններ, ծածկված զարդարանքներով<sup>6</sup>:

Երկաթի մշակությունը նույնպես հետքեր է պահել Թոփրաք-Կալեի ավերակների մեջ: Բայց այդ մետաղի գործածությունը, անշուշտ, ավելի շատ էր տարածված և կյանքի մեջ, բազմաթիվ պիտույքների էր ծառայում հմուտ վարպետների ձեռքով, քանի որ, ինչպես տեսանք, ենթադրվում է, թե երկաթի գյուտը տեղի է ունեցել հենց Վայաստանում:

Կ ա վ ա գ ո թ ու թ յ ու ն: Այս արվեստը ամենից առաջ կարևորություն

<sup>1</sup> Личч, т. II, с. 80.

<sup>2</sup> Lehmann-Haupt, p. 97.

<sup>3</sup> Личч, т. II, с. 81:

<sup>4</sup> Քաղաք Ռուսաստանում:

<sup>5</sup> «Բազմավեպ», 1909, էջ 11:

<sup>6</sup> Турцев, т. II, с. 52.



է ներկայացնում այն կողմից, որ տալիս էր նյութ գրութիւններէ համար. Յալի տախտակներն էին ուրարտացիներէ, ինչպես և նրանց ժամանակակից մյուս ազգերի թուղթը<sup>1</sup>: Թոփրաք-Կարեի ավերակներից հանված Ան մի քանի աղբյուրի տախտակներ, որոնք ծածկված են կամ սեպագրութիւններով կամ մեհենագրով նշաններով (հիերոգլիֆ): Վերջին տեսակի տախտակները, անշուշտ, ուղարկված են Վանի թագավորներին հարեան հեթիթական երկրներից, ուր գրութեան ձևը մեհենագրովն էր: Իսկ սեպագրութիւնները ներկայացնում են նամակներ<sup>2</sup>, առօրյա հարաբերութիւնների վավերագրեր: Վերջինների թվին են պատկանում մի դաշնագիր, որից կախված է քարեխոսական ձևով մի կնիք: Այս գլուտը մի վկայութիւն է, որ Ուրարտուի մեջ էլ տիրում էին իրավական այնպիսի կարգեր, որոնք արդէ մեզ ծանոթ են Միջագետքի կուլտուրայի տեսութիւններից և որոնք կարգավորում էին մարտիանց հարաբերութիւնները դրամական գործառնութիւնների, առևտրի և արդյունաբերութեան մեջ: Տարաքափտարար, դեռ շատ քիչ են եղել որոնումներ, և այս մի քանի հատ տախտակները դեռ բավական չեն Ուրարտուի քաղաքական կյանքի մշակած կարգերն այնպես մանրամասն լուսաբանելու համար, ինչպես այդ հնարավոր է եղել կատարել, հիմնվելով նույնպիսի տախտակների վրա, Բաբելոնի և Միջագետքի վերաբերմամբ:

Կավագործութեան մի հարուստ ցուցահանդես Բեյք և Լեման գիտնականներին հայթայթել է Թոփրաք-Կարեի պալատի մասանը, ուր սովորական մանր ու մեծ պուտուկների, սափորների, կծերի հետ միասին երևան եկան 20—25 մեծամեծ կարասներ, յուրաքանչյուրը 500—600 լիտր հեղուկի տարողութեամբ: Կարասների վրա նկարված էին ամաններ և ցուլց տված, թե այդ ամանով քանի հարյուր շափ է բովանդակում իր մեջ կարասը: «Մեզի հաջողեցավ այս կարասներեն երկուքը գրեթե անվնաս դուրս հանել, — պատմում է Լեմանը: — Ասոնք իրենց ձևովն ու մեծութեամբ շատ կը նմանին Անդրկովկասու մեջ դեռ մինչև այսօր գործածված գինյո կարասներուն, մանավանդ վրացիոցին»<sup>3</sup>: Շատ կարասների գոտիները ներկայացնում են գեղարվեստական զարդարանքներ: Ուշագրավ են մանավանդ այն զարդարանքները, որոնք կազմված են կենդանիներից: Այսպես մի կարասի վրա կա այսպիսի մի արձանագործութիւն. հորիզոնական դիրքով ընկած է մի կենդանի, ըստ երևույթին արջառ կամ եղջերու, առանց, սակայն, եղջուրների: Վերևից վար այդ կենդանու վրա ընկած է մի գազան, երևի, անբաշ մի առյուծ և ուտում է կենդանուն, որ իր որսն է: Բավական տպավորիչ է թե՛ ինքը, լափող գազանը և թե՛ նրա ահեղ ճիրանների տակ կծկված զոհը: Պատահում են և ուրիշ գազանների ամբողջական արձաններ կամ անդրիներ՝ կարասի փողի կամ փորի վրա<sup>4</sup>:

Ընդհանրապես ուրարտական ամբողջ փուլտուրան ներկայացնում է իր մեջ երեք տարր: Մի կողմից նա մոտենում էր Միկենյան կուլտուրային<sup>5</sup> և այս հան-

<sup>1</sup> Հայկական «աղյուսակ» բառն էլ, որ առաջացել է «աղյուս» բառից, հին ժամանակներում գրելու նյութ էր նշանակում (Չ. Չ. Տաշյան, «Ակնարկ մը հայ հնագրութեան վրա», Վիեննա, 1898, եր. 31):

<sup>2</sup> Մնացել է Մուսսիի Ուրդանա թագավորի նամակը, ուղղած Ռուսա Ա թագավորի պալատի հազարապետին («Հանդ. ամս.», 1913, եր. 402):

<sup>3</sup> «Բազմավեպ», 1909, եր. 70:

<sup>4</sup> Lehmann-Haupt, p. 114—115:

<sup>5</sup> Միկենք — քաղաք Հունաստանում: Այստեղից էր Տրոյայի պատերազմի հերոսներից մեկը—Ագամեմնոն թագավորը: Միկենյան կոչվում է առհասարակ հնագույն կամ հերոսական Հունաստանի ամբողջ քաղաքակրթութիւնը:

բամանքը ցուլց է տալիս, որ ուրարտացիները արևմուտքից էին եկել: Միկենյան կիլիկիական արվեստը, որ արտահայտվում էր ժայռաշինութեան և որմնաղորութեան մեջ, տարածված էր արևմուտքում մինչև Իտալիա և Արևելքում մինչև Փոքր Ասիա: Ուրարտացիները այդ տարածման շրջանի մեջ էին մտնում և Հայաստանը: Նույն տարրն է երևում և ուրարտական կավագործութեան և պատկերաշինութեան մեջ: Այս արևմտյան տարրը ուրարտացիները բերել էին իրենց հետ: Հայաստանի բարձրակարգացած նրանք ենթարկվեցին ասորական ազդեցութեան, որ և կազմում է երկրորդ տարրը նրանց քաղաքակրթութեան մեջ: Իսկ երրորդն արդեն այն ինքնուրույնութիւնն է, որ մշակեցին ուրարտացիները իրենց նոր հայրենիքում:

**Եւրակացութիւն:** Որքան հետզհետե շատանում են հնագիտական գլուտերը, այնքան ավելի ընդարձակվում են տեղեկութիւնները Ուրարտուի կուլտուրական ճոխութիւնների մասին: Դա մի ծաղկած թագավորութիւն էր իր անկումից առաջ: Միայն քաղաքական ուժը չէր աճում նրա մեջ Մենուայի, Արգիշտիի օրով. առաջնակարգ, մեծ պետութեան արժանի թափով առաջանում էր և արվեստների զարգացումը, իսկ երկրի հարստութիւններն ավելի բազմանում էին: Վերը մենք պատմեցինք, թե ինչպես Սարգոնը գրավեց Մուսասիր մայրաքաղաքը և կողոպտեց Խալդի տաճարն ու Ուրդանա թագավորի ինչքը: Այդտեղ էլ մենք բերինք մի կտոր Սարգոնի արձանագրութիւնից, որի մեջ մեկ-մեկ հիշատակում է ավարի բանակութեանը: Այդ ցուցակը, սակայն, լրիվ չէ: Նոր գտնված մի ուրիշ արձանագրութիւն, որի մեջ այդ ավարի նկարագրութիւնը բռնում է 56 տող: Պատերազմական ավարն ամենից առաջ ցուլց է տալիս երկրի հարստութիւնն ու ռազմական կազմակերպութիւնը: Ուտի բերում ենք Սարգոնի ավարի ցուցակը, ըստ այդ նորագոյտ աղբյուրի:

Թագավորի պալատից վերցված է 34 տաղանդ 18 մնաս ոսկի, 167 տաղ. 27 մնաս արծաթ, բրոնզ ու թանկագին քարեր, գավազաններ փղոսկրի և եբենոսի փայտից ոսկի պատյաններով, արքայական իշխանութեան նշաններ, զանազան անունով անոթներ, զենքեր թանկագին նյութերից, 13 բրոնզե ավազաններ, 130 բրոնզե առարկա տեղային գործ, 130 գոնապեղ զգեստներ և վուշե շապիկներ Ուրարտուից և Կիլիկիայից: Իսկ Խալդի տաճարում, բացի ոսկուց, արծաթից, բրոնզից և պղնձից, 6 ոսկի խոշոր վահան, որոնք կպցրած էին պատերին և շողողուն փայլ ունեին: Նրանց մեջ կային այնպիսիները, որոնց վրա շան գլուխ էր նկարված և դրանց կշիռն էր 5 տաղ. 12 մնաս ոսկի, 12 հատ արծաթի վահան վիշապների գլուխներով. ոսկի կողպեքներ, բանալիներ, սրեր, 96 նիզակներ, 33 արծաթե կառքեր, 394 արծաթե անոթներ՝ ասորական, ուրարտական և Կիլիկիայի գործ, Բողբարդու աստվածուհու կնիքը, 25212 բրոնզե վահաններ, 1514 բրոնզե նիզակներ, 305412 բրոնզե սրեր, 607 բրոնզե ավազաններ՝ վացումների համար, մի ահագին ջրաման, որ տանում էր իր մեջ 80 շափ ջուր և որ գործ էին ածում Ուրարտուի թագավորները՝ գինի ձնելու համար Խալդին, պահապան աստվածների 4 բրոնզե արձաններ, Սարգոնի քարե արձանը, աստղերով զարդարված թագը զխին, 60 տաղանդ կշռով, Ռուսայի արձանը, որի վրա կար այսպիսի արձանագրութիւն. «Երկու ձիով և մի ձիավորով իմ ձեռքերը նվաճեցին Ուրարտուի թագավորութիւնը»<sup>1</sup>:

Եվ երբ այսպիսի զարդարանքներ և ճոխութիւն գտնվում էին Մուսասիրում, որ մի երկրորդական փոքրիկ երկիր էր, բայց բուն Ուրարտուին կպած և նրա հետ սերտորեն շաղկապված, կարելի է մոտավորապես եզրակացնել:

<sup>1</sup> Тугаев, т. II, с. 53.



թե ի՛նչ պիտի լինեն Վանի արքայական պալատները, տաճարները, ազնվականների ապարանքները Մենուայի և Արգիշտիի ժամանակ: 35

**11. Կործանում:** Արդեն դեռ Սարգոնի ժամանակ մենք տեսանք, որ արևելքից և հյուսիսից առաջանում էին դեռ անծանոթ և բարբարոս նոր ազգություններ, որոնք շտապում էին տեղ բռնել համաշխարհային պատմության մեջ: Սարգոնի հաջորդները՝ Սանհերիբ, Ասարհադդոն, Ասուրբանիպալ, պահպանեցին այն համաշխարհային տիրապետությունը, որ նվաճել էր Սարգոնը իր սահմանադար պատերազմներով: Բայց ասորական մեծ պետության ժամը հասնել էր: Ասուրբանիպալը (668—626) վերջին մեծ թագավորն էր, որ բարձր էր պահում իր պետության զինվորական ահավոր ուժը: Բայց նա մի անհատ էր, որ իր զորքի հետ այդպիսի գործ էր կատարում: Մեռավ այդ անհատը, և Միջագետքի ահարկու բռնապետությունը իսկույն երևան հանեց իր զառամությունը:

Մինչդեռ Ասուրբանիպալը պատերազմներ էր մղում հարավում և արևմուտքում, հյուսիս-արևելյան այն նահանգները, որոնք պատկանում էին Ասորեստանին, կազմակերպեցին մի նոր պետություն— Մեդիան (Մարաստանը): Այդ կազմակերպումը հետևանք էր այն հանգամանքի, որ հյուսիսից արշաված արիական ցեղերի մի մասը հաստատվել էր Մաննայի երկրում և իր դիրքը ապահովելու համար Ասորեստանի դաշնակիցն էր դարձել և անհաշտ թշնամի էր մարական ազգին: Այդ արիական ցեղերն ընդհանրապես կոչվում են կիմերացիներ: Նրանք ապրում էին հարավային Ռուսաստանում, Ազովյան ծովի շուրջը: Արևելքից, Ասիայի կողմից, Կասպից ծովի հյուսիսային տափարակներով առաջացած մի ուրիշ արիական ցեղ, որ կոչվում էր Շակ կամ Սակ, սկսեց նեղել կիմերացիներին, որոնք թողին իրենց բնակության վայրերը և երկումասի բաժանվեցին: Մեկը ուղղվելով դեպի արևմուտք, անցավ Դունայ գետը, մտավ Թրակիա և հալածելով այդտեղ բնակավորված արիական ցեղերը, նրանց ետևից անցավ Բոսֆորով Փոքր Ասիա: Մյուս ճյուղը ուղղվեց դեպի հարավ և անցնելով Կովկասյան զխավոր լեռնաշղթան Դարյալի կիրճով, մտավ Անդրկովկաս: Նրա ետևից նույն ճանապարհով եկան Սակերը, որոնք հաստատվեցին Կուրի հովտում<sup>1</sup>:

Ահա այս կիմերական տեղափոխությունները մեծ իրարանցումներ գեղեցին այն ժամանակվա քաղաքական աշխարհի մեջ: Ուրարտուի սահմաններում կիմերացիներն անվանվում էին Սպարդա, Մաննայի երկրում՝ Աշկուզա, ուրիշ տեղերում պարզապես կիմերացի<sup>2</sup>: Աշկուզաները, ինչպես ասացինք, զաշնակից դարձան ասորեստանցիներին, որոնք տեսնում էին նրանց մեջ մի նոր բարբարոս ուժ: Ուրարտուի մեջ սպարդաները տիրացան շատ տեղերի և Սարգուրի Գ թագավորը, դրանց դիմադրելու համար, կամովին հպատակվեց Ասուրբանիպալին, սակայն, ըստ երևույթի, ոչինչ չկարողացավ շահել դրանով, քանի որ Ասորեստանը ոչինչ չձեռնարկեց այդ նոր ժողովուրդների դեմ: Ասորական կուսակալները սահմանազխի վրա հետևում էին, թե ինչպես այդ նոր ժողովուրդը պաշարում էր ուրարտացիների դեմ և հայտնում էին այդ մասին իրենց կառավարության: Այսպես թուլանում և փոքրանում էր Ուրարտուն. նրա թագավորները գնալով ավելի թուլանում էին:

Ասուրբանիպալից հետո Նինվեի գահը գրավեցին դարձյալ երկու թագավորներ, որոնք հիշատակության արժանի գործ չեն կատարել: Մարաստանը, ուժեղանալով, իր համար նպատակ էր դրել Նինվեի նվաճումը և Ասորեստանի

կործանումը: Կիաքսար թագավորի առաջին փորձը հաջողություն չունեցավ: Նա պաշարել էր Նինվեն, հրք կիմերական ազգերի մի նոր հոսանք, որ ավերում էր ամբողջ Փոքր Ասիան, Անդրկովկասը, իր հորձանքները հասցրեց և Մարաստան: Բարբարոսների այս նոր և ավելի ահեղ արշավանքն սպառնում էր ոչնչացնել ամբողջ հին քաղաքակրթությունը: Իր ավերիչ հոսանքները կիմերական արշավանքը տարավ հասցրեց Եփրատի գետերին, բայց ժամանակի փառավոր փող տվեց նրանց և ետ դարձրեց: Անկարգ և անդիսցիպլին հորդանքից էին կազմված կիմերացիները: Նրանք թալան էին որոնում և պատրաստ էին քնալ ամեն մեկի ետևից, ով խոստանում էր առատ ավար: Այս աղետալի արշավանքներ են, որ նկարագրել է Երեմիա մարգարեն մի քանի տեղերում. «Ձի ահա առաջիկ ես ածից քի վերայ ձեր ազգ քի հեռաստանէ, տունդ Իսրայելի, սաէ Տէր, ազգ որ առաջին, ազգ որ յաւիտենից, ազգ որոյ ոչ լսիցես զլեզու նորա, և ոչ իմանացես զխօսս նորա: Կապարճք նորա իբրև զգերեզմանս բաց են. ամենքին զօրաւոր: Եւ կերիցեն զհոնձս ձեր և զհաց, և կերիցեն զուտերս ձեր և զդատերս, և կերիցեն զոչխար և զարջառ ձեր, և կերիցեն զայգիս և զթզենիս ձեր և զձիթենիս, և կասեսցին զամուր ամուր քաղաքն ձեր, յորս դուքն պանծացեալ էք՝ որով սատակեսցեն»... «Ահա առաջիկ զօր գայ ի հիւսիսոյ. ազգ մեծ. թագաւորք բազումք զարթիցին ի ծագած երկրէ, աղեղնաւորք և տիգաւորք, արք ժպիրճ և անողորմ, ձայն նորա իբրև զձայն ծովու յարուցելոյ. կառօք և երիվարօք ճակատեսցի և լաստեսցի իբրև զհուրի պատերազմ ի վերայ քո, դուտար Սիոնի: Լուաք զլուր նոցա. և լքեան ձեռք մեր, նեղութիւնք կալան զմեզ իբրև երկունք ծննդականք: Մի՛ ելանէք յանդս, և ընդ ճանապարհս մի՛ գնաք, զի սուր թշնամեաց շուրջ պատեալ է: Դուտար ժողովրդեան իմոյ, քուրձ զգեցիր. մոխիր տարածեա՛, ա՛ռ զուզ սիրելոյ, և կոճեա՛ կոծ ողորմ. զի յանկարծակի եկեսցէ թշուառութիւն ի վերայ մեր»<sup>1</sup>: Մի խոսքով՝ արևմտյան Ասիայում կատարվում էր մի ահեղի աղետ, որի նմանները հետագա դարերում բերին Չինգիզ-խանը, Լենկթիմուրը և սրանց նմանները:

Այս համատարած ավերանքի մեջ անվնաս մնաց Նինվեն: Ուրարտուի վիճակի մասին տեղեկություններ չունինք: Սակայն ասորական բախտը պետության փրկություն չէր բերում: Հենց որ կիմերացիների արշավանքները դադարեցին, Կիաքսարը դաշնակցություն կնքեց մի կողմից Եփրատի, մյուս կողմից՝ Բաբելոնի հետ, որ Ասորեստանի դարավոր թշնամին էր: Բաբելոնում իրեն անկախ թագավոր հայտարարած Նաբոպոլասարը գրավում է Միջագետքը, իսկ Կիաքսարը նորից պաշարում է Նինվեն: Այս անգամ հուշակավոր մայրաքաղաքը երկար չէ կարողանում դիմադրել: Ասորեստանի վերջին թագավորը, Սին-շատ-շիկուն, տեսնելով, որ ամեն ինչ կորած է, փակվեց իր պալատի մեջ և հրդեհելով նրան՝ իր ընտանիքի և գանձերի հետ կորավ բոցերի մեջ, ինչպես պատմում է ավանդությունը: Մարերը ներս թափվեցին և հիմնահատակ կործանեցին ամբողջ քաղաքը<sup>2</sup>, այնպես որ մի երկու հարյուր տարի անց՝ նույնիսկ Ասորեստան անունն էլ չէր մնացել. սարգոնների երկիրը կոչվում էր պարզապես Ադիաբեն:

Այս դեպքը փոփոխում էր Արևմտյան Ասիայի բարտեզը, փոփոխում էր պատմության ընթացքը: Կործանվում էր սեմական համաշխարհային տիրապետությունը, որ անցնում էր արիական ցեղի ձեռքը: Ասորեստանը շատ ազգեր

<sup>1</sup> Երեմ. Ե, 15—18, 2, 22—27:

<sup>2</sup> Նինվեի կործանման ճիշտ թվականը հայտնի չէ. ոմանք ընդունում են 625 թվականը, ոմանք՝ 609, բայց ավելի հավանական համարվում է 600 թվականը Գ. ա.:

<sup>1</sup> Հայաստանի Ոստի նահանգում մի ամբողջ գավառ կոչվում էր Շակաշեն:  
<sup>2</sup> Вилклер, с. 131.

էր խորտակել, շատ ու շատ էր ծծել ժողովուրդների արյունը և գազանարար բռնակալութեան ծանր լծի տակ խեղդել էր մեծերին էլ, փոքրերին էլ: Այժմ հերթը իրեն էր հասել և նա խորտակվում էր, առանց ափսոսանք անգամ պատճառելու: Նինվեի կործանումը ծափահարութեան արժանի մի դեպք էր համարում հրեական մարգարեներից մեկը, Նաումը, որ ընկածի երեսին էր խփում նրա արատներն ու կեղտերը: «Ո՛ր, քաղաք արեանց ամենեկին սուտ, լի անիրատւթեամբ, որոյ զննեսցի որսդ: Ձայն հարուածոյ, ձայն շարժման անուշ, շաշին կառաց, շահատակին հեծելոց, փայլին զինու, շողալ սուսերի, թաւազլոր խաղալ վիրաւորաց, և ոչ գոյր շափ ազգաց նորա, և տկարացին ի մարմինս իւրեանց ի բազում պոռնկութենէ: Պոռնիկ գեղապանձ, զլուխ կախարդաց, որ վաճառէր զազգս ի պոռնկութեան իւրում, և զտոհմս կախարդանօք իւրովք: Ահաւասիկ Ես ի վերայ քո, ասէ Տէր Աստուած ամենակարող և յայտնեցից զյետուստ քո և արկից զերեսօք քովք և ցուցից ազգաց զամօթ քո, և թագաւորութեանց զանարգանս քո: Եւ ընկեցից ի վերայ քո զպղծութիւնս և զատելութիւնս քո, և արարից քեզ խայտառակ: Եւ եղիցի ամենայն որ տեսանիցէ զքեզ, զիջանիցէ և ասիցէ. Եղով դու, Նինուե, ո՛վ իցէ որ հեծիցէ վասն քո, ուստի՞ խնդրեսցուք քեզ մխիթարութիւն: Թարխեցան վէրք քո, և չիք բժշկութիւն բեկման քում, ամենեքին որ լուան զգոյժ քո՝ ծափս հարցեն ի վերայ բեկման քո, քանզի յո՛յր վերայ ոչ չոգաւ շարութիւն քո հանապազ՝:

Այսպես էր ասել բռնակալութեան ձեռքում ճնշված մի թույլ ազգի զգացմունքը այն բուռնին, երբ անհետանում էր այդ բռնակալութիւնը: Ուրարտուն էլ մեկն էր Նինվեի հարվածների տակ փշրված ազգերից: Մենք չգիտենք, թե նա ինչպես վերաբերվեց խոշոր պատմական դրամային: Նինվեի կործանումից հետո նրա թագավորութիւնը, ինչպես հավանական է թվում, գոյութիւն պահպանեց դարձյալ մի երկու տասնյակ տարի: Բայց այդ ժամանակամիջոցը հոգեվարքի վերջին շրջանն էր: Կիմմերացիները անհայտացան ասպարեզից, բայց դա փրկութիւն չէր նրանց հարվածներից անշափ թուլացած ուրարտացիների համար: Ասորական կայսրութեան տեղ առաջավոր Ասիայում բարձրացավ ճարական կայսրութիւնը: Ուրարտացիները ենթարկվեցին այդ կայսրութեան իրեն մեկը այն անհամար ազգերից, որոնք բնակվում էին Մարաստանի արևմտյան կողմում մինչև Կիլիկիա: Թվում է, թե այդ ազգի մնացորդները վերջին ժամանակները կենտրոնացել էին Արաքսի հովտում, Արարատյան դաշտում:

Եվ այստեղ նրանց հանդիպում է նոր պատմութեան ասպարեզ իջնող հրեա-եվրոպական ժողովուրդներից մեկը՝ հայերը: 36

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՆԵՐ՝

	Բ. Ա.
1. Արամե	860—843
2. Լուտիբրի	843—835
3. Սարգուրի Ա	835—820
4. Իշպուինի	820—800
5. Մենուա Ա, իր հոր հետ	805—800
Մենուա Ա, մենակ	800—780
6. Արգիշտի Ա	780—755
7. Սարգուրի Բ	755—730
8. Ռուսա Ա	730—714
9. Արգիշտի Բ	714—685
10. Ռուսա Բ	685—675
11. Էրիմենա	675—670
12. Ռուսա Գ	670—645
13. Սարգուրի Գ	645—620
14. Իրկուա	620—600
15. Մենուա Բ	600—580

1 Նաում, Գ, 1—19.

1 Համարյա բոլոր թվականները ենթադրական են, վերցված մոտավոր հաշվով (ըստ Հ. Սանտալեյանի):

Գլուխ առաջին

Մ Ա Գ Ո Ւ Մ

1. ՀՆԴԵՎՐՈՎԱԿԱՆ ԱԶԳԵՐ: 2. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: 3. ՔՐԱԿԻՍ ԵՎ ՓՔՑՈՒԿԻՍ: 4. ՀԱՅԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ: 5. ՆԱՀԱՆՋ ՔՅՈՒՐՈՒՆ: 6. ՆՈՐ ԺՈՂՈՎՈՐՈՒՄ:

**1. Հնդեվրոպական ազգեր:** 19-րդ դարի սկզբից ծնունդ է առնում գիտության մի նոր ճյուղ—համեմատական լեզվագիտությունը, որ կարողացավ դասավորել ազգովթյուններն ըստ ծագման և ըստ ազգակցության, վավերագրեր ընդունելով նրանց լեզուները: Երկրագնդի ազգերը բաժանվում են լեզվական ընտանիքների, որոնք բաղկացած են բազմաթիվ ճյուղերից և ահն մի ճյուղ էլ ունի իր առանձին բաժանումները: Ամենազխավոր և ամենից լավ ուսումնասիրված ընտանիքը հնդեվրոպականն է: Այս անունն են ստացել այն բազմաթիվ լեզուները, որոնցով խոսում են Հնդկաստանից մինչև Եվրոպա տարածված շատ ազգեր: Սրանք կոչվում են և արիացիներ: Դիմելով այդ լեզուների ծննդաբանության վերին աստիճանի կարևոր հարցին, գիտությունը մանրակրկիտ քննությունների միջոցով հաստատեց այն իրականությունը, որ բոլոր, մինչև այժմ հայտնի, հնդեվրոպական լեզուները քույրաթիվ են և առաջ են եկել մի մայր լեզվից, որ, սակայն, չէ մնացել ամբողջովին, անհետացել է, թողնելով իր մասնիկները իրենից ծնված լեզուների մեջ: Այդ անհայտացած մայր լեզուն ընդունվեց անվանել հնդեվրոպական նախալեզու: Այս լեզվով էին խոսում, մի անհայտ հին ժամանակ, բոլոր արիական ցեղերը, քանի բնակվում էին մի ընդհանուր հայրենիքում:

Լեզվագիտությունը փորձեց գտնել նույնիսկ այս ընդհանուր հայրենիք տեղը, հիմնվելով բացառապես իր ձեռք բերած նյութերի վրա: Մի շարք սրամիտ աշխատություններ<sup>2</sup>, որոնք կատարվեցին այս ուղղությամբ, բերին գիտնականներին այն եզրակացության, որ հնդեվրոպական ազգերի նախնական հայրենիքը պետք է որոնել Միջին Ասիայում, Հնդկաստանի մոտերը, Պամիր կոչված լեռնոտ և ջրաբեր երկրում: Այդ կենտրոնից արիական ցեղերը գաղթեցին դեպի օտար երկրներ և հենց այդ ժամանակից էլ լեզուն բաժանվեց առանձին-առանձին ճյուղերի: Ոմանք նույնիսկ փորձեցին բացատրել, թե ի՞նչ բնական պատահարներ են ստիպել արիացիներին թողնել իրենց ասիական

<sup>1</sup> Հ. Սերովի Տերվիչյան, «Հնդեվրոպական նախալեզու», Կ. Պոլիս, 1885, էր. 6—7:  
<sup>2</sup> Տեսեք, օրինակ, Adolphe Pictet, «Les Origines indo-européennes», 2 vol., Paris, 1859—1863:

հայրենիքը, որ նրանք խաղաղ անասնապահներ առ հողագործներ էին և ցույց են տալիս այն երկրաբանական ահեղ հեղաշրջումները, որոնց հետևանքով միջինասիական գետերը (օր. Ամու-Գարյա) փոխեցին իրենց ընթացքը և գոյացան կլիմայական դաժան պայմաններ: Որոշվում էին նմանապես և այն ճանապարհները, որ բռնեցին արիացի գաղթականները մայր-հայրենիքը քեզուց հետո: Այդ ճանապարհը երկու գլխավոր ուղղություն ուներ,— մի մասը դնաց դեպի հարավ և բաժանվելով երկու ճյուղի, գրավեց Հնդկաստանը և իրանի սարահարթը, իսկ մյուս մասը անցավ դեպի արևմուտք Կասպից ծովի հյուսիսային կողմերով, երկար ժամանակ կանգ առավ այժմյան հարավային Ռուսաստանի տափաստաններում և այստեղից շարժվելով դեպի Գանուք (Դուսնայ) գետը, կամ այն է, որ անցավ այդ մեծ գետը, տարածվեց Բալկանյան թերակղզում, կամ շարունակելով ճանապարհը, գրավեց Արևմտյան Եվրոպայի զանազան մասերը:

Արիացիների ասիական ծագման թեորիան երկար ժամանակ ընդունվում էր իբրև վերջնականապես հաստատված մի պատմական իրողություն և ներկայումս էլ դեռ շարունակում է պահել գիտնականների շրջանների մեջ: Բայց նա նույնիսկ իբրև հավանական մի ենթադրություն էլ չընդունվեց բոլոր այն գիտնականների կողմից, որոնք զբաղված էին նախապատմական ժամանակների հարցերով: Գտնվեցին հենց սկզբից, ոչ սակավաթիվ, հայտնի գիտնականներ, որոնք վեճ հարուցին այդ թեորիայի դեմ: Սրանք էլ, հենվելով գլխավորապես մարդաբանական գիտության<sup>2</sup> վրա, մերժեցին արիացիների ասիական ծագումը և իրենց կողմից ապացուցանում էին, թե արիական առաջին հայրենիքը Ասիայի կենտրոնում չէր, այլ Եվրոպայում, Բալթիկ ծովի հարավային կողմերում, մինչև Կարպատյան լեռները: Այս թեորիայով արիացի հեղինակները և իրանցիները համարվում են գաղթած Եվրոպայից Ասիա: Գիտության մեջ ներկայումս տիրապետող է եվրոպական ծագման թեորիան և ասիականը համարյա լքված է:

**2. Հայագիտություն:** Հնդեվրոպական լեզվագիտությունը իր առաջին բալլերից ուղադրություն դարձրեց և հայոց լեզվի վրա, 1837 թվականին էր, որ Բեռլինի համալսարանի պրոֆեսոր Պետերմանը հրատարակեց իր տեսությունը հայոց լեզվի վրա և, առաջին անգամ լինելով, հայտնեց թե այդ լեզուն հընդեվրոպական լեզուների մի ճյուղավորումն է կազմում: Միևնույն միտքը հայտնեց, 10 տարուց հետո, Վինդիշմանը: Այդ ժամանակից հայագիտությունը Գերմանիայում արագ բալլեր է անում: Համեմատական լեզվագիտության հիմնադիր Բոպպը նույնպես ուսումնասիրում է հայոց լեզուն և մտցնում է այդ ուսումնասիրությունը իր հռչակավոր «Համեմատական քերականություն» աշխատության երկրորդ հրատարակության մեջ<sup>3</sup>: Մի շարք ուրիշ գերմանացի գիտնականներ (Դր Լագարդ, Յր. Միլլեր, Գոշե, Հյուբշման և ուրիշները) հայրենի ուսումնասիրությունն ավելի ևս զարգացրին, դրին գիտական հողի վրա

<sup>1</sup> А. Чайковский, «Родина народов арийской расы,— где она была и отчего покинута», ч. I, М., 1910.  
<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, И. Тейлор, «Происхождение арийцев доисторический человек», М., 1897.  
<sup>3</sup> Այս գիտական վեճի մանրամասնությունները տե՛ս Solomon Reinach, «L'Origine des Aryens», Paris, 1892.  
<sup>4</sup> Տե՛ս Փրանսերիս Թարգմանությունը. Fr. Bopp, «Grammaire Comparée des langues indo-européennes» t. II, Paris, 1875.

և այսպիսով հայ ժողովրդի արիական ծագումն ապացուցված էր: Գիտության մեջ այն հայացքն էր տիրում, որ հայերենը իրանական լեզվաճյուղին է պատկանում: Բայց պրոֆեսոր Հյուբշմանը իր աշխատություններով վերջնականապես հաստատեց, որ հայերենը, ընդհակառակն, ոչ մի ճյուղի չէ պատկանում, այլ կազմում է առանձին ճյուղ հնդեվրոպական ընտանիքի մեջ: Բոլոր հնդեվրոպական լեզուները բաժանվում են 10 զխավոր ճյուղերի և դրանցից մեկն է հայերենը<sup>1</sup>: Այդ 10 ճյուղերը, արևելքից արևմուտք գալով, այսպիսի շարք են կազմում. 1) հնդկական, 2) իրանական, 3) հայկական, 4) ալբանական, 5) հունական, 6) իտալական (ռոմանական), 7) կելտական, 8) գերմանական, 9) բալթիկյան կամ լիտվական և 10) սլավոնական:

Մակայն հետազոտողների աչքից չվրիպեց մի կարևոր հանգամանք. հայերենը ամբողջովին զուտ և անխառն հնդեվրոպական մի լեզու չէր: Նրա մեջ նկատվում էր և մի հին շերտ, որ բաղկացած էր ոչ-հնդեվրոպական տարրերից: Այս լեզվաբանական հանգամանքին համապատասխանում էր մարդաբանական գիտության հետազոտություններից դուրս բերած այն եզրակացությունը, թե հայ ժողովուրդը բաղկացած է երկու տեսակ ֆիզիկական տիպերից<sup>2</sup>: Այդ պատճառով պրոֆեսոր Ք. Պատկանյանը դեռ 1880-ական թվականների սկզբին էր կարծիք հայտնում, թե հայ ժողովրդին տրվող երկու անունները—հայ (որ զուտ ազգային անուն է) և արմեն (որ օտարների գործածած անուն է) հենց այն երկու տարրերն են, որոնցից ձևվել է հայ ժողովուրդը: Դրանցից մեկը, այն է՝ հայերը բնակվում էին Հայաստանի հարավային կողմերում, վանի լճի մոտ, իսկ արմենները՝ հյուսիսային կողմերում<sup>3</sup>:

Հայոց լեզվի այդ երկրորդ, ոչ արիական շերտի ուսումնասիրությունը 20-րդ դարի սկզբներից առանձին հաջողությամբ առաջ տարավ ակադեմիկոս Մալք, որին վիճակվում էր իր այդ անխոնջ աշխատություններով Արևելքի պատմություն մեջ նոր խոսք մտցնելու պատիվը: Իր ուսումնասիրությունների մեջ ռուս գիտնականը հայերի մեջ գոյություն ունեցող երկու լեզուները (զրաբար և աշխարհաբար) անվանեց հայկական և արմենական, այսպիսով նույնպես ընդունելով, թե հայ ժողովուրդը կազմված է հայերից և արմեններից: Ընտանիքից որոշվում է և այն, որ հայերը բնակվում էին, արմենները եկվորներ<sup>37</sup>:

**3. Թրակիա և Փոյուզիա:** Արիացիների ծագման մասին գոյություն ունեցող երկու կարծիքներն էլ, որոնց հետ ծանոթացանք վերևում, համաձայն են, որ Արմեն անունը կրող ժողովուրդը Ասիա է գաղթել Եվրոպայից: Արիական նախահայրենիքից գաղթելիս նա գտնվել է թրակիական ցեղերի մեծ ընտանիքի մեջ: Ինչպես հայտնի է, Թրակիա անունը հնում կրում էր Բալկանյան թերակղզու մի ընդարձակ մասը, Սև, Մարմարա, էգեյան ծովերի և Բալկանյան լեռնաշղթայի մեջ: Այդտեղ հաստատվեցին Դանուբի հովտից դեպի հարավ գնացած արիացիները, որոնք, ինչպես լինում է առհասարակ, բաղկացած էին խոշոր ու փոքր ցեղերից: Պատմությունը պահել է թրակիական մեծ ընտանիքի բազմաթիվ անդամներից շատերի անունները: Ենթադրվում է, որ

<sup>1</sup> К. Патканов, «О месте занимаемом армянским языком в кругу индо-европейских», Тифлис, 1879, с. 1.  
<sup>2</sup> Ք. Արմանյան, «Հնդեվրոպական լեզվախոսքը» («Արարատ» ամսագիր, 1912, № 5-6):  
<sup>3</sup> Проф. Д. Ануцин, «Армяне в антропологическом и географическом отношении» («Братская помощь пострадавшим в Турции армянам», М., 1898, с. 307).  
<sup>4</sup> «Ванские надписи», с. 88—89.

արիական գաղթը դեպի հարավ տեղի ունեցած պիտի լինի Քրիստոսից մոտ երկու հազար տարի առաջ:

Թրակիական ընտանիքի խոշոր ցեղերն էլ միապաղաղ և միանման ազգազրական զանգվածներ չէին, այլ ներկայացնում էին դարձյալ փոքրիկ ազգակից ցեղերի խմբակցություններ: Հայտնի են մի քանի այդպիսի ցեղախմբեր՝ մյուսիացիք, մյուզտոնացիք, կիկոնք, սայք, բիթանացիք, փոյուզացիք կամ բրիզներ<sup>1</sup>:

Բրիզ կամ փոյուզ ցեղախմբի մեջ կար մի ժողովուրդ, որ կոչվում էր արմեն և որի մասին, ինչպես երևում է, երկար ժամանակ տեղեկություններ պահվեցին հունական ավանդությունների մեջ: Ստրաբոնը, անշուշտ, այդ ավանդություններից բաղկելով, ցույց է տալիս և այդ ժողովրդի տեղը: Դա Մակեդոնիայի հարավ-արևմտյան կողմումն է, Թեսալիայում, Լարիսսա քաղաքի մոտերը, ուր կար Արմենիոն քաղաքը<sup>2</sup>: Ինքը հողի տարածությունը, մի քաղաք իր շրջականերով, ցույց է տալիս, թե որքան փոքրիկ էր այդ արիական ցեղը: Նրա մասին մենք գիտենք մի փոքրիկ բան էլ, որ մնացել է դարձյալ հունական ավանդությունների մեջ և որ ասում է, թե այդ ժողովրդի առաջնորդը և անվանազիրը (էպոնիմ) Արմենոսն էր, որ մյուս տեղացի առաջնորդների հետ գնացել է Արևելք և մնացել է այնտեղ:

Այս ավանդությունն արձագանք է պատմական այն շարժումների, որոնք տեղի են ունեցել խորին հնություն մեջ: Մոտավորապես 15 դար Քրիստոսից առաջ թրակիական ընտանիքի անդամներն սկսեցին շարժվել դեպի զանազան կողմեր, երևի տեղի տալով ետևից Կելոն նոր ազգությունների ճնշումին: Ցեղախմբերից մի քանիսն անցան Եվրոպայի Ասիայից բաժանող նեղուցները (Դարդանել, Բոսֆոր) և հաստատվեցին Փոքր Ասիայում: Տեղափոխվողների մեջ էր, ինչպես գիտենք, և փոյուզիական ցեղախմբերը, նրա հետ և արմենները<sup>3</sup>: Գաղթականները հաստատվեցին Պրոպոնդիտոսում, Մարմարա ծովի հարավային ափերում և այստեղից տարածվեցին մինչև Կապադովկիա, հասնելով Հալիս գետի միջին հոսանքին: Ժամանակի ընթացքում նրանք կազմեցին մի ուժեղ պետություն, որի քաղաքակրթությունը ցույց է տալիս ասիական և եվրոպական տարրերի խառնուրդ<sup>4</sup>: Այս հանգամանքը կարևոր է մեզ համար իբրև վկայություն, որ Եվրոպայի արիացիները Ասիայի հողի վրա խառնվեցին տեղացիների հետ, ենթարկվեցին նրանց քաղաքակրթության:

Ինչ դիրք էին գրավում արմենները փոյուզիական կամ Փոքր Ասիայի թրակիական ցեղերի մեջ: Տեղեկություններ չկան, և այս ամենից առաջ, իհարկե, այն պատճառով, որ նրանք դեռ մի փոքր ժողովուրդ էին, զուցե ոչ ավելի մեծ, քան Թեսալիայում: Մի քանի ենթադրություններ, որոնք բերվում են արմենների գոյությունը Փոյուզիայում ընդգծելու համար, թվում են շատ խախտա: Այսպես, կարծում էին, որ Հալիս գետի անունը հունական ձևն է հայերեն «Աղի» անվան<sup>5</sup>, բայց հետազոտություններից դուրս եկավ, որ «Հալիս» լազերի լեզվին պատկանող խոսք է և պարզապես նշանակում է «գետ»<sup>6</sup>: Ավելի մեծ արժեք շունի այն կարծիքը, թե Մինոպ քաղաքի մոտ եղած Հարմո-

<sup>1</sup> «Հանդես ամսօրյա», 1894, եր. 17:  
<sup>2</sup> Strabon, t. II, p. 464 (IX, 12).  
<sup>3</sup> Արմենների թրակիական ծագումը խոսք արձագանք է տվել 10-րդ դարի հայ մատենագիրության մեջ էլ: Տե՛ս Հովհաննես կաթողիկոսի «Պատմագրություն», Երուսաղեմ, եր. 16:  
<sup>4</sup> Maspero, «Histoire Anc.», t. III, p. 332.  
<sup>5</sup> «Հանդես ամս.», 1894, եր. 17:  
<sup>6</sup> H. Mapp, «Из поездки в турецкий Лазистан», СПб, 1910, с. 607.

նիոն քաղաքը պետք է համարել Արմենիոն, ընդունելով, որ արմենները Փոքր Ասիայում վերակենդանացրին իրենց թեսալական մայրաքաղաքի անունը: Նույն Սինոպի կողմերում գտնվող Օրմիոնի սարի մասին էլ ասողներ կան, թե այդ անունն էլ առաջացել է արմեններից<sup>1</sup>: Եթե հավանականություն էլ լինի այս ենթադրությունների մեջ, նա ամենաշատը կարող է միայն ցույց տալ արմենների բնակության տեղերը, առանց որևէ լույս սփռելու ժամանակագրության վրա և առանց մի բան տալու արմենների պատմությունից, որ առհասարակ բոլորովին անհայտ է առնվազն ութ դարերի տարածության վրա, այն է՝ Փոքր Ասիա գաղթելու ժամանակներից (15-րդ դար) մինչև 7-րդ դարը Ք. ա.:

Այս մութ ժամանակների ընթացքում արմենները, անշուշտ, քաղաքական զարգացման որոշ աստիճաններ անցան, շփվելով հարևան ազգերի, գլխավորապես հեթիթական ազգերի հետ, գուցե և մեծանալով նրանց հաշվին: Եթե հավանություն գտնեն պրոֆեսոր Ենսենի մանրակրկիտ բացատրություններից<sup>2</sup> գոնե մի բանին, պիտի ընդունենք, որ հենց այս անհայտ ժամանակները պետք է արմենները մտած լինեն հեթիթների երկիրը, որ ենթադրվում է, թե ունի հատ անունը: Այս անունից էլ, — կարծում է նույն գիտնականը, — առաջացել է հայ անունը: Ուրիշ հետազոտություններ լրացնում են այդ ենթադրությունը նրանով, որ արմենական ձուլումը հեթիթների հետ համարում են կատարված հետո, այն էլ ուրիշ հողի վրա, Ուրարտուի մեջ: Ինչ էլ, առկային, եղած լինի, փաստն այն է, որ արմեն ժողովուրդը վերջի վերջո, երբ նրան ևս վիճակվեց փոյուզիական մյուս ցեղերից անկախ քաղաքական դիրքի հասնել, արդեն այնքան կազմակերպված և ուժեղացած էր, որ կարող էր վստահ լինել, թե չի կորչի քաղաքական փոթորիկների մեջ:

**4. Հայկական լեռնաշխարհում:** Իսկ քաղաքական փոթորիկները, ինչպես տեսանք Ուրարտուի պատմությունից, ծայր տվին մասնավաճող 7-րդ դարում, առաջացնելով մեծամեծ փոփոխություններ, պատմության ասպարեզից հեռացնելով հին ազգերը և նրանց փոխարեն հանդես բերելով նորերը: Գիտենք արդեն, որ այդ փոփոխությունները բերում էին կիմմերացիների և ալկերի արշավանքները, որոնք քար շթողեցին քարի վրա հին քաղաքակիրթ աշխարհում: Ավերակների վրա բարձրանում էր Մեդական մեծ պետությունը, որի սահմաններն են հյուսիսից Սև ծովը, Կովկասյան լեռնաշղթան, Կասպից ծովը, արևմուտքից՝ Հալիս գետն ու Կիլիկիան, հարավից Բաբելոնը, Պարսից ծոցը արևելքից՝ Հնդկաստանը<sup>3</sup>:

Յոթերորդ դարից այս ահավոր տակնուվրայությունների մեջ, որոնք թե ի՛նչ եղան արմենները: Շատ են թույլ ցուցմունքները, շատ է թանձր խավարը, բայց և այնպես, տեսնում ենք, որ նրանք մեծերի, կատաղի արշավողների ոտների տակ շտրոկվեցին: Ընդհակառակն, խառնակությունները նրանց էլ տեղահան արին, ոտքի կանգնեցրին: Ամեն ինչ շարժվում էր, ամեն տեղ ընդհարումներ, իրար քշել, իրար սեղմել: «Եռացող կաթսայի» է նմանեցնում Երեմիա մարգարեն հյուսիսային ազգերի այս շարժումները<sup>4</sup>: Իսկ Սոփոնիա մարգարեն այսպես է նկարագրում նրանց պատճառած տագնապը. «Օր բարկութեան օրն այն, օր նեղութեան և վտանգի, օր թշուառութեան և ապականութեան. օր խաւարի և միզի. օր ամպոց և մառախոլոց. օր խողոյ և աղաղակի»:

<sup>1</sup> N. Dolens et A. Katch, „Histoire des Anciens Arméniens“, Genève, 1907, p. 33.  
<sup>2</sup> Պրոֆ. Պ. Ենսեն, «Հեթիթներն ու հայերը», «Հանդես ամսօր.», 1898, էր. 230, 232:  
<sup>3</sup> A. Delattre S. V., „Le peuple et l'Empire des Médes“, Brussels, 1883, p. 194.  
<sup>4</sup> Ա., 13—15:

ի վերայ ամուր քաղաքաց և ի վերայ անկեանց բարձանց»<sup>1</sup>: Ահա այս փոթորիկների մեջ էր, որ արմենները տարածվեցին Հալիս գետից դեպի արևելք և հարավ և կազմեցին իրենց համար մի՛ արդեն ընդարձակ, սեփական անուն ունեցող հայրենիք, մի Արմենիա<sup>2</sup>: Եփրատի արևմտակողմն է այդ երկիրը, Կիլիկիայի և Կապադոկիայի մեջ, որ հետո ստացավ Փոքր Արմենիա, Փոքր Հայք անունը:

Մարական տիրապետությունը արգելք չէ արմենների այդ շարժման: Նրանք հպատակվում են արդ պետության և գրավում են կարևոր դիրք: Այսպես, նրանք օգնում են մարաց թագավորին՝ Ասորեստանի դեմ կռվելու համար<sup>3</sup>: Այդ հպատակական եռանդը ձեռնտու է թե՛ տիրողին և թե՛ արմեններին: Վերջիններս մարական ուժի հովանու տակ իրենց կազմակերպչական ջանքերն են առաջ տանում: Այդ ժամանակներից է, երևի, որ նրանք կռվողների համբավ էլ են վաստակում նույնիսկ հեռավոր տեղերում: Նրանց անունը փյունիկեցիների միջոցով հասել էր և հրեաներին և Երեմիա մարգարեն Բաբելոնի վրա հարձակվելու համար հրավիրվում է Արարատյան, Մաննայի և Ասքանազյան թագավորությունները<sup>4</sup>, որոնք մեդական պետության մեջ էին մտնում: Ասքանազյան կամ աշքանազյան (ըստ Վինքլերի Աշքուզա) կոչվում էին, ինչպես կարծում են, առհասարակ փոյուզիական ցեղերը: 38 Բայց ալստեղ մարգարեի հրավերը ուղղված է, ինչպես ենթադրում են, այդ ցեղերից միայն մեկին, արմեններին<sup>5</sup>: Եթե այս ճիշտ է, մենք, ուրեմն, ունինք փաստ, որ արմեններն այդ ժամանակ թագավորություն էին կազմել: 39

Բայց այս նորերով ժողովուրդը միայն կռվողի համբավ չէ տարածել Միջերկրական ծովի ափերին: Արմենները եռանդուն վաճառականներ էլ են և իրենց ապրանքներով հանդես են գալիս և համաշխարհային վաճառանոցներում: Այդպիսիներից մեկը, եթե ոչ առաջինը, Փյունիկեի Տյուրոս մայրաքաղաքն էր: Եվ Եգիպտոս մարգարեն, թվելով թե որտեղից ինչ վաճառքներ են գալիս այդ շուկան, գրում էր. «Եւ ի տոհմէ Թորգոմայ ձիովք և հեծելովք և ջորտովք լցին զվաճառս քո»<sup>6</sup>: Այստեղ «տուն Թորգոմա» անվան տակ նույնպես արմենների երկիրն է հասկացվում, և ահա թե ինչպես: Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը, ինչպես հայտնի է, կատարվել է Յոթանասունից հուլիաներին թարգմանությունից, ուր գործ է ածված «Թորգոմ» անունը, մինչդեռ երբայական բնագրի մեջ «Թորգոմ» չէ<sup>7</sup>, այլ «Թոգարմա»: Գիտնականների մեջ ենթադրողներ գտնվեցին, թե այդ անունը կազմված է երկու բառից — թոգ և արմա, որոնցից առաջինը («թոգ»), ըստ երևույթին, պիտի նշանակեր «ազգ», «ցեղ», իսկ երկրորդը՝ «արմա», նույն արմեն անվան արմատն է պարունակում, ուրեմն և Թոգարմա տունը արմենների ցեղն է<sup>8</sup>: Այդ տունը, բացի Փոքր Հայքից, պարունակում է իր մեջ և Կիլիկիայի սահմանները, բայց որ գլխավորն է՝ նաև Եփրատի արևելյան երկրները, այսինքն Հայաստանի հարավ-արևմտյան

<sup>1</sup> Ա., 15—17.  
<sup>2</sup> Maspero, „Histoire“ t. III, p. 521.  
<sup>3</sup> Fr. Lenormant et E. Babelon, „Histoire Ancienne d'Orient“, t. V, Paris, 1887, p. 428. Delattre, „Le Peuple et l'Emp. des Medes“, p. 160.  
<sup>4</sup> Աստվածաշունչ, Կ. Պոլիս, 1895, էր. 830, ծան.  
<sup>5</sup> Fr. Lenormant, „Les Origines de l'Histoire“, Paris, 1882, t. II, p. 337.  
<sup>6</sup> Գլ. ԻԷ, 14.  
<sup>7</sup> Հայ Աստվածաշնչի այս սխալ ձևով էլ այդ անունը (Թորգոմ) մտել է հայոց հին մատենագրության մեջ, իրև հայ ազգի նախահայրերից մեկի անուն:  
<sup>8</sup> Lenormant, „Les Orig. de l'Hist.“, p. 408—409.

կողմերը: Հերոդոտն էլ վկայում է, որ հարուստ էր թողարձայի տունը և որ նրա հարստության գլխավոր աղբյուրը կազմում էր անասնապահությունը<sup>1</sup>:

Սակայն գիտնականների այս բոլոր բացատրությունները, ստուգաբանությունները կարծյոք ավելի նրանց մտքի սրությունն ու նրբությունն են ցուցադրում, քան փոքրիշատե լուրջ պատմական հավանականություններ վեր հանում: Մենք ունենք այս ստվերային փաստերից ավելի մանրամասն և հետաքրքրական տեղեկություններ, որոնց մեջ ինքն Արմեն ժողովուրդն է գործում իր սեփական անունով: Բայց, տարաբախտաբար, այս առատ տեղեկությունները գտնվում են ոչ թե մի պատմագրության մեջ, որի հեղինակությունն անժխտելի լիներ, այլ մի ուսուցողական (դիդակտիկ) վեպի մեջ, որի հեղինակը շորթորդ դարի (Ք. ա.) հուշակավոր հույն մատենագիր Քսենոֆոնն է: Վեպի անունն է «Կյուրոպեդիա»<sup>2</sup>: Պատմելով Կյուրոսի կյանքը, Քսենոֆոնը երկար խոսում է և արմենների ու նրանց երկրի մասին: Այսպիսով, մենք ունենք մի նկարագրություն այն ժամանակամիջոցի, երբ Արմենիան մարական պետություն մի մասն էր կազմում և երբ վերջանում էր այդ պետությունը՝ իր տեղը Պարսկաստանին տալու համար (6-րդ դարի վեպը Ք. ա.): Թեև գիտնականներից ոմանք ոչ մի արժեք չեն տալիս այս վեպին իրրե պատմության աղբյուրի<sup>3</sup>, բայց չէ կարելի ասել, թե նրա մեջ միանգամայն բացակայում է պատմական տարրը, ապա ուրեմն պետք է ընդունել, որ այս վեպը պահում է իր մեջ հայտնի շահով պատմական ճշմարտություններ<sup>4</sup>, որոնց, իհարկե, չպետք է արհամարհել<sup>5</sup>:

Արդ, «Կյուրոպեդիան» պատկերացնում է Արմենիան 6-րդ դարի կեսին Ք. ա.: Այդ ժամանակ Արմեն ժողովուրդն արդեն անցել է Եփրատը, բնակություն է հաստատել այս գետի արևելյան մեծ ճյուղի (Արածանիի) հովտում: Առանց գենքի ուժի և թշնամական գործողությունների չէ, իհարկե, որ կատարվել է այս դանդաղ առաջխաղացությունը: Բնիկները դիմադրում են Եկվորների և հենց «Կյուրոպեդիայի» մեջ տեսնում ենք խաղերին լեռները քաշված, թշնամական գործողություններ են վարում արմենների դեմ: Այս թշնամություններին վերջ դնելու համար Արմենիա է գալիս Կյուրոսը, որ դեռ մարաց թագավորի զորապետն է: Նրա վերաբերմունքը պարզ ցույց է տալիս, որ հակառակորդ կողմերից արմեններն Նն հովանավորվածները և նրանց համար են ստեղծված նպաստավոր պայմաններ՝ խաղերին ճնշելու և Եկվորների հետ հաշտեցնելու համար: Կյուրոսը Արմենիայի թագավորի Տիգրան անունով որդու բարեկամն է և ընկերը: Թագավորը Մարաստանի վասալն է, տարեկան հարկ է տալիս մեծ թագավորին և պարտավոր է զորք հանել ամեն անգամ, երբ մարաց արքունիքը պահանջում է պատերազմի համար: Մնացած գործերում Արմենիայի թագավորը ինքնազուխ է իր երկրի սահմանների մեջ: Այս պայմաններով ուրիշ թագավորություններ էլ կային մարական կայսրության մեջ:

Արմենիայի գիտնական ուժը բավական խոշոր է — ութ հազար ձիավոր և քառասուն հազար հետևակ գիտնական թագավորական զանգվածի շարին է ելքեք հա-

զար տաղանդ արծաթ<sup>1</sup>: Երկրի մեջ արդեն կազմակերպված է ազնվականություն: Հարաբերությունները տիրող մեծ պետության հետ այնպես են, որ Մարաստանը արհամարհելի մեծություն չէ համարում Արմենիան և աշխատում է նրան իր կողմը գրաված պահել, իսկ Արմենիան էլ միանգամայն ստրուկ և խավար երկիր չէ, այլ պահում է իր մեջ ազատության գաղափարը: Թագավորի անունը չէ հիշատակված, բայց նրա որդի Տիգրանը, որ իսկապես պետական գործերի կարգադրիչն է, պատվավոր տեղ է գրավում Քսենոֆոնի վեպի մեջ: Առանձնապես շեշտվում է Տիգրանի մտերմությունը Կյուրոսի հետ<sup>2</sup>: Այս մտերմությունը գուցե պետք է հասկանալ և իրրե զինակցություն երկու թագավորների մեջ: Գուցե ճիշտ որ Տիգրանն աջակցեց Կյուրոսին նրա նվաճումների ժամանակ, մանավանդ Անդրկովկասում: Ասում են նույնիսկ, որ այս Տիգրանն ընդունեց զրադաշտական կրոնը<sup>3</sup>: Այսքանը պարզ է, որ ընկնելով մարապարսկական տիրապետության տակ, Արմենիան Ենթարկվեց իրանական թագավորության խիստ ազդեցության, պահպանելով այնուամենայնիվ, իր ազգային ինքնուրույնությունը:

Այդ ինքնուրույնության ապացույցն է խոստում այն հանգամանքի մեջ, որ երբ Կյուրոսի հաջորդ Կամբյուսի մահից հետո Իրանի մեջ սկսվեցին անկարգություններ և այդ մեծ պետությունը քիչ էր մնում քաժանվի մասն մասերի, արմեններն էլ, օգտվելով բարեհաջող հանգամանքներից, ապստամբվեցին՝ անկախություն ձեռք բերելու համար: Դարեհ Վշտասպանը, ստանալով Կյուրոսի պետությունը, հարկադրված եղավ զորքեր ուղարկել և ապստամբ արմենների դեմ: Ապստամբությունը համառ էր և արմենները հեշտ շրջակայքին: 520 թվականին շորս ճակատամարտ տեղի ունեցավ, 519-ին մի ճակատամարտ, որ և պարտիկների համար վերջնական հաղթանակ եղավ: Այս պատերազմներն էլ Դարեհը մտցրեց Բեհիստունի ժայռերի վրա փորագրած իր սեպածե արձանագրության մեջ. առաջին գրավոր հիշատակարանը, ուր հանդես է գալիս Արմենիա անունով երկիրը իրրե քաղաքական առանձին կազմակերպություն: Ահա ինչպես է խոստում այդ կարևոր պատմական վավերագիրը:

1. «Դարեհ թագավորը կրսե. երբ ես Բաբելոնի մեջ կը գտնվեի, հետևյալ նահանգներն ապստամբեցան ինձի դեմ. Պարսկաստան, Շոշաստան, Մարաստան, Ասորեստան, Հայաստան (Արմինյա), Պարթևաստան, Մարգիանա, Սատասպոստիա, Սագաստան:

2. «Դարեհ թագավորը կրսե.  
«Արդ՝ Հայաստան զրկեցի հայ մը՝ իմ Դադարշիս անունով ծառաս, և արպես պատվիրեցի իրեն. «Գնա՛ և նվաճե՛ այդ ապստամբ ժողովուրդն որ ինձի չի հպատակիր»: Իսկ Դադարշիս գնաց Հայաստանը նվաճելու համար: Սակայն ապստամբները՝ դեպի Դադարշիս առաջացեր էին բավական, անոր պատերազմի հրավեր կարդալու համար: Դադարշիս ընդունեց պատերազմի: Հայաստանի մեջ Չուզու անունով քաղաք մը կա. ճակատը կատարվեցավ հոն: Ահուրամազդա ինձի օգնեց. շնորհիվ Ահուրամազդայի, իմ բանակս՝ թշնամի բանակին շատ մարդ ջարդեց: Թուրավահարա՞ ամսո 6-ն էր, երբ պատերազմը տեղի ունեցավ»:

1 Геродот, V, 49.  
2 Հայերեն թարգմանությունը. «Քսենոֆոնտյա Կյուրոսի նրա ստու պատմությունը», թարգմ. Տ. Հովսեփ Գաթրճյանի, Վիեննա, 1843.  
3 Th. Noldeke, „Etudes Historique sur la Perse Ancienne“, Paris, 1896, p. 23.  
4 Alfred Croiset, „Histoire de la Literature Grecque“.  
5 Այսպես էլ վերաբերվում է «Կյուրոպեդիային» ուրարտագետ պրոֆեսոր Լեմանը (տե՛ս «Հանդես ամս.», 1900, եր. 247):

1 «Կյուր. եր.», եր. 155:  
2 Միևնույնը կրկնում են և հայ ազգային ավանդությունները, որ բերում է Խորենասին (Ա, 1ա):  
3 Lenormant et Babelon, „His. Anc.“, t. V, p. 443.  
4 Չպետք է մոռանալ, որ բնագրի մեջ միշտ Արմինյա է:  
5 520 թ. ապրիլ:



3. «Դարեհ թագավորը կրսե».

«Ապստամբներն երկրորդ անգամ մըն ալ հարձակեցան և նորին Դարդար- շիսի վրա եկան պատերազմելու համար: Հայաստանի մեջ Տիգրա անունով բերդ մը կա. հո՛ն տեղի ունեցավ ճակատն: Ահուրամազդա փնձի օգնեց: Շնորհիվ Ահուրամազդայի, իմ բանակս՝ թշնամվույն բանակը զարկավ: Թուրավահարա ամսո 18-ն էր, երբ պատերազմը կատարվեցավ:»

«Թշնամին 540 մեռյալ թողուց պատերազմի դաշտին վրա, և Դարդարշիս 520 հոգի գերի բռնեց»:

4. «Դարեհ թագավորը կրսե».

«Երրորդ անգամն ըլլալով ապստամբներն ոտքի ելան, Դարդարշիսի վրա հարձակելու և անոր տեմ պատերազմելու համար: Հայաստանի մեջ Ուհյամա անունով բերդ մը կա. պատերազմն այնտե՛ղ պատահեցավ: Ահուրամազդա ինձի օգնեց: Շնորհիվ Ահուրամազդայի իմ բանակս՝ թշնամվույն բանակին շատ մարդ ջարդեց: Թախթարճախ ամսույն 9-ն էր, երբ պատերազմը տեղի ունեցավ: Հետո Դարդարշիս Հայաստանի մեջ ինձի սպասեց, մինչև Մարաստանն վերադարձա»:

6. Դարեհ թագավորը կրսե».

«Հայաստան ղրկեցի Վավմիսա անունով պարսիկ մը, իմ ծառաս, և այսպես պատվիրեցի. «Գնա՛, նվաճե՛ այն ապստամբ ժողովուրդն՝ որ ինձ չի հպատակիր»:

«Արդ՝ Վավմիսա գնաց Հայաստանը նվաճելու համար: Ապստամբները Վավմիսայի վրա բախեցին, պատերազմի հրավեր կարդալու համար անոր: Ասորեստանի մեջ Իգիդու անունով քաղաք մը կա, պատերազմն հո՛ն պատահեցավ: Ահուրամազդա ինձի օգնեց: Շնորհիվ Ահուրամազդայի, իմ բանակս թշնամվու բանակին շատ մարդ ջարդեց: Անամակհա՛ ամսույն 15-ն էր, որ պատերազմը տեղի ունեցավ:»

«2024 մեռյալ»:

6. «Դարեհ թագավորը կրսե».

«Ապստամբներն երկրորդ անգամ ըլլալով Վավմիսայի վրա հարձակեցան պատերազմելու համար: Հայաստանի մեջ Ավտիյարա անունով տեղ մը կա. պատերազմը հո՛ն պատահեցավ: Ահուրամազդա ինձի օգնեց: Շնորհիվ Ահուրամազդայի, իմ բանակս թշնամվույն բանակին շատ մարդ ջարդեց: Թուրավահարա ամսոյն վերջն էր, երբ պատերազմը տեղի ունեցավ: Ապա Վավմիսա ինձի սպասեց Հայաստանի մեջ, մինչև Մարաստանն վերադարձա:»

«2045 հոգի ջարդեց և 559 գերի բռնեց»<sup>2</sup>:

Արքայական խրոխտանքով նկարված այս պատկերի մեջ պարսիկներն առանձին մի քաջագործություն շունեն: Զարմացնողն, ընդհանրապես, արմենների դիմադրական մեծ ուժն է հանդեպ այնպիսի ուժեղ և աշխարհակալ մի թագավորի, որպիսին էր Աթեմենյան հարստության երկրորդ անվանի միապետ Դարեհ Վշտասպյանը: Անհաջողությունը միշտ արմենների կողմը չէր, ինչպես հետևում է Բեհիստունի սեպագրերից: Ապստամբներն էին հարձակվողները և այս ցույց է տալիս, որ նրանց ուժը փշրված չէր: Պատերազմներից մեկը տեղի ունեցավ նույնիսկ օտար հողի վրա, Ասորեստանում, մի հանգամանք, որ տեղի

<sup>1</sup> Դեկտեմբեր: <sup>2</sup> Բասմաջյան, «Դարեհի արշավանք ի Հայս» («Բանասեր» հանդես, Փարիզ, 1899, գիրք Ա, էր. 26—38):

չէր ունենա, եթե ապստամբները դուրս թշած չլինեին պարսիկներին իրենց սահմաններից:

Երկրորդ խոշոր հանգամանքը, որ պարզվում է Դարեհի պատմվածքի մեջ, այն կարևոր դիրքն է, որ արմենները գրավում էին պարսից կառավարության մեջ: Երբ փաստ է տրանսպարենտ արմենների ապստամբությունը, նրանց դեմ ուղարկվում է պարսկական մի բանակ, որի գլխավոր հրամանատարը իրենց ազգակիցն է, Դարդարշի (Արտաշես?) անունով: Այս փաստը ցույց է տալիս, որ ապստամբությունն ընդհանուր չէր և երկրի մի մասը հավատարիմ մնաց Պարսկաստանին: Արմեն ազնվականության գրաված քարձր դիրքի մի նշանն էլ այն է, որ Բաքեղուհի պես մի շտաբանացի կարևոր վայրի կոստակալը (սատրապը) նույնպես մի արմեն էր, Հալդիտայի որդի Արախը: Նույն Բեհիստունի արձանագրությունը պատմում է նաև թե ինչպե՛ս ապստամբվեց այդ կոստակալը, և թե ինչքա՛ն ջանքեր գործադրեց Դարեհը՝ նրան ընկճելու համար:

Դարեհյան պատերազմները, ինչպես ենթադրվում է իրավացի կերպով, տեղի ունեին Հայկական Բարձրավանդակի հարավ-արևմտյան կողմերում: Արմեններն այդ ժամանակ դեռ Արածանի տարածքն համարում ու Եփրատի արևելյան մասերն էին գրաված, դեռ չէին անցել Բարձրավանդակի արևելյան մասերը, Արաքսի և Վանի լճի արևելյան ավազանները: Այս տեղավորումն է երևում և Դարեհի սահմանած վարչական բաժանումների մեջ, որ մի առ մի հիշատակում է Հերոդոտը: Ամբողջ պետությունը բաժանվեց քսան մեծ նահանգների կամ սատրապությունների, որոնցից տասներեքերորդը պարունակում էր փր մեջ և Արմենիան<sup>2</sup>, մինչդեռ ալարոդները (ուպարտացիները) վերաբերում էին արդեն տասնութերորդ սատրապության, որի մեջ մտնում էր, հարկավ, նրանց պատմական հայրենիքը Վանի լճից մինչև Մասիսի շուրջը<sup>3</sup>:<sup>4</sup>

5. «Նահանջ Բյուրուն»: 520—519 թվականների ապստամբությունը, ինչպես երևում է, առանձին հիմնական փոփոխություններ չմտցրեց արմենների քաղաքական կացության մեջ: Առաջվա պես նրանք պահպանեցին իրենց թագավորությունը և առաջվա նման էլ նրանց թագավորները պարսից շահերի համար սոսկ սատրապներ էին: Առաջվա նման այդ սատրապները կարևոր դիրք ունեին Աթեմենյան արքունիքում, շահերի անձնական բարեկամներն էին կամ նույնիսկ ազգակիցները խնամիրական կարերի միջոցով: Այս իրողությունն է հանդես գալիս այն պայծառ լուսավորության մեջ, որ հանկարծակի, բախտի բերմունքով, սփռվում է Արմենիայի վրա Դարեհի ժամանակից հարյուրից ավելի տարի հետո:

401 թվականի վերջին, ձյուն-ձմեռվա մեջ, Հայկական Բարձրավանդակի վրայով, հարավից-հյուսիս ուղղությամբ նահանջում էր հունական մի զորաբանակ, որ բաղկացած էր 10 հազար հոգուց: Զորավարն էր «Կյուրոպեդիայի» հեղինակ Քսենոֆոնը, որը նկարագրել է այդ նահանջի մանրամասնությունները «Անաբազիս» կամ «Նահանջ Բյուրուն» աշխատության մեջ, ուր բազմաթիվ թանկագին նյութեր կան և Արմենիայի ներքին կյանքն ու արտաքին հանգամանքները ճանաչելու համար: Այստեղ մենք նկատի կառնենք միայն քաղաքական հանգամանքները:

Ամենից առաջ մենք իմանում ենք, որ արմենները Արածանի հովտից

<sup>1</sup> Բասմաջյան, անդ, էր. 29: <sup>2</sup> Геродот, III, 93. <sup>3</sup> Maspero, „Hist. Anc.“, t. III, p. 520. <sup>4</sup> Maspero, „Hist.“, t. III, p. 777.

տարածված են հարավային ուղղությամբ մինչև Հայկական Բարձրավանդակի բնական եզերագիծը, մինչև Տավրոսյան լեռնաշղթան: Այստեղ հաստատված բնական սահմանը, Կենտրիա գետը<sup>1</sup>, որ այժմյան Բոհտան-սուն է, Տիրիսի արևելյան ճյուղը, որ բաժանում էր Արմենիան Կորդուխների երկրից (այժմյան Քորդիստան): Հռոմեացիներն անցան Կենտրիտը, այժմյան Սղերտից քիչ հարավ, մինչև Բաղեշի գետի խառնվելը, և մտան Արմենիա<sup>2</sup>: Խաղերն այլևս արմենների թշնամիները չէին, ինչպես «Կյուրոպեդիայի» մեջ, այլ դաշնակիցները և գտնվում էին արմենական սահմանապահ զորքերի մեջ: Հարյուր տարվա ընթացքում երկու ցեղերի մերձեցումն ու միաձուլումը շատ էր առաջացել: Բայց դրա հակառակ անհաշտ թշնամություն տեղի ունեցավ արմենների և կորդուխների մեջ, որոնք այժմյան քրդերի նախահայրերն են համարվում և որոնց վերաբերմամբ ենթադրություն կա, թե նրանք էլ պատկանում էին հեթիթական կամ հարեթական ցեղերին<sup>3</sup>: Սահմանազրկի վրա երկուստեք ընդհարումներն այնքան հաճախակի էին կրկնվում, որ հողի մի անբնակ շերտ էր կազմվել երկու երկրների մեջ: Կորդուխները այն ժամանակ էլ հայտնի էին իբրև պատերազմասեր, իրենց անկախությունը մեծ թափով պաշտպանող մի ժողովուրդ: Արմենները, ճեղքելով հեթիթական աշխարհը, անշատել էին կորդուխներին իրենց ցեղակից ազգերից, քչել էին նրանց դեպի հարավային ընդհարումներ: Այս հողի վրա էր, անշուշտ, որ անհաշտ ցեղային թշնամություն առաջացավ երկու հարևանների մեջ:

Քսենոֆոնի նահանջման ճանապարհը ներկայումս բավականաչափ պարզված է: Նա անցնում էր Մուշի դաշտով, Բուլանըխով մինչև Ալաշկերտի հովիտը: Կարծում էին, թե այստեղից հույները ուղղակի Բասենի դաշտն անցան և բռնեցին Տրապիզոնի մեծ ճանապարհը<sup>4</sup>, բայց նորագույն հետազոտությունները մի շարք սրամիտ հաշիվներով և բացատրություններով ցույց են տալիս, որ, ընդհակառակն, հենց Ալաշկերտի հովիտը դուրս գալուն պես (այժմյան Դարաքիլիսի մոտ), հույները փոխանակ դեպի արևմուտք գնալու՝ սխալմամբ շուտ են եկել դեպի արևելք և աղապիսով ստիպված են եղել մի ահագին պտույտ գործել՝ Բասենի դաշտը հասնելու համար: Այդ պտույտն այսպես է գծագրվում—Արաշկերտից Մաքու, Խոյ, Զուղայի մոտ Արաքսի ձախ ափը, Երևան, Սևանի լճի արևմտյան ափը, Իլիդանի ձորով Փամբակի, Շիրակի և Կարֆ վրայով Բասեն և այնտեղից արդեն դեպի Սև ծով<sup>5</sup>:

Արմենիան Քսենոֆոնի ժամանակ ուներ մի սատրապ, Որոնտ (զուցե Հրանտ) անունով, որ պարսից թագավորի փեսան էր և «արյունով պարսիկ» ինչպես վկայում է Քսենոֆոնը<sup>6</sup>: Երկիրը վարչապես բաժանված էր երկու մասի, արևմտյան մասը պարոնակում էր իր մեջ Արածանիի ամբողջ ստորին հովիտը (Մուշի դաշտի հետ), իսկ արևելյանը՝ Արածանիի վերին հովիտը (Ալաշկերտ, Դիադին): Այստեղ արմենների երկիրը վերջանում էր համարյա Արածանիի ակունքների մոտ: Բացի ընդհանուր սատրապից՝ երկրի երկու մեծ բաժիններն ունեին իրենց առանձին կառավարիչները: Քսենոֆոնը հաղորդում

<sup>1</sup> „Oeuvres Complètes de Xénophon“, t. II, Paris, 1910, p. 85.

<sup>2</sup> A. Boucher „L'Anabase de Xenophon“, Paris, 1913, p. 164.

<sup>3</sup> Н. Март, «Еще о слове «Челяби» (К вопросу о культурном значении курдской народности в истории Передней Азии), Пет., 1913, с. 41.

<sup>4</sup> Է. Տ. Հոֆմայստեր, «Հայաստանի մեջն», թարգմ. Երևան, Կ. Պոլիս, 1913, եր. 285:

<sup>5</sup> Boucher, „L'Anabase“, p. p. 212--236.

<sup>6</sup> Xénophon, liv. I, ch. VI:

է, միայն արևմտյան Արմենիայի կառավարչի անունը—Տիրիբազ, որ Նոքսիսի նշանավոր մարդ էր, պարսից թագավորի «բարեկամ», որ իրավունք ուներ օգնելու թագավորին ձի հեծնելիս<sup>1</sup>: Արմենները դեռ չէին անցել Արաքսի միջին, Արարատյան հովիտը, և այդտեղ դեռ հին քնիկ ցեղեր էին ապրում:

**6. Նոր ժողովուրդ:** Այնուհետև դարձյալ անթափանցելի խավարն է փաթեթավորվում հայկական ամբողջ բարձրավանդակը, և մենք ոչինչ հնարավորություն չունենք գոնե շատ հարևանցիորեն դատելու թե ինչ ընթացքով շարունակվեցին այդ երկրում այն շարժումները, որոնց հանդիսատես եղանք մինչև այժմ: Հաստատվելով համարվում միայն այն, որ Քսենոֆոնի ժամանակից հարյուր և ավելի տարի հետո, մոտավորապես Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ, արմենների շարժումը վերջնականապես կանգ էր առել և նրանք արդեն հաստատվել էին Արաքսի հովտում<sup>2</sup>: Գուցե այդ ժամանակներում էլ վերջացել էր եկվորների և բնիկների միաձուլումը, որից արևմտյան Ասիայի բազմաթիվ ազգությունների մեջ առաջացավ մի նոր ժողովուրդ, որ իրեն անվանում էր հայ, իսկ երկիրը՝ Հայաստան, մինչդեռ օտար ազգությունները շարունակեցին նրան արմեն և նրա երկիրը՝ Արմենիա անվանել:

Մեր նախընթաց նկարագրությունից հետևում է, որ արմենները դուրս գալով իրենց փոյուզիական հայրենիքից մոտավորապես 7-րդ դարի (Ք. ա.) վերջերս, երկու դարից ավելի ժամանակ գործադրեցին՝ Հայկական Բարձրավանդակի նշանավոր հովիտներում հաստատվելու համար: Այս հանգամանքն ըստինքյան բնորոշում է այդ ամբողջ շարժման պատկերը, ցույց տալով, որ դա փոխվորական մի արշավանք չէր, այլ մի ամբողջ ժողովուրդի տեղափոխություն, որի նպատակն էր նոր հայրենիք գտնել: Այսպիսի մի գործ գլուխ հանել էր կարելի առանց զենքի ուժի, և մենք արդեն տեսանք ընդհարումներ տեղացիների և եկվորների մեջ: Բայց և այնպես, չէ կարելի ասել, թե հայրենիքի հարցը բացառապես զենքի ուժով լուծվեց:

Կռիվներ, թշնամություն, անշուշտ եղել են եկվորների և երկրում նստածների մեջ: Այստեղ էլ, Հայաստանում, կրկնվում էր այն, ինչ կատարվում էր ուրիշ տեղերում արիացիների գաղթի հետևանքով: Տեղական այն ցեղերը, որոնք չէին ուզում հպատակվել, կորցնել իրենց ազատությունը, տեղի տվին և հեռացան դեպի հյուսիս<sup>3</sup>, մասամբ դեպի հարավ, ապավինելով ամուր լեռնաստաններին: Այսպես, շատ հեթիթական ցեղեր տեղավեցին կովկասյան գլխավոր լեռնաշղթային: Բայց բոլորը չէին հեռանում և տեղական ազգաբնակչության խոշորագույն զանգվածներ մնում էին իրենց տեղը և ձուլվում էին արիացիների հետ: Հենց Քսենոֆոնի նկարագրածը շատ լավ ցույց է տալիս, թե կռիվը եղել է մանր տեսակի, լեռնային, դրացիական անհամաձայնություններից բխող: Իրենց իրավունքները պաշտպանելու համար խաղերը անշուշտ շատ անգամ են լեռները բարձրացել և զենք վերցրել եկվորների դեմ: Բայց այս դիմադրությունը երկարատև չէր կարող լինել, մասնավանդ, որ եկվորներն ունեին

<sup>1</sup> Xénophon, liv. IV, chap. 4:

<sup>2</sup> Maspero, „Histoire Ancienne des Peuples d'Orient“, Paris, 1909, p. 765:

<sup>3</sup> Հեթիթական կամ հարեթական ցեղերի տեղափոխությունը հարավից դեպի հյուսիս ապացուցում է լեզվագիտական հետազոտություններով և ակադեմիկոս Մաքու: Այդ ցեղերի թվին են պատկանում չեչենները, չերքեսները, թուրքերը, ինգուշները և այլն: Այդ տեղափոխության ճանապարհն էր այժմյան Ռազմավիթական ճանապարհը, Դարիալի կիրճը (Н. Март, «К истории передвижения афетических народов с юга на север Кавказа», «Известия Импер. Академии наук», 1916, с. 1380—1408).

իրենց ձեռքում կռվի այնպիսի միջոցներ, որոնք չէին կարող թշնամության խիստ, հարստե կերպարանք տալ:

Մենք արդեն նկատել տվինք, որ ո՛չ արմենները, ո՛չ էլ խալդերը միան, գամայն անկախ ազգեր չէին, նեւոված գոյության կռվի դաշտը: Երկիրը, որ տեղի ունեւր երկու ցեղերի շփումը, պատկանում էր Մարաստանին, իսկ հետո՝ Պարսկաստանին: Եվ պայքարող կողմերի հաջողութունը մեծապէս մասամբ կախված պիտի լիներ այն վերաբերմունքից, որ ունէր մարա-պարսկական պետութիւնը դեպի իր առջև բացված ցեղական կռիվը: Այս կողմից հովանավորվողի դրութիւն մեջ գտնվում էին, ինչպէս տեսանք, եկվորները, արմենները: Եվ այսպիսով արիական տարրը նույնիսկ արտաքին բարեհաջողութուններով էլ նպաստավորված էր՝ տեղական տարրերն իրեն ենթարկելու համար: Բայց սա նվաճում չէր, ոչ էլ ստրկացում կամ ուժով ճնշում: Արմենները տեղացիներին դեպի իրենց գրավեցին խաղաղ դրացիական ձգտումներով, երկուստե համաձայնութեան, փոխադարձ իրավունքների կիրառութեան պայմանով: Եվ այս խաղաղ ճանապարհով, երկարատե աշխատանքի միջոցով էր, որ արմենները ձուլեցին իրենց մեջ ուրարտացիներին կամ խալդերին<sup>1</sup>, խառնվելով նրանց հետ, ենթարկվելով նրանց կուլտուրային, բայց պահպանելով իրենց լեզուն ու սովորութիւնները: Ձուլման այս եղանակը զուտ արմենական չէր: Նա հասուն էր թուր արիական ցեղերին<sup>2</sup>: Կղզի այդ պահպանութեան և տարածման մեջ էր արիական այս փոքրաթիւ հատվածի ամբողջ կենսունակութիւնը, ցեղի վաղմակերպչական ուժեղ կարողութունը, որ հնարավոր էր դարձնէ սիստեմատիկ և անընդհատ ձուլումների միջոցով սովորացնել իր բանակը: Որ ձուլումը այս իսկ եղանակով էր կատարվում, ցույց է տալիս հետևյալ երկվայրը, որի երևան գալը մենք պարտական ենք ակադեմիկոս Մասի վերջին գիտական որոնումներին: Տեղական հաբեթական ցեղերից մեկը, Մոսխ, Մոսխ կամ Մեսխ անունով, ապրում էր Հայաստանի հարավային մասում: Արմենների գալուստը տեղից շարժեց Մեսխերին, որոնք շարունակեցին խաղաղ կենակցել այդ եկվող այլատոհմ ցեղի հետ և ենթարկվեցին նրա լեզվին: Հետո միայն, մոտավորապէս 100—200 տարի կենակցելուց հետո, Մոսխերը տեղափոխվեցին Հայաստանի հյուսիսային կողմերը, Վրաստանի սահմանները: Նրանց հետ խառնվեց Սվան ցեղը և այս խառնուրդից առաջացավ Արմենի անունը: Այս ցեղի անունով է, որ վրացիները հայերին անվանում են Սոմենի<sup>3</sup>: 41

Ձուլման վերին աստիճանի հետաքրքրական գործողութիւնը, որ դարեր է տևել, կարելի է պարզել և ընդարձակել այն առատ նյութերի միջոցով, որոնք մնացել են Մովսէս Խորենացու պատմութեան մեջ: Այդ պատմութեան առաջին և երկրորդ մասերի նյութը հյուսված է առաջ ու առաջ բազմաթիւ և առատ ազգային ավանդութիւններից, զրույցներից, առասպելներից<sup>4</sup>, որոնց մեջ զուտ արմենական իրողութիւնների հետ խառնվում են ուրարտական անցյալի հետավոր արձագանքները:

<sup>1</sup> Պրոֆ. Զ. Գիլգեր, «Համառոտ պատմութիւն հայոց», Թարգմ. հ. 9, Գալեթերյան, Վիեննա, 1897, էր. 5:

<sup>2</sup> Ануцин, «Армяне в ант. и геог. от.» (Бр. Пом. с 358).

<sup>3</sup> Н. Марр, «К дате эмиграции мосохов из Армении в Сванию» (Изв. Им. Ак. Наук, 1916, с. 1689—1692).

<sup>4</sup> Հայկական աշխատասիրութիւնը հայագետ Յ. Յեթեմի, Թարգմ. հ. 3, Տաշիսի, Վիեննա, 1895, էր. 26:

Այսպէս Խորենացին ասում է՝ որ հին գրույցները պատմում են, թէ Սքւկոնի նախարարութեան կախահայր Ալաքը Հայկից առաջ մեր աշխարհում եղած մարդկանցից էր: 42 Այս նշանակում է, որ հին ավանդութեան անհայտ չէ, որ երկրի նախկին բնակիչները, խալդերը կամ ուրարտացիները, շարկվեցին իրենց դասակարգային դիրքերից, շահագրգռեցին կառավարութիւնից, պատվից ու իշխանութիւնից, այլ պահեցին իրենց հին իրավունքները նոր կազմակերպվող պետութեան ավելակաւորութեան մեջ: Այս ցուցմունքը պետք է առիթ տար որոնելու մեր նախարարութիւնների ծագումը, համեմատելով նրանց տոհմաւունները այն տեղական անկախութիւնների, թագավորութիւնների հետ, որոնք հիշատակված են Աուրեստանի և Ուրարտուի սեպագծե արձանագրութիւնների մեջ: Այս համեմատութիւնը ցույց է տվել, որ հայ նախարարական 256 տոհմակաւորների մոտ 1/6 մասը կարելի է շատ մոտ համարել, նույնացնել սեպագրութիւնների մեջ գտնված անուններին: Եթէ այս ճիշտ է միանգամայն, մեկը, որեւէ, ունիւք մի զորավոր փաստ պնդելու, թէ եկվոր արմենները հավասարութեան, դաշնակցութեան սկզբունքներով միացան երկրում ապրողների հետ: Երկրի աշխարհագրական կերպարանքից առաջացած հոգեբանութեանը, այն է՝ տեղական անկախութիւնների խիտ ցանցով ապրելու սիստեմը, հին նախարարական կազմակերպութիւնն էր և նրա վրա էլ շափվեց ու ձևվեց նոր հայկական պետութիւնը:

Արեւմտյան Ասիայում հանդիս եկած արիական ցեղերը կենսունակ, ուժեղ էին իբրև թարմ, երիտապարզ տարրեր, բայց կուլտուրական զարգացման կողմից ցած վին այն քաղաքակիրթ ազգերից, որոնց հետ խառնվեցին, և որոնց ենթարկեցին իրենց իշխանութեան: Ասել ավելորդ է, որ այդ տոբկները պիտի ենթարկվեին իրենց նվաճած ազգերի կուլտուրայի խիստ ազդեցութեան:

Այս երևույթը նկատվում է և Հայկական Բարձրավանդակի վրա արիական և տարրական տարրերի միաձուլման միջոցին: Նախահայերի ազնվականութիւնը, որ խառնվում էր նորեկների հետ, ներկայացնում էր կուլտուրայի ապիկի շատ զարգացած դասակարգը, որ բերում էր իր հետ երկրի պատմութեանը անգիր ավանդութիւնների ձևով: Եվ այդ պատմութիւնը, այդ առասպելները դառնում են ընդհանուր ազգային, անփակաւորութիւն այդ նորակազմ ազգութեան, որ քաղաքական պայարեղ էր դուրս գալիս՝ կոթնած իր մի մասի անցյալի և կուլտուրայի վրա: Եվ այս ձուլումը, ուրարտական անցյալի այս ազգայնացումը ամենայն հավանականութեամբ տեղի է ունեցել Վանի լճի ափում, ուր այժմ էլ այնքան առատ և հարուստ է ժողովրդական բանաստեղծութիւնը:

Այսպէս, զուտ տեղական, վանյան է Հայկի առասպելը: Դա մի անվանադիր (էպոնիմ) հերոս է, գուցէ և մի աստվածութիւն, որ Վանի լճի շրջանից դուրս չէ գնացել և մի ուրիշ տեղ չէ գործել: Եվ նրա կոիվը քաղղեա-ասորական Բել պատժու դեմ ամբողջովին ուրարտական պատմութիւն է և անկաւոր կած ներկայացնում է դարավոր կոիվները Հայկական Բարձրավանդակի և Միջագետքի մեջ, մի կոիվ, որի հնագույն շրջանը չէր կարող ժողովրդական պոպուլյար շրագնալ, գուցէ մի մասնիկ և նախահայկական պանթեոնի աստվածաբանական սիստեմի:

Այսպէս է և Արա Գեղեցիկի առասպելը: Վերևում մենք բերինք ուրարտա-

<sup>1</sup> Գիրք Բ-ը:

<sup>2</sup> Բանաստեղծական, «Հայ նախարարութիւնների բնական արձանագրութեան մեջ» («Բանաստեղծ», 1902, թ. 7—9):

<sup>3</sup> К. Патканов, «Ванские надписи», с. 89.

կան աստվածների ամբողջ ցուցակը, որ փորագրված է Մհերի Դուռ ժայռի մեծ սեպագրություն մեջ: Այդ ցուցակի մեջ մենք պատահում ենք Արա ահու- նով մի աստծու<sup>1</sup>: Եթե այստեղ ընթերցումի սխալ չկա, մեզ կմնա հիշեցնել, որ այդ գեղեցիկ տղամարդու վավաշոտ տարփածու Շամիրամն իջլ ասորական դիցուհի էր, և այնուհետև պարզ կլինի, որ Արայի զրույցը մի կրոնական վեպ է տրարտական պանթեոնից, որ անշուշտ պարունակում է իր մեջ երկու հա- կառակորդ ազգերի հարաբերությունները պատկերացնող մի այլաբանություն<sup>2</sup>:

Եթե Արան դուրս է բերվել ուրարտական պանթեոնից՝ հայոց պատմու- թյան ավանդական շրջանի գործիչներից մեկը դառնալու համար, մենք ունինք նյութ դատելու և այն մասին, որ արմենո-խաղարական ձուլումից առաջացած ազգի պանթեոնի մեջ էլ մտել են ուրարտական աստվածներ: Այս հանգաման- քը, ինչպես ցույց է տվել հայ բանասերներից մեկը<sup>3</sup>, կարելի է տեսնել Տորք Անգեղի առասպելի մեջ, որ պատմում է խորենացի<sup>4</sup>: Տորքը, ինչպես երևում է, մի աստվածություն էր, որ պատկանում էր հեթիթական ցեղերի պանթեո- նին:

Կրոնական-առասպելական ավանդությունների շրջանից դուրս մենք ունինք և իրական արժեք ունեցող պատմական փաստեր, որոնք նույն ձուլման ապացույցներն են: Նիկոլակին ուշադրություն է դարձնում խորենացու պատ- մության այն գլխի վրա, որ պատմում է հայ Արամ թագավորի գործերը: Դա ուրարտական քաջ Արամենն է, նույնպես երկիրը կազմակերպողի, նվաճողի, թագավորություն հաստատողի, ազգային սկզբունքը քաղաքական նշանաբան դարձնողի տերը<sup>5</sup>: Ուրարտական սիրված հերոսը նույնպիսի պատկերով է և հայոց պատմության մեջ: Նա, ուրեմն, ազգայնացվել էր և Արամեն ժողովրդի կողմից:

Նույն գիտնականը գտնում է նաև Արաքսի ավազանի սեպագրերը ցույց են տալիս, որ ուրարտական պատմությունը իր հեռավոր արձագանքներն է պահել հայրական ավանդությունների մեջ, որոնք պատմված են խորենացու աշխատության մեջ (Ա, ԺԸ): Այդտեղ հիշատակված Մանավազը ուրարտական Մենուան է, Արմենակը՝ Արգիշտի թագավորն է: Մանավազի և Արմենակի գոր- ծողությունները, որոնք մանրամասնաբար պատմված են ավանդության մեջ, միևնույն պատկերն են ներկայացնում, ինչ Մենուայի և Արգիշտիի գործողու- թյունները ըստ սեպագրերի, Արաքսի հովտում և նրա հյուսիսային լեռնաշ- խարհում:

Երկու տարբեր ցեղերի խաղաղ կենակցության, հաշտ միաձուլման փաս- տերի կարգին պետք է դամել, մեր կարծիքով, և այն, որ բազմաթիվ ուրար- տական աշխարհագրական անուններ պահեցին իրենց գոյությունը հայոց գրա- կանության մեջ<sup>6</sup>, իբրև անփական ազգային անուններ, որոնց բացատրության համար գոյություն ունեին ազգային անվանադիրներ (էպոնիմներ):

Մնում է երկու ազգագրական տարրերի (Արմեն—խաղ) շփման և կու-

<sup>1</sup> Sandalgian, p. 206, 209.

<sup>2</sup> Առաջին անգամ պրոֆ. Գեյցերն է ցույց տվել Արայի զրույցի կրոնական հանգամանքը («Հետազոտություն հայ դիցարանության», Վենետիկ, 1897, եր. 78, 96).

<sup>3</sup> Ն. Աղբնց, «Տորք աստված հին հայոց» («Հուշարձան», գրական ժողովածու, Մխիթար- յանների, Վիեննա, 1911, եր. 389—394):

<sup>4</sup> Բ, Ը:

<sup>5</sup> Никольский, «Клинооб. надписи Ванских царей», («Древ. Восточ.», с. 399—400).

<sup>6</sup> Է. Халатянц, «О некоторых географических названиях древней Армении в связи с данными Ванских надписей» («Древ. Восточ.», т. II, вып. 2, М., 1911, с. 120—131).

տուրական ձուլման մի մեծ հիշատակ ևս—լեզուն: Վերջին տարիներս հայտնի հայագետ ակադեմիկոս Մառի ընդվաքանական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայաստանում հին ժամանակներից գոյություն են ունեցել երկու լեզու—ազնվականների լեզու, որ մենք անվանում ենք «գրաբար» և որին Մառը տալիս է «հայոց» (հ Айский) անունը և ռամիկների լեզուն, այն, որ մենք անվանում ենք «աշխարհագրաբար», և որին ռուս գիտնականը տա- լիս է «արմենական» (армянский) անունը: Այս երկու լեզուներն էլ զուտ արիական չեն և ունեն իրենց մեջ այնպիսի տարրեր, որոնք ցույց են տա- լիս նրանց մոտիկ ազդեցությունը հարթթական լեզուների հետ, այն է՝ կով- կասյան կամ ուրիշ խոսքերով հեթիթական լեզուների (վրացիների, մինգրել- ների, լազերի և մասնավորապես սվանների) հետ:

Հարթթագիտությունը, դեռ բոլորովին նոր հիմնված մի ճյուղ լեզվագի- տության մեջ, պետք է սպասել, որ դեռ շատ փաստերով պիտի հաստատե- ներ լեզուների ձուլման իրականությունը և ապացուցանե վանյան սեպա- գրությունների լեզվի առնչությունը հայոց նախա-արիական լեզվի հետ:

Այժմ դիմենք հայ անվան: Ինչի՞ց առաջացավ նա: Գիտությունը դեռ միանգամայն բավարար պատասխան չէ գտել, թե և բազմաթիվ փորձեր է արել և անում է: Տիրապետող է այն կարծիքը, թե տեղային, ուրարտական կամ խաղարական տարրի անունն է այդ, մի անուն, որ գուցե բխում է ընդհանուր ցեղային անունից (հաթ կամ հաթթ): Պրոֆեսոր Ենասենը ենթադրում էր, թե այս ազգային անունը կազմվել էր դեռ այն ժամանակ, երբ արմենները ձու- լում էին իրենց մեջ հեթիթներին Կապադովկիայում և Կիլիկիայում: Թայց թվում է, որ երկու ազգերի մի կուլտուրական լեզվական տիպի մեջ ձուլվու- գործում վերջնական և վճռական դեր կատարել է այն, առայժմ անհայտ ժա- մանակը, երբ արմենները հաստատվեցին Ուրարտուի սրտում, այսինքն Վանի լճի արևելյան ափերին:

Այս ենթադրության ուժ է տալիս հայ պատմական ավանդությունը, որ ժողովրդական վեպերից է ստեղծվել: Այդ ավանդությունն ասում է, թե Կորդ- վաց լեռների հյուսիսային ստորոտներում, ուրեմն հենց այն երկրում, որ կոչվում էր հնագույն ժամանակներում Արարադ (Ուրարտու), կար մի գավառ՝ Հայք<sup>2</sup> (Վանի ժողովրդական բարբառով՝ Խեք) անունով: Գուցե այսպես էլ կոչվում էր այդտեղի ժողովուրդը, որ ուժեղանալով և առաջնակարգ դիրք բռ- նելով ուրարտական ցեղերի մեջ, իր անունը հաղորդեց Վանի լճի շրջանում ապրող ժողովուրդներին և այնտեղից էլ՝ ամբողջ արիա-հեթիթական կամ արիա-հարթթական միաձուլլ ազգին:

Նորագույն հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանում, արմենների հաստատվելուց հետո, տարածվել և տիրել է «հենիոխ» կամ «հա- նիոխ» անունով մի հեթիթական կամ հարթթական ցեղ, որ խոր հետք է թողել հայ ազգի ցեղային հոգեբանության մեջ: Այստեղից ինքնստիքյան հետևում է ենթադրություն, որ «հայ» անունը առաջացել է այդ հենիոխներից կամ հա- նիոխներից<sup>3</sup>:

Այս բոլոր հավանականությունների մեջ նշանակությունից զուրկ չէ և վրաց հին ավանդությունը, որ մնացել է «Քարթլիս-Ցխովրեբայի» մեջ: Այդ ավանդությունը, բերելով կովկասյան կամ հեթիթական ութ ցեղերի

<sup>1</sup> Н. Марр, «Грамматика Чанского (Лазского) языка», Пет. 1910, с. X—XI.

<sup>2</sup> Խորենացի, Ա, ԺԱ:

<sup>3</sup> Н. Марр, «Кавказский культурный мир и Армения», Пет., 1915, с. 28.

անուններ, որոնց թվում և հայերին, ասում է, թե նրանք միևնույն ժառանգ ունին և նրանց նախահայրերը ութ հզարայրներ էին, Քորգոմի որդիները: Հայոց նախահայրը այդ ավանդության մեջ այլևս Հայկ անունով չէ հայտնի, այլ Հասու անունով, որ Քորգոմի ավագ որդին է, նախապատիվ մյուս Կորայրների մեջ, և որին հայրը բաժին տվեց Արարատ և Մասիս լեռների մեջ գտնվող երկիրը<sup>1</sup>, այսինքն՝ ճիշտ այն տեղը, որ համապատասխանում է նախնական Ուրարտունին, այն է՝ Վանի լճի հարավային կողմերից մինչև Արաքսի հովտի հարավային լեռնաշղթան: Այսպիսով վրացական ավանդությունը դեռ շատ հին ժամանակներից էր վկայում, որ վրացիները, ինչպես և կովկասյան կողմից մյուս ազգերը, ազգակից են հայերին:

Այս բոլոր սպացույցները բերում են բոլոր գիտնականների կողմից ընդունված այն վերջնական եզրակացության, թե ուրարտական քաղաքակիրթ և ընդունակ ցեղը չկորավ անձեռ, այլ մտավ հայ ժողովրդի կազմի մեջ:

Էնդավափեսությունը վերին աստիճանի հետաքրքրական նյութեր է տալիս, թե երկու ազգագրական տարրերը — արիացիները և հեթիթականները կամ հարեթականները — ինչ էին մեջտեղ բերում՝ մի ընդհանուր ազգային կուլտուրա ստեղծելու համար: Եկվոր արիացիները ուժեղ էին գլխավորապես իրենց զինվորական կազմակերպությանը: Դրանք կուլտուրներ էին առավելապես: Եվ հայոց լեզվի մեջ արիական են այն բառերը, որոնք արտահայտում են զորք, զենք և այլն, մինչդեռ տեղական վրամ հարեթական են հոգեկան տրամադրություններ արտահայտող բառերը, մանավանդ այնպիսիները, որոնք արտահայտում են երկրագործական գործիքներ, մետաղներ, տնային անասուններ, մատաղ և այլն: Այսպիսով արիացիները տեղացիներից յուրացրին երկրագործություն, արհեստներ, վաճառականություն, կրոնական պաշտամունք:

Այս բարձր կուլտուրայի արտահայտությունը դառավ այն երկտարր, խոսն լեզուն, որ մեզանում հայտնի է «գրաբար» անունով: Այդ հարուստ լեզուն, որ ազնվականության, կառավարող խավերի լեզուն էր, ըստ ենթադրության ակադեմիկոս Մառի, զարգացել է Հայաստանի հարավ-արևելյան մասում<sup>2</sup>, այսինքն դարձյալ Վանի լճի ավազանում: 44

### Գլուխ երկրորդ

### Ն Ա Ն Ն Ա Կ Ա Ն Ձ Ե Վ Ե Ր

1. ԵՆՐՔԻՆ ԿԿԱՆՔ: 2. ՈՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ՈՆԿՈՒԱԿԱՆ ԿԱԶՄ: 3. ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ: 4. ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՔԻՅՈՒԹՅՈՒՆ: 5. ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐՎԵՍՏԵՐ: 6. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: 7. ՀԵՆԿԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՄԻԱՊԵՏ:

1. **Ներքին կյանք:** Հայ ժողովրդի ներքին, տնային կյանքի մասին այս հեռավոր ժամանակներում, երբ հավանականորեն դեռ կատարվում էր զրկու ազգագրական տարրերի միաձուլումը, շատ թանկագին տեղեկություններ տալիս է Քսենոֆոնը, որ, ինչպես հիշատակեցինք, եղել է Հայաստանում 401—400 (թ. Ք. ա.):

Ի՞նչ կորուխների երկրում հույները լսել էին, որ Հայաստանը մի ընդարձակ և պտղատու աշխարհ է: Այս համբավը ճշտվեց այն ժամից, երբ նահանգողները հասան Բաղեջի սահմաններին: Նրանց առջև փռված էր մի բարեբախտ և պուրկ երկիր. Մուշի և Բուլանջիի դաշտերի պես գեղեցիկ վայրերը, իհարկե, խիտ պզգաբնակություն ունեին և հույները, որոնք կորուխների երկրում ենթակա էին մշտական հարձակումների և ստիպված էին պատերազմական գործողություններով իրենց համար ճանապարհ բաց անել, Արածանիի հովտում գտան խաղաղություն և ամեն ինչի մեծ առատություն:

Հայաստանի մի ծայրից մինչև մյուսը, Բոհոտան-սուրից մինչև Եփրատի ակունքները, հույները մի հատ քաղաք չտեսան: Գերազանցորեն գյուղական էր Հայաստանը: Գյուղերը խմբված էին մեծագույն մասամբ Մեղրափետի փկերին: Նրանց մեջ կային և մեծերը: Գյուղում էր գտնվում և Հայաստանի կառավարչի պալատը: Արևմտյան Հայաստանի ուրիշ գյուղերում էլ հույները հանդիպում էին պալատների: Եվ այս պայացույց է, որ այդ կողմերում արդեն կազմակերպված էր ազնվականություն, որի ամբողջների շուրջը խմբվում էր ժողովուրդը:

Հայ ժողովրդի ընդհանուր կերպարանքը Քսենոֆոնի նկարագրության մեջ ներկայանում է վերին աստիճանի բնորոշ գույներով: Դա ընդհանրապես երկրագործ և անասնապահ մի ժողովուրդ է, շատ խաղաղասեր, շատ հյուրասեր, հույների առջև հայերը բաց են անում իրենց տնտեսական ամբողջ հարստությունը: Ցորենի և գարու առատությունը չէ միայն երկրի հարստությունը, որ ամբարված էր հորերի մեջ: Անասնապահությունն էլ զարգացած էր և հույները առատորեն վայելում էին զանազան տեսակի մսեղեն՝ ոչխար, ուկ, խոզ և այլն: Առանձնապես զարգացած էր ձիաբուծությունը: Ժողովուրդը բարձր մշակման գիտակցության էլ էր հասել: Նուրբ, հին գինին էլ էր երե-

<sup>1</sup> M. Brosset, „Histoire de la Georgie“, Pet., 1849, t. I, p. 16—17:

<sup>2</sup> Н. Март. «Кав. культ, мир и «Армения», с. 29.

վում—հույն գինավորների սեղանի վրա: Զարմանալի էր և զանազան բույսերից պատրաստված օժանելիքների և յուղերի բազմազանությունը:

Այս խաղաղ և բարեկից երկրի ժողովրդին քաղաքակիրթ հույները վերաբերվում էին իրեն բարբարոսների և պահում էին իրենց այնպես, ինչպես այսօրվա եվրոպացիները իրենց պահում են Աֆրիկայի բնիկների մեջ: Նրանք հարկադրում էին, որ հայ երեխաները ծառայեն իրենց սեղաններին, կոպիտ էին վարվում հասակավորների հետ և բռնություններ էին գործադրում: Օրինակ՝ հույն գինավորները, հեռանալով այն տներից, ուր ամենասրտաբաց հյուրընկալություն էին գտել, հրդեհում էին այդ բնակարանները:

Սակայն ամբողջ երկիրը, ինչպես երևում է, կուլտուրական միանման պատկեր չէր ներկայացնում: Այս մենք նկատում ենք տների նկարագրությունից: Արևմտյան Հայաստանի գյուղերում շատ էին այնպիսի տներ, որոնք աշտարակներ ունեին: Մինչդեռ արևելյան Հայաստանում, ընդհակառակն, շինարարական արհեստը դեռ զարգացման նախնական աստիճանի վրա էր: Այստեղ գետնի վրա բարձրացած շինություններ չկային: Մարդկանց բնակարանները ստորերկրյա փոսեր էին, ուր իջնում էին սանդուղքներով: մուտքը ջրհորի բերանի նմանություն ուներ: Հողի տակ մարդու հետ միասին ապրում էին և տնային կենդանիները, որոնց համար շինված էր առանձին մուտք: Փոքր երեխաների հետ միասին, ասում է հույն մատենագիրը, ապրում էին այծերը, ցուլերը, ոչխարները, տնային թռչունները: Այդ նախնական կենցաղին միանգամայն համապատասխանում էին այդտեղ դրված կարասները, որոնք լցված էին գարեջրով: Գարին լողում էր հեղուկի երեսին: Կարասների մոտ կային երկար և կարճ եղեգներ, որոնք ծունկեր չունեին: Ով ուզում էր խմել արբեցնող հեղուկը, վերցնում էր եղեգը, մի ծայրը դնում էր կարասի մեջ, իսկ մյուսով ծծում էր, ինչպես եզ, այդ նախնական գարեջուրը: Քաղաքակիրթ հելլեններին դուր էր գալիս այդ հայկական գարեջուրը, երբ նրա հետ շուր էին խառնում:

Քաղաքակիրթության պատմությունը մեզ ուսուցանում է, որ այս նախնական գարեջուրը ամենահին, ամենանախնական խմիչքն էր, որ մարդը շինել սկսեց արբեցման համար: Գինին, որ հետո գտնվեց, երկար ժամանակ արտոնված դասակարգերի սեփականությունն էր, մինչդեռ ժողովրդական խմիչք մնում էր գարեջուրը: Նվ իրավ, թեև խաղողի հայրենիք համարվում են Փոքր Ասիան և Հայաստանը, Արևելյան Հայաստանում առատ էր այս գարեջուրը, իսկ գինի ունի միայն գյուղապետը, որ և հույների սիրտը շահելու համար, խոստանում է հողի տակ թաղած գինի տալ նրանց: Բայց այսպես չէր Արևմտյան Հայաստանում: Այնտեղ գարեջրի մասին հիշատակություն չկա, բայց առատությունը գտնվող բերքերի մեջ հիշատակվում են և «հոտավետ գինիներ»:

Եվ այսպես, հույն հեղինակի նկարագրության մեջ Արևելյան Հայաստանը, արևմտյանի համեմատությամբ, ավելի նախնական, կուլտուրապես ավելի ստոր մի կացության պատկերն է տալիս, այս պատկերը թանձրացնում են և մի երկու մանրամասնություններ: Հույն բանակին հետևում է մի փոքրիկ հայ զորախումբ: Հույները ձանապարհին թողնում են իրենց հոգնած և ուժասպառ կենդանիներին և հայերը շտապում են տիրանալ նրանց, իրար հետ կոխվ սկսելով բաժնի համար: Մի ուրիշ տեղ, մթության մեջ, հայերը հետևում են հույներին ահագին աղմուկով և վիճելով իրենց ընկած բաժինների

մասին: Ահա դեռ որքան նախնական աստիճանի վրա էր գտնվում հայոց գինավորությունը: 45

**2. Ընկերական և ընտանեկան կապ:** Հայկական Բարձրավանդակի վրա տարածված այս տեսարանը ցույց է տալիս, որ այդ ժամանակները հայ ժողովուրդը դեռ չէր դուրս եկել այն նախնական դրությունից, ուր մարդկային հանրակեցությունն ուներ տոհմի, ազգի (pog, gens) ձևը: Բայց հայերը այս կողմից բացառություն չէին կազմում: Այսպես էին կազմակերպված և մյուս արիական ցեղերը, նույնիսկ այնպիսիները, որոնք արդեն համաշխարհային պետություններ ստեղծելու աստիճանին էին հասել, օրինակ՝ Մարաստանն ու Պարսկաստանը: Այսպես էր հենց այն երկիրն էլ, ուր արմենները հայրենիք էին գտել: Նաիրիի բազմաթիվ ցեղերը, ինչպես նաև հարևան ուրիշ երկրների (Վրաստան, Աղվանք) ցեղային բաժանումները ուրիշ մի բան չէին, բայց եթե միևնույն տոհմային կազմակերպությամբ ապրող ժողովուրդներ:

Տոհմը այն ձևն է, ուր մարդկանց ընտանիքների մի խմբակցություն համարում է իրեն, իրավացի թե սխալմամբ, կապված արյունակցական կապերով, այսինքն ազգակցությամբ, որ կարող է լինել թե՛ մոր և թե՛ հոր կողմից, ինչպես նաև ազգականական մի ընդհանուր պաշտամունքով, ընդհանուր մի անունով: Այս կազմակերպության նախնական աստիճանում չկա անհատականություն, ամեն ինչ տոհմային է և տոհմին է պատկանում՝ սկսած երեխաներից մինչև տնտեսական ձեռնարկությունները, հողը: Տոհմն ունի մի գլխավոր, մի առաջնորդ, որ կառավարում է և պաշտպանում է իր տոհմակիցներին: Ամբողջ տոհմը կապված է ընդհանուր տոհմային պարտավորություններով և պատասխանատվությամբ: Երբ սպանվում էր տոհմի անդամներից մեկը դրսի, ուրիշ տոհմի պատկանող մեկի ձեռքով, ամբողջ տոհմը պարտավոր էր արյան վրեժ հանել այդ հակառակորդ տոհմից: Իսկ միևնույն տոհմի պատկանող մարդկանց հանցանքները, երբ կատարվում էին միմյանց դեմ, կամ չէին պատժվում կամ պատժվում էին թեթև կերպով:

Տոհմերը համախմբված էին մի տեղ: Նրանց փոխադարձ հարաբերությունները հաճախ թշնամական էին: Հարձակումներից պաշտպանվելու համար մեծ կամ փոքր գյուղերը, որոնք մի տոհմ էին պարոնակում իրենց մեջ, պաշտպանվում էին ամբողջություններով: Քսենոֆոնի հույները Արևելյան Հայաստանում մի գյուղ մտան, որ հողե շրջապարիսպ ուներ: Այս տոհմային կազմակերպության մի բնորոշ գիծն է: Այդպես է և հույն հեղինակի նկարագրած հայ գյուղապետը, որ տոհմի գլխավորն էր<sup>2</sup>:

Սակայն ժամանակի ընթացքում տոհմը մեծանում էր, չէր կարողանում այլևս ամփոփվել մի որոշ տեղում: Այդ դեպքում նա բաժանվում էր և նրա հատվածները հեռանում էին մայր տոհմից, նրանից փոքրիշատե հեռու բնակություն էին հաստատում, մնալով, այնուամենայնիվ, կապված նրա հետ ընդհանուր տոհմային ավանդություններով և միության ոգով: Հետևելով այս կարգին, տոհմային հատվածները իրար հետ էին լինում և տեղափոխությունների ժամանակ: Արիական ցեղերի տեղափոխումներին ընդհանուր էր այս կարգը, հետևաբար և արմենների գաղթին, այնպես որ իրենց նոր հայրենիքում հաստատվելուց հետո՝ նրանց տոհմերը իրարից բաժան-բաժան և առանձնացած չէին, այլ միախմբված: Գուցե այս երևույթով էլ մենք կարո-

<sup>1</sup> Липперт, «История культуры», СПб, 1895, с. 68—71.

<sup>1</sup> М. Ковалевский, «Социология», Пет., 1910, т. II, гл. V.

<sup>2</sup> Н. Адонц, «Армения в эпоху Юстиниана», с. 391.



դանանք բացատրել այն տարբերությունը, որ նշմարեցինք Արևելյան և Արևմտյան Հայաստանի մեջ: Թվում է, թե Արածանիի վերին մասնորում հաստատվել էին արմենները՝ ավելի քիչ քաղաքակրթված տոհմերը, մինչդեռ Մեղրապետի հովտում տիրապետում էին քաղաքակառուցված ու կուլտուրայես ավելի զարգացած բնիկների տոհմերը:

Տոհմային կարգի բացարձակ տիրապետության ժամանակ ընտանիքն ուներ այն ձևը, որ կոչվում է նախնական և որ նմանությունն ընտանիքն ունեցող հատկացողությունը կազմված ընտանիքին: Նախնական ընտանիքի մեջ տիրող սկզբունքը մայրապետությունն էր, այն կարգը, երբ մայրն էր, որ որոշում էր անհավասարությունը: Մորից էր առաջանում տոհմը, իսկ հայրը ոչինչ նշանակություն չուներ այդ բանի մեջ, քանի որ պոլիգամիան ուներ հանրային ամուսնություն և կինը մի անհատի սեփականությունն չէր: Հայ ժողովրդի սովորությունների մեջ շատ կան հետքեր, որոնք ցույց են տալիս, թե նա էլ այդ մայրական իրավունքի դարձն է ունեցել: Բայց այն ժամանակ, երբ Քսենոֆոնն անցնում էր Հայաստանով, արդեն տիրում էր այն ընտանիկան կարգը, որ հայտնի է նաև հայտնաբերված անուշիկ և որ սկսում է այնքան ավելի և ավելի տիրապետող հանդիսանալ, որքան հետզհետե թուլանում և կազմալուծվում էր տոհմային կրթությունը: Քսենոֆոնի ժամանակ արդեն հայրապետությունն էր տիրում հայ ընտանիքի մեջ. հայրն է, որ տան տերն է և նրա ճակատագրի կարգադրիչը: Այս, սակայն, չէր նշանակում, թե տոհմային կազմը բոլորովին վերջանում էր Հայաստանում այդ միջոցների: Ընտանիկան նոր կազմակերպման հետ զուգընթաց գնում է և տոհմային կարգը, որի քայքայումը շատ անգամ տևում է ամբողջ դարեր, մասնաձևի դարեր: Հայաստանն այն անհավասար կերպերից էր, ուր տոհմային կազմակերպությունը պիտի երկար պահպանվեր: Այսպես թելադրում էր և երկրի կազմվածքը, որի լեռնային բնավորությունը նախորդում էր առանձնակի տոհմային զանգվածներով ապրելու երկարատև անհրաժեշտությունը:

Հայ նահապետական ընտանիքը, դատելով այն սովորություններից և ծեսերից, որոնք մնացել են մինչև այսօր ժողովրդի մեջ, ուներ մի կազմակերպություն, որ շատ նման էր հույն և հռոմեացի, ինչպես նաև, երևի, ուրիշ արիական անհավասար ընտանիկան կազմակերպության: Ընտանիքը մի ինքնավար և ինքնամոտիվ հաստատություն էր, որի հենակետն էր օջախը և իր սեփական, իրեն միակ հատուկ պաշտամունքը:

Օջախը, ինչպես հայտնի է, ներկայացնում է տան կրակարանը: Կրակը համարյա բոլոր ազգերի երկրպագության անուշիկն էր, իսկ ընտանիկան հանկի տակ անհղձկան, ներքին անտվածությունն էր, որին երկրպագում էին ընտանիքի անդամները, զոհեր ու ընծաներ մատուցանելով: Սրբազան կրակը միշտ վառ պիտի պահվեր նաև ներկայացնում էր ընտանիքը, նրա ամբողջությունը, հարատևությունը: Ընտանիքը պիտի ապրեր հավիտյան, պիտի լիներ նույնպես մաքուր ու սուրբ, ինչպես էր կրակը, որի առջև ընտանիքը թույլ չէր տալիս, որ կատարվի որևէ վատ բան:

Ընտանիկան այդ աստուծուն անմիջապես ծառայել, զոհեր ու խնդրվածքներ մատուցանել կարող էր միայն ընտանիքի հայրը, որ այսպիսով հանդիսանում էր աստվածության քահանան կամ քուրմը: Միաժամանակ ընտանիքի հայրը և անսահման ու բացարձակ իշխանավորն էր իր հարկի տակ, և

նրան պարտավոր էին հպատակվել ընտանիքի բոլոր անդամները: Նա նույնիսկ կյանքի և մահվան վճիռներ էլ էր կարող արձակել: Նա կոչվում էր տանուհի (տանտի): Եվ պետք է ասել, որ ընտանիքը նահապետական իրանում մի մեծ հիմնարկություն էր, որ հաճախ ամփոփում էր իր մեջ հարյուրավոր և էլ ավելի անդամներ: «Տուն» անունը միայն ընտանիքը չէր ներկայացնում: Տուն էր և տոհմին պատկանող ամբողջ գավառը, նահանգը և կամ նույնիսկ ամբողջ պետությունը. և տանուտեր կոչվում էր ոչ միայն տան հայրը, այլև տոհմապետը, տոհմային իշխանավորը և մինչև իսկ թագավորը: Եվ ինչ որ էր տանուտեր հայրն ընտանիքի մեջ, նույնն էր տանուտեր-տոհմապետը գավառի կամ նահանգի մեջ, ինչպես և տանուտեր-թագավորը պետության մեջ:

Մահից հետո տանուտեր հոր իշխանությունն ու իրավունքները անցնում էին նրա ավագ որդուն: Միայն տղամարդին էր տված ժառանգելու իրավունքը. սղամարդը միայն կարող էր լինել իշխանավոր, կարգադրիչ և տնային աստվածության հետ անմիջապես հարաբերություն ունեցող: Կանայք միանգամայն զրկված էին այդ բոլոր իրավունքներից: Կինն իր ամուսնու հետ և աղբիկն իր հոր կամ եղբոր հետ կարող էին ներկայանալ աստուծուն: Այս պատճառով յուրաքանչյուր տանուտեր-հայր աշխատում էր արու գավառ ունենալ իրեն հաջորդելու, այսինքն իր օջախը հաստատ ու շարունակական պահելու համար: Սրբազան կրակի հետ ընտանիքում վառ պիտի մնար և նախնիքների պաշտամունքը, որի մեջ դարձյալ գլխավոր դերը պատկանում էր տղամարդին:

Իրտեղ արդեն, որ նախնական մարդուն հատուկ էր այն հավատը, թե մարդը մեռնելուց հետո էլ շարունակում է ապրել գերեզմանի մեջ: Այդտեղ թաղված է դիակը, բայց նրա հետ այդտեղ բնակություն է հաստատում նրա հոգին, որ կենդանի է, չէ մեռնում: Այս հասկացողությունը, որից մարդկությունը այժմ էլ դեռ չէ անջատվել, առաջացնում էր մեռելապաշտություն: Երեզմանի բնակիչն ուներ իր պահանջները, որ պիտի կատարեին երկրվրա ապրող մարդիկ, հակառակ դեպքում նա կարող էր մեծ վնասներ և տանապանքներ պատճառել ապրող աշխարհին: Մեռելների պահանջներն էին սթեան և ապրուստի միջոցներ: Յուրաքանչյուր մեռել պիտի ունենար իր գերեզմանը: Անթաղ մեռելի հոգին դառնում էր թափառական, լցված մարդկանց դժբախտությունների պատճառելու ձգտումով: Իսկ գերեզման ստացած հոգուն պետք էր տալ կերակուրներ: Ուտելիք և ըմպելիք մեռելի հետ դնում էին թաղման ժամանակ: Բայց այդ բավական չէր: Հոգին դուրս էր գալիս գերեզմանից՝ որոնումներ անելու և այդ միջոցին գերեզմանի վրա նա պիտի գտներ ինչ իրեն հարկավոր էր, այսինքն զոհի այլովոր միս (ողջակեզ), որ նրա ծխով հագնեա, գինի և կաթ՝ խմելու համար: Իսկ ո՞վ պետք է բերեր այդ զոհերն ու ընծաները, եթե ոչ մեռածի ընտանիքը: Միայն այս դեպքում էր, որ գերեզմանում հանգող հայրը կամ առհասարակ նախնին իր ընտանիքի պաշտպանն ու հովանավորը կդառնար: Իսկ իր պարտքը մոռացող ընտանիքի համար մեռած հայրը պատիժ ու պատուհաս կարող էր դառնալ: Եվ որդին, ընտանիքի գլուխն անցած, զոհեր էր մատուցանում նախնիքների գերեզմաններին, ընծաներ էր տալիս, նրանք քաղցր հայացքը, բարի տրամադրությունը հայցում:

<sup>1</sup> И. Джавахов, «Государственный строй древней Грузии и древней Армении», СПб, 1905, с. 84—136.

<sup>1</sup> Խ. Սամվելյան, «Մայրական իրավունքը» («Ազգագրական հանդես», 17):

Նախնիքների մի ամբողջ պաշտամունք էր այս, մի աստվածացում, որ միանում էր կրակի պաշտամունքի հետ ընտանիքի գաղափարն ամբողջացնելու համար<sup>1</sup>: Օջախը՝ տան հարկի տակ և հանգստարանը՝ այդ տանից քիչ հեռու, ուր նախնիքների հոգիներն էին ապրում—ահա այն հիմքերը, որոնց վրա ամրապնդված էին ընտանիքի անկախությունն ու կատարյալ առանձնացումը: Խառնվել ուրիշ ընտանիքի հետ, անթույլատրելի էր և անհնարին: Ով հեռանում էր ընտանեկան օջախի մոտից, նա կորած էր այդ օջախի համար: Այս դրուժյունն էր վիճակված, ամենից առաջ աղջիկներին: Նրանք պիտի ամուսնանային ուրիշ օջախների պատկանող տղամարդկանց հետ և ահա այդ անհրաժեշտությունից բխում էր այսպիսի մի կարգ: Հարսը մտնելով իր ամուսնու հարկի տակ, ամենից առաջ կատարյալ և հլու հպատակություն էր հայտնում այդ հարկի օջախին: Եվ այդ բոլորից նա այլևս հայրական օջախին չէր պատկանում, պիտի մոռանար նրան և ամբողջ սրտով նվիրվեր իր ամուսնու օջախին, նրա շահերը պաշտպաներ, նրա աստվածներին (նախնիքներին) երկրպագեր, նրա ավանդություններով ապրեր:

Ընտանեկան այս կազմակերպությունը շատ ուժեղ մնաց հայ ժողովրդի մեջ մինչև նույնիսկ ներկա ժամանակները և պատմական որոշ հանգամանքների մեջ ինքնապաշտպանության մի գործարար միջոց էր նրա համար:

Բայց չէ կարելի, իհարկե, ասել, թե օջախն իր սրբազան կրակով և նախնիքների պաշտամունքով միակ միջավայրն էր, ուր ամփոփվում էին հայ ժողովրդի բոլոր աշխարհայացքները: Ընտանիքի անձուկ շրջանից դուրս կար տոհմը. տոհմից դուրս՝ ցեղը, ամբողջ համայնական կազմը, պետությունը: Եվ մենք տեսնում ենք, որ գոյություն ունեին նաև ավելի ընդարձակ շրջանների պաշտամունքներ, որոնք հասնում էին համայնական, ընդհանրական շափերի: Այսպես, ընտանեկան պաշտամունքից դեպի ընդհանրականը տանող աստիճաններից առաջինն էր տոհմայինը, այսինքն տոհմապետի օջախը, որ թե՛ իր սրբազան կրակով և թե՛ նախնիքների պաշտամունքով նվիրական էր ամբողջ տոհմի համար:<sup>2</sup>

**3. Համայնական պաշտամունք:** Համայնական պաշտամունքի նախնական ձևն էր երկնային լուսատուների աստվածացումը: Այս դրուժյունը հատուկ է բոլոր ազգերին, և հայերը բացառություն չէին կազմում: Արդեն մենք տեսանք, որ ուրարտական պաշտամունքի մեջ էլ գլխավոր աստվածները լուսատուներն էին: Բայց հնդեվրոպացի հայերը ուրարտացիներից չէր, որ վերցրին այս պաշտամունքը. նրանք իրենց հին հայրենիքից բերել էին լուսատուների անձնավորող աստվածներ: Փոյուզիայում պաշտվում էին արեգակնային աստվածությունը, որ կոչվում էր Ս ա բ ա գ ի ո ս: Այս Սաբազիոսը արմենների ամենազխավոր աստվածներից մեկն էր և հենց նրանից էլ, ինչպես ապացուցում է ակադեմիկոս Մաուր, գոյացել է հայերեն «աստված» անունը<sup>3</sup>: Սակայն չէ կարելի ասել թե արեգակի և ուրիշ լուսատուների պաշտամունքը արմենները

<sup>1</sup> Հայ հին ընտանեկան կազմակերպությունը, այնպես, ինչպես, նա պատկերանում էր մեր ժողովրդական սովորությունների և ավանդությունների մեջ, միանգամայն համապատասխանում է հին հունական և հռոմեական ընտանիքի կազմակերպության, ինչպես նկարագրել է Fustel de Coulanges իր նշանավոր «La cité Antique» գործի մեջ, որ և կարող է մեզ և առաջնորդել մեր հին ընտանիքն ուսումնասիրելիս: Տե՛ս և Խ. Սամվելյան, «Հայ ընտանեկան պաշտամունքը» («Ազգագրական հանդես», XII—XIV գրքեր):

<sup>2</sup> Н. Марр, «Бог «Сабазис» у армян», 1911.

ասիական հողի վրա զարգացած փոյուզիական միջավայրում են յուրացրել: Այս պաշտամունքն ավելի հին էր նրանց մեջ, բերված ավելի հեռու տեղերից, արիական ընդհանուր նախահայրենիքից:<sup>4</sup> Սրա ապացույցն այն է, որ հայ հնագույն պաշտամունքը ունի իր մեջ այնպիսի տարրեր, որոնք գտնվում են և հնդկական ամենահին վեդայական կրոնի մեջ:

Լուսատուների մեջ նախնական մարդը, գերազանցորեն բնության որդի, ամենամեծ նշանակություն էր տալիս ցերեկվա լույսին, որ կրում է իր մեջ կյանքի աղբյուրը կազմող շերմությունը: Հավանականաբար այդ լույսը անձնավորում էր մի աստվածություն մեջ, որ կոչվում էր Արփի, Արեգ կամ Արև,<sup>5</sup> և ցերեկվա լուսատու գունգն էլ, այդ աստվածության մարմնացումը, ընդունվում էր իբրև նրա աչք և կոչվում էր Արեգակն կամ Արևակն: Թվում է, թե նույն այդ երկնային լույսի բարձր աստվածությունն ուներ և Վահ կամ Վահե անունը, որից ծագում էր Վահագն աստվածը, որ արեգակն աստծու հոմանիշն էր: Դեռ այսօր էլ Վանի գյուղերի հայ ժողովուրդը պահպանել է մի գերազանցորեն արևապաշտական ծես: Նորահարսին և փեսային վաղ առավոտյան արևածագին, հանում են տան կտուրը, երբեմն գալիս է և քահանան: Նորապսակների երեսները դարձրած են դեպի արևելք, իսկ հանդիսականները երգում են.

էգ (այգ), բարև, ա՛յ էգ, բարև,  
էգն արևուն տանք բարև,  
Տա թագավորին շատ արև,  
Վահե՛, Վահե՛,  
էգ, բարև, ա՛յ էգ, բարև,  
էգն արևուն տանք բարև,  
Տա թագուհուն շատ արև,  
Վահե՛, Վահե՛:

Առանց արևի կյանք չկա այս աշխարհում, և արևը հայ ժողովրդի աչքում կյանք հասկացողության նույնանիշն է դառնում: Այս արև կյանքը մի սրբազան ստացվածք էր, աստվածության մի մասնիկ էր, որ պարգևում էր ամեն մի մարդու, ուստի և երդվում էին իրար արևով, իրար երկար արև, արևատուժյուն էին ցանկանում: Արևի, և կամ նույնն է՝ Արեգակի պաշտամունքը Հայաստանում տեսավ և Քսենոֆոնը, որ տվեց իր ձին հայ տանուտերին՝ արեգակին զոհելու համար<sup>6</sup>:

Արևային պաշտամունքի մեջ մեծ նշանակություն ուներ այն վաղ ժամը, երբ «ծնվում» էր կամ ծագում էր ցերեկվա լուսատուն: Գլխավորապես այդ ժամանակն էր փառաբանվում լույսը իբրև կյանք. կատարվում էին կրոնական արարողություններ, զոհաբերություններ էին լինում ի պատիվ Արև-Արեգի: Հայ լեզուն մի շարք անուններ ունի այդ խորհրդավոր և սրբազան ժամը նշանակելու համար, անուններ՝ որոնք վկայում են, թե որքա՛ն վեհ ու սիրելի էր լույսի պաշտամունքը: Այդ անուններն են. «արևադալ» (արևի գալը), «արեվածայրք», «արևահարք», «արևացայտ»: Այդ մեծափառ ու զունազեղ ծնունդը այսպես էր պատկերացվում Վահագն աստծու ծնունդը երգող շատ հին բանաստեղծության մեջ.

<sup>4</sup> Н. Эмин, «Очерк религии и верований языческих армян», М., 1864, с. 36.

<sup>5</sup> Խ. Այվազյան, «Վասպուրական», թիֆլիս, 1911, էր. 44:

<sup>6</sup> Xenophon, III, chap. V.

Ծրկնէր երկին և երկիր.  
Ծրկնէր և ծիրանի ծով.  
Ծրկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղէգնիկն.  
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,  
Ընդ եղեգան փող բոց ելանէր,  
Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր.  
Նա հուր հեր ունէր.  
Ապա թէ բոց ունէր մորուս,  
Եւ աշուներն էին արեգակունքս:

Արև-աստծոս այս ծագումը ծովային մի տեսարանն է և Հայաստանում, ուր չկան ծովային ընդարձակ հորիզոններ, այսպիսի մի պատկերացում ստեղծվել չէր կարող: Ուստի այս բանաստեղծական շքնաղ արտահայտությունն էլ արմենները, երևի, բերել էին իրենց նախնական հայրենիքից<sup>1</sup>: Եվ նրա մեջ երգվող Վահագնը հայկական կերպարանք ստացած Ինդրան է, հնդկական աստվածը, որ թե՛ երկնային լույսն էր ներկայացնում և թե՛ ամպրոպային աստված էր, այսինքն իր կայծակներով հաղթում էր երկնային այն վիշապին, որ հալածում է ամպերը և չէ թույլ տալիս, որ նրանք երկրի վրա ցանկալի անձրև թափեն<sup>2</sup>: Մեզանում էլ Վահագնը նաև երկնային լույսի և ամպրոպների աստվածություն էր, զինված կայծակներով և հալածում էր անձրև արգիլող վիշապներին, ուստի և կոչվում էր Վիշապաբաղ<sup>3</sup>:

Այսպիսով Վահագնը հայոց բնիկ և հնագույն աստվածն էր, որ և մեծ ժողովրդականություն էր վայելում: Հետագայում, երբ հայ պաշտամունքը զարգացավ և ծավալվեց, Վահագնը, ինչպես կտեսնենք իր տեղը, ուրիշ դիրք զբաղեց կրոնական հասկացողությունների մեջ, բայց և այնպես, շարունակեց մնալ մեկը ամենից սիրված, ժողովրդական աստվածներից:

Արև աստծուն պաշտողներն իրենց անվանում էին արևորդի: Այս անունը պահվում էր Հայաստանի սահմաններում դեռ XII դարում (Ք. հ.): Հավանական է, որ հնագույն հայկական պաշտամունքի անունն էլ այդ լինի եղած: Արևորդիության կրոնը աստվածացնում էր և լուսինն ու աստղերը:

Երկնային լուսատուներից դուրս՝ հայերն ունեին և ուրիշ գաղափարներ ներկայացնող սեփական, բնիկ աստվածություններ: Այսպես էր, օրինակ, Ամանոր աստվածը, որ թվում է, թե կոչվում էր և Վանատուր: Ամանոր նշանակում է «նոր տարի», իսկ «Վանատուր»՝ հյուրընկալ: Պտուղների հովանավորն էր և նրան նվիրված էին տարեմուտի տոները, որոնք համազգային նշանակություն ունեին: Հայկական տարեմուտն սկսվում էր նավասարդ ամսի մեկով, որ գալիս է օգոստոսի 11-ին: Ամանոր աստծու գլխավոր պաշտամունքի տեղը գտնվում էր Բագրևանդ գավառի Բագավան գյուղում: Այդ գավառում էլ Հայաստանի բոլոր կողմերից հավաքվում էր մեծ բազմություն՝ ազգային տոնը կատարելու համար: Տոնախմբությունը տևում էր վեց օր և կոչվում էր Վարդավառ: Զրի, ծաղիկների և առհասարակ երկրի արգասավորության տոնն էր դա: Բազմամբոխ ուխտավորները ջուր էին սրսկում, աղավնիներ էին թոցնում, կատարում էին որսորդության հանդեսներ և այլ խաղեր: Վանատուր կամ հյուրընկալ աստվածը այդ ահագին բազմությունները պա-

տրսպարում էր, լիացնում: Տարվա այն ժամանակն էր տեղի ունենում տոնը, երբ երկիրը կարող էր հանդես բերել իր հասունացած պտուղների առատությամբ:

Նախնական բոլոր ժողովուրդները ենթակա էին բնապաշտության. նրանք լցնում էին բնությունը բազմաթիվ ոգիներով, հատկացնելով ոմանց շար, ոմանց բարի բնավորություն: Չարերից ազատվելու համար գործ էին դրվում զանազան կախարդական հալածիչ միջոցներ, իսկ բարիներին գրավում էին զոհերով, ընծաներով ու նրանց հաճելի գործողություններով: Սակայն մարդկության մեջ կար և այն հայեցողությունը, որ շար ոգիներին անվնաս դարձնելու համար պետք է նրանց էլ երկրպագել, նրանց էլ աստվածացնել, որպեսզի այդ շարերը խղճան մարդկանց և վատություն չանեն: Այս սկզբունքը, որ մտավ և պարսից կրոնի կամ զրադաշտականության մեջ, ընդունում էին և հայ արևորդիները, որոնց մասին մի վկայություն կա 12-րդ դարի մեր գրականության մեջ թե երկրպագում էին և սատանային<sup>4</sup>: Այսպիսով մեր առև բացվում է այն կրոնը, որ այժմ ունին եզդիները, որոնք, ինչպես հայտնի է, քուրդ ազգի մի հատվածն են և պահել են այդ ազգին հատուկ հին պաշտամունքը: Այս բոլորը ապացուցանում է, որ արևորդի հայերը քրդերի նեո մի տեսակ կրոն ունեին<sup>5</sup>:

Բնության ահեղ երևույթները—ամպրոպ, կայծակ, փոթորիկ աստվածացվում էին: Պաշտվում էին լեռները, քարերը: Մանավանդ շատ զարգացած էր ջրի պաշտամունքը Հայաստանի մեջ. հավատացնում էին, որ աղբյուրների ակներում ոգիներ են ապրում, և այդ տեսակ աղբյուրները, որոնք կոչվում էին կաթն աղբյուր կամ լոջյա աղբյուր, երկրպագության առարկաներ էին: Պաշտվում էին և հայոց մեծ գետերը, այսպես էր, օրինակ, Ծմբրատը և մանավանդ նրա արևելյան ճյուղը Արածանին: Ծառերի պաշտամունքից հատկապես հայտնի են սոսին և բարդին: Ավանդությունը պատմում է, որ հին Արմավիր քաղաքում կար սոսու անտառ, որին մարդիկ էին նվիրվում: Այդ քաղաքում էր գտնվում և գլխավոր աստծու—արևի պաշտամունքի տեղը: Արևորդի քուրմերը սոսինների տերեւերի սոսափյունով գուշակություններ էին անում<sup>6</sup>: Պաշտամունքի առարկաների մեջ մենք տեսնում ենք և ուրիշ բույսեր, ինչպես նաև կենդանիներ: Վերջիններիս մեջ հիշելի է մանավանդ շունը: Կային մի տեսակ ոգիներ, որոնք կոչվում էին յարալեզ կամ առլեզ: Նրանք շան կերպարանք ունեին: Հավատում էին, թե նրանք պատերազմում սպանվածների վերքերը լիզում էին ու նորից կենդանացնում:

Բարի ոգիներ էին հրեշտակները կամ հրաշտակները (այլևայլ տեսակի, օր. քնի, ջերմի, անտառների, մանուկների պահապան և այլն), աղեկ-մանուկները, թո՛ւ ռեխ-մանուկները, հավերժ-ժահարսները, իսկ շար ոգիներ էին շարը, պիղծը, քաջքը, վիշապը, պայք, ալք, նահանգք և այլն<sup>7</sup>:

4. Պարսկական ազդեցություն: Այս ազդեցությունը, ինչպես գիտենք, ներգործել սկսեց շատ վաղուց, դեռ այն ժամանակից, երբ արմենները Եփրատ-

1 Н. Эмин, «Вахаги-Вишабаках», СПб, 1873, с. 19.  
2 Ibid., с. 14.  
3 Մ. Արեղյան, «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու պատմության մեջ», Վաղարշապատ, 1899, էր. 131—171:

1 Ղ. Ալիշան, «Հին հավատք կամ հեթանոսական կրոնը հայոց», Վենետիկ, 1895, էր. 56:  
2 «Տն. Ներսիսի Շնորհալույս հայոց կաթողիկոսի թուղթը», Վենետիկ, 1875, էր. 239:  
3 Н. Март, «Еще о словах», Челябинск, с. 43.  
4 Խորենացի, Ա, Ի:  
5 Ղ. Ալիշան, «Հին հաւ. հայոց»:

տի արևելյան ափը շէին անցել: Այնուհետև շեղավ մի այլ հզոր ազդեցություն, որ իրանականի շափ ներգործեր հեթիթա-արիական կուլտուրաների միախառնումով առաջացած հայ ժողովրդի վրա: Պարսկական լեզուն, պարսից կրոնական հայացքները ամենախոր հետքեր էին թողնում ուրիշ ազգերի թվում և հայերի մեջ: Եվ այս տիրապետությունը կատարվում էր բնական ճանապարհով, առանց բռնի ստիպումների: Աքեմենյան հարստության ժամանակ թեև իրանական կրոնը (զրադաշտականությունը) տարածված էր Իրանում, բայց հավանաբար դեռ պետական կրոն չէր և Աքեմենյան թագավորները լայն համբերողություն էին ցույց տալիս կրոնական գործերի մեջ<sup>1</sup>: Թե մինչև որ աստիճան էր պարսկերեն լեզուն պարսկական տիրապետության հետ թափանցել հայ ժողովրդի ծոցը, ցույց է տալիս այն, որ պարսկական սահմանազխի մոտ գտնվող մի գյուղի մեջ հայ ջրվոր կանայք խոսում էին Քսենոֆոնի հույների հետ պարսկերեն իմացող մի թարգմանի միջոցով: Պարսկական ազդեցության տարածման ամենազխալոր ճանապարհը, անկասկած, այն մեծ պողոտան էր, որ Շոշից գնում էր մինչև Փոքր Ասիայի ծովեզրյա Սարգ քաղաքը: Նրա վրա շինված էին արքունի իջևաններ զեղեցիկ բնակարաններով: Հայաստանի սահմաններում գտնվում էին 15 այդպիսի կայարաններ<sup>2</sup>: Եվ այսպես, հայ ժողովուրդը ոչ միայն քաղաքականապես, այլև կուլտուրապես կապել էր իր ճակատագիրը պարսից մեծ պետության հետ, մի կապակցություն, որ այնուհետև էլ պիտի շարունակվեր, ավելի և ավելի սերտ կերպարանք ընդունելով, երկար դարեր և որ ահագին ազդեցություն է ունեցել հայերի քաղաքական և մտավոր ամբողջ կյանքի վրա: Նայելով այդ ազդեցության խոր հետքերին, կարելի էր կարծել, թե հայերը երկար շին պահի իրենց ազգային ինքնուրույնությունը, կապազգայնանան և բոլորովին իրանանալով, կձուլվեն պարսիկ ժողովրդի մեջ: Բայց այսպես չեղավ: Գտնվելով պարսկական ուժեղ ազդեցության տակ, միանալով պարսիկ ժողովրդին պետական և հասարակական կազմի մեջ, յուրացնելով նրա աշխարհայացքները, հայ ժողովուրդը պահպանեց և մշակեց իր ազգային առանձնահատկությունները իր համար պետական շենք և կուլտուրական ինքնամփոփ աշխարհ ստեղծելու համար: Ուստի մենք պիտի ծանոթանանք պարսից պետական կազմակերպության, որպեսզի կարողանանք ըմբռնել և նրա գործած ուժեղ ազդեցության հետևանքները:

Արիացի մարերը և պարսիկները Արևմտյան Ասիայում երևան եկան իբրև չափապետական երկրագործ մի ժողովուրդ, որի կրոնը բնության շինարար ուժերի մեծարումն էր և աշխատանքի, խաղաղ բարօրության փառաբանությունը: Սակայն շփվելով վաղուց արդեն կազմակերպված ասիական անսահման բռնակալության Ասորեստանի հետ, մարերը, ապա և նրանց հաջորդած պարսիկները թողին իրենց նահապետական պարզությունն ու սակավապետությունը և ենթարկվելով Ասորեստանի ազդեցության, ժառանգեցին նրա պետության հետ և այն բոլոր կարգերն ու հիմնարկությունները, որոնք ասիական բռնակալությունն էին մարմնացնում: Եվ երկար ժամանակ Պարսկաստանն էր, որ Արևմտյան Ասիայում ներկայացնում էր ասիական պետականության ամենալիակատար և ամենաուժեղ արտահայտությունը:

Այդ սխտեմի կենտրոնը, հոգին, հարկավ, թագավորն էր, որին հպա-

<sup>1</sup> Arthur Christensen, „L'Empire des Sassanides“, Kobenhavn, 1907. p. 15.  
<sup>2</sup> Xénophon, III, chap. IV.  
<sup>3</sup> Геродот, V, 52.

տակվում էին բազմաթիվ ազգեր իրենց թագավորներով և այս պատճառով էլ իրանի տերն իրեն անվանում էր շահինշահ—թագավորների թագավոր: Նա բացարձակ և անսահման տեր էր ամեն ինչի, որ գտնվում էր պետության մեջ: Ամբողջ պետությունը համարվում էր նրա անձնական կալվածք, որի հետ նա կարող էր վարվել, ինչպես հաճելի էր իրեն: Կյանքի և մահվան, ինչքի, մարդու թե հողի տեր, նրա քահանայության էր կախված երկրի ճակատագիրը: Մարդկային ամեն տեսակի դիրք խոնարհվում էր նրա առջև իբրև նրա ստրուկը: Նրա ծննդյան տոնը համազգային տոն էր, նրա մահը համազգային սուգ էր: Բռնակալական քահանայությունը կարող էր ամենաստոր ծագում ունեցող մարդուն բարձրացնել մինչև թագավորի երկրորդի աստիճանը և հետո մի ակնթարթում, հանկարծակի, գլխատել նրան:

Լայնածավալ պետությունը, որ տարածվում էր Հունաստանից մինչև Հնդկաստան, պարտավոր էր ուղարկել իր շահինշահի և նրա պալատի վայելքի համար այն ամենալավ բաները, ինչ ունեի իր մեջ: Տարեկան հարկը, որ տերության զանազան մասերը տալիս էին արծաթով, կազմում էր 662 միլիոն ֆրանկի մի գումար<sup>1</sup>, որ ամբողջապես մտնում էր թագավորի զանձարանը, առանց պետական ծախսերին հատկացվելու, քանի որ այդ ծախսերն էլ առանձնապես հայթայթում էին պետության մասերը: Բացի այս դրամից, պետության մասերը տալիս էին նաև զանազան տեսակի տուրքեր, որոնք դարձյալ թագավորի անմիջական կարիքներին էին հատկացված: Այսպես, Բաբելոնը տալիս էր տարին 500 ներքինի տղաներ, Կողքիսը՝ հինգ տարին մի անգամ 100 տղա և 100 աղջիկ: Առանձին պաշտոնյաների մի բազմություն պահում էր պետության բոլոր կողմերում լավագույն ուսուցիչներ և ըմպելիքներ թագավորի սեղանի համար: Երկրի և մարդկանց տերը խմում էր միմիայն Քոսապ գետի ջուրը (Շուշան նահանգում), որ լավագույնն էր համարվում: Այդ ջուրը արծաթի ամանների մեջ սալլելով տանում էին նրա ետևից ամեն տեղ: Աղը գալիս էր Աֆրիկայից, հացի համար ցորեն բերվում էր Եվրոպացոց աշխարհից<sup>2</sup>:

Շոալուսթյան, առատության, մեծության կուրացուցիչ, ճնշող փայլը, որ այնքան դուրսիչ, այնքան ազդու է Արևելքում, շահի աստվածանման վեհություն և աներևակայելի ուժեղ իշխանության մեծագույն հավաստիքն էր համարվում: Պալատում ամեն օր ճաշում էին 15,000 մարդ, որոնցից 10 հազար թագավորի թիկնապահներն էին: Թե որքան Արևելքը սիրում էր ուղցնել արքունական տան փայլը, երևում է նրանից, որ պատմում էին թե այդ ամենօրյա ճաշը նստում էր 4000 տաղանդ, որ կազմում է մոտ 700.000 ուղբի: Տարին մի քանի անգամ թագավորը, նայած եղանակին, տեղափոխում էր իր բնակությունը զանազան կողմեր: Նրա հետ շարժվում էր և ամբողջ արքունիքը իր 10 հազարավոր ոստող-խմողներով, որոնց պիտի կերակրեր երկիրը: Եվ այդ պատճառով արքունիքի այդ ճանապարհորդությունների շրջանը մտնող երկրները ամեն անգամ կատարելապես պլոկվում էին, շորանում, կարծես մարախ էր նստել այնտեղ<sup>3</sup>:

Արքայական պալատը կոչվում էր Դուռ: Այդտեղ էր կենտրոնացած երկրի բարձր կառավարությունը, որի գլուխ կանգնած էր լինում թագավորի երկրորդը, այն է՝ մեծ վեզիրը: Սակայն նրանում էլ, ինչպես էր Ասորեստանում

<sup>1</sup> Lenormant et Babelon, „Histoire Ancienne“ t. VI, p. 62.  
<sup>2</sup> Հ. Գաբրիելյան, «Տիեզերական պատմություն», Վիեննա, 1849, 2. Ա., էր. 344.  
<sup>3</sup> Г. Фр. Кольб, «История человеческой культуры», т. I, Киев, 1897, с. 123—127.

և ամեն տեղ, իսկական կառավարություն կազմում էր շահի կանանցը, հարեմը: Արևելքի բռնակալի շուքի և ուժի մի շատ ազդու նշանն էլ հարուստ և բազմամարդ կանանոցն էր: Բազմամարդությունը հաճախ այնպես էր, որ շահի հարձերի թիվը հասնում էր հազարների: Յուրաքանչյուր գավառ պարտավոր էր իր ամենագեղեցիկ աղջիկներին ուղարկել իր թագավորին: Բայց հարձեր հավաքվում էին և աշխարհի զանազան կողմերում: Օրինավոր ամուսիններ համարվում էին այն կանայք, որոնք վերցվում էին թագավորական տիրապետող ցեղից: Հազարներով էին հաշվում և այն ներքինիները, որոնք հարեմի ծառայության էին հատկացված: Եվ ահա այդ կանայք ու ներքինիները իրենց ձեռքն էին առնում բռնակալին, անում էին այն, ինչ իրենք էին ուզում: Կանանոցի գերի էին դառնում մանավանդ թույլ ու անկարող թագավորները, ուստի սրանց ժամանակ բռնակալությունը ավելի սաստիկ էր ձնշում ժողովուրդը:

Պարսկական բռնակալությունը գինավորական էր Ասորեստանի նման և ոգևորվում էր նվաճումներով միայն: Նվաճումներն անգթության են սովորեցնում և պարսից շահերն էլ անգթության և դաժանության խոշոր օրինակներ էին, թեև պակաս արյունարբու էին, քան, օրինակ, Ասորեստանի թագավորները: Մարա-պարսկական բարբարոս կարգերը հույն հին մատենագիրները բնորոշում են մի շարք փաստերով. Աժդահակը, պատմում են, հրամայել էր իր դուռն ծառայողներից մեկին սպանել իր թոռան. նա չէր կատարել այդ հրամանը, ուստի Աժդահակը, մորթել տալով այդ պաշտոնյայի որդուն, եփել տվեց նրա միսը և հրամայեց դժբախտ հորն ուտել: Կամբիզ թագավորը կենդանի մարդկանց թաղում էր հողի մեջ մինչև շինքը: Նա հարկադրեց մեկին նստել այն աթոռի վրա, որ ծածկված էր նրա հոր քերթած կաշուով: Մի անգամ նա հարբած դրուսյան մեջ նետով սպանեց իր դրանիկներից մեկի որդուն: Եվ այդ խեղճ հայրը ոչ միայն պիտի լուր, այլև, իր ահարկու տիրոջը հաճոյացած լինելու համար, սկսեց գովել նրա ճարակությունը, որով այնքան լավ սպանել էր իր որդուն: Պատերազմների և ապստամբությունների ձնշման մեջ պարսիկները գիտեին սարսափ տարածել իրենց գազանություններով: Դարեհ Վշտասպյան Բաբելոնում ցից հանեց 300 ավազներ: Իսկ ազգաբնակչությունը Բաբելոնում շատացնելու համար նա հարևան ազգերից 50.000 կանայք խլեց և ուղարկեց Բաբելոն:

Իրանի ազգաբնակչությունը բաղկացած էր ցեղերից, որոնց մեջ զլխավորները տասն հատ էին: Առաջնակարգ դեր խաղում էր Պասարգատ ցեղը, որին պատկանում էր Աքեմենյանների թագավորող տոհմը: Նա ուներ բոլոր արտոնությունները, պետության պաշտոնյաները, զորքերի հրամանատարները այդ ցեղից էին լինում: Նրանից հետո կային երկու ուրիշ արտոնված ցեղեր էլ, որոնք ազնիվ էին համարվում: Երեք ցեղեր երկրագործներ էին, իսկ չորս ցեղեր՝ թափառական և անկիրթ: Այսպիսով բուն Իրանը ավատական կազմակերպություն ուներ: Յուրաքանչյուր ցեղի զլխավորը հարկ էր վճարում թագավորին և պատերազմի դեպքում զորք էր տալիս նրան:

Տիրապետող ցեղն էր, իսկպպես, որ կազմում էր պետության կուլտուրական առաջավոր շերտը և հասարակությունը: Այդ հասարակության մեջ էլ բռնապետությունն էր տիրում: Ընտանիքի մեջ բազմակենսություն էր հաստատ-

ված և ամուսինը բռնակալական իրավունքներ էր գործադրում: Այնպես որ բռնակալությունը պարսկական իրականության մեջ ցածից դեպի բարձր, ընտանիքից դեպի պալատ էր գնում:

Աքեմենյաններից մի քանիսը պետական շինարարության մեջ ինքնուրույն կազմակերպչական տաղանդ ցույց տվին: Այսպես, նույն Դարեհ Վշտասպյանը մտցրեց դրամների գործածությունը Իրանի մեջ, իր պետությունը բաժանեց 19 նահանգների, որոնցից յուրաքանչյուրը կառավարվում էր սատրապի ձեռքով:

Սատրապը նույնպես թագավորի ստրուկն էր, ինչպես և ամեն մեկը և կարող էր կյանքից զրկվել թագավորի մի հատ ակնարկով: Իսկ իր նահանգում նա իրեն պահում էր ինչպես մի թագավոր և շրջապատում էր իրեն արքայական շքեղությամբ և շոյալություններով, բայց, իհարկե, ավելի փոքր շափերով: Նա նույնիսկ դրամ էլ էր կտրում իր անունով: Սատրապները նշանակվում էին թագավորի կողմից և պարսիկ պաշտոնյաներ էին: Նրանց ծախսերի համար նահանգը առանձին հարկեր էր տալիս նրան: Բաբելոնի սատրապն ուներ 16.800 ձի, որ պիտի պահեին բնակիչները: Իսկ մի քանի գյուղեր հատուկ պարտավորություն ունեին կերակրելու հնդկական այն ահագին կապիկներին, որոնք նույն սատրապին էին պատկանում:

Սատրապները հաճախ էին ապստամբվում թագավորի դեմ: Այդ շարժումների առաջն առնելու համար, Դարեհը գինավորական հրամանատարությունը խլեց սատրապների ձեռքից և հանձնեց իր վստահությունը վայելող առանձին պաշտոնյաների և հաճախ իր կողմից մարդիկ էր ուղարկում՝ սատրապների գործերը քննելու համար: Այդ պաշտոնյաները կոչվում էին «թագավորի աշքեր» և նրանց կատարած գործը հաճախ այն էր լինում, որ սատրապը պաշտոնանկ էր լինում և սպանվում: Պետական այդ վերազննությունը հեշտացնելու համար Դարեհը մի մեծ ճանապարհ շինեց իր մայրաքաղաք Շոշից մինչև Փոքր Ասիայի Սարդ քաղաքը և առաջինն էր, որ հաստատեց պոստային հաղորդակցություն: Կային իջևաններ, ուր պատրաստ էին պահվում ձիաներ և թագավորի պաշտոնյաները «թռչունի արագությամբ թռչում էին» այդ մեծ ճանապարհով, ինչպես ասում են հույն պատմագիրները:

Արքունական այդ մեծ ճանապարհի մի նշանավոր մասը, ինչպես ասացինք վերևում, անցնում էր Հայաստանի հողերով: Ինքը Հայաստանը կազմում էր 13-րդ սատրապությունը և տալիս էր թագավորին հարկ 30.000 մրտուկ (քուռակ) տարին և 400 տաղանդ արծաթ: Բոլոր 19 սատրապությունների մեջ երկուսը միայն արտոնված էին—Հայաստան և Պոնտոս: Սրանք լրիվ թագավորություններ էին և սրանց թագավորներն էլ սատրապի անունն էին կրում: Շահի կողմից ոչ մի պաշտոնյա չէր գտնվում այս արտոնված սատրապների մոտ՝ նրանց գործողություններին հսկելու համար:

Պարսկաստանը, լինելով զլխավորապես գինավորական պետություն, չկարողացավ առանձին մեծ հաջողությամբ զարգացնել իր մեջ արհեստներ, առևտուր, արդյունագործություն: Այս ճյուղերի մեջ առաջավոր էին այն ազգերը, որոնք հնուց արդեն հայտնի էին այդ գործերով և այժմ հպատակվել էին Պարսկաստանին, ինչպես էին, օրինակ, Բաբելոն, Եգիպտոս, Փյունիկյան Իրանական ցեղի մտավոր հանճարի արտահայտություն մնաց զբաղաշատական

<sup>1</sup> A. Heeren „De la Politique et du Commerces des Peuples de l'Antiquité“, t. I, Paris, 1830, p. p. 500—504.

<sup>1</sup> Кольб, с. 127.

<sup>2</sup> Lenormant et Babelon, „His Anc.“, t. VI, p. 64.

կրոնը: Բայց քանի այդ կրոնը հեռանում էր իր նախնական մաքրությունից, քանի ավելի շատ էր նա ծես, անհոգի արարվածք դառնում, այնքան ավելի զարգանում և ուժեղանում էր նրան ծառայող հոգևորականությունը, որ սովորաբար կոչվում էր մոգություն:

Այս դասակարգն էլ հանդիսացավ գիտության և գրականության միակ արտոնատերը, որ և գործ էր ածում այդ գիտությունը իր դասակարգային շահերն ամրացնելու և պաշտամունքը զորեղացնելու համար: Բայց կարելի է ասել, որ դրական գիտությունները (օրինակ, թվագիտություն և պշխարհագիտություն) շատ թույլ էին զարգացած Պարսկաստանում: Մոգերը անշուշտ Բաբելոնից էին սովորում այն գիտելիքները, որոնք ավելի հարկավոր էին իրենց, օրինակ՝ աստղագիտությունը և գուշակողական արվեստի զանազան ճյուղերը: Այդ գիտելիքները հենց գլխավորապես Իրանից էր, որ անցան Հայաստան: Նույն այս ճանապարհով էր, որ Հայաստան մուտք գործեցին և քաբելա-ասորական աստվածները, որոնք նախապես Իրանում հաստատվեցին:

Գալով շինարարական արվեստին, պետք է նկատել, որ Պարսկաստանում, Աքեմենյանների ժամանակ, առանձնապես զարգացավ այդ արվեստը, թողնելով հոյակապ հիշատակարաններ: Սակայն ինքնուրույնություն շատ չունի այդ պարսկական արվեստը: Մինչև իսկ շեշտվում է, որ շինողները օտար վարպետներ էին, եկած այն երկրներից, ուր առանձնապես զարգացած էր արվեստը: Այսպես քաբելական հզոր ազդեցությունը երևում է տաճարների շինության մեջ, մինչդեռ քաղաքացիական շինությունների (օր. արքայական պալատների) ոճի մեջ տիրապետում է արևմտյան, հունական ազդեցությունը: Լավ զարգացած էր և քանդակագործությունը, որ բարձրաբանդակ նկարներով գեղեցկորեն ներկայացնում էր պարսկական իրականությունից և զրլխավորաբար, իհարկե, թագավորի կյանքից և նիստ ու կացից վերցրած տեսարաններ<sup>1</sup>:

Ահա, ընդհանուր առմամբ, այն քաղաքակրթությունը, որ ներկայացնում էր Պարսկաստանը: Դա ասիականություն էր իր անսահման բռնապետություններով, իր ստրկացումով, անհատականության ոչնչացմամբ:

Այս միևնույն ժամանակ զարգացել էր և եվրոպականությունը, որ առաջիմ միայն Հունաստանում էր հաստատված և որ բնորոշվում էր հելլենական ուսմանով: Դա ազատ ոգու, ժողովրդապետության, համայնական սկզբունքի և գիտության, արվեստների, բանաստեղծության, ստեղծագործող և ազատ անհատի գաղափարներն էր ներկայացնում:

Պարսկաստանն իր նվաճումները տարել հասցրել էր այդ Հունաստանին: Իրար դեմոկրեմ կանգնած էին Արևելքն ու Արևմուտքը, երկու հակադիր ուժեր: Կրկու ներհակ, իրար թշնամի սկզբունքներ: Եվ նրանք ընդհարվեցին իրար հետ: Այդ ժամանակից էլ սկսվեց մարդկային պատմության մեջ այն մեծ պայքարը, որ այսօր էլ դեռ չէ վերացել և որի անունն է արևելյան հարց, արյունոտ ընդհարումները Արևելքի և Արևմուտքի, ասիականության և եվրոպականության մեջ:

Նախահարձակ եղավ Ասիան, որի մարմնացումն էր Պարսկաստանը: Առաջ Դարեհն էր (490 Ք. ա.), որ հարձակվեց Հունաստանի վրա: Բայց դա միայն առաջարանն էր: Ավելի վիթխարի շափերով կոխվր վերսկսեց նրա

որդի Քսերքսը, որ 10 տարոց հետո Եվրոպա անցկացրեց մի բանակ, որ, ինչպես ասում են, մի միլիոնի շափ մարդկանցից էր բաղկացած: Ոտի էր կանգնեցվել ամբողջ Առաջավոր Ասիան: Այդտեղից բոլոր ազգերը շահինշահի հրամանով ճանապարհ ընկան՝ արևմտյան աշխարհը կործանելու: Հայերն էլ իրենց փոյուզիական զգեստներով դուրս եկան և առանձին հրամանատարի առջնորդությամբ մտան ասիացիների մեծ բանակը Եվրոպայի դեմ և Ասիայի համար<sup>1</sup>: Արևմտյան քաղաքակրթությունը սպառազեն ասիականության դեմ համեստ զինվորական ուժ հանեց, բայց և այնպես՝ հաղթեց:

**5. Վաճառականություն, արվեստներ:** Այս հեռավոր ժամանակներից մնացած մի քանի աղոտ ցուցմունքներ վկայում են, որ հայ ժողովուրդը համարյա պատմական ասպարեզ գուրս գալուց հետ հանդիսացել է բավական նշանակելի մի դեմք, նույնիսկ և միջազգային առևտրական հարաբերությունների մեջ: Այսպես, դեռ այն ժամանակները, երբ ազգային նոր զանգվածը չէր էլ վերջացել և արմենները դեռ գաղթականական շարժման մեջ էին դեպի արևելք և երբ նրանք հայտնի էին հրեաներին Թորգոմայի կամ Թորգոմի տուն անունով, նրանց ընտիր ձիաները և մանավանդ ջորիները, ինչպես տեսանք, շատ հարգի էին Փյունիկի համաշխարհային վաճառանցում (Տյուրոս):

Հետաքրքրական է, որ հայերը խիզախ առևտրական ձեռնարկությունների հեղինակ էին հանդիսանում դեռ այն ժամանակ, երբ հովվական դրությունից, չէին էլ դուրս եկել: Այսպես է նրանց առևտրական նավագնացությունը Եփրատ գետի վրա. մի ձեռնարկություն, որ, ինչպես երևում է, այդ մեծ գետի մոտ ապրող հայ ժողովուրդի սեփական գյուտն էր: Եփրատյան սրբնթաց և ըմբոստ ալիքները նվաճելու համար ժողովրդական հանճարը հնարել էր նավաշինության և նավագնացության մի ինքնատիպ եղանակ, որ գրավել էր Հերոդոտի ուշադրությունը և մանրամասն նկարագրության առարկա դարձրել: Հայ հովիվներն իրենք էին շինում իրենց նավակները Հայաստանի լեռնային անտառներում կտրած ծառերի մեծամեծ կոճղերից և պատում էի նրանց կաշով: Նավակները գանազան մեծության էին լինում, բայց բոլորն էլ մի տեսակի—կոլոր, վահանաձև: Նավակի մեջ, նայած նրա մեծության, գտնվում էին մի կամ մի քանի էշեր: Իրենց ապրանքը (գլխավորապես Հայաստանի ազնիվ գինի) բարձելով այդ նավակների վրա, հայ հովիվները նավում էին գետն ի վար, մինչև Բաբելոն: Այդտեղ նրանք ծախում էին ոչ միայն ապրանքը, այլ և իրենց նավերի փայտե մասերը: Մնում էր կաշին, որ բարձում էին էշերի վրա և ոտով վերադառնում էին տուն, որովհետև Եփրատի վրա հոսանքն է վեր նավարկել անկարելի էր<sup>2</sup>:

Առևտրական հարաբերությունները Բաբելոնից էլ շատ հեռու էին տանում հայերին գետերով, բայց ուրիշ ուղղությամբ: Քսենոֆոնը իր «Կյուրոպեդիա» պատմական վեպի մեջ ասում է, թե Կյուրոսը, կամենալով դեսպանություն ուղարկել Հնդկաստանի թագավորի մոտ, դիմեց արմեններին և խաղերին, որ նրանք մարդ տան՝ առաջնորդելու այդ դեսպանությունը մինչև Հնդկաստան<sup>3</sup>: Նշանակում է, որ արմեններն ու խաղերը կանոնավոր առևտրական երթևեկություն ունեին Հնդկաստանի հետ: Եվ, անշուշտ, արմենները

<sup>1</sup> Геродот, VII.

<sup>2</sup> Геродот, I, 194:

<sup>3</sup> Քսենոֆոն, «Կիրոսու Նրաթ», եր. 169—170:

<sup>1</sup> Lenormant et Babelon, „Hist.“, t. VI, p. 73 et suit.



խաղերին աշակերտեցին այդ առևտրական ուղեգնացութիւններին մեջ, մի հանգամանք, որ նորից գալիս է պատկերացնելու այդ երկու ազգերի խաղաղ ճիւղաձուլման իրողութիւնը:

Եվ պետք է ասել, որ Հայաստանի բնակիչները մենակ չէին երևում այդ հեռավոր ճանապարհին, քանի որ նա հույներին էր պատկանում, լավ պայտւարանման էր և քանուկ: Պետք էր միայն Հայկական Բարձրավանդակից իջնել Կուր գետի հովիտը: Հույներն իրենց նավակները Ռիոն գետով բերում էին մինչև Քութաիս, այնուհետև ապրանքները բեռնում էին գրաստների վրա և Սուրամի լեռնանցքով հասցնում Քիֆլիս, այստեղից էլ Կուր գետի վրայով դարձյալ նավակներով Կասպից ծովը, դուրս էին գալիս Սքսուս գետը (այժմ Ամու-Պարիս), որ այն ժամանակները Կասպից ծովն էր թափվում և այդ գետով ու նրա ճյուղերով նավարկում էին մինչև Հնդկաստանի սահմանները: Մենք արդեն գիտենք, որ Անդրկովկասում, Կուրի հովտից այդ մեծ ճանապարհի մի ճյուղը Դիլիջանի կիրճով և Անանի լեռնանցքով իջնում էր Արաքսի հովիտը և այստեղից ուղևորվում էր դեպի Ուրմիայի և Վանի լճերը:

Սույն այն հանգամանքը, որ խաղերն են հավանորեն եղել, արմենների ուսուցիչները Հնդկաստանի առևտրի մեջ, թույլ է տալիս ենթադրելու և այն, որ արհեստներն էլ ուրարտական շրջանի ծաղկման շրջանից անցան Հայաստանի այս նոր խառնուրդ ժողովրդին և նույնպես բարձր աստիճանի վրա էին գտնվում: Վանում այժմ էլ շատ զարգացած է ոսկերչութիւնը, որ այնքան նրբութեան և փարթամութեան էր հասել ուրարտացիների ժամանակ: Այս ապացույց է, որ արվեստները, օրինակ քարակոփութիւնը, մետաղագործութիւնը երկրում շանհայտացան, այլ միաձուլված ժողովրդի սեփականութիւնը դարձան: Ուրարտական ճարտարապետութեան մի քանի դրվագներն էլ մնացին հայկական ճարտարապետութեան մեջ, ոքի այս նախնական շրջանը բնորոշելու համար ոչ մի նյութ չէ մնացել, բայց որ արհեստի այնուհետև սկսեց զարգանալ հարևան ազգերի ազդեցութեան տակ, միաժամանակ մշակելով իր սեփական, վերին աստիճանի ուշագրավ ինքնուրույն ձևերը:

**6. Գրականութիւն:** Այսպիսի փոփոխման բնագոյնի շարժանցով, որքան կարելի է դատել եղած փաստերով, ուրարտական քաղաքակրթութեան փառքն ու պարծանքը կազմող սեպագծի գրութիւնը: Ինչպես երևում է, նա վաղուց մոռացված ու անհետ կորած մի գանձ էր, որ տեսնել էր ունենում արմենների և տեղացիների միաձուլումը: Ուրարտական վերջին մի շարք թագավորների ժամանակ այլևս չենք տեսնում արձանագրութիւններ. երկիրը կարճ ժամանակ անգրագիտութեան հին խավարին էր մատնվել: Համենայն դեպս, իրողութիւնն այն է, որ հայ ժողովուրդը իր պատմութեան այս առաջին շրջանում հանդիսանում է նախնական, անգիր մի ժողովուրդ:

Անգիր, բայց ոչ առանց գրականութեան: Մենք տեսնենք արդեն, որ յուրաքանչյուր ժողովուրդ իր հետ պատմութեան լույսն է բերում իր բանավոր պահանջութիւնը: Հայ ժողովուրդը բացառութիւն չափով կազմեց այս քաղաքակրթութիւնը, և չկազմեց: Նրա պատմութեան արշալույսին մենք նրան տեսնում ենք ոչ միայն պատմութիւն շինելիս, այլև վեպ ու գրույց պատմելիս, երբ երգելիս:

Քուր ազգերի նախնական գրականութիւնն է մեծ մասամբ կորել: Այս-

<sup>1</sup> De Morgan, „Mission Scien. au Caucase“, t. II, p. 140—141.

պես է և հայոց հնագույն բանավոր գրականութիւնը: Նրան վիճակված է եղել մի դաժան բանում մնալ ժողովրդի բերանում մինչև VII—VIII դարը Քրիստոսից հետո, երբ գտնվեց մի տաղանդավոր հայ դրոշ (Մովսէս Խորենացին), որ վառ օրրով վերաբերվեց ժողովրդի խոսքին ու երգին և գրի անցկացրեց այն, ինչ հանկավոր էր նրան այդ բանավոր գրականութիւնից իբրև աղբյուր՝ հայոց հին պատմութիւնը գրելու համար: Բայց այս բազմերկա ծերունու ժամանակ արդեն շատ բան չէր մնացել: Մեծագույն մասամբ պատահիկներ էին, որ երգում էին, հնութեան հավատարիմ մնալով, հայ գուսանները: Պահպանվել էին և գրույցներ, վեպեր և դրանցից մի երկուսը նույնիսկ ամբողջութեամբ: Բայց Խորենացին այդ ամբողջութիւնները հարազատութեամբ չէ արտագրել իր գործի մեջ, այլ պատմել է իր խոսքերով, ինչպես լսել է ուրիշներից իր ակամեջով կամ կարգացել է իրեն հասած գրավոր աղբյուրներում: Բացի այս հանգամանքից՝ միակողմանութիւնն էլ մյուս կողմից գալիս է արդեւ լիով պատկերը: Խորենացուն հարկավոր են եղել միայն պատմական երգերը Եփեսոսի ուրիշը նրա շափ սեր ունենալի դեպի բանահյուսութեան այլ ճյուղերը և հավաքել պատմականներ հին հայկական քնարերգութիւններից, կրօնական-ծիսական երգերից և այլն, այն ժամանակ մենք ավելի բազմակողմանի տեսնելով իրենց կամբողջացնելու հայ ժողովրդի ստեղծագործական հանձարի տեսնութիւնը:

Եվ այսպես, հայ գրականութեան հնագույն շրջանից մենք ունինք բանահյուսութեան այն ձևը, որ կոչվում է վեպ (էպոս): Տեսնելով Խորենացու հաճախ դիմումները հայկական վեպին, բանասերներից մեկը՝ հայտնեց այն միտքը, թե հնում Հայաստանի մեջ եղել է մի մեծ դուրսագնացութիւն, պարսկական «Շահնամի» նման, որ պարունակում էր իր մեջ հայ թագավորների պատմութիւնը: Սակայն եվրոպացի հայագետները շնորհակալով այդ կարծիքին ասում են, որ հին բանահյուսութեան այդ հիշատակարանները առանձին-առանձին երկեր էին, ավելի գեղուններ (բալլադ), քան մեծ քերթվածներ: Բայց այս տեսնութիւնները միշտ թեանկան կմեան, քանի որ մենք չունինք բանահյուսութեան այս երկերի ամբողջութիւնը:

Մի բան միայն անհասկած է, որ մենք ունինք մեր առջև հնագույն վեպ, իսկ սա, ինչպես տեսանք մեր «Նախնայապատրաստութեան» մեջ<sup>3</sup>, առանձնացած և ինքնամոփոփ մի կերտվածք չէր, այլ պարունակում էր իր մեջ արվեստի մյուս տարրերն էլ՝ քնարերգութիւն, դրամա: Եվ այս երեք ճյուղերը, թեև միացած, առանձին ձևերով էին արտահայտվում արվեստի մեջ: Հայ գուսանները, ինչպես և ժողովրդական երգիչները ուրիշ ազգերի մեջ, ոչ միայն պատմում էին, այլև երգում էին, ներկայացնում էին պարերով, դիմախաղերով և մեղկատակութեամբ և այս բոլորին ընկերակցում էր երաժշտական գործիքը, բամբակը: Նույնիսկ Խորենացու ժամանակ (VII—VIII դար) դեռ գոյութիւն էին պահպանում «ցցոց», «պարոց», «թվելյաց» երգերը<sup>4</sup>, որոնք հին դուրսագնացութեան արվեստի բեկորներն էին, անշուշտ:

Ինչպե՞ս էին ստեղծվում բանավոր վեպերը: Մեր ժողովրդի մեջ այժմ էլ

<sup>1</sup> Սկիզբից էմի. տե՛ս նրա «Վէպի հնայն Հայաստանի», Մոսկվա, 1850:  
<sup>2</sup> «Հայկական Աշխատութիւնը հայագետ Պ. Յեթերի», թարգ. Լ. Լ. Տաշյան, Վիեննա, 1895, էր. 27.  
<sup>3</sup> Գլ. 9, 3.  
<sup>4</sup> Խորենացի, Ա, 4.

ապրում է մի մեծ պատմական բերթված— Մասունցի Դավիթ և Մհեր, որ և կարող է ծառայել իբրև նմուշ՝ մեր հնագույն դուցազններգութունների ծննդաբանությունը ճանաչելու համար:

Ժողովուրդն իր հիշողության, երգի ու պատմվածքի մեջ տեղ կարող էր տալ այն անձերին, որոնք հերոսներ էին, որոնք նրա հասկացողության տեսակետից խոշոր, արտասովոր երևույթներ, բնության ուժեր էին մարմնավորում: Մի սերունդ մի կամ մի քանի սերունդների գործեր էր պատմում, մյուս սերունդն ավելացնում էր դրանց վրա իր հերոսին կամ հերոսներին և այսպիսով դուցազնական վեպը գնալով նորանոր շերտեր էր ընդունում իր մեջ, մինչև որ ենթարկվում էր վերջնական մշակման և մի որոշ խմբագրական ձև ընդունելով, ժողովրդական բանահյուսության սեփականութունն էր դառնում արդեն իբրև վերջացած գեղարվեստական երկ: Ժամանակի երկար տարածությունը սերունդների հաջորդականության մեջ մտացնել է տալիս շատ բան հնագույն շերտերից, խառնում, շփոթում է եղելութուններն ու դեմքերը, ջրնջում, անհետացնում է ժամանակագրական կարգը, այնպես որ աստվածը դառնում է հերոս կամ փոխադարձաբար (օրինակ, Վահագն): Դարերի ընթացքում գոյացած խառնուրդը, այնուամենայնիվ, չէ կարողանում մեռցնել ժողովրդական ստեղծագործության բուն նպատակը, որ անցյալի և նրա գործիչների հիշատակն անմեռ պահելն է: Եվ ահա զանազան ժամանակ կազմված և զանազան ժամանակ փոփոխություններ կրած շերտերը, եթե կարելի է այսպես ասել, պեղելով ու վերլուծումների ենթարկելով, կարելի է լինում գատել զուտ պատմականը առասպելից, գտնել, թե ինչ է ժողովուրդը թաքցրել այս կամ այն այլաբանության մեջ, ինչպես է իր անցյալ կյանքի հիշատակները ծրարել նույնիսկ հեթաթեների մեջ: Այս կերպով է ահա, որ XII—XIII դարերում վերջնականապես խմբագրած «Դավիթ և Մհեր» վեպի մեջ գտնում ենք ոչ միայն պատմական դեպքեր ու դեմքեր, որոնք մոտ են այդ ժամանակին, այլև օրինակ, հին Մհեր աստծուն, փոխակերպված Մհեր հերոսի անձնավորության մեջ<sup>1</sup>:

Այսպիսի վերլուծողական աշխատանք կատարել է և Մովսես Խորենացին իր ձեռքի տակ եղած ժողովրդական նյութերի վերաբերմամբ: Հարցն այստեղ այն չէ, թե որքան հաջող կերպով է նա կարողացել կատարել այդ աշխատանքը: Հայոց գրականության վերաբերմամբ հռչակավոր ծերունին այն ահագին ծառայությունն է մատուցել, որ տվել է մեզ, որքան, իհարկե, կարողացել է, նրա հուշարձանները ամենահին ժամանակներից և մենք նրա տված նյութերին հետևելով, կարող ենք մեր բանավոր գրականության զարգացումը դիտել, խոր հնությունից դեպի առաջ գալով:

Ամենից հին վիպական կառուցվածքները նախահայկական շրջանին են պատկանում և սկսվում են ջրհեղեղյան ժամանակներից: Խորենացին ունի երկու կտոր, որոնք սաստիկ մաշված են, հազիվհազ արձագանք կարող են համարվել հին վեպից մնացած<sup>2</sup>: Այստեղ հանդես է գալիս հարավային Հայաստանը իր ավանդություններով, որոնք կապված են Միջագետքի կուլտուրական աշխարհի հետ, ասել է՝ մենք ունինք մեր առջև նախահայկական միջավայրի որի ստեղծած զրույցը սակայն, հետո, արմենա-ուրարտական ձուլման հետեւանքով, արիականացել է, ստանալով հնդեվրոպական գունավորումներ, որոնք

<sup>1</sup> Մանուկ Աբեղյան, «Հայ ժողովրդական վեպը», Թիֆլիս, 1911:  
<sup>2</sup> Խորենացի, Ա, Գ:

արտահայտվում են գործող հերոսների անունների մեջ: Այս զրույցը, անշուշտ, մի փոքրիկ պատառիկ է մի հին, գուցե կրոնական-աստվածածնական մեծ զրույցի: Նրա՝ մեզ հայտնի բովանդակությունը շատ անարվեստ ու նախնական է: Երեք եղբայրներ կան, որոնք, ջրհեղեղից հետո, տիրում են աշխարհին— Զրվան, Տիտան և Հապեսթոստ: Ինչպես միշտ, տիրողների մեջ կռիվ է ընկնում, թե ո՞վ պիտի լինի ամենքի գլխավորը: Եվ Զրվանն է, որ մեր այս պատառիկի մեջ բռնանում է մյուս եղբայրների վրա:

Ըստ երևույթին, օտար է այս զրույցը, ինչպես օտար են նրա հերոսները: Բայց ահա նրանց կռիվը մեջտեղ է բերում նրանց ջրոջը, որ արդեն զտարյուն հայուհի է, Աստղիկ անունով: Աստղիկը հաշտեցնում է իր եղբայրներին: Բայց և այնպես, որպեսզի Զրվանի տոհմը շուտեղանա, երկու եղբայրները վճռում են կոտորել նրա բոլոր արուններին: Այստեղ էլ ահա նորից Աստղիկն է, որ Զրվանի կանանց հետ կարողանում է համոզել եղբայրներին, որ Զրվանի արու որդիներից գտնե մի քանիսին խնայեն: Այս խնայվածներին ուղարկեցին բնակվելու արևմուտքի մի սարի վրա, որ կոչվեց Դյուսթրնկեց:

Այստեղ էլ կտրվում է զրույցը և գալիս է մի ուրիշ պատառիկ, որ պատկանում է նույն շրջանին, գուցե և նույն գործիչների միջավայրին: Խորենացին հավատացնում է, թե ինքը այս զրույցը վերցրել է հունական ավանդություններից: Իբր թե հույն փիլիսոփաները պատմելիս են եղել, թե իրենք կարողացել են մի գիրք<sup>1</sup>, որի մեջ տեղեկություններ կային, թե ի՞նչ եղան Քսիստեթրի որդիները: Ինչպես հայտնի է, Քսիստեթրը բարեկական Նոյն է, գլխավոր գործող անձը ջրհեղեղյան պատմվածքի մեջ, որ նախապես կազմվել է Բաբելոնի շրջանում: Քսիստեթրի նավը կանգ է առնում հայկական Տավրոսի գագաթներից մեկի վրա, որ ինչպես գիտենք, Սարդուտ էր կոչվում: Մեր զրույցը պատմում է, որ Քսիստեթրի որդիներից մեկը, Սիմ անունով, գնաց հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք և հասնելով մի բարձր լեռան, իր անունով կոչեց նրան Սիմ: Ինչպես գիտենք<sup>2</sup>, Սիմը Սասունի լեռների անունն է: Նշանակում է, որեմբ, որ Սիմը այդտեղ փկավ Վանի լճի հարավում գտնվող լեռներից: Սիմը դարձյալ վերադառնում է իր տեղը, հարավ-արևելք, իսկ նրա որդի Տարբասը, հավաքելով իր երեսուն տղաներին, տասնևհինգ աղջիկներին և սրանց ամուսիններին, գնում է բնակություն հաստատում նույն Սիմ լեռան մոտ փոխած դաշտում: Նրա անունով էլ, ասում է վեպը, ամբողջ գավառը կոչվեց Տարոն, իսկ այն տեղը, որ նա բնակվեց, անվանվեց Ցրոնք, որովհետև, բացատրում է արդեն ինքը Խորենացին, այդտեղ էր, որ նա բաժանվեց իր որդիներից: Ցրոնք անունով գյուղ այսօր էլ գոյություն ունի Մուշի դաշտում:

Այս մի փոքրիկ, հասարակ դիպված է, որ չէր կարող դառնալ առանձին մի զրույցի նյութ, մանավանդ Խորենացու ասելով, հենց այս վեպն էր, որ պատմվում էր պարբերով, երգերով և նվագածութայամբ, հետևաբար նա պիտի ունենար և համապատասխան հետաքրքրող և ցնցող բովանդակություն: Ուրեմն այստեղ էլ մենք ունինք մի պատառիկ միայն, որ, սակայն, նախընթացից ավելի է մաքուր մնացել հետնորդ արիական խառնուրդներից և ներկայացնում է հարավային Հայաստանի նախահայկական բանահյուսության մի հարազատ նմուշը:

Այս փոքրիկ պատառիկից մենք անցնում ենք արդեն մի ամբողջ դլու-

<sup>1</sup> Երկի, Բերդի պատմությունը:

<sup>2</sup> Տե՛ս վերև, «Աշխարհագրություն»:

ցազնավեպի, որ դարձյալ հարավային Հայաստանում և հատկապէս Վանի լճի կապուտակ հորիզոններում է հյուսիս և համազգային հռչակ ստացել: Նախընթաց պատմութիւն մեզ մենք տեսանք մի երկու մասնավոր տեղերի անվանադիրներ (կայսնիմ) — Սիմ և նրա որդի Տարբան: Այժմ Հայկն է, արդեն ամբողջ ազգի և ամբողջ հայրենիքի անվանադիրը:

Ինչպես վայել է մի ազգի հոր, Հայկը հսկա է, ապրում է հսկաների մեջ: Բայց տիտանական աշխարհում կոպիտ ուժն է տիրում և ամեն մեկը ձգտում է իր հզոր բունցքի իրավունքը դարձնել օրենք ամենքի համար: Եվ միակն է Հայկը այդ աշխարհի մեջ, որ բունցքի իրավունքի թշնամին է և որոնում ու պահանջում է արդարութուն: Այս հոգի վրա սաստիկ թշնամութուն է առաջանում Հայկի և Բարեկունյան հսկա Բելի մեջ: Սա իր ջերմատ Միջագետքից անագին զորքով գնում է Վանի լճի ավազանը, որ Հայկի տիրապետութեան ենթարկված երկիրն է: «Բնակվեցիր, — ասում է Բելը իր դեսպանի միջոցով Հայկին, — բնակվեցիր սառնամանիքների ցրտի մեջ, բայց տաքացնելով մեզ մայրո՛ւ բո հպարտ բարքի սառած ցրտութունը և հնազանդվելով ինձ, ապրիր և բնակվիր հանդարտութեամբ, ուր որ հաճելի է քեզ իմ երկրում»: Պատասխանն, իհարկե, բացասական է: Տիտանների մենամարտութուն է պատրաստվում:

Վեպը բանաստեղծական մանրամասնութուններով նկարագրում է ախոջաններին ու նրանց մարտը: Հայկը — ահա՛. «Գեղապաշտած և անձնեայ, բաշազանգուր, խայտակն և հաստաբազուկ»: Նա աղեղնավոր է, հսկաների մեջ քաջ ու երևելի: Իսկ Բելը — տիտանյան արքա, ծածկել է իր գլուխը կրկաթե գլխանոցով, թիկունքը և լանջը՝ պղնձե տախտակներով, բազուկներն ու սրունքները՝ պահպանակներով, մեջքին գոտի և ձախ կողմից՝ կրկապրիկ սուր: Շրջապատված է ընտիր զինվորներով: Ունի նիզակ և վահան:

Պատերազմը տեղի է ունենում «Աղի լճի», այսինքն Վանի ծովակի մոտ, այն գավառում, որ հենց հալ հերոսի անունով էլ այնուհետև կոչվեց Հայոց Զոր: Բելն աշխատում էր իր խառնիճաղանջ զորքի բազմութեամբ ճնշել իսկ Հայկի համար մի նշանաբան կա՝ «ազատութուն կամ մահ»: Իր զինվորներին, որոնք իր ամբողջ տոհմն են ներկայացնում, բարեկամ-ազգայականներ, նա ասում է, «Կամ մեռնենք, և մեր տունն ու տեղը Բելի ձեռքն ընկնեն, կամ մեր մատների հաջողութունը ցույց տալով նրա վրա, ցրվենք նրա ամբոխը և հաղթութուն վաստակենք»: Պատերազմը, հին սովորութեամբ, մենամարտով է սկսվում: Հայկը հարձակվում է իր թշնամի և իր նման տիտանյան թագավորի վրա՝ «Պինդ քաշեց, — ասում է վեպը, — իր լայն, լճի շափ լայն աղեղը, դիպցրեց երեքթևյան նետը Բելի կրծքի տախտակին, և սլաքը թիկունքի միջով թափանցելով, ընկավ գետին»: Հսկայական հարվածը բավական էր բաթելական ամբողջ արշավանքի բախտը վճռելու համար: Բելը դիակ է, իսկ նրա զորքը փախչում է: Ազատված է այն փոքրիկ տոհմը, որի անունով, ինչպես ասում է վեպը, պիտի կոչվեր բազմաթիվ այդպիսի տոհմերից կազմված ազգը: ազատվեց և այն փոքրիկ Հայք գավառը, որի անունը պիտի անցներ, դարձյալ վեպի ասելով, ամբողջ Հայկական Բարձրավանդակին: Հայ դուրսագնքը վայելում է իր հաղթանակը կատարյալ հանգստութեամբ: Բազմաթիվ կանայք ու երեխաներ ունի նա, և Բելի դիակը թաղել է տալիս մի բարձր տեղ, որ իր կանայք և տոհմը տեսնեն նրան և հիշեն իրենց հսկա գլխավորին:

Վանի լճի շրջանում էլ վախճանվում է Հայկը: Տեղային, գավառական մի հերոս, նա հենց այդ գավառական անկյունից էլ բարձրանում է հալ ազգի երկնակամարը, դառնում է այնտեղ համաստեղութուն, ցուցն և աստված:

քանի որ երկրի վրա, մարդկանց մեջ, նա արդեն կիսաստված էր: Նրա հսկանակորդ Բելն էլ, ինչպես հայտնի է, աստված էր Բարեկունում:

Նրանից հետո է, որ սկսվում է նրա ցեղի շարժումը դեպի հյուսիս, դեպի Արաբսի հովիտը, և մենք արդեն տեսանք, թե նրա հաջորդների հետ կապված ավանդութունները որքան մոտիկ են ուրարտական սեպագրութունների մեջ նկարագրված նվաճողական արշավանքներին: Եվ անշուշտ, դարձյալ ժողովրդական բանահյուսութունն էր, որ ավանդության, առասպելի, գրուցների ձևով պահել էր այդ եղելութունների աղոտ հիշատակութունները մինչև որ նքանք գրի կառնվեին:

Հայկը քաղդեական ազդեցության ժամանակների մրցութուններն է մարմնավորում: Հայ ժողովրդական բանահյուսութունը ավելի շատ հիշատակներ է պահել ստորական պայքարների ժամանակից, որոնք թե՛ երկարատև էին և թե՛ ժամանակով ավելի մոտիկ էին այն շրջանին, երբ հալ ժողովուրդն էր կազմակերպվում: Այստեղ մենք տեսնում ենք Արամին, որ, գիտնականներից ոմանց կարծիքով, ուրարտական Արամեն է: Արամն էլ, ինչպես երևում է Խորենացու վկայութունից<sup>1</sup>, ունեցել է իր վեպը, որ գուսաններն էին կազմել: Այս վեպի գաղափարն էլ հայրենասիրութունն էր: «Սա, — ասում է Խորենացին, — աշխատակիր և հայրենասեր մարդ լինելով, լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարազգիների որդիներն ոտի տակ էին տալիս հայրենի սահմանները և օտարազգի մարդիկ տիրում էին իր արյունակից հարազատների վրա»<sup>2</sup>:

Այսպիսի գաղափարներով տարված Արամը կատարում է մի շարք մեծ քաջագործութուններ. հաղթահարում և ձերբակալում է մարացի Նյուբարին, որ շարունակ ասպատակում էր Հայաստանը և երկու տարի պահել էր նրան գերութուն մեջ: Այս ավազակային շահատակութունների առաջնորդին Արամը կախեց իր մայրաքաղաքի աշտարակից երկաթե մեծ մեխ տակելով նրա ճակատին: Երկիրն այս վտանգից ազատելուց հետո Արամը գնաց մյուս մեծ վտանգի, Ասորեստանի դեմ և կովի մեջ սպանեց նրա Բարշամ թագավորին: Եթե ինկատի ունենանք, որ Բարշամը ստորական աստված էր, այն ժամանակ կարող կլինենք ընդունել, որ Արամն էլ, Հայկի պես, իր քաջութունների համար կիսաստվածների կամ հենց աստվածների շարքն անցավ: Վեպը պատմում էր և Արամի կոփվելը արևմուտքում, Տիտանյանների դեմ և պատկերացնում էր, թե ինչպես հին ժամանակները ազգային լեզուն գործ էր անվում իբրև պետութուն կազմելու շաղախ: Արամը, նվաճելով Կասպոնիկան, հրամայեց որ ամենքը հայրենի խոսեն: Հայ առասպելների մեջ Արամը Հայկին համապատիվ է համարվում և նրանով, որ Արամն էլ, իբր թե, անվանադիր էր հալ ազգի համար: Իբր թե նրա անունով է, որ օտար ազգերը հայրենի Արամն ին անվանում:

Ամբողջովին վեպ է, այն էլ սրտառուչ վեպ, Արամի որդի Արայի պատմութունը: Արամն, ինչպես գիտենք, աստված էր ուրարտական պանթեոնի մեջ: Նրա վրա սիրահարվում է Ասորեստանի վավաշտ Շամիրամ թագուհին, որ նույնպես առասպելական մի անձն է համարվում, ավելի մի գեցուհի: Գեղեցիկ է Արամ, և Շամիրամը ցանկալով ցանկանում է ունենալ նրան իր ամուսին կամ, եթե այս անհնար է, գեթ ժամանակավոր սիրական: Սա-

1 Ա, ժդ:

2 Քարդմ. Ստեփաննի, Ա, ժգ:

կայն Արան մերժում է այս առաջարկությունը, հանդիսանալով այսպիսով ամուսնական հավատարմության և ողջտխտհույսի գաղափար: Ծամիրավը տոչորվելով ցանկությունից, մեծ գորքով գնում է Արայի վրա՝ նրան հափըլտակելու և յուրացնելու համար և կովի ժամանակ հրամայում է շսպանել նրան, այլ ողջ բռնել: Բայց Արան սպանվում է: Հուսահատ Ծամիրավը գրտնում է նրա դիակը և դնում է իր ապարանքի վերնատանը, որպեսզի աստվածները (երևի արալեզները) գան լիզեն նրա վերքերը և նորից կենդանացնեն: Տեսնելով, սակայն, որ դիակը նեխվում է, հրամայեց թաղել նրան և լուր տարածեց, թե աստվածները կենդանացրել են Արային և իր ցանկությունը կատարված է: Այս ասելով, նա ցույց էր տալիս իր սիրականներից մեկին, որ ծայտված էր Արայի նման:

Ծամիրավը, ինչպես տեսանք, ժողովրդի ավանդությունների մեջ կայել է իր անունը Վան քաղաքի հետ: Նրան էին վերագրվում ուրարտական մեծ թագավորների կատարած շինարարական գործերը: Այսպիսի մի առասպելական մեծագործ անձ չէր կարող հետք չթողնել ժողովրդական վեպի մեջ: Եվ իրավ, Խորենացին պատմում է, թե ինչպես էր հայկական վեպը նկարագրում հուշակավոր թագուհու սպանությունը Հայաստանում: Նրա ետևից են ընկնում սուսերավոր սպանողները, նա փախչում է ոտով: Նկարագրում էր, թե ինչպես նա ծարավեց, ինչպես ջուր խմեց, և տեսնելով որ սպանողներն արդեն մոտենում են, վերցնում է իր թալիսմանը (հուռուլթը) և գցում Վանի լիճը: Այս բանի վրա երգ էր շինված, որ սկսվում էր «Ուլունք Ծամիրամալի ծով» խոսքերով:

Ծամիրամով վերջանում է հայ ժողովրդական վեպի առաջին, նախնական շրջանը, երբ խոսողը նախահայկական ժամանակներն են և տիրողը բարեխա-ասորական ազդեցությունն է: Այնուհետև գալիս է զուտ հայկական շրջանը, ուր արիական է միջավայրը և տիրապետողը՝ արդեն մարա-պարսկական ազդեցությունն է:

Այս ազդեցության հնագույն շրջանում, այսինքն հայության պատմության արշալույսին, մենք արդեն տեսանք մի կիսավիպական անձնավորություն, մի Տիգրան թագավորացն, որ Քսենոֆոնի «Կյուրոպեդիայի» գլխավոր հերոսներից մեկն է: Նա Կյուրոսի մտերիմն է, գործում է նրա հետ միասին և այս հանգամանքից պատմագետները հետևեցնում են, թե Տիգրանը Կյուրոսի մերձավոր աշխատակիցն էր նրա պատերազմների մեջ, մանավանդ մարաց Աստիագ (հայերեն Աժդահակ) թագավորին ընկճելու մեջ: Զուր չէր իհարկե, որ այդ Տիգրանին Քսենոֆոնն ընտրեց հերոս իր շարադրած պատմական վեպի համար: Նույն այս Տիգրանը իր քաջություններով, իր ազնիվ և կիրթ բնավորությամբ, ինչպես երևում է, դարձել էր հերոս և հայ ժողովրդական վեպի մեջ: Խորենացին գրի է առել այդ վեպի այն մասը, որ Տիգրանի և Աժդահակի մեջ գծություն է սկսվում, որ հանգում է մարաց թագավորի համար ճակատագրական վախճան ունեցող պատերազմի:

Այսպես են այդ գծությունների հանգամանքները: Տիգրանն ուժեղ է, գեղեցիկ արտաքինով, խելոք: «Նարտեաշս այս,— ասում է վեպը,— և աղբյուր ծայրի հերաց Երուանդեանս Տիգրան, երեսօք գունեան և մեղուակն, անձնեայն և թիկնաւէտն, առոյգաբարձն և գեղեցկոտն, պարկեշտն ի կերակուրն և յըմպելիս ի խրախճանութիւնս օրինաւոր»: Գուսանները երգում էին և այն:

<sup>1</sup> F. Lenormant et E. Babelon, „Hist. Anc.“, t. V, p. 443.

որ Տիգրանը մարմնական ցանկությունների մեջ էլ չափավոր էր, մեծիմաստ և ճարտարախոս և ամեն գործի մեջ՝ պիտանի մարդկության: Այս առաքինական նկարագրությունների մեջ ժողովրդական վեպը միանգամայն համընթաց է Քսենոֆոնի վեպի հետ: Տիգրանն սկզբում Աժդահակի բարեկամն էր: Այս հանգամանքն էլ ցուցադրված է «Կյուրոպեդիայի» մեջ: Բայց հետո նա մտերմանում է Կյուրոսի հետ:

Հայի և պարսկի այս մտերմությունը մեծ մտատանջություն էր պատճառում Աժդահակին, որ արդեն նկատում էր Կյուրոսին իբրև մի հակառակորդի, որ ձգտում էր խլել իր թագը: Այս մտատանջության մեջ Աժդահակը մի գիշեր տեսնում է սարսափելի մի երազ և այնքան վախենում է, որ վեր կենալով գիշերվա մեջ, կանչում է իր խորհրդականներին և խնդրում է նրանց բացատրել իր երազը: «Այսօր, ասում է նա, ես, ո՛վ իմ սիրելիներ, գտնվում էի մի երկրում, մի բարձր բնան մոտ, որ բարձրացած էր հողի վրա և որի գագաթը թվում էր ծածկված սառույցներով: Ասում էին, որ իբր դա հալոց երկիրն էր: Մինչդեռ ես ակնդետ նայում էի այդ սարին, իմ աչքին երևաց մի կին, որ նստած էր նրա գագաթին, հագած ունեք ծիրանի և ծածկված էր երկնազույն վերարկուի մեջ: Այդ բարձրության ծայրին նա երևում էր աչեղ, բարձրահասակ և կարմրալու: Նա բռնված էր երկունքի ցավերով: Երկար ես հիացած նայում էի այդ երևույթին և տեսա, որ կինը հանկարծ ծնեց հասակով և բնությունը կատարյալ երեք գյուցազուններ: Առաջինը առյուծի վրա նստելով, սլացավ դեպի արևմուտք, երկրորդը ինձ վրա գնաց դեպի հյուսիս, իսկ երրորդը, սանձելով մի հրեշավոր վիշապ, հարձակվեց մեր տերության վրա: Այս խառն երազի մեջ ինձ երևում էր, թե կանգնած եմ իմ պալատի տանիքի վրա: Տեսնում եմ հարկերի ամբողջ վերին երեսը ծածկված գեղեցիկ և բազմաթույն գորգերով, տեսնում եմ այն աստվածներին, որոնք պսակել են մեզ և որոնք կանգնած էին մի հիացուցիչ վեհությունը: Իսկ ես, ձեզ հետ, մեծարում էի նրանց զոհերով և խնկով: Նայելով բարձր, ես հանկարծ տեսա, որ վիշապի վրա նստածը արծվանման թևերով սլանալով, ուզում էր խորտակել աստվածներին: Բայց ես, Աժդահակս, ընկա նրանց մեջ, դյուցազնի հարձակումը ինձ վրա ընդունեցի և նրա հետ կովի բռնվեցի: Առաջ մենք նիզակներով իրար վերքեր էինք հասցնում և առուններով արյուն թափելով, մեր պալատի արեգականման տանիքները արյան ծով դարձրինք: Այսպես, մենք կովեցինք շատ ժամ և ուրիշ գեներներով... Բայց ես ի՞նչ օգուտ ունիմ շարունակելու այս պատժվածքը, քանի որ բանը վերջացավ իմ կործանմամբ: Սաստիկ քրտինքը, որ պատճառեց վախը, ողողեց ինձ. քունը փախավ ինձնից. այն ժամից ես ինձ չեմ համարում ապրողների մեջ: Այս տեսիլը ուրիշ բան չէ ցույց տալիս, բայց միայն որ Տիգրանը պիտի հարձակվի մեզ վրա»:

Խորհրդականները շատ իմաստուն խորհուրդներ են տալիս: Աժդահակը շնորհակալություն է հայտնում նրանց և ասում. «Լսելով ձեզանից, սիրելիներ, շատ իմաստուն և խելացի բան, ես էլ իմ կարծիքներն ու մտքերը կհայտնեմ, որոնք ներկա դեպքում, աստվածների օգնությունից հետո, կարող են օգտակար լինել: Թշնամիների վերաբերմամբ, շնայելով նույնիսկ, որ նրանց մտադրությունները հայտնի են, ոչ մի բան այնքան օգտակար չէ, ինչպես դավադրությունը, որ կատարվում է բարեկամության միջոցով: Եվ այս այժմ կարելի է անել ոչ թե գանձերի և խաբեական խոսքերի միջոցով, այլ գործելով այնպես, ինչպես ես եմ մտածել. իմ միտքը կկատարե և ցանցեր կփռե Տիգրանի թույրը, Տիգրանուհին, գեղեցիկը և խոհմը կանանց մեջ»:

Որովհետև այսպիսի ձևական և հկամուտ հարազատությունը շատ կթեթևացնեն դավադրության կատարումը, երբ կսկսվեն թաքուն հարաբերությունները Այն ժամանակ հարստություններ և պատիվներ խոստանալով Տիգրանի մերձավորներին, կարելի է հրաման տալ, որ կամ սպանեն նրան սրով, կամ թաքնավորեն, կամ թե խոստանալով գանձեր նրա մերձավորներին, կղուսակալներին, մեր կողմը գրավել նրանց: Այն ժամանակ մենք ձեռք կառնենք Տիգրանին իբրև մի անզոր տղայի»:

Այս միտքը հավանություն է գտնում և Աժդահակը նամակ է գրում Տիգրանին և խնդրում է նրա գեղանի քրոջ ձեռքը: Հայոց թագավորը չէ մերժում այդ առաջարկը և Տիգրանուհին արքայական պատիվներով հարս է գնում մարաց արքունիքը: Աժդահակն ընդունում է նրան մեծ պատիվներով և դարձնում է նրան առաջինն իր կանանց մեջ: Առանց այս նոր տիկնանց տիկնոջ հետ խորհրդակցելով թագավորը, — ասում է վեպը, — ոչ մի բանի չէր ձեռնարկում: Եվ այսպես սեր և մտերմություն ցույց տալուց հետո, Աժդահակն սկսում է պատրաստել նրան Տիգրանի դեմ դավադրություն սարքելու համար: Տիգրանուհին պիտի կորուստ պատրաստեր իր եղբոր համար: «Զեսասի որ քո եղբայր Տիգրանը, դրդված իր Զարուհի կնոջից, նախանձում է քեզ, որ արեաց վրա տիկնություն ես ստացել: Եվ ինչո՞վ այս կարող է վերջանալ, եթե ոչ նրանով, որ Տիգրանը կսպանե ինձ և Զարուհուն քո տեղ արեաց տիկին կկարգե: Այժմ քեզ մնում է ընտրել երկուսից մեկը — կամ քո եղբոր սիրուց համաձայնվել խայտառակ կերպով ստորանալ արիացիների աչքում, կամ թե քո սեփական երջանկովս համար ինձ մի խորհուրդ տալ և հոգալ առաջիկայի մասին»: Այս խորամանկ խոսքերը նա բացատրեց իր կնոջը ավելի պարզ կերպով և նույնիսկ նախազգուշացրեց, որ եթե շմասնակցե դավադրության, սպանված կլինի:

Գեղանի հայուհին չէր կարող իր եղբորը դավաճանել, քանի որ չափազանց սիրող մի քույր էր: Բայց նա դիմում է խորամանկության՝ մարիին խաբելու համար: Իր սիրային զեղումներով է նա պատասխանում իր ամուսնուն, բայց միևնույն ժամանակ գաղտնի կերպով իմաց է տալիս եղբորը, թե ի՞նչ է պատրաստվում նրա դեմ: Աժդահակը իր աներձագին հրավիրում է տեսակցության, որի տեղ նշանակվում է հայ-մարական սահմանը, կարևոր խորհրդակցության պատրվակով: Տիգրանը, իր քրոջից նախազգուշացված, ահագին զորքով է գնում Աժդահակին հանդիպելու: Սկսվում է ահեղ պատերազմ: Երկու կողմն էլ լավ են պատրաստված, երկու կողմն էլ հսկաներ են, բախվում են ահագին ուժով: Բայց Տիգրանը սպանում է Աժդահակին, նիզ գակով ջրի պես պատռելով նրա երկաթե կրծքակալը, շամփրելով նրա կուրծքը նիզակով, որի լայն ծայրով կտրում և դուրս է հանում նրա թոքերի մի մասը: Հաղթությունը այնուհետև հայերին էր պատկանում: Տիգրանն ազատեց իր սիրելի քրոջը, ուղարկեց նրան Հայաստան իր շինած Տիգրանակերտ ավանը, ուր նրա սերունդներից առաջացած ազնվականությունը կույժեց Ոստան:

Եվ այսպես, հայկական վեպը Տիգրանին էր վերագրում Աժդահակի մահը և Մարաստանի գրավումը, մի բան, որ օտար պատմվածքները համարում են Կյուրոսի կատարած գործ: Մի վեպի համար, իհարկե, անպատեհություն չէր, որ ազգային հերոսին բարձրացնելու համար նրան վերագրվում էին ոչ միայն ամենամեծ գործեր, այլև ուղղակի աստվածային ծագում, հրաշագործություն: Եթե ճիշտ որ Տիգրանը Կյուրոսի աջ թևն է եղել նրա պատերազմ-

ների մեջ, հեշտությամբ կարող էր պատահել, որ ճակատամարտի դեպքերից մեկը, ամենից խիստ աչքի ընկնողը, իրավունք տար գուսանին Տիգրանի այդ դեպքի մեջ կատարած դերը հասցնել մինչև վերջնական հաղթանակի աստիճանին: Այսպիսի դեպքեր հազվագյուտ չեն և մեր օրերում: Տեսե՛ք ինչպիսի խանդաղատանքով է վեպը փարում իր սիրած հերոսին. «Բայց գովեմ զթաշահասակն զիմ և զնիզակաւորն և զամենկին բոլոր անդամովք համեմատն և ի գեղեցկութիւն ավարտեալ հասակի. քանզի առոյգ ամենայնիւ ըստ իրեարս պատշաճեալ, և ուժով ոչ զքո իր ունելով զոյգ»:

Վեպն ավելացնում է և այն, որ Տիգրանը Աժդահակի առաջին կին Անուշ շին գերի բերեց Հայաստան և նրա հետ նաև մարական մի գաղթականություն, որ, ինչպես երևում է, բազմաթիվ էր և նրա բնակության համար Տիգրանը հատկացրեց Արաքսի հովիտը — Նախճավան, Շարուր գավառները: Անուշ թագուհուց էլ առաջացավ, հավատացնում է նույն վեպը, վիշապազուն ժողովուրդը: Բայց այստեղ, ակնհայտ է, վեպի մեջ մտել են շփոթություններ Ազգասարակ խիստ նկատելի է, որ նրա մեջ հետագայում խառնվել են շատ տարրեր մի ուրիշ նշանավոր Տիգրանի, այն է՝ Տիգրան Մեծի վեպից:

Արվեստի տեսակետից հայ ժողովրդական վեպը շատ գեղեցկություններ ունի և մի եվրոպացի ուսումնասիրող իրավացի կերպով նկատում է, թե հոմերական ճաշակ ու արվեստ է երևում հենց Տիգրանի վեպի մեջ: Բայց շատ ուշագրավ է և մեր մինչև այժմ հիշատակված վեպերի բովանդակությունը, որը մեջ ժողովուրդը դրել է իր իդեալները: Այստեղ մենք տեսնում ենք և՛ հայրենիքի ազատության գաղափարը, և՛ ամուսնական հավատարմությունը, և՛ քույր-եղբոր վառ ու անխարդախ սերը:

Վեպի դյուցազն է և Տիգրանի որդի Վահագնը, որ հին հայկական աստվածուհու անունն էր կրում և հենց այդ պատճառով էլ հետագա դարերում նույնացավ վեպ այդ աստվածուն, և խորենացին կարծում է, թե հենց Տիգրանի որդու մասին էր խոսվում «Երկնէր երկին և երկիր» երգի մեջ: Բայց այս, իհարկե, սխալ է: Հռչակավոր երգը, որ մենք բերինք վերևում, մի կտոր է հնագույն կրոնական մի քերթվածի և չափազանց մեծ նշանակություն ունի այն պատճառով, որ ներկայացնում է հարազատ և անխառն մնացած մի սքանչելի բեկոր մեր հին չափական բանավոր արվեստի: Գուցե սրա պես մի ուրիշ քերթվածից ընկած մի բեկոր էր այն հատվածը, որ պատմում է VII դարի հեղինակ Անանիա Շիրակացին: Նրա ժամանակ ժողովրդի մեջ ավանդություն կար, թե Վահագնը ասորական Բարշամ աստծու հարզը գողացել էր և տանելու ժամանակ թափել էր երկնքի վրա, ուր 4 գոյացավ Հարդագողի ճանապարհը: Հին աստվածները, ինչպես հայտնի է, մարդկանց հարազատ պատկերներն էին իրենց պակասություններով և կրթերով: Եթե հայոց Արև-աստվածը երբևիցե կատարել է այդպիսի մի գործ երկնային բարձունքներում, նրան հարկավոր չէր լինի գնալ Ասորեստան, որ երևի գոյություն էլ չուներ այն ժամանակ, երբ Վահագն Հայկական Բարձրավանդակն էր փոխադրվում իր ժողովրդի հետ, Բարշամ աստված կար և Հայաստանում, ուր նա էլ մեկն էր պաշտվող աստվածներից:

Մեր այս տեսությունից կարելի է հետևանքել, որ հայ ժողովրդական բանաստեղծությունը իր հնագույն շրջանում ունի իր բնորոշ կերպարանքը, որին

1 Ձեռքեր, էր. 122:

2 Անանիա Շիրակացի, «Մնացորդը Բանից», Պետր., 1877, էր. 43:



հանդիպում ենք և ուրիշ ազգերի մեջ. նրա նյութն են դառնում բացառապես գերբնական դեմքեր—տիտաններ, աստվածներ, կիսաստվածներ, որոնք թե երկնքում են գործում և թե երկրի վրա: Ստեղծագործական երևակայությունը երկնքից երկիր իջնում է, մահկանացու հերոսներ երգում է արդեն մի ուրիշ շրջանում, որին կղիմենք իր տեղում:

Ժողովրդական բանահյուսության հնագույն ձևեր են ներկայացնում և հեքիաթը, կենդանական վեպը, առակը: Հայ ժողովուրդն այստեղ էլ ունի իր ստեղծագործական գանձերը, որոնք միևնույն ժամանակ ապացույց են այն հավիտենական միջազգային փոխառությունների, որոնց առարկա են դառնում գաղափարները, մտապատկերները: Այսպես, հայ հեքիաթները մոտիկ ազգակցություն ունին հնդկական և այլ հնդեվրոպական ազգերի, օրինակ, սլավոնների, գերմանացիների հեքիաթների հետ<sup>1</sup>, մի հանգամանք, որ, անշուշտ, թե՛ ընդհանուր ցեղական ծագման և թե՛ հետագա մերձավոր շփումների ապացույցն է:

Եվ այսպես, հայ ժողովուրդը իր քաղաքական և մտավոր զարգացման ճանապարհին ենթակա է եղել նույն այն օրենքներին, որոնք ընդհանուր են քաղաքակիրթ ազգերի համար արևմտյան Ասիայում: Այդ օրենքներից մեկը, և գուցե առաջինը, ժողովուրդների աշխատակցությունն է ընդհանուր առաջադիմության հանդիսարանում:

**7. Հելլենականությունն Ասիայում:** Չորրորդ դարի Կերկրորդ կիսում արևմտյան Ասիայի ճակատագիրը ենթարկվում էր մի մեծ փոփոխության, որ, թվում էր, պիտի հեղաշրջեր նրա հին քաղաքակրթական տիպը և միացներ նրան արևմտյան քաղաքակրթության: Այդ փոփոխությունը նրան բերում էր հույն աշխարհը, որ հասել էր քաղաքակրթության և լուսավորության գերագույն աստիճանին, արդեն տվել էր աշխարհին և մեծ մտածողների մի անմահ համաստեղություն—Սոկրատ, Պլատոն, Արիստոտել, իսկ այժմ գնում էր Իրանի վրա: Այս այն խաղաղ շարժումը չէր, որ հույները վաղուց սովոր էին սփռել Ասիայի զանազան կողմերում առևտրի և այլ շահավետ պարապմունքների համար: Այժմ արշավում էր նվաճող սուրբ: Զինված և ուժեղ կազմակերպված Հունաստանն էր, որ այժմ, որպես թե պատասխանելով Քսերքսի արշավանքին, գնում էր տարածելու հելլենականությունը արևելքում: Նրան առաջնորդում էր 22 տարեկան Ալեքսանդր Մակեդոնացին, զինվորական մի հանձար, միևնույն ժամանակ հին աշխարհի մեծագույն մտածող Արիստոտելի աշակերտը: Հելլենականությունը, թվում էր, պիտի ազատեր Արևելքը թագավորների, սատրապների դարավոր բռնակալությունից, փոշեր ազգերի ստրկության շղթաները և ազատ ժողովուրդների վարչական սկզբունքները հաստատեր ամեն տեղ՝ արվեստի, գիտության մաքուր լույսի հետ միասին: Այսպես մտածում էին շատ հույներ: Բայց Արիստոտելն ասում էր իր հուշակավոր աշակերտին, թե ասիացիները ստրուկներ են և նրանց կարելի է կառավարել: միմիայն բռնակալական եղանակով: հույները, իբրև ազատ կարգերով սնված ժողովուրդ, միակն են, որ պիտի ունենան ոչ թե տիրողներ, այլ պարզ ժողովրդական առաջնորդներ<sup>2</sup>:

Հելլենականության շարժումը հաղթական էր Ասիայի բոլոր կողմերում:

<sup>1</sup> Г. А. Халатяни, «Общий очерк армянских сказок», М., 1885, с. 1—2.

<sup>2</sup> Н. Кареев, «Монархии Древнего Востока и греко-римского мира», Пет., 1904, с. 144.

իրանը վերջին անգամ փորձ արավ դիմադրելու Մակեդոնացի նվաճողին իր սարահարթի արևմտյան ստորոտների մոտ, Տիգրիսի հովտում: Դարեհ Կողման թագավորը, որին վիճակված էր լինել վերջինը Աքեմենյանների գահի վրա, կուտակեց այդտեղ, Արբելայի մոտ, մի վիթխարի բանակ (331 թ.): Ասիականության այդ մեծ գումարման մեջ էր և Հայաստանը, որի զորքերը (7 հազար ձիավոր և 40 հազար հետևակ) ունեին երկու հրամանատար, երևի դարձյալ արևմտյան և արևելյան Հայաստանից. մեկի անունն էր Օրոնտ (Հրանտ?), մյուսինը՝ Միհրինես<sup>1</sup>: Ասիականության պարտությունը Արբելայի կովի մեջ կատարյալ էր: Դարեհը փախավ մինչև Բակտրիա, ուր և սպանվեց: Ալեքսանդրը նվաճեց արևելյան բոլոր կողմերը, հետո և Հնդկաստանը:

Եվ երբ հարկավոր եղավ կազմակերպել այդ վիթխարի պետության կառավարությունը, Ալեքսանդրն ստիպված եղավ թողնել հունական գաղափարները և ընդունել մի կարգ, որ կարելի է անվանել Արևելքի և Արևմուտքի միաձուլում: Հելլենականությունը իբրև քաղաքակրթություն առաջնակարգ ու հայտնի էր ամբողջ կայսրության մեջ և կարող էր ընդարձակվել ու ծավալվել իր սեփական միջոցներով: Բայց իբրև պետական կարգ՝ նա տեղի տվեց ասիական անսահման միապետության: Առաջին ինքնակալը ասիական տարազով դարձավ հենց ինքն Ալեքսանդրը: Նա ուզում էր Եգիպտոսում փառավունների հաջորդը լինել, Իրանում շահնշահների հաջորդը, ուստի ավելորդ չէր համարում, որ իրեն էլ աստվածացնեն փառավունների նման: Արևելքը իրեն էր վերցնում եվրոպացի երիտասարդ զորավարից: Եվ այս մեծ գիշման Ֆեյխոսում էր Ալեքսանդրի բնավորությունը: Դառնալով տեր անթիվ ազգերի, նա ուզում էր հավաքար ու արդար լինել ամենքի վերաբերմամբ, ոչ միայն տարբերություններ չէր ստեղծում, այլ աշխատում էր վերացնել տարբերությունները: Նա անփոփոխ թողեց պետության զանազան մասերի կառավարության պարսկական սիստեմը, այն է՝ սատրապությունները:

Իբրև պարսկական պետության մի մաս՝ Հայաստանն էլ, իհարկե, մտնում էր Մակեդոնական կայսրության կազմի մեջ: Ալեքսանդրը Հայաստանում չեղավ և տեսավ այդ երկիրը գուցե դեպի Մարաստան կատարած արշավանքի ժամանակ: Բայց, հեռացնելով Օրոնտին, նրա տեղ նշանակեց Միհրան անունով մի պարսկի: Այս նշանակում էր, թե Հայաստանը զրկվում էր իր հին ինքնավարությունից, իր սեփական վասալ թագավորությունից, մինչդեռ Ալեքսանդրն աշխատում էր, որ յուրաքանչյուր ազգություն պահպանի իր վաղեմի կազմական գրությունը: Հայ ժողովուրդը, իհարկե, չհանդուրժեց այս նորության և մենք տեսնում ենք, որ Օրոնտը երեք տարուց հետո դարձյալ իր իրավունքների մեջ էր հաստատված<sup>2</sup>:

323-ին Ալեքսանդրն անակնկալ կերպով վախճանվեց Բաբելոնում՝ մինչդեռ մեծամեծ պատրաստությունների վրա էր նոր նվաճողական ծրագիրներ իրագործելու համար: Ժառանգ նա չունեց, ոչ մի կարգադրություն չէր արել, ուստի նրա թողած վիթխարի պետությունը կոլվածադիկ դարձավ նրա զորավարների մեջ: Երկար կռիվներից հետո էր, որ համաձայնություն կայացավ պետությունը բաժանելու համար և այդ համաձայնությամբ Միրիան, Պարսկաստանը, առհասարակ ամբողջ ասիական տարածությունն անցավ Սելևկոսին (312): Նա սկսեց թագավորել իր կառուցած Սելևկիա քաղաքում, որ զբա-

<sup>1</sup> И. Г. Дройзен, «История эллинизма», т. I, М., 1890, с. 170—172.

<sup>2</sup> Дройзен, т. II, с. 75.



ներվում էր Տիրիսի վրա, Բաբերոնից ոչ հեռու, և նրա պետությունը կոչվեց Սելևկյան կամ սիրիական, որովհետև նրա ամենանշանավոր մասը Սիրիան էր և այդտեղ էլ Սելևկոսը շինեց Անտիոք հուշակավոր քաղաքը, ուր հետո տեղափոխեց իր բնակությունը: Այսպիսով Հայաստանն էլ Սելևկյան պետության մի մասը դարձավ:

Հելլենականության տիրապետությունը Ասիայի զանազան կողմերում զանազան տևողություն ունեցավ: Առհասարակ մուժ է նրա այդ ժամանակվա պատմությունը, մանավանդ Հայաստանի վերաբերմամբ: Խոսելով ընդհանրապես, նա, իբրև քաղաքակրթական բարձր երևույթ, շատ խոր հետքեր չթողեց Ասիայի հողի վրա, թեև տարածվում էր ամենուրեք և չկար տեղ, ուր չխոսեին հունական լեզվով: Բացառություն կազմում էին Սիրիայի և Փոքր Ասիայի ափերը, ուր մի քանի տեղեր քաղաքակրթական խոշոր կենտրոններ ստեղծվեցին: Եգիպտոսն էր այն տեղը, ուր հելլենականությունը քաղաքակրթական հոյակապ մեծագործություններ հաստատեց, այն էլ նրա ժողովրդի միայն, Ալեքսանդրի հիմնած Ալեքսանդրիա քաղաքում:

Բուն Ասիայում, բուն ասիական ժողովուրդների մեջ, գուցե մեկ կամ երկու օրինակ կարելի լինի ցույց տալ, որ հունական լեզուն և գրականությունը առաջացրած լինեն ինքնուրույն տեղական գրականություն: Դրուժբուն ավելի պարզ պատկերացնելու համար նկատենք, որ հունական գաղութներ էին հաստատվել և Բակտրիայում, Միջին Ասիայի հողերի վրա: Եվ սակայն այդտեղ նույնիսկ քաղաքակրթական մի բարգավաճ վիճակ էլ ցույց չտվեց: Դուրս էր գալիս պարզապես, որ հելլենականությունը ասիական հողի վրա փարթամ բացվող մի ծաղիկ չէր: Նրան դիմադրում էր թեև հաղթված, բայց դեռ կենդանի և ուժեղ ասիական քաղաքակրթությունը: Պարսկաստանն էր նրա ներկայացուցիչը և այստեղ էլ կոում-կոփվում էր այն հակամարտությունը, որ պիտի դուրս գար օտար նվաճողի դեմ: Այդ դիմադրող ոգին պարսկական կրոնն էր, որ ազգային ինքնապաշտպանության և առանձնացման դրոշ էր դառնում Պարսկաստանի հյուսիս-արևմտյան մասում, այն է՝ Մարաստանում: Այդտեղ մեղացի Ատրոպատը կամ Ատրպատը, որ սատրապ էր նշանակված Ալեքսանդր Մակեդոնացուց, նրա մահից քիչ հետո, հիմնեց անկախ պետություն, որ և իր անունով կոչվեց Ատրոպատեն կամ Ատրպատական (այժմ Ադրբեջան)<sup>2</sup>: Հայաստանի արևելյան երկրների մի մասը մտնում էր Ատրպատականի պետության մեջ, նշանակում է այդ բաժինն էլ մասնակից էր իրանական ազգային ինքնապաշտպանական և հակա-հելլենական շարժման:

Շարժումը գաղափարական հողի վրա էլ չմնաց: Սելևկյան մեծ պետության մեջ, բնականաբար, խլրտումներ ու ապստամբություններ պիտի ծագեն ամեն անգամ, երբ թույլ ու անկարող էին հանդիսանում թագավորները: Առաջին անգամ ապստամբվեց և հունական տիրապետությունից ազատվեց հնդկական մի թագավոր: Այնուհետև օրինակ տվին հենց իրենք հույները՝ Ապստամբվեցին և անկախություն հայտարարեցին Բակտրիայի հույն գաղութները: Այս օրինակը շարժում գցեց Միջին Ասիայի թափառիկ արիացի ցեղերի մեջ: Այդ ցեղերից մեկի անունն էր Դահեր, իսկ դրա մի ճյուղն էին պարսիացիները: Սրանցից մի փոքրիկ հատված, առաջնորդված Արշակ և

<sup>1</sup> Кареев, «Древ. монар. Вос.», гл. XII:

<sup>2</sup> А. Крымский, «История Сасанидов и завоевание Ирана арабами», М., 1905, с. 203.

Տրդատ եղբայրներով, թողնում են իրենց արտատեղերը Օքսուս գետի վրա և տեղափոխվում են Կասպից ծովի հարավ-արևելյան կողմը (Խորասան), ուր ամրում էր պարթևների վրանաբնակ ցեղը: Այդտեղ երկու եղբայրները հաղթում ու սպանում են սելևկյաններից նշանակած սատրապին և ապստամբություն են հայտարարում: Թագավորում է Արշակը (250—248) և այսպիսով հիմնվում է հուշակավոր պարթևական հարստությունը, որ պիտի հետզհետե ազատեր Իրանը, թագավորի այնտեղ երկար ժամանակ և այնքան խոր ազդեցություն պիտի թողներ հայ ժողովրդի կյանքի և պատմության վրա:

Այս հեռավոր շարժումները ճնշելու մասին մտածել չէին կարող Սելևկյան թագավորները, քանի որ խլրտումներն ու շարժումները անպակաս էին և Միջին Ասիայում և պետք էր դեռ պատերազմներ մղել և Եգիպտոսի դեմ: Պետությունն արևելքից շարունակ կտրատվում էր և փոքրանում: Այս անդադար շարժումների մասին քիչ տեղեկություններ են մնացել և նրանցից մի քանիսը վերաբերվում են Հայաստանին կամ, ավելի հիշատակ, նրա այն մասերին, որոնք Եգիպտոսի երկու կողմերն էին գտնվում: Արևմտյան մասում. ինչպես գիտենք, Փոքր Հայքն էր գտնվում, այն երկիրը, ուր առաջին անգամ հաստատվեցին արմենները՝ Փոյուզիայից հեռանալուց հետո: Երկրորդը գրտեղում էր գետի արևելյան կողմում, այնտեղ, ուր Արածանին մոտենում է նրա մեջ թափվելու համար: Այդ երկիրը, որ տարածվում էր Արածանիի և բուն Եգիպտոսի մեջ, կոչվում էր Մոփք կամ Մոփաց աշխարհ: Այդտեղ է Խարթրիի հուշակավոր արգավանդ դաշտը, ուր ամենահին ժամանակներից զարգացավ պետական կյանքը: Արմենները, գրավելով այդ երկիրը, այդտեղ էլ, ինչպես երևում է, հաստատեցին իրենց քաղաքական կյանքի կենտրոններից մեկը:

Փոքր Հայքի վերաբերմամբ կարելի է ասել, որ մակեդոնական կայսրության հաստատումը Ասիայում վերակենդանացրեց նրա քաղաքական կյանքը: Նորից այստեղ մենք հանդիպում ենք հայ թագավորների: Ալեքսանդրի մահից հետո, նախքան Սելևկյան հարստությունը, պետության կառավարիչներն սկզբում էին դարձրել ամեն տեղ հույն սատրապներ նշանակել: Եվ Փոքր Հայքի համար սատրապ ուղարկվեց Նեոպտոլիմ անունով ամբարտաձան հույնը, որ շուտով գրգռեց հայերին և սրանք, զլուխ ունենալով իրենց Արտավազդ թագավորին, դիմադրություն ցույց տվին նրան և դուրս վճռեցին իրենց երկրից (322): Հունական զորքեր ուղարկվեցին այդ սատրապին իր տեղում հաստատելու համար, բայց զուր անցավ այդ փորձը: Այս դեպքը վկայում է, որ հունական սատրապները միայն ներկայացնում էին հույն իշխանությունը, մինչդեռ երկրի իսկական կառավարիչները տեղական թագավորներն էին:

Առհասարակ անկարելի է ասել, թե հելլենականության իշխանությունը բացարձակ էր Հայաստանի բոլոր կողմերում: Եթե կային էլ սելևկյան սատրապներ, բայց երկիրը չկորցրեց իր անկախությունը: Պատմվում են դեպքեր, երբ սելևկյանների ձեռքից փախչող իշխանավորները ապաստան էին գտնում Հայաստանի այս կամ այն թագավորի մոտ:

Ինչ վերաբերվում է Մոփաց աշխարհին, կցկտուր տեղեկություններն աշտեղ ցույց են տալիս մի շարք թագավորներ: Այսպես են Շարասպես, Արսամե (երևի՛ Արշամ, 230 թ.), որ շինեց Արսամասատ մայրաքաղաքը, Արդիտա-

<sup>1</sup> Г. Халатяни, «Очерк истории Армении», М., 1910, с. 119.

դես (220), Քսերքես, հավանաբար նախընթացի որդին (200): Այս թագավորները թողել են դրամներ, որոնք, սակայն, միայն նրանց գոյություն են ցույց տալիս և տարեթիվեր հաղորդում, առանց լույս սփռելու նրանց անձնավորության և թագավորության վրա<sup>1</sup>:

Ալեկիյան Հայաստանի կամ Մեծ Հայքի մասին տեղեկություններ չեն հասել: Բայց արդեն վերոհիշյալ հանգամանքը, թե նա Ատրպատականի հետ էր, ինչպես նաև մի քանի այլ նկատառումներ թույլ են տալիս ենթադրելու, որ նա էլ մարտնչողի դրության մեջ էր գտնվում և Մարաստանի հետ էր վերջինիս պատերազմական շարժումների մեջ ընդդեմ Սելևկյանների:

Մենք չգիտենք նաև, թե ի՞նչ աչքի ընկնող երևույթներ էր տալիս հայկական ներքին կյանքը հելլենականության ժամանակ: Մի փայտ, սակայն, վկայում է, որ այս շրջանում ավելի ևս ընդարձակվել է հայ ժողովրդի առևտրական նախաձեռնությունը: Սելևկիյա մայրաքաղաքը Տիգրիսի վրա մի կարճ միջոցում շատ մեծացավ իբրև առևտրական մեծ կենտրոն, որ նսեմացրեց նույնիսկ Բաբելոնի նշանակությունը և դարձավ գլխավոր պահեստ Հնդկաստանի և Միջերկրական ծովի մեջ: Այդ մեծ վաճառանոցը հաճախող վաճառականների մեջ են հայերը: Իրենց լեռնաստանից իջնում են դարձյալ իրենց նավերով, որոնք այժմ միայն Եփրատի մեջքը չեն սողոսկում, այլև նրանից ավելի շրառատ ու սրընթաց Տիգրիսի ալիքները: Բայց այժմ այլևս Հերոդոտի ժամանակի հովիվները չէին, այլ շատ խիզախ աշխարհագնացներ և վաճառականներ: Սելևկիայից հնդկական ապրանքները և մետաքսը նրանք տանում էին ծախելու հեռավոր հյուսիսում, Կովկասյան լեռներում՝ և նրանց հյուսիսային կողմերում, ուր նրանց կարավանները հասնում էին Տանախ (այժմ Դոն գետի ափերին): Այդտեղ աորսները նրանց մշտական գնորդներն էին և մեծամեծ շահեր էին տալիս նրանց<sup>2</sup>: 48

<sup>1</sup> Ernest Babelon, „Les Rois de Syrie, d'Armente et de Commagène“, Paris, 1890, p. CXCI—CXCVI.

<sup>2</sup> Дройзен, т. III, с. 41.

Գլուխ առաջին

Ա Ր Տ Ա Շ Ե Ս Ա

1. ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ: 2. ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: 3. ԱՐՏԱՇԵՍԸ—ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՐՈՍ:

1. Անկախություն: Դանդաղ, բայց հարատև դարավոր աշխատությունը գլուխ բերած ազգային կազմակերպումն ու միավորումը պիտի բնականորեն դար հասներ պետական միության գաղափարին: Այս միությունը կարող էր իրավանանալ մի անկախ հայրենիքի փաստի մեջ: Մարապարսկական, ոչ էլ սելևկյան տիրապետությունները, շկարողացան արգելք դառնալ, որ այս անհրաժեշտությունը հայ երկրում ժամանակի հետ հասունանա և ամրապնդվի գիտակցության մեջ: Մենք արդեն տեսանք, որ հայ ժողովուրդը ամեն ժամանակ առանձին մի նախանձախնդրությամբ պաշտպանում էր իր ազգային ինքնամոտի գոյությունը, որ ձուլված էր ազգային ինքնավարության մեջ: Բայց այս բավական չէր: Որքան առաջանում էր հայ ժողովրդի քաղաքական զարգացումը, այնքան պարզ էր զբաղվում, որ երկրի քաղաքական թույլ կազմակերպությունը ոչինչ վստահություն չէր տալիս, թե շրջապատող ազգերի դիրքն ու նրանց առաջացրած նորանոր պայմանները մի օր վերջնականապես չէին ջնջի և այդ ազգային ինքնավարությունը:

Սելևկյան թագավորությունն սկսեց ուժեղանալ Անտիոքոս Գ-ի ժամանակ (223—187): Սա հաղթող հանդիսացավ Փոքր Ասիայում, բայց առավելապես հռչակվեց և նույնիսկ «Մեծ» տիտղոսն էլ ստացավ այն խիզախ ձեռնարկությունների համար, որ սկսեց Իրանի սահմաններում՝ իր տոհմի տիրապետությունը նորից այդ կողմերում վերականգնելու համար: Պարթևները, սաստիկ պարտություն կրելով նրանից, ամփոփվեցին իրենց նախնական երկրի, այն է վրկանի մեջ, սեղմվելով Կասպից ծովի ափերին: Բակտրիայի հունական թագավորը, ինչպես և Հնդկաստանի իշխողներից մեկը շտապեցին բարեկամական դաշնակցություններ կնքել նրա հետ: Անտիոքը հարձակվեց նաև Ատրպատականի թագավորության վրա, որի մի մասն էին կազմում Հայաստանի արևելյան նահանգները: Հայկական Բարձրավանդակը նույնպես Սելևկյան կալվածների թիվն էր մտցվում: Անտիոքը այդտեղ երկու կառավարիչ է նշանակում: Արևելյան մասի համար՝ Արտաշես (հունարեն՝ Արտաքսիաս) և արևմտյանի համար՝ Զարեհ (հունարեն՝ Զարիադրես) անունով զորավարներին, որոնք իր բանակումն էին ծառայել և որոնք փուլեց հին հայ թագավորների ցեղից էին: Երկուսն էլ՝ իհարկե, հունական կրթություն էին ստացած

և այսպիսով ներկայացնում էին արևելքացու և արևմուտքացու խառնուրդ կամ հելլենացած ասիականությունը, այն տիպը, որ մշակվել էր Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներով և քաղաքականությամբ:

Չնայած, սակայն, Անտիոքոս Ածի հաջողություններին, սելևկյանների գործը սաստիկ վտանգված էր արևմտյան Ասիայում այն պատճառով, որ հենց այդ ժամանակ աշխարհի այս կողմում առաջին անգամ հանդես եկավ մի նոր և ուժեղ ախոյան՝ Հոռմը: Չեռք պցելով հունական երկրները, իրենց հպատակեցնելով հելլեն աշխարհը, հռոմեացիները բնական հակառակորդներ էին հանդիսանում Սելևկյաններին, որոնց շքացնելն ասպարեզից դառնում է նրանց զինվորական և քաղաքական գործունեության առարկա: Արևելքի հողի վրա վերսկսվում է մեծ քաղաքական մարմինների, մեծ պետությունների հին մրցությունը, որ այնքան ահագին ազդեցություն ուներ այդտեղ ապրող ազգությունների ճակատագրի վրա: Հռոմեացիները իրենց տիրապետական նպատակների համար սկսում են խրախուսել տեղական ազգությունների ազատական շարժումները, կանգնեցնել նրանց Սելևկյանների դեմ: 190 թ. Անտիոքոս Մեծը լարալար պարտություն կրեց հռոմեացիներից Փոքր Ասիայի Մազնեզիա քաղաքի մոտ: Այս արդեն մի ազդանշան էր, որ արևմտյան Ասիան կանգնե Սելևկյանների դեմ, ուժեղանալով հռոմեական պաշտպանությամբ:

Հայերն զգացին բոսանի ամբողջ կարևորությունը և Արտաշեսն ու Ջարեհը իսկույն բանակցություններ սկսեցին հաղթողների հետ, գուցե նույնիսկ պատգամավորություն էլ ուղարկեցին Հռոմ, առաջարկելով իրենց արակցությունը և փոխարենը՝ խնդրելով ապահովել իրենց ազգային իրենալը: Ստանալով Հռոմի սենատի կատարյալ համաձայնությունը, երկու հայ իշխողները 189-ին իրենց միանգամայն անկախ հայտարարեցին: Անտիոքոսը ոչ մի միջոց չունեի այդ ապստամբության դեմն առնելու և հայերի անարյուն հեղափոխությունը կատարյալ հաջողությամբ պսակվեց:

**2. Պետական ջինարարություն:** Բայց պետական միավորման գաղափարը դեռ հեռու էր իրագործվելուց: Հայաստանը առաջվա պես բաժանված մնաց երեք մասի: Ջարեհը շարունակեց Մոփաց աշխարհի մեջ արդեն ծանոթ թագավորությունը, Փոքր Հայքն էլ ուներ իր առանձին թագավորությունը: Սակայն սկիզբը դրված էր: Արտաշեսը, արևելյան կամ Մեծ Հայաստանի թագավորը դառնալով, առանձին եռանդով և մեծ հաջողությամբ սկսեց իրագործել համազգայնության սկզբունքը: Առաջին մեծ գործը, որ նրա համար պատվանդան պիտի դառնար, այն էր, որ նա համազգային միավորման կենտրոն ընտրեց Արարատյան դաշտը, Արաքսի հոսակավոր հովիտը:<sup>49</sup> Հայկական Բարձրավանդակի պատմությունն ստանում էր մի նոր, ինքնուրույն գունավորում: Վանի լճի ավազանն այլևս չէր կարող համապատասխանել նոր պետության կուլտուրական և քաղաքական պահանջներին: Մենք տեսանք, որ Ուրարտուի քաղաքական բարձրացումն սկսվեց այն շրջանից, երբ նրա թագավորները նվաճեցին Արաքսի երկու ափերը: Իր կուլտուրական նշանակությամբ այս հովիտը բարձր է Հայաստանի մյուս բոլոր հովիտներից: Հիմնավորվելով մի հարուստ և արգավանդ դաշտի վրա, նոր պետությունը կանգնում էր միջազգային այն կարևոր առևտրական և ռազմական ճանապարհներին, որոնք ամեն կողմից հավաքվում են այդտեղ և այս հանգամանքը բնորոշում էր նաև այդ պետության ապագա ճակատագիրը:

Կուլտուրական և ռազմագիտական շահերի այդ հանգույցի սրտում Ար-

տաշեսը կառուցեց իր մայրաքաղաքը, Արտաշատ անունով: Հունական ազգայնությունն ավանդում են, որ քաղաքի տեղն ընտրողը մի զինվորական խնդրող տաղանդ էր, կարթագենացի Աննիբալը, որ հռոմեացիներից պարտություն կրելուց հետո անցել էր Փոքր Ասիա և իր թափառումների միջոցին հյուսիս-կարթագենացիներ էր գտել հայոց թագավորի մոտ: Ստրաբոնը «գեոգրաֆիկա» է՝ անվանում Արտաշատը, որ շինված էր Արաքսի մի պտույտի վրա, այնպես, որ քաղաքը երեք կողմից շրջապատվում էր գետով, իսկ չորրորդ կողմից պաշտպանված էր պարիսպներով, խրամատով և մի բլուրով: Իսկ Պլուտարքոսը ավելի մեծ ոգևորությամբ է գովում Աննիբալի այդ ձեռակերտը, անվանելով նրան «մեծ» և «գեոգրաֆիկա»<sup>50</sup>: Արտաշեսի քաղաքը իսկույն ևեթ հռչակվեց իր քաղաքական և առևտրական կենտրոն: Այդպիսի կենտրոն կարող էր գոյանալ Արաքսի ձախ ափին միայն, որովհետև այդ ափն է, որ Արաքսից մինչև Շարուրի դաշտը ոռոգվում է հյուսիսային լեռներից իջնող գետերով (Քասախ, Հրազդան, Ալատ), ոստի և Արարատյան դաշտի ամենահարուստ շրջանն է ներկայացնում:

Բայց այսպիսի մի կենտրոն դեռ չէր կարող պաշտպանվել միայն իր, միայն տեղային միջոցներով: Եվ Արտաշեսի հեռատեսությունը միանգամից ըմբռնեց, թե դեռ ինչքի է հարկավոր անել պետական շինարարությունը ամբողջացնելու համար: Ինչպես վանյան մեծ թագավորների համար էր պարզ Հայկական Բարձրավանդակի ամբողջ պետական նշանակությունը, այնպես էլ Արտաշեսը, առանց հետաձգելու, ձեռք զարկավ իրագործելու իր երկրի աշխարհագրական դիրքի պահանջները, այն է՝ պետության ամփոփումը բնական սահմանների մեջ, շրջապատ դարձնելով այն պատվարները, որոնք հայկական լեռնակղզու ծայրագծերն են կազմում: Միայն այս դեպքում էլ, պետության կենտրոնն ու սիրտը՝ Արարատյան դաշտը բավական հեռացած կլինեի սահմանագլուխ լինելու վտանգից և ամուր պաշտպանված:

Այս նպատակով Արտաշեսը սկսեց նվաճել մի շարք ծայրագավառներ: Մարաստանից կամ, ավելի ճիշտը՝ Ատրպատականի թագավորությունից նա խլեց Վասպուրականը, Կասպիական ծովեզերքը, որ հետո ստացավ Փայտակարան անունը, վրացիներից՝ Տայք, Կղարջք և Գուգարք երկրները, խալթաններից և մոսխերից՝ Կարինը, Դերջանը, Եկեղյաց գավառը, Սիրիայից՝ Տմորիքը: Այս միայն երկրի ընդարձակում չէր, այլև ռազմական-կուլտուրական հրամայող պահանջների իրականացում: Հայաստանը աշխարհագրական ամբողջություն էր դառնում: 60 Այդ ամբողջացումն անկարելի էր, եթե նրա սահմանները չհանձնեին բնական ծովային դռներին էլ: Եվ այս մեծ կարևորություն էլ իրականանում էր՝ Կասպից և Սև ծովերի ափերին հասնելով՝ Փայտակարան և Տայք նահանգների միջոցով:

Մոփաց աշխարհի Ջարեհ թագավորն էլ մի քանի կարևոր, բայց մանր նվաճումներով լրացրեց իր երկրի կազմավորումը: Բայց Արտաշեսը, տարված լինելով մի և անբաժան պետականության գաղափարով, չէր կարող համբերել, որ իր նախկին պաշտոնակիցը այդքան խիստ որոշված բաժանում մտցնե պետական մարմնի մեջ: Ուստի, երբ Ջարեհը մեռավ, Արտաշեսը

<sup>49</sup> Strabon, liv. XI, chap. XIV, 6.

<sup>50</sup> Պլուտարխայ Քրոնիկացույ Գուգարիք, Վենետիկ, 1833, հատոր 9., եր. 580.

<sup>51</sup> Strabon, XI, ch. XIV, 5, Հյուսիսային, «Հին հայ Տեղույ ան», եր. 18-22.

163-ին հարձակվեց նրա պետության վրա, որպեսզի ոչնչացնե այդ անկախությունը: Բայց այս միտքը չհաջողվեց: Զարեհի որդի Մեհրուժանը փախավ Կապադովկիա, որի թագավոր Արիարաթը օգնեց նրան նորից իր ժառանգությունն ստանալու<sup>1</sup>:

Պատերազմական ձեռնարկություններով պետություն կազմելու գաղափարից էլ հետո գնաց Արտաշեսը: Կավ ըմբռնելով, որ պետության կայունությունը նրա մեջ տիրող կարգ ու կանոնից է կախված, Արտաշեսը ներքին կյանքը բարեկարգելու միջոցներ ձեռք առավ: Նա մտցրեց զինվորական կարգեր, կազմակերպեց ազգային դաստիարակությունը, կարգի ենթարկեց ազնվականությունը, իրավական կարգեր հաստատեց: Ասիայի այս անկյունում այսպիսով ստեղծվում էր մի նոր քաղաքակիրթ պետություն:

Սվ բնական է, որ նրա հիմնադիրը գեղեցիկ հիշատակներ թողած լինի իր երկրի մեջ: Առաջին անգամ Արտաշեսն էր, որ հավաքում, միացնում և լուրջ հիմքերի վրա կազմակերպում էր հայ երկիրը: Այդ գործը արժանապես քննատեղին թե՛ նրա ժամանակակիցները, և թե՛ հետնորդները: Ժողովրդական ավանդությունների և երգերի մեջ հերոս էր այս մեծագործ թագավորը: 165 թ. Արտաշեսը պարտություն կրեց սելևկյան Անտիոքոս Դ թագավորից, որ արշավեց նրա վրա՝ նորից իր տոհմին հնազանդեցնելու համար: Արտաշեսը նրա ձեռքն ընկավ, բայց այս պարտությամբ ոչինչ չկորցրեց և ոչ մի վնաս չկրեց Հայաստանի պետական նոր կառուցվածքը, որովհետև Արտաշեսը դաշնակցություն կապեց Մարաստանի հետ և այսպիսով չբացրեց սելևկյան ուժը<sup>2</sup>:

**3. Արտաշեսը—ժողովրդական հերոս:** Այս ժամանակավոր անհաջողությունը նշանակություն չունեցավ ժողովրդի համար, որ իր սիրելի թագավորին մեծարեց իր բանավոր արվեստի ստեղծագործություններով: Զրույցների և երգերի մեջ պատմվում էին Արտաշեսի այն պատերազմները, որոնց միջոցով նվաճվեցին ծայր աշխարհները: Այս պատերազմներից առանձնապես հիշատակվում է ալանաց հարձակումը: Ալանները համարվում են այժմյան օսերի նախահայրերը<sup>3</sup> և բնակվում էին Արագվա գետի հովտում մինչև Դարիալի կիրճը: Նրանք միանում են վրացիների հետ և պատերազմը տեղի է ունենում Կուր գետի ափին, հավանորեն Վրաստանի և Գոսգարքի սահմաններում: Ալանները պարտություն են կրում և նրանց թագավորի պատանի որդին գերի է ընկնում Արտաշեսի ձեռքը: Բանակցություններ են սկսվում պատանուն ազատելու մասին, բայց ապարդյուն: Այն ժամանակ, պատմում է վեպը, մեծ գետի ափին է դուրս գալիս ալանաց թագավորի աղջիկը, գեղանի Սաթենիկը, որ և կանչելով հայոց թագավորին, թարգմանի միջոցով թախանձում է նրան ազատել իր եղբորը: Արտաշեսը սիրահարվում է օրիորդի վրա և ամուսնանում է նրա հետ առևանգման միջոցով, որ ամուսնություն օրինական ձևն էր հին ժամանակների տոհմային կարգերի մեջ: Նկարագրվում էր և առևանգումը, թե ինչպես քաջ թագավորը, հեծնելով իր ձին, արծվի նման կտրեց անցավ մեծ գետը, թե ինչպես հանեց կարմիր կաշուց շինած պարանը, որ ոսկի օղ ուներ ծայրին, թե ինչպես ձգեց պարանը և ալանաց օրիորդի մեջքը գցեց ու շատ

<sup>1</sup> Զ. Զ. Աստուրյան, «Քաղաքական վերաբերություններ ընդ մէջ Հայաստանի և Հռոմի», Վենետիկ, 1912, եր. 21:

<sup>2</sup> Անդ, եր. 24:

<sup>3</sup> Ակադեմիկոս Մաուր ժխտում է այս ենթադրության հավանականությունը և այլններին նույնացնում է կովկասյան ալբանների հետ: («Изв. Имп. Ак. наук», 1916, с. 1395):

ցավեցրեց այդ փափուկ մեջքը: Եթե էր հարսանիքը հայոց երկրում: «Ոսկի անձրև էր գալիս Արտաշեսի փեսայության ժամանակ,— ասում էր երգը,— մարգարիտ էր անձրևում Սաթենիկի հարսնության ժամանակ»: Սովորություն էր, որ թագավորն ու թագուհին հարսանիքի ժամանակ ոսկե դրամ և մարգարիտ էին ցանում հանդիսականների մեջ, պալատի դռանը:

Երևի այս կամ սրա նման մի այլ վեպի արձագանք է այն պատմվածքը, որ բերում է X դարի պատմիչ Թովմա Արծրունին: Արտաշեսը սիրում էր Վանի լճի գեղաժիծաղ ափերը և շինեց այդտեղ Արտամես քաղաքը, ուր և աշնանային պալատ կառուցեց հատկապես Սաթենիկի բնակության համար, զարդարելով այդ պալատը պարտեզներով, ձեռնիքներով, ծաղկաստաններով և այլ գեղեցիկ հարմարություններով<sup>1</sup>:

Ժողովրդական վեպը սիրահարական մի արկած է հյուսում Սաթենիկ տիկնոջ կյանքից, մի արկած, որ, սակայն, պարզ կերպարանքով չէ արտահայտված: Մարական ծագում ունեցող առաջնակարգ նախարար Արգամն է հանդիսանում այդ վեպի մեջ իբրև Սաթենիկի սիրո և տենչանքի առարկա: Այս սիրային արկածն էլ, միշտ այս վեպի վկայությամբ, աղետալի հետևանք ունեցավ՝ թշնամական հարաբերություններ ստեղծելով արքունիքի և Արգամի տան մեջ<sup>2</sup>:

161 թվականից հետո այլևս տեղեկություններ չկան Արտաշեսի մասին: Ենթադրվում է, որ այնուհետև շատ քիչ ապրած պիտի լինի հայկական անկախության առաջին հիմնադիրը: Ժողովրդական վեպը նկարագրում է, որ մեծ սուգ արավ հայոց աշխարհը իր մեծագործ թագավորի վրա, մինչև իսկ շատերը, հետևելով այն ժամանակվա սովորության, ինքնակամ սպանեցին իրենց նրա գերեզմանի վրա:

Արտաշեսին հաջորդեց նրա որդի Արտավազդ Ա, որի մասին հավաստի ոչ մի տեղեկություն չէ մնացել: Միայն նույն ժողովրդական վեպն է, որ նկարագրում է այս թագավորին իբրև մի խիղախ և ըմբոստ ոգի: Նա քաջ է, ահագին ուժ ունի: Հանդիսանալով ընտանեկան պատվի նախանձախնդիր, նա սպանում է Արգամին և կոտորում է նրա տոհմը: Իսկ երբ շատերը Արտաշեսի գերեզմանի վրա սպանեցին իրենց, Արտավազդը, դիմելով հորն ասում է. «Դու գնացիր և աշխարհը տարար հետդ, ես ո՛ւմ վրա պիտի թագավորեմ»: Արտաշեսը գերեզմանից անիծում է նրան, ասելով, թե նա որսի գնա Ազատ Մասիսը և այդտեղ քաջքերը բռնեն նրան ու փակեն մթության մեջ: Այդպես էլ կատարվում է: Արտավազդը, հավատացնում է վեպը, բանտարկված է Ազատ Մասիսի մի խորխորատում շղթայակապ: Երկու շուն լիզում են նրա շղթաները, որպեսզի բարակացնեն և նա կտրե նրանց ու դուրս գա աշխարհը կործանելու:

Այս առասպելական զրույցներն արդեն ապացույց են, որ Արտավազդը սովորական մի թագավոր չէր, բայց նրա գործերը, որոնք այսպիսի գնահատություն են ստացել ժողովրդական աշխարհայացքի մեջ, մնացել են անհայտ:

<sup>1</sup> Թովմա Արծրունի, «Պատմություն Տան Արծրունեաց», Կ. Պոլիս, 1852, եր. 56—57:

<sup>2</sup> Խաթենացի, Ա, 1:

Պատմի Կրկնորո

Տ Ի Գ Բ Ա Ն Մ Ե Մ (95—55 Ք. ա.)

- 1. ԱՆԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆ: 2. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱՐԹՅՈՒՆ: 3. ՀԱՅ-ՊՈՆՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ:
- 4. ԱՎԱՅՈՒՄՆԵՐ: 5. ՀԱՍՏԱՆԵՐ: 6. ՆՈՒՍԵԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ: 7. ՊԱՄ-ՊԵՆՆԵՐ: 8. ԵՐԱՅԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ:

1. Նախաձանձորություն: Մոտ 95 ապրիլի մի շրջան, որ սկսվում է գնա Արտաշես Ա-ի օրից (160—95), ընկղմված է անհայտության մութ մեջ, քանի որ արևմտյան գրականության մեջ չեն մնացել տեղեկություններ այդ ժամանակամիջոցի անցուգործի մասին: Գիտենք միայն Արտաշատի Ա-ի անունը: Այնուհետև գալիս ենք մի շատ նշանավոր թվականի (95), երբ հայոց պատմության ասպարեզում երևան է գալիս նմանը չունեցող, անզուգական մի գործիչ—Տիգրան թագավորը: Այս նշանավոր երևույթը ցույց է տալիս, որ նախընթաց անհայտ ժամանակամիջոցում Արտաշեսյան թագավորական տոհմը առաջ էր տանում իր հիմնադրի քաղաքական գազափարը—ազգային միություն: Եվ այս ուղղությամբ առաջացող հրեղին Տիգրանի որով որևէ քաղաքական զարգացման և կազմակերպչական ուժի մի գերազուցյալ պատիճակն, որին նա այնուհետև այլևս երբեք չհասավ:

Տիգրանի անձնավորությունն ու գործերը արդեն շատ մանրամասն կերպով են լուսարանված հույն և հռոմեական պատմագրությունների մեջ՝ պլուտարքի ժամանակից, երբ նա, 45 տարեկան հասակում (ծնվել է, արեմն, մոտ 140 թ. Ք. ա.)<sup>1</sup>, Հայաստանի թագավոր դարձավ: Պակասում են տեղեկություններ միայն այդ 45 տարիների մասին, որ անցկացրեց Տիգրանը մինչև գահ բարձրանալը: Հայտնին այն է միայն, որ նրա հոր պնունն էլ Տիգրան էր, անշուշտ Արտաշեսի սերնդից: Ճատ հավանական է համարվում, որ Արտաշատի Ա նրա ավագ եղբայրն էր: Այսպիսով այս Տիգրանը գառնում է Տիգրան երկրորդի Բայց նա այս կարգահամարով չէ հայտնի պատմության մեջ: Հայ ժողովուրդը պահել է նրա հիշատակը իր ավանդությունների մեջ, ուր և հատկացրել է նրան «Մեծ» տիտղոսը և այդ պատվանունով էլ նա խզկապես ներկայացնում է ապագա սերունդներին իրրև մի եզակի պատմական երևույթ: Նա ապրել է 85 տարի և թագավորել է 40 տարի: Մի բեղմնավոր, կարելի է ասել՝ հուզումնալից թագավորություն, երբ հայ պետականությունը տեղադրվեց գործունեություն էր ցույց տալիս բազմակողմանի նշաններով: Այդ գործունեությունը բաժանվում է մի քանի շրջանի:

<sup>1</sup> Халатяну, «Очерки», с. 149.  
<sup>2</sup> Գր. Յ. Մարկիարտ — «Հայ Բղևաշխ», Թարգմ. 2. Բ. Կեռիկյան, Վիեննա, 1902, էջ. 24

2. Զաղաքական դրություն: Երբ Տիգրանը գահ էր բարձրանում, արևմտյան Ասիայում տիրում էր այսպիսի մի քաղաքական դրություն: Արևելքում հետզհետե ավելի և ավելի որոշակի էր գծագրվում պարթևական թագավորության, իրրև մի մեծ պետության պատկերը: Արևելյան հարցի մեջ կենտրոն դարձավ նորից թեքվում էր արևելքի կողմը: Որքան թուլանում էին սելևկյանները, այնքան բարձրանում էին պարթևները: Միհրդատ Ա կամ Արշակ 2 թագավորը (պարթև տիրողները, գահ բարձրանալուց հետո, կոչվում էին Արշակ, պահպանելով, սակայն և իրենց հատուկ անունները), որ թագավորից 174—138 թ., բավական ընդարձակից պարթևական պետությունը, խլիճով սելևկյաններից Միջագետքը, Բարսիլոնը: Իսկ Միհրդատ Բ (Արշակ Թ), որ ստացել է Մեծ անունը (133—88)<sup>1</sup>, իսկական հիմնադիրն է պարթևական մեծ պետության, որ այնուհետև, արեմնյանների Պարսկաստանի նման, դուրս էր գալիս միջազգային հարաբերությունների մրցարանը իրրև հեղինակավոր գերակապար:

Այս պետական բնաշրջման ամենախնդիր արտահայտությունն այն էր, որ պարթևական պետության կենտրոնը հյուսիս-արևելյան Պարսկաստանից (Կորասանից) տեղափոխվեց միջազգային շահերի ընդհարման այն հարակավոր վայրը, որ ներկայացնում էր Տիգրիս-Եփրատյան հովիտը: Այստեղ, Թաբլուսից ոչ հեռու, Տիգրիս գետի արևելյան ափին կազմվեց Իրանի մայրաքաղաք Տիգրոնը (Կտեզիֆոն), Սելևկիա քաղաքի դիմաց, որ տարածված էր գետի մյուս ափին: Գրավելով այսպիսի մի դիրք, պարթևական Իրանը ամենից առաջ կանգնում էր Միջագետքի դաշտավայրը պաշտպանելու անհրաժեշտության առջև: Այդ հոգան էր, ինչպես գիտենք, Ասորեստանի ամենազրլիավոր նպատակներից մեկը: Եվ Միհրդատ Մեծը Միջագետքի այդ պաշտպանության շահերի տեսակետից ցանկալի շահամարելով Հայաստանի ուժեղացումը, Արտաշեսի նվաճած գավառներից մի քանիսը ետ խլից Արտաշատից թագավորից: Այդ ժամանակ էլ Պարթև թագավորը պատանդ վերցրեց հայոց արքունիքից Տիգրան թագավորազնին: Հայաստանի համար այս հարվածը բավական ծանր էր, ինչպես երևում է, պատանդ Տիգրան թագավորազնը իր հոր, Տիգրանի մահից հետո էր, որ արձակում ստացավ Միհրդատ Մեծից, որ և զգեց նրան հայրենի գահին տիրանալու, բայց դրա փոխարեն ստացավ Տիգրանից 70 հովիտ, այսինքն մի շարք երկրներ: Այսպիսով Հայաստանը հարակից շրջապատվեց փոքրիկ պետությունների մի գառնով՝ Ադիաբեն (Ասորեստան), Կորդուեն (Քրդստան), Օսրոեն (Եփրատի վրա): Այս մանր պետությունները կախում ունեին պարթևներից և այսպիսով Հայաստանի սահմանների վրա կատարում էին պատվարի դեր:

Միջագետքի պետությունը փտանալով էր լինում միշտ և արևմուտքի, այն է Եփրատի կողմից: Այս ուղղությամբ պարթևական պետության դիմացն էր գալիս հեռու արևմուտքից աշխարհակալ Հռոմը: Փոքր Ասիայի հողի վրա նրան պատկանում էր դեռ այդ թերակղզու արևմտյան ծայրը միայն, որ կազմում էր հռոմեական «Ասիա» նահանգը, ուր կենտրոնացված էին նահանգալի վարչությունը և զինվորական ուժը: Այդտեղից Հռոմի տիրապետությունը ձգտում էր դեպի արևելք, դեպի Եփրատը: Եվ նրա շահերի շրջանի մեջ էին մտնում Ասիա նահանգի սահմանակից մանր պետությունները—Կապադով-

<sup>1</sup> Allotte de la Fuye, „Nouveau Classement des Monnaies Arsacides“, Paris, 1904, p. 6.  
<sup>2</sup> Th. Reinach, „Mithridate Eupator, roi de Pont“, Paris, 1890, p. 101.

կիա, Կոմմագենե, Կիլիկիա և այլն: Եվ այսպես, դարձյալ արևելյան հարցն էր, որ ահեղ կերպարանք էր ընդունում՝ Ասիան ու Եվրոպան իրար դեմ հանելով: Այդ հակադիր արշավանքների մեջ մեծ դեր էր պատկանում Հայաստանին, առանց որի ոչ Իրանը, ոչ էլ առաջացող Եվրոպան չէին կարող Միջագետքի և Սիրիայի տերը դառնալ: Երկու աշխարհների բուռն ընդհարման մեջ դրվում էր մի տեղական հարց, հայ ժողովրդի ինքնուրույն գոյությունը հարցը: Պարզ որոշվում է հայոց հարցը իբրև մի մասնիկ արևելյան հարցի:

Տիգրանի ժամանակ ահագին կարևորություն էր ստացել Հայաստանի սահմանակից հյուսիսային երկրներից մեկը, Պոնտոսը, որ տարածված էր Սև ծովի հարավային ափերում: Այդտեղ թագավորում էր Միհրդատ Պոնտացին, ծագումով պարսիկ, բայց դաստիարակությամբ կատարելապես հելլենացած մի վեհագետ, օժտված պետական և ռազմական ընդունակություններով, անխոնջ ու ձեռնարկող մի բնավորություն: Նա ձգտում էր տարածել Պոնտոսի սահմանները դեպի արևմուտք, դարձնել նրան մի մեծ պետություն, որի մեջ ամփոփված պիտի լինեին ամբողջ հելլենական աշխարհը թե՛ Ասիայում և թե՛ Եվրոպայում: Այսպիսի մի վիթխարի ծրագիր իրագործելու համար Միհրդատ Պոնտացին, որ կոչվում էր նաև Եվպատոր, պիտի կատարի, անհաշտ պատերազմ հայտարարեի Հռոմին, որին էր ենթարկված հելլենական աշխարհը: Եվ այդ պատերազմը, արդարև, հայտարարվեց: Պոնտացուն շատ նպաստում էր այն հանգամանքը, որ այդ միջոցին Հռոմը կեղծվում էր ներքին խռովություններից: Այսպես, հենց այդ ժամանակներն էր, որ Հռոմի պրոլետարիատը կոչվում էր ազնվականության դեմ:

Այսպես էր քաղաքական միջավայրը արևմտյան Ասիայում, երբ Տիգրանը ծանր փրկանքով ազատվեց գերությունից և իր նախնիքների գահին տիրացավ: Նրա նրբամտությունից էր այնուհետև կախված ընտրել, թե ի՞նչ դիրք պիտի բռնե ինքն այդ միջավայրի մեջ՝ իր պետության շահերի տեսակետն առաջացնելու համար:

**3. Հայ-պոնտական միություն:** Տիգրանը միացավ Միհրդատի հետ, որից քիչ մեծ էր հասակով: Երկու հարևանների մեջ կնքվեց մի գաղտնի պաշտպանողական և հարձակողական դաշնադրություն, որի նպատակը նախ և առաջ ազդեցությունների և շահերի բաժանումն էր: Տիգրանին ցույց էր տրվում, նվաճումների համար, արևելքի և հարավի ուղղությունները, ասել է՝ Պարսկաստանը, իսկ Միհրդատին՝ հյուսիսի և արևմուտքի ուղղությունը՝ այսինքն հռոմեական պետության հողերը: Միասին կատարած պատերազմական գործողությունների դեպքում ավարը, գանձերը և բոլոր շարժական գույքերն ստանում էր Տիգրանը, իսկ անշարժը, այսինքն հողերը՝ Միհրդատը:

Այս քաղաքական դաշնադրությունն ամրապնդվեց ընտանեկան մի կապակցությամբ—Տիգրանն ամուսնացավ Միհրդատի աղջիկ Կլեոպատրայի հետ, որ իրենից երեք անգամ փոքր էր տարիքով, ստացել էր հունական գեղեցիկ կրթություն և աչքի էր ընկնում իր խելքով: Այդ կնոջից Տիգրանն ունեցավ երեք արու զավակ և մի աղջիկ: Բայց ինչպես կտեսնենք, իբրև հայր՝ Տիգրանը բախտ չունեցավ:

**4. Նվաճումներ:** Գահ բարձրանալուն պես Տիգրանը Երեք տարի մեծ նուանդ թափեց բանակը վերակազմելու համար: Նա, ինչպես և առհասարակ

<sup>1</sup> Reinach, p. 105.

բոլոր նվաճողները, զինվոր-թագավոր էր, որի համար պատերազմական արշավանքները մի տեսակ կոչում, կյանքի նպատակ են մինչև նույնիսկ խոր ծերություն: Եվ հենվելով իր վերակազմված, լավ կրթված բանակի վրա, նա հրապարակ հանեց մի ընդարձակ աշխարհակալական թափ:

Հավատարիմ մնալով իր դաշնակից աներոջ ցուցմունքներին, նա նախ և առաջ հարձակվեց Կապադովկիայի վրա, որ սակայն, իրեն չէր հարկավոր, այլ Միհրդատին: Եվ որովհետև այս երկիրը, ինչպես ասացինք, Հռոմի շահերի շրջանումն էր գտնվում, ուստի այս հարձակումը գալիս էր ցույց տալու Հռոմին, թե այնուհետև նա պիտի ունենա իր դիմաց ոչ թե մեկին, այլ երկուսին: Սակայն Տիգրանը ուներ և իր միանգամայն անկախ քաղաքականությունը, իր որոշ ծրագիրը, որի իրագործման նա ձեռնարկեց իր սեփական միջոցներով, առանց պոնտական օժանդակության կամ ներշնչումների:

Առաջին գործը, որին նա ձեռնարկեց, Հայաստանի մեջ տիրող բաժանությունը վերացնելն էր: Ծոփաց աշխարհի առանձին թագավորությունը պետության թուլացումն էր առաջ բերում, որ, ինչպես տեսանք, դեռ Արտաշեսն էր նկատել: Տիգրանին հաջողվեց հեշտույթյամբ լուծել այս հարցը, գրավելով Ծոփքը իր զորքերով և ընդմիջտ հեռացնելով նրա թագավորին, որ Զարեհի ժառանգներից էր և կոչվում էր Արտանես: Սակայն այսպես նա չկարողացավ վարվել Փոքր Հայքի հետ, որի թագավորը հպատակված էր Միհրդատ Պոնտացուն, այնպես, որ Հայաստանի սահմանը Կապադովկիայի և Փոքր Հայքի կողմից մնաց Եփրատը:

Այնուհետև նա իր զենքը դարձրեց Պարսկաստանի դեմ, ուր այլևս չկար Միհրդատ Մեծը: Նա ետ նվաճեց իրենից խլած 70 հովիտները, և նորից հայոց իշխանության ենթարկվեցին Ադիաբենը, Կորդուենը, Օսրոենը, Ատրպատականը և Կուրի ու Արաքսի ներքին հովիտը: Պարթևները ետ էին նահանջում հայ աշխարհակալի առջև: Տիգրանը պարթևական թագավորից խլեց «արքայից արքա» տիտղոսը և հատկացրեց իրեն: Այնուհետև պարսից թագավորը պիտի բավականանար սոսկ «թագավոր» անունով:

Այս հաջողությունները ավելի ևս ծավալեցին հայոց թագավորի նվաճողական տենչերը: Կանգ շառնելով մի կետի վրա, նա ավելի լայն ասպարեզ տվեց իր կազմակերպչական թափին: Որքան շատ օտար ազգեր էին մտնում նրա գալիստների տակ, այնքան ստվարանում էր նրա բանակը, գրավելով իր շարքերը բազմաթիվ զինվորներ այդ ազգերից: Բացի դրանից, հայ երկիրը, մինչև այդ վայելած լինելով մի քանի հարյուր տարվա խաղաղություն պարսից տիրապետության տակ, ամբարել էր իր մեջ մեծամեծ հարստություններ, որոնք և այժմ նպաստում էին նրա եռանդոտ և տաղանդավոր թագավորին: Ընդարձակելու պետական ծրագիրը: Տիգրանը կարող էր մեծաքանակ վարձկան զորքեր էլ պահել, գրավելով իրենց հարևան երկրների ազգաբնակչությունից: Այս բոլոր միջոցներով նա հասցրեց իր բանակը մի շտեմոված մեծության, կարծում են, որ նա բաղկացած էր մոտ 500 հազար մարդկանցից:

Այս ահավոր ուժի գլուխ անցած՝ Տիգրանը նվաճեց սելևկյան ամբողջ պետությունը—Միջագետքի մի մասը Մծրին քաղաքով, ուր հիմնվեց հայկական թագավորություն, արևելյան Կիլիկիա, Սիրիա, Փյունիկե և հասավ մինչև իսկ Պալեստինի սահմաններին: Սելևկյան թագավորության անկման ժամանակի անկարգություններից զված ազգաբնակչությունը ամեն տեղ զրկաբաց էր ընդունում հայոց տիրապետությունը, որ բերում էր բազմատեսակ ազգերին խաղաղություն, առևտրին, արվեստներին և արդյունաբերության բարգա-



վաճում: Սերկիյան գեղեցիկ մայրաքաղաք Անտիոքը դարձավ Տիգրանի պետության ամենախոշոր կենտրոններից մեկը:

5. Հայաստանը՝ մեծ պետություն: Տիգրանի նվաճումները վերջացան մոտավորապես 70 թ. Ք. ա., հետևաբար ամբողջ 25 տարի անխոնջ վեհապետը հետևում էր իր պատերազմական ձեռնարկություններին: Այնուհետև նրա առջև բացվում էր ավելի դժվար մի աշխատանք—օգտագործել բազմաթիվ հաղթությունների հետևանքները: Նրա պիս հզոր թագավոր չկար այդ միջոցին ամբողջ Առաջավոր Ասիայում, իսկ Հայաստանը միակ մեծ պետությունն էր աշխարհի այդ կողմում: Նա տարածվում էր Կուր գետի ափերից մինչև Հորդանանի ափերը, Մարաստանի լեռներից մինչև Կիլիկիան Տավրոսի ստորոտները:

Արտաքուստ միապաղաղ էր այդ կայսրությունը, որովհետև հպատակվում էր մի ձեռքի, մի խոսքի, բայց ներքուստ ներկայացնում էր ցեղերի, լեզուների, քաղաքակրթությունների մի ահագին խառնուրդ<sup>1</sup>: Կենտրոնում բուն Հայաստանն էր, իսկ նրա շուրջը՝ նվաճված երկրներ, ուր նստում էին Տիգրանի կողմից նշանակված փոխարքաները: Այսքանն, իհարկե, բավական չէր մի ամբողջական պետություն կազմելու համար: Բավական չէր և այն, որ միապետը ուժեղ էր, հենված մի շատ խոշոր բանակի վրա: Ազգերի և լեզուների մեջ դեռ մի ներքին կապ չէր հաստատված, թեև Տիգրանը լավ էր ըմբռնում, որ այդտեղ է իր կառուցած պետական մեծ շենքի ամբողջ անկայունությունը: Մի շենք էր դա, որի հիմքը դրված էր ավազի վրա: Այդ զգալով էր, որ Տիգրանն աշխատում էր, որքան հնար է, գոնե արհեստական միջոցներով ստեղծել ներքին, փոքրիշատե տոկուն կապեր: Հայ ժողովուրդը իր թվով չափազանց փոքր էր՝ այսքան ընդարձակ տարածությունների վրա ազգաբնակչության մեջ տիրող և կապող պետական տարր կազմելու համար: Այսպիսի դեր նա հազիվ կարողանում էր կատարել բուն Հայաստանի մեջ, ուր նույնպես այդ տեսակ շաղախի անհրաժեշտություն կար: Մյուս կողմից Հայաստանի կենտրոններն էլ չափազանց հեռու էին նվաճած երկրներից, որպեսզի կարողանային գոնե ազդել նրանց վրա:

Տիգրանը, գեթ մասամբ վերացնելու համար այդ պակասությունները, որոնք լուրջ սպառնալիքներ էին նրա պետության համար, ձեռնարկեց հարավում ստեղծելու մի երկրորդ մայրաքաղաք, որ կարողանար Ասորիքի և այլ կողմերի համար դառնալ ոչ միայն վարչական, այլև կուլտուրական-առևտրական խոշոր և ազդեցիկ կենտրոն: Քաղաքի համար նա տեղ ընտրեց Տավրոսի հարավային ստորոտները, Տիգրիս գետի մի ճյուղավորության վրա (որ այժմ կոչվում է Բաթման-տու):

Մի հոյակապ և մեծագործ ձեռնարկություն էր դա, որին Տիգրանը իր անունով տվեց Տիգրանակերտ անունը և որի շքեղության համար նա շինարարեց խոշոր ծախսեր իր անհուն հարստությունից: Նոր քաղաքը նման էր Բաբելոնին ու Նինվեին. շրջապատված էր աղյուսե պարիսպներով, որոնց բարձրությունն էր հիսուն կանգուն, իսկ լայնությունն այնքան էր, որ նրանց վրա շինվում էին ախոռատներ: Ներսում շինվեց անմատչելի միջնաբերդ: Թագավորական փառահեղ պալատը շինված էր պարիսպներից դուրս, շրջապատված այգիներով, որոնց մեջ շինված էին ջրամբարներ՝ ձկների համար և հատուկ անտառակներ, լցված որսի կենդանիներով: Այս մեծ և շքեղ ձեռնարկը

<sup>1</sup> Reinach, p. 344.

Միջագետքի անսպասի և Տավրոսյան լեռնաստանի սահմանում կարծես բնում էր դրոպական գավազանի մի շարժումով: Իսկ նրան բնակեցնելու համար Տիգրանը 71 թվականին արշավանք գործեց դեպի արևմուտք, Կապադովկիայում, Կիլիկիայում և Սիրիայում բաժնեց 12 քաղաք և նրանց բնակչությունը, մոտ 300 հազար հոգի, գլխավորապես հույներ կամ հելլենացած ալլազգիներ, բունադասական միջոցներով գաղթեցրեց իր նոր մայրաքաղաքը: Հայաստանից էլ նախարարական ցեղերը հրաման ստացան տեղափոխվելու այդտեղ, հակառակ դեպքում նրանց ամբողջ ստացվածքը պիտի հարքունիս գրավվեր: Այս ազնվականները, ինչպես և քաղաքի մյուս բնակիչները, Տիգրանին հաճելի բան արած լինելու համար բազմաթիվ շինություններով գեղեցկացրին Տիգրանակերտը<sup>1</sup>: Այսպես կազմակերպվեց հայրավի մեծ մայրաքաղաքը: Եվ եթե նրան տրված լիներ երկար ժամանակ զարգացման վիճակի մեջ մնալ Աղձնիք նահանգի այս հեռավոր անկյունում, անշուշտ մոռացնել կտար ոչ միայն Հայաստանի հյուսիսային մայրաքաղաքը, այլև շատ ուրիշ մեծ կենտրոններ Ասիայում:

Ինքը Տիգրանը, իր պետության նման, ներկայացնում էր արևելքի և արևմուտքի մի խառնուրդ: Հայկական կայսրությունն ըստ էության մի ասիական բնապետություն էր, և Տիգրանը, զուգուց և տեղ այդ պետության, ընդունվում էր իր հպատակներից նաև իբրև աստված: ՔՊվում էր, թե վերածնվել էր Նինվեի թագավորների՝ Սալմանասարի և Սանհերիբի ժամանակը, — ասում է գերմանական նշանավոր պատմաբան Ք. Մունսենը:— Արևելյան բնապետությունը նորից ծանրանում էր սիրիական ափերի վաճառական ազգաբնակչության վրա, ինչպես մի ժամանակ ծանրացած էր Տյուրոսի և Սիրոնի վրա: Նորից ցամաքային մեծ պետությունները հարձակվում էին Միջերկրականի ափերի երկարությամբ գտնվող երկրների վրա. նորից Կիլիկիայի և Սիրիայի ծովափերում կանգնած էին բանակներ, որոնք մոտավորապես կես միլիոն զինվորներից էին կազմված: Ինչպես մի ժամանակ Սալմանասարն ու Նաբուգոդոնոսորը տանում էին հրեաներին Բաբելոն, այնպես էլ այժմ նոր թագավորության սահմանակից երկրներից՝ Կորդուենից, Ադիաբենից, Ասորեստանից, Կիլիկիայից, Կապադովկիայից բնակիչները, մանավանդ հույն և կես-հույն քաղաքացիներ, պարտավոր էին, երկյուղ կրելով իրենց բոլոր կայքերի գրավման սպառնալիքից, բնակչություն հաստատել նոր մայրաքաղաքում: Դու մեկն էր այն վիթխարի քաղաքներից, որոնք ավելի շուտ ազգերի ոչնչության մասին են վկայում, քան տիրողների մեծության մասին և որոնք կարծես գետնից էին բսնում Եփրատի երկրում յուրաքանչյուր նոր մեծ սուլթանի հզոր մի խոսքով: 51

Բայց այդ ասիական մեծ սուլթանը միևնույն ժամանակ հելլենականության սիրահար էր, մի հանգամանք, որի մեջ, անշուշտ, փոքր դեր չէր կատարում գեղեցիկ կրթություն ստացած Կլեոպատրա թագուհին: Արքունիքը լիքն էր հույն արվեստագետներով, բժիշկներով, գիտնականներով: Վերջիններից մեկը, հայտնի փիլիսոփա և հռետոր Մետրոդորը գրեց Տիգրանի մանրամասն պատմությունը<sup>2</sup>, որից տարաբախտաբար, ոչինչ հետք չէ մնացել: Տիգրանը կառուցեց իր քաղաքում և թատրոն, որի համար շրջակա երկրներից

<sup>1</sup> Գլոտտաբեյալ Քերովեացայ, Չուգալչիոք, թարգմ. Հ. Եղիայ Քաման, հ. 9, Վենետիկ, 1833, էր. 566.

<sup>2</sup> Փ. Մոմսեն, «Римская история», М., 1885, т. III, с. 40—41.

<sup>3</sup> Reinach, p. 345.

բերել տվեց հույն դերասանների մի մեծ խումբ<sup>1</sup>: Հունական ողբերգությունների ներկայացումները հաճախ էին կրկնվում: Հայոց արքունիքը գրական-գեղարվեստական մի միջավայր էլ էր, ուր սնվեց Տիգրանի որդիներից մեկը, Արտավազդը ավելի իբրև գրող, քան իբրև թագաժառանգ, ինչպես կտեսնենք քիչ հետո: Հելլենականությունն այսպիսով գալիս էր մի հակադիր հոսանք առաջացնելու իրականության դեմ, որի ազդեցությունը շատ խիստ էր Հայաստանում: Այս ժամանակից էր, անշուշտ, որ հունական աստվածներն էլ սկսեցին մուտք գործել հայկական պանթեոնի մեջ: Բայց չպետք է կարծել, թե Հայաստանը մի երկիր էր, ուր միայն օտար ազդեցություններն էին գործում: Արտաշեսյան հարստության ժամանակ, ինչպես կտեսնենք իր տեղում, բոլորովին չէր մոռացվում հայ ազգային սկզբունքը, չէր մոռացվում, որ առանց հայ դաստիարակության, առանց հայ լեզվի հզոր աջակցության, չէ կարելի հայկական պետություն երևակայել:

Ասիական բռնապետությունը, միահեծան և անսահման իշխանություն տալով թագավորին, չէր արգելում, որ նա երկրի կառավարության մեջ իր օգնականներն ու խորհրդատուներն ունենա: Տիգրանի կազմակերպած կառավարության մասին մանրամասնություններ չեն մնացել: Բայց այդ սիստեմը, անշուշտ, շատ բարդ եղած պիտի լիներ, ուրիշ կերպ անհնարին կլիներ կարգ պահպանել այդքան լայնածավալ մի պետության մեջ: Եվ, անկասկած, կառավարական մեքենայի մեջ առաջնակարգ դեր կատարողը պիտի լիներ հայ ազնվականությունը, որ Տիգրանի թագավորության ժամանակ ավելի ևս զարգացավ իբրև կալվածատեր—ավատատու մի դասակարգ: Այդ դասակարգից Տիգրանի օրով մենք արդեն շատ առաջացած և նշանավոր դիրք բռնած ենք տեսնում Բագրատունի, Մամիկոնյան, Արծրունի և Խորխոռունի նախարարությունների տոհմապետներին<sup>2</sup>:<sup>52</sup>

Հայաստանի կառավարության մի բնորոշ ձևը, որ հաստատեց Տիգրանը, այն էր, որ նա ուներ չորս կողմնակալներ կամ բղջիխներ, որոնք առաջնակարգ կարևոր պաշտոնյաներ էին և պարտավորություն ունեին պաշտպանելու պետության սահմանները: Հյուսիսային սահմանների պաշտպանությունը Գուգարաց բղջիխին էր հանձնվում. արևմտյան կողմինը՝ Մոփաց բղջիխին, հարավայինը՝ Աղձնյաց բղջիխին և արևելյանը՝ նոր Շիրական գավառի բղջիխին, որ, ինչպես կարծվում է, Արծրունյաց նախարարական տոհմից էր նշանակվում<sup>3</sup>: Դրանք համարվում էին գահերեց իշխաններ և պատվով ու նշանակությամբ բարձր էին բոլոր հայ նախարարներից, քանի որ նրանց ձեռքին էր երկրի պաշտպանության գործը: Պլուտարքոսը, նկարագրելով Տիգրանի արքայական շուքը, ասում է, որ չորս թագավորներ մշտապես ծառայում էին նրան ստրուկների պես: Երբ Տիգրանը ձի հեծած գնում էր մի տեղ, նրանք կարճ շորեր հագած, վազում էին ոտով նրա երկու կողքից, իսկ երբ Տիգրանը ունկնդրություն ուներ իր գահի վրա, այդ չորս թագավորները կանգնում էին գահի աստիճանների վրա, ձեռքերը իրար վրա դրած, իբրև նշան, որ իրենց ամբողջ կյանքը տվել են իրենց տիրոջ<sup>4</sup>: Ահա այս չորս թագավորները, ինչ-

1 Պլուտարխոս, *Ձուգակշիռք*, հատ. Գ, էր. 575:  
2 Халатянц, «Очерки», с. 159, Адонц, «Армения», с. 413—416.  
3 Մարկվարտ, «Հայ Բղջիխեր»:  
4 Պլուտարխոս, 2. Գ, էր. 555:

պես կարծում են, հենց այս չորս բղջիխներն էին, Հայաստանի չորս կողմերը պահպանողները<sup>1</sup>:

Տիգրանը կրում էր ծիրանի բաճկոն, կեսն սպիտակ և կեսը ծիրանի շապիկ և լայն վարտիք: Գլխին դնում էր բարձր խուլը, որի վրա ոսկով գործված էին իրար մոտ կանգնած և գլուխները դեպի հակառակ կողմը դարձրած արծիվներ: Հայոց մեծ թագավորը մի ամբողջ պաշտամունք էր իր ժողովրդի համար, մի պաշտամունք, որ այնքան հատուկ է ժողովուրդներին իրենց մանկության շրջանում: Մինչև անգամ ասում են, թե նա, եգիպտական թագավորների օրինակը բերելով, կոչվում էր «աստված»<sup>2</sup>:<sup>53</sup> Եվ այս հասկանալի է, երբ նկատի ենք առնում նրա՝ իսկապես մեծ փառքը իր ժամանակակից աշխարհում: Հռոմեական ամենատաղանդավոր զորավարներն անգամ, թեև անհաշտ թշնամիներ, ընդունում էին, որ աշխարհի ամենահզոր և մեծ թագավորները Միհրդատ Պոնտացին է և Տիգրան Հայր<sup>3</sup>: Այս փառքը Տիգրանն էլ վաստակել էր պատերազմների մեջ: Ժիր ու անխոնջ էր նա նույնիսկ իր ծերության օրերում: Յոթանասունամյա հասակում էլ նա առաջնորդում էր իր զորքերը պատերազմի մեջ:

**6. Հռոմեական պատերազմ:** Մինչդեռ Տիգրանն իր մեծ պետության գործերով էր զբաղված, Միհրդատ Պոնտացին, նույնպես ընդարձակելով իր պետության սահմանները Ասիայում և Եվրոպայում, իրար ետևից խլում էր երկրներ, որոնք կամ Հռոմին էին պատկանում կամ թե պաշտպանված էին նրանից: Առժամանակ Հռոմը տանում էր այս դրությունը, քանի որ ներքին խռովություններ էին բորբոքված նրա մեջ: Բայց հետո, ազատվելով այդ բորբոքություններից, նա շտապեց վերանորոգել եռանդն ու գործունեությունն արեւմելյան հարցի մեջ և պատերազմ հայտարարեց Միհրդատին, հանձնելով իր բանակի գլխավոր հրամանատարությունը Լուկուլլոսին: Միհրդատը գնաց այդ նոր ախոյանի դեմ, բայց այս անգամ հռոմեացու տաղանդն էր, որ հաղթող հանդիսացավ: Այդ մեծ մրցման մեջ միակ էր մնացել Պոնտոսի թագավորը՝ Տիգրանը խղել էր իր աներոջ հետ կապած դաշնակցությունը, ավելի ձեռնտու համարելով չեզոքություն պահպանելը: Հռոմի ծերակույտը մի առանձին պատճառ չէր տեսել հայերի դեմ էլ թշնամական գործողություններ սկսելու համար, ուստի Լուկուլլոսի լիազորությունների մեջ մտնում էր միմիայն պատերազմ Միհրդատի դեմ<sup>4</sup>: Հայոց երկիրը առհասարակ չավ ծանոթ չէր հռոմեացիներին, ուստի և հեշտությամբ չէր կարելի այստեղ պատերազմ սկսելու վճիռ տալ: Գիտեին, որ դա ընդհանրապես լեռնային դժվարակոխ մի երկիր է, ուր կարճատև է ամառը և դաժան ու երկարատև՝ ձմեռը, ուր ազգաբնակչությունն էլ մի ռազմիկ տարր է կազմում, որի դեմ կովելը այնքան էլ հեշտ չէ: Այդ բոլորի վրա ավելանում էր, իհարկե, Տիգրանի պատերազմական հռչակըն էլ:

72 թվականին Միհրդատը շարաշար պարտություն կրելով հռոմեացիներից, փախավ Հայաստան՝ իր փեսայի մոտ պաշտպանություն և ապաստան որոնելու համար: Եվ նա գտավ թե մեկը և թե մյուսը: Տիգրանը հրամայեց պահել նրան արքայական պատիվներով, բայց հեռու արքունիքից, սահմանի

1 Մարկվարտ, էր. 23—25:  
2 Reinach, p. 344.  
3 Պլուտարխոս, 2. Գ, էր. 574:  
4 Моммсен, т. III, с. 54.

մոտ գտնվող մի բերդում: Մոտ երկու տարի Միհրդատը մնաց այսպես և Տիգրանը նույնիսկ չգնաց նրան տեսնելու: Այսպես էր պարտավորեցնում չեզոքությունը: Բայց կա և այն հանգամանքը, որ երկու դաշնակիցների անձնակազմը հարաբերություններն էլ վատացած էին պալատական ինտրիգների պատճառով:

Այսպիսով, Լուկուլլոսը ժամանակ և հարմարություն ուներ հանգիստ կերպով գրավելու պոնտական բերդերը միմյանց ետևից: Միաժամանակ նա մտածում էր, թե ինչ պիտի անե, որ հայոց թագավորին էլ պատերազմի մեջ քաշե: Թեև այսպիսի հրաման նա չուներ վերևից, բայց հարկական պատերազմը անհրաժեշտ էր համարում նա թե՛ անձնական և թե՛ պետական տեսակետից: Անձնապես նրա մեջ խոսում էր հաղթական հաջողություններով հղիացած զորավարի փառասիրությունը: Բայց պետական շահերն էլ պահանջում էին ազատել ժովպինյա Սիրիան հարկական տիրապետությունից և այդպիսով վերականգնել այդտեղ Հռոմի հեղինակությունը, որ պիտի ապահովեր հռոմեական շահերի տիրապետությունն ու ծավալումը:

Բայց պետական շահերը կարող էին և մոռացվել, եթե հաղթանակ տաներ հռոմեացի զորավարի անձնական շահը: Միհրդատը, հռչակավոր անուն ստացած Հռոմի դեմ մղած պատերազմների մեջ, հաղթված էր՝ զրկվելով իր ամբողջ կարողությունից: Նա պիտի պատկաներ հաղթողին: Հռոմի զորավարները արշավանքներից վերադառնալով մեծ հանդեսներով հաղթական մուտք էին գործում մեծ մայրաքաղաքը: Եվ այդ հանդեսների ամենամեծ զարդերը հաղթանակների քան նշաններն էին, որ տանում էին իրենց հետ հաղթողները Լուկուլլոսին, իհարկե, շատ ցանկալի էր Հռոմ իր ետևից իբրև իր գերի մտցնել հռչակավոր Միհրդատին: Ուստի նրան ձեռք ձգելու համար Լուկուլլոսը, Ապպիոս Կլավդիոսին դեսպան ուղարկեց Տիգրանի մոտ, պահանջելով, որ պոնտական թագավորը իրեն հանձնվի: Հայկական պատերազմի համար այս մի լավ դիվանագիտական պատրվակ էր:

Տիգրանը այդ միջոցին գտնվում էր Փյունիկեում, ուր պաշարած ուներ մի բերդ, Սելևկյանների վերջին ապստարանը: Դեսպանին առաջարկվեց սպասել Անտիոքում, իսկ նա, ի շարք գործ դնելով իր գտած հյուրընկալությունը, ամեն տեղ ծածուկ քարոզում էր ապստամբություն Տիգրանի դեմ: Այս արդեն ապացույց էր, որ հռոմեացիները վճռել էին անպատճառ պատերազմել հայերի դեմ: Դեսպանը հայտնում էր Լուկուլլոսին, թե Սիրիայի ամբողջ հույն ազգաբնակչությունը անտանելի է համարում հայկական տիրապետությունը և շատերն են խոստացել ապստամբվել և ինքն էլ հուսադրել նրանց<sup>1</sup>:

Գրավելով սելևկյան վերջին ամրությունը, Տիգրանը վերադարձավ Անտիոք: Բոլոր առհասարակ բռնապետներին հատուկ գոռոզ մեծամտությունը ավելի ևս հափշտակել էր նրան, և նա, ինչպես նրա նման ամեն մեկը, արկարծիքի էր, թե ամեն ինչ, որ ցանկանում են և սիրում են հասարակ մահկանացուները, ոչ միայն պատկանում էր նրան, այլև ստեղծված էր նրա համար: Լուկուլլոսի դեսպանին նա ընդունեց սովորական շքեղությամբ: Լուկուլլոսի նամակը գրված էր մեծ թագավորին արհամարհելու ոճով: Տիգրանը անվանված էր լուկ «թագավոր» և ոչ թե «արքայից արքա», ինչպես այդ ընդունել էին մինչև իսկ պարթևները: Դեսպանն էլ նամակի նույն ոճը պահպանելով

հայտարարեց, թե Միհրդատը Լուկուլլոսի անձնական սեփականությունն է կազմում և պիտի հանձնվի նրան. հակառակ դեպքում պատերազմ պիտի բորբոքվի: Տիգրանը, սառնասրտություն պահպանելով, պատասխանեց, թե ինքր Միհրդատին արդարացնել չէ կարող, բայց չէ կարող և տալ նրան հռոմեացիների ձեռքը՝ և եթե այս պատճառով հռոմեացիները պատերազմ հայտարարեն, նա կիմանա ինքն իրեն պաշտպանել: Այս պատասխանը միակ վախճան էր մի անկախ պետության ներկայացուցչին: Դրա հետ միասին Տիգրանը իր պատասխան նամակի մեջ փոխադարձ վիրավորանք ուղարկեց Լուկուլլոսին, չհիշատակելով նրա «իմպերատոր» տիտղոսը (70 թ. Ք. ա.):

Պետք է ասել, որ թեև հռոմեացի գրողները հայոց թագավորին ներկայացնում են շատ մեծամիտ ու գոռոզ, բայց նա այս դեպքից հետո ո՛չ միայն պատերազմի առիթ չէր որոնում, այլև չէր հավատում թե իր մերժումը կարող է պատերազմի պատճառ դառնալ: Ուստի և ոչ միայն պատերազմական պատաստությունների ետևից չընկավ, այլ, ընդհակառակը, մի քանի ամիս շարունակ զբաղված էր իր Տիգրանակերտի կառուցման և ավարտման տունակատարությունների պատրաստությամբ:

Բայց այդ տոները վիճակված չէին նրան, որովհետև Լուկուլլոսը 69 թվականին արդեն լուրջ պատրաստություններ էր սկսել պատերազմի համար: Քանի որ նա պատերազմ պիտի մղեր հայերի դեմ հակառակ Հռոմի ծերակույտի ցանկության, իր անձնական պատասխանատվությամբ, ուստի, իհարկե, և չէր կարող խնդրել, որ իր փոքրաթիվ բանակը ստվարացվի օգնական զորքերով: Այդ ժամանակ միայն Տիգրանն էլ իր միջոցները ձեռք առավ: Ամենից առաջ իր մոտ կանչեց Միհրդատին, հաշտվեց նրա հետ և միասին կազմեցին պատերազմական գործողությունների ծրագիրը: Միհրդատը խորհուրդ տվեց իսկույն թշնամական գործողություններ սկսել, չսպասելով, որ սկսող դառնան հռոմեացիները: Որոշվում էր խույս տալ մեծ ճակատամարտերից և ավելի գործադրել թշնամուն նեղելու և պարենավորումից զրկելու ռազմական միջոցները: Կովի այս եղանակը շատ գործածական էր այն ժամանակները և նրան քիչ առաջ դիմել էր Լուկուլլոսը՝ հանդեպ Միհրդատի մեծաքանակ բանակի: Հայ զորքերից Միհրդատին տրվեց 10 հազար ձիավոր և նա գնաց Պոնտոս՝ այնտեղից հռոմեացիներին վճռելու համար:

Լուկուլլոսն շտապեց կանխել իր հակառակորդներին և ինքն սկսեց հայկական արշավանքը: Հռոմեական աղբյուրները պայծառ և գեղեցիկ մանրամասնություններով են նկարագրում այդ արշավանքը: Բայց նրանք, տարաբախտաբար, մի ընդհանուր պակասություն ունեն—միակողմանիություն: Հիմնված ըինելով գլխավորապես Լուկուլլոսի պաշտոնական զեկուցումների և արշավանքին մասնակցած այլ հռոմեացի զինվորականների պատմվածքների վրա, այդ տեղեկությունները ամեն տեղ և ամեն կերպ աշխատում են փառաբանել Լուկուլլոսին և ստորացնել նրա հակառակորդներին: Այս միտումնավորությունը շահագործել է նույնիսկ և հրաշքները, ցույց տալու համար, թե նույնիսկ երկինքն էլ ջանք էր թափում, որ հռոմեացիների հաղթանակը լիակատար և փառավոր լինի: Սակայն այդ ծայրահեղ միակողմանիության մեջ էլ մնացել են շատ ակնարկներ, որոնք վկայում են, թե հռոմեական աղբյուրները թաքցնում են շատ բան, որ ձեռնառու չէր Լուկուլլոսին և նրա բանակին:

<sup>1</sup> Reinach, p. 354.

<sup>2</sup> Моммсен, III, с. 54.

<sup>1</sup> Պլուտարխոս, 2. 9, եր. 354.

Սակայն պատմությունը ուրիշ աղբյուր չունի, բացի այդ միակողմանի նյութերից:

Պլուտարքոսը Լուկուլլոսի կենսագրության մեջ ընդարձակ տեղեկություններ է տալիս այդ արշավանքի մասին, որոնք միայն պատերազմական արժեք չունեն, այլև ներկայացնում են հայ իրականության հետաքրքրական պատկերները: Նրան էլ մենք հետևենք այս պատերազմի պատմության մեջ:

69 թվականի գարնան Լուկուլլոսը, 6000 ձիավոր զորք թողնելով Պոնտոսի պաշտպանության համար, իր բանակի մնացած բոլոր ուժը, 15 հազար հետևակ և ձիավոր, մեծ զգուշություններով կապադովկիա տարավ: Հասնելով Եփրատի աջ ափը, նա խորին դժգոհությամբ տեսավ, որ մեծ գետի ջրերը սաստիկ հորդացել են ու պղտորվել՝ Հայաստանի լեռներում եկած անձրևներից: Դժվարանում էր գետն անցնելու հարցը: Պետք էր լաստեր և կամուրջ շինելու մասին հոգալ: Բայց գիշերը անակնկալ կերպով գետի մակերևույթն իջավ, սովորական տեսքն ընդունեց: Այս շատ հեշտ հասկանալի երևույթը տեղական ազգաբնակիչները հրաշքի փոխեց: Նրա հասկացողությանը գետն ինքն էր խոնարհում հոռմեացիների առաջ և ճանապարհ էր տալիս Լուկուլլոսին: Այս տեսակ բացատրություն տալիս էին և իրենք, լուսավորված հոռմեացիները: Նրանց զորքը առաջին անգամն էր ոտ դնում Հայաստանի հողի վրա, ուստի և լայն ծավալ էին ստանում սնապաշտությունն ու նախապաշարմունքները: Առաջին հրաշքին հետևեց երկրորդը: Եփրատի ձախ ափին (հավանաբար Եկեղյաց գավառ)<sup>1</sup> արածում էին բազմաթիվ երինջներ, որոնք նվիրված էին Հայաստանի ամենամեծ աստվածուհուն, Անահիտին, որի հռչակավոր տաճարը գտնվում էր Եկեղյաց գավառի Երիզա ավանում: Երինջները բացառապես զոհաբերության համար էին: Նրանք ազատ թափառում էին արոտներում և ոչ ոք չէր դիպչում նրանց: Ամեն մեկը կրում էր իր վրա խաբանված նշան, մի ջահ, որ Անահիտի նշանն էր: Այդ վայրենի երինջներից մեկն ու մեկը բռնելը շատ դժվար գործ էր համարվում: Եվ ահա նրանցից մեկը բարձրանում է մի ժայռի գագաթ, որ նվիրական էր համարվում և գլուխը խոնարհեցնում է այնպես, որպես թե ինքնակամ զոհ դառնալ է ուզում: Հոռմեացիներն, իհարկե, իսկույն զոհում են նրան: Լուկուլլոսը մի ցուլ է զոհում և Եփրատին՝ իր անփորձ անցքի համար: Մենք արդեն գիտենք, որ հայկական մեծ գետերը սրբություններ էին ժողովրդի համար:

Անցնելով Հայաստանի մեծ գետը, Լուկուլլոսը տարավ իր բանակը Մոփաց աշխարհով դեպի հարավ: Մոփաց աշխարհի բերդերում էին պահվում արքունի գանձերը: Այդ բերդերից մեկը կամեցավ վերցնել հոռմեական զորքը, բայց Լուկուլլոսը, ցույց տալով հեռվում երևացող Տավրոս լեռնաշղթան, ասաց. «Ահա իսկական բերդը, որ պիտի վերցնենք մենք»: Մոփաց աշխարհի ազգաբնակիչները նա ոչինչ վնաս չհասցրեց: Շտապում էր դեպի Տիգրանակերտ, ուր պիտի հանդիպեր Տիգրանին: Շարժողությունների արագությունն էլ վճռական նշանակություն ունեցավ հոռմեական հաջողությունների համար:

Պլուտարքոսը Տիգրանի զինվորական ուժի մասին չափազանց քիչ տեղեկություններ է հաղորդում, քաղելով այդ թվերը, անշուշտ, Լուկուլլոսի ինքնագովական զեկուցումներից: Իրողությունն այն է, որ Տիգրանը պատրաստ չէր պատերազմի: Նա նոր էր վերադարձել Սիրիայից և ծրագրերն էր կազմում Հռոմին պատկանող Ասիական նահանգի վրա հարձակվելու մասին:

<sup>1</sup> F. Cumont, „Notes sut le Culte d'Anaïtis“, Paris, 1905, p. 4.

Ատում են, թե նա ուներ 200, մինչև իսկ 250 հազար զորք՝ հոռմեական 15 հազարի դեմ: Այդ բանակում կային և Տիգրանին հպատակված թագավորներ՝ իրենց զորքերով: Այստեղ իրար հանդիպում էին Սև, Կասպից, Միջերկրական ծովերի և Պարսից ծոցի ափերին ապրող ժողովուրդները՝ Տիգրանը, թեև անպատրաստ, հույս ուներ այս մեծ թվի վրա<sup>2</sup>: Ասիական բռնապետին հատուկ վերաբերմունք ցույց տվեց նա վտանգին—հոխորտանք, պարծենկոտություն: Առաջին գուժկանը, որ Լուկուլլոսի արագ շարժման լուրը տարավ նրան, գրկատվեց նրա հրամանով: Սրանից հետո, իհարկե, չգտնվեց մի ուրիշը, որ բանբերություն աներ թագավորի համար, որ և մնաց առանց տեղեկությունների:

Լուկուլլոսի արագ շարժման առաջն առնելու համար՝ հայոց բանակից մի փոքրիկ զորաբաժին, մոտ 2000 հոգի, Մեհրուժանի (երևի Արծրունի տոհմից) ղեկավարությամբ, ուղարկվեց թշնամու դեմ: Այս առաջին ընդհարման մեջ հայերը շարաշար պարտություն կրեցին և նրանց հրամանատար Մեհրուժանն էլ սպանվեց: Այս պարտության լուրն առնելուն պես Տիգրանն շտապով թողեց Տիգրանակերտը և իր բանակը տարավ դեպի ետ, դեպի Հայաստանի խորքեր՝ անշուշտ այնտեղ լավ պատրաստվելու համար: Նա սպասում էր և Միհրդատին ու մյուս հպատակ թագավորներին, որոնք պիտի միանային իր հետ: Քաղաքի պաշտպանությունը նա հանձնեց Մանկե զորավարին, որին տվեց բազմաթիվ վարձկան զորքեր: Շարժումը դեպի ետ, դեպի Տավրոս այնքան հապճեպ էր, որ Տիգրանը չկարողացավ տանել իր հետ իր հարեմն ու գանձերը: Տիգրանակերտը պաշարման ենթարկվեց, հոռմեացիները գրավեցին և պարիսպներից դուրս գտնվող արքայական պալատը:

Երկու կողմերն սպասողական դիրքի մեջ էին: Տիգրանը, կշռելով հոռմեական արշավանքի հանգամանքները, ուզում էր հետևել լինել Միհրդատի խորհրդին, այսինքն պատերազմ շտալ, այլ միայն նեղել թշնամուն և նրա պարենավորումը դժվարացնել: Լուկուլլոսն էլ սպասում էր, որ Տիգրանը, իբրև ասիացի, չի համբերի և կհարձակվի իր վրա: Եվ իրավ, Տիգրանն իր բանակից մի ընտիր զորաբաժին ուղարկեց, որ պատեց մայրաքաղաքը պաշարող շրջափան, ներս մտավ և վերցնելով թագավորի հարեմն ու հարստությունները, նորից ճանապարհ բացավ հոռմեացիների միջով և ամբողջն անվնաս հասցրեց հայոց բանակը: Այս նշանավոր, բայց մասնակի հաջողությունն այնքան թեւավորեց հայոց թագավորին, որ նա կանգ առավ և շարունակեց իր նահանջը, երբ Լուկուլլոսը, պատերազմական խորհուրդ կազմելուց հետո, վճռեց իր բանակի մի մասով շարունակել Տիգրանակերտի պաշարումը, իսկ մյուսով գնալ Տիգրանի վրա: Եվ Տիգրանն ընդունում էր պատերազմը, թեև գրաված ուներ անհարմար դիրք: Թեթև հաջողությունը մոռացնել էր տվել զգուշությունը, որ խորթ չէր նրա բնավորության: Մեծամտությունը կուրացրեց նրան և, եթե հավատանք Պլուտարքոսին, նայելով արշավող հոռմեացիների բազմություն, նա հեզանքով ասաց. «Եթե դրանք իբրև դեսպաններ են գալիս, շատ են, իսկ եթե իբրև զինվորներ են գալիս, քիչ են»: Թշնամու ուժն արհամարհելն արդեն պարտության հավանականությունն է կրում իր մեջ: Լուկուլլոսն իսկույն նկատեց, որ հայերը չեն գրավել մի բլուր, որ կարևոր դիրք էր հեծե-

<sup>1</sup> Моммсен, III, с. 56—57.

<sup>2</sup> Նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Տիգրանի զորքերի թիվն էր 70—80 հազար, իսկ հոռմեացիների թիվը 22 հազար, չհաշվելով օգնական զորքերը (Հ. Աստուրյան, «Քաղ. վերաք. ընդ մեջ հայ. և հռոմ.», էր. 338—343):

լազորի թիկունքում: Նա իսկույն մի զորաբաժին ուղարկեց՝ արդ տեղը քր-  
վելու համար, իսկ հետևյալ զորքերով հարձակվեց հայերի վրա թևեց: Տիգ-  
րանի հետևակ զորքը գեռ շէր գրավել իր տեղերը: Անպակնկալ հարվածը, որ գա-  
լիս էր թիկունքից և թևից, մի կարճ միջոցում տակնուվրայություն մտցրեց  
հայկական բանակի մեջ, որ և խոսճապի մատնվելով, փախուստի դիմեց նույ-  
նիսկ առանց պատերազմ սկսելու: Պարտությունը կատարյալ էր: Լուկուլլոսը  
կարող էր մտցնել նրա նկարագրության մեջ որքան շափազանցություն և ան-  
հեթեթություն կազմենում էր: Այսպես, նա հաղորդում էր Հռոմի ձեռակալության,  
թե հայերի կողմից սպանվել են հարյուր հազար մարդ, իսկ հռոմեացիների  
կողմից—միայն հինգ մարդ: Իսկությունն այսպես չէր, իհարկե: Բայց և այն-  
պես, դա մի խոշոր հաղթություն էր, որ տարան հռոմեացիները հովտամերի  
Յ-ին և որ, ինչպես ասում է Առմսենը, օմնում է առաջին կարգի մի ասոց  
Հռոմի փառավոր զինվորական պատմության մեջ<sup>1</sup>:

Տիգրանն էլ խուճապի բռնվեց և փախավ: Դա մի մարդ էր, որ պարծին  
կոտորության մեջ շափ չէր ճանաչում, բայց անհաջողության մեջ շուտ վեր  
էր կորցնում և հոսահատվում: Փախուստի միջոցին նա վերցրեց զինի խույ-  
րը, տվեց արտասվելով իր որդուն և պատվիրեց նրան ուրիշ ճանապարհով  
փախչել՝ իր անձն ազատելու համար: Որգին շհամարձակվեց խույրը իր գլխին  
գնել և տվեց պահելու իր հավատարիմ սպասավորին: Սակայն սա հողմեա-  
ցիների ձեռքը գերի ընկավ խույրի հետ, որ և Լուկուլլոսի համար գարձակ  
հաղթանակի նշան:

Իր տիրուր նահանջի ճանապարհին Տիգրանը հանդիպեց Միհրդատին, որ  
նրան օգնության էր գնում: Պահապան իջավ ձիուց և սկսեց մխիթարել ձե-  
րանի հայ թագավորին, համարելով այդ պարտությունը մեծ գործախուժյուն  
երկուսի համար էլ: Սակայն դեռ ավեն ինչ կորած չէր և անհրաժեշտ էր  
ապագայի ակնկալությունը, ձեռք զարկին նոր բանակ կազմելու, գիմաջրու-  
թյան նոր միջոցներ գտնելու:

Իսկ Տիգրանակերտը երկար շփմացավ պաշարման: Պատճառն այն չէր,  
որ նա պակաս ամուր էր: Մանկեն էլ իր բերգապահ զորքով քաջարար պաշտ-  
պանում էր մայրաքաղաքի անառիկ ամբարձրությունները: Բայց քաղաքի հույ  
ազգաբնակչությունն էր, որ ապստամբվեց և պահանջում էր անձնատուր լի-  
նել հռոմեացիներին, Մանկեին ոչինչ չէր մնում, բայց եթե բաց անել Տիգրա-  
նակերտի գոնեքը Լուկուլլոսի առջև: Հռոմեացիները ոչինչ չխնայեցին: Ինքը  
Լուկուլլոսը հափշտակեց բոլոր գանձերը, իսկ քաղաքը տվեց զինվորներին,  
որոնք բարբառոսաբար ավերեցին ու կոտորեցին: Հռոմեացիների ձեռքը մի-  
միայն արթունի գանձարանից գրամով ընկավ Յ հազար տաղանգ, որ կազմում  
է 48 միլիոն ֆրանկ<sup>2</sup>:

Բայց հռոմեական հաղթանակը ահագին էր, մասնավորապես իր բերած  
հետևանքով: Լուրը ցնցեց ամբողջ Արևելքը, և Տիգրանի ստեղծած կայսրու-  
թյանն սկսեց փլիչել: Տիգրանից գեպի հարավ ընկած երկրները, Միդիան շա-  
պուհի իրենց հավատարմությունը հայտնել Լուկուլլոսին և թոթափեցին Տի-  
գրանի լուծը:

Ինքը հայոց թագավորը կարծում էր, թե այդպես ոչինչ չէ կարելի անել  
հռոմեացիների դեմ և, թվում է, պատրաստ էր մեծամեծ զոհողություններով

<sup>1</sup> Mommsen, III, c. 57.

<sup>2</sup> Reinach, p. 363.

հաշտություն խնդրել Լուկուլլոսին, աշխատելով գոնե փոքր ի շատե տանելի  
պայմաններ ձեռք բերել իր երկրի անկախ ցայտության համար: Այսպես էլ  
կվարվեք նա, եթե չլիներ Միհրդատը: Պոնտոսի տաղանդավոր թագավորը իր  
և իր փեսայի համար ստեղծված այնքան տխուր հանգամանքների մեջ էլ  
տեսավ, որ Լուկուլլոսի ցրությունն էլ շատ լավերից չէ: Նրա գեմ գեռ կարելի  
էր կազմակերպել մի ահավոր պատերազմ, որի համար Հայաստանը գեռ շափ  
միջոցներ ուներ: Հարավային սահմանների վրա կորցրած մի քանի երկրներ  
գեռ ապացույց չէին: Թե բուն Հայաստանն էլ կորած է միանգամայն: Իր այս  
փախուժումներն ու ձրագիրները նա հայտնեց Տիգրանին, որ և համաձայնու-  
թյան տվեց ու նրան հանձնեց առաջիկա պատերազմի զինվորական և քաղա-  
քական բոլոր պատրաստությունները: Միհրդատը, չնայած իր ձեռ հասակին,  
մեծ աշխուժով սկսեց զորքի և կազմակերպել<sup>1</sup>, միշտ օգնական և աջակից  
ղեկնալով Տիգրանին:

Հակառակորդն էլ քնած չէր և շափում-կռում էր բոլոր հնարավորություն-  
ները: Տիգրանակերտի տիրուրը հետ Լուկուլլոսը, գոյությունն ու շրջա-  
հայեցությունը գեղավար ունենալով, չգնաց Տիգրանի կողմից, շտորացավ Հա-  
յաստանի մեջ, այլ անցավ Կարգվաց աշխարհը՝ այնպիսի անհեղու համար,  
գրավելով այնտեղ եղած հացի պաշարների առատությունից: Կորուրը Տիգ-  
րանի նվաճած մասը թագավորություններից մեկն էր, վանի լճի հարավային  
կողմում: Կորագրները նույնպես հայոց բանակի մեջ էին և խոշոր ծառայու-  
թյաններ էին անում հայերին իբրև զինվորական ճարտարագետներ և մեթո-  
կագետներ<sup>2</sup>: Բայց նրանց թագավոր Չարրեհնոսը, կնթարկվելով հասմեացի-  
ների հարգորդներին, անցավ նրանց կողմը, ուստի և սպանվեց Տիգրանի հրա-  
մանով: Լուկուլլոսը գնաց Կորուրը իր գաշնակցի թագունը փառավոր կերպով  
կատարելու պատրվակով: Իսկայես նրա նպատակն էր այդտեղից հետևեց  
Պարսկաստանի բռնած գիրքին և համապատասխան միջոցների ձեռնարկելու:

Նույն ձմեռը (68 թ.) Տիգրանն ու Միհրդատը Հայաստանում պատերազ-  
մական արտակարգ և հոսանքուն պատրաստություններ էին տեսնում: Հավա-  
քում էին զորքեր, ոգևորելով երեսասարդությունը ազգային պաշտպանու-  
թյան գազափարով<sup>3</sup>: Պարսկաստանում էին գեներ և ուստի պաշարներ, կար-  
գի էին բերվում բերքերը: Միջոցների մեծագույն մասը Հայաստանն էր  
հաղթանակում, բայց Միհրդատը օգտագործում էր բոլոր նպաստավոր պայման-  
ները: Առանձնապես աշխատեց նա հաշտեցնել պարթևների թագավորին Տիգ-  
րանի հետ այն պայմանով, որ Պարսկաստանն էլ մասնակցե պատրաստվող  
պատերազմին: Նրա առաջարկությունը Տիգրանը համաձայնվեց վերադարձ-  
նել Պարսկաստանին Միջագետքի այն երկրները, որոնք խլված էին նրանից:  
Այսպես այստեղ հայտնի գարձավ, որ պարթևների համար ուժեղ ու մեծ Հա-  
յաստանը նույնքան անցանկալի էր, որքան և ինքը Հռոմը: Ուստի և պարթև-  
ների թագավոր Տրաատը կամ Հրահատը ավելի լավ համարեց, որ առանց իր  
վաթիակցություն՝ երկու կողմերը կոտորեն ու ոչնչացնեն իրար, որքան կա-  
մենում էին: Նա մեթոց Տիգրանին, բայց միաժամանակ բանակցություններ  
սկսեց Լուկուլլոսի հետ, այն հույսով, թե զուցե հռոմեացիներից ավելի մեծ  
օգուտներ կարելի կլինի սպասել: Լուկուլլոսը միևնույն խոստումներն արավ,  
ինչ արել էր Տիգրանը: Սակայն նրա ուղարկած դեսպանը Տիգրանում ավելի

<sup>1</sup> Mommsen, III, c. 59.

<sup>2</sup> Strabon, XIV, ch. I, 24.

<sup>3</sup> Reinach, p. 36.

լրտեսողի տպավորություն թողեց և Հրահատը, վախենալով, թե հոռմեացիները պիտի հարձակվեն և իր վրա, հայտարարեց Պարսկաստանի շեզոքությունը:

Տիգրանն ու Միհրդատը այս դիվանագիտական անհաջողությունից շթուլացան: «Միհրդատը,— ասում է Մոմսենը,— ավելի մեծ հաջողություն ունեցավ, երբ թագավորների փոխարեն դիմեց արևելքի ազգերին: Դժվար չէր պատերազմը ներկայացնել իբրև Արևելքի ազգային մի պայքարը արևմտքի դեմ, որովհետև կռիվը հենց ձիշտ այդ կերպարանքն էլ ուներ»<sup>1</sup>: Այս հողի վրա մեծ շարժում ստեղծելու համար պատերազմին հաղորդվեց և կրոնական հանգամանք: Լուր տարածվեց, թե Լուկուլլոսի արշավանքի իսկական նպատակն է կողոպտել Անահիտի հուշակավոր մեհյանը, որ մեծագույն պաշտամունքի առարկա էր ոչ միայն Հայաստանում, այլև ուրիշ երկրներում: «Հեռավոր և մոտիկ տեղերից ասիացիները խմբերով հավաքվում էին երկու թագավորների դրոշների տակ, որոնք կանչում էին նրանց պաշտպանելու արևելքն ու նրա աստվածներին անաստված օտարերկրացիների դեմ»<sup>2</sup>: Հայոց թագավորի բանակում էին և՛ վրացիներ, և՛ մարեր, բայց մանավանդ շատ էին մարերը<sup>3</sup>, որոնց թագավորը, նույնպես Միհրդատ անունով, Տիգրանի փեսան էր և աչքի ընկնող դեր էր կատարում սկսված շարժումների մեջ: Այդ հավաքված քաղաքացիներին աշխատեցին զինվորական կրթություն տալ, որքան հնարավոր էր, և մարզիչներ կարգվեցին Միհրդատի արքունիքում գտնվող հույն սպաներն ու իտալացի փախստականները: Հիմնովին փոփոխվեց և պատերազմելու եղանակը: Փորձն արդեն ցույց էր տվել, որ ահագին զանգվածներից կազմված բանակները ոչ միայն օգուտ չեն բերում, այլև վտանգավոր են Ուստի որոշվեց ուշադրություն դարձնել ոչ թե քանակի, այլ որակի վրա: Եվ բոսնական բանակի թուլությունը ձիավոր զորքի պակասությունն էր, մինչդեռ ասիացիների առավելությունը հենց այն էր, որ նրանք ունեին բազմաթիվ և լավ կազմված հեծելազորք: Վճռելով օգտագործել այդ ասիական առավելությունը, հայոց նորակազմ բանակի համարյա կեսը ձիավորներից էր բաղկացած: Վճռվեց նույնպես մեծ պատերազմներից խուսափել և գործադրել միայն լեռնային, մանր պատերազմների սիստեմը: Պատերազմական բեմ դառնում էր բուն Հայաստանը, որի թե՛ աշխարհագրական պայմանները և թե՛ ազգաբնակչության տրամադրությունը միանգամայն համապատասխանում էին այդպիսի պատերազմի պահանջներին<sup>4</sup>: Ընդամենը Տիգրանի դրոշակի տակ հավաքված էին մոտավորապես 40 հազար հետևակ և 3 հազար ձիավոր զորքեր<sup>5</sup>: Այս բանակը բավական եղավ, որ մի կարճ միջոցում ոչնչացնե հռոմեական հաղթությունների բոլոր հետևանքները:

Հայ-պոնտական հաջողությունները սկիզբ էին առնում ամենից առաջ այն անբարեհաջող հանգամանքների մեջ, որոնք գալիս էին խտանալու հռոմեացի զորավարի անձի շուրջը: Միանգամայն անսխալ էր Միհրդատի խորթաթափանց կանխատեսությունը: Լուկուլլոսը դժվար դրություն մեջ էր գտնվում և այդ դրությունը միանգամայն վտանգավոր կերպարանք էր ընդունել 68-ի գարնան: Հռոմի մեջ անբավականությունը Լուկուլլոսի դեմ գնալով աճում էր

<sup>1</sup> Mommsen, III, c. 59.

<sup>2</sup> Ibid.

<sup>3</sup> Reinach, p. 365.

<sup>4</sup> Mommsen, III, c. 60.

<sup>5</sup> Reinach, p. 364.

չեյաթ, նրա տարած փայլուն հաղթություններին: Անբավականների գլուխն էին Հռոմի դրամատիկները, որոնց Լուկուլլոսը արգելել էր անխիղճ վաշխառություն անել Կիլիկիայում, թեև ինքը նրանցից պակաս ազահ չէր հարստություններ դիզելու գործի մեջ: Դժգոհ էր և Հռոմի ծերակույտը, որովհետև Լուկուլլոսը ինքնավուխ էր սկսել հայկական պատերազմը: Ամեն օր մայրաքաղաքի շուկայի խոսքն ու մեղադրանքն էր դառնում Միհրդատին և Տիգրանին հաղթողը: Գանգատներն արդարացի էին, բայց կային և անարդարները: Նրան համարում էին Հռոմի թշնամի, նույնիսկ դավաճան և գտնում էին, որ այդպիսի մարդու ձեռքին չի կարելի թողնել արևելքի կառավարությունը: Մերակույտը խլեց նրանից կառավարչական գործառնությունները և թողեց նրան սոսկ զորավար՝ Տիգրանի և Միհրդատի դեմ պատերազմական գործողությունները շարունակելու համար: Դժգոհություններն ու թշնամական վերաբերմունքն անցան և զորքերի մեջ: Այս հանգամանքն ավելի ևս զրգռում էր Լուկուլլոսին, հարկադրում էր նրան որոնել նորանոր առիթներ՝ իր ռազմական ընդունակությունները փայլեցնելու և դրանով իր թշնամիներին լռեցնելու համար:

Այդ պատճառով էր, որ նա սպասում էր, թե Տիգրանը դուրս կգա իր դեմ և միմեծ պատերազմ կտա: Տիգրանը, սակայն, ոչ այդպիսի բան արավ, ոչ էլ բանակցություններ սկսեց հաշտություն կնքելու մասին: Ուստի 68-ի ամռանը նա կորովաց աշխարհից արշավանք սկսեց դեպի Հայաստանի խորքը, դեպի Արտաշատ, հարկադրելու համար Տիգրանին, որ նա պատերազմի բռնվի իր հետ:

Հռոմեական բանակի ճանապարհը ճիշտ նույնն էր, որով գնացել էին Քսենոֆոնի հույները, այն է՝ Բաղեշի կիրճով, Մուշի դաշտով, Բուսանըխով Ալաշկերտ: Բայց սկզբից ևեթ հռոմեացիներն զգացին իրենց արշավանքի ծանրությունը: Այժմ այլևս Տիգրիսի հովիտը չէր Տիգրանակերտի շրջակաները: Լեռնային երկրում առաջ շարժվելը դժվարացնում էին ամենից առաջ և ամենից շատ բնակիչները, որոնք գիտեին, որ իրենց ոսկեմայր և ոսկեծղի Անահիտ աստվածուհու կռիվն է այս և նրան պաշտպանելու համար պետք է ոչնչացնել այս օտարներին: Հռոմեական բանակի պարենավորումը դժվարանում էր և զորքերի մեջ ծավալվում էր դժգոհությունը: Տիգրանը իր հրամանատարության տակ էր առել հեծելազորքը և նրանով շարունակ նեղում էր հռոմեացիներին, անակնկալ հարձակումներ գործելով, իսկ Միհրդատը հետևակ զորքի հետ հետևում էր Տիգրանին և հարկավոր դեպքերում նրա հետ միասին էր գործում, հարձակվելով թևից: Այս է պատճառը, որ Լուկուլլոսը հազիվ երեք ամսում կարողացավ Մուշի դաշտից հասնել Ալաշկերտի հովիտը: Հռոմեացիների տանջանքները սաստկացնում էին մանավանդ հայոց նետերը, որոնց սլաքները թունավորված էին և ունեին երկու ճանկ, որոնցից մեկը վերքից հանել չէր լինում, ուստի և վերքերը անբուժելի և սաստիկ տանջող էին<sup>1</sup>:

Այս բոլոր դժվարությունների մեջ հռոմեացիները, այնուամենայնիվ, հաջողություն ունեցան: Թեև հայերը եռանդով պաշտպանում էին Արածանիի անցքը, բայց Լուկուլլոսը կարողացավ անցկացնել իր բանակը մյուս ափը: Բայց շատ առաջ գնալ չկարողացավ: Հանկարծակի ապստամբություն պայթեց հռոմեական բանակի մեջ և զինվորները բացեիքաց մեթեցին առաջ գնալ, թեև արդեն մոտ էր Արտաշատը: Լուկուլլոսը շատ թախանձեց իր զորական-

<sup>1</sup> 2. Աստուրյան, էր. 67:



ներքին, որ շարունակեն արշավանքը՝ «Հայոց Կարթագենը», այսինքն Արտաշատը վերցնելու համար: Բայց նրան լսող չեղավ և նա հարկադրված էր սկսել նահանջ իր եկած ճանապարհով դեպի հարավ:

Պլուտարքոսը, միշտ հռոմեական փառքին նախանձախնդիր և մանավանդ Լուկուլլոսի ջատագով, այս անակնկալ նահանջի միակ պատճառ համարում է այն, որ սեպտեմբերի կեսին հանկարծակի մեծ ձյուն եկավ Արածանիի հովտում և ցրտից բռնված զինվորները հրաժարվեցին հպատակվել իրենց զորավարին ու հարկադրեցին նրան հտ նահանջել<sup>1</sup>: Բայց հեշտ է նկատել, որ այս մի հերյուրանք է: Եթե միայն ցուրտը լիներ դժգոհության պատճառը, զինվորներն, ընդհակառակն, պիտի ստիպեին որքան կարելի է շուտ անցնել Արաքսի հովիտը, ուր կլիմայական պայմաններն ավելի բարեհաջող են և ուր, եթե նույնիսկ ընդունելու էլ լինինք, թե սեպտեմբերի կեսին եկած ձյունը կարող է սարսափահար անել մի բանակ առհասարակ որևէ տեսակ բարձրության վրա, նրանց սպասում էր ձմեռային այնպիսի մի բնակարան, որպիսին էր հարուստ ու մեծ Արտաշատը: Անկարելի է հավատալ, թե մի ամբողջ բանակ կարողացած չլինի հասկանալ, որ ձյունն ու ձմեռը ավելի սաստիկ կլինեին իր նահանջման երկար ճանապարհին, որ անցնում էր Տավրոսի բարձր լեռնաշխարհով, քան այն կարճ ճանապարհին, որ մնում էր մինչև Արարատյան դաշտը:

Այս բոլորն ի նկատի ունենալով, պիտի ենթադրել, որ պատճառը միայն անժամանակ ցուրտը չէր: Հավանաբար Լուկուլլոսը Արածանիի հովտում լուրջ անհաջողության հանդիպեց և ստիպված եղավ ետ տանել իր բանակը, որի դժգոհությունը ավելացրել էր հենց այդ պարտությունը: Տիգրանը թույլ տվեց, որ թշնամին հեռանա առանց պատերազմի: Լուկուլլոսը գնաց Միջագետք, ուր իր անհաջողության վրեժն առավ պաշարելով Մծբինը, որ վերջինն էր Միջագետքի հայկական կալվածներից և ներկայացնում էր մի հարուստ, լավ ամրացած և քաղաքական-ազմական ահագին նշանակություն ունեցող քաղաք: Տիգրանը նրա պաշտպանությունը հանձնել էր իր եղբորը, որի անունն էր Գուրս (գուցե Խուրս): Սա մեծ քաջություն էր տարավ իր պաշտոնը և հռոմեացիները մի քանի ամիս շարունակ պաշարեցին քաղաքը, մինչև որ նա ստիպված չեղավ անձնատուր լինել, բայց այն պայմանով, որ թերզապատ զորքն ազատ հեռանա: Լուկուլլոսը մի անգամ ևս առիթ ունեցավ հափեցնելու իր անսահման ընշաքաղցությունը, կողոպուտի մատնելով փարթամ քաղաքը, որ Տիգրանակերտից պակաս ավար չուվեց հռոմեացիներին:

Փորձով խրատված Տիգրանը ոչինչ չարավ պաշարված Մծբինին օգնելու համար: Նրա և Միհրդատի համար գործողությունների մի ծրագիր կար որից չչեղվեցին նրանք: Այդ տեղային մանր պատերազմներն էին: Միհրդատը զխաղաղապես հայոց զորքերով զնաց Պոնտոս, իսկ Տիգրանն անցավ Կապադովկիա հռոմեական բերդապահ զորքերի վրա հարձակվելու համար: Հայտարարված էր անխնա վերաբերմունք դեպի հռոմեացիները: Նրանց պետք էր կոտորել ամեն տեղ և այս մտքով էլ դիմումներ արվեցին ազգաբնակչության: Պաժան լեռնային կոնվեր շուտով իր հետևանքները տվեց: Հռոմեական թիւրզապահ զորքերը Պոնտոսի թագավորության մեջ ընկնված էին, Միհրդատը ետ խլեց համարյա իր բոլոր երկրները: Հռոմեացիները, ետ քաշվելով, ամրացան երկու տեղերում և Լուկուլլոսից օգնություն էին խնդրում: Մյուս կող-

միջ Տիգրանն ու իր փոսա Միհրդատ մարդ ասպատակություններ էին սիրում Կապադովկիայում, հեռացրին նրա թագավոր Արիոբարզանին և ապանում էին նույնիսկ հռոմեական Ասիա նահանգին:

Լուկուլլոսը շատ նեղ դրություն մեջ էր ընկել: Հռոմեական իշխանությունները կիրկիտում մերժեցին նրան օգնական զորքեր ուղարկել: Եվ նա ստիպված եղավ խորին ցավով հրաժարվել իր հաղթությունների պտուղներից: Թուրքից Մծբինն էլ, Տիգրանակերտն էլ և անցավ Եփրատի այ փոր: Այստեղ նա ազատեց հռոմեական պաշարված բանակը, որ գտնվում էր Փաննիոսի հրամանատարության տակ: Բայց այստեղ էլ բնակիչներից իմացավ, որ ավելորդ է մյուս պաշարված բանակը ազատելու մասին մտածելն անգամ: Միհրդատը պաշարել էր նրան և օգտվելով նրա հրամանատար Տրիարոսի շփոթությունից, համարյա ամբողջովին ոչնչացրել նրան Արելի մոտ (67 թ.): Բախտը երես էր գարձել հռոմեացի զորավարից: Տաղանդը և եռանդը չէին պակասում նրան: Ընդհակառակն, նա կրկնապատկել էր եռանդը՝ այդ սարսափելի ծանր պայմանների մեջ հրաշքներ գործելու համար: Բայց իդուր: Նրա բանակի դրությունը ոչնչացնում էր ամեն մի ձգտում: Հենց այդ ժամանակներն էր, որ Հռոմից լուր եկավ, թե Յերակոստը որոշել էր արձակել այն զինվորներին, որոնց ծառայության ժամանակամիջոցը լրացել էր: Այս կարգադրությունն ավելի սաստկացրեց անկարգապահությունն ու դասալքությունը հռոմեական բանակի մեջ: Կամենալով չթույլ տալ, որ Տիգրանն ու Միհրդատը միանան իրար հետ՝ ընդհանուր արշավանք տանելու համար, Լուկուլլոսը նորից շարժեց իր բանակը դեպի Հայաստան: Եվ բանակը գնում էր, քանի որ որոշ չէր անսպասել: Բայց հենց որ նա ճյուղավորվեց, բանակը գնաց ոչ թե Հայաստանի ճանապարհով, այլ դեպի Կապադովկիա: Լուկուլլոսի ազալանքն ու պաշտանքը վերջ չունեին: Նա նույնիսկ ժողով չուրեց, համբուրում էր զինվորներին ձեռքերով: Խնդրելով գնալ իր ցույց տված ուղղությամբ, համոզելով ամենքին, թե հեշտ է հայերին հաղթելը, թե հաղթությունն ապահովված է: Ոչինչ չօգնեց: Նա լքված էր ամենքից: Նույնիսկ նրա տեղ հրամանատար նշանակված Գլորիոնոսը հանձն չառավ իր պաշտոնի գլուխն անցնել իսկույն և եթ: Լուկուլլոսին մնում էր մի վերջին անգամ ցույց տալ իր տաղանդի ամբողջ ուժը: Նա տարավ իր ամբողջ բանակը, անփորձ հասցրեց Փոքր Ասիա, հռոմեական կալվածները: Եվ այս, ժամանակի պայմաններն ի նկատի առնելով, պետք էր համարել հրաշք<sup>2</sup>: Բայց այնուհետև նա այլևս ոչինչ չկարողացավ անել և դատարարված էր տեսնելու, թե ինչպես կորան իր հաղթությունների բոլոր պտուղները, թե ինչպես երազի նման անցան<sup>3</sup> այն տարիները, երբ նա արևմտյան Ասիայի ճակատագիրն էր տնօրինում: Հռոմեական արժիվները ետ քաշվեցին այնքան, որ այժմ կանգնած էին նույն այն տեղերում, ուր գտնվում էին ութ տարի առաջ, այսինքն նախքան պոնտական և հայկական պատերազմները: Այս ծանր զրկանքների հետ միասին հռոմեական գործը սաստիկ վտանգվում էր Միջերկրականի ջրերի վրա: Անշափ զարգացավ ժողահանությունը, որ համարյա դադարեցրեց նավային երթևեկությունը ու սրա հետևանքով էլ Հռոմը, որ հաց ստանում էր Աֆրիկայից և ուրիշ տեղերից, կանգնած էր անխնայափելի սովի առջև:

<sup>1</sup> Xallatani, c. 204:

<sup>2</sup> Mommsen, III, c. 64:

<sup>3</sup> Reinach, p. 378.

<sup>1</sup> Պլուտարխ, 2. 9, էր. 582:

**7. Պոմպեոս:** Բայց ասիականության այս շատ բարեբախտ վիճակը երկար չտևեց: Մովսիսին ավազակների դեմ կովելու համար Հոռմը մեծամեծ լիազորություններ տալով իր հուշակավոր զորավար Պոմպեոսին, հանձնեց նրան և ասիական պատերազմի ղեկավարությունը: Պոմպեոսը Լուկուլլոսի հակառակորդն էր և քաղաքական հայացքների կողմից այդ երկուսը հակոտնյաներ էին: Պոմպեոսը Հոռմի ուսուցիչական հոսանքի պարագլուխներից մեկն էր, համբավ էր ստացել ոչ միայն իր մեծ եռանդով և ուղղափառական ընդունակություններով, այլև իր մեղմ բնավորությամբ և մարդասիրությամբ:

Նորից, ուրեմն, պիտի վերանորոգվեր ահավոր մարտը Արևելքի և Արևմուտքի մեջ: Բայց այս անգամ կոխվել երկարատև ու համառ շարտի լինելը, որովհետև բարեբախտ հանգամանքներով թևավորված ասիականությունը շատ շուտ հանդես հանեց ներքին կազմալուծություն: Այս երևույթի պատճառների մեջ առաջին տեղը բռնում է Տիգրան թագավորը, կամ, ավելի ճիշտ ասած, նրա ընտանիքը: Ասիական բռնապետության մի սովորական պատկերն էր, որ հատկապես այդ միջոցին դուրս էր սողում ներքին թուլություն, խորտակում առաջացնելու համար:

Բազմակուսությունը արևելյան հարեմում խեղդում է փոխադարձ սերը ծնողների և որդիների մեջ: Տիգրանը շահագրգռեց երկար թագավորեց և նրա որդիների համար մի դժբախտություն էր, որ ծերունին շուտ չէր ուզում մեռնել, որպեսզի հնարավորություն տա իրենց ևս թագավորելու: Այսպիսի հանգամանքների մեջ սովորական է տեսնել արևելքում արքայական գահը ներկված թագավորող բռնակալի կամ նրա որդիների, եղբայրների, առհասարակ ժառանգների արյունով: Ամենուրեք բռնավոր միապետների համար պարզ ճշմարտությունն էր, որ գահի վրա հաստատ մնալ կարելի էր, կոտորելով նրա թեկնածուներին, որոնք օգտվում էին ամեն մի հարմար առիթից՝ թագավորական իշխանությունը դավով և արյունով հափշտակելու համար: Տիգրանն ազատված չէր հարազատների դեմ պատերազմելու, հարազատներին սպանելու բարբարոս անհրաժեշտությունից: Կլեոպատրայից նա ուներ մի քանի որդիներ, որոնցից երեքը նրա թշնամիները հանդիսացան: Ավագ որդին, Ջարեհ, նախարարների հետ մի դավակցություն կազմեց իր հոր գահընկեց անելու համար: Դավակիցներն իրենց ձեռնարկությունը գաղտնի պահելու համար երդման ծես կատարեցին, խմելով իրենց աչքի ճեղքերից հանած արյունը, մի ծես, որ մնացորդները գոյություն են պահպանել հայ ժողովրդի մեջ մինչև այժմ: Բայց դավադրությունը բացվեց և հոր ու որդու մեջ կոխվեց սկսվեց, որի ժամանակ սպանվեցին Ջարեհն ու իր դավակից ընկերները: Երկրորդ որդին, որի անունը չէ մնացել, ուրիշ առիթից օգտվեց գահ հափշտակելու համար: Մի անգամ Տիգրանը նրա հետ որսի գնաց: Մի ինչ-որ պատճառով նա ընկավ ձիուց և մարեց: Որդին շտապեց նրա խուլըն իր գլխին դնել և սուրը կապել իր մեջքը, մինչդեռ երրորդ որդին, որ նույնպես Տիգրան էր կոչվում, մնաց հոր մոտ և խնամում էր նրան: Տիգրանը, ուշքի գալով, բռնել տվեց ըմբոստ որդուն, կտրել տվեց նրա գլուխը: Իսկ Տիգրանին թագ տվեց և իր գահակիցն արավ Մոփաց աշխարհում:

Բայց ամենից շարագույնը հենց այս Տիգրանն էր, կրտսերը, որ ամուսնացած էր պարթևների Հրահատ Գ թագավորի աղջկա հետ: Մինչդեռ Տիգրան Մեծը Կապադովկիայում նվաճումներ էր անում, կրտսերը փորձեց տիրանալ

<sup>1</sup> 2. 2. Աստուրեան, «Անտեսուած լիշատակարան մը Մեծն Տիգրանայ որդւոյն մային» («Բազմակուս», 1906, էր. 387—389),

Արտաշատին: Լուր առնելով իր որդու ապստամբության մասին, Տիգրանը հանեց իր բանակը Կապադովկիայից, գնաց ապստամբի դեմ, որ պարտություն կրելով պատերազմի մեջ, փախավ Տիգրան, իր աներոջ մոտ:

Պոմպեոսը, պատերազմական գործողություններ սկսելուց առաջ, դիվանագիտական պատրաստություններ տեսավ: Նրա դեսպանները գնացին Տիգրան առաջարկելու Հրահատ Գ-ին, որ նա հոռմեացիների դաշնակիցը դառնա վարձատրության որոշ պայմաններով: Պարսից արքունիքում էին գտնվում և Միհրդատի դեսպանները, որոնք աշխատում էին Հրահատին քաշել հայ-պոնտական միություն կողմը: Հրահատը, սակայն, հակվեց հոռմեացիների կողմը և այս բանի մեջ, անկասկած, ամենամեծ դերը կատարեց Տիգրան Կրտսերը, որի համար, իհարկե, ձեռնտու չէր, որ հայրը ամրապնդե իր գահը: Փառատենչիկ և կարճամիտ երիտասարդը կարծում էր, որ ավելի լավ է անհապաղ ստանալ մի շարդված գահ, քան հետո ժառանգել մի անկախ թագ:

66-ի գարնան Պոմպեոսը, թողնելով իր բանակի մի մասը՝ Կիլիկիան և Կապադովկիան պաշտպանելու համար, մնացած մասով գնաց Գալատիա՝ Միհրդատի դեմ արշավանք սկսելու համար: Այդտեղ էր Լուկուլլոսը, որ նրան հանձնեց զլխավոր հրամանատարությունը: Երկու ախոյանները, ինչ ասել կուզի, չկարողացան առանց փոխադարձ հանդիմանությունների հեռանալ իրարից: Լուկուլլոսը ուղևորվեց Հոռմ, ուր նրան սպասում էր դառնացած թշնամությունը, իսկ Պոմպեոսը զգուշությամբ և շրջահայեցողությամբ գործողություններ սկսեց Պոնտոսի թագավորության դեմ: Միհրդատը մենակ էր հոռմեական լեզեռներին դիմաց և պատերազմ մղում էր իր սիրած եղանակով: Խուսափելով մեծ ընդհարումներից, նա ետ էր քաշվում դանդաղ, քաշելով իր հետ թշնամուն երկրի խորքը: Պոմպեոսը զգուշ էր շարժվում, բայց և այնպես մի տեղ այնպիսի նեղ դրություն մեջ ընկավ, որ ստիպված եղավ ետ նահանջել դեպի պոնտոս-հայկական սահմանագլուխը, այսինքն դեպի Տայոց աշխարհը<sup>1</sup>, որի անտառապատ կիրճերն ու սարերը նրան ապահով ապաստան էին տալիս և այդտեղ նա սպասում էր օգնական զորքերի, որոնք ուղարկվել էին նրան Կիլիկիայից:

Այդ միևնույն ժամանակ Տիգրանն զբաղված էր պարսիկներով: Հոռմեացիների հետ կապած բանավոր դաշնակցության հետևանքով էր, որ Հրահատը արշավեց, իր փոսա Տիգրանի հետ, Հայաստան<sup>2</sup>: Մերոսի Տիգրանը նրա դեմ չգնաց, այլ քաշվեց լեռները, թողնելով, որ թշնամին անարգել մոտենա Արտաշատին և պաշարե նրան: Սակայն մայրաքաղաքը բավական պաշարներ ուներ դիմանալու համար, մինչև որ Տիգրանը լեռներում կազմակերպեց ու պատրաստեց մի բավական ուժեղ բանակ, որ և տարավ թշնամու դեմ: Հրահատն արդեն հեռացել էր իր զորքի մեծ մասի հետ և Տիգրան Կրտսերն էր մնացել՝ պաշարումը շարունակելու համար: Հոր և որդու մեջ տեղի ունեցավ մի նոր պատերազմ: Այս անգամ էլ որդին էր, որ պարտության մատնվեց և դարձյալ փախուստի դիմեց, այս անգամ իր պապ Միհրդատ Պոնտացու մոտ: Իր այս փախուստով նա վերջնականապես խզում էր կապը իր հոր և իր պապի մեջ: Տիգրանն արդեն վաղուց կասկածում էր, որ իր որդիները խրախուսվում են իրենց պապից: Այժմ նա համոզվեց, արդարացի, թե սխալ, որ Միհրդատն է Տիգրան Կրտսերի դրդիչը և սաստիկ բարկանալով նրա վրա, ոչ միայն այլևս

<sup>1</sup> Моммсен, III, с. 105.

<sup>2</sup> Reinach, p. 388.

չմիացանք նրա հետ, այլև հնար էր որոնում նրան սպանելու համար: Այսպիսի սով ահա ոչնչանում էր երկու ամենաուժեղ թագավորների դաշնակցությունը և նրանք պիտի ընկնեին առանձին-առանձին: Միհրդատն էլ Տիգրանի բախտակիցն էր: Նրա որդին էլ, Մախարը, սարսամբլած էր նրա դեմ և գտնվում էր հռոմեացիների բանակում: Բայց Տիգրան Կրտսերը չհասավ իր պայքին: Ճանապարհի կեսին լուր առնելով, որ նրա դրուժյունն էլ շատ ծանր է: Հայ թագավորազնը իր ձին քշեց ուղիղ հռոմեական բանակը:

Ստվարացնելով իր բանակը, Պոմպեոսը վճռեց այլևս թույլ չտալ, որ Միհրդատը հռոմեացիներին քաշե տանն հեռու: Լիկոս գետի (այժմ Իշիկ-իրեմակ) վրա, ուր հետո կառուցվեց Նիկոպոլիս քաղաքը, Պոմպեոսը շրջապատեց պոնտական բանակը և մոտ զիշերվա մեջ, հանկարծակի հարձակվելով նրա վրա, սաստիկ ջարդ տվեց և ցրեց նրան: Վերջինն էր այս պատերազմը, որ վարում էր հռչակավոր Միհրդատը իր ծերության հասակում: Եվ դարձյալ զրկված էր նա թագավորությունից, դարձյալ աստանդական, բայց դարձյալ չհուսահատված, դարձյալ պատրաստ նորանոր ծանր հոգսերի ու շղթատանքների: Այս անգամ էլ նա, ինչպես 71-ին, զնաց հյուրընկալություն որոնելու Տիգրանի մոտ: Բայց նրա դեսպանները, որոնք զնացել էին այդ հյուրընկալությունը խնդրելու, ձերբակալվեցին Տիգրանի հրամանով և ուղարկվեցին Պոմպեոսին, իսկ ինքը Միհրդատը հայոց սահմանազխի վրա իմացավ, որ Տիգրանը հետամուտ է իրեն սպանել տալու և գնահատել է իր գլուխը 100 տաղանդ (600. 000 ֆրանկ): Նրան ոչինչ չէր մնում անել, բայց միայն թողնել Պոնտոսի հարավային ափերը, դիմել դեպի հյուսիս, դեպի Կովկասյան լեռները, իր պետության այն մասերը, որոնք Սև ծովի հյուսիսային ափերում էին գտնվում: Այդտեղ էլ մեռավ նա:

Մնում էր ծերունի Տիգրանը իր դավաճան որդու դիմաց: Տեսնելով, որ Պոմպեոսն ուզում է գնալ հալածելու Միհրդատին, Տիգրան Կրտսերը համոզեց նրան հետաձգել այդ բանը և նախ Հայաստանի գործը վերջացնել: Պոմպեոսը շարժվեց դեպի Հայաստան Բարձր Հայքի վրայով և նրան առաջնորդում էր երիտասարդ դավաճանը, որ և տարավ թշնամու բանակը ուղղակի Արտաշատի վրա:

Սակայն ծերունի թագավորը թույլ չտվեց, որ իր վատ որդին տիրանա որևէ հաջողության: Նա անմիջապես բանակցություններ սկսեց Պոմպեոսի հետ, որ բանակ էր դրել մայրաքաղաքից ոչ հեռու: Տիգրան Կրտսերը շատ էր աշխատում, որ այդ բանակցությունները արդյունք չունենան, բայց այդտեղ էլ հաղթողը հայրն էր դարձյալ: Պոմպեոսն ընդունեց թագավորի պայմանը. այն է՝ չզբաղվել մայրաքաղաքը, բայց թույլ տալ, որ զինվորները մտնեն այնտեղ իրենց կարիքների համար: Պոնտոսի թագավորությունն արդեն վերջացել էր, դառնալով հռոմեական մի ճահանգ, և հայոց թագավորն ամեն կերպ աշխատում էր, որ Հայաստանն ազատե այդպիսի մի դրուժյունից: Բանակցություններով շատ բան շտկելուց հետո, Տիգրանն անձամբ զնաց Պոմպեոսի բանակը, ուր գտավ այն զորավարին հատուկ քաղցր և բարյացակամ վերաբերմունք: Արքայական ծիրանի շուներ նա իր վրա, բայց կրում էր իր խուլը: Բանակի մոտ նրան իջեցրին ձիուց, առան նրա սուրը, ասելով, թե այդպես է կարգը: Պատմում են, որ նա, մտնելով Պոմպեոսի վրանը, արեհիլյան եղանակով

1 Моммсен, III, с. 107.  
2 Հ. Աստուրյան, էր. 83.  
3 Պլուտարխոս, Հ, Դ, էր. 285.

կով գլուխ տվեց նրան և իր խուլըն էլ դրեց նրա ոտների մոտ: Պոմպեոսը քաղցրությամբ վարվեց ծերունի թագավորի հետ, պատիվներ արավ, նստեցնելով իր աջ կողմին, իսկ ձախ կողմին նստած էր նրա դավաճան որդին: Ապա սկսվեցին հաշտության բանակցությունները: Հայաստանն ստանում էր իր նախկին սահմանները և զրկվում էր նրանից դուրս եղած նվաճումներից: Տիգրանը պիտի վճարեր վեց հազար տաղանդ (36 միլիոն ֆրանկ) պատերազմական տուգանք: Ամենազխավորը և ամենածանր պայմանը, սակայն այն էր, որ Հայաստանն իրապես զրկվում էր անկախ պետության դիրքից: Այնուհետև հայ թագավորները կարող էին գահ բարձրանալ Հռոմի հավանություններով:

Պոմպեոսը հաշտեցրեց Տիգրանին իր որդու հետ, որին նշանակեց Մոփաց աշխարհի թագավոր, իբրև վարձատրություն նրա դավաճանության: Տիգրանը խոստացավ նշանակել նրան թագաժառանգ: Եվ այս բոլորից հետո Պոմպեոսը հռչակեց հայոց ծերունի թագավորին «բարեկամ և դաշնակից Հռոմի»: Բանակը բարձր աղաղակներով ողջունեց Տիգրանին: Հայոց թագավորը շատ գոհ էր և այսքանով. նա պահում էր գահն իր ձեռքում, թեկուզ այդ հաղթանակը ըմբոստ որդու դեմ ձեռք էր բերել պետական անկախության կորստի գնով: Եվ այնքան նա հուզված էր այդ ցույցներից ու հաղթանակից, որ դրամական ինժանեթ բաժանեց բոլոր հռոմեական զինվորներին:

Սակայն այս հանգամանքն ավելի ևս գրգռեց Տիգրան Կրտսերի կրթերը: Այժմ նա դժգոհ էր և Պոմպեոսից, մանավանդ երբ նա համաձայնվեց, որ պատերազմական տուգանքը ամբողջովին վճարվի այն զանձներից, որոնք պահվում էին նրա բաժին դարձած Մոփաց աշխարհի բերդերում: Նորից մի դավադրություն հյուսվեց հայ իշխանների և պարթևական արքունիքի մասնակցությամբ, այս անգամ արհամարհելով նույնիսկ Պոմպեոսին: Երբ վերջինս մի անգամ ճաշի հրավիրեց երկու Տիգրաններին, Կրտսերը զգնաց: Նրա դավադրությունը բացվեց և հռոմեացի զորավարը նրան, նրա կնոջն ու երեխաներին շղթայեց ու իր հետ ման էր ածում, որպեսզի վերջը իր հետ տան Հռոմ իր հաղթանակի (տրիումֆ) հանդեսների համար: Երբ այնուհետև Պոմպեոսն արշավեց Վրաստանի և Աղվանից երկրի կողմերը, Աղվանից թագավոր Որոզը, իբրև շղթայակապ արքայորդու կողմնակից, հարձակվեց հռոմեական բանակի վրա, որ ազատե նրան, բայց հաղթվեց և չկարողացավ իրագործել իր դիտավորությունը: Այնուհետև պարթևաց Հրահատ թագավորն էր ստիպմամբ պահանջում իր փեսայի ազատությունը: Բայց Պոմպեոսը մերժեց այդ պահանջը և վերջը տարավ Տիգրանին Հռոմ, ուր նա մի քանի տարուց հետո սպանվեց:

Այսպիսով Տիգրանին հնարավորություն տրվեց խաղաղ թագավորելու մինչև իր մահը, որ տեղի ունեցավ 36 թվականին:

**8. Եզրակացություն:** Տիգրան Մեծի հետ վերջանում էր պատմական մի շատ խոշոր երևույթ, որ հայ ազգի կյանքի մեջ այլևս երբեք չկրկնվեց և որ հենց այս պատճառով արժանի է առանձին և մանրամասն ուսումնասիրության:

Այդ թագավորությունը, ինչպես տեսանք, երկու մասի է բաժանվում, և ամեն մի կեսը ներկայացվում է առանձին և խորիմաստ բովանդակություն:

1 Հ. Աստուրյան, էր. 85.  
2 Reinach, p. 393.

Առաջին կեսը, մոտ 25 տարվա մի ժամանակամիջոց, ցույց էր տալիս, որ հայ ժողովրդին էլ կարող է վիճակվել մեծ պետություն կազմելու հնարավորությունը: Նա ապացուցում էր, որ աշխարհակալութիւնը ապրող պետականությունը միակ հնարավոր միջոցն էր, որ հայոց հարցը լուծվի հակա-կան շահերի տեսակետից միանգամայն բավարար կերպով, այսինքն, որ Հայաստանը պահպաներ իր քաղաքական կատարյալ անկախությունը այնպիսի մի միջավայրում, ուր միջազգային մրցակցություններն էին թագավորում, մրցակցություններ, որոնք գնալով ավելի ևս պիտի ընդարձակվեին և սաստկանային, դժվարացնելով և մեծացնելով արևելյան հարցը: Թե ինչու է Հայաստանը այդպիսի ճակատագիր էր ստանում միջազգային հարաբերությունների մեջ, պարզորեն բացատրում է դարձյալ Տիգրանի թագավորության առաջին կեսը: Նա ցույց տվեց, թե որքան հեշտ ու արագ կարող է նվաճողական սկզբունքը տարածվել Հայաստանի բարձրություններից այն բոլոր դաշտավայրերի վրա, որոնք տարածված են նրանց շուրջը, Միջերկրական ծովի, Պարսից ծոցի և Կասպից ծովի ափերին: Այդ հեշտությունը, այդ մշտական սպառնալիքը բխում էր Հայկական Բարձրավանդակի դիրքից, նրա ուժն ու նշանակությունն էր կազմում: Նա ցույց էր տալիս աշխարհին, որ ուժեղ, աշխարհակալ Հայաստանը միշտ կարող է Կիլիկիայի, Սիրիայի, Միջագետքի տերը լինել:

Եվ ահա հենց այդ մեծ ուղիղապետական նշանակությունը ստեղծում էր Հայաստանի դեմ մի հակադիր ուղղություն, այն, որ Տիգրան-Եփրատյան հովտում և Միջերկրականի ափերին գոյություն ունեցող խոշոր միջազգային շահերը կարող էին միայն թույլ ու երկրորդական նշանակություն ունեցող մի պետականություն հանդուրժելի համարել Հայկական Բարձրավանդակի վրա:

Այս բավական չէր: Այն ժամանակից, երբ արևելյան հարցի արյունահեղ ընդհարումների դաշտ դարձավ արևմտյան Ասիան, այն ժամանակից, երբ Եվրոպան Փոքր Ասիայի և Եփրատի ափերն էր իջել Ասիայի դեմ կռվելու համար, Հայաստանը դառնում էր կռվախնձոր երկու պայքարող աշխարհների մեջ: 54 Չեռք գցել նրան՝ նշանակում էր հզոր ուղիղական դիրքեր գրավել երկու աշխարհների մեջտեղ: Այս նշանակությունը կորստաբեր էր հայ ժողովրդի իրական շահերի տեսակետից: Հայաստանը պետք է կատարելապես անկախ լիներ իր իսկական բարօրության համար: Այս զգացել էին Մենուան, Արգիշտին, Արտաշեսը, Տիգրանը, որոնք և իրականացրին ազգային կատարյալ անկախությունը՝ մեծ նվաճողական պետություն ստեղծելով:

Այսպես էլ պիտի լիներ միշտ: Սակայն կարելի՞ էր այս: Տիգրանի թագավորության երկրորդ կեսը, 15 տարվա մի ժամանակամիջոց, ցույց էր տալիս, որ չէր կարելի: Համեստ էր հայ ժողովուրդը իր քանակով և մանավանդ իր ուղիղական ընդունակություններով: Նրան չէր տված համաշխարհային նվաճող բռնապետության լրիվ և տևողական իրականացումը: Այստեղից է առաջին անգամից հակասական թվացող երևույթը — աշխարհակալ սուլթանականության գոռոզ ներկայացուցիչ Տիգրանը Պոմպեոսի վրանում, նրա շնորհներից աչք դրած: Մերոնի թագավորին վիճակված էր իր ձեռքով իր ստեղծած մեծ պետությունը վերջի վերջո վերածել Հռոմից կախում ունեցող մի քաղաքական կազմակերպության: Դրանով որոշվում էր Հայկական Բարձրավանդակի ապագա ճակատագիրը: Վերահաստատվում էր այն կացությունը, որ գոյություն ունեւր Արտաշեսից առաջ, այն տարբերությամբ, սակայն, որ Հայաստանը ներքուստ ավելի միապաղաղ, համայնական մի միություն էր ներկայացնում:

Սակայն երկրորդական պետության աստիճանին վերածվելը դեռ վերջնականապես չէր լուծում միջազգային հարցը, այլ, ընդհակառակն, ավելի սուր կենսական կերպարանք էր տալիս նրան: Դառնալով կռվախնձոր, դառնալով երկու ահեղ, հակամարտ կողմերի մեջ տրորվող, հայ ժողովուրդը չէր կարող անտարբերությամբ վերաբերվել այն հարցին, թե ո՞ւմից պետք է ինքը կախում ունենա, այսինքն ո՞ւմ պիտի հպատակվի նրա ազգային ինքնավարությունը: Այս հարցից կախված էր և նրա կյանքը, նրա ազգային ինքնությունը գոյությունը: Եվ նրա մեջ վճռական դեր կատարողը արդեն միայն քաղաքական նկատառումները չպիտի լինեին, այլ մանավանդ և ազգի կուլտուրական շահերը: Եվ պարզ է, որ Հայաստանի ժողովուրդը իր համակրանքներով ու հակումներով պիտի լիներ այն պետության կողմը, որի կուլտուրան ավելի մոտ էր իրեն, ավելի հարազատ:

Մենք տեսանք, որ Հայաստանը, լինելով իրականության խիստ ազդեցության ենթարկված, Պարսկաստանի հետ էր ընդդեմ Եվրոպայի: Տիգրանի թագավորությունը հետաքրքրական փաստերով ցույց էր տալիս թե ուրիշ կերպ չէր կարող լինել և այնուհետև, որքան որ կշարունակվեր կուլտուրական մերձակցությունը: Քանի որ Հայաստանը մեծ պետություն էր, պարթևները հոմեացիների հետ էին՝ նրան հակադրելու համար: Բայց ահա Տիգրանը գլուխ է իջեցրել Հռոմի առաջ, և դրությունն իսկույն փոխվում է: Իր թագավորության վերջում Տիգրանը հողային վեճ ուներ պարթևների թագավորների հետ, մի վեճ, որ պատերազմի պատճառ դարձավ: Տիգրանը դիմեց Պոմպեոսի օգնության, իսկ սա ավելի լավ համարեց, որ վեճը քննվի իր կողմից նշանակված միջնորդ դատավորների ձեռքով: Սակայն այս դատը չկայացավ, որովհետև հայերն ու պարթևները ժամանակին ըմբռնեցին, որ Հռոմը իրենց ընդհանուր թշնամին է և իրենք փոխադարձ համաձայնությամբ վճռեցին իրենց մեջ ծագած վեճը: Այս հայ-պարթևական մերձակցությունը այնուհետև դառնում է հայոց պատմության ամենախոշոր գործոնը: 55

Եվ այսպես, Տիգրան Մեծի անձնավորության և կատարած գործի մեջ արտացոլվում էր հայ ազգի պատմական ճակատագիրը: Օտար մատենագիրները բավականաչափ բացասական գծեր են ցույց տալիս Տիգրանի մեջ և ուզում են բուրդովին մի խեղճ ու հասարակ մարդ ցույց տալ նրան: Բայց հեշտ կարելի է նկատել, այդ վկայությունների մեջ նաև հակառակությունից և շարակամությունից բխած խորձանքներ: Որ Տիգրանը մի շատ խոշոր անձնավորություն էր, այդ ցույց է տալիս նրա գործը: Մի խեղճ ու հասարակ բնավորություն էր կրթությունը, դարձնելով նրան իր երգերի և վիպասանությունների առարկա: Այս կողմից էլ նա Արտաշեսի արժանավոր հաջորդն էր:

Գլուխ երրորդ

Պ Ա Ր Թ Ե Վ - Զ Ռ Ո Մ Ե Ա Կ Ա Ն Մ Ր Ց Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ԱՐՏԱՎԱԶԻ Բ: 2. ԱՐՏԱՇԵՍ Բ: 3. ԱՆԿՈՒՄ: 4. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՏՈՂՄԸ:

1. Արտավազ Բ (56—33 թ. Զ. ա.): Տիգրան Մեծին հաջորդեց նրա որդի Արտավազը, որ, ինչպես երևում է, հոր աթոռակիցն էր եղել նրա կյանքի վերջին տարիներում:

Պատերազմասեր և եռանդուն նվաճող հոր ժառանգը նրա կատարյալ հակապատկերն էր ներկայացնում: Արտավազը պատերազմի մարդ չէր: Ստացել էր գեղեցիկ կրթություն, գրականության ու արվեստների սիրահար էր և ինքն էլ հեղինակում էր զանազան տեսակ շարադրություններ (ողբերգություններ, ճառեր, պատմություն) հունական լեզվով, այն էլ այնքան աչքի ընկնող, որ նրանք պահպանվեցին հունաց հարուստ գրականության մեջ մինչև երկրորդ դարը Քրիստոսից հետո:

Հայաստանը այս գրող-թագավորի ժամանակ միանգամայն թուլության մեջ ընկավ և միանգամից երևան հանեց այն հանգամանքը, թե ո՞րքան զրգավար պիտի լիներ նրա դրությունը արևելյան հարցի մեջ բոլորված հզոր մրցակցությունների ասպարեզում: Արտավազը շարողացավ և չէր էլ կարող մի որոշ դիրք բռնել այդ միջազգային պայքարների մեջ: Հայոց հարցը նրա ժամանակից ընդունում էր մի կերպարանք, որ այնուհետև համարյա միշտ անփոփոխ մնաց: Հանգամանքները մի թույլ երկրի համար չափազանց անպաստ դասավորումն էին ստացել: Հայ երկիրն իր հակումներով, իր կուլտուրայով և ազգային շահերով պիտի լիներ ասիական աշխարհի հետ: Այդտեղ զարգացած էր և շարունակում էր զարգանալ հայ-պարթևական մերձեցումը քաղաքական շահերի շրջանից էլ դուրս, զուտ ներքին, ընկերական, մտավոր և նույնիսկ ընտանեկան հարաբերությունների մեջ: Բայց պաշտոնապես նա ենթարկված էր Հռոմին և այդ բոլորովին անհարազատ միջավայրի հետ պիտի գնար, նրա դաշնակիցը պիտի լիներ նույնիսկ ընդդեմ հարազատ Պարսկաստանի:

Եվ երբ Հայաստանը փորձում էր կատարել իր այդ պարտավորությունը, միանալով Հռոմի հետ, այս դեպքում զրգուում էր պարթևների բարկությունը, որոնք և հարձակվում էին նրա վրա՝ պատժելու համար: Պարթևական աշխարհի համար հայերն այսպիսի դեպքերում դավաճաններ էին: Իսկ պարթևներին հավատարիմ մնալու դեպքում հայերը դավաճան էին ճանաչվում հռոմեացիների կողմից, քանի որ կապված էին նրանց հետ դաշնագրով:

Ահա ի՞նչ դրություն էր ստեղծվել այն համաձայնությունից, որ կայաց-

1 Պլուտարխոս, Հ. Դ, եր. 138:

րեց Տիգրանը Պոմպեոսի հետ՝ իր թագը պահպանելու համար: Երկու կրակի մեջ էր դրված երկիրը: Ինչ էլ, սակայն, լինեք, հայերը չէին կարող անկեղծորեն կապվել հռոմեացիների հետ, քանի որ տեսնում էին նրանց կողմից միայն վատ վերաբերմունք: Հայաստանը Հռոմի գերիշխանության տակ էր ընկնում այնպիսի մի ժամանակ, երբ այդ աշխարհուշակ քաղաքում հանրապետական ուսման կարգն սկսում էր կամաց-կամաց տեղի տալ միապետական անձն-իշխանության սկզբունքին: Հռոմն արդեն դադարել էր զուտ եվրոպական պետություն լինելուց և ընդունում էր ասիական պետության կերպարանք, սնուցանելով իր մեջ և ասիական միահեծանության ոգին: Տիրապետությունը ձեռք էին առնում գինվորական գործիչները, զորավարները, որոնց փառամոլությունը միայն նվաճումներով կարող էր հագնել: Այդ զորավարները, հաղթանակներից հղիացած, բայց մանավանդ ազահ, Արևելքում, «բարբարոսների» մեջ, իրենց պահում էին գոռոզ ու արհամարհոտ, հաշվի չառնելով տեղական ժողովուրդների ազգային և կրոնական զգացմունքները: Հռոմի իշխող դասակարգի մեջ տիրում էր անսահման, խելացնոր շռայլություն, որ պահանջում էր անհագին հարստություններ: Ժողովրդական հարստությունը կենտրոնացած էր այդ տիրող դասակարգի ձեռքում: Հաղթանակներով հուշակված զորավարները—Սուլլա, Լուկուլլոս, Պոմպեոս և ուրիշները տասնյակ հարյուր միլիոնների տեր էին, բայց և դրա շափ էլ ավելի մեծ պարտքերի տակ էին: Եվ այդ պատճառով նրանք նվաճումներ, պատերազմների առիթներ որոնում էին ոչ միայն դափնյա պսակներով իրենց գույքը զարդարելու, այլև մանավանդ իրենց գրպանները միլիոններ լցնելու համար: Եվ այս վերջին նպատակով նրանք անխնա կողոպտում էին մանավանդ «բարբարոսներին», կողոպտում էին նրանց աստվածների տաճարները, այսինքն՝ ազգային մեծագույն սրբությունները:

Եվ այս է պատճառը, որ արևելքին ամբողջ սրտից ատում էր եվրոպացի քաղաքակիրթ նվաճողին և ուրախ էր ամեն հարմար դեպքում նրա լծից ազատվելու փորձեր անել: Այդպիսի «բարբարոսներից» էին և հայերը:

60 թվականին Հռոմում երեք հոգի—Պոմպեոս, Հուլիոս Կեսար և Կրասոս, լքված իշխանապետական տենչերով, կազմեցին մի եռապետություն (տրիումվիրատ), որ առաջին լուրջ փորձն էր հանրապետությունը խեղդելու համար: Եռտով այդ երեք հոգու մեջ էլ բաժանվեց հռոմեական ամբողջ պետության կառավարությունը: Արևելքը բաժին էր ընկնում Մարկոս Կրասոսին: Որ շտապեց այդտեղ՝ ձեռք բերելու իմ պերատոր տիտղոսը (զորապետության տիտղոս) և հարստություն: Առանց պատճառի նա պատերազմ հրատարակեց պարթևների դեմ, որոնց թագավորն էր Որոզես Ա կամ Հյուրովր (Արշակ ԺԴ, 57—37 մ. թ. ա):

Պարթևները սաստիկ կատաղած էին հռոմեացիների դեմ այդ անիրավ պատերազմի համար և ամբողջ ձմեռը մեծամեծ պատրաստություններ տեսան: Իսկ Կրասոսը հռոմեական բանակը կենտրոնացրեց Սիրիայում: Արտավազը թագավորը պիտի օգներ Կրասոսին. այսպես էր պարտավորեցնում Տիգրանի դաշնադրությունը: Նա գնաց հռոմեացի եռապետի (տրիումվիր) մոտ 6 հազար ձիավոր մի անձնապահ զորաբաժնով, խոստացավ տալ 10.000 ձիավոր և 30.000 հետևակ զորք, որոնց պիտի առաջնորդեր ինքը: Միայն հայոց թագավորը խորհուրդ էր տալիս, որ Կրասոսը իր բանակը տանե Հայաստանի գավորը խորհուրդ էր տալիս, որ Կրասոսը իր բանակը տանե Հայաստանի գավորը, որովհետև այդպես հեշտ էր բանակի պարենավորումը և լեռնաստավրայով, որովհետև այդպես հեշտ էր բանակի պարենավորումը և լեռնաստանում այնքան վտանգավոր չէր լինի պարթևական հեծելազորքը, որ պարսկա-

կան բանակի ամենահզոր մասն էր կազմում: Սակայն հոռմեացի զորավարը մերժեց այդ առաջարկը, ավելի հավատ ընծայելով արաբ շեյխերին, որոնք խոստանում էին նրան ավելի կարճ և հարմար ճանապարհով տանել Տիգրոսի վրա: Արտավազը վերադարձավ Հայաստան՝ օգնական գնդերը կազմակերպելու և Կրասոսի բանակը տանելու համար:

Նրա առաջարկած ծրագիրն ի նկատի ունենալով և Հայաստանի շահերը նա գիտեր, որ պարթևները քնած շին և հայ երկիրը պիտի ենթարկվի նրանց արշավանքին, որպեսզի հայերը չկարողանան օգնել իրենց դաշնակիցներին, և այդ պատճառով էլ ուզում էր, որ հոռմեական բանակն անցնելու Հայաստանով, որպեսզի կարելի լինի միաժամանակ ետ մղել և պարթևական արշավանքը:

Եվ իրավ, Որոգեսը հոռմեացիների դեմ ուղարկեց իր զորքի մի մասը, որի հրամանատարն էր պետության առաջին պաշտոնյա Սուրենը: Իսկ ինքը մնացած փոքրիկ մասով արշավանք գործեց դեպի Հայաստան, որպեսզի խանգարե հայ հեծելազորքին, որ նույնպես գինվորական խոշոր ուժի հույս ունենալով, միանալ Կրասոսի բանակին: Արտավազը ստիպված եղավ գնալ Որոգեսի դեմ և իսկույն դեսպաններ ուղարկեց Կրասոսին հայտնելու, թե այլևս չկարող իր խոստումը կատարել, քանի որ պիտի պաշտպանե իր սեփական երկիրը:

Իսկ Կրասոսը, անցնելով Եփրատը (53 թ.) սկսել էր առաջանալ Միջագետքի անապատներով: Սուրենը կարողացավ կաշառել արաբ շեյխերին, որ նրանք հոռմեական բանակն առաջնորդեն անհարմար և վատ տեղերով, անապատների առանձնություն մեջ: Կրասոսը հասկացավ, որ ինքը խաբված է, բայց շատ ուշ: Հոռմեական բանակը շեր կարող այլևս դուրս գալ վտանգավոր դրությունից: Այդ ժամանակ էր, որ Արտավազը թագավորի դեսպանները հասան նրան: Դեսպանները, հաղորդելով Արտավազի ասածները, ավելացրին նրա կողմից նորից միևնույն խորհուրդը—չգնալ անապատներով, այլ ճանապարհ ընտրել Հայաստանը և կամ առնվազն լեռների մոտերքով արշավել վտանգներից խուսափելու համար:

Բայց Կրասոսի համար Արտավազի հրաժարումը, իր բանակին միանալուց արդեն դավաճանություն էր, թեև նրա առջև դրված էր այն անհրաժեշտությունը, որ հայերը պիտի պաշտպանեին իրենց հայրենիքը: Գրգռված մեծամիտ զորավարը նույնիսկ չկամեցավ նամակով պատասխանել Արտավազին, այլ միայն հրամայեց հայտնել նրան, թե ինքն այժմ ժամանակ չունի Հայաստանով զբաղվելու և պատերազմից հետո կերթա պատժելու հայերին՝ այս դավաճանության համար:

Որոգեսը, ըմբռնելով քաղաքական հանգամանքների լրջությունը, հայերի դեմ իսկական պատերազմ չսկսեց, այլ միայն թալանեց մի քանի կողմեր և աշխատում էր հաշտության պահել ու չեզոքացնել հայոց թագավորին: Արտավազի համար այլևս տատանվելու առիթ չմնաց, երբ իր դեսպաններից լսեց Կրասոսի սպառնալիքը: Նա հեշտության թեքվեց պարթևների կողմը: Այսպես կարող էր լինել մի թույլ թագավոր: Արդեն հայ և պարթև ազնվականների մեջ հաճախ էին տեղի ունենում խնամիական կապեր: Որոգեսն այս նոր դաշնագրությունն ամրապնդեց մի այդպիսի կապով. նա ամուսնացրեց իր որդի Բակուրին, որ և թագաժառանգ էր, Արտավազի քրոջ հետ: Սկսվեցին այս առիթով փոխադարձ խնջույքներ և մեծամեծ հանդեսներ:

1 Պլուտարխոս, 2. Գ., էր. 106—107:

2 Պլուտարխոս, ակդ, էր. 112a

Իսկ այդ միջոցին Կրասոսի բանակը Խառանի մոտ սոսկալի պարտության մատնվեց մի ճակատամարտի մեջ, ուր հոռմեացիները կորցրին 30.000 մարդ, և որ ամենից ստորացուցիչն էր Հոռմի համաշխարհային գինվորական փառքի տեսակետից՝ պարթևների ձեռքն ընկան և հոռմեական արծվանշան դրոշմները և շատ գերիներ: Կովի մեջ ընկան Կրասոսն ու իր որդին: Սուրենը Կրասոսի կտրած գլուխն ուղարկեց Որոգեսին, որ գտնվում էր Հայաստանում: Մեծ հաղթանակի այդ մեծ նշանը բերողները հայոց մայրաքաղաքը (հավանաբար Արտաշատ) հասան հենց այն օրերին, երբ դեռ շարունակվում էին հարսանեկան խնջույքները արքունիքում: Պլուտարքոսը տալիս է մի հետաքրքրական նկարագրություն այդ հանդեսներից:

Խնջույքը դեռ չէր վերջացել, պատմում է հույն երևելի մատենագիրը, և դերասաններից մեկը, Հասովնը, արտասանում էր տեսարաններ Եվրիպիդեսի (հույկավոր հույն թատերագիր, 5-րդ դար Ք. ա.) «Բաքոսյաններ» ողբերգությունից, կրելով թատերգության գլխավոր գործող անձինքներից մեկի, Պենթեոսի դիմակը: Նրան ծափահարում էին: Այդ միջոցին ներս մտավ Սիլլակեսը, գլուխ խոնարհեցրեց և ցույց տվեց Կրասոսի գլուխը: Պարթևացիները ի նշան իրենց հրճվանքի աղաղակներ բարձրացրին, որոնք խառնվում էին ծափահարությունների հետ: Ստրուկները, թագավորի հրամանով, հրավիրեցին Սիլլակեսին բռնել իր տեղը սեղանի մոտ: Իսկ Հասովնը, դեմ դնելով Պենթեոսի դիմակը, խլեց Կրասոսի գլուխը, սաստիկ հուզված, մոլեգնաբար արտասանեց ողբերգության հետևյալ տողերը.

Մենք բերում ենք լեռներից

Մեր տունը՝ նոր սպանած

Գազանը, բախտավ՛որ մի որս:

Ամենքը հրճվում էին: Իսկ պարերգուները երգում էին՝ փոխելով իրար.

— Ով էր առաջին հարվածողը:

— Այդ պատիվն ինձ է պատկանում:

Թագավորը (Որոգես), ուրախացած, պարզե տվեց, հետևելով հայրենի սովորության: Հասովնը ստացավ նրանից մի տաղանդ (6 հազար ֆրանկ):

Հոռմեական ուժի ահավոր խորտակումը համարձակություն էր տալիս պարթևներին անցկացնել իրենց բանակները Եփրատի մյուս ափը և արշավանքներ տարածել Սիրիայում և հոռմեական այլ երկրներում: Այս արշավանքների գլխավոր հրամանատարը Բակուր թագաժառանգն էր և հայերն էլ, իբրև դաշնակիցներ, իրենց զորքն ունեին, որի հրամանատարն էր Վասակը:

Հոռմը այդ միջոցին դարձյալ ազգամիջյան պատերազմների ասպարեզ էր դարձել և այդ պատճառով չկարողացավ բավականաչափ ուժերով դիմադրել պարթևներին: Կրասոսի մահից հետո մնացած երկու եռասուներեք՝ Պոմպեոս և Կեսար, պատերազմներ սկսեցին իրար դեմ՝ առաջնություն ձեռք բերելու համար: Արևելքում մնացել էր Կրասոսի զորավարներից մեկը, Կասսիոս անունով, որ ամրանալով Սիրիայում, փորձեց կանգնեցնել պարթևական ար-

1 2. Քովմաեանը այսպես է թարգմանել այս կտորը.

Ածեալ բերեմք ի լեռնէ

Նղչերու այն ինչ հարեալ՝

Ընդ մարթակաւ:

Նրջանիկ Որս: (Պլուտ., Գ, էր. 139):

2 Халатяни, с. 230.



շավանքները և թեպետ այս գործի մեջ նա նույնիսկ հաջողություն էլ ուներ, բայց և այնպես շկարողացավ անխորտակելի մի պատենջ դառնալ պարթևների առջև: Բակուրը, ստվարացնելով իր բանակը, նվաճեց համարյա ամբողջ Սիրիան, Փյունիկեն և նույնիսկ Պաղեստինը: Այստեղից պարթևները դուրս բերին հրեական մի մեծ գաղթականություն Հյուսիսային քահանայապետի հետ միասին: Գաղթականության մի նշանավոր մասը հավանաբար բաժին հանվեց դաշնակից հայերին և Հայաստանի մեջ բազմացան նոր խոշոր հրեական գաղութներ<sup>1</sup>: Հրեական տարրը հարկավոր էր երկրին՝ քաղաքների ազգաբնակչություն կազմելու համար: Եվ միայն շորորոգ դարում (Քրիստ. հետո), եթե հավատանք Փավստոս Բյուզանդացու հաղորդած թվանշաններին, Հայաստանի վեց քաղաքներում հարյուր հազար հրեաներ էին ապրում:

Պարթև-հայկական արշավանքը Հրեաստանում վերջ էր առնում 40 թվականին: Իսկ մինչև այդ Հռոմի ազգամիջյան պատերազմները հանգեցին այսպիսի հետևանքների: Պոմպեոսը, շարաշար հաղթվելով իր հակառակորդ Կեսարից, փախավ Եգիպտոս և այնտեղ սպանվեց: Կեսարը գնաց նրա ետևից Ալեքսանդրիա, սակայն այնտեղ նրան այլևս ոչինչ չէր մնում անելու, բայց միայն եգիպտական գահի վրա դնել այդտեղ թագավորող տան մնացորդներից մեկին, Կլեոպատրա արքայադուստրին, որ իր սիրուհին էր և որ պատմության մեջ անուն է թողել իր վավաշտությունները: Բայց Կեսարը Արևելքում երկար չմնաց: Դեռ պետք էր վերջացնել պայքարը հանրապետականների դեմ Եվրոպայում: Այդտեղ լիովին հաջողությամբ խորտակելով իր բոլոր հակառակորդներին, նա դարձավ միանձնյա իշխող:

Այդ ժամանակ էլ նա պիտի մտածեր Արևելքի մասին, սակայն 44-ին սպանվեց Հռոմի ծերակուլյտի մեջ:

Կազմվեց մի երկրորդ եռապետություն և այս անգամ աշխարհին տիրելու փափագով դուրս եկան նորերը—Հուլիոս Կեսարի քրոջ թոռն Օկտավիոս, որ Կեսարի կտակով նշանակված էր նրա ժառանգ և որ նույնպես սկսեց կռիւ իրեն Կեսար, ապա Մարկոս Անտոնիոս և Լեպիտոս: Վերջինս, սակայն շուտով հեռացվեց, այնպես, որ պետությունն իսկապես պատկանում էր Օկտավիոսին և Անտոնիոսին, որոնք այժմ արդեն երկապետություն (դուլմափրատ) էին կազմում:

Արևելքը բաժին ընկավ Անտոնիոսին, որ բարոյական հիմքերից զուրկ, արատավոր մի մարդ էր, ազահ և փառամուլ, ինչպես ամեն մի մարդ, որ հանկարծ հասնում է բարձր տիրապետական դիրքի: Արևելքում Հռոմը գործ ուներ պարթևների հետ և Անտոնիոսը պիտի շտապեր պատերազմ սկսել: Բայց Կիլիկիայում տեսնելով Կլեոպատրա թագուհուն, որին ինքն էր բերել տվել Եգիպտոսից, մոռացավ պետական պարտավորությունները, հափշտակվեց այդ կնոջ պշրանքներով և գնաց նրա հետ Ալեքսանդրիա, ուր օր ու գիշեր գինարբուքների և զեխ ու շվայտ խրախճանքների էր անձնատուր դարձել: Երբ Հռոմում սկսեցին դատապարտել նրա փչացած բարքը, նա գնաց պատերազմելու Օկտավիոսի հետ, բայց հաշտվեց և վերադարձավ Հունաստան, իսկ Սիրիայի և պարթևների գործերը հանձնեց իր տաղանդավոր մի զորավարին, որի անունըն էր Վեստիդիոս Բասոս: Սա 38 թվին սարսափելի ջարդ տվեց պարթևներին և բոլորովին ոչնչացրեց նրանց բանակը, որի գլխավոր հրամանատար Բակուրըն էլ, Արտավազդի փեսան, սպանվեց: Հռոմեացիները վրեժ հանեցին Կրա-

<sup>1</sup> Ibid, p. 234.

սոսի պարտության համար: Այդ նշանավոր հաղթությամբ Հռոմը վերականգնում էր իր հեղինակությունը Արևելքում: Որոգես թագավորը վշտից, բայց մանավանդ իր ժառանգ Բակուրի մահից նեղված՝ հրաժարվեց գահից և նրա տեղ սկսեց թագավորել նրա որդի Հրահատ Գ (37—2), որի առաջին գործը եղավ կոտորել իր բազմաթիվ եղբայրներին և իր ձեռքով սպանել նույնիսկ հորը, որպեսզի գահի թեկնածուներ չմնան և ինքը հանգիստ թագավորի:

Արտավազդը այս ահավոր փոփոխություններից իրեն ստիպված տեսավ թեթևելու հակառակ կողմը և պարթևների դաշնակիցը դարձավ հռոմեացիների դաշնակից: Ուրիշ կերպ չէր կարող լինել, քանի որ հռոմեական տիրապետությունը տարածվեց և Վրաստանի ու Աղվանքի վրա:

Անտոնիոսը նախանձելով Վեստիդիոս Բասոսին, ուղարկեց նրան Հռոմ, որպեսզի ինքը շարունակե հաղթական դափնիներ հավաքել և մի լավ էլ կողոպտել իր հարստություններով դյուսթական անուն ստեղծած Արևելքը: Նրա սիրուհին արդեն պարզեց էր նրան մի երկվորյակ: Վավաշտ երկրպագուն չփոտեր ինչ անե այդ կնոջ համար. Փյունիկեն, Կիլիկիայի մեծ մասը, Կիպրոսը՝ նա ընծայեց Կլեոպատրային: Եվ նստած նրա հետ՝ ծրագրում էր նվաճել ամբողջ Առաջավոր Ասիան, վերականգնել Ալեքսանդր Մակեդոնացու կայսրությունը և արդեն բաժանում էր այդ ապագա նվաճումներով ձեռք բերած հողերը: Հայաստանը տալիս էր Կլեոպատրայից ծնված Ալեքսանդր որդուն:

36 թվականին նա, վերջապես, ազատվելով Կլեոպատրայի գրկից, մի խոշոր բանակի գլուխ անցած, գնաց Հրահատ Գ-ի դեմ: Արտավազդն իր նախկին քաղաքականության հետևեց—դարձյալ խոստացավ օգնական զորք և դարձյալ խորհուրդ տվեց, որ հռոմեական արշավանքը Հայաստանի վրայով տարվի պարսկական մայրաքաղաք Եկբատանի (այժմյան Համադան) և այնտեղից Տիգրոսի վրա: Այս անգամ նույնպես հայոց թագավորը իր երկրի շահին էլ էր նկատի առնում: Նա կամենում էր կործանել Ատրպատականի թագավորին, որ նույնպես Արտավազդ էր կոչվում և իր թշնամին էր դրանով կարելի էր կրկին ետ ստանալ այն հողերը, որոնք Հայաստանին էին պատկանում և կցված էին Ատրպատականին:

Անտոնիոսը, երևի աչքի առջև բերելով Կրասոսի օրինակը, ընդունեց հայոց թագավորի խորհուրդը և իր բանակը կուտելով Արարատյան դաշտում, անցավ Արաքսը և սկսեց առաջանալ դեպի Ատրպատականի խորքերը, դեպի Ուրմիայի լիճը: Արտավազդը 13 հազար ձիավոր և հետևակ զորք էր տանում հռոմեական բանակի հետ: Սակայն զինվորական բախտը երես էր դարձրել Կլեոպատրայի տարփածուից: Ատրպատականի սահմաններում հռոմեացիները հանդիպեցին շատ խիստ դիմադրության, որ ծանր զոհեր էր տանում նրանցից: Ավելի մեծ էր անհաջողությունը Ուրմիայի լճի հարավային ափերում, ուր Անտոնիոսը պաշարեց Ատրպատականի մայրաքաղաքը: Նա այլևս չկարողացավ առաջ շարժվել դեպի պարթևների երկիրը, որովհետև հենց այդ միջոցին էլ Հրահատ Գ օգնության հասավ Ատրպատականից: Պարթևական հեծելազորը, շրջապատելով հռոմեական մի զորաբաժին, ոչընչացրեց նրան և Անտոնիոսը մնաց առանց պաշարների, առանց պատերազմական մեքենաների: Արտավազդը, տեսնելով այս պարտությունը, ետ քաշեց իր զորքերը և վերադարձավ ձայաստան<sup>2</sup>: Բայց այդքան հեշտ չէր նահան-

<sup>1</sup> Моммсен, т. V, с. 352.

<sup>2</sup> Պլուտարխ, 2. 2, կր. 160:

չը հոռմեացիների համար: Պարթևները նեղում էին նրանց. երկիրը անժանդ էր, պաշարների մեծ պակասություն էր և զինվորների մեջ կարգապահությունը վերանում էր: Անտոնիոսը ամենաթալառահող միջոցների էր դիմում. հուսահատության ժամերին նույնիսկ ինքնասպանության մասին էր մտածում:

Այսպիսի տանջանքներով նա մի կերպ իր վաստակած ու քայքայված բանակը մտցրեց Հայաստան, ուր Արտավազը ոչինչ շինարարական հոռմեացիների բոլոր կենսական պիտույքները հոգալու համար: Իսկ զորավարները մտածում էին, թե ինչպես պիտի արդարացնեն այս անհաջող արշավանքը: Հոռմեացիների սովորությունն էր այսպիսի դեպքերում որոնել դավաճանություն: Եվ նորից Արտավազը թագավորը դարձավ նրանց համար այդ արդարացուցիչ պատճառը: Անտոնիոսը նրա հետ արտաբուստ շատ լավ էր վարվում, որովհետև իր զորքը նրա հաշվին էր ապրում ձմեռվա մեջ, բայց արդեն ինքն էլ համաձայն էր իր զորավարների հետ, թե պետք է պատժել այդ դավաճան թագավորին:

Զկարողանալով նույնիսկ համբերել, որ ձմեռն անցնե, Անտոնիոսը շտապում էր իր սիրուհու մոտ, որին արդեն տվել էր «թագուհիների թագուհի» տիտղոսը: Հայաստանի ձյունապատ լեռներում հոռմեական զորքը դարձյալ շատ կորուստներ ունեցավ, բայց դրա փոխարեն նրա հրամանատարը օր առօր անցավ Սիրիա, ուր նրան սպասում էր Կլեոպատրան:

Զենքը ոչինչ չէր տվել, որ Անտոնիոսը դենք իր սիրուհու ոտների տակ: Բայց պալատական շողոթորթների լեզվով նա հաղթական էր վերադարձել: Մնում էր միայն հաղթանակի մի մեծ նշան էլ լինի: Իբրև այդպիսի նշան Անտոնիոսը նկատի առավ Արտավազը թագավորին և հնարքներ էր մտածում, թե ինչպես նրան խաբեությունը Եգիպտոս տանե: Եվ դեպքում ինքն ուղարկելով հայոց թագավորի մոտ, հրավիրեց նրան իր մոտ՝ պարսկական մի նոր արշավանքի ծրագիր կազմելու համար. Արտավազը, սակայն, շխաբվեց և մերժեց այդ առաջարկությունը: Երկրորդ անգամ Անտոնիոսը արդեն խնամախոս ուղարկեց, առաջարկելով ամուսնացնել նրա աղջկան իր Ալեքսանդր որդու հետ: Արտավազը դարձյալ հրաժարվեց: 34 թվականին Անտոնիոսը զորքով գնաց Փոքր Հայք և այդտեղից դարձյալ հրավիրեց Արտավազին իր մոտ:

Ստանալով այս անգամ էլ մերժում, նա դիմեց իր զորքով դեպի Արտաշատ: Այդտեղ արդեն բարեկամների միջոցով դավ սարքվեց և սպանալիքների ու բարեկամական հավաստիացումների միջոցով կարելի եղավ, վերջապես, տանել հայոց թագավորին նրա մոտ: Անտոնիոսը կալանավորեց նրան, իսկ Հայաստանի կառավարությունը հանձնեց Ատրպատականի Արտավազ թագավորին, որ հպատակության դաշինք էր կապել նրա հետ և իր աղջկան տվել էր նրա Ալեքսանդր որդուն: Մի ստորություն կատարելուց հետո նրա համար այլևս դժվար բան չէր ուրիշ ստորություններ ավելացնել: Կալանավորված թագավորին, ինչպես պատմում է Դիոն Կասսիոս պատմագիրը, նա շրջեցնում էր հայոց այն բերդերը, ուր արքունական գանձեր էին պահվում և հավատացնում էր բերդապահներին, թե թագավորը միայն պատանդ է և պիտի արձակվի, եթե նրա համար փրկանք տրվի: Բայց հայոց զորքերը բացեի-բաց մերժեցին մաս հանել իրենց պահպանած գանձերից ազահ հոռմեացուն: Ուստի Անտոնիոսը դիմեց ավելի անարգ միջոցի. նա կողոպտեց Անահիտ աստվածուհու հարուստ տաճարը Եկեղյաց գավառում և տարավ նրա ոսկե-

նույլ արձանը<sup>1</sup>: Այնուհետև նա արժաթի շղթաներով կապեց Արտավազին և գերեց նրա կանանց ու երեխաներին: Հայոց բանակը, վրդովված այդ բոլոր արարքներից, զենքի դիմեց և թագավոր հայտարարեց Արտավազի ավագ որդուն, Արտաշես Բ-ին, որ սակայն, հաղթվեց հոռմեացիներից ու փախավ պարթևների մոտ: Իսկ Անտոնիոսը իր գերիներին, իբրև հաղթանակի ապացույցներ, տարավ Եգիպտոս և ընծայեց իրեն արժանի սիրուհուն:

Հայոց թագավորն իր տարաբախտ գերության ծանրությունը տարավ հելլենական կրթություն ստացած և գրող մի մարդուն վայել արժանապատվությամբ: Այդպես էր և նրա ընտանիքը: Նրանց տանում էին Ալեքսանդրիայի փողոցներով մինչև այն տեղը, ուր Կլեոպատրան նստած էր ոսկե գահի վրա: Դա մի անարգ հաղթանակ էր: Արտավազին և նրա ընտանիքին հայտարարված էր, որ եթե նրանք աղաչանքի աղաղակներով դիմեն Կլեոպատրային և «թագուհիների թագուհի» անվանեն, ազատություն կստանան: Սակայն իզուր: Արքայական գերիները ոչինչ աղաչանք չբարձրացրին: Իսկ Կլեոպատրային իր սովորական անունը տվին: «Հայերը, — շարունակում է Դիոն Կասսիոսը, — պահպանեցին իրենց ոգու վեհությունը, ուստի և փառավոր անվան արժանացան»<sup>2</sup>:

Սակայն ի հիշատակ այսպիսի ամոթալի մի «հաղթանակի» Անտոնիոսը դրամ էլ կտրել տվեց, որի մի երեսին իր պատկերն էր, առջև դրած հայոց թագավորի թագը, իսկ մյուս երեսին՝ Կլեոպատրայի պատկերը: Դրամի վրա գրված էր. «Անտոնիոս, Հայաստան նվաճյալ»:

Հոռմում վրդովված էին Անտոնիոսի այս արարքների վրա: Օկտավիոսը համակրում էր հայոց թագավորին և աշխատում էր թեթևացնել նրա դրությունը: Այս բանն ավելի գրգռեց Անտոնիոսին և նա զլխատել տվեց Արտավազին 31 թվին: Բայց շուտով ինքն էլ ամոթալի վախճան ունեցավ: Նրա և Օկտավիոսի մեջ պատերազմ բացվեց: Մովսիսի ճակատամարտ էր պատրաստվել Ակցիում հրվանդանի մոտ. բայց պատերազմն սկսվելուն պես Կլեոպատրան փախուստի դիմեց իր նավերի հետ: Նրա օրինակին հետևեց և նրա սիրականը: Օկտավիոսը հետևեց նրանց: Թագուհին, տեսնելով վտանգը, վճռեց դնել շարտել իր սիրականին և հիմա էլ Օկտավիոսին հրապուրել: Նա իմաց տվեց Անտոնիոսին թե սպանել է իրեն: Սիրականը, առանց երկար մտածելու, սպանեց իրեն, բայց այդ միջոցին Կլեոպատրան դուրս եկավ Օկտավիոսի մոտ՝ աշխատելու, որ նրան իր ցանցի մեջ գցե: Սակայն նրան իմաց տրվեց, թե նա պարզապես գերի է և պիտի հետևե Օկտավիոսի հաղթական կառքին՝ Հոռմ մուտք գործելիս: Այն ժամանակ Կլեոպատրան բերել տվեց ծաղիկներով լի մի կողով, որի մեջ օձ էր դրված: Օձը խաթեց նրան և նա մեռավ: Իսկ Օկտավիոսը, վերցնելով իր հետ հայոց առաքինի թագավորի ընտանիքը, տարավ իր հետ Հոռմ և պահում էր պատվով:

2. Արտաշես Բ (33—20): Անտոնիոսի տմարդի վարմունքը Արտավազին հետ, որ հոռմեացի երեկելի պատմագիր Տակիտոսը որակում է «եղեռն» անունով, մի ահավոր հարված էր տալիս Հոռմի ազդեցության Հայաստանում: Արտաշեսը վերադարձավ հայրենիք, լցված մի կատաղի ատելությամբ, որ ավելի ևս բորբոքվեց Արտավազի սպանության պարագաներով: Հոռմեական զորքերը գնացել էին Անտոնիոսի հետ՝ Օկտավիոսի դեմ կռվելու համար: Ար-

<sup>1</sup> Ա. Գաբազյան, «Քննական Պատմություն հայոց», մասն. Բ, Թիֆլիս, 1895, էջ. 182—183:

<sup>1</sup> Халатяни, с. 242.

<sup>2</sup> Գաբազյան, «Քննական Պատմ.» հ. Բ, էջ. 183:

տաշեսը, Հրահատի օգնութեամբ, առաջ ու առաջ հարձակվեց իր հոր թշնամու, Ատրպատականի Արտավազդի վրա, հաղթեց նրան և այս անգամ անարգել նստեց իր հոր գահի վրա, բոլորովին անկախ Հոռմից: Թվում էր, թե Արտաշես Ա-ի և Տիգրան Մեծի ժամանակներն էին վերագառնում: Արտաշես Բ քաջ և խիզախ թագավոր էր, այնպես որ իր կտրել տված դրամների վրա նա էլ գործ էր անում իր պապի խրոխտ տիտղոսը—«արքայից արքա»<sup>1</sup>: Իսկ իր հոր վրեժն առնելու համար նա կոտորել տվեց Հայաստանում մնացած բոլոր հոռմեացիներին<sup>2</sup>: «Իր հոր պատճառով մեզ թշնամի,— ասում է Տակիտոսը,— նա պաշտպանում է իրեն և իր թագավորությունը Արշակունիների ուժով»<sup>3</sup>:

Այս գրգռիչ քաղաքականությունը, սակայն, պատերազմներ չառաջացրեց: Օկտավիոսը, ոչնչացնելով Անտոնիոսին, դարձավ Հռոմի առաջին կայսրը, ստանալով ծերակույտի կողմից նաև Ավգոստոս (Օգոստոս) նվիրական պատվանունը (սրբազան): Կայսրը ըստ ամենայնի հետևում էր Հուլիոս Կեսարի կարգերին, բայց խույս էր տալիս պատերազմական գործողություններից, որպեսզի իր հպատակների այնքան տենչացած խաղաղությունը պահպանված լինի: Դրա փոխարեն Օգոստոսը մեծ հաջողությամբ գործում էր իբրև ճարպիկ պետական մարդ և իսկապես մեծ ընդունակություն ցույց էր տալիս գիվանդափտություն մեջ: Այս միջոցով էլ նա, երբեք չշտապելով, կարգավորեց նաև արևելյան հարցը:

Ըմբռնելով Հայաստանի ռազմական մեծ կարևորությունը Միջերկրական ծովի ափերի վերաբերմամբ, Օգոստոսը, իհարկե, անհանդուրժելի էր համարում այն դրությունը, որի մեջ գտնվում էր հայոց հարցը Արտաշես Բ-ի գործադրած միջոցների շնորհիվ: Բայց այդ ուժեղ, անկախություն սիրող միապետին թուլացնելու համար Հռոմի արքունիքը դիմում էր մի կտրուկ միջոցի, որ նրան հայտնի էր նախկին ժամանակներից: Հայաստանը գերազանցորեն պարթևասեր էր: Բայց ահա հոռմեական ջանքերով, գուցե և ոսկով, կազմվում է և հոռմեասար կուսակցություն, որին մասնակից են և թագավորի մերձավորները և որ սկսում է բացարձակ կերպով գործել թագավորի դեմ: Իսկ Արտաշեսի պաշտպան պարթևաց թագավորին Հռոմն իր ձեռքն առավ Արևելքում լավ փորձված ճանապարհով—հարեմի միջոցով: Օգոստոսը Հրահատ Դ-ին ընծա ուղարկեց, իբրև հարձ, մի գեղանի իտալուհու, որի անունն էր Թերմուսա և որին վիճակվեց քաղաքական մի խոշոր առաքելություն<sup>4</sup>: Հարձույթներից դառնալով թագավորի կին, իտալուհին իր ձեռքն առավ ոչ միայն ամբողջ կանանցը, արքունիքը, այլև թագավորին, հետևաբար և պետությունը:

Եվ երբ 20 թվականին ինքը Օգոստոսը գնաց Արևելք, միմյանց ետևից կատարվեցին մի շարք դեպքեր, որոնք կատարյալ հաղթանակներ էին հոռմեական գործի համար: Առաջ ու առաջ մի խոշոր դավադրություն ծագեց Հայաստանում: Հոռմեական կուսակցությունը պատգամավորություն ուղարկեց կայսրի մոտ, խնդրելով նրան գահընկեց անել Արտաշեսին և նրա տղ թագավորեցնել նրա եղբայր Տիգրանին, որ Արտավազդի հետ գերի էր գնացել Ալեքսանդրիա, և ինչպես տեսանք, Անտոնիոսի մահից հետո դժբախտ թագավորի ընտանիքի հետ տարվել էր Հռոմ: Այդտեղ Տիգրանը դաստիարակություն էր ստացել հոռմեական ոգով: Օգոստոսը պահում էր Հռոմում արևելքի

1 Халаятши, с. 245.

2 2. Ատուրյան, էր. 123:

3 Տակիտոս, Բ, 3:

4 Գուրազաշյան, Բ, էր. 194:

մի քանի ուրիշ գահերի թեկնածուներին էլ՝ հարկավոր դեպքում նրանց գործածելու համար:

Առայժմ դուրս հանվեց հայոց գահի թեկնածուն: Կայսրը հրամայեց իր որդեգիր Տիգրիոս Կլաւտոս Ներոնին, խոշոր բանակի գլուխ անցած, տանել Տիգրանին Հայաստան և եթե հարկավոր լինի նույնիսկ պատերազմի բռնվել պարթևների հետ, կանգ չառնել այդ բանի առջև անգամ:

Սակայն դավադրությունը կատարվեց առանց մեծամեծ ցուցումների: Տիգրիոսի հասնելուն պես՝ հոռմեասեր հայերը սպանեցին Արտաշեսին (20 թ.) և դրանից հետո Տիգրիոսը թագ դրեց նրա եղբայր Տիգրանի գլխին<sup>1</sup>:

Այս ոճրագործությունը Հայաստանը միայն մի քաջ և ընդունակ թագավորից չէր զրկվում, այլև ավելի մի մեծ բանից—այդ թագավորի պահած ու պաշտպանած անկախությունից: Արտաշեսի մահով Հռոմի գերիշխանությունը Հայաստանում հասնում էր մինչև այդ շտեմնված բացարձակության: Հայոց հարցն ստանում էր աղետավոր կերպարանք: Այնուհետև երկրորդական նշանակություն էր ստանում Արտաշեսյան հարստությունը, իսկ հայ երկրի անկախությունը, որ ստեղծված էր նրա ձեռքով, դառնում էր ստվերային մի երևույթ: Եվ հասկանալի է, որ այսքան հեշտությամբ ձեռք բերած հաջողությունը դառնում էր Օգոստոսին նորից փառավորող մի հաղթանակ: Տոնախրամություններ կատարվեցին այս առիթով: Հռոմի մեծ բանաստեղծները երգեցին այդ հաղթանակը: Օվրատիոսն ասում էր. «Հայը Կլավդիոս Ներոնի գոռ զորությունը ընկավ»: Վիրգիլիոսը Արաքս գետը կոչում էր «կամուրջի դեմ զայրացող», կամ, մի ուրիշ տեղ, «զայրագին և կամ կամուրջներ կոտորող»: Այս փոխաբերությունների մեջ Արաքսը հայ ժողովուրդն էր, իսկ կամուրջները՝ որոնց դեմ նա ըմբոստանում է, հոռմեական ժառանգությունը: Մի քանի տեսակ դրամներ փոխվեցին այդ առիթով, որոնց վրա դարձյալ փայլում էր «Հայաստանը նվաճած» մակագրությունը, իսկ ինքը Հայաստանը ներկայացվում էր կնոջ կերպարանքով, որ կամ ծնկաչոք է Օգոստոսի առջև կամ թեթևոր տարածած է դեպի նրան, որպես թե ամեն ինչ տալիս է նրան:

Եվ իր հաստատած կարգը Օգոստոսը դեռ շնորհ էր համարում հայերի համար: Իր կտակի մեջ նա ասում էր, թե կարող էր Հայաստանը հոռմեական մի նահանգ դարձնել, բայց շկամեցավ այդ անել և տվեց հայերին թագավոր<sup>2</sup>:

Եվ «բարբարոսները» չէին, իհարկե, որ կարողանային Հռոմի մեծ քաղաքագետ միապետին հակադրել քաղաքական մի նույնակշիռ նրբամտություն և ճարտարություն: Հայաստանից հետո հերթը գալիս էր Պարսկաստանին, ուր ավելի ևս զարմանալի երևույթներ հանդես եկան: Հրահատ թագավորը, առանց պատերազմի մեջ հաղթված լինելու, ինքնակամ վերադարձրեց Օգոստոսին Կրասոսի անվանի պարտությունը պարթևների ձեռքն անցած հոռմեական արժվանշան դրոշներն ու գերիները: Բայց կար և ավելին: Հրահատը իր շորս որդիներին պատանդ ուղարկեց Հռոմ և պարթևական պետությունը այսպիսով մի տեսակ վասալական հարաբերության մեջ էր մտնում Հռոմի վերաբերմամբ: Այս գործի հեղինակն էր Թերմուսան, պարթևական շահի իտալուհի գեղանի կինը, որ այս ճանապարհով հեռացնելով գահի թեկնածուներին, թագ էր պատրաստում իր որդու համար<sup>3</sup>:

1 Տակիտոս, Բ, 3:

2 2. Գաբրելյան, «Տիգրանական պատմություն», 2. Բ, վիճենա, 1852, էր. 95:

3 Գաբրելյան, էր. 97:

4 Գուրազաշյան, Բ, էր. 194:

**3. Անկում:** Սակայն Օգոստոսի դիվանագիտության հաղթանակը հավիտենական չէր: Այդքան հեշտ չէր փոփոխել մի ամբողջ ժողովրդի տրամադրությունն ու հակամենբրը, մոռացնել տալ նրա ազգային ինքնուրույնությունը: Հռոմի կուսակիցները Հայաստանում, ինչպես երևում է, երկար շմանցին բացառիկ ազդեցության տեր: Ժողովուրդը, այնուամենայնիվ, չէր մոռանում Հռոմի արարքները և Արտաշես Բ-ի սպանությունը դառնում էր հայության համար կսկիծի և զայրույթի մի նոր դրդիչ: Տիգրան Գ-ի թագավորության մասին ոչինչ տեղեկություն չէ մնացել. հաստատապես հայտնի չէ նույնիսկ, թե ո՞րքան է տեկել նրա թագավորությունը: Ոմանց հաշվով նա միայն մի տարի է մնացել գահի վրա, իսկ ոմանք ասում են՝ 14 տարի (20—6):

Նրան հաջորդում է որդին դարձյալ Տիգրան անունով: Այս շորորդ Տիգրանի հետ թագավորում էր և նրա քույրը, էրատո անունով, որ նրա կինն էլ էր: Քրոջ և եղբոր ամուսնությունը միայն այն էր ցույց տալիս, թե Հայաստանում դեռ ուժեղ էին տոհմային կազմի ավանդությունները և թե դա արդեն գերազանցորեն զրադաշտական մի երկիր էր, քանի որ այդպիսի ամուսնությունը թույլատրվում էր այդ կրոնով: 56

Տիգրան Գ-ի և էրատոյի ժամանակ դարձյալ ուժեղանում է պարթևական կուսակցությունը, որ և ազգային կուսակցություն էր: Այդ միջոցին փոփոխություն է մտնում և պարթևական արքունիքի մեջ: Հրահատ Դ սպանվեց իր որդի Հրահատակի ձեռքով, որ թերմուսա տիկնոջից էր ծնված և այս սպանությունը կատարում էր հենց նրա հորդորներով: Դարձյալ հակահռոմեական քաղաքականություն էր տիրապետում Պարթև արքունիքում և Հրահատակը ձեռք էր մեկնում Հայաստանում գործող հակահռոմեական կուսակցության:

Օգոստոսն այլևս չկարողացավ խաղաղ ու ճարպիկ միջոցներով կարգի բերել հայերին: Հակառակությունն այն աստիճանին հասավ, որ հռոմեական զորքերը մտան Հայաստան և այնտեղ զենք բանեցրին հայերի դեմ: Աղոտ ու մութ են տեղեկությունները: Երևի այդ արշավանքի հետևանքով էր, որ Տիգրանն ու էրատոն փախան պարթևների մոտ: Այդ ժամանակ հռոմեացիները թագավորեցրին մի ոմն Արտավազդի, որի մասին չգիտենք ոչինչ հաստատ բան: Ոմանք կարծում են, թե դա Տիգրան Գ-ի եղբայրն էր: Սակայն այս մասին պարզ հիշատակություն չկա հին աղբյուրների մեջ և կարելի է հավանական համարել, թե նա օտար էր: Այս դեպքում պարզվում է, որ Հռոմը, հայկական անկարգություններից ազատվելու համար, վճռել էր ոչնչացնել ազգային թագավորությունը, ինչպես շուտով էլ իրականացրեց նա: Այսպես թե այնպես, Տիգրան Գ, պարթևական օգնությամբ ուժեղացած, վերադարձավ Հայաստան և դարձյալ իր ձեռքն առնելով թագավորական իշխանությունը, պատերազմի բռնվեց հռոմեացիների հետ և նույնիսկ հաղթեց նրանց<sup>1</sup>:

Այդ ժամանակ Հռոմի քաղաքականությունը գործի դրեց իր փորձած հին միջոցներից մեկն էլ: Կովկասյան լեռնաբնակ ցեղերը հաճախ էին հռոմեական ոսկով կաշառվում՝ արշավանքներ գործելու այն ուղղություններով, որ ցույց կտային իրենք հռոմեացիները: Եվ ահա այդպիսի մի արշավանք զնաց Հայաստանի վրա: Տիգրան Գ զնաց լեռնցիների դեմ և սպանվեց պատերազմի մեջ (Քրիստոսի ծննդյան տարին, 1 թ.): Արտաշեսյան հարստության վերջին թագավորն էր դա:

<sup>1</sup> Халатянц, с. 249.

<sup>2</sup> Գարրեհեան, Բ, էր. 96.

<sup>3</sup> Халатянц, с. 253.

**4. Արտաշեսյան տոհմը:** Մովսես Խորենացին մի տեղ<sup>1</sup> ասում է, թե Արշակունիներից առաջ տիրած հին հայ թագավորների տոհմը երկար ժամանակ պահպանեց իր գոյությունը և հայ նախարարական կազմի մեջ կրում էր իրեն հատուկ անուն—Ո ս տ ա ն ի կ: Եթե այս ճիշտ է և եթե «հին թագավորներ» ասելով պետք է հասկանալ Արտաշեսյան հարստությունը, այն ժամանակ մենք կարող կլինենք ասել, թե հայ ժողովուրդը երկար ժամանակ պահպանեց երախտագիտական զգացմունք դեպի այս նշանավոր տոհմը, մի զգացմունք, որ բացի դրանից ուժեղ կերպով արտահայտվել է և ժողովրդական բանավոր արվեստի այն գեղեցիկ հուշարձանների մեջ, ուր երևում են Արտաշես Ա-ի, Տիգրանի, Արտավազդի վիպական պատկերները:

Համարյա 190 տարի տեկց Արտաշեսյան հարստությունը: Մենք տեսանք նրա գործունեությունը այն՝ մերթ պայծառ լույսեր սփռող, մերթ կցկտուր և աղոտ տեղեկություններից, որոնք մնացել են օտար մատենագրությունների անկյուններում: Բայց թե այդքան տեղեկությունների էին միայն արժանի Արտաշեսյանները, թե հայ ժողովրդի երախտագիտական զգացմունքները ծնված պետք է լինեն ավելի բազմաթիվ մեծ, մանավանդ ներքին նշանակություն ունեցող իրողություններից, այս թվում է միանգամայն կասկածից դուրս: Հռոմեական և հռոմեական մատենագիրները հայոց պատմությունը գրելու նպատակ չեն ունեցել, այլ հիշատակել են Արտաշեսյան տոհմի թագավորներին այնքան միայն, որքան նրանք տեղ էին բռնում պարսկահռոմեական պայքարների մեջ: Բայց մի-մի անգամ գտնում ենք նրանց գործերի մեջ թանկագին վկայություններ: Դրանցից մեկի վրա հիմնված՝ մենք կարող ենք պատկերացնել, թե ազգային ինչ մեծ գործ կատարեց Ոստանիկ տոհմը իր տիրապետության ընթացքում:

Մենք տեսանք, որ առաջին իսկ քայլերից այդ տոհմի գաղափարն էր պետական միությունը՝ ազգային սկզբունքի վրա հիմնված, տեսանք, թե ինչպես Արտաշես Ա և Տիգրան Մեծը զենքով իրագործեցին այդ գաղափարը, հպատակեցնելով Հայկական Բարձրավանդակի ծայրագավառները հայ իշխանության:

Այն ժամանակ, երբ վերջանում էր Արտաշեսյան հարստությունը, ապրում էր հույն աշխարհագիր Ստրաբոնը, որ նկարագրելով Արտաշեսի և Տիգրանի միացրած երկրները, գրում էր. «Ամբողջ աշխարհի բնակիչները, շնորհիվ այս միացման, այժմ խոսում են միևնույն լեզվով»<sup>2</sup>: Այդ լեզուն, իհարկե, հայերենն էր: Իբրև պետական լեզու, նա հասկացվում էր պետության բոլոր ծայրերում, բազմաթիվ այլազան ժողովուրդների մեջ: Այս հաստատում է և Խորենացին, որ Հայկական պետության սահմաններն անվանում է նաև «ծայրք հայերէն խօսից» կամ «եզր հայկական խօսից»<sup>3</sup>:

Այս իրողությունը ցույց է տալիս, որ հայ պետությունը թեև ենթարկված էր, Արտաշեսյան հարստության ժամանակ, պարսկական և հունական ազդեցության, բայց իր ներսում հարազատ էր մնում իր ազգային ինքնուրույնության և զարգացնում էր այդ ինքնուրույնությունը իբրև պետական միության ամենաիրական միջոց: Նոր չէր արտահայտվում ազգային լեզվի նշանակությունը հայ ժողովրդի կազմակերպության մեջ: Մենք արդեն տեսանք, որ հնդեվրոպական Արմեն ցեղի լեզուն դարձավ այն գործիքը, որ միասին

<sup>1</sup> Խորենացի, Բ, է.

<sup>2</sup> Géographie, t. II, p. 400.

<sup>3</sup> Խոր., Բ, գ. Ը:

ձուլեց այդ ցեղը տեղային հեթիթական ցեղերի հետ, կազմելով դրանից մի հայ ժողովուրդ: Միևնույն գործողությունը կատարվեց և Արտաշեսյան հարթատության ձևերով, նրա տիրապետության ընթացքում, ձուլելով հայ ազգի հետ այն անչատ մանր ցեղերը, որոնք գուցե դարձյալ նույն հաբեթական ժագուն ունեին և ապրում էին Հայաստանի բնական սահմանները կազմող ժայռագավառներում: Այս կերպով հայացվեցին Գուգարքի մի մեծ մասը, որ կոչվում էր Տաշիր<sup>1</sup>, Արցախը<sup>2</sup>, Ուտին, Տայքը: Հավանական է համարվում, որ Սյուսիքն էլ ամբողջովին հայացված մի աշխարհ էր: 57 Հայացման հետքեր նկատվում են և Կորդվաց աշխարհում, այսինքն Քրիստոսանում: Քե ո՞րքան ուժեղ էր ձուլելու ունակությունը հայերի մեջ, ցույց է տալիս այն հանգամանքը, որ ապագայինացման և հայացման ենթարկվում էին նույնիսկ և հրեաները, որոնք ամեն տեղ հայտնի են իրենց ցեղային սովորույթներով: Գոնե խորհենացին հավատացնում է<sup>3</sup>, որ Արտաշատի հրեաները քրիստոնեություն էին ընդունել:

Եվ ի՞նչ, դիտելով այս ահագին պետական-կուլտուրական գործը, հարց տանք, թե ո՞ր էր նա պատրաստվում, որտեղից էր ղեկավարվում, պետք է աչքներս դարձնենք կենտրոնին, այսինքն Արարատյան դաշտին, ուր գեղեցիկ և բազմամարդ Արտաշատն էր և նրա շուրջը Արաքսն իր հյուսիսային հյուղերով (Քասախ, Հրազդան, Ազատ) ոռոգում էր պտղալից հովիտը: Այս կենտրոնն էր, որ գաղութներ էր ուղարկում հաստատվելու հեռավոր և օտար ժայռագավառներում: Գաղութներն էլ դառնում էին այն միջոցը, որով պետությունը տարածում էր իր լեզուն տեղացի ժողովուրդների մեջ:

Այսպիսի մի գործ անկարելի է երևակայել առանց լայն ծավալ ստացած ազգային դաստիարակության, առանց դպրոցների: Ըանապարհները, որոնցով հայ պետական ուժի հետ գնում էր և հայ կուլտուրան՝ օտարախոս գավառները հայացնելու համար, շատ էին: Հայկական կենտրոններից, առավելապես Արարատից, նրանք տարածվում էին զանազան ուղղություններով: Այսպես, դեպի հյուսիս տանողն այն հուշակավոր ճանապարհն էր, որ Հրազդանի հովտով, Սևանի լեռնանցքով իջնում է մի կողմից Աղստև գետի (Գուգարք), մյուս կողմից՝ Քարթառ գետի (Արցախ) հովիտները, որպեսզի երկու ուղղություններով դուրս գա Կուր գետի մեծ հովիտը արևմուտքում (Վրաստան) և արևելքում (Աղվանից երկիր): Այս ճանապարհների կողքերին գտնվող Ցաշիրք, Գարդման, Խաչեն գավառները, թվում է, այն մեծ կայաններն էին, ուր առաջին անգամ հաստատվում էր հայացման գործը՝ դեպի հյուսիս և դեպի արևելք տարածվելու համար:

Ստրաբոնի ցուցմունքները մեզ ասնում են Կովկասյան զլխավոր լեռնաշղթայի հարավային ստորոտները՝ Հայաստանի հյուսիսային սահմանների մի մասը որոնելու համար: Այսպես, նա ասում է, թե Արաքուս գետը, որ գալիս է Կովկասի լեռնաշղթայից և թափվում է Կուրի մեջ<sup>4</sup>, կազմում է սահման Իբերիայի (Վրաստան), Հայաստանի և Ալբանիայի (Աղվանքի) մեջ: Միև-

նույն փաստը նա կրկնում է, ասելով, թե Հայաստանից Իբերիա մտնել կարելի է, թե՛ Կուրի և թե՛ Արաքուսի կիրճերով: Մեր առջև է Արևելյան Վրաստանը, դաշտայինը: Այստեղ, այս դաշտում, հույն աշխարհագրի ասելով, շատ մեծ էր հայերի (և մարերի ազգեցությունը) վրացիների վրա, այնպես, որ վրացիները յուրացրել էին նրանց հագուստներն ու բարքը<sup>5</sup>: Իսկ հայ լեզվի տարածման մասին թանկագին վկայություններ տալիս են հենց վրաց գրավոր աղբյուրները: Այսպես, IV դարի սկզբին (Ք. հ.), երբ ս. Նունեն գնաց Ջավախք, այնտեղից Վրաստան մտնելու և քրիստոնեություն քարոզելու համար, Թափարավան լճի մոտ պատահեց վրացի հովիվների, որոնք իրենց հոտերով եկել էին Վրաստանի զանազան կողմերից, օրինակ Մցխեթից և նրա շրջականներից: Այս հովիվներն էին, որ ցույց տվին կույսին, թե ուր է գտնվում վրաց մայրաքաղաք Մցխեթը և խոսում էին նրա հետ հայերին լեզվով<sup>6</sup>:

Ավելի ուժեղ էր հայ լեզվի տարածման գործը Ալազանի հովտում, մանավանդ Կախեթում, որը դարձյալ վրացական աղբյուրների վկայությամբ, հույց հայացած մի երկիր էր: Դեռ VI դարում (Ք. հ.) վրաց ս. Դավիթ Գարեջեցին Կախեթում մի հայ իշխողի մոտ գնաց և խոսում էր նրա հետ հայերեն: Իսկ X դարում հիշատակվում է նույն Կախեթում Իշխանիկ անունով մի հայ ֆազավոր: Այս բոլոր հիշատակները հին հայացման մնացորդներն էին, անշուշտ:

Տարաբախտաբար, ճակատագիրը միմիայն հյուսիսային կողմերի մասին է պահել այսքան թանկագին տեղեկություններ: Մյուս կողմերը ոչինչ հիշատակ չեն թողել: Բայց անկասկած, այդ տեղերում էլ միևնույն եռանդուն գործունեությունն է կատարվել, զլխավորապես Արտաշեսյան հարստության ժամանակ: Ստրաբոնը գեղեցիկ կերպով բացատրում է այսպիսի գործունեության առաջնակարգ անհրաժեշտությունը: Հայ ժողովուրդը, ասում է նա, այնքան բազմաթիվ չէր, որ կարողանար բռնել իր երկրի ամբողջ տարածությունը<sup>7</sup>:

Եվ այսպես ահա, Արտաշեսյան տոհմը թեև արտաքին հարաբերությունների մեջ ընդհանրապես թույլ էր և հզոր պետություններին ենթարկված շատ անգամ, բայց այդ թուլության մեջ էլ նա հարատև եռանդով շարունակում էր Արտաշեսի և Տիգրանի դրած ներքին կազմակերպությունը, որի մեջ էլ ամփոփում էր ազգային ինքնապաշտպանության ամբողջ ուժը:

Կարելի է ասել, թե այս տոհմն էր իսկական Հայաստան և հայ ազգություն կազմակերպողը: Ո՛չ Հռոմը, ո՛չ Պարսկաստանը չկարողացան ջնջել երկրի այդ մեծ կենսունակությունը: Նա մնաց, չնայած խոր և երկարատև ազգեցություններին, ինքնուրույն և անկախ իր ներքին ազգային կյանքով: 58

<sup>1</sup> Հյուբշման, «Հին հայ տեղ. ան.», եր. 115:

<sup>2</sup> Լեո, «Պատմություն Արարատի հայոց Թեմական Հոգևոր Դպրոցի», Թիֆլիս, 1915, գլ. Ա, 4:

<sup>3</sup> Հյուբշման, եր. 58:

<sup>4</sup> Լեո, «Պատմություն Երևանի Հայոց Թեմական Հոգևոր Դպրոցի», Թիֆլիս, 1914, գլ. Ա, 1:

<sup>5</sup> Խորհենացի, Գ, լե:

<sup>6</sup> Այժմյան Արագվա:

<sup>7</sup> Géographie, t. II, p. 404.

<sup>1</sup> Ibid, p. 405.

<sup>2</sup> Ibid, p. 404.

<sup>3</sup> E. Такайшвили, «Источники грузинских летописей, I. Обращение Грузии (в христианство)», пер. с груз., с. 63.

<sup>4</sup> S. Brosset, «Histoire de la Georgie», St. Peters, 1849, t. I, p. 279. b) Նույն հեղինակի նույն գործին կցած ներածությունը (Introduction), St. Pet., 1858, հր. X: H. Mapp, «Аркауи, монгольское имя христиан», СПб, 1905, с. 7.

<sup>5</sup> T. II, p. 460.

Մ Ա Ս Ն Ն Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ  
Հ Ա Յ Ա Ր Շ Ա Կ Ո Ւ Ն Ի Ն Ե Ր

Գլուխ առաջին

Պ Ա Ր Թ Ե Վ Ա Կ Ա Ն Գ Ե Ր Ի Շ Ե Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ԽԱՌՆԱՇՓՈՔ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑ: 2. ՀՈՍԾԵԱԿԱՆ ԲԵԿԱՍՏՈՒՆԵՐ: 3. ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԲԵԿԱՍՏՈՒՆԵՐ: 4. ՏՐԻԱՏ Ա (62—մոտ 100): 5. ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԸ ՄԻՆՁԵՎ 226 Բ.

1. Խառնաշփոք ժամանակամիջոց: Տիգրան Դ-ից հետո, քրիստոնեական թվականության առաջին իսկ տարուց, Հայաստանում սկսվում է մի խառնաշփոթ շրջան, որ տևում է մոտ 60 տարի: Այս երևույթի կենտրոնական հանգամանքն այն է, որ հայ երկրի թուլությունը շատ է սաստկացած և թույլ չէ տալիս, որ երկիրն իր ձեռքն առնե իր սեփական ճակատագրի տնօրինությունը: Տնօրինողները ուժեղ հարևաններն են: Հայաստանի թագը մի թեկնածուից անցնում է մյուսին, և այդ թեկնածուներն այլևս հայեր չեն, այլ պատահական օտարներ: Նույնիսկ ներքին ինքնավարության հարց էլ չէր մնա այսպիսի մի երկրում, եթե նա չունենար իր ազգային հզոր կազմակերպությունը, որի վրա հենվում էր նրա ինքնուրույնությունը: Այս կազմակերպությունը ավատական ազնվականությունն էր, նախարարությունը: Որքան թուլանում էր կենտրոնական, միապետական կառավարությունը, այնքան ուժ և նշանակություն էր ստանում մասնավորը, տեղայինը: Բուն ժողովուրդն իսկապես իր տեղական նախարարի մեջ էր տեսնում իր ազգային իշխանությունը, այնպես որ ընդհանրական գահի վրա տեղի ունեցող տակնուվրայությունները չէին կարող նրան խորապես ցնցել, խախտել նրա ազգային գոյության հիմքերը:

Արտաշեսյան հարստության անկումից հետո է, որ շատ ցայտուն կերպով երևան էր գալիս հայ կյանքի այս ինքնատիպ և կենսունակ երևույթը, որի ծնողը ավատական կարգն էր և որ մնաց այնուհետև էլ մշտական երևույթ, որքան ավատական կարգը մնաց Հայաստանում: Ընդհանուր ազգային միացնող քաղաքական իշխանության փոխարեն հանդես էր գալիս տեղային ինքնավար մարմինների գործակցությունը: Նախարարությունը երկրի ցանկությունների ու ձգտումների ներկայացուցիչն էր դառնում: Բայց դա, իհարկե, միապաղաղ մի գանգված չէր: Տեղական շահերը, ազդեցությունները միշտ շատ ուժեղ են լինում այդպիսի կազմակերպությունների մեջ: Այստեղից էլ առաջանում էին տարբեր, հակադիր հոսանքներ, կուսակցություններ:

Հռոմի և Պարսկաստանի մրցումներից ստեղծված քաղաքական անկման մեջ հայ նախարարությունը դուրս էր գալիս իբրև ազգային շահերի պաշտպանության միակ գործոն: Նա ազգային կուսակցությունն էր, որ ազգային

շահերի տեսակետից էլ վերաբերվում էր Հռոմի կողմից նշանակված թագավորներին: Բայց որովհետև Հայաստանը չափազանց թույլ էր՝ Հռոմին իր սեփական կամքը հակադրելու համար, ուստի ազգային կուսակցությունը նույնացնում է իր շահերը պարթևական շահերի հետ և դառնում է միաժամանակ և պարսկական կուսակցություն: Հռոմն էլ իր սեփական կուսակցությունն էր կազմում հայ նախարարության մեջ, բայց հռոմեական կուսակցությունը Պարսկաստանի շափ ուժեղ չէր: Այս հանգամանքի ամենախոշոր պատճառը նկատել է Տակիտոսը: «Հայերը,— ասում է նա,— իրենց երկրի դիրքով, բարքերի նմանությամբ պարթևներին ավելի մոտ են և խնամություններով նրանց հետ կապված»: Բայց այս, իհարկե, չէ նշանակում, թե հռոմեական կուսակցության պատկանող նախարարները միայն ոսկով ու խոստումներով գնված մարդիկ էին: Կասկածել անգամ չէ կարելի, որ Հռոմը, իբրև արևմտյան քաղաքականության ներկայացուցիչ, Հայաստանի մեջ անկեղծ կուսակիցներ պիտի ունենար հենց այն պատճառով, որ հայ հայրենիքը, ինչպես տեսանք, վաղուց ենթարկված էր և արևմտյան քաղաքակրթության և աշակերտում էր նրան: Այս երկու հոսանքները—արևելյան և արևմտյան քաղաքակրթական խոշոր երևույթներն էին հայ երկրում և նրանց փոխադարձ ընդհարումները տևեցին շատ երկար: Ինչպես կտեսնենք, այդ ընդհարումներից էլ հայ կյանքն ստանում էր իր քաղաքակրթական զարգացման հյուսիսը: Նրանց վրա էլ կատուցվում էր հայ ժողովրդի քաղաքական բախտը:

2. Հռոմեական թեկնածուներ: Կովկասյան լեռնականների արշավանքը, որին ղոհ գնաց վերջին Արտաշեսյանը, պատժողական մի միջոց էր՝ հատկապես հայկական կառավարությունը տկարացնելու համար: Այնուհետև Հռոմին հարկավոր եղավ նորից մի բարձրաստիճան մարդ, կայսերական ընտանիքից, որ գնա Արևելք ավելի կայուն մի դրություն ստեղծելու համար: Տիրերիտոսը, ինչպես տեսանք, մի խոշոր քայլ արել էր, համարյա ոչնչության հասցնելով Հայաստանի անկախությունը: Այս անգամ նույն Օգոստոս կայսրը նույն արտակարգ առաքելությամբ Արևելք ուղարկեց իր որդեգիր և թագաժառանգ Գայոս Կեսարին, որ դեռ 20-ամյա մի պատանի էր, տալով նրան խոշոր մի զորաբանակ և ընդարձակ ծրագիրներ Արևելքը նվաճելու, նոր Ալեքսանդր Մակեդոնացի հանդիսանալու և այլ փառատենչիկ ձգտումների մասին: Գայոսը գնաց Սիրիա, ուր պատրաստություններ էր տեսնում Արաբիան նվաճելու համար:

Քրիստոսի 2 թվականին Հռոմի պատանի թագաժառանգը Եփրատ գետի մի կղզում տեսակցություն ունեցավ Հրահատակի հետ, և երկու մեծ պետությունների մեջ եղած վեճը, որի գլխավոր առարկան միշտ Հայաստանն էր, կարգադրվեց խաղաղ համաձայնությամբ: Պայմանավորվում էր, որ Հռոմն այնուհետև չի խառնվում պարթևների պետության ներքին գործերի մեջ և միշտ արգելված է պահում Հրահատ Գ-ի որդիներին, որոնք պատանդ էին կայսրի մոտ, իսկ պարթևներն էլ չեն խառնվում Հայաստանի գործերի մեջ և գերիշխանությունը տալիս են Հռոմին<sup>2</sup>:

Հենվելով այդ համաձայնության վրա, Գայոս Կեսարը Հայաստանին նոր թագավոր տվեց, բայց ոչ թե հատուկ և միմիայն այդ երկրին պատկանող մի թագավոր: Դա Ատրպատականի թագավոր Արիոբարդանն էր, ազգով մար, Արտավազդի որդին, այն իսկ Արտավազդի, որ հայոց Արտավազդ Բ-ի թշնա-

<sup>1</sup> Sarrbqherf, ԺԳ, 17:  
<sup>2</sup> Mommsen, V, c. 364.



մին էր Անտոնիոսի ժամանակ, իբրև վերջինիս հետ միացած դաշնակից, Արիո-  
բարդանը հոռոմեական կրթություն էր ստացել և, ուրեմն, Հռոմի քաղաքական  
ջահերի տեսակետից էլ միանգամայն բարեհույս մարդ էր:

Այսպիսով, Հռոմը կարծում էր միանգամայն լուծել հայոց հարցը, միաց-  
նելով երկու՝ իրար հակառակորդ թագավորությունները. սրանով Հայաստանի  
առանձին անկախությունը մի նոր մահացու հարված էր ստանում: Առաջին  
անգամից հայ երկիրը տարավ այս իրողությունը և ապահովապես այն պատ-  
ճառով, որ պաշտպանություն գտնել չէր կարող պարթևների արքունիքի կող-  
մից: Հաշտեցնող ներգործություն ունեին և Արիոբարդանի անձնական հատ-  
կությունները: Դա մի գեղատեսիլ և քաջ մարդ էր և հայերի մեջ լավ համա-  
րում ուներ: Բայց և այնպես ազգային կուսակցությունը շնորհաբար, թե ի՞նչ  
ահավոր փորձ է Հռոմի ձեռնարկությունը և զենք բարձրացրեց Հռոմի դեմ:  
Արիոբարդանը փախավ, մի տարի Հայաստանում թագավորելուց հետո (2—3)  
Այն ժամանակ Գայոս Կեսարը իր զորքերը մտցրեց Հայաստան:

Բայց այստեղ նրան սպասում էր կորուստը: Արշարունյաց գավառի Ար-  
տագերս ամուր բերդի հրամանատարը, հայ նախարար Ադդոնը թակարդի  
մեջ պեղծ գահաժառանգին, շահագործելով հոռոմեական ընչաքաղցությունը,  
Նա կանչեց Գայոսին Արտագերսի պատերի տակ՝ իբր թե հայ արքունի գան-  
ձերի ցուցակը ցույց տալու համար: Եվ այն ժամանակ, երբ պատանի Կեսարը  
կարդում էր այդ ցուցակը, Ադդոնը խրեց իր սուրը նրա ազդրի մեջ: Թեև Ադ-  
դոնը բռնվեց ու պատվեց, բայց թագաժառանգն էլ կարճ միջոցից հետո մե-  
ռավ նրա հասցրած վերջից<sup>1</sup>: Արիոբարդանը նորից հաստատվեց հայկական  
գահի վրա և կարողացավ գրավել հայերին իր ընտիր հատկություններով: Բայց  
երբ նա հանկարծամահ եղավ և Հռոմի ծերակույտը հավատարիմ մնալով եր-  
կու հարևան թագավորությունները մի իրեն հավատարիմ անձի մեջ կենտրո-  
նացնելու ծրագրին, Հայաստանի թագն էլ տվեց Արիոբարդանի հաջորդ Արտա-  
վազդ Գ-ին: Հայերը նորից ապստամբվեցին և սպանեցին այս մարին (մո-  
տավորապես 10 թվականին): Օգոստոս կայսրը, խուսափելով թշնամական  
հարաբերություններից, փորձեց այս անգամ էլ խաբելով քնացնել ազգային կու-  
սակցությունը: Հռոմի մեջ ապրող արքայազուն իշխաններ շատ կային՝ գա-  
նազան երկրներից հավաքված: Գրանցից մեկին նա թագավոր ուղարկեց Հա-  
յաստան և հավատացրեց, թե նա ազգային արքունական տոհմի, այսինքն  
արտաշեսյանների մի շառավիղն է: Սակայն իսկապես դա մի հրեա էր, որ  
զուցեց հեռավոր ազգակցություն ուներ Տիգրան Մեծի ընտանիքի հետ: Հռոմի  
այս արքանյակն էլ, իհարկե, ոչինչ հաջողություն չունեցավ և նրան էլ վնդե-  
ցին Հայաստանից մի կարճ միջոցում (11—13): Փորձ եղավ ճնշել երկրի ան-  
բավականությունը՝ արդեն անժխտելիորեն արտաշեսյան ծագում ունեցող  
էրատո թագուհուն գահ նստեցնելով, բայց այս կինը եթե մի ժամանակ կարող  
եղավ թագավորել իր եղբոր հետ միասին, այժմ չէր կարող անկախ և առանձին  
թագավորել և նրա այս երկրորդ թագավորությունը մի տարուց ավել  
չտևեց:

Անիշխանական դրություն էր տիրում և պարթևական արքունիքում, և  
կարծեք այդտեղից էլ ներշնչումներ էին ստանում Հայաստանի տիրող տար-  
րերը: Տիգրանի արքայական պալատը հեղափոխությունների բեմ էր, հեղա-  
փոխություններ, որոնք մեծագույն մասամբ ծնունդ էին առնում այն հանգա-

<sup>1</sup> Халатяни, с. 253—254;

մանքից, որ պարթև թագավորները նույնիսկ Արևելքի մեջ անտանելի դաժան  
ցննակալներ էին: Հրահատակը 4 թվականին սպանվեց, որովհետև տանել չէին  
կարողանում, որ նա զտարյուն պարթև չէ, բայց որ առավել է, նա ազդրում  
էր իր իտալուհի մոր հետ, մի ազգապղծություն, որ նույնիսկ քաղաքակրթու-  
թյան ամենաստոր աստիճանի վրա էլ չէ պատահում: Նրա տեղ թագավոր  
հրավիրվեց Որոդես Բ, բայց շուտով այս բռնակալի անազորույն դաժանու-  
թյունը դարձյալ հեղափոխություն առաջացրեց, որ և տապալեց նրան: Երկիրը  
մի 3—4 տարի մնաց կատարյալ անիշխանության մեջ, մինչև որ ղեկավարող  
իշխանական տարրերը վճռեցին դիմել Օգոստոսին և խնդրել, որ նա իրենց  
թագավոր տա Հրահատ Դ-ի պատանդ որդիներից մեկը:

Հռոմի քաղաքականությունը դարձյալ մի փայլուն հաղթանակ էր տանում  
Արևելքում: Պարթևական Պարսկաստանը, նրա ամենահաշտ և ամենաուժեղ  
թշնամին, ենթարկվում էր նրան, մի տեսակ կախում էր ստեղծում իր և նրա  
մեջ: Օգոստոս կայսրը մեծ հոժարությամբ և պատրաստություններով Տիգրան  
ուղարկեց Վոնոնին, որ եվրոպականացած մի պարթև էր և Հռոմի ազդեցու-  
թյունը պիտի մտցներ Իրանի ընդարձակ պետության մեջ: Վոնոնն ընդունվեց  
մեծ հրճվածքով: Բայց շուտով հանդես եկավ, իբրև ազգային արժանապատ-  
վությունը և ցեղային հոգեբանությունն արհամարհող: Տակիտոսն այսպես  
է նկարագրում դրությունը. պարթևները շուտով զղջացին, որ այդպիսի  
ընտրություն են արել: Ամոթ և նվաստություն էր պարթևական ազգի համար  
թագավոր խնդրել օտար աշխարհից, այն էլ մի մարդ, որ ապականված էր  
թշնամիների բարբերից: Նրանք ասում էին. Արշակունիների աթոռը հոռոմեա-  
ցիների տիրության մի մասն է. և ո՞ւր կմնա Արշակունի այն դուրսագույնների  
փառքը, որոնք սպանեցին Կրասոսին և հալածեցին Մարկոս Անտոնիոսին, եթե  
կայսրի ստրուկներից մեկը պիտի թագավորի պարթևների վրա: Ինքը Վոնոնն  
էլ սաստկացնում էր անբավականությունը իր վարք ու բարքով: Ապրում է:  
ոչ իբրև հարազատ պարթև: Քիչ էր որսի գնում, քիչ էր ձի հեծնում, շրջա-  
կատված էր հույներով, կերակուրների մեջ ասիական պարզություն չէր պահ-  
պանում և մանավանդ մատչելի ու մեղմ բնավորություն ուներ: Շարունակ  
ծաղրում էին նրա հելլեն սպասավորներին, այլև այն, որ իր կնիքը ամենա-  
չնչին իրերի վրա էր դնում:

Այս բոլոր պատճառներով վճռեցին գահընկեց անել նրան: Ատրպատա-  
կանում այդ ժամանակ թագավորում էր Արտավանը, որ մոր կողմից Արշակու-  
նի էր, պատկանում էր պարթևների Պահլավ ցեղին և արդեն չափազանց հա-  
րճալի մի ասիացի էր, որովհետև դաստիարակվել էր միջին-ասիական շրջա-  
նում, դահ ցեղի մեջ և հայտնի էր ուժեղ և եռանդուն բնավորությամբ<sup>2</sup>: Հրա-  
վեր ստանալով գրավել Տիգրանի գահը, Արտավանը հաղթեց Վոնոնին և  
փախրեց նրան Հայաստան (14): Այստեղ անիշխանություն էր այդ միջոցին  
և Հռոմը հաջողեցրեց, որ իր հովանավորյալը գոնե այստեղ հաստատվի: Վո-  
նոնը հայկական գահը բարձրացավ, բայց շատ կարճ ժամանակով: Պատճա-  
ռը, երևի, այն էր գլխավորապես, որ հայերն էլ չկարողացան տանել այդ  
մարդու եվրոպական սովորությունները: Դարձյալ ուժեղացավ պարթևական  
կուսակցությունը, Արտավանը ուղղակի պատերազմ էր սպառնում Հռոմին,  
եթե իր ախոյանը չհեռացվի այդքան մոտիկ և վտանգավոր հարևանությունից:

<sup>1</sup> Տարեգրք, Բ, ա—բ:

<sup>2</sup> Моммсен, V, с. 365.

իսկ հայ ազնվականությունը, հատկապես Վասպուրականի և Բագրևանդի իշխանները, խոստանում էին միանալ պարթևներին, այդ պատերազմի մեջ: Այդ միջոցին էլ մեռավ Օգոստոս կայսրը, իսկ նրա հաջորդ Տիբերիոս կայսրը շուտով մեծ պատերազմի բռնվել Արևելքում, ուստի Վոնոնը հեռացավ Հայաստանից Սիրիա, ուր ապրում էր իբրև մասնավոր մարդ, հռոմեական կուսակալի հովանավորության տակ:

Այսպիսով նորից ուժեղանում էր պարթևական կամ ազգային կուսակցությունը Հայաստանի մեջ: Բայց Տիբերիոսը չէր կարող թույլ տալ, որ երկարատև լինի այդ դրությունը: Նա Արևելք ուղարկեց (17), նախկին փորձերին հետևելով, իր որդեգիր և ժառանգ Գերմանիկոսին, որ արդեն քաջ զորավարի և առաքինի մարդու հռչակ էր ստացել, տալով նրան մեծամեծ իրազորություններ և դնելով նրա տրամադրության տակ զինվորական մեծ ուժ: Արևելքը հանդիսատես եղավ, թե ինչպես երկու տեղական պետություններ, Կապադովկիա և Կոմմագենե, կայսրի կարգադրությամբ, ոչնչացան և վերածվեցին հոմեական նահանգների: Բայց Գերմանիկոսն, այնուամենայնիվ, լավագույն տպավորություն թողեց Հայաստանում իր անձնական բարեմասնություններով, որոնք, թվում է, ավելի խոր տպավորություն էին թողնում, քան նրան ուղեկցող զինվորական ահարկու բանակները: Նրան, իսկապես, հաջողվեց կարգավորել հայոց հարցը, լավագույն կերպով, ուշադրությամբ վերաբերվելով հայ ժողովրդի հոգեբանության, նրա ազգային տենչանքներին:

Դրանց համեմատ էլ նա մի շարք զարմանալի բարեբախտ թեկնածություն առաջացրեց հայկական գահի համար: Դա Պոնտոսի թագավորի որդին էր, Զենոն անունով, որ ազգակցական կապ ուներ Հռոմի կայսերական ընտանիքի հետ, քայքայ միևնույն ժամանակ դաստիարակվել ու մեծացել էր հայերի մեջ, յուրացրել էր նրանց սովորությունները, ազգային հատկությունները: Մի անձ, ուրեմն, որ կարող էր բավարարություն տալ, թե՛ Հռոմի ակնկալություններին և թե՛ հայոց ազգային կուսակցության պահանջներին: Եվ իրավ, նրան հրճվանքով վերաբերվեց հայ ժողովուրդը: Գերմանիկոսը թագ դրեց նրա գլխին մեծ հանդեսով, Արտաշատում, ուր թագավորին կեցցեցներով ընդունեց ժողովուրդը և փոխելով նրա Զենոն խորթ անունը տվեց նրան իր սիրած ազգային անունը—Արտաշես<sup>2</sup>:

Երկիրը և նրա հետ ամբողջ Արևելքը խաղաղվեցին, թեև Գերմանիկոսն էլ Գայոս Կեսարի նման, մահ գտավ իր այս արևելյան առաքելությունը կատարելիս: Արտաշես Գ թագավորեց մոտ 15 տարի (18—34), սիրում էր որսորդությունը, գինեխմությունը, զվարճությունները և, ըստ երևույթին, այս հատկություններով էլ գրավում էր հայ ազնվականության համակրանքները: 11-րդ դարում դեռ կենդանի էր ժողովրդական մի ավանդություն, որ պատմում էր, թե ինչպես Արտաշես թագավորը մահվան ժամանակ հիշում էր որսորդական հանդեսները, երբ ինքը և իր հետևորդները ուրախություններ էին անում, փող փչում և թմբուկներ զարնում: Այս ավանդությունը, թվում է, հենց այս որսասեր Արտաշեսին պիտի վերաբերվեր<sup>3</sup>: Սրանից ավելի բան չգիտենք այս թագավորի մասին, որին, սակայն, կարելի է տալ «խաղաբարար» տիտղոսը:

Հայաստանում և ուրիշ տեղերում տիրած խաղաղության մի գլխավոր պատճառն էլ պետք է նկատել այն, որ Գերմանիկոսի գալուստը Հայաստան

<sup>1</sup> Халатяну, с. 257.

<sup>2</sup> Տակիտոս, Բ, Ժգ:

<sup>3</sup> Халатяну, с. 259.

բավական զսպել էր և Արտավանին: Պարթևական շահնշահը պարտք համարեց խոնարհ և զիջող լեզվով խոսել հռոմեացիների հետ: Ընդունեց Հայաստանում հաստատված նոր թագավորությունը, իրեն Հռոմին բարեկամ հայտարարեց, իր կողմից պահանջելով միայն այն, որ Վոնոնը Սիրիայից էլ հեռու մի տեղ պահվի: Այս պահանջը իսկույն կատարեց Գերմանիկոսը:

**3. Պարթևական թեկնածուներ:** Սակայն այս պայմանադրության առաջին խախտողն ինքն Արտավանն էր Արտաշես Գ-ի մահից հետո: Այդ ժամանակ քաղաքական հանգամանքներն այնպես էին դասավորված, որ Արտավանը կարող էր սնուցանել իր մեջ նվաճողական մեծամեծ ձգտումներ: Տիբերիոս կայսրը, գտնվելով զառամյալ հասակի մեջ, քաշվեց Հռոմի պալատական կյանքից և ընտրելով մի խաղաղ անկյուն իր բնակության համար, պետական գործերը մատնեց անուշադրության: Այս հանգամանքը մեծ ազդեցություն էր անում կայսրության բոլոր կողմերում և խրախուսել էր Արտավանի համար, որ հպարտ էր իր երկարատև թագավորությամբ, իր ունեցած հաջողություններով Իրանի արևելյան սահմաններում տեղի ունեցած պատերազմական գործողությունների մեջ: Եվ նա հանդես եկավ մի ընդարձակ պետական ծրագրով — ուզում էր վերականգնել հին պարսկական պետության սահմանները, ետ խլելով հռոմեացիներից Փոքր Ասիայում գտնվող այն երկրները, որոնք մի ժամանակ պատկանում էին պարսիկներին, ուստի և փորձեց ապստամբական շարժումներ առաջացնել այդ երկրներում ապրող պարսիկ տարրերի մեջ:

Այս, սակայն, մի անհուսալի ձեռնարկություն էր. ավելի իրական էր այն միջոցը, որով Արտավանն ուզում էր լուծել հայոց հարցը պարթևների և հայերի շահերի տեսակետից լավագույն կերպով: Հայաստանում նա թագավոր դրեց, հայ ազգային կուսակցության համաձայնությամբ, իր որդի Արշակին (34): Այսպիսով, Հայաստանն ու Պարսկաստանը միանում էին դինաստիական կապերով, մեռելով, սակայն առանձին քաղաքական կազմակերպություններ:

Որ այս սկզբունքը համապատասխանում էր և հայերի ցանկության, այդ արդեն քաջածանոթ պիտի լինի մեզ նախընթաց ամբողջ պատմությունից: Պարթևական կուսակցությունը պաշտպանում էր նրան իր ամբողջ ուժով: Սակայն զուր էին Արտավանի ակնկալությունները Հռոմի անկարողության վերաբերմամբ: Զառամյալ կայսրը իսկույն լարեց իր քաղաքականության մեքենաները: Անկախ այն հանգամանքից, որ հռոմեական զորքերը հրաման էին ստանում անցնել Եփրատը, հռոմեական ոսկին էլ գնում էր ներքին խռովություններ և ապստամբություններ հարուցանելու Պարսկաստանի մեջ: Արշակ թագավորի դեմ Տիբերիոսը հանեց վրաց թագավոր Փարսմանին, պատվիրելով նրան Հայաստանի գահի վրա նստեցնել իր եղբորը, որի անունն էր Միհրդատ<sup>1</sup>: Այս բանը պիտի տեղի տար պատերազմական գործողությունների՝ Վրաստանի և Պարսկաստանի մեջ: Եվ հա՛ն դարձյալ հռոմեական ոսկին գնում էր կաշառելու կովկասյան լեռնաբնակներին, որ նրանք միանան վրացիների հետ այն պատերազմում, որ պիտի մղվեր Հայաստանի համար<sup>2</sup>: Արշակը թունավորվեց դրանիկների ձեռքով, հազիվ կարողանալով մի տարի թագավորել: Արտավանն իր Որոգոս որդուն ուղարկեց Հայաստան պատերազմելու, բայց Որոգոսը պարտություն կրեց, որովհետև վրացիներն ավելի լավ էին ճանաչում

<sup>1</sup> Տակիտոս, Զ, 31—32:

<sup>2</sup> Моммсен, V, 367.

երկիրը: Այն ժամանակ ինքն Արտավանն շտապեց վրացիների դեմ, բայց այդ միջոցին սպառնալ սկսեցին հռոմեական զորքերը, որոնք մտել էին Միջագետք: Արտավանը ետ նահանջեց, բայց Տիգրանում նրան սպասում էր ազնվականության սարքած ապստամբությունը, որի սնուցանողն էր հռոմեական ոսկին: Նա ստիպված էր փախչել իր աղբակից սկյութացիների մոտ և աստանդական կյանք էր վարում, կերակրվելով որսորդությամբ: Իսկ պարթև ազնվականությունը Հռոմից էր խնդրում զտարյուն պարթև արքայազններ՝ Տիգրանի գահը գրավելու համար: Այս անգամ էլ կրկնվեց Վոնոնի պատմությունը: Այս անգամ էլ Հռոմից ուղարկվեց Տրդատը, որ նույնպես սկսեց կռուվարել ինչպես հռոմեացի, ուստի և շուտով անբավականություններ հարուցեց իր դեմ: Արտավանը նորից ետ կանչվեց, որ հաղթեց ու հալածական արավ Տրդատին, բայց Հռոմի հետ լավ հարաբերություններ սկսեց. ընդունեց վրացի Միհրդատին Հայաստանի թագավոր և բարեկամությունը Հռոմի վերաբերմամբ ամրապնդելու համար իր որդիներից մեկին պատանդ տվեց (37):

Բայց հենց այս իսկ ժամանակ մեռավ Տիգրանի որդի, իսկ նրան հաջորդած Կալիգուլա կայսրը բոլորովին նշանակություն չտվեց պրևելյան հարցին և իր նախորդի կատարած գործերն էլ ոչնչացրեց: Արտավանը նորից շունչ առավ: Միհրդատին Կալիգուլան կանչեց Հռոմ և աքսոր ուղարկեց, իսկ Հայաստանը տվեց Արտավանին: Սա պարզապես պարթևական մի նահանգ դարձրեց Հայաստանը, որ կառավարվում էր մի մարդպանի կամ փոխարքայի ձեռքով:

Բայց այս դրությունը մոտ երեք տարի միայն տևեց: Կալիգուլան սպանվեց 41 թվականին, իսկ նրան հաջորդած Կլավդիոս կայսրը շտապեց շարունակել Օգոստոսի և Տիգրանի քաղաքականությունը Արևելքի վերաբերմամբ: Նրա պառչին գործն եղավ ազատել Միհրդատ վրացուն արքայից և ուղարկել Հայաստան, տալով նրան հռոմեական օգնական զորքեր և առաջարկելով Փարսման թագավորին, որ նա էլ իր կողմից աջակցի իր եղբորը: Պարթևները շտապեցին անմիջապես որևէ դիմադրություն կազմակերպել: Արտավանը մեռել էր 40 թվին և նրանից հետո խառնակություններ էին սկսվել գահաժառանգության համար: Հռոմեացիները վերցրին Հայաստանի բերդերը և հաստատեցին Միհրդատին նրա նախկին գահի վրա<sup>1</sup>:

Արտավանի որդիներից առանձին քաջություններ աչքի էր ընկնում Վարդանը, որ փորձեր էր սկսում Հայաստանը վրացու ձեռքից խլելու համար, բայց հաջողություն չունեցավ, որովհետև նրա ավագ եղբայր Գոտարզը ուզում էր խլել նրա ձեռքից պարթևական թագը: Վարդանը սպանվեց, բայց Գոտարզըն այնքան արյունարբու մի բռնակալ էր, որ դարձյալ ազնվականները դեմեցին Հռոմ, խնդրելով Վոնոնի վերջին որդուն, Միհրդատին: Սա եկավ թագավորելու, սակայն Գոտարզը ջարդեց նրա կողմնակիցներին և նրան էլ բռնեց, բայց չսպանեց, այլ միայն ականջը կտրելով՝ բաց թողեց: Գոտարզին հաջորդեց Արտավանի եղբայր Վոնոն Բ, որ միայն մի տարի թագավորեց:

Սրա մահից հետո մնացին երեք որդիներ— Վաղարշը, որին հույն-հռոմեական հեղինակներն անվանում են Վոլագազ, Բակուր և Տրդատ: Երկուսն էլ խելոք էր Վաղարշը, որ երկու եղբայրների համաձայնությամբ դարձավ իրանի թագավոր: Պարթևական դաժան իշխողների մեջ դա միակն էր, որ իրավունքը գերադասում էր ուժից և ճշմարտությունն էր համարում մարդկային հարաբերությունների հիմքն ու ղեկավարը<sup>2</sup>: Իր նախորդներից նա տարբերվում

<sup>1</sup> Моммсен, V, с. 370.

<sup>2</sup> Տակիրտու, ժԲ, ք:

էր և նրանով, որ ազգայնական սկզբունքի վրա հիմնեց իր քաղաքականությունը: Պարթևներն առհասարակ անտարբեր էին զրադաշտական կրոնի վերաբերմամբ, որ ինչպես գիտենք, իրանական ինքնուրույնության մարմնացումն էր: Այս կրոնի սրբազան գրքերը (կոչվում են Զենդ-Ավեստա) կրակի էին մատնվել Ալեքսանդր Մակեդոնացու ձեռքով և այն ժամանակից ոչ ոք հոգս չէր արել որոնելու երկրի մեջ այդ գրքերի փշրանքները և հավաքելու նրանց մի տեղ: Այդ խոշոր գործը վերապահված էր Վաղարշին, որ որոնումներ կատարեց պետության բոլոր կողմերում և թեև չկարողացավ վերականգնել զրադաշտական ամբողջ գրականությունը, բայց գտնեց վերջնական կորստից ազատեց սրբազան գրքերի մի, համեմատաբար, փոքր մասը<sup>1</sup>: Իսկ այս, ինչպես կտեսնենք հաջորդի նշանակություն ունեցավ իրանի համար: Ազգային-կրոնական այս եռանդի մի նշանն էլ այն էր, որ Վաղարշի եղբայր Տրդատը թուրք էր:

Որքան և սիրով ու քաղցրությամբ էր վերջացել երեք եղբայրների մեջ դաժակալության հարցը, բայց Վաղարշն այնքան հեռատես էր և խելոք, որ չկամեցավ, այնուամենայնիվ, թողնել Բակուրին և Տրդատին այնպիսի գրություն մեջ, որ թույլ տար նրանց երբեկցել աչք դնել իրենց ավագ եղբոր գահին և հարուցանել այնքան աղետալի ներքին խռովություններ: Այս հնարավորության առաջն առնելու համար՝ Վաղարշը թագեր գտավ և իր այդ երկու եղբայրների համար: Բակուրին թագավորեցրեց Ատրպատականում, իսկ Տրդատի համար սկսեց պատրաստել Հայաստանի գահը, մի ձեռնարկություն, որ առաջինի նման հեշտ չէր, բայց որ հենց այդ պատճառով էլ մեծագործություն կդառնար Վաղարշի համար: Այնպիսով Արտավանի ծրագիրը, բայց ավելի լայն շահերով, դառնում էր այս քաջակորով և խիզախ պարթևի քաղաքականության կետ նպատակը: Այս քաղաքականությունը ավելի ևս սուր կերպարանք է տալիս հայոց հարցին, երկարատև և տագնապալի ընդհարումներ կարուցանելով Պարսկաստանի և Հռոմի մեջ: Եվ այդ խիստ պայքարի մեջ պիտավոր գործող անձը պարթևների կողմից այնքան Վաղարշը չէր, որքան թագի թեկնածուն, բարեկազմ և գեղեցկատեսիլ, համարյա դեռ պատանի ծրագրոր:

Հայկական գործերին միջամտելու լավ առիթ հայթայթեց վրացական հարստությունը, որ տիրապետել էր Հայաստանում, ցույց տալով մի շարք դաժան գործողություններ, որոնք վերջ էին վերջո դուրս բերին հայ ժողովուրդը համբերությունից: Բանն այն էր, որ Փարսման թագավորն ուներ մի հանդուգըն, խիզախ, ամեն բանի ընդունակ որդի, Հաղամիզդ անունով: Կամենալով հեռացնել նրան, որպեսզի թագավորությունը չխլել իր ձեռքից, ծերունի Փարսմանը սովորեցրեց նրան գնալ Հայաստան և գահընկեց անելով Միհրդատին. նստել նրա տեղը: Միհրդատը Հաղամիզդի հորեղբայրը չէր միայն, այլ և նրա բոլոր ամուսինը, ինչպես նա ինքն էլ Միհրդատի փեսան էր, ամուսնացած լինելով նրա աղջկա հետ:

Վրաց թագաժառանգը սիրալիք ընդունելություն գտավ Արտաշատում, թագավորի մոտ: Բայց միևնույն ժամանակ գաղտնի դավեր էր սարքում հայ իշխաններից մի քանիսի հետ: Վերագառնալով վրաստան, նա վերցնում է զորքեր և գնում Միհրդատի դեմ, որ հանկարծակիի եկած, փախչում մասնում է մոտակա Գառնի բերդը, ուր հռոմեական բերդապահ զորք կար: Բերդի հոռ-

<sup>1</sup> А. Крымский, «История Сасанидов и завоевание Персии арабами», М., 1905, с. 325.

մեացի հրամանատարը հայտնի էր իբրև ցած, վաճառվող մարդ: Կաշառ ստանալով Հոադամիզդից, նա առաջադրվում է Միհրդատին դուրս գնալ բերդից և անձնատուր լինել իր եղբոր որդուն, ապավինելով նրա վեհանձնության: Այս ստորութայան դեմ բողոքեց բերդապահ հոռմեացի սպաներից մեկը, ասելով, թե այս վաճառքով անարգվում է Հոռմի անունը: Իզուր ստեղծվեց: Այն ժամանակ պատվասեր սպան դիմում է Փարսման թագավորին և խնդրում է, որ նա իր եղբոր օգնական հանդիսանա, ետ կանչելով Հոադամիզդին Հայաստանից կամ հրամայելով վերցնել Գառնիի պաշարումը: Փարսմանը արտաբուստ կատարում է այդ խնդիրները, բայց ծածուկ հորդորում է Հոադամիզդին ոչնչացնել իր եղբորը: Միհրդատն անձնատուր է լինում իր եղբոր որդուն այն պայմանով, որ իր կյանքին վերջ չտրվի ոչ թույնով և ոչ երկաթով: Եվ կատարելով այդ պայմանը, Հոադամիզդը հրամայում է խեղդել Միհրդատին ու նրա կնոջը, այսինքն իր քրոջը, կուտելով նրանց վրա մեծ քանակությամբ գորգեր: Այնուհետև թագավորի դիակը հանձնվում է Արտաշատի խուժանին, որ քաշքշում է նրան փողոցներում՝ հանելով իր վրեժը նրա անգթությունների համար: Անխնա կոտորվեցին և Միհրդատի որդիներն այն պատճառով, որ նրանք համարձակվել էին ողբալ իրենց ծնողների մահը:

Հոռմը տմարդի անտարբերությամբ վերաբերվեց այս գազանության: Չէ՛ որ Հոադամիզդն էլ Հոռմի մարդն էր, ուստի ասում էին՝ միևնույն չէ՞, թե թագավորը կլինի հորեղբայրը թե եղբորորդին: Նույնիսկ գտնում էին, որ որքան շատ լինեն այդպիսի ոճիրներ բարբարոսների մեջ, այնքան լավ կլինի լուսավորված Հոռմի համար: Եվ հենց հոռմեացիներն էին, որ շտապեցին Հոադամիզդին թագ դնել Արտաշատում (52 թ.):

Բայց այստեղ միջամտեցին պարթևները: Տրդատին առաջարկվեց գահազուրկ անել Հոադամիզդին: Վրացական զորքը թողեց փախավ և հայոց երկու լայրաքաղաքները՝ Արտաշատ և Տիգրանակերտ, ուրախությամբ բացին իրենց դռները պարթևների առջև: Բայց Տրդատի արշավանքն արգելեց սովը, որին հետևեց ժանտախտը: Պարթևներն ստիպված եղան հեռանալ Հայաստանից, բայց այդ հանգամանքից օգտվեց Հոադամիզդը: Խուժելով Հայաստան, նա սկսեց անգթաբար կոտորել և տանջել ժողովուրդը, որովհետև սա համակրություն էր ցույց տվել պարթևներին: Բայց հայ ժողովուրդն էլ չհամբերեց և ոտքի կանգնեց նրա դեմ: Եվ դաժան ու անգութ Հոադամիզդը եթե կարողացավ ազատվել գայրացած ժողովրդի ձեռքից, այդ միայն շնորհիվ իր ձիաների արագավազության:

Հոռմեական աղբյուրները հետևյալ պատկերն են տալիս այդ փախուստից: Հոադամիզդի հետ փախչում էր և նրա կին Ջենոբիան: Լինելով հղի Ջենոբիան չէր կարողանում տանել ճանապարհի ծանրությունը: Բայց որովհետև մի կողմից չէր ուզում արգելք դառնալ իր ամուսնու փախստյան, իսկ հալածողների ձեռքն ընկնելն էլ համարում էր խայտառակություն, ուստի խնդրեց Հոադամիզդին սպանել իրեն տեղն ու տեղը: Սա վճռեց սրախողխող անել սիրած կնոջը և գցել Արաքսի մեջ: Սակայն Ջենոբիան չէր սպանված, այլ վերավորված էր և գետի մեջ չէր խեղդվել, այլ ալիքները գցել էին նրան փքը: Նրան գտան հայ հովիվները և պահեցին իրենց մոտ մինչև վերքերի բժշկվելը: Եվ երբ Տրդատը վերադարձավ պարթևական զորքերով, նրա մոտ տարան ազատված տիկնոջը: Տրդատը մեծ պատվով պահում էր նրան Արտաշատում:

<sup>1</sup> Моммсен, с. 371—372.

<sup>2</sup> Տակիտուս, ԺԹ, Ժա:

Սակայն Պարթև արքայազնը դեռ թագավոր չէր: Վրացուն հեռացնելը միայն ասպարեզ էր բաց անում մի կովի հոռմեացիների դեմ, որի առարկան Հայաստանի թագն էր և որ հոռմեական տարեգրությունների մեջ կոչվում է տասնամյա պատերազմ (54—64):

Հոադամիզդի արտաբուստն լուրը հասնում էր Հոռմ այն ժամանակ, երբ նոր էր վախճանվել: Կլավդիոս կայսրը: Նրան հաջորդեց 17-ամյա ներոնը (54—68), որին վիճակված էր մի տխուր հուշակ Հոռմի, բայց մանավանդ քրիստոնեության պատմության մեջ: Կառավարությունը սկզբում կենտրոնացած էր պատանի կայսրի խորհրդականների ձեռքում, որոնք Հոռմի այն ժամանակվա աչքի ընկնող և խելոք գործիչներից էին: Եվ Արևելյան հարցն այդ գործիչների ձեռքում ստանում էր մի նոր կերպարանավորում:

Պարզվում էր, որ Հայաստանը, չնայած Հոռմի բոլոր ջանքերին, մնում էր և պիտի մնար պարթևական երկիր, իսկ Հոռմի գերիշխանությունն այդ երկրի վրա եղել էր և պիտի այնուհետև էլ լիներ լոկ անվանական, մի հանգամանք, որ բացի մշտական հոգսերից ու ծանր ծախսերից ոչինչ օգուտ չէր բերում պետության: Այս պատճառով նոր հիմքեր էին մտցվում հայոց հարցի մեջ: Հոռմի քաղաքականությունը պիտի ձգտեր, որ պարթևները իրենք ճանաչեն Հոռմի գերիշխանությունը Հայաստանի վրա և պարտավորվեն իրենց տոհմից թագավորներ նշանակել այդ երկրի համար միմիայն Հոռմի համաձայնությամբ և հաստատությամբ: Այստեղ, իհարկե, կար և այն հանգամանքը, որ այդպիսի մի պարտավորություն հանձն առնելով, պարթևական Իրանը ինքն իրեն զրկում էր Հայաստանի հարցում անկախ մեծ պետության իրավունքից, մի տեսակ կախում էր ստանում Հոռմից:

Քաղաքական այս նոր ընթացքը Արևելքում իրագործելու համար հարկավոր էր, որ մի փորձված, կամքի տեր և քաջ մարդ, որ կարողանար խոսքին միացնել և գեներ ուժը, առանց որի, հարկավոր դեպքում, անկարելի պիտի լիներ հարկադրել պարթևներին: Իբրև այդպիսի մարդ՝ Հոռմում այն ժամանակ հայտնի էր Կորբուլոնը, որ և ուղարկվեց Արևելք ընդարձակ լրագրություններով: Պատերազմի դեպքում հոռմեական բանակին պիտի օգնեին այն բոլոր մանր պետությունները, որոնք հարևան էին Հայաստանին և Հոռմի հովանավորության տակ էին գտնվում:

Սակայն պատերազմը իսկույն չսկսվեց: Կորբուլոնը զբաղվեց Արևելքում գտնվող հոռմեական զորքերի կազմալուծված շարքերը կարգի բերելով և միաժամանակ դիվանագիտական բանակցություններ սկսեց Վաղարշի հետ: Վերջինս այդ միջոցին զբաղված էր վրկանների (Կասպից ծովի հարավային ափ) ազատամբությամբ, ուստի և պատրաստականություն հայտնեց ընդունելու Հոռմի պայմանները և նույնիսկ պատանդներ էլ տվեց: Տրդատը պիտի դիմեր ներոն կայսրին և նրանից թագ խնդրեր: Սակայն նա ուշացնում էր, անշուշտ չկարողանալով հեշտ հաշտվել իր առջև բացվող իրականության հետ: Կորբուլոնը հասկացավ այդ և կամենալով օգտվել վրկանների ապստամբությամբ պատրաստված նպաստավոր հանգամանքից, պատերազմ հայտարարեց Տրդատին: Հոռմեական բանակը (30 հազար հոգի) Հայաստան մտավ 59 թվականին: Միաժամանակ զանազան կողմերից ներս խուժեցին և դաշնակից մանր վասալները— վրացի Փարսմանը, հայերի յեսերիմ թշնամին, որ սպանել էր իր որդի Հոադամիզդին՝ հոռմեացիներին դուր գալու համար, նույնպես և

<sup>1</sup> Моммсен, V, с. 355.

Մոսխերի ու Կոմմազենի թագավորները: Տրդատը մենակ, Հայաստանի հայ-  
վթայթած միջոցներով, իհարկե, անկարող էր դիմադրել այդ բոլոր ուժերին  
բաց պատերազմով, ուստի դիմեց այս երկրի ռազմական կարողության և տե-  
ղագրական պայմաններին այնքան լավ համապատասխանող լեռնային պատե-  
րազմին, որ նեղում է թշնամուն մանր ու անակնկալ բախումներով, ոչնչաց-  
նում է պաշարները և այլն: Այսպես, Տրդատը հատուկ ջանքեր գործ դրեց  
կտրելու Կորբուլունի բանակը հաղորդակցության այն գծից, որ կապում է Կա-  
րինը Տրապիզոնի հետ և այդպիսով թույլ շտալ, որ հռոմեացիները մթերքներ  
ստանան Սև ծովի վրայով: Սակայն այս ձեռնարկը հաջողություն չունեցավ  
և Տրդատն ստիպված էր քայլ առ քայլ ետ քաշվել դեպի Արտաշատ, ուր  
դիմում էր Կորբուլունը:

Թեև հռոմեացի զորավարը շուրջ Արաքսի կամուրջով անմիջապես Արտա-  
շատ մտնել, բայց այդ ավելորդ զգուշություն էր. հայոց մայրաքաղաքը պաշտ-  
պանվելու կարողություն չունեի: Տրդատը փորձեց կանգնեցնել թշնամուն Ար-  
տաշատից քիչ հեռու, բայց չկարողացավ և մայրաքաղաքն շտապեց բաց անել  
իր դռները Կորբուլունի առջև: Ձմեռն անց կացնելով այդտեղ, հռոմեացի զորա-  
վարը 60-ի զարնան գնաց վերցնելու Հայաստանի հարավային մայրաքա-  
ղաքը, Տիգրանակերտը: Այդ արշավանքը նա սկսեց մի տմարդի գործով. հիմ-  
նահատակ կործանեց խաղաղ ու հպատակ Արտաշատը, այրեց մոխրակույտ  
դարձրեց նրան: Այս բարբարոսությունը արդարացնելու համար նա ասում էր,  
թե բավականաչափ զորք չունի, որ թողնե մայրաքաղաքը պաշտպանելու  
համար, ուստի և միանգամայն ոչնչացրեց նրան<sup>1</sup>:

Այսպիսի մի արարք, բնականաբար, պիտի սաստկացներ այն ատելու-  
թյունը, որ կսր հռոմեացիների դեմ և երբեք չէր դադարել հայ երկրում: Ազ-  
գային կուսակցության համար Արտաշատի իսպառ կործանումը մի լավ վնաս  
էր, և հռոմեական բանակի ճանապարհին բորբոքվեց մի մանր լեռնային  
պատերազմ: Արածանիի հովտի վերին մասերում հռոմեացիներին իրենց  
խիստ ու անդադար հարձակումներով նեղում էին մարդերը, ռազմիկ և գաղ-  
թական մի ցեղ, որ ապրում էր Մարգաղի գավառում: Ազգային ընդդիմադիր  
կուսակցության մի խոշոր կենտրոն էր և Տարոն գավառը: Բայց Արտաշատի  
ավերիչը, իհարկե, կանգ չէր առնի այս արգելքները բարբարոսական խստու-  
թյամբ հաղթահարելու միջոցների առջև: Կորբուլունը մի մեծ կոտորած սկսեց:  
Ազգաբնակչությունն ամրացավ լեռներում, քարանձավների ու ամրոցների  
մեջ. հռոմեական զորքերը հանում էին հայերին լեռնային թաքստոցներից,  
վերցնում էին ամրոցները և բոլորին անխնա կոտորում:

Այսպիսի հաղթական գնացքով Կորբուլունը հասավ Տիգրանակերտին, որ  
թեև շտապեց բաց անել իր դռները նրա առջև, բայց տեղի երիտասարդությու-  
նը փակվեց միջնաբերդում և միառժամանակ համառ դիմադրություն ցույց  
տվեց: Սակայն գործը վերջացած էր: Եվ նորից չուր թույլ սնապարծ և ուռու-  
ցիկ տեղեկագրեր, թե Հայաստանը նվաճված է և մաքրված պարթևներից: Հա-  
յաստանը վաղուց ըմբոստ և դժվարընկճելի երկրի հռչակ ուներ հավիտենա-  
կան քաղաքում: Եվ Կորբուլունի այդ թեթևակի հաջողությունները մեծամեծ  
հաղթանակների արժանի տոնախմբությունների առարկա դարձան: Փառա-  
վորվեց ամենից շատ, իհարկե, կայսրը, արատավոր ներոնը, որին այդ առի-  
թով հատկացվեց «իմպերատոր» (զորավար) տիտղոսը: Եվ փառավորված

<sup>1</sup> Տակիտոս, ԺԳ, ԼԵ—ԼԲ:

կայսրը կարգադրեց Հայաստանի ճակատագիրը հին եղանակով. ավելորդ  
համարելով այլևս համաձայնություն կայացնել պարթևների հետ, նա Հա-  
յաստանի թագը տալիս էր դարձյալ հրեական ծագում ունեցող և դարձյալ  
Տիգրան անունը կրող մի արքայազն իշխանի, որ չուր մեծ էր ապրում: Միա-  
ժամանակ ներոնը հայ երկրների բաժանում էր կատարում, զանազան կոտոր-  
ներ պարգեկելով հարևան վասալ այն պետություններին, որոնք օգնել էին Կոր-  
բուլունի արշավանքին<sup>1</sup>:

Այսպիսով, հայկական խախուտ ու երերուն զահի վրա, մի տարուց ոչ  
ավել ժամանակով (60—61), երևան է գալիս մի Տիգրան վեցերորդ: Կորբու-  
լունը հաստատում է նրան Հայաստանում, իսկ ինքը քաշվում է Սիրիա, որի  
կուսակալն էր նշանակված, թողնելով Հայաստանում Տիգրանի պաշտպա-  
նության համար 1000 հոգուց բաղկացած մի հռոմեական զորաբաժին: Տիգ-  
րանի առաջին գործը եղավ հարձակվել պարթևական գերիշխանության տակ  
գանձող Ադիաբենի (Ասորեստան) վրա:

4. Տրդատ Ա. (62— մոտ 100): Վաղարշ թագավորը, տեսնելով թե որքան  
սպառնալից կերպարանք է ընդունում հայոց հարցը, շտապում է վերջ դնել  
Վրկանի ապստամբության, որպեսզի միջոց ունենա իր գործողությունները  
չուր դեմ ուղղելու: Արդեն մեծ դժգոհություններ էին առաջացել կառավա-  
րիչ շրջաններում: Գրգռիչ նշանակություն ունեցավ մանավանդ հայոց նորա-  
պսակ Տիգրան թագավորի արշավանքը դեպի Ադիաբենա, որ ենթարկվեց  
ավերանքների: Եվ ահա պարթևական ավագանին, խորապես վշտացած հարց-  
նում էր. «Մինչև ե՞րբ պիտի արհամարհված մնանք, որ այլևս նույնիսկ հռո-  
մեացի զորավար չէ մեզ նեղողը, այլ մի հանդուգն պատանի, որ շատ տարի  
պատանդ է եղել ստրուկների հետ»: Իսկ Ադիաբենայի կուսակալ Մոնորազը  
ավելի ևս գրգռում էր վերքը, ասելով. «Ո՛րտեղից օգնություն խնդրենք. վա-  
ղուց ձեռքից տվինք Հայաստանը, պետք կլինի և այլ աշխարհներ տալ: Եթե  
պարթևները մեզ պաշտպան չլինեն, այն ժամանակ ավելի լավ կլինի կամո-  
վին անձնատուր լինել հռոմեացիներին, որովհետև այս դեպքում թեթև կլինի  
ստրկությունը քան այն դեպքում, երբ նրանք մեզ նվաճեն զենքով»: Իսկ Տրդ-  
ատը, Հայաստանի զահից զրկված և փախստական, ավելի ևս սաստկաց-  
նում էր այս խոսքերի ազդեցությունն իր լուծյամբ և անդադար տրտունջնե-  
րով: Նա ասում էր. «Մեծ ինքնակալությունները անգործությամբ չէ որ կան-  
գուն են մնում, այլ պահանջվում է մրցության զենքով և մարդկանցով.  
մարդկային դրությունը բարձունքներում արդարացի է այն, ինչ ուժեղ է: Մաս-  
նավոր մարդու գործն է պահել ինչ իրեն է պատկանում: Իսկ ուրիշների  
ստացվածքի մասին վիճելը թագավորների փառքն է կազմում»:

Ենելով այս բոլորը, Վաղարշը ժողով կազմեց ազնվականության բարձր  
ներկայացուցիչներից և կուսակալներից, ուր և պարզեց իր նպատակները  
այսպիսի խոսքերով. «Ահա իմ եղբայրը, Տրդատը, որ զիջել է ինձ այս գահն  
լստ ավագության, որի համար էլ ես նրան տվել եմ Հայաստանը, երրորդ պե-  
տությունն ըստ մեծության, Բակուրը դեռ առաջ ստացավ Մարաստանը  
(Ասորպատական): Այսպիսով ուզում էի ես հաստատել խաղաղությունը մեր  
ընտանիքում և դադարեցնել հավիտենական թշնամությունը եղբայրների մեջ:  
Հռոմեացիները այս չեն ցանկանում. ի կորուստ իրենց՝ նրանք խանգարում

<sup>1</sup> Տակիտոս, ԺԳ, ԻԳ—ԻԷ:

են խաղաղությունը, մոռանալով որ այս բանը երբեք նրանց էփան չէ նստել: Չեմ թաքցնում, ես արյունահեղությունից նախապատիվ էի համարում խաղաղ բանակցությունները, ես ուզում էի քաղաքագիտությունը և ոչ թե զենքով մեր տիրապետության տակ պահել մեր նախնիքների ժառանգությունը: Եթե ես սխալվել եմ, իմ քաջությունը կուղղե այն, ինչին վնասել է դանդաղությունը»<sup>1</sup>:

Տրդատը, որ մինչև այդ լոկ գահի թեկնածու էր, ստանում է իր եղբոր ձեռքից Հայաստանի թագը: Նրան գահի վրա հաստատելն այժմ հանձնվում էր պարթևական բանակին, որին Վաղարշը հրամայում էր մտնել Հայաստան (60):

Կորբուլունը, ժամանակին լավ տեղեկացած լինելով պարթևական այս ծրագրին, շտապում էր իր հայացքները հաղորդել ներոնին և ամենից առաջ խնդրում էր նրան մի նոր զորավար ուղարկել Հայաստան: Պատճառաբանությունն այն էր թե ինքը, իբրև Սիրիայի կուսակալ, պիտի պաշտպանե այդ երկրի սահմանները պարթևական հարձակումների դեմ: Բայց իրապես Կորբուլունը երկյուղ էր կրում կորցնելու ապագա պատերազմական գործողությունների մեջ իր վաստակած պատերազմական դափնիները:

Տրդատը պաշարեց Տիգրանակերտը, ուր փակվել էր Տիգրան թագավորը հռոմեական զորքերի հետ: Սակայն պարթևները առհասարակ չէին կարողանում պաշարողական պատերազմ մղել ամուր բերդերի դեմ: Նրանք գրոհ տվին Տիգրանակերտի վրա, բայց ետ մղվեցին, մեծ կորուստներ տալով: Կորբուլունն աշխատում էր խաղաղ միջոցներով ետ մղել պարթևներին, ուստի դիմեց Վաղարշին, որ այդ միջոցին Մծբին էր գտնվում և բողոքելով, որ նա պատերազմ է սկսել Հռոմի դաշնակից թագավորի դեմ, պահանջեց Տիգրանակերտի պաշարման վերացումը, սպառնալով, հակառակ դեպքում, թե ինքը կհարձակվի պարթևների վրա: Վաղարշը, ինչպես գիտենք, նույնպես չէր ուզում երկարատև պատերազմ մղել Հայաստանի համար և Կորբուլունի դիմումը լավ առիթ համարեց բանակցություններ սկսելու համար, մանավանդ որ այդ միջոցին պարթևական զորքը պարենավորման տեսակետից շատ նեղ դրություն մեջ էր, որովհետև մարախը ոչնչացրել էր երկրի բուսականությունը: Նա համաձայնվեց վերացնել Տիգրանակերտի պաշարումը, սակայն այն պայմանով, որ հռոմեական զորաբաժինը հեռանա Հայաստանից և Տրդատն ստանա հայկական գահը իբրև Հռոմի վասալ: Կորբուլունն ընդունեց այդ առաջարկությունը և հանեց Տիգրանակերտից հռոմեացի զորքը: Տիգրան թագավորը, իրեն թողնված տեսնելով ճակատագրի կամքին, նույնպես հեռացավ և Տրդատը գրավեց մայրաքաղաքը: Սակայն ներոնը մերժեց Վաղարշի առաջարկությունը, ուստի և պարթևը պաշտոնապես պատերազմ հրատարակեց Հռոմին:

Այդ միջոցին (61 թ. ամառը) Հայաստան մտավ հռոմեական նոր զորավարը, Պետոս անունով: Սա մի մեծամիտ ու անընդունակ մարդ էր: Անցնելով Եփրատի ձախ ափը, նա գրավեց մի քանի հայկական մանր բերդեր և շտապեց փծուն ինքնագովություններով լի տեղեկագրեր ուղարկել Հռոմ: Ապա նա գնաց Տիգրանակերտը վերցնելու, ուր գտնվում էր Տրդատը պարթև-հայկական զորքով: Հասավ և Վաղարշը, որ և մի խիստ ջարդ տվեց Պետոսին և հալածեց նրան մինչև Տավրոս լեռները: Հռոմեացիները քաշվեցին դեպի

հյուսիս և որովհետև վրա էին հասել Հայաստանի համարավոր ցրտերը, ուստի Պետոսը վճռեց ձմեռել հենց թշնամի երկրում և ձմեռոցի տեղ ընտրեց Աշտուշ բերդը և Հռանդեա անունով վայրը, այժմյան Խարբերդի մոտերքում: Այստեղ էլ հռոմեական զորքին սպասում էր ամոթալի մի պարտություն: Վաղարշը պարթևա-հայկական ուժերով պաշարեց Պետոսի ամրացած բունակը Հռադամեայում: Մի ընդհարման մեջ հռոմեացիները շարաշար հաղթվեցին (62 թ. գարնան սկզբին): Նրանք այնքան էին սարսափել թշնամու բազմամարդությունից և քաջությունից, որ ընդհանուր դասալքություն սկսվեց նրանց շարքերի մեջ: Գլուխ կորցրած Պետոսը շտապեց մի կողմից մարդ ուղարկել Կորբուլունին և աղերսել նրա օգնությունը, մյուս կողմից բանակցությունների մեջ մտնել Վաղարշի հետ: Վաղարշի կողմից հռոմեական բանակը գնաց Հայոց սպարապետ (հեծելազորքի հրամանատար) Վասակը, որ կրկնեց պարթևական նախկին պահանջը, այն է՝ որ հռոմեական զորքերը հեռանան Հայաստանից: Առանձնապես այս դեպքի վերաբերմամբ Վաղարշը թույլ էր տալիս, որ հռոմեացիները հեռանան իրենց ամրացրած բանակից, այն պայմանով որ պարթևներին հանձնեն իրենց բոլոր պաշարները:

Պետոսը նույնիսկ չսպասելով Կորբուլունի պատասխանին, համաձայնություն տվեց և դրանից հետո է որ սկսվեց իսկական ամոթալի աղետը հռոմեացիների համար: Հայերը, շրջապատելով բանակի բոլոր մուտքերը, սկսեցին զինաթափ անել զինվորներին, խուզարկել նրանց և ետ խլել այն ամբողջ կողոպուտը, որ նրանք վերցրել էին Հայոց երկրից: Չմոռացվեց և զինվորական տեսակետից շատ ստորացուցիչ մի գործ՝ զինվորներին լծի տակով անցկացնելը, որ ստրկության նշան էր: Պետոսի բանակն սկսեց ցրիվ գալ: զինվորները սարսափահար փախչում էին, կարծես թե ջարդվել էին պատերազմի դաշտում: Իսկ Կորբուլունը դանդաղ էր շարժվում դեպի աղետալի Հռանդեան: Չէ՞ որ որքան մեծ լինեք Պետոսի խայտառակությունը, այնքան պիտի բարձրանար իր, իբրև հաղթող զորավարի, արժանիքը: Եվ իզուր ամոթահար Պետոսը, հանդիպելով նրան, աղաչում էր միանալ իր հետ և նորից հարձակվել Հայաստանի վրա: Կորբուլունը հայտարարեց թե ինքը կայսրից հրաման չունի պատերազմ սկսելու:

Ներոն կայսրին համարյա միաժամանակ հասան Պետոսի հայտարարությունները իր տարած հաղթությունների մասին և Վաղարշ թագավորի դեսպանները, որոնք բերել էին թագավորի նամակը, որ ուներ հետևյալ բովանդակությունը: «Լոսթյան եմ տալիս հին և հաճախակի կրկնված վեճը Հայաստանի տիրապետության մասին, որովհետև աստվածները, որոնք նույնիսկ հզորագույն ազգերի դատավորներն են, այդ երկիրը տվին պարթևներին, ոչ առանց խայտառակության հռոմեացիների համար: Քիչ ժամանակ է անցել որ ես պաշարեցի Տիգրանին, կարող էի Պետոսին էլ, նրա լեգեոններն էլ խորտակել, բայց նրանց ազատ թողեցի, բավականաչափ ցույց տալով իմ զորությունը, ես շահավորության առհավատչյա էլ տվի: Տրդատը, կարող էր անձամբ գալ Հռոմ թագ ստանալու համար, բայց այստեղ, հայրենիքում, նրան պահում են քուրմի պարտավորությունները: Նա այդ արարողությունները կկատարե այստեղ, կայսրի պատկերի առաջ, հռոմեական բանակի ներկայությամբ»:

Ներոնը մերժեց և այդ առաջարկը և այդ լոկ այն նկատառումով, որ եթե

<sup>1</sup> Տակիտոս, ԺԾ, 1—2:

<sup>1</sup> Տակիտոս, ԺԾ, ԻԴ:



Հոռու գիշեր, այդ կնշանակեր, թե Հռանդեայի աղետն է նրան հարկադրում այդպես անել: Կորբուլոնը նոր արշավանք սկսելու հրաման ստացավ: Ասկայն, ինչպես երևում է, այդ էլ մի պայմանավորված ձևականություն էր՝ Հոռուի գիշերական պատիվը պաշտպանած լինելու համար: 63 թ. Կորբուլոնը, մեծ բանակի գլուխ անցած, գնաց Մելիտինե՝ Եփրատն անցնելու համար, բայց այդտեղ նրան դիմավորեցին Վաղարշի և Տրդատի դեսպանները: Պատերազմական գործողությունները դադար առան դեռ չսկսված: Երկուստեք համաձայնություն կայացավ որ Տրդատը գնա Կորբուլոնի բանակը՝ Հոռուին հպատակություն հայտնելու համար: Հոռուական բանակը փոխադրվեց այնտեղ, ուր տեղի էր ունեցել Պետոսի ամոթալի պարտությունը, այսինքն՝ Հռոմեացիները: Կորբուլոնը իր կողմից մի քանի նշանավոր հռոմեացիներ ուղարկեց Վաղարշին՝ իբրև պատանդ, որից հետո Տրդատը գնաց Հռանդեա և այդտեղ ընդունվեց գիշերական մեծ պատիվներով: Կայացավ մի տպավորիչ արարողություն: Բարձր ամբիոնի վրա դրված էր կայսրի պատկերը: Տրդատը զոհեր մատուցեց և բանակի ներկայությամբ խոստացավ գնալ Հոռու և անձամբ ընդունել կայսրից Հայաստանի թագը: Ապա վերցրեց իր գլխից արքայական խուլը և դրեց կայսրի պատկերի առջև, խոստանալով շղնել իր գլխին, մինչև որ նորից անձամբ ընդունե ն կայսրից:

Այս ստորացուցիչ արարողությունը ցույց էր տալիս, որ Վաղարշը վճռել էր Տրդատին խոստացած թագը տալու և դրանով իր ընտանեկան խաղաղությունն ապահովելու համար կանգ շառնել ոչ մի միջոցի առջև: Թե որքան անկեղծություն կար Տրդատի այդ հռոմասիրական ցույցի մեջ, փկայել կարող է հենց այն, որ դրանից հետո երեք տարի անցավ մինչև որ կատարեց Հոռու ճանապարհորդելու խոստումը, այն էլ ստիպված Կորբուլոնի պահանջներից:

Հռոմեացի պատմագիրները, մասնավորապես Դիոն Կասսիոսը<sup>1</sup>, տվել են այդ ճանապարհորդության շատ մանրամասնությունները, որոնք չեն կարող հետաքրքրական չլինել և հայ պատմության համար: Ուստի բերում ենք մի քանիսն այդ մանրամասնություններից, լուսաբանելու համար այն հեռավոր և ընդհանրապես մութ ժամանակները:

Իր մոր և եղբայրների հետ տեսակցելուց հետո՝ Տրդատը ճանապարհ ընկավ 66 թվին մեծ շուքով: Ամբողջ ճանապարհորդությունը նճան էր մի հազար թական գնացքի: Թագավորի հետ էր և նրա կինը, որ դրած ուներ ոսկե սաղավարտ և ծածկած էր պահում դեմքը, երկրի սովորության համեմատ: Արքայական շքախումբը բաղկացած էր 3000 հոգուց: Այդտեղ էին Վաղարշի և Բակուրի որդիներն էլ, պարթև, անշուշտ և հայ ազնվականության ներկայացուցիչները: Այդ բազմության ծախսը հոգում էր հռոմեական գանձարանը, տալով օրեկան մի գումար, որ այժմյան դրամով կազմում է մոտ երկու միլիոն ֆրանկ: Իբրև ուղղափառ զրադաշտակա՝ Տրդատը հրաժարվեց ծովային ճանապարհորդությունից: Ջուրը սրբություն էր զրադաշտականի համար և Տրդատը կաղծեր այդ սրբությունը, եթե նավով գնար նրա վրայով: Ցամաքային երկար ու հոգնեցուցիչ ճանապարհը Հայաստանից Խալախ նաև նրա տիկինն անցան ձիով: Բոլոր բաղաժներում արքայական այս գնացքն ընդունում էին ցնծությամբ, տոնակատարություններով:

Կայսրը գտնվում էր նեապոլում, ուր և գնացին Տրդատն ու իր հետևորդ:

ները: Ներոնը մեծ պատիվներով ընդունեց երիտասարդ պարթևին, իսկ Տրդատը երկրպագեց նրան, իբրև իր վեհապետին, բայց հրաժարվեց բաժանվել իր սրից, ինչպես սովորություն էր կայսերական ունկնդրությունների միջոցին: Ի պատիվ իր հյուրի՝ ներոնը շքեղ ըմբշամարտություններ ու ցլամարտ սարքեց. բարձր գահի վրա բազմած Տրդատը նետեր էր արձակում կովոդ կենդանիների վրա և մի նետով, ինչպես ասում են, նա երկու ցուլ սպանեց: Այդ տոնախմբություններից հետո ներոնը տարավ Տրդատին Հոռու՝ թագադրելու համար:

Դրդագաց աշխարհահռչակ մայրաքաղաքը և դուրս թափվեց արևելքի բարեկամ երիտասարդ թագավորին դիմավորելու համար: Ֆորում անունով հրապարակը, ուր պիտի կատարվեր հանդեսը, լցված էր ժողովրդով դեռ վաղ առավոտից. շրջակա տների կտուրները ծածկված էին նայողների բազմությամբ: Ամեն տեղ տիրում էր շքեղության: Ոսկով ու ծիրանիով զարդարված էր Ֆորումը և այդ պատճառով էլ հռոմեացիները «ոսկու օր» անվանեցին այդ թագադրության օրը:

Ներոնը, կայսերական ծիրանի հագած, թիկնապահ զորքերի փայլուն շարքերով շրջապատված՝ եկավ հանդեսի վայրը, ուր շինված էր բարձր գահ: Տրդատը աստիճաններով բարձրացավ, խոնարհ գլուխ տվեց իր տեղում նստած կայսրին և պարթևական լեզվով ասաց. «Թագավոր, ծագումով ես Արշակունի եմ, Վաղարշի և Բակուրի եղբայրը և քո հպատակը: Եկել եմ այստեղ քեզ, իբրև Միհր աստծուն, երկրպագելու համար»: Կայսրը, բռնելով նրա ձեռքը, համբուրեց նրան և նստեցրեց գահի վրա, մի աստիճանով ցած իրենից և ապա դրեց նրա գլխին հայկական թագը: Հանդիսականները ցնծափն աղաղակներով ողջունում էին նորապսակ թագավորին: Ապա սկսվեց թատրոնական ներկայացում Պոմպեոսի մեծ թատրոնի մեջ, որ արտասովոր գեղեցկությամբ զարդարված էր ոսկով և ծիրանիով: Հանդեսը վերջանում էր փառահեղ ընթրիքով, որի ժամանակ կայսրը նվագեց քնարի վրա և այդ բանը դուր չեկավ ողջախոս արևելցուն, որ անվայել էր համարում նվագածությունը մի կայսրի համար: Իր կողմից Տրդատը, իբրև քրմապետ, ծանոթացնում էր ներոնին զրադաշտական կրոնին և նրա հետ ներկա եղավ իր հետ բերած մոգերի արարողության, որով նրանք երդմնեցնում էին ոգիներին:

Ներոնի առատաձեռն և սիրալիք հյուրընկալությունը գրավեց պարթևների սիրտը և ապագա բարեկամական հարաբերությունների հիմք էր դառնում: Ներոնը կայսերական առատաձեռնությամբ պարգևատրեց Տրդատին: Երկի այդ ժամանակն էր, որ շինվեց Հոռում Տրդատի մարմարյա արձանը, որ այժմ գտնվում է Փարիզի «Լուվր» հուշակավոր թանգարանում, եթե, իհարկե, կարելի է հավատալ թե դա իսկական Տրդատի արձանն է և ոչ թե մի կեղծիք:

Բացի մեծամեծ պատիվներից, ներոնը տվեց Տրդատին և մի ահագին գումար՝ Կորբուլոնի կործանած Արտաշատը վերանորոգելու համար: Եվ որպեսզի գեղեցիկ լինի մայրաքաղաքի շինությունները, ներոնը բազմաթիվ իտալացի արհեստավորներ էլ ուղարկեց Հայաստան:

<sup>1</sup> Արձանի վրա գրված է, ֆրանսերեն լեզվով, «Տրդատ, թագավոր պարթևաց և Հայաստանի Քրիստոսի 62 թվին, մեռած է 73 թվին»: Արձանը եղել է առանց գլխի և մի ուրիշ արձանի գլուխ է դրված նրա վրա (Վ. Բաումգայն, «Տրդատ թագավոր Հայոց և Պարթևաց», «Բանասեր», Փարիզ, 1905, եր. 5—7): Այս հանգամանքները շատ կասկածելի են դարձնում այդ արձանը:

Տրդատը միևնույն ճանապարհով Հայաստան վերադարձավ, բայց հենց այստեղ էլ վերջանում են մանրամասն տեղեկությունները նրա մասին: Գե-տենը միայն որ նա վերաշինեց Արտաշատը: Երևի նրա հետ Խտալիայից եկած արհեստավորներն էին որ շինեցին Գառնի բերդում զուտ հումեակալան ոճով մի փառավոր շինություն, ըստ երևույթին մի տաճար, որի բեկորները այժմ էլ մնում են և ավանդաբար կոչվում են «Տրդատի թախտ»: 59

Հաստատապես հայտնի չէ նույնիսկ թե որքան ժամանակ թագավորեց Տրդատը: Կարծում են որ նա վախճանված պիտի լինի մոտավորապես I դարի վերջում (100 թ.): Ուրեմն երկարատև պիտի եղած լինի այդ թագավորու-թյունը և որ գլխավորն է, խաղաղություն էր տիրում այդ ժամանակ Արևել-քում: Ներոնից հետո էլ մի քանի կայսրներ նույն բարեկամական հարաբե-րությունները պահպանեցին պարթևների հետ: Ավերիչ պատերազմների վտան-գը վերացավ առնվազն 30—40 տարի ժամանակով, իսկ սա էլ մեծ բարիք էր և քաղաքակրթությունն ու խաղաղ շինարարությունը ծավալվեցին արևելյան երկրներում: Իրանը, ներոնի վերաբերմունքից դրդված, գալիս էր այն եզրա-կացություն, որ Հռոմի հետ կարելի էր ոչ միայն հաշտություն ասպրել, այլ դաշնակցել, ուրիշ ազգերի դեմ կովելու համար: Այսպիսի հարձակողական մի համաձայնություն կարելի եղավ կնքել ալանների դեմ, մի ուժեղ և պատերազ-մասեր ազգի, որ ապրում էր Կովկասյան լեռներում և հաճախ անցնելով Ալա-նաց դուռը (այժմ Դարիալի կիրճ), ավերիչ արշավանքներ էր սփռում ոչ միայն Անդրկովկասում, այլև Իրանի սահմաններում: Ներոնը պատրաստություններ էր տեսնում ալանների դեմ պատերազմ սկսելու, բայց 68 թվին սպանվեց, ի մեծ ցավ Վաղարշի և նրա եղբայրների: Այս դեպքից հազիվ երեք տարի ան-ցած, ալանները, միանալով կովկասյան ուրիշ վայրերի ցեղերի հետ, հար-ձակվեցին Ատրպատականի և Հայաստանի վրա, ավերեցին, քանդեցին: Այս աղետալի արշավանքը կրկնվեց և 75-ին: Ներոնից հետո կայսր ընտրված Վեսպասիանոսը ժամանակ շունեցավ օգնություն հասցնելու ավերվող Արևել-քին:

Դիմելով այն գործին, որ Տրդատը, իր եղբայր Վաղարշի օգնությամբ, ստեղծեց այնքան մաքառումների միջոցով, մենք տեսնում ենք հետևյալը՝ Պարթևական թագավորող տոհմին հաջողվում էր իր մի ճյուղավորությունը վերջնականապես հաստատել Հայաստանի գահի վրա: Տրդատը Արշակունի հարստության իսկական հիմնադիրն էր, թեև այդ հարստությունը նրա ժա-ռանգներին չմնաց: Պարթևների թագավորությունը արտաքուստ, ձևականորեն ենթարկված էր Հռոմին, բայց այդ հարաբերությունը նույնիսկ իրական կա-խում էլ չէր, այլ գուցե միայն հովանավորություն: Իրապես հայոց թագա-վորը վայելում էր անկախություն նույնիսկ պատերազմական գործերի մեջ: Միմիայն մի բանի մեջ էր սահմանափակվում հայ Արշակունիների իրավուն-քը. նրանք սեփական զրամ չէին կտրում:

Այսպիսով ահա պարթևական ազդեցությունը, որ միանգամայն համա-պատասխանում էր հայ ժողովրդի իդեալներին, վերջնական և համատարած տեր է դառնում Հայաստանի մեջ: Պարթևականությունը, իբրև գեղեցկության, ազնվականության և առհասարակ բարձր կուլտուրայի նշանակ, չափազանց սիրելի է դառնում հայ ժողովրդին: Եվ այս երկու ժողովուրդների դարավոր մերձեցման այս ամենաեռանդուն ժամանակներն էր, անշուշտ, որ Հայաս-տանի պետական կազմակերպությունը, ներքին հասարակական դասավորում-

ները վերջնական ձուլում ստացան պարթևական ձևերի մեջ: Խոշոր աշխա-տանք կատարվեց մանավանդ հայ ազնվականության ավատական դիրքը կազմավորելու և օրենսդրելու համար, և հայ նախարարությունները անշուշտ Տրդատի ժամանակներից են երևան գալիս այն կերպարանքով, որ նրանք պահպանեցին այնուհետև երկար դարեր իբրև հայ ժողովրդի քաղաքական-կուլտուրական ինքնուրույնության հիմք և պատվանդան: Այս ժամանակն էլ, անշուշտ, վերջնականապես ձևավորվում է հայերի կրոնական պաշտամունքը, զրադաշտականության գրկում: Հենց այն հանգամանքը, որ հայոց թագավորը միաժամանակ և զրադաշտական բրմապետ էր, բավական է ցույց տալու հա-մար որ իրականությունը, ավելի ընդարձակ չափերով, ավելի խորապես, քան երբևիցե, հայ ժողովրդի մտքի ու զգացմունքի տերն էր դառնում: Շատ հա-վանական է և այն, որ Տրդատը նորանոր վարչական և իրավական կարգեր հաստատած լինի Հայաստանի մեջ, օրինակ վերցնելով ոչ միայն հայրենի Պարթևստանից, այլև օտար, բայց փառավոր Հռոմից: Այս կողմից մենք նրան կարող ենք համարել շարունակող ազգային այն մեծ գործի, որ Ար-տաշեսյան հարստության իսկական փառքն է կազմում:

5. Հայ Արշակունիները մինչև 226 թ.: Սակայն ո՛չ այդ նոր միապետական հարստությունը, ո՛չ ներքին բարեկարգությունները շարողացան և չէին կա-րող մի նոր, ավելի ամուր, ավելի հարատև քաղաքական ճակատագիր ստեղ-ծել Հայաստանի համար: Հայկական գահի անկախությունը, հայ երկրի խաղաղությունը, հայ ժողովրդի պետական և կուլտուրական ինքնորոշման ազատությունը, մի խոսքով այն ամենը, ինչ հարկավոր է մի ժողովրդի առողջ ստեղծագործական կարողությունները առաջնորդելու և զարգացնելու համար,— այս բոլորը կախված էր այն հանգամանքից, թե ի՞նչ դրություն է տիրում միջազգային մրցությունների այն բարձրագույն կրկեսում, որի անունն էր Հայ-կական Բարձրավանդակ:

Տրդատի հիմնած հարստությունը բավական երկարակյաց էր. նա ապ-րեց 360 տարուց մի քիչ ավելի: Բայց ամբողջ այդ ժամանակ, հաշվի չառնելով սակավաթիվ բացառությունները, նրա վրա ծանրացած էր հայոց հարցը, իբրև ազգովին ինքնուրույնապես ապրելու պայքար Արևմուտքի և Արևելքի ահա-վոր, հավիտենական ընդդրմաների մեջ: Փոփոխվում է միայն պայքարի ուղ-ղությունը, եղանակը: Եվ այս կողմից հայ Արշակունիների շրջանը բաժանված է երկու հատվածի: Առաջինը պարունակում է իր մեջ մոտ 120 տարվա մի ժա-մանակամիջոց, երբ Իրանը պարթևական է և հայության ճակատագիրն է— պարթևների հետ Արևմուտքի դեմ, այսինքն Տրդատ Ա-ից սկսած մինչև պար-թևական հարստության վերջը Պարսկաստանում (62—226): Երկրորդ հատ-վածը, ավելի երկարազույնը— արդեն բոլորովին հակառակ նշանաբանն ունի:

Առաջին հատվածը համարյա ոչ մի տարբերություն չունի այն ընդհա-նուր պատկերից, որ տեսանք մինչև այստեղ: Տրդատին հաջորդած Արշա-կունիների մասին մեր ունեցած տեղեկությունները նույնիսկ ավելի խեղճ ու աղքատ են: Հայաստանը հիշատակվում է պարթևա-հռոմեական պատե-րազմների ժամանակ միայն: Մի շարք թագավորներ են դուրս գալիս ընդ-հանուր միություն և անհայտության միջից, բայց համարյա սոսկ միայն անուններ, որոնցից շատերի վերաբերմամբ չէ կարելի նույնիսկ ճիշտ թվա-կաններ առաջարկել: Մենք նրանց շարունակ տեսնում ենք միևնույն դժբախտ

<sup>1</sup> Arthur Christensen, „L'Empire des Sassanides“, Kobenhavn, 1907, p. 10.

ճակատագրին ենթարկված՝ խաղալիք կա՛մ հոռմեացիների կա՛մ պարթևների ձեռքին, վերին աստիճանի խախուռ գահերով: Անկարելի է ասել թե այդ թագավորները, առանց բացառությամբ, ողորմելի ոչնչություններ էին: Կցկտոր տեղեկություններ ունինք, որոնք թույլ ակնարկներ են, թե հայ երկրում էլ կային մրցություններ ազգային շահերի, արժանապատվության համար և թե հայ Արշակունիները գիտեին և անկախ երկրին արժանի դիրք բռնել: Բայց հայ երկիրը անգիր մի երկիր էր, շուրջը իր ազգային մատենագրությունը, որի մեջ երևար նրա ամբողջ կյանքը, նրա մղած պայքարները. մնացել է միայն այն, ինչ Հայաստանում գործող հոռմեացի զորավարները կարելի են համարել հաղորդել առանց իրենց փառամտությունը վերավորված լինելու:

Տրդատից հետո հայկական գահի վրա է Աշխադարը, որ պարթևական Բակուր թագավորի որդին՝ էր և հայոց թագն ստացել էր իր հորից Հոռմի համաձայնությամբ: Սակայն Բակուրի եղբայր Խոսրովը, հաջորդելով նրան, հեռացրեց Աշխադարին հայոց գահից (110), գտնելով նրան անհամապատասխան թե Հոռմի և թե Պարթևաստանի շահերին, և նրա փոխարեն թագավոր դրեց Բակուրի մյուս որդուն, որի անունն էր Պարթամասիր, սակայն առանց Հոռմի գիտություն: Եվ ահա այս դեպքը պարթևա-հոռմեական մի նոր և աղետալի պատերազմի դուռ բացավ: Տրայանոսը, աշխարհաշեն, բայց հպարտ ու փառասեր մի կայսր, որին ծերության հասկում օրորում էին Ալեքսանդր Մակեդոնացու փառքին հասնելու երազները, գնաց Արևելք և պատերազմական գործողություններ սկսեց Խոսրովի դեմ: Իզուր պարթևների թագավորն շտապեց դեսպաններ ուղարկել կայսրի մոտ, խնդրելով հաշտություն և առաջարկելով որ Պարթամասիրը Հոռմի վասալ հայտարարվի: Կայսրը մերժեց այդ առաջարկը և մտավ Հայաստան (114): Բարձր Հայքի Եկեղյաց գավառում հայոց թագավորը կարողացավ հաջողեցնել որ կայսրն իրեն ընդունե: Նա չէր էլ մտածել շճանաչել հոռմեացիներին և իբրև ապացույց՝ վերցրեց իր խույրը և զորքի առջև դրեց կայսրի ոտների մոտ, հուսալով, թե նրանից նոր կստանա այդ դժբախտ խույրը, ինչպես Տրդատ Ա ստացել էր Ներոնից: Սակայն այժմ այլ էր ժամանակը: Զորքը, տեսնելով զխաբաց թագավորին, հաղթական աղաղակներ բարձրացրեց ի պատիվ կայսրի, որ առանց արյուն թափելու նվաճել էր հայոց թագավորին: Վախեցած Պարթամասիրը դուրս եկավ որ լիախաչ, բայց մեկ էլ կանգ առավ և խնդրեց, որ Տրայանոսն իրեն ընդունե մենակ, առանց զորքի ներկայություն: Այստեղ կայսրը մերժեց նրան խաբափոր ճանաչելու խնդիրը: Թագավորը խոսեց խիստ լեզվով, ուստի կայսրը հրամայեց դուրս հանել նրան և տանել զորքի մոտ, ուր նա պիտի ասեր ինչ կամենում էր, որպեսզի ամենքն իմանան: Համարձակ և բողոքավոր ձայնով Պարթամասիրն ասաց Տրայանոսին թե ինքը պատերազմի մեջ հաղթվելուց հետո չէ եկել այստեղ և ոչ իբրև կալանավոր, այլ իր ազատ կամքով, իր թագավորությունն ստանալու համար, ինչպես օրինակ էր տվել Ներոնը: Տրայանոսը պատասխանեց թե ինքը վճռել է բոլորովին ջնջել հայոց թագավորությունը և Հայաստանը դարձնել հոռմեական մի նահանգ: Ուստի թագավորը պիտի հեռանա այս երկրից ուր ուզում է: Եվ լավ իմանալով որ թագավորի հետ են և հայերը, կայսրը հատկապես շեշտեց թե արգելում է հայերին հեռանալ թագավորի հետ: Պարթամասիրը հեռացավ, որպեսզի սկսե կռվել հոռմեացիների դեմ, բայց սպանվեց հենց առաջին ընդհարման մեջ:

1 Հստ Գաբրիելյանի՝ Տրդատի որդին («Տիեզ. Պատմ.» 2. Բ, էր. 172):

Հայաստանն այսպիսով դարձավ մի նահանգ, որի կառավարությունը հանձնվեց հոռմեացի կուսակալի: Ազատ մնաց Հայաստանի միայն հյուսիսային մասը:

Այս գործողությունները հաղթություններ համարվեցին և Տրայանոսն իրեն հատկացրեց «Հայկական» (այսինքն հայերին հաղթող) տիտղոսը: Այս առիթով Հոռմում զանազան դրամներ կտրվեցին, որոնց վրա հաղթված Հայաստանը ներկայացվում էր խորհրդանշաններով: Ոմանց վրա Տիգրիսն ու Եփրատն են, Հայաստանը կապված ու կծկված մի կին է և նրա շուրջը մակարություն կա. «Հայաստանն ու Միջագետքը Հոռմի ժողովրդի իշխանության տակ ընկած»<sup>1</sup>:

Հայաստանից կայսրն իջավ Միջագետք, նվաճեց այդտեղ Եդեսիան, Մըծ-բինը և այլ երկրներ, որոնք բոլորը միացվեցին հոռմեական պետության՝ իբրև նրա մասնիկներ: Առաջ տանելով իր հաղթական արշավանքը, Տրայանոսը հասավ պարթևական պետության սրտին. Տիգրոս մայրաքաղաքը և Սելևկիան վերցրին և կողոպտեցին հոռմեական զորքերը: Հաղթանակը կատարյալ էր. հոռմեացիների ձեռքն ընկան Խոսրովի աղջիկը և պարթևական միաձույլ ոսկի գահը: Կայսրը գնաց մինչև Պարսից ծոցի ափը, ուր միացած Տիգրիսն ու Եփրատը թափվում են Հնդկաց օվկիանոսը և տեսնելով Հնդկաստան գնացող նավերը, անձնատուր եղավ նոր Ալեքսանդր դառնալու ցնորքներին:

Բայց այդ միջոցին Միջագետքում սկսվեց ուժեղ ապստամբական շարժում հոռմեացիների դեմ: Պարթևները պատերազմ չէին արել, ետ էին քաշվել երկրի խորքը, ինչպես սովորություն ունեին թշնամու հարձակման դեպքում, որպեսզի պատրաստվեն փոխադարձ հարձակումների: Տրայանոսը նկատի առնելով այդ հանգամանքը և երկյուղ կրելով թե ապստամբությունը կտարածվի ամբողջ Իրանում, վերադարձավ Տիգրոս, և որովհետև Խոսրով թագավորը սկզբից ևեթ փախել էր հյուսիսային Հայաստան, նրա տեղ թագավորեցրեց նրա որդի Պարթամասպատին, որ դավաճանել էր հայրենի գործին և պատերազմի մեջ անցել էր հոռմեացիների կողմը: Այսպիսով Տրայանոսը պարթևական թագավորությունն էլ ենթարկում է Հոռմին և այդ պատճառով էլ ստացավ «Պարթևական» պատվանունը: Այնուհետև նա գնաց պատերազմելու Միջագետքի ապստամբության դեմ, որ շատ լուրջ կերպարանք էր ընդունել: Ղեկավարողը Խոսրով թագավորն էր, որի հորդորներով Հայաստանն էլ մասնակցեց ապստամբության: Նա հասավ Տիգրոս և այնտեղից վճռեց իր դավաճան որդուն: Իսկ Տրայանոսը շուտով մեռավ Կիլիկիայում (117)<sup>2</sup>:

Նրան հաջորդած Ադրիանոս կայսրը բավական զգույշ քաղաքագետ լինելով, փոխեց վերաբերմունքը դեպի արևելյան ազգերը, ավելի լավ համարելով այն խաղաղարար քաղաքականությունը, որ գործադրել էին նախկին կայսրները: Ուստի Իրանում և այլ տեղերում վերահաստատվեց նախկին դրությունը: Կայսրը վերադարձրեց Խոսրովին նրա գերի աղջկան, խոստացավ վերադարձնել նաև պարթևական ոսկե գահը: Հայաստանից դուրս հանվեցին հոռմեական իշխանություններն ու բերդապահ զորքերը և նրա գահի վրա նորից երևաց Արշակունի թագավոր: Դա Վաղարշ Ա-ն էր (117—140)<sup>3</sup>: Եվ նորից բարերար խաղաղությունը տիրեց Արևելքում, մոտ 40 տարի տևողությամբ (118—160):<sup>60</sup>

1 Գաբրիելյան, Բ, էր. 176:

2 Գաբրիելյան, 2. Բ, էր. 255—258; Տե՛ս և Моммсен, V, с. 389—391.

3 Халатянц, с. 307.

Խաղաղությունը միաժամանակ անհայտության թանձր բողոք է տարածում հայ երկրների վրա: Բայց ահա պարթևական գահն է քարծրանում սաստիկ փառասեր և կովարար Վաղարշ Գ (148—191), որին ոգևորող ցնորքն էր վերականգնել հին պարսկական մեծ պետությունը Միջերկրականի ասիայից մինչև Հնդկաստան: Հարկավոր էր դրա համար պատերազմել հռոմեացիների դեմ, իսկ այդ նպատակը իրագործող առիթ երկար որոնելու պետք էլ չկար: Տարիներ առաջ (140) Վաղարշ Ա-ին Հայաստանում հաջորդել էր, Հռոմի կամքով Սոյեմ անունով մեկը, որի ծագումն էլ բոլորովին պարզ չէ, թեև համարվում էր մոր կողմից Արշակունի: Վաղարշակ Գ առիթ բռնելով այդ ինքնագլուխ կարգադրությունը և Սոյեմի կասկածելի ծագումը, 161 թվին մոտեցավ Հայաստանի սահմաններին: Ազգային կուսակցությունը, ինչպես միշտ, համակրություն ցուցաբերեց պարթևական միջամտությունը: Սոյեմը օգնություն խնդրեց Կապադովկիայի հռոմեական տեղակալից, որ և շտապեց մի լեգեոն զորքով անցնել Եփրատը: Սակայն այստեղ, Հայաստանի հողի վրա, հայերի հետ միացած պարթևները հարձակվեցին հռոմեացիների վրա և բնաջինջ արին նրանց: Սոյեմը փախավ Հռոմ, իսկ Վաղարշը թագավոր հռչակեց իր եղբայր Բակուրին (162):

Բայց այս հաջողությամբ ոչինչ դեռ չէր վճռվում, այլ, ընդհակառակն, սկիզբ էր դրվում մի նոր ահավոր պատերազմի, որ մանր ընդհարումներով տևեց վաթսուն տարի և ընդհանրապես աղետալի հետևանքներ ունեցավ պարթևական Իրանի համար: Մարկոս Ավրելիոս կայսրը Փիլիսոփա կոչված, նոր զորքեր ուղարկեց Արևելք, որոնց գլխավոր հրամանատարությունը հանձն առավ նրա եղբայրը և գահակիցը, Լուկիոս Վերոս: Պատերազմական գործողությունների երկու բեմ կար՝ Հայաստան և Միջագետք, և այդ երկու կողմերն էլ առանձին բանակներ ուղարկվեցին՝ առանձին հրամանատարներով: Հայաստանում գործում էր քաջ Ստատիոս Պրիսկոս զորավարը, որ 162-ին պաշարումով վերցրեց Արտաշատը, նորից հիմնավորապես քարուքանդ արավ նրան: Փոխարենը հռոմեացիները մի նոր քաղաք շինեցին, Արտաշատից ոչ հեռու և անվանեցին նրան Կայնոպոլիս (Նոր Քաղաք, կոչվում էր և Քաղաքուղաշտ, այժմյան Վաղարշապատի տեղը): Հռոմեական մի ուժեղ զորաբաժին բնակություն հաստատեց այդտեղ: Բակուր թագավորը քաշվեց արևելյան կողմերը՝ այդտեղից իր կողմնակիցների միջոցով ապստամբության էր հրավիրում հալ ժողովուրդը: Այդ հրավերը անխելի շմնաց: Նորից ապստամբվեց ժողովուրդը: Երկիրը մի անգամ էլ ծայրահեղորեն լարում էր իր բոլոր ուժերը՝ իր փոքրիկ ու համեստ ազգային անկախությունը պահպանել կարողանալու համար: Բայց ապստամբությունն, իհարկե, անգոր էր հռոմեացիների հանդեպ և շուտով ընկճվեց, Բակուրը գահազուրկ հայտարարվեց և Հռոմից նորից կանչվեց Սոյեմը (164): Միաժամանակ հաղթանակ էր և հռոմեական այն բանակը, որ գործում էր Միջագետքում: Նորից գրավվեցին և քարուքանդ եղան Տիգրիսի վրա շինված երկու մեծ քաղաքները—Սելևկիան, որ մոտ 400 հազար բնակիչ ուներ իր մեջ, և Տիգրոնը: Վաղարշ Գ խորովի նման, փախուստի մեջ գտավ ազատություն: Միջագետքի ամբողջ արևմտյան մասը խլվեց պարթևներից և միացվեց կայսրության: Մարկոս Ավրելիոսն ու Լուկիոս Վերոսը ստացան «Պարթևական» և «Հայկական» պատվավոր տիտղոսները: Եվ Հռոմում նորից դրամներ էին կտրվում ի հիշատակ հաղթված Հայաստանի: Այս երկիրը

1 Халатяни, с. 311.

միշտ ներկայանում էր կնոջ կերպարանքով: Մեկի վրա այդ կինը տխուր ու տրտում նստած է հռոմեական դրոշի առջև և նրա տակ գրված է՝ Armenia (Հայաստան): Մյուսի վրա նույն այդ կինը տխուր է, ձեռքը ծնոտին տված, իսկ նրա դիմաց հռոմեական հաղթանակի նշանը<sup>1</sup>:

Այստեղ 20—25 տարվա մի անհայտության շրջան է սկսվում Հայաստանի համար: Բոլորովին հայտնի չէ թե ի՛նչ վիճակ ունեցավ Սոյեմը: Ենթադրաբար ընդունվում է որ 190 թվին Հայաստանի գահի վրա նստել է արդեն զտարյուն մի Արշակունի, Սանատրուկ անունով, որ թագավորեց վեց տարի: Մի քանի հատակտոր տեղեկություններ ունինք, որոնք վկայում են թե այս թագավորը եղել է մի նշանավոր գործիչ: Հույն մատենագիր Սուիդան գրում է. «Լինելով միջին հասակի տեր, հայոց թագավոր Սանատրուկը ուներ ձգտում դեպի ամեն մի մեծ բան. նա առաջինն էր պատերազմական գործերի մեջ, արդարադատության խիստ պահպան և նույնքան ժուժկալ, ինչպես լավագույնները հույներից և հռոմեացիներից»<sup>2</sup>: Զկամենալով մնալ Նոր Քաղաքում, ուր հռոմեական ուժն էր տիրում, նա իր մայրաքաղաքը տեղափոխեց Միջագետքի Մծբինը, որ հնուց հայկական սեփականություն էր: Այնքան ուժեղ էր նա, որ չեզոքություն պահպանեց, երբ Հռոմի գահի թեկնածուների մեջ ազամիջյան պատերազմներ սկսվեցին: Նա սպանվեց (196) լալանների դեմ մղած պատերազմի մեջ և թաղվեց, ինչպես Արշակունի, Հայաստանի հողում, այն է Դարանաղի գավառի Անի ամրոցում, Արևմտյան Եփրատի վրա, ուր գտնվում էր Արշակունիների տոհմային գերեզմանատունը: Դեռ չորրորդ դարի կեսում այդտեղ պահվում էր Սանատրուկի հուշարձանը, մի մեծաշեն, ամրապինդ և զեղարվեստական ձեռագործ<sup>3</sup>, որ նույնպես վկայում է Սանատրուկի ճոխության և նրա ժամանակի առաջադիմության և զարգացման մասին, որոնց մանրամասնությունները, դժբախտաբար, չունենք մենք<sup>4</sup>: Մի անվավեր վչայարանություն տանում է Սանատրուկին քրիստոնեության առաջին դարի վերջերը, երբ իբր թե նա նահատակել է Քաղեոս առաքյալին և իր դուստր Սանդուխտին՝ վերջինիս քրիստոնեության հարելու պատճառով<sup>5</sup>:

Սանատրուկին հաջորդում է նրա որդի Վաղարշ Բ (196—215), սակայն նա չկարողացավ իր գահը Մծբինում պահել, որովհետև այդ միջոցին վերանորոգվել էր պարթև-հռոմեական պատերազմը և Սեպտիմոս Սեվերոս կայսրը գրավեց Մծբինը իբրև ռազմական չափազանց կարևոր նշանակություն ունեցող մի կենտրոն: Այս հանգամանքը հայոց թագավորին միացնում էր պարթևների հետ, ուստի երբ Սեվերոսը ստիպված եղավ պետական գործերով Արևմուտք գնալ և պարթևները, օգուտ քաղելով այդ հանգամանքից, պաշարեցին Մծբինը, Վաղարշն էլ նրանց հետ զենք բարձրացրեց Հռոմի դեմ: Կայսրը, նորից վերադառնալով Արևելք, նախքան պարթևների դեմ գնալը, հարկավոր համարեց շտկել այն անբավականությունները, որոնք գոյություն ունեին մի քանի երկրներում հռոմեացիների դեմ: Վաղարշ Բ-ին նա սիրաշահեց, Մծբինի

1 Գաբրիելյան, Բ, էր. 176.

2 Халатяни, «Армянский эпос в истории Армении Моисея Хоренского», М., 1896. с. 180.

3 Փավստոս Բյուզանդացի, Գ, ԻԳ.

4 Արածանի գետի վրա Սանատրուկը շինեց մի քաղաք Մծուրք անունով (Փավ. Բյուզ., Գ, ԺԳ):

5 Հետազոտողներից մեկը (Հ. Աստուրյան) կարծում է, թե Սանատրուկը թագավորել է 75—110 թվականների մեջ, Եթե այս հավանական լինի, այն ժամանակ քրիստոնեական վկայարանություն էլ գոնե ժամանակավորապես կհաշտվի պատմության հետ:

փորձարեն մի քանի կալվածներ տալով Փոքր Հայքում: Բացի դրանից՝ նա Հայաստանից հանեց հոռմեական զորքերը և Վաղարշը մայրաքաղաք դարձրեց Կալնոպոլիսը կամ Նոր Քաղաքը, իր անունով տալով նրան Վաղարշապատ անունը:

Սեպտիմոս Սեվերոսին էլ հաջողվեց մահացու մի հարված տալ պարթևական թուլացող պետության: Նա նույնպես գրավեց Տիգրան մայրաքաղաքը և 100 հազար մարդ զորքի տարավ: Եփրատը վաղուց էր դադարել կայսրության և Իրանի սահմանը լինել, այժմ պետական սահմանը դառնում էր Տիգրիսի միջին հովիտը: Հոռմեական կայսրության մեջ ավելանում էր մի նոր նահանգ— «Մեսոպոտամիա» (Միջագետք): Հայաստանի համար սա մի շափազանց կարևոր նորություն էր: Այնուհետև Հայաստանի դերն անցնում էր Միջագետքին: Այլևս Հայաստանը չէր գտնվում երկու հակառակորդ պետությունների մեջտեղ, այլ Միջագետքը: Եվ քանի որ այսպես էր, Սեվերոս կայսրը կարելի էր համարում թույլ տալ որ հայկական թագավորությունը առանձին գոյություն պահպանե, ունենա իր սեփական զորքը: Այդ զորքի պահպանության համար Հռոմը նույնիսկ բավական խոշոր պետական նպաստ էր տալիս<sup>1</sup>:

Սեպտիմոս Սեվերոսին հաջորդեց նրա որդի Անտոնինոս Կարակալան, մի անառակ և բռնակալ մարդ, որի համար բարոյական սանձեր չկային: Լքված նվաճողական փառատենչիկ տրամադրություններով, նա վերսկսեց պարթևական պատերազմը և մտադրվել էր ձեռք ձգել, ինչ գնով էլ լինի, ամբողջ Արևելքը: 215 թվին նա Միրիայումն էր և ամենից առաջ կատարելիք գործ հայտարարեց այն, որ Հայաստանը և մի քանի ուրիշ երկրներ պետք է դառնան պարզ հոռմեական նահանգներ: Այս միտքը նա սկսեց իրագործել նենգ միջոցներով: Հայուց Վաղարշ թագավորի ընտանիքում ծագել էին անհամաձայնություններ: Կարակալան բարեկամական նամակ ուղարկեց նրան, հրավիրելով իր մոտ և խոստանալով իր օգնությունը այդ դժվար հանգամանքներում: Վաղարշը խաբվեց մանավանդ այն պատճառով, որ նամակը բերողները և միջնորդողները նրա բարեկամ մարդիկ էին: Իր ընտանիքը վերցրած նա գնաց Կարակալանի մոտ, բայց այդտեղ իսկույն բանտարկվեց:

Հայերը, վրդովված Հռոմի կայսրի այս ստոր վարմունքից, զենք վերցրին: Վաղարշի որդիներից մեկին, Տրդատին, հաջողվեց փախչել և վերադառնալ Հայաստան, ուր ապստամբված ազգաբնակիչները նրան իսկույն թագավոր հռչակեց, Կարակալան զորք ուղարկեց հայերի դեմ, որ, սակայն, ջարդվեց հայերի ձեռքով: Այնուհետև Տրդատը գնաց պարթևների մոտ, որպեսզի նրանց աջակցությամբ կազմակերպե դիմադրություն հոռմեացիներին: Այս արգեն առիթ էր պարթևական մի նոր պատերազմ սկսելու համար: Պարթևների այս ժամանակվա թագավորն էր Վաղարշ Ե: Սակայն նրա երկրում գոյություն ունեին սովորական անկարգությունները՝ գահին տիրանալու համար: Վաղարշի եղբայր Արտավանն արդեն թագավորում էր Իրանի մի մասում, Տրդատը գրտնըվում էր Վաղարշի մոտ: Կարակալան պահանջեց նրանից իրեն հանձնել հայոց թագավորին, հակառակ դեպքում սպառնում էր հարձակվել նրա վրա: Նեղն ընկած պարթևական թագավորը ստիպված եղավ համաձայնություն տալ բայց Տրդատը հեռացավ պարթևների երկրից և նորից վերադառնալով Հայաստան, ապստամբության գլուխ կանգնեց և հաջողությամբ գործում էր հոռմեացիների դեմ:

Իսկ կայսրը, կորցնելով պարթևներին պատերազմ հայտարարելու առիթը, մի ուրիշ նենգություն դիմեց՝ պարթևական ժառանգությունն իր ձեռքը գցելու համար: Արտավանն արդեն հաղթել էր իր եղբորը և դարձել էր ամբողջ Իրանի թագավոր: Կարակալան խնամախոսներ ուղարկեց նրա մոտ՝ խնդրելու նրա աղջկա ձեռքը իր համար: Այդ ամուսնության նպատակն էր դառնալ պարթևների ժառանգ և հափշտակել ամբողջ Իրանը: Կայսրը չծածկեց այդ նպատակը Արտավանից: Բայց Արտավանը քաղաքավարությամբ մերժեց այդ խնամախոսությունը, պատճառ բերելով այն տարբերությունը, որ կա արևելյան և արևմտյան ազգերի նիստ ու կացի և բարքերի մեջ: Կարակալան հենց այս մերժման պատճառով էլ պատերազմ սկսեց, խուժելով իր զորքերի հետ Ադիաբենա երկիրը: Եվ որովհետև Արտավանը հանկարծակիի էր եկել ու ետ քաշվել բանակ պատրաստելու համար, հոռմեացիները հեշտությամբ գրավեցին այդ և հարևան երկրները: Ադիաբենայի Արբելա քաղաքում Կարակալան հասավ այն ստորություն, որ քանդել տվեց թագավորների գերեզմանները և քամուն տվեց նրանց աճյունը: Արշավանքը պիտի վերսկսվեր 217-ի գարնանը, բայց հենց այդ միջոցին Կարակալան սպանվեց իր զորքի ձեռքով:

Այս բանը, սակայն, չկանգնեցրեց Արտավանին, որ մի շատ խոշոր բանակով մտավ Միջագետք: Կարակալանին հաջորդել էր թույլ Մակրինոսը, որ շուրջ պատերազմ մղել և հաշտություն առաջարկեց պարթևներին: Սակայն այս անգամ Արտավանը չէր բավականանում նրանով, որ հոռմեացիները ետ էին քաշվում, այլ պահանջեց որ նրանք հատուցանեն և վնասները: Մակրինոսը մերժեց, բայց երբ նրա զորքը երկու անգամ պարտություն կրեց, ստիպված եղավ խաղաղություն գնել, վճարելով պարթևներին և նրանց դաշնակիցներին մոտ 20 միլիոն ուրբլու մի գումար: Ապա կայսրը հարկավոր համարեց հաշտությամբ վարվել և Հայաստանի հետ, որ այնքան սրտապնդությամբ պաշտպանել էր իր ազգային անկախությունը: Այդ միջոցին բանտում մեռել էր Վաղարշ Բ, ուստի Մակրինոսը թագ ուղարկեց Տրդատին և վերադարձրեց նրա մորը, որ 11 ամիս մնացել էր բանտում:

Տրդատ Բ թագավորեց մինչև 222 թվականը: Նրա մահից հետո Արտավանը հայոց թագավոր նշանակեց իր եղբայր Արշակին, առանց նույնիսկ հոռմեացիների համաձայնությունը հարցնելու:

Այս Արշակը հայ պատմական ավանդության մեջ կրում է խոսքով անուշեր: Սրա ժամանակ (224 թ.) Պարսկաստանում տեղի ունեցավ մեծ հեղափոխություն, որի զոհը դարձավ սրա եղբայր Արտավանը և որ առաջացրեց թագավորող տոհմի փոփոխություն: Այս փոփոխությունը ճակատագրական նշանակություն ունեցավ Հայաստանի համար: Բայց նախքան նրան դիմելը մենք պիտի ծանոթանանք Հայաստանի պետական հասարակական կազմին և կուլտուրական կյանքին, որոնք ձևավորվել ու զարգացել են զլիավորապես պարթևական Իրանի ազդեցության տակ:

<sup>1</sup> Այս պատճառով էլ մենք նրան չենք զետեղում Արշակունի թագավորների շարքում Արշակ անունով:

Գլուխ երկրորդ

Հ Ա Յ Ա Շ Խ Ա Ր Հ Ը

1. ԱՎԱՏԱԿԱՆ ԿԱՐԳ: 2. ԱՐԹՈՒՆԻՔ: 3. ԿՐՈՆ: 4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:

1. Ավատական կարգ: Մենք տեսանք, որ դեռ Արտաշեսյան հարստության ժամանակ հայ համայնական կյանքը դուրս էր եկել տոհմային դրուժյունից և յուրացնում էր այդ կարգին հետևող զարգացման հետևյալ աստիճանը, այն, որ ընդհանուր պատմության մեջ հայտնի է ավատական (ֆեոդալական) կարգ անունով:

Ավատական կարգի շատ բնորոշ գծերը, ինչպես տեսանք<sup>1</sup>, շատ հին ժամանակներից մշակվում էին Արևելքի մեծ քաղաքակրթությունների մեջ (Սգիպտոս, Քաղդեա): Հայկական Բարձրավանդակն էլ, ինչպես երևում է, այդ իրականությամբ էր ապրում նախահայկական շրջանում: Ուրարտական բեկնագիտությունը, ինչպես գիտենք, տալիս է մեզ նախորդի երկրների պատկերը՝ բաժանված անթիվ մանր մասերի, որոնք անշուշտ, հետևանք էին նույն ավատական իրավակարգի:

Հայ ավատականությունն ունի իր սեփական ազգային անունը՝ նախաշարժություն<sup>2</sup>: Այս անունն էր կրում ազգաբնակչության այն շատ փոքրիկ մասը, որ բաղկացած էր ազատներից կամ, այլ խոսքով, ազնվականներից: Նա իշխող տարրն էր և այդ պատճառով էլ անվանվում էր նաև իշխան: Ազգաբնակչության մնացած ահագին մասը, ժողովրդական ամբողջ զանգվածը, զրկված կառավարելու իրավունքից և պարտավորված միմիայն հպատակվելու, կոչվում էր ռամիկ, շինական, հորջորջումներ, որոնք ազատ անվան հակադրություններն էին և հոմանիշ էին անազատ դրություն:

Հայ նախարարությունների սկզբնավորումը տեղի է ունեցել մեզ համար անհայտ ժամանակներում, ուստի չենք կարող որոշակի ասել թե ի՞նչ տարրերից կազմվեց նա: Անկասկած է թվում մի հանգամանք միայն: Այդ այն է, որ միայն հնդեպոսական արմեններից չկազմակերպվեց հայ ավատական ազնվականությունը: Նրա մեջ նշանավոր շափով տեղ բռնեցին և նախահայ բնիկները, հեթիթական-հարեթական ցեղերին պատկանող ազնվականները:

<sup>1</sup> Տե՛ս «Նախապատրաստություն»:

<sup>2</sup> Նախարար բառը, պրոֆեսոր Մառի կարծիքով, հին ժամանակներում ունեցել է նախարար ձևը, որ բաղկացել է երկու մասից—նաև և բար: Առաջին մասիկը նշանակում էր երկիր, աշխարհ (ինչպես նահանգ բառի մեջ), իսկ երկրորդը՝ տեր, գլխավոր: Ուրեմն նախարար նշանակում է երկրի տեր (H. Март. «Этимология двух терминов армянского феодального строя». Սեպուհ և նախարար: Տե՛ս «Запис. Вост. От. Импер. Русс. Археолог. Общ.», т. XI, с. 165—173): 61.

Այս ալևոր իրողության հեռավոր արձագանքը պահված էր հայ ժողովրդական ավանդությունների մեջ դեռ Մովսես Խորենացու ժամանակ: Նա պատմում էր թե Սլկունի նախարարական տոհմը երկրի հին, նախահայկական բնիկներից էր: Հայտնի է նույնպես որ Մամիկոնյան նախարարների հռչակավոր տոհմը առաջ է եկել Տայք նահանգի ճաներից, որոնք հարեթական մի ցեղ էին<sup>3</sup>: Շատ նշանակալից է և այն հանգամանքը, որ հայ նախարարական բազմաթիվ տոհմանուններ գտնվում են ասորական և ուրարտական սեպածե արձանագրությունների մեջ: Այս փաստը դեռ մանրամասնորեն ուսումնասիրված չէ՝ բայց, անշուշտ, կապակցության ապացույց են, օրինակ, այսպիսի նմանություններ. Աղձնունիք (հայ անուն)—Ալզինինի (սեպագրական), Ամատունի—Ամադունի, Արծրունի—Արծունի, Ռշտունի—Ռիշուաինի, Սանասունք—Սանաշու, Տայեցի—Պայասինի, Տրունի—Տարիունի և այլն<sup>4</sup>:

Այս հանգամանքները, ինչպես արդեն նկատել ենք, ապացույց են որ հայ պետության կազմակերպության մեջ եկվոր հնդեպոսացիները և բնիկ հեթիթեանները մտցրին իրենց՝ ազգային կազմակերպությունները հավասար իրավունքներով: Բայց հայ ավատականությունը վերջնականապես ձևակերպվեց, իրավական որոշ կերպարանք ստացավ հայ Արշակունիների ժամանակ, օրինակ ու օրենսդիր ունենալով պարթևական Իրանը<sup>5</sup>:

Արևելքում ստեղծված ավատական դրուժյունը, ինչպես հայտնի է, Արևմտյան Եվրոպայի մեջ ընդարձակ իրականություն դարձավ Միջին Գարբի ընթացքում: Համեմատությունները ցույց են տալիս, որ Հայաստանի ավատական կարգերը շատ մոտիկ նմանություն են ունեցել եվրոպական համանուն կարգերին, այնպես որ հայկական պետությունը Արշակունիների ժամանակ ընդհանրապես ներկայացնում էր նույն տիպը, որ հետո զարգացավ և ծաղկեց Եվրոպայում (օրինակ, ավատական Ֆրանսիան):

Մեզանում էլ ամբողջ երկիրը բաժանված էր բազմաթիվ կիսաանկախ մասերի, որոնք ենթարկվում էին գլխավոր տերերին (սինյոր) և որոնք իրենց դիրքով ու տարածություններով ներկայացնում էին տարբեր աստիճանի կարևորություն և ուժ: Այդ բաժանումները կրում էին նահանգ, աշխարհ, գավառ անունները: Իշխանության հիմքը դրված էր, ինչպես գիտենք, տոհմային սկզբունքի վրա և հին տոհմային վարչական անվանումը—տուն, պահպանում էր իր իմաստը իբրև ամեն մի նախարարական տոհմի ամբողջություն: Իշխանությունը պատկանում էր տոհմի ավագագույն ներկայացուցչին, որ կոչվում էր, հին անունով, տանուտեր<sup>6</sup>, տեր, հաճախ նաև նահապետ: Տանուտերին հաջորդում էր ոչ թե որդին, այլ տոհմի ավագագույն անդամը: Նախարարական տոհմի մնացած անդամները կոչվում էին սեպուհներ<sup>7</sup>: Նրանք անկախ դեր չունեին, պիտի հպատակվեին տերին կամ նահապետին:

<sup>1</sup> Խորենացի, Բ, է:

<sup>2</sup> Адонц, с. 403.

<sup>3</sup> Բաւմաշյան, «Հայ նախարարությունները բեկնած արձանագրության մեջ» («Բանասեր», Փարիզ, 1902, 8—9, 10):

<sup>4</sup> Հայ նախարարական կազմի լավագույն ուսումնասիրությունը պատկանում է պրոֆեսոր Ն. Աղունցին. «Армения в эпоху Юстиниана», որով և առաջնորդվել ենք այս տեսության մեջ:

<sup>5</sup> Այս անվան վրաստանում համապատասխանում էր մամասախիս (տան հայեր անունը, որ տրվում էր վրաց ավատատեր իշխաններին: Այս և ուրիշ հանգամանքները ցույց են տալիս հայոց և վրաց ավատական կարգերի մոտիկ ազգակցությունը:

<sup>6</sup> Джавахов, «Государственный строй древней Грузии и древней Армении», СПб, 1905, с. 101.

<sup>7</sup> Հայերեն սեպուհ բառից առաջացել է վրացական սեփե բառը, որ նույնպես ազնվա-



Յուրաքանչյուր նախարարական աշխարհի, նահանգի կամ գավառի սիրտը կազմում էր ավատական ամրոցը, ուր բնակվում էր տոհմապետը: Նա կոչվում էր ո ս տ ա ն: Այդտեղ էր կենտրոնանում ավատական աշխարհի տեղաշին վարչությունը, մտավոր և կուլտուրական կյանքը: Իշխանը կառավարում էր, օրենսդրական կարգադրություններ էր անում իր ժողովրդի համար՝ համաձայն հին սովորությունների, վճռում էր, իբրև բարձրագույն դատավոր, բոլոր դատաստանական վեճերը<sup>1</sup>, մնալով իր ներքին իշխանական գործառույթությունների մեջ միանգամայն անկախ: Նա ուներ իր սեփական զորքը, որ հավաքում էր իր ժողովրդից, ստանում էր նրանից հարկեր իր պետքերի համար:

Նախարարական կալվածները անբաժանելի էին և տոհմի անդամները, սեպուհները, օգտվում էին նրանցից իշխանապետի, տանուտերի կարգադրությամբ: Կալվածական անբաժանելիությունը տոհմային ինքնապաշտպանության ղազմունքից էր թելադրվում, որպեսզի տոհմերը չզրկվեն իրենց ուժի և ազդեցության գլխավոր հենարանից, որ հողային հարստությունն էր: Հողային սեփականությունը երեք տեսակի էր. հայրենի—այն, որ տոհմին էր պատկանում, հայրերից մնացած ժառանգություն էր, պարգևական—այն, որ ստացվում էր իբրև պարգև թագավորներից, և գանձագին—այն, որ գնվում էր անձնական միջոցներով, իբրև մասնավոր, անձնական սեփականություն<sup>2</sup>:

Թե ինչ տեսակ հարաբերություններ կային ավատական իշխանի և նրան ենթարկված երկրագործ ժողովրդի մեջ, այս մասին որոշ տեղեկություններ չեն մնացել: Բայց, անշուշտ, այդ հարաբերությունները նույնն էին, ինչ գոյություն ունեին ավատական կարգերին ենթարկված ուրիշ համայնքների մեջ: Գյուղացին, որ կոչվում էր և ո ս մ ի կ, գ ի ղ ջ ու կ, շ ի ն ա կ ա ն, ազատ չէր, ստանում էր հողաբաժին, որ կոչվում էր կ ա լ վ ա ծ, որից բաժանվել չէր կարող առանց իշխանի թույլտվության: Բացի դրամական որոշ տուրքերից, գյուղացին տալիս էր իշխանին և որոշված մասեր (զուցե տասանորդ) իր տնտեսության արդյունքներից բերքերով, տնային իրերով: Այդ բոլորի հետ միասին գյուղացին պարտավոր էր կատարել իշխանի համար և զանազան ձրի աշխատանքներ, որոնք այժմ էլ կոչվում են կ ո ո ո բ ե կ ա թ<sup>3</sup>, Երևի հայ ավատական իրականության մեջ էլ սրբագործված էր այն կարգը, որ այսօր էլ գոյություն ունի թուրքաց Հայաստանում և որով ճորտ հայ գյուղացին իրավունք չունի աղջիկ ամուսնացնել առանց կալվածատեր իշխանի թույլտվության<sup>4</sup>: Որ ավատական հողատիրության հետևանքով գյուղացիությունը Հայաստանում պետք է եղած լիներ ճորտ, ցույց է տալիս և այն, որ պարթև նախարարություններն էլ ունեին ճորտեր և ստրուկներ<sup>5</sup>: 62

կան տիրոջն էր և նշանակում էր վրացիների մոտ նույնը, ինչ հայերի մոտ—տանուտերը: Այսպես էր և Աղվանից աշխարհում: Եվ այսպիսով Անդրկովկասյան այս երեք երկրները— Հայաստան, Վրաստան, Աղվանք—միացած էին մի ընդհանուր ավատական կարգի մեջ: (Տե՛ս պրոֆ. Մառի հոդվածը «Սեպուհ» բառի մասին «Зап. Вост. отд. Имп. Русс. Арх. Общ.», т. V, с. 286—289.)

1 Ն. Ղ. Ինճիհյան, «Հնախոսություն Հայաստանյայց Աշխարհի» հ. Բ, Վենետիկ, 1835, եր. 87:  
2 Адонц, с. 457:  
3 Адонц, гл. XV:  
4 Պողոս Վ. Նաբանյան, «Արտոսը Հայաստանի», Կ. Պոլիս, եր. 54:  
5 Christensen, „L'Empire des Sassanides“, p. 8:

Առհասարակ, գյուղական աշխարհը առանձնացած էր և նրա ժառանգությունները համարյա թե բոլորովին չկան մեր հին գրականության մեջ: Եթե ընդունենք որ Զենոբ Գլակի անունով մեզ հասած համառոտ պատմությունը պարունակում է իր մեջ շորորդ դարից մնացած ավանդություններ, այն ժամանակ մենք կտեսնենք որ այդ դարում Հայաստանի մեջ և հատկապես Արածանիի հովտում (Մուշի դաշտ) գոյություն ունեին շատ խոշոր գյուղեր: Այսպես, ըստ աղբյուրի, Կուսոս գյուղը կամ գյուղավանը ուներ 3012 տուն և տալիս էր 1500 ձիավոր զորք, Խորնի գյուղը՝ 1906 տուն, տալիս էր ձիավոր զորք 700 և հետևակ՝ 1007, Տում գյուղը՝ 900 տուն և հեծյալներ՝ 400, Բրեխ գյուղը՝ 1680 տուն, հեծյալ՝ 1030 և հետևակ՝ 400, Կետեղը՝ 1630, հեծյալ՝ 800 և հետևակ՝ 600, Բուզու՝ 3200 տուն, հեծյալ՝ 1040, հետևակ աղեղնավոր՝ 840, տիգավոր՝ 680 և պարսավոր՝ 280: Ավատական-գյուղական պետության մի պատկերն է ներկայացնում Մեղրագետի հռչակավոր հովտի այս բազմամարդությունը:

Յուրաքանչյուր ավատական իշխան իր երկրում, իր «տան» մեջ, մի փոքրիկ թագավորի նմանությունն էր բերում ոչ միայն գործադրած իշխանության, այլև իր նիստ ու կացի, իր վայելքների տեսակետից: Նախարարական ամբողջ տոհմը ներկայացնում էր այն, ինչ մարդկային նախապաշարված մտածողությունը արտահայտում է «արյան ազնվություն» բառերով: Դա «բարձր» կոչվող դասակարգն էր, վայելողը, որի համար էլ քաղաքակիրթ կյանքը ստեղծում էր հարմարություններ, փափկություն, շքեղություն և զեխություն: Այս կողմից էլ տիրողների և հպատակների մեջ տարբերությունն ահագին էր: Դժբախտության մեջ ընկած նախարարական ընտանիքների ամբողջ սարսափելի դրությունը պատկերորեն ներկայացնելու համար մեր մատենագիրներից մեկը, Եղիշեն, ասում է թե նրանք պարում էին ինչպես «չինականներ, որոնք սովոր են փոքր հասակից շարժարաններ և տանջանքներ կրելով անցկացնել իրենց կյանքը»<sup>2</sup>:

Իրենց նիստ ու կացի մեջ հայ նախարարներն ընդօրինակում էին այն կարգերը, սովորությունները, որոնք գոյություն ունեին Իրանի ազնվականության մեջ: Գլխավորապես հայ ազնվականության շրջանն էր այն միջավայրը, ուր այնքան հզոր էր իրանականության ազդեցությունը: Տակիտոսի վկայությամբ հայ և պարթև նախարարական տները հաճախ կապվում էին իրար հետ ամուսնություններով: Հայոց արքունիքում էլ, ուր պարթևները միապետը, տիրապետում էին դարձյալ պարթևական կարգերը: Հայտնի է և այն, որ պարթև նախարարներից մի քանիսը տեղափոխվեցին Հայաստան և մտան հայ նախարարությունների շարքը: Այսպես էին, օրինակ, Սուրենի Պահլավ և Կարենի Պահլավ հռչակավոր տոհմերը<sup>3</sup>: Եվ այսպիսով Հայաստանի բարձր դասակարգի մեջ տիրում էին պարթևական բարքերը: Իսկ թե ինչպիսի ճոխության մեջ էին ապրում պարթև նախարարները, ցույց է տալիս հենց նույն Սուրենը, որի մասին Պլուտարքոսն ասում է թե պատերազմի ժամանակ նա իր հետ ման էր ածում իր ամբողջ հարեմը. հազար ուղտ տանում էին նրա ծանրոցները, իսկ երկու հարյուր սայլերի մեջ տեղավորվում էին նրա հարձերը: Գիշերները

1 Զենոբ Գլակ, «Պատմություն Տարսուս», Վենետիկ, 1832, եր. 37:  
2 Եղիշեն, «Պատմություն Վարդանանց», Թեղոսիա, 1861, եր. 322:  
3 Խորենացի, Բ, իր:

նա մեծ գինեխմութունների մեջ էր, որոնց մասնակցում էին հարձերը, պարուհիները և այլն<sup>1</sup>:

Այս խնջույքները, ինչպես տեսանք, հատուկ էին և հայ նախարարներին: Եղիշեն Սյունյաց նախարար Վասակի մասին գրում է. «Առատ-առատ հաց-կերույթներ էր սարքում, ուրախության նվազներով էր անցկացնում ժամանակը և գիշերների երկարությունը մաշեցնում էր արբեցությունը և լիտի երգու պարով, ոմանց քաղցրացնում գրավում էր հեթանոսական երգերով ու երաժշտությամբ»<sup>2</sup>: Այսպիսի խնջույքներ սովորաբար տեղի էին ունենում մեծ որսորդություններից հետո, որոնք նախարարական կյանքի մեծագույն հաճույքներն էին կազմում և հաճախ ամբողջ տոնակատարությունների կերպարանք էին ընդունում: VII դարի հեղինակ Անանիա Շիրակացին իր թվաբանական խնդիրների մեջ նկարագրում է պարթևական ծագում ունեցող Կամսարական խնդիրների մեջ նկարագրում է պարթևական ծագում ունեցող Կամսարական խնդիրների մի մեծ որսը: Որսատեղին շրջապատվում էր բազմաթիվ մարդկանցով և շնորով, որոնք խրտնեցնում էին կենդանիներին, քշելով նրանց դեպի բունը կամ դարանատեղին, ուր նրանց կամ նետահար էին անում, կամ սպանում էին նիզակով և կամ նույնիսկ բռնում էին ձեռքով: Այսպիսով որսված երեւների թիվը հասնում էր հազարներին<sup>3</sup>: Երևելի որսորդ էր և V դարի հռչակավոր գործիչ Վահան Մամիկոնյանը: Ղազար Փարպեցին պատմում է թե երիտասարդության հասակում նա քիչ մարդկանցով այնքան հաջողակ որսորդություններ էր անում, որ զանազան կողմերի մեծ նախարարները մարդ էին ուղարկում նրա մոտ և որսի միս խնդրում: Եվ որովհետև առանց որսի մսի անկարելի էր նախարարական խնջույքը, ուստի մեր պատմիչն ասում է թե Վահանի և նրա եղբայրների շնորհիվ էր որ շքեղանում էին հայ նախարարների ընթերցանները<sup>4</sup>:

Նախարարական տան շքեղությունն ապացույց է կուլտուրայի այն բարձր աստիճանի, որ տիրում էր այդ ազնվական դասակարգի մեջ: Այդ շքեղությունը, հարկավ, համապատասխանում էր այս կամ այն իշխանական տոհմի հարստության: Որքան մեծ էր ու ազդեցիկ մի նախարարություն, այնքան ավելի մեծ շահերով էր հանդես գալիս նրա վայելչության համար ստեղծված շքեղությունը իշխանական ամրոցի, ապարանքի և մանավանդ կանանցի մեջ: Եղիշեն նկարագրում է թե ի՞նչ բաներից էին զրկվել լեռներում ապաստանված նախարարական ընտանիքները և դրանով մեզ միջոց է տալիս տեսնելու թե ի՞նչ կար իշխանական տան ներսում: Այդտեղ նախ և առաջ բազմաթիվ են ծառաներն ու սպասուհիները: Հացարար անունով մի պաշտոնյա իշխանական սեղանի և մթերանոցի կառավարիչն է: Հրավիրվածների և այցելուների ընդունելության, ինչպես նաև առհասարակ ամեն մեկին կարգ ու ցելուների ընդունելության համար կային հատուկ մարդիկ նվիրակ անունով, մի տեղ ցույց տալու համար կային հատուկ մարդիկ նվիրակ անունով, մի տեսակ արարողապետներ, որոնք սովորաբար դռների մոտ էին կանգնում: Տան մեջ կային փառավոր կահ-կարասիք. հիշվում են փափուկ բազմոցներ,

1 Պատարեոս, 2. Դ, եր. 111: Հույն պատմագիրը գովում է մանավանդ Սուրենի գեղեցիկ հասակը (6, եր. 116): Այս գեղեցկությունը, ինչպես երևում է ընդհանուր պարթևական հատկություն էր և հենց այդ պատճառով էլ, երևի, հայ ազնվականները ամուսնանում էին պարթև աղջիկների հետ: Բարձր և գեղեցիկ հասակը մեր լեզվի մեջ, ինչպես հայտնի է, կոչվում է «պարթև հասակ»:

2 Եղիշեն, եր. 95:

3 Գալուստ Տեր-Մկրտչյան, «Անանիա Շիրակացի», Վաղարշապատ, 1896, եր. 25:

4 Ղազար Փարպեցի, «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1904, եր. 111:

գահավորակներ և հոյակապ աթոռներ, որոնք դրված էին լինում սեղանատանը: Գեղեցիկ և հարուստ էին նաև սեղանի ամանեղենները, բաժակները իրենց բաժակակալներով:

Նախարարների կանաչ ունեին տիկին պատվանուներ, իսկ աղջիկները կոչվում էին օրիորդ: Նրանք ապրում էին մեծ փափուկության մեջ, ստանում էին քնքուշ դաստիարակություն: Բազմում էին փափուկ բազմոցների և գահավորակների վրա, իսկ նրանց ննջարանները զարդարված էին նուրբ կերպասներով: Տիրում էր հարեմական կարգը և իշխանի հարստության շափը ցույց էր տալիս կանանց թիվը նրա կանանցում: Սապոնով վազգվելը առօրյա սովորություն էր. վազգվելու ջուր ածում էին փոքրերը, որոնք տալիս էին մեծերին և սրբիչ՝ երեսն ու ձեռքերը սրբելու համար: Իսկ հանդիսավոր օրերին տիկիներն ու օրիորդները օծանվում էին անուշահոտ յուղերով: Քնում էին ազնիվ կտորներից կարած փափուկ անկողինների մեջ, բարձրը սպիտակ էին: Փառավոր էին և իշխանական ճաշերը: Գարծյալ որսի միսն էր անուշահամ կերակուրների մեջ առաջին տեղը բռնում: Մանկությունից նախարարական ընտանիքի անդամը սնվում էր երեւների փափուկ և քնքուշ մսերով և հորթի ուղեղով<sup>1</sup>:

Այս բոլորի վրա պետք է ավելացնել և այն, որ ազնվական դասակարգի լեզուն էլ տարբերվում էր հարկատուների, ռամիկների լեզվից: Դա գրաբարն էր, մի ճոխ, կանոնավոր զարգացած և ամենանուրբ արտահայտությունների ընդունակ գրական լեզուն, որ ամբողջ երկրի քաղաքակրթական զարգացման ամենաբարձր նշանը կարող էր համարվել: Նույն այս տիրապետող դասակարգին էր մնում կուլտուրական զարգացումը և գեղարվեստը, գիրը, գիտությունը, դաստիարակությունը գլխավորապես ազնվականների համար էին և բացառապես նրանց հովանու տակ էին դրված: Ցուրաքանչյուր գավառ այս կողմից այնքան առաջադիմություն կարող էր ցույց տալ, որքան նրա ավատական ամրոցներում ապրողները տոգորված էին կուլտուրական հակումներով: Եվ չէ կարելի, իհարկե, ասել թե միանման էր կուլտուրական աստիճանը Հայաստանի բոլոր կողմերում: Շատ տեղ ժողովրդի աշխատանքի նշանավոր մասն էր ծախսված լինում հասարակաշահ շինությունների վրա (ճանապարհներ, կամուրջներ, տաճարներ, քարավանատներ), մինչդեռ կային և այնպիսի տեղեր, ուր վայրենություն էր տիրում:

Հիշատակենք, վերջապես, նախարարական դրություն մի հատկությունն էլ: Նա պահպանում էր ժողովրդի մեջ գավառական առանձնացման, անջատման մասնիկներով ապրելու հոգեբանությունը: Եվ այս սկզբունքը միշտ խաղաղ միջոցներով չէր ժողովրդի գիտակցության մեջ մտցվում: Սահմանակցությունը ավատական տերերի համար միշտ կալվածական և այլ վեճերի առիթ էր տալիս և հարևան իշխանները հաճախ այդ վեճերը վճռում էին սրով, հարձակվելով իրար վրա: Ներքին պատերազմը միշտ էլ կործանարար էր լինում երկու կողմերի համար, բայց հաճախ ահավոր աղետի կերպարանք էլ էր ընդունում: Հայոց պատմությունը գիտե՞ դեպքեր, երբ մի նախարարական ցեղ, հաղթող հանդիսանալով, բնաջինջ է արել հակառակորդ նախարարական ամբողջ ցեղը: Նախարարների ուժեղացող, ըմբոստացող ցեղերից բնաջինջ անելու միջոցով ազատվելու բարբարոս գործին հաճախ դիմում էին և թագավորները: Եվ նախարարական ճակատագիրն է որ բազմաթիվ ցեղեր բոլորովին

<sup>1</sup> Եղիշեն, 321—328:

անհայտանում են, նրանց տեղ առաջանում են նորերը՝ դարձյալ նույն վիճակին ենթարկվելու համար:

Հասկանալի է թե որքան ծանր պիտի լինեին այդ արյունահեղ անցքերը, ներքին պատերազմները ուսման ժողովրդի համար: Իրար հարեան երկու գավառներում բնակվող, միմյանց հետ ոչ միայն դրացի այլև գուցե ազգական՝ նրանք պարտավորված էին, իրենց տերերի քմահաճույքները կատարած լինելու համար, հարձակվել իրար վրա, իրար արյուն թափել:

Այս դրույթունից է առաջացել, անշուշտ, այն պատմական խոսքը թե հայերն անմիաբան ազգ են: Սակայն այս անմիաբանությունը ամեն մի ավատական երկրի կարգերի բնական հետևանքն է:

Նախարարական և շինական դասակարգերի մեջտեղը բռնում էր մի ընկերական շերտ, որ կարելի է անվանել քաղաքային ազգաբնակչություն: Այդ այն դասակարգն էր, որի ձեռքում գտնվում էին արհեստները, առևտուրը և արդյունաբերությունը: Ի՞նչ դիրք էր նա գրավում ավատական իրավակարգի մեջ: Պատասխանել այս հարցին անկարելի է, որովհետև ոչինչ տեղեկություն չէ մնացել քաղաքների ներքին կյանքի և բնակիչների մասին: Թվում է, սակայն, թե քաղաքներն էլ շատ քիչ էին փոխում ընդհանուր դրույթունը. նախ՝ որովհետև նրանք շատ էլ բազմաթիվ չէին, և երկրորդ՝ որ նրանք ազատ քաղաքներ չէին, այլ մտնում էին նույն նախարարական կալվածների մեջ: Առևտուրի և արդյունագործության մեջ, անշուշտ, առաջնակարգ դեր էին կատարում հրեաները, որոնք համարյա բոլոր քաղաքներում ազգաբնակչության խոշոր մասն էին կազմում:

**2. Արքունիք:** Հայ նախարարությունների թիվը մի հին աղբյուր հասցնում է 900-ի, բայց այդ թիվը չափազանցություն են համարում և առաջարկում են ընդունել իբրև հավանական՝ ոմանք 400, ոմանք 220, ոմանք նույնիսկ 120: Ինչ էլ լինի, պարզն այն է, որ ամբողջ Հայաստանը ծածկված էր փոքր և մեծ նախարարությունների մի խիտ ցանցով: Այդ ցանցի մեջ, կենտրոնի, սրտի դիրքով, գտնվում էր Արքունի Տունը, այն ավատական կալվածքը, որ ամենքից բարձրն ու հեղինակավորն էր, Արաքս գետի հովտում—Արարատյան դաշտը, որ պատկանում էր հայոց թագավորին:

Իր այս կալվածի սահմաններում թագավորը նույնպիսի մի ավատական իշխող էր, ինչպես յուրաքանչյուրը հայ նախարարներից: Բայց միաժամանակ նա մի մեծ տեր էր, որին հպատակվում էին բոլոր տեղային ավատական տերերը: Այդ հպատակության պայմաններն այն էին, որ թագավորը չէր խառնվում նախարարների գործերի մեջ, իսկ ավատական տերերը նրան հարկ էին տալիս և ամեն անգամ, երբ թագավորը պահանջում էր, իրենց զորքերը դնում էին նրա տրամադրության տակ: Նախարարների կախումը թագավորից արտահայտվում էր մի շարք ձևականություններով—նախարարը, նախքան ժառանգությանը իրեն հասած իշխանության գործադիրը, պարտավոր էր երգում անել թե հավատարմությանը պիտի վերաբերվի իր տիրոջը. այդ երգումը կոչվում էր ուխտ: Իսկ թագավորը իր վասալին հաստատում էր տանտերական իրավունքների մեջ, տալով նրան իշխանության նշանները—մատանի, որ միաժամանակ և կնիք էր, դրոշ և վարսակալ (մազկապ), որ կոչվում էր պատիվ և հյուսված էր լինում երեքտակ մարգարիտներից<sup>1</sup>: Յուրա-

քանչյուր նախարարական տոհմ ուներ իր տոհմային ավանդական նշանը (գինանշան), թվում է նաև իր առանձին ձևը զգեստների մեջ, այնպես որ բազմամարդ հավաքությունների մեջ այդ նշաններով կարելի էր ճանաչել ամեն մի տոհմ: Թագավորը ինչպես շնորհում էր պարզեներ նախարարներին, այնպես էլ իրավունք ուներ նրանց պատժելու: Նա կարող էր զրկել նախարարին նրա իշխանությունից և կալվածներից: Բայց այս պատիժը անձնական հանգամանք ուներ և պատժվածի տեղ իշխանությունը հանձնվում էր մի ուրիշին միևնույն տոհմից, որ ըստ սովորության պիտի ժառանգ լիներ: Պատահում էր և այնպես, որ ամբողջ տոհմն էր թագավորին դիմադրող համարվում, այդ ժամանակ թագավորը, իհարկե ոչ իրավունքով, ուղղակի կոտորել էր տալիս, բնաջինջ էր անում ամբողջ տոհմը: Այս բարբարիկ սովորությունը գոյություն ուներ և պարթևական թագավորության մեջ, որ ժառանգել էր նրան Արևելքի մեծ բունակալություններից: Բնաջինջ դառնալու համար հարկավոր էլ չէր որ ամբողջ տոհմը հանցավոր լինի. բավական էր որ տոհմի ավագ նախարարի, տանտերի գործած հանցանքը մեծ լիներ: Հին իրավական հասկացողություն էր որ հայրերի մեղքը որդիներից էր պահանջվում մինչև յոթ պորտ:

Այսպիսով էր հայ Արշակունիների թագավորական իշխանությունն ընդհանրական, համազգային: Այս դիրքի համեմատ էլ թագավորը վայելում էր գերազույն պատիվներ և նրա արքունիքն էլ ճոխ ու փայլուն էր: Թագավորի առանձնաշնորհումն էր քնել ոսկե մահճակալի վրա: Թագավորական զգեստի գույնը սպիտակն էր: Այդ զգեստը զարդարված էր ոսկով, արծաթով, մարգարիտներով և խոր տպավորություն էր թողնում, մանավանդ իր շողշողոցներով լույսի տակ: Գլխին թագավորը դնում էր հատուկ խուլյր, որ օտարների մեջ էլ հայտնի էր հայկական խուլյր անունով և որ կարված էր բեհզլա ծանրագին կտրոններից, զարդարված ոսկի բանվածքներով և թանկագին քարերով. ականջներից կախում էր գինդեր, պարանոցը զարդարում էր մարգարիտներից և ակներից հյուսած քառամանյակով, մեջքին կապում էր ոսկեհուռ լայն քամար, ոտներին կրում էր կարմիր կոշիկներ: Իսկ վերնազգեստն էր, հանդիսավոր դեպքերի համար, ծիրանի քղամիդը: Թագավորն էր որ սեղանի վրա գործ էր ածում ոսկի գդալ, պատառաքաղ ու բաժակներ: Իր այս արտոնություններից թագավորը, իբրև արտակարգ ուշադրության և բարեհաճության նշան, պարզեում էր առանձին մեծ ժառանգություններ մատուցած նախարարներին: Այսպես, Արտաշես թագավորը Արգամ նախարարին շնորհում էր հակինթով զարդարված պսակ, այլև մի ոտին կարմիր կոշիկ, երկու ականջին գինդ կրելու, ոսկի գդալով ու պատառաքաղով ուտելու և ոսկի բաժակներից խմելու իրավունքը<sup>2</sup>: Ընծայվում էին նախարարներին նաև առանձին իշխանական խուլյրեր:

Թագավորական շուքը ժողովրդին ցույց տալու համար արքունական պալատն ուներ հրապարակ, դուռ ու ճար: Հրապարակում թագավորը երևում էր հանդեսների ժամանակ, դուռ կոչվում էր առհասարակ բարձր պաշտոնարանը, որ գետեղված էր պալատում, այդտեղ էլ թագավորը դատաստան էր անում իբրև բարձրագույն դատավոր: Իսկ տաճարը պալատական այն դահլիճներն էին, ուր հանդիսավոր օրերին խրախճանքի էր հրավիրվում երկրի ամբողջ ավատական ազնվականությունը: Մանավանդ այսպիսի դեպքերում

<sup>1</sup> Հայ արքունիքի մանրամասն նկարագրությունը տե՛ս Ղ. Ալիշան, «Այբարատ», Վենետիկ, 1890, էր. 414—433 («Դուռն Հայոց Արքունեաց»):

<sup>2</sup> Խորհեացի, Բ, խէ:

<sup>1</sup> Адонн, с. 469.

<sup>2</sup> Խորհեացի, Բ, խէ:

առանձին կենդանութիւնն էր ստանում Արտաշատ մայրաքաղաքը: Գալիս էին նախարարական գնդերը և կազմում էին տասնյակ հազարներից բաղկացած մի բանակ, որ զինվորական հանդեսներ էր կատարում: Իսկ նախարարները արքունական դահլիճներում ստանում էին ամեն մեկին հատկացրած տեղը, որ կոչվում էր գահ կամ բարձ, որովհետև յուրաքանչյուրը բարձի վրա էր կրթնում: Այդ գահերը տրվում էին նախարարներին ըստ ավագութեան տոհմի և նայած նրանց ձեռք բերած նշանակութեան: Պատվասեր և հպարտ ավատական իշխողների համար ահագին նշանակութիւն ուներ գահի կամ բարձի տեղը. ցած տանել այդ տեղը՝ նշանակում էր մահացու վիրավորանք հասցնել նրա տիրոջը: Թագավորները շատ անգամ պատժում էին նախարարներին, ցածացնելով նրանց գահերը: Բայց այս միջոցը հեշտ չէր գործադրել: Երբեմն ազգամիջեան պատերազմներ էին ծագում այս հանգամանքից: Սյունյաց Անդոկ իշխանը, ճաշի հրավիրվելով պարսից թագավորի մոտ, անպատվութիւն կրեց, քանի որ թագավորը նրան հատկացրել էր 14-րդ տեղը, մինչդեռ իրավունքով նրան պատկանում էր ավելի բարձր տեղ: Այս վիրավորանքն այնքան սաստիկ էր, որ Անդոկը չկարողացավ ձեռքը հացի դիպցնել: Իսկ հետո գնաց իր երկիրը և ուղղակի ապստամբութիւն բարձրացրեց պարսից թագավորի դեմ: Տեղերի պատճառով ծագող վեճերին ու անհամաձայնութիւններին վերջ դնելու համար կազմվում էին և թագավորի կողմից վավերացվում էին գահակրթ ցուցակներ, որոնք կոչվում էին գահնամակ:

Հայոց թագավորութեան մեջ էլ, ինչպես առհասարակ և արևելյան բնապետութիւնների մեջ, թագավորից հետո, ավելի շատ նրան հավասար նշանակութիւն ուներ արքայական հարեմը: Այդտեղ եղած բազմաթիվ կանանց թագավորը կամ հարճերի աստիճանում էր պահում, կամ նրանց մի մասին շնորհում էր իր կինը կոչվելու պատիվը: Թագավորի կանայք էլ կոչվում էին տիկիներ: Դրանց մեջ միայն մեկը, ըստ բարձր ազնվական ծագման, դառնում էր թագուհի և ստանում էր տիկնաց տիկին պատվանունը: Իսկ թագավորի աղջիկը սովորաբար կոչվում էր «օրիորդ հայոց»: Կանանցը մի ամբողջ հիմնարկութիւն էր, ուր տղամարդիկ ներքինի էին: Նրանց գլխավորը շատ բարձր և պատվավոր դիրք ուներ ամբողջ պետութեան մեջ և կոչվում էր թագավորի հայր: Հայտնի է որ Արևելքում, մանավանդ թուրք թագավորների ժամանակ, պետութեան տերը իսկապես հարեմն էր:

Արքայական ընտանիքը բազմանդամ էր: Բայց արքունիքում, թագավորի մոտ, ապրում էր միայն թագածառանգը: Մնացածներին, անշուշտ գահին աչք դնելու հնարավորութիւնից զրկելու համար, ուղարկում էին ապրելու հեռու Արքունի Տանից: Արշակունի արքայազուններին հատկացված էր Հաշտենից գավառը Հայաստանի արևմտյան սահմանների վրա. բայց հետզհետե նրանք այնքան բազմացան, որ հարկավոր եղավ հատկացնել նրանց և ամբողջ երկու գավառ Վասպուրական նահանգում, Վանի լճի մոտ—Աղիովիտ և Արբերանի: Այս Արշակունի տոհմը հետզհետե մտավ հայ նախարարական դասակարգի մեջ:

Արքունիքի և պետութեան կառավարութիւնը պահանջում էր բազմաթիվ պաշտոնյաներ: Դրանք բացառապես ազնվական դասակարգից էին նշանակվում և ունեին հատուկ հորջորջում—գործակալներ: Հայ բյուրոկրատիայի ներկայացուցիչներից մինչև 900 հոգի, ինչպես ենթադրում են, գտնվում էին միայն արքունիքում: Նախարարական մի քանի տներ ժառանգաբար վարում էին պալատական և պետական մի շարք պաշտոններ: Այսպես, պալատական

պաշտոններ էին. ներքին ապետը, որ և թագավորահայր, հատկապես Մարդպետական տոհմից էր լինում. թագադիր, որ թագավորութեան ժամանակ թագը դնում էր թագավորի գլխին, Բագրատունիների տոհմից, թիկնապետ՝ Խորխոռունիների տոհմից, զինակիր՝ Մամիկոնյան տոհմից, զգեցուցանող կամ հանդերձապետ՝ Գնթունիների տոհմից, մատակարար կամ համբարակապետ՝ Գաբելյան տոհմից, տակառապետ՝ Գնունիների տոհմից: Բացի սրանցից կային և հետևյալ պաշտոնյաները. սենեկապետ, որ և կնքապահ, կարապետ արքայի (թագավորի առջևից գնացող, սուրհանդակ), դահճապետ, որ սապետ, հավնուհիք և արժիկիք (որսորդութեան պաշտոններ), շահախոռապետ, քարտուղար, գրչուհիք, նամակուհիք: Իսկ ընդհանրապես արքունիքում ծառայողներին անվանում էին Որեար Դրան:

Պետական պաշտոնավարութեան վերաբերյալ անուններ շատ չեն մնացել: Հայտնի են միայն երեք գլխավոր պաշտոններ. երկրորդ թագավորութեան, սպարապետ, հազարապետ: Առաջինը Արևելքում անխուսափելի այն բարձր պաշտոնյան էր, որ այժմ էլ պահպանել է իր գոյութիւնը Քորթիայում մեծ վեզիր անունով: Ինչպես ցույց է տալիս և անունը, այդ պաշտոնյան երկրորդ անձն էր թագավորից հետո, հետևաբար նրան էին ենթարկվում պետութեան բոլոր գործերը: Նա ընդհանուր վերահսկիչ էր, «թագավորի աչքը», ինչպես կոչվում էր նույն պաշտոնը ուրիշ երկրներում: Այնուհետև վարչութիւնը բաժանվում էր երկու մասի՝ զինվորական և քաղաքացիական: Առաջինի գլուխն էր սպարապետը, երկրորդին՝ հազարապետը: Սպարապետութեան պաշտոնը հատուկ էր Մամիկոնյան տոհմին. նրա կարևորութիւնը բխում էր այն հանգամանքից, որ նրա մեջ կենտրոնանում էր ամբողջ հայկական բանակի բարձր հրամանատարութիւնը: Երբ վերացավ Արշակունյաց թագավորութիւնը, սպարապետութիւնն ավելի ևս կարևոր նշանակութիւն ստացավ իբրև ազգային ինքնօրինութեան ներկայացուցիչ: Իսկ հազարապետը մի տեսակ ելևմտական պաշտոնյա էր, որի ձեռքում էր և պետական հարկերի տնօրինութիւնը:

Հայկական բանակն էլ, իհարկե, մի ավատական երկրի կազմակերպութիւնն էր կրում: Նրա մի մեծ մասը պատկանում էր գլխավոր տանուտերին (թագավորին): Դա մշտական զորքն էր, որի գլխավոր պարտականութիւնն էր պաշտպանել պետութեան սահմանները: Ինչպես գիտենք, նույն այս նպատակով էլ Արտաշեսյան հարստութեան սկզբից հաստատվել էին շորս բզեշխներ, որոնք շատ կարևոր և բարձր զինվորական իշխանութիւններ էին իբրև կողմնակալներ: 63 Բացի այդ ընդհանուր պետական պաշտպանութիւնից՝ արքունի կամ ոստանիկ զորքի մի մասն էլ թագավորական պալատում էր ապրում, հատկապես թագավորի անձը պահպանելու համար (գվարդիա): Մի հատուկ գունդ այդ պալատական զորքից կոչվում էր մարդապետական և նրա պաշտոնն էր պահպանել թագուհուն առհասարակ կանանցը և արքունի գանձը: Արքունի զորքի թիվը համարվում էր 40 հազար:

Պատերազմի դեպքում մշտական զորքի վրա ավելանում էին նախարարական գնդերը, որոնք երկրի բոլոր կողմերից, իրենց նախարարների առաջնորդութեամբ, շտապում էին կենտրոնանալ նախօրոք որոշված տեղերում, որոշ խմբերի մեջ: Մի հին ցուցակ, որի վավերականութիւնը, սակայն, դուրս

1 Հովհ. եպ. Շահխաբույան, «Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացի Արարատայ», 2. Բ, էջմիածին, 1842, եր. 58—59:

չէ կասկածներից, ցույց է տալիս որ բոլոր խմբերի թիվը 86 էր և նրանք բաժանված էին շորս մեծ հրամանատարութիւնների՝ արևելյան, արևմտյան, հյուսիսային և հարավային: Յուրաքանչյուր նախարարութիւն առանձին խումբ չէր կազմում. կային այնպիսի խմբեր, որոնք մի քանի նախարարութիւններից էին կազմվում: Յուրաքանչյուր նախարարութիւն զուրս հանած զինվորների թիվը կախված էր այն հողաբաժիններից, որ նրանք տալիս էին մշակելու այն պայմանով, որ փոխարենը հողաբաժնի մշակողը պատերազմի ժամանակ տա որոշ քանակութեամբ զինվոր, զինավորապես ձիավոր: Վերոհիշյալ ցուցակից երևում է որ ամենամեծ քանակութեամբ զինվոր տալիս էր Սյունիքի նախարարական խումբը՝ 19400. դրան հետևում էր Կարմեացի խումբը՝ 13200, ապա գալիս էր Գուգարքի բոքշխը՝ 4500, Աղձնիքի բոքշխը՝ 4000: Մյուս խմբերը այս քանակութիւնից պակաս էին: Շատ էին այն խմբերը, որոնք տալիս էին 500, 300, 100 մինչև իսկ 50 զինվոր: Ամբողջ հայոց բանակի թիվը հասնում էր 120 հազարի:

Իր ռազմական հատկութիւններով շատ լավ անուն էր ստացել մանավանդ հայկական հեծելազորքը. նույնիսկ թագավորութեան վերանալուց հետո էլ նա առաջնակարգ տեղ էր գրավում պարսից բանակի մեջ: Եվ այսպիսի կովոդները, անկասկած, լավ յուրացնում էին ժամանակի պատերազմական արվեստը: Զորքը բաժանվում էր գնդերի և վաշտերի, որոնք ունեին իրենց գրոշներն ու նշանները, հավանորեն իրենց հրամանատար նախարարների զինանշանները. այսպես, հիշատակվում են արծաթի նշաններ, աղեղի նշաններ: Արշավանքների ժամանակ բանակն ուներ իր առաջապահ, վերջապահ և կողմնապահ մասերը: Ընտրելով մի տեղ պատերազմի համար կամ դիրք բռնելով թշնամու դիմաց, բանակը նախ իր պաշտպանութեան համար կամ խրամատ էր փորում, կամ շինում էր դակիշ (կոշվում է և լակիշ), այն է՝ պատնեշ, շրջափակ: Կովից առաջ սկսվում էր ճակատ հարդարելը: Հրամանատարը դասավորում էր իր զորքերը, բաժանելով նրանց երեք մասի՝ աջ թև, ձախ թև և միջին թև (կամ կենտրոն): Պատերազմը սկսվում էր փողեր հնչեցնելով: Թշնամու հարձակումների դեմ պաշտպանելու համար կամ երբ անհաջողութեան հանդիպած զորքը պիտի հավաքվեր և նորից վերակազմեր իր շարքերը, կազմվում էր վահանափակ, այսինքն շորս կողմից կանգնում էին վահաններով զինված շարքեր, որոնք բերդի պարիսպների նման պաշտպանում էին իրենց մեջ առած բանակը: Ինչպես երևում է, հայերն էլ պարթևների նման պաշարողական պատերազմի ընդունակութիւն չունեին. գոնե հիշատակութիւն չկա որ հայոց զորքերն էլ գործ էին ածում պաշարված բերդի պարիսպները քանդելու համար անհրաժեշտ մեքենաներ: Որպեսզի բանակը հեշտ հնարավորութիւն ունենար հաղորդակցութիւն պահպանելու համար իր թիկունքի հետ, շինվում էին խաններ, մի տեսակ իջևաններ, ուր պատրաստ ձիաներ էին պահվում զինվորական իշխանութեան պետքերի համար:

Զորքերի մեջ հրամանատարութեան աստիճաններ էին՝ հազարապետ, հարյուրապետ: Զենքերն էին՝ վահան, սուր, թուր, նիզակ, աղեղ ու նետ, շերտ, աշտե, դաշույն, պարս: Հեծելազորքը գործ էր ածում զրահ, որ ծածկում էր ամբողջ մարմինը և սաղավարտ՝ պղնձից կամ երկաթից, գլուխը պաշտպանելու համար:

Արքունական զորքերի զինավոր բանակատեղին էր Շահապիվանը, Ար-

<sup>1</sup> Ինճիկյան, «Հնախօսութիւն», հ. Բ, գլ. ԺԳ:

անիի ակունքների վրա, ուր տեղի էին ունենում նավասարդի համազգային մեծ տոները՝ նույն այդ զորքերի մասնակցութեամբ:

**3. Կրոն:** Պետական կյանքի զարգացման հետ Հայաստանում զուգընթացաբար առաջացավ և կրոնական կազմակերպութեան զարգացումը: Նախկին շրջանի հետ համեմատած պաշտամունքը բարդ և ընդարձակ մի սիստեմ էր դարձել իր նվիրապետական աստիճաններով, աստվածաբանական տեսութիւններով, աստվածների բազմութեամբ, քրմական կոչման բազմատարրութեամբ: Երկիրը Արտաշեսյան օրերից ստեղծագործական ուժեղ աշխատանք էր կատարել իր մտավոր-կուլտուրական առանձնահատկութիւնները մշակելու համար:

Այդ աշխատանքն արդյունավորվել էր, ինչպես և նախընթաց շրջանում, փոխառութիւնների և նմանութիւնների միջոցով: Եվ ինչպես միշտ, ազդեցութեան ամենամեծ և ամենահզոր մասը գալիս էր Իրանից: Այնքան շատ է իրանի մտքործը հայ կյանքի մեջ, որ առաջին անգամից թվում է թե կատարյալ և անվերապահ իրանացում էր տեղի ունենում Հայաստանի մեջ: Սակայն այս արտաքին երևութիւնը ծածկում է բուն իրականութիւնը, որ ցույց է տալիս, թե ընդհակառակն, այս հզոր ազդեցութեան տակ էլ հայերը պահպանում էին իրենց ազգային ինքնուրույնութիւնը: Այս շատ նշանավոր հանգամանքը միանգամայն պարզված կլինի, եթե մենք վերցնենք նախ պարսից կրոնական սիստեմը և ապա տեսնենք, թե ի՞նչ կերպարանք ստացավ այդ սիստեմը Հայաստանում:

**Ա. Կրոնաշխարհայինութիւն:** Պարսկական կրոնը կոչվում է մազդեզականութիւն, որովհետև նրա աստուծու անունն էր Ահուրա-Մազդա: Նա ամբողջապես պարսկական ստեղծագործութիւնն էր: Նրա մեջ կային հին պաշտամունքի սկզբունքներ, որոնք սեփական էին արիական ազգերին դեռ այժմ շատ հին ժամանակները, երբ միասին մի ընդհանուր հայրենիքում էին ապրում: Սրա ամենամեծ ապացույցն այն է, որ Հնդկաստանի արիացիների կրոնը, որ նրանց սուրբ գրքի անունով կոչվում է վեդայական, մազդեզականութեան հետ նմանութիւններ շատ ունի, այնպես որ երկու կրոնները համարվում են մի աղբյուրից առաջացած: Այսպես, երկու կրոններին էլ հատուկ էր երկնային լույսի և առատութեան աստվածը՝ Միհր անունով:

Սակայն թե վեդայականութիւնը և թե մազդեզականութիւնը, ինչպես և առհասարակ ամեն մի կրոն, ժամանակի ընթացքում, հասարակական զարգացման պահանջմամբ ենթարկվեցին բարեփոխութիւնների: Հիմնավոր և ընդարձակ բարեփոխութեան մազդեզականութիւնը ենթարկվեց, ինչպես կարծվում է ենթադրաբար, VII դարում Ք. ա. և այդ բարեփոխութեան հեղի-

<sup>1</sup> Աղբյուրներ՝ a) Avesta, Livre sacré du—Zoroastrisme, traduit du texte Zend par C. de Harlez, Paris, 1881. b) Viktor Henri, Le Parsisme, Paris, 1905. c) L. Chachoin. „Zes Religions“, Alger, 1910. d) Nathan Söderblom, „Les Fravashis“, Paris, 1899. e) A. Gasquet, „Essai sur le Culte et les Mysteres de Mithra“, Paris, 1899.

f) «Միթրայի փառա Փորթուգալ», «Նիշի վարդապետի վասն վարդանա և հայոց պատերազմի», Վենետիկ, 1903. g) Проф. А. Погodyn, «Религия Зороастра». СПб. 1903. h) Барп, «Великие Религия Востока», М., 1898. i) G. Maspero, „Histoire Ancienne des Peuples de l'Orient Classique“, t. III, Paris, 1899. j) Monde Ancien, Civilisation Oriental, „Poésies Lirique“, Paris, 1870. k) François Lenormant et Ernest Babelon, „Histoire Ancienne de l'Orient“, t. V, Paris, 1887. l) D. Menant, „Les Parsis, Histoire des communautés Zoroastriennes de l'Inde“, Paris, 1898.

m) 3. Рагозина, «История Мидии», Пет., 1903.

նակ ցուցադրվում է Զրադաշտ անունով մի իմաստուն մարդ, որ, սակայն, ոմանց կողմից համարվում է գոյություն չունեցած, մտացածին: Այս անունից էլ բարեփոխված մազդեզականությունն ստացել է երկրորդ, ավելի գործածական անուն—գրադաշտականություն, որի սուրբ գիրքը կոչվում է Զենդ-Ավեստա:

Զրադաշտական կրոնի կամ դենի կենտրոնը կազմում է Ահուրա-Մազդա (իմաստուն տեր) աստվածը, որին տրված հատկությունները ցույց են տալիս թե նա մի հատ աստված է և նրա հավասար ոչ ոք չկա: Ամենակարող է նա, ամենասուրբ, ստեղծող, անսկիզբ և անվախճան: Երկինքը նրա զգեստ է, զարդարված աստղերով, արեգակը նրա աչքն է: Սակայն այդ միաստվածյան անսահման կարողության հետ միասին Ահուրա-Մազդան ներկայացնում է մի ծայր այն երկվության մեջ, որ զրադաշտականության մի ուրիշ գլխավոր երևույթն է: Աշխարհի վրա, ասում է պարսկական վարդապետությունը, հանապազ, անդրադրում, հավիտենապես տեղի ունի մրցություն բարիի և շարի մեջ: Բարի սկզբունքի աղբյուրը Ահուրա-Մազդան է, շար սկզբունքինը՝ Ահրիմանը:

Նախքան աշխարհի ստեղծագործությունը, «իսկզբանե», ինչպես անվանում են այդ անհիշելի ժամանակները և հրեական ավանդությունները, գոյություն ունեին հավիտենական լույսը և հավիտենական խավարը: Հավիտենական լույսի տերն էր Ահուրա-Մազդան, հավիտենական խավարի տերը՝ Ահրիմանը: Ահուրա-Մազդան ստեղծեց աշխարհը իր խոսքով և վերջացրեց արդ գործը վեց շրջանում. նրա բոլոր ստեղծածները բարի էին: Նա ստեղծեց հողը, ջուրը, կրակը, մարդուն, բոլոր բարի և օգտակար արարածներին: Լույս, ջրմուխյուն, կյանք, առատություն, երջանկություն—որոնք Ահուրա-Մազդայի գործերն են: Աշխարհը նա կառավարում է իր ձեռքով ստեղծած բարի ոգիների, հրեշտակների միջոցով, որոնք երեք տեսակի են. 1. «Ամաշա-Սպանտա»-ներ (անմահ սուրբեր), որոնք վեց հատ են և նրանց դասակից է և ինքը Ահուրա-Մազդան: Սրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է այն աստվածային հատկությունները, որ ամփոփում է իր մեջ Ահուրա-Մազդան: 2. «Ձագատա»-ներ, երկրորդական կարգի ոգիներ, որոնք ավելի բազմաթիվ են: Ճրված երկնքում, օդում, երկրի վրա՝ բարի գործեր առաջացնելու և երկիրը պտղաբերելու համար: Դրանցից Զենդ-Ավեստայի մեջ հականե հանվանե հիշատակված են երեսունը: 3. «Ֆրա:վաշի»-ներ, որոնք արդեն անհուն բազմություն են կազմում, ամբողջ բանական: Դրանք պահապան հրեշտակներ են, որոնք լավություն են անում: Բոլոր մեռածների հոգիները ֆրավաշի էին դառնում: Հետո այս բանի վրա ավելացվեց և այն, որ յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր իր, նույնիսկ դեռ չծնված յուրաքանչյուր արարած ունի իր երկրորդը, որ ոգիացած է և ֆրավաշիների բազմության մեջ է գտնվում:

Տեսավ Ահրիմանը Ահուրա-Մազդայի ստեղծած աշխարհը և ինքն էլ սկսեց գործել: Նա աստված չէ, ոգի է միայն, բայց այն տարբերությամբ, որ անկախ գոյություն ունի, նույնպես հավիտենական, անսկիզբ և անվերջ, նույնպես ստեղծելու կարողությամբ օժտված: Եվ նա ստեղծեց ամեն ինչ, որ վատ է—մահ, հիվանդություն, ցուրտ, բոլոր անմաքուր, վնասակար արարածներին: Նա էլ ստեղծած ունեի իր օգնական ոգիները՝ դարձյալ նույն կարգով. առաջին կարգին պատկանում էին վեց գլխավոր ոգիներ, ապա գալիս էին մյուս դասակարգերը, որոնք բաղկացած էին դեռից և տանջանքներ էին տարածում աշխարհի մեջ: Ահրիմանը թշնամի է Ահուրա-Մազդային, հետևաբար և նրա

ստեղծած մարդուն: Ահուրա-Մազդան մարտնչում է նրա դեմ: Մարդը այդ կովի մեջ պիտի Ահուրա-Մազդայի կողմը լիներ, նրա կոնվը մղեր շար ոգու քնն: Ահա այդ կովի կանոնները սովորեցնում էր կրոնը՝ առաջնորդ և զինակից հանդիսանալով նրա համար:

Բարի և շար սկզբունքների մրցությունն անհուսալի չէր, ոչ էլ հավիտենական: Ահուրա-Մազդային երկրպագողը պիտի հավատար որ երկարատև է լինելու այդ կովի, բայց վերջ է վերջո հաղթությունը լուսինն է լինելու ընդդեմ խավարի և պիտի գա մի ժամանակ, երբ աշխարհի վրա կվերջանա Ահրիմանի թագավորությունը և մարդիկ պիտի կատարյալ երջանկություն և անմահություն վայելեն հավիտենապես: Այսպիսով շարի սկզբունքը, լինելով հավիտենականությունից առաջացած մի տիեզերական կարգ, անվերջ ու հավիտենական չպիտի լինի՝ այս հատկությունները միայն բարի սկզբունքին էին պատկանում: Եվ ցանկալի վախճանը, այսինքն խավարի թագավորության կործանումը փութացնելու համար մարդը պիտի զինվեր Ահուրա-Մազդայի ունորինած բոլոր միջոցներով՝ նրա պատերազմը լավ պատերազմելու համար:

Կովի այդ միջոցները մարդուն բարձրացնող իդեալներն էին—մաքրություն, սրբություն, աշխարհաշինություն: Ավեստական կրոնը գերազանցորեն կուլտուրական մարդու կրոնն էր, ընտանիքի, բազմամարդության, առատության, մշակման կրոնը: Երեք կարևոր կարգ է նա նկատում հասարակություն մեջ—քահանա, զինվոր, երկրագործ: Բայց սրանց մեջ էլ ամենակարևորն էր և ամենաբարձրը վերջինն է: Ահա ինչ էր ասում Ահուրա-Մազդան իր մեծ բը և ամենաբարձրը վերջինն է: Ահա ինչ էր ասում Ահուրա-Մազդան իր մեծ մարգարե Զրադաշտին. «Սուրբ է այն մարդը, որ հողի վրա բնակարան է շինել և այդ բնակարանում պահում է կրակը, անասուններ, իր կնոջը, իր երեխաները և լավ հոտեր: Ով հողին աճեցնել է տալիս ցորեն, ով մշակում է խանրին և լավ հոտեր: Ով հողին աճեցնել է տալիս ցորեն, ով մշակում է դաշտերի պտուղները, նա մշակում է մաքրությունը»: Այս շինարարական սկզբունքները Զենդ-Ավեստայի մեջ մեծարվում են այլևայլ ձևերի տակ: Երկրագործը համարվում է բարիքների աղբյուր, և այն ժամանակ, երբ Ահուրա-Մազդան պակասեցնում է երկրագործ մշակների թիվը, աշխարհը լցվում է դեերով:

Զրադաշտականությունն էլ, ինչպես և ամեն մի ուրիշ կրոն, աշխատում էր կարգավորել հավատացյալների կյանքը, մշակելով բարոյական օրենքներ, սահմանելով ամեն մեկի իրավունքներն ու պարտավորությունները: Ահուրա-Մազդային երկրպագող ամեն մի իրանցու առաջին և գլխավոր պարտականությունն էր լինել ջերմեռանդ հավատացյալ, կատարել բոլոր պատվիրան-ները, ծեսերը, պաշտամունքները: Այս բոլորի փոխարեն հավատացյալը Ահուրա-Մազդայից պիտի վարձատրվի թե՛ այս աշխարհում և թե՛ մանավանդ դրա-Մազդայից պիտի վարձատրվի թե՛ այս աշխարհի բարիքները թե՛ շուտ են մոհանդերձյալ աշխարհում: Բայց այս աշխարհի բարիքները թե՛ շուտ են մոհանցվում և թե՛ առհասարակ այնքան մեծ նշանակություն չունեն ապրող մարդու համար: Ուստի իրանական կրոնն էլ, ուրիշների նման, ամենալայն շափելու համար: Ուստի իրանական կրոնն էլ, ուրիշների նման, ամենալայն շափելու համար: Ուստի իրանական կրոնն էլ, ուրիշների նման, ամենալայն շափելու համար: Ուստի իրանական կրոնն էլ, ուրիշների նման, ամենալայն շափելու համար:

Հիվանդությունը, իբրև վատ բան, դժբախտություն, Ահրիմանի գործն էր համարվում: Հիվանդացած մարդու մեջ արդեն բնակություն էր հաստատում շար ոգին, ուստի հիվանդին առանձնացնում էին, հեռու պահում բոլոր սուրբ առարկաներից, օրինակ ջրից ու կրակից, առողջ մարդկանցից, որպեսզի նրանք



չաղծվեն, չվարակվեն: Նրան սովորական անկողին չէին տալիս, այլ ծածկում էին հասարակ կոշտ կտորներով: Ուտելիք ու ըմպելիք հիվանդին տալիս էին հեռավոր, կախելով ամանները երկար ձողերի ծայրից: Բժշկութեան ամենաուժեղ միջոցն այն էր, որ մազդեզական քահանան աղոթքներ ու սուրբ գրքից հատվածներ էր կարդում հիվանդի վրա: Բայց կային և դեղերով ու վիրահատութեամբ բժշկութուն անողներ ևս:

Երբ հիվանդը մեռնում էր, նրա հոգին, որ մազդեզականի պես բոլոր կրոնների մեջ ընդունված է իբրև անմահ, իսկույն չէր հեռանում մարմնից, այլ երեք օր ու երեք գիշեր մնում էր դիակի գլխավերևը: Իսկ դիակը, հոգին բաժանվելու ընդմիջ արդեն միմիայն պղծութուն էր, որից պետք էր զգուշանալ ամեն կերպ: Նրա մեջ, սև ճանճի կերպարանք առած, մտնում էր նա սուղեր, որ դիակների մեջ էր ապրում և շարագուցն էր բոլոր դեերից: Նրան հալածելու համար մեռածի դիմաց շուն էին կանգնեցնում, որ երկրագործ և անանապահ արիացու տնտեսության մեջ կատարած իր մեծ ծառայությունների համար սրբազան կենդանի էր համարվում՝ մարդու հետ գրեթե հավասար պատիվներով: Նասու դեր միայն շան հայացքից էր փախչում:

Պաշտպանվելով դիակից, պետք էր պաշտպանություն ցույց տալ նրա հոգուն, որ 3 օր ու գիշերվա ընթացքում, քանի գտնվում էր դիակի մոտ, թույլ էր, անպաշտպան, մերկ: Ընտանիքը այդ երեք օրերում պիտի աղոթքներ ու զոհաբերություններ կատարեր, իհարկե, քահանաների ղեկավարությամբ: Ավեստական օրենքով օր ու գիշերը բաժանվում էին հինգ մասերի, որոնք կոչվում էին դահ (հայերեն պահ) և յուրաքանչյուր մասի համար սահմանված էին աղոթքներ: Երրորդ օրվա երեկոյան հավաքվում էին քահանաները, մեռելի ազգականներն ու բարեկամները: Այդ ժողովում հայտնվում էր թե՛ ի՛նչ կտակ է արել մեռածը կամ ի՛նչ բարեգործական կարգադրություններ են անում ազգականները մեռածի հոգու համար: Սահմանված էր որ մեռածի զգեստները տրվում էին կամ քահանային կամ աղքատներին:

Զորորդ օրվա արշալույսին սկսվում էր հոգու համար ամենածանր քուպեն: Նա հեռանում էր դիակից, բռնում էր այն դժվար, ցավալի ճանապարհը, որ տանում էր նրան մյուս աշխարհը: Սակայն անորոշ չէր հեռացողի ճակատագիրը: Արդեն մարմնից բաժանվելու վայրկյանից հայտնի էր թե՛ ո՛վ ինչպե՛ս պիտի լինի: Արդար հոգին, նա, որ ճշմարիտ և ուղղահավատ մազդեզական է եղել, զվարթ և ուրախ է, ճաշակում է միանգամից այնքան քաղցրություն, որքան չէր ճաշակել իր ամբողջ կյանքի մեջ: Նա իրեն զգում է մի գեղեցիկ պարտեզի մեջ և հարավի անուշաբույր քամին է շոյում նրա հոտտելիքը: Բոլորովին դրա հակառակն է մեղավոր կամ զրադաշտական դեմին չպատկանող հոգու դրությունը: Տխուր ու հուսահատ է նա, զգում է իրեն մի անապատի մեջ ու հյուսիսային խեղդող քամին է նրան խփում:

Հանդերձյալ աշխարհը մտնելու համար պետք էր անցնել Սինվատ անունով կամուրջը: Այդտեղ բարի և շար հոգիները կոչվում են իրար հետ թե՛ ո՛ւմ է պատկանում անցնող հոգին: Արդար հոգուն կամուրջի սկզբում դիմավորում է նրա խիղճը հրաշագեղ կույսի կերպարանքով, որին ընկերակցում են երկու շներ: Նա տանում է հոգին կամուրջի վրայով: Իսկ անարդար հոգուն դիմավորողը մի դաժան վճուղ է լինում: Անցնելով կամուրջը, հոգիները ենթարկվում են բարի ոգիների դատաստանին. արդարները մտնում են դրախտի մեջ, ուր ներկա է, խոսում է նրանց հետ ինքը Ահուրա-Մազդան: Մեղավորները և անհավատներն ընկնում են դժոխք:

Իսկ մեռածի մարմնի վերաբերմամբ զրադաշտականությունը մի բոլորովին ինքնուրույն կարգ է սահմանել: Ուրիշ կրոններ կա՛մ թաղում էին մեռելներին հողի մեջ կա՛մ այրում էին: Բայց մազդեզական օրենքի տեսակետից սուրբ էին թե՛ հողը և թե՛ կրակը և դիակի պես մի պղծությամբ կրանց կեղտոտելը մի աներևակայելի ծանր հանցանք էր: Ուստի Ահուրա Մազդան կարգադրել էր— ո՛չ թաղել և ո՛չ այրել մեռած մարմինը, այլ նրա միջոցով ստեղծել գազաններին ու թռչուններին: Այս գործը հարմար կերպով կատարել տալու համար սահմանված էր գերեզմանոցի մի ինքնուրույն տեսակ, որ կոչվում էր դահալա կամ «լուսնյան աշտարակ»: Դա մի բարձր կիր աշտարակ էր, որ շինվում էր մարդկային բնակությունից ու ջրից բավականաչափ հեռու: Նրա մեջտեղը փոս էր— որի պատերն ու հատակը քարով կամ աղյուսով էին ծածկված: Փոսի շուրջը տեղեր էին շինված տղամարդկանց, կանանց և երեխաների համար առանձին-առանձին: Այդ տեղերում էլ դրվում էին դիակները: Գիշատիչ թռչունները հարյուրներով հարձակվում էին դիակի վրա և մի ժամից ոչ ավել միջոցում քրքրում ուտում էին ամբողջ միսը: Որպեսզի նրանք մարմնի մասերը չկտրեն շտանեն հողի վրա կամ ջրի մեջ գցելու, դիակի ոտներն ու մազերը կապվում էին քարերին: Այսպիսով աշտարակի վրա մնում էին միայն կմախքները: Նրանց զգում էին ընդհանուր մեծ փոսի մեջ, ուր և ստացվում էր մարդկանց կատարյալ հավասարություն, մի բան, որ կարելի չէր լինում իրագործել կենդանի մարդկանց մեջ:

Այսքանով չէր սահմանափակվում զրադաշտականության նվիրագործած մեռելապաշտությունը: Ամեն տարի մեռելների հատուկ պաշտամունք էր կատարվում, որ տևում էր տասն օր: Դա անշարժ տոնակատարում էր պարսկական տարվա վերջին տասն օրերն էին միշտ հատկացված նրան (մարտի 10—20): Կոչվում էր և ֆրավաշների տոն: Ֆրավաշները, ինչպես դիտներ, մեռած արդարների հոգիներն էին, որոնք լավություններ էին անում մարդկանց, իսկ սրանք դրա փոխարեն զոհեր էին մատուցանում նրանց: Այս համազգային ընդհանուր տոնախմբությունն էլ, ուրեմն, ներկայացնում էր նույն նախնիքների պաշտամունքը, որ հատուկ էր արիական ազգերին և որ, ինչպես տեսանք, գոյություն ունեւր և հայերի մեջ:

Զրադաշտականությունը, իբրև կրոն, իհարկե, չէր կարող ապրել առանց պաշտամունքների, տաճարների, քահանայության, արարողությունների: Այս կողմից էլ նրա մեջ մենք տեսնում ենք նախնական հողագործ ժողովրդին հատուկ պարզությունը: Ամենազխալվոր պաշտամունքը մատուցվում էր կրակին: Այնքան տարածված, այնքան ժողովրդական էր այս պաշտամունքը, որ «զրադաշտական» կամ «մազդեզական» անունները հաճախ փոխարինվում էին «կրակապաշտ» անունով: Կրակի մեջ էր մազդեզական հավատացյալը տեսնում իր մեծ և բարերար Ահուրա-Մազդայի կերպարանավորումը և այն հզոր սկզբունքը, որ կյանք է բաշխում աշխարհին, հալածում է խավարը և պաշտպանում է մարդուն շար դեերից: Նրան երկրպագելու համար շինվում էին հատուկ տաճարներ, որոնք կոչվում էին աթեշ-գյահ (ըստ մեր հին մատենագիրների ատրոպեշան): Դրանք կամ բացօթյա բարձր աշտարակաձև սեղաններ էին կամ կտուրով ծածկված շինություններ, որոնց մեջ դրված էին կրակի սեղաններ և շինված էին զոհաբերության տեղեր: Հարավ-արևմտյան Պարսկաստանում, Բաբելոնի սահմաններին մոտ, աթեշ-գյահները ունեին բարեխա-աստրական տաճարների ձևը—

բարձր քառակուսի աշտարակներ, որոնց շուրջը պատում էին աստիճանաբար բարձրացող սանդուղքներ<sup>1</sup>: Մածկված շինությունների մեջ հաստատված սեղանները մեծ մետաղյա անոթներ էին, լցված մոխրով: Մոխրի կույտի վրա այրում էին անուշահոտ յուղերի օգնությամբ շոր փոքրիկ ճիպոտներ, որոնք կապված էին փունջ-փունջ և պահվում էին հատկապես շինված եռոտանիների վրա: Այդ կապոցներն անվանվում էին «բարսումա»: Երկու կամ երեք բուրմ ծառայում էին այդ սեղանին օր ու գիշեր, հսկում էին որ կրակը մշտավառ լինի, շարունակ կերակուր ստանալով բարսումաները:

Ժողովուրդը կանգնում էր տաճարի մեջ իր համար նշանակված տեղերը: Քուրմները, ամբողջովին սպիտակ հագած, պաշտոն էին մատուցանում կրակին, աղոթքներ ու օրհներգներ կարդալով և որոշված ծեսեր կատարելով: Մազդեզական օրենքը պիղծ էր համարում այն ամենը, ինչ դուրս է գալիս կամ կտրվում է մարդու մարմնից (բացառություն էր միայն շունը): Այսպես մազդերն ու եղունգները պետք էր ծածկել մի որևէ խոռոչի մեջ: Որովհետև թուքն էլ անմաքուր բան էր, ուստի կրակին պաշտոն մատուցանողը կապում էր իր բերանին մի հատուկ կապոց, որպեսզի կարողալիս կամ երգելիս բերանի թուքը չընկնի կրակի վրա և չպղծի նրան: Այս կապոցը կոչվում էր փանդամ:

Կրակի առջև պաշտոն մատուցվում էր և հոմա անունով բուշսին, որից ստացվում էր սրբազան նշանակություն ունեցող մի արքեպիսկոպոստ: Այդ հեղուկը խմում էին, ձոնելով կրակին: Հոման համարվում էր առողջություն, իմաստություն, քաջություն, ուժ պարգևող:

Այսպես էր, ընդհանուր գծերով, այն կրոնական սիստեմը, որի մեջ իր աշխարհայացքներն ու ակնկալություններն էր դրել իրանական ցեղը: Ամենացայտուն կերպով նա այդտեղ ցուցահանում էր երկրագործի իդեալները: Նա մեծարում էր բնության բոլոր ստեղծագործող ուժերը, որոնք կարող էին նպաստել նրա խաղաղ աշխատանքին ապահովել այդ աշխատանքի անվտանգությունը: Նա սրբացնում էր իր օգնական կենդանիներին անգամ: Շան սրբացումը մենք տեսանք արդեն: Սուրբ էր համարվում և աքաղաղը: Չէ՞ որ նա է պիղծել այն մթնոլորտի մեջ ցույց տալիս երկրագործ մշակին զարթնելու ժամը՝ «Նա է, — ասում է Ավեստան, — որ բարձրացնում է իր ձայնը ամեն աստվածային արշալույսին և կանչում է. վե՛ր կացեք, մարդիկ, փառաբանեցե՛ք ամենագեղեցիկ մաքրությունը, հալածեցե՛ք դևերին»...

Երկրագործի աջ բազուկն է եզը, և ահա նա էլ սուրբ կենդանիների թվում է: Եզան մեզը (գոմեզ) կեղտերից և մեղքերից մաքրում էր մարդուն լվացումների միջոցով:

Բայց երկրագործների և խաշնարածների կրոնը ժամանակի ընթացքում դառնում է աշխարհակալ, նվաճող ժողովրդի կրոն: Իր Ավեստայով անչափ ինքնուրույն իրանը Բաբելոնի, Ասորեստանի տերն է դառնում, մոտենում է հունական աշխարհին: Եվ զրադաշտականությունը ենթարկվում է այդ քաղաքակիրթ երկրների ազդեցության, որոնց կրոնական հավատալիքները, պաշտամունքներն ու գաղափարները խուժում են զրադաշտականության մեջ և բավական զգալի չափով կերպարանափոխում են նրան: Ավեստական միաստվածությունը դառնում է բազմաստվածություն: Ահուրա-Մազդայի նման աստվածներ են դառնում Միհրն ու Անահիտը, որոնք, ինչպես տեսանք, յազատների, երկրորդական ոգիների շարքումն էին: Միհրը, իբրև աստվածություն,

նույնիսկ ետ է թողնում Ահուրա-Մազդային և դուրս գալով պարսկական շրջանակից, դառնում է միջազգային աստվածություն: Նրա պաշտամունքը առարժված էր ամբողջ Փոքր Ասիայում, անցավ նույնիսկ Հռոմ և այդտեղ էլ շատ տարածված ու ժողովրդական էր: Անահիտի պաշտամունքն էլ, ինչպես կտեսնենք, բարձրագույն աստիճանի հասավ Հայաստանում: Հունական ազդեցությունն էլ մտցրեց աստվածների արձաններ: Այսպիսի շքեղության մասին մտածել անգամ չէր կարող երկրագործության և անասնապահության առաջալ Ջրադաշտը: Միայն Աքեմենյան թագավորների ժամանակ, երբ Իրանը մեծ պետություն դարձավ, Ահուրա-Մազդան հարկավոր եղավ շահնշահերի արձանագործությունների և քանդակների մեջ իբրև նրանց հովանավորող: Այդտեղ Ահուրա-Մազդան ներկայանում է պարզապես պարսիկ թագավորի կերպարանքով, դրված արեգակի թևավորված սկավառակի մեջ, որ վերցված էր Եգիպտական պաշտամունքից: Աքեմենյան հարստության վերջին շրջանում էր որ իրանական աստվածների արձանները երևան եկան:

Այս փոփոխությունների հետ զարգանում է և քրմությունը Իրանում: Նա ստանում է ուժեղ կազմակերպություն, ձեռք է բերում մեծ իշխանություն: Ինչպես սովորաբար լինում է, կրոնը այս դասակարգի այնչափ ուժեղացման ազդեցության տակ դառնում է ձևապաշտություն և ծիսապաշտություն: Ջրադաշտը հավատացյալի մարմնի մաքրության համար սահմանադրել էր լվացումներ: Ուժեղացած քրմությունը այդ լվացումները և նրանց հետ կապված ծեսերը բազմացրեց, այնպես որ հավատացյալը կաշկանդված էր ծեսերով ու ձևականություններով: Փոփոխության ենթարկվեց նույնիսկ ավեստական երկվությունը: Ահուրա-Մազդան, որ դարձավ Որմիդդ և Ահրիմանը, որի անունը ստացավ Արհմն ձևը, այլևս տարբեր էություններ չէին ներկայացնում. առաջ բերվեց մի բարձր էակ, Ջրվան անունով, որից ծագում էին անուն բարիի և չարի սկզբունքները ներկայացնող այդ երկու ախոյանները: Հնդունեցիկ նույնիսկ մեռելների հարությունը և վերջին դատաստանը: Միասպաշտությունը ոչ միայն ընդարձակվեց, այլև ավելի հանդիսավոր ու շքեղ կերպարանք ստացավ:

Սակայն պարսկական քրմության ուժը միայն այս ծիսական-դավանական նորությունների մեջ չէր ամփոփված: Քաղդեայում և Եգիպտոսում քրմությունն իր ձեռքում էր պահում, իբրև մենաշնորհ, ժամանակի ուղիղ և սուտ գիտությունը: Իրանի քրմությունը ժառանգեց իր արևմտյան դաշնակիցներից ոչ թե դրական, ուղիղ գիտությունը, այլ սուտը, այն, որ մեր հին գրականության մեջ կոչվում էր քավդեոթյուն — կախարհության, բժժանքների, գուշակությունների, դիվահալաժության, աստղագիտության արվեստը. որ կարողություն էր տալիս քրմական դասակարգին իր ձեռքերի մեջ պահել նույնիսկ Արևելքի մեծամեծ բռնակալներին: Այս արվեստը Քաղդեայում և Եգիպտոսում, ինչպես գիտենք, կոչվում էր մոգություն: Իրանական քրմությունը միանգամայն տիրացավ այս անվան: Եվ նրա ներկայացրած զրադաշտականությունն սկսեց կոչվել նաև մոգերի կրոն:

**Բ. Հայ Ռեթանություն:** Դարերի ընթացքում հայերը փոխառություններ անում էին, այն էլ խոշոր շափերով, պարսկական ահա այս զրադաշտականությունից: Թեև մենք գրավոր հավաստի աղբյուրներ չունենք, որպեսզի կարողանանք այդ փոխառությունների սահմանները ճշգրտել, բայց հենվելով մեր ժողովրդական սովորությունների և հավատալիք-

<sup>1</sup> Marcel Dieulafoy, „L'Art Antique de la Perse“, Paris, 1885, t. IV, pl. XX.  
376

ների վրա, կարող ենք ամենայն հավանականութեամբ ընդունել որ զբաղա-  
տական շատ սկզբունքներ և արարողութիւններ հատուկ են եղել և հայ ժո-  
ղովրդին: Իսկ մեզ հասած գրավոր աղբյուրները, թեև դարձյալ շատ աղքա-  
տիկ, հավաստիացնում են որ հայկական պանթեոնի մեջ շատ ներկայացու-  
ցիչներ է ունեցել նույն զբաղաշտականութիւնը: Ունինք մի շարք ավետա-  
կան անուններ, որոնք աստվածութիւններ են հայերի մեջ և մեծավ մասամբ  
այն կերպարանքն ունին, այն հատկութիւններով են օժտված, ինչ հատ-  
կացրել է նրանց Զենդ-Ավեստան<sup>1</sup>:

Այս բոլորը, սակայն, դեռ չէ նշանակում թե Հայաստանի մեջ տիրում  
էր մի մաքուր և անխառն իրանական մագդեզական դին, թե Հայաստանը  
կրոնապես իրանացած մի երկիր էր: Սրա առաջին ապացույցը հայկական  
պանթեոնն է, որ գլխավորապես պարսկական կրոնին պատկանելով հան-  
դերձ, կրում էր միջազգային կերպարանք: Այդտեղ բազմաթիւ ավետա-  
կանների հետ կային և՛ բուն հայկական (Վահագն, Ամանոր, գուցե և աստ-  
ված, Տորք), և՛ ասորա-բաբելական, և՛ հունական պաշտամունքներ:

Նշանակում է, որ հայերը թեև ենթարկված էին պարսիկների խիստ ազ-  
դեցութեան, մանավանդ պարթև Արշակունիների ժամանակ, բայց ազատ էին  
իրենց սեփական հայացքները մտցնելու իրենց պաշտամունքի մեջ, օգտվելու  
և ուրիշ ազգերի ազդեցութիւնից: Մենք արդեն տեսանք որ Աքեմենյան թա-  
գավորները լայնամիտ և համբերող էին կրոնական գործերում: Կինելով Ահու-  
րա-Մազդայի շերմեռանդ երկրպագուներ, նրանք կարողացան դուրս գալ այդ  
մեծ աստծու պատվիրաններից այնտեղ, ուր հարցը վերաբերում էր դիակ-  
ները թաղելու արգելքին: Այդ թագավորները առանձին գերեզմաններ ունեին  
գեղեցիկ հուշարձաններով: Նրանց դիակներն այդտեղ թաղվում էին անշուշտ  
այնպիսի նախազգուշութիւններով, որ պղծված չլինի մայր հողը: Պարթև-  
ները թեև Աքեմենյաններից ավելի պահպանողական են համարվում, բայց  
նույնպես զուրկ էին կրոնական ֆանատիկոսութիւնից և կրոնական հալա-  
ծանքների աստիճանին չհասած. հետևաբար և հայերը նրանց ժամանակ էլ  
կարողութիւն ունեին իրենց պաշտամունքի տերը լինել առանց արգելքների:  
Արդեն մեզ ծանոթ այն հանգամանքը, որ Տրդատ Ա ոչ միայն շերմեռանդ  
զբաղաշտական էր և այդ պատճառով էլ Հայաստանից Հռոմ ձիով գնաց,  
այլև քրմապետ էլ էր, բայց և այնպես, կարողացավ թագավորել խառն պաշ-  
տամունք ունեցող Հայաստանում — այս հանգամանքը արդեն մի շատ լավ  
ապացույց է, որ հայ ժողովուրդը գիտեր ուժեղ կերպով պաշտպանել իր  
ազգային ստացվածքը, իր ինքնուրույնութիւնը:

Որ հայերի փոխառութիւնները զբաղաշտականութիւնից կույր ու ծա-  
ռայական չէին, ապացուցվում է նրանով, որ հայկական հեթանոսութիւնը  
բացարձակ բազմաստվածութիւն էր. բոլոր աստվածները մի ընտանիք էին  
կազմում: Իրանական ծագում ունեցող աստվածները հետևյալներն էին.

1. Արամազդ — ավետական Ահուրա-Մազդան, առաջին դեմքը հայ-  
կական պանթեոնի մեջ: Հայր բոլոր աստվածների, ստեղծել է երկիրն ու եր-  
կինքը, պարգևում է աշխարհի լիութիւնն ու բարօրութիւնն, արի է և արիութիւն  
բաշխող<sup>2</sup>: Նրա մեհյանը կամ բագինը գտնվում էր Դարանաղի գավառի Անի ամ-

<sup>1</sup> Ստրաբոնը (Geogr., t., II, p. 467) նույնպես վկայում է, որ պարսից բոլոր աստվածները  
առանց բացառութեան, պաշտվում էին Մարաստանի և Հայաստանի մեջ:

<sup>2</sup> Ազարանգեղոս, «Պատմութիւն», Վենետիկ, 1862, էր. 61, 106:

բոցում: Եփրատի վրա<sup>1</sup>: Այդտեղ էլ հայ Արշակունի թագավորների գերեզման-  
ներն էին՝ գեղեցիկ հուշարձաններով: Հայաստանում էլ, ուրեմն, զանցառու-  
թյան էր տրվում Զրադաշտի «դախման» կամ «լուութիան աշտարակը», ուր բո-  
լոր դասակարգերի դիակները թռչունների կեր էին դառնում:

2. Կա՛ր արդոք Հայաստանի մեջ և Արամազդի հակառակորդ Ահրիմա-  
նը—հաստատապես հայտնի չէ: Հավանական է որ նա էլ եղած լինի իբրև եր-  
կութիւն անհրաժեշտ անդամ<sup>2</sup> և դրա ապացույց կարող է լինել ավետա-  
կան մտայլ դիվապետի անվան հայկական ձևը—Հարաման<sup>3</sup> կամ Խարա-  
ման, որ պահվել է մեր հին գրականութիւնի մեջ:

3. Անահիտ, դիցուհի, դուստր Արամազդի: Զրադաշտական կրոնի  
մեջ նա ջրերի բարի ոգին էր, որ ներկայացնում էր բեղմնավորութիւն սկզբ-  
ունքը, իսկ հետո բարձրացավ մինչև աստվածուհու աստիճանը: Անահիտ-  
կան պաշտամունքը տարածված էր Փոքր Ասիայում, բայց ոչ մի տեղ նա  
այնքան փայլ և ընդարձակ ժողովրդականութիւն չստացավ, ինչպես Հա-  
յաստանում: Ինչպես Միհրը պարսիկների մեջ, այնպես էլ Անահիտը հայերի  
մեջ իրենց նետում թողնելու նույնիսկ Արամազդին<sup>4</sup>: Թե որքան մեծ էր այդ  
դիցուհու հմայքը հայ ժողովրդի մեջ, ցույց է տալիս այն փաստը, որ միայն  
նա էր հայ աստվածների մեջ, որ շորս բագիններ կամ մեհյաններ ունեւ երկ-  
րի զանազան կողմերում: Առաջինը և ամենագլխավորը, որ նաև միջազգա-  
յին հռչակ ունեւ, գտնվում էր Եփեղյաց գավառի Երիզա ավանում<sup>5</sup>: Ամբողջ  
բավարը կոչվում էր նաև Անահիտական: Մեծ դիցուհուն նվիրում էին մեծա-  
մեծ հարստութիւններ: Մենք արդեն տեսանք Անահիտի ցուլերը, որոնք կամ  
սպիտակ էին կամ սպիտակ բծեր ունեին ճակատին և մեծ հոտերով ազատ  
տրածում էին Եփրատի ափին: Աստվածուհու ահից ոչ ոք չէր համարձակվի  
տրանալ նրանց: Այդ ցուլերից էլ զոհեր էին բերում Անահիտին: Երկրորդ  
մեծ մեհյանը գտնվում էր Տարոնի Աշտիշատ ավանում<sup>6</sup>, որ կրոնական  
առաջնակարգ նշանակութիւն ունեւ Հայաստանում: Այդտեղ էին գտնվում  
ինչպես կտեսնենք, և ուրիշ աստվածների պաշտամունքներ: Բայց նրանց  
մեջ եզակի դիրք էր գրավում Անահիտի միաձուլյ ոսկի արձանը, որի պատ-  
ճառով էլ նա կոչվում էր «Ոսկեծին», «Ոսկեմայր», «Ոսկեհատ»<sup>7</sup>: Երրորդ  
մեհյանը Արտաշատ մայրաքաղաքումն է գտնվում<sup>8</sup>, իսկ չորրորդը՝ Անձևաց-  
յաց երկրի Դարբնաց Քար անունով տեղում<sup>9</sup>: Անահիտի դիրքն ու պաշտա-  
մունքը բնորոշում են այն տիտղոսները, որոնք հատկացված էին նրան հե-  
թանոս Հայաստանում: Նա հայոց տիրուհին էր, Հայաստանի տիկինը և  
մայրը: Նա հայ ազգի փառքն է ու բարբարը<sup>10</sup>. Որ կենդանացնում է ամբողջ  
աշխարհը, ներկայանալով իբրև արգասավորութիւն և բեղմնավորութիւն

<sup>1</sup> Անդ, էր. 590:

<sup>2</sup> Барон Р. Штаккелберг, «Об иранском влиянии на религиозном веровании древ-  
них армян» («Древности восточные», т. II, вып. II, М., 1901, с. 9).

<sup>3</sup> Եղիշե, էր. 33:

<sup>4</sup> Այս առաջնութիւնը և մեծ ժողովրդականութիւնը շեշտում է և Ստրաբոնը (Geogr., t. II,  
p. 468):

<sup>5</sup> Ազարանգեղոս, էր. 49:

<sup>6</sup> Ազար., էր. 607:

<sup>7</sup> Ազար., անդ:

<sup>8</sup> Ազար., էր. 584:

<sup>9</sup> Մատենագրութիւն Մեծի Սրբազան Կենտրոնի, Վենետիկ, 1865, էր. 294:

<sup>10</sup> Ազարանգեղոս, էր. 51:

սկզբունք: Հայ հեթանոսության խորթ շէր հին հեթանոսական մի հիմնարկությունը— կրոնական պոռնկությունը, որ գոյություն ուներ և ուրիշ ազգերի մեջ: Այս հիմնարկությունը կապված էր Անահիտի պաշտամունքի հետ և, ինչպես վկայում է Ստրաբոնը<sup>1</sup>, կենտրոնացած էր Երիզայի մեհյանում: Այդ տեղ կային սուրբ ստրուկներ երկու սեռից, իսկ հայ ազնվականության պատկանող աղջիկները, նախքան ամուսնանալը, խառնակվում էին օտար մարդկանց, գուցե մեծ մասամբ հենց քուրմերի կամ սրբազան ստրուկների հետ: Սակայն այս հիմնարկությունը վերացավ, ինչպես կարծում են, քրիստոնեության զարգացման ազդեցության տակ:

4. Միհր, Արամազդի որդի, արեգակի և կրակի աստված, որի մեհյանը գտնվում էր Դերջան գավառի Բազառիճ գյուղում<sup>2</sup>: Ինչպես երևում է Միհրը հայկական պանթեոնի մեջ գրավել էր հայոց հին Վահագն աստծու տեղը, իսկ սա, շարունակելով մնալ դարձյալ ազգային նվիրական պաշտամունք, ավելի պատերազմի, քաջության աստված դարձավ, թեև այս հատկությունները կրում էր իր մեջ և միհրական պաշտամունքը: Այս պաշտամունքը Հայաստանում այն շափերը չընդունեց, ինչպես, օրինակ, Հռոմում, բայց և այնպես բավական սիրված, ժողովրդական մի աստված էր, որի ապացույց է, ի միջի այլոց, այն որ արական հատուկ անուններ շատ կային այդ աստծու անունից առաջացած (ինչպես Միհրան, Մեհրուժան և այլն):

5. Սանդարամետ կամ Սպանդարամետ, Զենդ-Ավեստայի Սպենտա-Արմաիտի ոգին, որ համարվում էր հողի ոգի: Հայկական պանթեոնում նրա պաշտոնը միանգամայն պարզ չէ ներկայանում, բայց երևի հենց նույնն էր, ինչ զրադաշտականության մեջ՝ երկրի աստվածություն<sup>3</sup>:

6. Տիր, Տյուր կամ Տրե: Իրանական հին աստվածներից մեկը: Հայկական պանթեոնում նա կատարում է աստվածների պատգամախոսի, երազների տվողի և երազներ բացատրողի, դպրի և քարտուղարի պաշտոն: Երևի նրա հովանավորության տակ էին գտնվում գրականությունն ու դպրոցը:

Այնուհետև հայ աստվածների խմբի մեջ մենք գտնում ենք երեք՝ փոխառնված ասորական կրոնից: Դրանցից առաջինն է Աստղիկ դիցուհին, որ թեև ծագումով օտար երկրից էր, բայց շատ հարազատ և սիրելի մի պաշտամունք էր դարձել Հայաստանում և մանավանդ նրա հարավային մասերում, Տարոնում, որ Ասորեստանի սահմանակից էր և ուներ մեծ քանակության ասորի ազգաբնակիչներ: Այդ ասորիներն էլ, հայանալով, իրենց դիցուհուն մտցրել են հայ պաշտամունքի մեջ<sup>4</sup>: Աստղիկի բազմը գտնվում էր Աշտիշատում, Անահիտի և հայ Վահագնի բազմի ներքին հետ: Աստղիկի բազմը կոչվում էր «Սենյակ Վահագնի», ուստի հետևեցնում են որ Աստղիկը Վահագնի տարիածուն, սիրուհին էր: Եվ առհասարակ թվում է թե նա լույսի, սիրո, հեշտանքի աստվածուհին էր, որ մեծարվում էր «Ոսկեծղի» և «Վարդամատ» անուններով: Ընթացում է, թե նրան էր նվիրված Վարդավառի տոնը: Գոյություն ուներ առասպել, թե Աստղիկը առավոտյան իր լոգարանն էր ի-

<sup>1</sup> Geogr., t. II, p. 468.

<sup>2</sup> Ազար., էր. 593:

<sup>3</sup> Կ. Կոստանյան, «Հայոց հեթանոսական կրոնը», Վաղարշապատ, 1879, էր. 20—30:

<sup>4</sup> Ղ. Ալիշան, «Հին հաւ. հայ.», էր. 288—289:

<sup>5</sup> Հ. Գեյցեր, «Հետազոտություն հայ դիցաբանության», Քարթլ. 2. Թորոսյան, Վենետիկ, 1897, էր. 78:

<sup>6</sup> Ղ. Ալիշան, «Հին հաւատք հայոց», էր. 283:

նում լողանալու և այն ժամանակ հայ երիտասարդները գնում էին նրան տեսնելու և նրա մերկության վրա հիանալու: Բայց աստվածուհին մշուշ էր տարածում ամեն տեղ և աղապիսով ծածկում էր իր մարմինը սիրատենչ երիտասարդների անհամեստ աչքերից: Այս մշուշից էլ, ասում էին, ստացել է իր անունը, Մուշ քաղաքը: Երկրորդ ասորական աստվածը, դարձյալ իգական սեռից, նաև էր կոչվում կամ նանե: Նրա մեհյանը գտնվում էր Բարձր լայք նահանգում, Թիլ ավանում: Իսկ թե ի՞նչ պաշտամունք էր նա ներկայացնում—հաստատապես հայտնի չէ: Կարծվում է թե պատերազմի աստվածուհի էր: Իսկ երրորդն էր Բարշամին աստվածը, որի մեհյանը գտնվում էր դարձյալ Բարձր Հայքում, Թորոսյան գյուղի մեջ: Նա կոչվում էր «Սպիտակափառ», որովհետև նրա արձանը շինված էր փղոսկրից և արծաթից, իսկ աչքերը բյուրեղից էին: Երկնքի աստված էր համարվում<sup>1</sup>:

Հունական ազդեցության ապացույցներ մենք շատ տեսանք մանավանդ Արտաշեսյան հարստության ժամանակ, երբ հելլենականությունն էր տիրում հայոց արքունիքում: Հույն գրականության և բարբերի հետ Հայաստան մտան, ինչպես տեսանք, և հունական աստվածների արձանները սրանք, անշուշտ, առանց պաշտոնյաների չէին և հույն քրմերը, հարկավ, հունական դիցաբանությունն էին քարոզում Հայաստանի մեջ: Սակայն հունական կրոնը, ինչպես երևում է, ժողովրդականություն չգտավ հայերի մեջ, իսկ հունական արձանները նվիրական դարձան հայերի համար իբրև ազգային աստվածությունները մարմնացնողներ: Բարձր դասակարգը, որ հունասիրությունը ազնվապետական փայլի և շուքի առաջնակարգ նշան էր ընդունում, հայկական պանթեոնը հարմարեցրեց հունականին: Այսպես հայ Արամազդը հունական Դիոսն էր, Միհրը՝ Հեփեստոս, Անահիտը՝ Արտեմիս, Նանեն՝ Աթենաս, Վահագնը՝ Հերակլես, Աստղիկը՝ Ափրոտիդե, Տիրը՝ Ապոլոն<sup>2</sup>:

Մեր հին գրականության մեջ հիշատակություն կա թե Տարոնում քրիստոնեության մուտքի ժամանակ գոյություն ունեին Գիսասե և Դեմետր կուրբերը, եթե այս հիշատակությունը կարծեցյալ հեղինակ Զենոր Գլակը իր ժամանակ (VII—VIII դար Ք. հ.) գոյություն ունեցած մի ավանդության արձագանք է թողել մեզ, այն ժամանակ կարելի կլինի ասել թե մի հին ժամանակից Հայաստանի այդ անկյունում պահվել էր հունական այդ դիցուհու պաշտամունքը, որ ներկայացնում էր հայ հեթանոսական աստվածաբանության ոչ խորթ սկզբունքներ—պտղաբերություն, արգասավորություն, այսինքն այն, ինչ տալիս էր Անահիտը:

Այսպես ահա երեք օտար աղբյուրներից և սեփական ազգային պաշտամունքից դարերի ընթացքում հյուսվեց հայ հեթանոսությունը իբրև կուլտուրական ինքնուրույնություն: Սակայն գլխավորը յուրաքանչյուր կրոնական ստեղծման մեջ այնքան աստվածաբանությունն ու դիցաբանությունը չեն, որքան այն կազմակերպությունը, որ ստանում էր եկեղեցին: Այս կողմից հայ հեթանոսությունը ներկայացնում էր երկար և ուժեղ կազմակերպական աշխատանքի արդյունք: Հայ մեհյանը և իր պաշտոնեությունը մեծ ուժ էին կազմում պետության մեջ և այդ ուժի վրա էլ հենվում էր հայ միապետությունը: Մեհյանի բացարձակ տիրապետության կովանը նրա իշխանության տակ գտնվող մեծամեծ հարստություններն էին: Իր հարստություններով հըռ-

<sup>1</sup> Գեյցեր, էր. 68:

<sup>2</sup> Ա. Կարբիեր, «Հեթանոս Հայաստանի ութ մեհյանները», («Հանդես ամսորյա», 1899, էր. 364):



համանիշ են վրացական «օրի», «սամի» (երկու, երեք) թվերին և առաջացել են հենց այս բառերից<sup>1</sup>:

Ամսվա յուրաքանչյուր օր առանձին անուն էր կրում. շատ օրեր նվիրված էին աստվածներին: Ամիսը բաժանվում էր չորս շաբաթների, յուրաքանչյուր օր և այդ օրերի անունները փոխանված էին հրեաներից և սիրիացիներից, միաշաբաթ, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ<sup>2</sup>: Օր ու գիշեր բաժանվում էին 24 ժամի և յուրաքանչյուր ժամ ուներ իր առանձին անունը:

Այս մանրամասնություններն ապացուցում են որ հայ քրմական դասակարգը լավ ուսումնասիրել էր քաղղեա-եգիպտական աստղաբաշխությունը: Բայց միայն ճշմարիտ գիտություն չէ աշակերտել այդ քրմությունը: Թվում է թե ավելի մեծ եռանդով նա յուրացրել էր նույն երկրների սուտ գիտությունը—զանազան գուշակություններ, կախարդություններ: Այս «գիտությունն» էլ շատ հարկավոր էր հին մարդուն, որի առջև բնությունը դեռ չէր բացել իր գաղտնիքներից շատերը և այդ պատճառով նա համակված էր մշտական երկյուղով իրեն անհասկանալի երևույթների առջև, չափազանց դյուրահավան էր, շափազանց նախապաշարված: Եվ այսպես էին բոլոր դասակարգերը, տիրապետության ամենաբարձր աստիճանից սկսած: Թագավորի խորհրդականներն ու ղեկավարները աստղերով գուշակություն անողները, երազ բացատրողները, հմայողներն էին:

Բայց մանավանդ հարկավոր էր և շատ որոնվում էր դիվանահալածությունը: Նախնական ժամանակների մարդը զանազան հիվանդությունների, ձախորդությունների, բնական պատահարների և աղետների պատճառ համարում էր շար ոգիներին, որոնք անհուն բազմություններ լցված էին աշխարհի մեջ: Նրանք կոչվում էին դևեր, այս քեր, որոնք մարդկանց պատժելու համար կատարում են ամեն տեսակ շարություններ, առավելապես մտնում են նրանց մարմնի մեջ և պատճառում են հիվանդություններ: Պետք էր հալածել այդ ախտածին սկզբունքները: Իսկ այդ կարելի էր անել զանազան հոտավետ բույսեր կամ խեժեր ծխելով, արտասանելով այնպիսի անուններ կամ այնպիսի խոսքեր, որոնք անհաճո են դևերին կամ որոնցից նրանք սարսափում են: Հալածողի դեր կատարում էին և նվագածուները, բայց ամենից շատ՝ կախարդությունը:

Բազմաթիվ ճյուղերի և բազմաթիվ տեսակների էր բաժանվում կախարդությունը, որ մարդկային կյանքի բոլոր երևույթներն էր իր գործունեության ասպարեզ դարձնում և կատարելապես կաշկանդում էր նախապաշարմունքների և անթիվ հավատալիքների աշխարհում ապրող մարդուն: Կախարդությունը գլխավոր նպատակ ուներ բժշկություն և գուշակություն: Այդ նպատակներին նա հասնել կարծում էր բազմաթիվ միջոցներով և այդ գործողությունները կոչվում էին հայ լիզվով հմայք, բժժանք, դյուլթություն, կախարդանք, կյուս, խտիրք, հարցուկ և այլն: Դյուլթում էին կամ մարդու ճակատագիրը գուշակում էին՝ լուսնի փոփոխությունները դիտելով (խտիրք կամ լուսնահմայություն), գարի կամ ուրիշ հատիկներ գցելով (հատահարցություն), մաղի վրա բախումներ անելով (մաղաբախություն), քվեներ (խորանարդ իրեր, զար) գցելով (քվահարցություն), անատունների փո-

<sup>1</sup> Ղ. Ալիշան, «Հին հասարակ հայոց», եր. 139.

<sup>2</sup> Dulaurier, p. 14—15.

րերը պատելով և նրանց գործարանների դիրքը դիտելով (միջագիտություն), օրերի վերաբերմամբ բաժանումներ անելով, վնասակարության կամ օգտակարության տեսակետից (օրահմայ), հավերի կամ թուշունների շարժվածքները դիտելով (հավահմայություն), շեղչակույտերի վրա հմայքներ կատարելով (շեղչախտիրք) թե շափելով (գեղահմայություն), աստղագիտությամբ, ուլունքներ հմայելով (ուլթել) գիր անելով և այլ այսպիսի հնարքներով: Կարծում էին թե կախարդական միջոցներով կարելի էր դևերին հավաքել աղի, յուղի, մոմի, երկաթի և այլ այսպիսի մի քանի մարմինների մեջ<sup>3</sup>: Գուշակության մի ձև էր և այն, ինչ այժմ էլ դեռ գոյություն է պահպանում մարմնախաղաց անունով: Այս ձևը հայերը վերցրել էին պարսիկներից<sup>2</sup> և ինչպես հայտնի է, հիմնված է այն բանի վրա որ մարդու մարմնի կաշին դողում է կամ խաղում է: Նայած թե ո՛րտեղ է այդ տեղի ունենում, գուշակությունն էլ բարի էր կամ չար: Օրինակ, եթե աջ աջի կոպն է խաղում, այդ բարի նշան է, եթե ձախ կոպն է խաղում, վատ նշան է: Այդպիսի գուշակողական նշաններ տալիս են և տնային կենդանիները. օրինակ, շան ոռնոցը օրվա հայտնի ժամին որոշ գալիքի գուշակություն էր. եթե հավը կանչում էր, այդ էլ այս կամ այն գալիքի նշանն էր:

Շատ զորավոր միջոց դևերի դեմ համարվում էր երդումը: Գոյություն ունեին որոշ ձևակերպումներ, որոնցով երդմանցնում էին դևերին հեռանալ մարդու մարմնից: Կատարելով այս երդմանցությունը, մարդիկ հավատացած էին թե կատարում են բժշկական զորավոր գործողություններ<sup>3</sup>: Այս կախարդական հերյուրանքներից դուրս կար, իհարկե, և իսկական բժշկություն. բայց նա, իսկապես, գործ ուներ միայն վիրաբուժության, անդամահատության, արյուն առնելու հետ: Ամեն մի հիվանդություն, որ այդ միջոցներով բժշկել չէր կարելի, դառնում էր քրմական դասակարգի սեփականությունը կազմող դևահալածության առարկա:

Ժողովրդի կրոնը, իսկապես, այս կախարդություններից, սնապաշտություններից, երդմանցումներից էր կազմված: Ժողովրդին մատչելի չէր բարձր աստվածաբանությունը, դիցաբանական այս կամ այն սխտեմը, աստվածների աստվածաբանությունը: Իր բարձր աստվածներից ժողովուրդը կարող էր բաժանվել, բայց իր առօրյա կյանքի մանր պաշտամունքներից, իր հավատալիքներից ու սովորություններից վերջնականապես հրաժարվել չէր կարող:

**4. Գրականություն:** Այս ներկրորդ շրջանում էլ մենք ունենք միմիայն բանավոր գրականություն: Բայց այստեղ արդեն կարելի է լուրջ հարց դնել մի՞թե այս շրջանում էլ Հայաստանում չեն եղել տառեր և գոյություն չէ ունեցել գրավոր գրականություն: Քրիստոնեությունը Հայաստան մտցնողները հիմնավորապես ջնջել են հեթանոսական ամեն մի հիշատակ և միայն ժողովրդի սիրտն է եղել, որ այդ մոլեռանդ քանդողներին անմատչելի է մնացել: Ընդհանրապես և բազմահարուստ մեհյաններից հետք անգամ չէ մնացել և սառնակավոր և բազմահարուստ մեհյաններից հետք անգամ չէ մնացել և սառնակավոր կայն այստեղ էին հավաքվում երկրի ոչ միայն նյութական, այլև մտավոր գանձերը: Եվ եթե հավատալու լինենք կրոնական այդ մեծ հեղաշրջման ժա-

<sup>1</sup> Տե՛ս նաև Յովհաննու Մանդակունու Հայոց Հայրապետի ճառք, Վենետիկ, 1836, եր. 184—201.

<sup>2</sup> К. Иностранцев, «Материалы из арабских источников для культурной истории сасанидской Персии», Пет., 1907, с. 50.

<sup>3</sup> Վարդան Հացունի, «Երդումն Հին Հայոց մեջ», Վենետիկ, 1910 եր. 214—237:





վերջնեք քաջ Արտաշեսը հազար հազարներ և բյուր բյուրեր՝ Ալանաց այս աստ-  
վածային ծագում ունեցող կույս օրիորդի փոխարեն հատուցանելու համար:  
Այսպես էր հարսանիքի ձևը—մեծ գլխագին, որ աղջկա պատիվն էր բարձրաց-  
նում: Եվ, ինչպես սովորական է այդպիսի դեպքում, Արտաշեսը փախցնում է  
Սաթենիկին՝ նրա հետ ամուսնանալու համար: Ահա վեպի իսկականից մնացած  
մի կտոր, որ նկարագրում է այդ առևանգումը:

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեան գեղեցիկ,  
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարան,  
Եւ անցեալ որպես զարծուի սրաթև ընդ գետն,  
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,  
Ընկէց ի մէջ օրիորդին Ալանաց,  
Եւ շատ ցաւեցոյց զմէջ օրիորդին,  
Սրագ հասուցանելով ի բանակն իւր<sup>1</sup>:

Այնուհետև արքայական հարսանիքն է: Վեպը համառոտ ցույց է տալիս  
թե ինչպես էին թագավորն ու թագուհին ոսկի և մարգարիտ ցանում պալատում  
հավաքված հանդիսականների, ինչպես նաև դրսում հավաքված ժողովրդի մեջ:

Տեղ ոսկի տեղայր  
Ի փեսայութեան  
Արտաշեսի.  
Տեղայր մարգարիտ  
Ի հարսնութեան  
Սաթենիկան<sup>2</sup>:

Վիպական է ոչ միայն հերոս-թագավորը, վիպական է և Սաթենիկը, ինչ-  
պես կտեսնենք: Այս վիպական ամուսնությունից ծնվում է Արտավազը,  
նույնպես քաջ, բայց ավելի ևս վիպական: Սակայն այստեղ հին հեթանոս հա-  
յր հարձակումն, պատմական ավանդակների մեջ խառնում է և առասպելա-  
բանություն, որի նպատակն է բացատրել բնության ահեղ երևույթները և դրանց  
դեմ մրցող ուժերը, կերպարանավորելով թե՛ առաջինները և թե՛ երկրորդները  
որոշ դեմքերի մեջ: Այդ պատճառով էլ վեպը, Արտավազից սկսած, խառնվում  
է<sup>3</sup>: Կանրա մեջ պատմական մաս, բայց ավելի խիստ է առասպելականը: Այս  
խառնուրդն էլ տվել է Արտավազին մի բնավորություն, որ բաղկացած է դրա-  
կան և բացասական կողմերից:

Հետևելով պատմականին, մենք տեսնում ենք նույն Արտաշեսյան վեպը,  
որ զարգանում է նույն պետական շինարարության գործի շուրջը: Այսպես,

1 Սաթենիկի թարգմանությունը.  
Հեծավ քաջ թագավոր Արտաշես իր գեղեցիկ սև ձին,  
Եվ հանեց ոսկե օղով կարմիր կաշե պարանը,  
Եվ անցավ ինչպես սրաթև արծիվ գետի միջով,  
Եվ հանեց ոսկե օղով կարմիր կաշե պարանը,  
Ձգեց Ալանների օրիորդի մեջքին,  
Եվ շատ ցավեցրեց փափուկ օրիորդի մեջքը,  
Արագ հասցնելով նրան իր բանակը:  
2 Ոսկե անձրև էր գալիս  
Արտաշեսի փեսայության ժամանակ,  
Մարգարիտ էր անձրևում  
Սաթենիկի հարսնության ժամանակ...  
3 Մ. Արեղյան, «Հայ ժող. առասպ.» եր. 336—354:

գիտենք որ Արտաշեսն էր, որ պետական կենտրոն դարձրեց Արարատյան դաշ-  
տը և իր հռչակավոր մայրաքաղաքը հիմնեց Արաքսի վրա, Մասիսի ստորոտ-  
ների մոտ: Ինչպես երևում է, այս մեծագործությունը առանց դժվարություն-  
ների չէ հաջողվել նրան: Կարծել կարելի է որ Մասիսի լանջերին ապրում էր  
մի հին բնիկ ժողովուրդ, քաջ ու պատերազմասեր, որի հետ կովիլուց հետո  
միայն Արտաշեսը կարողացավ ձեռք բերել այն երկիրը, ուր շինվեց նրա Ար-  
տաշատը: Այս ժողովուրդը կարող էր լինել հին ուրարտական-հեթիթական մի  
ցեղ<sup>1</sup>: Հայ ժողովրդական վեպը այս ցեղին տալիս է Վիշապ պաղաճ անունը,  
որ, անշուշտ, առաջացել էր այն հանգամանքից, որ վիշապն էր այդ ժողովրդի  
պաշտամունքը: Պորֆեսոր Մառի մի նորագույն գյուտը գալիս է ուժ տալու այս  
ենթադրության: Արտաշատից ոչ հեռու, Գառնիի լեռներում, նա գտել է վիշապ-  
ձկան քարե արձաններ, կրեք մետր և ավել երկարությամբ, որոնց վրա մնա-  
ցած նշանները ցույց են տալիս թե սրանք եղել են պաշտամունքի առարկաներ<sup>2</sup>:  
Այս վիշապապաշտ կամ վիշապազուն ժողովուրդը, ուրեմն, միայն Մասիսի  
վրա չէր ապրում, այլ և դաշտում, Գառնիի լեռներում<sup>3</sup>:

Այսպիսով Արտավազի վեպը ներկայացնում է մի դրվագ այն պատե-  
րազմներից, որ Արտաշես Ա մղում էր զանազան ազգերի դեմ՝ իր պետությունն  
առողջ հիմքերի վրա կազմակերպելու համար: Վիշապազունների հետ հաշտու-  
թյուն է կայանում ձիշտ այն պայմաններով, որոնք առաջ էլ կնքվում էին  
եկվորների (արմենների) և տեղացի ցեղերի մեջ: Վիշապազունների՝ գլխավո-  
րը, վիշապ Արգամը, առաջնակարգ նախարարական տեղ է ստանում Արտա-  
շեսի թագավորության մեջ: Բայց տոհմային վեճերն ու հակառակությունը շեն  
վերանում և այս՝ շնորհիվ Արտավազի, որ վիշապազունների անհաշտ թշնա-  
մին է: Այդ թշնամության պատճառը դարձյալ հողային գրավումն է: Վեպն  
ասում է.

Արտավազայ ոչ գտեալ,  
Քաջի որդոյն Արտաշեսի,  
Տեղի ապարանից  
Ի հիմնանալն Արտաշատու,  
Նա անց գնաց և շինեաց  
Ի մէջ Մարաց զՄարակերտու:

Այս քաղաքն էլ, ինչպես բացատրում է հորենացին, գտնվում էր Ար-  
տաշատից դեպի արևելք, նույն Արգամին պատկանող Շարուրի դաշտում<sup>4</sup>: Եվ  
ահա այս հողի վրա նորից բորբոքվում է թշնամությունը: Արտաշես թագավորը  
վիշապ Արգամի կողմից հրավիրվում է վիշապազունների ցեղային սրբաբա-  
նը—վիշապների տաճարը, ուր և դավադրություն է սարքվում նրա դեմ: Գրա-

1 Ս. Կանայան, «Անհայտ գավառներ հին Հայաստանի», էջմիածին, 1914, եր. 55:  
2 Н. Марр, «Кавказ и памятники древней культуры» («Изв. имп. Ак. наук», 1912,  
с. 70).

3 Վիշապ կամ Ուշապ անունը, ինչպես երևում է, տղամարդկանց հատուկ անուն էր դար-  
ձյալ այս կողմերում, Այսպես է վկայում XIV դարի մի հիշատակարան (Г. Тер-Мкртчян).  
«Вишар и Ушар в армянской приписке XIV века» («Христианский Восток», II, 1912,  
т. I, вып. I, с. 30).

4 Տիգրանի վեպի մեջ (Տե՛ս վերև, Մ. Գ. գլ. Բ, 6) մենք տեսանք, որ նույն վեպը փորձում  
է որոշել այս ժողովրդի ծագումը և անհիմն կերպով առասպելում է, թե վիշապազունները առա-  
ջացան մարաց Աժդահակ թագավորի Անուշ կնոջից, որին գերի էր բերել Տիգրան Երվանդյանը,  
մինչև Աժդահակի ժամանակ Արաքսի հովիտը դեռ Տիգրանին և արմեններին չէր պատկանում:

5 Մեզ թվում է, թե վիշապազուն ցեղը կոչվում էր և մար: Այս անունը պարսից լեզվով  
նշանակում է օձ, մի անուն որ մեր ժողովրդական բանահյուսության մեջ համանիշ է վիշապ  
անվան: Երևի այս մարերը մի հատված էին այն բնիկ, ոչ-սորիական, այլ հավանականորեն

նից հետո արդեն Արտավազդը, իր ծերացած հոր վրեժն առնելով, կտորում է Արգամի ընտանիքը: Ժողովրդական վեպը այս հանգամանքին խառնում է և Սաթենիկ թագուհու սերը դեպի Արգավանը, մի բան, որ, անշուշտ, աննկատելի չէր մնացել Արտավազդի համար և որ սպանությունների առիթն է դառնում:

Հաջորդելով հորը, Արտավազդը շարունակում է կռիվը վիշապազունների դեմ և, ինչպես երևում է, սպանվում է պատերազմներից մեկի մեջ, որ տեղի ունեցավ Մասիսի վրա:

Այս պատմական մասի մեջ Արտավազդը ժողովրդական մի բարի և քաջ հերոս է: Նրա ողբերգական վախճանը այնքան ցավ է պատճառում ժողովրդին, որ վիպասանական երգի մեջ ժխտվում է թե նա մեռել է և պատմվում է թե նրան գերի են տարել Մասիսի վիշապները և նա բանտարկված է Մասիսի վիճերի մեջ, իսկ երբ ազատվի, պիտի դուրս գա և ազատե նաև իր աշխարհը<sup>1</sup>:

Բոլորովին այլ կերպարանք ունի քաջ Արտավազդը առասպելականի մեջ: Այս մասը, անշուշտ, կազմվել է պատմականի հաղորդած հանգամանքների ազդեցության տակ: Առասպելը կազմվել է հենց այդպես, Մասիսի ստորոտում՝ հայկական այս վիթխարի լեռան դերն ու հատկությունները մարմնավորելու համար:

Այժմ էլ դեռ Մասիսը նրան շրջապատող ազգաբնակչության մեջ համարվում է վերին աստիճանի խորհրդավոր, կախարդված մի սար, որի գլուխը բարձրանալը մարդուն չի տված, որովհետև ամեն տեսակ սարսափներով լիքն են նրա բարձունքները: Նորագույն ճանապարհորդները, որոնց հաջողվել է, ոտնակոխ անելով նախապաշարմունքները, հասնել գագաթին, նկարագրում են թե ինչ դժվարությունների են հանդիպել ճանապարհին և թե որքան ամայի, ահեղ ու անհյուրընկալ է բնությունը: Այսպես, մի ուսու ճանապարհորդ հանդիպել է ամառը փոթորկի և հավատացնում է թե օդի մեջ ճայթում էին կալ՝ ծակներ, որոնց լայնությունը երեք արշին կլինե՞ր: Ավելացնենք այս բոլորին և այն համբավը, որ ունի Մասիսը ժողովրդի մեջ: Դա մի շոր ու ցամաք սար է, զուրկ բուսականությունից. նրա կողերից շեն բխում առատ ջրեր՝ դաշտի արևակեզ տարածությունները զովացնելու և մարդուն ապրուստի միջոցներ տալու համար: Հայտնի է նա մանավանդ իբրև օձերի սար: Այդ պատճառով է, երևի, որ նրան կոչում են «սև լյառ», «մթին աշխարհ»<sup>2</sup>:

Եվ բնական էր որ հին մարդու երևակայությունը բնակեցներ այդ մեծ սարի վրա գերբնական էակներ, շար ոգիներ, որոնք կրում են դև, վիշապ, քաջ անունները: Սրանք էին, որ սարի բարձրություններից տարածվում էին աշխարհի վրա և ամեն տեսակ վատություններ անում: Վիշապ էին կոչվում և ամպերը, որոնք բարձրանում էին դեպի երկինք, արեգակը՝ աշխարհին կյանք տվող այդ էակը կլանելու համար, և այս այնքան մի մեծ դժբախտություն էր հին մարդու համար, որ նա նույնիսկ հատուկ աստված ուներ՝ այդ վիշապների դեմ կռվելու համար:

Արտաշեսի և Արտավազդի հարաբերությունները Մասիսի ստորին լանջերի հեթիթական ցեղի, որին գիտնականներից ոմանք տալիս են նախամեդացիներ, նախա-մարեր անունը: Հենց այս ժողովուրդն էր, երևի, որ, Ստրաբոնի վկայությամբ, այնքան մոտ էր հայերին իր նիստ ու կացով, լեզվով անգամ (Geogr. t. II, p. 454), մի հանգամանք, որ ցույց է տալիս մարերի ձուլումը հայերի հետ, Արաքսի հովտում:

1 Արեղյան, էր. 355:

2 Մուրղվիցի, «Արարատի գլուխը», Շուշի, 1883, էր. 164:

3 Արեղյան, էր. 346:

վրա և ստորոտներում ապրող վիշապազուն ժողովրդի հետ բավական էին նրանց նույնացնելու Մասիսի գերբնական բնակիչների, վիշապների հետ գործ ունեցող հերոսներին: Այստեղ ահա առաջանում է Արտավազդի կերպարանափոխումը: Բարի հերոսից նա դառնում է շար: Այսպիսի կերպարանափոխություններ շատ սովորական էին հին կրոնների և հավատալիքների մեջ: Առասպելացումը սկսվում էր Արտավազդի մանկությունից, երբ, ինչպես ասում էր երգիչը՝

Վիշապազունք գողացան  
Ձմանուկն Արտավազգ  
Եվ դև փոխանակ եղին:

Նշանակում է որ Արտավազդն էլ վիշապ էր, թշնամաբար տրամադրված դեպի մարդկությունը: Երբ մեռավ Արտաշեսը, ասում է վեպը, ահագին սուգ պատեց հայ ժողովուրդը: Ծառերը, մանավանդ նրա ծառաներից ու հարձե-րից, ինչպես սովորություն էր հին աշխարհում, իրենց սպանեցին թագավորի գերեզմանի վրա: Այս իրական փաստ է, պատմություն է: Բայց այստեղ էլ առասպելն ավելացնում է, թե Արտավազդը գանգատվեց հորը, ասելով.

Մինչ դու գնացեր  
Եվ գերկիրս ամենայն  
Ընդ քեզ տարար,  
Ես աւերակացս  
Ո՞րպէս թագաւորեմ:

Եվ հայրն իր գերեզմանից անիծում է նրան այդ հանդգնության համար, ասելով.

Եթէ դու յորս հեծցիս  
Յազատ ի վեր ի Մասիս,  
Ջքեզ կայցին քաջք, տարցի՞ն  
Յազատ ի վեր ի Մասիս  
Անդ կայցես  
Ձլոյս մի՛ տեսցես<sup>3</sup>:

Առասպելի մեջ Արգամը Արգավան է կոչվում: Նա վիշապների հայր է և նրա վրա սիրահարված է գեղեցիկ ալանուհին, Սաթենիկ թագուհին: Եվ երգն ասում էր.

Տենչայ Սաթինիկ տիկին  
Տենչանս զարտախուր խաւարտ  
Եվ զտից խաւարժի  
Ի բարձիցն Արգաւանայ:

Ուրիշ ազգերի մեջ էլ կան այսպիսի առասպելներ, ուր հերոսի մայրը սիրով կապվում է վիշապի հետ՝ ընդդեմ իր հարազատ որդու<sup>3</sup>:

1 «Դու որսի կը գնաս  
Ազատ Մասիսի վրա,  
Քաջքերը քեզ կրոնեն կտանեն ազատ  
Մասիսի ներսը:

Այնտեղ կմնաս և լույս շես տեսնի»:

2 Խառնակցի, Ա, 1: Այս հատվածը շատ մոթ ու խրթին է: Բազմաթիվ փորձեր են եղել նրան պարզելու և բացատրելու, բայց դեռ վերջնականապես լուծված չէ այդ խնդիրը: Այնքան միայն անկասկած է որ նրա մեջ նկարագրվում է Սաթենիկ թագուհու սաստիկ տարփանքը Արգամի վերաբերմամբ:

3 Արեղյան, «Հայ ժողով. առասպ.» էր. 349—350:

Արտաշեսի մահից հետո, շարունակում է մեր վեպը, Արտավազը որսի է գնում Ազատ Մասիս, աղտեղ նրան բռնում են քաջքերը և շղթայակապ բանտարկում Մասիսի վիհի մեջ: Երկու շներ շարունակ լիզում են շար հսկայի շղթաները որ կտրեն նրանց և այն ժամանակ Արտավազը դուրս կգա լույս աշխարհ և վերջ կտա նրան: Բայց հայ դարբինները ամեն կիրակի երեք-չորս անգամ կուսնենրով խփում են իրենց սալերին և այսպիսով ամրացնում են Արտավազի շղթաները:

Արտավազն այս դիրքում, այսինքն իբրև մարդկության սպանացող կործանարար ուժ, Արարատյան տեղային հերոս է: Հայաստանի մյուս մեծ կենտրոնը, ուր կազմակերպվել էր հայ ազգը, այն է՝ Վանի լճի շրջակայքը. ուներ իր սեփական հերոսը, Մհեր, որ փակված է, ինչպես հավատացնում է մի ուրիշ մեծ ժողովրդական վեպ<sup>1</sup>, Վանի ժայռի մեջ:

Այսքան մեծարելով Արտաշեսյան հարստության հիմնադրին ու նրա ժառանգին, հայ ժողովուրդը չէր կարող մոռանալ, իհարկե, և Տիգրան Մեծի նման մի թագավորի: Անշուշտ, նա էլ վեպ է ունեցել, բայց, տարաբախտաբար, ամբողջապես և անկախ կերպով գոյություն չէ պահպանել: Այս վեպի մի քանի պատահիկները խառնվել են Տիգրան Երվանդյանի վեպի հետ, որ մեզ արդեն ծանոթ է: Այսպես, երբ Տիգրանի բանակը նկարագրելիս վեպն ասում է թիզորքեր հավաքվեցին Կապադովկիայի սահմաններից, Վրաստանից, Աղվանքից, Փոքր և Մեծ Հայքից, այստեղ խոսողն արդեն Տիգրան Մեծի հաստատած իրականությունն է: Նույնպես երբ ասում է թե Տիգրանը բազմացրեց երկրի հարստությունները, առատացրեց ոսկին ու արծաթը, թե «խաղաղություն և շինություն բերող Տիգրանը յուզով ու մեղրով էր կերակրում ամեն հասակի մարդկանց»<sup>2</sup>, այստեղ դարձյալ Տիգրան Մեծն է հանդես գալիս:

Հայ արքայական վեպերից մի փոքրիկ կտոր էլ գնացել հասել է XI դարի նշանավոր գործիչ և մատենագիր Գրիգոր Մագիստրոսին, որ բերում է մի սիրուն հատված, որի մեջ որսասեր Արտաշես թագավորը անձկություններ էր իր զվարճությունները.

Ո՞ր տայր ինձ զծովս ծխանի  
Եւ զառաւօտն նաւասարդի,  
Զվազելն եղանց և զվագելն եղջերուաց.  
Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք,  
Որպես օրէն է թագաւորաց<sup>3</sup>:

Որ այս մի անկախ երգ կամ ասացվածք չէր, երևում է Մագիստրոսի այն խոսքերից թե այս վերհուշումը թագավորը անում է իր մահվան անկողնում: Նշանակում է որ կար այդ կտորի հետ և վիպական պատմվածք:

Գյուցազնական վեպը միայն հայ թագավորների շրջանում չէր հերոսներ որոնում: Մենք տեսանք որ ժողովրդին թագավորից ավելի մոտիկ էր նախարարական հզոր ու ազդեցիկ կազմը: Եվ ահա հայ ազնվականությունն էլ դյուցազնական նյութ է մատակարարում բանահյուսական արվեստին: Այսպես է, օրինակ, Տորք կամ Տուրք Անգեղը, որի տոհմը նախահայկական է, ասել է՝ ուրարտական ծագում ուներ: Ապրում էր նա, ինչպես ասում է վեպը, Արտաշեսի ժամանակ և նրա կողմից էլ նշանակվեց Արևմուտքի կուսակալ

1 «Դավիթ և Մհեր»:

2 Խորենացի, Ա, իր:

3 «Գրիգոր Մագիստրոսի թղթեր», Ալեքսանդրապոլ, 1910, եր. 87:

(Տայք նահանգն էլ հետը): Այսպիսի մի մարդուն կարելի էր, իրավ, հավատալ նորանվաճ Տայքի ապահովության հոգսը: Տորքը անհեթեթ ուժի ներկայացուցիչ է և ժողովրդական մտապատկերի մեջ առասպելական շափազանցություններ ընդունելով, դարձել է պարսից Ռոստոմ Զալի հոմանիշ մի պատկեր, որի ցուլացումը կարելի է գտնել և ուրիշ ազգերի ժողովրդական վեպի մեջ: Մեր Տուրքի մասին երգում էին թե նա ամբողջ ժայռեր էր պոկում, տաշում էր եղունգներով տախտակներ շինում և եղունգներով էլ քանդակում էր նրանց վրա արծիվներ և այլ նշաններ: Նա կողմնակալ էր Պոնտոս ծովի ափին, Տայքը նահանգում: Թշնամի նավերը մոտենում են ափին, բայց Տուրքը հալածում է նրանց: Նավերը հեռանում են արագ, արդեն ութ ասպարեզ դեպի ծովի խորքն են գնացել: Տեսնելով որ այլևս չէ կարող հասնել նրանց, Տուրքը պոկում է բլրաշափ ժայռեր և նետում է նավերի հոտեղից: Բարձրանում է ամբողջ ալեկոծում, որից խորտակվում են թշնամու նավերը: Եվ ալեկոծությունը այնքան հեռու է տարածվում, որ մեծապես վնասվում են և ուրիշ շատ ու շատ նավեր: Եվ այս հայկական տիտանը տգեղ է անասելի կերպով, դաժան տեսքով և հայացքով: Տարաբախտաբար, մենք զրկված ենք ժողովրդական այս ուժեղ և վառվռուն ստեղծագործության անմիջապես հաղորդակից լինելու կարողությունից. Խորենացին միայն մի տող է բերում Տուրք Անգեղի առասպելից.

«Այր խոժոռագեղ և բարձր և կոպտարանձն և տափաքիթ, խորակն և դժնահայեաց»<sup>1</sup>:

Բայց թե ի՞նչ սիրուն բանաստեղծական հյուսվածքներ էին զարդարում հայ դյուցազնական վեպերն ու երգերը, ցույց է տալիս մի ուրիշ նախարարական վեպ, որից, սակայն, այսքանն է միայն մեզ հասել:

Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն  
Ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով,  
Եկեալ, նստեալ զՇրէշ բլրով,  
ԶԱրտիմէդ բաղաբաւ, զՔասաղ գետով  
Կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի:

Այս նշանակում է թե Վարդգես անունով մի պատանի նախարար գնում է ծեծելու Երվանդ թագավորի դուռը, այսինքն նրա քրոջ ձեռքը խնդրելու համար և ամուսնանալով նրա հետ, Քասախ գետի վրա, Շրէշ բլրի և Արտիմեդ բաղաբի մոտ շինում է մի ավան, որ և կոչվում է Վարդգեսավան, իսկ հետո դարձավ Վաղարշապատ մայրաքաղաքը:

Հայկական վեպի մի խոշոր առանձնահատկությունն էլ այն է, որ նա ամենանեղ մտքով ազգայնական է: Որքան և պարթևները մոտիկ լինեին հայերին, որքան և նրանց հիմնած հարստությունը հետզհետե հայ ազգային կերպարանք ստացավ, բայց և այնպես հայ բանավոր արվեստի մեջ, գոնե որքան հայտնի է մեզ Խորենացու թողած կտորներից, պարթև թագավորները շափազանց աննշան բաժին ունին մինչև շորրորդ դարը: Հայ-ուրարտական ազգայնացած ավանդությունները, Արտաշեսյան հարստության շրջանը—ահա այն միջավայրը, ուր ստեղծվել և զարգացել է դյուցազնական վեպը: Եվ թեև հետագոյններից ոմանք, կարծել են թե վիպասանության Արտաշես թագավորը Տրդատ Ա էր, որով, ինչպես գիտենք, սկսվեց հայ Արշակունիների հարստությունը, բայց այդ, մեր կարծիքով, մի թյուրիմացություն է, որ հեշտ է ապացուցանել, աչքի առաջ առնելով վեպի տված փաստերը: 64 Միացն շորրորդ



ված լինելն հեթանոսական Հայաստանի հետագա դարերում, քանի որ, ինչպես տեսանք, հայ պաշտամունքը նույնիսկ ընդարձակ չափերով նվիրագործել էր աստվածները արձաններով ներկայացնելու սկզբունքը: Գլխավոր արձանները, անշուշտ, դրսից էին բերվում, բայց երկրի մեջ էլ անհրաժեշտություն կար արձաններ ձուլելու կամ քանդակելու տեղական պետքերի համար: Նյութը գլխավորապես պղինձն էր, բայց մենք օրինակ ունենք որ Անահիտի արձանը միաձույլ ոսկուց էր: Արձանները շինվում էին, հարկավ, և քարից: Մութ ակնարկներ կան որ պատկերազրույթունն էլ մեհենական պաշտամունքի տեսակետից անհրաժեշտություն էր դարձած հայերի մեջ: Բայց մինչև այժմ չեն գտնված այդ արվեստի զուտ հայկական հիշատակարաններ: Գտնվել են կանացի պղնձե արձանների կտորներ, բայց դրանք արդեն հունական արվեստի գործեր են և համարվում են Անահիտ աստվածուհու բեկորներ:

Հեթանոսական ժամանակի շինարարական արվեստից էլ ոչ մի հուշարձան չի մնացել, և սակայն չէ կարելի ասել, թե Հայաստանում ճարտարապետներ չեն եղել, քանի որ փաստ է որ հայ երկիրն ունեցել է երկու մեծ և փառավոր մայրաքաղաք, արքայական պալատներ, իրենց ահհուն հարստություններով միջազգային հռչակ ստացած մեհյաններ: Պատմական տեղեկություններ կան որ վարպետներ գալիս էին Հունաստանից էլ, Հռոմից էլ: Բայց հազիվ թե կարելի լինի ասել որ Հայաստանի բոլոր շինությունները Հունաստանի և Հռոմի շինությունների կույր պատճեններն էին: Մենք արդեն դիտենք, որ Տրդատ Ա վերանորոգեց կործանված Արտաշատը Ներոնի ուղարկած դրամով և հռոմեացի վարպետներով: Այդ ժամանակվա գործ է, անշուշտ, այն փառավոր փոքրիկ շինությունը Գառնի քաղաքում, որի ավերակները այժմ էլ մնում են և կրում են «Թախտ Տրդատի» անունը: Նա զուտ հռոմեական արվեստ է, բոլորովին օտար Հայաստանի երկնքի տակ, որովհետև ուրիշ մի տեղ չկան այդպիսի շինության հետքեր: Այս հանգամանքն իրավունք է տալիս ասելու որ հայ ժողովուրդը ճարտարապետական արվեստի մեջ էլ, ինչպես և շատ ուրիշ բաներում, կարողացավ օտար հզոր հոսանքների դիմաց որոշ չափով ազգային ինքնուրույնություն պահպանել: Արշակունիները, անկասկած, պարթևական կարգեր և ոճ բերին իրենց հետ Պարսկաստանից, բայց արդեն պարսկական արվեստն էլ, Աքեմենյանների և պարթևների ժամանակ, արևմտյան արվեստից շատ բան էր վերցրել, պահպանելով, սակայն, իր սեփականը, ազգայինը: Այսպես էր, անշուշտ, և հայկական արվեստը: 65

## Գլուխ երրորդ

### Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն    Հ Ե Ղ Ա Շ Բ Ջ Ո Ւ Մ

1. ՍԱՍԱՆՅԱՆՆԵՐ: 2. ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԸ ԵՎ ՍԱՍԱՆՅԱՆՆԵՐԸ:

**1. Սասանյաններ:** Իրանի հարավ-արևմտյան մասը, որ իսկական Պարսկաստանն է կազմում (Ֆարս կամ Ֆարսիստան), չափազանց խոշոր դեր է կատարել պարսիկ ժողովրդի ազգային անկախությունը համաշխարհային տիրապետության աստիճանին հասցնելու գործի մեջ: Այդ երկիրն էր Աքեմենյան աշխարհակալ շահնշահների՝ Կյուրոսի, Դարեհի, հայրենիքը: Աքեմենյանների անկումից հետո Ֆարսը բաժանված էր մանր տեղական իշխանությունների կամ թագավորությունների, որոնք իրապես կամ անունով միայն հպատակված էին «արքայից արքաներին», պարթև շահերին: Սակայն Ֆարսին մի անգամ էլ վիճակված էր, առաջինի պես և գուցե դեռ էլ ավելի մեծ չափով, հզոր շինարարական դեր կատարել պարսից պատմության մեջ:

Երրորդ դարի սկզբում տեղական այդ մանր թագավորների շարքում էր Սասանի որդի կամ թոռ Պապակը, որ Շիրակից դեպի արևելք գտնվող Շիր գյուղից էր: Մեռնելիս նա իր թագը հանձնեց իր Շապուհ (իսկական ձևը՝ Շապուհր թագավորի որդի)՝ որդուն: Բայց նրա մյուս որդին, Արտաշիրը, ապստամբվեց եղբոր դեմ, հաղթեց և խլեց թագը նրա ձեռքից (211): Դա մեկն էր այն սակավաթիվ մարդկանցից, որոնց տված է կազմակերպչական զարմանալի տաղանդի միջոցով մեծամեծ գործեր ստեղծելը: Սկսեց նա փոքրից և մի շատ կարճ միջոցում կարողացավ իր ձեռքի տակ առնել և միացնել ամբողջ Ֆարսիստանը: Այդ միությունը նա հաստատում էր ազգային սկզբունքի վրա, որի ամենաբարձր ժողովրդական արտահայտությունն էր զրադաշտական կրոնը: Կրոնը պետության նեցուկ, պետությունը կրոնի նեցուկ—ահա նշանաբանը, քաղաքական դրոշակը: Արտաշիրը սիրում էր շարունակ կրկնել. «Գահը սեղանի նեցուկն է, սեղանը—գահի նեցուկը»:

Նկատենք այս գլխից, որ Սասանյան զրադաշտականությունը նախկին զրադաշտականությունից բավական շեղված էր: Նա ընդունել էր նորամուտ դավանական սկզբունքներ, օրինակ՝ մեռելների հարություն, վերջին դատաստան, նույնիսկ փոփոխել էր աստվածների ծննդաբանությունը, Ահուրա-Մազդայի (Սասանյան ձև՝ Որմիզդ) և Ահրիմանի (Արհմնի) հայր դարձնելով Ջրվան անունով մեկին. որից ծնվեցին բարի և չար աստվածները մի շատ միա-

1 А. Крымский, «История Сасанидов и завоевание Персии арабами», М., 1905, с. 26.

2 Ibid, с. 20.



միտ պատճառաբանութեամբ<sup>1</sup>: Հին մաքուր զրադաշտականութեան տեսակետից սա արդեն հերետիկոսութիւնն էր, բայց պարսից մոգութիւնը սրբագործել էր նրան իբրև ուղղահաստութիւնն և Արտաշիրը, դարձնելով նրան պետական կրօն և պետական կազմի հիմք ու հոգի, անհանդուրժելի և հալածելի էր դարձնում ամեն մի ուրիշ կրօնական հայացք ու սիստեմ: Այս ֆանատիկոսական սիստեմն արդէն անվերելու համար նա, բնականաբար, պիտի հիմնվեր հոգևորական դասակարգի աջակցութեան վրա: Արդեն Սասանյան տոհմը, ինչպես ասում են, մոգական դասակարգին էր պատկանում<sup>2</sup> և, ուրեմն, հայթայթում էր Արտաշիրին, որ մոգ էլ էր, նվիրական ծագման առավելութիւնն էլ, մի բան, որ անագին ուժ է կազմում մանավանդ արևելքում: Եվ իրավ, մազդեզական հոգևորականութիւնը ավելի ևս մեծ ուժ և նվիրապետական տիրապետող կազմակերպութիւն ստացավ, որ շատ նման էր քրիստոնեայ նվիրապետութեան:

Ընդամենը մի տասնյակ տարիների ընթացքում այս սիստեմը Արտաշիրի ձեռքում այնպիսի հատու զինք դարձավ, որ նա տիրապետեց և Պարսի սահմաններից դուրս գտնվող երկրներին և մարտահրավեր ուղղեց նույնիսկ «արքայից-արքա» Արտավան Ե-ին: Արտավանը հարձակվեց իր ստահակ վասալի վրա: Երեք ընդհարում տեղի ունեցավ և երրորդի մեջ պարթև թագավորն սպանվեց: Դրանով էլ վերջացավ պարթևական հարստութիւնն Իրանում (224): Դժբախտ Արտավանի կտրած գլուխը Արտաշիրը պահեց իր ոտների տակ և կոխկոտեց: Այնուհետև նա ամբողջ Իրանի տերն էր (228) ու սկսեց իր քաղաքական սկզբունքները գործադրել այդ մեծ պետութիւնը կառավարելու և ուժեղացնելու համար: Պատմութեան ասպարեզ իջավ Սասանյան հռչակավոր և հզոր հարստութիւնը, որ անագին ազդեցութիւն արավ ամբողջ առաջավոր Ասիայի վիճակի վրա: Հավատարիմ մնալով երկրի ավանդութիւններին և պահանջներին, Սասանյան տոհմը առաջին իսկ քայլից իր քաղաքականութեան հիմք դարձրեց կոնկրետ Արևմուտքի դեմ, շարունակելով պետական իդեալ համարել Հռոմը Ասիայից դուրս մղելը և Պարսկաստանն իր հին սահմաններին, այսինքն Միջերկրական ծովին հասցնելը:

Իրանի այս մեծ հեղաշրջումը ամենից մեծ, ճակատագրական նշանակութիւն ունեցավ հայ ազգի համար: Հուժկու, սասանեցնող մի պատահար էր դա Հայաստանի համար և փոխեց այս երկրի պատմութեան ընթացքը, շուտով, ինչպես ասվում է սովորաբար, պատմութեան անիվը բոլորովին այլ ուղղութեամբ:

Արտաքուստ ոչինչ չէր փոխվում մրցութեան այն հավիտենական դաշտի վրա, ուր իրար հետ բախվում էին Արևմուտքն ու Արևելքը ի դեմս Հռոմի և Պարսկաստանի և այդ բախումներից այս կամ այն դիրքն էր ստեղծվում Հայաստանի համար: Բայց կար ներքին մի շատ խոշոր հանդամանք պարսկական հեղաշրջման մեջ, և այդ հանդամանքն այլևս անհնարին էր դարձնում հայ ժողովրդի նախկին կացութիւնը երկու հակադիր շխարհների մրցութեան դաշտում: Արտավան Ե, որի գլուխը երջանիկ Սասանյանի ոտների տակ էր տրորվում, հայոց Խոսրով թագավորի եղբայրն էր: Նրա որդիները, փախչելով Սասանյաններից գնացին Հայաստան՝ իրենց հորեղբոր մոտ: Եվ նրանք ուրիշ տեղ չունեին էլ: Պարթևական տոհմի դատը կենարոնանում էր հայոց արքունիքում, որ երկրորդն էր՝ Տիգրանի պարթևական արքունիքից հետո: Հայ Ար-

<sup>1</sup> De Harlez, „Avesta“, p. LXXXVII.

<sup>2</sup> Harlez, p. XXXV.

շակունիները այլևս չէին կարող հաշտ ու բարեկամ մնալ պարսից թագավորների հետ: Սասանյանների մայրաքաղաքն էլ Տիգրանը դարձավ և հաճախ այն տեղը, ուր երկար ժամանակ, ամբողջ դարեր հայ-պարթևական մերձեցումն էր կոչում-կոչվում, այժմ դառնում էր տոհմային դիմաստիական թշնամութիւնների քուրա: Այդ թշնամական հարաբերութիւնները տարածվում էին ամբողջ երկրի վրա և Սասանյանների քաղաքականութեան մի կարևոր կետն էր դառնում պարթևներին Հայաստանից քշելն ու այս երկիրը Սասանյան շահերի հետ սերտ կերպով կապելը: Հայ Արշակունիներն էլ, իհարկե, իրենց միջոցներն են ձեռք առնում իրենց տոհմի դեմ բացված այս վտանգի հանդեպ: Եվ հաճախ նոր հանդամանքների հետևանքով հայ ազգի պատմութեան մեջ հանդես են գալիս նոր, վերին աստիճանի կարևոր երևույթներ: Մինչև այդ՝ Հայաստանը Իրանի կողմն էր, նրա քաղաքական-կուլտուրական շահերով էր ապաստանը Իրանի կողմն էր, նրա քաղաքական-կուլտուրական շահերով էր ապաստանը և մեծամեծ ջանքեր է գործ դնում Պարսկաստանից նախ քաղաքականապես և ապա նաև կուլտուրապես անջատվելու համար: Այս ջանքերը լցնում են հայոց պատմութեան էջերը համարյա ամբողջ երեք դար և միանգամայն կերպարանափոխում են հայ ազգի ճակատագիրը, առաջացնելով այնպիսի խոշոր երևույթներ, ինչպես են քրիստոնեութեան մուտքը և նրա հետևանքով հայոց ազգային գրականութիւնը և այլն:

Մրցութիւնը Սասանյանների և հայ Արշակունիների մեջ, իհարկե, միայն զենքով չէր կատարվում: Հայաստանում գործում էր և Սասանյան քաղաքականութիւնը, ինչպես մի ժամանակ գործում էր պարթևականը: Պարսկասեր կուսակցութիւնը չվերացավ հայ երկրից երկար ժամանակ և մրցում էր հռոմեասեր կուսակցութեան հետ, շնայած որ վերջինիս կողմն էր արքունիքը: Այն մրցութիւնն էլ մեծամեծ շարժումներ առաջացրեց Հայաստանում և շատ թուլացրեց նրան: Երկու կողմից գործողները հայ ազնվականութեան ներկայացուցիչներ էին. ժողովուրդը, ինչպես և առաջ, մասնակցութիւն չունեց պետական հարցերի մեջ և անգիտակցաբար գնում էր իր նախարարների հետևից: Եվ երկու հակամարտ հոսանքների ճակատագիրը վերջնականապես որոշվում է այն ժամանակ, երբ քրիստոնեութիւնը կամաց-կամաց ժողովրդական կրօն է դառնում, առաջ է քաշում ժողովուրդը իբրև համայնական գործն ուժ:

**2. Արշակունիները և Սասանյանները:** Մրցակցութիւնն սկսվեց նոր կարգերի հենց առաջին տարիներից: Իրանի տերը դառնալուց հետո Արտաշիրի առաջին գործը դառնում է արշավանքը Միջագետքի կողմերում, ուղղված, իհարկե, հռոմեացիների դեմ: Բայց այդտեղի արաբներից պարտութիւն կրելով, նա հարձակվում է Հայաստանի վրա (228): Այստեղ էլ, սակայն, նա հաղթվեց Խոսրովից, որի հետ կովին մասնակցում էին Արտավանի փախստական որդիները և Ատրպատականի թագավորը, որ, ինչպես պիտեմք, նույնպես պարթևական ծագումից էր<sup>1</sup>: Արտաշիրի պարտութիւնն այնքան սաստիկ էր, որ նա ստիպված եղավ փախչել Իրանի արևելյան կողմերը՝ նոր դուրք հավաքելու համար<sup>2</sup>:

Բայց այնուհետև պատերազմի դաշտը փոխադրվում էր դարձյալ հռոմեա-

<sup>1</sup> Գալուստյան, «Քննական պատմ. հայոց», Գ, էր. 268:

<sup>2</sup> Халатяну, с. 334.

կան Միջագետքը: Պարսից թագավորի մի փայլուն ջոկատ անակնկալ կերպով մտնում է Անտիոք և այնտեղ Արտաշիրի անունից պահանջում է, որ հոռմեացիները վերադարձնեն հին պարսկական այն բոլոր երկրները, որոնք գտնվում էին Եփրատի և Միջերկրականի մեջ: Հին պատմության կրկնություն էր դարձյալ, որ տեղի էր ունենում Ասիայի այս մասում: Եվ ինչպես անցյալում, այս անգամ էլ հոռմեացիները այդ հանգանակության պատասխանեցին պատերազմով: Ալեքսանդր Սևերոս կայսրը մի սովոր բանակով խաղաց դեպի Արևելքը: Բանակը բաժանված էր երեք մեծ մասի, որոնցից մեկը, հյուսիսայինը, պիտի արշավեր Հայաստանի վրայով Ատրպատական և Մարաստան, ուր պիտի գործեր հայոց զորքի հետ և ապա Միջագետքում միանար մյուս մասերի հետ՝ այդտեղից միահամուռ մի արշավանք տանելու համար դեպի Սասանյանների մայրաքաղաքը (233): Սակայն այս արշավանքը հաջող վախճան չունեցավ հոռմեացիների համար, թեև հաղթող չէին և պարսիկները: Հայոց երկիրը շարունակում էր հաջողությամբ մաքառել Սասանյանների դեմ: Բայց Արտաշիրը եթե չկարողացավ հաղթել Խոսրովին, գոնե տեսավ նրա եղբրական մահը: Խոսրովը, ինչպես պատմում է հայկական ավանդությունը, սպանվեց իր մոտիկ մի ազգականի ձեռքով, որի անունն էր Անակ: Բայց կան ուղղակի ցուցմունքներ էլ որ սպանողները եղել են հենց Խոսրովի եղբորորդիները, որոնք ապաստան էին գտել նրա մոտ: Պարթևական սովորություն էր սպանել թագավորողին՝ նրա տեղը բռնելու համար: Արտավանի որդիներն էլ, երևի, այդ միջոցին դիմեցին՝ Հայաստանի թագը հափշտակելու համար: Խոսրովն սպանվում է 238 թվին, բայց դավադիրների ձգտումն անկատար է մնում, որովհետև թագն անցնում է Խոսրովի մանուկ որդուն, Տրդատ Գ-ին: Այս գործը կատարվեց անշուշտ ոչ առանց հոռմեացիների օգնության:

Արտաշիրին հաջորդեց նրա որդին Շապուհ Ա (242—272), որ նոր թափով արշավանքներ սկսեց հոռմեացիների դեմ, օգտվելով նրանց ժամանակավոր թուլացումից: Բայց հենց նույն 242 թվին հաղթական արշավանքով առաջ եկավ Գորդիանոս Գ կայսրը, որ գրավեց մի շարք քաղաքներ և արդեն պատրաստվում էր Տիգրոսի վրա գնալ, բայց սպանվեց իր մարդկանց ձեռքով: Նրան հենց այդ արշավանքի միջոցին հաջորդեց նրան սպանողներից մեկը, Փիլիպոսը, որ վատաբար դադարեցրեց հաղթական արշավանքը և շտապելով վերադառնալ Հռոմ, հաշտություն կնքեց Շապուհի հետ, որով Պարսկաստանին էր թողնում Միջագետքն ու Հայաստանը (244): Սակայն հոռմեական զորքերը շարունակեցին մնալ այդ երկրներում և Շապուհը երկար ժամանակ չէր համարձակվում գրավել այդ երկրները, մինչև որ հայտնի դարձավ, թե Հռոմի գործերը Եվրոպայում աննպաստ ընթացք են ստացել և գերմանական պատերազմները սպառել են նրա ուժերը: Օգտվելով այս բարեհաջող հանգամանքից, Շապուհը 252-ին մտավ Հայաստան, հեռացրեց այնտեղ գտնված հոռմեական զորքը, որի հետ հեռացավ և Հռոմ գնաց նաև Տրդատ Գ թագավորը: Նրա տեղ Շապուհը թագավոր է դնում Արտավազդ անունով մեկին, որի ծագման մասին հաստատ տեղեկություններ չկան: Գերմանացի գիտնական Գուլթմիդը կարծում է, թե դա հենց Խոսրովի սպանողներից

1 Моммсен, V, 410.  
2 Է. Կ. Տեր-Սահակյան, «Վաղարշ Ե Պարթևաց թագավորը՝ նախահայր Մամիկոնյանց» («Բազմավեպ», 1906, 391—393):

մեկն էր, նրա եղբայրը, Արտավանի որդին: Հռոմը երկար չկարողացավ հաշտվել այն մտքի հետ, որ Արևելքի բացարձակ տերը Պարսկաստանը դառնա: Եվ նորից վերսկսվում են երկու կողմերի պատերազմները: 259 թ. Վալերիանոս կայսրը գնաց պարսիկների դեմ, բայց Եդեսայի մոտ շարաշար կերպով հաղթվեց և գերի ընկավ Շապուհի ձեռքը<sup>2</sup>:

Հետաքրքրական է, որ դժբախտ կայսրի ազատության համար, միջնորդություն անում էր հենց նույն այս Արտավազդ թագավորը և արևմտյան հեղինակներից մեկը նույնիսկ հաղորդում է, թե ինչ նամակ գրեց նա այդ առիթով Շապուհին:

«Ուրախ եմ փառքիդ, — գրում էր Արտավազդը, — բայց երկյուղ եմ կրում, որ դու ավելի շուտ պատերազմի հուրն ես արծածել, քան հաղթել ես: Վալերիանոսին ազատ արձակելու մասին խնդրում են և՛ նրա որդին, և՛ թոռը, և՛ հոռմեացի զորավարները, և՛ ամբողջ Գալլիան, Ափրիկեն, Սպանիան, ամբողջ Իտալիան և Հռոմի շաշնակից բոլոր զորքերը, որոնք գտնվում են Ալյուրիկի մեջ, Պոնտոսում: Դու գերի բռնեցիր մի ծեր մարդու և քեզ հակառակորդ դարձրիր երկրի բոլոր ազգերը, գուցե և մեզ, քո դաշնակիցներիդ դեմ: Մենք, քո հարևանները, մշտապես տանջվում ենք, երբ դուք կովում եք իրար հետ<sup>3</sup>: Այսքանն է միայն հայտնի այս Արտավազդի մասին: Նույնիսկ հայտնի չէ, թե մինչև ե՞րբ թագավորեց նա: Ենթադրվում է, որ Հայաստանը մնաց Շապուհի տիրապետության տակ այնքան ժամանակ, որքան նա հաղթող էր հոռմեական երկրներում: Բայց ահա հոռմեական վասալներից մեկը, Պալմիրայի թագավոր Օդենատը, ազգով արաբ, շարաշար կերպով շարդեց Շապուհի բանակը (261): Պալմիրան գրավում է առաջնակարգ դիրք Արևմտյան Ասիայում և նրան են ենթարկվում Միջագետքն ու Հայաստանը: Եվ երբ հոռմեացիները թշնամանում են Պալմիրայի դեմ, այն ժամանակ էլ հայերը դեռ հավատարիմ էին մնացել այդ պետության<sup>4</sup>:

Շապուհին հաջորդեց Ուրմիզդ Ա (272—273): Սրա ժամանակ Միջագետքը և Հայաստանը նորից ընկան Սասանյանների տիրապետության տակ, որովհետև հոռմեական ուժն Ասիայում բոլորովին ջլատվել էր, քանի որ Եվրոպայի զանազան կողմերում մեծամեծ պատերազմներ էին մղվում Հռոմի դեմ: Այս տիրապետությունը շարունակվեց և հաջորդ թագավորների՝ Վուսթ (Բահրամ) Ա-ի և Վուսթ Բ-ի ժամանակ, մոտավորապես 10 տարի, մինչև որ հոռմեացիները դարձյալ ի վիճակի եղան Ասիայի վրա ուշադրություն դարձնելու: 282 թվականին Եփրատի հովտում երևաց Կարոս կայսրը հզոր բանակով և մտավ Հայաստան, արագ նվաճեց Միջագետքը, Տիգրոսն ու Սելևկիան, բայց այդ միջոցին սպանվեց յուրայինների ձեռքով: Նրան հաջորդած Կարիսոս կայսրը հաշտություն կնքեց պարսիկների հետ, որի զորությամբ Հայաստանը դարձյալ անցնում էր հոռմեացիներին: Սակայն այս պայմանագրու-թյունը կարող էր ուժ սպասանել որքան թագավորում էր թույլ Վուսթ Բ-ը: 293-ին Սասանյան գահը բարձրացավ Շապուհ Ա-ի որդի Նարսեսը կամ Ներսեսը, մի գոռոզ և պատերազմասեր միապետ, որ իսկույն, իր հոր օրինակին հետևելով, թշնամական գործողություններ սկսեց Հռոմի դեմ և գրավեց Հայաստանը: Բայց Հռոմում էլ այդ ժամանակ թագավորում էր հռչակավոր

<sup>1</sup> Անդ.  
<sup>2</sup> Моммсен, V, 419:  
<sup>3</sup> Халатяни, с. 341—342.  
<sup>4</sup> Моммсен, V, 427.

Դիտելետիանոս կայսրը: 296 թվականից նրա ղեկավարութեամբ պատերազմական գործողութիւններ սկսվեցին պարսիկների դեմ. զորքերի հրամանատարն էր նրա գահակից Գալերիոս Մաքսիմիանոսը, որ սկզբում պարտութիւն կրեց Ներսէհից, բայց 297-ին Հայաստանի սահմաններում սոսկալի շարդ տվեց պարսից ահագին բանակին և փախուստ դարձրեց նրան, գերի վերցնելով թագավորի ամբողջ ընտանիքը և պարսկական բարձր ավագանին: Ինքը Ներսէհը, վերջ ստանալով, փախավ և ստիպված եղավ, մի կողմ դնելով իր գոռոզութիւնը, հաշտութիւն խնդրել կայսրից: 298-ի դաշնագրութեամբ Ներսէհը ստիպված եղավ վերադարձնել Հոռմին Հայաստանի հարավային նահանգները, որոնք Սասանյանների տիրապետութեան տակ էին գրտնրվում, այլև հրաժարվել Հայաստանի և Վրաստանի վրա գերիշխանութիւն ունենալու ամեն մի ձգտումից, ընդունելով այդ երկու երկրների կախումը Հոռմից<sup>1</sup>:

Այս հաշտութիւնը անխախտ մնաց Արևելքում ամբողջ 40 տարի: Այսքան երկարատև խաղաղութիւնը շատ բարերար եղավ մանավանդ Հայաստանի համար: Մշտապես կովախնձորի գրութեան մեջ գտնվող երկիրը կարող եղավ երկար ժամանակյա հանգստութիւնը գործածել իր ներքին բարօրութեան համար, օգտվելով Հոռմի հովանավորութիւնից: Եվ իրավ, այդ ժամանակամիջոցում էլ Հայաստանը ահագին ջանքերով կարողանում է իրականացնել իր համար անհրաժեշտութիւն դարձած կուլտուրական անշատուժը Պարսկաստանից:

276-ից հետո Հայաստանում թագավոր է Տրդատը, որ դաստիարակվել էր Հոռմում, նույնիսկ լավ տեղյակ էր արևմտյան փիլիսոփայութեան<sup>2</sup>: Հայկական ավանդութիւններն ասում են, թե սա Տրդատ Գ-ն էր, Խոսրովի որդին: Սակայն այս հանգամանքը միանգամայն անհավատալի է դառնում, եթե նկատի առնենք ներկայումս պատմական գիտութեան ընդունած տվյալները այդ Տրդատի մասին<sup>3</sup>: Ամենայն հավանականութեամբ սա մի ուրիշ Տրդատ էր, որ մեծացել էր Հոռմում: 66

Ահա այս լուսավորված թագավորի ղեկավարութեամբ է, որ քրիստոնեութիւնը մտցվում է Հայաստանի մեջ:

<sup>1</sup> Mommsen, V, 434.

<sup>2</sup> Գաբրիելյան, Բ, հր. 466.

<sup>3</sup> Ամենամեծ անպատեհութիւնը ներկայացնում է ժամանակագրութիւնը: Եթե ընդունենք որ Տրդատը մանուկ հասակում հաջորդեց իր սպանված հորը 238-ին, ապա հեռացվեց գահից և նորից գահին տիրացավ 295-ից առաջ, ապա ի նկատի առնենք Տրդատի մահը հավանորեն 320-330 թվականներին, այն ժամանակ դուրս կգա, որ Տրդատը թագավորել է 62-68 տարի, որ հավանականութեանց հետո մի բան է:

## Գլուխ չորրորդ

### Կ Ր Ո Ն, Ա, Կ Ա Ն Հ Ե Ղ Ա Շ Ր Զ Ո Ւ Մ

1. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ: 2. ՄՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ:

#### 1

Քրիստոնեութիւն<sup>1</sup>: Հրեութեան ծոցից ծնվեց քրիստոնեութիւնը, Պալեստինի մի անկյունում: Համաշխարհային պատմութեան մեջ վերին աստիճանի նշանավոր և ուսանելի երևույթ են այդ կրոնի սաղմնավորումը, կազմակերպչական շրջանները և ծավալումը: Սկզբում նա տեղական մի հանգամանք էր, ըստ երևույթին հրեութեան համար միայն ծնված: Հրեութիւնը, միաստվածյան մի պաշտամունք, Յահվի (Եհովայի) պաշտամունքը, համաշխարհային կրոն երբեք չդարձավ: Նա հանուկ էր միայն երրայական ազգին, գերազանցորեն ազգային առանձնացման, ազգային անհատականութեան կամ, ավելի ճիշտ, եսականութեան մի բարձր արտահայտութիւն: Յահվի պաշտամունքի հիմքն այն էր, որ աշխարհում մի հատ միայն ընտրյալ ազգ կա, բարձր բոլոր մյուս ազգերից և դա հրեութիւնն է, որի Յահվին, երկնքի և երկրի արարիչը, միայն այդ ազգի հովանավորն ու պաշտպանն է և նրա շահերին պատրաստ է զոհել աշխարհի բոլոր ազգութիւնները: Հրեան իրավամբ պարծինում էր իր ստեղծած կրոնով, որ պարունակում էր իր մեջ ոչ միայն բարձր ու վսեմ վարդապետութիւն, այլև օրենք՝ մարդկային կյանքըն այս աշխարհում կառավարելու և կանոնավորելու համար: Եվ այս հսկարտ ինքնագիտակցութեամբ հրեան արհամարհում էր ամեն ինչ, որ դուրս էր հրեական շրջանակից:

Սակայն յուրաքանչյուր կրոնի, դարերի ընթացքում, հատուկ է քարացման վիճակը: Հրեութեան ծոցում այս վիճակն սկսեց ավելի և ավելի զարգանալ հրեական պատմութեան այն շրջանում, երբ ազգային անկախութիւնից զրկված ժողովուրդն ընկավ Սելևկյան թագավորների իշխանութեան տակ և ստիպված էր համառ ու անհավասար կռիվներ մղել իր ինքնուրույնութիւնը պահպանելու համար: Թեև այդ մրցութիւնը վերջացավ Մակաբեների հերոսական հաղթանակով, որ ազգային անկախութիւնն ստեղծեց, բայց այդ անկախութիւնն էլ շուտով կորավ և Հրեաստանը հռոմեական տիրապետու-

<sup>1</sup> Պատմական գիտութեան մեջ քրիստոնեութեան աղբյուրների քննադատութիւնը արդեն մի անգին գրականութիւն է զարգանում: Մենք կհիշատակենք մի քանիսը, բայց այստեղ պետք է ասել, որ այդ գիտական քննադատութեան մեծ ուսկիրաներ մնում են. Դավիթ Շարաուս «Жизнь Иисуса», 2 t. М. (1907) և էրնեստ Ռերնան («Жизнь Иисуса», «История первых веков христианства») և այլն:

թյան տակ ընկավ: Հայաստանի անկախութիւնը ոչնչացնող Պոմպեոսը նույն տեսակ գործունեություն ունեցավ և Պալեստինայում:

Աստուծու ժողովրդի համար շատ ծանր էր հռոմեական լուծը. նա ճնշված էր, հեծում էր մինչև հուսահատութեան հասնելը: Եվ որքան խստանում էր այդ դրությունը, որքան պարզվում էր, թե դեպի գերություն անդունդն էր գնում հրեությունը իր հայրերի երկրում, այնքան այդ ժողովուրդը հավատարիմ իր անցյալին ու իր կրոնական ավանդություններին, ուժեղացնում էր երկնային փրկարար հրաշքի վրա դրած իր հույսը: Չէ՞ որ հին նախանձոռու անողորմ Յահվեն երբեք չէ թողել իր ժողովուրդը: Այժմ էլ չէ մոռացել նա Բենի-Խարայելի ազգը և շուտով նրա թագավորությունը, Յահվեի կամ պարզապես աստուծու թագավորությունը, կհաստատվի երկրի վրա և վերջ կդնի հրեության բոլոր տառապանքներին:

Աստուծու թագավորությունը իրականացնում է Մեսիան, որ թեև մարդ է, բայց և միանգամայն գերբնական մի էակ, աստուծուց օժտված և նրա անհասանելի կարողությամբ լցված: Պիտի երևան գա նա ամպերի մեջ, կայծակնային ճայթմունքների և ամպոպային որոտմունքների մեջ, պիտի հաղթի Խարայելի թշնամիներին, դատե բոլոր մեռելներին ու կենդանիներին և առհասարակ վերացնի անարդարությունը ու վատությունը, հաստատելով երկրի վրա հավերժական ոսկեդար: Այդ ազատարարին էր անհամբեր սպասում ժողովուրդը և այդ սպասողության մեջ ու նրա շնորհիվ տեղի էին ունենում մեծամեծ շարժումներ Հրեաստանի մի քանի կողմերում: Ապստամբական շարժումներ էին պայթում հռոմեացիների դեմ և այդ ժամանակ երևան էին գաղիս Մեսիաններ: Թվում էր, թե կատարվել է Յահվեի խոստումը և մոտ է փրկությունը: Բայց հռոմեական ահեղ ուժը արագ խեղդում էր ապստամբությունը և նորից սպասողություն՝ մոռալ հուսահատության մեջ:

Այս անհավասար մրցությունը, լի մեծամեծ փորձանքներով, առաջացնում էր ազգայնական ռեակցիա, որ ավելի ևս անշարժացման ու քարացման անհրաժեշտություն էր բերում այն բարոյական և մտավոր արժեքների համար, որոնց վրա հենվում էր հրեությունը: Իսկ այդ արժեքները ամբողջովին ձուլված էին կրոնի մեջ, որ կլանել էր կամ կլանում էր ազգային մյուս մեծ հենարաններն էլ՝ լեզուն, հայրենիքը: Այլևս նախկին հրեությունը չէր, խըմբված Երուսաղեմի տաճարի, իբրև համազգային իդեալի խտացման շուրջը: Նրա մի նշանավոր մասը ցրված էր Արևելքի զանազան կողմերում: Միջերկրական ծովի ավազանում շկար համարյա և ոչ մի քաղաք, ուր գոյություն ունենար հրեական գաղութ: Այդ տեղերում հրեության մայրենի լեզուն գլխավորապես հունարենն էր: Եվ հրեության պահպանողը սինագոգն էր, հրեական ժողովարանը, որ փոխարինում էր Երուսաղեմի տաճարը: Այդտեղ էր տիրում աստվածաշունչը և այդ հիմնարկությունն էր, որ կապում ու միացնում էր հրեությունը թե՛ մայր հայրենիքում և թե՛ նրանից դուրս, բոլոր գաղթական հատվածների մեջ: Հրեական լեզուն հնացած և անհասկանալի էր դարձած նույնիսկ և Պալեստինայում. այդտեղ ժողովուրդի գործածական լեզուն արամեականը կամ սիրիականն էր: Ազգային լեզուն մատչելի էր միայն օրենսգետների կամ դպիրների նեղ շրջաններին<sup>1</sup>:

Իսկ թե ինչ էր տալիս սինագոգը, ազգային քարացած պաշտամունքը՝ այդ ամենից լավ ցույց են տալիս այն հասարակական շերտավորումները՝

որոնք կրոնական հանգամանքներով էին առաջ եկել և ուրիշ տեսակ հենարաններ չէին էլ կարող ունենալ մի կրոնական համայնքի մեջ: Առաջին տեղն այդ դասակարգերի մեջ պատկանում էր բարձր ազնվական բրմության կամ բահանայության, որի դասակարգային հորջորջումն էր սահուն կեցի և որ իր տիրապետությունը պահպանելու համար քծնում էր հռոմեական տիրապետության: Իսկ ժողովրդի մեջ նրա հեղինակությունը հենվում էր դպիրների դասակարգի վրա: Դա սինագոգի, տաճարի պաշտոնեությունն էր, որ օրենքները բացատրելու արտոնությունն ուներ և հենց այս պատճառով էլ նրա իշխանությունը համայնքի ներքին կյանքում շատ ընդարձակ էր: Ամեն ինչ հպատակեցվում էր օրենքի տառին և այս գործողության մեջ տիրում էր բացառողի անսահման կամայականությունը: Հրեական այս գիտնականությունը նույնիսկ զանազան դպրոցների էր բաժանված, որոնք անվերջ վեճեր էին մղում իրար դեմ, շատ անգամ ամենադատարկ հարցերի առիթով: Այսպես, մղում իրար դեմ, շատ անգամ ամենադատարկ հարցերի առիթով՝ Այսպես, խորիմաստ վիճաբանությունների նյութ էր դարձել այն հարցը, թե կարելի է շարժվել օրը սանդուղքը մի աղավաղման վերջնել, մյուսին մոտեցնել: Դպիրների դասակարգն էլ իր հերթին հենվում էր փարիսեացիների դասակարգի վրա, որ ներկայացնում էր ունևոր մասը, բուրժուազիան: Փարիսեացիները դժպիրների քարոզած առաքինությունների մարմնացումն էին տալիս իրենց գործերով և վարվեցողությամբ—օրենքի հյուսիսատակներն էին, ծեսի, արարողության, ավանդությունների գերի, պաշտոնական ցուցամուլ բարեպաշտություն էին տանում իրենց վրա և նույնիսկ փողոցներում անցնելիս աղոթքներ էին մրմնջում, գլուխները խոնարհեցրած, որպես թե չհամարձակվելով մարդկանց աչքին երևալ:

Հրեության սյուններն էին այս երեք դասակարգերը, ազգային կղզիացման, խտրականության, հետադեմ ավանդապաշտության և քարացած ծեսի ներկայացուցիչները: Նրանք և մասնավորապես փարիսեացիները անսահման ատելություններ էր արձամարհանելով էին վերաբերվում հասարակ ժողովրդին<sup>2</sup>: Իսկ ժողովուրդը, անգիտակից ու ճնշված, հենց նրանց մեջ էր որոնում պաշտպանություն և արդարություն: Ժողովուրդն էր, որ կրում էր հռոմեական տիրապետության ամբողջ ծանրությունը, որ ապստամբական շարժումների մեջ էր մտնում և շարաշար պատժվում էր դրա համար:

Ահա այսպես էին ժամանակն ու միջավայրը, երբ Օգոստոս կայսրի ժամանակ, քրիստոնեական թվականից մի քանի տարով առաջ<sup>3</sup>, Պալեստինյի գավառական խուլ անկյուններից մեկում, այն է, Գալիլայի Նազարեթի փոքրիկ քաղաքում, ծնվեց մի մանուկ, մեկը մարդկային հանճարներից: Նա ընդհանուր հոգևոր և նրա կին Մարիամի որդին էր, ստացավ հրեական շրջաններում շատ սովորական Հիսուս անունը, սովորեց իր հոր արհեստը և շատ տիրակալեց այնպես, ինչպես կարող էր դաստիարակվել նրա դասակարգի ամեն մի մարդ. անշուշտ տեղական սինագոգի դպրոցում էր, որ նա սովորեց ավանդուր գրագիտություն արամեերեն լեզվով: Անժամոթ մնացին նրան հրեական լեզուն, ինչպես նաև հունարենը<sup>4</sup>: Դպրոցից դուրս նրա դաստիարակն էր հայրենի բնությունը—գեղեցիկ լեռնային տեսարաններով հարուստ երկիրը

<sup>1</sup> Ibid, c. 19.

<sup>2</sup> Ibid, c. 23.

<sup>3</sup> Alfred Loisy, «Jésus et la Tradition Evangélique», Paris, 1910, p. 50.

<sup>4</sup> Адольф Юлихер, «Религия Иисуса и начало христианства до Никейского собора», («Сборник из истории раннего христианства», М., 1907, с. 69).

<sup>1</sup> Г. Гольман, «Религия иудеев в эпоху Иисуса», М., 1908, с. 9—12.

և միամիտ ու պարզակյաց ժողովուրդը: Քաղաքական դեպքերը արձագանք  
չէին տալիս այս խուլ անկյուններում և ազգաբնակչությունը շատ էլ ընդար-  
ձակ տեղեկություններ չունեին այն ժամանակվա աշխարհի ու թագավորու-  
թյունների մասին: Այսպես էր և Հիսուսը: Իբրև ժողովրդի զավակ՝ նա հա-  
վատում էր հրաշքներին, դեերին, մի հավատ, որ հատուկ էր ամբողջ հին  
աշխարհին:

Առաջին հզոր տպավորությունը, որ խորապես ազդեց նրա վրա երիտա-  
սարդության շրջանում, անապատում երևեցած նոր մարգարեն էր, Հովհան-  
նես անունով, որ իր արտաքինով և մանավանդ իր քարոզներով ընդհանուր  
ուշադրություն գրավեց: Դա մի խստակյաց մարդ էր, հեռացած մարդկային  
հասարակությունից, պահեցող, աղքատ հագնված, որ, սակայն, ասում էր,  
թե աստուծու թագավորությունը գալիս է, պետք է պատրաստվել նրան ընդու-  
նկու ապաշխարությանը: Խոր տպավորություն էր գործում այդ կոչը, և ժո-  
ղովրդի բազմությունները դիմում էին Հորհանան գետի եզրերը, ուր Հովհան-  
նեսը ամենքին մկրտում էր: Հիսուսն էլ գնաց այդ բազմության հետ, լսեց  
Հովհաննեսի քարոզությունը, մկրտվեց նրանից: Եվ այնուհետև նա էլ, թող-  
նելով իր հյուսնությունը, գնաց քարոզության, ժողովրդին հայտնելու միև-  
նույն ավետիսը, այսինքն թե եկել է աստուծու թագավորությունը: Նա աշա-  
կերտներ գտավ Հովհաննեսի նման և ընտրեց նրանց ժողովրդական խոնարհ  
խավերից, ձկնորսների միջից: Բայց նա Հովհաննես Մկրտչի պատճենը չէր,  
աստուծու թագավորության գաղափարը զուտ հրեական էր, և Հովհաննեսը  
հրեական շրջանակներից չէր դուրս գալիս այդ գաղափարն արժածելիս: Մինչ-  
ւշեռ նազարեթի երիտասարդը նույն այդ գաղափարի շուրջը բաց էր անում  
մարդկայնության, բարոյականության ընդարձակ և լուսավոր հորիզոններ:

Հիսուսը մի տող անգամ գրություն չէ թողել, մենք նույնիսկ չունենք նրա  
իսկական խոսքերը, որովհետև նա խոսում էր սիրիական լեզվով, իսկ չորս  
ավետարանները, որոնց մեջ մնացել են նրա խոսքերն ու գործերը, գրված են  
հունարեն լեզվով, հետևաբար և ներկայացնում են իսկական խոսքերի թարգ-  
մանությունը: Այսքանը պարզ է, որ Հիսուսը երկարատև կյանք չունեցավ,  
իսկ նրա քարոզությունն ավելի ևս կարճատև էր: Չնայած այս կարճատևու-  
թյան, Հիսուսի գաղափարների և աշխարհայացքների գարգացումը կարելի է  
բաժանել շրջանների: Սկզբում նա պարզ մի բարոյագետ է, որ բարոյակա-  
նության շքնադ գասեր է տալիս կարճ ու ազրու խոսքերով և մանավանդ գե-  
ղեցիկ առակների միջոցով: Սիրել ընկերին իր անձի պես, սիրել նույնիսկ  
թշնամուն, լինել ներողամիտ, անհիշաշար, հղբայրական զգացմունքով տո-  
գորվել դեպի մարդկությունը— այսպես են այդ սկզբունքները, որոնք պարզ-  
վում էին ունկնդիր հասարակ ժողովրդի առաջ: Հիսուսը չէր դուրս գալիս  
հրեության շրջանակից, նոր վարդապետություն, նոր դպրոց կամ նոր կրոն  
հիմնելու առաքելություն չէր տեսնում իր մեջ, այլ միայն ցույց էր տալիս,  
թե ինչն էր են մոռացվել աշխարհի վրա և ինչ լրացումների է կարոտ հրեու-  
թյունը: Աստուծու թագավորությունը նա հասկանում էր գաղափարական մրտ-  
քով և նրա աստվածն էլ սինագոգի կամ տաճարի պաշտոնական աստվածը  
չէր, այդ նախանձոտ, պատժող միապետ Յահվեն, որի վերաբերմամբ մարդ  
կարող է լինել միայն երկյուղով շրջապատված, դողացող մի հպատակ: Հի-  
սուսը քարոզում էր, թե աստված հայր է, որ լցված է սիրով դեպի մարդու-  
թյունը և ամեն մարդ նրա որդին է: Հոր և որդիների մեջ հարաբերությունները  
շատ պարզ էին. որդին պիտի կատարեր հոր կամքը, այսինքն կատարեր բա-

րդ գործեր և աղոթեր նրան շատ կարճ կերպով: Այստեղից Հիսուսի հակա-  
նակությունը ծեսերի, արարողությունների, երկար աղոթքների և առհասա-  
րակ ձևական բարեպաշտության դեմ: Նշանակություն չէր տալիս նա նույ-  
նիսկ և տաճարներին և նրա քարոզության վայրերն բացթողա էին, լեռների  
վրա, լճի ափին, մի խոսքով ամեն տեղ, ուր խմբվում էր հասարակ ժողո-  
վուրդը: Այդ ժողովրդի մարդ մնաց նա մինչև վերջ և ուսմավարական սկզբ-  
ունքներն էին նրա քարոզությունների գոհարները: Աստուծու թագավորու-  
թյունը նյութական մտքով էլ էր ընդունում նազովրեցի քարոզիչը, այսինքն այն  
մտքով, որ նա պիտի բերե արդարություն և խաղաղություն ու վայելչություն:  
Եվ դա կլինի աղքատների թագավորությունը: Անողորմ կերպով հարվածե-  
լով հարուստներին, նա վեր էր հանում աղքատությունը իբրև երանության  
արժանի մի դրություն: Զրկվածների, տանջվողների դատն էր նա պաշտպա-  
նում և պահանջում էր, որ համարակությունը իր մի հատ կորած անդամին  
որոնելու, գտնելու և դարմանելու համար մոռանա նույնիսկ հարյուրավոր-  
ների շահերը:

Այս բոլորն արդեն մի ամբողջ հեղափոխություն էր կաշկանդված ու  
բարացած հրեության ժոցում: Հիսուսն զգում էր իր հեղափոխական դերը և  
չէր քաշվում նրանից: Նա ասում էր, որ կոփվ և ատելություն յուրացնելու  
համար է աշխարհ եկել ինքը: Եվ իրավ, կոփվը չէր դադարում նրա և պաշտո-  
նական բարեպաշտության ներկայացուցիչների և արտոնատերերի մեջ: Սա-  
ղուկեցիները նկատեցին այն նոր շարժումը, որ սկսել էր ժողովրդի հասա-  
րակ խավերի խորքում և գեների կանչեցին իրենց հեղինակության ենթարկ-  
վող բոլոր միջոցները: Կովի առաջին շարքերում կանգնած էին, իհարկե,  
պիղծներն ու փարիսեցիները: Հիսուսը միայնակ էր այդ կազմակերպված,  
ուժեղ հակառակության դեմ, բայց ոգևորված էր հեղափոխական նահատա-  
կության գաղափարով, զինված համարձակ, կծու, մտրակող մերկացումնե-  
րով, սուրբ ճշմարտությունների ամբողջ մարտական թափով: Անխնա պայ-  
քարի մեջ հրեական նախապաշարմունքները, սնապարծ կղզիացումը կորց-  
նում էին իրենց ավանդական արժեքները: Հիսուսի աստվածը բոլոր ազգերի  
աստվածն էր, ընտրյալ ժողովուրդ այլևս չէր մնում և ազգերի եղբայրու-  
թյունն ու հավասարությունն էր կանգնում մարդկության գաղափարի առաջ:  
Եվ այս նոր ու թարմ շարժման դիմաց ավանդապաշտությունը զինաթափ  
էր դառնում. դպիրների համար այլևս տեղիք չէր մնում կասկածելու, որ այդ  
ՅՕ-ամյա նազովրեցին կարող է ավելի մեծ հաջողություն ունենալ և գրավել  
ոչ միայն պարզամիտ և հասարակ գալիլիացիներին: Իսկ Հիսուսը, հետզհետե  
ավելի և ավելի ևս տարվելով պաշտոնական եկեղեցու դեմ մղված հուժկու  
պայքարով, ձեռք զարկեց ավելի խիզախ ձեռնարկության— հարվածել իր  
հակառակորդներին նրանց թագավորության սրտում, Երուսաղեմի մեջ, տա-  
ճարում, գատկական տոներին ամեն կողմից հավաքված ահազին բազմութեն-  
ների ներկայությամբ: Այդ միջոցին նա արդեն տոգորվել էր այն մտքով, թե  
իր մեջ կրում է երկնային առաքելություն, թե ինքը Մեսիա է և աստուծու թա-  
փ մեջ կրում է երկնային առաքելություն, թե ինքը Մեսիա է և աստուծու թա-  
փ մեջ կրում է երկնային առաքելություն: Խոստում էր նա  
գալիլիացիները պիտի հաստատվի աշխարհում իր միջոցով: Խոստում էր նա  
իր հոր անունից, թե և միաժամանակ իրեն «մարդու որդի» էր անվանում: Եվ  
ահ ստեղծվում էր կարծիք, թե Հիսուսը աստուծու որդի է անվանում իրեն,  
մի բան, սակայն, որ ըստինքյան բխում էր Հիսուսի վարդապետությունից և

1 Роман, «Жизнь Иисуса», Пет., 1908, с. 183.

նրա հայեցակետով գործադրելի կարող էր լինել ամեն մի մարդու վերաբերմամբ:

Սակայն նրա խիղախ ոգորումը տխուր վախճան ունեցավ Երուսաղեմում: Սաղուկեցիությունը ավելորդ համարեց խոսքով պայքարել նրա հետ, այլ ուղղակի դիմեց իր իշխանության գործադրության: Հիսուսը ձեռքազրկեց իբրև խոսվարար և ինքնակոչ Մեսիա: Նա համարձակ կերպով գնաց իրեն մեղադրողների դատարանը, ուր նրան դատապարտեցին մահվան պատժի Եվ գաղափարական անվեհերությունը էլ այդ մեծ մարդը մահ ընդունեց խաչի վրա, մատնված անարգանքի և ծաղրի:

Բայց այդ մահը չէր կանգնեցնում սկսված գործը: Հիսուսն աշակերտներ ուներ և հետևողներ, որոնք թեև շատ էլ բազմաթիվ չէին, բայց բավական էին կազմելու համար մի այնպիսի շրջան, ուր շատ խոր և անմոռաց էր խաչված ուսուցչի ազդեցությունը: Այդ շրջանը հավատում էր, թե Հիսուսը իսկապես Մեսիա էր և այդ հավատը ավելի ևս վառեցին ուսուցչի ողբերգական մահվան հանգամանքները: Աշակերտները, ճիշտ է, վերջին օրհասական ժամին վախից թողել էին Հիսուսին ու փախել, բայց Գալիլիայում, ուր այնքան առատ էին խաչվածի հիշատակները, մի երկրորդ կերպարանավորում ստացավ Հիսուսի գործը: Նա, որ Գալիլիայում ծնվել էր իբրև Մեսիա, չէր կարող ոչնչացված լինել մահվան գրկում: Եվ հավատ եկավ, թե նա հաղթել է մահը, հարություն է առել մեռելներից և համբարձել է երկինք, որպեսզի աստծու զորությունն զգեցած՝ նորից վերադառնա իր թշնամիներին դատելու, շարք վերջնականապես վերացնելու և մարդկանց մեջ անմահություն հաստատելու համար: Սպասել այդ գալստյան, որ շատ շուտով պիտի տեղի ունենար, պատրաստ լինել նրան ընդունելու և նոր ստեղծվող աշխարհային կարգերի մեջ տեղ բռնելու համար—ահա ինչն է այժմ Հիսուսի փոքրիկ հոտի ձգտումը: Եվ նա գնում է Երուսաղեմ՝ այնտեղ սպասելու համար:

Այսպես կազմվում է Հիսուսին հետևողների անդրանիկ համայնքը: Նա ամբողջովին հրեաներից է բաղկացած, բաժանված չէ հրեությունից, որովհետև Հիսուսի առաքելությունն էլ զուտ միաբան հրեաների համար նշանակված է ընդունում: Այդտեղ էլ, այդ շրջանակում, ավանդություններ ու բարեպաշտ առասպելներ են ստեղծվում Հիսուսի կյանքի շուրջը, որոնց զխավոր նպատակն է այնպիսի հանգամանքներով զարդարել այդ կյանքը, որպեսզի կարելի լինի ասել, թե այս կամ այն դեպքով գալիս կատարվում էր այս կամ այն հին մարգարեի գուշակությունը Մեսիայի մասին: Բացի այդ զխավոր վկայությունից, Հիսուսի գերբնական ծագումը պիտի ապացուցվեր և նրա հրաշագործություններով, այն է՝ թե նրա մի խոսքով դեերը թողնում էին մարդուն և փախչում, կույրերը տեսնում էին, մեռելները հարություն առնում: Առասպելները, այն ժամանակներից առաջ բնական և համատարած հավատալիքները, գալիս էին և այդ կարողությունը տալու Հիսուսին:

Փոքրիկ համայնքը, լի երիտասարդական աշխուժով, ոչ միայն գերբնական և հրաշալի պատկերներ էր ստեղծում, այլև եռանդով քարոզություններ էր կատարում թե՛ Երուսաղեմում և թե՛ նրանից դուրս: Հավատացյալների փոքրիկ համայնքներ կազմվեցին և ուրիշ քաղաքներում: Հիսուսն արդեն Քրիստոս էր, Տեր, աստծու որդի: Շուտով խիստ հալածանքներ սկսվեցին Երուսաղեմում և մյուս տեղերում. տեղի ունեցավ առաջին նահատակությունը: Այս բռնությունները ավելի ևս խտացրին քարոզողների շարքերը և ավելի մտեցրին համայնքների անդամներին: Քրիստոսի գալստյան սպասում էին

որեցոր, աշխարհի վերջը մոտ էր և այդ պատճառով էլ ավելորդ էին համարում հարստություն, անհատական սեփականություն պահել, ամեն մեկն իր ունեցածը մեջ էր բերում: Այս է առաքելական դարի հռչակավոր համայնականությունը: Սակայն ժամանակն անցնում էր, երկրորդ գալուստը տեղի չէր ունենում, և հավատացյալներից շատերն էլ մեռնում էին: Համայնքի տրամադրություններն ու հավատալիքները փոխվում էին, ավելի գաղափարական և էին ստանում: Հետզհետե ձևակերպվում էր եկեղեցին: Համայնքի գործերը վարելու համար ստեղծվում էին պաշտոններ: Այսպես էին երեցնեբրը, որոնք ընտրվում էին համայնքի ծերերից և ընդհանուր խորհրդակցությամբ կառավարում էին համայնքների գործերը: Կար և համայնքի մատակարարը և համարակալը, որ կոչվում էր սարկավազ: Բայց երեցներն ու սարկավազները դեռ կղերականներ չէին: Առաքյալները ձեռք զնելով էին օրհնում համայնքի պաշտոնակատարներին:

Եվ այսպես, քրիստոնեությունն սաղմնային վիճակն էր երևացել հրեության մեջ: Դա զուտ հրեական երևույթ էր և նոր համայնքների անդամները իրենց անջատված չէին համարում հրեությունից, քանի որ ընդունում էին թե՛ Հիսուսի առաքելությունը միաբան հրեաների համար է կատարվել: Մնալու՞ Հիսուսի առաքելությունը միաբան հրեաների համար է կատարվել: Մնալու՞ այս դրությունն է, պարփակվելով հրեական նեղ և կղզիացած շրջանակներում, նոր վարդապետությունը պիտի ամենաշատը նկատվեր հրեության մի սղանդ, Յահվեի պաշտամունքի մի բարեկարգություն և այդպես էլ կորչեր նույն հրեության ծոցում: Բայց այստեղ երևան եկավ մի երկրորդ մեծ մարդ—Պողոս առաքյալը, որ հանեց քրիստոնեությունը հրեության նեղ շրջանակից և այդպիսով տարավ քրիստոնեությունը գեպի համաշխարհային տիրապետություն: Պողոսը Հիսուսի հավատացյալներին Երուսաղեմում և այլ տեղերում կատարվածք հալածողներից մեկն էր: Բայց նրա եռանդուն քննադատությունը, վառվառն, որոնող հոգին ընդգրկեցին այդ նոր վարդապետությունը և նա ֆանատիկոս հրեայից դարձավ քրիստոնեության առաքյալ և հանդերձ տարածող: Այնքան մեծ է նրա կատարած դերը այս գործում, որ նորազույն քննադատներից ոմանք նրան են համարում քրիստոնեության հիմնադիր: Սակայն ընդհանուր կարծիքն այն է, որ Պողոսը Հիսուսի գործի շանդիր: Սակայն ընդհանուր կարծիքն այն է, որ Պողոսը Հիսուսի բարոզած սկզբունքները լուսակողն ու զարգացնողն էր, ձուլելով Հիսուսի բարոզած սկզբունքները աստվածաբանական վերամշակումների մեջ: Քրիստոնեական եկեղեցին աստվածաբանական վերամշակումներով, նրա ներշնչումներով: Դա կազմակերպվել սկսեց նրա ղեկավարությամբ, նրա ներշնչումներով: Դա առաջին քրիստոնեական աստվածաբան էր, որ քրիստոնեությունը, իբրև կրոն, ձևակերպում էր աստվածաբանական որոշ սխեմաների մեջ:

Իբրև միսիոներ՝ նա նույնպես մեծ գործ կատարեց այդ նոր կրոնի համար: Նա էր, որ քրիստոնեությունը տարավ հեթանոսների մեջ: Իր ճանապարհորդությունների ժամանակ քրիստոնեական համայնքներ կազմակերպեց հունահռոմեական աշխարհի զանազան տեղերում և կենդանի ու եռանդուն հարաբերություններ էր պահպանում այդ համայնքների հետ նամակաների միջոցով, որոնց ժողովածուները կազմում են քրիստոնեական գրականության անդրանիկ պատուղները: Նոր կտակարանի, այսպես ասած, առաջին գրքերը:

Հեթանոս աշխարհում նպաստավոր հող էր պատրաստված քրիստոնեության հաղթանակի համար: Հունական և հռոմեական մտավոր կյանքում հե-

<sup>1</sup> В. Вреде, «Павел», М., 1907, с. 78.



թանոս կրոնը արդեն միանգամայն կորցրել էր իր հեղինակությունը, որով հետևեց մտածողությունը և բմբռնողությունը շատ առաջ էին գնացել և այլևս չէին կարող հաշտվել կրոնի նախնական միամիտ թոթովանքների հետ: Եվ իդուր Հռոմն ու Հունաստանը աստվածներ ու պաշտամունքներ էին փոխ առնում լարիչ ազգերից: Օտար պաշտամունքներն ավելի անհավատ էին դարձնում ժողովուրդը: Բարձր մտավորականությունը մտածում էր բոլորովին վերացնել կրոնը և նրա փոխարեն հաստատել, իբրև հասարակաց դավանանք, փիլիսոփայությունը: Սակայն այս մի մոլորություն էր: Հին աշխարհի շատ հայտնի գրողներից մեկը, Պլուտարքոսը, շատ լավ էր բնութիւն մարդկության հոգեբանությունը և գրում էր. «Ավելի շուտ քաղաքը կարող է գոյություն ունենալ առանց տների և հողի, քան պետությունը առանց կրոնի»: Մարդկությունը չէ կարողացել ապրել առանց հավատալիքների, առանց աստվածների, որոնց և փոփոխել է իր պարզացման աստիճանի համեմատ: Նորածիլ քրիստոնեությունը համապատասխանում էր այն ժամանակվա մտածողության աստիճանին հենց այն պատճառով, որ դա դեռ անմշակ մի հող էր, որի վրա կարելի էր կանգնեցնել նոր մտավոր կառուցվածքներ: Նագովրեցի Հիսուսը սկզբունքներ էր տվել հրեական կրոնը բարեկարգելու համար: Բայց հրեությունը չընդունեց այդ սկզբունքները, որովհետև ընդունելով պիտի հրաժարվեր հրեությունից: Եվ անհաս Յահվեի պաշտամունքը, պոկվելով սեմական միջավայրից, Հիսուսի և Պողոսի միջոցով անցնում էր հնդեվրոպական ազգերին, որոնք և պիտի վերամշակեին, զարգացնեին այդ կրոնական սիստեմը, մտցնելով նրա մեջ իրենց սեփական ստեղծագործությունը, բայց պահպանելով հրեական արմատը: Այսպես էր հրեական հավատը համաշխարհային կրոն դառնում և հրեական ավանդությունները, հրեական օրենքները, հրեական ազգի պատմությունը իր նահապետական միամիտ պարզությամբ, իր սիրալին երգերով անգամ դառնում էին սրբազան և նվիրական բոլոր այն հնդեվրոպական ազգերի համար, որոնք ընդունում էին քրիստոնեությունը: Եվ այս մեծագույն հաղթանակի, այս տիեզերական ծավալման և փառքի սկզբնապատճառը, առաջին հիմնադիրը Հիսուսն էր:

Եկեղեցական շինարարությունը, Պողոսից անցնելով եվրոպական կուլտուրական աշխարհը, սկսեց արագ առաջ գնալ: Բայց վերջնական հաղթանակի օրը դեռ շատ հեռու էր, հարկավոր էր երեք դարի անդուլ մրցություն հեթանոսության դեմ և անդուլ աշխատանք ներքին կազմակերպման ուժեղացման վրա: Այդ կազմակերպչական աշխատանքի մեջ քրիստոնեական առաջին դարը նշանավոր է նրանով, որ սկիզբ է դնում քրիստոնեական գրականության: Առաջին գրավոր հիշատակարաններից են ավետարանները, Հիսուսի կենսագրությունները: Այս տեսակ գրվածքները շատ երևացին թե՛ առաջին դարում և թե՛ հետո: Հայտնի է, օրինակ, հրեական Ավետարանը<sup>1</sup>: Այդ գրքերի մեջ տարբեր կերպով էին պատմվում Հիսուսի գործերը, որովհետև նրանք կազմվում էին Հիսուսի մահից շատ հետո: Տարբեր էր և նրանց պատմական արժեքը, նայած թե ինչպես էին նրանք օգտագործում գոյություն ունեցող նյութերը: Հիսուսի մահից հետո փորձեր եղան նրա քարոզները, առականքը գրի անցկացնել առանձին-առանձին: Այդ փորձիկ գրվածքներն էլ ապագայում դարձան նյութ կենսագրությունների համար, իսկ երիտասարդ

բարոզի կյանքի հանգամանքները բացատրում էին կենդանի ավանդությունները: Այս աղբյուրներից է օգտվել Մարկոսի ավետարանի հեղինակը<sup>2</sup> և այդ ավետարանն էլ համարվում է հնագույնը, գրված, ինչպես կարծում են շատերը, 70—80 թվականներին, այսինքն Հիսուսի մահից 40—50 տարի հետո<sup>3</sup>: Այս ավետարանն էլ աղբյուր է դարձել երկու մյուս ավետարանների՝ Մատթեոսի և Ղուկասի, հեղինակների համար: Հենց այն պատճառով որ այս երեքի բովանդակությունը մեկ է և բառացի նմանությունները բազմաթիվ են, այդ ավետարանները կոչվում են համացույց (սինոպտիկ): Մատթեոսի և Ղուկասի ավետարանները գրված են առաջին դարի վերջից ոչ վաղ:

Նոր կրոնը բերում էր իր հետ բազմաթիվ վիճելի հարցեր, որոնց բացատրելու համար հենց երկրորդ դարից սկսեցին առաջանալ զանազան նոր վարդապետություններ, որոնք բոլորովին աղճատում էին կազմակերպվող եկեղեցու դավանական գոյությունները: Այդ վարդապետությունների հեղինակները կոչվում էին գնոստիկներ: Քրիստոնեությունը, ստիպված լինելով կյանքի և մահվան կոնի մղել դեռ հզոր հեթանոսության դեմ, պիտի մեծ ուշադրությամբ մրցեր և այս ծուռ վարդապետությունների դեմ՝ իր գոյունության պահպանելու և ընտրած ուղղությամբ առաջանալու համար: Եվ անհավանաբար պահպանելու անհրաժեշտությունը կազմակերպչական նոր այս կրկնակի մրցությունների մեջ էր, երկրորդ դարի աշխատանքներ է առաջ քաշում: Այս մրցությունների մեջ էր, երկրորդ դարի երկրորդ կեսում, որ գրվեց չորրորդ Ավետարանը, որ կոչվում էր Հովհաննեսի Ավետարան: Սրա հույությունն արդեն Հիսուսի կյանքը չէ, այլ այդ կյանքի փաստերը քրիստոնեական կրոնի շատագոյություն ծառայեցնելը, այդ կրոնի դավանանքները բացատրելը, հիմնավորելը վիճաբանական ձևով: Այսպես ստացվում էր չորս Ավետարան, չորսն էլ գրված հունարեն լեզվով, չորսն էլ, ուրեմն, դուրս Պալեստինի հրեության շրջանից: Եվ հրեական քրիստոնեությունը պահանջ էլ չունեց, որ իր գործածական լեզվով լինեին Հիսուսի կենսագրությունը: Նա հետզհետե անջատվում էր դրսի քրիստոնեությունից և աստիճանաբար հալվում, կուլ էր գնում հրեության պաշտամունքի մեջ, որի հետ երբեք չէր էլ կտրել իր հարաբերությունները:

Հակաֆոնտիկյան և հակահեթանոսական մրցությունը անհրաժեշտ էր դարձնում և այն, որ եկեղեցին ստանա ուժեղ վարչական կազմակերպություն: Առաջին դարի վերջից, բայց մասնավորապես երկրորդի սկզբից, սկսում է առաջանալ և ամրապնդվել կղերը իբրև գույս եկեղեցական դասակարգ, որ հենվում է նվիրապետական աստիճանավորումների վրա: Այսպիսի կազմակերպություն պահանջում էր նաև քրիստոնյա համայնքների զարգացող կյանքը<sup>3</sup>: Եվ երկրորդ դարի սկզբից բարձրանում ու մեծ կարևորություն է ստանում եպիսկոպոսը: Նա քրիստոնեական համայնքի գլուխն է, օժտված միահեծան իշխանությամբ և նրան ենթարկվում են համայնքի բոլոր մյուս պաշտոնյաները: Եկեղեցու մարմնացումն է նաև առանց նրան չէ կարող լինել եկեղեցին: Նա է որ հսկում է, կառավարում է իբրև Քրիստոսի փոխանորդ, որ ստացել է նրանից դատելու իրավունք, բայց ինքը ենթակա չէ համայնքի դատաստանին: Չհնազանդվել եպիսկոպոսին մահացու մեղք է: Եվ եպիսկոպոսական իրավասությունը այլևս մի համայնքի վրա չէ տարածվում, այլ ամբողջ մի

<sup>1</sup> G. Fuliquet, „Sources des Evangiles“, Genève, 1911:

<sup>2</sup> В. Вреде, «Происхождение книг Нового Завета», М., 1908, с. 51:

<sup>3</sup> Адольф Гарнак, «Церковь и государство до образования государственной церкви» (Сбор. «Из истории раннего христианства», М., 1907, с. 192).

նահանգի համայնքների վրա: Եպիսկոպոսական աթոռը վարչական կենտրոնն է ամբողջ այդ նահանգի կամ թեմի համար: Իգնատիոսը, Անտիոքի եպիսկոպոսը և եպիսկոպոսական միահեծան իշխանության ամենաեռանդուն չատագործը (II դար) վերագրում էր այդ իշխանության անհուսն կարևորությունը: Նրա միջոցով կարելի է կովել հերձվածների և հերետիկոսությունների դեմ, պաշտպանել եկեղեցին և առհասարակ, ասում էր, ով եպիսկոպոսի հետ չէ, նա սատանայի հետ է<sup>1</sup>: Կղերը առանձնանում էր աշխարհականներից, որոնք ինքնաբերաբար, առանց կղերի առաջնորդության և օգնության, չէին կարող արժանանալ աստծու արքայության: Այս կղերական կազմակերպությունը գնալով ավելի ևս զարգացավ և ուժեղացավ: Նվիրապետությունն ավելի ընդարձակվում է, օրինակ առնելով միապետական թագավորության կարգերը: Պաշտոնյաների երկար աստիճանավորման գլխին կանգնում էր եպիսկոպոսապետը, մի տեսակ եկեղեցական թագավոր: Երրորդ դարի երկրորդ կեսից այդ կղերական թագավորությունը իր սեփական զորքն էլ սկսեց կազմակերպել: Դա անապատականությունն էր, որ ձգնավորությունը բարձրագույն իդեալ էր դարձնում, այսինքն այն գաղափարը, թե պետք է մեռնել աշխարհի համար, որպեսզի կարելի լինի ապրել եկեղեցու համար: Այդ վարդապետական կարգերը բազմացան և տարածվեցին ամեն տեղ՝ եկեղեցու հեղինակությունը պահպանելու համար:

Բայց վարչական ուժեղ կազմակերպությունը դեռ չէր կարելի ամրացած համարել եկեղեցին: Հունա-հռոմեական աշխարհում պահանջվում էր դրանից ավելի մեծ բան էլ՝ գիտություն: Նոր եկեղեցին, հասարակ մարդկանց, ձկնորսների ձեռքով հիմնված, աղքատ էր այդ կողմից, շուններ սիստեմատիկ, գիտնականորեն մշակած վարդապետություն, և նրա միամիտ պարզությունը չէր կարող բավարարություն տալ այն ժամանակի կրթված հասարակությանը: Դեռ առաջին դարից զգացվում էր հելլենական գիտության վրա հենվելու անհրաժեշտությունը: Դա ինքնապաշտպանության ամենազորեղ միջոցն էր, որին դրանից առաջ դիմել էր նույնիսկ ազգային խտրականությամբ ապրող հրեությունը<sup>2</sup>: Եթե քրիստոնեության վիճակված էր դառնալ եվրոպական ազգերի կրոն, պետք էր, ուրեմն, որ նա սկզբից էլ զինված լիներ եվրոպական ուժերով՝ գրականությամբ և գիտությամբ: Երկրորդ դարի սկզբից այս կազմակերպչական գործն էլ դրված էր շատ լայն հիմքերի վրա: Եպիսկոպոսի Ալեքսանդրիա քաղաքում, որ Արևելքի խոշոր մտավոր և առևտրական կենտրոններից մեկն էր, հիմնվեց մի մեծ դպրոց հատկապես քրիստոնյաների համար, ուր ավանդվում էին ժամանակի բոլոր բարձր գիտությունները: Այդ դպրոցում հռչակվեցին Կլեմես Ալեքսանդրացին և նրա աշակերտ Օրիգենները, որոնք, այսպես ասած, միջնորդ հանդիսացան հունական փիլիսոփայության և քրիստոնեության մեջ՝ նրանց իրար մոտեցնելու, իրար խառնելու համար<sup>3</sup>: Հելլեն մեծ մտածողներից մի քանիսը, մասնավորապես Պլատոնը, հայտարարվեցին քրիստոնեության կողմնակիցներ և նախակարապետներ և նրանց գործերի ուսումնասիրությունը աստվածահաճո պարապմունք դարձավ եկեղեցու հայրերի համար: Այս մեծագույն երևույթն էր հիմնավորվող քրիստոնեության ծոցում: Նա իմաստություն էր սովորում իր թշնամի հեթանոս-

<sup>1</sup> Jean Réville, „Les Origines de l'Épiscopat“, Paris, 1894. p. p. 481—518.  
<sup>2</sup> O. Пфлеґгерер, «Подготовка христианства в греческой философии», М., 1908. с. 61.  
<sup>3</sup> Մանրամասն տե՛ս, Eugène de Faye, „Clement d'Alexandrie“, Paris, 1906.

թյունից, որպեսզի կարողանա ավելի հաջողությամբ կովել նրա դեմ: Հելլենական ոգու տեսակետից այս շարժումը պարզապես հետադիմական էր, որովհետև հելլենական ազատ գիտությունից վերցվում էր այն, ինչ կարող էր հաշտվել եկեղեցական վարդապետության հետ և այսպիսով գիտության հատկացվում էր ծառայական դեր աստվածաբանության հանդեպ: Բայց կիսատ, աղճատված, քրիստոնեացրած գիտությունն էլ, այնուամենայնիվ, մեծագույն բարիքն էր այն խավար և բարբարոս ժողովուրդների համար, որոնք քրիստոնեություն պիտի ընդունեին և նրա միջոցով մասնակից դառնային հելլենականության: Մեծագույն բարիք էր այս տեսակ ժողովուրդների համար և այն, որ քրիստոնեությունը յուրացնում էր հունական և հռոմեական դաստիարակության եղանակները և առաջնակարգ անհրաժեշտություն էր սարձնում գրականությունը:

Եվ միայն այսքանը չէր, որ վերցնում էր քրիստոնեությունը հեթանոսությունից: Նրա հաջողությունը շատ թույլ ու սահմանափակ կլիներ, եթե նա մնար անողոք իր թշնամիների՝ գնոստիկության և հեթանոսության դիմաց: Բայց նա զիջումներ էր անում, շատ բան փոխ առավ հեթանոսությունից, նույնիսկ ծեսին, պաշտամունքին, դավանանքներին վերաբերյալ հարցերի մեջ: Այսպես, եկեղեցու խորհուրդները մեծ մասամբ հեթանոսական ծագում ունին և այս բանի մեջ շատ ազդեցություն գործել է պարսկական (որ և մեր) Միհրը, որի պաշտամունքը քրիստոնեության ծագումից առաջ առանձին կարևորություն և զարգացում ստացավ Հռոմի մեջ: Այսպես, Միհրի ծնունդը տոնվում էր դեկտեմբերի 25-ին<sup>4</sup>, ինչպես հետո սահմանվեց և քրիստոսի ծննդյան համար: Միհրն էլ հեթանոսության մեջ տարածված աստվածների այն կարգիցն էր, որոնք տանջվում են աշխարհի փրկության համար, մեռնում են, թաղվում, բայց երեք օրից հետո հարություն առնում: Նույն Միհրի պաշտամունքի մեջ կարին մկրտության, ապաշխարության և հաղորդության խորհուրդները<sup>5</sup>:

Աստվածային երրորդության գաղափարը հատուկ էր շատ հեթանոսական կրոններին, նա ընդունվում էր և հունական փիլիսոփայության մեջ և դրա օգնությամբ էլ հիմնավորվեց քրիստոնեական դավանության մեջ<sup>6</sup>: Նույնիսկ հրաշալի ծնունդը կույսից, ինչպես տեսանք, մարդկության մեջ վաղուց տարածված և աշխարհի զանազան կողմերում հայտնի մի հավատալիք էր<sup>7</sup>:

Գիտակցաբար և անգիտակցաբար մտցնելով իր մեջ, ավելի և ավելի լայն ժողովրդականություն ստանալու նպատակով, այն ամենը, ինչ ժողովրդական հավատ էր, եկեղեցին առաջին երեք դարում ընդունեց և նվիրագործեց համարյա բոլոր հեթանոսական գաղափարներն ու ծեսերը, փոխելով նրանց անուններն ու նպատակները միայն: Նույնիսկ հեթանոսական աստվածները տեղ գտան եկեղեցու մեջ իբրև սուրբեր, փոփոխված անուններով<sup>8</sup>: Ի դեմս այդ սրբերի պաշտվում էր նրանց ներկայացրած հին պաշտամունքը: Դրա հետ պաշտամունք դարձան և մարտիրոսներն ու նրանց մասունքները

<sup>4</sup> М. Брикнер, «Страдающий бог в религиях древнего мира», Пет., 1909, с. 31.  
<sup>5</sup> A. Gasquet, „Essai sur le Culte et les Mystères de Mithra“, Paris, 1899, p. 79.  
<sup>6</sup> Մանրամասն տե՛ս, Jules Lebréton, „Les Origines du Dogme de la Trinite“, Paris, 1910.  
<sup>7</sup> P. Saintyves, „Les Vierges Mères et les Naissances Miraculeuses“, Paris, 1909.  
<sup>8</sup> P. Saintyves, „Les Saints Successeurs des Dieux“, Paris, 1909.

կամ նշխարները, ինչպես նաև պատկերներն ու արձանները, որոնք մի ժամանակ համարվում էին անընդունելի, իբրև հեթանոսական քրոթեր: Նույն հեթանոսության ազդեցության տակ ժամաքացությունն ստացավ հանդիսավորություն, տաճարները շքեղացան և զարդարվեցին, զարգացավ ծեսը, թեև քրիստոնեության հիմնադիրը թշնամի էր ձևերին, ծեսերին, շքեղության: Հաղթողը նազովրեցին շեր հանդիսանում իր լեռնցու պարզությունը, այլ եկրոպական միտքն ու արվեստը, սրանց հետ և հին աշխարհի հավատալիներն ու նախապաշարմունքները—հրաշքերն ու հրաշագործություններ, դևեր, հրեշտակներ, խոսքի մոգական զորություն, նույնիսկ կախարդություն, մի քանի տեղերում նաև հեթանոսության մեծագույն հաստատությունը՝ մատաղ Ասենք, վերջապես և այն, որ խաչը կյանքի խորհրդանշան էր Եգիպտոսում, քրիստոնեությունից առաջ, Օզիրիսի պաշտամունքի մեջ:

Այսպես էր մարդկությունը իր համար կազմակերպում մի նոր մեծ, համաշխարհային կրոն, որ այնուհետև պիտի լցներ նրա կյանքը նորանոր հրեվելներով, շարժումներով և աշխարհայացքներով: Երբորդ գարի վերջորում, այսինքն Հայաստան մուտք գործելուց առաջ, քրիստոնեական եկեղեցու կազմակերպչական մեծ աշխատանքը կանգ չէր առել: Ընդհակառակն, այդ ժամանակից նա մտնում էր ավելի եռանդուն ու փաթորկալից շրջանի մեջ, որ պարփակում էր իր մեջ նրա ձգտումը դեպի համաշխարհային տիրապետություն: Դրա համար նա պիտի դառնար պետական կրոն և միատեսակ մտածողություն, միատեսակ պաշտամունք ու ըմբռնում ստեղծեր այն բոլոր ազգերի համար, որոնք կզավանեին քրիստոնեությունը աշխարհի բոլոր կողմերում: Առաջին ձգտումը կատարվեց, բայց երկրորդը, իբրև մարդկային հոգեբանության հակասող մի գործ, դարձավ բռնություն, որ անվերջանալի կոնվերսիոնով լցրեց Քրիստոսի տունը, որպեսզի ահեղ պատերազմների, արյունահեղությունների և մեծամեծ թշվառությունների միջոցով ապացուցե, թե կրոնը մարդկային ըմբռնողության գործ է, իսկ ըմբռնողության մեջ յուրաքանչյուր ազգ ազատ է և ազատ պիտի մնա, ազատորեն իրենալ ու պաշտամունք ստեղծե իր համար, ինչպես այդ թելադրում են ամեն մի ազգի բնավորությունը, հոգեկան և կուլտուրական առանձնահատկությունները:

Դարավոր պայքարների միջոցով այս մեծ մարդկայնական սկզբունքի ապացուցած ազգերի թվումն են հայերը:

**2. Մուտքը Հայաստան:** Թե ինչպես հայերը քրիստոնյա դարձան, այս մասին շատ ու երկար է խոսում հայոց եկեղեցական գրականությունը, բազմաթիվ տարաբախտաբար, շատ քիչ է տալիս հավաստի տեղեկություններ: Գրություն ունին զրույցների, ավանդությունների, բարեպաշտ առասպելների ու կեղծիքների ամբողջ կուլտեր, որոնց մեջ հազիվ թե կարելի լինի պատմական արժեքավոր նյութեր շատ գտնել: Եթե հաշվի առնելու լինենք այդ գրականությունը, դուրս կգա որ Հայաստանը քրիստոնյա դարձավ դեռ այն ժամանակ, երբ քրիստոնեություն էլ չկար, այսինքն դեռ Հիսուսի կենդանության ժամանակ: Չարգացնելով այդ զարմանալի միամիտ անհեթեթությունը, զրույցներն ասում են թե Հիսուսի համարածովից հետո նրա աշակերտներից երկուսը, Քառնոս և Բարդուղիմեոս, նրա հատուկ հանձնարարությամբ, եկան Հայաստան և քարոզեցին քրիստոնեություն, հաստատեցին անկախ

1 Брикнер, «Страд. бог.», с. 46.

2 Մաղախա արք. Օրմանյան, «Ազգապատում», 4. Պոլիս, 1912, էր. 18:

կաթողիկոսական աթոռ: Զրույցները նույնիսկ անուններ էլ հնարեցին այդ կաթողիկոսների համար, որոնք իբր թե նստում էին Արտազ գավառում: Եվ այսպիսով դուրս էր գալիս որ հայոց թագավորը առաջինն է եղել Քրիստոսին հավատացող թագավորներից, իսկ հայերը անդրանիկ քրիստոնյա ժողովուրդն են աշխարհիս վրա:

Այս բարեպաշտական հերյուրանքներին՞ հավատացել են տասնյակ դարերի ընթացքում: Սակայն այժմ քննադատությունը միանգամայն մերկացրել է նրանց անհեթեթությունը և եթե նրանք դեռ ունեն փոքրիշատե հետաքրքրություն, այդ միայն այն տեսակետից, որ քննելով թե երբ և ինչպես են առաջացել այդ զրույցներն ու առասպելները, կարելի է գտնել այն ճանապարհները, որոնցով իսկ որ քրիստոնեությունը հասել է Հայաստան:

Հրեաստանից հետո Միրիան էր, որ մուտք գործեց քրիստոնեությունը Հիսուսի մահից քիչ հետո: Միջերկրականի այդ հարավ-արևելյան ափերով էլ նոր վարդապետության տարածումն անցավ դեպի Փոքր Ասիա, Հունաստան և Արևմուտք: Փոքր Ասիայում նշանավոր քրիստոնեական կենտրոն դարձավ Կապադոկիան: Հայաստանը քրիստոնեության հետ շփվել կարող էր կամ իր հարավից, ուր Միջագետքն է, Միրիայի հարևանը, կամ թե արևմուտքից, ուր Կապադոկիան է: Առաջին ուղղությունն ավելի հարմար էր ու ավելի կարևոր հանդիսացավ: Միջագետքում էր գտնվում Մծբինը, մի խոշոր կենտրոն, որ վաղուց հայերին է պատկանում և մի ժամանակ, ինչպես գիտենք, նույնիսկ հայոց մայրաքաղաք էլ դարձավ: Մծբինից արևմուտք երեկոս քաղաքն էր, նույնպես մի նշանավոր կենտրոն, Օսրոնի թագավորության մայրաքաղաքը: Այստեղ առաջին դարի վերջից թագավորից հայ Արշակունիների մի կողմնակի ճյուղը և երկի հենց այդ ժամանակներից էր որ Եգիպտոսի բնակչությունն ստացավ ազգագրական մի քանի տարրերի խառնուրդի կերպարանք: Այդ խառնուրդն այսպես է բնորոշվում սիրիական գրականության մի հին հիշատակարան. «պարթևներ կամ պարսիկներ, պարթևներ կամ եգիպտացիներ, պարթևներ կամ հայեր, այս բոլոր մեկ է»<sup>3</sup>: Այսպիսի դրություն մեջ կարող էր առաջանալ այդ տարրերի մտավոր-կուլտուրական սերտ միաձուլումը: Եվ դրա մի ուժեղ ապացույցն այն է որ հայերը նույնիսկ յուրացրին, ազգայնացրին թուն իսկ եգեպական ավանդություններն ու զրույցները:

Եգիպտոսի քրիստոնեության մի նշանավոր կենտրոն դարձավ հենց առաջին դարից: Այդտեղի եկեղեցու հերյուրած բարեպաշտական զրույցն է, անշուշտ, որ Հիսուսի ժամանակակից Աբգար Ուբամա թագավորին դարձնում էր Քրիստոսին հավատացած առաջին թագավորը, որ նամակագրություն էր ունեցել նրա հետ: Նույնպիսի զրույց է և Թադեոս ու Թոմաս առաքյալների գալուստը Եգիպտոս, ինչպես նաև Աբգարի հետ կապված զրույցը Հիսուսի հրաշալի պատկերի, Եգիպտոս բերված իսկական խաչափայտի մասին: Այս զրույցները վկայում են որ քրիստոնեությունը սկզբից ևեթ շատ եռանդուն էր աշխտեղ: Միրիական քարոզչության այդ եռանդը հավասար չափով երևան

<sup>1</sup> «Անբնդհատ շարունակություն առաքելական հաջորդության Ուղղափառ Ս. Եկեղեցու Հայաստանեայց» («Արարատ» ամսագիր, 1868, էր. 102):

<sup>2</sup> Կարապետ Ժ. վարդապետ, «Հայոց Եկեղեցու պատմություն», Վաղարշապատ, 1908, էր. 55—58:

<sup>3</sup> Rubens Duval, „Histoire politique, religieuse et littéraire d'Edesse“, Paris, 1893, p. 27—29.











Այսպես թե այնպես, եթե ճիշտ է որ Գրիգոր Լուսավորիչը բարձր քրիստոնեական ընտանիքի զավակ էր, այն ժամանակ մենք պետք է ընդունենք, որ քրիստոնեության մեջ, հանձին հայ կաթողիկոսության, նա վերանորոգում էր իր հին տոհմային կրոնական միապետությունը, բայց ավելի մեծ ուժով և կարևոր դիրքով, ավելի ամուր կազմակերպված, այնպես որ նա կարող էր մրցել նույնիսկ աշխարհական միապետության, թագավորի հետ։ Նորակազմ հոգևոր միապետությունը ստիպված էր, քաղաքական նկատառումներով, իր աթոռը հաստատել արքունիքի մոտ, Վաղարշապատ մայրաքաղաքում։ Բայց այդ կենտրոնից ավելի բարձր հեղինակություն և հմայք ունեն մեծ ժողովրդականություն վայելող Աշտիշատը։ Քրիստոնեությունն օգտագործեց և այդ հանգամանքը, կառուցանելով այնտեղ իր առաջին եկեղեցին և հատկացնելով նրան մայր սրբության դիրքը։ Կաթողիկոսական պալատներից մեկն էլ այնտեղ էր շինված։

Այս բոլոր կազմակերպչական հանգամանքները շատ որոշակի ցույց են տալիս որ սկզբից ևեթ հայ եկեղեցին կառուցվում էր ազգայնական հիմքերի վրա։ Ուրիշ կերպ նա չէր էլ կարող լինել մի կենդանի հիմնարկություն։ Արևելքում մարդկության պատմության սկզբից կրոնը ազգայնություն ներկայացնող բարձրագույն հիմնարկությունն է եղել և տաճարը մարմնացրել է նրան պատկանող ժողովրդի անկախությունն ու ինքնուրույնությունը։ Գրիգոր Լուսավորչի ժամանակ դեռ եկեղեցու ազգայնացման սկզբունքներն էին շեշտվում։ Այսպես նա եպիսկոպոսական ձեռնադրություն ստացել էր Կեսարիայում և ուրեմն հպատակված էր Կեսարիայի միտրոպոլիտին։ Բայց նա չէր ընդունում թե ձեռնադրական կարգը եկեղեցու հպատակություն է հաստատել Կեսարիայի վերաբերմամբ։ Հայ եկեղեցին նա ազատ և ինքնագլուխ էր համարում։ Եվ որք հարկ եղավ իշխանությունը հանձնել իր որդի Արիստակեսին, նա շուղարկեց նրան Կեսարիա, այլ ինքը ձեռնադրեց նրան։ Այս ազգայնական ուղղությամբ դեռ երկարատև ու շարունակ մեծ աշխատանք պիտի կատարվեր մի քանի սերունդների ձեռքով։

Ամենադժվար գործը, որ կանգնած էր հենց սկզբից քրիստոնեության առաջ, ժողովրդի դաստիարակությունն էր։ Նա, օտար երկրից եկած մի վարդապետություն, դեռ միայն թագավորական հրամանով էր ապրում, զենքի և զորության ճնշումով, այսինքն ձև էր միայն, արտաքին կեղև։ Փավստոսը երկարորեն պատմում է որ Լուսավորչից հետո էլ դեռ քրիստոնեությունը չէր հաստատվել հայ զանգվածների գիտակցության մեջ և արտաքին քրիստոնեական շարժի տակ ապրում էր հին հեթանոսությունը<sup>1</sup>։ Փրկել նոր կրոնը կարելի էր ժողովուրդը դաստիարակելու միջոցով։ Իսկ այս հողի վրա առաջ էին գալիս ազդեցությունների շատ հզոր շփումներ։ Ինքը հայ ժողովուրդը դեռ շուններ իր մայրենի լեզվով դաստիարակվելու այնպիսի միջոցներ, որոնք հայտնի էին խորտակված հեթանոսության։ Քրիստոնյա կղերը կարողացել էր միայն հիմնավորապես ավերել ու ոչնչացնել հին կրոնի ծաղկեցրած քաղաքակրթությունը, որի մեջ անշուշտ կային և արվեստ ու գրականություն, իսկ ստեղծել նոր, քրիստոնեական արվեստ ու գրականություն դեռ չէր կարողացել։ Ժողովրդին ուսում տալ էր հարկավոր, իսկ դրա համար քրիստոնյա եկեղեցականությունը ուրիշ միջոց չէր կարողանում գտնել, բայց միայն օտար դպրոցներին՝ հունական և սիրիական, հանձնել այդ ժողովրդական մեծ գործը։

<sup>1</sup> Կարապետ վարդ., «Հայ եկ. պատմ.», էր. 74։

<sup>2</sup> Փավստոս, Գ, գ։

Դպրոցները օտար ազդեցություններն էին ուժեղացնում երկրի մեջ։ Հունական ազդեցությունն ուներ այն առավելությունը, որ պաշտոնական հաղթանակ տանողն էր և եկեղեցական ու քաղաքական բարձր իշխանություններն էլ նրան էին ենթարկված։ Դա քրիստոնեացած հելլենականությունն էր, որ իր սիրապետության հին ճանապարհներն էր վերաբացում Հայաստանի մեջ։

Սիրիական ազդեցությունը հունականի արժանավոր ախոյանն էր, ունենալով ավելի ուժ հայոց երկրում, ավելի մոտիկ լինելով ժողովրդին անցյալ գործունեությամբ։ Սիրիայի միսիոներները քարոզչական ընդունակության և եռանդի կողմից անգերազանցելի էին մնում Արևելքում։ Եվ հունական ազդեցությունն ի դեմս Գրիգոր Լուսավորչի ստիպված էր առաջին իսկ քայլերից խոշոր զիջողություններ անել սիրիական կղերականության, որ կարևոր պաշտոններ ստացավ, մանավանդ հարավային Հայաստանում։ Առաջին նվազումներն ստացավ, մանավանդ հարավային Հայաստանում։ Հայ կաթողիկոսությունիսկ նկատվում է իշխանության մի տեսակ բաժանում. հայ կաթողիկոսության աթոռը, ամբողջովին հունական գործ, Արարատյան դաշտում է հիմնվում, մինչդեռ կրոնական բազմահույս կենտրոն Տարսուսը իր ս. Կարապետով տրվում էր սիրիացիներին և սրանց առջև փակ չէր ճանապարհը նույնիսկ մինչև կաթողիկոսություն։ Գլխավոր դերը պատկանում էր սիրիացիներին, որոնց լեզուն ու գրականությունը ավելի էին տարածվում հայ ժողովրդի մեջ։ Այնպես որ կարելի է ասել թե քրիստոնեությունը ոչ միայն Լուսավորչի ժամանակ, այլև գրեթե ամբողջ IV դարում, չնայած հունական ազդեցության մեծամեծ ջանքերին, Հայաստանում մնում էր ավելի սիրիական, քան հունական։

Կար և մի երրորդ տարր IV դարի հայ եկեղեցականության մեջ—բուն ազգային, հայկական տարրը, այն, որ քրմական դասակարգից էր առաջացել։ Նրա գլխավոր ներկայացուցիչը Աղբիանոսի տոհմն էր։ Այդ ազգային կուսակցությունը արհամարհելի մի մեծություն չէր և նույնպես ազդեցիկ էր, քանի որ կիսահեթանոս և կիսաքրիստոնյա հայության համակրանքներն ուներ իր կողմը։ Լուսավորչի տոհմը չէր կարող ասել թե այս հայ կուսակցության հետ միանգամայն հաշտ էր։ Աղբիանոսի տոհմն էլ հոգևոր դիմաստիա ստեղծեց, Լուսավորչի տան նման, որ կաթողիկոսներ էր տալիս։ Իր դիրքով և ուղղությամբ այդ տոհմային միապետությունը հակադիր ուժ էր Լուսավորչի տոհմի դեմ և հավատարիմ էր մնում դեպի հեթանոսությունը հակված հայ Արշակունի թագավորներին։

Հայ կուսակցության հարում էր հեթանոսական կամ պարսկասեր կուսակցությունը, որ երևան էր գալիս ամեն անգամ, երբ պատեհություն էր լինում կովելու քրիստոնեության դեմ։ Այս հոսանքը, երևի, պահպանվում էր Հայաստանից վտարված կամ նրա ծայրագավառների խուլ անկյուններում թաքուստ գտած հայ քրմական կազմակերպությունների ջանքերով և խրախուսվում էր պարսից կառավարության նպաստներով։

Այսպես, ուրեմն, քրիստոնեությունը ներքին համաձայնություն և միապաղաղ համերաշխություն չէր բերում, այլ հակամարտ հոսանքների և վճռական խիստ զորեղ շփումներ, որոնք մեծ ծավալ պիտի ստանային և վճռական ազդեցություն պիտի գործեին նույնիսկ հայ պետության ճակատագրի վրա։ Հունական, սիրիական, հայկական, հեթանոսական կուսակցությունների մրցունենական, սիրիական, հայկական, հեթանոսական կուսակցությունների մրցունենական մեջ վճռական խոսքը, իհարկե, հայ ժողովրդին պիտի պատկաներ։ Եվ այդ խոսքը արտասանվել սկսեց հենց Գրիգոր Լուսավորչի և Տրդատի օրերից։ Դա այն ձգտումն էր, որ ցույց էր տալիս քրիստոնեացած հայությունը դեպի





տոնյաները համոզված էին որ հաղթությունը պիտի հոռմեական լեզբոններին պատկանե և իրենց բացարձակ համակրությունն էին հայտնում կայսրին: Շապուհը, իբրև պատասխան այդ համակրական ցույցերին, երկարատև և անողոր հալածանքներ սկսեց իր այդ հպատակ քրիստոնյաների դեմ (339—340). իսկապես այդ հալածանքները տեղեցին մինչև նրա կյանքի վերջը, մոտ քառասուն տարի:

Հայաստանում պարսկական քաղաքականության հաջողվեց, ինչպես տեսանք, հայ կուսակիցների ձեռքով սպանել Տրդատին, որից հետո երկիրը մատնվում է կատարյալ անիշխանության: Պարսկասեր նախարարներն ուղղակի ապստամբության դիմեցին: Այսպես էին Սանատրուկը Փայտակարան նահանգի մեջ, Աղձնյաց բղջին Բակուրը և Մոփաց աշխարհում՝ Արքեղայտը: Հունական կուսակցությունը կարողացավ խմբվել կաթողիկոսական աթոռի շուրջը և Արիստակես կաթողիկոսին այնքան հաջողվեց զորեղացնել այս կուսակցությունը, որ Տրդատի որդի խոսրով Կոտակը (հորքը, կարճահասակ) թագավորական գահը բարձրացավ (ոմանց ենթադրական հաշվով՝ իբր 338 թ.): Սակայն այս հաջողությունը ավելի ևս գրգռեց պարսկական կուսակցությունը և Արիստակես կաթողիկոսը սպանվեց Մոփաց աշխարհում, Արքեղայտի ձեռքով (հավանաբար 338-ին): Այս եղեկը ահաբեկում է հունական կուսակցությունը, որ և շտապեց կաթողիկոսական գահը բարձրացնել Վրթանեսին, որ Գրիգոր Լուսավորչի որդին էր և Արիստակեսի եղբայրը: Նա արդեն խոր ծերության հասակում էր որ ընդունեց եկեղեցական վարչապետությունը, բայց իր եղբորից ավելի ընդունակ և քաղաքագետ հանդիսացավ: Վրթանեսի այս հատկությունները, երևի, արդեն հայտնի էին Հայաստանում և պարսկական կուսակցությունը, կամենալով ազատվել իր համար ատելի դարձած կաթողիկոսական տոհմի այդ կարող ներկայացուցչից, վճռեց սպանել և նրան: Դավադրության մեջ խառն էր և հայոց թագուհին, խոսրով թագավորի կինը, և այս հանգամանքը ցույց է տալիս թե որքան ընդարձակ էր և որքան վտանգավոր կերպարանք էր ընդունել հակաքրիստոնեական կամ, ավելի ճիշտ, հակահունական շարժումը: Սպանությունը պիտի կատարվեր Լուսավորչի տան պատկանող Աշտիշատում, ուր Վրթանեսը գնացել էր շրջելու: Ձեռնարկության մեծ շափը ցույց է տալիս հենց այն հանգամանքը, որ սպանությունը հաջողեցնելու համար գործում էին մոտ երկու հազար մարդ, որոնք հեթանոսական կրոնի մեջ տակավին մնացած հայերից էին: Սպանության փորձը, որ պիտի տեղի ունենար այն ժամանակ, երբ կաթողիկոսն աղոթում էր Աշտիշատի տաճարում, հաջողություն չունեցավ: Բայց նրա գործած ապավորությունը, ինչպես նաև առհասարակ ամբողջ շարժման ազդած ահն այնքան մեծ էին, որ հունական կուսակցությունը, Վրթանես կաթողիկոսի և խոսրով թագավորի հետ միասին, հեռացավ Հայաստանի սահմաններից և ապաստան գտավ հոռմեական իշխանության սահմաններում<sup>1</sup>: Այս միջոցին էր որ Կոստանդինի երեք որդիները բաժանեցին կայսրությունն իրենց մեջ և Արևելքն ստացավ Կոստանդը: 338-ին նոր կայսրը գնաց Սիրիա՝ այդ տեղից Պարսկաստանի դեմ հարձակում գործելու համար և 339-ին մտավ Հայաստան, ուր նրա առաջին գործն եղավ խոսրովին թագավորական գահի

1 Խորենացի, Գ, 44:  
2 Փավստոս, Գ, 7:  
3 Ն. Աստուրյան, եր. 273:

վրա հաստատելը: Բայց հունական կուսակցության այդ հաղթանակը վերջնական չախջախում չէր բերում պարսկական կուսակցության: Կայսրը, որոնելով Բյուզանդիայի շահերին նպաստավոր քաղաքական դիրքեր, սիրաշահեց ընծաներով և պարսկական կուսակցությունը, որ և վերադարձավ Հայաստան: Այսպիսով մի տեսակ հաշտություն էր հաստատվում երկու հակամարտ հոսանքների մեջ, իհարկե ժամանակավորապես:

Խոսրով Կոտակը թագավորել է, ինչպես ենթադրում են, յոթը տարի: Նա մի խաղաղասեր և թույլ մարդ էր և թագավորական գահի վրա ավելի ընդունակ էր ուժեղին հպատակվելու, քան ուրիշներին հպատակեցնելու: Մի բան, որ այդ թագավորի գուցե միակ արժանիքն էր կազմում, նրա շինարարական ձգտումներն էին: Բայց նրա ժամանակը, որի համար, դժբախտաբար, ճիշտ թվականներ չունենք, շատ կարևոր է այն պատճառով, որ Վրթանես կաթողիկոսի նման մի կարող և ընդունակ հոգևոր միապետ էր ապրում և այդ միջոցին էլ որոշվեցին ու մշակվել սկսեցին եկեղեցու և պետության հարաբերությունները, որոնց քաղաքական հետևանքները անհուն էին Հայաստանի համար:

Այդ հարաբերությունների մշակման միջավայրը ներկայանում է մեզ այսպիսի պայմանների մեջ: Երկրի ներքին խաղաղությունն ապահովված չէ և պատճառը միշտ նույնն է—կենտրոնական իշխանության թուլությունը: Այսպես է մի ավատական երկրի սովորական պատկերը: Եվ ավատական իշխողները օգտվում են այդ հանգամանքից լայն շափերով՝ իրենց անձնական շահերը առաջ մղելու համար: Նրանք կոիվներ են անում իրար հետ, ապրստամբվում են թագավորի դեմ: Փավստոսի պատմելով, հայոց աշխարհի խաղաղությունը վրդովում են մանավանդ երկու հարևան նախարարություններ— Մանավազյան և Որդունիք<sup>2</sup>: Անշուշտ անձնական մանր հաշիվներից դրված՝ նրանք հարձակվում են իրար վրա և բորբոքվում է ազգամիջյան արյունահեղ պատերազմ, որ առաջացնում է մեծամեծ կոտորածներ: Վրթանեսն է որ միջոցներ է մտածում այդ արյունահեղությունը դադարեցնելու համար: Կովով տոհմերը հաշտեցնելու համար ուղարկվում է պատկառելի անուն ունեցող Աղբիանոս եպիսկոպոսը: Նրա առաքելությունը, սակայն, հաջողությամբ չէ պսակվում. թե՛ Մանավազյանները և թե՛ Որդունիները արհամարհում են նրան: Ուստի երկրի ներքին խաղաղությունը վերականգնելու հոգը հանձնվում է հայոց սպարապետին, որ Մամիկոնյան վաչե իշխանն էր: Սա վերացնում է այդ անկարգությունը զինվորական անգթությամբ, այն է՝ սրի է անցկացնում, բնաջինջ է անում երկու ցեղերն էլ:

Ավելի վտանգավոր մի շարժում սկսում է Աղձնյաց Բակուր բղջիցը, բացարձակապես ապստամբելով խոսրովի դեմ պարսիկների ձեռնառնությամբ: Բակուրի զորքի մեջ կար և պարսկական մի զորաբաժին, և Շապուհը, անշուշտ, ուշի ուշով հետևում էր թե ինչ ընթացք է ստանում հակապետական շարժումը Հայաստանի մեջ: Խոսրովը անձամբ չէ գնում ապստամբի դեմ: Այս անգամ էլ հավատարիմ մի քանի նախարարներ, որոնց մեջ էր նրա սիրելի Վաղինակ Սյունին, իրենց զնդերով շարդում են ապստամբին և բնաջինջ են անում նրա ամբողջ տոհմը: Բղջիխությունը հանձնվում է նույն Վաղինակին: Բնաջինջ դարձած տոհմերի կալվածները թագավորը բաժանում էր իրեն հավատարիմ մնացորդներին:

1 Անդ, եր. 274:  
2 Փավստոս, Գ, 7:







այս տեսակ մի ձգտում է որոշակի ընդգծվում շորորդ դարի շարժումների մեջ: Հոգևոր միապետությունը անպատասխանատու էր եկեղեցական գործերի սահմանում և ուզում էր իր ձեռքն առնել և աշխարհական անպատասխանատու իշխանությունը:

Այս կողմից ահա քրիստոնեական եկեղեցին Հայաստանում հենց սկզբից ընդունում է մի շատ առանձնահատուկ կերպարանք, որ պարզ կլինի, եթե համեմատենք հենց հունական եկեղեցու հետ, որից, սակայն, ներշնչումներ էր ստանում Լուսավորչի տոհմը:

Կոստանդին Մեծն ընդգրկեց քրիստոնեությունը ոչ թե այն պատճառով, որ նա մի շերմեռանդ հավատացող էր, այս կերպարանքով չէ նա երևում պատմության մեջ, այլ որովհետև նա, իբրև պետական հանճար, շատ լավ ըմբռնեց թե ինչ ահագին ուժ է ներկայացնում քրիստոնեությունը: Մի նուրբ քաղաքագիտությամբ կայսրը, սիրաշահելով նոր կրոնը, օգտագործեց նրա ամբողջ ուժը կայսերական միահեծանությունը ավելի ևս ամրապնդելու համար: Հովանավորելով քրիստոնեությունը, դարձնելով նրան պետական կրոն, Կոստանդինը եկեղեցու ներկայացուցիչների հետ մշակեց մի հարաբերություն, որով եկեղեցու վերաբերմունքը դեպի աշխարհական գահը միանգամայն հպատակական էր<sup>1</sup>: Այս սկզբունքը վերցվում էր հռոմեական հեթանոսությունից: Կայսրի անձնավորությունը սրբազան էր և նրա իշխանությունն ուներ նաև հոգևոր բարձր նշանակություն: Այս հայեցակետը հետզհետե մտավ նաև քրիստոնեական եկեղեցու մեջ և զարգացավ իբրև պետության հիմք կազմող մի սխտեմ: Եկեղեցու պետն իսկապես կայսրն էր<sup>2</sup>, իսկ Կ. Պոլսի պատրիարքը, հունական եկեղեցու բարձրագույն պաշտոնյան, կայսրի համար լուրջ մայրաքաղաքի թեմի առաջնորդն էր: Եկեղեցին հեթանոսական տաճարից փոխ առավ մի ամբողջ կայսերապաշտություն: Եկեղեցու պարտականությունն էր բարձրացնել կայսերական իշխանությունը, հմայքով շրջապատել նրան և դարձնել ակնածության առարկա: Եվ այդ պարտավորությունը ոչ միայն քարոզի ու արարողության մեջ էր արտահայտվում, այլև գիտական-փիլիսոփայական ապացույցներով էր հանդես գալիս:

Բյուզանդիայում հաստատված հռոմեական կայսրությունը երկար չկարողացավ զերծ մնալ միջավայրի ազդեցությունից: Հունական քաղաքակրթությունը լիսեց դուրս մղել լատինականությունը: Հունական լեզուն, հունական քրիստոնեությունը իրենց կնիքը դրին պետության վրա, որ սկսեց կազմակերպվել հռոմեական ավանդություններով ու սկզբունքներով, բայց զարգացնելով և տեղային ինքնուրույնությունը: Այս աշխատանքը ի վերջո ստեղծեց մի դրոթյուն, որ բյուզանդական կայսրությունը ո՛չ զուտ հռոմեական էր, ո՛չ զուտ հունական: Եվ այդ պատճառով նա Բյուզանդիոն կոչվելուց ավելի կոչվում էր Հոռոմք, Հոռոմոց երկիր, Հոռոմստան և այս անուններով էլ նա ճանաչված էր Արևելքի բոլոր ժողովուրդների մեջ: Իսկ գիտության մեջ բյուզանդական ուսուցումն էր կոչվել սկսեց այն ամբողջ կրոնական-կուլ-

<sup>1</sup> В. Грибовский, «Народ и власть в Византийском государстве», Пет., 1897, с. 341—362.

<sup>2</sup> Եկեղեցու հռչակավոր հայրերից մեկը. Կյուրեղ Ալեքսանդրացին գրում էր Քեդրոս կայսրին. «Այս անհիշաչաբությունը, այս զիջողությունը պատկանում են բարձրագույն Աստվածության հովան, իսկ նրանից հետո և նրա օրինակով և ձեռք մեծության, ամենաքրիստոսասեր կայսրիդ: Իսկապես դուք երկնային թագավորության նմանություն եք բերում» (Փ. Курганов. «Византийский идеал царя и царства», Казань, 1881, с. 18).

տուրական կարգը, որ այդ հոռոմների թագավորության էությունն էր կազմում: Բյուզանդականությունը համանիշ է խիստ կենտրոնացման, անսահման միապետականության, կրոնական-ազգային կղզիացման և սրահետ անբաժան մոլեռանդության, նենգության, անշարժականության:

Այսպիսի երևույթ չէ նկատվում քրիստոնյա Հայաստանի մեջ հենց սկզբից: Այս հանգամանքի մեջ ամենից շատ խոսում էր, իհարկե, հայ երկրի ամբողջ պատմական կարգը, նրա հոգեբանությունը: Ուժեղ կենտրոնական իշխանություն չկար և չէր կարող լինել Հայաստանում—այս ցույց էր տվեց հայոց պատմությունը դեռ Տիրան Մեծի ժամանակից, իսկ քրիստոնեությունը միայն իր համար էր աշխատում լուծել եկեղեցական կենտրոնացում ստեղծել, բայց աշխարհական իշխանությունը քրիստոնյա դառնալուց կան կարգի կողմնակից: Արշակունի թագավորները քրիստոնյա դառնալուց հետո էլ հավատարիմ մնացին հին պարթևական գաղափարներին և հետո մնացին բյուզանդական կայսրների ըմբռնողությունից: Բացի տոհմային ավանդություններից, նրանց վրա ծանրացած էին և անձեռնհասությունը, վերանորոգչական անկարողությունը և մանավաղ թուլությունը: Փոխանակ եկեղեցու ուժն իրենց համար օգտագործելու՝ նրանք կամ թուլամորթությամբ ենթարկվում էին եկեղեցականության կամ թե թշնամական դիրք բռնելով դեպի քրիստոնեությունն առհասարակ և դեպի հոգևորականությունը մասնավորապես, առաջացնում էին ներքին սուր պայքարներ: Հայաստանի մեջ կազմվել էին երկու պետություն—աշխարհական և հոգևոր: Տարբեր շահերի ներկայացուցիչներ լինելով, դրանք իրար վերաբերմամբ հակամարտ դիրքեր գրավեցին և փոխադարձ ընդհարումների իրականության մեջ մտան:

**2. Տիրան (342—350):** Չորրորդ դարի այս շափազանց նշանավոր երկվյթը բաց էր անում Տիրան թագավորը, որի օրինակին պիտի հետևեին և նրա երկու հաջորդները: Տիրանը հոսորով Կոստակի որդին էր, և նրա հետ միաժամանակ կաթողիկոսական գահն էր բարձրանում վրթանեսի որդի Հուսիկը, որ դեռ չէր դուրս եկել երիտասարդական հասակից: Այս երկու անձինքն էլ դառնում են ներկայացուցիչներ այն հակամարտ հոսանքների, որոնց մերթն էլ դձուրեցին և փոխադարձ Հայաստանի քաղաքական ճակատագրի վրա:

Տարաբախտաբար, մենք հնարավորություն չունենք հավասար լավատեղյակությամբ ճանաչելու երկու մարտնչող կողմերը: Պատմական տեղեկություններ թողել է միմիայն եկեղեցականությունը, իսկ Փավստոս Բյուզանդացին, որ չորրորդ դարի մեծագույն մասի վերաբերմամբ միակ լավ աղբյուրն է, չէ կարող համարվել անկողմնապահ պատմիչ: Նա շափազանց շատ է նվիրված կղերականության շահերին, շափազանց շատ է ստրկացած մանավանդ Գրիգոր Լուսավորչի տոհմին: Արշակունի այն թագավորները, որոնք եկեղեցու դիմաց ձգտում էին անկախ դիրք բռնել, նրա համար արատավոր և վատ մարդիկ են ընդհանուր առմամբ:

Բայց նրա տված միակողմանի նյութն էլ ցույց է տալիս, որ վրթանեսի մահից հետո, ուժեղացավ պարսկական կուսակցությունը և նրա ազդեցության ենթարկվեց և Տիրան թագավորը, որ իր հոր կամ պապի շերմեռանդությունը չունեց քրիստոնեական կրոնի վերաբերմամբ, լայն համբերողություն էր ցույց տալիս դեպի հեթանոսական անցյալը և չէր հալածում հայ հեթանոսու-

<sup>1</sup> Փ. Успенский, «История Византии», Пет., т. I.



Հուսիկը, նրա ասելով, թեև հասակով մանուկ էր, բայց խելքով փորձված և իմաստուն ծեր էր: Նա չքնաղ ու աննման էր ոչ միայն իր արտաքին տեսքով, այլ մանավանդ իր հոգու բարձր բարեմասնություններով, իր մաքրությանը, անշահասիրությունը: Մինչդեռ Տիրանի թագավորությունն ասնմիտ էր, լի ամեն տեսակ բարոյական արատներով: Նա օրինակ էր ամբողջ աշխարհի համար և ամենքը, նախարարներ թե ժողովուրդ, նույն արատներով էին վարակվում: Փավստոսը բերում է և այդ արատների ցանկը—անօրհնություն, պոռնկություն, արվագիտություն, արյունհեղություն, զրկություն, աղքատատյացություն<sup>1</sup>: Դրանց դեմ կռվելու համար էր, որ Հուսիկը զբաժանված էր իր տոհմին և երիտասարդ հասակին պատիվ բերող մեծ եռանդով, մրցընելով նրա մեջ անողոք խստություն, չափազանցություններ: Որ պատմիչի հիշատակած արատները վատ են և ցավալի, այդ մասին երկու կարծիք լինել չէ կարող: Բայց որ նրանք հատուկ են ամեն մի երկրի և հայ աշխարհի առանձնահատուկ սեփականությունը չէին կազմում, այս էլ անկասկածելի է: Պարզ է և այն, որ համենայն դեպս այդ տեսակ արատները չէին կարող դառնալ միակ պատճառ մի ուժեղ ներքին պայքարի, որ տակնուվրայություն էր մտցնում պետական կյանքի մեջ, վատացնում էր երկրի՝ առանց այդ էլ ծանր ճակատագիրը: Պետք է լինեին ուրիշ, ավելի խոր ու լուրջ պատճառներ:

Դրությունը մասամբ հասկանալի է դառնում, երբ նկատի ենք առնում կղերական պատմիչի դառն գանգատները հեթանոսության վերանորոգման մասին: Այս բանը պարսկական կուսակցության հաղթանակի հետևանքն էր Քրիստոնեությունը չէր արմատանում ժողովրդի գիտակցության մեջ: Քչերը միայն, նրանք, որոնք դաստիարակվել էին հույն և սիրիական դպրոցների մեջ, հասկացողություն ունեին թե ինչ կրոն են պաշտում: Անգեղ բազմությունը, որի մեջ էին ազգաբնակչության բոլոր խավերը, բոլոր դասակարգերը, մնալով անունով քրիստոնյա, վերադառնում էր երկրի հին պաշտամունքին: Հեթանոսական կուլտուրան, հալածանքներից ազատված, նորից ծավալվում էր հայ երկրում: Նորից կենդանանալ էր սկսում ազգային գրականությունը. հայ աստվածների և հայ հերոսների երգերը դարձյալ բարձրաձայն հնչում էին ժողովրդի մեջ և վիպասաններն էին, որ նորից գրավում էին հասարակաց սերն ու ուշադրությունը: Ահա ո՞րն էր իսկական վտանգը հայ եկեղեցու համար:

Անարմատ և մակերևութային քրիստոնեությունը պահպանվում էր թագավորական հրամանով: Տրդատն ու Խոսրովը ճնշել էին ամեն մի հեթանոսական շարժում: Հուսիկն իրավունք ուներ սպասելու որ իր ժամանակ էլ արքունական իշխանությունը կգա պաշտպան հանդիսանալու եկեղեցուն: Բայց Տիրանը իր հոր և պապի օրինակին չէր հետևում: Ուզում էր աշխարհական իշխանության անկախությունը և գերազանցությունը պաշտպանել, ցույց տվեց կրոնական լայն համբերողություն, ինքն էլ չէր թաքցնում իր հեթանոսական հակումները: Հուսիկը նրա դեմ գնաց. հակառակության մեջ նորից արժարժվեցին փեսայի ու աներոջ նախկին թշնամական զգացմունքները: Առաջինը զինված էր քրիստոնյա հովիի իրավունքներով. նա ամեն ժամանակ կարող էր հանդիմանել իր հոտը, պատժել նրան, զրկելով եկեղեցու հետ հաղորդակցություն ունենալուց: Խստապահանջ կաթողիկոսը արգելում էր հանցավոր հա-

<sup>1</sup> Փավստոս, Գ, Ժբ:

մարված նախարարներին եկեղեցի մտնել և այնքան առաջ տարավ իր համարձակությունը, որ այդ ժայռահեղ միջոցը գործադրեց նույնիսկ և թագավորի դեմ: Մի օր Տիրանը գնում էր եկեղեցի. կաթողիկոսը դուրս եկավ եկեղեցուց և շթողեց նրան ներս մտնել, ասելով թե անարժան է: Բարձրագույն իշխանության հասցրած այս մեծ անարգանքն, իհարկե, ներելի չհամարվեց, մանավանդ երբ անարգվողը Տիրանի պես մի բռնավոր էր: Կատաղած թագավորի հրամանով կաթողիկոսը ներս է տարվում եկեղեցի և այդտեղ նրան անխղճորեն ծեծում-ջարդում են բիրերով ու սպանում (ենթադրվում է 347 թվին<sup>1</sup>): Այս երրորդ մեծ զոհն էր, որ Լուսավորչի տունը տալիս էր իր քրիստոնեական առաքելության և իր տոհմային շահերի համար: Եկեղեցու կրած հարվածը շատ ծանր էր, բայց բարոյապես հաղթանակողը նա էր, որովհետև մտցնում էր իր երախտավորների մեջ մի նոր նահատակ ևս, զարդարված մտցնում էր իր երախտավորների մեջ մի նոր նահատակ ևս, զարդարված բարձր առաքինության և երիտասարդական սրբազան ավյունի հուսալիկով:

Հուսիկն ուներ ժառանգներ և Լուսավորչի տոհմը կարող էր անընդհատ շարունակել իր հոգևոր միապետությունը: Սակայն նրա որդիներից ոչ մեկն էլ ո՛չ Պապը, ո՛չ Աթանազիոսը չկարողացան հոգևոր կոչման մերժենալ: Հունական կուսակցությունը միջոցներ ձեռք առավ նրանց համառությունը կոտրելու համար և զոռով, բռնադատելով երկուսին էլ սարկավազ ձեռնադրելով: Սակայն զուր էին այս ջանքերը: Երկու եղբայրներն էլ սաստիկ կենսասեր էին, աշխարհիկ վայելքներին նվիրված: Նրանք մտան զինվորական ծառայության մեջ, ամուսնացան Տիրանի երկու քույրերի՝ Վարագդուխտի և Բամբիշի հետ, ամուսնություններ, որոնց տարօրինակությունը մեր ժամաբամբիշի հետ, ամուսնություններ, որոնց տարօրինակությունը մեր ժամաբամբիշի սերունդների հաջորդականությունը կաթողիկոսական գահի վրա այսպիսով ընդհատվում է և համազգային ժողով է հրավիրվում ուրիշ մի մարդ պիտով ընդհատվում է և համազգային ժողով է հրավիրվում ուրիշ մի մարդ ընտրելու համար: Ընտրությունը, թագավորի հավանությունը, կանգ է առնում Գանիել անունով ծերունի սիրիացի եպիսկոպոսի վրա: Հաղթանակ տանում էր դարձյալ հունական կուսակցությունը, որովհետև Գանիելը թեև սիրիացի էր, բայց ձեռնադրված էր Գրիգոր Լուսավորչի ձեռքով, ստացել էր նրանից կրոնական առաջնակարգ նշանակություն ունեցող Տարոնի առաջնորդությունը և այլ պատիվներ և ինքն էլ Լուսավորչի տոհմին նվիրվածներից էր: Խոշոր ընդունակություններով աչքի ընկնող այս հոգևորականը միսիոներական գործունեություն ունեցել էր և Պարսկաստանում, իսկ Հայաստանի մեջ վայելում էր մեծ հռչակ: Նա անապատական էր (ճգնավոր) և հավանորեն հենց ինքն էլ առաջինն էր, որ Սիրիայից Հայաստան մտցրեց անապատական-ճգնավորական կարգը<sup>2</sup>: Այն ժամանակ դեռ նոր էր քրիստոնեական եկեղեցու ծոցում զարգանում անապատականությունը, որ մեծ քանակությամբ մարդիկ էր գրագրավում և այսպիսով դառնում եկեղեցու մոլիբդանդ և կուռ կազմված զորաբանակը՝ նրա տիրապետությունը ամեն տեղ տարածելու և հաստատ պահելու համար: Ծգնավորության ուժը նրա մեջ էր, որ նա իրեն հեռու էր պահում աշխարհից, խորհրդավորության բողոք էր ծածկում իրեն, իսկ այս հանգամանքը նպաստում էր որ նա աշխարհի աչքում համարվի գերբնական ուժերի սուրբ, հրաշագործ: Այս կողմից մանավանդ մեծ էր Գանիել եպիսկոպոսի հռչակը: Փավստոսն ամենայն լրջությամբ պատմում է թե նա մեռելներ

<sup>1</sup> Օրմանյան, «Ազգապատում», էջ 150:

<sup>2</sup> Երվանդ Տեր-Մինասյան, «Հայ եկեղեցու հարաբերությունները ասորոց եկեղեցիների հետ», «Էջմիածին», 1908, եր. 35:

էր հարուցանում, կոշիկներով ման էր գալիս ջրերի վրա և կոշիկները նույն, իսկ չէին էլ թրջվում, խոր ձյունները շքանում էին նրա ոտքերի առջև, նա թռչում էր մրրիկի նման և այլն, և այլն:

Ընդունելով իր ընտրությունը, Դանիելը հայոց արքունիքում երևաց ոչ իբրև համակերպվող ու հլու մի պաշտոնավար, այլ զինված Հուսիկի համարձակախոսություններ, դիմադրող ու պահանջող: Մանավանդ երիտասարդ կաթուղիկոսի ողբերգական մահը ցասման ամենահզոր շեշտեր էր մտցնում ծերունի անապատականի խոսքի մեջ, և Տիրանն ու նրա արքունիքը լսում էին գուցե ավելի խիստ ու կծու հանդիմանություններ: Բայց Դանիելին էլ շինայեցին, շնայած նրա ամբողջ հուշակին ու հեղինակության: Տիրանն առանց այլևայլության թուկ գցել տվեց նրա վիզը և խեղդել տվեց: Եվ այս դաժան խստություններով թագավորը հասնում էր իր նպատակին: Կաթողիկոսությունը, գոնև առժամանակ, դադարում էր լինել արքունիքը վարկաբեկող: Դանիելից հետո կաթողիկոս ընտրված Փառենը արդեն պատշաճավոր պատկառանքով էր վերաբերվում թագավորին: Իսկ սրա մահից հետո հակահունական հոսանքին հաջողվում է մի խոշոր քայլ էլ անել Լուսավորչի տոհմի դեմ, առաջ բերելով մի ամբողջ հոգևոր դինաստիա հայ ազգային կուսակցության միջից: Ընտրվեց Շահակը, որ մեզ արդեն հայտնի Աղբիանոս եպիսկոպոսի տոհմից էր:

Այս տունը շորորոգ դարում շորս կաթողիկոս տվեց, որոնք միևնույն քաղաքականության հետևեցին—հաշտ ու համերաշխ վերաբերմունք դեպի արքունիքը: Այս քաղաքականությունն, իհարկե, չէր կարող դուր գալ Գրիգոր Լուսավորչի տոհմին ու նրա կողմնակիցներին: Փավստոսը սառնություններ է խոսում Շահակի մասին, շեշտում է, որ նա Փառենի ճանապարհով գնաց, չէր բողոքում ու չէր հանդիմանում, ուստի և բարբերի ապականությունն ավելի սաստկացավ: Նշանակալի հանգամանք է որ Աղբիանոսի տոհմի վերաբերմամբ հունասերները միայն այս մեկն էին ցույց տալիս իբրև պակասություն: մյուս բոլոր կողմերից այդ կաթողիկոսները միանգամայն արժանավոր հոգևորականներ էին<sup>1</sup>:

Հակահունական հոսանքի այս հաջողակ գործողությունները, ինչպես երևում է, հեշտությամբ չկատարվեցին, առանց ցնցումների, և հայոց երկիրը մի ավելորդ անգամ ևս ներկվեց ներքին ազգամիջյան կռիվների արյունով: Հեթանոսական կուսակցության ամենանշանավոր ներկայացուցիչը և մասնավորապես Լուսավորչի տոհմի թշնամին էր Տիրանի կանանոցի ներքինապետը կամ մարդպետը՝ Հայր անունով, որ գրգռում էր թագավորին հակառակ կուսակցության պատկանող նախարարների և մանավանդ Ուտունյաց ու Արծրունյաց տոհմերի դեմ: Ոչինչ տարօրինակ բան չկա որ Տիրանը հեշտությամբ ենթարկվեց Հայրի ներշնչումներին, եթե չմոռանանք կանանոցի ու ներքինիների դերը Արևելքում: Եվ նորից կրկնվեց բարբարոսական սովորությունը, որ այնքան անգամ արյունոտել էր հայ հողը, բայց որ, անշուշտ, զուտ հայկական չէր, այլ ընդհանրապես հատուկ արևելքի ավատական-բռնապետական կարգերին: Երկու նախարարական տոհմերը մեղսագործ չէին պետության դեմ, բայց սրի քաշվեցին անխնա, առանց բացառություն անելու նույնիսկ և էգերի համար: Գլխավոր դրդիչն այսպիսի բարբարոսությունների մեջ նախարարների տոհմային կալվածների հափշտակումն էր: Բայց այսպիսի կոտորածների ժամանակ սովորաբար հաջողվում էր ազատել մի կամ երկու

<sup>1</sup> Փավստոս, Գ, ԺԷ:

արու երեխա, որոնք հետո դառնում էին տոհմային վերածնունդի պատճառ Այս անգամ երկու տոհմերի փրկիչ հանդիսանում են Մամիկոնյան երկու իշխաններ Արտավազդ և նրա որդի Վասակ, որոնք հայոց զորավարներն էին: Մենք արդեն գիտենք որ Մամիկոնյան տոհմն ընդհանրապես Գրիգոր Լուսավորչի տան և հունական կուսակցության շատ ազդեցիկ կողմնակիցներն էին: Արտավազդն ու Վասակը արքունիքումն էին գտնվում, երբ այնտեղ բերվեցին երկու ազատված երեխա—Ուտունյաց տոհմից՝ Տաճատ անունով և Արծրունյաց տոհմից՝ Շավասպ, որոնք իրենց դայակների տներումն էին եղել իրենց տոհմերի բնաջնջման միջոցին: Տիրանը հրամայում է փողոտել երեխաներին, բայց Արտավազդն ու Վասակն ընդդիմանում են, խլում են դժբախտ զոհերին դահիճների ձեռքից և ամեն մեկը մի երեխա դրած թևի տակ՝ դուրս են գնում արքունիքից, հեղանում են իրենց տոհմային կալվածք, որ գտնվում էր Սպեր գավառում: Այդտեղ էլ մնում են նրանք՝ Տիրանի երեսը շտանելու և գուցե նրա բարկության շինթարկվելու համար: Իրենց գործն են դարձնում իրենց ազատած նախարարազուն երեխաներին մեծացնելն ու դաստիարակելն<sup>2</sup>:

Բայց Տիրանը, այսպիսի դիրք բռնելով հունական ազդեցության դեմ, մոռանում էր իր աշխարհի ճակատագիրը, մոռանում էր, որ իր թագավորությունը երբեք չէր դուրս եկել սալի և կուսի մեջ տրորվողի դրությունից: Հայոց թագավորը անկախ գործողություններ երկու մրցող պետություններից որևէ մեկի վերաբերմամբ կարող է ցուցադրել միայն այն դեպքում, եթե նրա երկիրը բավականաչափ ուժեղ էր ներքին կազմակերպությամբ և զինվորական կարողությամբ: Այս երկու հանգամանքներից առաջինը մանավանդ միշտ պակասել էր հայ երկրին, իսկ այժմ նրա զինվորական թուլությունն ավելի ևս սաստկանում էր, քանի որ Մամիկոնյան սպարապետական տոհմը հեռացել էր սպարաբեկից, իսկ ինքը Տիրանն իր հոր պես զուրկ էր զորավարության ընդունակությունից:

Բյուզանդիոն փոխադրված հռոմեական քաղաքականությունը ամենևին դուրս չէր հանել Հայաստանն իր կենսական շահերի շրջանից, և Տիրանի վրա, ինչպես և նրա նախորդների ժամանակ, ծանրացած էր կայսրներին հավատարիմ մնալու պարտավորությունը: Այս պայմանն ապահովում էին Տիրանի տված երեք պատանդները, որոնցից առաջինը նրա որդի Տրդատն էր, երկրորդը՝ Տրդատի որդի Գնելը և երրորդը՝ Տիրանի մյուս որդու, Արտաշեսի որդին, Տիրիթը: Երեք էլ պահվում էին Բյուզանդիայում: Մովսես Խորենացին պատմում է որ պատանդներից Տրդատն սպանվեց կայսրի հրամանով: Ենթադրվում է որ այս բանը տեղի ունեցավ Տիրանի ժամանակ, հավանականաբար այն պատճառով որ Տիրանը բացարձակորեն պարսկական կուսակցության կողմն էր անցել: Սպանությունը զգաստացրեց Տիրանին, իսկ երբ Կոստանդ կայսրը 348-ին անձամբ պատերազմի գնաց Շապուհի դեմ, Տիրանին ոչինչ չէր մնում անել, բայց միայն օգնել նրան ընդդեմ իր բարեկամ պարսիկների: Նրա ներկայությունը կայսրական բանակում չէ հիշատակված, բայց հպատատ է որ Կոստանդի հրամանի տակ գտնվում էր հայ մի ուժեղ հեծելազոր զորաբաժին<sup>3</sup>: Ճակատամարտը պարսիկների հետ տեղի ունեցավ Սինգարայում: Հաղթող էին սկզբում հռոմեացիները, բայց վերջում պարսիկ-

<sup>1</sup> Փավստոս, Գ, ԺԷ:

<sup>2</sup> Խորենացի, Գ, ԺԳ:

<sup>3</sup> Հ. Աստուրյան, 278—279:

ները մեծ ջարդ տվին նրանց և փախուստ դարձրին: Կայսրը սահմանների պաշտպանությունը թողեց Միջագետքի բերդերին, իսկ ինքը գնաց Արևմուտք, տանելով իր հետ և հայ հեծելազորքը, որ և քաջությամբ կռվեց կայսրի արևելյանի դեմ մղած պատերազմների մեջ:

Շապուհն, իհարկե, չպիտի ներեր Տիրանի արարքը, որքան էլ ակամա եղած լիներ նա: 350-ին քաջարի Սասանյանը նորից պաշարեց Մծրինը և նորից ապարդյուն կերպով: Այդ ժամանակ էլ նրա գլխավոր զորավարներից մեկը, Ներսես անունով, գնաց կատարելու նրա կարգադրությունը Տիրանին ձերբակալելու մասին: Կեղծվեց բարեկամություն և Տիրանը հրավիրվեց գնալ Շապուհի հետ տեսնվելու իր ընտանիքով: Նա չկարողացավ մերժել այդ բարեկամական ցույցը: Փավստոսը այսպես է պատմում այդ դեպքը: Ատրպատականի կողմնակալ Վարազ-Շապուհն էր, որ գործում էր Ներսեսի հրամանով, իսկ Ներսեսը անվանված է թագավոր, մի հանգամանք, որ ցույց է տալիս թե այս բարձրաստիճան զորավարը Շապուհի ազգականներից էր: Վարազ-Շապուհը բարեկամական բանակցություններ է սկսում Տիրանի հետ, որ փոխադարձ ողջուններով նրա մոտ է ուղարկում իր սենեկապետ Փիսակ սյունեցուն: Սա դավաճանում է իր տիրոջը և գրգռում է նրա դեմ ընչաքաղց պարսիկին: Պատմելով նրան թե Տիրանն ունի մի ձի, որի գույնն ու հասակը աննման են և որի պես մի հոյակապ նժույգ գտնել անկարելի է: Վարազ-Շապուհը խնդրում է Տիրանին իրեն ընծայել այդ ձին: Թույլ թագավորը, չկամենալով զրկվել իր սիրած ձիուց, գտնում է նրա գույնի և տեսքի մի այլ ձի, բայց ավելի փոքր հասակով և ուղարկում է պարսիկ կողմնակալին: Բայց պարսիկը չի խաբվում, ունենալով Փիսակի պես մի լրատու: Եվ թաքցնելով իր դժգոհությունը, կեղծում է բարեկամություն, որի հաստատության համար երեք հազարանոց մի զորաբաժնի հետ հյուր է գնում Տիրանի մոտ: Ընդունելությունը կատարվում է Ապահունյաց գավառում: Տիրանը նույնիսկ ավելորդ էր համարել զորք ունենալ իր հետ: Օգտվելով այս հանգամանքից, Վարազ-Շապուհը ձերբակալում է թագավորին, կուրացնում է նրան շիկացած երկաթով և ուղարկում Ներսեսին թագավորական ընտանիքի հետ: Այս բոլորն առաջացավ մի կաշու պատճառով, միամտաբար ավելացնում է Փավստոսը, կարծելով որ եթե Տիրանը արտակարգ գեղեցկություն մի շունենար, Հայաստանը կդադարեր գեթ առժամ կովախնձոր լինել երկու մեծ պետությունների մեջ:

Հայ նախարարներն իսկույն դիմում են կայսերական արևելյան զորքերի հրամանատարին, որ այդ ժամանակ քաջարի Ուրսիկինոսն էր: Սրա կարգադրությամբ հոռմեական և հայկական միացած զնդերը գնում են Ներսես զորավարի դեմ, հաջողությամբ կանգնեցնում են նրա արշավանքը դեպի Հայաստան և նույնիսկ հաղթում են նրան: Այս հաղթությունը նկարագրում է Փավստոսը նրան հատուկ առասպելական շափազանցություններով, որոնք անշուշտ, վերցված են ժողովրդական զրույցներից: Այսպես, թե այնպես, Շապուհը, զբաղված լինելով Իրանի հյուսիս-արևելյան ծայրերում վայրենաբարո ցեղերի դեմ սկսված պատերազմով, չկարողացավ առաջ տանել իր վեճը կայսրության դեմ և համաձայնվեց վերադարձնել հայոց գերի թագավորին իր ընտանիքի հետ: Վերավորական բան չկար այդ համաձայնության մեջ, քա-

<sup>1</sup> Անդ, եր. 281:

<sup>2</sup> Փավստոս, Գ, 44

նի որ դա գերիների փոխանակության կերպարանք ուներ. հոռմեացիներն էլ իրենց մոտ գտնված գերի պարսիկներն էին արձակում: Բայց ամենազրկալվորն այն էր որ Շապուհը իրագործում էր Սասանյան տոհմի վաղեմի բաղձանքը, վերադարձնելով Իրանին նրա վաղեմի իրավունքը Հայաստանի վրա: Կուրացած Տիրանն այլևս չէր կարող թագավորել, ուստի նրա տեղ Շապուհը թագավորեցրեց նրա որդի Արշակին, որ այսպիսով դառնում էր նրա վասալը: Այդ դրությունը իրրև գրավական Շապուհն իր մոտ պատանդներ պահեց հայ արքունիքից և նախարարներից: Այս կերպով վերահաստատվում էր պարթևական հարստության ժամանակի դրությունը, որից ազատվելը հայ Արշակունիների ամենամեծ ջանքը դարձավ Սասանյանների տիրապետության սկզբից:

**3. Արշակ Բ (350—367):** Ներսես մեծ: Կոստանդ կայսրը, գիտակցելով, որ իրեն տված չէ պատերազմական քախտ, աշխատում էր դիվանագիտական ճարպիկ միջոցներով ձեռք բերել այն, ինչ չէր կարողանում վերցնել զենքի ուժով: Արևելքում այդ դիվանագիտությունը հետևում էր Շապուհի յուրաքանչյուր քայլին և համապատասխան գործողություններ էր հակադրում նրան: Տիրանի և նրա որդու գործերում նկատելով պարսկական քաղաքականության հաղթանակ, կայսերական կառավարությունն շտապեց միջամտել, մանավանդ որ հունասեր կուսակցությունը թախանձագին խնդրում էր նրա աջակցությունը: Կոստանդ կայսրը ոչ միայն իսկույն ճանաչեց Արշակին հայոց թագավոր, այլև աշխատում էր շահել նրա սիրտը բարեկամական ցույցերով: Առաջինն այդ ցույցերից այն էր, որ կայսրն ազատեց և Հայաստան վերադարձրեց իր մոտ գտնվող երկու արքայազուն պատանդներին—Գնեկին և Տիրիթին:

Այսպիսի՝ համեմատաբար բարեպատեհ հանգամանքների մեջ էր սկսվում Արշակ Բ-ի թագավորությունը, որ հետաքրքրական մի ժամանակ է շատ կողմերով և կարևոր նշանակություն ունի ամբողջ շորրորդ դարի պատմության համար: Կարելի է ասել, որ հայոց պատմության հին շրջանում ոչ մի թագավոր բախտից այնքան հովանավորված չէ, ինչպես Արշակը, գոնե այն կողմից, որ նրա կյանքն ու գործունեությունը շատ են ծանոթ ու լավագույն կերպով լուսավորված առատ փաստերով: Այդ իրապես դժբախտ թագավորը բախտ ունի շրջապատված լինելու այնպիսի աղբյուրներով, որոնք զարթեցնում են հարցասիրություն, թույլ են տալիս նույնիսկ թափանցելու նրա կյանքի և հոգու խորքերն անգամ: Գուցե միայն Տիրան Մեծն է, որին կարող է հավասարվել Արշակը իր այս բացառիկ բախտով:

Նրան ժամանակակից էր լատինական մատենագիր Ամմիանոս Մարկելի-լինոսը, որ նրա մասին տեղեկություններ է թողել իր հուշակալոր «Պատմության» մեջ: Այդ տեղեկությունները հաղորդում են Արշակ Բ-ին մի սովորական, համեստ թագավորի կերպարանք, այնպիսին, որ կարող էր ունենալ մի հայ Արշակունի Հայաստանի իրականության մեջ: Սակայն այդ կերպարանքը շատ փոխվում է, երբ գալիս ենք ազգային աղբյուրներին, որոնք պահվել են Փավստոս Բյուզանդացու գործի մեջ, որի համարյա կեսը նվիրված է Արշակի ժամանակին: Սակայն նյութի այս առատությունը դեմքի պարզումին չէ նպաստում, այլ, ընդհակառակն, բարդացնում է նրան և զանազան տեսակ ըմբռնումների հիմքեր կառուցանում: Մեր գեղարվեստական գրականության մեջ շատերն են զբաղվել այս թագավորի պատկերացման գործով և մենք



տեսնում ենք Արշակին այդտեղ իբրև մի հերոս, իբրև մի ինքնուրույն և բարդ բնավորություն, ինչպես որ իրոք թելադրում են Փավստոսի տված մի շարք մանրամասնությունները: Բայց շնայած այդ գրավիչ գույններին, հայ մտքի կարող ներկայացուցիչներից մեկը, Մովսես Խորենացին, իրեն հայտնի բոլոր նյութերը մաղելուց հետո, բնորոշում է Արշակին իբրև մի «ինքնահամարում, որ փառք որոնում էր ավելի գինեխմության, պարուհիների երգերի մեջ, իբրև մի մարդու, որ իրեն ցույց էր տալիս մի քաջ Աքիլես, բայց իրոք կաղ Թերսիդեսն էր»<sup>1</sup>:

Այս հակասական ըմբռնումները հասկանալու համար պետք է նկատի առնել թե ինչ տարրերից է կազմվել նրա պատմության հայ աղբյուրը: Փավստոսի աշխատությունը շատ նշաններ ունի, որոնք ցույց են տալիս թե նա Արշակի ժամանակակից պատմագիր չէ և իր գործը գրելիս օգտվել է մի քանի տեսակ նյութերից: Գոյություն ունեցել են, անշուշտ, և պատմական հավաստի տեղեկություններ, բայց զլխավոր ատաղձը կազմել են վկայաբանությունն ու ժողովրդական բանավոր գրականությունը: Արշակին ժամանակակից էին երկու խոշոր գործիչներ—Ներսես Պարթև և Վասակ Մամիկոնյան, առաջինը՝ կաթողիկոս, հռչակված իր գործունեությամբ և սրբերի շարքը դասված իբրև եկեղեցու գինավոր և նահատակ, իսկ երկրորդը՝ հայոց գործերի քաջ հրամանատար և հայ երկրի շահերի հզոր պաշտպան: Ներսեսի մեծամեծ ծառայությունները եկեղեցին պատվել էր վկայաբանական հրաշապատում գրույցներով, որոնց մեջ Արշակը հակառակորդի, հանդիմանողի և դատապարտողի դերումն էր երևան հանվում: Մամիկոնյանների սպարապետական տունը, ինչպես պարզ երևում է Փավստոսի տված նյութերից, ուներ իր տոհմային գուսանական վիպասանություններն ու գրույցները, որոնց մեջ ժողովրդական շափազանցություններով վեր էին հանվում այդ տոհմի քաջագործությունները: Վասակ Մամիկոնյանը, իբրև մեկը կարող և հերոս սպարապետներից, ուներ իր գրույցները, որոնք պատմում էին նրա պատերազմները, մեծամեծ հաղթությունները, գործեր, որոնք իհարկե, Արշակի թագավորությունն էին զարդարում: Բայց կար և մի երրորդ տեսակ աղբյուր—արքունի տան ավանդական վեպը, մի տեսակ «թագավորների գիրք» որի մեջ զարդարուն գույներով և մեծամեծ գովեստներով պատմվում էին հայ Արշակունիների գործերը: Ահա այս տարբեր աղբյուրների հայթայթած տարբեր հայեցակետերից լուսաբանվող նյութերն էլ ներկայացնում են Արշակին զանազան դիրքերի մեջ—մերթ իբրև հայրենասեր հերոս, առասպելական հաղթող, մերթ իբրև փոքրոգի վախկոտ, մերթ պետական լայն գաղափարով տոգորված մի շինարար, մերթ իբրև մի կոպիտ եսամուլ, նույնիսկ իբրև սովորական մի ոճրագործ: Ճշմարտության վերահասու կարելի է լինել քննադատաբար վերաբերվելով աղբյուրներին, առաջնորդ ընտրելով անսխալ ուղեցույցը— Հայկական Թարձրավանդակի վրա մշտնջենապես տիրող քաղաքական պայմանները, միջազգային մրցությունները և երկրի ներքին համայնական կարգը:

Անշուշտ Արշակը սովորական բնավորություններից չէր և ներկայացնում էր բավական բարդ մի ներքին աշխարհ, ուր տվյալներ կային թե՛ պետական առաքինությունների և թե՛ մանր անձնահամ զորքերի համար: Ընդհանուր առմամբ՝ դա մի տիպար Պարթև էր, այս տոհմին հատուկ առաքինություններով և արատներով, որոնց մեջ առանձնապես շեշտվում էին բռնավորական

<sup>1</sup> Խորենացի, Գ, ԺԹ.

ոճրագործ կրքերը: Պակասությունների մի մասը, անշուշտ, հետևանք էր թագավորի թուլության: Թեև ազգային գրույցները վերագրում են Արշակին նույնիսկ անհնարին գինավորական մեծագործություններ, բայց վերջի վերջի անհերքելի էր մնում որ նա իր հայր Տիրանից բարձր չէր իբրև գինավորական գործիչ, իսկ գրույցները, որոնք, օրինակ, հավատացնում են թե Արշակը անընդհատ 30 տարի կռվեց Շապուհի դեմ և միշտ էլ հաղթեց նրան, պարզ առասպելներ են, որոնք ոչինչ նշանակություն ունենալ չեն կարող:

Ինչ որ ճշմարիտն է այդ վիպական նյութերի մեջ, այն է, որ Արշակի թագավորության առաջին յոթը տարիները (350—357) շատ նպաստավոր եղան խաղաղ զարգացման համար: Այս նպաստավոր դրությունը բերել էր արտաքին աշխարհը և հայությունը, ինչպես միշտ այսպիսի դեպքերում, օգտագործեց այդ բարերար հանգամանքը լայն շափերով: Մրցությունները Արևմուտքի և Արևելքի մեջ դադար էին առել: Դա հաշտություն չէր, այլ մի տեսակ ակամա գինադադար, որ կարող էր ամեն թույլ տեղի տալ պատերազմական գործողությունների վերսկսման: Երկու կողմերն էլ համենայն դեպս դժգոհ չէին իրերի այդ դրությունից: Կայսրն Արևմուտքում, Շապուհն իր պետության արևելյան ծայրերում զբաղված էին ուրիշ պատերազմներով, և պարսկահռոմեական սահմանագլխի վրա խոշոր բանակների շարժումներ տեղի չէին ունենում: Արշակը, ինչպես վկայում է Ամմիանոս Մարկելլինոսը, ամբողջ ժամանակ հավատարիմ մնաց կայսրությանը, իսկ Փավստոսն էլ վկայում է թե նա բարեկամ էր Շապուհի հետ<sup>2</sup>: Այս քաղաքականությունը միակ շահավետը կարող էր համարվել հայ երկրի համար: Եվ հենվելով նրա վրա, Արշակը կանոնավորեց ու կարգի բերեց իր պետությունը, հաստատեց նրա մեջ խաղաղություն և ապահովություն, այնպես որ բոլոր ցրվածներն ու փախածները վերադարձան հայրենիք և սկսվեց մի շրջան, որ պատմիչն ուղղակի անվանում է «նորոգություն թագավորության հայոց»<sup>3</sup>:

Առաջին նշանավոր քայլը, որ տանում էր երկիրը դեպի «նորոգություն», այն էր, որ Արշակը նորից գործի հրավիրեց Մամիկոնյան երկու իշխաններին՝ Վարդանին և նրա կրտսեր եղբայր Վասակին: Վերջինս, ինչպես գիտենք, հենացել էր հայոց արքունիքից իր հայր Արտավազդի հետ, դրված Տիրան թագավորի անգթությունից, Արտավազդը, ինչպես երևում է, կենդանի չէր Արշակի թագավորելու միջոցին: Արշակը Վարդանին կարգեց Մամիկոնյան տոհմի նահապետ և մոտեցրեց իրեն, իսկ Վասակին, որ իր դայակն էր, հանձնեց սպարապետությունը: Այս մի շատ խոշոր երևույթ էր: Հմուտ և քաջ զորավարի ձեռքում երկրի գինված ուժերի բարձր հրամանատարության կենտրոնացումը շատ բարերար ազդեցություն արավ, այնպես որ Փավստոսն ասում է թե շատերն ասում էին որ ինքը երկինքն է կանչել Վասակին առաջնորդելու հայոց զորքերը: Այսպիսի կարծիքը հասկանալի կդառնա, եթե նկատի առնենք թե ինչի՞ կարողացավ անել տաղանդավոր սպարապետը: Ամենից առաջ նա կարգի բերեց նախարարներին, հպատակեցրեց նրանց կենտրոնական իշխանության, իսկ նրանց զորքերը կարգ ու կանոնի տակ դնելով, դասավորեց երկրի զանազան կողմերում և սահմանների վրա, որոնք այսպիսով լավ պաշտպանված էին, հաստատելով ապահովություն ամբողջ երկրում: Ամենազլխավորը մի ավատական երկրի մեջ կալվածատեր իշխաններին հնազան-

<sup>1</sup> Аммиан Марцеллин, «История», пер. Кулаковского, Киев, 1905—1908, XX, 11.

<sup>2</sup> Փավստոս, Գ, ԺԳ.

<sup>3</sup> Անդ, Գ, Բ, Գ.



բոճաքն էլ, եկեղեցուն իր ամբողջ կյանքը նվիրած, նրա շահերի համար զոհվելու պատրաստ մարդկանց մեծամեծ խմբակցություններ, որոնց ձեռքումն էր գտնվում ոչ միայն պաշտամունքը, ծեսը, աստվածաբանությունը, այլև մտավոր զարգացումը, գիտությունը, ուսուցանելու արտոնությունը: Հայ կյանքի մեջ վանական միաբանության անդամն ստանում էր վարդապետ հատուկ անունը: Վանական-ճգնավորական դրությունը արական սեռի սեփականությունը չէր: Հայաստանում էլ բացվում են կուսանոցներ, որոնց մեջ իգական սեռն է նույն կուսակրոն անձնագոհության ուխտով ծառայում եկեղեցու տիրապետական շահերին: Այս բազմաթիվ վանքերն ու կուսանոցները ստանում էին պետությունից հողային սեփականություններ՝ հարուստ՝ ուրեմն և ազդեցիկ լինելու և իրենց միաբանների բանակը կերակրելու համար:

Եկեղեցականությունը կազմակերպելուց հետո, Աշտիշատի ժողովն անցնում էր աշխարհական կյանքին: Եկեղեցին քաղաքական իշխանությունից առաջ էր ընկնում, հանդիսանալով օրենսդրական մի բարձր հեղինակություն, որ կանոնավորում էր կյանքը իր ընդգրկած բարոյական սկզբունքների համաձայն: Եվ որովհետև այդ սկզբունքները եվրոպական մտքի մշակումն էին ներկայացնում, ուստի նրանց օրինագրած իրավական նոր կարգերը Հայաստանի մեջ դեռ չտեսնված լուսավոր հեղաշրջումների տեսարանն էին հանդես բերում:

Այսպես, վերացվում էր մեռելներին ողբալու հեթանոսական կարգը, որ առանձնապես տիրական էր և չափազանցություններով հարուստ մանավանդ հայ ժողովրդի մեջ: Մենք արդեն գիտենք որ մեռելների սուգը կատարվում էր երաժշտական գործիքների նվագակցությամբ և ներկայացվում էր հատուկ պարերով, ինքնակեղեքման ծանր գործողություններով կամ, ըստ Փավստոսի, ոճի իր ներով, որոնց թվից արտաքսված չէր նաև մարդասպանությունը: Քրիստոնյա եկեղեցին միանգամայն չէր վերացնում սուգը և չէր էլ կարող վերացնել, քանի որ ինքն էլ նվիրագործել էր մեռելապաշտությունը: Հեթանոսական սուգի տեղ նա հաստատում էր ավելի մեղմ, ավելի վայելուչ ձև, վարդապետելով որ մեռելների վերաբերմամբ անհույս չպետք է լինել, քանի որ նրանք չեն կորչում անդարձ, այլ մի օր պիտի հարություն առնեն:

Արգելվում էր մեռելոտի, այսինքն լեշ ու արյուն ուտելու բարբարոս սովորությունը: Ամուսնությունը կարգ ու կանոնի էր ենթարկվում, և այս մանավանդ կարևոր մի նորություն էր հայ կյանքի մեջ: Արգելվում էր մերձավորների ամուսնությունը, արյունախառնությունը, որ իսկապես չափազանցությունների էր հասնում, ինչպես այդ ցույց տվեց հենց ինքը լուսավորչի սոհմն իր ամուսնություններով: Անթույլատրելի պիտի հրատարակված լինի և բազմակնությունը, որի հետքերը պարզ նկատվում են այդ ժամանակի իշխող դասակարգերի մեջ: Արգելվում էին և զանազան բարոյական հանցանքներն ու անասնական ախտերը. արբեցողություն, սուտ երգում, զրկողություն, արվագիտություն, իզուլյուն, անասնագիտություն և այլն: Բարբերի այս զտումը հիացմունքով է նկարագրում Փավստոսը, և որովհետև նրա համար ամենաբարձր իդեալը վանքն է, ուստի բացականչում է «Եւ արարի՛ զամենայն ժողովուրդս երկրին Հայոց իբրև կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի: Բայց միայն յամուսնութեան օրինացն»<sup>1</sup>:

Բայց արգելքն ու հրամանը դեռ բավական չէին: Հայ կյանքի բարեկար-

<sup>1</sup> Փավստոս, Գ, Գ:

գիշները լուր մի մեռած ձեռնակներով կատարած կլինեին, եթե կանոններ մշակելուց հետո չզնային: Ժողովուրդը միայն օրենքների չէր կարոտ, այլ մանավանդ դաստիարակության, առանց որի անկարելի պիտի լիներ կանոնների ոգու և սկզբունքների լայն գործադրությունը: Եվ ներսեսը ժողովրդի ձեռքը տվեց ամենից առաջ, իհարկե, դպրոցական դաստիարակությունը, բաց անելով զանազան գավառների մեջ, հավանորեն վանքերում, դպրոցներ: Սակայն այս ասպարեզում նրա գործունեությունը ինքնուրույնության և ստեղծագործող աշխատանքի կնիք չէր կրում: Գպրոցի հոգին նրա մեջ տիրապետող լեզուն է: Ներսեսը չկարողացավ օգտագործել մայրենի լեզվի մեծ ուժը: Նրա բացած դպրոցներում հունարեն և սիրիական լեզուներն էին տիրում, իսկ մենք գիտենք արդեն որ ճիշտ այսպիսի դպրոցներ բաց էր արել և Գրիգոր լուսավորիչը: Գուցե տարբերությունն այն էր միայն, որ Ներսեսի ժամանակ մասնավորապես հունարեն ուսուցիչները հայեր էին: Մենք տեսանք Աթենքի համալսարանում մի բազմաթիվ և վերին աստիճանի գործունյա, եռանդուն ուսանողություն: Ներսեսի ժամանակ դեռ կենդանի էր հայ գիտնական հոետոր Պրոեբեսիոսը, հետևաբար և դեռևս շարունակվում էր հայ երիտասարդների համախմբումը նրա հովանավորության տակ՝ հունական գիտությունը յուրացնելու համար: Այս ուսանողները վերադառնում էին հայրենիք և այստեղ նրանք ուրիշ ի՞նչ ասպարեզում կարող էին գործադրել իրենց հունագիտությունը, եթե ոչ զլիսավորապես դպրոցների մեջ:

Գպրոցներից ավելի ներսեսը ուշադրություն դարձրեց այնպիսի հասարակական հիմնարկությունների վրա, որոնք կենդանի օրինակով մարմնացնում էին գթասրտության, մարդասիրության սկզբունքները, ստեղծելով միաժամանակ մեղմություն բարբերի մեջ, հավաքական գործակցություն, հանրային պարտավորությունների գիտակցություն:

Բարեգործությունը, ինչպես գիտենք, քրիստոնեությունից չէ ծնվել: Նա գալիս է այն հին, անհիշելի ժամանակներից, երբ մարդը հնարեց անդրբեղմանային կյանքը, դրեց նրա կենտրոնում մեռածի հոգին, որ ենթակա է պատասխանատվության այն բոլոր բաների համար, որ կատարել է այս աշխարհում: Պատժվող և վարձատրվող հոգու հասկացողությունը ստիպում էր մարդուն, իր կենդանության ժամանակ, բարի գործեր էլ կատարել, ինչպես ուսուցանում էր կրոնը, գերեզմանային աշխարհում դատող աստվածությունից վարձատրվելու համար: Բարի գործ էր կատարում մարդը, երբ մի կտոր հաց էր տալիս քաղցածին, չէր նեղում կամ քիչ էր նեղում թույլին, չէր զրկում կամ քիչ էր զրկում որբին ու այրուն, խնամում էր հիվանդին և այլն:

Քրիստոնեությունը, համարյա բառացի փոխ առնելով հեթանոսական այս ըմբռնումը, ավելի զարգացրեց նրան իբրև բարեգործության սկզբունք, ավելի լայն և ընդարձակ գործադրության միջոցներ ստեղծեց: Ամենից գեղեցիկ երևույթն այն էր, որ բարեգործությունը հանվեց տեղայնության անձուկ շրջանակներից և համամարդկային գաղափար դարձավ, իբրև պարտավորություն ծառայելու առհասարակ տառապող և կարոտ մարդկության, առանց ինքնուրույնությունների: Հայաստանի մեջ էլ բարեգործությունը, ինչպես տեսանք հայ հեթանոսական կրոնի նկարագրության մեջ, անծանոթ մի հիմնական հայ հեթանոսական կրոնի նկարագրության մեջ, անծանոթ մի հիմնարկություն չէր, բայց զարգացած էր շատ թույլ կերպով, արտահայտվելով որբան մեզ հայտնի է, օտարներին, ճամփորդներին ասպնջականություն տալու մեջ: Աշտիշատի ժողովը հայ իրականության մեջ մտցնում էր քրիստո-

նեական բարեգործության նորագույն, եվրոպական ձևերը, օրինակ առնելով ներսեսի տեսած հիմնարկությունները հունական աշխարհում: Բացվում են անկելանոցներ, ուրկանոցներ, աղքատանոցներ, որբանոցներ, հիվանդանոցներ, օթևաններ կամ հյուրանոցներ՝ ճանապարհորդների և օտարականների համար: Միանգամայն վերացվում էր մուրալու ալեոր արհեստը: Գոնե Փափստոսը հավատացնում էր որ աղքատների բոլոր պիտույքները հոգացվում էին հատուկ հիմնարկությունների մեջ և կարիք էլ չէր մնում որ նրանք նույնիսկ գուրս գային իրենց անկողիններից<sup>1</sup>:

Արևելքում այսպիսի վերաբերմունքը կատարյալ հրաշք պետք էր համարել: Բորտոները, ընկնավորները և այլ այսպիսի հիվանդ, հաշմանգամ մարդիկ հին աշխարհում մատնված էին ծայրահեղ արհամարհանքի, վտարված մարդկային հասարակությունից և ապրում էին հեռու ու խուլ անկյուններում իբրև անասուններ: Ներսեսն այս տեսակ թշվառների համար հատուկ խնամատարություն հաստատեց առանձին հիմնարկությունների մեջ և այդպիսով հանդես հանեց մի լայնասիրտ մարդասիրություն, որ ամենաբարեբար ազդեցություն պիտի թողներ ասիական կոպիտ ու դաժան բարքերի վրա:

Անհատական միջոցներով այսչափ ընդարձակ հաստատություններ չէր կարելի հիմնել և պահպանել: Ամեն ինչ ցույց է տալիս որ պետությունն էր հայթայթում բոլոր հարկավոր միջոցները, իսկ հիմնարկությունների կառավարությունը ամբողջովին, երևի, հանձնված էր հենց նույն վանական միաբանություններին, որոնք այնքան բազմացան ներսեսի ժամանակ:

Արշակը ներսեսի հետ էր այս ձեռնարկությունների մեջ: Ուրիշ կերպ չէր կարելի երևակայել պետական օժանդակություն այնքան լայն շափերով: Այս երևում է և Փափստոսի մի շարք վկայություններից<sup>2</sup>: Պետական նպաստը տրվում էր, անշուշտ, կալվածների ձևով, որոնք հատկացվում էին եկեղեցիներին ու վանքերին: Չէր մերժվում, իհարկե, և մասնավոր բարեգործությունը: Իշխող և ունևոր դասակարգերը, սկսած թագավորից, իրենց կամ իրենց ազգականների արևշատության կամ հոգու փրկության համար նվերներ էին անում կրոնական-բարեգործական հաստատություններին և փոխարենն ստանում էին աղոթքներ և խնդրվածքներ: Այս բարեպաշտական տուրևաությունն էլ գոյություն ուներ դեռ հեթանոսական հնություն խորքերում:

Ինչ էլ եղած լինի պետական բարեգործության իսկական ծավալը, անկասկած է որ խնամատար հաստատությունները շատ էին, ցրված երկրի զանազան կոմերում: Միայն այս ձեռնարկությունները բավական էին որ ներսեսն ստանար Մեծ տիրողսը, ինչպես իրոք էլ ստացել է երախտագետ եկեղեցուց: Ծիշտ որ, հեշտ բան՝ չէր անսովոր ու բարդ հասարակական երկվոյթներ առաջացնել մի ավատական երկրում, ուր ճորտային կացություն ըստինքյան բացասում էր մարդկայնության սկզբունքը և ուր ամենից քիչ համայնական համերաշխությունն էր հարգված: Առանց ներսեսի անսպառ ոգևորության, արտակարգ եռանդի մեծ հեղինակության անկարելի էր գործադրել նրա թելադրումներով ղեկավարված եկեղեցական ժողովի որոշումները, և նա էր իսկական պատճառը որ հայոց երկիրը մի կարճ միջոցում ցույց տվեց իրեն ազատված ասիական բարբարիկ բարքերից և ծածկվեց արևմտյան քաղաքակիրթ մարդկության պատիվ բերող հիմնարկություններով, որոնք մարդու իրավունքները հարգելու պարտավորությունն էին վեր հանում: Առանձնապես հիշատակել պետք է այն, որ ներսեսը պատվիրում էր ամբողջ աշխարհին, սկսած թագավորից, մեծամեծներից և առհասարակ ամեն մի անհատից, որ իշխանություն ուներ մարդու վրա, լինել մեղս ու անհիշաչար, գով ունենալ ծառաների, փոքրերի, աշակերտների վրա, անարժան և տարապայման հարկերով շափից դուրս չնեղել նրանց, լավ հիշելով որ այդ մարդիկ էլ տեր ունին երկնքում: Փոխադարձաբար ստորադրյալներին էլ պատվիրում էր հարգանքով վերաբերվել իրենց տերերին: Խրատով ու պատվերով, իհարկե, չէին վերանա ընկերական կյանքի մեծագույն շարիքները, բայց այս սկզբունքի քարոզությունն էլ մի շատ նշանավոր երևույթ էր հայ կյանքի համար:

Ներսեսի գործունեությունը արժանապես զնահատելու համար պետք է նկատի առնել որ նույնիսկ հունական առաջնակարգ քաղաքակիրթ աշխարհում ընդամենը մի 25—30 տարի էր, ինչ սկսել էին գոյանալ և առաջանալ բարեգործական հիմնարկությունները<sup>3</sup>: Մնում է սպասել թե այս բոլոր նոր գործերն ու բարձր սկզբունքները ո՞րքան կարող կլինեին հաշտ ապրել հայ պատմական միջավայրի հետ, ո՞րքան կարող կլինեին հարատևել մի փոքրիկ և թույլ պետության մեջ, որի ճակատագիրը ամբողջապես իր բնակիչների ձեռքում չէր գտնվում, ուստի և այնքան երերուն, փոփոխական էր: Այս մի շատ ծանրակշիռ հարց էր, ավելի ծանրակշիռ քան նույնիսկ զարմանալի արագությամբ բարեգործական հիմնարկությունների ցանցով երկիրը պատելը: Ներսեսը գործել էր առանց հարցեր տալու և լուծելու: Պետության տնտեսական կարողությունը, ասիական բռնապետության սնուցած բարքերը, հավիտենապես միջազգային ռազմաբեմ դարձած երկրի հանգամանքները— այսպիսի մեծամեծ խոչընդոտներ նա հաշվի չէր առել, իրական հրաշք էր գործել, կարծելով թե այդ հրաշքը հրաշքով էլ տևական իրականություն կդառնա: Բայց ժամանակը երկար սպասել չտվեց և բերեց ներսեսին մրցություն որ զնալով ավելի ու ավելի բարդացավ ու ծանրացավ:

Թեև իշխանությունն ամբողջովին հունական կուսակցության ձեռքումն էր, թեև ներսեսը իր գործունեությամբ արդեն մեծ ժողովրդականություն էր ձեռք բերել, բայց միանգամայն լուռ ու անգործ չէր հակառակ, պարսկական կուսակցությունը: Մեզ արդեն ծանոթ Հայր մարդպետը, Ռշտունի և Արծրունի տոհմերը կոտորել տվողը, մի անգամ գնում է Տարոն՝ իր կալվածները շրջելու և մտնում է Աշտիշատ, որ կուսավորչի տոհմի կալվածն էր: Այդտեղ էր ներսես կաթողիկոսը, որ հրամայում է պատվել արքունի ներքինապետին, ճաշ պատրաստել նրա համար: Հայր մարդպետը հլացած էր Աշտիշատի շքնաղ դիրքի և շրջակայքի գեղեցկությունների վրա: Ծաշելուց և խմելուց հետո էր որ ավելորդ համարեց թաքցնել իր զգացմունքները և ներսեսի ճակատին ասաց թե որքան հանդիմանությունների և նախատիքի արժանի են Տրդատը և Արշակունի թագավորները, որոնք այսպիսի աննման տեղերը տվել են «կանանցահանդերձ մարդկանց», այսինքն հոգևորականներին, մինչդեռ արժանի էր որ այստեղ կառուցվեր արքունական պալատ: Հայհոյանքներին արժանի էր որ այստեղ կառուցվեր արքունական պալատ: Հայհոյանքներին Հայր Մարդպետը ավելացրեց և սպառնալիքներ, ասելով որ եթե ինքը ողջ մնա և գնա Արշակի մոտ, պիտի ամեն կերպ աշխատե խել Աշտիշատը և

<sup>1</sup> Փափստոս, Գ, գ:

<sup>2</sup> Փափստոս, Գ, ժբ, ժգ:

<sup>1</sup> Փափստոս, Գ, գ:

<sup>2</sup> Léon Lallemand, „Histoire de la Charité“, t. II, Paris, 1903, p. 126:

հոշակավոր եկեղեցու տեղ պալատ կառուցանել: Ներսեսը սառնասրտությամբ ասաց որ Քրիստոսի տունն է այստեղ և ով աչք է դրել նրա վրա, նա չի հասնի իր նպատակին, նույնիսկ չի հասնի թագավորին, որի անունով սպառնաց այստեղ: Հայր մարդպետը ճանապարհ ընկավ, իսկ Ներսեսի արտասանած պատգամի կատարող հանդիսացավ Շավասպ Արծրունին, որ սպանեց Հայրին Եփրատի մոտ, անտառի մեջ<sup>1</sup>: Սպանողն իր տոհմային վրեժն էլ էր հանում: Դա այն Շավասպն էր, որ ազատվել էր Արծրունիների կոտորածից և մեծացել էր Վասակ Մամիկոնյանի տանը: Այս դեպքը ցույց էր տալիս որ երկիրը դեռ էլի պիտի շարունակեր տուժել երկու հակամարտ կուսակցությունների մրցությունից: Եվ իրավ, Հայրի սպանությունը նախերգանքն էր:

Փավստոսը<sup>2</sup>, նրան հետևելով և Մովսես Խորենացին<sup>3</sup>, հաղորդում են թե Արշակը Ներսեսին ուղարկեց կայսրի մոտ մի կարևոր հանձնարարությամբ: Հաստատապես հայտնի չէ թե ինչ հանձնարարություն էր այդ, բայց հավանորեն Ներսեսի բացակայությունից<sup>4</sup> օգտվեց հակառակ կուսակցությունը՝ իրեն առաջ քաշելու և թագավորի վրա ազդելու համար: Ներսեսը իր փոխանորդ էր թողել Խաղ եպիսկոպոսին, որ թեև Փավստոսի նկարագրության մեջ դուրս է բերած իբրև մի հրաշագործ սուրբ<sup>5</sup>, բայց իսկապես եղել է, ինչպես երևում է, և համարձակախոս ու խստապահանջ: Նա շուտով ընդհարվեց Արշակի հետ: Եվ էլի պատմիչը իբրև բարձր առաքինություն է ցույց տալիս թե ինչպես Խաղը հանդիմանում էր թագավորին ամենախիստ խոսքերով: Մեզ թվում է թե հենց այս ժամանակն էր որ Վարդան Մամիկոնյանը, Արշակի մտերիմը, թողնելով հունական կուսակցությունը, սկսեց մոտենալ պարսկական կուսակցության: Ներսեսը, վերադառնալով Բյուզանդիայից, բոլորովին փչացած տեսավ իր տեղապահի հարաբերությունները արքունիքի հետ: Արշակը հալածում էր Խաղին: Ընդհարման պատճառը Արշակավանն էր, որի գոյության հետ չէին կարողանում հաշտվել նախարարները: Ներսեսն այս հարցի մեջ իր տեղապահի և նախարարների կողմը բռնեց: Եվ ահա սկսվեց հակառակությունը կաթողիկոսարանի և արքունիքի մեջ: Հակառակությունը հանգեց բացարձակ ընդհարման, որի մանրամասնությունները երկար պատմում են, տարբեր մի քանի հանգամանքներով, Փավստոսը<sup>6</sup> և Խորենացին<sup>7</sup>: Մեր առջև բացվում է պալատական մի ամբողջ ինտրիգ, խառն վիպական հանգամանքների հետ, որ ունի այսպիսի մի պատմություն:

Կենտրոնում կանգնած է հազվագյուտ գեղեցկության տեր մի կին, Փառանձեմ անունով, որ Սյունյաց Անդովկ իշխանի աղջիկն էր, ամուսնացած Արշակի եղբորորդի Գնելի հետ, որին մենք տեսանք կայսրի մոտ պահվող պատանդների թվում: Բյուզանդիայից վերադառնալուց հետո Գնելն ապրում էր իր կուրացած պապ՝ Տիրանի մոտ, նրա Կվաշ անունով ավանում, Արագած լեռան ստորոտում: Տիրանը շատ սիրում էր իր այս թոռան, որ ուներ բավա-

1 Փավստոս, Դ, Ժդ:

2 Դ, Ե:

3 Գ, ԻԹ:

4 Պատմությունն ավանդում է, թե կայսրը Ներսեսին աքսորեց մի անմարդարնակ կղզի, որ նա մնաց ամբողջ յոթ տարի: Բայց այս բոլորը առասպել է: Ներսեսը աքսոր չէ գնացել և իր գործը վերջացնելուց հետո վերադարձել է Հայաստան:

5 Փավստոս, Դ, Ժբ:

6 Փավստոս, Դ, Ժե:

7 Խորենացի, Գ, Իբ-իե:

կան խոշոր հարստություն և փառավոր հարսանիք արավ, հրավիրելով բոլոր նախարարներին: Հայ ազնվականության մեջ նա առհասարակ սեր և հարգանք էր վայելում իր ազնիվ բնավորությամբ: Այս նախանձելի վիճակի վրա ավելանում է և մի երջանիկ ամուսնու բախտը: Փառանձեմը, որ համարվում էր հայոց աշխարհի առաջին գեղեցկուհին, համեստ ու բարի էր, սիրում էր իր ամուսնուն:

Այս բոլորը շատ ուժեղ մի դրդապատճառ էր որ խորունկ ու կատաղի մի նախանձ ծառանա Գնելի կողքին և նրա դեմ: Դա նրա հորեղբոր որդի Տիրիթն էր, որ սիրահարվելով Փառանձեմի վրա, վճռել էր՝ ինչպես էլ լինի՝ տիրանալ նրան: Ամենապահանջով միջոցը ոճիրն էր — պետք էր մեջտեղից վերացնել Գնելին: Կար և լավագույն առիթը, որ արևելյան բռնապետությունների մեջ հաջողության անվրեպ գրավականն էր: Տիրիթը իր կողմնակիցների հետ սկսեց գրգռել Արշակի կասկածամտությունը Գնելի դեմ: Թագավորին ներշնչում էին թե Գնելը իր ամբողջ ժողովրդականությունը, իր ամբողջ հարստությունը գործադրում է թագավորությունը նրա ձեռքից խլելու համար: Արշակը սկզբում բավականանում է հրամայելով Գնելին հեռանալ Արարատյան նահանգից, ուր, ինչպես գիտենք, արքայազուն իշխաններից միայն թագածառանգն ուներ իրավունք ապրելու: Սակայն այս կարգադրության հակառակում է ծերունի և կուրացած Տիրանը, չկամենալով բաժանվել իր սիրած թոռնից: Այստեղ Արշակը, Խորենացու ասելով, հանդես է բերում իր բարոյական բոլոր արատները և սպանել է տալիս իր հորը՝ նրա սենեկապետների միջոցով: Գնելն անմիջապես հնազանդվում է թագավորական հրամանին և տեղափոխվում է արքայազուն իշխաններին հատկացրած Աղիովիտ գավառը: Բայց փոխվում է արքայազուն իշխաններին հատկացրած Աղիովիտ գավառը: Բայց սրանով Փառանձեմին տիրանալու հարցը չէր վճռվում, ուստի Տիրիթը շարունակեց իր քսու բանսարկությունը Արշակի մոտ, երևի օգտվելով և Վարդան Մամիկոնյանի հեղինակավոր աջակցությունից, մինչև որ հաջողեցրեց կազմակերպել սպանության մի ստոր եղանակ: Այս եղանակագործությունը տեղի ունեցավ Շահապիվանում, նավասարդի տոներին: Գնելը հրավեր ստացավ Արշակից գալ իր մոտ՝ տոնախմբության մասնակցելու: Նրան խաբելու համար ուղարկվեց Վարդան Մամիկոնյանը: Միամիտ իշխանը գնաց իր ընտանիքով. ամբողջ գիշերը ճանապարհ կտրելով, վաղ առավոտյան հասավ թագավորի բանակը: Այդտեղ նրան սպասում էր Արշակի դահճապետ Երազմակը, որ բռնել տալով դժբախտ արքայազուն իշխանին, տարավ մորթեց նրան: Նույն այս միջոցին Ներսեսը գտնվում է Շահապիվանի եկեղեցում, կիրակի տարան սպանելու, ճիշտ ու կոծով ընկնում է եկեղեցին և խնդրում է Ներսեսի պաշտպանությունը: Եկեղեցու պետը, ամենայն իրավունքով վրդովելով այդ դեպքից, ընդհատում է ժամերգությունը և շտապում է Արշակի մոտ: Սա, խմանալով Ներսեսի տարածած այցելության նպատակը, ցույց է տալիս հոգու փոքրություն: Փավստոսի ասելով, փաթաթվում է իր սամույրների մեջ, քնածի տեղ դնում իրեն: Ներսեսը նրան հորդորում է իսկույն կարգադրություններ անել՝ անմեղ երիտասարդի կյանքը փրկելու համար, իսկ Արշակը շարունակում է քնածի դրությունը կեղծել: Ներսեսը մինչև անգամ բռնում է նրան, վեր կացնում, բայց դարձյալ անօգուտ: Եվ երբ Երազմակը գալիս է հայտնելու թագավորին թե նրա հրամանը կատարված է, հայրապետը, լցված արդար ցասմամբ, դատապարտում է այդ տմարդի ոճիրը, անվանում է Արշակին եղբարյասպան Կայեն և խիստ խոսքերով անիծում է նրան:



Իսկ ոճիրն այդտեղ էլ կանգ չէր առնում: Արքունի տան վեպը նկարագրում է Փառանձեմի տագնապը, թե ինչպես դառն ու անմխիթար էր նրա սուգը իր երիտասարդ ամուսնու վրա, թե ինչպես այդ միջոցին Տիրիթը մարդ է ուղարկում նրան ասելու թե ինչու է այդքան ողբը, ահա ինքը, Տիրիթը նրան կին կառնի: Այս լուրն ավելի է գրգռում նորատի սգավորին և նա իր շորերը պատռած, հերարձակ, ծծերը մերկացրած՝ ողբ էր կանչում, բողոքում էր՝ պատմելով Տիրիթի պատգամը և ասելով թե ինքը պատճառ դարձավ իր ամուսնու կորստյան: Գեղանի կնոջ լացն այնքան սրտառու էր, որ շատերն էին նրա հետ արտասվում: Սուգին սիրտ ունեցավ ներկա լինելու և ինքը Արշակը: Նստած պատանի Գնելի դիակի մոտ, նա նայում էր նրա այրուն և այդտեղ էլ վառվեց նրան իր կինն ունենալու ցանկությունը: Անտեղյակ Տիրիթը նրանից թույլտվություն էր խնդրում Փառանձեմին առնելու: Արշակը պատասխանի փոխարեն հրամայում է սպանել Տիրիթին, պատճառ բերելով թե նա է իրեն մոլորեցրել և անմեղ Գնելին սպանել տվել: Տիրիթը փախուստի է դիմում, բայց թագավորի մարդիկ հասնում են նրան Բասենի անտառների մեջ և այնտեղ սպանում: Այնուհետև Արշակը Փառանձեմին կնություն է առնում, թեև վեպի պատմելով, Փառանձեմը նրան չէր սիրում, որովհետև նա մազոտ էր և սև:

Ահա տմարդության, խարդախության, անզուսպ կրքերի, խաբեության այսպիսի տեսարաններ էր հանդես բերում հայ արքունիքը այնպիսի մի ժամանակ, երբ քրիստոնեական եկեղեցին բարեսիրական բազմաթիվ հիմնարկություններով կարծում էր մեղմել բարքերը, դաստիարակել երկիրը մարդասիրության, առաքինության, իրավունքի գիտակցությանը: Բարքերի անողոք և խստապահանջ քննադատ ներսեսը Արշակից հեռացավ ընդմիջտ, ինչպես հավատացնում է Փավստոսը: Արշակը ոչինչ չարավ նրա հետ հաշտվելու համար, ընդհակառակն՝ կարծես գոհ էլ էր, որ ազատվեց նրա խիստ պահանջներից և հանդիմանություններից: Այս պարզապես նշանակում է որ նրա համակրանքը թեքվել էր պարսկական կուսակցության կողմը, որ ավելի ազդեցիկ էր դառնել արքունիքում: Սրա մի նշանն էլ այն է, որ Արշակը ներսեսի տեղ կաթողիկոս կամ, ավելի ճիշտ, կաթողիկոսական տեղապահ է նշանակում մի ոմն Չունակի, որ «էր,— ասում է Փավստոսը,— ստրուկ ի ստրկաց արքունի», այսինքն համակերպող, հլու հնազանդ: Այս խոսքերը շատ լավ ապացուցում են որ երբ հայ եկեղեցական իշխանապետության գլուխն էին անցնում Գրիգոր Լուսավորչի տան ներկայացուցիչները, արքունիքը և կաթողիկոսարանը դառնում էին կողմեր՝ իրենց ուրույն շահերով:

Մինչդեռ Հայաստանի մեջ այս դեպքերն էին տեղի ունենում, Պարսկաստանի և Բյուզանդիայի հարաբերությունները դարձյալ սկսեցին սպառնական կերպարանք ստանալ: 355 թվականից պարսից սահմանապահ զորքերի ավազակային հարձակումները Հայաստանի հարավային մասերում և մանավանդ Միջագետքում սաստկացան: Նրանք կողոպտում էին, քշում տանում էին անասունները: Հոռոմների տեղական իշխանությունները անկարող հանդիսացան այդ ավազակությունների առաջն առնել: Արևելքի կուսակալն էր այդ ժամանակ Մուզոնիանոսը, մի տաղանդավոր հռետոր և գիտնական, բայց և անշափ կաշառակեր, փողով վաճառվող մի մարդ: Փողովորդի կրած տառապանքները, որ պատճառում էին պարսկական ասպատակությունները, նրան շատ չէին անհանգստացնում և նա շարունակում էր ինքն էլ կողոպտել փողովորդը<sup>1</sup>:

<sup>1</sup> AMM., XV, 13.

Բայց լսելով որ Շապուհը Արևելքում մեծ նեղություններով է պատերազմ մղում թշնամի ցեղերի դեմ, նա մտածեց օգտվել պարսիկների այդ նեղ դրությունից և հայսրության համար մի շահավետ գործ կատարել, համոզելով պարսիկներին խաղաղության դաշնագրություն կնքել կայսրի հետ: Զորքերի հրամանատարն էլ համամիտ եղավ նրան և սկսվեցին գաղտնի բանակցություններ Ատրպատականի պարսիկ կուսակալ Գենշապուհի հետ: Մուզոնիանոսը հավատացնում էր որ եթե Շապուհը հաշտություն խնդրե, կայսրը չի մերժի:

Այս առաջարկությունը Գենշապուհը հասցրեց Շապուհին, խմբագրելով այնպես, որ արյաց արքայի ինքնասիրությունը չվիրավորե: Կոստանդ կայսրը, ասում էր Ատրպատականի կուսակալը, Արևմուտքում մեծ անհաջողությունների է հանդիպել, ուստի և աղաչում է պարսից թագավորին հաշտություն կնքել: Շապուհին շատ ուշ, այն է՝ 357-ին հասավ Գենշապուհի այս տեղեկությունը: Նա դեսպանություն կազմեց Բյուզանդիա գնալու համար և գրեց կայսրին մի գոռոզ նամակ, որի մեջ շնորհ էր անում առաջարկելու իր պայմանները: Ահա այդ նամակը:

«Ես, արքայից արքա Շապուհ, աստղերի ընկեր, արեգակի և լուսնի եղբայր, հղում եմ Կոստանդ կեսարիդ, իմ եղբորս, ողջույն:

«Ուրախ եմ և միանգամայն հավանում եմ որ դու վերջապես վերադարձար ուղիղ ճանապարհը և ահանջ դրիր ճշմարտության անկաշառ ձայնին, իրոք խելահաս լինելով թե երբեմն ինչ թշվառություններ է բերում ուրիշի ստացվածքը ձեռք ձգելու համար ձգտումը: Որովհետև ճշմարտության լեզուն ոչնչով կապված չպիտի լինի և ազատ է և որովհետև բարձր դիրքի մարդկանց վայել է որ նրանց խոսքերը միանգամայն համապատասխանեն նրանց մտքերին, ուստի ես քիչ խոսքերով կարտահայտեմ իմ վճիռը, հիշեցնելով, որ ես դեպք եմ ունեցել մի քանի անգամ կրկնել այն, ինչ մտադիր եմ ասել այժմ: Որ իմ նախահայրերը տիրում էին մինչև Ստրիմոնոս<sup>2</sup> գետը և Մակեդոնիայի սահմանները, այս վկայում են ձեր տարեգրությունները: Պահանջել նախկին սահմանները վայել է ինձ, քանի որ ոչ ոք ամբարտավանություն չի համարի իմ հայտարարությունը — գերազանցում եմ հին թագավորներին փայլով և աչքի ընկնող մեծագործությունների բազմությամբ: Իմ սրտում ամենից առաջ ճշմարտության զգացմունքն է, կառչելով նրան՝ ես երբեք չեմ արել այնպիսի մի բան, որի համար հետո պետք լինեք զղջալ: Ուստի ես պարտավոր եմ հոռ դարձնել ինձ Հայաստանը և Միջագետքը, որոնք նենգությունը խլված են իմ պապից: Երբեք մեզ մոտ ընդունված չի լինի այն կանոնը, որին դուք հետևում եք ամբարտավանությամբ և որն է՝ զանազանություն չդնելով քաջության և խաբեության մեջ, հավանություն տալ պատերազմի ամեն մի հաջող ելքին: Մի խոսքով, եթե դու ուզում ես լսել իմ տերազմի ամեն մի հաջող ելքին: Մի խոսքով, եթե դու ուզում ես լսել իմ խելացի խորհուրդը, հրաժարվիր մի փոքրիկ երկրից, որ մշտապես մրցության և արյունոտ վեճի առարկա է, որպեսզի խաղաղ կառավարես մնացած թագավորությունդ. հաշվի ա՛ռ որ բժիշկներն էլ երբեմն այրում են, կտրում են և հեռացնում են մարմնի առանձին մասերը, որպեսզի կարելի լինի օգտրվել առողջ անդամներից: Միևնույն անում են և վայրի գազանները, տրվել առողջ անդամներից: Միևնույն անում են և վայրի գազանները, երբ իմանում են թե ինչի համար են իրենց որսում, հոժարակամ հրաժարվում

<sup>1</sup> AMM., XVI, 9.

<sup>2</sup> Այժմ Մարիցա գետ Թրակիայում:



են այդ բաներից, որպեսզի կարելի լինի այնուհետև ապրել առանց վախի: Համենայնդեպս քեզ հայտարարում եմ ես որ եթե իմ այս դեսպանությունը վերադառնա առանց որևէ հետևանքի, ձմեռնային հանգստի ժամանակն ունցնելուց հետո ես կշտապեմ, հնար եղած արագությունը, դուրս գալ քեզ դեմ իմ բոլոր ուժերով և հույսով եմ թե հաջողություն կունենամ, քանի որ բախտ ունեմ և իմ առաջարկած պայմաններն արդարացի են»:

Երկար ժամանակ Բյուզանդիայի արքունիքը քննում էր այս նամակը և թե ինչ պետք է նրան պատասխանել: Վերջը լավ համարվեց լինել շափավոր, ուստի խմբագրեց մի այսպիսի պատասխան.

«Կոստանդ, հավիտյանս Օգոստոս, հաղթող ցամաքի և ծովի վրա, հղում եմ ողջունել իմ եղբորը, Շապուհ թագավորին:

«Ողջունում եմ քո բարեբախտությունը ինչպես քո ապագա, եթե կամենաս, բարեկամդ, բայց քո ազահությունը, որ երբեք չէ պակասում և շարունակ ընդարձակվում է, խստությունը դատապարտում եմ: Դու պահանջում ես Միջագետքը իբրև քո սեփականություն, նույնպես և Հայաստանը և խորհուրդ ես տալիս պոկել կենդանի մարմնից նրա մի քանի անդամները, որպեսզի դրանով ապահովվի նրա բարեբախտությունը հետագա ժամանակներում: Այս խորհուրդը լավ է միանգամից մերժել, քան պաշտպանել համաձայնություն որևէ ձևով: Ուստի իմացիր ճշմարտությունը առանց որևէ ծածկույթի, իր թափանցիկ մաքրության մեջ, ճշմարտությունը, որ չէ կարելի մթացնել ոչ մի տեսակ դատարկ սպառնալիքով: Իմ կուսակալը, կարծելով թե ձեռնարկում է մի գործի, որ ընդհանուր բարեբախտության պիտի ծառայեր, առանց իմ գիտության, հաշտության խոսք է սկսել քո զորապետի հետ, ինչ-որ ցած ծագման տեր մարդկանց միջոցով: Ծառայելով ձեռնարկում, չեմ մերժում հաշտությունը, բայց նա պիտի լինի պատվավոր ու ազնիվ և ոչ մի կերպ չպիտի շոշափի ո՛չ իմ պատիվը, ո՛չ իմ մեծությունը: Այն ժամանակ, երբ նախանձի ալիքները, որոնք բազմիցս բարձրանում էին ինձ դեմ<sup>1</sup>, խաղաղացված են իմ բաշտությունների մի ամբողջ շարքով, երբ բռնավորներին ոչնչացնելուց հետո ամբողջ հոռմեական աշխարհը հպատակվել է ինձ, անհեթեթ և անմիտ մի բան կլինեի հրաժարվել այն բանից, ինչ ես երկար պահել եմ անբակտելի, երբ միայն արևելյան նահանգներն ունեի ձեռքիս: Թող ուրեմն վերջանան վախեցնելու փորձերը, որոնք ուղղվում են մեզ ըստ սովորության: Չէ՞ որ անկասկածելի է որ մենք երբեմն ոչ թե վախկոտությունից ենք ստիպված եղել ավելի պաշտպանողական քան հարձակողական պատերազմ մղել, այլ ինքնազստման զգացմունքից: Իսկ երբ մեզ դիպչում են, մենք պաշտպանում ենք մեր սեփականությունը բարի գործի ամբողջ թափով: Փորձով և պատմությունից մենք գիտենք, որ միայն շատ քիչ դեպքերում, մի քանի ճակատամարտերի մեջ միայն, տատանվել է հոռմեական գործը, բայց պատերազմների ելքը երբեք վնասաբեր չէ եղել հոռմայեցիների համար»<sup>2</sup>:

Այս անվճռականությունը կայսրի տրամադրության հարազատ պատկերն էր: Պատասխանը պարսկական դեսպանության շահնախից, այլ ուղարկվեց նշանավոր և գիտուն մարդկանցից կազմված մի հատուկ դեսպանության ձեռքով (358), որին հանձնարարվում էր ամեն կերպ աշխատանք գործադրել, որպեսզի Շապուհը պատերազմական գործողությունների շղթան: Սակայն

<sup>1</sup> Ակնարկում է իր հակառակորդներին, որոնք ուզում էին խել իր թագը:

<sup>2</sup> AMM., XVII, 5.

զուր էին այս շահնախը: Արյաց արքան հաշտություն կնքեց արևելյան ցեղերի հետ, նրանցից օգնական զորքեր ստացավ և իր զենքը դարձրեց կայսրի դեմ:

Սկսվում էր մի նոր պատերազմ, որի գլխավոր դրդիչներից մեկը Հայաստանն էր, ուրեմն դարձյալ այն երկիրը, որ, Շապուհի խոսքերով, «մշտապես մրցության և արյունոտ վեճի առարկա» էր: Բնականաբար Շապուհը պիտի փորձեր այդ երկրի թագավորին իր կողմը շահել: Այդպիսի փորձեր, ինչպես վկայում է Ամմիանոս Մարկելլինոսը, պարսից թագավորը կատարել էր մի քանի անգամ, դիմելով «նենգության, սպառնալիքների, խորամանկությունների»: Այս անգամ նրան հաջողվում է համոզել Արշակին որ սա զնա իր մոտ՝ տեսակցություն: Բանակցությունների մեջ դեր կատարողը, ինչպես երևում է, եղել էր դարձյալ Վարդան Մամիկոնյանը, որ ընդունված էր և պարսից արքունիքում իբրև մոտիկ մարդ: Սակայն Վասակ սպարապետն էլ մենակ չէ թողնում իր թագավորին այս վտանգավոր ճանապարհորդության մեջ և զնում է նրա հետ Տիգրան: Շապուհը մեծամեծ պատիվներ արավ Արշակին, բայց միաժամանակ և պահանջեց նրանից երես դարձնել հոռմեացիներից և հավատարիմ լինել Պարսկաստանին: Հայոց թագավորը, նեղն ընկած, համաձայնություն տվեց: Շապուհը կանչեց Տիգրանի քրիստոնյա եկեղեցու երեցներից մեկին և հրամայեց նրան երդվեցնել Արշակին Ավետարանի վրա: Այս հրամանն էլ մերժելու ուժ չէ ունենում Արշակը, երդումն է ընդունում: Ստեղծվում է այսպիսով վերին աստիճանի վտանգավոր մի դրություն հայ երկրի համար և այս հանգամանքը լավ գիտակցում էր Վասակ սպարապետը: Մի դեպք օգնում է նրան ազատելու իր թագավորին այդ վատ դրությունից:

Մի օր Արշակը գնում է դիտելու Շապուհի ախոռատունը: Ախոռատները, իբրև պարսիկ մեծամիտ ազնվականության ներկայացուցիչներից մեկը, ոչ միայն հարգանք չէ ցույց տալիս հայոց թագավորին, այլև անարգում է, ասելով պարսկերեն լեզվով. «Հայոց այժմիկ թագավոր, արի՛ նստիր այս խոտի խորձի վրա»: Վասակը, չկարողանալով տանել իր հայրենիքին հասցրած այս անարգանքը, հանում է սուրը և տեղն ու տեղը սպանում ախոռատներին: Համարձակությունը եթե դժգոհություն պատճառում է պարսից արքունիքին, բայց չէ արտահայտվում, և Շապուհը իրավացի է համարում հայոց սպարապետի ցասումը: Բայց և այնպես, դեպքը շատ լավ առիթ է դառնում որ Վասակը, պարսկական նենգության պատկերը պարզելով Արշակի առջև, համոզել նրան իսկույն, առանց ժամանակ կորցնելու, թողնել ամեն ինչ, հեռանալ: Մանավանդ իր եղբայր Վարդանի վրա էր զարմացել սպարապետը, տեսնելով որ նա էր համոզել Արշակին երդվել Ավետարանի վրա: Թագավորի և նրա զորապետի փախուստը Տիգրանից — փախուստ էր և այդ երդումից՝ և միաժամանակ ազատում էր հայոց երկիրը հավատարմության խոստումը հաստատուն գրավոր պարտականություն դարձնելուց:

Բայց Շապուհը, չկորցնելով իր սառնասրտությունը, շարունակում է հետամուտ լինել իր առաջադրած նպատակին և Արշակի ետևից Հայաստան է ուղարկում նույն Վարդան Մամիկոնյանին, որ սկսում է նորից համոզել թագավորին, օգտվելով, երևի, և այն հանգամանքից, որ Վասակը այդ միջոցին բացակայում էր արքունիքից: Բայց այս առաջնությունն էլ հաջողություն չէ ունենում: Սպարապետը վերադառնում է և այլևս չկարողանալով տանել իր

<sup>1</sup> AMM., XX, 11, 2.

եղբոր գործողությունները, վճռում է վերացնել նրան մեջտեղից: Արշակը իր համաձայնությունն է տալիս, դրոված Փառանձեմից, որ չէր մոռացել Վարդանի կատարած դերը Գնելի սպանության մեջ: Վարդանը իր հայրենի կալվածումն է, Տայոց աշխարհի էրախանի բերդում: Մամիկոնյանների տան տոհմային ավանդավեպերը պատմում էին մի շարք մանրամասնություններ: Վասակ սպարապետը գնաց էրախանի մի գունդ զինվորների հետ, որոնք փոխած էին իրենց շորերը, իսկ զենքերը հանդերձի տակ թաքցրած: Բերդից դուրս, ձորի գլխին, վրան էր գարկված, այդտեղ էր Վարդան իշխանը, որ պատրաստվում էր լվանալ իր գրուխը: Վրանից նկատեցին ձորն ի վեր եկող խումբը և սպարապետին: Ոչինչ կասկածոտություն, ոչ մի նախազգուշական միջոց ձեռք չառին: Վարդան իշխանը հանգիստ իր գործն էր կատարում, երբ վրա հասան եկողները. Վարդանը կոացած էր որ շուր ածեն իր գլխին, հենց այդ դրուժյան մեջ էլ սպանեցին նրան: Վարդանի կինը, չէ մոռանում հարել տոհմային վեպը, վրանում չէր: Նա հղի էր, պտուկած էր գահույթի վրա իր ապարանքում, բերդի մեջ: Երբ սպանության գուշժը բերդը մտավ, Մամիկոնյան մեծ տիկինը վազեց գահույթից, բայց հենց այդ րոպեին էլ սկսվեց երկունքը և նա ծնեց մի արու մանուկ, որին տվին հոր անունը— Վարդան:

Վասակ սպարապետը, որքան ցույց են տալիս նրա մասին խոսող այն տեղեկությունները, որոնք հասել են մինչև մեզ, մի դաժան զինվորական չէր, ոչ էլ ընդունակ անմիտ, հախուռն բռնկումների և մանավանդ ոճրագործությունների: Եվ եթե նա հասավ եղբայրասպանության պես մի ծանր հանցանքի, այդ պարզապես շնորհիվ այն հանգամանքի էր, որ Վարդան իշխանը արդեն չափազանց վտանգավոր էր դառնում իբրև պարսկական կուսակցության պարագլուխներից մեկը: Հունական կուսակցության համար այդ հավասար էր պետական դավաճանության: Շապուհը գիտեր որ այդ սպանությունը իր պատճառով տեղի ունեցավ: Իսկ Մամիկոնյան տոհմը, ինչպես կտեսնենք շուտով, դավաճանությունը պատժող հայրենասիրական սպանության ավելի նշանավոր մի օրինակ էլ տվեց:

359 թվականին Շապուհը, 100 հազարանոց մի բանակի գլուխ անցած, պատերազմական գործողություններ սկսեց հռոմեացիների դեմ: Մի դասալիբ հռոմեացի զինվոր ցույց տվեց նրան որ փոխանակ Մծբինը պաշարելու, ինչպես արվում էր սովորաբար, պետք է արշավել հյուսիս և այնտեղից անցնել Միրիա, քանի որ այդ կողմերում հռոմեական պաշտպանողական գիծն այնքան ամուր չէր: Եվ Շապուհը, ճիշտ որ, մի կողմ թողնելով Մծբինը, գնաց Ամիդ<sup>3</sup> քաղաքի վրա: Բերդապահ հռոմեական զորքը<sup>4</sup> մերժեց անձնատրության առաջարկը, որ արավ արքայից արքան: Այդ մերժման պատճառած գրգռիչ ազդեցություն վրա ավելացավ և այն, որ Շապուհի նոր դաշնակից արևելյան ցեղերից մեկի թագավորի որդին սպանվեց քաղաքից արձակված մի նետից: Ցասմամբ լցված Շապուհը վճռեց վրեժխնդիր լինել և ենթարկեց քաղաքը խիստ պաշարման, որ տևեց 73 օր և 30 հազար մարդ խլեց պարսկական բանակից: Այս գնով առնված քաղաքը սարսափելի կերպով պատժվեց:

1 Փավստոս, Գ, Ժգ-Ժը:

2 Փավստոս, Գ, Ժ:

3 Այժմ Գիսրբեքիր: Հայերը, բոլորովին առանց հիմքի, նույնացնում են նրան Տիգրանա-կերտին:

4 Հռոմեական լեգեոններից մեկն անվանվում էր Հայկական:

պարսիկները հիմնահատակ կործանեցին նրան, կոտորեցին ազգաբնակչության և բերդապահ զորքի մեծագույն մասը:

Այս աղետալի դեպքը ցնցում պատճառեց հռոմեացիներին և հայերին: Շապուհի արշավանքը հարկադրել էր Կոստանդ կայսրին վերադառնալ Արևմուտքից, ուր նրա դեմ պատերազմում էր նրա հակառակորդ Հուլիանոսը: Արևելյան վտանգը ավելի սաստիկ էր և կայսրը գնաց Անտիոք՝ Պարսկաստանի դեմ արշավանք կազմակերպելու համար (360): Համարձակ գործողություններ սկսել և մեծ ճակատամարտեր տալ նա չէր կարող, որովհետև զորքերը հարկավոր էին նրան և Հուլիանոսի դեմ պատերազմը շարունակելու համար: Ուստի գործի դրեց իր ամբողջ զիվանագիտությունը՝ Արևելքում դաշնակիցներով ուժեղանալու համար: Այս նպատակին հասնելու մտքով նա ամեն կերպ սիրաշահում էր այն իշխաններին, որոնք մոտ էին պատերազմական գործողությունների տեղերին: Առաջնակարգ տեղը, ինչպես միշտ, պատկանում էր հայոց թագավորին, ապա և վրաց թագավորին: Անցնելով Կապադովկիայի Կեսարիա քաղաքը, կայսրը իր մոտ կանչեց Արշակին, շատ սիրալիր ընդունելություն ցույց տվեց, առատ ընծաներ արավ նրան, որոնց մեջ ամենամեծն էր, անշուշտ, պալատական մի օրիորդ, Օլիմպիադա անունով, կայսրի եղբոր նշանածը, որ պիտի գնար Արշակի կին ու այդպիսով ամրապնդեր երկու կողմերի մտերմական հարաբերությունները<sup>2</sup>: Արշակը, հրապուրված այս բոլորով և մանավանդ նոր ամուսնությամբ<sup>3</sup>, մի քանի անգամ երդվեց թե ավելի շուտ իր կյանքից կհրաժարվի, քան այս բարեկամությունից:

Վերադարձնելով Արշակին իր երկիրը, Կոստանդը շարունակեց իր արշավանքը դեպի հարավ, տեսավ կործանված Ամիդը, արտասվեց նրա ավերակների վրա, ապա գնաց պաշարեց Բեզաբդեն բերդը, բայց վերցնել չկարողացավ և ստիպված եղավ վերահաս ձմեռվա պատճառով, վերադառնալ Անտիոք: Հաջորդ 361 թվականի գարնան նա նորից արշավեց դեպի պարսկական սահմանագլուխը, բայց այստեղ ոչ առանց սրտի գոհության իմացավ որ Շապուհը այս անգամ պատերազմ մղելու դիտավորություն չունի: Այս մի բարեբախտություն էր, որովհետև այդ իսկ միջոցին Հուլիանոսը Արևմուտքում իրեն կայսր էր հրատարակել: Կոստանդը գնաց նրա դեմ, բայց ճանապարհին հիվանդացավ և մեռավ Կիլիկիայի Տարսոն քաղաքում: Կայսրության տեր դարձավ Հուլիանոսը, որ վերականգնեց հեթանոսությունը և այս պատճառով էլ եկեղեցու կողմից ստացավ Ուրացող մականունը: Արևելքի շատ իշխողներ, որոնց մեջ և Արշակը, շտապեցին շնորհավորել նոր կայսրին և իրենց բարեկամության հավաստիքները հայտնել:

Պարսկա-հռոմեական սահմանագլուխի վրա պատերազմը առժամանակ հետաձգվում էր: Հուլիանոսը իր առաջին գործերից մեկն էր համարում պարսկական մի մեծ արշավանքի պատրաստություններ տեսնելը: Այդ կարևոր սպասողական ժամանակներում էր որ Հայաստանի ներքին կյանքը դարձյալ վեր-

<sup>1</sup> Paule Alland „Julien l’Apostat“, t. II, Paris, 1910, p. 46.

<sup>2</sup> Ам. Мару., XX, 11, 3. Ժամանակակից և ճշմարտապատում Ամիանոսի այս բացարձակ վկայությունը հերքում է բոլոր այն հին ու նոր կարծիքները՝ իբր թե Օլիմպիադան Արշակի առաջին կինն էր, Փառանձեմը՝ երկրորդը:

<sup>3</sup> Մեզ չպիտի զարմացնե այս կրկնամուսնությունը: Քրիստոնյա Արշակունիների պալատում էլ պահվեց ներքինապետությունը, որ ապացույց է թե հին հարեմական դրուժությունը չէր վերացել: Արշակին, ինչպես կտեսնենք, կնացու էր առաջարկում և Շապուհը:

դովվեց: Այս անգամ էլ անկարգութիւնը ծայր էր առնում արքունի պալատից և ուներ թագավորական կանանցի մեջ ծագած ինտրիգի կերպարանք: Փառան- ձեմը չկարողացավ ապրել Օլիմպիադայի հետ մի հարկի տակ: Նա նախանձում էր հույն հարսին, կասկածում էր թե նա պիտի խլի իրենից «տիկնաց տիկնոջ» դիրքը և թագավորի առաջին կնոջ պատիվը, և միջոցներ էր հնարում նրան կորցնելու համար: Սակայն սովորական ոչ մի միջոց չհաջողվեց: Օլիմպիա- դան էլ միամիտներից չէր, գուցե հենց նույն դիտավորութիւնն էլ նա ուներ Փառանձեմի վերաբերմամբ, ուստի շատ զգուշ էր պահում իրեն: Հարեմա- կան կյանքի մեջ թույնը շատ հաճախ է նախանձոտների և խանդոտների հարցը լուծում: Օլիմպիադան, անշուշտ իրազեկ այդ հանգամանքին, միայն իր հավատարիմ նաժիշտներից էր կերակուր ընդունում: Բայց այս զգուշու- թիւնը միայն գրգռում էր Փառանձեմին: Եվ վերջը կասկածոտութիւնն ու խանդը հասցրին նրան մի ոճրագործ հնարիմացութեան, որին այնպես ընդունակ են խանդոտ կանայք: Սյունեցի գեղեցկուհին կաշառեց Մրջյունիկ անունով մի քահանայի և սա թույն խառնելով հաղորդութեան մեջ, տվեց Օլիմպիադային և այսպիսով մեռցրեց նրան: Անկասկած, այս անօրինակ ոճիրը ահագին գայթակղութիւն և զայրույթ առաջացրած պիտի լինի քրիստոնյա հասարա- կութեան և մանավանդ եկեղեցականութեան մեջ:

Այս դեռ բավական չէր, Արշակավանի հարցն էլ սաստիկ սուր կերպա- րանք ստացավ: Այստեղ, ինչպես տեսանք, թագավորին հակառակվում էր ամբողջ հունական կուսակցութիւնը: Փավստոսի պատմածներից՝ պետք է հետևենք թե դժգոհութեան միակ պատճառն այն էր որ Արշակավանում ա- պաստանվող ամեն մի հանցավոր ազատվում էր պատասխանատվութիւնից: Պարտականն ազատվում էր իր պարտքը հատուցանելուց, մարդասպանին չէր կարելի դատել, մարդաթող արած կանայք ազատ էին այդտեղ, ինչպես և կնաթող տղամարդիկ: Մի խոսքով, դա գողերի, մարդասպանների, ամեն տեսակ ոճրագործների մի բույն էր, որ անդամալուծում էր իրավական հաս- կացողութիւններն ու արդարադատութիւնը հայոց երկրում: Եվ ահա հենց իրավունքը պաշտպանելու համար էր որ նախարարների մի մասը պահան- ջում էր քարուքանդ անել, բոլորովին անհետացնել Արշակավանը:

Իր սովորութեան համեմատ Փավստոսն այստեղ էլ շափազանց խտաց- րել է գույները և միակողմանի է: Որ Արշակավանը հատկապես և բացառա- պես ոճրագործների համար շինված քաղաք չէր, ցույց է տալիս այն, որ ինքն Արշակ թագավորն էլ այդտեղ պալատ էր շինել տվել իր բնակութեան համար և միայն նա չէր ուզում պահպանել քաղաքի գոյութիւնը, այլ նրա հետ և նա- խարարների մի մասը: Կառուցվում էր և եկեղեցի, բայց Ներսեսի փոխանորդ Խաղը հրաժարվեց օծել նրա սեղանը: Բոլոր հանգամանքներից երևում է որ Արշակավանի բնակիչներին, ինչպես ասացինք, որոշ արտոնութիւններ էին տրված: Խորենացու պատմածի մեջ մի հետաքրքրական գիծ ենք գտնում: Մա- ռաները, ասում է նա, փոխվելով Արշակավան, ազատ էին դառնում և նրանց տերերը սաստիկ դառնացած էին նրանց վրա: Հարկավ, խոսքն այստեղ սո- վորական, վարձու ծառաների մասին չէ, այլ ընդարձակ առմամբ, ճորտերի մասին, որոնք ազատ մարդ էին դառնում Արշակի շինած ավանում: Այս հան- գամանքը ամենից շատ պիտի վրդովեր նախարարներին, որոնց համար

1 Փավստոս, Գ, Ժբ:  
2 Խորենացի, Գ, Իէ:

ճորտերը տնտեսական մեծ ուժ էին կազմում: Ինչպես երևում է, Արշակավա- նը շինված էր այն մեծ առևտրական ճանապարհի վրա, որ այսօր էլ, սկսվե- լով Տրապիզոնից, Մասիսի հարավային ստորոտների մոտով մտնում է Պարս- կաստան, իբրև քարավանների միակ հարմար ճանապարհ Արևելքի և Արև- մուտքի մեջ: Ավանը, շնորհիվ իր վայելած արտոնութիւնների, բազմամար- դացավ, «քաղաքացավ», ինչպես ասում է Փավստոսը, դարձավ աշխի ընկնող մի առևտրական կենտրոն, ուր, ինչպես հայտնի է առհասարակ, հարստու- թեան հետ բույն են դնում և արատները, սարսափ պատճառելով բարոյախոս- ներին և հոգևորականներին: Այդպիսի վատ համբավ միջին դարերի հոգևո- րականների համար ուներ Անի շքեղ մայրաքաղաքը: Ինչ և լինի, Արշակի ձեռակերտը երկար չապրեց: Նրա վերջը սարսափելի էր: Փավստոսը Ներսե- սի հրաշագործութիւններից մեկն է ցույց տալիս նրա կործանումը: Ներսեսն անիծեց և ահա վեր կացավ սոսկալի ժանտախտը և ջարդեց ամբողջ ազգա- բնակչութիւնը: Բայց ավելի հավանական է թվում Խորենացու պատմածը: Նախարարները հունական կուսակցութեան պատկանող Ներսես Կամսարա- կանի առաջադրութեամբ, միացնում են իրենց զինվորական ուժերը և հար- ձակվում են Արշակավանի վրա: Երևի տեղի է ունենում պաշարում, որի ժա- մանակ սկսվում է ժանտախտ: Քաղաքը այսպիսով մատնվում է նախարար- ների ձեռքը, հիմնահատակ քանդվում է, իսկ ազգաբնակչության մնացած մասն էլ կոտորվում է, խնայվում են միայն մանուկները, որոնք ազատվում են և խնամվում առանձին տեղ: Նախարարների այս անգթութիւնը բացատրվում է առավելապես նրանով, որ նրանք բարկացած էին իրենց այն ծառաների վը- րա, որոնք ապրում էին Արշակավանում:

Այսպիսով դուռ էր բացվում ազգամիջյան պատերազմների համար, որոնք այնքան հատուկ էին հայոց աշխարհին, ինչպես ամեն մի ավատական պետութիւն: Արշակը, իբրև թագավոր, չէր կարող, իհարկե, պարտված կողմ մնալ: Օգնութիւն ստանալով վրացիներից, նա սկսեց պատերազմել իր նա- խարարների դեմ: Ոչ մի կողմը չէր հաղթում: Ազգամիջյան արշունահողու- թիւններին վերջ դրեց, ինչպես ասում է Խորենացին, գործերից բաշված Ներ- սես Մեծը: Արշակը իբր թե զղջաց, հաշտվեց նրա հետ և խնդրեց նրա օգնու- թիւնը: Բայց հաշտութիւն կնքելուց հետո թագավորը դրժեց իր խոսքին և վատաբար հարձակվելով Կամսարականների տան վրա, վրեժ հանեց Ներսես իշխանից, որի քաշելով նրան և նրա ամբողջ տոհմը, բացի Սպանդարատ իշխանից, որին ազատեց դարձյալ վասակ Մամիկոնյանը: Հայոց մեծ սպա- րապետին մենք առհասարակ չենք տեսնում այս ազգամիջյան եղբայրասպան պատերազմների մեջ և սա մի նոր խոշոր գիծ է՝ նրա դեմքը նկարելու հա- մար: Բացի անձնական վրեժից, Արշակին այս կոտորածն անել տվողը Կամ- սարականների կալվածներին տիրելու տենչն էր: Իր ձեռքը գցած Արշարուն- յանց գավառում նա շինեց կամ նորոգեց Արտագերս բերդը, որ հռչակավոր էր իր ամրութեամբ<sup>1</sup>:

363 թ. զարնան սկզբին Հուլիանոս կայսրը Անտիոք քաղաքից արշա- վանք սկսեց դեպի պարսից սահմանները: Նրա հրամանի տակ գտնվում էր 65 հազար հոգուց բաղկացած մի բանակ, որ նա միանգամայն բավական էր հա- մարում Շապուհին ջարդելու համար: Ուստի երբ տեղացի իշխողները առա- ջարկեցին իրենց օգնութիւնը, կայսրը գոռոզաբար մերժեց, ասելով թե հոռ-

1 Փավստոս, Գ, Ժբ:

մեական պետությունը բավականաչափ ուժեղ է՝ այս պատերազմը իր սեփական միջոցներով վարելու համար: Բացառություն արավ նա միայն հայոց թագավորի համար, որին ուղղեց պատվեր՝ պատրաստ ունենալ մեծ բանակ և սպասել իր կարգադրություններին: Այնուհետև կայսրն իր բանակը բաժանեց երկու մասի. մեկը թողեց իր հրամանատարության տակ, իսկ մյուսը, 20—30 հազար հոգի, հանձնեց Պրոկոպիոս և Սեբաստիանոս զորավարներին: Այս երկրորդ բանակը պիտի գնար Հայաստան, միանար Արշակի հետ և նախավերեր Մարաստանի Խիլիոկոմ երկիրը, ապա Կորդվաց և Մոկաց նահանգների կողմից մտնեի Պարսկաստան, շարժվեի մինչև գլխավոր բանակի հետ միանալու: Իսկ գլխավոր բանակը կայսրի հրամանատարությամբ պիտի արշավեի դեպի Տիգրոս սովորական ճանապարհով, այն է՝ Եփրատի ափով: Երբ այս բանակն անցավ Տիգրիս գետը, կայսրը այրել տվեց իր ամբողջ մեծ նավատորմը, որպեսզի բանակը նահանջի մասին չմտածե, այլ, ինչպես էլ լինի՝ հաղթությունների մասին: Պարենավորման հոգսն էլ չկար նրա համար, քանի որ հռոմեական բանակը գտնվում էր Տիգրիսի բարեբեր հովտում, ուր առատ էր խոտը և արտերը նոր էին հասնում: Բայց նավերի ոչնչացումը մի դժբախտ միտք էր, որ անելանելի դրություն ստեղծեց հռոմեացիների համար: Ծապուհը բաց դաշտերի և մեծ ճակատամարտերի պատերազմ չսկսեց Հուլիանոսի դեմ, այլ, հետևելով հին պարթևական տակտիկին, հեռու էր պահում իրեն, բավականանալով մանր հարձակումներով, որոնց գլխավոր նպատակն էր դժվարացնել թշնամու պարենավորման գործը: Այս ծրագրի հետևանքով պարսիկները կրակեցին իրենց դաշտերը: Գոյացան հսկայական հրդեհներ, որոնք ոչնչացնում էին բուսականությունը: Կրակը կանգնեցրեց Հուլիանոսի շարժումը. դրությունը օր օրի վրա դժվարանում էր. բանակը մնաց առանց հացի: Հայաստանի և հարևան երկրների լեռներում ձյունահալ էր և գետերը դուրս էին եկել իրենց ափերից, ողողել մեծ տարածություններ. շարժվելը չափազանց դժվարացել էր այդ տղմոտ դաշտերում: Գժբախտությունը լրացնում էին Տիգրիս-Եփրատյան հովտի ամառնային շարժումները — ճանճերի ու մոծակների ահռելի խմբերը, որոնք, ինչպես գրում է Ամմիանոսը, ցերեկը արևի լույսն էին կտրում, գիշերը՝ աստղերի լույսը: Տիգրոսին մոտենալու միտքը թողնելով, այժմ պետք էր բանակը փրկել, և վճռվեց վերադառնալ դեպի Կորդվաց աշխարհը: Իսկ Ծապուհն անդադար հարձակումներ էր գործում, նեղում էր բանակը, որի հույսը մնացել էին Արշակն ու Պրոկոպիոսը և նրանց օգնության հասնելուն էլ անհամբեր աչք էին դրել ամենքը: Բայց զուր էին այդ հույսերը: Արշակը կարողացավ կատարել իրեն առաջարկված ծրագրի միայն առաջին մասը, այն է՝ Խիլիոկոմի ավերումը, իսկ մյուս մասը մնաց անկատար այն պատճառով, որ պարսիկները կտրեցին նրա բանակը գլխավոր բանակից: Իրերի այս դժբախտ դրության մեջ Հուլիանոս կայսրը զարնվեց թշնամու կողմից արձակված նետով և մեռավ: Բանակը հասնելով դրության մեջ էր: Հավաքվեցին զորապետները և իրենցից մեկին, Հովիանոս անունով, կայսր ընտրեցին: Սա արդեն հեթանոս չէր, այլ բոլորովին ուղղափառ քրիստոնյա և որ գլխավորն է՝ վախկոտ, թուլամիտ և վատասիրտ:

Ծապուհի աստղն էր փայլում այսպիսի մի հակառակորդի դիմաց: Ավելի

<sup>1</sup> Հին գրականության մեջ մնացել է այդ պատվերը, գրված արհամարհական և ամբարտաճան ոճով (Տե՛ս Գաբրիելյան, հ. Բ, էջ. 446): Սակայն նորագույն հետազոտությունները այդ թուղթը համարում են անվավեր (Alland „Julien Apost.“, t. III, p. 183, h. 4).

<sup>2</sup> Ам. Mapu., XXIV, 7—8.

և վախեցած իրեն շրջապատող վախկոտների գուշակություններից, Հովիանոսը, առանց պատերազմական որևէ գործողության դիմելու, շտապեց հաշտություն խնդրել Ծապուհից՝ իր բանակը փրկելու համար: Գոռոզ Սասանյանը առանց արյունահեղության իրագործում էր իր վաղեմի ձգտումները: Նա թելադրեց արևմտյան մեծ կայսրության համար վերին աստիճանի նվաստացուցիչ պայմաններ 297-ի պայմանով հռոմեացիների ձեռքն անցած հայկական հարավային նահանգները նորից անցնում էին Պարսկաստանին, այն է՝ Աղձնիք, Մոկք, Մավտեք, Կորդուք, Ռեհիմենե 15 բերդերով, ինչպես նաև Մծբին, Սինգարա, Կաստրա և Մավրորոմ քաղաքները: Հովիանոսը հազիվ կարողացավ Ծապուհից կորզել թուլյություն որ Մծբինի և Սինգարայի բերանակիչները հեռանան հռոմեական կալվածները: Ամմիանոս Մարկելլինոսը «ամոթալի» է անվանում այս դաշնադրությունը: Կար մի կետ ևս, որ պակաս ամոթաբեր չէր մի մեծ և քրիստոնյա պետության համար: Այդ այն էր, որ Հովիանոսը, իր բանակի շահերի համար, ոտով-գլխով Ծապուհին էր հանձնում հռոմեացիների անփոփոխ բարեկամ Արշակ թագավորին, նրա հետ իհարկե, և Հայաստանը: Գաշնադրությունը պարտավորեցնում էր կայսրին չօգնել Արշակին, եթե Պարսկաստանը պատերազմ սկսե նրա դեմ: Հայաստանի վերաբերմամբ էլ, ուրեմն, Ծապուհն ստանում էր իր կամեցածը: Հայ երկրի քաղաքական բախտն ստանում էր մահացու հարված: Առաջին անգամ միջազգային քաղաքականության մեջ երևում էր բյուզանդականության նենգավոր դեմքը: Հայտնվում էր ոչ միայն դաշնակից լինելը, հավատարիմ բարեկամությունը, այլև նույնիսկ քրիստոնեությունը ոչինչ նշանակություն չուներին, երբ պետական շահերն էին վտանգվում: Սեփական օգտի համար կոպիտ կերպով ոտնահարել ամեն մի՝ նույնիսկ ամենաբարձր սկզբունք, իրական քաղաքագիտության այս դավանանքն էր դուրս հանվում այն աղետից, որին մատնվեց հռոմեների բանակը Տիգրիսի ափերին:

«Ամոթալի» դաշնադրությունն ստորագրվեց հուլիսին: Հայերը լքված, դեմ առ դեմ կանգնած էին իրենց ահավոր թշնամու առջև: Հովիանոսն, այս գնով ազատելով իր բանակը, գնաց թագավորելու Կ. Պոլսում: Բայց այդ բախտը վայելեց միայն մի քանի ամիս. 364-ի փետրվարին նա մեռավ: Ծապուհը կարծես այդ մահին էր սպասում որ միանգամայն ազատ զգա իրեն՝ Հայաստանի գործը ձեռք առնելու համար: Հանգամանքներն իրենք արդեն որոշել էին թե ինչ ուղղությամբ պիտի տանե նա այդ գործը: Մի ժամադեն նա փայփայում էր Արշակին գրավել միջոցներով իրեն հպատակեցնելու միտքը, մինչև անգամ պատրաստ էր իր աղջիկը տալ նրան կնություն: Բայց այժմ Արշակը Պարսկաստանի թշնամու գործակալն էր, նույնիսկ ավերել էր մի ամբողջ պարսկական երկիր: Այլևս հաշտություն ու զիջողականություն չէին հանդես գալիս պարսկական քաղաքականության մեջ, այլ պարզապես Արշակին և նրա հետ նաև Արշակունիների տիրապետությունը ջրնջելու նպատակը:

Սկսվեց մաքառման մի շրջան, որ առանձնապես ծանր էր թույլ կողմի՝ Հայաստանի համար: Արագահաս մի հարվածով Հայաստանը հնադանդեցնելը այնքան էլ հեշտ բան չէր նույնիսկ Ծապուհի պես մի հզոր թագավորի համար: Նախարարական կազմակերպությունները, շնորհիվ երկրի տեղագրա-

<sup>1</sup> Ам., XXV, 7, 13.

<sup>2</sup> Փալստա, Գ, ի:









Արշակին ձեռք ձգելուց հետո Շապուհը Հայաստանի կառավարությունը, Ամմիանոս Մարկելլինոսի ասելով, հանձնեց երկու դավաճան հայերի, որոնցից մեկը, ներքինի Կիլակը, մի ցեղի գլխավոր էր եղել, իսկ մյուսը, Արտավան անունով, եղել էր զորապետ<sup>1</sup>: Հայ աղբյուրների մեջ (Փավստոս և Խորենացի) սրանք Մեհրուժան Արծրունին ու Վահան Մամիկոնյանն էին<sup>2</sup>:

Շապուհը, Ամմիանոսի պատմելով, զորք ղնելով այդ երկու հայերի հետ, պատվիրեց նրանց ամեն միջոցներ գործ ղնել Արտագերսը ոչնչացնելու համար: Այդ հրամանը ճշտությամբ կատարելու համար՝ պարսից զորքը պաշարեց Արտագերս բերդը 368-ի ձմեռը: Տարվա այս ժամանակին այդպիսի մի բերդ վերցնել հարձակումով անհնարին էր, մանավանդ որ բերդապահ զորքն էլ փոքրաթիվ չէր (Փավստոսի ասելով՝ 11 հազար): Ուստի պաշարողները շատ ջանացին բանակցություն սկսել բերդացիների հետ և նրանց համոզել որ անձնատուր լինեն: Պետք է ասել որ Արտագերսը բոլորովին կտրված չէր դրսի հաղորդակցությունից: Այսպես, թագաժառանգ Պապը մոր խորհրդով դուրս եկավ բերդից և փախավ հունաց կողմը, կայսրի մոտ: Այստեղից նա և մյուս նախարարները շարունակ մարդ էին ուղարկում բերդացիների մոտ՝ հուսադրելու համար որ օգնություն կլինի, պետք է, ուրեմն, դիմանալ: Եղևի հենց այդ գաղտնի դեսպանների գաղտնի ճանապարհով էր որ, Փավստոսի վկայությամբ, բերդը մտավ Հայր մարդպետը: Հայ աղբյուրը հավատացնում է թե ներքինապետի այդ դժվարին և վտանգավոր այցելությունը միայն մի նպատակ ուներ— հանդիմանել և հայհոյել Փառանձեմին, անվանելով նրան նույնիսկ բոզ: Մարդպետը դրա հետ չէ մոռանում անարգել և Արշակունի թագավորներին, որոնք երկիրը հասցրել էին, շնորհիվ իրենց վառ վարքի, կործանման ծայրին: Բայց պարզ է որ միմիայն այս նպատակով չէր կարելի արդարացնել Հայր մարդպետի այցելությունը, և Փավստոսը այստեղ էլ անհաշտ թշնամի է մնում Փառանձեմ թագուհուն, որի մասին նա ոչ մի լավ խոսք չունի, դրդված, անշուշտ, զանազան հաշիվներից: Մենք արդեն տեսանք մի Հայր մարդպետ, որ պարսկական կուսակցության պարագլուխն էր Այսպես էր, անկասկած, և այն Հայր մարդպետը, որ Արտագերս մտել էր որոշ լուրջ հանձնարարությամբ, այն է՝ Փառանձեմին համոզելու համար: Ամմիանոսը պատմում է թե բերդը մտնողը ներքինի Կիլակն էր, այսինքն՝ Հայաստանի վարչապետներից և պարսկական զորքի առաջնորդներից մեկը: Սակայն չէ կարելի հավատալ թե այդ կարևոր պաշտոնյան, որ պարտավոր էր իր անձի ապահովությունը հոգալ, ուժեղ և դիմադրող բերդը մտած լինելու առանց նախապես համաձայնություն կայացնելու պաշարվածների հետ: Եվ Ամմիանոսը չէ էլ ասում այդպիսի բան, ընդհակառակն՝ հիշատակում է որ նա նախօրոք ապահովություն էր ստացել որ անձեռնմխելի կմնա: Արդ՝ հավանական է թվում որ այդ նախնական բանակցությունները վարած լինի Հայր

<sup>1</sup> AMM., XXVII, 12, 5.

<sup>2</sup> Ամմիանոսի և Հայ աղբյուրների հիշատակած հայերի մեջ նմանության գծեր կան: Մեհրուժանն ու Վահանն էլ, ինչպես դիտենք, փախստականներ էին հայոց աշխարհից, որ նրանք ունեին հենց նույն պաշտոնները, որ տալիս է Ամմիանոսն իր հիշած Կիլակին ու Արտավանին: Բայց միևնույն ժամանակ այնքան տարբերություններ էլ կան Կիլակ-Արտավանի և Մեհրուժան-Վահանի մեջ, որ նրանց նույնացնելը հնարավոր կլիներ, եթե մենք կարողանայինք շնչել ու դուրս ձգել ազգային աղբյուրների մի շարք որոշ ու դրական ցուցմունքները Մեհրուժան-Վահանի մասին: Եվ որովհետև այսպիսի մի գործ կատարելու համար մենք բավականաչափ հիմք չունենք, ուստի կբավականանանք միայն երկու աղբյուրների նմանությունները ցույց տալով:

<sup>3</sup> Փավստոս, Գ, 66:

մարդպետը, որի հարթած ճանապարհով էլ ներս մտան Կիլակն ու Արտավանը<sup>1</sup>:

Երբ երկու բարձր պաշտոնյաները, տեսնելով Փառանձեմի հետ, բացառելով են թե ո՛րքան սարսափելի կլինի Շապուհի կատաղությունը բերդացիների վրա, եթե նրանք շնչում են իրենց վիճակը, հոժար կամքով անձնատուր լինելով պարսից զորքերին, Փառանձեմը այդ պատգամին պատասխանում է արտասուքներով: Նա ողբում է իր ամուսնու դժբախտությունը և իր անօգնական դրությունը: Եվ երկու դավաճան հայերն այնքան զգացվում են գեղեցիկ կնոջ արտասուքներից, որ նորից դավաճան են դառնում, այս անգամ արդեն Շապուհի վերաբերմամբ, մանավանդ որ լսեցին կայսրին դիմումներ անող նախարարների ուղարկած հուսադրությունները և կարծում էին թե հոռեացիներից մեծ պարգևներ կստանան, եթե պաշտպանեն Արտագերսը, փոխանակ նրան վերցնելու: Գաղտնի խորհրդակցությունների մեջ մըշակվում է դավադրական մի ծրագիր և երկու վարչապետները, վերադառնալով պարսկական բանակը, հայտարարում են թե բերդի հայերը երկու օր ժամանակ են խնդրում անձնատուրության պայմանների մասին մտածելու համար: Պարսիկները պակասեցնում են իրենց հսկողությունը, մատնվում են անհոգություն: Այդ էլ հարկավոր էր բերդապահներին: Գիշերը, օգտվելով այն հանգամանքից, որ պաշարողները առանց զգուշությունների քնած են, մի ուժեղ զորաբաժին դուրս է գալիս Արտագերսի դռներից, հանկարծակի հարձակվում է և մեծ կոտորած անում: Պարսիկները փախչում են, իսկ Կիլակն ու Արտավանը մնում են թագուհու մոտ և դառնում են այնուհետև հայոց թագավորական տան հավատարիմ խորհրդականներ:

Այս հաջողությունը ավելի ևս ոգի է տալիս Բյուզանդիայում ապաստանած Հայ նախարարներին, որոնք շարունակ աշխատում էին որ Վաղես կայսրը թագավորեցնե Պապին Հայաստանում, ղնելով նրան հոռեական զորքի հովանավորության տակ: Բայց կայսրը, նկատի առնելով Հովհաննոսի կնքած դաշնադրությունը, անհարմար էր համարում միանգամից և բացարձակ գործադրել մի հակապարսկական քաղաքականություն: Փախստական արքայորդի Պապին նա պատվով ընդունեց, բայց բնակության տեղ հատկացրեց ոչ թե Կ. Պոլսում, այլ Պոնտոսի Նեոկեսարիա քաղաքում: Արտագերսի ազատունը փոփոխություն է մտցնում կայսրի տրամադրության մեջ: Կիլակն ու Արտավանն էլ պատգամավորություն են ուղարկում նրա մոտ և նույնպես խրնդրում թագավորեցնել Պապին: Վաղեսը, վերջապես, թողեց իր տատամստ վերաբերմունքը, բայց և չկարողացավ լիովին կատարել հայերի խնդիրքը: Պապը հանձնվեց Տերենտիոս զորավարին, որ տարավ նրան Հայաստան և հաստատեց կառավարության գլուխ, բայց առժամանակ ոչ թե թագավորի տիտղոսով (369):

Շապուհը, տեղեկություն ստանալով այս բոլոր անցքերի մասին, ընկավ, ինչպես ասում է Ամմիանոսը, «գազանային կատաղության մեջ»<sup>2</sup>: Զայրացնում էր նրան մանավանդ այն դավաճանությունը, որին զոհ էր գնացել

<sup>1</sup> Մեզ թվում է թե Հայր ներքինապետի մասնակցությունը այս բանակցությունների մեջ փոթություն է առաջացրել, կարծել տալով Արտագերսի պատմությունը Ամմիանոսի ակնհայտ հասցնողին թե ներքինին առանձին մարդ չէ եղել, այլ հենց ինքը Կիլակը: Եփոթությունը հեշտ կարող էր առաջանալ մանավանդ այն պատճառով, որ Հայ ներքինապետը իր հատուկ անունը չէր կրում, այլ իր պաշտոնի անունը—Հայր մարդպետ: Կիլակը, ուրեմն ներքինի չէր:

<sup>2</sup> AMM. Marq., XXVII, 12, 11.

պարսից բանակը Արտագերսի մոտ: Եվ հավաքելով մեծ զորք, նա անձամբ տարավ նրան Հայաստան: Պապը և նրա կողմնակիցները, որոնց մեջ և Կիլիկիան ու Արտավանը, փախան Տայոց աշխարհը, Լազիքայի (այժմյան Լազիստանի) սահմանակից անմատչելի լեռների անտառները, ուր նրանք թաքնված մնացին ամբողջ հինգ ամիս: Այս ժամանակամիջոցն էլ բավական էր որ Շապուհը թափե իր ամբողջ կատաղությունը հայոց երկրի վրա:

Նա ուղղակի Արտագերսի վրա գնաց, պաշարեց ու վերցրեց նրան: Փաղքատոր անառիկ բերդի անկումը վերագրում է մի տարափոխիկ հիվանդութեան, երևի ժանտախտի, որ հանկարծակի բռնկվելով, սկսեց հնձել բերդի պաշտպաններին և մի քանի օրվա ընթացքում համարյա բոլորովին անմարդաբնակ դարձրեց Արտագերսը: Շապուհի ձեռքն ընկավ Փառանձեմ թագուհին էլ, Արշակունյաց գանձերն էլ: Այսքանը, սակայն, բավական չէր Արևելքի մեծ բռնակալի «գազանային կատաղությունը» հագեցնելու համար, և նա, առաջնորդվելով Մեհրուժան Արծրունուց և Վահան Մամիկոնյանից, ձեռք գարկավ հայոց երկրի կատարյալ ամայացման: Առաջ ու առաջ նա հարվածեց Արարատյան նահանգի գլխավոր և բազմաշեն քաղաքները: Դրա հետ միասին նա, ինչպես հատուկ է մեծ բռնավորներին, մղվելով իր բնիկ երկիրը առևտրով և արդյունաբերությամբ հարստացնելու հոգսերից, վճռեց Հայաստանի ազգաբնակչության մեծագույն մասը, որ ընդունակ կլինեք այդպիսի աշխատանքի, տեղափոխել Պարսկաստան: Գլխավորապես հրեաների վրա էր աչք տնկում Շապուհը, ուստի իր հարվածները դարձրեց մասնավորապես այն քաղաքների դեմ, ուր հրեական խոշոր գաղթականություններ էին ապրում:

Քանզեյ ու ավերեց Արտաշատ ու Վաղարշապատ մայրաքաղաքները, Երվանդաշատ մեծ քաղաքը Արշարունյաց գավառում<sup>1</sup>, Զարեհավանը՝ Բագրևանդ գավառում, Զարիշատը՝ Տուրուբերան նահանգի Ադիոսի գավառում, որ պատկանում էր Արշակունիների տոհմին և, վերջապես, Վան քաղաքը: Այս բոլոր տեղերից հազարավոր ընտանիքներ, հրեա և հայ, քշվեցին նախճավան քաղաքը, որ նույնպես կործանվեց և որի ազգաբնակչությունը նույնպես խառնվեց այդ կուտակված բազմություն: Այստեղից էլ, Արաքսն անցնելով, ահագին գերեզմաններ, որի օրինակը մեկ էլ XVII դարում պիտի կրկնվեք Շահ Աբբասի ձեռքով, քշվեց Պարսկաստանի հարավային խորքերը: Ինքը Շապուհը մի անգամ էլ ասպատակություններ փռեց՝ Արարատյան նահանգի մնացորդները ոչնչացնելու համար: Նրա ճանապարհին ծխացող ավերակներ էին փռվում և գազանությունը լիովին հագեցնում էր արյան իր ծարավը: Նախարարները ցիրուցան փախան գանազան կողմեր: Պարսիկ ասպատակները հավաքեցին նրանց կանանց ու երեխաներին և տարան Շապուհի մոտ: Զարհուրելի տեսարանների բեմ դարձավ մանավանդ Բագրևանդ գավառը: Այստեղ Զարեհավան քաղաքը, որ արդեն ավերված էր, ներկայացնում էր մի կենտրոնավայր, ուր հավաքվեցին բոլոր տեղերում վերցրած գերիներին: Շապուհը դատաստանի նստեց իր ամբողջ դաժանությունները: Բոլոր շափահաս տղամարդկանց տրորել տվեց իր բանակի փղերի ոտների տակ: Կանանց և երեխաներին սայլերի ցցերը հանեց: «Հազարք հազարաց, ասում է Փավստոսը, — և բյուրք բյուրոց սպանին, զի ոչ գոյը թիւ կամ համար սպանելոցն»<sup>2</sup>: Այս գազանությունների հանդեսը պարսիկ բռնակալը

<sup>1</sup> Արաքսի և Ախուրյանի խառնման տեղում (Խառեկացի, Բ, 18):  
<sup>2</sup> Փավստոս, Գ, Ժբ:

լրացնում էր տմարդութեան մի տեսարանով, որ սովորական է մարդկային արյունոտ կրթերի բռնկման ժամանակ, այն է — կանանց հրապարակային խայտառակումը: Նախարարների կանայք մերկացվում են և շարվում հրապարակում: Շապուհը, ձի հեծած, անցնում էր նրանց շարքերի միջով, և ում հավանում էր, ուղարկել էր տալիս քիչ հեռու գտնվող իր վրանը և գնում էր այնտեղ, բռնաբարում նրանց: Այս հանդեսների մի մասն էլ նա թողնում է շարունակելու Պարսկաստանում, ուր և վերադառնում է, տանելով իր հետ և Փառանձեմին:

Հայոց աշխարհին և մանավանդ հայ Արշակունիներին մեծագույն անարգանքը հասցնելու համար՝ Շապուհը մի մեծ զորահանդես է սարքում, հայոց թագուհուն հրապարակ է քաշում, գանազան կերպով խայտառակում և ապա տալիս է նրան զինվորների ձեռքը: Եվ այդ լիկանքներից էլ վախճանվում է խեղճ կինը:

Բայց այսքան ծանր զոհերով հանգստություն չէ ստանում հայոց աշխարհը: Այստեղ մնացել էին Մեհրուժանն ու Վահանը, որոնց իշխանություն և գործելու հրահանգներ էր տվել Շապուհը, մասնավորապես բերդեր շինել և պարսիկ զորքեր դնել նրանց մեջ, ընկճել նախարարներին: Մեհրուժանը պատերազմ հրատարակեց հունական կուսակցության դեմ: Եպիսկոպոսներին և քահանայներին աքսորում էր Պարսկաստան՝ հարկեր առնելու պատրվակով, հավաքում էր գրքերը և այլոց, փակում էր հունական դպրոցները և հրամայում էր որ միայն պարսկերեն լեզուն սովորեն: Ամեն ջանք գործ էր դրնում զրադաշտականությունը Հայաստանում տարածելու համար: Շինում էր ատրուշաններ, ձեռքակալելով նախարարների կանանց և երեխաներին՝ ստիպում էր նրանց սովորել և յուրացնել պարսկական կրոնը, հակառակ դեպքում՝ շարժարում էր նրանց, բանտարկելով բերդերի մեջ, մինչև իսկ սպանել էր տալիս: Վահան Մամիկոնյանը ետ չէր մնում արժանավոր քեռորդուց, և Փավստոսը պատմում է նրա գործերից մեկը, գուցե ամենազգվելին: Ռըշտունյաց Գարեգիմ իշխանի ամուսին Համազասպուհին Մամիկոնյան տոհմից էր և Վահանի քույրացուն էր համարվում: Գարեգին իշխանը փախել էր Շապուհի երեսից, իսկ Համազասպուհին գտնվում էր Վանի միջնաբերդում: Նրան ահա բռնություն պարսկացնել էին ուզում Մամիկոնյան իշխանն ու իր քեռորդին, որոնք հրամայում են Վանի բերդակալին որ եթե տիկինը հանձն լանն հավատափոխություն, կենթարկե նրան ամեն տեսակ նեղության, մինչև իսկ կախեք բերդի աշտարակից: Ռշտունյաց իշխանուհին այրաբար մերժում է կրոնափոխության առաջարկը և հանձն է առնում տանջանքները: Նրան մերկացնում են և գլխիվայր կախում աշտարակի բարձր տեղից: Մեռնում է հերոսուհին, բայց նրա մարմինը մնում է կախված: Չլունափայլ սպիտակություն ուներ այդ մարմինը, ասում է Փավստոսը, հեռվից նա մի սքանչելի տեսիլ էր ներկայացնում և շատ մարդիկ հավաքվում էին օրըստօրե ու դիտում էին այդ պատկերը, մինչ որ կախվածի մսերն սկսեցին փտել ու թափվել: Այդ րոպեից աշտարակի տակ երևան է գալիս Համազասպուհու դալակը, հագած լայն շորեր և գոտի կապած, որ թույլ էր տալիս նրան մեծ ծոց շինել: Երբ սկսեցին թափվել և ոսկորները, դայակը մեկիկ-մեկիկ հավաքեց բոլորը, պահեց իր ծոցի մեջ ու այդպես տարավ Ռշտունյաց երկիրը:

Թեև ամբողջ աշխարհն էր պարսկական արշավանքներից տանջվում, թեև

<sup>1</sup> Խառեկացի, Գ, 14:

բարձրի դաժանությունը, անգթությունն ամեն տեղ էր հանդեսներ կատարում, բայց գտնվում էին և այնպիսի սրտեր, որոնք վրդովվում էին բարոյական սանձարձակությունից: Եվ դարձյալ Մամիկոնյան տոհմն էր, որ արտահայտում էր այդ վրդովմունքը ամենախիստ ձևով: Վահանի որդի Սամվելը, չկարողանալով տանել այն ամենը, ինչ կատարվում էր իր շուրջը, սպանում է իր հորը և մորը, որ Շապուհի Որմիզդուխտ քույրն էր ու փախչում իստայաց աշխարհը: Եղբայրասպանության վրա, որ մենք տեսանք վերևում, ավելանում էր հայրասպանությունը, որ գալիս էր ազատելու հայ ժողովուրդը մի անհամեմատ ավելի մեծ շարիքից, քան էր Վարդան Մամիկոնյանը<sup>1</sup>:

Այսքան ողբալի էին այն պայմանները, որոնց մեջ Պապը պիտի սկսեր իր թագավորությունը: Դեռ անշափահաս մի պատանի, նա երևաց հայրենի ավերակների մեջ և որոնում էր այնպիսի ուժեր, որոնք կարող էին նորից փոքր ինչ ամրացնել Արշակունիների խարխուլ գահը: Իր հոր նման նա էլ առաջին իսկ քայլերից հենվեց երկու ամուր պատվանդանների վրա — սպարապետության և կաթողիկոսության: Սպարապետն արդեն Վասակի որդի Մուշեղն էր, որ պարսիկների դեմ մղված պատերազմների մեջ արդեն ցույց էր տվել բավականաչափ հերոսություններ: Գալով կաթողիկոսության, Պապը դիմեց ամենից հեղինակավոր և ժողովրդական մարդուն՝ Ներսեսին: Հաշտություն կայացավ Լուսավորչի տոհմի և Արշակունիների մեջ: Ներսեսին չէր կարող չզրավել պատանի թագավորի անկեղծ հարգանքը դեպի իր անձը և նա նորից կաթողիկոսության գլուխն անցավ, նորից սկսեց երևալ արքունիքում<sup>2</sup>: Մնում էր այնուհետև կազմակերպել երկրի ներքին ուժերը, ավելացնել նրա կենսունակությունը:

Սակայն շատ բան չէր կարելի անել այս ուղղությամբ, քանի որ Շապուհը հսկում էր ամենայն ուշադրությամբ: Պապի վերահաստատվելը, ճիշտ է, հնարավոր էր դարձել այն հանգամանքից հետո, որ Մուշեղ սպարապետը հաղթեց ու հալածեց Հայաստանի բերդերը բռնած պարսկական զորքը, բայց այս հաջողությունը միայն սաստկացնում էր պարսկական վտանգը: Շապուհը նոր արշավանք պիտի սկսեր, իսկ Մուշեղ սպարապետի հրամանատարության տակ հավաքված ամբողջ հայ զինվորության թիվը 10 հազարից ավել չէր: Այսքան թուլացած էր հայոց երկիրը:

Եթե մնում էր այդ տագնապալից ժամանակներում Հայաստանի փրկության փոքր ի շատե լուրջ մի երաշխիք, այդ դարձյալ հռոմեական մրցակցությունն էր: Վաղես կայսրը, տեղականալով Հայաստանի ավերմունքների մասին, Արինթեսոս կոմսի հրամանատարությամբ մի բանակ ուղարկեց հայերին օգնելու համար, եթե պարսիկները կփորձեն նորից հարձակվել նրանց վրա: Շապուհը, իրանի հին թշնամու այդ արգելափակ շարժումը նկատի առնելով, չկարողացավ այս անգամ էլ հայ երկիրն իր կատարյալ սեփականությունը համարել և կատարել ուժից և անողոք քաղաքականությունից արագորեն անցավ խորամանկ դիվանագիտության: Այսպիսի դյուրաթեքության մի անգամայն հարմարված էր մեծ բռնակալի բնավորությունը: Ամմիանոսը մի անգամ էլ շեշտում է, հատկապես այս առիթով, Շապուհի «անհավատալի նենգամտությունը» և հավատացնում է, թե նա, երբ պետք էր, որ որևէ նպատակի հասնել, գիտեր ոչ միայն գոռոզություն ցույց տալ, այլև սողալ<sup>3</sup>:

<sup>1</sup> Փավստոս, Դ, ԺԶ:

<sup>2</sup> Փավստոս, Ե, ա:

<sup>3</sup> Ам. Мару., XXVII, 12, 14.

լռոմեացիների ամեն մի ձեռնարկությունը չեզոքացնելու համար նա բանակցություններ սկսեց Պապի հետ, համոզում էր նրան թեքվել իր կողմը, հանդիմանում էր որ նա չի հասկանում իր իրական շահերը և դարձել է Կիլիկի և Արտավանի ստորադրյալը: Պապը, որին ճակատագիրը բերել էր թագավորելու ավերակ մի երկրում, որքան էլ դեռ պատանի, կարողացավ հասկանալ որ իր պետության շահերին հակառակող մի բան կլիներ Շապուհի տրամադրությունն արհամարհելը և որ պետք է, ընդհակառակը, օգտագործել ամեն մի ձեռնտու հանգամանքը: Նա հեռու չէր մերձեցման մտքից և ճանապարհ հարթելու համար, Շապուհին շատ հաճելի մի բան արավ, սպանել տալով Կիլիկիան և Արտավանին և նրանց գլուխներն ուղարկելով արքայից արքային:

Այս սպանությունը նորից պիտի մտցներ Հայաստանը պարսից բացառիկ ազդեցության տակ, եթե չլիներ Արինթեսոսի շարժումը դեպի նրա սահմանները: Շապուհը լավ համարեց կանգ առնել և մի դեսպանություն ուղարկեց Վաղեսի մոտ, խնդրելով որ նա, հավատարիմ մնալով Հովիանոսի ստորադրած պարտավորության, չպաշտպանե հայերին: Կայսրը, սակայն, մերժեց այդ առաջարկը և դեռ նույնիսկ ցույց տվեց Սասանյան թագավորին թե զիջողություն չպիտի անե նրան և՛ Հայաստանի հարևան երկրում՝ Վրաստանի մեջ: Այս պետությունը հռոմեական ազդեցության տակ էր գտնվում և նրա թագավորն էլ նշանակվում էր կայսրից: Բայց Շապուհը իր իշխանության տակ էր առել Վրաստանը և այդտեղից թշել էր հռոմեացիների դրած թագավորին: Այժմ, Արինթեսոսի շարժման հետ միասին, Տերենտիոս զորավարը հռոմեական լեգեոններով մտավ Վրաստան ու այդտեղ մի նոր կարգ հաստատեց — բաժանեց երկիրը երկու մասի, մեկի մեջ նորից թագավորեցրեց Նապուհի թշած թագավորին, իսկ մյուսի մեջ թողեց թագավորել այն անձին, որին Շապուհն էր նշանակել:

Վաղես կայսրի այս կարգադրությունները, իբրև ինքնակամ, առանց պարսից կառավարության համաձայնության կատարված, մեծ զայրույթ պատճառեցին իրանի ծերացած միապետին և նա, դաշնադրություններ կապելով հարևան ազգերի հետ, մեծ զորք հավաքեց և 371-ի գարնան սկսեց արշավանք հռոմեացիների և հայերի դեմ: Կայսրը իր տեղ հրամանատար ուղարկեց Տրայանոս կոմսին: Ծակատամարտը հարդարվեց Արածանի վերին հովտում, Նպատ սարի ստորոտում, Ձիրավ դաշտի մեջ, որ համապատասխանում է այժմյան Ալաշկերտի հովտին: Հռոմեական զորապետը թույլ շտրվեց որ Պապը վտանգի ենթարկե իր կյանքը, մասնակցելով պատերազմին, ինչպես ինքն էր ուզում: Պապը բարձրացավ Նպատի գլուխը ներսես կաթողիկոսի հետ, այդտեղից դիտում էր պատերազմը, իսկ ներսեսը բազկատարած աղթում էր որ երկինքը հաղթություն շնորհե հայերին ու նրանց դաշնակիցներին: Եվ Տրայանոսը, իսկ որ, շարաշար հաղթեց Շապուհին: Բայց պատերազմական գործողությունները հենց այդտեղ էլ կանգ առան: Կնքվեց զինադադար և կայսրը Անտիոք գնաց, իսկ Շապուհը վերադարձավ իր մայրաքաղաքը<sup>1</sup>: Ձիրավի պատերազմում քաջագործություններ ցույց տվեց և Մուշեղ սպարապետը:

Այնուհետև Հայաստանին վիճակվում է մի բախտ, որ շատ հաճախ չէր կրկնվում նրա պատմության մեջ — արտաքին երկու հզոր մրցակից պետու-

<sup>1</sup> Ам. Мару., XXIX, 1, 4—4.









րեշավոր արատներ, բարոյական ապականութեան ամենալուրի ձևերը, իսկ ներսեսը դուրս բերվեց իբրև այդ հրեշավոր արատները հանդիմանող: Այս անողորմ կշտամբանքներն էին որ թունավորման պատճառ դարձան, ասում է միամիտ պատմագիրը և քերում է մի քանի հանգամանքներ՝ Պապի եղևնագործությունը հաստատելու համար: Բայց ներկայումս շարժե խոսել անգամ այդ ապացույցների մասին, այնքան հիմնավորապես հերքված են նրանք մեր քննական պատմագիտության<sup>1</sup>, նույնիսկ և եկեղեցական պատմության մեջ<sup>2</sup>:

Առասպելը ծնվեց, զարգացավ և սաստիկ տարածվեց այն հանգամանքների մեջ, որոնք հետևեցին ներսեսի մահվան: Ամենից առաջ պետք է մտնանշել հասարակական տրամադրության փոփոխությունը: Փավստոսը վերջ տացած պատմում է որ մեծ հայրապետից հետո հաղթանակեց հեթանոսությունը և շատ տեղերում վերանորոգվեց կուռքերի և պատկերների երկրպագությունը, մեռելներին հեթանոսաբար ողբալու սովորությունը դարձյալ կենդանացավ, բազմակնությունը տարածվեց և այլն: Այս խոշոր երևույթը ցույց էր տալիս, որ զուր էին անցել ներսեսի մեծ և բազմածախս ջանքերը, որ նրան, այնուամենայնիվ, չէր հաջողվել ավելի խոր արմատավորել քրիստոնեությունը ժողովրդական գիտակցության մեջ: Ո՛չ օտար լեզուներով ավանդող ուսումը, ո՛չ սովորաթիվ վանականությունը, կուսանոցները, ո՛չ մանավանդ գթասիրական ձեռնարկությունների ցանցը, ձրի հացը, բժշկական խրանամատարությունը չէին կարողացել դաստիարակել և կերպարանափոխել ժողովրդի հոգին քրիստոնեական աշխարհայացքների համաձայն, ձուլել նրա մեջ նոր սկզբունքներ, նոր գաղափարներ: Հինն էր դարձյալ ապրում, փոխելով միայն արտաքին կեղևը: Եվ այս բոլորից պարզ հետևում էր որ նույնիսկ եկեղեցական տեսակետից էլ ավելորդ էին դառնում այնքան մեծ ծախսերով պահվող հիմնարկությունները:

Պապը, ինչպես տեսանք, դեռ ներսեսի կենդանության ժամանակ էր բմբռնել այդ ամբողջ սիստեմի վնասակարությունը պետության համար: Ուստի ներսեսից հետո նա ձեռք առավ մի շարք բարեկարգչական միջոցներ, որոնց վախճանական նպատակն էր թուլացնել շափազանց զարգացած եկեղեցականությունը, որ ուժեղ էր և ուժեղանում էր ի վնաս պետական սկզբունքի: Ընդ նա կրճատեց վանականների թիվը, փակեց միաբանությունները և մանավանդ կուսանոցները, որոնց մեջ հավաքված կանանց ուղղակի հրամայեց ամուսնացնել, իսկ տղամարդկանց մտցնել պետական ծառայության մեջ: Նա «ավերեց» և ներսեսի հիմնարկությունները, հատկապես աղքատանոցները, ուր, երևի շափազանց զարգանում էր ձրիակերությունը, ծուլությունը: Պակասեցնում է և եկեղեցական կավածները: Տրդատը, ինչպես տեսանք, յոթը-յոթը կտոր հող հատկացրեց եկեղեցիներին և այդ հողերի արդյունքով ապրում էին ոչ միայն եկեղեցու պաշտոնյաները, այլև նրանց ազգականները: Պապը խրվեց շուրթաբանչուր եկեղեցուց հինգ հող և հարբուհիս գրավեց, բավական համարելով երկու հողը: Եվ որպեսզի դրանք բավականություն անեն եկեղեցու պետքերին, պակասեցրեց եկեղեցական պաշտոնյաների թիվը: Վերացրեց պտղի և ասասնորդի եկեղեցական տուրքերը:

Ահա ինչ էին Պապի արարքները: Սրանք անպայման վնասակար էին

<sup>1</sup> Գաբազյան, «Քննակ. Պատմ.», հ. 4, էր. 144: Ե. Մուրադյան, «Քննական պատմություն Արշակ երկրորդին և անոր Պապ որդվուն», Ալեքսանդրիա, 1900, էր. 143—145:

<sup>2</sup> Օրմանյան, «Ազգապատմ.», էջ 218:

եկեղեցականության շահերի համար, և կրոնավորները ճիշտ որ կարող էին համարել այդ գործերը դևերի և դժոխքի թելադրանք: Բայց հանրամարդկային քաղաքակրթության պատմությունը միշտ նկատել է աշխարհի գործողությունները իբրև առաջադիմական քայլեր, իբրև կուլտուրական աշխատանք: Եվ ուրիշ կերպարանք նրանք չէին կարող ունենալ Հայաստանի մեջ, ուր այնքան թույլ էր, այնքան հարվածվում էր պետական սկզբունքը: Իսկապես, հայկական ծայրագավառները ետ խլող երիտասարդ թագավորին վայել մի մեծագործություն էր այս ներքին բարեկարգությունը, որ, սակայն, սաղմնային դրություն մեջ մնաց շնորհիվ այն հանգամանքի, որ զրկված եկեղեցականությունը դավով պատասխանեց թագավորի գործերին:

Այս բարեկարգությունների միջոցին էր, երևի որ շահագործվեց ներսեսի թունավորման առասպելը ամենալայն շափերով: Հունական կուսակցության համար սաստիկ հարված էր այն, որ ներսեսից հետո կաթողիկոս հրավիրվեց Հուսիկը՝ Աղբիսնոսի տոհմից և մեք դարձյալ լսում ենք Փավստոսից գանգատ թե հլու և կամակատար էր այս կաթողիկոսը: Պապը, օգտվելով այդ հանգամանքից, մի շատ նշանավոր գործ էլ կատարեց: Հուսիկին նա Կեսարիա շուղարկեց՝ հունական մետրոպոլիտից ձեռնադրություն ստանալու համար: Վերանում էր հին կարգը և հայ եկեղեցին ստանում էր կատարյալ անկախություն, բոլորովին ազգայնանում էր: Այս մի խոշոր ապացույց է որ Պապը քրիստոնեության թշնամի չէր, ոչ էլ ուզում էր ոչնչացնել եկեղեցու նշանակությունն ու հեղինակությունը երկրի մեջ:

Հունասիրությունն այսպիսով կորցնում էր իր ազդեցությունը, ուստի և ավելի մեծ թափով կպավ իր սարքած դավին, որ տանում էր դեպի արքայապանություն: Այնքան էր ուժեղ այդ վարագուրված շարժումը, որ նույնիսկ Մուշեղ սպարապետն էլ, շնայած իր թագավորապաշտության, ենթարկվեց նրան մինչև գործակից դառնալն իսկ: Ներսեսի ջերմեռանդ երկրպագուն էր նաև հունական կուսակցության ամենաազդեցիկ ներկայացուցիչը. այսպես, նա էր, որ համոզում էր Պապին չխզել կախման կապը Կեսարիայի հույն եկեղեցու հետ: Եվ բնականաբար նա էլ պիտի հավատար ներսեսի թունավորման առասպելին, քանի որ այդ առասպելը պիտի գար ծածկելու մի ոճիր, որի մեջ անխառն չէր և քաջ սպարապետը:

Իավադրությունը շատ նուրբ կազմակերպություն ուներ: Հայաստանում գտնվող հոռմեական զորքերի հրամանատարը Տերենտիոսն էր, որին Ամմիանոսը բնորոշում է այսպես. «Արտաքուստ դա մի համեստ և միշտ լուրջ մարդ էր, բայց իր ամբողջ կյանքի ընթացքում ամեն տեղ զրգոում էր երկպառակություններ»: Հայկական դավադրությունը օգտագործեց հոռոմ զորավարի այս հատկությունը և նրան իր գլխավոր գործիքը դարձրեց: Տերենտիոսը կայսրին գրած իր բոլոր թղթերի մեջ հիշեցնում էր Կիլիկի և Արտավանի սպանությունը, այսինքն Պապի տրամադրությունը մոտենալու Շապուհին և ավելացնում էր թե երիտասարդ թագավորը առհասարակ հակված է դեպի ամբարտավան արարքներ, շափազանց շատ դաժանություն է ցույց տալիս իր հպատակների վերաբերմամբ: Մեզ համար արդեն պարզ է թե հունական կուսակցությունը Պապի ո՛ր գործողություններն էր այս մեղադրանքների մեջ ակնարկում: Կայսրը հավատաց և Պապը հրավեր ստացավ զնալ նրա մոտ՝ կարևոր խորհրդակցության համար, Կիլիկիայի Տարսոն մայրաքաղաքը: Պապն իսկույն ձանապարհվում է 300 քաջազեն թիկնապահ:

<sup>1</sup> Ам. Марц., XXX, 1, 3.

ներով, բայց Տարաշնում իրեն տեսնում է մի տեսակ պատվավոր կալանավորման մեջ, հսկողութեան տակ առնված: Իզոբր դիմումներ է անում պատճառն իմանալու համար— ամեն տեղ պատասխանում են նրան լուսթյամբ: Փորձեց կայսրին տեսնել, բայց այս էլ չհաջողվեց: Միևնույն ժամանակ հաստատ լուր առավ նա թե Տերենտիոսը գրել է կայսրին, որ Պապի տեղ մի ուրիշ թագավոր ուղարկե Հայաստան, որովհետև հայ ժողովուրդը, ասում էր հոռոմ զորավարը, սաստիկ ատում է Պապին և վախենալով թե նա կվերադառնա, կարող է պարսիկների գիրկն ընկնել:

Պապն իսկույն հասկանում է, որ իր դեմ դավադրություն է սարքված և իրեն սպառնում է սարսափելի վախճան: Արդեն փորձված լինելով խորամանկության մեջ, նա ըմբռնում է որ միակ փրկությունը նրա համար կլինի անհապաղ, ժամանակ չկորցնելով, դուրս գալ քաղաքից և փախչել Հայաստան: Այս խորհուրդը տվին նրան և այն մարդիկ, որոնք արքունիքումն էին գտնվում, նրա բարեկամներն էին և որոնց նա հավատում էր: Իրիկնապահին նա իր թիկնապահ փոքրիկ խումբը հարդարելով սեպի ձևով, քաջաբար առաջ նետվեց: Քաղաքի դռնապանը կարողացավ միայն իմաց տալ գավառապետին, որ հասավ թագավորին քաղաքի շրջակայքում և սկսեց համոզել նրան որ մնա: Բայց իզոբր էր ամեն ջանք և գավառապետն ինքն էլ հազիվ կարողացավ իր կյանքն ազատել փախչելով: Իսկույն փախստականների հետևից զորք ուղարկվեց, որ արդեն հասնում էր նրանց, երբ երիտասարդ թագավորը հանկարծ ետ դարձավ և իր քաջերով հարձակվեց հետապնդող զորքի վրա: Այս հանկարծակի և ուժգին հարձակումը, հայոց նետերի տարափը, որ կյանքերի պես էր թափվում, սարսափեցրին զինվորներին, որոնք ետ փախան և մտան քաղաք: Այլևս վտանգ չկար և Պապը երկու օր ու գիշեր տաժանելի ճանապարհ կտրելով, հասավ Եփրատին: Այստեղ նավեր չկային որ գետն անցկացնեին, և փախստականները երկար ժամանակ չգիտեին թե ինչ անեն, լողալ չիմացողներ շատ էին, ուստի երկյուղ էր տիրում: Վերջապես գտան հնարը: Գյուղի բնակարաններում գտան մահճակալներ և տիկեր, մահճակալները ամրացրին տիկերի վրա, գտան երևի և թիավարներ: Թագավորն ու իշխանները նստեցին այդ նավակների վրա և իրենց ետևից քաջեցին ձիաները: Այսպես մի կերպ դուրս եկան մյուս ափը: Ավելի դժվար էր խմբի մնացած մասի դրությունը: Բոլորի համար տիկերից նավակներ չինել անկարելի եղավ և նրանք բոլորը ձի հեծած մտան մեծ գետի մեջ: Զուրը տանում էր նրանց, ալիքները հարվածում էին, և սաստիկ տանջված՝ ամենքն անցան մյուս ափը: Մի քիչ կազդուրվելուց հետո, խումբը ճանապարհ ընկավ, զգալով իրեն ավելի ապահով, քան առաջ: Բայց մեծ վտանգը դեռ սպասում էր նրանց: Կայսրը, իմանալով Պապի փախուստը, ապշեց և վախենալով որ թոկից ազատվելուց հետո հայոց թագավորն այլևս հավատարիմ չի մնա հռոմեացիներին, հազար թեթևազեն նետաձիգներ ուղարկեց նրան ետ դարձնելու համար, հանձնելով այդ գործը երկու հրամանատարի: Սրանք գործը սկզբում հաջողությամբ տարան, քանի որ շատ լավ գիտեին այդ կողմերը և կարճ ճանապարհով էին գնում, մինչդեռ Պապը, բոլորովին անծանոթ, երկար ու ոլորուն ճանապարհներ էր անցնում: Կայսերական զորքը փախստականների առաջն անցավ և կտրեց երկու ճանապարհները, որոնցով պիտի անցնեին հայերը: Այդ միջոցին մի ուղևոր էր գալիս, որ տեսնելով երկու ճանապարհները կտրված, շեղվեց և թփերով ու մացառուներով ծածկված կածանով գնաց: Բայց այս ուղևորությունն էլ նրան տարավ հայերի մոտ, որոնք հոգնած հանգստանում էին,

չիմանալով թե ինչ կողմ պիտի գնան՝ վտանգի շենթարկվելու համար: Ուղեվորին տարան Պապի մոտ, որ, սառնասրտությամբ չկորցնելով, հարց ու փորձ արավ և մանրամասն տեղեկացավ նրանից տեղի դիրքի և կայսերական զորքի մասին: Ոչ ոքին չհայտնելով թե որքան վտանգավոր է դրությունը, թագավորը իր զինվորներից մեկին պատվիրեց գնալ աջ ճանապարհով և առաջին պատահած գյուղում օթեան և ուտելիք պատրաստել: Քիչ հետո մի ուրիշ զինվոր էլ ուղարկեց դեպի ձախ ճանապարհը միևնույն պատվերով, բայց առանց հայտնելու աջ ճանապարհն ուղարկված զինվորի մասին: Այս երկու զինվորներն էլ բնական հոռմեացիների ձեռքը, որոնք երկու ճանապարհներին կանգնած մնացին, համոզված որ հիմա Պապը կգա և իրենց ձեռքը կընկնեն ինչպես որս: Բայց մինչդեռ նրանք այդ սպասողության մեջ էին, Պապն իր խմբի հետ, ուղևորի առաջնորդությամբ, շատ դժվարակոխ կածաններով, որոնք ծածկված էին թփերի մեջ, անցավ հեռացավ այդ կողմերից, հասավ իր երկիրը, ուր ժողովուրդը խանդավառ ընդունելություն ցույց տվեց:

Երկու հոռմեացի հրամանատարները ամոթահար դարձան կայսրի մոտ: Նրանց ծաղրում էին և նրանք, մի կերպ իրենց արդարացնելու համար, սկսեցին հավատացնել Վաղեսին թե Պապին չէր էլ կարելի բռնել, որովհետև նա կախարհ է, կարողացավ փախչել ազատվել խավար բերելով հոռմեացիների վրա և տալով իր մարդկանց ուրիշ կերպարանք: Այս ծաղրաշարժ սուտը դժբախտ թագավորի վիճակն էր վճռում: Վաղեսը, լինելով սաստիկ նախապաշարված մարդ, վախում էր կախարհներից և այժմ հավատաց թե հայոց թագավորը, ազատվելով հալածանքից, ամեն տեսակ դժբախտություն պիտի բերի իր գլուխը: Ուստի վճռեց օր առաջ վերացնել Պապին մեջտեղից և այս բանը գաղտնի կերպով հանձնվում էր Տերենտիոսին հաջորդած Տրայանոս կոմսին: Ամմիանոսը, բերելով այս բոլոր մանրամասնությունները, հաղորդում է որ Պապը, ընդհակառակն, իր երկիրը դառնալուց հետո էլ հավատարիմ մնաց հռոմեացիներին:

Այնուհետև պերճախոս և խորիմաստ լատին պատմագիրը նույնպիսի մանրամասնություններով պատմում է այն ոճիբը, որին զոհ գնաց հայոց երիտասարդ թագավորը և որին նա տալիս է «ամոթալի», «խայտառակ» անունները: Տրայանոսը, կատարելով Վաղեսի հրահանգները, սկսեց խաբել Պապին զանազան խորամանկություններով. կամ տալիս էր նրան կայսրի նամակները, որոնց մեջ հայտնվում էր բարեհաճություն և բարյացակամություն դեպի նրան, կամ թե ինքը զորավարը գնում էր ճաշելու թագավորի մոտ: Այս կեղծ բարեկամությամբ նա կարողացավ ոչնչացնել Պապի մեջ կասկածոտության ամեն մի նշույլը որից հետո մի օր նրան ճաշի կանչեց իր մոտ: Թագավորը բոլորովին միամտորեն գնաց և սեղան նստեց իր համար առանձնապես պատրաստված պատվավոր տեղում: Մատուցվեցին ընտիր խորտիկներ, դահլիճը թնդաց լարավոր և հնչական երաժշտության ձայներից ու երգերից, գինին արդեն սկսել էր ներգործել: Այդ միջոցին խնջույքի տերը դուրս գնաց որպես թե բնական պետքի համար և ներս թողեց մի դաժանատեսիլ բարբարոսի, որ մերկացրեց սուրը և սկսեց դես ու դեն շարժել թագավորին: Հարվածելու համար: Պապն այդ հարվածների ժամանակ պատահաբար խոնարհվել էր, բայց տեսնելով որ փախչելու ոչ մի ճանապարհ չկա, մերկացրեց իր դաշույնը՝ իրեն մի որևէ կերպով պաշտպանելու համար, սակայն այդ բոլորից էլ բարբարոսը իր սուրը կոխեց նրա կուրծքը և հետո հարվածներ թափեց նրա վրա: Զորավարի հյուրն սպանված էր (374): «Այս անազնիվ գոր-

ծով,— գրում է Ամմիանոսը,— խաբված եղավ վստահությունը. օտարականի արյունը, որ ցայտում էր փառահեղ սփռոցների վրա հյուրընկալության աստծու աչքի առաջ, հյուրասիրության միջոցին, հյուրասիրության, որ հարգանք է վայելում նույնիսկ Եվքսինյան Պոնտոսի<sup>1</sup> կողմերում, այդ արյունը եկավ ավելանալու խնջույքի մասնակիցների հագեցման, որոնք և փախան մեծ սարսափով բռնված»<sup>2</sup>:

Իսկ հայ երկրի դժբախտությունն այն էր, որ անազնվության ձեռքից ընկնող մի երիտասարդ, եռանդուն և մեծագործ թագավոր էր, որ մեծ հույսեր էր տալիս և որի նման շինարար ու կարգավորող ուժին անշափ կարող էր կեղեքվող հայրենիքը:

<sup>1</sup> Սև ծով:

<sup>2</sup> Ամմ., XXX, 1, 22.

## Գլուխ վեցերորդ

### ԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԱՆԿՈՒՄ

1. ԲԱԺԱՆՈՒՄ: 2. ՎՈՒՄՇԱՊՈՒՂ (389—414): ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ: ՄԱՇԹՈՑ: 3. ՀԱՅ ԲԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԸ:

**1. Բաժանում:** Այսպես էլ հասկացավ հայ ժողովուրդն իր կրած կորուստը և նրա վիշտը մեծ էր Պապի սպանության վրդովեցուցիչ հանգամանքների պատճառով: Հունական կուսակցությունը ժողովրդական ցնցումից ազատված, պիտի զգար թե որքան հեռու է գնացել իր անհեռատես գործունեության մեջ: Բայց երբ մեծամեծների ժողով գումարվեց որոշելու համար թե ինչ պիտի լինի երկրի քաղաքականությունը, գերակշիռ հանդիսացավ այն կարծիքը թե, այնուամենայնիվ, կայսրը քրիստոնյա է և չէ կարելի նրան փոխել հեթանոս թագավորի հետ<sup>1</sup>, ուստի և պետք է լուծվան տալ դժբախտ թագավորի սպանությունը: Երևույթը արտաքուստ ճիշտ էր նկատվում և նրա ապացույցը հենց այն էր, որ Հայաստանը պաշտպանում էր Բագրևանդի գավառում բնակված հռոմեական զորքը: Սակայն գլխավոր, ճակատագրական հարցն այն էր թե որքան տևողական և հաստատուն է այդ երևույթը, այսինքն որքան ժամանակ քրիստոնյա կայսրությունը իր համար անհրաժեշտ դրություն կհամարե Հայաստանի քաղաքական անկախությունը պահպանելը: Դեպքերը եկան ցույց տալու որ այս կողմից հայոց երկիրը ոչ մի երաշխավորություն չունի:

Պապի տեղ Վաղեսը Հայաստանի թագավոր նշանակեց Վարազդատ անունով մի պատանի Արշակունու, որ իրեն մի տեղ անվանում է Պապի եղբորորդի<sup>2</sup>: Եթե այս ճիշտ է, այն ժամանակ նրա հորը մենք չպիտի համարենք Պապի հարազատ եղբայր, այլ ծնված Արշակի առաջին կնոջից, նախքան Փառանձեմի հետ ամուսնանալը: Ինչ էլ լինի, այս պատանի թագավորին ուրախությամբ ընդունեց հայ ժողովուրդը, երևի այն պատճառով որ նա շատ քաջ մարդու համբավ ուներ: Խորենացին նկարագրում է նրան «տիով մանուկ, սրտեայ, անձնեայ, ուժեղ, լի ամենայն գործովք արութեան և ջոյժ կորովի նետաձգութեամբ»<sup>3</sup>: Այս բնատուր հատկությունները շուտով հռչակեցին նրան Բյուզանդիայի արքունիքում, ուր նա դաստիարակվում էր: Ըմբռամարտերի, օլիմպիական խաղերի մեջ հաջողությամբ հաղթող հանդիսացավ, Հունաստանի մի քաղաքում առյուծներ կոտորեց: Պատմում էին առասպելների օրինակ՝ թե նա իր վրա հարձակված հինգ քաջ մարդկանց սպանեց սրով

<sup>1</sup> Փավստոս, Ե, լգ:

<sup>2</sup> Փավստոս, Ե, լէ:

<sup>3</sup> Փավստոս, Գ, խ:



դատը, ինչպես երևում է, հենց այս պատճառով էլ դիմադրեց Մուշեղի ծրագրին և հենց այս հողի վրա էլ սաստկացավ Թագավորի թշնամական վերաբերմունքը դեպի Մամիկոնյանները:

Գրգռիչ դեր կատարեց Բատ Սահառունին: Մուշեղի դեմ ձևակերպվեց այն մեղադրանքը թե նրա խորհրդով և ցուցմունքներով են հույններ սպանել Պապ Թագավորին: Վարազդատին ներշնչեցին վրեժխնդր լինել: Նա համաձայնվեց և սարքեց մի դավադրություն, որ կրում էր Պապի սպանության նմանությունը: Մուշեղը հրավիրվեց արքայական ճոխ սեղանի, որի ժամանակ, ինչպես զրուցում էր տոհմային վեպը, հանկարծ ներս մտան տասներկու մարդիկ, վեցը սպարապետի մի թևը բռնեցին, վեցը՝ մյուս թևը: Մուշեղը թագավորին է հարցնում թե այս ինչ է և ստանում է պատասխան. «Գնա՛ Պապի մետ, նրանից հարցրո՛ւ և տես թե ինչ է այս»: Ու Վարազդատը դուրս է գնում, որպես թե բնական պետքի համար: Իսկ քաջարի սպարապետը լսելով իր մահվան դատավճիռը, ափսոսանք է հայտնում որ ձիու վրա չէ մեղնում: Հարվածները թափվում են նրա վրա, իսկ Բատ Սահառունին հանում է յուր դաշույնը և կտրում նրա գլուխը: Սպարապետությունն ստանում է ինքը Բատը, իսկ Մամիկոնյան տոհմի նահապետ նշանակվում է Վաչեն, որ, ինչպես երևում է, Մուշեղի հեռու ազգականն էր, նույն տոհմից:

Թե որքան դեռ ուժեղ էր Հայաստանի մեջ պապենական հավատը, ցույց է տալիս այն, որ նույնիսկ Մամիկոնյան ամենաքրիստոնյա ընտանիքում հիշեցին հին աստվածներին, երբ բերվեց Մուշեղի դիակը: Քաջ, ուզվիկ մարդ էր նա, երբեք վերք չէր ստացել իր մղած անթիվ կռիվների մեջ, ասել է՝ աստվածների հովանավորության տակ էր գտնվում: Եվ այժմ էլ նույն ուժերը, առլեզները, կարող են գալ, լիզել նրա վերքերը և կենդանացնել նրան: Այս հավատի դեմ ոչինչ չարավ և այն, որ սպարապետի գլուխը կտրված էր: Նորից, ասում է վեպը, կարեցին գլուխը իր տեղը և հանեցին դիակը բարձր աշտարակի գագաթը: Պահապաններ դրին, սպասում էին առլեզների իջնելուն: Բայց նրանք չեկան, երևի խոռվել էին քրիստոնյա Հայաստանից: Մարմինը նեխվեց և նրան թաղեցին մեծ սուգով:

Սակայն Մուշեղի մահը առաջացրեց մի վրեժխնդրություն, որ պիտի խրվեր Վարազդատի թագը: Հանդես է գալիս Մամիկոնյան մի նոր հերոս — Մանվելը, որ Փավստոսի պպտմության մեջ մտել է տոհմային վեպից ամբողջովին, առանց համարյա որևէ մշակման, բնորոշ և սիրուն վիպական արդու-զարդով: Ծշտել այս նոր հերոսի ազգաբանությունը դժվար է: Փավստոսը նրան անվանում է «որդի Արտաշեսի Մամիկոնեան ի տոհմէն»<sup>1</sup>, բայց քիչ հետո դնում է Մանվելի բերանում խոսքեր, որոնց մեջ Մուշեղ սպարապետը անվանվում է «այր քաջ եղբայր իմ»<sup>2</sup>:

Մանվելն ունի Կոն անունով մի եղբայր: Երկուսին էլ վեպը ներկայացնում է խոշոր կազմվածքով հսկաներ, թանձրամարմին, «հաստամետ», անհեթեթ վիթխարիներ, մի խոսքով այն, ինչ ժողովրդական բանահյուսության

<sup>1</sup> Ե, 1է:

<sup>2</sup> Եթե այս անվանման մեջ փոխաբերություն չկա, որ ցույց է տալիս թե Մանվելը Մուշեղին բոլոր Մամիկոնյաններից ավելի մոտիկ էր հարազատությանը, այն ժամանակ պետք է նրան ևս համարել Վասակ սպարապետի որդի, ինչպես անում է Ներսես Մեծի կենսագիր Մեսրոպ Երեցը («Պատմ.» էր. 315) թեև այս էլ տարակուսական է գտնում, երբ տեսնում ենք, որ միևնույն տեղում Մանվելը Վասակին անվանում է «այր Մուշեղին» մինչդեռ եթև իր հայրն էլ լինելու ալդպես էլ կհշտաակեր:

մեջ բնորոշվում է «աժդահա» բառով: Երկուսն էլ գերի են տարվել Պարսկաստան Շապուհի արշավանքների ժամանակ և պարսկական զորքերի շարքում մասնակցում են հեռավոր քուշանների դեմ մղված արշավանքի մեջ: Պարսիկները շարաշար հաղթվում են և ջնջվում, բայց երկու հսկա հայերը խուսափում են մահից և ոտով վերադառնում են Շապուհի մոտ, որ սաստիկ վշտացած է իր բանակի կորստով և արհամարհելով Մամիկոնյան եղբայրներին, հեռացնում է նրանց իր երեսից, իրավունք տալով որ նույնիսկ վերադառնան իրենց երկիրը: Մանվելն ու Կոնը ճանապարհ են ընկնում դեպի Հայաստան դարձյալ ոտով: Բայց ճանապարհին Մանվելն սկսում է ետ մտախնայել, նրա ոտը ցավում էր: Այն ժամանակ Կոնը, առանց երկար ու բարակ մտածելու իր շալակն է առնում եղբորը և շարունակում է ճանապարհը, և այսպես էլ, հսկան հսկայի շալակին, մտնում են Տարոն: Վաչե Մամիկոնյանը իսկույն ճանաչում է Մանվելի, իբրև Մամիկոնյան տան ավագագույնի, իրավունքը և նրան է տալիս նահապետությունը: Բայց դրա հետ Մանվելը, ոչ նույնիսկ հարկ համարելով հարցնել Վարազդատ թագավորի հավանությունը, ինքնազուգու ստանձնում է սպարապետության պաշտոնը, հայտնելով ամենքին թե ինչ որ իրեն պատկանում է տոհմային ժառանգական իրավունքով, ոչ ոք չէ կարող խլել իրենից:

Եվ ահա մի ամբողջ կովի առիթ իշխանի և թագավորի մեջ: Վեպն ասում է թե սկսողը Մանվելն էր, որ ուղղակի հայտնեց Վարազդատին, իհարկե մարդկանց միջոցով, թե նա նույնիսկ հարազատ Արշակունի էլ չէ այլ պոռնուկությունից ծնված, այդ պատճառով էլ փոխանակ գնահատելու Մամիկոնյաններին, որոնք սկզբից ևեթ իրենց անձը դրել են հայրենիքի և Արշակունիների վրա, նա սպանել է Մուշեղին, իր եղբորը, քաջ մարդուն: Եվ առաջարկում էր անհեթեթ հսկան որ Վարազդատը հեռանա հայոց աշխարհից, եթե չի ուզում մեղքել իր ձեռքից: Վարազդատը պատասխան է անում նույնպես մի քաջի վախի ոճով: Առաջարկում է որ Մանվելն ինքը հեռանա երկրից: Այսպես երկար բանազնացություններ են լինում, մինչև որ բանը գալիս է հասնում կովի:

Այսպես է պատմում և բացատրում վեպը: Բայց եթե մենք վերլուծենք նրա պատմած հանգամանքները, դուրս գցենք այն, ինչ զարգարանք ու պաճուճանք է հերոսների փառաբանելու համար, հեշտ կտեսնենք որ Մանվելին Հայաստան ուղարկողը Շապուհն էր, որ հանձնարարել էր նրան հեռացնել Վարազդատին, իբրև կայսրից նշանակված թագավորի: Հետագա հանգամանքներն էլ այս իրողությունն են ցույց տալիս: Մանվելի և Վարազդատի պատերազմը տեղի է ունենում Կարինի դաշտում: Նրա վիճակը վճռում է մեծամարտը երկու ախոյանների մեջ: Ուժեղ հերոս էր թագավորը, բայց Մամիկոնյան վեպը իր աժդահային նրանից բարձր է դնում: Բախումը ահավոր էր, բայց Մանվելը քաջերի քաջն է, և քաջ Վարազդատը չէ կարողանում իր կողմը թեքել մրցության հաղթանակը, ուստի խույս է տալիս, փախչել է սկսում: Նրան հայածում է Մամիկոնյան հսկան երկար տեղ, միշտ հնարավորություն ունի սպանել նրան, իր նիզակով ծեծում է նրա գլուխը, բայց և այդպես՝ ոչ ինքն է սպանում, ոչ էլ թույլ է տալիս իր որդիներին ձեռք բարձրացնել թագավորի վրա: Բայց Բատ Սահառունուն ոչ մի կերպ չխնայեց նա: Առաջ նրա աչքի առջև փողոտեց նրա որդիներին, հետո սպանեց նրան:

<sup>1</sup> Այս մի սպացույց է, որ Մանվելին Վարազդատի դեմ հանողը սոսկ Մուշեղի արյան վրեժը չէր: Հայերի մեջ էլ գոյություն ունեն արյան վրեժառությունը, և Մանվելի պես մի հսկա անշուշտ չէր խնայի Վարազդատին, եթե սպանության վրեժ էր մեայն որոնում:

Այս հաղթանակից հետո Մանվելը զարգացրեց մի գործունեություն, որ ըստ ամենայնի պարսկական կերպարանք ուներ: Հռոմեական զորքերը հեռացել էին Հայաստանից, Վարազդատը այլևս օգնություն ոչ մի հույս չունեի կայսրի կողմից, ուստի և քաշվեց բյուզանդական մասը և սկսեց ապրել այդտեղ խաղաղ, առանց քաղաքական ձգտումների: Հայաստանի վրա իրավունք ուներ միայն Պարսկաստանը: Մանվելն շտապում է վերականգնել Արշակունիների թագավորությունը պարսիկների հաճությամբ: Տեսանք արդեն որ Պապը իր կյանքի վերջում բարեկամական հարաբերություններ էր սկսել Շապուհի հետ: Այժմ Մանվելը առաջ քաշեց նրա կնոջը, Զարմանդուխտ թագուհուն և անշափահաս որդիներին, որոնց անուններն էին Արշակ և Վաղարշակ և դրանց անունից բանակցություն սկսեց Շապուհի հետ, ուղարկելով նրա մոտ Գարջույլ Մաղխազին: Արքայից արքան շտապեց ուղարկել Հայաստան իր երկրորդին, որի անունն էր Սուրեն և նրա ձեռքով՝ թագեր թե՛ Զարմանդուխտ թագուհուն և թե՛ նրա երկու որդիներին (378): Առանձնապես մեծարվեց և հայոց հսկայատիպ սպարապետը, ստանալով բարձր իշխանության նշաններ, սամույր, թագավորական հագուստ, գլխի պատիվ, որ էր ոսկի և արծաթի զարգմանակ (սաղավարտի զարդ), լանջի սպիտակ պատիվ, որ կրում էին Գագավորները, վրանի վրա արծվի նշան դնել, մեծամեծ վրաններ ունենալ կապույտ (երկնքի) գույնով: Այսպիսով Պապի ժառանգները իրենց մոր հետ դառնում էին անվանական վեհապետներ, իսկ Մանվելը — տերության խնամակալ և երկրի իսկապետ կառավարիչ:

Այս հեղաշրջումից Հայաստանի քաղաքական իրավասությունը չէր փոխվում: Հռոմեական լեգեոնները հեռացան, բայց նրանց տեղ Սուրենի հետ Հայաստան եկավ պարսկական հեծելազոր մի բանակ, բաղկացած 10 հազար հոգուց: Այդ բանակի բոլոր ծախսերը պիտի հոգար, իհարկե, հայ երկիրը երբև ապացույց իր վասալական կացության: Բայց կար և ավելին: Սուրենը, իր պաշտոնը կատարելուց հետո, մնաց Հայաստանում իբրև մարզպան, իբրև մի տեսակ փոխարքա, որի վերաբերմամբ հայ արքունիքը պիտի ստորադրայալի դիրք ունենար: Սա արդեն սպառնալիք էր ներքին անկախության դեմ, որ միշտ սեփական էր եղել հայ ժողովրդին: Մանվելը շատ շուտ զգաց այս դրությունը ամբողջ վտանգը և զինվորական մի անակնկալ հարվածով փախցրեց Սուրենին ու նրա բանակը Հայաստանից:

Փախտոտը հավատացնում է թե սպարապետն այս հանդուգն քայլն արավ Մեհրուծան Արծրունու դրդումով: Իբր թե Մեհրուծանը նախանձելով Մանվելի փառքին, դրդեց նրան ապստամբության, որպեսզի ինքն ստանա նրա տեղը, և երբ ապստամբությունը հաջողվեց, նա պարսից զորքերի հետ գնաց Պարսկաստան՝ Մանվելին ամբաստանելու համար: Բայց պատճառը Մեհրուծանի խարդախությունը չէր, այլ մի մեծ եղբուրություն, որ գալիս էր հարվածելու Իրանի ուժն ու հեղինակությունը: 379 թվին մեռավ Շապուհ Երկարակյացը, 69 տարի թագավորելուց հետո: Մեծ բռնապետի ներքին ուժը հենվում էր զրադաշտական հոգևորականության և ազնվական դասակարգի վրա, որոնց կամքին էր հպատակեցնում իր քաղաքականությունը և փոխարենն ստանում էր նրանց միաբան աջակցությունը: Այդ թելադրիչների ազդեցությունից էր, որ Շապուհը կատարորեն հալածում էր քրիստոնեությունը և ամեն ինչ պատրաստ էր գոհել պարսկականության շահերին: Նույն ամենակարող դասակարգերը Շապուհից հետո գահ բարձրացրին նրա եղբորը, ծերունի Արտաշիր Բ-ին (379—383), բայց երբ սա Շապուհի նման հլու գործիք չդառավ նը-

րանց ձեռքին, այլ, ընդհակառակը, փորձեց մահապատիժներով իր անկախությունը հաստատել արքունիքում, ազնվականները սպանեցին նրան: Նույնպես սպանվեցին և Շապուհ Գ (383—388) և Վուամ Գ Քիրմանշահ (388—399) թագավորները<sup>1</sup>: Այս պալատական հեղափոխությունները պետության թուլությունն էին սաստկացնում և բնական էր որ Իրանից կախված ազգերը ոչ միայն ազատ շունչ քաշեին այդ ժամանակ, այլև փորձեին անեին իրենց համար ավելի լավ ապագա պատրաստելու:

Պարսկաստանի այդ դրությունն էր պատճառը, որ Մանվելը ոչ միայն անպատիժ մնաց, այլև կարողացավ ջնջել տալ պարսկական մարզպանությունը Հայաստանում: Այս հաջողությունը նա ձեռք բերեց շարժելով պարսիկների ուղարկած զորքերը: Մամիկոնյան տան վեպը Վասակի նման մեծարում է և իր այս հերոսին, նկարագրելով պարսկական երեք ահռելի բանակներ, որոնց կոտորում է Մանվելը իր քսան հազարով:

Զորորդ և վերջին պարսկական արշավանքը Հայաստան առաջնորդեց Մեհրուծան Արծրունին: Վեպը երկար մանրամասնություններ է պատմում այս հարձակումից Մեհրուծանը խոսք էր տվել պարսից թագավորին անպատճառ վերացնել մեջտեղից Մանվելին, կամ ողջ-ողջ բռնելով նրան կամ թե նրա գլուխը բերելով: Հասնելով Հայաստանի սահմանները, նա պարսկական զորքը թողեց Կորճեք նահանգում, ինքն առաջ խաղաց իր սեփական զնդով: Վրճուռ էր հանկարծակի հարձակվել Մանվելի վրա, թույլ շտաբով որ նա պատրաստվի, ուստի և նախապես լրտեսել տվավ սպարապետի ուժերը: Լուր առնելով որ հայոց գունդը Մանվելի և Զարմանդուխտ թագուհու հետ գտնվում է Բագրևանդ գավառի Բագավան գյուղում, Մեհրուծանն շտապեց այնտեղ: Պարագանքը շատ նպաստավոր էին երևում, հայոց զնդի ձիաները երամակ կապած գտնվում էին գյուղից դուրս: Հարձակվելով երամակի վրա և նրան կապած գտնվում էին գյուղից դուրս: Հարձակվելով երամակի վրա և նրան տիրանալով, Մանվելը պիտի անելանելի դրություն մեջ ընկներ: Այնուհետև հեշտ պիտի լինեին նրան բռնելը, և Մեհրուծանը, շեշտում էր վեպը, հոխորտում էր իր մարդկանց մոտ թե վաղն այս իսկ ժամին Մանվելը կապած ու ընկած կլինի, իսկ ես նրա աչքի առջև կխայտառակեմ նրա կնոջը, Վարդանույշին: Բայց համաքններով գուշակողները հաջողություն չգուշակեցին նրան: Եվ իրավ, մի դիպված խանգարում էր նրա ամբողջ ծրագիրը: Այն ժամանակ, երբ նա մոտենում էր նշանակված տեղին, ձիաները տարվել էին գյուղը, որովհետև Մանվելը պատրաստվում էր ամբողջ զնդով որսի գնալ: Այդ միջոցին գուժկան է հասնում թե Մեհրուծանը արշավում է սրբնթաց:

Մանվելը նախ թագուհուն և բոլոր կանանց ուղարկում է Վարազ սարը ամուր տեղում պահվելու համար, ապա ինքը գնում է թշնամուն հանդիպելու: Վեպը այստեղ առաջ է բերում մանուկ Արտավազդի պատմությունը: Դա Վաչե Մամիկոնյանի որդին էր, տղա հասակով և գեղեցիկ դեմքով: Մանվելը կարգադրել է որ նա էլ, իբրև երեխա, գնա կանանց հետ, որպեսզի հեռու մնա պատերազմից: Բայց երեխան համառությամբ պնդում է թե ինքն էլ ուզում է կովել: Համբերությունը կորցրած Մանվելը բռնության է դիմում: Սովորություն էր հայերի մեջ որ երեխաների գլուխները ածիլում էին, թողնելով գաթին մի ծամ կամ գէս, իսկ ճակատի վրա՝ ցուցեր: Մանվելը մտրակով խփում է երեխայի մերկ գլխին որ իր ասածն անել տա: Արտավազդը գնում է կանանց հետևից, բայց գաղտնի փախչում է, պատրաստվում, կովի դաշտը

<sup>1</sup> Th. Noeldeke, „Etudes Historiques sur la Perse Ancienne“, Paris, 1896, p. 155—156.



Վտնում: Իսկ այստեղ հաջողությունը մանվելյան գնդին էր պատկանում և Տեհրուժանյան գունդը մեծամեծ կորուստներ ուներ: Արտավազը մեն-մենակ հարձակումներ է քործում և, վեպի ասեղով, բազմաթիվ մարդիկ կոտորում, նույնիսկ մենամարտում իրենից մեծերի հետ: Մեհրուժանը խորամանկություն է բանեցրել և նրան չէ կարողանում գտնել սպարապետը: Իր նշանը Մեհրուժանը տվել է իր զինվորներին, իսկ ինքը կոչվում է առանց նշանի: Մանվելը և նրա զինվորները հարձակվում են Մեհրուժանի նշանները կորողների վրա, կոտորում են նրանց, բայց տեսնում են որ Մեհրուժանը չէ սպանված: Վերջապես Մանվելը ճանաչում է նրան ձիու վրա նստելու եղանակից և հարձակվում է նրա վրա: Հսկայատիպ էր և Մեհրուժանը, և երկու ախոյանների ընդհարումն այնքան ուժգին էր, որ երկուսն էլ ցած ընկան ձիաներից: Մանվելի զինակիրը, Բաբիկ Սյունին, վրա է հասնում և կտրում է իր հայրենիքին այնքան շարիքներ պատճառած Մեհրուժանի գլուխը: Մանվելյան գնդի ուրախուց Յյունն ինքնըստինքյան հասկանալի է:

Այնուհետև յոթը տարի խաղաղություն է տիրում հայոց աշխարհում և ժողովուրդը անդորր ու անհոգ կյանք է վայելում Մանվելի իմաստուն կառավարության տակ: «Ուտէին և ըմպէին և ուրախ լինէին զայն ամս եօթն տէրութեանն Մանուէլի», ասում է Փավստոսը<sup>1</sup>: Սպարապետը ամուսնացրեց Պապի երկու տղաներին էլ: Արշակին իր փեսա դարձրեց, ամուսնացնելով նրան իր Վարդանդուխտ աղջկա հետ, իսկ Վաղարշակի համար կին ուզեց Բագրատունյաց օրիորդին: Իսկական թագավոր համարվում էր Արշակը, իսկ Վաղարշակը նրա երկրորդն էր:

Մամիկոնյան մեծ սպարապետների մեջ Մանվելն է, որին ամենից շատ սիրել է ազգային վեպը: Այդ խոշոր անձնավորությունը միացնում էր իր մեջ հերոս կոչվողի, անձնագոհ հայրենասերի և բարի քրիստոնյայի առաքինությունները: Ահա նա հիվանդ է և պատրաստվում է մահվան: Նրա մահի՞նը շրջապատել են բարեկամներն ու ազգականները, որոնց մեջ փեսան՝ Արշակ թագավորը և աղջիկը՝ Վարդանդուխտը: Իրենից հետո իր հաջորդ է նշանակում նա իր Արտաշիր որդուն, որին խրատում է հավատարմությամբ և ամենայն անկեղծությամբ ծառայել հայ հայրենիքին, Արշակունի թագավորներին, ինչպես արել են նրա նախնիքները: Գալով իրեն, հայոց սպարապետը մի մեծ վիշտ էր տանում իր հետ գերեզման— այն, որ մեռնում է տանը, խաղաղ անկողնի մեջ և ոչ թե պատերազմի դաշտում: Մեծ զրկանք էր համարում նա այս ճակատագիրը և լաց էր լինում: Նա իրավունք ուներ այդպիսի դժբախտության շարժանանալու և իբրև ապացույց՝ մերկացնում էր իր մարմինը և ցույց էր տալիս շրջապատողներին: Ամբողջ մարմնի վրա չկար, ասում է վեպը, և մի փոքրիկ տեղ, որ չկրեր պատերազմի մեջ ստացած վերքերի հետքերը: Նույնիսկ առնական անդամն էլ բաց է անում և ցույց է տալիս նա նահապետի պարզամտությամբ. այդտեղ իսկ, վեպի խոսքերով, հիսունից ավելի էին սպիները: Եվ ահա այսպիսի մի մարմին մեռնում էր իբրև մի սովորական մարդ, տկար ու հյուծվող հիվանդի կերպարանքով, սրտի մեջ հրահրելով կարոտը մի շանթահար մահվան՝ կովի մորիկների մեջ: Իբրև քրիստոնյա՝ վերին աստիճանի բարեպաշտ ու հավատացող է մեռնող նահապետը, հիշում է աղքատներին ու թշվառներին, պատվիրում է որ իր վրա քրիստոնեության տեսակետից անվայել սուգ չկատարեն, քանի որ ինքը մեռնում է հավատա-

<sup>1</sup> Ե, ԽԲԹ

լով որ հարություն պիտի առնե: Բայց իզուր էր այդ մի պատվերը: Հայոց աշխարհը դառնապես սգաց իր մեծ սպարապետի կորուստը: Մանվելի մահով առժամանակ ընդհատվում էր Մամիկոնյան հսկա կովողների հաջորդականությունը:

Բայց Մանվելի հաջորդը թույլ ու անկարող հանդիսացավ սպարապետության պաշտոնում: Արշակ Գ արդեն ցույց էր տվել իրեն անկարող թագավոր, զուրկ հեղինակությունից: Երևի թե՛ իր փեսայի և թե՛ որդու անկարողությունը կանխատեսելու հետևանքով էր, որ Մանվելը, ինչպես պատմում է նրա մահվան վեպը, հայոց երկիրը իր երիտասարդ թագավորի հետ «հրովարտակով» (գուցե կտակով) հանձնեց հունաց կայսրին: Հետագա քաղաքական դեպքերը ցույց տվին որ կայսրի վրա դրած հույսը խաբուսիկ էր և ոչինչ օգուտ չտվեց հայերին: Մինչդեռ Շապուհից հետո Պարսկաստանը ծերունի Արտաշիր երկրորդի քաղաքականության շնորհիվ թուլանում էր պալատական երկպառակություններից, հոռմեական կայսրությունը մի նոր փայլ էր ստանում: Շապուհ Բ-ի մահվան տարին, 370-ին Բյուզանդիայի գահն անցնում էր, վախճանված Վաղեսի տեղ, Թեոդոսիոս, մի մեծագործ գորավարի, որ ազատեց պետությունը գոթերից և վերականգնեց հոռմեական զենքի հմայքը: Թեոդոսը միայն տաղանդավոր գորավար չէր, այլև մի շերմեռանդ քրիստոնյա, որ լավ բմբունելով եկեղեցու ուժը, բարերար հանդիսացավ նրա համար, երկրորդը կոստանդին Մեծից հետո և հենց այս պատճառով էլ ստացել է երախտապարտ եկեղեցուց դարձյալ նույն «Մեծ» տիտղոսը:

Ամենամեծ ծառայությունը, որ մատուցեց Թեոդոսը պետական եկեղեցուն, այն էր, որ նա իր մեծ և հեղինակավոր ուժով, իբ կայսերական հրամաններով վերահաստատեց եկեղեցու մեջ այն դավանաբանությունը, որ կոչվում էր ուղղափառ (օրթոդոքս) և ձևակերպված էր Նիկիայի տիեզերական ժողովի մեջ, բայց սաստիկ խախտված էր եկեղեցու ծոցում գոյացած տարբեր աստվածաբանական հայացքներից և քրիստոսաբանական ըմբռնումներից, որոնք ուղղափառ կոչվողների աչքում «հերձվածողներ», «աղանդավորներ» էին: Վաղեսի ժամանակ և նրա աջակցությամբ ամեն տեղ, նույնիսկ մայրաքաղաքում, տիրապետող էր արիոսականությունը, այսինքն հենց այն վարդապետությունը, որի դեմ կովելու համար գումարվել էր Նիկիայի ժողովը: Ուղղափառներն արդեն իրենց ընկճված էին տեսնում, երբ եկավ Թեոդոսը՝ զինվորի բռունցքով վճռելու թե ինչ է հարկավոր քրիստոնյայի հոգու փրկության համար և արգելեց ու հալածեց արիոսականներին, կարգադրելով որ միակ ճշմարիտ դավանություն ընդունվի Նիկիայի հանգանակը: Սակայն սրանով քրիստոնյա եկեղեցին չէր ազատվում իրեն կեղեքող վեճերից: Հենց այդ միջոցին ծայր էր տալիս Մակեդոն եպիսկոպոսի վարդապետությունը, որ չէր ուզում ճանաչել ս. հոգուն երրորդության մյուս երկու անձերին՝ Հոր և Որդուն, համահավասար: Այս պատճառով երկրորդ տիեզերական ժողով գումարվեց Կ. Պոլսում 381-ին և նա, իհարկե, դատապարտեց Մակեդոնի հոգեմարտ վարդապետությունը: Թե որքան բարձր էր գնահատվում Թեոդոսի եկեղեցական գործունեությունը, երևում է նրանից, որ եկեղեցին, ինչպես նաև հայոցը, սուրբերի դասը կարգեց նրան և այսօր էլ տոնում է նրան, հայցելով նրա բարեխոսությունն ու միջնորդությունը աստծու մոտ:

Այս բոլոր հանգամանքները հասկանալի են դարձնում որ Մանվել սպարապետի բարեպաշտական զգացմունքները ծառանդություն ստացած Արշակ թագավորը չէր կարող Թեոդոս Մեծի կողմը շինել: Իսկ հունական կուսակցու-

թյան ամեն մի հաղթանակ, ինչպես գիտենք, ուժեղ հակահարված էր առաջացնում պարսկական կուսակցության կողմից: Այս ներքին շփումները սուր կերպարանք ստացան Շապուհ Գ-ի թագավորության սկզբից և հավանորեն ոչ առանց նրա թելադրանքների: Գոնե Փավստոսն այսպես է պատմում անցուդարձը: Նախարարների մի մասը գնաց պարսից թագավորի մոտ, «մատենց նրան հայոց աշխարհը»<sup>1</sup>, այսինքն ներկայացրեց Արշակ Գ-ի հունասիրությունը և խնդրեց նրանից մի ուրիշ թագավոր, բայց դարձյալ Արշակունի: Այդպիսի մեկն էլ անշուշտ պատրաստ էր. և դա խոսրով անունով մի պատանի էր, որ և հայոց թագավոր նշանակվեց: Շապուհին, իհարկե, լավ հայտնի էր որ իր հայրը համաձայնություն էր կայացրել հռոմեացիների հետ Հայաստանը բաժանելու մասին և խոսրովի նշանակումով գործնական քայլեր էր անում առջև դեռ չձևակերպված համաձայնությունը կյանքի մեջ մտցնելու համար: Եվ իրավ, երբ խոսրովը Հայաստան եկավ, Արշակը թողեց հայոց արքունիքի բնիկ կալվածքը, Արարատյան երկիրը և արքունի գանձերը վերցրած՝ գնաց Հայաստանի արևմտյան կողմերը, Եկեղյաց գավառը, ուր հռոմեական ազդեցություն էր տիրում: Արշակի հետ գնացին և շատ նախարարներ՝ հունական կուսակցության պատկանողներից:

Թեոդոս կայսրը սկզբում հայոց հարցին վերաբերվեց հռոմեացիների վաղճմի ավանդական քաղաքականության համաձայն և նրա զորքերը մտան Եկեղյաց գավառը՝ Արշակ թագավորին պահպանելու համար: Պարսից զորքն էլ խոսրովի պաշտպանությունը հանձն առավ և մտավ Արարատյան աշխարհը: Ամեն ինչ պատրաստ էր կրկնելու համար մեկը դարավոր պարսկահռոմեական պատերազմներից: Բայց պատերազմ չեղավ և երկու մեծ պետությունները, արյունահեղության փոխարեն, խաղաղ բանակցությունների ձեռք գարկին: 384 թվականին Շապուհը դեսպանություն ուղարկեց Թեոդոսի մոտ որոշ առաջարկություններով, որոնք ընդունվեցին կայսրի կողմից: Այդ առաջարկությունները Հայաստանի բաժանման էին վերաբերվում: Թեոդոսը կարծեց թե իրավ որ այդպիսի մի համաձայնությամբ կարելի է մշտապես խաղաղություն հաստատել երկու պետությունների մեջ և Հայաստանի բախտը որոշվեց անդառնալի կերպով: Երկիրը երկու անհավասար մասերի էր բաժանվում: Մեծագույնը, որ ամբողջի մոտ 1/3 մասն էր կազմում, անցավ Պարսկաստանին, իսկ փոքրագույնը՝ Բյուզանդիային: Սահմանագծի մանրամասնությունները միանգամայն չորոշվեցին, այլ առիթ դարձան և հետագա բանակցությունների համար (390): Երկու գլխավոր կետերի էր հանգում այդ գիծը՝ հյուսիսում՝ Կարին, որ բյուզանդական բաժնի մեջ էր մտնում և հարավում՝ Մծբին, որ անցնում էր պարսկական բաժնին: Դա համարյա ուղիղ մի գիծ էր<sup>2</sup>, որ Սրմանց կամ Բյուրակնյան լեռնաշղթայով գնում էր դեպի հարավ, բյուզանդական բաժնում թողնելով Բարձր Հայք, Չորրորդ Հայք նահանգները և Աղձնյաց նահանգի մեծագույն մասը<sup>3</sup>:

Հարվածն այս անգամ մահացու էր: Նա տապալում էր այն իրականությունը, որ հայ ժողովուրդը հինգ և կես դարերից ի վեր ստեղծել էր իր ազգային ինքնուրույնությունը պահպանելու և զարգացնելու համար: Ծիշտ է, այդ ինքնուրույնությունը շատ կարճ միջոցներում էր ներկայացնում կատար-

յալ անկախություն արտաքին քաղաքական աշխարհում և Հայաստանը մըշտապես խաղալիք էր ուժեղների ձեռքին, բայց գոնե ներքուստ նա ուներ շատ բան, համարյա անսահմանափակ ինքնավարություն, պահպանում էր իր ցեղային և հողային ամբողջությունը և ուժեղ էր հենց այդ ամբողջությամբ: Փավստոսն ասում է թե նույնիսկ բաժանման միջոցին էլ Հայաստանը ներկայանում է թե պարսիկներին և թե բյուզանդացիներին իբրև «հզոր և հարուստ թագավորություն»: Բաժանումը երևույթական էր դարձնում ներքին ինքնավարության հին ձևը, իսկ հողային ամբողջությունը կտրատում էր, «կրծում էր», ինչպես Փավստոսն է ասում: Այս աղետալի դեպքի ժամանակակիցներն էլ շատ ուղիղ կերպով ըմբռնեցին նրա ամբողջ նշանակությունը: «Նուազեաց բաժանեցաւ ցրուեցաւ թագասրութիանն հայոց, պակասեաց յիրմէ մեծութենէն յայն ժամանակն և յապայ», գրում է Փավստոսը և այս տխուր շեշտով էլ վերջ է տալիս իր պատմության:

Սակայն դեռ խարուսիկ էր նոր իրողության արտաքին կերպարանքը: Դեռ երկու բաժիններն էլ ունեին իրենց հայ թագավորները, որոնք կարող էին միանալ ընդհանուր ազգային համերաշխության գիտակցությամբ: Բայց այսպիսի երևույթ տեղի չունեցավ և չէր էլ կարող տեղի ունենալ: Բաժանված մասերը հենց սկզբից էին գնում դեպի օտարացում և փոխադարձ ատելություն, մի դրուժյուն, որ, անկասկած, ամենից շատ ցանկալին էր բաժանող պետությունների համար և, անշուշտ, խրախուսվում էլ էր նրանց կողմից, սինչև այն աստիճան, որ երկու Արշակունիները իրար վրա հարձակվեցան<sup>1</sup>:

Արշակ Գ իր Եկեղյաց աննշան գավառի արքունիքում զգում էր իրեն մի շատ փոքր և շատ սահմանափակ դիրքի մեջ: Փորձեց նա վերադարձնել իր նախկին իշխանությունը և, ինչպես ասում են, նույնիսկ բանակցություններ սկսեց Շապուհի հետ, հավատացնելով նրան թե հավատարմությամբ կժառանգե և Պարսկաստանին, եթե իրեն տրվի և պարսկական Հայաստանը: Շապուհն, իհարկե, մերժեց այս միջնորդությունը, որ և, երևի, սուր կերպարանք հաղորդեց Արշակի և խոսրովի հարաբերություններին: Ընդհանրապես պատճառները, խորհնացու պատմելով, առաջացան հետևյալ հանգամանքներից:

Արշակի հետ հունական բաժինը տեղափոխված նախարարներից շատերը տեսնելով որ երկրի բաժանումը մշտական է դառնում, իսկ պարսից բաժնում իրենց թողած կալվածները հարբունիս են գրավվում, հաշտվեցին խոսրովի հետ և վերադարձան պարսկական Հայաստան: Հունաց բաժնի բնիկ նախարարներից խոսրովի մոտ գնաց և Սահակ ասպետ Բագրատունին, որ և սպարապետ կարգվեց խոսրովի զորքերի վրա: Սահակը Արշակի հալածանքից էր փախչում և նրա հետ նույնպես պատրաստվում էին փախչել և պարսկական Հայաստանից եկած նախարարներից երեքը— Սուրեն խոսրոտունի, Վահան Առավելյան և Աշխատար Դիմաքսյան, սակայն նրանք չկարողացան իրա- գործել իրենց ցանկությունն իսկույն և դեռ մնացին հունական բաժնում: Արշակին հավատարիմ մնացած նախարարներից հիշվում են Դարա Սյունի, որ

<sup>1</sup> Փավստոս, Զ. ա:

<sup>2</sup> Ф. Успенский, «История Византийской империи», т. I, Пет., с. 40—41, բարեբա:

<sup>3</sup> Н. Адонц, «Армения в эпоху Юстиниана», с. 19.

<sup>1</sup> Այս ժամանակների պատմական աղբյուրները շատ աղքատ են: Արտաքին աղբյուրներ բոլորովին չկան: Փավստոսը, որին կարելի է փոքր ի շատե վստահելի և մանրապատում աղբյուր համարել, վերջացնում է իր պատմությունը հենց այնտեղ, ուր բաժանվում է Արշակունյաց թագավորությունը: Այնուհետև միակ հավաստի աղբյուրը մնում է Ղազար Փարպեցին: Իսկ խորհրդանշան թեև մանրամասնություններ շատ է հաղորդում, բայց դրանց ընդհանուր արժեքը սաստիկ թուլացնում են ժամանակագրական անհամար շփոթությունները:

Արշակի սպարապետն էր, Գազավոն Կամսարական, Պերոզ Գարդմանացի, Ատատ Գնունի, Կենան Ամատունի, Սուրա Մոկացի, Ռքստամ Առավենյան:

Խոսրովի ենթարկված Վանանդ գավառում երևացել էին մի խումբ ավազակներ: Սահակ սպարապետը գնում է նրանց բռնելու, բայց նրանք խույս են տալիս և անցնում են Արշակի բաժինը, և Սահակն էլ գնում է նրանց հետևից, հալածելու համար Մանանդի գավառը: Այդ իսկ ժամանակ Արշակ թագավորը իր գանձերը Գարանաղյաց Անի բերդից փոխադրել էր տալիս Մոփաց աշխարհը: Սահակ սպարապետի կամակից վերոհիշյալ երեք նախարարները— Սուրեն Խոսրովունի, Վահան Առավելյան և Աշխատար Դիմաբյան— պատեհ ժամանակ են համարում հափշտակել այդ տեղափոխվող գանձը և տանել Խոսրովին: Նրանք կարողանում են իրագործել այդ միտքը, բայց Արշակին նվիրված Սամվել Մամիկոնյանը, որ արդեն մեզ ծանոթ է իրիկ հայրասպան, ուժեղ գնդով պաշարում է հափշտակողներին մի քարայրի մեջ: Սահակ սպարապետը, որ այդ ժամանակ գործում էր այդ կողմերում, հարձակվում է Սամվելի վրա, ազատում է երեք նախարարներին և նրանց Արշակի գանձի հետ տանում է Խոսրովին: Իսկ սա այդ հարստության մի մասը ուղարկում է Շապուհին:

Այս ավազակային գործը պատճառ է դառնում որ Արշակը պատերազմ հայտարարե Խոսրովին: Պատերազմը տեղի է ունենում Վանանդ գավառի Երևել դաշտում: Արշակը շարաչար հաղթվում է, Գարա Սյունին սպանվում է և միայն Գազավոն Կամսարականն էր որ իր մեծամեծ քաջագործություններով ազատեց Արշակին գերի ընկնելու դժբախտությունից, ճանապարհ բաց անելով նրա փախուստի համար: Դժբախտ թագավորը քաշվեց Եկեղյաց գավառը, բայց վշտից հյուժախտ ստանալով, վախճանվեց (386):

Թեոդոս կայսրը, ոչ էլ Շապուհը ոչ մի փորձ չարին այս եղբայրասպան արյունահեղությունը արգելելու համար: Նրանց ձեռնառու էր որ բաժանված հայությունը կորցնե ազգային միության հասկացողությունը: Ավելին: Կայսրը օգուտ քաղեց այդ խռովությունից և Արշակի տեղ այլևս թագավոր չնշանակեց: Հայաստանի արևմտյան երեք նահանգները դառնում էին ահագին կայսրության մի մասնիկ, որ կառավարվում էր զինվորական կուսակալների (կոմսերի) ձեռքով: Բայց նախարարական կազմը մնում էր հինը: Կայսրը նախարարներից մեկին նշանակում էր ավագ և նրա միջոցով էր դիմումներ անում մյուս նախարարներին: Այդ ավագությունն առաջին անգամ տրվում է Գազավոն Կամսարականին:

Այսպես էր ահա քրիստոնյա սուրբ կայսրի քաղաքականությունը մի քրիստոնյա երկրի վերաբերմամբ, ուր երկար ու համառ պայքար էր մղվում հենց նույն իսկ քրիստոնեական, այն էլ հունական քաղաքականության վերջնական հաղթանակի համար: Այս մի նոր ապացույց էր որ անգամ սուրբ թագավորի համար քրիստոնեությունը նպատակ չէր, այլ միջոց միայն: Եվ եթե հայ եկեղեցին էլ հետո պաշտամունք դարձրեց այսպիսի գործ կատարած թագավորին, այս էլ հասկանալի է, քանի որ ամբողջ շորորդ դարն արդեն ցույց տվեց մեզ որ քրիստոնեությունը, Հայաստան մուտք գործելուց հետո, հայ ժողովրդի քաղաքական շահերը հպատակեցնում էր իր շահերին: Այս հանգամանքը շահագրգռեց կարևոր դեր կատարեց հայոց պատմության մեջ և նրա մի քանի հատկանիշները մենք կարող ենք մատնացույց անել այժմից իսկ:

Այսպես, բաժանումը չէր էլ վերացնում դարավոր մրցությունը երկու մեծ

պետությունների մեջ: Սահմանելով քաղաքական անջրպետներ, թուլացնելով ժողովրդի համագործակցական միությունը, ստեղծելով կուլտուրական տարբեր միջավայրեր, որոնց մեջ հայությունը պիտի տրոհվեր երկու տարբեր կուլտուրական հատվածների— արևելյան և արևմտյան հայություն, բաժանումն անփոփոխ էր թողնում և երկրի այն ներքին ուժերը, որոնք հզոր հոսանքներ էին կազմում ժողովրդի խորքերում: Պարսկական բաժինը շարունակեց մնալ թատերաբեմ նույն շարժումների, որոնք հոսանքների կամ պարսիկների միջամտությունն էին առաջացնում: Բաժանումից հետո էլ այնտեղ շարունակեցին գործել ու պայքարել մեզ քաջածանոթ երկու կուսակցությունները, քրիստոնեությունը դարձյալ ամբողջ թափով ձգտում էր դեպի Արևմուտք, դեպի հունականություն, և Սասանյան թագավորները շարունակում էին կասկածով վերաբերվել հայերին, միշտ համարել նրանց հունական քաղաքականության և նվաճողական ձգտումների գործիք:

Եվ երևի զգուշությունն էր որ թույլ չտվեց Սասանյաններին արագորեն և կտրուկ միջոցով լուծել հայ թագավորության հարցը, ինչպես արավ Թեոդոսը: Արշակունյաց հարստությունը պարսկական բաժնում դեռ մի երեք տասնյակ տարի էլ ապրեց, թեև հոգեվարքի դրություն մեջ: Որքան էլ կատարյալ լինեք այդ դրությունը իրեն հոգեվարք, բայց նրան վիճակվում էր մի շատ գեղեցիկ և գունագեղ վերջալույսի դերը հայոց քաղաքական կյանքի երեկոյացած պահուն:

Խոսրով Գ-ի ժամանակն էր, որ սկիզբ առավ այս լուսավոր երևույթը: Հայկական թագավորության ջնջումը ծանր տպավորություն թողեց հունական բաժնում ապաստանված նախարարների և մանավանդ Գազավոն Կամսարականի վրա: Այս մեծ զրկանքը կամա-ակամա հաշտեցնում էր հունասեր իշխաններին Խոսրովի հետ: Հասկացվում էր գոնե պարսկական բաժնի թագավորությունը պահպանելու, եթե կարելի է՝ նաև ուժեղացնելու անհրաժեշտությունը: Եվ Խոսրովն ընդառաջ էր գնում հայ ավագանու այս ցանկությունը: Ուստի երբ Գազավոնը թե՛ իր թե՛ մյուս նախարարների կողմից դիմեց Խոսրովին, խնդրելով թույլտվություն որ ամենքը վերադառնան իրենց տոհմային կալվածները, թագավորն շտապեց իսկույն համաձայնություն հայտնել մեծ հաճությամբ, խոստանալով անձնապես Գազավոնին մեծ պատիվներ: Այս բանակցությունների միջոցին էլ, երևի, միտք ծագեց փորձ փորձելու որ կայսրը հունական բաժնի կառավարությունը նույնպես Խոսրովին հանձնե, ապահով լինելով որ բոլոր հարկերը կհավաքվեն ճշտությամբ ու պետական գանձի մեջ կմտցվին, և Խոսրովն էլ կլինի անձնվեր կողմնակից կայսերական կառավարության: Այս միջնորդության ավելի ուժ տալու համար էր, երևի, որ Արաբատյան արքունիքում նորից գերակշռող դիրք ստացավ հունական կուսակցությունը, որ և շտապեց իր ձեռքն առնել եկեղեցական իշխանապետությունը: Մենք տեսանք, որ Պապ թագավորը ներսես Մեծի տեղ կաթողիկոս հրավիրեց Աղբիանոսի ցեղից, Հուսիկին: Սրան հաջորդեց Զավենը միևնույն տոհմից, բայց առաջինի պես սակավակյաց էր և նրան էլ, մահից հետո հաջորդեց Շահակ Կորճյա անունով մեկը, իսկ սրան էլ՝ Ասպուրակ կամ Ասպուրակես: Երբ սրա մահվամբ էլ բացվեց կաթողիկոսական հարց, հունական կուսակցությունը նորից առաջ քաշեց կուսավորչի տոհմը և նրա վերջին ներկա-

<sup>1</sup> միշտ այսպիսի մի առաջարկություն էլ, ինչպես տեսանք վերևում, արել էր Արշակ թագավորը պարսից կառավարության: Այս ապացույց է որ վերջին Արշակունիները շատ էին աշխատում վերականգնել Հայաստանի քակտված ամբողջությունը:

յացուցիչը, Սահակ Պարթև, որ ներսես Մեծի որդին էր, ընտրվեց կաթողիկոս (387):

Բյուզանդական արքունիքը, ինչպես հավատացնում է խորենացին, դրական խոստումներ արավ խոսրովին: Բայց հունական կուսակցության այս խոշոր հաջողությունները, ինչպես միշտ, ոտքի կանգնեցրին պարսկասեր նախարարներին, որոնք և գնացին Շապուհի մոտ ու բաց արին ամեն ինչ, ամբաստանելով խոսրովին իբրև անհավատարիմ թագավորի ու խնդրելով որ նա հեռացվի գահից, բայց նրա տեղ կարգվի մի ուրիշ թագավոր և անպատճառ Արշակունյաց տոհմից: խոսրովը, հրավեր ստանալով ներկայանալ Շապուհին, գնաց Տիգրան առանց որևէ կասկած ունենալու, «որպես առ իւր իշխան և բարեկամ», ինչպես ասում է Ղազար Փարպեցին: Բայց Շապուհը բարեկամի պես չէր ընդունում նրան: Մի մեղադրյալ էր նա, որի վրա բարդվում էր նաև այն մեղադրանքը թե Սահակին կաթողիկոսացրել է առանց արքայից արքայի գիտություն<sup>2</sup>: Այս ամբաստանություններով էլ դատապարտվում է խոսրովը: Շապուհը պահում է նրան Պարսկաստանում: Իսկ նրա տեղ թագավորեցնում է նրա եղբայր Վոամշապուհին (389)<sup>3</sup>, խոսրովի հետ Պարսկաստանում արգելվեց և Գազավոն Կամսարականը, իսկ կարգադրությունները նախարարներ նշանակելու, ինչպես նաև Սահակի կաթողիկոսացման նկատմամբ, ճանաչվեցին անվավեր:

**2. Վոամշապուհ (389—414): Սահակ Պարթև: Մաշտոց: Վոամշապուհ թագավորին վիճակվեց մի բախտ, որ արտասովոր կարելի է համարել նրա նախնիքների համեմատությամբ, գոնե Տրդատից հետո: Նա թագավորեց բավական երկար (25 տարի), բայց որ ամենազխավորն է՝ կատարյալ խաղաղության մեջ: Քաջ կովոզ չէր Վոամշապուհը, ոչ էլ պետական բազմակողմանի կարողությամբ օժտված մի գործիչ: Խաղաղ ու համեստ մի թագավոր էր, որ Արշակունիների մեջ բացառություն կազմելու շափ աչքի էր ընկնում իր գրասիրությունը: Եվ եթե այսպիսի մի թագավորի ժամանակ անվրդով խաղաղություն էր տիրում հայոց աշխարհի մեջ, պատճառը պարզապես այն էր, որ իրար հետ հաշտ էին Պարսկաստանն ու Բյուզանդիան: Այս երջանիկ կացությունը, այնքան հազվադեպ Արևելքում, տևեց 30 տարուց ավելի: Իսկ այս մի ամբողջ շրջան էր որպեսզի խաղաղությունը կարողանար արտահայտվել խոշոր գործերով: Պարսկաստանում թագավորեցին այդ ժամանակ Վոամ (Բահրամ) Գ (389—399), որ կոչվում էր և Կրման (Քիրմանշահ), քանի որ մինչև թագավորելը կառավարիչ էր Քիրմանում, ապա Հազկերտ Ա (399—420): Այս երկու Սասանյանները, երկու եղբայրներ, միակերպ էին հասկանում իրենց պետության շահերը արտաքին հարաբերությունների մեջ, հաշտություն Բյուզանդիայի հետ, իսկ ներքին քաղաքականության մեջ՝ անխնա կռիվ զրադաշտական հոգևորականության և պարսիկ ազնվականության դեմ՝ նրանց թու-**

<sup>1</sup> Ղազար Փարպեցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1904, եր. 12:

<sup>2</sup> Խորենացի, Գ. Ժ.

<sup>3</sup> Պետք է դարձյալ նկատել որ երբ պատմության միակ հիմք են հայկական աղբյուրները, ժամանակագրությունը դառնում է սաստիկ խարխուլ և անճիշտ: Այսպես, Վոամշապուհի թագավորության սկիզբը ոմանք համարում են 390, ոմանք՝ 391, մինչև իսկ 392 թվականը, մինչդեռ Ղազար Փարպեցին, միակ արժանահավատ աղբյուրն այս հարցի մեջ, հաղորդում է որ նրան թագավոր նշանակել է Շապուհ Գ, իսկ սա սպանվել է 388 կամ 389 թվականին, ինչպես հաստատված է Նոելդեկի ուսումնասիրություններով (Noeldeke, «Etud. Hist.» p. 156): Մենք ենթադրաբար վերցնում ենք վերջին թվականը (389):

յացնելու համար: Եվ իբրև հետևանք այսպիսի ուղղության՝ Վոամն ու Հազկերտը չէին հալածում քրիստոնյաներին: Այս կողմից աչքի ընկնող էր մանավանդ Հազկերտը, որին պարսիկները տվել էին Մեղավոր մականունը, որովհետև նա շափազանց խիստ, նույնիսկ բարբարոսաբար հալածում էր պարսիկ կղերական և աշխարհական մեծամեծներին, իսկ քրիստոնյաների վերաբերմամբ, ընդհակառակն, ցույց էր տալիս լայն համբերողություն<sup>4</sup>: Առաջին պարսիկ թագավորն էր դա, որ հոռմեացիների մեջ ստացել էր մեծ ծանոթի և ազնիվ վեհապետի հռչակ<sup>5</sup>:

Այս արտաքին բարեպատեհ հանգամանքները բավական էին որ Հայաստանում, ինչպես միշտ խաղաղ շինարարական մղումներ ծնվեն և հայ կուլտուրական կյանքը նշանավոր առաջադիմություն ցույց տա: Եվ իրավ, ծավալվում է մի շատ բեղմնավոր շարժում, որ հայ ժողովրդի ազգային գոյության տեսակետից անհունապես մեծ նշանակություն ունի: Ավելորդ է ասել, որ այս անգամ էլ, ինչպես միշտ և ինչպես ամեն տեղ հին աշխարհում, այդ ազգային-մտավոր շարժման միջավայրը կրունն էր, եկեղեցին: Հայ աշխարհը նորից դուրս էր հանում իր միջից ընդունակ ու անխոնջ գործիչներ՝ եկեղեցու դիրքը վերջնականապես հաստատելու, քրիստոնեության համար լիակատար հաղթանակ պատրաստելու նշանաբանով:

Անկարելի է ասել թե այս շրջանի մեջ էլ, որ զուտ ներքին գործերն էր էր մեջ ամփոփում, հայերը բոլորովին զերծ էին դրսի աշխարհի հզոր ներշնչումներից: Ընդհակառակն, եթե այս իսկ միջոցին ոտ դնենք Հայաստանի սահմաններից դուրս, կտեսնենք ամբողջ քրիստոնյա Արևմուտքը բռնված նույն տեսակ մի մեծ շարժումով: Թեոդոսի հզոր կայսրությունը քրիստոնյա եկեղեցին կարողացավ ավելի լայն շափերով շահագործել իր օգտին քան կոստանդին Մեծի իշխանությունը: Կոստանդինը, դառնալով քրիստոնյա, զգուշավոր և շատ համբերող քաղաքականության հետևեց կրոնների նկատմամբ: Մինչդեռ Թեոդոսը, քրիստոնյա կղերի թելադրանքներով դեկավարվելով, արմատախիլ էր անում հեթանոսությունը, ջնջել տալով նրա բոլոր հիշատակները: Հեթանոսությունն ուղղակի արգելվեց, նրա տաճարները, արձաններն ու շինությունները, որոնցից շատերը արվեստի հրաշակերտներ էին, կործանվեցին, անհետացան մոլեռանդ և կատաղի կրոնավորների ձեռքով: Բազմաթիվ խոշոր փաստերից բավական է հիշատակել խոշորագույնը—Ալեքսանդրիայի Սերապիոն տաճարի կործանումը, որ տեղի ունեցավ այդ քաղաքի եպիսկոպոսի նախաձեռնությամբ և Թեոդոսի հրամանով: Փառահեղ շինությունը միաժամանակ և գիտության տաճար էր, ուներ հռչակված գիտնականների ամբիոններ և հին աշխարհի սակավաթիվ հրաշքներից մեկը կազմող մատենանոսությունը: Վերջին մնացորդները ջնջող այդ հալածանքների հետ քրիստոնյա եկեղեցին ավելի և ավելի ուժեղացնում էր վանականությունը, ավելի և ավելի ընդարձակում էր սուրբ մասունքների պաշտամունքը: Անհուն քանակությամբ ոսկորներ էին հանդես գալիս եկեղեցու շրջանում, որոնց վերաբերմամբ կղերը, անասման հնարագետ այս բանի մեջ, հավատացնում էր թե այս կամ այն նահապետի կամ վկայի կմախքի մասերն են կազմում, հաճախ այնպիսի վկաների կամ սուրբերի, որոնք թողել էին այս աշխարհը հարյուրավոր տա-

<sup>4</sup> Noeldeke, p. 157:

<sup>5</sup> А. Крымский, «История Сасанидов и завоевание Ирана арабами», М., 1905, с. 49.

րիններ առաջ, նույնիսկ այնպիսի ժամանակ, նրբ դեռ քրիստոնեությունն էլ չկար: Կղերն, իհարկե, շատ լավ էր հասկանում որ մասունքները անհամեմատ ավելի թանկագին են քան ոսկին ու ակունքները<sup>1</sup>:

Մենք արդեն տեսանք որ քրիստոնեությունը Հայաստանում, չնայած նույնիսկ ներսես Մեծի պես մի գործիչի ջանքերին, շարունակում էր մնալ ահագին մեծամասնության համար, արտաքին ձև, պաշտոնական մի կեղև, իսկ պետության ժայռերը կազմող մի քանի լեռնոտ գավառներում նա կղերնիսկ ձև ու կեղև էլ չէր և հեթանոսությունն էր, որ տիրում էր այդ կողմերում: Հայաստանն էլ, ուրեմն, ներշնչվելով ընդհանրական եկեղեցու ծոցում տեղի ունեցող հակահեթանոսական շարժումներից, պիտի նույնպես եռանդոտ միջոցներ գործադրեր հեթանոսությունից վերջնականապես ազատվելու համար: Եվ ահա այս նպատակով կազմվում է մի ամբողջ ահագին շարժում, որի մեջ Վոամշապուհին հատկացվում է Թեոդոս Մեծի դերը: Բայց կոպիտ, հարկադրիչ ուժը այստեղ, Հայաստանում, գործադրել ընդարձակ շարժում չէր կարելի և ավելի բացասական հետևանքներ կունենար գործողություն այդ եղանակը, ինչպես ցույց էր տվել երկար ժամանակների փորձը: Ուստի նախապատվություն տրվեց ավելի խաղաղ, մարդավայել միջոցներին, որոնց կարելի է տալ մի ընդհանուր անուն—**Ուսավորություն**:

Այս մեծ շարժման գլուխ անցան երկու՝ իսկապես մեծ գործիչներ—Սահակ կաթողիկոսը և Տարոնի մի գյուղացի, Մաշթոց<sup>2</sup> անունով, Հացեկաց գյուղից, Վարդանի որդին: Իրենց մեծ երախտիքի համար այս երկու անզուգական աշխատակիցները ստացել են եկեղեցուց սուրբ մականունը: Եկեղեցին ունեին նրանք աչքի առաջ, եկեղեցու հաղթանակն էին պատրաստում: Բայց եկեղեցու մեջ էր և հայ ազգայնության ոգին, որ և իր հաղթանակը դարձրեց այն, ինչ եկեղեցին էր ստանում այդ մեծ շարժումից:

Ս. Սահակը, ինչպես կարծում են, միշտ էլ, իհարկե, հնթադրությամբ միայն, ծնված պիտի լինի 348—350 թվականներին, իսկ Մաշթոցը համարվում է մի 5 տարով նրանից փոքր<sup>3</sup>: Թեև հաստատ տեղեկություններ չունենք, բայց պետք է կարծել որ ներսես Մեծն իր որդուն հունական փայլուն գատիարակություն տվեց արտասահմանում (գուցե Կեսարիայում և Քյուզանդիայում): Հավատարիմ մնալով Լուսավորչի տան ավանդություններին, Սահակը, իբրև միակ ներկայացուցիչ քահանայապետական տոհմի, ամենից առաջ արու գավակ թողնելու հոգսով տարվեց և ամուսնացավ, ինչպես երկվում է, վաղ ժամանակից: Բայց տոհմային դժբախտություն էր որ այս ամուսնությունից ծնվեց միայն մի պղծիկ, որին տվին Սահականույշ անունը: Պարզ էր որ հռչակավոր տոհմը, Սահակից հետո, պիտի անհետանար իբրև հոգևոր միապետություն, և այս տխուր ապագան մեծ վիշտ էր պատճառում Սահակին, մինչ այն աստիճան որ բարեպաշտ ավանդությունը, արձագանք տալով նրա տրամադրության, ստեղծեց այն զրույցը, որի մեջ ամվում էր թե նրազում Սահակի առջև նկարվեց ամբողջ մոտիկ ապագան, այն է՝ որ երկինքը վճռել էր վերջացնել Լուսավորչի տոհմը կաթողիկոսական աթոռի վրա, բայց Սահակը պիտի մխիթարված լիներ նրանով, որ Սահականույշից ծնված

տղամարդիկ պիտի զարդարեն եկեղեցին<sup>1</sup>: Երևի կնոջ մահից հետո կորցնելով ամեն մի հույս, Սահակը ամուսնացրեց իր աղջկան Սամիկոնյան իշխաններից մկի հետ, որի անունն էր Համազասպ և որ, եթե հավատանք 10-րդ դարի հեղինակ Մեսրոպ Երեցին, Մուշեղ սպարապետի որդին էր<sup>2</sup>: Եթե միանգամայն վստահելի է այն աղբյուրը, որից Մեսրոպը քաղել է այս տեղեկությունը, այն ժամանակ կարող ենք կարծիք հայտնել որ Սահակը այս ամուսնությունը գարձյալ տոհմային քաղաքականության էր հետևում, քանի որ, ինչպես գիտենք, Սամիկոնյան սպարապետությունը միշտ Լուսավորչի տան և հունական ազդեցության հզոր կողմնակիցն է եղել: Համազասպի և Սահականույշի ամուսնությունից ծնվեցին հինգերորդ դարի հռչակավոր գործիչ Վարդան զորավարը և նրա եղբայրները:

Թե որքան մեծ էին Սահակի համար դինաստիական նկատառումները, ապացուցում է մասնավորապես այն, որ նա տոհմային շահերին զոհ բերեց նույնիսկ և Լուսավորչի տան հպարտությունը: Երբ Շապուհ Գ շքեղունեց նրա կաթողիկոսությունը իբրև ինքնագլուխ մի գործ խոսքով թագավորի կողմից, նա մի քայլ արավ, որի նմանը դեռ չէր արել ոչ մի հայ կաթողիկոս—անձամբ գնաց պարսից արքունիքը՝ իր գործերը շտկելու համար: Նրա միջնորդությունները Տիգրանում կատարյալ հաջողությամբ պսակվեցին, և Վոամ թագավորը նրան հաստատեց կաթողիկոս, նրա խնդիրքով Սամիկոնյան տոհմը բարձրացրեց նախարարական տների մեջ մինչև հինգերորդ տեղը, նրա փեսա Համազասպին սպարապետ կարգեց Սահակ Բագրատունու տեղ, վերջինիս մահվան պատճառով, նմանապես և թողություն շնորհեց Կամսարական և Ամատունի տոհմերին, որոնք, իբրև խոսքովի կողմնակիցներ, պատժված էին՝ զրկվելով իշխանական իրավունքներից<sup>3</sup>: Այս տոհմերը նույնպես Սամիկոնյանների և Լուսավորչի տան կողմնակիցներն էին:

Սահակի այս ճանապարհորդությունն արդեն ապացույց էր որ նա, իր հոր և պապերի համեմատությամբ, ավելի մեղմ և զիջող բնավորության տեր էր: Այսպես էին թելադրում և քաղաքական պայմանները: Հայ թագավորությունն արդեն երևույթական էր դարձել: Վոամշապուհը շուգեց ոչ մի փորձ անել իր վեհապետական իրավունքները պաշտպանելու համար: Սահակն առաջ նրան խնդրեց սպարապետությունն իր փեսային տալ, սակայն թագավորը, խրատված իր եղբոր օրինակից, շուգեց դժգոհության որևէ առիթ տալ պարսից արքունիքին և հրաժարվեց նույնիսկ սպարապետ նշանակելու իրավունքից: Այս բանը նա անում էր ամենայն հոգաբարությամբ: Սահակին խորհուրդ տվեց դիմել Վոամին, նույնիսկ ինքն էլ միջնորդական նամակ գրեց նրան: Այնպես որ հայոց թագավորն այժմ ներկայանում էր առ առավելն իբրև պարսկական մի գործակալ: Քաղաքական իշխանությունը գնալով թուլանում էր և Սահակը իր նախնիքներից տարբերվում էր նրանով որ ներքին անհամաձայնություններ չէր հարուցանում՝ այդ թույլ իշխանությունը ավելի ևս թուլացնելու համար: Պատմական աղբյուրները այլևս խոսք չեն անում այն մասին թե ինչպես կաթողիկոսը հանդիմանում էր թագավորին: Սահակը հաշտ մնաց Արշակունիների հետ մինչև վերջը, անշուշտ շատ լավ զգալով թե

1 Э. Гиббон, «История упадка и разрушения Римской империи», ч. III, М., 1884, гл. XXVIII.

2 Գրվում է և Մաժոտց, Մաշոտց («Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901, էր. 1, 9): Հետագա դարերի հեղինակներին (Մովսես Խորենացի) այս անձը հայտնի է Ահարոպ անունով:

3 Օրմանյան, «Ազգապատում», էջ 266:

1 Տեսիլը, որ հնարված է անշուշտ V դարի երկրորդ կեսում, մանրամասն պատմել է Ղազար Փարպեցին (էր. 29—37):

2 Մեսրոպ Երեց, «Պատմ. վարույց.» և այլն, էր. 218:

3 Խորենացի, Գ, ծա:



ինչ վտանգ է կախված հայ պետության գլխին: Եթե այլևս ոչինչ չէր կարելի անել քաղաքական թուլությունը բուժելու համար, պետք էր ամեն ջանք թափել գոնե ներքին ուժ ստեղծելու համար: Այսպիսի մի մեծ, ստեղծագործող աշխատանք ամենից շատ կարոտ էր խաղաղ ժամանակի, համերաշխության: Վոսմաշպուհն ու ս. Սահակը պատրաստեցին այսպիսի միջավայր, իսկ Մաշթոցին, որ միշտ մնաց վարդապետ, վիճակվեց ժամանակի մեծ խորհուրդն ըմբռնելու և նրա գործիքը դառնալու անմահական փառքը:

Տարոնի այս գլուղացին, ամեն հանգամանքներից դատելով, հասարակ ծագում ուներ. նրա ամբողջ տիրույթն էր «Որդի Վարդանայ», առանց ազնվականություն ցույց տվող որևէ բառի, որ նշանակում է զավակ «անազատ» անվանվող գյուղական դասակարգի: Քրիստոնեության ուսմկավար սկզբունքն էր, որ բարձրացրեց նրան հասարակական կարգի հատակից և հասցրեց մինչև գագաթը: Ներսես Մեծի բացած դպրոցներից մեկում ուսում առավ նա հունարեն լեզվով, ցույց տվեց զբաղված փայլուն ընդունակություն և հավանորեն մտավ նաև կաթողիկոսարանը, ուր ավելի ևս կատարելագործվեց, սովորելով նաև ասորերենն ու պարսկերենը: Կաթողիկոսարանից արդեն հետո չէր արքունիքը, և Խոսրովի թագավորության ժամանակ մենք տեսնում ենք հացեկցի երիտասարդին թագավորական պալատում՝ դիվանապետի կամ քարտուղարի պաշտոնով: Կարևոր էր այդ պաշտոնը, Մաշթոցի ձեռքով էին անցնում պետական գրագրությունները և նա ամեն հարմարություն ուներ, հմտանալով բոլոր գործերին, պետական մարդու ընդունակությունները զարգացնելու: Բայց տարոնացին այդպիսի կոչում չզգաց իր մեջ: Նրա վառվառն, միստիկ միտքը ձգտում էր դեպի ուրիշ գործ, դեպի ժողովուրդը, նրա մեջ գործելը, նրան դեկավարելը: Ամբոխն ուսուցանելու, դաստիարակելու հանձարեղ ոգին էր բնակված նրա մեջ:

Եվ, բնականաբար, թողնելով արթունիքը, նա դառնում է կուսակրոն հոգևորական, ընկնում է ժամանակի մեծ հոսանքի մեջ՝ մտնելով վանական միաբանության շարքերը, խստակյաց ճգնավոր է, ինքն իրեն տանջում է զրկանքներով, քարանձավների մեջ ապրելով, խոտ ուտելով, մի խոսքով անապատական կյանքի բոլոր շափազանցություններով<sup>1</sup>, բայց և այնպես, չէ կտրվում աշխարհային կյանքի հարցերից, ընդհակառակն, մոռանում է ճրգնավորական ինքնազսպման եսամոլ սկզբունքը, ամբողջ կարողությամբ նրվիրվում է իր կոչման: Անխոնջ քարոզիչ է, քրիստոնեության տարածման գաղափարով է ապրում: Հայ կյանքի մեջ երևան է եկել նորանշան մի միսիոներ: Հանձն է առնում դժվարին առաքելություններ, գնում է քրիստոնյա դարձնելու մեկը Հայաստանի արևելա-հյուսիսային այն ծայրագավառներից, ուր հեթանոսությունը դեռ պահվում էր համառորեն: Դա Գողթն գավառն էր, Սյունյաց լեռնաշխարհի հարևանը: Իր աշակերտներով շրջում է այդտեղ Մաշթոցը, քարոզչություններ է անում: Բայց անհաջող—խոսքի ուժը չէր ազդում և քարոզիչները պարզ տեսնում էին թե ինչու: Հայ եկեղեցին հայերեն լեզու չունի, սիրիական լեզվով էր աղոթում, գրքեր կարդում: Իսկ այդ լեզուն միանգամայն անծանոթ է մնում հայ ժողովրդի ահագին մեծամասնության, չնայած որ սիրիացի միսիոնները վաղուց էին աշխատում հայերի մեջ իրենց զբարոցներով, և Հայաստանի բաժանումից հետո պարսկական բաժնում արգել-

<sup>1</sup> Կորին վարդապետի Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ, Վենետիկ 1833, էր. 7:

վել էր հունական լեզուն, ուստի և միայն սիրիականն էր գործածականը զբարոցի և եկեղեցու մեջ: Եվ պետք է ասել որ Հայաստանը ջանքեր շատ էր անում իրեն այնքան խորթ սեմական լեզուն սովորելու համար: Երկրում բացված դպրոցներից աշակերտներ էին ուղարկվում Միջագետք լեզվագիտության մեջ հմտանալու համար, սակայն այս բանն ահագին ծախսեր ու դառն տանջանքներ էր պատճառում: Ղազար Փարպեցին իրավամբ անվանում է այդ բոլոր դժվարությունները, երկարատև դաժանելի ճանապարհորդությունները դեպի Միջագետք՝ «ասորի տանջանք»<sup>1</sup>:

Անբնական դրուժությունը, որ համարյա մի դարի շափ ծանրացած էր երկրի վրա, հանդիսանալով շատ հաճախ իբրև պատճառ նրա ներքին անկազմակերպության և հիվանդոտ թուլության, ավելի և ավելի անհանդուրժելի էր դառնում մանավանդ քաղաքական հոգեվարքի մեջ ընկնելուց հետո: Ս. Գրքից եկեղեցում մի կտոր հասկացնելու համար պետք էր գտնել սիրիական լեզուն իմացող մեկին, որ կարդար և ապա թարգմաներ հայերեն լեզվով: Եթե չէր ճարվում այդպիսի մի գիտցող, ժողովուրդը եկեղեցուց գնում էր առանց որևէ մի բան հասկացած լինելու, առանց որևէ հոգեկան միջթարություն ստանալու: Մաշթոցը հաճախ էր կատարում թարգմանի պաշտոնը, բայց ավելի և ավելի համոզվելու համար թե որքա՛ն ապարդյուն աշխատանք ու տանջանք էր այդ թե հոգևորականների և թե ժողովրդի համար: Օտար լեզվով խոսող էր այդ թե հոգևորականների և թե ժողովրդի համար: Պետք էր որ հայ եկեղեցին հայերեն խոսել սովորեր, պետք էր որ ժողովուրդը հայերեն լեզվով ս. Գիրք կարդար:

Այս պահանջն էր կանգնած հայ եկեղեցականության առջև և նրան էր որ ամենից առաջ տեսնում էր հայ երկիրը: Մաշթոցը շատ սուր կերպով պիտի զգար այդ պահանջը: Գողթնի մեջ նրան, ինչպես երևում է, չհաջողվեց խոսվածների և հերոսների երգերով, չէր կարող հեշտությամբ ընդգրկել արհեստական, աղքատ ու մուրացած մի պաշտամունք, և գավառի իշխանն էր Շարաթ անունով, որ աջակցություն ցույց տվեց նրան, անշուշտ գործադրելով կոպիտ ուժ, մի միջոց, որ, տարաբախտաբար, բոլորովին վտարված չէր Մաշթոցի միսիոններական գործունեությունից, բայց ծայրահեղ, իհարկե, դեպքեբում: Գոնե Կորյունը, նրա աշակերտն ու շերմեռանդ երկրպագուն, հիշատակում է մարաց կողմերը փախած դեկեր<sup>2</sup>, անշուշտ հեթանոս քուրմեր, ճիշտ ինչպես Ագաթանգեղոսի պատմության մեջ<sup>3</sup>:

Գողթնից Մաշթոցը վերադառնում է Արարատյան երկիրը, վերջացրած չըհամարելով այնտեղ իր գործը: Նա պիտի մի ուրիշ անգամ էլ գնար երգերի այդ գվարթ երկիրը, բայց զինված արդեն բոլորովին ուրիշ նվաճողական միջոցով: Հենց այդ միջոցի համար էր շտապում Սահակ կաթողիկոսի մոտ: Պետք էր հայերեն տառեր հնարել, հայերեն լեզվով քրիստոնեացնել երկիրը: Սահակն իր վարդապետի այդ հայտարարությունն ընդունում է մեծ համակրանքով, որովհետև հենց ինքն էլ այդ միևնույն մտքի վրա էր: Երկուսով գնում են խորհրդակցելու Վոսմաշպուհի մոտ և իմանում են որ թագավորը

<sup>1</sup> Եր. 16:  
<sup>2</sup> Կորին, էր. 8:  
<sup>3</sup> Նորագույն քննադատությունը Ագաթանգեղոսի թարգմանիչ (ավելի ճիշտ՝ խմբագրող) համարում է Կորյունին (Տե՛ս Նորայր Բյուզանդացի, «Կորյուն վարդապետ և նորին թարգմանությունը», Քիֆլիս, 1900):



ոչ միայն նույնպես զգացել է այդ անհրաժեշտությունը, այլև կարող է այդ ուղղությամբ նույնիսկ գործնական ցուցմունքներ տալ: Այսպես, Հաբել անունով մի հայ քահանայից թագավորն իմացել էր, թե սիրիացի Դանիել եպիսկոպոսը, հավանորեն առաջնորդ պարսկական Հայաստանի հարավային գավառներին (Աղձնիք նահանգի արևելյան կողմերում), որ սահմանակից էր Տարոն գավառին<sup>1</sup>, ունի հատուկ նշանագրեր հայոց լեզվի համար: Իսկույն Վահրիճ անունով մի պաշտոնյա ուղարկվում է Հաբել քահանայի մոտ և նրա միջոցով ստանում են դանիելյան նշանագրերը: Մեծ ուրախություն է պատճառում այս գյուտը: Վոսմաշպուհն իսկույն դպրոց է բաց անում, Մաշթոցը դառնում է հաջերենի ուսուցիչ, իսկ Սահակը պետք է ս. Գրքի թարգմանությունն սկսեր:

Երկու տարի գործում է այդ դպրոցը և նրա շուրջն աշխատողները վերջնականապես համոզվում են որ Դանիելի գրերը բավարար չեն հայ լեզվի համար, քանի որ չեն կարողանում արտահայտել նրա հնչական բոլոր բարդ ու ճոխ ձևերը: Անհաջողությունը, սակայն, չէ՛ վհատեցնում անխոնջ աշխատավորներին, այլ հաղորդում է նրանց վճռականություն և եռանդ՝ նոր և նոր ջանքերի ու փորձերի միջոցով իրենց նպատակին հասնելու համար: Ձևափոխվում է աշխատանքի ծրագիր, հայ միսիոներ-ուսուցիչն արդեն մանրամասն վերլուծության է ենթարկել հայոց լեզուն, գեղեցիկ կերպով ուսումնասիրել է նրա ձայնական օրենքները, առանձնահատկությունները: Բայց մարմնավորել այդ բոլոր աշխատանքը հաստատուն ձևերի մեջ, մշակել նրանց արվեստի և գիտության պահանջներին համաձայն չէր կարելի հայոց աշխարհում, որ այդպիսի մեծ կուլտուրական աշխատանքի համար հարմար միջավայր չէր: Անհրաժեշտ էր դիմել ժամանակի բարձր գիտության խորհուրդներին ու աջակցության: Եվ Մաշթոցը մի ճանապարհորդություն կատարեց այդ նպատակով իր մի քանի աշակերտների հետ, որոնցից հայտնի են երկուսի անունները— Հովհան Եկեղեցացի և Հովսեփ Պաղնացի<sup>2</sup>: Բայց ուղղել իր քայլերը ուղիղ դեպի Բյուզանդիոն կամ հունական քաղաքակրթության մի այլ խոշոր կենտրոն հայ որոնողը չէր կարող, քանի որ նա պարսկական Հայաստանից էր և իր գործը այնտեղ ապրող մեծ հայությանն էր հարկավոր առավելապես: Այստիպված եղավ նա հունական գիտությունը որոնել այնպիսի հողի վրա, ուր Սասանյանների կասկածամտությունն այնքան անհամբերող չէր: Այդպիսի մի տեղ էր հունական Հայաստանի հարավային սահմաններին կից այն երկիրը, որ մեր հին գրողները սովորաբար անվանում են Ասորիք (Սիրիա) կամ Միջագետք, անշուշտ այն պատճառով, որ եթե ամբողջ ազգաբնակչությունը սիրիական ծագում չունեն, բայց նրա մեծամասնությունը խոսում էր արամեական լեզվով: Մաշթոցը եղավ Եդեսիա քաղաքում, որ ինչպես գիտենք արդեն, հնուց շատ մոտիկ հարաբերություններ ուներ Հայաստանի հետ և մի խոշոր գաղթավայր էր հայերի համար: Այդտեղից անցավ Ամիդ քաղաքը, որ արդեն հունական Հայաստանի սահմանների մեջ էր: Բայց այս երկու քաղաքների սիրիացի եպիսկոպոսները չկարողացան օգնել Մաշթոցին իրենց խորհուրդներով, ուստի նա գնաց Սամոսատ քաղաքը, Եփրատի վրա, Եդեսիայից դեպի արևմուտք, Կիլիկիայի և Փոքր Հայքի սահմաններին մոտ<sup>3</sup>: Ահա այս անհայտ

<sup>1</sup> Պրոֆ. Մարկվարտ, «Պատմություն հայերեն նշանագրերու և վարուց Ս. Մաշթոցի», Թարգմ. Հ. Ա. Վարդանյան, Վիեննա, 1913, էր 44:

<sup>2</sup> Կարին, էր. 10:

<sup>3</sup> VII դարում մտնում էր Երրորդ Հայք նահանգի մեջ:

ու փոքր քաղաքին էլ վիճակվեց լինել ամբողջ հայության բարերարը՝ իբրև մի տեղ, ուր ձևավորվեց հայկական այբուբենը: Հոտփանոս անունով հույն ճարտար գծագրիչը, որ ապրում էր այդտեղ, Մաշթոցի աշխատակիցը հանդիսացավ և օգնեց որ նա ամբողջացնե իր գործը:

Բայց ի՞նչ էր այդ գործը: Հայ տառերի գյուտի մասին բավական տեղեկություններ են մնացել մեր հին գրականության մեջ, սկսած Կորյունից, որ հայերեն պատմական գրականության առաջին գործերից մեկն է համարվում: Սակայն բոլորն էլ մեծագույն մասամբ մոլթ ու դժվար հասկանալի ներբողականներ են: Ո՛չ ոք, ոչ նույնիսկ ժամանակակից Կորյունը, պարզ ու մեկին չէ պատմում մեզ թե իսկապես ի՞նչ էր Մաշթոցի արածը, ի՞նչ աշխատանքով հասավ նա իր նվիրական նպատակին: Այս պատճառով էլ հնուց ի վեր գյուտություն են ստացել տարբեր կարծիքներ: Շատերը կարծել են թե Մաշթոցը, դեռ դեռ իր Դանիելի նշանագրերը, ինքը հնարել է հայոց ամբողջ այբուբենը: Բայց այս միտքը այժմ պետք է համարել միանգամայն անընդունելի: Մաշթոցի կատարած ահագին գործը եղել է Դանիելի այբուբենի փոփոխությունը, լրացումը և կատարելագործումը:

Այս տեսակետից առանձին կարևորություն է ստանում դանիելյան այբուբենի հարցը: Ի՞նչ էր դա և ի՞նչպես էր անցել սիրիացի եպիսկոպոսին: Նորագույն հետազոտողներից ոմանք հենց իրեն Դանիելին են համարում այդ գրերի հեղինակ<sup>1</sup>: Բայց այս դեպքում անհասկանալի են մնում մի շարք հարցեր: Ի՞նչպես էր որ Դանիելը, այդպիսի մի մեծ գյուտ անելուց հետո, անգործ նստեց իր տեղը և միայն մի Հաբել քահանայի իմացրեց թե իր մոտ հայերեն տառեր կան: Հայ դպրության անհրաժեշտությունն այնքան պարզ կերպով էր զգացվում հայոց աշխարհի բոլոր կողմերում, որ Դանիելը մեծ համակրանք և աջակցություն կգտներ ամեն տեղ, մանավանդ թագավորի մոտ, եթե ինքն էլ հանդիսանար իր գյուտի ուսուցիչ: Եթե նա այնքան տարված էր հայ ազգի դաստիարակության հարցով, որ նույնիսկ այբուբեն էլ էր հնարում, պիտի տարվեր և իր գյուտի գործադրության, այն է դպրոցների բաց անելու մտքով: Մինչդեռ նա, Կորյունի պատմելով, կատարում է լոկ այն դերը, որ տալիս է իր մոտ եղած նշանագրերը և անհայտանում, նույնիսկ չէ մասնակցում այն փորձերին, որ կատարում էր Մաշթոցը Վոսմաշպուհի հիմնած դպրոցում: Մի այբուբենի հնարիչ ավելի մեծ ուղադրության և մեծ պատիվների կարժանանար, մինչդեռ Դանիելը երախտագիտական զգացմունքից թելադրված մեծաբանի և ոչ մի խոսք չունի նրա նշանագրերի մասին պատմող հեղինակների մոտ:

Կարելի է, ուրեմն, ավելի մեծ հավանականությամբ ենթադրել որ հայկական նշանագրեր գյուտություն ունեին հին ժամանակներից և նրանց ցուցակը գտնվում էր Դանիել սիրիացու մոտ պատահաբար: Մենք դեռ Արտաշեսյան հարստության ժամանակներից տեսանք որ հայ պետությունը չէր կարող առանց դպրոցական դաստիարակության զարգանալ, քանի որ մի երկիր էր դա, ուր բազմալեզու ցեղեր կային, որոնք հայացվեցին, պետական մի ամբողջության մեջ ձուլվեցին հատկապես հայերեն լեզվի միջոցով: Որ հայ ժողովուրդը պիտի ունենար իր գրականությունը, այդ թելադրում է ասել և նրա լայն տարածված ու ներքնապես զարգացած հեթանոսական պաշտամունքը: Եվ վերջապես նույնիսկ Կորյունն ու Ղազար Փարպեցին էլ շատ մոլթ ակնարկներով հիշատակում են «վաղնջուց» գյուտություն ունեցած հայկական նշանագրերը:

<sup>1</sup> Մարկվարտ, «Պատմ. հայ. նշան.», էր. 44:

Տույլատրելի է անգամ մտածել որ Մաշթոցը ընթր հնչյուններ հաղորդեց Դա-  
ճիկից ստացած գրերին, քանի որ առանց սիրիացի եպիսկոպոսին տեսնելու,  
առանց նրան աշակերտելու— մի բան, որ պիտի տեղի ունենար, եթե Դանի-  
լը լիներ տառերի հնարողը— գործածութեան մեջ մտցրեց այդ խորհրդավոր  
այբուբենը:

Սակայն, ինչ էլ եղած լինի, Մաշթոցը Սամոսատում ահագին աշխատանք  
գործադրեց իր ձեռքում ունեցած խեղճ և անկատար նյութը կենդանացնելու  
համար: Նրա պես մի ճգնավորին վայելում էր, իհարկե, հավատալ թե այդ  
ստեղծագործական ծայրահեղ լարվածությունը չէ կարող բարեհաջող երկուն-  
քով վերջանալ առանց երկնային զորութիւնների միջամտութեան, և այդ  
պատճառով էլ շարունակ աղոթում էր, տքնում էր, միստիկ տեսիլներով էր  
հափշտակվում և նրան թվում էր թե գերբնական էակներն են իրեն ղեկավա-  
րում, մատնացույց անում ձևեր և գաղափարներ: Այս անչափ բարձրացած  
տրամադրութեան թևերի վրա էր որ ստեղծագործական հանճարը, բազմաթիվ  
խուժ ու խոռոչներից անցկացնելով, տարավ հասցրեց խաղաղ աշխատանքի  
նավահանգիստը և այդ վարդապետը, վերջապես, կարող եղավ իր աշակերտ-  
ների հետ դրոշմել թղթի վրա, առաջին անգամ նորագոյտ տառերով, Սողո-  
մոնի գրքից թարգմանված հետևյալ տողը. «Ճանաչել զմասստութիւն և  
զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»<sup>1</sup>:

Վերածելով Մաշթոցի կատարած պատմական մեծ գործը շոշափելի օրի-  
նակների, մենք, ըստ պրոֆեսոր Մարկվարտի, ստանում ենք հետևյալ պատ-  
կերը: Դանիելյան տառերը, հետևելով ընդհանուր սեմական սիստեմին, աչից  
դեպի ձախ էին գրվում և շունեին ձայնավորներ: Մաշթոցը փոխեց տառերի  
ձևը, դարձնելով ձախից դեպի աջ գրվող, դասավորեց տառերը հունական այ-  
բուբենի կարգով, հնարեց ձայնավոր տառերը, կազմեց երկբարբառներ և առ-  
հասարակ վայելուչ ձև տվեց իր ստեղծագործութեան, որ այնուհետև ստացավ  
Մաշթոցյան կամ Մեսրոպյան տառեր անունը: Այս տառերի ձևերը ցույց են  
տալիս որ նրանք փոխ են առնված զանազան ազգերի այբուբեններից. գլխա-  
վորապես սիրիական, ապա հունական, պարսիկ-սասանյան: Կան և այնպիսի-  
ները, որոնց ծագումը ճշտել չէ կարելի<sup>2</sup>: Աշխարհի համարյա բոլոր այբուբեն-  
ները իրարից վերցրած ձևափոխություններ են: Այս կողմից էլ, ուրեմն, Մաշ-  
թոցյան այբուբենը բացառություն կազմող չէր:

Տարաբախտաբար, այս շափազանց կարևոր հանգամանքի մեջ հայկա-  
կան ժամանակագրությունը ցավալիորեն խախուտ է մնում և մենք չենք կա-  
րող հաստատապես ցույց տալ, թե որ թվին էր որ հայ ազգը տիրացավ կա-  
տարելագործված այբուբենի: Զանազան հաշիվներով այդ բախտավոր թվա-  
կանը գալիս է 403-ին, 404-ին, 405-ին, մինչև իսկ 406-ին, իսկ վերջին ժա-  
մանակներս հայ բանասերներից մեկը<sup>3</sup> ապացուցում է, որ Մաշթոցը Միջագետք  
պնացել է 412 թվականից ոչ առաջ և ուրեմն, հայ տառերի վերջնական ձևա-  
կերպումն ու գործադրությունը տեղի է ունեցել այդ թվականին կամ դրանից  
հետո:

Բայց այբուբեն ունենալը դեռ ամեն ինչ չէր: Նույնիսկ եթե ամենամեծ  
կատարելագործություններով օժտված լինի մի այբուբեն, բայց երբ նա մը-

<sup>1</sup> Կորին, հր. 10:

<sup>2</sup> Մարկվարտ, հր. 47—58:

<sup>3</sup> Գալուստ Տեր-Մկրտչյան, «Հայ գրերի 1500 ամյակի առթիվ», «Արարատ» ամսագիր,  
1912, № 5—6:

նում է անգործադրելի, մեռած մի դիակ է դառնում և անհայտանում է առանց  
օգուտ բերելու մարդկության: Մաշթոցի, Սահակի և Վռամշապուհի ամենա-  
մեծ երախտիքն էլ հենց այն է, որ նրանց անձնվեր աշխատանքի շնորհիվ Սա-  
մոսատի անմահական գոյուրը դարձավ դաստիարակության, գրականության  
գործիք: Թագավորն ու կաթողիկոսը համեստ վարդապետի առաքելությունը  
փառաբանեցին հայոց աշխարհում, փառավոր ընդունելություն ցույց տալով  
նրան, երբ վերադառնում էր Սամոսատից իր սքանչելի գյուտի հետ: Ժողո-  
վրդի մեծ բազմության գլուխ անցած՝ նրանք դիմավորեցին Մաշթոցին Վա-  
ղարշապատ մայրաքաղաքից դուրս, Ռահ գետի մոտ և ցնծութեան աղաղակ-  
ներով ու հոգևոր երգերով բերին քաղաք: Հայոց աշխարհը տոնում էր իր նոր  
բախտը: «Ճայնմ ժամանակի,— ասում է Կորյունը,— երանելի և ցանկալի  
աշխարհս հայոց անպայման սքանչելի լինէր»<sup>4</sup>:

Այլևս ժամանակ չկորցնելով, նա սկսում է եռուն, կենդանացնող աշխա-  
տանք: Հայ դպրոցի ոսկեդարն էր: Նա պետական հիմնարկություն էր, պետա-  
կան ընդարձակ կյանքի մի առաջնակարգ գործոն, որ դրված էր թագավորի  
հովանավորության տակ և որի գոյությունը ապահովում էին պետական մի-  
ջոցները:

Դպրոցական շարժման կենտրոնը Արարատյան երկիրն էր, ուր թագա-  
վորական ուստանում և այլ տեղերում բացված էին դպրոցներ ոչ միայն տե-  
ղական պետքերի համար. երկրի զանազան կողմերից երեխաներ էին գալիս  
և մտնում այդ դպրոցները: Նրանց հարկի տակ միախառնվում էին և հավա-  
սարվում դասակարգերը. այդտեղ առաջնակարգ իշխանը նստում էր անա-  
զատ շինականի կողքին՝ գիտություն սովորելու և նրա պաշարով կյանքի մեջ  
տեղ բռնելու համար: Քրիստոնեական կրոնի մտցրած ուսման վարական ոգին  
ավելի ևս ժողովրդականանում էր, ավելի ևս ամրապնդվում գործնական  
կյանքի մեջ: Սահակ կաթողիկոսը ամենից առաջ իր թոռներին էր բերում  
Մամիկոնյան տանից և մտցնում դպրոցի մեջ: Առաջին աշակերտներից էին  
Վարդան և Հմայակ Մամիկոնյանները, երկու եղբայրներ, որոնք հռչակվեցին  
հինգերորդ դարի առաջին մեծ ապստամբության մեջ իրրե նահատակ-  
ներ: Առաջիններից էր և Վահան Ամատունի իշխանը, նույն ապստամբական  
շարժման հերոսներից մեկը: Բայց որ ամենագլխավորն էր՝ հայ կինն էլ իր  
բաժինն ուներ հայ դպրոցի մեջ և նույնպես դաստիարակվում էր մայրենի  
լեզվով:

Դպրոցներ հիմնվում էին և հայոց աշխարհի ուրիշ շատ գավառներում:  
Նրանց հետ զուգակից էին և մենաստանները, որոնց թիվը, Կորյունի վկայու-  
թյամբ, շատ բազմացավ: Այդ վանքերում էլ, անշուշտ գտնվում էին դպրոց-  
ները, որոնց համար ուսուցիչներ պատրաստվում էին միաբանության ան-  
զամներից: Մաշթոցն այլևս մասնավոր ուսուցիչ չէր, այլ ընդհանուր կրթա-  
կան տեսուչ, որ շարունակ շրջագայություններ էր անում և ղեկավարում  
ուսումնական գործը: Սահակն էլ իր մեծ դերն էր ստանձնել այդ անօրինակ  
շարժման մեջ: Նա ցույց էր տալիս գրողի խոշոր և բեղմնավոր տաղանդ,  
թարգմանելով Աստվածաշնչի մասերը, ստեղծելով հայալեզու ծես, եկեղեցա-  
կան կարգ ու կանոն, հորինելով աղոթքներ, շարականներ: Այս բանի մեջ էլ  
Մաշթոցը նրա աշխատակիցն էր հանդիսանում և այդպիսով եկեղեցին ու  
դպրոցն ստանում էին իրենց գրականությունը մայրենի լեզվով, որ







Վրասն անմիջապես հարց ու փորձի կանչեց թագավորին և կաթողիկոսին: Տիգրանում բացվեց, դատաստան անվան տակ, մի խղճուկ կատակերգութուն: Պարսից արքունիքը ջանքեր գործ դրեց Սահակին կաշառելու համար: Անհուն հարստություններ—ոսկի, արծաթ, կալվածներ խոստացվեցին նրան: Խոստացան մինչև իսկ նրա թոռան, Վարդան Մամիկոնյանին, թագավորավայել դիրք տալ Հայաստանում: Բայց մեծ Պարթևն անդրդվելի մնաց: Նա արդեն պարզ տեսնում էր ամեն ինչ: Գիտեր որ ամեն ինչ նախավճռված վերջացած է նույնիսկ և իր վերաբերմամբ և բացեիբաց հրաժարվեց մասնակցել ամբաստանության, թեև առանձնապես չէր էլ պաշտպանում թագավորին: Եվ ավելորդ էլ էր պաշտպանությունը: Արտաշեսը բացատրություն տվեց իրեն վերագրված պակասությունների և մեղքերի վերաբերմամբ, բայց այդ բացատրությունը ոչինչ նշանակություն չունեցավ, որովհետև արդեն հաստատվճիռ էր, որ նա պիտի հեռացվի թագավորական գահից: Սահակը, ինչպես հավատացնում են հայ աղբյուրները, հրապարակով նույնիսկ անարդեց պարսկական կրոնը, որովհետև ասաց, որ եթե Արտաշեսին վերագրված արարքները հանցանքներ են քրիստոնեության տեսակետից, դրանց համար պատժողները պարսիկներ չպիտի լինեն, քանի որ այդ մեղքերը՝ անառակություն և այլն, առաքինություններ են պարսկական կրոնի տեսակետից: Այս համարձակ մերկացումը ոչինչ չէր փոխում ստեղծված դրություն մեջ, այլ միայն փութացնում էր արդեն պատրաստ դատավճիռը:

Ամբաստանողների թև ու թիկունքն էր Սուրմակ երեցը, որ ամեն տեսակ աղտեղի ցուցմունքներ տվեց արքայից արքայի առջև: Նախարարների վերջնական հայտարարությունը պարզեց դավադրության ամբողջ պատկերը: Նրանք ասացին Վրասին, թե իրենք այլևս ոչ մի թագավոր չեն ուզում: «Բնավ թագավոր պետք էլ չէ. պարսիկ մի իշխան կգա և մեզ վերակացու կլինի»<sup>1</sup>: Նրանց այլևս հարկավոր չէր և լուսավորչի տոհմը ու խնդրում էին, որ Սահակն էլ հեռացվի կաթողիկոսությունից, իսկ նրա տեղ նշանակվի իրենց քսու վկան, Սուրմակ երեցը: Պարսկական քաղաքականության ամենամեծ հաղթանակն էր երկու հարյուր տարվա մրցություններից և անհաջողություններից հետո: Ավատական կարգը, որ Հայաստանի ազգային ինքնամփոփ կուլտուրայի հիմքն էր կազմում, իր զարգացման և ուժեղացման արդյունքն էր բերում—պետական կործանում:

Վրամբ կատարեց նախարարների երկու խնդիրքն էլ (428): Արտաշեսը գահընկեց եղավ, Արշակունյաց թագավորությունը ջնջված հռչակվեց և նորոգողը հարստությունը պարսիկները հարթունիս գրավեցին: Հայերին այլևս երբեք չպիտի հաջողվեր մի համազգային պետություն ստեղծել:

Հայկական երկնակամարի վրա մարեց քաղաքական անկախության համեստ աստղը: Նրա տեղ հաստատված խավարի մեջ գահից իջնում էր և լուսավորչի տոհմի վերջին ներկայացուցիչը, որ արգելվեց Պարսկաստանում: Մի հատ նեցուկ էր մնում հաշտության համար կործանման աղջամուղջի մեջ—Սահակ-Մաշթոցյան գործը, որ և տարավ մեր երկիրը դեպի նոր հորիզոններ...

<sup>1</sup> Ղազար Փարպեցի, եր. 24:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԸ

Ա.

ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

	Ք. ա.
1. Արտաշես Ա . . . . .	190?—161?
2. Արտավազդ Ա . . . . .	161?—96?
3. Տիգրան Ա . . . . .	95—55
4. Տիգրան Բ Մեծ . . . . .	55—33
5. Արտավազդ Բ . . . . .	33—20
6. Արտաշես Բ . . . . .	20—6
7. Տիգրան Գ . . . . .	6—1
8. Տիգրան Դ և էրատոս . . . . .	

Բ.

ՆԱԻՆ ԺԱՄԱՆԱԿ

	Չ. 4.
9. Արիորարդան Մար . . . . .	2?—3?
10. Արտավազդ Գ Մար . . . . .	?—11
11. Տիգրան Ե Հրեա . . . . .	11—13
12. Էրատո թագուհի (երկրորդ անգամ) . . . . .	14—15
13. Վոսնո Պարթև . . . . .	15—17
14. Արտաշես Գ Պոնտացի (Ջենոն) . . . . .	18—34
15. Արշակ Ա Պարթև . . . . .	34—?
16. Միհրդատ վրացի . . . . .	35—51
17. Հուդամիդդ վրացի . . . . .	52—53
18. Տրդատ Ա Պարթև . . . . .	54—?
19. Տիգրան Զ Հրեա . . . . .	60—61

Գ.

ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԵՆԵՐԸ

20. Տրդատ Ա (երկրորդ անգամ) . . . . .	62—100
21. Աշխադար . . . . .	?—110
22. Պարթամասիր . . . . .	110—114
23. Վաղարշ Ա . . . . .	117—140
24. Սոյեմ . . . . .	140—162
25. Բակուր . . . . .	162—164
26. Սոյեմ (երկրորդ անգամ) . . . . .	164—169
27. Սանատրուկ . . . . .	190—196
28. Վաղարշ Բ . . . . .	197—215



29. Տրդատ Բ . . . . .	215—222
30. Խոսքով Ա (Արշակ) . . . . .	222—238
31. Տրդատ Գ? . . . . .	238—252
32. Արտավազդ Դ . . . . .	252—?
33. Տրդատ (Գ թե Դ?) . . . . .	276—314
	կամ 330
34. Խոսքով Բ Կոտակ . . . . .	338?—342
35. Տիրան . . . . .	342—350
36. Արշակ Բ . . . . .	350—367
37. Պապ . . . . .	368—374
38. Վարազդատ . . . . .	374—377
39. Արշակ Գ . . . . .	378—386
40. Խոսքով Գ . . . . .	386—389
41. Վոսմշապուհ . . . . .	389—414
42. Խոսքով Գ (Երկրորդ անգամ) . . . . .	414
43. Շապուհ Պարսիկ . . . . .	415—419
44. Արտաշես Դ . . . . .	422—428

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

ՔՐԻՍՏՈՍԻՑ ԱՌԱՋ

1330—1316. Ասորեստանում թագավորում է Սալմանասար Ա, որ առաջին անգամ տիրեց Հայկական Բարձրավանդակին (Նաիրիին):  
1108—1080. Քիզլաթպալասար Ա, որ արշավում է Նաիրի:

884. } Ասսուրնազիրպալի արշավանքները Նաիրի: Նաիրիի անկումը: Այս ավերիչ արշա-  
883. } վանքների հետեանքով ուժեղանում է Ուլարտուն:  
880. }  
867. }

860. Արամե թագավոր: Սալմանասարի առաջին արշավանքը նրա դեմ:

857 } Սալմանասարի երկրորդ և երրորդ արշավանքները Արամեի դեմ:  
844 }

832. Սալմանասարի չորրորդ արշավանքը: Ուրարտուի թագավորն է Սարգոնը:

825. Շամսի-Ռամմանի արշավանքը Ուրարտուի վրա:

780. Ուրարտուի մեջ թագավորում է Արգիշտի Ա, որ անընդհատ 14 տարի արշավանքներ է կատարում դեպի հյուսիս-արևելք, հարավ-արևելք և հարավ-արևմուտք՝ իր պետությունը մեծացնելու համար:

788 } Արգիշտի Ա-ի արշավանքներն Ասորեստանի դեմ:  
785 }  
784 }

743. Քիզլաթպալասար Գ-ի ճակատամարտը Արպազ բերդի մոտ: Ուրարտուի թագավոր Սարգուրի Բ մեծ պարտություն է կրում և հազիվ կարողանում է փրկել իր անձը:

722. Հեղափոխություն Ասորեստանում: Թագավորում է Սարգոնը:

719. Ապստամբական շարժումներ Մաննայի երկրում:

714. Սարգոնը հարձակվում է Ուրարտուի թագավոր Ռուսայի վրա Մաննայի երկրում և շարաշար պարտության մատնում նրան: Ուրարտուի անկումը:

520. Հայաստանը (Արմենիան) ապստամբված է պարսից Դարեհ Վշտասպա թագավորի դեմ: Չորս ճակատամարտեր ապստամբների և պարսից մեջ:

519. Ապստամբությունը Հայաստանում ճնշված:  
401—400. Քսենոֆոնի և նրա տասն հազար հույների նահանջը Հայաստանի վրայով (Սղեբդ—Բաղեշ—Մուշ —Ռուլանդիս —Ալաշկերտ —Ջուլա —Երևան —Գիլիջան —Հասան-Կալա—Կարին) դեպի Սև ծով:

331. Արթեմիայի ճակատամարտը: Ալեքսանդր Մակեդոնացին շարդում է պարսից բանակը, որի մեջ գտնվում էին և հայոց զորքերը: Արեմենյան թագավորության անկումը: Արևմտյան Ասիայում հաստատվում է մակեդոնական տիրապետությունը:

250. Արշակը հիմնում է Պարթևների հարստությունը Պարսկաստանի հյուսիս-արևելյան մասում:

230. Արսամես (Արշամ?) թագավոր հայոց, Փոքր Հայքում:

220. Արգիսարես թագավոր հայոց:

200. Քսերքսես թագավոր, նախընթացի որդին:

190. Մազնեսիայի ճակատամարտը. Սելևկյան թագավոր Անտիոքոս Մեծը շարաշար պարտություն է կրում հռոմեացիներից:

189. Ապստամբություն Հայաստանում. Արտաշեսը և Զարեհը անկախություն են հայտարարում:

163. Ազգամիջյան պատերազմ Արտաշեսի և Զարեհի մեջ:

165. Արտաշեսը պարտություն է կրում Սելևկյան թագավոր Անտիոքոս Դ-ից:

- 140. Տիգրան Մեծի ծնունդը:
- 95. Տիգրանը գահ է բարձրանում:
- 70. Տիգրանը վերջացնում է իր նվաճողական պատերազմները Արևմտյան Ասիայում:
- 69. Տիգրանակերտ մայրաքաղաքի կառուցումը: Լուկուլիոսը Հայաստանում: Տիգրանի սաստիկ պարտությունը և նահանջը դեպի Արտաշատ:
- 68. Լուկուլիոսի արշավանքը դեպի Արտաշատ, պարտությունը և նահանջումը դեպի Միջագետք:
- 67. Մծրինը պաշարված, գրավված և կողոպտված Լուկուլիոսի ձեռքով: Հռոմեական բանակի դասավորությունը: Լուկուլիոսը՝ մատնված կատարյալ անկարողության:
- 66. Պոմպեոսը հաղթում է Միհրդատ Պոնտացուն:
- 65. Տիգրանը Պոմպեոսի վրանում: Հայ կայսրության վերջը:
- 55. Տիգրանի մահը:
- 53. Հռոմեական զորքի (Կրասոսի հրամանատարությամբ) ահավոր պարտությունը Եփրատի մոտ, պարթևների ձեռքով:
- 36. Անտոնիոսը Հայաստանից արշավանք է սկսում պարթևների դեմ: Պարտություն և նահանջ:
- 34. Անտոնիոսը հայոց Արտավազդ-թագավորին և նրա ընտանիքը կալանավորում է և տանում Եգիպտոս՝ իր Կլեոպատրա սիրուհուն ընծայելու համար:
- 31. Անտոնիոսը Ալեքսանդրիայում գլխատել է տալիս Արտավազդ թագավորին:
- 20. Հայաստանում հռոմեական կուսակցության ձեռքով սպանվում է Արտաշես թագավորը:

**ՔՐԻՍՏՈՍԻՑ ՀԵՏՈ**

- 2. Գայոս Կեսարը Հայաստանում: Պարսկա-հռոմեական համաձայնություն:
- 10. Հայերի ապստամբությունը հռոմեական թեկնածուի դեմ:
- 14. Պարսկաստանից հալածված Վոնոնը փախչում է Հայաստան:
- 17. Գերմանիկոսի գալուստը Հայաստան: Արտաշես Պոնտացու (Ջենոնի) թագավորումը:
- 34. Արշակ Ա Պարթև թագավորում է Հայաստանում:
- 35. Միհրդատ Վրացին, Հայաստանի թագավոր, սպանվում է իր եղբորորդի Հուգամիդիցի, որ և թագավորում է նրա տեղ:
- 54—64. Տասնամյա պատերազմ պարթևների և հռոմեացիների մեջ՝ Հայաստանի համար:
- 60. Կորբուլոնը բարբարոսաբար հրդեհում և հիմնահատակ քանդում է Արտաշատը:
- 62. Պետոս զորավարը ամոթալի պարտություն է կրում պարթևներից ու հայերից Եփրատի հովտում:
- 63. Տրդատ Պարթևի ճանապարհորդությունը Հռոմ:
- 114. Տրայանոս կայսրը Հայաստանում: Նա հայտարարում է որս երկիրը հռոմեական մի պարզ նահանգ: Հայերն ապստամբվում են:

**ԱՆՀԱՅՏ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑՆԵՐ**

- 215. Անտոնինոս Կարակալլան գալիս է Հայաստան և կրկնում է Տրայանոսի փորձը: Հայերը ապստամբանում են դարձյալ ապստամբությամբ:
- 224. Պարթևական հարստությունը վերանում է Պարսկաստանում: Սկսվում է Սասանյան հարստությունը:
- 228. Արտաշիր Սասանյանի առաջին հարձակումը Հայաստանի վրա:
- 238. Սպանվում է հայոց խոսրով թագավորը:
- 252. Շապուհ Ա Սասանյանը գրավում է Հայաստանը:
- 276. (Ենթադրական) Տրդատ Գ-ի թագավորությունը:
- 280—290. (Ենթադրական) Քրիստոնեության մուտքը Հայաստան:
- 298. Կնքվում է քառամյա հաշտություն պարսիկների և հռոմեացիների մեջ:
- 308. Հուլիանոսը հայ հոեոտր Պրոերեսիոսը Աթենքում:
- 310. Գահ է բարձրանում Սասանյան Շապուհ Բ Երկարակյացը:
- 311. Առաջին կրոնական պատերազմը քրիստոնեության համար, որ մղեցին հայերը հռոմեացիների դեմ:
- 339. Շապուհ Բ հալածանքներ է սկսում քրիստոնյաների դեմ: Կոստանդ կայսրը գալիս է Հայաստան և վերահաստատում է խոսրով Կոտակին թագավորության մեջը:
- 347. Սպանվում է Հուսիկ կաթողիկոսը:

- 350. Ներսէս զորավարը կանչում է իր մոտ Տիրան թագավորին, կուրացնում է նրան և գերի տանում Պարսկաստան:
- 351. Կաթողիկոսական գահն է բարձրանում Ներսես Մեծը:
- 354. Առաջին եկեղեցական ժողով Աշտիշատում:
- 357. Շապուհի և Կոստանդ կայսրի մեջ տեղի են ունենում հաշտության բանակցություններ:
- 359. Շապուհը արշավում է հռոմեական երկրները: Ամիդ քաղաքի գրավումը և ավերումը:
- 360. Կոստանդ կայսրի տեսակցությունը Արշակ թագավորի հետ:
- 363. Հուլիանոս Ուրացոյն արշավանք է սկսում Պարսկաստանի դեմ և սպանվում է Քըլ-նամու բանակից արձակված նետից: Հովիանոսը, հաջորդելով նրան բանակում, շտապում է կնքել Շապուհի հետ հաշտություն, որ «ամոթալի» անունն է ստացել հռոմեական պատմագրության մեջ: Այս դաշնագրությամբ Շապուհն իրավունք էր ստանում ազատ գործելու Հայաստանում:
- 367. Արշակ Բ-ի սպանությունը:
- 368. Արտագերս բերդը պաշարում են պարսիկները:
- 369. Հայաստանի ավերումը Շապուհի ձեռքով: Պապը թագավոր է ճանաչվում կայսրի կողմից:
- 371. Հայ-հռոմեական պատերազմը պարսիկների դեմ: Զիրավի ճակատամարտը:
- 372. Ներսես Մեծի մահը:
- 374. Պապ թագավորի սպանությունը:
- 377. Մանվել Մամիկոնյանի պատերազմը Վարազդատ թագավորի դեմ:
- 381. Երկրորդ տիեզերական ժողով Կ. Պոլսում:
- 384. Հայաստանի բաժանումը Բյուզանդիայի և Պարսկաստանի մեջ: Երկու հատվածների մեջ հայ թագավորներ են նստում:
- 386. Հայոց թագավորության վերջը բյուզանդական Հայաստանում:
- 387. Կաթողիկոս է ընտրվում Սահակ Պարթևը:
- 403—412. (Ենթադր.) Հայոց տառերի գյուտը և կատարելագործումը:
- 414. Վոսմշապուհ ուսումնասիր թագավորի մահը:
- 415. Հազկերտ Ա Հայաստանում թագավորեցնում է իր Շապուհ որդուն:
- 428. Վերջ հայ Արշակունի թագավորության:

1. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» թվագրման հարցը հայագիտության ամենավիճելի հարցերից մեկն էր անցյալում:

Մի շարք ակնավոր բանասերների ջանքերով տիրապետող էր դարձել այն կարծիքը, որ «Հայոց պատմությունը» 7—9-րդ դարերի գործ է: Այս կարծիքը իր արտահայտությունն է գտել Լեոյի աշխատություններում:

Սակայն նորագույն ուսումնասիրություններում և առաջին հերթին Հայկական ՍՍՌ ԳԱ ակադ. Ստ. Մալխասյանի՝ «Խորենացու առեղծվածի շուրջը», Երևան, 1940, մենագրության մեջ հնարավոր եղավ վերականգնել գիտական ճշմարտությունը և վերահաստատել Մովսես Խորենացուն և «Հայոց պատմությունը» իրենց իսկական ժամանակը՝ 5-րդ դարը:

Որ Խորենացին 5-րդ դարի հեղինակ է, այդ երևում է նախ և առաջ բուն աշխատության մեջ հայթայթող տվյալներից, «Հայոց պատմության» մի շարք առանձնահատկություններից:

Կենսագրական կարգի տեղեկություններից երևում է, որ Խորենացին եղել է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ կաթողիկոսի աշակերտը և որ իր ուսումը նա շարունակել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում, որը 5-րդ դարում հին հունական մշակույթի կարևորագույն կենտրոններից մեկն էր: Խորենացու հմտությունը հեթանոսական Հունաստանի պատմության, դիցաբանության, փիլիսոփայության և գրականության հարցերում՝ մի կողմից, և չափավոր հունասիրության, մյուս կողմից, նրան բնորոշում են որպես 5-րդ դարի հեղինակ: Այդ նույնի մասին է ակնարկում «Հայոց պատմության» դասականության աստիճանին հասնող կատարյալ լեզուն:

Կողմնակի աղբյուրների վկայությունների համադրումից նույնպես եզրակացության կարելի է հանգել. վրացական հին գրականության և հայ միջնադարյան հեղինակների (Ղազար Փարպեցի, Անանիա Շիրակացի, Հովհան Օձնեցի և այլն) վկայություններից բխում է, որ Խորենացին 5-րդ դարի հեղինակ է:

Վերջապես, նախորդող մի քանի տասնամյակներում, «Հայոց պատմության» բազմաթիվ՝ առաջներում վստահություն չներշնչող, հատկապես հայ ժողովրդի պատմության հնագույն շրջանները արտացոլող հատվածների արժանահավատության և վավերականության փայլուն հաստատումը մի լրացուցիչ ապացույց է Խորենացու ու ժամանակի հեղինակ լինելու կարծիքի դեմ:

Սերբոսի «Պատմության» առաջին շորս գլուխների, այսպես կոչված Անանունի և այդ հատվածի առաջաբանի ճիշտ թվագրման հարցը ևս դրական լուծում է գտել հայագիտության մեջ: Եթե առաջաբանը պետք է վերագրել 5-րդ դարում գրված մի աշխատության, ապա Անանունը, այսինքն՝ վերահիշյալ գլուխները պատկանում են հավանաբար 11-րդ դարի մի հեղինակի գրչին, թեպետ նրա մեջ պահպանվել են նյութեր, որոնք 5-րդ դարից են գալիս:

Տե՛ս Ստ. Մալխասյանի հիշատակված աշխատությունը, ինչպես նաև Գ. Արզարյան, «Սերբոսի պատմությունը» և «Անանունի առեղծվածը», Երևան, 1965:—4:

2. Լեոն հաճախ գործածում է ռուսական, պարսկական, թուրքական Հայաստան ձևերը: Խոսքը Արևելյան և Արևմտյան Հայաստանի մասին է:—12:

3. Ուրարտական սեպագիր արձանագրությունների հայտնաբերման պատմությանը նվիր-

\* Մանթագրությունները պատրաստել է պատմական գիտությունների թեկնածու Գ. Տիրացյանը:

ված համառոտ, իր ժամանակվա համար ամբողջական ակնարկը հասկանալի պատճառներով ավարտվում է 1916 թ. Վանում՝ Ն. Մառի և Հ. Օրբելու կողմից հայտնաբերված Սարգուրի 2-րդի արձանագրության հիշատակումով:

Լեոյի «Հայոց պատմության» առաջին հրատարակությունից անցել է մոտ կես դար և այդ ժամանակամիջոցում ուրարտագիտությունը հարստացել է նորանոր կարևորագույն արձանագրություններով, որոնց մեծ մասը հայտնաբերվել է սովետական հնագիտության գործունեության ընթացքում: Սեանի ավազանից բացի, մեծ թվով արձանագրություններ են գտնվել Արարատյան դաշտավայրի ուրարտական կենտրոններում՝ Կարմիր-բլուրում, Արին-բերդում, Նոր Արմավիրում և այլ վայրերում, ուր հետազոտում տեղափոխված են եղել սեպագիր արձանագրություններ պարունակող քարերը: Հատկապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում Կարմիր բլուրում 1961 և 1962 թթ. գտնված Ռուսա 2-րդի (ն. մ. թ. 680—640) 10-ից ավելի լավ մշակված վեմերի վրա սրղմված արձանագրությունները, ինչպես նաև տարիների ընթացքում նույն տեղում հայտնաբերված կավե տախտակները, որոնց վրա գրված արձանագրությունները նոր լույս են սփռում ուրարտական պետության տնտեսական կյանքի մի շարք հարցերի վրա:

Ուրարտական արձանագրություններ են հայտնաբերվել նաև Քուրբեխյում և Իրանում:—17:

4. Ուրարտերեն լեզվի բնույթի, նրա ազգակցական կապերի մասին այժմ երկու տեսակետ կա: Ուրարտերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի ուսումնասիրումը լեզվաբաններին բերել է այն համոզման, որ այն ազգակից է Հին արևելյան մի այլ լեզվի՝ խուրիերենին: Այդ ազգակցությունը շատ սերտ է համարվում, բայց երկու լեզուների միջև գոյություն ունեցող տարբերությունները ցույց են տալիս, որ ուրարտերենը մի ինքնուրույն լեզու է, որը չի կարելի խուսիսի որևէ բարբառ համարել, ինչպես այդ անում են որոշ լեզվաբաններ:

Բայց և այնպես, երկու լեզուները՝ ուրարտերենը և խուրիերենը, մի ինքնուրույն, ալտադական կողմից լեզվախումբ են կազմում, որը հավասարապես հեռու է կանգնած սեմական և հնդեվրոպական լեզուներից: Ուրարտերենի բնույթի մասին եղած մյուս տեսակետի համաձայն, այդ լեզվի օրինաչափությունների ուսումնասիրությունը երևան է բերում ցեղակցական սերտ կապ հնդեվրոպական լեզվախմբի հետ:—20:

Տե՛ս N. Adontz, Histoire, d'Arménie, Paris, 1946, էջ 267—269, 272—274.

И. М. Дьяконов, Сравнительно-грамматический обзор хурритского и урартского языков. Переднеазиатский сборник. Москва, 1961, էջ 369—423.

Г. Б. Джаукян, Урартский и индоевропейские языки, Ереван, 1963, էջ 140—147.

5. Օժանդակ գիտությունների շարքում հիշատակված չէ հնագիտությունը, որի նշանակությունը պատմական գիտության համար հանրահայտ է: Այդ հավանաբար պետք է բացատրել հին պատմության տարբեր հարցերի շարադրման ընթացքում հնագիտական նյութի առատ օգտագործման հանգամանքով, որի հետևանքով Լեոն հարկ չի համարել հատկապես հիշատակելու ու առանձնացնելու հնագիտությունը օժանդակ գիտությունների շարքում:—22:

6. Երկրագնդի պատմության երկրաբանական պարբերացումը, ինչպես նաև այդ պատմության առանձին փուլերի տեղությունը, այժմ ավելի ճշտված է հատկապես նորագույն գիտատեխնիկական մեթոդների օգնությամբ, թեպետ ժամանակագրական հարցերում ուժի մեջ է մտնում ակնհայտ հարաբերականությունը: Այնուամենայնիվ, այսօր էլ դեռ պահպանվում է Լեոյի հիշատակած պարբերացումը միայն այն տարբերությամբ, որ վերջին փուլը այժմ համարվում է կայնոզոյանը (նոր կենդանականը), որը իր հերթին բաժանվում է երրորդական և չորրորդական ենթաշրջանների:

Ինչ վերաբերում է տարբեր փուլերի տեղությունը, ապա այն հաշվվում է հետևյալ կերպ. արխեոզոյանը (նախակենդանականը)՝ մոտ 1,5 միլիարդ տարի, պալեոզոյանը (հնակենդանականը)՝ մոտ 325 միլիոն տարի, մեզոզոյանը (միջին կենդանականը)՝ մոտ 115 միլիոն տարի, կայնոզոյանը (նոր կենդանականը)՝ 70 միլիոն տարուց ավելի, ընդ որում այդ փուլի մի՛ երրորդական ենթաշրջանին հասնում է 70 միլիոն տարի, իսկ մյուս՝ չորրորդականին՝ 1 միլիոն տարի:—24:

Տե՛ս Всемирная история, Москва, 1956, т. 1. էջ 18:

7. Մարդկային քաղաքակրթության հնագիտական պարբերացումը, որը առաջարկվում է ընթացողի ուշաբուրությանը, չի բավարարում ժամանակակից գիտության պահանջներին, նախ՝ այդ պարբերացման մեջ անտեսված է կարևոր մի շրջան՝ պղնձե դարը (էնեոլիթը),

որի տիրապետության ժամանակ Հին Արևելքում հանդես են գալիս առաջին պետությունները՝ Եգիպտոսն ու Շումերը:

Ծիշտ չէ պատկերված այս հիշատակված դարաշրջաններից ամեն մեկի տեղությունը: Այժմ ընդունված է հետևյալ պարբերացումը. քարե դարը, իր բոլոր ստորաբաժանումներով հանդերձ՝ 70000—5000 թթ., պղնձե դարը՝ 5000—3000 թթ., բրոնզե դարը՝ 3000—1000 թթ., և երկաթե դարը՝ 1000 թ.-ից այս կողմը:—25:

8. Հնագույն ժողովուրդների՝ շումերացիների, ակկադացիների, էլամի բնակիչների և եգիպտացիների ծագման հարցը այժմ էլ դեռ վերջնականապես լուծված չէ, բայց անկասկած է, որ այս հարցի պարզաբանման ուղղությամբ վերջին տասնամյակներում արևելագիտությունը զգալի շահով առաջադիմել է: Միանգամայն ակնհայտ է, որ ակկադացիները սեմացիներ են, և որ ակկադերենը պատկանում է սեմական լեզուների հյուսիս-արևելյան ճյուղին:

Շումերացիները ինքնուրույն մի ժողովուրդ են: Այդ ժողովուրդն է սեպագրի ստեղծողը, որը, ապա, անցել է սեմական ժողովուրդներին: Շումերացիներից մեզ հասել է հարուստ գրականություն, որը այժմ ընթերցված և ուսումնասիրված է: Շումերացիների լեզուն ոչ մի անշուկայն չունի մեզ հայտնի լեզվախմբերի հետ: Նրանց սեմացի կամ նեգրիտոս ցեղին ազգակից համարելը պարզապես թյուրիմացության արդյունք է:

Էլամցիները հավանաբար պատկանում են իրանական սարահարթի հնագույն բնակիչներին և նույնպես ոչ մի կապ չունեն նեգրիտոս ցեղի հետ:

Եգիպտոսը բնակեցված է եղել հին քարե դարաշրջանից սկսած: Համական ծագում ունեցող բնակչության սոցիալ-տնտեսական զարգացման օրինաչափ ընթացքը տարավ դեպի հին ևգիպտական պետության և քաղաքակրթության ստեղծումը: Ասիայից եկող գաղթականությամբ այդ երևույթների բացատրելու ամեն մի փորձ հիմքերից զուրկ պետք է համարել:—32:

9. Հին արևելյան ժողովուրդների հասարակարգի հիմքը առաջներում համարվում էր ֆեոդալիզմը: Այդ տեսակետը իրենց աշխատություններում պաշտպանում էին եվրոպական պատմաբանները, իսկ սովետական ժամանակաշրջանի առաջին տարիներին՝ նաև սովետական պատմաբանները: Ինչպես տեսնում ենք, այս տեսակետը որդեգրել է նաև Լեոն:

Սակայն, 30-ական թվականներին հին արևելյան հասարակությունների սոցիալ-տնտեսական կառուցվածքի հարցի շուրջ ծավալված դիսկուսիայում սովետական պատմաբանները նոր եզրակացությունների հանգեցին, որի հետևանքով վերագնահատման ենթարկվեց Արևելքում պատմության պրոցեսի նախկին ըմբռնումը:

Սովետական գիտնականները, ակադ. Վ. Վ. Ստրուվիի զլխավորությամբ, առաջ քաշեցին հետազոտում ընդհանուր ճանաչում գտած այն թեզը, որ հին արևելյան երկրներում տոհմա-հետազոտում կարգերի փլատակների վրա ծայր առավ ստրկատիրական հասարակությունը, որի մեջ, սակայն, ստրկությունն այնքան ուժեղ և կատարյալ զարգացում չունեցավ, ինչպես անտիկ Հունաստանում և Հռոմում:

Սովետական գիտնականները նորանոր ուսումնասիրություններով արժեքավոր ավանդ մըտցրին Հին Արևելքի ստրկատիրական հասարակությունների յուրահատկությունների բացահայտման գործում:—35:

10. «Պալատական հեղափոխություն», սպալատական ֆեոդալական հեղափոխություն» ձևակերպումները, որոնց հաճախ է դիմում Լեոն, վերաբերում են հին արևելյան պետությունների հանգիստը հաճախակի խախտող տարբեր տիպի հեղաշրջումներին կամ ապստամբություններին, որոնք նեղ, սահմանափակ բնույթ ունենին:—47:

11. «Քուրթուական դասակարգ», «բանվորական գրականություն» հասկացությունները, որոնք կիրառելի են նոր և նորագույն պատմության երևույթները բնութագրելիս, միանգամայն անհարիր են հին արևելյան հասարակարգի բնույթի, նրա առանձնահատկությունների հետ:—55:

12. Տե՛ս նախորդ ծանոթությունը:—56:

13. Ֆեոդալական կարգերի ժամանակ բոլոր ժողովուրդներին հատուկ կենտրոնախույս ուժերի դրսևորումները Լեոն հայ ժողովրդի պատմության մշտական գործոններից մեկն է համարում: Լեոյի մյուս բազմիցս արտահայտված տեսակետը վերաբերում է Հայաստանի ծայրագավառների և կենտրոնական գավառների միջև եղած իր կողմից շափազանցված տարբերություններին: Վերոհիշյալ գրություններից Լեոն հանգում է այն եզրակացության, որ Հայաստանը ընդունակ չի եղել կենտրոնացած պետություն ստեղծելու, որը հզոր լինի և այլն:



գործեցին նեստական կողմող հեթոթները, որոնք հնդեվրոպական ծագում ունենին: Ո՛չ հաթերը և ո՛չ էլ հեթոթները չեն ապրել Պաղեստինում, և առավելագույն չեն տարածվել մինչև Կասպից ծով և Պարսից ծոց:

Ճիշտ է, ն. մ. թ. 15-րդ դարից հետո հեթոթական պետությունը սկսում է պայթաբ իզուր-տուրի դեմ՝ Սիրիայի, Փյունիկի և Պաղեստինի համար, որոնք և նվաճվում են հեթոթների կողմից, բայց այստեղ հեթոթական բնակչություն չի հիշատակվում: Հեթոթական կայսրության անկումից հետո, 12-րդ դարում հյուսիսային Սիրիայում կազմավորվում են ուշ-հեթոթական մանր պետություններ:

Հայկական լեռնաշխարհում, հյուսիսային Միջագետքում և Ասորեստանի որոշ մասերում ապրում էին խուռիական ցեղերը:

Հայկական լեռնաշխարհի հյուս-արևմտյան մասերում հանդիպում են հնդեվրոպական լեզվախմբի՝ հին անատոլիական ճյուղին պատկանող հայասցիները: Իրանական սարահարթում, Մարաստանում և էլամում բնակվում էին լուլուբեացիները: Այս ամենը ցույց է տալիս, որ նըշված հսկայածավալ տերիտորիայում մի ընդհանուր ծագում ունեցող ժողովուրդ էր ապրում, այլ բազմաթիվ ցեղեր և ժողովուրդներ, որոնք իրարից տարբերվում են իրենց էթնիկական ծագումով:—178:

24. Ուրարտացիների բնիկ շինելու տեսակետը գալիս է գերմանացի գիտնական Լեման-Հաուպտից, որը պնդում էր, որ ուրարտացիները մուտք են գործել Հայկական լեռնաշխարհը ն. մ. թ. 2-րդ հազարամյակի վերջին, ընդ որում ուրարտացիները եկել են արևմուտքից, այն էլ իրենց հետ են բերել պատրաստի ձևավորված մշակույթ: Լեման-Հաուպտը հատկապես էր ընդգծում մի շարք ընդհանրություններ, որոնք նա նկատել էր, մի կողմից, ուրարտացիների և մյուս կողմից՝ հույների ու էտրուսկների միջև: Լեման-Հաուպտը նաև կոնկրետ կապեր էր տեսնում Լիկիայի և Ուրարտուի միջև և եզրակացնում այստեղից, որ ուրարտացիները եկել են Փոքր Ասիայի արևմտյան շրջաններից: Լեման-Հաուպտից ետ շնորհիվ նաև Պ. Կրեյմերը, որը իր ապացույցների համար ապարեզ ընտրեց լեզվաբանությունը: Մի շարք՝ այժմ կասկածելի համարվող՝ ուրարտական և փոքրասիական ու հունական համահնչուն տեղանունների և անձնանունների համադրման հիման վրա նա փորձեց հիմնավորել ուրարտացիների արևմուտքից գալու տեսակետը:

Ասորեստանյան արձանագրություններում պահպանված թանկարժեք վկայությունները ուրվագծում են ուրարտական պետության աստիճանական կազմավորման պատկերը դեռ ն. մ. թ. 13-րդ դարից սկսած, այսինքն՝ շատ ավելի առաջ, քան գաղթի տեսության կողմնակիցները ուրարտացիներին բերում էին Հայկական լեռնաշխարհ: Հայկական լեռնաշխարհ՝ ուրարտական մշակույթը պատրաստի, ձևավորված տեսքով ներմուծելու մասին տեսակետը ոչ մի քննադատություն չի դիմանում: Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկները զարգացնում էին իրենց մշակույթը հնագույն ժամանակներից և այն իր բարձր աստիճանին հասավ բրոնզի դարում, ուրարտական պետության անմիջականորեն նախորդող ժամանակաշրջանում: Առանց անտեսելու հին արևելյան քաղաքակրթության նշանակալից զարգացումը ուրարտական մշակույթի վրա, պետք է նշել, որ այն բազմաթիվ թելերով կապված է Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների բրոնզի դարի նյութական մշակույթի հետ:

Ուրարտուի և Փոքր Ասիայի ու Հունաստանի նյութական մշակույթի միջև գոյություն ունեցող ընդհանրությունները այժմ արդարև բացատրվում են Փոքր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի մշակութային ընդհանուր ատաղձով: Հունաստանի արխայիկ արվեստի որոշ բնագավառների՝ առճառաշինության, մետաղագործության ձևավորման գործում ուրարտական քաղաքակրթությանը հատուկ տեղ է հատկացվում: Վերջապես, պետք է ի նկատի ունենալ, որ ուրարտացիների ծագումը այժմ կապվում է խուռիների՝ առաջավոր ասիական մի հնագույն տեղաբնիկ ժողովրդի հետ, որի պատմությունը Մերձավոր արևելքում հնարավոր է վերականգնել 3-րդ հազարամյակից սկսած:—179:

Տե՛ս Բ. Բ. Пиотровский, Ванское царство, М.—Л., 1959, էջ 47—49, 121.

25. Ուրարտացիների խալդ անվանումը, որը ժամանակին առաջարկեցին Վ. Բելլը և Լեման-Հաուպտը, պետք է սխալ համարել: Չի կարելի բերել և ոչ մի փաստ, որը վկայեր, որ ուրարտացիները իրենց երկիրը կոչել են խալդիա, իսկ իրենք իրենց խալդեր: Ուրարտական արձանագրություններում խալդ անունը հանդես է գալիս բացառապես որպես աստծո անուն: Ուրարտացիները իրենց երկիրը անվանում էին Բիայնա, այն Ուրարտու էին կոչում ասորեստանցիները: Խալդ անվանումը ապացուցելու համար վերահիշյալ գիտնականները թույլ տվեցին մի այլ

սխալ: Նրանք անտիկ մատենագիրների մոտ հիշատակվող խալդայներին, համաձայն իրենց տեսության, նույնացրին ուրարտացիների հետ: Խալդայները և իրենց երկիրը անտիկ մատենագիրների տվյալները օգնության տեղադրվում են Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտյան մասում, Բարձր Հայքի և Փոքր Հայքի լեռներում: Այս երկիրը հայկական միջնադարյան աղբյուրներում կոչվում է Խաղդիք, բայց նույնացվում է ճանների կամ լազերի երկրի հետ և հետևապես վերացնում խալդայներին ուրարտացիների հետ նույնացնելու հնարավորությունը: Այդ տեսակետից նույնքան մեծ նշանակություն ունեն Թուսա 2-րդ ուրարտական թագավորի Եղբյուրի արձանագրության տվյալները, որոնք խոսում են Պոնտական լեռների շրջանում Խալդուսի երկրի նվաճման մասին: Միանգամայն պարզ է, որ Խալդուս-Խաղդիքը Ուրարտուից տարբեր մի մարզ էր, իսկ նրա բնակիչները՝ խալդայները, կապ չունեն ուրարտացիների հետ:—179:

Տե՛ս Բ. Բ. Пиотровский, նույն աշխ. էջ 118—119:

26. Ուրարտացիների գաղթած լինելու տեսակետի նման հեղհեղուկ է Արևելյան Հայաստանի ցեղերի եկվոր լինելու մասին կարծիքը: Գանձակի (այժմ Կիրովաբադ), Մասիսի ստորոտի և Գուգարի (Լոռվա ձոր և այլն) շրջանում հետազոտված դամբարանները խոսում են նրանց մեջ հայտնաբերված նյութերի ընդհանրության մասին, մի հանգամանք, որը շատ բնորոշ է Հայաստանի երկաթե դարի մշակույթի համար: Այստեղից, սակայն, չի կարելի կոհանել, որ այդ մշակույթի կրողները եկվորներ են, նույնիսկ եթե այդ դամբարաններն ու նյութերը թվագրվում են ուրարտական ժամանակով և միզուցի նման են ուրարտականներին:—180:

27. Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար 1-ի արձանագրություններում հիշատակված Նաիրյան երկրների ճշտված ցուցակը:

Տե՛ս Ի. Մ. Дьяконов, Ассирио-вавилонские клинописные источники по истории Урарту. Вестник Древней Истории, 1951, № 2, էջ 273:

Լեռյի մոտ բերված հաջորդ ցուցակը պատկանում է Շամշի-Ադադ 5-րդ (823—810) թագավորին: Սակայն այստեղ հիշատակված Նաիրի երկրները և իրենց իշխանները վերաբերվում են Մարաստանի լեռնային շրջանին: Ապացուցված է, որ «Նաիրի» տերմինը երբեմն ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհից դուրս ընկնող շրջաններ, տվյալ դեպքում՝ Ուրմիայի լճից դեպի հարավային կողմը ձգվող լեռնային շրջանները:—183:

Տե՛ս Ի. Մ. Дьяконов, նույն աշխ. էջ 301—302:

28. Ասորեստանյան և ուրարտական արձանագրություններում հիշատակվող Գայանի, Դիաուսիի՝ հայկական Տայք երկրի տեղադրումը որոշվում է այժմ բավականին ստույգ կերպով: Այդ արձանագրությունների հիման վրա այն տեղադրվում է Ճորոխ գետի հովտում: Գոյություն ունի նաև մի այլ տեսակետ, որի համաձայն այդ երկրի կազմի մեջ էր մտնում նաև այժմյան Էրզրումի շրջանը, քանի որ այնտեղ է, որ ուրարտական թագավորները Գայանիի հարկն էին ստանում և այնտեղ է, որ կանգնեցված են եղել ուրարտական արձանագրությունները Գայանի երկրի նվաճման մասին: Սակայն այս վերջին փաստերը հակասակի մասին են խոսում: Ուրարտացիները հարկը ստանում և արձանագրությունները կանգնեցնում էին սահմանամերձ, բայց ուրարտական տերիտորիայի վրա: Վերջապես դժվար է պատկերացնել, որ մի երկիր, ինչպիսին էր Դիաուսիի, տեղադրված լիներ երկու՝ եփրատի և Ճորոխի հովիտներում, որոնք բաժանված էին իրարից բարձր լեռնաշղթայով: Լեռնային շրջաններում ցեղային և պետական նախնական միավորումները ստեղծվում են սովորաբար բնական սահմաններում:—183:

Տե՛ս Գ. Ա. Меликишвили, Наир-Урарту, Тбилиси, 1954, էջ 16, 59—60 գրախոսական այս աշխատության մասին, Ի. Մ. Дьяконов, Вестник Древней истории, 1956, № 2, էջ 60.

29. Տեքստում ասվածը ճիշտ է միայն ժամանակակից Դիարբեքի շրջանում տեղադրվող Բիտ-Ջամանի երկրի վերաբերյալ, իսկ Շուպրիա և Ուրումե երկրները շարամեականացան, ինչպես այդ կարծում է հեղինակը: Այստեղ գոյություն ունի խուռիական հոծ բնակչություն, որի վրա հետագայում ավելացան հնդեվրոպական ծագում ունեցող ցեղերը:

Արամեական ցեղերը, որոնք գալիս էին Արարիայից, 2-րդ հազարամյակի երկրորդ կեսում և 1-ին հազարամյակի առաջին կեսում, մուտք գործեցին հյուսիսային Սիրիա և վերին Միջագետք, ընդհուպ մինչև Տիգրիսի հոսանքը:

Արամեացիները այստեղ կազմեցին իրենց իշխանությունները, որոնց դեմ կատաղի պայքար էին մղում Ասորեստանի թագավորները: Արամեացիների ձեռքը ընկան առևտրական տարանցիկ ուղիները, որոնք անցնում էին այս շրջաններով:—185:

Տե՛ս Գ. Ա. Меликишвили, Наир-Урарту, էջ 145—147.



30. Հիշատակված ուրարտական տեղանունների հայկական զուգադիպումները հնացած և և անընդունելի: Բերված մի շարք հայկական տեղանունները՝ Երևանը, Գառնին, ունեն իրենց ուրարտական ստույգ նախատիպերը:—186:

31. Ուրարտական աստվածների անունները կարելի է ստուգել Մենուա թագավորի ժամանակներից մեզ հասած այդ աստվածների ցուցակի օգնությամբ:—190:

Տե՛ս Գ. Ա. Меликишвили, Урартские клинообразные надписи, Москва, 1957, էջ 143—149.

32. Այս կարծիքը տարօրինակ է նույնիսկ Լեոյի «Հայոց պատմության» 1-ին հատորի տպագրման ժամանակների համար, քանի որ այդ տարիներին հայտնի էին Վանում գտնված ուրարտական աստվածությունների բրոնզե արձաններ, որոնք լիովին մարդակերպ էին: Նման արձանների թիվը այժմ բազմապատկվել է:

Հատկապես մեծ հռչակ է վայելում փոթորիկի և պատերազմի ուրարտական թեյլեբա աստծո արձանը բրոնզից, որը գտնվել է Կարմիր բլուրում պեղումների ժամանակ: Աստվածը պատկերված է մարտիկի նման, մի ձեռքում կացին, մյուսում՝ գուրգ: Հայտնի է նաև ուրարտական կին աստվածուհու բրոնզյա արձանիկը, որը գտնվել է Վանում և որը հավանաբար պատկերում է զլխավոր աստծո՝ Խալդիի կնոջը՝ Արուբանիին:

Ուրարտական մարդակերպ աստվածները հանդիպում են նաև մեղալիտների կամ քարերի վրա, բարձրաքանդակների ձևով:—191:

Տե՛ս Բ. Բ. Пиотровский, Ванское царство, Москва, 1959, տախտակ, № 1, նույնի Искусство Урарту, Ленинград, 1962, նկ. 46, 47, 48, 61 և այլն:

33. Սա նույն՝ 13-րդ դարի Սալմանասարը չէ, այլ 9-րդ դարի Սալմանասար 3-րդը (859—824):—194:

34. Գաղթելու մասին տե՛ս Ժաննեթ Զ: Ուրարտացիները հեթեթական ժողովուրդ չեն, թեպետ որոշ աղբյուրներ հնարավոր է պարզել այդ երկու ժողովուրդների միջև: Ուրարտացիները ազգակից են խուրիներին, հեթեթները հնդեվրոպական, եկվոր ժողովուրդ են:—205:

35. Լեոն ամենայն ուղարկությամբ է վերաբերվել Արևմտյան Հայաստանում, հատկապես Վանի միջնաբերդում և Քոփրակ-Կալեում, անգլիական, գերմանական ու ռուսական արշավախմբերի ջանքերով ձեռք բերված ուրարտական մշակույթը բնութագրող նյութերին: Սակայն այդ նյութերը միայն մի շնչին մասն են կազմում այն ամենի, ինչին մենք այժմ Ժաննեթ ենք վերջին տասնամյակներում ծավալվող հնագիտական աշխատանքների շնորհիվ:

Սովետական Հայաստանի տերիտորիայում տեղադրվող ուրարտական կարեորագույն կենտրոնների՝ Կարմիր-բլուրի (Քեյլեբայիսիի), Արին բերդի (էրբրունիի), Արմավիր-բլուրի և Նոր Արմավիրի (Արգիշտիհինիի) պեղումները ուրարտական նյութական մշակույթի ամենատարբեր քաղաքապետները լուսաբանող զգրագանցված նյութեր հայթայթեցին: Այդ նյութերը թույլ են տալիս բնորոշելու ուրարտական մշակույթը որպես ինքնատիպ և ստեղծարարական մղումով օժտված մի մշակույթ, որը բազմաթիվ թելերով կապված է Հայկական լեռնաշխարհի նախաուրարտական բնակչության բրոնզեդարյան քաղաքակրթության հետ:

Ուրարտացիների՝ հատկապես վերնախավի մշակույթի ակնհայտ աղբյուրները հին արևելյան քաղաքակրթության հետ կուլտուր-պատմական մեծ նշանակություն ունեն, քանի որ դրանով ուրարտական պետությունը Հայկական լեռնաշխարհում հին արևելյան մշակութային նվաճումների տարածող դարձավ:

Մեծ է ուրարտական քաղաքակրթության դերը ուրարտացիների անմիջական հետնորդների հայերի վաղ մշակույթի ձևավորման գործում: Վաղ-հայկական և հելլենիստական ճարտարապետությունը ու շինարարական տեխնիկան, մետաղագործությունը, կավագործությունը անխզելիորեն կապված են ուրարտական մշակույթի հետ:

Ուրարտական մշակույթը իր ազդեցության ոլորտի մեջ է առել նաև Հայկական լեռնաշխարհի դրսում զարգացող մի շարք քաղաքակրթություններ: Այսօր ընդհանուր ճանաչում գտած փաստ է, որ հին Պարսկաստանի, Աքեմենյան Իրանի մշակույթի քաղաքիչ մասերից մեկը կազմված է ուրարտական քաղաքակրթության բազմաթիվ տարրերից: Փոքր Ասիայի մի շարք երկրներ՝ Լիկիան, Փոյուզիան, Լիդիան սերտ կապերի մեջ են եղել ուրարտական մշակույթի հետ և ազդվել նրանից:

Հունական նյութական մշակույթի, ճարտարապետության և արվեստի վրա ներգործող արևելյան մշակույթների շարքում իր պատվավոր տեղն ունի Ուրարտուն:—212ա

Տե՛ս Բ. Բ. Пиотровский, Ванское царство, Москва—Ленинград, 1959, Кармир-блур, I, II, III, Ереван, 1950, 1953, 1955.

Գ. Ա. Տիրացյան, «Ուրարտական քաղաքակրթությունը և Աքեմենյան Իրանը», Պատմա-բանասիրական հանդես, 1961 թ., № 3:

36. Ուրարտագիտությունը զգալի շահով է առաջդիմել վերջին տասնամյակներում: Ասուրա-բաբելյան աղբյուրների թարգմանությունները, ուրարտական արձանագրությունների հավաքածուի հրատարակումը, հնագիտական պեղումները դյուրացրին Ուրարտուի պատմության գիտական շարադրանքը մեր օրերում:

Այնուամենայնիվ, իր հիմնական մասով, Լեոյի «Հայոց պատմության» Ուրարտուին վերաբերող բաժինը՝ մասնակի թերթություններով ու անճշտություններով հանդերձ, ուղարկության արժանի է և պիտանի ոչ շատ բծախնդիր ընթերցողի համար:

Անճշտությունների որպես օրինակ հիշենք ուրարտական թագավորների ցանկը, որի վերջում № 14-ի և № 15-ի տակ հիշատակված Իրկուա և Մենուա անունները աճելորդ են:— 244:

Մասնագիտական հարցերով հետաքրքրվողների համար հանձնարարելի են հետևյալ աշխատությունները՝

Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940 թ.,

Բ. Բ. Пиотровский, Ванское царство, Москва, 1959 г.

Գ. Ա. Меликишвили, Наир-Урарту, Тбилиси, 1954.

37. Հայոց լեզվի քերականական կառուցվածքի, ինչպես նաև բառապաշարի հիմնական ֆոնդի բնույթը վկայում է այն մասին, որ հայերենը հնդեվրոպական լեզու է: Դրա հետ մեկտեղ, սակայն, ակնհայտ է մի շարք տեղական լեզուների ազդեցության փաստը հայերենի վրա, հատկապես նրա բառապաշարի վրա:

Այս ազդեցության արդյունքները Ն. Մառը և նրա հետնորդները համարում էին հայոց լեզվի հավասարազոր, բաղադրիչ մասը, որը հնդեվրոպականի հետ միասին կազմում է հայերենի կորիզը: Սակայն հայտնի է, որ խառը լեզուներ գոյություն չունեն. այլ լեզուների խաշաձևման դեպքում մի լեզուն հաղթանակում է և պարտադրում իր բնույթը մյուսին:—248:

Տե՛ս Ա. Ա. Асмангулян, «Против гипотезы «двуприродности» армянского языка», «Вопросы языкознания», 1953, № 6, էջ 21—36.

38. Փոյուզիական ցեղերը երբեք Ասքանազյան շեն կոչվել: Ասքանազյան անվան տակ հասկացվել են սկյութական ցեղերը, որոնց վիճակվեց նշանակալից դեր խաղալ հին արևելյան երկրների կյանքում: Մի շարք գիտնականներ ենթադրում են նույնիսկ, որ սկյութական ցեղերը մասնակցել են Նինվեի գրավմանը և ասուրական պետության կործանմանը:

Սկյութական ցեղերը Ուրմիա լճի հարավում ստեղծել էին իրենց քաղաքական միավորումը: Եվ նրանց, այլ ոչ թե փոյուզիացիներին, կոչ էր արվում պալքարի ելնել Բաբելոնի դեմ:—251:

Տե՛ս Բ. Բ. Пиотровский, նշվ. աշխ., էջ 38, 116:

39. Արարատյան թագավորությունը, որը հիշատակվում է Երեմիա մարգարեի մարտահրավերի մեջ, կարող է նորաստեղծ հայկական թագավորությանը վերաբերվել, բայց աճելի հավանական է, որ խոսքը այստեղ ուրարտական պետության մասին է:

Երեմիա մարգարեի վերոհիշյալ մարտահրավերը պարունակող հատվածը թվագրվում է 592 թ.: Այդ թվին ուրարտական պետությունը դեռ կար, թեպետ հասել էին նրա գոյության վերջին տարիները: Այնուամենայնիվ, Լեոյի ենթադրությունը, որ հայերը 6-րդ դարի սկզբներին թագավորություն էին կազմել, ինքնին շատ հետաքրքիր է և հաստատվում է մի շարք փաստերով: Այդպես հույն պատմիչ Քսենոֆոնի «Կյուրոպեդիայի» և Մովսես Խորենացու վկայությունները համեմատությունից պարզորոշ երևում է, որ ն. մ. թ. 6-րդ դարում հայերը ունեին իրենց թագավորությունը և որ հայերի թագավորներն էին՝ Երվանդ Սակավակյացը և Տիգրան Երվանդյանը: Այդ թագավորությունը անընդհատ պալքար էր մղում Մարաստանի և սպա՝ Պարսկաստանի դեմ:

Հայկական լեռնաշխարհի և առաջին հերթին հայերի տերիտորիայում բնակվող ցեղերի ու ժողովուրդների սոցիալ-տնտեսական զարգացման պատմության ուսումնասիրումը նույնպես բերում է այն համոզման, որ ն. մ. թ. 6-րդ դարի սկզբներին արդեն կային բոլոր անհրաժեշտ նախադրյալները, որպեսզի ստեղծվեր հայկական պետությունը, իբրև արդյունք հայկական հասարակության հասունացման որոշակի աստիճանի: Վերջապես, հույն պատմիչ Կտեսիոս Կնիդացու անուղղակի տեղեկությունները Աքեմենյան տիրապետությանը նախորդած մի ինչ-որ հայ-

կական թագավորության մասին, հավանաբար նույնպես պետք է վերագրվեն հայկական 6-րդ դարի պետությունը:—251:

Տե՛ս N. Adontz նշվ. աշխ. էջ 336 և հաջորդ: Ի. М. Дьяконов, История Мидий, Москва—Ленинград, 1956, էջ 33—34, 42—44, 350—356.

9. Ա. Տիրացյան, «Երվանդունիները Հայաստանում», ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտություններ), 1958 թ., № 6:

40. Հայկական սատրապության հետ կապված մի քանի հարցեր ճշտման կարիք ունեն նորագույն ուսումնասիրությունների տվյալների լույսի տակ: Նախ նահանջող հունական բանակի երթուղու մասին: Կարողությունների երկրից հունական բանակը Քսենոֆոնի գլխավորությամբ մտել էր Հայաստան՝ անցնելով Կենտրիաես (Արևմտյան Տիգրիս) գետը, որը Հայաստանի հարավային սահմանն էր կազմում: Առաջ շարժվելով հյուսիս-արևմտյան ուղղությամբ, հույները անցել են Արևմտյան Տիգրիսի ակունքների մոտով: Այստեղից շարունակելով իրենց ճանապարհը, քանակը հասել է մինչև Տելեբոս գետը (Արածանիի ձախակողմյան վտակ Մեղրագետը): Ըստ երևույթին, արևելյան ուղղությամբ շարժվելով, հույները անցել են Արածանի անապատի մի կետով, որը հեռու չէր գետի ակունքներից: Այստեղից նրանք գնացել էին հյուսիսային և հյուսիս-արևմտյան ուղղությամբ մինչև Փապիս գետը, այսինքն՝ Արաքսի վերին հոսանքը: Միաժամանակ առաջ շարժվելուց հետո հույները հասել են տառիների երկիրը և ապա անցնելով մի շարք ցեղերի տերիտորիայով, ոտք դրել Տրապիզոն:

Նահանջող հույների կողմի նկարագրած ճանապարհը, հատկապես նրա մի հատվածը Մակուի, կոյի, Երևանի, Դիլիջանի վրայով, ոչ մի կապ չունի Քսենոֆոնի բնագրի հաղորդած տվյալների հետ:

Մյուս փաստը, որը ճշտման կարիք ունի, դա Հայաստանի Քսենոֆոնի օրոք գոյություն ունեցող վարչական միավորներին է վերաբերում: Քսենոֆոնը Հայկական լեռնաշխարհում հիշատակում է վարչական երկու միավորներ՝ մեկը Հայաստանն ընդհանրապես, մյուսը՝ Արևմտյան Հայաստանը: Այս միավորներից տերիտորիաները որոշվում են հետևյալ ձևով. Հայաստանը, որը, պատմիչի վկայությամբ, ընդարձակ մի երկիր էր, ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի հարավային և արևելյան շրջանները: «Արևմտյան Հայաստանը» իր հերթին իր մեջ էր ամփոփում Հայկական լեռնաշխարհի կենտրոնական, հյուսիս-արևմտյան և հյուսիսային շրջանները:

Լեոն տվել է այդ բաժանումների շափազանց պարզեցրած մի պատկեր, ընդ որում նա ենթադրում է, որ հայկական սատրապությունը բաժանված է եղել երկու՝ արևելյան և արևմտյան մասերի, այդ ձևով վարչական միավորների թիվը հասցնելով երեքի:

Այդ ոչ ճիշտ ենթադրությունից ելնելով, Լեոն գտնում է, որ Հայաստանը Քսենոֆոնի օրոք ունեցել է մեկ ընդհանուր սատրապ և երկու կառավարիչ: Սատրապը Օրոնտեսն էր, որի հայկական ձևը ոչ թե Հրանտ է, այլ՝ Երվանդ: Արևմտյան Հայաստանի կառավարիչը Տրիտրազոն էր՝ Արևելյան Հայաստանի կառավարիչ՝ Քսենոֆոնին չի հիշատակում, որովհետև այդպիսին չկար:—255:

Տե՛ս Ն. Ն. Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», Երևան, 1944, էջ 65:

9. Ա. Տիրացյան, «Երվանդունիները Հայաստանում», ԳԱ Տեղեկագիր (Հասարակատ.), № 6, 1958, էջ 61—65:

41. Սոմեխի անվան Ն. Մառի վերոհիշյալ բացատրությունը համոզեցուցիչ չի կարելի համարել: Ավելի հավանականը Գ. Խայթյանցի ենթադրությունն է, որի համաձայն Սոմեխի անունը առաջացել է Հայկական լեռնաշխարհի հնագույն Սուխմի երկրի անունից: Ըստ աստուրական և ինթական աղբյուրների, Սուխմի կամ Սուխմի երկիրը տեղադրվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասերում, Արևմտյան Եփրատին կից: Ուսումնասիրողների կարծիքով, հնագույն ժամանակներում այստեղ ապրում էին հայկական ցեղեր: Հյուսիսից՝ հարևան քարթվեական ցեղերը հայերին անվանեցին վերջինների զբաղեցրած երկրի անունով սոմեխներ:—258:

Տե՛ս Գ. Ա. Меликишвили, նշվ. աշխ., էջ 407:

42. Սլկունիների նախարարական տոհմի անվան վերջին ստուգաբանությունը համաձայն, արի բխեցվում է Սելեվկ հունարեն անվան ասորական վերաբարդությունից և այդ տեսակետից արտացոլում է Հայաստանի և Սելևկյան պետության միջև գոյություն ունեցող պատմական ուժ կապերը:—259:

Տե՛ս А. Г. Периханян, Древнеармянские востаники, Вестник Древней Истории, 1956, № 2, էջ. 53, ծանոթ. 1:

43. Հայ անվան ծագման վերաբերյալ Լեոն բերում է մի քանի տեսակետներ: Ըստ մի տեսակետի, որը առաջ է քաշել Եսսենը դեռ անցյալ դարում, հայ անունը բխեցվում է հաթ կամ հեթ անունից: Հնդեվրոպական արմենները նախքան Հայկական լեռնաշխարհը մուտք գործելը, միառժամանակ ապրել են հեթիթական երկրների մեջ: Երբ այդ ցեղերը երևան եկան Հայկական լեռնաշխարհում, տեղաբնիկները նրանց սկսեցին անվանել հաթեր, այսինքն՝ հեթիթների երկրների բնակիչներ: Լեզվաբանության օրենքների համաձայն, հաթ, հաթեր անունը դարերի ընթացքում վեր է ածվել հայերի անվան: Այս տեսակետը վերջերս նորից արծարծելու հիմնավորել է Ի. Մ. Դյակոնովը, տե՛ս նրա՝ «Խեթերը, փոյուզիացիները, հայերը» (ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (Հասարակական գիտություններ), 1956, № 11, էջ 57—80):

Հայ անվան ծագման վերաբերյալ մյուս տեսակետը, որ բերում է Լեոն, պատկանում է Ն. Մառին: Հայ անունը ծագում է Հենիոխ կամ Հանիոխ ցեղի անունից: Հայ անվան նման բացատրությունը, սակայն, համոզեցուցիչ չէ ո՛չ լեզվաբանական և ո՛չ էլ ընդհանուր պատմական տեսակետից: Հենիոխները մի ցեղ էին, որոնք հիշատակվում են անտիկ մատենագիրների կողմից որպես Սև ծովի արևելյան ափի բնակիչներ (ժամանակակից Սուխումի քաղաքի շրջանում): Ավելի վաղ ուրարտական ժամանակաշրջանում Իգանիեհի անվան տակ նրանք հիշատակվում են Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջաններում, Չայր լճի շրջանում:

Տե՛ս Գ. А. Меликишвили, К истории древней Грузии, Тбилиси, 1959, էջ 111:

Լեզվաբանական և պատմական երկերում պաշտպանություն է գտել հայ անվան ծագման վերաբերյալ մի երրորդ տեսակետ, ըստ որի այն պետք է բխեցնել Հայաստան երկրի անունից: Ինչպես հայտնի է, Հայաստան երկիրը տեղադրվում է Բարձր և Փոքր Հայքի տերիտորիայում, հիշատակվում է հեթիթական սկզբնաղբյուրներում 15—13-րդ դարերում որպես ցեղային միություն, և ըստ Գ. Ա. Ղափանցյանի, առաջնակարգ դեր է խաղացել հայ ժողովրդի կազմավորման գործում: Պատմագիտական այդպիսի նկատառումները, ինչպես նաև լեզվաբանական օրինակները հավանական են դարձնում նման հարցադրումը:—261:

Տե՛ս Գ. А. Капанцян, Хайаса—колыбель армян, Ереван, 1947:

Գ. Б. Джаукян, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964, стр. 63—68.

44. Հայ ժողովրդի ծագման գիտական ուսումնասիրության պատմությունը երկար զարգացում է ապրել:

Հնդեվրոպաբանության զարգացման սկզբնական շրջանում հայ ժողովուրդը համարյա թե կազմավորված վիճակում դրսից բերված էր համարվում: Հակահնդեվրոպական դպրոցը ժխտելով գաղթի ամեն մի հնարավորություն, իր ուշադրությունը սևեռեց Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների բուն պատմության վրա: Այժմ անկասկած է, որ հայ ժողովուրդը կազմավորվել է տեղում՝ Հայկական լեռնաշխարհում, ժառանգելով տեղաբնիկների մշակույթը, մարդաբանական տիպը և այլն: Սակայն հայոց լեզվի հնդեվրոպական բնույթը թույլ է տալիս պնդելու, որ հայ ժողովրդի կազմավորման գործում որոշակի դեր են խաղացել հնդեվրոպական ծագում ունեցող ցեղերը: Հայկական լեռնաշխարհը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից, հին քարեդարյան շրջանից սկսած: Իրար հաջորդող մշակույթները վկայում են տեղական բնակչության հարստության մասին: Ն. մ. թ. 3-րդ հազարամյակում, Հայկական լեռնաշխարհում հանդիպում են խուտիներին, որոնք հին արևելյան նշանավոր ժողովուրդներից էին: Նրանց ազգակից էին ուրարտացիները, որոնք 2-րդ հազարամյակից վկայակոչվում են հայկական լեռնաշխարհում: Այս երկու ժողովուրդները, որոնց լեզուները մի լեզվախմբին են պատկանում, կազմում են հայ ժողովրդի հիմնական առաջը:

3-րդ հազարամյակի վերջում Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասում հանդես են գալիս հնդեվրոպական ծագում ունեցող հայասցիները: 2-րդ հազարամյակի վերջում Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասում երևան են գալիս հնդեվրոպական այլ արմենական ցեղերը:

Այս երկու ցեղերը թափանցում են Հայկական լեռնաշխարհը, պարտադրելով իրենց հնդեվրոպական լեզուն տեղական ցեղերին: Հայասցիների և արմենների նշանակալից դերի մասին հայ ժողովրդի կազմավորման գործում վկայում են հայ ժողովրդի հայ և արմեն անունները, որոնք սերվում են այդ երկու ցեղերի անուններից: Խուտի-ուրարտական, ինչպես նաև մի շարք այլ-իրանական, քարթվեական ցեղերի ծուլման պրոցեսում 6—4-րդ դարերում ստեղծվում է հայ ժողովուրդը, որի լեզուն՝ հայերենը կապվում է հնդեվրոպական լեզվախմբի հետ, թեպետ տեղական

լեզուների խիստ աղչեցություն է կրել: Ինչ վերաբերում է մշակութիւն և մարդարանական տիպին, ապա հայ ժողովուրդը անխզելիորեն կապված է տեղաբնիկ հնագույն ցեղերի և ժողովուրդների հետ, որոնց օրինավոր ժառանգն է հանդիսանում նա Հայկական լեռնաշխարհում:— 262:

Տե՛ս Ս. Ե. Երեմյան, «К вопросу об этногенезе армян».

Вопросы истории, 1952, № 7, էջ 101—108.

Դ. Ա. Капанцян, նշվ. աշխ.:

Ի. Մ. Դյակոնով, «Ենթերը, փոյուզիացիները, հայերը»: ԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտություններ) 1956, № 11:

45. Հին հայ գինավորության մասին նման եզրահանգումների համար փաստերը անբավարար են: Նախ, պետք է ապացուցել, որ նահանջող հույների հետևողները հայեր էին և ոչ թե սատրապր զորքի վարձկաններ (խալիքներ, տառիներ): Քսենոֆոնը, որը այս տեղեկությունների հեղինակն է, որոշակի բան չի ասում այդ մասին: Նույնիսկ եթե հույներին հետապնդողները և ավարի համար վիճողները հայերը լինեին, այդ շատ շնչին փաստ է նման շտապ եզրակացության համար: Ն. մ. թ. 5-րդ դարի վերջին, երբ Քսենոֆոնը անցավ Հայկական լեռնաշխարհով, հայ գինավորականությունն ուներ արդեն մեզ հայտնի՝ աննվազն 200 տարվա պատմություն: Մարերի և բարելացիների հետ նա մասնակցել էր Նինվեի գրավմանը և Ասորեստանի խորտակմանը, իրագործել էր Հայաստանի ապստամբությունները մարական տիրապետության դեմ, մասնակցել կյուրոսի արշավանքներին հատկապես Բաբելոնի դեմ, իրագործել խոշոր ապստամբությունը պարսկական լծի դեմ Դարեհի օրոք, երբ միայն 5-րդ ճակատամարտում հնարավոր եղավ պարտության մատնել հայերին, մասնակցել Դարեհի և ապա Քսերքսեսի հունական արշավանքներին, իսկ Քսենոֆոնի օրոք՝ Կունաքսայի ճակատամարտին, որը ավարտվեց կյուրոս կրտսերի սպանությամբ:—265:

46. Հետևելով Ն. Ադոնցին, լեռն Աքեմենյան ժամանակաշրջանի Հայաստանի հասարակարգը տոհմատիրական է համարել: Սովետական պատմագրությունը, սակայն, իր զարգացման ընթացքում եկել է այլ եզրակացությունների այս հարցի մասին: Հայաստանը, ըստ վերջին ուսումնասիրողների, արդեն դասակարգային հասարակության փուլը թեև կոխած մի երկիր էր, որն ուներ պետական կազմավորում:

Քսենոֆոնի նկարագրած գյուղերը ոչ թե տոհմային կապերի վրա հիմնված միավորներ էին, այլ տերիտորիայով և տնտեսական բնորոշ հատկանիշներով միավորված գյուղական հասարակություն:

Հին հայկական հասարակությունը, նույն Քսենոֆոնի վկայությամբ, սոցիալական ընդգծված շիրտավորման պրոցես էր ապրում: Պատմիչը բազմիցս խոսում է հասարակության մեջ ձևավորվող վերնախավի՝ «Երևելի հայերի» մասին: Թագավորի որդիներից բացի հայտնի են մի քանի հայ զորավարներ և մեծատոհմիկներ: Մի քանի ակնարկներով երևում է ապա, որ դրամական տնտեսությունը ճեղքվածքներ էր առաջացնում Հայաստանի բնա-տնտեսության մեջ: Վերջապես իրագործական դինաստիայի գոյությունը, որի թագավորները իշխանությունը ստանձնում էին մտանգարար, վկայում է արդեն պետության առաջացման մասին նշված ժամանակաշրջանում, մի հանգամանք, որ միանգամայն անհարկ է տոհմատիրական կարգերի հետ:—268:

Տե՛ս Ս. Ե. Երեմյան, Основные черты общественного строя Армении эллинистической эпохи.

ԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտություններ), 1948, № 11, էջ 37—39.

47. Վերջին տարիների ուսումնասիրությունները ցույց տվեցին, թե ինչքան մեծ շարժված հայերի պաշտամունքները հին են և տեղական: Բացառված չէ, որ մի շարք աստվածությունների դրսից են բերված, բայց պետք է միշտ ի նկատի ունենալ, որ աստվածության անունը հաճախ կարող է փոփոխվել, բայց պաշտամունքը մնում է նույնը:

Ինչ վերաբերում է Արեգակին, Լուսինի և մյուս լուսատուներին, որոնք ըստ Լեոնի՝ բերվել են, դրանք տեղական պաշտամունքի հնագույն օրինակներ են, որոնց արտաքին անուններն են փոխվել միայն ժամանակի ընթացքում (Արեգակ-Միհր-Ապոլոն), պաշտամունքային բովանդակությունը մնալով նույնը:—269:

Տե՛ս N. Adontz, նշվ. աշխ., էջ 381 և հաջորդ էջերը:

Կ. Վ. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1964:

48. Հայաստանի պատմությունը վաղ հելլենիստական ժամանակաշրջանում շատ աղոտ է պատկերված: Բուն Հայաստանի մասին շնչին բան է ասվում, հայկական մյուս երկրների՝ Սոփթի ու Փոքր Հայքի մասին ասածն էլ խիստ անբավարար է:

Աքեմենյան կայսրության խորտակումը Ալեքսանդր Մակեդոնացու հարվածների տակ, ինչպես նաև Հայաստանի ներքին սոցիալ-տնտեսական զարգացումը նպաստավոր պայմաններ ստեղծեցին Երվանդունիների հայկական պետության ստեղծման համար 4-րդ դարի երկրորդ կեսում:

Այդ պետության գոյության կանգնած էր սրպես թագավոր Երվանդը (Օրոնտեսը)՝ Հայաստանի նախկին սատրապը: Երվանդունիների թագավորությունը ժառանգել էր հայկական սատրապության հողերը, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի մեծ մասը: Պետության մայրաքաղաքը Արմավիրն էր՝ ուրարտական քաղաք Արգիշտիհիսիլու տեղում՝ Արարատյան մայրաքաղաքը Արմավիրի թագավորությունը: Հայկական պետությունները ակտիվ մասնակցություն ունեցան Առաջավոր Ասիայի հելլենիստական պետությունների քաղաքական կյանքում:

Ն. մ. թ. 4-րդ դարի վերջերին, Ալեքսանդր Մակեդոնացու լայնածավալ կայսրության տերիտորիաների վրա առաջացած հելլենիստական միապետությունների առկայությունը բացասաբար անդրադարձավ Հայաստանի դրության վրա: Այդ միապետություններից Սելևկյանը ազդեցիկ քաղաքականություն էր վարում Հայաստանի նկատմամբ՝ փորձելով այն ենթարկել իրեն:

3-րդ դարի 1-ին կեսում Երվանդունիների հայկական պետությունը տրոհվեց երկու՝ արևելյան և արևմտյան մասերի: Արևելյան Հայաստանում, որի կենտրոնը շարունակվում էր մնալ Արարատյան դաշտը, 3-րդ դարի վերջին թագավորում էր Երվանդ վերջինը: Արևմտյան Հայաստանում ստեղծվեց Մոփրի և Կոմագենի միացյալ թագավորությունը, որի թագավորներն էին Սամսը, Արշամը, Քսերքսեսը:

Երկու պետություններն էլ ընդգրկվել էին հելլենիստական աշխարհի սոցիալ-տնտեսական վերելքի պրոցեսի մեջ:

Մեծ թափ է ստանում քաղաքաշինությունը: Կառուցվում են Երվանդաշատը, Արշամոշատը, Կարկաթեկերտը: Առաջանում են նոր դասակարգներ (Երվանդակերտ) և տաճառային տնտեսություններ (Բագարան), որտեղ ամենայն հավանականությամբ կիրառվում էր ստրակական աշխատանքը: Մեծ թափ է ստանում առևտուրը: Արմավիր քաղաքը միջազգային առևտրի տարանցիկ ուղիների խաչմերուկներից մեկն էր:

Սելևկյան աշխարհակալ պետության նվաճողական քաղաքականությունը Հայկական լեռնաշխարհում հանգեց այս հայկական պետությունների վերացմանը: Հայաստանում կարգվեցին սելևկյան ստրատեգոսներ՝ Արտաշեսը և Ջարեհը: Տե՛ս Ն. Ա. Ադոնցյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. 1-ին, Երևան, 1944: Գ. Տիրացյան, «Երվանդունիները Հայաստանում», ԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտություններ), 1958, № 6:—292:

49. Արարատյան դաշտը հայկական պետության կենտրոն էր դարձել դեռևս Արտաշես 1-ից շատ առաջ: Աքեմենյան կայսրության փլուզումից հետո, Ն. մ. թ. 4-րդ դարի երկրորդ կեսին, հայկական սատրապության տեղը ծնունդ առավ Երվանդունիների պետությունը, որը իր մեջ էր ամփոփում Հայկական լեռնաշխարհի մեծ մասը: Այդ պետության կենտրոնը Արարատյան դաշտն էր: Այստեղ էր գտնվում նաև մայրաքաղաքը՝ Արմավիրը: Ն. մ. թ. 3-րդ դարում, երբ Երվանդունիների միասնական պետությունը բաժանվեց երկու՝ արևելյան և արևմտյան թագավորությունների, Արարատյան դաշտը շարունակեց մնալ Արևելյան Երվանդունիների հիմնական տերիտորիան: Այստեղ Երվանդ վերջինի օրոք կառուցվեց մայրաքաղաք՝ Երվանդաշատը, ձևակերտ Երվանդակերտը և մի շարք այլ բնակավայրեր:—294:

50. Արտաշես 1-ի օրոք իրագործվող Հայկական լեռնաշխարհի միավորման բնույթը Լեոն Երշտ չի ըմբռնել: Տառաջիրոն հետևելով սկզբնաղբյուրի՝ Ստրաբոնի հաղորդած տեղեկություններին, նա այդ նշանակալից պրոցեսը պատկերացնում է որպես լուկ նվաճումների մի շարան: Այստեղից և այսպես կոչված ժայռագավառների մասին աշխատության մեջ տված ապակողմնորոշող բնութագրումները: Արտաշեսի օրոք Հայկական լեռնաշխարհի միավորումը միայն քաղաքական ակտ չէ, այլ արդյունք հայ ժողովրդի կազմավորման նոր փուլի, դասակարգային հասարակության հասունացման արգասիք: Կարճ ժամանակամիջոցում Արտաշեսը իր պետությանը միացրեց բազմաթիվ նահանգներ ու գավառներ, որոնք գտնվում էին հարևան պետությունների իշխանության տակ:

Նման արագությունը և հետևողականությունը իրագործվող միավորումը դժվար է պատկերացնել, եթե չընդունենք, որ հիշյալ նահանգներում և գավառներում հայկական տարրը վաղուց է վեր հաստատվել էր:

Երվանդունիների հայկական թագավորության օրերին՝ 4-րդ դարի երկրորդ կեսին, հայկական հողերի մի զգալի մասը մտնում էր այդ պետության սահմանների մեջ: Երբ քաղաքական անբարենպաստ պայմաններում այդ պետությունը թուլացավ և երկու մասի տրոհվեց, մի

շարք սահմանամերձ հոգեր անցան հարևան պետությունների տնօրինության տակ: Ահա այս հոգերն են, որ իրենց մեծ մասամբ հայկական բնակչությանը վերամիավորվեցին Արտաշեսի օրոք: Այս է այդ իրադարձության մեծ նշանակությունը:

Տե՛ս Գ. Ա. Տիրացյան, «Երվանդունիները Հայաստանում», ԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտություններ), 1958, № 6, էջ 70—71:

Գ. Խ. Սարգսյան, «Հայաստանը մ. թ. ա. 2-րդ դարում», ԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտություններ), 1965, №3, էջ 61.—295:

51. Հռոմի դիրքերից ելնող եվրոպական պատմաբաններից ոմանք աշխատել են ամեն գնով վարկարեկել Հռոմի հակառակորդներին: Այդ ձգտումը առավելապես ակնառու է դառնում հանրապետական Հռոմի քաղաքականությունը Արևելքում պատկերելիս, հատկապես միհրատյան պատերազմների օրերին: Այդ պատմաբանները, որոնց վրա մեծ ազդեցություն են թողել Բ. Մոմզենի տեսակետները, ոչ մի շանք չեն խնայել սեպտեմբերի Հռոմի ն. մ. թ. առաջին դարի երկու մեծ ախտանշաններին՝ Միհրատ Պոնտացուն և Տիգրանին, ինչպես նաև նրանց պաշտպանած քաղաքականությունը:

Հռոմեական զորավարներին ներկայացնելով որպես քաղաքակրթության պաշտպանների, Մոմզենը և իր հետնորդները Պոնտոսը և Հայաստանը պատկերում էին որպես կիսաբարբարոս երկրներ, իսկ նրանց միապետներին՝ արևելյան բռնապետներ:

Ակադ. Հ. Մանանդյանը իր հմտալից ուսումնասիրություններում հերքել է այս տեսակետը, ցույց տալով, որ Հայաստանը Տիգրանի օրոք արդեն հնամենի մշակույթով մի երկիր էր, որը պատաստ էր ընկալելու այն ամենը, ինչ առաջավոր է: Ակադ. Մանանդյանին հաջողվել է փաստացի տվյալներով ցույց տալ հելլենիստական մշակույթի զարգացման բարձր աստիճանը Հայաստանում և Պոնտում, ինչպես նաև այն, որ Տիգրանն ու Միհրատը փաստորեն հելլենականության ջատագույններ էին:—303:

Տե՛ս Հ. Մանանդյան, «Տիգրան 2-րդը և Հռոմը», Երևան, 1939:

52. Տիգրան 2-րդի թագավորության ժամանակի հայ ազնվականությունը որպես կալվածատեր-ֆեոդալներ դիտվել և ընդհանրապես արտաշեսյան պետության ֆեոդալական համարելու տեսակետը լայն տարածում գտավ հատկապես ն. Աղոնցի «Армения в эпоху Юстиниана» աշխատությունը լույս տեսնելուց հետո: Այս տեսակետը լուրջ պաշտպան գտավ նաև սովետական պատմագրության մեջ հանձին ակադ. Մանանդյանի: Սակայն հին Հայաստանի հասարակարգի բնույթի վերանայման ուղղությամբ, վերջին տասնամյակներում կատարված ուսումնասիրություններում նոր տեսակետ առաջադրվեց Հայկական ՍՍՄ ԳԱ ակադ. Ս. Տ. Սրեմյանի կողմից: Այդ տեսակետի համաձայն հայ ժողովուրդը ետուրարտական ժամանակաշրջանում թևակոխեց ստրկատիրական հարաբերությունների փուլը, որը, մ. թ. 4-րդ դարում, փոխարինվեց ֆեոդալական հարաբերություններով:

Հասկանալի է, որ ըստ վերոհիշյալ տեսակետի, Հայաստանը Տիգրան 2-րդի օրոք դիտվում է որպես ստրկատիրական պետություն: Պատմաբանների ձեռքի տակ եղած նյութը, հատկապես Հայաստանի քաղաքների, քաղաքային կյանքին, քաղաքաշինությանը վերաբերող փաստերը, որոնք լիովին ձայնակցում են ստրկատիրական մյուս պետությունների փաստերին, ինչպես նաև մի շարք վերնաշենքային տիպի երևույթներ, հավանական են դարձնում նման եզրահանգումները:—304:

Տե՛ս Գ. X. Саркисян, «Тигранакерт», Москва, 1960.

53. Թագավորի նախնիների և ապա հենց իրեն իշխող թագավորի պաշտամունքը, պետական-պաշտոնական ծավալով, ընդհանուր երևույթ էր հելլենիստական երկրներում: Հայաստանում նախնիների պաշտամունքի սկիզբը պետք է դնել 3-րդ դարը՝ Երվանդունիների օրոք: Կենդանի թագավորի պաշտամունքի սկիզբը կապվում է Տիգրան 2-րդի անձի հետ: Այդ մասին է վկայում Լեոյի հիշատակած Տիգրանի «աստված» մականունը, որը վկայակոչված է անտիկ մատենագիրների մոտ, ինչպես նաև Տիգրանի երկու դրամները, որոնց վրա դրոշմված է նույն մականունը: Նույնպիսի եզրակացությունների տեղիք է տալիս Տիգրան 2-րդի դրամների վրա պատկերված թագավորի դիմանկարը, որը ներկայացված է իդեալականացված դիմազմբով ինչպիսիք հատուկ են աստվածացված անձնավորությանը:

Թագավորի նախնիների և ապա իշխող թագավորի պաշտամունքն ունի նախ և առաջ քաղաքական նշանակություն: Այն կոչված է ուժեղացնելու միապետի հեղինակությունը պետության մեջ:—305:

54. Եվրոպական պատմագրության օրինակով Լեոն հաճախ ժամանակակից պատմության երևույթները բնութագրող ձևակերպումները կիրառում է հին պատմության մասին խոսելիս: Այդպիսի նման ձևակերպումների շարքին են պատկանում «Արևելյան հարց», «Հայկական հարց», որոնք հաճախ են հանդիպում հին Հայաստանի պատմությանը վերաբերող հատրում, թեպետ, ինչպես հայտնի է, նման ձևակերպումների օգտագործումը ընդունված է կապիտալիստական ժամանակաշրջանի պատմության և այն էլ հատկապես 19-րդ դարի պատմական երևույթներին անդրադառնալիս:—320:

55. Լեոն հաճախ է անդրադառնում աշխարհագրական դիրքից բխող հին հայկական պետության քաղաքական կողմնորոշման հարցերին, և այն բացատրում է մերթ հայերի եվրոպասիրությունները, մերթ հայ-պարթևական մերձակցությամբ:

Սակայն, որպես կանոն, հայկական պետության արտաքին քաղաքականությունը որոշվում էր օբյեկտիվ միջազգային քաղաքական իրավիճակից բխող գործոններով: Հռոմեական հանրապետության ու կայսրության և պարթևական ու սասանյան պետությունների միջև տեղի ունեցող մրցակցության պայմաններում հայ ժողովուրդը իր պետական անկախության համար մղվող պայքարի ընթացքում հաշվի էր առնում ուժերի հարաբերակցությունը և կողմնորոշվում դեպի սվյալ պատմական էտապում ավելի քիչ վտանգ ներկայացնող պետությունը՝ դիմադրելու համար իր ինքնուրույնության սպառնացող մյուս պետությանը:—321:

56. Թագավորական ընտանիքում եղբոր և քրոջ ամուսնությունը «տոհմային կազմի ավանդությունների» միայն հեռավոր արձագանքը չէ: Այն ընդունված և տարածված երևույթ էր հելլենիստական ստրկատիրական երկրների միապետների ընտանիքներում և այդ սովորությունը հանդիպում է ինչպես Սելևկյանների, այնպես և Պտղոմեոսականների տոհմում: Այդ սովորությունից անմաս չմնացին նաև Արտաշեսյանները, որոնց արքունիքի նիստուկացը շատ բաներում ընդօրինակում էր հելլենիստական մյուս պետությունների սովորությունները:—332:

57. Լեոն շատ է շահագնացում տարբերությունը Այրարատի և ընդհանրապես կենտրոնական նահանգների և այսպես կոչված ծայրամասային նահանգների միջև: Հին Հայաստանի նահանգների մեծ մասը միավորվել էր պետության կազմի մեջ դեռևս Երվանդունիների օրոք՝ ն. մ. թ. 4-րդ դարում:

Այդ նահանգների վերամիավորումը է՛լ ավելի հաստատուն հիմքերի վրա տեղի ունեցավ Արտաշես 1-ի օրոք, ն. մ. թ. 2-րդ դարում: Այդպիսով, բոլոր նախադրյալները կային, որպեսզի Հայաստանի նահանգների միջև եղած ընդհանրությունները գերակշռեն տարբերությունների վրա: Ամենամեծ ընդհանրությունը դա հայերեն լեզուն էր, որի համատարած լինելու մասին Հայկական լեռնաշխարհում փայլուն վկայություն է պահպանվել հույն աշխարհագիր Ստրաբոնի մոտ:—334:

58. Հին Հայաստանի հասարակարգի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունը առաջ է մղվել սովետական պատմաբանների ջանքերով: Գիտական շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ նոր նյութեր, իսկ հայտնի նյութերը՝ վերագնահատվել: Մենագրական ուսումնասիրության առարկա են դարձել հին Հայաստանի սոցիալական կյանքը լուսաբանող բազմաթիվ հանգուցային հարցեր: Այս բոլորի հետևանքով ստեղծվել է հին Հայաստանի հասարակարգի բավականին կոտ պատկեր, որ անկասկած կարող է փոփոխությունների ենթարկվել, բայց որը համընթաց է հայագիտության մյուս բնագավառների հաջողություններին: Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների տարբեր կողմերի, ասպեկտների հետազոտությունները հանգել են այն եզրակացության, որ այդ հասարակարգը կարելի է բնորոշել որպես ստրկատիրական, ճիշտ է արևելյան տիպի, որի մեջ գյուղական համայնքը մեծ դեր ունի խաղալու:

Այդ կողմերից ամենաէականն են հողային հարաբերությունները և քաղաքային կյանքը:

Թագավորական, նախարարական և տաճառային հողատիրության ձևերը, այն շափով, որ հնարավոր է դրանք բացահայտել սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների հիման վրա, մատնանշում են այդ տնտեսություններում ստրկական ուժի կիրառման վրա և դրանով վեր հանում հին Հայաստանի նյութական բարիքների արտադրողների մի կարևոր՝ ստրուկների խավը:

Հելլենիստական Հայաստանի քաղաքաշինության և քաղաքի ներքին կառուցվածքի մասին սակավաթիվ, բայց հույժ կարևոր վկայությունները խոսում են ստրկատիրական մյուս երկրների նման երևույթների հետ ունեցած ընդհանրությունների մասին և դրանով է՛լ ավելի ըմբռնել են դարձնում հին Հայաստանի հասարակարգի ստրկատիրական էությունը:—335:

Տե՛ս Գ. Խ. Սարգսյան, «Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղի-ները մասին», Երևան, 1962:

59. Գառնիի հիթանոսական տաճարի ուսումնասիրության արդյունքները անընդունելի են դարձնում տաճարի ոճի նման կատեգորիկ, միակողմանի բնութաչումները: Հոռոմեական ոճի ազդեցությունը պետք է վերագրել տաճարի բարձր հարթակը: Մնացածով, սյուների հոնիական ոճը, բառանկյունի սենյալը անպայման կապվում է հելլենիստական հարտարապետության հետ: Ուսումնասիրողները նույնիսկ մատնանշում են Փոքր Ասիայի հելլենիստական մի շարք կոնկրետ հուշարձաններ, որոնց մշակութային կապը Գառնիի տաճարի հետ ակնհայտ է: Տաճարի հելլենիստական բնույթը հատկապես ակնհերև է նրա բարձրաքանդակներում:

Սակայն նշված այս մշակութային աղբյուրներով չի սահմանափակվում Գառնիի տաճարի ոճը: Սովետական գիտնականները ուշադրություն դարձնում են վեր հանել նաև տեղական՝ հայկական տարրը, տաճարի ոճի մեջ: Հին հայկական ճարտարապետությունը, հատկապես հելլենիստական ժամանակաշրջանի, հասել էր բավականին բարձր աստիճանի, այդ պատճառով նրա մասնակցության հարցը տաճարի ոճային առանձնահատկությունների մշակման գործում օրինակ է:

Գառնիի տաճարում այն երևան է գալիս շինարարական տեխնիկայի, ինչպես և զարգացնողականների մի շարք առանձնահատկությունների մեջ:—352:

Տե՛ս К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, Москва—Ленинград, 1953.

А. А. Саинян, Гарни-Гегард, Москва, 1960.

60. Հայ-հոռոմեական մ. թ. առաջին դարերի հարաբերությունների մասին նոր նյութեր և տեսակետներ կարելի է գտնել հետևյալ աշխատություններում:—355:

Տե՛ս Հ. Հ. Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. 2-րդ, մաս 1-ին, Երևան, 1957:

К. В. Тревер, նշվ. աշխ.:

61. «Նախարար» տերմինի ամենահավանական ստուգաբանությունը տվել է վերջերս իրանագետ Վ. Հենինգը: Նախարարը ստուգաբանվում է որպես «նա, ով ունի իշխանություն, առաջին տեղը, պետ»: Այս տեսակետից հետաքրքիր է, որ պարթևական մի նորագույն արձանագրության մեջ նախարար տերմինը հանդես է գալիս աստիճան բառի հոմանիշ:—360:

Տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին (Երևան, 1962, էջ 9, ծանոթ. 1):

62. Հին Հայաստանում գյուղացիության ճորտացման ժամանակի վերաբերյալ Լեոյի պատկերացումը այժմ ընդունելի չի համարվում: Ֆեոդալիզմի վաղ շրջանում գյուղացիները ամբողջոված չէին հողին, բաց ընկել էին ֆեոդալից անձնական կախվածության մեջ: Ֆեոդալից կախվածությունը արտահայտվել է նրան տուրք վճարելու մեջ, և այդ տուրքատվության պարտավորությունն արդեն նրա անձնական ազատությունը դնում էր որոշ սահմանափակվածության մեջ:

9-րդ դարից այդ կախվածությունը աստիճանաբար խստացել է վերածվել է իսկական ճորտության, երբ գյուղացիները արդեն վաճառքի և նվիրատվության առարկա են դառնում, նրանց ամբողջում են հողին և աշխատում են զրկել ազատ տեղաշարժման իրավունքից: «Տուրքապարտությունը» վեր է ածվում ճորտության:—362:

Տե՛ս Հ. Մանանդյան, «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», էջ 182—189: Ս. Ե. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմությունը, Երևան, 1957, էջ 7, 9, 19, 49 և Ս. Պ. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դդ., Երևան, 1956, էջ 129—133:

63. Լեոյի կարծիքը Հայաստանում բղձիների և բղձիությունների հաստատման ժամանակի մասին. այն է Արտաշեսյան դինաստիայի սկզբում, այսինքն՝ Արտաշես 1-ի որոնք (ն. մ. 2-րդ դար), հետաքրքիր է և ուշադրության արժանի: Ինչպես հայտնի է բղձիների առաջացումը վերագրվում է ն. մ. թ. 1-ին դարին: Տիգրան 2-րդի արքունիքի նկարագրությունից, որը մեզ հասել է հույն մատենագիրների միջնորդությամբ, եզրակացնում էին, որ նրա օրոք է, որ կարգվել էին բղձիությունները: Սակայն, քանի որ այդ հիմնարկությունը առաջացել էր նաև միավորված պետության սահմանները պաշտպանելու պահանջից, ապա տրամաբանական է, եթե այն կապվի Արտաշեսի գործունեության հետ, երբ այդ միավորումը իրագործվեց:—369:

64. Որ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» միջնորդությամբ մեզ հասած հայ հին վիպասանության՝ Արտաշես թագավորին վերագրվող մի շարք գծեր կարող են Տրդատ 1-ին պատկանած լինել, ավելի քան հավանական է: Այդպես, օրինակ, ալանների արշավանքը, որը վիպասանության մեջ կապվում է Արտաշես 1-ի հետ, տեղի է ունեցել մ. թ. 1-ին դարի 70-ական թվականներին, Տրդատ 1-ի օրոք:

Ընդհանրապես պետք է ասել, որ Տրդատ 1-ի կերպարը որպես այդպիսին, մեզ չի հասել նրա գործունեության շատ կողմեր վերագրվել են նաև Վաղարշակ 1-ին, որը հանդես է գալիս որպես Արշակունիների դինաստիայի հիմնադիր Տրդատ 1-ի փոխարեն: Գառնիի հունարեն արձանագրության և անտիկ մատենագիրների տվյալների օգնությամբ է, որ վերականգնվում է Տրդատ 1-ի իրական պատմական դեմքը:—393:

65. Հայ ժողովրդի պատմության ն. մ. թ. 3-րդ— մ. թ. 3-րդ դարերի կամ, ինչպես ընդունված է ասել, Հայաստանի հելլենիստական շրջանի արվեստի և ընդհանրապես նյութական մշակույթի մասին ոչ շատ հեռավոր անցյալում կարելի է դատել միայն Գառնիի հիթանոսական տաճարի և Արևմտյան Հայաստանի դեռ անցյալ դարում հայտնաբերված մի քանի պատահական նյութերի հիման վրա:

Սովետական իշխանության տարիներին հանրապետության տերիտորիայի վրա ծավալվող հնագիտական պեղումները սակայն բազմաթիվ նոր հուշարձաններ բացահայտեցին, նկատելի կերպով հարստացնելով վերոհիշյալ դարաշրջանի նյութական մշակույթը և արվեստը բնութագրող նյութը: Այս տեսակետից հատկապես մեծ է Հայաստանի հնագույն ամրոցներից՝ Գառնիի և հնագույն քաղաքներից Արմավիրի հնագիտական ուսումնասիրման նշանակությունը: Այդ աշխատանքների շնորհիվ նոր լույս է սփռվում Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի նյութական մշակույթի և արվեստի բազմաթիվ, մինչ այդ անհայտ, կամ քիչ հայտնի բնագավառների վրա, ինչպիսիք են. ճարտարապետությունը (Գառնիի թագավորական դղյակը ընդունարանով, Արմավիր-բուրի գագաթին բացվող հելլենիստական տաճարը), ամրոցա-շինարարությունը (Գառնիի հույսկերտ պարիսպը), մոնումենտալ կերպարվեստ (Գառնիի խճանկարը), կոմունալ տեխնիկան (Գառնիի բաղնիքը), կիրառական արվեստները (խեցեգործություն, այդ թվում գունազարդ խեցեգործություն, ապակեգործություն, մետաղագործություն), արձանագործությունը (Գառնիի մարմարյա արձանը և ուրիշ տեղերից հայտնաբերված բազմաթիվ այլ արձանների զույգներ) և այլն, և այլն: Ի մի են բերվել և ուսումնասիրվել են հելլենիստական ժամանակաշրջանի այլ լեզուներով փորագրված արձանագրություններ՝ հունարեն, արամեերեն, լատիներեն, որոնք նույնպես հետաքրքիր նորություններ են հայթայթում հին Հայաստանի մշակույթի մասին:

Հարուստ և արժեքավոր նյութերի առկայությունը թույլ է տալիս նախ և առաջ բնորոշելու հայկական հելլենիստական մշակույթի բարձր մակարդակը, որը ետ չէր մնում հին Հայաստանի սոցիալ-տնտեսական նվաճումներից և քաղաքական վերելքից: Ապա հնարավորություն է ստեղծվում որոշելու հելլենիստական ժամանակաշրջանի հայկական նյութական և արվեստի մշակույթի տեղը Հայաստանի նյութական մշակույթի զարգացման մեջ և բացահայտել զգալի առնչություններ Հայաստանի նախորդ ժամանակաշրջանների հնագույն մշակույթի, ինչպես նաև հելլենիստական աշխարհի մշակույթի հետ: Երբ այս տեսակետից ենք մոտենում հուշարձաններին, ապա պարզվում է, որ հասարակ. շարքային նյութերը շատ բանում արտացոլում են հին Հայաստանի տեղաբնիկների տրագիցիաները, իսկ հասարակության վերնախավի՝ թագավորի ճաշակը սպասարկող նյութերը բազմաթիվ թելերով կապվում են հելլենիստական երկրների՝ առաջին հերթին Հայաստանի հարևան Սիրիայի և Փոքր Ասիայի մշակույթի հետ:—396:

Տե՛ս К. В. Тревер, նշվ. աշխ.:

Б. Н. Аракелян, Гарни, I, II, Ереван, 1951, 1956.

66. Հայ Արշակունիների երրորդ դարի պատմությունը բավականին խճճված է: Հատկապես ոչ բարձր վիճակում էր գտնվում այդ ժամանակաշրջանի հայ թագավորների ժամանակագրությունը, ինչպես նաև նրանց հաջորդականությունը: Տրդատ 3-րդի գահակալման և իշխանության մի շարք չպարզաբանված հարցեր ցայտուն օրինակ կարող են ծառայել այդ վիճակի համար: Մի շարք մասնավոր հարցերին նվիրված հետազոտությունների և հատկապես ակադ. Մանանդյանի կապիտալ աշխատությունների շնորհիվ այդ խնդիրները ստանում են բուրրովին նոր ու արժանահավատ լուսաբանություն: Հայ պատմագիրների ժամանակագրական և այլ շփոթումների հաղթահարման հղանակով ակադ. Մանանդյանը պարզել է, որ մ. թ. 3-րդ դարում Հայաստանում իշխել են հինգ թագավոր հետևյալ հաջորդականությամբ՝ Խոսրով 1-ին (198—216),

Տրդատ 2-րդ (216—252), Արտավազ (252—272), Խոսրով 2-րդ (272—287) և Տրդատ 3-րդ (298—330): Սրանով զգալի շարժում վերանում են Հայաստանի մ. թ. ա. 3-րդ դարի քաղաքական պատմության մի շարք խճճված հարցեր, հատկապես Տրդատ 3-րդի անձնավորության հետ կապված:—402:

Տե՛ս Հ. Հ. Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», Երևան, 1957, հ. 2-րդ, մաս 1-ին, էջ 73, 76, 90, 99—100, 114:

67. Քրիստոնեությունը նվիրված մասը ձգձգված է և շափից դուրս ընդարձակ, որի հետևանքով խախտվում է առաջին հատորի բաժինների միջև գոյություն ունեցող համամասնությունը Այն նույնպես հնացել է և չի բավարարում արդի գիտության պահանջները, ինչպես «քրիստոնեություն արևաշացման պատմական կոնկրետ պայմանների, այնպես էլ այլ հարցերի պարզաբանման տեսակետից:

Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, «О религии», Москва, 1955; И. Д. Амусин, Рыкописи Мёртвого моря, Москва, 1960, Ա. Ռոբեսոսն, Քրիստոնեության ծագումը, Երևան, 1964:—405:

Հարկ է նկատել, որ «Հայոց պատմություն» առաջին հատորի ստեղծման աշխատանքին Լեոն Դեոնարկել էր մոտ կես դար առաջ: Անցած ժամանակամիջոցում հայագիտությունը կուտակել է փաստական նոր, մեծ նյութ, ուսումնասիրել է հայ ժողովրդի պատմության մի շարք հանգուցային պրոբլեմներ: Նման պայմաններում «Հայոց պատմություն» առաջին հատորը բավականին հեռու է կանգնած ժամանակակից պատմագիտության պահանջներից: Գրված լինելով իդեալիստական պատմագիտության դիրքերից՝ առաջին հատորը անշուշտ չի կարող բավարարել հայ ժողովրդի պատմության հին շրջանի տարբեր հարցերի պատմական մատերիալիզմի դիրքերից լուսարանություն ակնկալող ընթերցողին:

Առաջին հատորը հնացած է հին Արևելքի պատմության և հնագիտության նվիրված մասում, ինչպես նաև Հայաստանի հնագիտական, վիճաբանական նոր աղբյուրների համեմատությամբ Վերջին մի քանի տասնամյակներում կատարյալ հեղաշրջում է կատարվել Միջագետքի, Փոքր Ասիայի և Արևելյան այլ երկրների հնագիտության բնագավառում, մի հանգամանք, որը արժատապես փոխում է մեր պատկերացումները հին Արևելքի պատմության վերաբերյալ: Նշանակալից են նաև սովետական հնագիտության նվաճումները Հայաստանում, որոնք օգնում են նոր տեսակետներից դիտել հայ ժողովրդի պատմության և նյութական մշակույթի մի շարք կարևորագույն հարցեր:

Շատ բան է փոխվել Լեոյի առաջին հատորի տվյալների համեմատությամբ հայ ժողովրդի պատմության հին շրջանի պարբերացման ասպարեզում: Սովետական պատմաբանները վեր են հանել և ուսումնասիրել ամբողջովին մի նոր շրջան, Երվանդունիների դարաշրջանը, երբ միավորվում է հայկական լեոնաշխարհը և միջազգային թատերաբեմ է դուրս գալիս հայկական պատմությունը:

Այս ամենով հանդերձ «Հայոց պատմություն» առաջին հատորի որոշ բաժիններ՝ Ուրարտուի Տիգրան II-ի, Արշակունյաց Հայաստանի պատմությունը, ամբողջովին չեն կորցրել իրենց արժեքը և կարգացվում են հետաքրքրությամբ, թեպետ այստեղ ևս անկասկած շատ սրբազորմաների և լրացումների կարիք ունեն:

Լեոյի հայ ժողովրդի պատմության առաջին հատորը կարելի է ասել անհրաժեշտ նախապայման և կարևոր փուլ հանդիսացավ հայ ժողովրդի իսկական պատմությունը գրելու ճանապարհին:

Լեոյի «Հայոց պատմություն» առաջին հատորում վերանայվել է հատկապես հին արևելյան անձնանունների, աշխարհագրական որոշ տերմինների և մի շարք անունների տառադարձությունը: Այս կապակցությամբ հիմք են ընդունվել հայագիտական, ինչպես նաև ուսական և եվրոպական արևելագիտական ժամանակակից աշխատություններում տարածված գտած ձևերը:

Ա

Ար 199	Ալարբիա 230
Աբահի 196	Ալադադ 122, 126
Աբարան 166, 221	Ալազան 335
Աբարայիտունի 196	Ալաման 165
Աբբիսա 226	Ալանաց դուռ 352
Աբգար 136, 415, 416, 427	ալաններ 296, 352, 357, 387, 588
Աբդանա 183	Ալանուհի 391
Աբդիսարես 291—292	Ալաշկերտ 16, 120, 123, 127, 137, 165, 256, 313, 477
Աբդուլահյան 17	Ալաշա 165
Աբեդյանը 164	Ալարոդ 163, 177, 179, 255
Աբեդյան 204, 270, 280, 388, 390, 391	Ալափարս 166
Աբխազիա 420	Ալբաս 183, 196
Աբրակի 185	Ալբադ 155
Աբրահամյան 248	Ալբանիա 334
Աբուսացի 223	ալբաններ 296
Աբուբու 199	Ալեյուս դաշտ 151
Ագաթանգեղոս 379, 379, 380, 382, 419, 421, 422, 505	Ալեան 161
Ագամեմոն 240	Ալեքսանդր Մակեդոնացի 6, 117, 139, 150, 257, 288—290, 291, 294, 327, 328, 337, 343, 354, 355
Ագուվարար 157	Ալեքսանդրերտ 178
Ագուլիս 158	Ալեքսանդրիա 9, 144, 290, 326, 329, 330, 412, 501
Ագունի 225	Ալեքսանդրապոլ (Լենինական) 13, 186, 220, 392
Ադադանու 183	Ալեքսանդր Սևերոս 400
Ադահի 183, 196	Ալզիրանի 186
Ադամակերտ 153	Ալզինիի 361
Ադամխան 12	Ալընջա 159
Ադարուտա 190	Ալթայան 30
Ադամ 199	Ալի 35
Ադրոն 338	Ալիշան 126, 129, 131, 134, 144, 149, 157, 159, 161, 271, 367, 380, 384, 471
Ադրուրի 208	Ալիս 167
Ադիա 190	Ալլուրիա 232
Ադիաբեն 243, 299, 301, 303, 347, 359	Ալլուս 125
Ադոնց 156, 260, 361, 366	Ալնիունա 211
Ադրամելիթ 234	Ալվար 164
Ադրբեջան 290	Ախալցխա, Ախալցխիս 121, 131, 163
Ադրիանոս 355	Ախալքալաք 162
Ազա 229, 230, 231	Ախթամար, Ադթամար 11, 124, 156
Ազամերունի 186	Ախուրյան 128, 129, 163, 165, 185, 220, 221, 474
Ազանի 186	Ակե 158
Ազատ 129, 166, 295, 434	Ակլ 151
Ազատ Մասիս 297	Ակկադ 23, 31—32, 34, 35, 39, 102, 212, 223
Ազնավորաց գերեզմանը 132	Ակն 126, 140, 167
Ազնվաց ձոր 151	Ակուրի 121, 165
Ազովյան ծով 242	Ակուանի 185
Ազորդացփոր 163	Ակշա 158
Աթանազիենա 439, 441, 448	
Աթանաս 381	
Աթենք 426, 451	
Աթշի 161	
Աթուրգինի 183	
Աժդահակ 284, 287, 389	
Ախաս 190	
Ադրամանիունի 186	



Ակցիում 329  
Ահամակհա 254  
Ահեկան 383  
Ահուրա-Մազդա 238, 254 372—375, 378, 397  
Ահրիման 372—373, 377, 379, 397  
Աղահեճը 159  
Աղանդոտ 158  
Աղբակ 152, 155, 158, 204  
Աղբիանոս 422, 425, 431, 442—483, 499  
Աղեղնավոր 100  
Աղի 249  
Աղիհովիտ 138, 154  
Աղիովիտ 138, 368, 455, 474  
Աղձնիք 148, 150—154, 155, 303, 370, 430, 431, 465, 466, 480, 496, 506  
Աղձնունիք 361  
Աղովիտ 157  
Աղվանդոտ 158  
Աղվանք 132, 144, 148, 160—161, 221, 265, 319, 327, 334, 362, 395, 420, 432, 480, 514  
Աղվե 161  
Աղստաֆա 162, 180, 221  
Աղստե 162, 334  
Աղրի-դաղ 121  
Ամադանա 187  
Ամադունի 361  
Ամահար 183  
Ամամպալ 183  
Ամաշա-Ապանդա 372  
Ամասիա 144  
Ամատունի 361, 433, 434, 435, 498, 503, 509  
Ամարաս 160, 433  
Ամբերդ 165, 221  
Ամեդ 185  
Ամիդ 53, 185, 460, 461, 506  
Ամատուրի 211  
Ամմիանոս Մարկելլինոս 445, 447, 459, 464, 465, 472—473, 476, 478, 483, 485, 486  
Ամու-Գարիա 143, 247, 478  
Ալգառք 155  
Ալինա 190  
Ալլի 155  
Ալժյաց բերդ 153  
Ալժձուկ 100  
Ալավանք 155  
Ալբարատ 126, 146, 148, 163, 164, 204, 205, 295, 334, 367, 471  
Ալրիվանք 166  
Ալրում 160  
Անահիտ 149, 153, 157, 308, 313, 328, 376, 377, 379, 382, 395, 396  
Անահտական գավ. 379

Անանիա Շիրակացի 287, 264  
Անապա 190  
Անգանու 226  
Անգեղ 151, 470  
Անգեղտուն 480  
Անգլիա, անգլիացի 8—10, 13, 18, 139  
Անգղ 165, 217  
Անդիարք 183  
Անդոկ, Անդովք 368, 435, 454  
Անդրկասպյան տափ. 27  
Անդրկովկաս 14, 15, 131, 144, 170, 236, 240, 242, 243, 278, 362  
Անգետինի 151  
Անընդմիջ 470  
Անի 85, 121, 149, 165, 170, 357, 378, 416, 463, 468, 498  
Անձախաձոր, Անձախիձոր 158  
Անձավացիք, Անձաացիք 157, 379  
Անձիտ 151, 480  
Աննիբալ 295  
Անհուշ 470  
Անտիարք 196  
Անտիոք 290, 294, 302, 306, 400, 412, 426, 461, 463, 477  
Անտիոքոս 293, 296  
Անտիտավրոս 119  
Անտոնիոս 326—330, 338, 339  
Անուշ 287, 389  
Աշխատար 354, 498  
Աշխեն 420  
Աշխուզա, Աշխուզաներ 242  
Աշմունի-իք 153  
Աշմուշատ 151, 349  
Աշնակ 165  
Աշոցք 166  
Աշպաշտատուկ 183  
Աշտարակ 165  
Աշտարակաց գյուղ 165  
Աշտիշատ 152, 379, 382, 419, 424, 480, 449, 451, 453  
Աշուրա 214  
Աշքուզա 251  
ատրաներ 292  
Ապահունի-իք 154, 444  
Ապարանից 154  
Ապարան 186  
Ապոլլոն 381  
Ապպիոս 306  
Աշարիա 162  
Առազաինի 186  
Առավելյան 498  
Առավենյան 498  
Առբերանի 157, 368  
Առիճ 165  
Առինճ 150  
Առյուծ 100, 149

Առնիս 190  
Առնոհոս 157  
Առոսպիթան 161  
Առվենից ձոր 154  
Առտեր 156  
Առուա 183  
Ասատի 183  
Ասարհարդոն 181, 234, 242  
Ասիա 3, 25—27, 28, 31, 32, 35, 38, 39, 41, 43, 99, 115, 117, 118, 124, 141, 142, 143, 167, 172, 176—178, 180, 188, 191, 193, 198, 203, 208, 222, 224, 233, 242, 243, 244, 246, 247, 249, 250, 296, 299, 300, 302, 303, 305, 315, 321, 327, 398, 400, 401  
Ասիական 8, 14, 15, 42, 43, 48, 68, 115, 116, 117, 289, 308, 316  
Ասղոնք 153  
Ասյացիոր 163  
Ասպակունիք 152  
Ասպուրակ, Ասպուրակես 499  
Ասրեստան, ասրեստանցիներ 3, 10—11, 19, 20, 37, 43, 44, 46, 48, 49, 52—54, 71, 77, 87, 94—96, 109, 112, 138, 142, 150, 173, 177—180, 181, 182, 183—185, 187, 188, 189, 191, 192—196, 197, 198, 200—201, 203, 205, 206, 209—210, 211—213, 214—216, 217, 221—232, 233, 234, 242—243, 253, 254, 272—274, 283, 287, 299, 303, 347, 376, 380, 441, 467  
Ասորիք, ասորիներ 49, 50, 96, 185, 210, 217, 224, 302, 380, 387, 506  
Ասուր, Ասուրա 37, 46, 53, 189, 196, 197, 199, 200, 201, 207, 208, 230, 232, 238  
Ասսուրբանիպալ 10, 87, 105, 181, 234, 242—243  
Ասուրդա 187, 226  
Ասուրիա 195, 196  
Ասսուր-դան 222  
Ասսուր-Գանիլ 53  
Ասսուրհարդոն 181  
Ասսուրնազիրպալ, (Ասսուրնազիրպալ) 53, 183, 188, 189, 198—199, 202—203, 206  
Ասսուր-Նիրարի 224  
Աստանիա 231  
Աստարա 120  
Աստիազ 284  
Աստիանի 150  
Աստղաբերդ 153  
Աստղիկ 30, 153, 281, 380, 381—382, 395  
Աստվածաշեն 14  
Աստվածաշունչ 3, 4, 23, 28, 29, 48, 129, 177, 204, 234, 256, 509

Աստվածընկալ 166  
Աստուրյան 296, 309, 313, 316, 318, 319, 330, 430, 438, 443  
Ասրանազյան 251  
Ավալա 167  
Ավան 166, 463  
Ավարայր 158  
Ավգոստոս 330  
Ավեստա 376  
Ավեստարան 410, 411, 459  
Ավիտուսի 164  
Ավինիկ 164  
Ավտիլարա 254  
Ավրեիլոս 356  
Ատատ 498  
Ատրինի 190  
Ատոկուն 199  
Ատոմ Մոկացի 511  
Ատրոպատեն 290  
Ատրպատ կամ Ատրոպատ 290  
Ատրպատական 119, 145, 148, 153, 155, 160, 166, 290, 292, 293, 295, 301, 327—328, 330, 337, 339, 343, 347, 352, 400, 444, 457, 467, 468  
Ատրանան 187  
Արա 190, 259, 260, 283  
Արար 324, 401  
Արարիա 26—28, 32, 118, 337  
Արազած 13, 121, 163, 165, 170, 186, 221, 454, 468  
Արազածոտն 165, 221  
Արազուս 334  
Արազվա 296, 334  
Արազաս 190  
Արաիդ 231  
արալեզներ 284  
Արալ-Կասպյան տափարակ 27  
Արախ 255  
Արածանի 123, 125—128, 133, 135, 142, 151, 152, 153, 165, 182, 185, 196, 198, 204, 205, 207, 208, 213, 214, 227, 252, 255, 256, 263, 266, 271, 291, 313, 314, 346, 363, 370—371, 421, 477  
Արահեղ 163  
Արամ 260, 283  
Արամազդ 378, 380, 381  
Արամալի 208  
Արամանա 165  
Արամե 203, 205, 206, 228, 245, 260, 283  
Արանա 187, 226  
Արարադ 204  
Արարատ 5, 13, 15—17, 30, 120, 177, 187, 204—205, 234, 237, 248, 262, 390, 415, 508  
Արարատյան դաշտ, երկիր, նահանգ 13, 31, 121, 129, 135—139, 143, 144, 146, 204,

219, 227, 237, 244, 251, 257, 295,  
327, 334, 366, 392, 425, 433, 434, 455,  
468, 474, 496, 499, 505, 509  
Արարդի 199  
Արաց 353  
Արաքս 13—15, 120, 121, 122, 125, 128,  
129, 132, 134, 137, 138, 140, 142, 156,  
158, 160—161, 163, 164, 166, 171,  
186, 187, 204, 205, 214, 219, 221, 238,  
255, 257, 260, 278, 283, 287, 294, 295,  
301, 314, 327, 331, 334, 344, 366,  
389, 395, 433, 434, 471, 474  
Արբայիլի 199  
Արբակի 202  
Արբելա 289, 359  
Արբու 231  
Արգամ 297, 389, 391  
Արգաստովիտ 154  
Արգավան 390, 391  
Արգինա 165  
Արգիշտինինա 186  
Արգիշտինա, Արգիշտինինի (Արմավիր)  
165, 186, 220  
Արգիշտի (Արգիստի) Ա 182, 203, 220—  
226, 227, 228, 237, 241, 242, 245,  
260, 320  
Արգիշտի (Արգիստի) Բ 233, 234, 245  
Արդահան 131  
Արդանուշ 162  
Արդարաա 183  
Արդավիլ 144  
Արդինիս 190, 192  
Արդեն 179  
Արդի 190  
Արդինի 205  
Արդինինա 186  
Արդիշի 232  
Արեզակ 99, 268, 269  
Արեզ 269, 383  
Արևարդի 270, 271  
Արզարիա 251  
Արզանիա, Ճրզանա 184, 207, 211  
Արզանի 182  
Արզանինի 151  
Արզաշկուն 185, 207, 208  
Արզեստինի 151  
Արզն 151  
Արզնարզյուն 152  
Ար-զունիա 231  
Արթուզինի 196  
Արիա 30  
արիական 248, 265  
Արիարաթ 296  
արիացի 180, 246—249, 257, 262, 286,  
290, 374  
Արիդի 206

Արիդինի 206  
Արիմաս 183  
Արինթես 476, 477  
Արիորարզան 337, 338  
Արիսի 155  
Արիստակես 423, 424, 428, 430, 449  
Արիստոսել 288  
Արծակ 165  
Արծափ 166  
Արծկն 153  
Արծն 150  
Արծնի 166  
Արծունի 361  
Արծրունի 136, 156, 158, 297, 304, 309,  
361, 442, 443, 453, 454, 467, 468, 472,  
474, 492, 493  
Արհմն 377, 397  
Արձախ 160  
Արձանիա 199  
Արձի 231  
Արձիբեդիս 190  
Արձն 151  
Արձունիս 186  
Արզանա 150  
Արդն 139  
Արճակ 16, 157, 158  
Արճեշ 11, 14, 16, 124, 182, 227  
Արճիշակովիտ 157  
Արմա-դալ-ի 231  
Արմա 251  
Արմանզու 230  
Արմանց 128  
Արմավիր 13, 15, 65, 129, 144, 165, 208,  
220, 271  
Արմենակ 260  
Արմեն 180, 248, 249—258, 265—266, 268,  
269, 277—278, 389  
Արմենիա 119, 251, 252, 253, 255—257  
Արմենիոն 249, 250  
Արմիդա 231  
Արմիսա 253  
Արշակ Ա 341  
Արշակ Բ 429, 445—449, 452, 453—456,  
459—460, 461, 462, 463, 464—466,  
467, 472, 479, 482, 487, 492, 515  
Արշակ Գ 163, 494—498  
Արշակ Պարթև 291, 299  
Արշակավան 166, 448, 454, 462—463  
Արշակունի, —իք 4, 147, 149—152, 154,  
165, 166, 330—336, 339, 351, 352—  
353, 355—357, 359, 361, 367, 368—  
369, 378, 379, 387, 394, 396, 399, 415,  
429, 437, 445—446, 453, 491, 492,  
494, 496, 497, 499, 500, 503, 511  
Արշամ 291  
Արշամունիք 153

Արշարունիք 164, 338, 435, 463, 471, 474  
Արշավիր 435  
Արպաղ 225, 228  
Արշո-Առին 165  
Արսամաստ 291  
Արսամա 291  
Արվաստան 151  
Արտազերս 165, 338, 463, 471—474  
Արտաղ 158, 415  
Արտահան 162  
Արտամեդ 11, 14, 157, 212, 297, 393  
Արտանես 301  
Արտաշատ 129, 135, 144, 166, 295, 314,  
317—318, 325, 328, 334, 340, 343—344,  
346, 351, 356, 389, 395, 396, 433, 434,  
439, 474  
Արտաշեսյան Հարստություն 147, 293, 298,  
304, 331, 332, 333, 335, 337, 338,  
353, 360, 369, 381, 387, 388, 392, 393,  
466  
Արտաշեզյան կամ Արտիշեսյան 158  
Արտաշես Արեմենյան 3  
Արտաշես արքայորդի 443  
Արտաշես 255  
Արտաշես Ա 157, 174, 293—298, 299, 301,  
320, 321, 333, 335, 367, 387—392,  
393, 466, 479, 481  
Արտաշես Բ 329, 330  
Արտաշես Գ 340  
Արտաշես Դ (Արտաշիր) 513, 515—515  
Արտաշես Մամիկոնյան 490  
Արտաշիր 397, 398, 399, 400, 492, 494,  
495  
Արտասիրարի 183  
Արտավազ Ա 298  
Արտավազ Բ 304, 322, 323—324, 326,  
327—330, 333, 388—392  
Արտավազ Գ 332, 338  
Արտավազ Դ 400, 401  
Արտավազ Մամիկոնյան 435, 443, 447  
Արտավազ մանուկ 493  
Արտավազ Մար 328  
Արտավանյան 158  
Արտավան 339—343, 358, 359, 398—400,  
472—473, 477, 483  
Արտաքսիա 293  
Արտաքսիատա 166  
Արտոնիս 381  
Արտի 156  
Արտուարիբու 190  
Արցախ 122, 137, 138, 140, 144, 146, 148,  
160, 171, 179, 221, 228, 334, 433,  
466, 480, 510, 514, 515  
Արուս 199  
Արուսի 199

Արուն 16 250 251 Արուսի 252 253 254 255 256 257 258 259 260 261 262 263 264 265 266 267 268 269 270 271 272 273 274 275 276 277 278 279 280 281 282 283 284 285 286 287 288 289 290 291 292 293 294 295 296 297 298 299 300 301 302 303 304 305 306 307 308 309 310 311 312 313 314 315 316 317 318 319 320 321 322 323 324 325 326 327 328 329 330 331 332 333 334 335 336 337 338 339 340 341 342 343 344 345 346 347 348 349 350 351 352 353 354 355 356 357 358 359 360 361 362 363 364 365 366 367 368 369 370 371 372 373 374 375 376 377 378 379 380 381 382 383 384 385 386 387 388 389 390 391 392 393 394 395 396 397 398 399 400 401 402 403 404 405 406 407 408 409 410 411 412 413 414 415 416 417 418 419 420 421 422 423 424 425 426 427 428 429 430 431 432 433 434 435 436 437 438 439 440 441 442 443 444 445 446 447 448 449 450 451 452 453 454 455 456 457 458 459 460 461 462 463 464 465 466 467 468 469 470 471 472 473 474 475 476 477 478 479 480 481 482 483 484 485 486 487 488 489 490 491 492 493 494 495 496 497 498 499 500 501 502 503 504 505 506 507 508 509 510 511 512 513 514 515 516 517 518 519 520 521 522 523 524 525 526 527 528 529 530 531 532 533 534 535 536 537 538 539 540 541 542 543 544 545 546 547 548 549 550 551 552 553 554 555 556 557 558 559 560 561 562 563 564 565 566 567 568 569 570 571 572 573 574 575 576 577 578 579 580 581 582 583 584 585 586 587 588 589 590 591 592 593 594 595 596 597 598 599 600 601 602 603 604 605 606 607 608 609 610 611 612 613 614 615 616 617 618 619 620 621 622 623 624 625 626 627 628 629 630 631 632 633 634 635 636 637 638 639 640 641 642 643 644 645 646 647 648 649 650 651 652 653 654 655 656 657 658 659 660 661 662 663 664 665 666 667 668 669 670 671 672 673 674 675 676 677 678 679 680 681 682 683 684 685 686 687 688 689 690 691 692 693 694 695 696 697 698 699 700 701 702 703 704 705 706 707 708 709 710 711 712 713 714 715 716 717 718 719 720 721 722 723 724 725 726 727 728 729 730 731 732 733 734 735 736 737 738 739 740 741 742 743 744 745 746 747 748 749 750 751 752 753 754 755 756 757 758 759 760 761 762 763 764 765 766 767 768 769 770 771 772 773 774 775 776 777 778 779 780 781 782 783 784 785 786 787 788 789 790 791 792 793 794 795 796 797 798 799 800 801 802 803 804 805 806 807 808 809 810 811 812 813 814 815 816 817 818 819 820 821 822 823 824 825 826 827 828 829 830 831 832 833 834 835 836 837 838 839 840 841 842 843 844 845 846 847 848 849 850 851 852 853 854 855 856 857 858 859 860 861 862 863 864 865 866 867 868 869 870 871 872 873 874 875 876 877 878 879 880 881 882 883 884 885 886 887 888 889 890 891 892 893 894 895 896 897 898 899 900 901 902 903 904 905 906 907 908 909 910 911 912 913 914 915 916 917 918 919 920 921 922 923 924 925 926 927 928 929 930 931 932 933 934 935 936 937 938 939 940 941 942 943 944 945 946 947 948 949 950 951 952 953 954 955 956 957 958 959 960 961 962 963 964 965 966 967 968 969 970 971 972 973 974 975 976 977 978 979 980 981 982 983 984 985 986 987 988 989 990 991 992 993 994 995 996 997 998 999 1000  
Արուն 16 250 251 Արուսի 252 253 254 255 256 257 258 259 260 261 262 263 264 265 266 267 268 269 270 271 272 273 274 275 276 277 278 279 280 281 282 283 284 285 286 287 288 289 290 291 292 293 294 295 296 297 298 299 300 301 302 303 304 305 306 307 308 309 310 311 312 313 314 315 316 317 318 319 320 321 322 323 324 325 326 327 328 329 330 331 332 333 334 335 336 337 338 339 340 341 342 343 344 345 346 347 348 349 350 351 352 353 354 355 356 357 358 359 360 361 362 363 364 365 366 367 368 369 370 371 372 373 374 375 376 377 378 379 380 381 382 383 384 385 386 387 388 389 390 391 392 393 394 395 396 397 398 399 400 401 402 403 404 405 406 407 408 409 410 411 412 413 414 415 416 417 418 419 420 421 422 423 424 425 426 427 428 429 430 431 432 433 434 435 436 437 438 439 440 441 442 443 444 445 446 447 448 449 450 451 452 453 454 455 456 457 458 459 460 461 462 463 464 465 466 467 468 469 470 471 472 473 474 475 476 477 478 479 480 481 482 483 484 485 486 487 488 489 490 491 492 493 494 495 496 497 498 499 500 501 502 503 504 505 506 507 508 509 510 511 512 513 514 515 516 517 518 519 520 521 522 523 524 525 526 527 528 529 530 531 532 533 534 535 536 537 538 539 540 541 542 543 544 545 546 547 548 549 550 551 552 553 554 555 556 557 558 559 560 561 562 563 564 565 566 567 568 569 570 571 572 573 574 575 576 577 578 579 580 581 582 583 584 585 586 587 588 589 590 591 592 593 594 595 596 597 598 599 600 601 602 603 604 605 606 607 608 609 610 611 612 613 614 615 616 617 618 619 620 621 622 623 624 625 626 627 628 629 630 631 632 633 634 635 636 637 638 639 640 641 642 643 644 645 646 647 648 649 650 651 652 653 654 655 656 657 658 659 660 661 662 663 664 665 666 667 668 669 670 671 672 673 674 675 676 677 678 679 680 681 682 683 684 685 686 687 688 689 690 691 692 693 694 695 696 697 698 699 700 701 702 703 704 705 706 707 708 709 710 711 712 713 714 715 716 717 718 719 720 721 722 723 724 725 726 727 728 729 730 731 732 733 734 735 736 737 738 739 740 741 742 743 744 745 746 747 748 749 750 751 752 753 754 755 756 757 758 759 760 761 762 763 764 765 766 767 768 769 770 771 772 773 774 775 776 777 778 779 780 781 782 783 784 785 786 787 788 789 790 791 792 793 794 795 796 797 798 799 800 801 802 803 804 805 806 807 808 809 810 811 812 813 814 815 816 817 818 819 820 821 822 823 824 825 826 827 828 829 830 831 832 833 834 835 836 837 838 839 840 841 842 843 844 845 846 847 848 849 850 851 852 853 854 855 856 857 858 859 860 861 862 863 864 865 866 867 868 869 870 871 872 873 874 875 876 877 878 879 880 881 882 883 884 885 886 887 888 889 890 891 892 893 894 895 896 897 898 899 900 901 902 903 904 905 906 907 908 909 910 911 912 913 914 915 916 917 918 919 920 921 922 923 924 925 926 927 928 929 930 931 932 933 934 935 936 937 938 939 940 941 942 943 944 945 946 947 948 949 950 951 952 953 954 955 956 957 958 959 960 961 962 963 964 965 966 967 968 969 970 971 972 973 974 975 976 977 978 979 980 981 982 983 984 985 986 987 988 989 990 991 992 993 994 995 996 997 998 999 1000  
Քանա 183  
Քարազուտա 183  
Քարանեայ 223  
Քարանի 187  
Քարաս 190  
Քարարուրան 183  
Քարերդ 130, 140  
Քարուտա 187  
Քարելոն 3, 4, 10, 12, 26, 28, 33, 39,  
40, 43, 49, 73, 94, 96, 105, 110, 135,  
143, 195, 198, 234, 240, 243, 250, 251,  
253, 255, 273—275, 277, 281, 283, 289,  
292, 299, 302, 303, 376, 417  
Քարիկ 494  
Քարուտա 226  
Քազադին, Քակահադին 150, 380  
Քազարան 166  
Քազավան 161, 493  
Քազադատուի 229, 230  
Քազինք 161  
Քազնայր 165  
Քազվան կամ Քազնաց ավան 165  
Քազրատ, Քազրատունի 433  
Քազրատունի 162, 165, 304, 369, 494  
Քազրանդ 165, 211, 270, 340, 474, 487,  
493  
Քազնոց 14, 15, 157, 227  
Քաթման-սու 302  
Քաթում 119  
Քալահովիտ 150  
Քալավար 207  
Քալեզ-զուլ 166  
Քալթիկ ծով 247  
Քալու 150

Բաղնիքի թերակղզի 247, 248  
Բակուր 324, 325, 327, 343, 350, 351, 354, 356, 510  
Բակորիա 289, 290, 293  
Բահրամ 401, 500  
Բաղաբերդ 160  
Բաղանոտ 161  
Բաղնի 133, 136, 140, 151, 256, 263, 313  
Բաժրիչ 441, 448  
Բայազետ 140, 157, 166  
Բաշ-Աբարան 165  
Բաշ-Շորազյալ 165  
Բասն 12, 16, 164, 256, 456  
Բասմաշյան 16, 254, 255, 259  
Բասրա 145  
Բատ 489, 490, 491  
Բարդա 161  
Բարդածան 416  
Բարդոզ լիւ 165  
Բարդուղիմնոս 414  
ԲարեՆուստ հրվանդան 121  
Բարձր Հայր 122, 125, 131, 135, 136, 139, 148, 150, 163, 164, 167, 354, 468, 496  
Բարշամ 283, 287, 381  
Բաբան 158  
Բաբոսյաններ 325  
Բաբու 161  
Բեզարդն 461  
Բելք 14, 15, 16, 179  
Բեհասուն 253, 255  
Բեռլին 13, 247  
Բերդաձոր, Բերձոր 160  
Բերդացիոր 163  
Բերդիկ 150  
Բերկրի 157  
Բերրուս 4, 30, 281  
Բել 45, 259, 282  
Բենի-Սարայիլ 404  
Բզնանի-իք 153, 434, 435  
Բզնանյաց ծով 124, 153  
Բիայնա 186, 205, 214  
Բիրբու 100  
Բիթանու 205  
Բիթանացիք 249  
Բիթլիս 133, 184  
Բիթիբամի 230  
Բինգյուլ 122, 127—128, 153  
Բինզու 226  
Բին-Նիրարի 53  
Բիսիրային 163  
Բիսյութուն 8  
Բիսաու 223  
Բիտ-Դայուկի 184  
Բիտ-Չամանի 184, 185, 187, 188, 207, 211 211

Բիտսագրատի 230  
Բիտ-Սանգիրուտի 231  
Բլուր 165  
Բյուզանդիա 125, 156, 427, 431, 443, 454, 456, 457, 458, 473, 478, 495, 496, 500, 502  
Բյուզանդիոն 427, 488, 502, 506  
Բյուրական 165, 221  
Բյուրակնյան լեռներ 122, 128, 153, 498  
Բյուրնուֆ 8  
Բյուրուն 246  
Բնարեղ 151, 470  
Բողունիք 157  
Բոլնիս 162  
Բոհտան-սու 133, 134, 155, 157, 182, 190  
Բողբարդու 241  
Բողբերդ 164  
Բողնափոր 162  
Բոշաներ 172  
Բոսֆոր 242, 427  
Բոտտա 9  
Բորժոմ 132  
Բորչալու 162  
Բշնի 166  
Բրեխ 363  
Բրիգ 180, 249  
Բրիտանական Մուզեոն 10  
Բրյուզը 9  
Բուրա 199  
Բուզու 363  
Բուժունիք 157  
Բուլանըխ, Բուլանըք 153, 256, 263  
Բուլխանի 201  
Բուխա 163

Պ

Պարեղյանք 164, 369  
Պարիթյան 158  
Պազիկ 156, 157  
Պազանածակք 164  
Պազավոն 498—500  
Պազրիկյան 158  
Պաթրրճյան 5, 252, 273, 331, 332, 354, 355, 357, 401, 464, 489  
Պալա 236  
Պալատիա 317  
Պալմաքերյան 204, 258  
Պալերիանոս 402  
Պալիլիա 405, 408  
Պալլիա 401  
Պալուստ Տեր-Մկրտչյան 364, 508  
Պամգումի 225  
Պայանն 420  
Պայլատուս լիճ 166  
Պայլ գետ 125, 167  
Պայոս Կեսար 337, 338, 340

Պանգեա 115  
Պանի-Քափա (Արինբերդ) 13  
Պանձակ 15, 122, 161, 179, 186  
Պանձասար 160  
Պանի 157, 166, 170, 186, 343, 344, 352, 389, 396, 434  
Պանի-Բասար 166  
Պարագաշյան 329, 330, 331, 355, 399, 482  
Պարա-Յազ 153  
Պարաշար 153  
Պարագարացիներ 161  
Պարզմանացիներ 161, 498  
Պարզման, Պարզմանաձոր 161, 334, 468  
Պարեգին Վ. Հովսեփյան 16  
Պարեգին Ուտունի 433, 475  
Պարեցիցի ս. Դավիթ 335  
Պարշան 16  
Պարչուլ 492  
Պավաշ 156  
Պավառ 159  
Պարբեր 7  
Պեյցեր 204, 205, 258, 260, 390, 381, 420  
Պեղամա ծով 124  
Պեղարդի վանք 166, 236  
Պեղարբունի 12, 15, 122, 159, 136  
Պետարակք, Պետարիկ 14, 161  
Պերմանիկոս 340, 341  
Պզեղ 151  
Պիզե 90  
Պիլիատ 183  
Պիլան 142  
Պիլանի 184  
Պինգիրի 183  
Պինգիրդա 183  
Պինգինա 183  
ՊինՆուհու 183  
Պիսանն 153  
Պիսաս 381  
Պլակա վանք 153  
Պլաձոր 159  
Պլորրիոնոս 315  
Պլուե 131  
Պլուկա 159  
Պլոտինգեն 8  
Պլոթու 153  
Պլուլուկ 132  
Պլուզել դերե 134, 151, 154  
Պլումրի (այժմ Լենինական) 165  
Պլույար 18  
Պլունեկ-սու 127  
Պլուտ 510  
Պնել 445, 454—456, 460  
Պնթունի 369  
Պնունի 369, 448, 498  
Պնու 172

Պոգարեն 162  
Պոկան, Պուկան 158  
Պողթան, Պողթեն 158, 395, 504, 505, 510  
Պողթնաստան 158  
Պոմաձոր 164  
Պոմիսին 138  
Պոշե 319  
Պոտարզ 342  
Պորդիանոս 400  
Պորեք 151  
Պորիս 159  
Պրեանֆենդ 8  
Պրիգորիս 432  
Պրիգոր Լուսավորիչ 149, 382, 418, 419—422, 423—425, 428, 430, 435, 437, 439, 441—443, 449, 451, 456, 515  
Պրիգոր Մագիստրոս 392  
Պուրբի 199  
Պուգարաց աշխ., Պուգարք 122, 137, 140, 144, 148, 162, 166, 180, 295, 296, 304, 334, 370, 387, 466, 480, 515  
Պութլիդ 400, 419  
Պուկան կամ Պուկան 158  
Պուտիում 176  
Պուրիախի 186  
Պուրս 314  
Պուրուշա 149

Ռ

Ռադարշիլ 253—255  
Ռախասուր 211  
Ռալա 231  
Ռալմա, Ռալմաներ 238  
Ռալառ 153  
Ռախմա 375, 379  
Ռահ, Ռահեր 290, 339  
Ռամասկոս 144  
Ռամդամուս 185, 188, 200  
Ռայանի 183, 185, 197, 207, 361  
Ռայա 427  
Ռանիլ 387, 441, 442, 449, 506, 507, 508  
Ռանուր 143, 247, 248  
Ռաշտ Արաքսի 166  
Ռանի 157  
Ռասան 152  
Ռասանվորք 153  
Ռաստարեն 434  
Ռավիթ 335  
Ռավիթ և ՄՆեր 380, 392  
Ռավիթ Շորաուս 403  
Ռատյան և. վարդապետ 16  
Ռարա 498  
Ռարալազյազ 159  
Ռարանդաղի 138, 149, 357, 378, 468  
Ռարանյան 149

Դարանի 186  
Դարաշիջազ 166  
Դարթնաց Քար 157, 379  
Դարդանի 180  
Դարնի 7, 9, 253, 397  
Դարնից 433  
Դարիալ 144, 242, 257, 352  
Դարոնք 169  
Դափինու 100  
Դեզիք 151  
Դելի-Բարա 16, 185  
Դեմետր 153, 381  
Դենշապուհ 457  
Դերբենդ 144  
Դերբյան 150, 295, 380, 488-490  
Դը Լագարդ 247  
Դը Սորգան 9, 169, 174, 178  
Դը Ռուեն 9  
Դը Սուդ 12  
Դիանին 126, 127, 208, 256  
Դիաուհի 185  
Դիարթեթիր 132, 134, 184, 193, 196, 460  
Դիերնակուուշ 183  
Դիլրատ 100  
Դիլիշան 12, 143, 171, 180, 221, 256, 278  
Դիմամու 183  
Դիմաբայան 498  
Դիողոր Սիկիլացի 83, 92  
Դիոկլետիանոս 402, 429, 438  
Դիոն Կասսիոս 328, 329, 350  
Դիոս 381  
Դիրա, դիրացի 202  
Դիրիգ-ի-րակ-սաղու 231  
Դիլաթ 187  
Դյուա 185  
Դյուպերրոն 7  
Դյուպլան 14  
Դյուտուայինի 190  
Դյուցրնկեց 281  
Դինպր 143  
Դինետր 143  
Դնկտոր Պոլակ 14  
Դոն 143  
Դվին 144, 166, 434  
Դրաշպետ 165  
Դրաստամատ 471  
Դու 164  
Դումմիդազ 125, 130  
Դունայ 243, 247  
Դուրուրանի 186  
Դուրուսկկա 229

87, 89—93, 96—99, 104, 112, 113, 115,  
143, 169, 177, 217, 228, 225, 283, 238,  
243, 275, 289—291, 326, 329, 360, 377,  
383, 412, 414  
Եղնմ 127  
Եղեսիա 121, 144, 401, 415—416, 427, 506  
Եղի-Քիլիս 14  
Եղանց բերդ 153  
Եղեկիել 251  
Եղնիկ 65  
Եղնուտ 153  
Եթովպիա 51  
Ելայինի 186  
Ելիաու 190  
Ելիպրի 190  
Ելհիլ 187  
Ելուլա 187  
Եկրատան 327  
Եկեղաց գավառ 149, 295, 308, 354, 379,  
496—498  
Եհովա 403  
Եղեգյակ 165  
Եղեգիա 159  
Եղիա 303  
Եղինգ 158  
Եղիշի 137, 363, 364, 365, 371, 379, 510  
Եղիվարդ 165  
Ենան 178, 261  
Եսայի մարգ. 48, 234  
Երազգավորք 165  
Երազմակ 455  
Երախանի 163  
Երասխանոր 129  
Երեմիա 243, 250, 251  
Երեակ 100  
Երեան 12, 14, 15, 134, 166, 186, 221, 237,  
256  
Երևարք 154  
Երեել 498  
Երզնկա 123, 126, 149, 183  
Երիայինի 123, 166  
Երիանի 186, 187  
Երիասայ 223  
Երիդիա 186  
Երիդուայինի 214  
Երիկտուայինի 186  
Երիզա, Երեզ 149, 308, 379, 380, 382  
Երինաս 190  
Երինգ 158  
Երիցյան 13  
Երիսիք 151  
Երկավոր 100  
Երկիր Արծրունյաց 156  
Երնչակ 159  
Երվանդ 172, 174, 393  
Երվանդակերտ 165

Եզերաց աշխարհ 162  
Եզիպտոս 3, 4, 6, 8—9, 20, 26, 27, 32,  
34, 35, 38—41, 43, 44, 45, 46, 49, 51,  
52, 54, 55, 58, 61, 64, 68—71, 83—85,

Երվանդաշատ 165, 474  
Երվանդունիք 158  
Երուսաղիմ 113, 144, 178, 249, 408, 409  
Եփրատ 9, 12, 25, 28—30, 32—33, 39, 41,  
43, 54, 58, 87, 94, 99, 101, 115, 120,  
122—123, 125, 126, 128, 132—134, 136,  
140, 142—143, 148, 149, 150, 166,  
169, 172, 175, 178, 180, 182, 187, 192,  
193, 194—196, 198, 202, 206, 207,  
208, 210, 214, 215, 217, 233, 251, 252,  
255, 263, 271, 291, 299, 301, 303, 308,  
315, 320, 324, 337, 341, 348, 350, 355,  
356, 357, 358, 379, 382, 400, 454, 464,  
468, 484, 488, 506  
Եվալցոց աշխարհ 273  
Եվդոկիա 167  
Եվպատոր 300  
Եվսեբիոս Կեսարացի 427  
Եվրոպիկոս 325  
Եվրոպա, Եվրոպացի 7—9, 11, 26, 39, 41,  
73, 76, 86, 99, 113, 115, 116, 118,  
141—143, 169, 180, 239, 246—249,  
277, 300, 305, 320, 326, 362, 394, 401,  
418  
Եվսեբիան Պոնտոս 486

Չ

Չամբար 183  
Չար 155, 205, 215  
Չարանու 183  
Չարախայեցոց երկիր 223  
Չարերի 184  
Չարոս 118, 213  
Չախալու (Յոզակ) 13, 205  
Չառեզուր 122, 186  
Չանգու 124, 186, 220, 238  
Չանդուինա 208  
Չանի 207  
Չափեն 499  
Չարավանդ, Չարևանդ 156  
Չարսիենոս 311  
Չարեհ 293, 294, 295, 296, 301, 316  
Չարեհավան 155, 165, 474  
Չարիադրես 293  
Չարիշատ 154, 165, 474  
Չարիջու 183  
Չարմանդուկ 492, 493  
Չարուհի 286  
Չենդ-Քվեստա 8, 343, 372—373, 378  
Չենոբ Գլակ 152, 363, 381  
Չենոբիա 344  
Չենոն 340  
Չերենե-սու 185, 187, 193, 196  
Չըմզըմ-դաղ 13, 228, 235  
Չիելի 315  
Չիխարդուսու 231

Չիկարտու 184, 228,—229, 230, 231  
Չիկիդրունի 190  
Չոդիակոս 100  
Չոթ 159  
Չվարթնոց եկեղեցի 16, 238  
Չրադաշտ 372, 377, 379  
Չրվան 30, 281, 377, 397  
Չուգարուրա 183  
Չուայինի 186  
Չուզու 253  
Չուզումատու 190

Է

Էա 109, 110  
Էգեյան ծով 248  
Էգիբի և որդիք 114  
Էլամ 11, 31—33, 37, 39, 41, 43, 177, 230  
Էլամա 187  
Էլար 12, 166, 186, 221  
Էլ-Ասուր 43, 44  
Էլբրուս 26  
Էլիպի 230  
Էմին 279  
Էնգիս 185  
Էջմիածին 12, 13, 15, 18, 165, 205, 238,  
369, 389  
Էրախանի 460  
Էրաշեթ 163  
Էրատո 332, 333  
Էրիդունի 185  
Էրզրում 14, 122, 123, 125, 126, 128, 129,  
134, 140, 142, 150, 183, 214, 220  
Էրիահի 186  
Էրիդուանի 165—166, 186  
Էրիմենա 245  
Էթի 199

Ը

Ընա 155  
Քաղնոս առաքյալ 414, 415  
Քաղարձախ 254  
Քալիշ 16, 161  
Քալին 165  
Քախտ Տրդատի 396  
Քանահատի վանք 159  
Քավուսկար 163  
Քավրիզ 119, 142, 144, 159, 171  
Քարթառ 160, 221, 334  
Քարխուլաթա 225  
Քափադիբի (Չալկավան) 13  
Քափարավան 170, 335

Քերե 83, 91, 93  
Քեզաթ-Աղար 181, 195, 197, 200  
Քեսսալիա 249  
Քերմուսա 330, 332  
Քերսիդես 446  
Քեհրան 142, 171  
Քեղոս 150, 436, 495—496, 498, 499, 501, 502  
Քեղոսիա 363  
Քեղոսուպոլիս 150  
Քեքման 150  
Քիզաթպալասար (Քեզաթ-Պալասար) Ա 181, 183, 195—197, 200, 203  
Քիզաթպալասար (Քեզաթ-Պալասար Գ) 181, 187, 224—226, 227—228, 230  
Քիլ 149, 381  
Քոզ 251  
Քոզարմա ծով 251, 252  
Քոզորմա 277  
Քոմաս առաքյալ 415  
Քոնդրակեցի 418  
Քոնդրուկ Քոնդուրակ 122, 126  
Քոռնավան 158  
Քովմաս Արծրունի 136, 297  
Քովմաճան 303, 325  
Քորզոմ 251, 262, 277  
Քորդան 149, 381  
Քորթում 130, 150, 163  
Քորոսյան 380  
Քոփրակ-Կալե 13, 16, 235, 236, 238, 240  
Քոնդը 162  
Քրարի 155  
Քրակիկա 242, 246, 248, 257, 289  
Քրիակիթ 162  
Քուրալ 178, 229  
Քուխարթ 163  
Քուկլաթ-Աղար 53  
Քուշեր 257  
Քուրա 30  
Քուրան 118, 177  
Քուրավահարա 254  
Քուրթիա 13—15, 30, 169

ժ

ժյուլ 11  
ժոակիմ 11

Ի

Իբերիա 334, 335  
Իրն-ալ-Ֆակիհ Համադան 145  
Իգասեանց երկիր 223  
Իդես 109  
Իզիրիա 231  
Իզիրու 254  
Իլդարուն 238

Իձալա 200  
Իյալա 202  
Ինգուշներ 257  
Ինգիտ 207  
Ինզու 160  
Ինճիճյան 138, 139, 143, 146, 148, 362, 370  
Իննակնյան վանք 153  
Ինուանա 190  
Ինու 160  
Իշայր 154  
Իշթար 69  
Իշիլ-Իրմակ 318  
Իշխանագոմ, իշխանի Գոմ 14, 217  
Իշխանաց գյուղ 163  
Իշխանիկ 335  
Իշկագուլու 186  
Իշկիգուլի 220  
Իշոց 154  
Իշպուհինի (Իսպուհինի) 191, 203, 212—215, 245  
Իշտար 225  
Իշտիլիբրիա 184  
Իշտիբունի 186  
Իպխարի 190  
Իշավան 165  
Իսուա 207  
Իսպիլիբրիա 201  
Իստահր 6  
Իստար 199  
Իստարատ 201  
Իսրայել 243  
Իսփիր 150  
Իվանովսկի 15, 179, 220, 236  
Իվերներ 178  
Իտալիա 241, 352  
Իտինի 199  
Իրան 6, 7, 8, 26, 27, 119—120, 134, 141, 142, 144, 177, 180, 184, 247, 273, 274—276, 288, 289, 291, 299, 300, 339, 341, 343, 345, 352, 353, 355, 356, 358, 359, 361, 371, 376, 377, 444, 470, 476, 477, 492, 493  
Իրանզու 228, 229  
Իրազու 229  
Իրբիդի 199  
Իրդանիունի 186  
Իրդանիունի 220  
Իրդիա 187  
Իրիս 167  
Իրիտիա 208  
Իրկիմայինի 186  
Իրկուա 233, 245  
Իրմուսինի 190  
Իրտիսատի 183, 245  
Իբարոս 143

Լ

Լազալ 34  
Լազ, Լազեր 249, 261  
Լազիստան 474  
Լազիթա 474  
Լալայան 172, 174, 269  
Լալվար 171  
Լապտուրի 201  
Լասիստա 167  
Լասսեն 8  
Լարենց 418  
Լարիսա 249  
Լեզբ 11  
Լեման Հաուպտ 15, 16, 191, 232, 236, 237, 239, 240, 252  
Լեյարդ 10, 12, 13  
Լենկթիմուր 243  
Լենթրան 120  
Լեո 334  
Լեպիտոս 326  
Լեպսիուս 9  
Լընորման 11, 18, 19, 30  
Լիկոս 125, 318  
Լինշ 139, 418, 422  
Լյուտիբրի 245  
Լյուրիկե 401  
Լոնդոն 13  
Լոոի 162, 171  
Լուր 187, 226  
Լուրի 226  
Լուխիունների 186, 214  
Լուկիոս Վերոս 356  
Լուկուլլոս 135, 305—316, 317, 323  
Լուկաս 183  
Լուհիունիների 166  
Լուսաբեր 100  
Լուսավորիչ 149, 422—423, 424—425, 430, 432, 435, 441—442, 449, 476, 499, 502, 503, 516  
Լուսիա 187, 226  
Լուսին 99, 190  
Լուվր 351  
Լուտիբրի 210, 211, 212, 245  
Լուրի 187  
Լուրիա 201

Խ

Խազ 454, 462  
Խաղամ 217  
Խաղու 199  
Խաղեն 160, 334  
Խաթթա կամ խաթ 177  
Խալդ 15, 20, 157, 179, 190—191, 192, 205, 215, 220, 252, 256, 258, 259, 260, 277  
Խալդի, Խալդիա 232—233, 238, 241

551

550

Խալդիդիպիա 200  
Խալիբներ 178, 228  
Խալիբ 226  
Խալդիթ 179  
Խալիսալ 161  
Խամուր 153  
Խառան 325  
Խասիս-Աղրան 30  
Խասատու 199  
Խարա 190  
Խարակունիս 16  
Խարաման 379  
Խարապըյու 217  
Խարբերդ 16, 120, 127, 132—134, 137, 140, 185, 207, 236, 291, 349  
Խարպիսիևա 226  
Խարզա 199, 206  
Խարզան 151  
Խարխար 230  
Խարմասա, խարմասացի 199, 206  
Խանթա կամ խաթա 177  
Խեր 156  
Խերհեթթ 151  
Խեցգետին 100  
Խեթ 261  
Խզու 151  
Խիզան 151  
Խիլիոնոմ 464  
Խլաթ 144, 153  
Խնձորեսք 156  
Խնուա 153  
Խոժոռաբերդ 159  
Խողքիմ 159  
Խոյ 100, 156, 184, 190  
Խոշաբ, Խոշապ 14, 158  
Խոշան 131  
Խոսրով Ա (Արշակ) 359, 382, 398—400, 402  
Խոսրով Բ Կոտակ 429—437, 446  
Խոսրով Գ 496—498, 499, 500, 503, 504, 510  
Խոսրով Գարդմանացի 512  
Խոսրով Պարթև 354, 355, 356  
Խոսրովակեբա 434  
Խոտ 159  
Խոտակերից վանք 159  
Խոտանան 160  
Խորասան 118, 142, 145, 171, 291, 299  
Խորենացի 4—5, 11, 17, 20, 30, 65, 136, 137, 146, 147, 152, 153, 163, 174, 204, 216, 218, 219, 253, 258, 260, 261, 270, 271, 279—281, 283, 284, 287, 297, 333—334, 361, 363, 367, 379, 386, 387, 389, 391, 392, 393, 416, 428, 430, 443, 446, 454, 455, 462, 463, 466, 472, 474, 475, 487, 697, 500, 502, 503

հորիստունի, հոսիստունի 154, 304, 369, 498  
հորիստ 219  
հորձյանք 150  
հորնի 153, 363  
հոր Վիրապ 169  
հորսարազ 10  
հուրուշիյա 184, 198, 205, 206, 208, 287  
հուրուկացիներ 201  
հուլիստան 470  
հուլի 152  
հուժաստան 470  
հուլա 200  
հուլայիա 200  
հուլուն 199  
հուլի 150, 152, 153  
հուլի 152  
հուլանհայ 223  
հուտուիներ 190  
հուրս 314

Ս

Սալկան 162  
Սաղկանց լեռ 122, 125, 382  
Սաղկուն 166  
Սաղկունյաց ձոր 166  
Սաղկանիք 166  
Սամնգավ 167  
Սար ավան 159  
Սավտեք 152, 465  
Սրվատան 14, 217  
Սզուկ 159  
Սորափոր 162  
Սովազարդ 12  
Սովք 132  
Սոփոց աշխարհ 291, 294, 295, 301, 304, 308, 316, 319, 430, 470, 498  
Սոփք 150, 151, 291, 301, 466, 490

Կ

Կարմնացի 370  
Կարու-լա-նի-ա 231  
Կազարա 187  
Կալիքուլա 342  
Կալլաթ 187  
Կալլաթա 226  
Կախնթ 335  
Կակիա 206  
Կաղզվան 164  
Կանկաբար 165  
Կամախ 149  
Կամրիզ 274  
Կամբուա 253  
Կամսարական 164-165, 364, 463, 471, 498-500, 503  
Կալուն 182

Կայն 455  
Կայնոպոլիս 356, 358  
Կանայան 205, 389  
Կանգարք 162  
Կանգով 157  
Կանգավար 157  
Կանից 16  
Կանինգ 10  
Կաշխարի 184, 187  
Կաշու 43, 44  
Կապան 150, 160  
Կապան-Մադեն 126, 128  
Կապաղովկիա 32, 42, 148, 161, 167, 178, 249, 251, 261, 283, 296, 299-300, 301, 303, 308, 315, 316, 340, 356, 415, 418, 461  
Կապույտ 165  
Կապուտա 165  
Կապուտան 124  
Կապուտկող 156  
Կասք 160  
Կասիա 226  
Կասիարի 200, 201  
Կասպ 160  
Կասպից ծով 118, 119, 120, 124, 125, 128, 132, 139, 142, 143-144, 160, 161, 166-171, 177, 213, 224, 242, 247, 250, 278, 291, 293, 295, 309, 320, 345, 432  
Կաստիրա 226  
Կաստրա 465  
Կարալու 230  
Կարակալա 358, 359  
Կարապետյան 16  
Կարապետ Տեր-Մկրտչյան վարդապետ 413, 424  
Կարապունիք 155  
Կարասու 126, 167  
Կարբի 165  
Կարեն 363  
Կարիճ 100  
Կարին 144, 150, 295, 346, 491  
Կարինոս 401  
Կարխեմիշ 213, 228, 229  
Կարկառ 154  
Կարմիր 26, 118, 158  
Կարո 16, 121, 131, 140, 165, 256  
Կար-Սալմանասար 207  
Կարս-լալ 185, 220  
Կարրիեր 381  
Կավարտ 160  
Կիթիկ 151  
Կելատ 142  
Կելիշին 11, 14, 16, 213, 232  
Կելկիզ 125  
Կեզք 150  
Կեմ 217

Կենան 498  
Կենտրոն 256  
Կեշտոք 166  
Կեսար 325, 326  
Կեսարիա 167, 419, 424, 439, 448, 449, 461, 483, 502  
Կերճանիս 149  
Կեստիկյան 151, 298  
Կրզըլ-Թրմակ 167  
Կթուհ 150  
Կիաքսար 243  
Կիրբու 183  
Կիհնունի 159  
Կիզիլ-Կալա 16  
Կիլակ 472-473, 477, 483  
Կիլամբատի 230  
Կիրիկիա 119, 178, 180, 229, 230, 244, 251, 261, 300, 301, 303, 313, 317, 320, 326, 327, 355, 461, 483, 506  
Կիլիմիր 226  
Կիլիսու 241  
Կիկոնք 249  
Կիմերիանի 128  
Կիմերացիներ 223, 234, 242-244, 250  
Կինարուն 200  
Կինգիշտիենզա 183  
Կենդուտաուշ 183  
Կինուկա 183  
Կիշ 34  
Կիպարուտակա 183  
Կիպակի 201  
Կիպարուշա 183  
Կիպրոս 35, 327  
Կիս-պալ 231  
Կիստան 226  
Կիրզանցիներ 201  
Կիրինի 183, 196,  
Կիրխի 199, 201, 202  
Կիրու 185  
Կիրոսու 277  
Կիրբուրի 199  
Կլատիոս 331  
Կլարշնթ 162  
Կլարշք 162  
Կլավդիոս 306, 345  
Կլեոպատրա 300, 303, 316, 327, 328, 329  
Կլեմես Ալեքսանդրացի 412  
Կղարշք 162, 295  
Կյուրեզ Ալեքսանդրացի 436  
Կյուրուպեդիա 3, 255, 277, 284, 285  
Կյուրոս 252-253, 277, 284, 285, 286, 398  
Կշիո 100  
Կոզ 448  
Կոզովիտ 166  
Կոզոման 269  
Կուլուր 158

Կուլիբարինի 183  
Կոկիսուն 167  
Կոզք 120, 129, 138, 345, 371  
Կոզրափոր 162  
Կող 131, 163  
Կողթ 160  
Կողանիա 144  
Կողքիս 148, 170, 273  
Կոմինական 433  
Կոմմագեն 148, 300, 340, 346  
Կոն 490, 491  
Կոնիբեր 422  
Կոշանլու 16  
Կ. Պոլիս 10, 17, 246, 251, 256, 297, 362, 418, 427, 436, 448, 465, 473, 489, 495  
Կոսական, Կովսական 160  
Կոստանդ 430, 438, 443, 445, 457, 458, 461  
Կոստանդին 427, 428, 429-430, 436, 438, 495, 501  
Կոստանյան 380  
Կովկաս 16, 118, 122, 132, 135, 170, 171, 172, 177, 178, 179, 239, 242, 250, 257, 292, 296, 318, 332, 334, 337, 352, 432, 433  
Կոտոր 158  
Կորբուլուն 345-350, 351  
Կորդիք 155, 480  
Կորդկաց աշխարհ 136, 195, 204, 261, 313, 334, 464, 466  
Կորդուն 154, 299, 301, 303  
Կորդուխներ 155, 256, 263, 311  
Կորդուք 154, 311, 465  
Կորեք 151  
Կորյուն 65, 504-508, 509, 510  
Կորենք 148, 493  
Կոոց 165  
Կվաշավան, Կվաշ 165, 454  
Կտեզիֆան 299  
Կտեսիաս 3,4  
Կրասսոս 323-327, 331, 339  
Կրետե 37  
Կրիակունք 163  
Կրճունիք 158  
Կրման 500  
Կուաոս 363  
Կուզուր-Նախիտունե 37  
Կուլիալինի 186, 221  
Կուլիբարզիների 196  
Կուկունու 202  
Կուժալիք 165  
Կումմուխ 196, 225-226  
Կուլունիկ 10  
Կուլս 100  
Կուշտաշպի 225  
Կուտի 176, 177



Կուր 14, 122, 125, 130, 131, 143, 160—163, 179, 220, 221, 228, 242, 278, 301, 334, 335, 387

Հ

Հարանգ 159, 433  
Հարեթ 30  
Հարել 506, 507  
Հաղարտ գյուղ 159  
Հաղամակերտ 158  
Հաղկերտ Ա 500, 510, 513  
Հաթ, հաթեր, Հաթթ 177, 178, 207, 223, 229, 261  
Հաղիս 255  
Հալիկարնասցի 3  
Հալիձոր 159  
Հալիս 249, 250  
Հակոբ 432  
Համադան 327  
Համազասպ 503  
Համազասպուհի 475  
Համմուրարի 40, 43, 73, 74, 112, 114  
Հայաստան 4, 6, 10—12, 15, 17, 18, 20, 26—30, 31, 38, 41, 42, 64, 118, 119—122, 123, 128, 132, 134—141, 144—146, 147—155, 156—158, 160, 162, 163, 164, 167, 169, 170—173, 176, 177, 179, 180, 183, 188, 189, 191, 192, 193, 204, 205, 236, 239, 241, 242, 252, 253, 254, 256—258, 261—266, 270—272, 276, 278, 279, 280, 281, 283, 286—290, 294, 295, 296, 298, 299, 301—303, 304—305, 308, 309, 311—312, 315, 317—321, 322—326, 327—334, 335, 336, 337—338, 339—359, 361—363, 368, 371, 377, 378—381, 382, 383, 386, 387, 389, 392, 394, 395, 396, 398, 399, 400—403, 414, 415, 416—422, 425—427, 429—431, 433—434, 436—438, 441, 443, 444, 445, 449, 450, 451, 456, 457, 458, 461, 464, 465—468, 469, 471—475, 476—479, 483, 484, 487—493, 496—499, 501—502, 504, 505, 506, 510, 511  
Հայկական Բարձրավանդակ 122, 123, 124, 178, 180, 181, 182, 188, 203, 214, 220, 255—257, 259, 265, 278, 282, 287, 293, 294, 295, 320, 353, 360  
Հայկական Պար 121  
Հայկական սարահարթ 134, 188, 192  
Հայկական Տավրոս 119, 416  
Հայկաշեն 153  
Հայկ 5, 80, 153, 259, 262, 282—283  
Հայոց թառ 166  
Հայոց Կարթագեն 314  
Հայոց Ձոր 158, 216, 282  
Հայունի 385

Հայր Մարդպետ 442, 453, 478  
Հայք 261, 282  
Հանդարերդ 160  
Հանդու 232  
Հանի 161  
Հանիոն կամ հենիոն 261  
Հանձիթ, հանձիթթ 151, 207  
Հանիոսներ 261  
Հաշտարտե 187  
Հաշտյանք 150, 368  
Հաշտիշատ 152  
Հապետոս 30  
Հասան-Կալե 12, 129, 164, 214, 219, 237  
Հասովն 325  
Հատ 250  
Հարաման 379  
Հարճյանք 160  
Հարմիշանդա 183  
Հարմոնիա 249—250  
Հարուբայինի 190  
Հարությունյան 13  
Հարթ 153  
Հացյաց Գրախտ 153  
Հացեկաց գյուղ 153, 502  
Հացյունյաց դաշտ 159  
Հավճիչ 163  
Հավունիք 164  
Հավուց թառ 166  
Հաս 262  
Հեթիթներ, — յաններ 32, 38, 42, 43, 177, 178, 203, 209, 214, 224, 229, 250, 257, 261, 360  
Հելլենապոնտոս 180  
Հելլեն, հելլենականություն 264, 288, 294, 304, 339, 412, 413  
Հելդ 7  
Հենի 15, 151  
Հեր 156  
Հերաթ 142, 171  
Հերակլես 156, 381  
Հերոդոտ 3, 4, 104, 105, 204, 252, 255, 277, 292  
Հեփեսոս 381  
Հեքքյարի 184  
Հիզ Շառուս 38  
Հիմուս 183  
Հին Աշխարհ 118, 120—121, 141  
Հինդուս 115  
Հինդու-Քուշ 26, 27, 117, 119  
Հին Ջուղա 129  
Հին Տայք 10, 131  
Հինքս 17  
Հիսուս 113, 405—411, 414, 415, 418, 422  
Հիվերնա 14, 15  
Հիբոս 38, 39, 41

Հյուրըման 150, 151, 152, 156—157, 159, 161, 162, 163, 247, 295, 334  
Հյուրկանոս 326  
Հյուրովք 323  
Հմայակ 509  
Հնդկական օվկիանոս 27, 31, 115, 118, 125, 128, 136  
Հնդկա-Չինաստան 31  
Հնդկաստան 3, 6, 8, 115, 119, 142, 176, 246, 247, 250, 277, 289, 292, 293, 355, 356, 371  
Հոգյաց վանք 132, 157  
Հողե-բերդ 13  
Հողոցիմ 159  
Հոման 376  
Հոոի 383  
Հոոոմք, հոոոմներ 436, 456  
Հոոոոոս 165  
Հոոոոոց երկիր 436  
Հոոոոոստան 436  
Հովիանոս 464, 465, 473, 477, 488  
Հովհաննավանք 165  
Հովհաննես 249, 385, 406, 411, 418  
Հովնան եկեղեցացի 506  
Հովիտ Մեծ Բասենո 164  
Հորդանան 302, 406  
Հոֆմայստեր 256  
Հոաղամիզ 343—344  
Հոանդեա 349—350  
Հոփսիմե 420  
Հոոմ, Հոոմիմ 294, 299—301, 305, 307, 308, 311, 312, 315, 316, 319, 321, 322, 323, 325—327, 329—332, 336, 337—345, 347, 348, 349—351, 352—359, 378—380, 396, 398, 400—402, 410, 413, 427  
Հոոփանոս 507  
Հրահատ 311, 317, 319, 327, 330—332, 337, 339  
Հրահատակ 332, 337  
Հրանտ 256, 289  
Հրաշկարերդ 159  
Հրաբոտ-Պերոժ 160  
Հրեաստան 326, 415  
Հրոտից 383  
Հուբուշիա 184  
Հուգինարիդունա 223  
Հուլիանոս 426, 461, 463—464  
Հուլիոս Կեսար 323, 326, 330  
Հունաստան 3, 6, 25, 102, 115, 173, 240, 273, 276, 288, 396, 415, 420  
Հունդուր 183  
Հուսիկ կաթողիկոս 432, 438—441, 448, 449, 483, 499  
Հուսիկ արք. Մովսիսյան 16  
Հուստինիանուպոլիս 164  
Հուստինիանոս 120, 167

Ձագ 166  
Ձիրավ 477, 480  
Ձունակերտ 153  
Ձոր Անձախու 158  
Ձորափոր 162  
Ձոր Անձաճից 158  
Ձորք 160  
Ձրավ 165  
Ձուինի 187  
Ձուկ 100  
Ղ  
Ղազար Փարպեցի 163, 164, 364, 497, 500, 503, 516  
Ղազվին 142  
Ղանդահար 142  
Ղանլի-Քափա 221  
Ղանլիշա 13, 17, 187, 220  
Ղարաբաղ 160, 175, 334, 514  
Ղարազաղ 129  
Ղարաքիլիսա, Ղարաքիլիս 127, 256  
Ղափան 160  
Ղուլիշան 13, 186, 221  
Ղուկաս ավետարան 411  
Ճ  
Ճակատք, Ճակք 163  
Ճահուկ 155, 159  
Ճաներ 361  
Ճապաղչուր 150  
Ճորոխ 125, 132—133, 139, 143, 162  
Ճվաշուտ 158  
Ճուլամերկ 155  
Ս  
Մազնեսիա 294  
Մադարա 201  
Մազազ 166  
Մազանդարան 142  
Մադեդական 376  
Մաժան 383  
Մալաթիա 11, 132, 140, 167, 214, 223, 224, 225  
Մալլավ 231  
Մախար 318  
Մակարեներ 403  
Մակեդոն (Եպիսկոպոս) 495  
Մակեդոնիա 26, 249, 457  
Մակու 16, 158  
Մակրինոս 359  
Մահկերտոն 152  
Մաղխազ 492  
Մամանիս 183

Մամիկոնյան 152, 158, 162, 304, 369, 400, 420, 431, 435, 455, 472, 475, 476, 478, 479, 481, 490—491, 493, 495, 498, 503, 505  
 Մայանա 142  
 Մանգլիկերտ 11, 16, 127, 153  
 Մանաճիհր 432  
 Մանանազի 138, 150, 496  
 Մանավազ 260  
 Մանավազյան 431  
 Մանգլիկացիոր 162  
 Մանգլիս 162  
 Մանդակունի 385, 394  
 Մանդուր 226  
 Մանյա այրիք 149  
 Մանյան 150  
 Մանեթոն 4  
 Ման 184  
 Մանի 417, 418  
 Մանծիկերտ 153  
 Մանկեն 310  
 Մաննա 184, 214, 221, 222, 224, 228—231, 233, 242, 251  
 Մաններ 150  
 Մանվիլ Մամիկոնյան 490—495  
 Մանսկերտ 157  
 Մատուր 187  
 Մաշթոց, Մաշտոց, Մաժտոց 153, 487, 500, 502, 503, 504—510, 512, 513, 514, 515  
 Մաշիերներ 217  
 Մաշիս 187  
 Մառ-մառազան 16, 20, 158, 248, 257, 258, 261, 262, 268, 296, 360, 362, 389, 419  
 Մասյացոտն 165  
 Մասիտա 184, 187  
 Մասիս 30, 119, 120—123, 126, 137, 142, 158, 163, 180, 204, 220, 255, 262, 389, 390—392, 463  
 Մասպերո 8, 190, 204, 221, 228  
 Մատթես Ավետարան 145, 411  
 Մատիատի 201  
 Մատիլու 225  
 Մատյուրիլու 226  
 Մատնի 202  
 Մարաբա Մծուրնացի 4  
 Մար-Արաս-Կատինա 4  
 Մարական 229  
 Մարակերտ 389  
 Մարանդ 159  
 Մար, Մարք 155, 235, 243, 250, 253, 272, 284, 286, 315, 337, 338, 389, 505  
 Մարաստան 148, 177, 224, 228, 230, 242, 244, 252—254, 258, 265, 286, 289, 290, 292, 295, 296, 302, 347, 378, 400, 464  
 Մարաց երկիր 480  
 Մարգար 16  
 Մարգաց 383  
 Մարգինա 253  
 Մարդ 153, 158  
 Մարդաղի 153, 346  
 Մարդաստան 153, 158  
 Մարդուկ 45, 108, 232  
 Մարդկետ 369, 472, 479  
 Մարերի 383  
 Մարի 155  
 Մարիամ 405  
 Մարիետ 8  
 Մարիրու 184  
 Մարիցա 457  
 Մարկոս 326, 339, 411  
 Մարկոս Ավրելիոս 356  
 Մարկոս Կրասոս 323  
 Մարկվարտ 151, 506, 507, 508, 510  
 Մարմաշեն 165  
 Մարմարա 248, 249  
 Մարմետ 157, 165  
 Մարս 100  
 Մարսիհու 183  
 Մարտեր 346  
 Մարտիրոսյուրիս 151  
 Մավրիկապոլիս 165  
 Մավրորում 465  
 Մաքալուսի 223  
 Մաքու 256  
 Մաքսիմիանոս 402, 427  
 Մաքսիմիլյան 183  
 Մեդեր 228  
 Մեդիա 224, 234  
 Մեդինա 145  
 Մելայիների 186  
 Մելաս 167  
 Մելիդա 214, 215  
 Մելիտինե 167, 214, 223, 350  
 Մեծամոր 129, 153  
 Մեծ-Քասենո 164  
 Մեծիբանք 160  
 Մեծկերտ 151  
 Մեծ Կովկաս 132, 221  
 Մեծկվանք 160  
 Մեծ Հայք 120, 127, 147, 148, 186, 167, 292, 392  
 Մեծ Մասիս 13, 119, 120, 208  
 Մեծնունիք 158  
 Մեծորս վանք 154  
 Մեհանդակ 433  
 Մեհեկան 383  
 Մեհրուժան Արծրունի 296, 309, 380, 417, 466—468, 472, 474, 475, 492, 494

Մեղրաբերտ 127, 263, 266, 363  
 Մեղրի 229, 160  
 Մեմֆիս 90, 103  
 Մենակ 11  
 Մենոն 139  
 Մենուաճիհրի 186, 220  
 Մենուաճիհրի 214  
 Մենուա (Մենուաս) Ա 191, 213—215, 218, 219, 220, 223, 226, 228, 235, 236, 237, 241, 242, 245, 260, 320  
 Մենուա (Մենուաս) Բ 233, 245  
 Մեսիաք 258  
 Մեսիա 404, 407, 408  
 Մեսրոպ երեց 448, 490, 503  
 Մեսրոպ Մաշթոց 503, 504  
 Մետրոդորոս 4, 303  
 Մերկուր 100  
 Մեշեդ 142  
 Մեշիկկերտ 216  
 Մեքհուլ 145  
 Մեքքա 145  
 Միաբան 121  
 Միչա 154  
 Միլան 427  
 Միլիադրունի 187  
 Միլիթու 207  
 Միլներ 247  
 Միհր 150, 214, 280, 351, 371, 376, 379, 380, 381, 413  
 Միհրան 289, 330  
 Միհրինես 289  
 Միհրդատ Պոնտացի 167, 299—301, 305—307, 309—313, 314, 317—318  
 Միհրդատ վրացի 342  
 Միհրդեհներ 261  
 Միլագրետա 8, 9, 20, 33, 43, 48, 94, 115, 118, 120, 123, 128, 134, 135, 141—143, 148, 151, 173, 177, 182, 184, 192—195, 208, 212, 222, 228, 230, 233, 239, 240, 242, 243, 259, 280, 282, 299—301, 303, 311, 314, 320, 324, 342, 355—359, 400—401, 415, 417, 429, 438, 441, 456, 457, 467, 505, 506, 508  
 Միչերկրական ծով 26, 33, 35, 37, 41, 113, 115, 117—119, 128, 132, 141, 142, 202, 224, 251, 292, 303, 309, 315, 320, 330, 398, 400, 415  
 Միչին Ասիա 142, 177, 246  
 Միսիանդի 184, 230  
 Միտա 229  
 Միտան 230  
 Միտատի 229—231  
 Միտրիա 199  
 Միթայել 371, 510  
 Մթին լեռ 162  
 Մխիթար Գոշ 75

Մխիթարյաններ 17, 147  
 Մծրին 4, 144, 151, 301, 314, 315, 348, 355, 357, 415, 416, 432, 438, 444, 460, 465, 496  
 Մծուր 153  
 Մհեր 13, 260, 280, 392  
 Մհերի Դուռ 190, 191, 260  
 Մյուզոտնացիք 249  
 Մյուլբախ 12  
 Մյուլներ 14, 15  
 Մյուսիացիք 249  
 Մյուս Հարանդ 160  
 Մնծուր 149  
 Մոթողանք 155  
 Մոկք 148, 154, 465  
 Մոդնի 165  
 Մոման 303, 310, 312  
 Մոնորազ 347  
 Մոստաբարրու-Մուքանոս 100  
 Մոսիսեր 148, 178, 258, 346  
 Մոսկվա 12, 15, 279  
 Մորգան (ղբ) 8, 10, 14, 26, 40, 178  
 Մորդման 17, 18  
 Մորդովցի 390  
 Մսեր Մսերյանց 12  
 Մրեն 165  
 Մրջունիկ 65, 452  
 Մցիսեթ 335  
 Մուդմիլ 131  
 Մուզնիանոս 457  
 Մուխանք 160  
 Մուղան 129, 132, 138, 160  
 Մուղնի 186  
 Մուլ 13, 120, 123, 124, 127, 133, 137, 140, 152, 184, 215, 256, 263, 281, 313, 363, 381, 382, 416  
 Մուլեղ Մամիկոնյան 471, 476, 477—491, 483, 489—491, 503  
 Մուլկի 184, 229, 230  
 Մուսասիր 184, 188, 205, 231, 232, 240, 241  
 Մուսուլ, Մոսուլ 9, 28, 152  
 Մուրադ 125  
 Մուրադյան 482  
 Մուցացիք 232  
 Մուֆարդին 151  
 Յազատա 372  
 Յահվե 403, 404, 406, 409, 410  
 Յաղլի-դաղ 16  
 Յաղուրյան 16  
 Յոթնոփորական Բագինք 161  
 Յուպտեր 100  
 Նազան 158

նազարիա 183  
 նազարինա 196  
 նազար Մաթեոսյան 15  
 նազրանգ 167  
 նազովրի 405  
 նաթանյան 362  
 նաիրի 20, 178, 181, 182—184, 185, 187—189, 193—198, 201, 202, 205, 208, 211—213, 232, 235, 265  
 նալայինի 190  
 նախիջևան 138, 159, 177  
 նախճավան 144, 159, 163, 474  
 նամգանու 207  
 նամգար 108  
 նանա 190, 381  
 նանն 149, 381  
 նան 184  
 նապուհոն 8  
 նաոիման 163  
 նասու 374  
 նավասարգ 127, 165, 270, 371, 382, 383, 455  
 նարամ-Սին 35, 36  
 նարեկ 157  
 նարսն 401  
 նեգրիտոս 31  
 նեղոս 27, 32, 34, 39, 41, 52, 54, 69, 90, 94, 97, 98, 115, 169  
 նեմմե 183  
 նեմուա 196  
 նեմրուզ 44, 123, 133,  
 ներոն 331, 345, 346, 348—352, 354, 396  
 ներսեհ 401, 444  
 ներսեհ Կամսարական 25  
 ներսես ճիճրակացի 512  
 ներսես Մեծ 429, 445, 446, 448—449, 451—452, 454, 455, 462, 463, 466, 470, 471, 476, 477, 479—483, 490, 499, 500, 502, 504, 515  
 ներսես Շնորհալի 271  
 նեպոլիս 350  
 նեոլոբեք 500  
 նեոկեսարիա 473  
 նեոպոլիս 291  
 նրվարսակ 156  
 նիրուր 7, 200  
 նիգ 166  
 նիխոր 158  
 նիխորական 152  
 նիկիա 428, 495  
 նիկոլակի 15, 187, 203, 205, 207—208, 210, 212, 213, 222, 223, 236, 260  
 նիկոպոլիս 167, 318  
 նին-ժիրու 68  
 նինիբ 68  
 նինիբ-Պալասար 195

նինվե 9, 10, 44, 50, 54, 87, 94, 98, 105, 144, 188, 198, 199, 213, 242—244, 302, 303  
 նինսի 206  
 նիպուր-Պազատա 185  
 նիսիազուրի 187  
 նիստունի 199  
 նիրբու 184, 200, 201  
 նիրի 193, 197  
 նկան 158  
 նյուս 167  
 նյուբար 285  
 նոյ 30, 155, 159, 166, 204  
 նոշիրական 152, 480  
 նոր-Քայազետ 172, 174  
 նորդուզ 132, 133, 157  
 նորչեն 133  
 նոր-Շիրական 152, 304  
 նոր-Ջուղա 6  
 նոր-Քաղաք 165, 356, 358  
 նպատ 124, 127, 133, 165, 480  
 նուբանաշե 187  
 նումմի 190  
 նունն 335  
 նուսկուի 196  
 նփրկերտ 151

**Շ**

Շաբաթ 505, 510  
 Շաբին-Գարահիսար 144  
 Շաթլամ 176  
 Շակ 161, 242  
 Շակաշեն 161, 242  
 Շահ-Աբբաս 113, 474  
 Շահակ 442, 448, 459  
 Շահապիվան 165, 370, 455  
 Շահապունիք 159  
 Շահասպ 167  
 Շահյաց 150  
 Շահիթիշարա 187  
 Շահ 36, 150, 331  
 Շահխաթունյան 369  
 Շահնամե 279  
 Շահպուհր 397  
 Շաղազումք, Շաղազումք 150  
 Շաղաթ 159  
 Շամասա, Շամասա 196, 200  
 Շամբ Կարնո 126  
 Շամիրամ 11, 17, 20, 158, 215, 219, 260, 283  
 Շամիրամ-սու 236  
 Շամուշա 197  
 Շամուշատ 151  
 Շամշուղե 162  
 Շամպոլլոն 9  
 Շամսի-Ռամման 181, 183, 213, 215

Շամսի-Ռամման 226  
 Շամիուր 383  
 Շանտովայինի 186  
 Շանար 169  
 Շապուհ Ա 397, 400—401  
 Շապուհ Բ 429, 431, 434, 438, 443—445, 447, 457—461, 464—477, 479, 480, 481, 483, 488—489, 491, 492, 495, 512  
 Շապուհ Գ 493, 496—498, 500, 503  
 Շապուհ, Թագավոր Հայաստանի 511—512  
 Շասախ 154  
 Շարասպե 291  
 Շարգանի, շար-Ալի 35  
 Շարգավրի 187  
 Շարդեն 6  
 Շարդի 190  
 Շարդուրի 226, 234  
 Շարխե 127  
 Շարիա 190  
 Շարուր 166, 287, 295  
 Շավասպ Արծրունի 454, 511  
 Շավարշան Կամ Շավարշական 158  
 Շավշեթ 163  
 Շելլ 10, 15  
 Շեշե 187  
 Շերաբելի 187  
 Շիկահանգ 160  
 Շինիրիբանի Կամ Շինիրբերնի 183, 196  
 Շիրազ 6, 397  
 Շիրակ 121, 137, 149, 165, 166, 186, 256  
 Շիրիմուստրա 223  
 Շենեք 159  
 Շողանի 126  
 Շողաումք 163  
 Շորազալ 165  
 Շոշ 10, 32, 40, 72, 272  
 Շոշաստան 253  
 Շարեք 185, 187, 188  
 Շրեշ 393  
 Շուլիանդի 187  
 Շուլց 11, 18  
 Շումաս 183  
 Շումեր (Շումմիր) 23, 31—33, 89, 212, 223  
 Շուշան 273  
 Շուշանց 11, 13  
 Շուշար 150  
 Շուշի 390  
 Շուտա 183  
 Շուրա 213  
 Շուրուրիա 183

**Ո**

Ողմու 165  
 Ողական 153  
 Ողջաբերդ 166

Ոսկեղջյուր 427  
 Ոսկի 165  
 Ոստան 156, 164, 286  
 Ոստան Դվին 166  
 Ոստանիկ 333  
 Որդորու 164  
 Որդունիք 431  
 Որդվատ 158  
 Որմրդղ-Պերոմ 161  
 Որմիզ 377, 397, 401  
 Որմիզդուխտ 467, 476  
 Որոդես 323—327, 341  
 Որոզ 319  
 Որոնտ 256  
 Որոտնա բերդ 126  
 Որջնահաղ 163  
 Որսիրանք 155  
 Ռթաղե 163

**Չ**

Չեչաբար 122  
 Չեչեններ 178, 257  
 Չերեզներ 257  
 Չրլղբ 121, 131, 220  
 Չրբղան 154  
 Չիմղանուի 187  
 Չինաստան, չինացիք 115, 141, 171  
 Չինգանե 172  
 Չինգիլ-խան 243  
 Չմշկածագ 150  
 Չորրորդ Հայք 139, 148, 150, 496  
 Չուխուրեթ 163  
 Չունակ 456

**Պ**

Պալեստին 32, 202, 223, 301, 326, 403—405, 411  
 Պալմիրա 401  
 Պալու 12, 127, 214  
 Պալունիք 158  
 Պախտերի 183, 196  
 Պածկանք 160  
 Պահիր-Բել 234  
 Պահլավ 339, 363  
 Պահլավունի 166  
 Պաձատու 199  
 Պաղին 150  
 Պաղնատուն 139, 150  
 Պաղնացի 506  
 Պամիր 28, 246  
 Պասպ 429, 439, 441, 471, 472, 473, 478—488, 490, 492, 499, 515  
 Պասպակ 397  
 Պատկանյան 18, 20, 204, 248  
 Պատասպարունիք 158  
 Պարախոյաթրաս 148

Պարթևապետ 354  
Պարթևասպատ 355  
Պարթևաստան 253, 353, 354  
պարթև 291, 293, 299, 301, 307, 311, 316,  
320, 321, 323, 325—328, 331—  
332, 337—338, 339, 341—343, 351,  
352, 354—359, 363, 364, 370, 378,  
383, 393, 396—398, 446, 469, 487,  
500, 516  
Պարիազրես 148  
Պարիսու 187, 226  
Պարիսար 162, 163  
Պարոնուշտա 183  
Պարտավ 161  
Պարտիզացիոր 163  
Պարտու 144  
Պարտուս 163  
Պարսանի 183  
Պարսկաստան 3, 8, 15, 20, 26, 27, 31, 48,  
76, 122, 138, 140, 141, 143, 144, 148,  
156, 169, 183, 238, 252, 253, 255, 258,  
265, 272, 275, 276, 289, 290, 299, 300,  
301, 311, 321, 322, 331, 335, 336, 339,  
341, 343, 359, 375, 397, 398, 399, 400,  
402, 417, 427, 429—430, 438, 441,  
456, 459, 461, 463, 465, 468, 470, 474,  
475, 480, 489, 491—493, 496, 497, 500,  
510, 516  
Պարփյուր 124  
Պավլիկյան աղանդ 418  
Պելլազ 199  
Պենհանի 167  
Պենթես 325  
Պետոս 348, 349, 350  
Պետերման 247  
Պետրոս 16  
Պերոզ 498  
Պերսեպոլիս 6  
Պիանք 160  
Պինտրո-Դելլա-Վալլե 7  
Պիզա 167  
Պիզիրիս 229  
Պիլաքիների 183, 196  
Պիլգրիկյան 150, 152, 183  
Պիտուրա 202  
Պիրուայինի 186  
Պլատոն 82, 288, 414  
Պլինիոս 133  
Պլուտարքոս 135, 295, 303, 304—305, 306,  
308, 309, 314, 363, 410  
Պուլակ 14  
Պոզոս առաքյալ 409, 410  
Պոպեոս 298, 316, 318—321, 323, 325,  
351, 404  
Պոնտոս 167, 177, 275, 300, 305, 307, 308,  
311, 314, 317, 318, 340, 393, 401,

473, 486  
Պրոերեսիոս 426, 451  
Պրոկոպիոս 464  
Պրոպոմդիտոս 249  
Պուտերիոս 214  
Պուտեա 223  
Ջ  
Ջահուկ 159  
Ջահուն 167  
Ջավադ 190  
Ջավախք 162, 335  
Ջարաշ 145  
Ջերմաձոր 154  
Ջլմար 155  
Ջրաբերդ 160  
Ջրոս 100  
Ջուզա 129, 158, 256  
Թ  
Թահ 509  
Թամման 196, 200, 202, 208, 213  
Թամման-Նիրարի 181, 215, 222  
Թաուլինսոն 8, 10, 18  
Թաուշ 231  
Թապան 167  
Թասամ 13  
Թեթիմենա 152  
Թեթիմենա 465  
Թեկլլու 120, 122, 124, 134, 136, 137, 147  
Թել 145  
Թեյնորդա 14  
Թեանդուզ 16, 184, 213  
Թընան 28, 31, 204, 403  
Թըստամ 498  
Թիշուայինի 361  
Թիտոսեր 119  
Թիոն 143, 170, 278  
Թշտունիք 156, 157, 361, 432, 433, 442,  
443, 453, 475  
Թոստոմ-Ջալ 393  
Թոտպայան, Թոտպայակ 161  
Թասի-Բաղա 161  
Թասակ 156  
Թուծե 8  
Թուշաշ 227  
Թուսա (Թուսաս) Ա 203, 227—229, 230,  
231—233, 235, 240, 245  
Թուսա (Թուսաս) Բ և Գ 235, 236, 238,  
239, 241  
Ս  
Սարազիոս 268  
Սազաստան 253

Սաղուկեցիներ 407, 408  
Սաթնիկ 297, 387—390, 391  
Սաթրմե 131  
Սալախան 14  
Սալաձոր, Սալնո ձոր 151  
Սալամաստ, Սալմաստ 155  
Սալանիբա 202  
Սաքարին 158  
Սալմանասար Ա 181, 193—196, 200  
Սալմանասար Բ 181, 205—207, 209, 211,  
213, 222, 227, 303  
Սալուբի 207  
Սակաշեն, Սակասեն 161, 242  
Սակ 242, 250  
Սահականուշ 503  
Սահակ Բագրատունի 498, 503  
Սահակ Պարթև 448, 487, 497, 498, 500.  
502—504, 505, 506, 509, 511, 512—  
516  
Սահառունի 489, 490, 491  
Սահմի 383  
Սաղմոսավանք 165  
Սամվելյան 266, 268  
Սամվել 476, 498  
Սամոսատ 167, 506, 508, 509  
Սամսի-Թիմման 226  
Սայո 10  
Սայր 249  
Սանաշու 183, 361  
Սանասուն 151, 361  
Սանատրուկ 136, 357, 430  
Սանապլյան 19, 20, 181, 183, 187—189,  
193, 197, 202, 205, 207, 208, 209,  
211, 226, 230, 233, 234, 245  
Սանդուխտ 357, 448  
Սանեհան 432, 433  
Սանեհրիբ 234, 242  
Սաշ 134  
Սասոս 397  
Սասոսյաններ 398—400, 401, 417, 429  
Սասու 184, 187, 226  
Սասուն, սասունցիներ 135, 140, 146, 151,  
184, 187, 213  
Սասունցի Գաղիթ և Մհեր 280  
սասուցիներ 178  
Սատրիբ 183  
Սատուբ 100  
Սարասար (Սանասար) 234  
Սարուկին 35  
Սարգոն Նին 35, 36, 39, 72, 83, 99, 105  
Սարգոն 181, 182, 227—229, 230—233,  
241—242, 243  
Սարգիսյան 12, 139  
Սարգ 272, 275  
Սարգաբարազ (Հոկանեմբերյան) 12, 15,  
238

Սարդու 234  
Սարդուրի Ա 210—212, 245  
Սարդուրի Բ 224—227, 229, 241, 245  
Սարդուրի Գ 233, 245  
Սարիզամիշ 13, 165  
Սարրատ 281  
Սարչամա 126  
Սերաստիա 167  
Սերաստիանոս 464  
Սերիդու 190  
Սերեսու 4, 156  
Սեդիկան 232  
Սեդուրի 210, 212  
Սեկկյաններ 290—292, 294, 301, 306,  
403  
Սեկկիա 289, 292, 299, 355, 356, 401,  
417  
Սեկկոս 289, 290  
Սեմ 30, 32, 204  
սեմացիներ 233  
Սեյս 13, 16, 18, 184, 205, 210  
Սելվան 158  
Սենյակ Վահագնի 380  
Սենեբերիմ 181, 233  
Սեննախերիբ 181  
Սեպուհ 149  
Սեպտիմոս Սևերոս 357, 358  
Սետկան 16  
Սերպլասան 217  
Սերասպիոն 501  
Սերեմա 30  
Սերկիլի 165  
Սեան 12, 13, 122—124, 157, 159, 170,  
186, 205, 221, 224, 227, 256, 278,  
433  
Սեան Բերդ 158  
Սե ծով 27, 118—120, 125, 130, 131, 132,  
134—136, 139, 141, 143, 177, 179,  
248, 250, 256, 295, 300, 309, 318, 346  
Սև ջուր 126  
Սըղա 11  
Սիակ 232  
Սիրիդու 190  
Սիրիսա 201  
Սիդեկ 213  
Սիդոն 113, 303  
Սիելարդիս 190  
Սիլակես 325  
Սիկիրտաս 187  
Սիկիրտա 226  
Սիմ 151, 152, 281  
Սիմգուրի 183  
Սիմիս 199, 206  
Սիմիրա 199, 206  
Սիմոնի 14  
Սին 53

Սինարու 135  
Սինարուրի 188  
Սինգարա 465  
Սինի 197  
Սինիբիս 190  
Սին-շատ-շիկուն 243  
Սինոպ 249  
Սինչար 27  
Սինվատ 374  
Սիոն 243  
Սիպար 176  
Սիսական 129, 159, 510  
Սիսականի Կոտակ 160  
Սիսական Ոստան 159  
Սիսաչան 159  
Սիսիան 122  
Սիվաս 167  
Սիրաաշմե 183  
Սիրաաշու 183  
Սիրակենա 165  
Սիրիա 6, 32, 35, 37—42, 51, 102, 115, 118, 142, 143, 151, 177, 178, 193, 202, 223, 225, 229, 230, 289, 290, 301, 303, 306, 308, 310, 320, 323, 325, 326, 328, 337, 340, 341, 347, 348, 358, 415, 425, 430, 444, 449, 460, 506  
Սիրիաշ 223  
Սիրիսացի 206  
Սիփան 123, 154  
Սլաբ 259  
Սլոունի 152, 259, 361  
Սկիդիս 148  
սկյութացիք 223, 342  
Սկլարեք (Սկլարերդ) 166  
Սղերդ 133, 134, 151, 256, 418  
Սմբատ 387  
Սմբատյան 12, 13, 15  
Սմիթ 10  
Սլավ 167  
Սլունիք 122, 123, 126, 129, 137, 140, 146, 148, 158, 159, 160, 170, 171, 186, 227, 364, 368, 370  
Սոգոմեն 416, 420  
Սոթք, Սոտք 159  
Սոկրատ 288  
Սոգոմոն 85, 87, 508  
սոմեխի 162, 258  
Սոմխեթ 122, 162  
Սոլեմ 356, 357  
Սոփանիա 250  
Սոֆենա 150  
Սպահան 6  
Սպանիա 41, 401  
Սպանդարան-Պերոմ 161  
Սպանդարատ 463  
Սպարդա, Սպարդաներ 242  
Սպարկերտ 154

Սպենտա-Արմախոի 380  
Սպետ 130, 139, 150, 443  
Սվան 258, 261  
Ստատիոս Պրիսկոս 356  
Ստեփանե 5, 216, 218, 219, 368  
Ստորին Կովկաս 120  
Ստորաբն 4, 133, 135, 137—139, 147—149, 161, 163, 166, 249, 295, 334, 335, 378—379, 390  
Սրինգ 155  
Սրմանց 122, 128, 496  
Սրվանձոյան 132  
Սուա 207  
Սուբաս 190  
Սուբնատ 185, 187, 193, 196, 197, 200, 202  
Սուգունիա 207  
Սուզ 31  
Սուեզ 37  
Սուինիա 159, 186  
Սուլա 323  
Սուլումալ 6, 225  
Սուխմի 207  
Սուկավ, Սուկավետ 121, 122  
Սուկուր 187  
Սումիր 31  
Սուպանի 150  
Սուպրի 201  
Սուսան 151  
Սուրա Մոկացի 498  
Սուրաթ 7  
Սուրամ 278  
Սուրաս 224  
ս. հաշ 125  
ս. Կարապետ 153, 237, 382, 395, 425  
ս. Վարդան 217  
Սուրեն 324, 363, 492, 498  
Սուրմալու 165  
Սուրմակ 515, 516  
Սուրմառի 165  
Սուրբա 199  
Սուրբի 147

Վ

Վահ 269  
Վահագն 153, 269—270, 280, 287, 378, 380—383, 395  
Վահան Ամատունի 433, 509  
Վահան Առավելյան 498  
Վահան Մամիկոնյան 158, 364, 367, 472, 474—475  
Վահևունիք 164  
Վահե 269  
Վահեվաչյան 153  
Վահունիք 383  
Վահրիճ 506  
Վահումիսա 254  
Վաղարշ 342, 343, 347—351, 352, 355—359, 400

Վաղարշակ 356, 492, 494  
Վաղարշակերտ 165  
Վաղարշապատ 12, 121, 145, 165, 204, 270, 356, 358, 364, 380, 393, 415, 420, 424, 428, 433, 474, 509  
Վաղարշավան 164  
Վաղավեր 164  
Վաղես 471, 473, 476, 477, 485, 487, 488, 489, 495  
Վաղիանիս 164  
Վաղինակ Սլունի 431, 510  
Վայկունիք 160  
Վան 3, 11—17, 20, 123—134, 137, 140, 153, 156, 157, 176, 179, 180, 184—185, 186, 190, 191, 203—205, 207, 208, 210, 213—215, 216, 219—220, 221—223, 224, 226—228, 232, 233, 235, 236, 237, 239, 240, 248, 255, 261—262, 269, 278, 281—284, 294, 297, 368, 392, 395, 416, 417, 432, 435, 474, 475  
Վանանդ 121, 158, 165, 498  
Վանատուր 270  
Վանդոմյան 93  
Վաչե Մամիկոնյան 431, 433, 434, 435, 490, 491, 493  
Վասակ իշխան 325  
Վասակ Մամիկոնյան 443, 446, 447—448, 454, 459—460, 463, 466—471  
Վասակ Սլունի 364, 510  
Վասակ Սպարապետ 349  
Վասակակերտ 159  
Վասպուր 156  
Վասպուրական 136, 148, 153, 156, 159, 269, 340, 368  
Վարազ 11, 13, 157, 235  
Վարազ 433, 469, 493  
Վարազդատ 488, 489—492  
Վարազդուխտ 441  
Վարազկերտ 166  
Վարազ-Շապուհ 444  
Վարամն 153  
Վարամնունիք 153, 158, 166  
Վարանդա 160  
Վարդահեր 167  
Վարդան Մամիկոնյան 447, 454, 455, 459—460, 467, 476, 502—504, 509  
Վարդան Պարթև 342  
Վարդանանք, — անդ 363, 371, 510  
Վարդանակերտ 161  
Վարդանդուխտ 494  
Վարդանյան 506  
Վարդանույշ 493  
Վարդավառ 270, 380, 382, 422  
Վարդգես 393  
Վարդենիս 166

Վարդո 153  
Վարիս 469  
Վարշակի 165  
Վեդայական 269  
Վենեթա 100  
Վեսիլովսկի 79  
Վեսպասիանոս 352  
Վեստիդիոս Բասոս 326, 327  
Վերին-Բասեն 129  
Վերին-Մեշինկերտ 216  
Վիլհելմ 15  
Վիկթ Գառայաց 121  
Վինդիզման 247  
Վինդեր 228, 234, 251  
Վիշապ 153, 389, 390  
Վիշապազուն 389—391  
Վիշապաձոր 164  
Վիշապաբաղ 270, 382  
Վժան 165  
Վժանիս 160  
Վիրգիլիոս 331  
Վշտասպա 253, 254, 274, 275  
Վոլազազ 342  
Վոնոն 339—341, 342  
Վոամ 401, 417, 493, 500, 503, 512, 516  
Վոամշապուհ 487, 500, 502—504, 505, 507, 509, 513  
Վրաստան 132, 135, 148, 162, 170, 258, 265, 296, 319, 327, 334, 335, 343, 362, 387, 392, 402, 420, 471, 477, 488, 510  
Վրթանես 429—433, 435, 437—439, 449  
Վրկան 225, 345, 347  
Վրույր 386  
Վունշ 14

S

Տաստանի 183  
Տարա 187  
Տաթև 126, 159  
Տակիտոս 135, 330, 337, 339, 340, 341, 342, 344, 347, 349, 363  
Տաճատ 443  
Տաճար Մալրի 434  
Տամբերդ 155  
Տալք 130, 137, 148, 188, 163, 295, 317, 334, 361, 387, 393, 460, 474  
Տանախ 292  
Տանկիրիայ 158  
Տաշբուրուն 12, 13, 186, 214  
Տաշյան 240, 258, 279  
Տաշբատափ 162  
Տաշիք 162, 334, 515  
Տաշուխա 187  
Տատիկ 151  
Տաթավն 175  
Տարամակիսա 231

Տարրան 281  
 Տարիունի 361  
 Տարիուսա 223  
 Տարիբիաս 215  
 Տարհանարե 187  
 Տարհունա 187  
 Տարուի 231  
 Տարուն 152, 153, 215, 281, 346, 363, 372—  
 382, 419, 420, 425, 441, 453, 491, 502,  
 504  
 Տարսն 461, 483, 484  
 Տավրա 183  
 Տավրոս 26, 27, 30, 41, 118, 119, 120, 122,  
 123, 128, 134, 143, 148, 151, 167, 173,  
 198, 230, 256, 281, 302, 303, 308, 309,  
 314, 348, 416  
 Տափերական 129, 439  
 Տեխրաս 190, 192  
 Տեղ 159  
 Տեվկանց 14  
 Տերենդիոս 473, 477, 483, 485  
 Տեր Աղեքսանդրյան 16  
 Տեր Մինայան 441  
 Տեր Մկրտչյան 364, 428, 508  
 Տեր Մովսիսյան 14, 238  
 Տեր Սահակյան 400, 469  
 Տերմիշյան 246  
 Տիրարանի 148  
 Տիրեթ 28  
 Տիրեբրիոս 331, 337, 340, 341, 342  
 Տիգուի 188  
 Տիգրան 254, 389—392  
 Տիգրան արքայազն 253, 284—287  
 Տիգրան Ա 298, 299  
 Տիգրան Բ Մեծ 4, 135, 151, 155, 162,  
 298—307, 308—315, 316—323, 330,  
 331, 338, 383, 389, 392, 394, 437, 445,  
 466, 479, 481  
 Տիգրան Կրտսեր 316, 317—319  
 Տիգրան Գ 330, 331  
 Տիգրան Դ 332, 333, 336  
 Տիգրան Ե 336  
 Տիգրան Չ 347, 348, 349  
 Տիգրանակերտ 151, 286, 302, 307, 308—  
 311, 313, 314, 344, 346, 348, 460,  
 467—468  
 Տիգրանուհի 286  
 Տիգրիս 9, 25, 28—30, 32, 33, 34, 37, 39,  
 43, 54, 58, 87, 94, 99, 101, 105, 115,  
 123, 124, 128, 132—134, 142, 143, 150,  
 152, 157, 169, 172, 182, 184—185, 187,  
 192, 194—196, 198, 200, 202, 208, 213,  
 217, 256, 289, 290, 292, 299, 302, 319,  
 313, 320, 355, 356, 358, 404—465, 467  
 Տիգրոն 299, 311, 317, 324, 327, 338—  
 339, 355, 356, 358, 398, 399, 400, 401,  
 417, 459, 464, 500, 503, 512  
 Տիլա 184, 199, 200  
 Տիկունի 434  
 Տիկոր 165  
 Տիտան 30, 281, 282  
 Տիր 380, 381  
 Տիրակատար 153  
 Տիրան 429, 432, 437—447, 454  
 Տիրաոհնճ 165  
 Տիրիբազ 257  
 Տիրիթ 443, 445, 455—456  
 Տիրիուիշային 186  
 Տիրկահուլի 187  
 Տիսու 113, 143  
 Տյուր 380  
 Տյուրիկե 167  
 Տյուրոս 143, 251, 277, 303  
 Տլմուտ 158  
 Տմորիք 155, 295, 480  
 Տոմաշեկ 152  
 Տոսր 157  
 Տորթն 184  
 Տորթ 378, 392, 393  
 Տորթ Անգեղ 260  
 Տոփ 161  
 Տվարածատափ 153  
 Տրապիզոն 119, 140, 143, 256, 346, 463  
 Տրայանոս (կայսր) 354, 355  
 Տրայանոս (կոմս) 477, 485  
 Տրդատ Ա 127, 166, 336, 342—348, 349—  
 352, 353—354, 378, 383, 393, 396  
 Տրդատ Բ 358—359  
 Տրդատ Գ 400, 402, 418—420, 423, 425—  
 430, 435, 439, 440, 453, 482  
 Տրդատ 443  
 Տրե 380, 383  
 Տրիարոս 315  
 Տրոյա 240  
 Տրունի 361  
 Տրպատունիք 157  
 Տրտու 160, 161  
 Տուալի 183, 196  
 Տուրուզիա 201  
 Տուլա 239  
 Տուլիսունի 186  
 Տում 363  
 Տունիբունի 208  
 Տունուրե 183, 196  
 Տուշա 185, 198  
 Տուշուխա 226  
 Տուշպա 157, 186, 211, 215  
 Տուշքատակ 161  
 Տուտիա 188, 201  
 Տուտիա 200, 201, 202  
 Տուտպա 211, 213, 226, 284  
 Տուրառան 211

Տուրուբիան Կամ Տարուբրան 148, 474  
 Տուրուսպա 226  
 Տուրք 392, 393  
 Ր  
 Րարբի-լուլ 226  
 Րիշուալիինի 186  
 Ց  
 Ցախաց ջար 159  
 Ցեղան 172  
 Ցուլակերտ 13, 166  
 Ցրոնք 281  
 Ցուլ 100  
 Ռ  
 Ռալիինա 190  
 Ռալլիա 187, 226,  
 Ռալլա 231  
 Ռանուշ 229, 230  
 Ռասա 190  
 Ռաստուպին 207  
 Ռաբանանդա 231  
 Ռաբինի 186  
 Ռաբերա 187  
 Ռազինա 183, 196  
 Ռազո-յապոնական 30  
 Ռադինի 199  
 Ռադուրիստինի 186  
 Ռալիտա 186  
 Ռաանա 239  
 Ռազուլա 183, 196  
 Ռաիլա 183  
 Ռաիշտիլ 184  
 Ռաիսինի 187  
 Ռաիրամ 183, 196  
 Ռալիա 232  
 Ռալուրա 226  
 Ռալուսուն 230, 231  
 Ռալու 231  
 Ռալմանիա 199  
 Ռալնի 167  
 Ռալուանի 186  
 Ռալթիս 163  
 Ռալիտա 200  
 Ռահյանա 254  
 Ռամիլդիշ 229, 230  
 Ռամիլդիս 231  
 Ռանգամունի 183, 196  
 Ռանինա 190  
 Ռաշական 186  
 Ռաշապ 389  
 Ռաշեղունի 186  
 Ռաշմանիացի 206  
 Ռաշտաշա 183  
 Ռաունա 144  
 Ռունալր 480  
 Ռուխու 199  
 Ռուսու 199

Ռասուրու 187, 226  
 Ռասուրան 187, 226  
 Ռաքայա 231  
 Ռափ Առանձնակ 181  
 Ռափք 146, 148, 161, 179, 242, 334, 466,  
 510, 514, 515  
 Ռար 34  
 Ռարա 190  
 Ռարաշուն 183  
 Ռարարու 20, 163, 164, 179, 184, 185—186,  
 203—206, 207, 208—210, 211—213, 214,  
 215, 217, 218, 221, 222, 224—228,  
 229, 231—235, 237—239, 240—242,  
 244, 250, 259, 261, 262, 268, 294  
 Ռարանա 232, 240, 241  
 Ռարինու 223  
 Ռարինի 199  
 Ռարմիա 16, 123, 124, 151, 152, 155, 176,  
 178, 184, 198, 206—213, 214, 215,  
 221, 228, 232, 278, 327  
 Ռարշա 227, 230—232  
 Ռարսա 227  
 Ռարսի 183  
 Ռարսիկինոս 444  
 Ռարտաշինի 186, 205  
 Ռարրա 187, 226  
 Ռարուկ 34  
 Ռարուն 185  
 Ռարամա 415, 416  
 Փ  
 Փամբակ 162, 258  
 Փալլաթու 100  
 Փալտակարան 148, 160, 395, 430, 466,  
 480  
 Փաննիոս 315  
 Փառամնակերտ 166  
 Փառախոտ 166  
 Փառանձեմ 454—456, 460, 461, 471—  
 473, 474, 475, 480, 487  
 Փառնն 442  
 Փառնես 160  
 Փարզման 167  
 Փարպի 167  
 Փարիլ 7, 8, 10, 93, 184, 254, 351, 361  
 Փարսման 341, 342—344, 345  
 Փալստոս 326, 357, 420, 423, 424, 430—  
 434, 435, 437—440, 442, 446, 447—  
 449, 450, 452—456, 460, 463, 465, 466,  
 467—469, 471—474, 475—476, 477—  
 479, 481, 482, 483, 487, 488, 489, 490,  
 492, 494, 496—497  
 Փենիկ 163  
 Փիսակ Սյունեցի 444  
 Փյունիկիա 3, 33, 37, 39, 42, 43, 98, 113,  
 115, 137, 143, 173, 175, 202, 251, 275,  
 277, 306, 326, 327



Փորձուցալ փաշա 371, 510  
 Փորք Ասիա 26, 27, 122, 142, 144, 177, 179, 180, 241, 242, 243, 249, 250, 264, 272, 275, 290, 293, 294, 295, 299, 315, 320, 377, 379, 415  
 Փորք Արմենիա 185, 251  
 Փորք Կովկաս 120, 121, 122, 179, 220, 221  
 Փորք Հայք 120, 125, 147—148, 167—168, 251, 291, 292, 301, 328, 358, 392, 426, 506  
 Փորք Մասիս 120  
 Փորք Սիսական 160  
 Փոլուզ 180, 249  
 փոլուզացիք 180, 249  
 Փոլուզիա 246, 248, 249, 291

**Ք**

Քար 145  
 Կարգու 161  
 Քայրայինի 190  
 Քաղաք Կոնց 165  
 Քաղաքաբաշտ 356  
 Քաղաք 4, 9, 10, 26, 28, 31—34, 35, 37, 40, 44, 45, 46, 51, 55, 58, 68—70, 72, 83, 84, 87, 89, 94, 95, 97, 99—102, 192, 195, 217, 223, 232, 360, 377, 388  
 Քաղց 383  
 Քաղ 151  
 Քամ 30  
 քանանացիք 39  
 Քանաքեռ 166  
 Քաշաթաղ 159  
 Քասախ, Քասաղ 129, 166, 221, 295, 334, 393  
 Քատրֆաժ 28  
 Քարգահ 157  
 Քարթվեղ 178  
 Քարն Մանասկերտու 157  
 Քարթ 152  
 Քեղ 151  
 Քենտարի 196  
 Քեմանու 100  
 Քելիշ-դյուլ 14, 16, 235  
 Քեսուն 167  
 Քետացիք 177  
 Քինտարի 183  
 Քիրման 500  
 Քիրմանշահ 8, 493, 500  
 Քյիլտ 12  
 Քղիմար 144  
 Քյուլաղրան (Սովինար) 12, 186, 227  
 Քյուպ 90—92  
 Քյոշկ 217  
 Քյուսա-դաղ 122  
 Քոսապ 273  
 Քսենոֆոն 3, 135, 252, 255—257, 263, 265, 266, 269, 277, 284, 285

Քսերքս, Քսերքսես 6, 277, 288, 292  
 Քսիսուֆրա 281  
 Քուերա 190  
 Քուիայիս 278  
 Քումենունա 186  
 Քումմուխ 200  
 Քուշաններ 470, 491  
 Քուշյան ց. 30  
 Քուստի 160  
 Քուրդիստան, Քրդստան 27, 43, 134, 183, 184, 190, 299, 334  
 Քուտի 187  
 Քուտուս 226  
 Քուֆ 145  
 Քուֆու 91, 92

**Օ**

Օգոստոս 330—332, 337—339, 342, 405—458  
 Օդն 136  
 Օդենատ 401  
 Օդուզիք 202  
 Օզիրիս 68, 414  
 Օլաման 132  
 Օլթի 163  
 Օլիմպիադա 461, 462  
 Օկտավիոս 326, 329, 330  
 Օկումի 164  
 Օռ 136, 153  
 Օռուն 162  
 Օշական 165, 433  
 Օպպերտ 11  
 Օվաշք, Օվաշիք 126, 130, 150  
 Օվրատիոս 331  
 Օսրոն 299, 301, 415  
 Օրդակլու (Լճաշեն) 13, 221  
 Օրդուբադ 120, 158  
 Օրիգենես 412  
 Օրմանյան 414, 441, 449, 482, 502  
 Օրմինին 250  
 Օրոնտ 289  
 Օրփիոդոն 138  
 Օքսֆորդ 13, 18  
 Օքսուս 143, 278, 291

**Յ**

Յադիս 143  
 Յանին 138  
 Յասիանիս 164  
 Յարսիստան, Յարս 397, 398  
 Յեթթեր 258, 279, 287, 394  
 Յեբրո 119  
 Յրատտ 311  
 Յրադ 187  
 Յրանսիա 135, 361  
 Յրավալ 372, 375  
 Յրատ 125, 126, 127, 128, 130

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Առաջաբան . . . . . V

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ, ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Նախապատճառություն

**Ա.**

Պատմության աղբյուրները . . . . . 3

**Բ.**

Մարդկային բաղաձայնություն

Քլուսիս առաջին — Նախապատմական ժամանակներ . . . . . 23  
 Քլուսիս երկրորդ — Քաղաքական միջավայր . . . . . 34  
 Քլուսիս երրորդ — Պաշտամունք, իրավունք, արվեստներ . . . . . 59  
 Քլուսիս չորրորդ — Գիտություն, առևտուր . . . . . 97

Մասն առաջին — Աշխարհագրություն

Քլուսիս առաջին — Հայկական լեռնակղզին . . . . . 117

Մասն երկրորդ — Նախաճայկական շրջան

Քլուսիս առաջին — Նախապատմական Հայաստան . . . . . 159  
 Քլուսիս երկրորդ — Նախքի . . . . . 131  
 Քլուսիս երրորդ — Ուրարտու . . . . . 293

Մասն երրորդ — Հայերը

Քլուսիս առաջին — Ծագում . . . . . 246  
 Քլուսիս երկրորդ — Նախնական ձևեր . . . . . 263

Մասն չորրորդ — Արտաշեսյան հարստություն

Քլուսիս առաջին — Արտաշես Ա . . . . . 293  
 Քլուսիս երկրորդ — Տիգրան Մեծ . . . . . 298  
 Քլուսիս երրորդ — Պարթև-հռոմեական մրցակցություն . . . . . 322

Մասն հինգերորդ — Հայ Արշակունիներ

Քլուսիս առաջին — Պարթևական գերիշխանություն . . . . . 336  
 Քլուսիս երկրորդ — Հայ աշխարհը . . . . . 360  
 Քլուսիս երրորդ — Քաղաքական հեղաշրջում . . . . . 397  
 Քլուսիս չորրորդ — Կրոնական հեղաշրջում . . . . . 403  
 Քլուսիս հինգերորդ — Հայ Արշակունիները և քրիստոնեությունը . . . . . 429  
 Քլուսիս վեցերորդ — Բաժանում և անկում . . . . . 487  
 Հայաստանի գահակալները . . . . . 517  
 Ժամանակագրություն . . . . . 519  
 Ծանոթագրություններ . . . . . 523  
 Հատուկ անունների ցանկ . . . . . 541

Ի Ե Ո

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ 10-Ը ՀԱՏՈՐՈՎ

Հայոց պատմություն

Հատոր I

Հին պատմություն

1

Տեղագր. պատրաստեցին

ԳՐԻԳՈՐՅԱՆ Վ., ԹՈՓՉՅԱՆ Ս., ՍԱՄՎԵԼՅԱՆ Խ., ՕՉԱՆՅԱՆ Ա.

Հրատ. խմբագիր

Ա. Հ. Ումառյան

Նկարիչ

Ռ. Ս. Բեդրոսյան

Գեղ. խմբագիր

Ա. Վ. Գասպարյան

Տեխ. խմբագիր

ՕՆ. Ս. Փանիկյան

Վերստուգող սրբագրիչ

Ռ. Ս. Հովսեփյան

Հանձնված է արտադրության 14/VIII—1965 թ.: Ստորագրված է տպագրության 11/V—1966 թ. Թուղթ՝ տպագրական № 2, տեսակ 1, 70×108 1/16, հրատ. 44,0 մամ.+1 ներդիր, տպագր. 35,5 մամ.=48,68 պայմ. մամ.: Գինը՝ 2 դ.

Պատվեր 1338

Տիրած 30 000

Հայկ. ՍՍՌ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆ արդյունաբերության վերսովոր վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65: